

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

**ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016**

**ՀԱՏՈՐ X**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ՀՈՒՆՎԱՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016

## ՀԱՏՈՐ X



ԶԱՆԳԱԿ  
ՀՐԱՏԱՐՎԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2018

ՀՏԴ 347.9  
ԳՄԴ 67.410  
Հ 247

**Կազմողներ՝ Աշխեն Ղարսլյան,** ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,  
իրավագիտության թեկնածու

**Կարեն Հակոբյան,** ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական

**Նանե Սահակյան,** ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական  
փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ

**Անի Համբարձումյան,** ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական  
փորձաքննությունների ծառայության կրպսեր մասնագետ

Հ 247 ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով  
որոշումների ընտրանի: Հունվար–դեկտեմբեր 2016.— Եր.: «Զանգակ»  
հրատ., 2018. Հատոր X.— 784 էջ:

ՀՏԴ 347.9  
ԳՄԴ 67.410

ISBN 978–9939–68–618–9

## Partnership for Good Governance

### Գործընկերություն հանուն լավ կառավարման



EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

### Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով 2016 թ. որոշումների ընտրանու տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից համաֆինանսավորվող ծրագրի մի մասի շրջանակներում: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով 2016 թ. որոշումների ընտրանիում ներկայացված տեսանկյունները որևէ պարագայում չեն կարող համարվել Եվրոպական միության և/կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսանկյան արտահայտում:

## ՆԱԽԱԲԱՆ

Իրավական պետության կայացման և կայուն զարգացման կարևոր գրավականներից է համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների վրա հիմնված իրավական համակարգի առկայությունը: Այդպիսի համակարգը ոչ միայն ենթադրում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հոչակում, այլև գործուն երաշխիքների սահմանում դրանց իրականացման և պաշտպանության համար: Նման համակարգի ձևավորումը պահանջում է երկարատև և նպատակաուղղված միջոցառումների համալիր:

Հայաստանի Հանրապետությունը չնայած թևակոխել է իր զարգացման երրորդ տասնամյակը, այդուհանդերձ, իրավական բարեփոխումներն արդիական են մինչ օրս, որոնցից անմասն չի կարող մնալ դատական իշխանությունը՝ նկատի ունենալով իշխանության այս ճյուղի դերը և գործառնություններն անձի իրավունքների երաշխավորված և արդյունավետ պաշտպանության հարցում: Շրջադարձային նշանակություն ունեցող փոփոխությունների մեկնարկը տրվել է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ՀՀ Սահմանադրության փոփոխությունների ընդունմամբ, որի որոշ դրույթներ 2016 թվականին արդեն իսկ ուժի մեջ էին և կիրառվում էին արդարադատության իրականացման գործառնության շրջանակներում: Փոփոխված մայր օրենքով ընդլայնվել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների շրջանակը, ինչն իր հերթին պահանջում է որակապես նոր արդարադատության համակարգ: Այդ հարցում սահմանադիրը հատկապես կարևորել է ՀՀ բարձրագույն դատական ատյանի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) դերն ու նշանակությունը: Ուստի պատահական չէ, որ փոփոխված ՀՀ Սահմանադրությամբ ընդլայնվել և հստակեցվել է Վճռաբեկ դատարանի գործառնությունների շրջանակը: Եթե 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Վճռաբեկ դատարանը կոչված էր ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, ապա 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Փաստորեն, բացի օրենքներից, Վճռաբեկ դատարանն ապահովելու է նաև այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը՝ դրանով մեկ անգամ ևս ընդգծելով Վճռաբեկ դատարանի՝ արդարադատության իրականացման շրջանակներում միասնական դատական պրակտիկայի ապահովման հիմնական գործառնությունը: Իսկ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու գործառնությունը փաստում է եռաստիճան դատական համակարգում դատական այս ատյանի դերն ու նշանակությունը. որպես դատական սխալի ուղղում՝ Վճռաբեկ դատարանը պետք է վերանայի այն դատական ակտերը, որոնցով թույլ է տրվել մարդու իրավունքների և ազատությունների այնպիսի խախտում, որը խաթարում է այդ իրավունքի կամ ազատության բուն էությունը և վտանգում է դրա իրականացումը:

Վճռաբեկ դատարանն իր՝ արդարադատության իրականացմանն ուղղված գործառնության շրջանակներում բազմիցս անդրադարձել է անձի հիմնական իրավունքների էության բացահայտմանը, իրավակարգավորման անորոշության կամ բացի պայմաններում առաջարկել է վիճելի իրավունքի պաշտպանության կառուցակարգ՝ այդ կերպ ապահովելով արդարադատության արդյունավետությունը, որի կարևոր պայմաններից է խախտված իրավունքի իրապես վերականգնումը: Եվ եթե 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում «դատական նախադեպի» հիմքերը դրվեցին մեր իրավական համակարգ, ապա 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների պայմաններում վստահաբար կարող ենք խոսել այդ մշակույթի՝ որոշակի չափով կայացած լինելու մասին: Այսօր արդեն անվիճելի է, որ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներն ուղենիշային նշանակություն ունեն ոչ միայն նմանատիպ փաստական հանգամանքներով գործերի քննության ժամանակ, այլև շատ հաճախ օրենսդրական փոփոխությունների և բացերի լրացման ազդակ են հանդիսանում: Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նաև վարչական վարույթների պատշաճ իրականացման հարցում: Ավելին՝ մի շարք դեպքերում Վճռաբեկ դատարանն ընդգծել է այդ վարույթների արդյունավետությունը վեճերի հնարավորիս արագ և ողջամիտ ժամկետներում լուծման հարցում: Հատկանշական է Վճռաբեկ դատարանի իրավական

դիրքորոշումների դերի բարձրացումն իրավագիտության ֆակուլտետներ ունեցող բուհերի ուսումնական գործընթացում, երբ տարբեր առարկայական դասընթացների ծրագրերի պարտադիր բաղկացուցիչ մասն են կազմում Վճռաբեկ դատարանի որոշումները:

«Դատական նախադեպի» մշակույթի կայացման հարցում իրենց կարևորությունն ունեն չնայած Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի ընտրանիները, որոնք հրատարակվում են յուրաքանչյուր տարի՝ ապահովելով Վճռաբեկ դատարանի որոշումների հասանելիությունը հասարակության լայն զանգվածներին: Ուրախությամբ պետք է փաստել, որ այսօր արդեն ընթերցողի դատին է հանձնվում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումների թվով 10–րդ ընտրանին: Պատմական ակնարկ կատարելով ոչ վաղ անցյալին՝ պետք է փաստել, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումների 1–ին ընտրանին լույս է տեսել 2007 թվականին՝ ներառելով 2006 թվականի որոշումները և դրանց համառոտագրումները: Հետագա ժամանակահատվածում ընտրանիները հաջորդել են միմյանց՝ ժամանակի պահանջներին համահունչ ենթարկվելով որոշակի փոփոխությունների: Սույն ընտրանու ձևաչափն այսօր ներառում է նախաբան, բովանդակություն, գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումների համառոտագրումները՝ ըստ իրավական ինստիտուտների, այդ որոշումների ամբողջական տեքստերը, և լազերային սկավառակ, որում ամրագրված է գրքի էլեկտրոնային տարբերակը:

Եվ այսպես, ինչ նախադեպային դիրքորոշումներով նշանավորվեց 2016 թվականը:

Քաղաքացիական գործերով դարձյալ արդիական էին ընդհանուր սեփականության, գործարքների անվավերության, աշխատանքային և ընտանեկան իրավունքի, սնանկության, ապացույցների թույլատրելիության, նախնական դատական նիստ հրավիրելու և այլ ինստիտուտների մի շարք խնդրահարույց հարցեր: Այսպես՝ գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք կարող է ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքից բաժինը բնեղենով առանձնացվել այն պարագայում, երբ անշարժ գույքի մի մասը պետք է թողնվի ընդհանուր օգտագործման: Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ընդհանուր սեփականությունից բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջներ քննելիս դատարաններն առաջին հերթին պետք է հաշվի առնեն, թե արդյոք առաջարկվող տարբերակով (տարբերակներով) բաժնեմասի առանձնացման դեպքում հնարավոր է ապահովել առանձին ձևավորվող բաժնեմասերի ինքնուրույն օգտագործումը: Ընդ որում, առանձնացվող բաժնեմասերը կամ դրանցից որևէ մեկը սերվիտուտով ծանրաբեռնելը կամ ընդհանուր օգտագործման թողնելը չի կարող համարվել ընդհանուր սեփականության բաժինն առանձնացնելու պահանջը բացառող հանգամանք, քանի որ բաժանվող օբյեկտների այդպիսի փոխնապակածությունը, որպես այդպիսին, չի սահմանափակում դրանց ինքնուրույն օգտագործման հնարավորությունը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վճռաքաղաքացիական օրենսգրքի 197–րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրն ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի բաժանումը կամ դրանից բաժնի առանձնացումը բացառապես չի պայմանավորել բաժինների՝ իդեալապես առանձնացման տեխնիկական հնարավորությամբ: Հետևաբար՝ այն դեպքում, երբ համապատասխան փորձագիտական եզրակացությամբ առաջարկվում է վիճելի գույքի (տվյալ դեպքում՝ հողամասի) որոշ մասերի բնեղենով առանձնացում, իսկ մյուս մասը թողնվում է ընդհանուր օգտագործման, ապա դա չի կարող բացառել դատարանների կողմից նման հայցապահանջների բավարարումը, քանի որ, ըստ էության, այն դիրքորոշում է որպես բնեղենով առանձնացնելու հնարավոր տարբերակ:

Հատկանշական է մեկ այլ գործով կայացված այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Վճռաբեկ դատարանի որոշումների կատարմանն ուղղված վճարների բռնազանձման վերաբերյալ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի հայցապահանջի հիմնավորվածությանն այն դեպքում, երբ վերջինիս կողմից չեն ներկայացվել ինչպես այդ վճարների առաջացման հիմքերի, այնպես էլ համապատասխան պարտադիր նորմերի կատարման վերաբերյալ բավարար ապացույցներ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բազմաբնակարան շենքի շինության սեփականատերն օրենքի ուժով պարտավոր է իր սեփականության բաժնին համաչափորեն մասնակցելու պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին: Սեփականա-

տիրոջ համար, սակայն, վերոգրյալ պարտականությունը կարող է առաջանալ միայն օրենսդրությամբ ամրագրված որոշակի պարտադիր պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում: Մասնավորապես՝ դրանք են վճարային պարտավորության առաջացման որոշակի օբյեկտիվ հիմքը և օրենսդրության կողմից սահմանված հատուկ ընթացակարգի պահպանումը: Այլ կերպ ասած՝ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափն առաջանում է ոչ թե վերացականորեն, այլ որոշակի օբյեկտիվ նախադրյալներից, մասնավորապես՝ արդեն իսկ սեփականատերերի քննարկմանը և հաստատմանը ներկայացված ու կանխորոշված աշխատանքների նախահաշվից ելնելով, որից հետո միայն այդ աշխատանքների արժեքը բաշխվում է սեփականատերերի միջև: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականատերերի մոտ քննարկվող վճարային պարտականությունը կարող է առաջանալ միայն պարտադիր նորմերի կատարմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքները փաստացի կատարված լինելու դեպքում: Ընդ որում, նշված իրավական դիրքորոշումն ուղղորդող նշանակություն ունի ոչ միայն դատական պրակտիկայի համար, այլև կանխորոշում է բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների համապատասխան գործունեությունը:

Ուշադրության արժանի է այն որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանը բացահայտել է գրավի իրավունքի՝ որպես իրային իրավունքի բնույթը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ գրավի իրավունքը պետք է դիտարկել որպես «գույք»՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ գրավի իրավունքը հանդիսանում է գրավառուի սահմանափակ իրային իրավունքը, գրավառուն ունի հիմնական պարտավորության չկատարման դեպքում նախապատվության իրավունքով գրավադրված գույքի արժեքից իր պահանջների բավարարում ստանալու «օրինական սպասելիք»: Հետևաբար, սեփականության իրավունքի պաշտպանության թե՛ սահմանադրաիրավական, թե՛ կոնվենցիոն ընթացակարգերը հավասարապես կիրառելի են նաև գրավի իրավունքի պաշտպանության նկատմամբ: Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով բողոքում բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ գրավառուն իրավունք ունի դիմելու դատարան գրավի առարկա հանդիսացող և արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ պահանջով, և հայցը ենթակա է բավարարման, եթե այդ գույքն արգելանքի վերցնելը կամ արգելանքի տակ պահելը չի համապատասխանում սեփականության իրավունքի իրականացման նկատմամբ միջամտության թույլատրելի սահմաններին և չափանիշներին:

Որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանը բացահայտել է կեղծ գործարքի իրավական բնույթը: Վճռաբեկ դատարանը կեղծ գործարքը որակել է որպես կամքի արատով գործարք, քանի որ այն չի պարունակում գործարքի կողմերի նպատակադրված կամային ակտը՝ ներքին կամքը, ուղղված իրավունքների և պարտականությունների ծագմանը, փոփոխմանը կամ դադարմանը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործարքը կեղծ որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի գործարքի բոլոր կողմերի կամքն ուղղված լինի առերևույթ հարաբերության ծագման տպավորություն ստեղծելուն, հակառակ դեպքում, եթե գործարքի կողմերից միայն մեկն է նման նպատակ հետապնդում, ապա առկա կլինի կամքի արատով այլ գործարք: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ կեղծ գործարքի առկայությունը գնահատելիս դատարանները պետք է գնահատման արժանացնեն գործարքի կողմերի մոտակա և հեռահար նպատակները՝ հաշվի առնելով, որ գործարքի կնքման մոտակա նպատակը գործարքի տպավորություն ստեղծելն է, իսկ հեռահար նպատակը՝ կողմերի կամ նրանցից մեկի համար որևէ առավելություն ստանալը կամ որևէ սահմանափակում շրջանցելը:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական հարցին, թե արդյոք համատեղ սեփականության մասնակցի կողմից կնքված նվիրատվության գործարքը մյուս մասնակցի պահանջով կարող է անվավեր ճանաչվել այն դեպքում, երբ գործում առկա չէ որևէ գրավոր ապացույց այն մասին, որ մյուս մասնակցից տվել է իր համաձայնությունը գործարքը կնքելիս: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության դեպքում մյուս մասնակցի համաձայնությունը կարող է դրսևորվել ցանկացած ձևով՝ պայմանով, որ այդ համաձայնությունը լինի հստակ արտահայտված: Բացի այդ, նկատի ունենալով, որ համատեղ սեփականության մասնակցի համաձայնությունը

գործարք չէ, այլ անհրաժեշտ նախապայման է գործարքի կնքման համար՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության դեպքում մյուս մասնակցի համաձայնության ձևի նկատմամբ ենթակա չեն կիրառման գործարքի ձևի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, այլ կերպ ասած՝ նման համաձայնության արտահայտման համար պարտադիր չէ նոտարական ձևի պահպանման պահանջը:

Հայցային վաղեմության ինստիտուտին վերաբերող որոշ հարցեր արդիական էին նաև 2016 թվականին: Այսպես, գործերից մեկով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վիրավորանքի կամ զրպարտության դեպքում անձի կողմից իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու համար դատարան դիմելու ժամկետների հարաբերակցությանը հայցային վաղեմության ժամկետի հետ, ինչպես նաև դիրքորոշում է արտահայտել իրավաբանական անձի կողմից հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու հնարավորության վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոնշյալ ժամկետներն այնպիսի ժամկետներ են, որոնց ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար այդ ժամկետներն իրենց բնույթով համապատասխանում են հայցային վաղեմության ժամկետին, և դրանց նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության վերաբերյալ կանոնակարգումները: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով դատական պաշտպանության իրավունքի իրացման հարցում հայցային վաղեմության ինստիտուտի նշանակությունը, մասնավորապես այն, որ նշված ինստիտուտը որոշակիորեն սահմանափակում է շահագրգիռ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, գտել է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ իրավաբանական անձը ևս հնարավորություն ունենա օգտվել հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հնարավորությունից՝ հաշվի առնելով, որ այն դատարանի մատչելիության իրավունքի իրացման դրսևորումներից մեկն է: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ նշված կառուցակարգն իրավաբանական անձի նկատմամբ կիրառելի է միայն այն բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնց պատճառով իրավաբանական անձը գրկվել է դատարան դիմելու հնարավորությունից: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորել է այն, որ օրենսդրի կողմից նման հանգամանքների սպառիչ ցանկ չի նախատեսվել: Ուստի յուրաքանչյուր դեպքում դատարանների կողմից գնահատման է արժանի տվյալ հանգամանքի՝ իրավաբանական անձի համար դատարան դիմելուն խոչընդոտ հանդիսանալու աստիճանը:

Հիշատակման արժանի է նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք վարչական դատավարության կարգով գործի քննության հետ կապված դատական ծախսերը կարող են դիտարկվել որպես պատճառված վնաս, և արդյոք այդ ծախսերը որպես վնաս ենթակա են հատուցման մեկ այլ հայցով հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ծախսերի բռնագանձման հիմքը նույնական չէ վնասի պատճառման հետևանքով առաջացած պարտավորությունների ընդհանուր հիմքերի հետ, քանի որ դատական ծախսերի կազմի և բաշխման հետ կապված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ դատական ծախսերն այն ծախսերն են, որոնք կողմը կատարում է դատական կարգով իր իրավունքները պաշտպանելու համար, իսկ դատական ծախսերի բաշխման ընդհանուր սկզբունքն այն է, որ անձը, ում օգտին կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտը, պետք է դատական ծախսերի հատուցում ստանա մյուս կողմի հաշվին: Մինչդեռ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ վարքագծի միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Պատասխանողի կրած դատական ծախսերը հայցվորի կողմից նրան պատճառված վնաս չեն կարող դիտարկվել, քանի որ հայցվորը, իր ենթադրյալ իրավունքի պաշտպանության նպատակով դիմելով դատարան, չի դրսևորել հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծ: Այս երկու ինստիտուտների տարբերությունը դրսևորվում է նաև վրա հասնող հետևանքների առումով՝ դատական ծախսերը հատուցվում են խելամուտության սահմաններում, այսինքն՝ դրանց իրական ծավալը կարող է ավելի մեծ լինել, քան փաստացի հատուցման չափը, սակայն վնասի ինստիտուտի առնչությամբ այս սկզբունքը կիրառելի չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ վնասները ենթակա են հատուցման ամբողջ ծավալով:



Վնասի ինստիտուտի շրջանակներում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաև այն հարցի վերաբերյալ, թե արդյոք միայն նյութական փոխհատուցումը բավարար է վիրավորանքի կամ գրպարտության դեպքում անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման համար այն դեպքում, երբ հայցվորը ներկայացրել է ինչպես ոչ նյութական, այնպես էլ նյութական հատուցման պահանջ: Վճռաբեկ դատարանը նշել է, որ հաշվի առնելով այն, որ անձի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը ոչ նյութական բարիքներ են, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով օրենսդիրը դրանց հասցված վնասը հատուցելու **առաջնահերթ** ձևեր է սահմանել ոչ նյութական միջոցները՝ նյութական կամ ոչ նյութական հատուցման պահանջ ներկայացնելու ընտրության հարցը վերապահելով վիրավորանքի կամ գրպարտության ենթարկված անձին: Ընդ որում, անձը կարող է պահանջել օրենքով սահմանված հատուցման ձևերից մեկը կամ մի քանիսը: Դա նշանակում է, որ եթե անձը վիրավորանքի կամ գրպարտության համար պահանջել է միայն փոխհատուցման ոչ նյութական միջոց, դատարանը պարտավոր է բավարարվել միայն ոչ նյութական փոխհատուցման միջոց կիրառելով, իսկ եթե անձը պահանջել է հատուցման և՛ ոչ նյութական, և՛ նյութական միջոցներ կիրառել, ապա առաջին հերթին կիրառման է ենթակա հատուցման ոչ նյութական միջոցը և միայն դրա անբավարարության դեպքում դատարանը կարող է կիրառել նյութական փոխհատուցման միջոցը: Դատարանն իրավասու չէ հատուցման ոչ նյութական և նյութական միջոցներ կիրառելու պահանջներ ներկայացված լինելու պարագայում կիրառել միայն նյութական միջոցը, քանի որ դա կենթադրի նյութական հատուցման միջոցներ տրամադրելով ոչ նյութական բարիքների դեմ անարգել ոտնձգելու հնարավորություն, ինչը կհակասի մարդու արժանապատվության՝ բարձրագույն արժեք լինելու գաղափարին:

Ուշագրավ է նաև Վճռաբեկ դատարանի այն որոշումը, որում անդրադարձ է կատարվել այն հարցին, թե արդյոք գործողման մեկնած աշխատողին հատուցվող գործուղման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, հանդիսանում են աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճարում: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործուղման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, հանդիսանում են փոխհատուցման վճարներ, որոնք տրվում է աշխատողին աշխատանքային պարտականությունները ժամանակավորապես իր հիմնական աշխատավայրից դուրս՝ այլ վայրում կատարելու կապակցությամբ կատարված կամ կատարվելիք որոշակի **ծախսերը հատուցելու** (այլ ոչ թե աշխատանքի դիմաց վարձատրելու) նպատակով: Հետևաբար գործուղման ծախսերը, ի տարբերություն, օրինակ, հավելման, չեն կարող ներառվել աշխատանքի վարձատրության տարրերի մեջ մտնող փոխհատուցման վճարների մեջ՝ հաշվի առնելով աշխատավարձի (կամ դրան հավասարեցված վճարների)՝ կատարված **աշխատանքի** դիմաց վարձատրության բնույթ ունենալը, իսկ գործուղման ծախսերի՝ կատարված **ծախսերի** փոխհատուցման բնույթ ունենալը: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործուղման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, չեն հանդիսանում աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճար:

Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ անդրադարձել է պարտապանին հարկադրաբար սնանկ ճանաչելու առանձնահատկություններին այն դեպքում, երբ վճարային պարտավորության անվիճելիությունը հիմնավորվում է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից: Վճռաբեկ դատարանը նախ արձանագրել է, որ ելնելով անձին սնանկ ճանաչելու տարբեր հիմքերի առանձնահատկություններից՝ օրենսդիրն անձին սնանկ ճանաչելու յուրաքանչյուր հիմքի համար սահմանել է տարբեր կարգավորումներ: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության դիմումի հիմքում ընկած պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունենալու հանգամանքը (ներառյալ՝ պահանջի հաշվանցը), ապա համապատասխան իրավասու պետական մարմինը պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել, եթե հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուշացվում է: Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումն իրավասու պետական մարմինը պետք է **ներկայացնի պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում**: Միաժամանակ

օրենսդիրը սահմանել է, որ պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում համապատասխան պետական մարմինների կողմից սնանկության դիմում չներկայացվելու դեպքում անձին սնանկ ճանաչելու դիմումը ներկայացնում են դատախազության մարմինները՝ նույն օրենքով սահմանված կարգով: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ ըստ էության օրենսդիրը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանելով սնանկության դիմում ներկայացնելու ժամկետային սահմանափակում, միաժամանակ նախատեսել է նաև դրա խախտման հետևանքները՝ մի դեպքում՝ սնանկության դիմում ներկայացնելու իրավունքը վերապահելով այլ պետական մարմին՝ դատախազությանը, մյուս դեպքում՝ սահմանելով համապատասխան պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվություն ժամկետի խախտման հետևանքով Հայաստանի Հանրապետությանը և համայնքին պատճառված վնասի համար:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև այն իրավիճակին, երբ սնանկության դիմումի հիմքում ընկած է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, իսկ պարտապանը ողջամիտ ժամկետում չի կատարում այդ վճռից բխող իր պարտավորությունը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ դեպքում պարտատերն իրավասու է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու երկու եղանակով, այն է՝ կամ սնանկության դիմումով դիմել դատարան, կամ օրենքով սահմանված ժամկետում օրինական ուժի մեջ մտած վճիռը ներկայացնել հարկադիր կատարման: Բոլոր այն դեպքերում, երբ սնանկության հիմքում դրված է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, ապա պարտատերը սնանկության դիմումը դատարան պետք է ներկայացնի վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված կարգով կատարման ներկայացնելու ժամկետի սահմաններում: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում կատարման չներկայացնելու դեպքում տվյալ վճռից բխող իրավունքներն ու պարտականությունները ենթակա չեն իրականացման:

2016 թվականի ընթացքում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև քաղաքացիական դատավարության մի շարք ինստիտուտներին: Այսպես՝ գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք դատարանը պարտավոր է որպես ապացույց հետազոտել օտար լեզվով կազմված գրավոր փաստաթղթերը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ օտար լեզվով կազմված փաստաթղթերի ներկայացման դեպքում ապացուցման պարտականություն ունեցող դատավարության մասնակիցների կողմից պետք է ներկայացվի նաև այդ փաստաթղթի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում գրավոր ապացույցը համարվում է պատշաճորեն թարգմանված, եթե թարգմանության իսկությունը վավերացված է նոտարական կարգով («Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետ և 68–րդ հոդված): Օտարալեզու գրավոր ապացույցի հետ մեկտեղ դրանց պատշաճորեն հաստատված (թարգմանության իսկությունը նոտարական կարգով վավերացված) հայերեն թարգմանությունները չներկայացվելու դեպքում դատարանը պետք է օտար լեզվով կազմված փաստաթղթերը հանի հետազոտման ենթակա ապացույցների շարքից: Այլ կերպ ասած՝ դատարանը պարտավոր է օտար լեզվով կազմված գրավոր ապացույցը ճանաչել անթույլատրելի և հանել գործում առկա ապացույցների կազմից, եթե այդ ապացույցը ներկայացրած դատավարության մասնակիցը չի ներկայացրել նաև դրա՝ պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը:

Նույն որոշման շրջանակներում անդրադառնալով հատուկ վարույթի կարգով քննվող գործերով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի անցկացման հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հատուկ վարույթի կարգով քննվող գործերի դեպքում գործը դատաքննության նախապատրաստելու փուլին վերաբերող կանոնները գործում են սահմանափակ ծավալով՝ պայմանավորված վարույթի այս տեսակի առանձնահատկություններով: Հատուկ վարույթի կարգով քննվող գործերի շրջանակներում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի որոշ գործողություններ օբյեկտիվորեն չեն կարող իրականացվել (օրինակ՝ հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման կիրառումը) կամ էլ իրականացվում են վարույթի այս տեսակի առանձնահատկությունների հաշվառմամբ (օրինակ՝ հայցի հիմքի և առարկայի պար-

զումը դրսևորում է դիմումի հիմքը և առարկան ճշգրտելով): Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը փաստել է հատուկ վարույթի գործերով ևս նախնական դատական նիստ հրավիրելու անհրաժեշտությունը:

Հիշատակման արժանի է այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել դատաքննության փուլում հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու հնարավորության հարցի վերաբերյալ այն դեպքում, երբ գործի քննությունն իրականացվում է գործը դատաքննության նախապատրաստելու կանոններով: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, հայցվորին հնարավորություն ընձեռելով փոխելու հայցի հիմքը կամ առարկան, գործը լիարժեք կերպով դատաքննության նախապատրաստելու, արդյունքում նաև՝ գործի ժամանակին և ճիշտ լուծումն ապահովելու նկատառումով սահմանափակել է դատավարական նշված իրավունքի իրականացման հնարավորությունը գործը դատաքննության նախապատրաստելու փուլի շրջանակներով: Այլ կերպ ասած՝ հայցվորը հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխել միայն գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Ուշագրավ է նաև այն որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը ենթակա է վերականգնման միայն ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու դեպքում, եթե չի լրացել այդ դատական ակտով պարբերական վճարումների համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո մեկ տարվա ժամկետը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ հարկադիր կատարման ենթակա վերջնական դատական ակտի կատարումը պետք է տեղի ունենա դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի հետո, կամ պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարումն առանց կատարողական վարույթի հարուցման ընդհատվում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված մեկ տարվա ժամկետից հետո: Գործող օրենսդրության պայմաններում նման դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը ևս պետք է կատարման ներկայացվի այդ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում: Վճռաբեկ դատարանը նշել է, որ նման իրավակարգավորումը չի բխում վերջնական դատական ակտի կատարման պահանջատիրոջ իրավունքի երաշխավորված իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման պետության պարտականության էությունից, միաժամանակ բացառելով պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարման որևէ հնարավորությունն առանց վարչական հարկադրանքի: Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը, ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումի առկայության պայմաններում կատարողական թերթ տված դատարանը պարտավոր է հաշվի առնել կատարողական թերթը կատարման ներկայացնելու հիմքում ընկած բոլոր փաստական հանգամանքները և վերականգնել բաց թողած ժամկետը, եթե դա պայմանավորված է եղել դատական ակտով որոշված պարտավորությունը դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից հետո մեկ տարին գերազանցող ժամկետով, կամ պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարման ընդհատմամբ, երբ պարտատիրոջ կարծիքով սպառվել է դատական ակտի կամավոր կատարման հնարավորությունը:

2016 թվականը հատկանշական էր նաև վարչական գործերով ընդունված որոշումների նշանակությամբ: Այսպես, որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտն ունի հետադարձ ուժ այն պայմաններում, երբ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքը չի նախատեսում այդ ակտին հետադարձ ուժ հաղորդելու վերաբերյալ որևէ դրույթ, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված է, որ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում ունեն հետադարձ ուժ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կամ լրացում նախատեսող բոլոր այն ակտերը, որոնք մեղմացնում կամ վերացնում

են վարչական իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվությունը, ունեն հետադարձ ուժ՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից, քանի որ այդ ակտերում դրանց հետադարձ ուժ տալու մասին դրույթ ներառելու անհրաժեշտությունը վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավակարգավորման պարագայում բացակայում է: Ընդ որում, պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքում դրան հետադարձ ուժով գործողության վերաբերյալ դրույթի բացակայությունը չի կարող դիտարկվել որպես այդ ակտի՝ հետադարձ ուժի գործողության արգելք, քանի որ դա կհակասի իրավական որոշակիության և օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների պահպանման անհրաժեշտության սկզբունքներին:

Ուշագրավ է նաև այն որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական ակտը պետք է նշում պարունակի ճանապարհային երթևեկության այն կոնկրետ կանոնի մասին, որի խախտման համար անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության: Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան զանցակազմը հղում է կատարում ճանապարհային երթևեկության այս կամ այն կանոնին՝ առանց մանրամասնելու այդ կանոնի բովանդակությունը, ապա տվյալ զանցակազմի հիման վրա անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական ակտը պետք է նշում պարունակի ճանապարհային երթևեկության այն կոնկրետ կանոնի մասին, որի խախտման համար անձը ենթակա է վարչական պատասխանատվության: Նման դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածով սահմանված այն իրավական կարգավորումը, որի համաձայն՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը պետք է պարունակի գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը: Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական գործի շրջանակներում հաստատման ենթակա հանգամանքներից մեկը վարչական պատասխանատվության ենթակա անձի կողմից խախտված ճանապարհային երթևեկության կոնկրետ կանոնն է, որը պետք է անպայմանորեն ներառվի վարչական տույժ նշանակելու մասին որոշման բովանդակության մեջ, եթե վարչական պատասխանատվության հիմք հանդիսացող համապատասխան զանցակազմը չի պարունակում ճանապարհային երթևեկության տվյալ կանոնի նկարագրությունը:

Որոշումներից մեկում էլ անդրադառնալով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պայմաններին՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վարչական մարմնի գործողության ոչ իրավաչափությունը հաստատված լինելու հանգամանքն ինքնին բավարար չէ պատճառված նյութական վնասի հատուցման համար: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Այսինքն՝ վարչական մարմինների պարտականությունների խախտման և վնասի պատճառման միջև պետք է առկա լինի իրավական նշանակություն ունեցող պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝ վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելը դեռևս չի նշանակում, որ անձը վնասը կրել է հենց վարչարարության հետևանքով. անհրաժեշտ է, որ վարչարարության և պատճառված վնասի միջև առկա լինի անմիջական պատճառահետևանքային կապ:

Հիշատակման արժանի է այն որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իրավական դիրքորոշում է հայտնել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելուց հետո կատարողական թերթը կրկին կատարման ներկայացվելուց հետո օրենքով նախատեսված պայմանների պահպանման դեպքում կատարողական վարույթը վերսկսվում է, թե՛ հարուցվում է նոր կատարողական վարույթ: Վճռաբեկ դատարանը նշել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելու և

կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելու դեպքում կատարողական թերթը կարող է ներկայացվել նոր կատարման. այդ դեպքում ավարտված կատարողական վարույթը չի կարող կրկին վերսկսվել, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը կատարողական վարույթն ավարտելուց և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելուց հետո այն կրկին (նոր) կատարման ներկայացնելու դեպքում կատարողական վարույթը վերսկսելու վերաբերյալ որևէ իրավակարգավորում չի պարունակում: Կատարողական վարույթն ավարտելուց և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելուց հետո այն նոր կատարման ներկայացվելու արդյունքում կարող է հարուցվել նոր կատարողական վարույթ՝ օրենքով նախատեսված որոշակի պայմանների պահպանված լինելու դեպքում:

Նույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա է դարձրել նաև այն հարցը, թե արդյոք պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելու դեպքում կրկին կատարման ներկայացված կատարողական թերթի հիման վրա կարող է նոր կատարողական վարույթ հարուցվել, եթե կատարողական թերթը կրկին կատարման է ներկայացվել դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկամյա ժամկետը լրանալուց հետո, և առկա չէ կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելը, ըստ էության, կատարողական թերթը կատարման ներկայացնելն է՝ առանց որևէ էական տարբերության: Ոստի կատարողական թերթը կրկին (նոր) կատարման ներկայացնելու դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է կատարել միևնույն գործողությունները, ինչ որ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու պարագայում: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի հիմքով, հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, եթե բացակայում է կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

2016 թվականին արդիական էին նաև հարկային օրենսդրության հիմնախնդիրները: Այսպես՝ գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա է դարձրել այն դեպքը, երբ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ օտարվում է անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույք՝ պատասխանելով այն հարցին, թե արդյոք «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով առաջինն օտարված գույքի ձեռքբերման ժամանակահատվածը նշանակություն ունի երկրորդ և ավելի թվով օտարումներն ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք որակելու համար: Հանգամանակից վերլուծելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի վերաբերելի իրավադրույթները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք՝ որոշակի պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝ այդպիսին, մասնավորապես, դիտելով հետևյալը. թե՛ առաջին, թե՛ հաջորդող գործարքներով տեղի է ունեցել անձի սեփականությունը հանդիսացող գույքի օտարում, թե՛ առաջին, թե՛ հաջորդող օտարումները կատարվել են որևէ ձևով հատուցման դիմաց, գործարքով օտարվել է այնպիսի տեսակի գույք, որպիսի տեսակի գույք (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենա, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողեր, ավտոտնակ) նախկինում մեկ օրացուցային տարվա ընթացքում արդեն օտարվել է նույն անձի կողմից (այսուհետև՝ նույն տեսակի գույք), գործարքը նույն տեսակի գույքի՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում օտարման հերթական գործարք է, որը նույն անձի կողմից իրականացվում է երկրորդ կամ ավելի թվով անգամ, գործարքով օտարվել է գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մինչև մեկ տարվա ընթացքում: Այսինքն՝ որպեսզի երկրորդ կամ հաջորդող գործարքով նույն տեսակի գույքի օտարման գործարքը համարվի ապրանքի մատակարարում, օտարվող գույքը պետք է ձեռք բերված լինի օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Ուշագրավ է նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործն ընդդատյա է վարչական դատարանին, թե՛ ընդհանուր իրավասության դատարանին: Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ վեճի սուբյեկտները բացառապես մասնավոր անձինք են, ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է քաղաքացիական իրավունքի մասնավոր սուբյեկտի՝ ապրանքային նշանի իրավատիրոջ կամ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ապրանքային նշանի օգտագործման հետ կապված իր քաղաքացիական իրավունքները բարեխիղճ իրականացնելու պարտականությանը և այդ քաղաքացիական իրավունքի իրականացումից հրաժարվելու անբարենպաստ իրավաբանական հետևանքներին, նշված իրավահարաբերությունը ծագում է ոչ թե այդ հանրային շահի իրացման, այլ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձի մասնավոր տնտեսական շահերի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացման և առարկայացման կապակցությամբ, գտել է, որ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ դատական գործերը բխում են մասնավոր՝ քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագող վեճից և ընդդատյա են ընդհանուր իրավասության դատարանին:

Հիշատակման արժանի է նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել այն հարցին, թե արդյոք Երևանի քաղաքապետը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին, կարող է շարունակել մասնակցել վարչական գործի քննությանը, եթե նա՝ որպես պատասխանող, այդ գործին ի սկզբանե ներգրավված է եղել որպես տարածքային կառավարման մարմին, սակայն սույլ գործի քննության ընթացքում Երևանի կարգավիճակը փոխվել է: Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ Երևանի քաղաքապետի կարգավիճակը փոխվելուց հետո ֆիզիկական և իրավաբանական անձինք դիմել են վարչական դատարան Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի ընդունած վարչական ակտերի, կատարած գործողությունների կամ ցուցաբերած անգործության բողոքարկման պահանջով, և հայցը ներկայացվել է Երևանի քաղաքապետի (որպես համայնքի ղեկավարի) դեմ, ապա վարչական դատարանը պարտավոր է լուծել Երևանի քաղաքապետին պատշաճ պատասխանողով փոխարինելու հարցը, որպիսին կարող է հանդես գալ Հայաստանի Հանրապետությունը:

Դատական պրակտիկայի համար ուղղորդող նշանակություն ունեն նաև միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումներում Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումները: Քաղաքացիական գործերով հարկ է առանձնացնել այն որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանը, օրենսդրական բացի պայմաններում իրականացնելով իրավունքի զարգացմանը նպաստելու իր գործառույթը, իրավական դիրքորոշում է արտահայտել այն հարցի վերաբերյալ, որ ֆիզիկական անձինք ազատված են իրենց գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտերի բողոքարկման համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականությունից: Մեկ այլ որոշմամբ էլ ելնելով արդար դատաքննության իրավունքի ապահովման անհրաժեշտությունից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ինչպես օտարերկրյա պետության դատական ակտը ՀՀ տարածքում ճանաչելու և հարկադիր կատարման միջոցներ կիրառելու մասին, այնպես էլ այդպիսի ակտի ճանաչումը մերժելու մասին ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման: Ընդ որում, նշված որոշումները ենթակա են բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կանոններով: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերը նշված որոշումներով, ըստ էության, եզրափակվում է օտարերկրյա դատական ակտի ճանաչման վարույթը:

Վարչական գործերով կայացված որոշումներից ուշագրավ է այն որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու

մասին հարկադիր կատարողի որոշումները վերացնելուն ուղղված հայցապահանջները վարչական դատարանում ենթակա լինեն քննության ճանաչման հայցի կանոններով: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն իրավաբանական իրողությունը, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վերացման նպատակով անձը չի կարող դատարան դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66–68–րդ հոդվածներով նախատեսված հայցատեսակներից որևէ մեկով, քանի որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վերացման հայցապահանջը չի համապատասխանում ո՛չ վիճարկման, ո՛չ պարտավորեցման, ո՛չ գործողության կատարման հայցատեսակներին:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք անգործունակ ճանաչված անձն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել իր նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ որոշումը, և եթե այո, ապա արդյոք այդ որոշումը ենթակա է բողոքարկման քաղաքացիական, թե վարչական դատավարության կարգով: Վճռաբեկ դատարանը, վերլուծելով անգործունակի կարգավիճակին վերաբերող միջազգային փաստաթղթերը, ինչպես նաև հիմք ընդունելով Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումները, գտել է, որ անգործունակ ճանաչված անձը ևս պետք է հնարավորություն ունենա դատական կարգով բողոքարկելու իր նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով բողոքարկելու նշված գործերով կայացված դատական ակտերը, այսինքն՝ անգործունակ ճանաչված անձը ևս պետք է ընդգրկված լինի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37–րդ հոդվածով նախատեսված շահագրգիռ անձանց շրջանակում: Միաժամանակ նկատի ունենալով, որ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշմանը բնորոշ են վարչական ակտի բնութագրող հատկանիշները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ այդ որոշման բողոքարկումը պետք է իրականացվի վարչական դատավարության կարգով:

Ի հարկե, վերը թվարկված որոշումներն ամբողջը չեն, և առկա են նաև բազմաթիվ այլ գործեր, որոնցով կայացված որոշումներն ուղղորդող նշանակություն են ունեցել և ունենալու են դատական պրակտիկայի ձևավորման համար: Դրանք առավել ամփոփ ձևով ներկայացված են սույն ընտրանիում:

Հուսով եմ, որ սույն ընտրանին, ինչպես և նախորդները, շարունակելու է նպաստել կայացված նախադեպային որոշումների հասանելիության և կիրառության ապահովմանը, խթանելու է դատավորների և դատական ծառայողների, փաստաբանների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, իրավակիրառ հանրության այլ ներկայացուցիչների գործունեության արդյունավետության բարձրացմանը, դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդմանը:

*ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատի նախագահ  
Ե. Հ. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Թիվ 10

Հունվար-դեկտեմբեր 2016

**ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ  
ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ .....	1
Ընդհանուր սեփականություն .....	1
Բազմաբնակարան շենքի կառավարում .....	17
Ընդհանուր դրույթներ գրավի մասին .....	28
Գործարքներ .....	38
Հայցային վաղեմություն .....	64
Պայմանագրերից ծագող պարտավորություններ .....	84
Վարկային պայմանագիր .....	84
Ապահովագրություն .....	94
Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ .....	102
Ժառանգման իրավունք .....	123

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ** ..... 145

**ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ** ..... 161

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ** ..... 170

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Դատարան դիմելու իրավունքը .....	183
Ապացույցներ և ապացուցում .....	192
Հայցի փոփոխություն .....	202
Գործը դատաքնության նախապատրաստելը .....	212
Վարույթը վերաքննիչ դատարանում .....	232
Դատական ակտերի հարկադիր կատարում .....	241

**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Վարչական պատասխանատվություն .....	254
Վարչարարություն և վարչական վարույթ .....	310
Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթ .....	364



Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում ..... 386  
Հարկային իրավունք ..... 405  
Սոցիալական ապահովություն ..... 435

**ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Վարույթը վարչական դատարանում ..... 453  
Ապացույցներ և ապացուցում ..... 494

**ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ**

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ**

**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

Հայց հարուցելու իրավունք ..... 505  
Դատական ծախսեր ..... 520  
Հատուկ վարույթներ ..... 532  
Օտարերկրյա պետությունների դատարանների դատական ակտերի  
ճանաչումը և կատարումը ..... 540

**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

Վարույթը վարչական դատարանում ..... 549

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

#### *Ընդհանուր սեփականություն*

22.07.2016 թ.

1. Սամվել Ֆրանգուլյանն ընդդեմ Հենրիկ Ֆրանգուլյանի, քաղ. գործ թիվ ԵԷԴ/1089/02/13

Էջ  
1-9

**Խնդիր.** Կարո՞ղ է արդյոք ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքից բաժինը բնեղենով առանձնացվել այն պարագայում, երբ անշարժ գույքի մի մասը պետք է թողնվի ընդհանուր օգտագործման:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի կարգավորումներին, նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջելու ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնություն: Միաժամանակ այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ այդպիսի առանձնացումն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը միայն նրանց համաձայնությամբ, քանի որ այդպիսի համաձայնության բացակայությունը կհանգեցնի կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության սկզբունքի խախտման, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման: Վերոգրյալ համաձայնության պարտադիր լինելը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն՝ մյուս սեփականատերերը նրան փոխհատուցում վճարելու իրավունք ունեն նույնպես միայն նրա համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի (*տե՛ս Գավիթ Ասատրյանն ընդդեմ Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի թիվ ԵՄԴ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Ջարգացնելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Նելլի Հարությունյանն ընդդեմ Աղաջան Ավագյանի թիվ ԵԷԴ/1661/02/09 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշմամբ նշել է, որ գոյություն ունեցող իրավակարգավորումը հնարավոր է համարում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնել ինչպես բնեղենով, այնպես էլ դրամական հատուցմամբ: Ընդ որում, նախապատվությունը տրվում է բաժինը բնեղենով առանձնացնելուն, քանի որ այս դեպքում անձը շարունակում է պահպանել իր սեփականության իրավունքը բնեղենով առանձնացված մասի սկստմամբ, մինչ-

դեռ փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնետնասի նկատմամբ դադարում է:

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ ընդհանուր սեփականությունից բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջներ քննելիս դատարաններն առաջին հերթին պետք է հաշվի առնեն, թե արդյոք առաջարկվող տարբերակով (տարբերակներով) բաժնետնասի առանձնացման դեպքում հնարավոր է ապահովել առանձին ձևավորվող բաժնետնասերի ինքնուրույն օգտագործումը: Ընդ որում, առանձնացվող բաժնետնասերը կամ դրանցից որևէ մեկը սերվիտուտով ծանրաբեռնելը կամ ընդհանուր օգտագործման թողնելը չի կարող համարվել ընդհանուր սեփականության բաժինն առանձնացնելու պահանջը բացառող հանգամանք, քանի որ բաժանվող օբյեկտների այդպիսի փոխկապվածությունը, որպես այդպիսին, չի սահմանափակում դրանց ինքնուրույն օգտագործման հնարավորությունը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197–րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրն ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի բաժանումը կամ դրանից բաժնի առանձնացումը բացառապես չի պայմանավորել բաժինների՝ իդեալապես առանձնացման տեխնիկական հնարավորությամբ: Նման հետևությունը բխում է նաև նույն հոդվածի 4–րդ կետի շարադրանքից, համաձայն որի՝ բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող գույքի *անհամաչափությունը* բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը բաժանելիս փորձագետի եզրակացությամբ այդպիսի բաժանումը հնարավոր է համարվում առանձնացվող գույքի անհամաչափությունը փոխհատուցելու կամ որոշ տարածքներ ընդհանուր օգտագործման թողնելու տարբերակներով, իրավաչափ է առաջարկվող տարբերակներից որևէ մեկով գույքի բնեղենով բաժանումը: Այսինքն՝ այն դեպքում, երբ համապատասխան փորձագիտական եզրակացությամբ առաջարկվում է վիճելի գույքի (տվյալ դեպքում՝ հողամասի) որոշ մասերի բնեղենով առանձնացում, իսկ մյուս մասը թողնվում է ընդհանուր օգտագործման, ապա դա չի կարող բացառել դատարանների կողմից նման հայցապահանջների բավարարումը, քանի որ, ըստ էության, այն դիտարկվում է որպես բնեղենով առանձնացնելու հնարավոր տարբերակ:

**22.04.2016 թ.**

**2. Մնացական Նախոյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանն ընդդեմ Լեյլի Պետրոսյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԱԲԱԴ/0333/02/14**

**Էջ  
10–16**

*Խնայիր.* Արդյոք «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29–րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում սնանկության գործով կառավարիչը կարող է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200–րդ հոդվածի հիմքով դիմել դատարան սնանկ ճանաչված պարտապանի՝ ընդհանուր սեփականության գույքում ունեցած բաժինն առանձնացնելու և դրա վրա սնանկության վարկություն գրանցված պահանջատերերի պարտավորությունների կատարման համար բռնագանձում տարածելու պահանջով:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29–րդ հոդվածի 1–ին մասի «բ» և «գ» կետերի և նույն հոդվածի 3–րդ մասի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի դատավարական իրավունքներն իրացնում է կառավարիչը: Մասնավորապես՝ վերջինս պարտապանի անունից դիմում է դատարաններ դատա-

կան կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վճճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից: Նշվածից հետևում է, որ սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի անունից դատարան հայց ներկայացնելու իրավունքը ևս իրացնում է կառավարիչը:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի իրավական վերլուծությանը, նշել է, որ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու **պարտատիրոջ պահանջի իրավունքը** ծագում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված այն դեպքի համար, երբ ընդհանուր սեփականության մասնակից պարտապանի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման համար: Նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում ապահովելու ընդհանուր սեփականության մասնակցների իրավունքների իրավունքների առավելագույն պաշտպանությունն իրենց հետ ընդհանուր գույքում բաժին ունեցող պարտապանի ունեցած պարտավորությունների կատարման գործընթացում (*լրեն Լատրա Դավթյանն ընդդեմ Արսեն Մակարյանի և մյուսների թիվ ԼԴ4/0280/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումն ունի հստակ սուբյեկտային կազմ՝ **պարտապանի և պարտապան**, որոնք քաղաքացիադատավարական վարույթում համապատասխանաբար հանդես են գալիս որպես հայցվոր և պատասխանող: Ընդ որում, պարտապանը միաժամանակ հանդիսանում է ընդհանուր սեփականության մասնակից, և նրա այլ գույքը բավարար չէ պարտատիրոջ հանդեպ ունեցած պարտավորությունը կատարելու համար: Այսպիսով, ընդհանուր սեփականությունում պարտապանի բաժնի առանձնացման և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջի իրավունքը **պատկանում է** ընդհանուր սեփականության մասնակից հանդիսացող պարտապանի **պահանջատիրոջը**: Հետևաբար շահագրգիռ անձը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի հիմքով դիմելով դատարան, ի թիվս այլ հանգամանքների, նախևառաջ պետք է հիմնավորի ընդհանուր սեփականության համապատասխան մասնակցի՝ իր նկատմամբ չկատարված պարտավորություններ ունենալու հանգամանքը:

Վերը շարադրվածի համատեքստում անդրադառնալով բողոքի հիմքում բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ կառավարիչը սնանկ ճանաչված պարտապանի անունից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածով նախատեսված կարգով դատարան դիմելու իրավունք չունի այն դեպքում, երբ պահանջում է առանձնացնել սնանկ ճանաչված պարտապանի՝ ընդհանուր գույքում ունեցած բաժնեմասը և դրա վրա բռնագանձում տարածել սնանկության վարույթում գրանցված պարտատիրոջ պահանջը բավարարելու համար: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը նախևառաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարիչը հայց հարուցում է բացառապես սնանկ ճանաչված պարտապանի անունից, որը տվյալ պարագայում սնանկության վարույթում գրանցված պահանջատերերի հետ փոխհարաբերություններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի իմաստով ևս հանդիսանում է պարտապան, մինչդեռ, ինչպես բխում է վերը շարադրված վերլուծությունից, նման հայցապահանջով դատարան կարող է դիմել պարտատերն ընդդեմ պարտապանի:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության գործով կառավարիչը, իրականացնելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունները, պարտավոր է գրանցված պահանջատերերի պա-

հանջները բավարարելու համար հավաքագրել և իրացնել պարտապանին պատկանող ակտիվներն ու գույքը: Ընդհանուր սեփականությունում պարտապանի մասնակցության պայմաններում օգտվելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված իրավունքից՝ սնանկության գործով կառավարիչը, ելնելով նպատակահարմարությունից, կարող է ընդհանուր սեփականությունում պարտապանի բաժինն օտարել բնեղենով՝ առանց այդ բաժինն առանձնացնելու կամ բաժինն առանձնացնելուն միտված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված գործողությունները կատարելուց հետո, բայց բոլոր դեպքերում հանդես գալով որպես սնանկ ճանաչված պարտապանի ներկայացուցիչ:

### ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

22.04.2016 թ.

3. «Շենքերի կառավարում» համատիրությունն ընդդեմ Նորիկ Չթյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/0936/02/14

Էջ  
17-27

**Խնդիր.** Ենթակա՞ է արդյոք բավարարման «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների բռնագանձման վերաբերյալ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի հայցապահանջն այն դեպքում, երբ վերջինիս կողմից չեն ներկայացվել ինչպես այդ վճարների առաջացման հիմքերի, այնպես էլ համապատասխան պարտադիր նորմերի կատարման վերաբերյալ բավարար ապացույցներ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ սահմանադրական դատարանը, 26.05.2009 թվականի թիվ ՄԴՈ-804 որոշմամբ գնահատելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանադրականությունը, արձանագրել է, որ «պարտադիր նորմ» հասկացության իրավական բովանդակությունը բացահայտված է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետում, ըստ որի՝ պարտադիր նորմերը սեփականության պահպանման այն պահանջները և պարտադիր միջոցառումներն ու աշխատանքներն են, որոնց չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել ընդհանուր բաժնային սեփականությանը, շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին: Պարտադիր նորմերի մեջ, ըստ նույն հոդվածի 2-րդ կետի, ներառվում են հակահրդեհային, սանիտարական, քաղաքաշինական, կոմունալ սպասարկման և այլ միջոցառումներ: Համաձայն նույն կետի՝ պարտադիր նորմերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, որը սպառնիչ կերպով սահմանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմնի, այն է՝ բազմաբնակարան շենքի սեփականատերերի ժողովի լիազորությունները, ի թիվս այլնի, ժողովին լիազորում է ընտրել բազմաբնակարան շենքի կառավարման ձևը և կառավարման մարմինը: Այս լիազորությանը համապատասխան՝ նույն օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է, որ **պարտադիր նորմերի պահպանման հարցերում** ընդհանուր բաժնային գույքի կառավարման համար բազմաբնակարան շենքի սեփականատերերը կարող են ընտրել շենքի կառավարման մարմին, մասնավորապես՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը կարող է իրականացվել շինության սեփականատերերի կողմից ստեղծված իրավաբանական անձի՝ համատիրության միջոցով (...), իսկ նույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ համատիրության ստեղծման մասին **որոշման մեջ պետք է**

**արտացոլվի պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ցանկը:**

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշման՝ շենքի սեփականատերերը, կառավարման մարմին ձևավորելիս դրա ձևավորման համար հիմք հանդիսացող համապատասխան փաստաթղթում պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ցանկը ներառելով, **այդպիսով ըստ էության հաստատում են տվյալ բազմաբնակարան շենքի համար անհրաժեշտ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքների ցանկը:**

Ելնելով «պարտադիր նորմ» հասկացության բովանդակությունից և պարտադիր վճարների գանձման նպատակատրոգվածությունից՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ այդ վճարը բազմաբնակարան շենքի **ընդհանուր բաժնային սեփականության պահպանման համար անհրաժեշտ միջոցառումներին և աշխատանքներին սեփականատերերի համաչափ մասնակցության ձև է:** Ընդ որում, սեփականատերն ազատ է մասնակցության ձևերի միջև ընտրություն կատարելու հարցում: Վճարն այն այլընտրանքային ձևն է, որը փոխարինում է անհրաժեշտ աշխատանքները սեփական ծախսերով և միջոցներով կատարելուն: ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը ձևավորվում է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի, «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի «գ» ենթակետի, նույն օրենքի 27-րդ հոդվածի իրավանորմերի գործողության արդյունքում: Ըստ այդմ՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշված նորմերի գործողության արդյունքում արձանագրել է հետևյալ իրավակիրառական պրակտիկան. մինչ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքներ կատարելը բազմաբնակարան շենքի կառավարման մարմինը կազմում է ընթացիկ տարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ ակտ, այնուհետև՝ նախահաշիվ, և նախահաշվային գումարն ընդգրկվում է շենքի տարեկան բյուջեի մեջ: Այն քննարկվում և հաստատվում է ընդհանուր ժողովում: Բյուջեի հաստատումից հետո դրա ծախսային մասը բաժանվում է սեփականատերերի վրա՝ ըստ ընդհանուր բաժնային սեփականության մեջ նրանց բաժնեմասի չափի: Այս փաստն արձանագրվում է համատիրության ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշմամբ, որում սահմանվում է պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը:

Անփոփոխելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների բնույթով պայմանավորված՝ այդ վճարների չափը չի կարող սահմանվել վերացականորեն: Այդ չափը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշվի կոնկրետ բազմաբնակարան շենքի համար կոնկրետ աշխատանքների նախահաշվից ելնելով: Այս տրամաբանությունից շեղումը կհակասի պարտադիր նորմերի կատարմանն ուղղված՝ սեփականատերերի կողմից վճարվող վճարների՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարրի բնույթին և բովանդակությանը: Սեփականատերերի կամքը և համաձայնությունը դրսևորվում է պարտադիր նորմերի կատարման ապահովման ողջ գործընթացում: Սեփականատերերն են ընտրում շենքի կառավարման մարմինը, նրանք են որոշում այն միջոցառումների և աշխատանքների շրջանակը, որոնք ենթակա են պարտադիր կատարման, սեփականատերերն են որոշում վճարների վճարման կարգն ու ժամկետները, և **վերջապես, սեփականատերերն ազատ են որոշելու պարտադիր նորմերի պահպանմանն իրենց մասնակցության ձևը՝ կամ վճարելով համապատասխան վճարը, կամ համապատասխան աշխատանքներն անձամբ կատարելով:**

Վճարեկ դատարանը, ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշման լույսի ներքո վերլուծելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի, «Համատիրության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները,

արձանագրել է, որ բազմաբնակարան շենքի շինության սեփականատերն օրենքի ուժով պարտավոր է իր սեփականության բաժնին համաչափորեն մասնակցելու պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին: Սեփականատիրոջ համար, սակայն, վերոգրյալ պարտականությունը կարող է առաջանալ միայն օրենսդրությամբ ամրագրված որոշակի պարտադիր պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում: Մասնավորապես դրանք են վճարային պարտավորության առաջացման որոշակի օբյեկտիվ հիմքը և օրենսդրության կողմից սահմանված հատուկ ընթացակարգի պահպանումը:

Այսպես, վճարային պարտավորության առաջացման օբյեկտիվ հիմքը հանգում է հետևյալին. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10–րդ հոդվածի 3–րդ կետով սահմանված վճարը բազմաբնակարան շենքի սեփականատերերից գանձման ենթակա այն գումարն է, որն անհրաժեշտ է ՀՀ կառավարության կողմից սահմանված բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի շրջանակներում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջները բավարարելու նպատակով շենքի սեփականատերերի կողմից որոշված կոնկրետ աշխատանքների իրականացման համար: Այլ կերպ ասած՝ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափն առաջանում է ոչ թե վերացականորեն, այլ որոշակի օբյեկտիվ նախադրյալներից, մասնավորապես՝ արդեն իսկ սեփականատերերի քննարկմանը և հաստատմանը ներկայացված ու կանխորոշված աշխատանքների նախահաշվից ելնելով, որից հետո միայն այդ աշխատանքների արժեքը բաշխվում է սեփականատերերի միջև:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականատերերի մոտ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10–րդ հոդվածի 3–րդ կետով սահմանված վճարային պարտականությունը կարող է առաջանալ միայն պարտադիր նորմերի կատարմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքները փաստացի կատարված լինելու դեպքում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է նույն օրենքի 24–րդ հոդվածի 3–րդ պարբերությունից, համաձայն որի՝ կառավարչի կողմից յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 15–ը, պատրաստվում է հաշվետվություն՝ շինությունների սեփականատերերի կողմից անվանական վճարումների, նախատեսված և իրականացված աշխատանքների ընթացքի վերաբերյալ, և ծանուցվում է բնակիչներին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջները բավարարելու համար անհրաժեշտ գումարի վճարման պարտականությունն այդ շենքի շինությունների սեփականատերերի մոտ կարող է առաջանալ միայն հետևյալ իրավական ընթացակարգի սահմաններում և դրա պահպանման արդյունքում.

1. բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից կազմվում է ընթացիկ տարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ ակտ,
2. այդ ակտի հիման վրա բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից կազմվում է ընթացիկ տարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ նախահաշիվ,
3. ընթացիկ տարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ նախահաշվային գումարն ընդգրկվում է տարեկան բյուջեի մեջ,
4. շենքի տարեկան բյուջեն քննարկվում և հաստատվում է ընդհանուր ժողովում,
5. բյուջեի հաստատումից հետո, դրա ծախսային մասը բաժանվում է սեփականատերերի միջև՝ ըստ ընդհանուր բաժնային սեփականության մեջ նրանց բաժնեմասի չափի: Նշված փաստն արձանագրվում է համատիրության ընդհա-

նուր ժողովի կողմից ընդունված որոշմամբ, որում սահմանվում է պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը,

6. փաստացի կատարվում են նախատեսված աշխատանքները, ինչն արձանագրվում է բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից կազմված հաշվետվություններում,

7. յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 15-ը, պատրաստվում է շինությունների սեփականատերերի կողմից անվանական վճարումների, նախատեսված և իրականացված աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն, որի մասին ծանուցվում է բնակիչներին,

8. շինությունների սեփականատերերը նախօրոք ծանուցվում են իրենց կողմից պարտադիր նորմերի իրականացման համար նախատեսված վճարային պարտավորության չափի, ժամկետների և կարգի մասին, ընդ որում, այդ գումարի վճարումը երկու անգամ ուշացնելու դեպքում շենքի կառավարման մարմինն իրավունք է ձեռք բերում դրա բռնագանձման համար դիմելու դատարան՝ մինչ այդ գրավոր նախազգուշացնելով պարտատիրոջը:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԳՐԱՎԻ ՄԱՍԻՆ

26.12.2016 թ.

4. «Սեյվր» ՄՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0169/02/15

Էջ  
28–37

*Խնդիր.* 1) Արդյո՞ք գրավառուն իրավունք ունի դիմելու դատարան գրավի առարկա հանդիսացող և արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ պահանջով,

2) ինչպիսի՞ նյութաիրավական պայմանների առկայության դեպքում է արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը ենթակա բավարարման:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրության<sup>1</sup> և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի<sup>2</sup> նորմերից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային–իրավական նորմերի ուժով: Վճռաբեկ դատարանը գտել է, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31–րդ հոդվածում և 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60–րդ հոդվածում գործածվող «սեփականություն» եզրույթը մեկնաբանելիս պետք է ելակետ ընդունել և հաշվի առնել սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի<sup>3</sup> իրավակիրառ պրակտիկան:

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հիշատակել, որ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1–ին հոդվածի 1–ին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներն ու շահերը նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև

<sup>1</sup> Սույն բաժնում ՀՀ Սահմանադրությունը վկայակոչված է 27.11.2005 թ. փոփոխություններով:

<sup>2</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Կոնվենցիա:

<sup>3</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Եվրոպական դատարան:



«գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք, գործի բոլոր հանգամանքներից ելնելով, դիմումատուսն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ (*լրեն օրինակ, Մինասյանը և Սևեթրջյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 23.06.2009 թվականի վճիռը, 55-րդ կետը*):

Միաժամանակ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացությունը բնորոշել է ընդլայնված կերպով՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Սանսավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*լրեն Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը*): Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*լրեն Burdov v. Russia գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետը*):

Մեկ այլ գործի շրջանակներում Եվրոպական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում կիրառվող «գույք» եզրույթը սահմանափակված չէ միայն ֆիզիկական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով. այն իր մեջ ընդգրկում է նաև ակտիվներ հանդիսացող որոշ այլ իրավունքներ ու շահեր, որոնցից է, օրինակ, պարտավորության գույքային ապահովման իրավունքը (*լրեն Gasus Dossier – Und Fördertechnik GmbH v. The Netherlands գործով Եվրոպական դատարանի 23.02.1995 թվականի վճիռը, 53-րդ կետը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի և 226-րդ հոդվածի իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ գրավի իրավունքը կամ գրավը պարտավորությունների՝ իրային-իրավական ապահովման միջոց է, որը գրավառուին իրավունք է վերապահում հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալու գրավի առարկայի արժեքից: Վերոգրյալ բնորոշումից բխում է, որ գրավով ապահովված պարտավորության պարտատերը գրավի առարկայի արժեքից իր պահանջի բավարարման նախապատվության իրավունք ունի մյուս պարտատերերի նկատմամբ, այսինքն՝ գրավով ապահովված պարտավորության պարտապանի մյուս պարտատերերի համեմատությամբ գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ պահանջը ենթակա է բավարարման նախապատվության իրավունքով:

Վճարել դատարանն արձանագրել է, որ գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ է նաև իրային իրավունքներիին ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները.

- «բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված),
- «հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի

սեփականության ներքո (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետ):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ գրավի իրավունքը պետք է դիտարկել որպես «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ (1) գրավի իրավունքը հանդիսանում է գրավատուի սահմանափակ իրային իրավունքը, (2) գրավատուն ունի հիմնական պարտավորության չկատարման դեպքում նախապատվության իրավունքով գրավադրված գույքի արժեքից իր պահանջների բավարարում ստանալու «օրինական սպասելիք»: Հետևաբար, սեփականության իրավունքի պաշտպանության թե՛ սահմանադրաիրավական, թե՛ կոնվենցիոն ընթացակարգերը հավասարապես կիրառելի են նաև գրավի իրավունքի պաշտպանության նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քրեական գործի շրջանակներում քաղաքացիական հայցի պահանջն նպատակով գույքի վրա կալանք դնելու՝ որպես կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի միջոցի կիրառման առանձնահատկություններին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու դեպքում, որպես կանոն, դատարանը պետք է վերացնի գույքի վրա դրված կալանքը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ քաղաքացիական հայցը դատարանի կողմից առանց քննության թողնվելու դեպքում գույքի վրա դրված կալանքը կարող է պահպանվել քրեական գործով վարույթի ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, միայն այն դեպքում, երբ դրա վերաբերյալ առկա է քաղաքացիական հայցվորի կամ այլ շահագրգիռ անձանց կողմից դատարան ներկայացված միջնորդություն: Այլ կերպ՝ այդպիսի միջնորդության բացակայության դեպքում դատարանն իրավունք չունի սեփական նախաձեռնությամբ պահպանելու գույքի վրա դրված կալանքը (յրեն Արթուր Անդրեասյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0200/01/13 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.06.2016 թվականի որոշումը, 20.2-րդ կետ):

Անդրադառնալով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով սահմանված իրավադրույթների վերլուծությանը՝ Վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ նշված իրավական նորմով օրենսդիրն արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձանց համար սահմանել է իրավունք՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Ընդ որում, նշված հոդվածով ամրագրված իրավակարգավորումները նպատակաուղղված են երաշխավորելու թե՛ քաղաքացիական, թե՛ քրեական գործերի շրջանակներում արգելադրված գույքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի իրավունքների պաշտպանությունը տվյալ գործով վարույթի ավարտից հետո: Բացի այդ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ շահագրգիռ անձը պետք է արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմի գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, և նշված հայցապահանջը պետք է քննվի քաղաքացիական դատավարության կարգով (յրեն Տիգրան Ենոքյանն ընդդեմ պարտապան Սամվել Սրեփանյանի և պահանջարեր Լիլիա Սրեփանյանի թիվ ԿԴ1/0289/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է արգելանքի տակ գտնվող գույքը դատական կարգով արգելանքից հանելու իրավական կառուցակարգը, որը հանգում է հետևյալին.

1) անձը կարող է արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել դատարան,

2) արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց կարող է ներկայացնել ինչպես այդ գույքի սեփականատերը կամ դրա օրինական տիրապետողը, այնպես էլ արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու կապակցությամբ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով իրավական շահագրգռվածություն ունեցող ցանկացած անձ,

3) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել ընդդեմ պարտապանի և (կամ) պահանջատիրոջ և ընդդատյա է գույքի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանին:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ արգելանքի տակ գտնվող գույքը դատական կարգով արգելանքից հանելու վերոգրյալ կառուցակարգը նպատակաուղղված է անձի գույքային իրավունքների և, հատկապես, սեփականության իրավունքի պաշտպանության ապահովմանը: Թեև գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը բավարարելու իրավական հիմքերն օրենսդրորեն սահմանված չեն, սակայն Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ հայցը ենթակա է բավարարման այն դեպքերում, երբ այս կամ այն գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցի հիման վրա հարուցված գործի քննությանը հիմնավորվում է, որ գույքն արգելանքի վերցնելը խախտում է այդ գույքից անարգել օգտվելու՝ կոնվենցիոն իմաստով սեփականատիրոջ իրավունքը:

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել մեջբերել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջներին:

Այսպես, ըստ Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը պետք է հիմնված լինի օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավունքի գերակայության էությունից (*տե՛ս The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 79-րդ կետ*): Հետևաբար, առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունն իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշների (*տե՛ս James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 67-րդ կետ*):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (*տե՛ս James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 46-րդ կետ*):

Սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափության երրորդ պայմանը նախատեսում է, որ միջամտությունը պետք է ապահովի արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և մարդու հիմ-

նարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (*յրեն Sporrang and Lönnroth v. Sweden գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, 69-րդ կետը*): Մասնավորապես, գույքից անարգել օգտվելու իրավունքի ցանկացած միջամտության դեպքում կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև պետք է գոյություն ունենա համաչափության որոշակի ողջամիտ հարաբերակցություն (*յրեն Scollo v. Italy գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, 32-րդ կետը*): Եվրոպական դատարանի գնահատումամբ նման բարենպաստ հավասարակշռության հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի միջամտության պատճառով սեփականատերն ստիպված է կրել անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ ծանրություն (*յրեն The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 89-րդ կետը*):

Անփոփեղով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավի իրավունքից՝ որպես Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով անձի՝ իր «գույքից» անարգել օգտվելու իրավունքի իրականացման նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը կարող է թույլատրելի համարվել վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Ըստ այդմ, արգելանքի տակ գտնվող և գրավի առարկա հանդիսացող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ գրավատուի հայցը ենթակա է բավարարման, եթե այդ գույքն արգելանքի վերցնելը կամ արգելանքի տակ պահելը չի համապատասխանում սեփականության իրավունքի իրականացման նկատմամբ միջամտության թույլատրելի սահմաններին և չափանիշներին:

### ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

22.07.2016 թ.

5. Ալբերտ Պետրոսյանի սնանկության գործով կառավարիչ Արսեն Զիտչյանն ընդդեմ «Նորովի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և մյուսների, քաղ. գործ թիվ ԿԴ-1/0935/02/14

Էջ  
38–53

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել բացահայտել կեղծ գործարքի իրավական բնույթը՝ անդրադառնալով հետևյալ հարցադրումներին.

1. ինչպիսին է կեղծ գործարքի կողմերի ներքին կամքի և արտահայտած կամահայտնության հարաբերակցությունը,
2. արդյո՞ք կեղծ գործարքի բոլոր կողմերի կամքը պետք է ուղղված լինի այդպիսի գործարքի կնքմանը,
3. արդյո՞ք գործարքի փաստացի կատարումն ինքնին արգելք է կեղծ գործարքի առկայությունը հաստատված համարելու համար,
4. որո՞նք են կեղծ գործարքի անվավերության հետևանքները:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն անվավեր գործարքները դասակարգել է երկու խմբի՝ վիճահարույց գործարքներ, որոնք անվավեր են դատարանի կողմից այդպիսին ճանաչելու ուժով, և առոչինչ գործարքներ, որոնք անվավեր են օրենքի ուժով՝ անկախ նման ճանաչումից: Միաժամանակ օրենսդիրը, որպես առոչինչ գործարքների տեսակ, նախատեսել է նաև կեղծ գործարքը: Կեղծ գործարքներն առոչինչ համարելը պայմանավորված է նրանով, որ դրանցում իրականությունը խեղաթյուրվում է դիտավորյալ կերպով՝ բացասական ազդելով քաղաքացիական շրջանառության բարեխիղճ մասնակիցների շահերի վրա: Կեղծ գործարք կնքվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է ստեղծել իրավահարաբերության առկայության պատրանք՝ քողարկելու համար գործարքի կնքման իրական շարժա-

որի՞նք են: Այլ կերպ ասած՝ կեղծ գործարքը ծառայում է որպես միջոց՝ գործարքին մասնակից չհանդիսացող երրորդ անձի համար իրականությունը դիտավորյալ խեղաթյուրելու համար (օրինակ՝ պարտավորության կատարումից խուսափելու համար գույքն առերևույթ օտարելը՝ պարտատիրոջ մոտ գույքի անբավարարության տպավորություն ստեղծելու համար):

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: Հետևաբար Վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց **ներքին կամքի** և **արտաքին կամահայտնության համակցությունն է**: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությամբ (*լրեն Նելլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համիաչ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԻ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ կեղծ գործարքը համարվում է կամքի արատով գործարք, քանի որ այն չի պարունակում գործարքի **կողմերի նպատակադրված կամային ակտը**՝ ներքին կամքը, ուղղված իրավունքների և պարտականությունների ծագմանը, փոփոխմանը կամ դադարմանը: Կեղծ գործարքի դեպքում կողմերը **չունեն իրական նպատակ՝ կնքելու գործարք**, իրավունքներ և պարտականություններ առաջացնելով, փոփոխելով կամ դադարեցնելով, նրանց իրական նպատակն իրավահարաբերության պատրանք ստեղծելն է՝ իրական կամքը թաքցնելու նպատակով:

Վճռաբեկ դատարանը շինծու գործարքի վերաբերյալ նախկինում կայացրած որոշումներից մեկով արձանագրել է, որ երկկողմ գործարքը կնքողներից միայն մեկ կողմի մոտ խաթարված կամքի առկայության դեպքում չի կարող այդ գործարքը գնահատվել շինծու, քանի որ նման փաստերի առկայությունը հնարավոր հիմք է տալիս հանգելու հետևության, որ հարցը վերաբերում է խաբեությանը կնքված գործարքին (վիճահարույց գործարք), որի համար օրենսդիրը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդված) սահմանել է անվավեր ճանաչելու այլ հիմքեր և դրանից բխող հետևանքներ (*լրեն Հասմիկ Բյուրջյանն ընդդեմ Վահե Այվազյանի և մյուսների թիվ 3-793 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործարքը կեղծ որակելու համար ևս անհրաժեշտ է, որպեսզի գործարքի **բոլոր կողմերի** կամքն ուղղված լինի առերևույթ հարաբերության ծագման տպավորություն ստեղծելուն, հակառակ դեպքում, եթե գործարքի կողմերից միայն մեկն է նման նպատակ հետապնդում, ապա ամկա կլինի կամքի արատով այլ գործարք, քանի որ երկկողմ գործարքը **համաձայնեցված կամքի** արտահայտություն է, և եթե գործարքը ձևակերպվում է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, ապա դա չի կարող լինել միայն մեկ կողմի ցանկությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ չնայած կեղծ գործարքի կողմերը ձևակերպվող գործարքի որևէ իրավական հետևանք **փաստացի** առաջացնելու մտադրություն չունեն, այդուհանդերձ, որպեսզի երրորդ անձինք հնարա-

վորություն ունենան վատահելու կեղծ գործարքին, գործարքի կողմերը, որպես կանոն, ստեղծում են փաստացի հարաբերության անկայության պատրանք՝ այդ թվում ձևականորեն առաջացնելով այն հետևանքները, որոնք պետք է առաջանային, եթե կնքվեր իրական գործարք (այդ թվում նաև՝ գործարքից բխող իրավունքները պետական գրանցման ենթարկելով): Վերը շարադրվածը վերաբերում է ինչպես գործարքի ձևին, այնպես էլ՝ բովանդակությանը, կողմերին և դրսևորած կամահայտությանը: Այլ կերպ ասած՝ ստեղծվում է տպավորություն, որ գործարքի բոլոր տարրերը պահպանված են: Ընդ որում, կեղծ գործարքը կարող է և փաստացի կատարված լինել (մասնակի կամ լրիվ), սակայն կատարման նպատակը նույնպես պատրանքն իրականությանը մոտեցնելը լինի՝ հետագայում, այդուհանդերձ, գործարքի իրավական հետևանքներն առաջացնելու ցանկություն չունենալով: Եվ հակառակը, հնարավոր է նաև գործարքը կատարված չլինի, սակայն իրականում չլինեն կեղծ գործարքի մյուս հատկանիշները, և տվյալ դեպքում անկա լինի միայն պարտավորության խախտում: Ուստի, միայն գործարքի կատարված լինելը կամ չլինելը չի կարող բացառել կեղծ գործարքի անկայությունը, և այդ հանգամանքը պետք է գնահատվի մյուս հանգամանքների համատեքստում:

Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ կեղծ գործարքի անկայությունը գնահատելիս դատարանները պետք է գնահատման արժանացնեն գործարքի կողմերի մոտակա և հեռահար նպատակները՝ հաշվի առնելով, որ գործարքի կնքման մոտակա նպատակը գործարքի տպավորություն ստեղծելն է, իսկ հեռահար նպատակը՝ կողմերի կամ նրանցից մեկի համար որևէ առավելություն ստանալը կամ որևէ սահմանափակում շրջանցելը: Հեռահար նպատակի մասին կարող է վկայել, օրինակ, չկատարված պարտավորության, օրինական ուժի մեջ մտած՝ չկատարված դատական ակտի կամ այլ նմանատիպ հանգամանքների անկայությունը: Ի տարբերություն հեռահար նպատակի, որի անկայությունը հաստատելու համար կարող են ներկայացվել ուղղակի ապացույցներ, մոտակա նպատակն ապացուցելը բարդ է՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է գործարքի կողմերի ներքին կամքին, հետևաբար՝ մոտակա կամքը բացահայտելու համար կարող են ներկայացվել նաև անուղղակի ապացույցներ: Մոտակա կամքը բացահայտելու համար կարող է ուղենշային լինել, օրինակ, գործարքի կողմերի դրսևորած վարքագծի արդյունավետության գնահատումը, մասնավորապես այն, որ եթե տվյալ գործարքի իրավական հետևանքներին կարելի է հասնել ավելի խնայողական և կարճ ճանապարհով, առանց լրացուցիչ գործարքների կնքման, ապա անկա ավելորդ օղակները կարող են վկայել քողարկված նպատակի անկայության մասին (օրինակ՝ ավելորդ գործարքներ կարող են կնքվել լրացուցիչ ծախսեր ցույց տալու՝ հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով): Կամ գործարքը կեղծ լինելու մասին կարող է վկայել այն հանգամանքը, որ գործարքի կողմերից մեկն ի սկզբանե ի վիճակի չէր լինելու կատարել գործարքով ստանձնած պարտավորությունները (օրինակ՝ համապատասխան սարքավորումների, աշխատուժի բացակայության պատճառով):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը կեղծ գործարքների անվավերության հատուկ հետևանքներ չի նախատեսել: Հետևաբար, ըստ էության, պետք է կիրառելի լինեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածով նախատեսված հետևանքները: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ կեղծ գործարքի դեպքում գործարքի փաստացի կատարում, **որպես կանոն**, տեղի չի ունենում, նմանատիպ դեպքերում վերոգրյալ նորմի կիրառումն ունի առանձնահատկություններ, մասնավորապես՝ որպես անվավերության հետևանք կարող է լինել նախկին սեփականատիրոջ տիրոջ վերականգնումը, դատական ակտով գործարքի կեղծ լինելու հանգամանքը հաստատելը, որը կարող է հանգեցնել որպես անվավերության հետևանք այլ ածանցյալ պահանջներ ներկայացնելուն (օրինակ՝ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելը):

Վերագրյալ իրավական վերլուծությունների համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարել առանձնացնել կեղծ գործարքի հետևյալ տարրերը, որոնց գնահատումը կոնկրետ գործի շրջանակներում կնպաստի բացահայտելու կեղծ գործարքի առկայությունը՝

1. Կեղծ գործարքի **օբյեկտն** այն իրավահարաբերություններն են, որից կողմերը ցանկանում են խուսափել, այսինքն՝ կեղծ գործարք կնքելու իրական պատճառ հանդիսացող հարաբերությունները: Որպես հատուկ օբյեկտ՝ կարելի է առանձնացնել քաղաքացիաիրավական շրջանառության այն կոնկրետ սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը, որոնք ոտնահարվում են կեղծ գործարք կնքելու հետևանքով (օրինակ՝ պարտավորության կատարումից խուսափելու նպատակով կնքված կեղծ գործարքի դեպքում պարտատիրոջ շահերը):

2. **Օբյեկտիվ կողմից** կեղծ գործարքները դրսևորվում են այնպիսի գործողություններով (անգործությամբ), որի արդյունքում ստեղծվում է իրական հարաբերության առկայության տպավորություն: Գործարքը կնքելուց հետո կողմերի վարքագիծը, **որպես կանոն**, դրսևորվում է անգործությամբ՝ կողմերը չեն իրականացնում համապատասխան գործողություններ՝ գործարքի իրական հետևանքների առաջացման համար:

3. Կեղծ գործարքի **սուբյեկտիվ կողմը** դրսևորվում է գործարքի **բոլոր կողմերի դիտավորությամբ**: Կեղծ գործարքի առկայությունը հաստատելու համար բավարար չէ միայն մեկ կողմի դիտավորությունը՝ կնքելու կեղծ գործարք: Կողմերից մեկի դիտավորության բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ գործարքի կեղծ լինելը հաստատելու համար, քանի որ գործարքի բարեխիղճ կողմը չպետք է տուժի մյուս կողմի անբարեխիղճության հետևանքով: Բացի այդ, կեղծ գործարքի նպատակն իրավահարաբերության պատրանք ստեղծելն է, իսկ նման տպավորություն ստեղծելու համար անհրաժեշտ է, որպեսզի բոլոր կողմերն ի սկզբանե նման ցանկություն ունենան:

**22.07.2016 թ.**

**6. Ալբերտ Այնաջյանն ընդդեմ Սոնա Բորյանի (Շիրինյան) և մյուսների, քաղ. գործ թիվ ԵՄԴ/1469/02/14**

**Էջ 54–63**

**Խնդիր.** Արդյո՞ք համատեղ սեփականության մասնակցի կողմից կնքված նվիրատվության գործարքը մյուս մասնակցի պահանջով կարող է անվավեր ճանաչվել այն դեպքում, երբ գործում առկա չէ որևէ գրավոր ապացույց այն մասին, որ մյուս մասնակիցը տվել է իր համաձայնությունը գործարքը կնքելիս:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198–րդ և 201–րդ հոդվածներով նախատեսված իրավադրոյթների մեկնաբանությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար բավարար չէ համատեղ սեփականության մասնակիցների՝ ամուսիններ հանդիսանալու մասին գործարքի մյուս կողմի, մասնավորապես՝ գնորդի տեղեկացված լինելու փաստը: Նման պահանջը դատարանի կողմից կարող է բավարարվել միայն, եթե միաժամանակ առկա են երկու պայմաններ՝

1. համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայությունը,

2. գործարքի մյուս կողմի այդ մասին իմանալը կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայությունը (*տե՛ս Թագուշ Պեպրոսյանն ընդդեմ Ճաննա Ղազարյանի թիվ 3–459(SԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը, Գայանե Թումասյանն ընդդեմ Հովհաննես Երիցյանի և մյուսների թիվ ԱԲԴ/0956/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության վերաբերյալ իրավադրույթները՝ արձանագրելով, որ օրենսդիրը, հաշվի առնելով ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի ծագման հիմքը՝ ամուսնական հարաբերությունները և օրենքով նախատեսված այլ դեպքերը, ըստ էության, ամրագրել է ընդհանուր գույքը տնօրինելու ժամանակ մյուս համասեփականատերերի համաձայնության և դրա տնօրինման գործարք կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության գույքը տնօրինելու ժամանակ մասնակիցների համաձայնության առկայության կանխավարկածը նվիրատվության հարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ, քանի որ համատեղ սեփականության գույքի նվիրատվության դեպքում օրենսդիրը նախատեսել է սահմանափակումներ: Այսպես, համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության ձևով տնօրինման համար պարտադիր կերպով անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի համաձայնությունը, և չի սահմանվել բացառություն (*տե՛ս Նարինե Նայրանյանն ընդդեմ «Բնարարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի բաժնետեր Հրաչ-Ներսես Կապրիելյանի, Արագած Ախոյանի թիվ ԵՔԳ/0256/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով վերոնշյալ որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, արձանագրել է, որ ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության դեպքում կիրառելի չէ համատեղ սեփականության մասնակցի՝ գույքը տնօրինելու համաձայնության կանխավարկածը: Նկատի ունենալով այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված իրավակարգավորումից բացի, օրենսդիրը նախատեսել է նաև հատուկ կարգավորում նվիրատվության գործարքի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 599-րդ հոդվածի 1-ին կետով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրի կողմից նման հատուկ նորմ նախատեսելն ինքնասպատակ չէ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածում ամրագրելով «համատեղ սեփականության բոլոր մասնակիցների համաձայնություն» արտահայտությունը՝ օրենսդիրը կարևորել է համատեղ սեփականության բոլոր մասնակիցների կամահայտությունը նվիրատվության գործարք կնքելիս: Հետևաբար ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը նվիրելիս պահանջվում է բոլոր համասեփականատերերի համաձայնությունը, իսկ համասեփականատիրոջ համաձայնության առկայության կանխավարկածը չի գործում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ի տարբերություն գործարքների՝ համատեղ սեփականության մասնակցի համաձայնությունն ինքնին չի առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում իրավունքներ ու պարտականություններ: Այդպիսի համաձայնության դերն ավելի սահմանափակ է: Համաձայնությունն անհրաժեշտ նախապայման է, որի առկայությամբ երկու կամ ավելի կողմերի համաձայնեցված կամքի արտահայտությունը (երկկողմ կամ բազմակողմ գործարքների դեպքում) կամ մեկ կողմի կամահայտությունը (միակողմ գործարքի դեպքում) հնարավորություն է ստանում առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու իրավահարաբերություն, այլ կերպ ասած՝ այն հանդիսանում է անհրաժեշտ նախապայման գործարքի կնքման համար:

Անդրադառնալով նվիրատվության գործարք կնքելու համար համատեղ սեփականության մասնակցի համաձայնության ձևին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը համաձայնության կոնկրետ ձև չի նախատեսել ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ, այնպես էլ նույն օրենսգրքի 599-րդ հոդվածի 1-ին կետերով:

ՀՀ սահմանադրական դատարանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրա-



պետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 24.02.2012 թվականի թիվ ՄԴՈ-1009 որոշման եզրափակիչ մասում արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այդ մասի առաջին նախադասության դրույթների սահմանադրափրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքելու ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ՝ նկատի ունենալով, որ ներքոհիշյալ դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի **պոզիտիվ համաձայնությունը**, ինչը կփաստի գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը: Այդ դեպքերն են.

ա) երբ համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել և սեփականության իրավունքի գրանցման վկայականում հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համասեփականության իրավունքով,

բ) երբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը, քննարկելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանադրականության հարցը, արձանագրել է մասնակցի պոզիտիվ համաձայնության անհրաժեշտությունը որոշակի դեպքերում՝ չմասնավորեցնելով համաձայնության ձևը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության դեպքում մյուս մասնակցի համաձայնությունը կարող է դրսևորվել ցանկացած ձևով՝ պայմանով, որ այդ համաձայնությունը լինի հստակ արտահայտված: Բացի այդ, նկատի ունենալով, որ համատեղ սեփականության մասնակցի համաձայնությունը գործարք չէ, այլ անհրաժեշտ նախապայման է գործարքի կնքման համար՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության դեպքում մյուս մասնակցի համաձայնության ձևի նկատմամբ ենթակա չեն կիրառման գործարքի ձևի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, այլ կերպ ասած՝ նման համաձայնության արտահայտման համար պարտադիր չէ նոտարական ձևի պահպանման պահանջը:

**ՀԱՅՅԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ**

22.04.2016 թ.

7. ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հենրիկ Սարգսյանի, քաղ. գործ թիվ ԵՄԴ/1149/02/12

Էջ 64-72

*Խնդիր.* Ո՞ր պահից է սկսվում հայցային վաղեմության ընթացքը հարկային պարտավորությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասի գումարը տնտեսվարող սուբյեկտի տնօրենից (գործադիր մարմնի ղեկավարից) բռնագանձելու պահանջով այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտի տնօրենի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում, դատական պրակտիկայի միասնականությունն ապահովելու նկատառումով, արդեն իսկ անդրադարձել է դատախազության՝ հար-

կային պարտավորությունները տնտեսվարող սուբյեկտի տնօրենից (գործադիր մարմնի ղեկավարից) բռնագանձելու պահանջի իրավաչափության հարցին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված պետական շահերի պաշտպանության իրավասությունը կոնկրետացվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածում, որտեղ ամրագրված են դատախազության այն լիազորությունները, որոնցով իրականացվելու է պետական շահերի պաշտպանություն: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պետական շահերի պաշտպանության իրականացումը կախված լիազորությունների բովանդակությունից, ունի իրականացման տարբեր մեխանիզմներ: Այսպես, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատախազությունն օգտվում է դատավարական այն իրավունքներից և կրում է այն պարտականությունները, որոնք ունենալու էր պետական այն մարմինը, ով հայց ներկայացնելու պարտականություն ուներ: Հետևաբար դատախազությունը գրկված չէ վարչական դատավարության կարգով տնտեսվարող սուբյեկտի դեմ հարկային պարտավորությունների կատարմանը պարտավորեցնելու հայց ներկայացնելու հնարավորությունից, եթե պետական իրավասու մարմինը ցուցաբերում է անգործություն կամ դիմել է դատախազությանը նման հայց ներկայացնելու միջնորդությամբ: Անդրադառնալով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այդ լիազորությունը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ հայց հարուցելու լիազորությամբ օժտված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Նշված իրավակարգավորումը վերլուծելով չվճարված հարկային պարտավորությունների արդյունքում պետությանը պատճառված վնասը հատուցելու խնդրի համատեքստում, ինչպես նաև հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հիման վրա հարուցված քրեական գործի կարճման պարագայում, արարքի՝ որպես հանցագործության վերաբերյալ խոսք լինել չի կարող, մինչդեռ քաղաքացիաիրավական հարաբերությունը (վնաս պատճառելու հիմքով ծագող իրավահարաբերությունը) շարունակում է գոյություն ունենալ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման իրավիճակում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի (կամ պատասխանատու պաշտոնատար անձի) կատարած գործողությունների (անգործության) հետևանքով հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում պետությանը պատճառված վնասը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարից բռնագանձելու պահանջ ներկայացնելու լիազորությամբ որևէ պետական մարմին օժտված չէ: Վերոգրյալի արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ դատախազությունն իրավասու է, որպես **պետությանը պատճառված վնասի** հատուցում, հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու հայց ներկայացնել քաղաքացիական դատավարության կարգով (*լրեն օրինակ, ՀՀ գլխավոր դարախազությունն ընդդեմ Վալենտինա Մկրտչյանի թիվ ԵԿԴ/3058/02/11 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու պահանջի հիմքում ընկած իրավահարաբերությունը նախկինում կայացրած որոշումներում որակվել է որպես պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերություն, իսկ վնասի հատուցման իրավահարաբերության նկատմամբ, որպես քաղաքացիաիրավական հարաբերության, կիրառելի են քաղաքացիական իրավունքի ընդհանուր ինստիտուտները, այդ թվում նաև՝ հայցային վաղեմության ինստիտուտը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի

ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին (*լրեն Ռազմիկ, Միրանուշ, Կարեն, Տիգրան Մանուչարյաններն և Կարինե Հարությունյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, Երևանի քաղաքապետարանի թիվ ԵԿԴ/0502/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Հայցային վաղեմության գործնական կիրառության համար կարևոր նշանակություն ունի հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից հետևում է, որ հայց հարուցելու իրավունքը ծագած է համարվում միայն այն պահին, երբ *իրավագոր անձն* իմացել է կամ պետք է իմացած լինել իրավախախտման փաստի մասին: Հետևաբար հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելու համար էական է իրավունքի խախտման առկայությունը և դրա մասին շահագրգիռ անձի իմանալու կամ այդպիսի հավանականության առկայության պահը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ յուրաքանչյուր դեպքում հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի փաստական հանգամանքները, վիճելի իրավահարաբերության բնույթը և սուբյեկտային կազմը: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է օրենսդրական կարգավորման տրամաբանությունից: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը հայցային վաղեմության ժամկետի լրանալը սահմանել է որպես հայցը մերժելու հիմք, ինչը նշանակում է, որ անգամ այն դեպքում, երբ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմում է ներկայացրել քաղաքացիական դատավարության սկզբնական փուլերում (գործը դատաքննության նախապատրաստելու), դատարանը, այնուամենայնիվ, պետք է գործը քննի ըստ էության և վերջնական դատական ակտում գնահատական տա հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ միջնորդությանը: Օրենսդրի այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցային վաղեմության ինստիտուտի առանձին տարրերի՝ կիրառելի ժամկետի (ընդհանուր, կրճատ կամ երկար), այդ ժամկետի հաշվարկի սկզբի, ընդհատման կամ կասեցման հարցերը որոշ դեպքերում հնարավոր է պարզել միայն վիճելի իրավահարաբերության որոշակիացման արդյունքում, այսինքն՝ պարզելով վիճելի իրավահարաբերության տեսակը (վարձակալության, հողային, ընտանեկան, աշխատանքային և այլ), մասնակիցների շրջանակը, իրավունքների և պարտականությունների ծավալը:

Հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար առավել կարևորվում է իրավագոր անձի կարգավիճակը: Քաղաքացիական իրավահարաբերություններում, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից գառ, որպես իրավագոր անձ կարող է հանդես գալ նաև պետությունը: Վերջինս քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում է այդ նպատակի համար լիազորված պետական մարմինների միջոցով: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ որպես իրավագոր անձ քաղաքացիական դատավարության կարգով դատարան է դիմում պետությունը՝ ի դեմս պետական մարմնի, հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է նախևառաջ պարզել՝ արդյոք տվյալ պետական մարմինն իրավասու է վիճելի իրավահարաբերության շրջանակներում ներկայացնելու պետության շահերը և երկրորդ՝ երբ է վերջինս բացահայտել կամ պետք է բացահայտած լինել պետական շահի խախտման փաստը: Ընդ որում, թե՛ առաջին և թե՛ երկրորդ հարցադրումների շրջանակներում պետք է ուսումնասիրել տվյալ պետական մարմնի՝ օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակը:

Վճռաբեկ դատարանը, սույն որոշման շրջանակներում արդեն իսկ արձանագրելով, որ հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու պահանջի հիմքում ընկած իրավահարաբերությունը պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերություն է, իսկ այդ իրավահարաբերությունից բխող պահանջի իրավունքը պատկանում է դատախազությանը, որը վերջինս կարող է իրացնել քաղաքացիադատավարական կարգով հայց հարուցելով, նշել է, որ դատարանում վերը նշված իրավահարաբերությունից բխող պետական շահը ներկայացնելու *իրավասու մարմինը* դատախազությունն է, իսկ թե երբ է վերջինս բացահայտել կամ պետք է բացահայտած լիներ պետական շահի խախտման փաստը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել հայցի փաստական հանգամանքները և ի հիմնավորումն դրանց՝ դատարան ներկայացված ապացույցները:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ այն դեպքերում, երբ **պետությանը պատճառված վնասի** հատուցման հայցը ներկայացվել է տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի դեմ, ում լիազորությունն է հարկային հաշվետվությունների ներկայացումը, անհրաժեշտ է ապացուցել տվյալ անձի կողմից ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության կատարած լինելու փաստի առկայությունը, որպիսին հիմնավորվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված ապացույցներով:

Վերոնշյալ եզրահանգումների համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը նշել է, որ չնայած քաղաքացիական պատասխանատվության ծագման պայմանները հանգամանքների բերումով կարող են որոշ դեպքերում համընկնել քրեական պատասխանատվության առաջացման պայմանների հետ, այդուհանդերձ քաղաքացիաիրավական հայցը պետք է լուծվի քաղաքացիական պարտավորական իրավունքի սկզբունքների հիման վրա: Քրեական գործով իրականացված դատավարության արդյունքը որոշիչ չէ վնասի հատուցման վերաբերյալ գործով: Տուժողն իրավունք ունի պահանջելու վնասների հատուցում անկախ այն հանգամանքից պատասխանողը դատապարտվել է, թե՛ արդարացվել, և փոխհատուցման հարցը պետք է դառնա իրավական ինքնուրույն գնահատման առարկա, որի պարագայում ապացուցման չափորոշիչներն էականորեն տարբերվում են քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերից: Եվրոպական դատարանի կարծիքով այն, որ մինևսույն արարքը կարող է առաջացնել քրեական գործի հետ նույնական (ընդհանուր) հանգամանքներից (փաստերից) բխող վնասը հատուցելու քաղաքացիաիրավական պարտականություն, բավարար հիմքեր չի ստեղծում անձի նկատմամբ կիրառված քաղաքացիաիրավական պատասխանատվությունը դիտել նաև «քրեական պատիժ» (*լրեն Ռինգվորդն ընդդեմ Նորվեգիայի գործով Եվրոպական դատարանի 11.02.2003 թվականի վճիռը, պարբ. 38*):

Միաժամանակ հաշվի առնելով նմանատիպ գործերով դատական պրակտիկան՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատախազությունը, իրացնելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով իրեն վերապահված լիազորությունը, հայց է հարուցել տնտեսվարող սուբյեկտի տնօրենի դեմ՝ չվճարված կամ պակաս վճարված հարկային պարտավորությունները որպես պետության պատճառված վնաս գանձելու պահանջի մասին, և պահանջի փաստական հիմքում վկայակոչել է համապատասխան սուբյեկտի՝ նշված արարքի համար համաներում կիրառելու, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հիմքով ազատված լինելու փաստը, իսկ ի հիմնավորումն այդ փաստի՝ ներկայացրել է քրեական դատավարության կարգով կայացված համապատասխան որոշում, հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելու համար անհրաժեշտ է

պարզել տվյալ որոշման վերաբերյալ դատախազության իրազեկման պահը, որպիսի փաստը ենթակա է պարզման՝ հաշվի առնելով այդ որոշման կայացման ընթացակարգում դատախազության լիազորությունների շրջանակը:

## 22.07.2016 թ.

8. «Նաիրի Ինչուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն ընդդեմ Արթուր Իչմիլյանի, քաղ. գործ թիվ ԵՄԴ/2775/02/14

Էջ

73–83

**Խնդիր.** 1) Վիրավորանքի կամ գրպարտության դեպքում անձի կողմից իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու համար դատարան դիմելու ժամկետներն ինչպես են հարաբերակցվում միմյանց և հայցային վաղեմության ժամկետի հետ,

2) արդյո՞ք իրավաբանական անձը կարող է ներկայացնել հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իրավակարգավորմանը, արձանագրել է, որ օրենսդիրը հնարավորություն է տվել շահագրգիռ անձին դատարան դիմելու բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մինչև վիրավորանքի կամ գրպարտության պահից վեց ամիսը լրանալը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ գրպարտությունը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ անձը տեղեկանում է գրպարտության կամ վիրավորանքի մասին վեց ամիսը լրանալուց հետո, բաց է թողնվում հայցային վաղեմության ժամկետը (*լրեն Թայթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոնշյալ ժամկետներն այնպիսի ժամկետներ են, որոնց ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար **այդ ժամկետներն իրենց բնույթով համապատասխանում են հայցային վաղեմության ժամկետին**, և դրանց նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության վերաբերյալ կանոնակարգումները (*լրեն Վանո Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի, երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԼԳ/0749/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*):

Զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ մեկամսյա ժամկետը, որպես հայցային վաղեմության ժամկետ ներառված լինելով վեցամսյա ժամկետում, ենթակա է վերականգնման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված կարգով: Մինչդեռ վեցամսյա ժամկետի բացթողման դեպքում այն վերականգնման ենթակա չէ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրական նման ձևակերպումը ենթադրում է, որ վիրավորանքի և գրպարտության դեպքում դրա տարածման մակարդակը նվազում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում, որից հետո առարկայագուրկ է դառնում նման պահանջի ներկայացումը: Մյուս կողմից հատկանշական է այն, որ բոլոր դեպքերում վեցամսյա ժամկետում հայցի ներկայացումը **դեռևս չի նշանակում հայցային վաղեմության ժամկետի պահպանում**, քանի որ այդ դեպքում իմաստագուրկ է դառնում մեկամսյա ժամկետի նախատեսումը: Ընդհանրացնելով վերոնշյալ եզրահանգումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմության հարց բարձրացնելիս դատարանները **նախևառաջ պետք է գնահատեն վեցամսյա ժամկետի պահպանված լինելու հանգամանքը**, ապա դրա շրջանակներում անդրադառնան մեկամսյա ժամկետի պահպանված լինելու հարցին:

Հայցային վաղեմության ժամկետը բաց թողած լինելու կամ չլինելու փաստի ապացուցումը վիրավորանքի և գրպարտության հետևանքով պատճառված վնասների հատուցման գործերով առանձնահատուկ է այնքանով, որքանով ժամկետի հաշվարկման սկիզբը կապված է տուժողի տեղեկացված լինելու հետ: Այս առումով գրեթե անհնար է պատասխանողի (հայցային վաղեմություն վկայակոչող անձի) կողմից այնպիսի ապացույցների ներկայացումը, որոնք կհաստատեն նշված փաստերի առկայությունը: Այսինքն՝ օբյեկտիվորեն տուժողին է հայտնի կունկրետ տեղեկատվությունն իրեն հասու լինելու ժամանակը, հետևաբար տուժողի կողմից այլ բան ապացուցված չլինելու դեպքում հայցային վաղեմության սկիզբ է համարվում համապատասխան տեղեկատվության հրապարակման օրը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման համար անհրաժեշտ փաստերի ապացուցումը կարող է իրականացվել այնպիսի ապացույցներով, որոնք առավել հավանական են դարձնում կունկրետ փաստի գոյությունը: Եթե ապացուցման պարտականություն կրող կողմը ներկայացրել է բացառապես անուղղակի ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ առավել հավաստի են դարձնում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը, ապա նման ապացույցները չպետք է մերժվեն զուտ այն հիմքով, որ ուղղակի ապացույցներ չեն (*լրեն Գեղամ Գալստյանը և Նորիկ Պետրոսյանն ընդդեմ Պարույր Հայրիկյանի թիվ ԵԿԴ/3124/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով դատարանին հնարավորություն է ընձեռել հարգելի ճանաչելու հայցային վաղեմության ժամկետի բացթողումը բացառիկ դեպքերում: Ընդ որում, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության միայն այն հանգամանքների պայմաններում, երբ բացառիկ դեպքը կապված է հայցվորի անձի հետ, այն է՝ հայցվորի ծանր հիվանդությունը, անօգնական վիճակը, անգրագիտությունը և այլն: Ավելին, հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե բացթողման պատճառները տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսվա ընթացքում, իսկ եթե հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից, ապա վաղեմության ժամկետի ընթացքում (*լրեն Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասարողյանի թիվ ԵԿԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետը հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորում է անձի՝ վիրավորանքի կամ գրպարտության մասին տեղեկացված լինելու պահով: Հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ գրպարտությունը, որպիսի պահից մեկամսյա ժամկետում իրավունքի պաշտպանության վերաբերյալ հայցադիմում դատարան չներկայացնելու դեպքում բաց է թողնվում հայցային վաղեմության ժամկետը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ վիրավորանքի կամ գրպարտության հետևանքով անձն իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու համար դատարան կարող է դիմել վիրավորանքի կամ գրպարտության մասին տեղեկանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, ընդ որում, միայն այն դեպքում, եթե վիրավորանքի կամ գրպարտության պահից չի անցել վեց ամսից ավելի: Այլ կերպ ասած՝ մեկամսյա ժամկետը պետք է ընդգրկված լինի վեցամսյա ժամկետի մեջ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վեցամսյա ժամկետի բացթողման դեպքում անձը զրկվում է դատարան դիմելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է մեկամսյա ժամկետին, ապա այն ենթակա է վերականգնման վերը նշված հիմքերի առկայության դեպքում:

Երկրորդ հարցադրման կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը. Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: **Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնույթագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում:** Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52):

Եվրոպական դատարանի վերը նշված դիրքորոշումից հետևում է, որ դատարանի մատչելիության իրավունքը մարմնավորում է ոչ միայն հայց հարուցելու, այլև արդեն իսկ հարուցված հայցով **գործի՝ ըստ էության քննության և լուծման իրավունքը:**

Վճռաբեկ դատարանը, Եվրոպական դատարանի վերոնշյալ դիրքորոշման լույսի ներքո գնահատելով հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հնարավորությունը, գտել է, որ օրենսդրական այս կառուցակարգն ուղղակիորեն կապված է դատարանի մատչելիության իրավունքի հետ: Մասնավորապես՝ հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար, որպիսի պայմաններում դատարան դիմած շահագրգիռ անձը գրկվում է իր պահանջը հարկադրաբար իրականացնելու, իր խախտված իրավունքները դատարանի միջոցով պաշտպանելու հնարավորությունից: Մինչդեռ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը կարող է և պայմանավորված լինել նաև օբյեկտիվ հանգամանքներով: Այդ իսկ նկատառումով էլ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածում նախատեսել է հայցային վաղեմության ժամկետի բացթողումը դատարանի կողմից հարգելի ճանաչելու կառուցակարգ: Օրենսդրական նշված դրույթի տառացի մեկնաբանությունից, սակայն, հետևում է, որ նման հնարավորություն վերապահված է միայն քաղաքացի հայցվորին: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԴ3/0144/02/12 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշմամբ ևս արձանագրել է, որ որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնում հայցող սուբյեկտ կարող են հանդես գալ բացառապես ֆիզիկական անձինք, որպիսի եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքների բնույթով, որոնք օրենսդիրը համարել է հարգելի ճանաչելու հիմք: Վճռաբեկ դատարանը, իրացնելով իրեն վերապահված օրենքի միատեսակ կիրառության ապահովման, իրավունքի զարգացմանը նպաստելու գործառնությունները, գտել է, որ վերը նշված ընթացակարգը կիրառելի է նաև իրավաբանական անձանց պարագայում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության այն դրույթից, ըստ որի՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներն անձի հիմնական

իրավունքներից են, որոնք վերապահված են նաև իրավաբանական անձանց: Այսպես, օրենսդիրը, իրավաբանական անձանց դասելով քաղաքացիական իրավունքի սուբյեկտների շարքը, ընձեռելով քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու, քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու հնարավորություն, միաժամանակ նախատեսել է այդ իրավունքների դատական պաշտպանության կարգ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրելով, որ հայցվորներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք հայց են հարուցել: Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով դատական պաշտպանության իրավունքի իրացման հարցում հայցային վաղեմության ինստիտուտի նշանակությունը, մասնավորապես այն, որ նշված ինստիտուտը որոշակիորեն սահմանափակում է շահագրգիռ անձի դատարանի մատչելիության իրավունքը, գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը հարկ է մեկնաբանել վերը նշված սահմանադրաիրավական դրույթների լույսի ներքո, որի արդյունքում իրավակիրատ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ իրավաբանական անձը ևս կարող է օգտվել հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հնարավորությունից՝ հաշվի առնելով, որ այն դատարանի մատչելիության իրավունքի իրացման դրսևորումներից մեկն է:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկով նշել է, որ «հայցային վաղեմության ժամկետի վերականգնում» եզրույթը նշանակում է ոչ թե հայցային վաղեմության ժամկետի հոսքի վերսկսում, այլ անձի խախտված իրավունքների պաշտպանության տրամադրում՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերի առկայության դեպքում: Հայցային վաղեմության ժամկետի վերականգնումը կիրառելի է որպես բացառիկ միջոց, և եթե առկա են մի շարք հանգամանքներ: Նախևառաջ՝ հարգելի համարելու պատճառները պետք է կապված լինեն հայցվորի անձի հետ: Բոլոր այն հանգամանքները, որոնք կապված են այլ անձանց հետ և թեկուզ իրականում խոչընդոտել են հայցվորի՝ իր իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելուն, չեն կարող համարվել հարգելի: Երկրորդ՝ հարգելի ճանաչելու համար հիմք հանդիսացող հանգամանքները պետք է լինեն այնպիսին, որ **գրկեն անձին դատարան դիմելու հնարավորությունից**: Ընդ որում, նշված շրջանակում չեն կարող ներառվել այն դեպքերը, երբ անձն ի վիճակի չլինելով դատարան դիմել անձամբ՝ ունեցել է ներկայացուցչի միջոցով հանդես գալու հնարավորություն (*յրեն Գագիկ Հարությունյանն ընդդեմ Արա Նահապետյանի թիվ ԱՎԴՅ/0144/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո գնահատելով իրավաբանական անձի կողմից հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու հարցը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ իրավաբանական անձի նկատմամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի իրավակարգավորումը, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի համատեքստում, միայն այն բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնց պատճառով իրավաբանական անձը **գրկվել է դատարան դիմելու հնարավորությունից**: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորել է այն, որ օրենսդրի կողմից նման հանգամանքների սպառիչ ցանկ չի նախատեսվել: Ուստի յուրաքանչյուր դեպքում դատարանների կողմից գնահատման է արժանի տվյալ հանգամանքի՝ իրավաբանական անձի համար դատարան դիմելուն խոչընդոտ հանդիսանալու աստիճանը:



## ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Վարկային պայմանագիր

22.04.2016 թ.

9. «ՓԼԵՅ ԳՈՈՒԴ» ՍՊԸ-ն ընդդեմ «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/4072/02/14

Էջ  
84–93

**Խնայիր.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարկատուի կողմից անակցեպտ կարգով վարկատուի հաշվից գումարների գանձման հնարավորության հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարկային պայմանագրով վարկատուն ստանձնում է վարկատուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու հետ վերադարձնել այդ դրամական միջոցները և տոկոսներ վճարել դրանցից, իսկ վարկառուն, իր հերթին, ձեռք է բերում այդ միջոցներն ստանալու իրավունք և ստանձնում վարկատուին տոկոսներ վճարելու ու ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն: Միաժամանակ նշված հոդվածով ամրագրվել է, որ վարկային հարաբերությունների նկատմամբ փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը կիրառելի են, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերով և բուն վարկային պայմանագրով: Այսինքն՝ վարկային հարաբերությունները կարգավորելու առումով օրենսդիրը նախապատվությունը տվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերին և վարկային պայմանագրին, որոնցով այլ բան նախատեսված չլինելու դեպքում միայն տվյալ հարաբերությունների նկատմամբ կարող են գործել փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը:

Անդրադառնալով վարկային հարաբերությունների շրջանակներում վարկատուի կողմից վարկատուի դրամական միջոցների անակցեպտ գանձման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարել նշել, որ անակցեպտ գանձումը, ընդհանրապես, բանկի կողմից հաճախորդի հաշվից դրամական միջոցների գանձումն է՝ առանց վերջինիս առանձին կարգադրության, սակայն պայմանով, որ հաճախորդն այդպիսի գանձման համաձայնությունը նախապես տվել է կողմերի միջև կնքված պայմանագրով:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ոչ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերով, ոչ նույն օրենսգրքի՝ փոխառության հարաբերությունները կարգավորող նորմերով նախատեսված չէ վարկատուի հաշվից վարկի գումարի անակցեպտ գանձման բանկի (վարկատուի) իրավունքը: Այդուհանդերձ, պայմանագրի ազատության սկզբունքից ելնելով և հիմք ընդունելով վարկային պայմանագրի առանձնահատկությունները, Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդպիսի իրավունքը կարող է նախատեսված լինել վարկային պայմանագրով: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարկային պայմանագրով կարող է նախատեսված լինել ոչ միայն վարկատուի հաշվից որոշակի վճարների, այլև վարկի գումարի անակցեպտ գանձման բանկի իրավունքը: Սակայն ելնելով կողմերի հավասարության և քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության սկզբունքներից՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ վարկի գումարն անակցեպտ գանձելու բանկի իրավունքը չի կարող լինել ինքնանպատակ, այլ պետք է

պայմանավորված լինի որոշակի հանգամանքների վրա հասնելու փաստով (օրինակ՝ վարկառուի կողմից վարկային պայմանագրի պայմանների խախտմամբ), հակառակ դեպքում այդպիսի իրավունքը կհակասի վարկային հարաբերությունների բուն էությանը:

### Ապահովագրություն

02.12.2016 թ.

10. «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ն ընդդեմ «ՍՄԱՐՏՍՈՎԹ» ՍՊԸ-ի և Սարգսի Գրիգորյանի, քաղ. գործ թիվ ԿԴ-1/2015/02/14

Էջ  
94–101

**Խնդիր.** Արդյո՞ք վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ ապահովագրական ընկերությունն ունի հետադարձ պահանջի իրավունք, եթե առկա չեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածով սահմանված՝ վնաս չպատճառած անձի վրա վնասի հատուցման պարտականություն ղնելու՝ օրենքով նախատեսված հիմքերից մեկն առավել վտանգի աղբյուր հանդիսացող տրանսպորտային միջոցով պատճառված վնասը սեփականատիրոջ կողմից հատուցելն է:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ տրանսպորտային միջոցով վնաս պատճառելիս այդ միջոցի սեփականատերը միայն այն դեպքում պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, երբ ապացուցում է, որ

1. առավել վտանգի աղբյուրն օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) փոխանցվել է այլ անձի տիրապետմանը, կամ

2. առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, և միայն այդ դեպքում է, որ տրանսպորտային միջոցի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են տրանսպորտային միջոցն ապօրինի տիրապետած անձինք (յրեն Տիգրան Բն-չարյանն ընդդեմ Աշուր և Արթուր Բոսյանների թիվ ԵԱԲԳ/0610/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածն առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջն ազատում է վնասը հատուցելու պարտավորությունից հետևյալ դեպքերում.

- անհաղթահարելի ուժի,
- տուժողի դիտավորության և
- առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ տիրապետումից աղբյուրն այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով դուրս գալու դեպքերում (յրեն Նարինե Զարարյանը և Էլեն Դանիելյանի օրինական ներկայացուցիչ Գեննադի Դանիելյանն ընդդեմ «Մրքաձոր» ՍՊԸ-ի և Արշակ Աղաբեկյանի թիվ ՄԴ3/0498/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ սեփականատերը, իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրելով, փաստացի հնարավորություն է ստանում ապահովագրավճարի դիմաց ապահովագրողին փոխանցելու վնասը (որը կարող է պատճառված լինել

ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ ավտոմեքենայի լիազորված տիրապետողի կողմից) հատուցելու իր պարտականությունը: Ապահովագրողն էլ օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում հնարավորություն ունի հետադարձ պահանջի միջոցով հետ ստանալու իր կողմից կատարված հատուցումը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և տուժողի իրավահարաբերություններին՝ մասնավորապես նախատեսելով սեփականատիրոջ պատասխանատվության պայմանները և այն բացառող դեպքերը, ապա «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և ապահովագրական ընկերության միջև ծագած իրավահարաբերություններին՝ մասնավորապես ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքին:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքը նախատեսված է վնաս պատճառողի, վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) և (կամ) օրենքով սահմանված այլ անձանց նկատմամբ: Վճռաբեկ դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ սեփականատիրոջ (ապահովադրի) պատասխանատվության հիմքերը հստակ և ապառիչ սահմանված են նույն հոդվածով, հետևաբար սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ այլ հիմքերով հետադարձ պահանջ չի կարող ներկայացվել: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքերում, երբ ավտոմեքենայի սեփականատերն ապահովագրել է իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը, ապա ապահովագրական ընկերության կողմից տուժող կողմին հատուցում վճարելու դեպքում ապահովագրական ընկերությունը սեփականատիրոջ դեմ հետադարձ պահանջ կարող է ներկայացնել միայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով թվարկված դեպքերում:

**ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ  
ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

02.12.2016 թ.

11. Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքային համայնքն ընդդեմ Գյուլնարա Սարգսյանի, քաղ. գործ թիվ ԿԴ2/0189/02/15

Էջ  
102–112

*Խնդիր.* Արդյո՞ք վարչական դատավարության կարգով գործի քննության հետ կապված դատական ծախսերը կարող են դիտարկվել որպես պատճառված վնաս, և արդյո՞ք այդ ծախսերը որպես վնաս ենթակա են հատուցման մեկ այլ հայցով հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգմանը, որ գործի քննության վայր ժամանելու (...) հետ կապված ծախսերը, դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները և դատարանի կողմից անհրաժեշտ ճանաչված այլ ծախսերը վարչական դատավարությունում դիտարկվում են որպես **դատական ծախսեր**, հետևաբար որպես դատական ծախս գործն ըստ էության լուծող դատական ակտով պետք է բաշխ-

վեն կողմերի միջև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60–րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես դատական ծախս թե՛ հայցվորը և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել այդպիսի ծախսերի կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Եթե վարչական դատարանը համապատասխան ապացույցի առկայության դեպքում գործն ըստ էության լուծող դատական ակտով չի անդրադառնում դատական ծախսերի՝ կողմերի միջև բաշխման հարցին, ապա գործին մասնակցող անձինք զրկված չեն կատարված ծախսերի բաշխման հարցը լուծելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123–րդ հոդվածի հիմքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142–րդ հոդվածով սահմանված կարգով դիմել վճիռը կայացրած դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով:

Բացի լրացուցից վճիռ կայացնելու պահանջով վարչական դատարան դիմելու հնարավորությունից՝ կողմերին վերապահված է վարչական դատարանի դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն, ինչը նշանակում է, որ այն դեպքում, երբ վարչական դատարանը համապատասխան ապացույցի առկայության դեպքում վճռով չի անդրադառնում դատական ծախսերի՝ կողմերի միջև բաշխման հարցին, կամ կողմերի կարծիքով վարչական դատարանի կողմից դատական ծախսերը բաշխվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60–րդ հոդվածով սահմանված կարգի խախտմամբ, կողմերը զրկված չեն դատական ծախսերի բաշխման մասով վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում վարչական դատավարության կարգով գործի քննության հետ կապված դատական ծախսերը կողմերի միջև բաշխվում են համապատասխան ապացույցների առկայության դեպքում: Վերոշարադրյալը նշանակում է, որ կողմերը, իրավունք ունենալով ակնկալել վարչական դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտով կողմերի միջև դատական ծախսերի բաշխման հարցի լուծում, միաժամանակ պարտավոր են գործի քննության ընթացքում դատարանին ներկայացնել դատական ծախսերը հավաստող ապացույց, քանի որ գործում այդպիսի ապացույցների առկայությամբ է պայմանավորված դատական ծախսերի առկայությունը, եթե առանձին ծախսերի վերաբերյալ օրենքով կամ այլ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին այն դեպքերում, երբ ՀՀ վարչական դատարանում գործի քննությունն ավարտվել է գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման հնարավորությանը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96–րդ ու 97–րդ հոդվածների և ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴԻ–1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման համադրված վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ վարչական դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելն ըստ էության եզրափակում է վարչական գործի քննությունը, ավարտում գործի վարույթը՝ առանց բավարարման թողնելով իր ենթադրաբար խախտված իրավունքների պաշտպանության խնդրանքով դատարան դիմած անձի պահանջը: Ավելին՝ վարչական գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր իրավաբանական հետևանքների տեսանկյունից նմանվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրա-

վական չափանիշները, ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՄԴՌ–1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման իրավական բնույթը, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումները, գտել է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով (որևս «Տասր Սիլայ» ՄՊԸ–ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴՅ/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը և հաշվի առնելով գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման իրավական բնույթը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ դատական ծախսերի հարցը չլուծելու դեպքում վարչական դատարանը չի կարող լրացուցիչ վճիռ կայացնել դատական ծախսերի բաշխման վերաբերյալ: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142–րդ հոդվածի 1–ին կետի տառացի մեկնաբանությունից, համաձայն որի՝ լրացուցիչ վճիռ կայացնելու իրավասությունը վերապահված է բացառապես վճիռ կայացրած դատարանին, մինչդեռ վարչական դատարանում գործի վարույթը կարճելու դեպքում վճիռ չի կայացվում, ինչը փաստացի գրկում է դատարանին գործի վարույթը կարճելու դեպքում լրացուցիչ վճիռ կայացնելու հնարավորությունից:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով գործի վարույթը կարճելու մասին որոշումների բողոքարկման հնարավորության վերաբերյալ վերև արտահայտված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ դատարանը չի լուծել դատական ծախսերի բաշխման հարցը, գործին մասնակից անձինք գրկված չեն դատական ծախսերի բաշխման մատով վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև նշել, որ դատական ծախսերը հավաստող ապացույցների առկայության վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումը վերաբերում է նաև վարչական դատարանում գործի վարույթը կարճելու դեպքերին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ այն դեպքերում, երբ վարչական դատավարության կարգով գործի քննության ընթացքում կողմերը չեն ներկայացնում դատական ծախսերը հաստատող ապացույցներ, վերջիններս գործի քննության ավարտից հետո գրկվում են վարչական դատավարության կարգով այլ գործի շրջանակներում այդպիսի ծախսերը պահանջելու հնարավորությունից, քանի որ դատական ծախսերի առկայությունը պայմանավորված է կոնկրետ գործի առկայությամբ, իսկ դատական ծախսերի բաշխման հետ կապված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կարգավորումների տրամաբանությունից հետևում է, որ օրենսդիրը կոնկրետ գործի շրջանակներում կատարված դատական ծախսերի բաշխման հարցը լուծելու հնարավորություն նախատեսել է բացառապես այդ գործի շրջանակներում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատավարության կարգով գործի քննության հետ կապված դատական ծախսերը չեն կարող առանձին հայցի առարկա դառնալ նաև քաղաքացիական դատավարությունում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ դատական օրենսգրքի հիման վրա վարչական դատարանի ստեղծմամբ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունմամբ Հայաստանի Հան-

րապետությունում 2008 թվականի հունվարի 1-ից ներդրվեց մասնագիտացված վարչական արդարադատության ինստիտուտը:

Վարչական դատարանում վարչական գործերով դատավարության կարգը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և ՀՀ դատական օրենսգրքով, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է վարչական դատավարության սկզբունքները: Առանձին սկզբունքներ էականորեն տարբերվում են քաղաքացիական դատավարության սկզբունքներից, մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածն ամրագրում է գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքը, որը վարչական դատավարությանը բնորոշ կարևորագույն սկզբունքներից մեկն է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանվել է վարչական դատավարության կարգով գործի քննության հետ կապված դատական ծախսերի բաշխման կարգը, որն ունի վարչական արդարադատությանը բնորոշ մի շարք առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է, բացառությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 10-րդ կետերում նշված դեպքերի: Նշված դեպքերում դատարանը կարող է դատական ծախսերի հատուցման պարտականությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն դնել պատասխանողի վրա (...), իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե որոշումը, գործողությունը կամ անգործությունը ճանաչվում է ոչ իրավաչափ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա ընդունված (կատարված) լինելու պատճառով, և եթե այդ փաստաթղթերը կամ տեղեկությունները ներկայացրել է դատավարության մասնակիցը, ապա դատական ծախսերի հատուցման պարտականությունը կարող է դրվել այդ մասնակցի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ նա տեղյակ չի եղել կամ չէր կարող տեղյակ լինել տվյալ փաստաթղթերի կամ տեղեկությունների կեղծ լինելու մասին:

Հաշվի առնելով, որ դատական ծախսերի բաշխման նպատակը դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետության ապահովման մաս է կազմում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական արդարադատության ոլորտում դատական ծախսերի բաշխումը՝ այդ ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված, չի կարող քննության առարկա դառնալ քաղաքացիական դատավարության շրջանակներում:

Միաժամանակ անդրադառնալով վարչական դատավարության կարգով քննվող գործով դատական ծախսերի և վնասի ինստիտուտների հարաբերակցությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 1058-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (*տե՛ս Նապոլյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած իր որոշմամբ անդրադառնալով վնասի ինստիտուտի իրավական վերլուծությանը և արձանագրելով, որ քաղաքացիական իրավունքում վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունը պայմանավորված է վնասի առաջացման և վնաս պատճառած անձի գործողությունների պատճառահետևանքային կապով, մեղքի առկայու-

թյամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, նշել է, որ միակ բացառությունն օրենսդիրը կատարել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով, երբ արդար դատաբնության իրավունքից անբարեխիղճ օգտվելը կարող է վնասներ հատուցելու պարտականություն առաջացնել: Նման դեպքերում մեղքի առկայության և վնասների հատուցման հիմք է դատարանի կողմից հայցն ակնհայտ անհիմն ճանաչելը: Այս դեպքում միայն պատասխանողն իրավունք ունի վնասների հատուցման պահանջով դիմելու դատարան: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի հիմքով դատարանի կողմից ակնհայտ անհիմն գնահատված հայց ներկայացրած անձի դեմ վնասների հատուցման պահանջով դատարան դիմելու դեպքից զատ որևէ այլ դեպքում պատասխանողի մոտ հայցվորի նկատմամբ դատարան դիմելու հետևանքով իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջի իրավունք չի առաջանում:

Վերոնշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Նշված իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով: Անձի՝ իրավունքների և ազատությունների (թեկուզև ենթադրյալ) դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ինքնին չի կարող դիտվել որպես ոչ իրավաչափ գործողություն: Անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացումն առանց իրավական հիմնավորման չի կարող դիտվել որպես այլ անձին (մասնավորապես, դատավարության մյուս կողմին) վնաս պատճառելու դրսևորում (յրեն Շուշանիկ Գրիգորյանն ընդդեմ Արարապ Մովսիսյանի թիվ 3-2431(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի որոշումը):

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ծախսերի բռնագանձման հիմքը նույնական չէ վնասի պատճառման հետևանքով առաջացած պարտավորությունների ընդհանուր հիմքերի հետ, քանի որ դատական ծախսերի կազմի և բաշխման հետ կապված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ դատական ծախսերն այն ծախսերն են, որոնք կողմը կատարում է դատական կարգով իր իրավունքները պաշտպանելու համար, իսկ դատական ծախսերի բաշխման ընդհանուր սկզբունքն այն է, որ անձը, ում օգտին կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտը, պետք է դատական ծախսերի հատուցում ստանա մյուս կողմի հաշվին: Մինչդեռ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ վարքագծի միջև պատճառ-հետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Պատասխանողի կրած դատական ծախսերը հայցվորի կողմից նրան պատճառված վնաս չեն կարող դիտարկվել, քանի որ հայցվորը, իր ենթադրյալ իրավունքի պաշտպանության նպատակով դիմելով դատարան, չի դրսևորել հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծ: Այս երկու ինստիտուտների տարբերությունը դրսևորվում է նաև վրա հասնող հետևանքների առումով՝ դատական ծախսերը հատուցվում են խելամուտության սահմաններում, այսինքն՝ դրանց իրական ծավալը կարող է ավելի մեծ լինել, քան փաստացի հատուցման չափը, սակայն վնասի ինստիտուտի առնչությամբ այս սկզբունքը կիրառելի չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ վնասները ենթակա են հատուցման ամբողջ ծավալով:

02.12.2016 թ.

12. Վարդան Աթայանն ընդդեմ Մանվել Տեր-Առաքելյանի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1320/02/14

Էջ 113–122

**Խնդիր.** Արդյո՞ք միայն նյութական փոխհատուցումը բավարար է վիրավորանքի կամ զրպարտության դեպքում անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման համար այն դեպքում, երբ հայցվորը ներկայացրել է ինչպես ոչ նյութական, այնպես էլ նյութական հատուցման պահանջ,

\* Միաժամանակ *Վճարել դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին:*

**Վճարել դատարանի դիրքորոշումը.** ՀՀ սահմանադրական դատարանը 15.11.2011 թվականի թիվ ՄԳՌ–997 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետք է առանձնակի վերապահումներով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը՝ նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից: Բացի այդ, նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը, ինչպես նաև **մատչելի այլ միջոցներով** հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարավորությունը: ՀՀ սահմանադրական դատարանը նաև նշել է, որ արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց **որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը:** Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար:

Նախկինում կայացված որոշմամբ Վճարել դատարանն արձանագրել է, որ մարդու արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնական աղբյուրն է, պետության գոյության հիմնական պատճառներից մեկը: Մարդու արժանապատվության մասին նշված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, որոնց համաձայն՝ մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ է արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրությունը հռչակել է, որ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է: Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվությունը ճանաչվում է որպես բարձրագույն արժեք, որպես մարդու իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, ինչից հետևում է, որ յուրաքանչյուր մարդու արժանապատվությունը ենթակա է պաշտպանության պետության կողմից: Միաժամանակ ազատորեն արտահայտվելու իրավունքն ընկած է ժողովրդավարական հասարակության և իրավական պետության հիմքում, այն հանդիսանում է ժողովրդավարական հասարակության զարգացման հիմնական խթաններից մեկը և 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 27-րդ և Կոնվենցիայի 10-րդ հոդվածներն անվերապահորեն հետապնդում են վերը նշված նպատակը: Սակայն ինչպես նշված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում, այս ազատության իրականացումը կապված է



պարտականությունների և պատասխանատվության հետ: Չպետք է անտեսել նաև այլ իրավունքները, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային՝ մարդու հիմնարար իրավունքներին վերաբերող փաստաթղթերում նշված արժանապատվության և մասնավոր կյանքի իրավունքը, որոնք պակաս կարևոր չեն ժողովրդավարական հասարակության և իրավական պետության համար: Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ այն դեպքերում, երբ մարդու արժանապատվության և արտահայտվելու ազատության իրավունքի բախում է տեղի ունենում, անհրաժեշտ է գտնել պարզ հավասարակշռություն սրանց միջև: Սրանցից յուրաքանչյուրն էլ ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ բաղադրամասեր են, և երկուսն էլ պետք է ներդաշնակորեն առկա լինեն ժողովրդավարական հասարակությունում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված անձի արժանապատվության գործնականում ապահովման իրավական երաշխիք է (յուն Անիկ Դավթյանն ընդդեմ Տիգրան Վիրաբյանի թիվ ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրելով, որ քննարկման առարկա հարցի շրջանակներում գործ ունենք մի կողմից տեղեկատվություն տարածելու և խոսքի ազատության, մյուս կողմից անձի՝ իր պատվի, արժանապատվության, գործարար համբավի նկատմամբ հարգանք պահանջելու Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և երաշխավորված իրավունքների հետ, ի թիվս այլնի, անհրաժեշտ է համարել նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերը հնարավորություն են տալիս անձին նախատեսված **մեկ կամ մի քանի միջոցների կիրառմամբ** գրպարտող կամ վիրավորող սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու պահանջ ներկայացնել: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ դատարանները կոնկրետ դեպքում պետք է անհրաժեշտ գնահատական տան այն հանգամանքին, թե արդյոք կողմերը որևէ փորձ արել են վեճը լուծել «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված արտադատական կարգով, այն է՝ արդյոք անձը մինչև դատարան հայց ներկայացնելը դիմել է համապատասխան լրատվամիջոցին հերքում հրապարակելու պահանջով, և այդ պահանջին զանգվածային լրատվության միջոցը որևէ ընթացք տվել է, թե ոչ: Բացի այդ, դատարանները քննարկվող հարցի վերաբերյալ գործեր քննելիս նախ պետք է ջանքեր գործադրեն գործը հաշտությամբ լուծելու ուղղությամբ, այնուհետև գործում առկա բոլոր ապացույցների գնահատմամբ անհրաժեշտ է պարզել՝ **արդյո՞ք հնարավոր չէ վերականգնել անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասը ոչ նյութական փոխհատուցում նշանակելու միջոցով, քանի որ օրենսդիրը մինչև նյութական փոխհատուցում սահմանելը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով սահմանել է նաև պատճառված վնասի վերականգնման այլ միջոցների ընտրության և կիրառման հնարավորություն** (վիրավորանքի դեպքում՝ հրապարակային ներողություն խնդրել, եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը, գրպարտության դեպքում՝ եթե գրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել գրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը):

Ամփոփելով նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանները պետք է փորձեն գործում առկա ապացույցների գնահատմամբ **մինչև նյութական փոխհատուցում սահմանելը քննարկման առարկա դարձնել խախտված իրավունքների վերականգնման օրենքով նախատեսված այլ միջոցներ**

**րի կիրառման հնարավորությունը**, որը զանգվածային լրատվության միջոցների դեպքում չի խոչընդոտի նրանց հետագա բնականոն գործունեությանը՝ միաժամանակ բացառելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումը (*լրեն օրինակ, Վանո Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի, երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՄՊԸ-ի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել հետևյալը. հաշվի առնելով այն, որ անձի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը ոչ նյութական բարիքներ են, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով օրենսդիրը դրանց հասցված վնասը հատուցելու **առաջնահերթ** ձևեր է սահմանել ոչ նյութական միջոցները՝ նյութական կամ ոչ նյութական հատուցման պահանջ ներկայացնելու ընտրության հարցը վերապահելով վիրավորանքի կամ գրպարտության ենթարկված անձին: Ընդ որում, անձը կարող է պահանջել օրենքով սահմանված հատուցման ձևերից մեկը կամ մի քանիսը: Դա նշանակում է, որ եթե անձը վիրավորանքի կամ գրպարտության համար պահանջել է միայն փոխհատուցման ոչ նյութական միջոց, դատարանը պարտավոր է բավարարվել միայն ոչ նյութական փոխհատուցման միջոց կիրառելով, իսկ եթե անձը պահանջել է հատուցման և՛ ոչ նյութական, և՛ նյութական միջոցներ կիրառել, ապա առաջին հերթին կիրառման է ենթակա հատուցման ոչ նյութական միջոցը և միայն դրա անբավարարության դեպքում դատարանը կարող է կիրառել նյութական փոխհատուցման միջոցը: Դատարանն իրավասու չէ հատուցման ոչ նյութական և նյութական միջոցներ կիրառելու պահանջներ ներկայացված լինելու պարագայում կիրառել միայն նյութական միջոցը, քանի որ դա կենթադրի նյութական հատուցման միջոցներ տրամադրելով ոչ նյութական բարիքների դեմ անարգել ոտնձգելու հնարավորություն, ինչը կհակասի մարդու արժանապատվության՝ բարձրագույն արժեք լինելու գաղափարին: Այլ կերպ ասած՝ ոչ նյութական արժեքին վնաս պատճառելու պարագայում միայն նյութական հատուցման միջոց կիրառելը չի կարող համարվել համաչափ պատասխանատվություն, եթե տուժողի համար իր ոտնահարված արժանապատվության վերականգնման համար որպես առաջնային փոխհատուցման ձև ներկայացվել է հենց ոչ նյութական հատուցման պահանջը: Վճռարեկ դատարանը հարկ է համարել նաև հավելել, որ երբ վնաս է պատճառվում ոչ նյութական արժեքի, վնաս պատճառողի կողմից ոչ նյութական հատուցում տրամադրելիս է, որ որպես կանոն ապահովվում է վնասի հատուցման համաչափությունը, քանի որ ոչ նյութական հատուցում տրամադրելիս (հրապարակայնորեն ներդրություն խնդրելիս կամ հրապարակայնորեն հերքում հրապարակելիս) վնաս պատճառողը նույնպես որոշակի ոչ նյութական գրկանքներ է կրում՝ մասնավորապես ընդունելով իր կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելը: Դա հատկապես կարևոր է տուժող կողմի համար, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է հրապարակայնորեն: Այլ կերպ ասած, որպես կանոն, հենց ոչ նյութական հատուցման պայմաններում է, որ որոշակիորեն վերականգնվում են անձի ոտնահարված ոչ նյութական արժեքները: Դա է պատճառը, որ օրենսդրի կողմից որպես առաջնային փոխհատուցման ձև նախատեսվել են հենց ոչ նյութական հատուցումները՝ չբացառելով նաև միայն նյութական հատուցում ներկայացնելու պահանջ ներկայացնելու հնարավորությունը, որպիսի կարգավորումը բխում է հայցվորի տնօրինչականության սկզբունքի էությունից:

## ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

22.04.2016 թ.

13. Մարինա Բաղեմյանն (Պողիկյան) և Ամելիա Հարությունյանի օրինական ներկայացուցիչ Մարինա Բաղեմյանն (Պողիկյան) ընդդեմ Լուիզա Հարությունյանի և Անայա Ստեփանյանի, քաղ. գործ թիվ ԵԱՔԴ/2174/02/11

Էջ  
123–132

**Խնդիր.** Արդյո՞ք ժառանգատուի կողմից իրեն պատկանող դրամական միջոցներն այլ անձի բանկային հաշվին փոխանցած լինելու պայմաններում այդ դրամական միջոցները կարող են ներառվել ժառանգության զանգվածի մեջ ու բաժանվել ժառանգների միջև:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184–րդ հոդվածի 1–ին կետը, 1186–րդ հոդվածի 1–ին և 2–րդ կետերը, 1188–րդ հոդվածի 1–ին կետը՝ Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգմանը, որ ժառանգումը մահացած անձի իրավունքների և պարտականությունների՝ օրենքով սահմանված կարգով փոխանցումն է այլ անձանց: Օրենսդիրը, կարգավորելով այդ կապակցությամբ ծագած հարաբերությունները, ժառանգման ինստիտուտի յուրաքանչյուր տարրին հասցեագրված հստակ պահանջներ է ամրագրել: Այսպես, ժառանգության ինստիտուտի առանցքային տարրերից է ժառանգության զանգվածը, որի բովանդակությունը կազմում են ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը, ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները: Ժառանգության զանգվածի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրը, ընդհանրական կերպով սահմանելով ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի կազմը, միաժամանակ նախատեսել է հետևյալ սահմանափակումները՝

ա) ժառանգության զանգվածի կազմում չեն կարող ներառվել ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները:

բ) ժառանգության զանգվածի կազմում կարող է ներառվել միայն ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը:

Վերը նշված սահմանափակումներն ինքնանպատակ չեն, այլ բխում են ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններից:

Ժառանգման իրավահարաբերությունների հիմքում ընկած է ընդհանուր իրավահաջորդության դրույթը, հետևաբար փոխանցման ենթակա է ոչ թե ցանկացած գույք կամ գույքային իրավունք կամ պարտականություն, այլ ժառանգության բացման պահին ժառանգատուին պատկանող համապատասխան գույքը կամ գույքային իրավունքը կամ պարտականությունը: Մինևույն ժամանակ փոխանցման ենթակա է ոչ թե ժառանգատուին պատկանող ցանկացած գույք կամ գույքային իրավունք կամ պարտականություն, այլ միայն նրանք, որոնք ժառանգատուի մահվան պարագայում անգամ շարունակում են իրենց օբյեկտիվ գոյությունը: Հետևաբար ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված այն իրավունքները և պարտականությունները, որոնք, ըստ էության, սերտաճելով ժառանգատուի անձի հետ, դադարում են նրա մահվամբ, չեն կարող ժառանգության զանգվածի մեջ մտնել և փոխանցվել իրավահաջորդության կարգով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ ժառանգության զանգվածի մաս կարող են կազմել նաև դրամական միջոցները: Դրամը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, միաժամանակ սեփականության իրավունքի օբյեկտ է: Որպես սեփականության իրավունքի օբյեկտ՝ այն կարող է քաղաքացիական շրջանառությունում հանդես գալ կանխիկ և անկանխիկ եղանակով: Եթե կանխիկ շրջանառության պարագայում անձի սեփականության իրավունքը հավաստվում է դրամական միջոցների՝ համապատասխան անձի կողմից տիրապետման փաստով, ապա անկանխիկ շրջանառության պարագայում առաջնային

նշանակություն են ձեռք բերում տվյալ անձի անունով առկա դրամական միջոցների հաշիվները և դրանցում մուտք եղած դրամական միջոցները:

Վերագրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ ժառանգության իրավահարաբերություններից բխող վեճերով որպես ժառանգության գանգվածի մաս վկայակոչվում են դրամական միջոցները, դատարանները, որպես գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ, պետք է պարզեն հետևյալ փաստական տվյալները՝

- վկայակոչված դրամական միջոցներն արդյո՞ք գոյություն ունեն օբյեկտիվ իրականությունում,
- եթե՛ այո, ապա կանխիկ, թե անկանխիկ եղանակով,
- եթե՛ կանխիկ, ապա արդյո՞ք այդ դրամական միջոցները մինչև ժառանգության բացման օրը փաստացի գտնվել են ժառանգատուի տիրապետման ներքո,
- եթե՛ անկանխիկ, ապա արդյո՞ք համապատասխան բանկային հաշիվը պատկանել է ժառանգատուին (նշված փաստի հավաստիք կարող է, օրինակ, լինել բանկային հաշվի պայմանագիրը):

**02.12.2016 թ.**

**14. Գագիկ Արշակյանն, ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Արթուր Արշակյանն ընդդեմ Վահան Քոչարյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԵԱՆԴ/0137/02/13**

**Էջ  
133–144**

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ ժառանգի կողմից փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունելու կամքի դրսևորման առանձնահատկություններին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումները:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է վկայակոչված հոդվածների վերլուծությանը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: **Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման** (տե՛ս օրինակ, Արմինե Հակոբյանը և Մամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական փարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի և մյուսների թիվ 3-1621(ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու հանգամանքը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում, գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը կամ **այլ ապացույցներ**, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը (տե՛ս Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի և մյուսների թիվ 3-938(ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (*լրեն Կիմա Սարգսյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի և մյուսների թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում **ժառանգի կողմից ժառանգված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն արդեն իսկ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք նպատակաուղղված են ժառանգության ընդունմանը**: Եթե ժառանգը, գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, ըստ էության գիտակցաբար կատարում է ակտիվ գործողություններ, իսկ նման գործողությունների կատարումն օրենսդիրը համարում է ժառանգության ընդունման եղանակներից մեկը: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ գործով հիմնավորված է ժառանգատուի մահվանից հետո ժառանգված գույքի փաստացի տիրապետման և կառավարման հանգամանքը, ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար այլևս անհրաժեշտություն չկա ապացուցելու այլ ակտիվ, գիտակցված գործողությունների կատարման վերաբերյալ փաստեր ... (*լրեն Մամվել Հովհաննիսյանն ընդդեմ Լիդա Հովհաննիսյանի և մյուսների թիվ ԱՐԱԴ2/0420/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով ժառանգությունն ընդունելու համար բավարար է նաև ժառանգի կողմից ժառանգատուի պարտքերն իր հաշվին վճարելը կամ երրորդ անձանցից ժառանգատուին հասանելիք գումարներն ստանալը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի և 1186-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումների փոխկապակցված մեկնաբանության արդյունքում գտել է, որ ժառանգատուին հասանելիք գումարները ևս պետք է կազմեն ժառանգության զանգվածի մաս: Այսինքն՝ այն դեպքերում, երբ ժառանգի կողմից ժառանգությունն ընդունվում է ժառանգատուին հասանելիք գումարները երրորդ անձանցից ստանալով, ապա պետք է ապացուցվի դրանց նկատմամբ ժառանգատուի՝ նախքան մահանալը որևէ իրավունք (այդ թվում նաև՝ պահանջի իրավունք) ունենալը: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգատուի մահվան կապակցությամբ տրամադրվող գումարները, այդ թվում՝ թաղման նպատակով, ժառանգության զանգվածի մաս կազմել չեն կարող, նախ՝ քանի որ դրանք ստանալու իրավունքը ծագում է ժառանգատուի մահվան դեպքում, և երկրորդ՝ դրանք ոչ թե ժառանգատուին հասանելիք գումարներ են, որոնց նկատմամբ ժառանգատունն ունեցել է պահանջի իրավունք, այլ պետության կողմից իր սոցիալական ապահովության ներքո գտնվող անձի մահվան դեպքում հուղարկավորության կազմակերպման համար տրվող գումար:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

22.07.2016 թ.

15. Վահե Դավթյանի ընդդեմ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության, քաղ. գործ թիվ ԵԷԴ/3838/02/14

Էջ  
145–160

**Խնդիր.** Արդյո՞ք գործողման մեկնած աշխատողին հատուցվող գործողման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, հանդիսանում են աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճարում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված իրավական հարցադրմանը պատասխանելու համար հարկ է նախևառաջ անդրադառնալ աշխատավարձի հասկացության օրենսդրական բնորոշմանը և գործողման հետ կապված ծախսերի, այդ թվում՝ օրապահիկի իրավական բնույթի և էության վերլուծությանը: Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով օրապահիկի վճարման հետ կապված իրավահարաբերությունները ծագել են 2008 թվականից սկսած տարբեր ժամանակահատվածներում կայացած գործուղումների կապակցությամբ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ ինչպես գործող, այնպես էլ վիճելի իրավահարաբերության ծագման համապատասխան ժամանակահատվածներում գործող աշխատանքային օրենսդրության վերլուծությանը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը, սահմանելով և հետագայում խմբագրելով աշխատավարձի հասկացությունը, ըստ էության զարգացրել է աշխատավարձի հասկացության վերաբերյալ այն դիրքորոշումը, որ աշխատավարձը կայուն աշխատանքային զբաղվածության դիմաց պարբերաբար տրվող որոշակի չափով հատուցում է, որի չափը սահմանվում է օրենքով, այլ իրավական ակտով կամ կողմերի համաձայնությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ աշխատավարձի հիմնական հատկանիշներն են.

- 1) այն վարձատրություն է կատարված կամ կատարվելիք աշխատանքի դիմաց,
- 2) աշխատավարձի վճարման պայմանները սահմանվում են աշխատանքային պայմանագրով կամ օրենսդրությամբ,
- 3) աշխատավարձ վճարելու գործատուի պարտականությունը և աշխատավարձ ստանալու աշխատողի իրավունքը ծագում է աշխատանքային հարաբերությունների ծագման պահից հետո:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ աշխատավարձը բաղկացած է պարտադիր (հիմնական) և լրացուցիչ մասերից, որտեղ հիմնական աշխատավարձն այն հարաբերականորեն կայուն գումարն է, որը գործատուն վճարում է յուրաքանչյուր աշխատողի ամեն ամիս, իսկ լրացուցիչ աշխատավարձը հիմնական աշխատավարձից բացի աշխատողին կատարվող վճարումն է որոշակի հանգամանքների առկայության պայմաններում:

Վճռաբեկ դատարանը նաև գտել է, որ պետք է տարբերակում մտցնել աշխատավարձի կազմում ներառվող, իրենց բնույթով փոխհատուցման գումարների և աշխատավարձի կազմում չներառվող փոխհատուցման գումարների միջև:

Փոխհատուցման բնույթ կրող և աշխատավարձի կազմի մեջ մտնող վճարումներն **ուղղակիորեն** կապված են աշխատողի կողմից իր կանոնավոր աշխատանքային պարտականությունները կատարելու հետ՝ ի տարբերություն այն փոխհատուցումների, որոնք ուղղված են աշխատողի կողմից աշխատանքային կամ այլ պարտականությունների կատարման ընթացքում կատարված **ծախսերի** փոխհատուցմանը: Վերջիններս, ի տարբերության աշխատավարձի կազմի մեջ մտնող փոխհատուցումների, աշխատողի համար տնտեսական օգուտների

չեն հանգեցնում, այլ վերականգնում են կատարված ծախսերը (կամ ապահովում համապատասխան ծախսերի կատարումը):

Վերլուծելով գործող ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման բնույթ կրող վճարները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նման վճար է, օրինակ, աշխատավարձի կազմի մեջ մտնող հավելումը՝ հաշվի առնելով, որ վերջինս վճարվում է ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանք կատարելու և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքների համար: Այլ կերպ ասած՝ հավելումը նույնպես իր բնույթով փոխհատուցողական է, որը, սակայն, ներառվում է աշխատավարձի կազմի մեջ՝ ուղղակիորեն նախատեսված լինելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով **որպես լրացուցիչ աշխատավարձ**: Փաստորեն, եթե, օրինակ, ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանք կատարելու և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված **աշխատանքների** դիմաց լրացուցիչ վճարումներն ուղղված են փոխհատուցելու կատարվող աշխատանքի անբարենպաստ հետևանքները, ապա վերոնշյալ երկրորդ խմբում ներառվող փոխհատուցման գումարները վերականգնում են աշխատողի կատարած **ծախսերը**՝ ուղղակիորեն կապված չլինելով հիմնական աշխատանքային պարտականությունների կատարման համար վճարումների հետ:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գործուղման հետ կապված ծախսերի, այդ թվում՝ օրապահիկի բնույթին, արձանագրել է, որ աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտականությունները պետք է կատարվեն **աշխատավայրում**, որը նշված է հենց աշխատանքային պայմանագրում (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում՝ հրամանում): Բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում աշխատողին հանձնարարել իր աշխատանքային պարտականությունները ժամանակավորապես կատարել իր հիմնական աշխատավայրից դուրս՝ այլ վայրում, աշխատողի աշխատանքի կատարումը ձևակերպվում է որպես գործուղում, որի կապակցությամբ օրենսդիրը, ելնելով աշխատողի օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, աշխատողի համար սահմանել է որոշակի երաշխիքներ և փոխհատուցումներ: Ընդ որում, թեև աշխատանքային օրենսդրությամբ սահմանված չեն «երաշխիք» և «փոխհատուցում» եզրույթները, սակայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս Վճռաբեկ դատարանին եզրահանգելու, որ երաշխիքներն այն միջոցները, եղանակներն ու պայմաններն են, որոնց օգնությամբ ապահովվում է քաղաքացիների (աշխատողների) ընդհանուր կամ հատուկ իրավունքների և ազատությունների իրականացումը, իսկ փոխհատուցումները՝ աշխատողին իր կատարած կամ նրա կողմից հաստատապես կատարվելիք **այն ծախսերի հատուցումն (վերականգնումն)** են, որոնք նրան անհրաժեշտ են եղել կամ պետք է լինեն իր աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու համար:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 31.12.1997 թվականին, ուժը կորցրել է 01.01.2013 թվականին) մեկնաբանության հիման վրա անդրադառնալով այն հարցին, թե արդյոք գործուղման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, հանդիսանում են փոխհատուցման վճարներ և ըստ այդմ՝ արդյոք դրանք ենթակա են նվազեցման համախառն եկամտից, եզրահանգել է, որ գործուղման վճարները, այդ թվում՝ օրապահիկը, **փոխհատուցման վճար** են (յոեն «Բեռլազ կավկազ փրանս սերվիս» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության թիվ

ՎԳ/0961/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.02.2010 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության որոշումներով աշխատավարձին են հավասարեցվել աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված որոշ այլ վճարումներ ևս՝ աշխատավարձի իրավական կարգավորման ռեժիմը տարածելով նաև այդ վճարումների նկատմամբ, հարկ է համարել անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք գործողման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, ներառված են վիճելի իրավահարաբերության ծագման համապատասխան ժամանակահատվածներում գործող ՀՀ կառավարության որոշումներով սահմանված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների ցանկում:

Վճռաբեկ դատարանը, որոշմամբ վկայակոչված նորմերը մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, արձանագրել է, որ ինչպես ՀՀ կառավարության՝ գործող 08.08.2013 թվականի թիվ 853-Ն, այնպես էլ 10.07.1998 թվականից մինչև 01.01.2013 թվականն ընկած ժամանակահատվածում գործող 08.06.1998 թվականի թիվ 352 որոշումներով նախատեսվել է աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների սպառիչ ցանկ, որում գործողման ծախսերն ընդհանրապես և (կամ) օրապահիկը մասնավորապես չեն ներառվել: Ավելին, ՀՀ կառավարության 08.08.2013 թվականի թիվ 853-Ն որոշման հավելվածի 1-ին կետի «ե» ենթակետի և 08.06.1998 թվականի թիվ 352 որոշման թիվ 1 հավելվածի «ա» կետի 5-րդ պարբերության բովանդակությունից հետևում է, որ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները հավասարեցվել են աշխատավարձին, իսկ դրանցից սահմանվել է բացառություն, այն է՝ աշխատավարձին հավասարեցված վճարում չեն համարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրվող **փոխհատուցման գումարները**: Աշխատավարձին հավասարեցված վճարումների վերաբերյալ ներկայացված իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 2008 թվականից ի վեր գործող՝ աշխատավարձին հավասարեցված վճարումների ցանկը սահմանող ՀՀ կառավարության որոշումների համաձայն՝ գործողման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, լինելով փոխհատուցման գումար, ոչ միայն չեն ներառվել աշխատավարձին հավասարեցված վճարումների ցանկում, այլև բացառվել է դրանց՝ աշխատավարձին հավասարեցված վճարում լինելու հանգամանքը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործողման համար կատարված ծախսերի փոխհատուցումները պատկանում են աշխատավարձի կազմի մեջ չմտնող փոխհատուցումների շարքին: Դրանք ոչ թե վարձատրություն են աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց, այլ վերականգնում են այն ծախսերը, որոնք աշխատողը կատարել է իր աշխատանքի սովորական վայրից դուրս աշխատանք կատարելու համար: Գործողման ծախսերի՝ աշխատավարձի կազմում չներառվելու մասին է վկայում նաև այն, որ գործողման դեպքում աշխատողը ստանում է աշխատավարձ: Այսինքն՝ աշխատողին գործողման դեպքում վճարվում է ինչպես աշխատավարձ՝ կատարված աշխատանքի դիմաց, այնպես էլ գործողման ընթացքում կատարված հիմնավորված ծախսերի փոխհատուցում (այդ թվում նաև՝ օրապահիկի):

Վերոգրյալ իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործողման դեպքում աշխատողի համար օրենսդրությամբ նախատեսված են հետևյալ երաշխիքներն ու փոխհատուցումները.

1. աշխատատեղի պահպանում,
2. աշխատավարձի պահպանում,
3. կատարված ծախսերի, այդ թվում՝ օրապահիկի վճարումը:



Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործողման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, հանդիսանում են փոխհատուցման վճարներ, որոնք տրվում է աշխատողին աշխատանքային պարտականությունները ժամանակավորապես իր հիմնական աշխատավայրից դուրս՝ այլ վայրում կատարելու կապակցությամբ կատարված կամ կատարվելիք որոշակի **ծախսերը հատուցելու** (այլ ոչ թե աշխատանքի դիմաց վարձատրելու) նպատակով: Հետևաբար գործողման ծախսերը, ի տարբերություն, օրինակ, հավելման, չեն կարող ներառվել աշխատանքի վարձատրության տարրերի մեջ մտնող փոխհատուցման վճարների մեջ՝ հաշվի առնելով աշխատավարձի (կամ դրան հավասարեցված վճարների)՝ կատարված **աշխատանքի** դիմաց վարձատրության բնույթ ունենալը, իսկ գործողման ծախսերի՝ կատարված **ծախսերի** փոխհատուցման բնույթ ունենալը: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործողման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, չեն հանդիսանում աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճար:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու առանձնահատկություններին, արձանագրել է, որ օրենսդիրը, ՀՀ աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների համար սահմանելով հայցային վաղեմության ընդհանուր՝ երեք տարվա ժամկետ, նախատեսել է նաև որոշակի բացառություններ նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դեպքերի համար: Այսպես, աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, **աշխատավարձի**, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների վրա հայցային վաղեմություն ընդհանրապես չի տարածվում, իսկ որոշ պահանջների համար հնարավոր է համարել օրենքով հայցային վաղեմության ընդհանուր ժամկետների համեմատ կրճատ կամ ավելի երկար՝ հատուկ ժամկետների նախատեսումը (*տե՛ս Մեյրան Սյրեփանյանի ընդդեմ «Երևանի քաղաքապետարանի Դ. Դեմիրճյանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի թիվ ԵՇԿ/0906/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների վերաբերյալ վերոշարադրյալ իրավական վերլուծությունների համադրման արդյունքում պարզ է դառնում, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասում որպես բացառություն նշված «աշխատավարձ» եզրույթն իր մեջ ներառում է բացառապես աշխատանքի կատարման դիմաց պարբերաբար տրվող հիմնական և լրացուցիչ աշխատավարձը, ինչպես նաև աշխատավարձին հավասարեցված վճարումները:

## ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

**02.12.2016 թ.**

**16. ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչությունն ընդդեմ Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանի, քաղ. գործ թիվ ԿԴ2/0078/04/14**

**ԷԶ  
161-169**

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է պարտապանին հարկադրաբար սնանկ ճանաչելու առանձնահատկություններին այն դեպքում, երբ վճարային պարտավորության անվիճելիությունը հիմնավորվում է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը,

7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը եկել է այն հետևությունը, որ հարկադրված սնանկության դեպքում պարտապանը սնանկ է ճանաչվում, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Ընդ որում, օրենսդիրը, ամրագրելով, որ վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, միաժամանակ սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում նույնիսկ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու դեպքում պարտավորությունն անվիճելի է: Այդ հիմքերն են՝

- երբ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,
- երբ պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),
- երբ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),
- երբ պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

ՀՀ սահմանադրական դատարանը, 25.02.2008 թվականի թիվ ՄԴՌ-735 որոշմամբ անդրադառնալով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով «անվճարունակություն» հասկացությանը, նշել է որ «անվճարունակությունը» մի վիճակ է, երբ պարտապանն ընդհանուր առմամբ անկարող է վճարելու իր պարտքերը՝ պարտավորությունները կատարելու համար նախատեսված ժամկետներում, կամ երբ պարտապանի պարտավորությունների ընդհանուր գումարը գերազանցում է նրա ակտիվների արժեքը: Այսինքն՝ անվճարունակությունը նշանակում է վճարելու կարողության բացակայություն: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենքը հիմնվում է «անվճարունակության կանխավարկածի» վրա, այն է՝ եթե պարտապանն ի վիճակի չէ կատարելու ժամկետանց վճարային պարտավորությունները, ապա ի սկզբանե ենթադրվում է, որ նա փաստացիորեն անվճարունակ է, և այդ ենթադրությունը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ ժամկետանց պարտավորությունը չի կատարվել կամ վիճարկվել ու հերքվել: Ընդ որում, «անվճարունակության կանխավարկածն» իր հերթին հիմնվում է պարտապանի «բարեխղճության և պարտաճանաչության կանխավարկածի» վրա, այսինքն՝ եթե պարտապանը չի կատարում իր պարտավորությունները, ապա ի սկզբանե պարտավորության չկատարումը բացատրվում է ոչ թե նրա անբարեխղճությամբ, այլ վճարում կատարելու կարողության բացակայությամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ ելնելով անձին սնանկ ճանաչելու տարբեր հիմքերի առանձնահատկություններից՝ օրենսդիրն անձին սնանկ ճանաչելու յուրաքանչյուր հիմքի համար սահմանել է տարբեր կարգավորումներ: Այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե սնանկության դիմումի հիմքում «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված որ հիմքն է ընկած, կիրառվում է տվյալ հիմքին բնորոշ օրենսդրական կարգավորումը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության դիմումի հիմքում ընկած է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետը, այն է՝ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունենալու հանգամանքը (նե-

րառյալ՝ պահանջի հաշվանցը), ապա համապատասխան իրավասու պետական մարմինը պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել, եթե հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուղացվում է: Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումն իրավասու պետական մարմինը պետք է **ներկայացնի պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում**: Միաժամանակ օրենսդիրը սահմանել է, որ պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում համապատասխան պետական մարմինների կողմից սնանկության դիմում ներկայացվելու դեպքում անձին սնանկ ճանաչելու դիմումը ներկայացնում են դատախազության մարմինները՝ նույն օրենքով սահմանված կարգով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ ըստ էության օրենսդիրը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանելով սնանկության դիմում ներկայացնելու ժամկետային սահմանափակում, միաժամանակ նախատեսել է նաև դրա խախտման հետևանքները՝ մի դեպքում՝ սնանկության դիմում ներկայացնելու իրավունքը վերապահելով այլ պետական մարմին՝ դատախազությանը, մյուս դեպքում՝ սահմանելով համապատասխան պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվություն ժամկետի խախտման հետևանքով Հայաստանի Հանրապետությանը և համայնքին պատճառված վնասի համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ վերապահված պարտականությունների՝ սահմանված ժամկետում չիրագործումն ինքնին չի հանգեցնում պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերի վերացմանը, այլ պարտապանին սնանկ ճանաչելու իրավունքը փոխանցվում է պետական այլ մարմին՝ դատախազությանը, որպիսի պայմաններում իրավասու պետական մարմինը դադարում է լինել պատշաճ դիմող:

Ընդ որում, վերոգրյալ իրավական վերլուծությունները վերաբերում են միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված հիմքին:

Մինչդեռ օրենսդիրն այլ կարգավորում է սահմանել այն դեպքերի համար, երբ սնանկության դիմումի հիմքում դրված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը: Այսպես՝ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության դիմումի հիմքում ընկած է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, իսկ պարտապանը ողջամիտ ժամկետում չի կատարում այդ վճռից բխող իր պարտավորությունը, ապա պարտատերն իրավասու է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու երկու եղանակով, այն է՝ կան սնանկության դիմումով դիմել դատարան, կան օրենքով սահմանված ժամկետում օրինական ուժի մեջ մտած վճիռը ներկայացնել հարկադիր կատարման: Ընդ որում, այն դեպքում, երբ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարզվում է, որ գույքը բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հագարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան **60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան**:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության հիմքում դրված է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, ապա պարտատերը սնանկության դիմումը դատարան պետք է ներկայացնի վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված կարգով կատարման ներկայացնելու ժամկետի սահմաններում: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում կատարման չներկայացնելու դեպքում տվյալ վճռից բխող իրավունքներն ու պարտականությունները ենթակա չեն իրականացման:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությանը՝ որպես անձին սնանկ ճանաչելու հիմքին: Սահմանափակված Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ պարտապանից գումար պահանջելու և հետագայում սնանկ ճանաչելու պարտատիրոջ իրավունքի ծագման հիմքում ընկած է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, և նշված դատական ակտն օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետում կատարման չի ներկայացվում, պարտատերը զրկվում է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն ազատվում է նույն վճռով սահմանված պարտավորությունից: Նշվածի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով պարտապանին սնանկ ճանաչելու հիմքը բացակայում է (տե՛ս «Արդշինբանկ» ԲԲԸ-ն ընդդեմ «Արոր-Բագրաս» արտադրական կոոպերատիվի թիվ ՀՔԴ4/0024/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշումը):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ այն դեպքում, երբ սնանկ ճանաչելու վճռի հիմքում դրված է Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորությունների (այդ թվում՝ հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարումների գծով) կատարմանը պարտավորեցնող՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումը չի կարող կիրառվել: Այլ կերպ ասած՝ պահանջատեր հանդիսացող պետական կամ համայնքային մարմինը կաշկանդված չէ վեցամսյա ժամկետով, և նշված ժամկետում նրա լիազորությունների չկատարումը չի ենթադրում հայց հարուցելու իրավունքի փոխանցում դատախազությանը:

Ամփոփելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր գործով սնանկության դիմումը քննելիս դատարանները պետք է նախևառաջ պարզեն սնանկության դիմումի հիմքում ընկած՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայությունը, որից հետո միայն բացահայտեն համապատասխան հիմքի (հիմքերի) հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հիմքի համար օրենսդրի կողմից սահմանված իրավակարգավորումները:

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**22.07.2016 թ.**

**17. Անի Սարգսյանն ընդդեմ Արմեն Փերոյանի, քաղ. գործ թիվ ԵԱՏ Դ/4073/02/14**

**Էջ 170-182**

*Խնդիր.* 1) Իրավաչափ է արդյոք երեխայից առանձին ապրող հոր՝ երեխայի հետ մոր ներկայությամբ և առանց գիշերակացի տեսակցության կարգի սահմանում այն դեպքում, երբ գործով չեն բացահայտվել երեխայի լավագույն շահերը, և չի պարզվել դրանց հարաբերակցությունը տեսակցության սահմանվող կարգի հետ,

2) իրավաչափ է արդյոք երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու վերաբերյալ դատական ակտի եզրափակիչ մասում «սկզբնական շրջանում մոր ներկայությամբ» արտահայտության օգտագործումն այն պարագայում, երբ «սկզբնական շրջան» արտահայտության հստակ ժամանակային տևողությունը բացահայտված չէ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ձեռք է բերում ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, իսկ ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Երեխաների և ծնողների նշված իրավունքների լիարժեք իրականացման և ծնողների նշված պարտականությունների պատշաճ կատարման հրամայականից ելնելով՝ ծնողների համար երաշխավորված է նաև այլ անձանց հանդեպ իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունքը: Նշվածի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ (*լրեն նաև Մարգարիտ Հովհաննիսյանն ընդդեմ Արթուր Թորոպյանի թիվ ԵԱԴԳ/1513/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*):

Ծնողները ոչ միայն իրավունք ունեն, այլև պարտավոր են դաստիարակել իրենց երեխային, ինչպես նաև պատասխանատվություն են կրում իրենց երեխայի դաստիարակության և զարգացման համար: Ընդ որում, երեխաների դաստիարակության հարցում ծնողների իրավունքներն ու պարտականությունները հավասար են: Երեխայից առանձին ապրող ծնողը ևս իրավունք ունի շփվելու իր երեխայի հետ և մասնակցելու նրա դաստիարակությանը, իսկ այն ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը չի վնասում երեխայի ֆիզիկական ու հոգեկան միճակին, նրա բարոյական զարգացմանը: Ավելին, երեխան, իր հերթին, ունի իր ծնողների հետ շփվելու իրավունք, իսկ ծնողներից առանձին (այդ թվում՝ տարբեր պետություններում) ապրելու հանգամանքը չի կարող խոչընդոտել այդ իրավունքի պատշաճ իրականացմանը:

Երեխայի դաստիարակությանը մասնակցելու և նրա հետ շփվելու ծնողի իրավունքը բխում է նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված՝ ընտանեկան կյանքի նկատմամբ յուրաքանչյուրի հարգանքի իրավունքի էությունից, որի վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից երեխայի և ծնողների՝ միմյանց հետ շփվելու իրավունքն ընտանեկան կյանքի հիմնարար տարրերից մեկն է (*լրեն Eriksson v. Sweden գործով Եվրոպական դատարանի 22.06.1989 թվականի վճիռը, 58-րդ կետ*): Ավելին, ըստ Եվրոպական դատարանի՝ բնականոն ընտանեկան հարաբերությունները չեն դադարում ծնողներից մեկի առանձնաձև կամ նրանց ամուսնալուծվելու դեպքում, անգամ եթե դրա արդյունքում երեխան դադարում է բնակվել ծնողներից մեկի հետ (*լրեն Mustafa and Armağan Akin v. Turkey գործով Եվրոպական դատարանի 06.04.2010 թվականի վճիռը, 19-րդ կետ*):

Բացի այդ, Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պաշտպանության ներքո է գտնվում նաև ծնողի՝ իր երեխայի հետ վերամիավորվելու իրավունքը, և անդամ

պետությունները պոզիտիվ պարտականություն են կրում օժանդակելու այդ վերամիավորմանը: Ընդ որում, պետության վերոհիշյալ պոզիտիվ պարտականությունը տարածվում է նաև երեխայի հետ շփվելու և բնակության վայրի վերաբերյալ ծնողների և (կամ) երեխայի ընտանիքի այլ անդամների միջև ծագած վեճերի վրա (*Կրեն Gluhaković v. Croatia գործով Եվրոպական դատարանի 12.04.2011 թվականի վճիռը, 56–րդ կետ*):

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ծնողական իրավունքները, այդ թվում նաև՝ երեխայից առանձին ապրող ծնողի կողմից իր երեխայի հետ անմիջականորեն շփվելու իրավունքը, չեն կարող իրականացվել երեխայի շահերին հակառակ. դրանց իրականացումը չպետք է վնասի երեխայի շահերին: Փաստորեն, երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման վերաբերյալ վեճեր քննելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է հաշվի առնի երեխայի լավագույն շահերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե դատարանի կողմից քննվող վեճը լուծելիս կիրառվող միջոցն ինչպիսի ազդեցություն կունենա երեխայի շահերի վրա, մասնավորապես՝ նրա հոգեկան, հոգևոր ու բարոյական զարգացման և դաստիարակության վրա:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ ևս արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը (*Կրեն Անի Մարտիրոսյանն ընդդեմ Գուրգեն Խալաթյանի թիվ ԵԱԲԴ/0474/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշումը*):

Անդրադառնալով «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ Եվրոպական դատարանը ևս արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում նաև՝ դատարանների կողմից երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից (*Կրեն C. v. Finland գործով Եվրոպական դատարանի 09.05.2006 թվականի վճիռը, 52–րդ կետ, գանգապ թիվ 18249/02*):

Եվրոպական դատարանը մեկ այլ վճռով իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ Կոնվենցիայի 8–րդ հոդվածն արգելում է ծնողի շահերից ելնելով թույլատրել նրան կատարելու այնպիսի գործողություններ, որոնք կվնասեն երեխայի առողջությանն ու զարգացմանը (*Կրեն Johansen v. Norway գործով Եվրոպական դատարանի 07.08.1996 թվականի վճիռը, 78–րդ կետ*):

Վերոնշյալ իրավական վերլուծություններից բխում է, որ երեխայի՝ ծնողներից մեկից կամ երկուսից առանձին բնակվելը, ծնողների ամուսնալուծված լինելը կամ արտասահմանում բնակվելը չպետք է խոչընդոտ հանդիսանան ծնողների հետ կանոնավոր կերպով անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու երեխայի իրավունքի, ինչպես նաև երեխայից առանձին ապրող ծնողի՝ իր երեխայի հետ անմիջականորեն շփվելու իրավունքի իրականացման համար, եթե դա չի հակասում երեխայի լավագույն շահերին: Ավելին, ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխայի իրավունքներին ու լավագույն շահերին հակառակ, և երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման վերաբերյալ վեճեր քննելու յուրաքանչյուր դեպքում դատարանի խնդիրն է բացահայտել երեխայի լավագույն շահերը՝ հաստատելով ողջամիտ հավասարակշռություն ծնողի իրավունքների և երեխայի լավագույն շահերի միջև:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ երեխայից առանձին բնակվող ծնողի ծնողական իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ ծնողին առնչվող ուշադրության արժանի հանգամանքները, եթե դրանք հաշվի առնելը չի հակասում երեխայի լավագույն շահերին:

Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում է արձանագրել այն դեպքում, երբ տեսակցության կարգ սահմանելիս հաշվի չի առնվել ամուսնալուծված և երեխայից առանձին բնակվող հոր ուշադրության արժանի այնպիսի անձնական հանգամանքը, ինչպիսին է վերջինիս աշխատանքային գրաֆիկը, որը խոչընդոտել է ըստ սահմանված տեսակցության կարգի երեխայի հետ շփվելուն և հորը գրկել է իր երեխային արդյունավետ տեսակցելու հնարավորությունից (*յրևն Gluhaković v. Croatia գործով Եվրոպական դատարանի 12.04.2011 թվականի վճիռը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թե՛ Հայաստանի Հանրապետության ներպետական ընտանեկան օրենսդրությամբ, թե՛ միջազգային իրավական ակտերում «երեխայի լավագույն շահ» հասկացության բովանդակությունը հստակեցված չէ. նշված հասկացության բովանդակությունը ենթակա է բացահայտման իրավակիրատ (հատկապես՝ դատական) պրակտիկայի շրջանակներում:

Այսպես՝ Եվրոպական դատարանն անդրադարձել է օրենսդրական ձևակերպումներին ուղղված իրավական որոշակիության սկզբունքից բխող պահանջներին և դիրքորոշում արտահայտել առ այն, որ օրենքներում քիչ թե՛ շատ անորոշ տերմինների առկայությունն անխուսափելի է, քանի որ դրա միջոցով ապահովվում է իրավունքի ճկունությունն ու ունակությունը՝ հետևելու փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար որոշակիության պահանջը բացարձակ չէ, և օրենքներում առկա որոշ եզրույթների մեկնաբանումն ու կիրառումը դատական պրակտիկայի խնդիրն է (*յրևն The Sunday Times v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 26.04.1979 թվականի վճիռը, 49-րդ կետը*):

ՀՀ սահմանադրական դատարանը 05.10.2010 թվականի թիվ ՄԴՌ-919 որոշմամբ գտել է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել, և դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև՝ դատական պրակտիկայում: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք է: Ընդ որում, նշված հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Բացի այդ, համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ երեխայի լավագույն շահը չի կարող որոշվել ընդհանուր բնույթի իրավական դատողությունների միջոցով և կախված է յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից՝ հիմք ընդունելով երեխայի շահերի առաջնայնությունը (*յրևն Schneider v. Germany գործով Եվրոպական դատարանի 15.09.2011 թվականի վճիռը, 100-րդ կետը*):

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «երեխայի շահ» կամ «երեխայի լավագույն շահեր» հասկացություններն իրավակիրատ պրակտիկայում պետք է ընկալվեն ու կիրառվեն հետևյալ երեք իմաստներով.

1) որպես երեխայի իրավունք. երեխան ունի իր լավագույն շահերի բացահայտման և դրանց առաջնային նշանակության տրամադրման իրավունք այն դեպքում, երբ իրավասու մարմնի կողմից կայացվող որոշումն անսլվում է երեխայի և այլ անձանց իրավունքներին ու շահերին, և առկա է դրանց հավասարակշռման անհրաժեշտություն,

2) որպես իրավական-մեկնաբանողական սկզբունք. երեխայի իրավական վիճակին առնչվող տարբեր մեկնաբանությունների և ընկալումների տեղիք տվող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի՝ ելնելով երեխայի լավագույն շահերի առավել ապահովման նկատառումից,

3) որպես ընթացակարգային կարգավորման կանոն. երեխային առնչվող որոշումների ընդունման ընթացքում պետք է բացահայտվի նաև երեխայի իրավունքների և շահերի վրա այդ որոշման հնարավոր ազդեցությունը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով երեխայից առանձին ապրող ծնողի՝ իր երեխայի հետ շփվելու իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ երեխայի հետ տեսակցելու իրավունքի իրականացման հարցին, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ երեխայի մոր ներկայությամբ տեսակցության կարգ սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել, *inter alia*, երեխայի տարիքը, մշտական խնամքի տակ գտնվելու անհրաժեշտությունը, առողջական այնպիսի խնդիրների առկայությունը, որոնք խոչընդոտում են առանց մոր ներկայության երեխայի հետ հոր շփմանը (*Կրեն Էդգար Անրոյանն ընդդեմ Քրիստինա Գաբրուսիայի թիվ ԵՇԴ/0990/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.08.2009 թվականի որոշումը*):

Փաստորեն, մոր ներկայությամբ երեխայի հետ շփվելու և նրա դաստիարակությունը մասնակցելու համար տեսակցության կարգ սահմանելիս երեխայի լավագույն շահերի բացահայտման համար դատարանը պետք է հիմք ընդունի, *inter alia*, հետևյալ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը.

- երեխայի տարիքը,
- երեխայի՝ իր հետ բնակվող ծնողի մշտական խնամքի տակ գտնվելու անհրաժեշտությունը,
- առողջական այնպիսի խնդիրների առկայությունը, որոնք խոչընդոտում են առանց երեխայի հետ բնակվող ծնողի ներկայության մյուսի ծնողի և երեխայի շփմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանների կողմից երեխայի լավագույն շահերի բացահայտման գործում կարևոր նշանակություն ունի երեխայի դաստիարակության վերաբերյալ գործերով խնամակալության և հոգաբարձության մարմնին դատավարությանը մասնակից դարձնելը: Նշված մարմնի վրա ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67–րդ հոդվածի 2–րդ մասով դրված է երեխայի և այն անձի կյանքի հետազոտություն անցկացնելու պարտականություն, ով հավակնում է նրա դաստիարակությանը: Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է նաև հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը ներկայացնել դատարան: Թեև խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացությունը դատարանի համար կրում է մասնագիտական–խորհրդատվական բնույթ, և դատարանն այն պարտավոր է գնահատել գործում առկա այլ ապացույցների հետ համակցության մեջ, այնուամենայնիվ, նմանատիպ գործերով վերոնշյալ եզրակացության առկայությունը պարտադիր է, քանի որ դրանում արտահայտված փաստարկները գործում առկա մյուս ապացույցների հետ համադրության արդյունքում դատարանին հնարավորություն են ընձեռում կոնկրետ գործով պարզելու երեխայի լավագույն շահը: Այնուամենայնիվ, դատարանը չպետք է սահմանափակվի միայն խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացության մեջ նշված դրույթները կրկնելով, այլ պետք է հավաստիանա դրանց հիմնավորվածության մեջ և այն համեմատի գործով ձեռք բերված մյուս ապացույցների հետ, որից հետո միայն, հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը, որոշի գործի ելքը:

Վերոհիշյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ երեխայի դաստիարակության հետ կապված յուրաքանչյուր գործ քննելիս դատարանը պետք է բացահայտի երեխայի լավագույն շահերը, մասնավորապես՝ դատարանը, գործին մասնակից դարձնելով խնամակալության և հոգաբարձության մարմնին, պետք է հավաստիանա երեխայի դաստիարակությանը հավակնող անձի կյանքի հետազոտության արդյունքում կայացված եզրակացության հիմնավորվածության մեջ, ապա այն համեմատի գործով ձեռք



բերված մյուս ապացույցների հետ, որից հետո միայն, հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը, որոշի, թե ծնողական իրավունքների իրականացման ինչպիսի միջոց պետք է սահմանվի: Այլ կերպ ասած՝ դատարանը չի կարող ընդհանուր իրավական դատողությունների միջոցով բացահայտել երեխայի լավագույն շահերն ու սահմանվող միջոցի ազդեցությունը դրանց վրա, այլ պետք է յուրաքանչյուր գործով հավասարակշռի ծնողի իրավունքներն ու անձնական հանգամանքները և երեխայի լավագույն շահերը, մասնավորապես՝ պարզի, թե արդյոք ծնողական իրավունքի իրականացման սահմանվող եղանակը բացասական ազդեցություն կունենա երեխայի հոգեկան, հոգևոր ու բարոյական զարգացման և դաստիարակության վրա, թե՛ ոչ:

Անդրադառնալով երկրորդ հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ Եվրոպական դատարանն իր նախադեպային որոշմամբ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ներպետական իրավունքի նորմերը պետք է լինեն բավարար չափով հասանելի, հստակ և կանխատեսելի իրենց կիրառման մեջ (*յրենս Broniowski v. Poland գործով Եվրոպական դատարանի 22.06.2004 թվականի վճիռը, 147-րդ կետը*): Բացի այդ, համաձայն Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների՝ օրենսդրական նորմերը պետք է կիրառվեն ողջամիտ հստակությամբ և կապակցվածությամբ, որպեսզի հնարավոր լինի որքան հնարավոր է խուսափել իրավական անորոշություններից և երկիմաստություններից: Եվրոպական դատարանն ընդգծել է նաև պետությունների բարձրագույն դատական ատյանների դերն իրավական անորոշությունը հնարավորինս հաղթահարելու հարցում (*յրենս Beian v. Romania գործով Եվրոպական դատարանի 06.12.2007 թվականի վճիռը, 33-րդ և 39-րդ կետերը*):

Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն թե՛ օրենսդրական, թե՛ վարչական և թե՛ դատական գործունեության արդյունք հանդիսացող իրավական անորոշություններից խուսափելու համար: Փաստորեն, իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է ոչ միայն օրենսդրական ձևակերպումների, այլև դատարանների կայացրած որոշումների հստակություն և կանխատեսելիություն: Ընդ որում, դատական ակտերը պետք է ուղղված լինեն օրենսդրական անհստակությունների վերացմանը և չպետք է պարունակեն անհասկանալի և անորոշ եզրահանգումներ:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով դատական ակտի որոշակիության խնդրին, արտահայտել է դիրքորոշում առ այն, որ դատական ակտը պետք է լինի որոշակի. այն պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, դրա բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որ դատավարության մասնակիցների համար ակնառու և ակնհայտ լինի, թե իրենց ինչ իրավունք է տրամադրվում, իրենց որ իրավունքն է սահմանափակվում, իրենց ինչ իրավունքից են զրկում կամ իրենց վրա ինչ պարտականություն է դրվում (*յրենս Դավիթ Ասարյանն ընդդեմ Սվեդիայի Ասարյանի և Արթուր Գասիսյանի թիվ ԵՄԴ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերին ներկայացվող իրավական որոշակիության պահանջը, ի թիվս այլ հանգամանքների, ենթադրում է, որ տվյալ դատական ակտը պետք է գործով ներկայացված բոլոր պահանջներին տա այնպիսի պատասխան, որը բացառում է կողմերի հարաբերություններում անորոշությունը, ինչպես նաև դատական ակտը կողմերի հայեցողությամբ տարբեր եղանակներով կատարելու հնարավորությունը:

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

02.12.2016 թ.

18. «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն ընդդեմ Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյանի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/5370/02/14

Էջ  
183–191

**Խնդիր.** Արդյո՞ք Ֆինանսական համակարգի հաշտարարի (այսուհետ՝ Հաշտարար) որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում Հաշտարարի որոշումները դատական կարգով վիճարկելու հիմքերի սահմանափակումը չի հանգեցնում դատական պաշտպանության մատչելիության իրավունքի խախտմանը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ Եվրոպական դատարանի որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: **Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում:** Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեն Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՄԴՌ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմատետիզ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս

գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանել դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների՝ գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դատական պաշտպանության և արդար դատաբնության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը:

ՀՀ սահմանադրական դատարանը, 09.10.2012 թվականի թիվ ՍԴՌ-1051 որոշմամբ գնահատելով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի սահմանադրականությունը, արձանագրել է, որ այն դեպքում, երբ Կազմակերպությունը Հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ իր ազատ կամահայտությամբ, հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու սահմանափակ հնարավորություն նախատեսելն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի հարուցում: Իսկ այն դեպքում, **երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը:**

Արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի, ինչպես նաև այդ հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված 18-րդ հոդվածի դրույթներով Կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը միայն այն իրավակարգավորման շրջանակներում, **երբ Կազմակերպությունը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամովին հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ:**

Ամփոփելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հաշտարարի որոշումը հաճախորդի կողմից ընդունելու պարագայում դառնում է պարտադիր և Կազմակերպությունն այդ որոշումը կարող է ըստ էության վիճարկել դատական կարգով, **եթե նա Հաշտարարի գրասենյակի հետ կնքած գրավոր համաձայնագրով չի հրաժարվել Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից**, իսկ այն դեպքում, երբ առկա չէ նման գրավոր համաձայնություն, ապա կազմակերպությունը Հաշտարարի որոշումը կարող է վիճարկել ոչ թե ըստ էության, այլ միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված սահմանափակ հիմքերով:

**ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ**

**22.07.2016 թ.**

**19. Հրանտ Ավետիսյանն ընդդեմ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/4542/02/14**

**Էջ  
192–201**

**Խնդիր.** Արդյո՞ք սահմանված պահանջներին չհամապատասխանող դրամարկղի մուտքի օրդերը և դրամարկղային շարժի վերաբերյալ փաստաթուղթը կարող են համարվել թույլատրելի ապացույց փոխառության հարաբերության առկայությունը հաստատված համարելու համար,

*\* Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք վերաքննիչ դատարանը կարող է քննարկման առարկա դարձնել հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը, եթե այն չի ներկայացվել և քննարկվել առաջին արյանի դատարանում:*

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության, 878-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի վերլուծությանը, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ փոխառության պայմանագիրը **գրավոր ձևով կնքվող** գործարք է, որի ուժով փոխատուս փոխառուին է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխատուս պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխառուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխառուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրանով նախատեսված դրամը կամ այլ գույքը հանձնելու պահից (*տես Վահե Մահակյանն ընդդեմ Լենինոյ Ներսիսյանի թիվ ԵԲԴ/0916/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ օրենսդիրը, փոխառության պայմանագրի համար պարտադիր համարելով գրավոր ձևը, ապացույցների թույլատրելիության շրջանակը սահմանափակել է միայն գրավոր ապացույցներով՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու **ցանկացած փաստաթուղթ**, որը կհաստատի փոխառության հարաբերությունների առկայությունը: Օրենսդիրը, պարտադիր համարելով փաստաթղթի ներկայացումը, չի սահմանել գրավոր ապացույցների սպառիչ ցանկ՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող **ցանկացած գրավոր ապացույց**, որը կհաստատի փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ և 53-րդ հոդվածների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը **վերաբերելի և թույլատրելի** տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տես Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիր Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Ջարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ յուրաքանչյուր դեպքում որևէ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ կանոններով.

1) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով.

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որով սպառիչ սահմանված է ապացուցման միջոցների շրջանակը: Մասնավորապես՝ գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել միայն գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների և գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

2) օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված թույլատրելիության նշված կանոնը ենթադրում է ապացույցի դատավարական ձևի համապատասխանությունն օրենքի պահանջներին՝ աղբյուրի, ստացման եղանակի, պայմանների, ինչպես նաև ապացույցի ձևակերպման տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ վերոնշյալ կանոնի համատեքստում ապացույցի թույլատրելիությունը պետք է դիտարկվի ոչ միայն դատավարական, այլ նաև նյութաիրավական օրենսդրության նորմերը պահպանված լինելու առումով:

3) գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնի բովանդակությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ օրենքում կամ իրավական ակտում ուղղակիորեն նշված չէ այն ապացույցը, որով թույլատրվում է հաստատել այս կամ այն փաստը, ապա վերջինս կարող է հաստատվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ցանկացած ապացույցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով, **այլ ապացույցների կիրառումը բացառվում է**, կամ.
- գործի հանգամանքները կարող են հաստատվել օրենքով նախատեսված ապացույցներով (անհրաժեշտ ապացույց), սակայն **այլ ապացույցների վարույթ ներգրավելու հնարավորությունը սահմանափակված չէ**:

Ապացույցների թույլատրելիության նշված կանոնի մասնավոր դրսևորումներից է նաև այս կամ այն ապացույցի օգտագործման արգելքը, որը նշանակում է, որ ի հավաստում գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի չի կարող ներկայացվել որևէ կոնկրետ ապացույց, եթե նյութական օրենսդրությունն արգելում է դրա օգտագործումը (*տե՛ս «ՁԻ ԷՅՁ ՍԹՈՐԻՁ ԷՆԹԵՐՓՐԱՅԶՍ» ՍՊԸ-ն ընդդեմ Սևակ Արզարունու, Արարյուն Մարտիրոսյանի թիվ ԵԿԴ/2593/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի հիմքով գրավոր ապացույց համարվելու համար անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան ապացույցը պարունակի գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ, այսինքն՝ **իր բովանդակությամբ** հնարավորություն տա դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայու-

թյունը կամ բացակայությունը: Այլ կերպ ասած՝ գրավոր ապացույցները դատարանի համար էական նշանակություն ունեն իրենց բովանդակության տեսակետից, գրավոր ապացույցներում ապացուցողական նշանակություն ունի որոշակի կյուրաքական կրիչներում արտացոլված **միտքը**, որն ընկալվում է ընթերցման միջոցով:

Վճռաբեկ դատարանը, «Դրամարկդային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.10.2003 թվականի թիվ 1408-Ն որոշման 4-րդ և 14-րդ կետերի կարգավորումները համադրելով գրավոր ապացույցի հասկացության վերաբերյալ վերը շարադրված մեկնաբանությունների հետ, գտել է, որ դրամարկդային մուտքի օրդերը՝ որպես կանխիկ դրամի մուտքագրման (ընդունման) գործառնությունները հավաստող փաստաթուղթ, գրավոր ապացույցի տեսակ է և ելնելով վիճելի իրավահարաբերության բնույթից՝ միանգամայն կարող է համարվել և՛ որպես թույլատրելի, և՛ որպես վերաբերելի ապացույց: Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փոխառությունն իր բնույթով դրամական շարժի՝ փոխառուից փոխառուին դրամական միջոցներ փոխանցելու վերաբերյալ իրավահարաբերություն է, որի առկայության փաստը կարող է հիմնավորվել ցանկացած գրավոր ապացույցով: Հետևաբար դրամարկդային մուտքի օրդերը փոխառության իրավահարաբերություններից բխող վեճերով թույլատրելի գրավոր ապացույց է և ենթակա է գնահատման գործով ձեռք բերված ապացույցների համակցության մեջ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Դրամարկդային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.10.2003 թվականի թիվ 1408-Ն որոշմամբ կարգավորված են հաշվապահական հաշվառման փաստաթղթերի կազմման, վարման կարգը, այդ թվում՝ դրամարկդային մուտքի օրդերին ներկայացվող պահանջները: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գրավոր ապացույցի համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին ներկայացվող վավերապայմաններին, պահանջներին (կազմման, բովանդակության առումով) կանխորոշում է այդ ապացույցի (մասնավորապես՝ մուտքի օրդերի) **արժանահավատությունը**, հետևաբար այդ փաստաթղթերի անհամապատասխանությունը սահմանված պահանջներին հանդիսանում է նշված ապացույցի **ոչ թե թույլատրելիության կամ վերաբերելիության, այլ արժանահավատության գնահատման միջոց**: Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե անգամ ներկայացված փաստաթուղթն իր վավերապայմաններով լիարժեքորեն չի համապատասխանում նմանատիպ փաստաթղթերին ներկայացվող պահանջներին, դա դեռևս չի բացառում այդ փաստաթղթի ապացուցողական ուժը: Հետևաբար, եթե ներկայացված փաստաթղթի բովանդակությունը կազմող վավերապայմանները լիարժեք չեն, դա կարող է նվազեցնել ապացույցի արժանահավատությունը, բայց ոչ կանխորոշել դրա անթույլատրելիությունը կամ ոչ վերաբերելիությունը:

### ՀԱՅՑԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

22.07.2016 թ.

20. Հովսեփ Հովսեփյանն ընդդեմ Վլադիմիր Սահակյանի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/3082/02/13

Էջ 202–211

**Խնդիր.** Արդյո՞ք դատարանը կարող է թույլատրել հայցի հիմքի կամ առարկայի փոփոխություն դատաքննության փուլում, և արդյո՞ք հայցվորի կողմից հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու մասին պատասխանողին չտեղեկացնելով՝ դատարանը չի խախտում վերջինիս արդար դատաքննության իրավունքը, այդ թվում՝ նաև՝ կողմերի մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքները:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով հայցի հիմքին և առարկային, դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ հայցի առարկան այն նյութափրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում: Ընդ որում, հայցի առարկայից պետք է տարբերել հայցի օբյեկտը, այսինքն՝ այն առարկան, որին ուղղված է հայցի առարկայի բովանդակությունը կազմող պահանջը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը:

Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ հայցի փաստական հիմքից բացի՝ հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը, բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնելու համապատասխան պահանջ (յրեն Վիգեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Մեկ այլ գործով կայացրած որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Հենց հայցի հիմքով ու առարկայով են որոշվում հայցերի նույնությունն ու տարբերությունը միևնույն սուբյեկտային կազմի դեպքում: ՀՀ օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու հնարավորությունը, ընդ որում, հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութափրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն իրենից ներկայացնում է այն հանգամանքների փոփոխությունը, որոնց վրա հիմնվում է այդ նյութափրավական պահանջը (յրեն Ա/Չ Էդմոնդ Ասատրյանը և Կարինե Բաղդյանն ընդդեմ «Հայասրանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ օրենսդիրը, հայցվորին ընձեռելով հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու իրավունք, միաժամանակ նախատեսել է այդ իրավունքի իրացման որոշակի ընթացակարգ: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետի և 149<sup>7</sup>-րդ հոդվածի 1-ին կետի փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ այն դեպքում, երբ գործի քննությունն իրականացվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլով, օրենսդիրը հայցի հիմքի կամ առարկայի փոփոխությունը սահմանափակել է դատավարության այս փուլի շրջանակներով: Նման սահմանափակում նախատեսելը մի կողմից պայմանավորված է գործի արդյունավետ քննության անհրաժեշտությամբ, մյուս կողմից բխում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրներից: Գործը դատաքննության նախապատրաստվում է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառելի օրենսդրության հարցը պարզելու, ապացուցման առարկան որոշելու և ապացույցների կենտրոնացման խնդիրների իրա-

կանացման համար, որոնց անհրաժեշտությունն առաջանում է նաև հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու պարագայում: Հետևաբար օրենսդիրը, հայցվորին հնարավորություն ընձեռելով փոխելու հայցի հիմքը կամ առարկան, գործը լիարժեք կերպով դատաքննության նախապատրաստելու, արդյունքում նաև՝ գործի ժամանակին և ճիշտ լուծումն ապահովելու նկատառումով սահմանափակել է դատավարական նշված իրավունքի իրականացման հնարավորությունը գործը դատաքննության նախապատրաստելու փուլի շրջանակներով: Այլ կերպ ասած՝ հայցվորը հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխել միայն գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ ի տարբերություն տնօրինչական այլ գործողությունների (օրինակ՝ հայց հարուցել, բողոք բերել և այլն) հայցի հիմքի կամ առարկայի փոփոխության դեպքում օրենսդիրը հստակ չի նախատեսել դատավարական այն փաստաթղթի տեսակը և անվանումը (ի տարբերություն, օրինակ, հայցադիմումի, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի), որոնցով կարող է իրականացվել նման փոփոխությունը: Վճռաբեկ դատարանը միասնական դատական պրակտիկա ապահովելու նպատակով գտել է, որ նման փոփոխության դեպքում էական է ոչ թե դատավարական փաստաթղթի անվանումը, այլ դրա բովանդակությունը՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպես է այն վերնագրված (օրինակ, «հայցադիմումի հստակեցում», «հայցադիմումի լրացում», «հայցապահանջի փոփոխություն» և այլն): Հետևաբար բոլոր նման դեպքերում դատարանները պետք է հանգամանալից ուսումնասիրեն համապատասխան դատավարական փաստաթուղթը՝ պարզելու համար, թե արդյոք այն բովանդակում է հայցի առարկայի կամ հիմքի փոփոխություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդիրը, հայցվորին իրավունք վերապահելով օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոխել հայցի հիմքը կամ առարկան, միևնույն ժամանակ իրավունք է վերապահել պատասխանողին՝ ստանալու փոփոխված հայցադիմումը և այն ստանալուց հետո փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու ընդհանուր կանոններով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված իրավակարգավորումն ինքնանպատակ չէ և կոչված է ապահովելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիական դատավարությունը կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքը՝ երաշխավորելով գործին մասնակցող անձանց իրավունքների լիարժեք իրականացումը:

Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրահանգումը բխում է նաև Կոնվենցիայով երաշխավորված՝ յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից: Մասնավորապես՝ *Ասկերլն ընդդեմ Շվեյցարիայի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (*տես Ասկերլն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը, կետ 38*):

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են



իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով (*տե՛ս Լիլիթ Գևորգյանի ընդդեմ Սվեդլյանա Միրայելյանի թիվ ԵԷԴ/1730/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռարենկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ պատասխանողը չի տեղեկացվում հայցի հիմքի կամ առարկայի փոփոխության վերաբերյալ, որպես հետևանք գրկվում է փոփոխված հայցադիմումի վերաբերյալ պատասխան ներկայացնելու՝ օրենսդրորեն իրեն վերապահված դատավարական իրավունքն իրացնելու հնարավորությունից՝ հայտնվելով հայցվորի համեմատ էականորեն նվազ բարենպաստ վիճակում, ինչն իրավահավասարության և մրցակցության սկզբունքների խախտում է:

### ԳՈՐԾԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

22.04.2016 թ.

21. Արեգնազ Կարապետյան, քաղ. գործ թիվ ԳԴ4/0504/02/14

Էջ  
212–221

*Խնդիր.* Արդյո՞ք դատարանն ապահովել է հատուկ վարույթի կարգով քննվող քաղաքացիական գործի արդյունավետ քննությունը՝ դրա շրջանակներում նախնական դատական նիստ չիրավիրելու և դիմողի հետ ապացուցում պահանջող փաստերի շրջանակը չքննարկելու պայմաններում:

\* Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք դատարանը պարտավոր է որպես ապացույց հերքագրել օրսար լեզվով կազմված գրավոր փաստաթղթերը:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>5</sup>–րդ հոդվածը, 149<sup>6</sup>–րդ հոդվածի 1–ին կետը, 2–րդ կետի 5–րդ և 10–րդ ենթակետերը, 164–րդ հոդվածը, արձանագրել է, որ գործը դատաքննության նախապատրաստելը՝ որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ, արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող դատավարական գործողությունների և դրանց հիման վրա առաջացող իրավահարաբերությունների ամբողջություն (համակարգ) է:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանձնահատկություններին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: Այսինքն՝ դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար, և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողությունները պետք է ուղղված լինեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանդումների կիրառմանը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48–րդ, 49–րդ և 149<sup>8</sup>–րդ հոդվածների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ ապացույցներ ներկայացնում են գործին մասնակցող անձինք, սակայն դատարանը գործի նախապատրաստական փուլում ապացուցման առարկան և բեռը բաշխելուց հետո կող-

մերին հնարավորություն է ընձեռում ներկայացնելու այն ապացույցները, որոնցով վերջիններս կարող են հիմնավորել իրենց պահանջները և առարկությունները: Հետևաբար գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական ինստիտուտի ամրագրումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ, և դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար (յրեն Երևանի քաղաքապետարանի «Երևանի Էլեկտրասարանապորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի թիվ ԵԷ-Ն/1637/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նպատակը քաղաքացիական գործի արդյունավետ քննության ապահովումն է, որը ենթադրում է՝

- որջամիտ ծամկետում գործի քննության ապահովում,
- օրինական և հիմնավորված դատական ակտի կայացման ապահովում,
- դատական ինսպրոկության ապահովում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշված նպատակի իրականացումը պայմանավորված է դատավարության այս փուլի խնդիրների ճիշտ իրականացմամբ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործող քաղաքացիադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հետևյալ հիմնական խնդիրները՝ *վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելը, դատավարության մասնակիցների կազմը ճշտելը և նրանց մասնակցությունն ապահովելը, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելը, ապացույցների բավարար համակցության ձևավորումը (ապացույցների կենտրոնացումը) ապահովելը:*

Անդրադառնալով հատուկ վարույթի կարգով քննվող գործերով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի անցկացման հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հատուկ վարույթի կարգով քննվող գործերի դեպքում գործը դատաքննության նախապատրաստելու փուլին վերաբերող կանոնները գործում են սահմանափակ ծավալով՝ պայմանավորված վարույթի այս տեսակի առանձնահատկություններով: Այսպես, եթե քաղաքացիական դատավարության քննարկվող փուլը հավասարապես կիրառելի է և հայցային, և հատուկ վարույթի կարգով քննվող գործերի համար, ապա նույնը չի կարելի պնդել դատավարության այս փուլի խնդիրների և գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների կապակցությամբ: Հատուկ վարույթի կարգով քննվող գործերի շրջանակներում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի որոշ գործողություններ օբյեկտիվորեն չեն կարող իրականացվել (օրինակ՝ հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման կիրառումը) կամ էլ իրականացվում են վարույթի այս տեսակի առանձնահատկությունների հաշվառմամբ (օրինակ՝ հայցի հիմքի և առարկայի պարզումը դրսևորում է դիմումի հիմքը և առարկան ճշգրտելով):

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանցքային տարրը նախնական դատական նիստն է. այս գործը դատաքննության նախապատրաստելու այնպիսի իրավական կառուցակարգ է, որն ապահովում է դատավարության քննարկվող փուլի հիմնական խնդիրների լուծումը, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասի իրականացումը: Ընդ որում, նախնական դատական նիստի հրավիրմանը և դրա ընթացքում որոշակի դատավարական գործողությունների կատարմանը վերաբերող իրավակարգավորումները հատուկ

վարույթի կարգով քննվող գործերի նկատմամբ կիրառելի են այնքանով, որքանով դրանք օբյեկտիվորեն հնարավոր է իրացնել վարույթի այդ տեսակով քննվող գործերի շրջանակներում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը նախնական դատական նիստում իրականացվող գործողությունների շարքում նախատեսել է նաև **ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու** դատավարական գործողությունը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նախնական դատական նիստի ընթացքում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու նախապատրաստական գործողությունը կարող է իրականացվել ինչպես հայցային, այնպես էլ հատուկ վարույթի կարգով քննվող քաղաքացիական գործերի դեպքում: Դատարանի կողմից կատարվող նշված գործողությունն ուղղված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելու և մինչև դատաքննությունը բոլոր հնարավոր ապացույցները կենտրոնացնելու՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրների լուծմանը: Հետևաբար նախնական դատական նիստում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ (հատուկ վարույթում՝ դիմողի հետ) քննարկելու դատավարական գործողության շրջանակներում դատարանը կարող է ուսումնասիրել դատավարության այս փուլում ներկայացված ապացույցները և անհրաժեշտության դեպքում պարզել դրանց վերաբերելիության ու թույլատրելիության հարցը:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախատեսում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում իրականացվող նախապատրաստական գործողությունների գերակշիռ մասն իրականացվում է բացառապես նախնական դատական նիստի ընթացքում՝ այդպիսի նիստ հրավիրելու հնարավորությունը թողնելով դատարանի հայեցողությանը: Փաստորեն, դատարանը նախնական դատական նիստ հրավիրելու հարցի լուծման կապակցությամբ օժտված է հայեցողական լիազորությամբ, քանի որ նույն օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ դատական քննությունն արդյունավետ իրականացնելու համար դատարանը կարող է հրավիրել նախնական դատական նիստ:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանների կողմից հայեցողական լիազորությունների իրացման խնդրին՝ նշելով, որ պետաիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներին վերապահված «հայեցողությունը» վերջիններիս կողմից թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման իրավական նորմերով կանխորոշված հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրություն և իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կանայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը:

Ըստ Վճռաբեկ դատարանի բնորոշման՝ «դատական հայեցողությունը» կոնկրետ իրավական վեճի լուծման գործընթացում օրենսդրությամբ կանխորոշված շրջանակներում դատարանի կողմից որոշակի դատավարական գործողության կատարման կամ այդպիսի գործողության կատարումից ձեռնպահ մնալու

հնարավորությունն է: «Դատական հայեցողությունը», սակայն, չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ ազատություն: Իրավական պետության հիմքում ընկած իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որպեսզի երաշխավորվի կամայականության արգելքը, և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները: Ըստ այդմ, «դատական հայեցողության» սահմանները նախնառաջ պայմանավորված են գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներն ապահովելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև վիճելի իրավահարաբերության բնույթով և տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենսդրության առանձնահատկություններով (*տե՛ս օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհար ձեռնարկայրեր Գուրգեն Այվազյանի և մյուսների թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարքն էլ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նախնական դատական նիստ հրավիրելը թեև դատարանի հայեցողական լիազորությունն է, այնուամենայնիվ, դատարանն իր այդ հայեցողական լիազորության իրականացման հարցը լուծելիս պարտավոր է առաջնորդվել մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացման և պաշտպանության անհրաժեշտությամբ: Բացի այդ, յուրաքանչյուր գործով նախնական դատական նիստ հրավիրելու հարցը լուծելիս դատարանը պարտավոր է հիմք ընդունել գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական փուլի՝ գործի արդյունավետ քննության ապահովման նպատակի իրականացման և դատավարության այս փուլի խնդիրների լուծման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովման հնարավորությունը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքները և առանձնահատկությունները:

**22.04.2016 թ.**

**22. Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ «ԱՐՄԵՆԿՈ» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0930/02/13**

**Էջ  
222–231**

*Խնդիր.* Կարող է արդյո՞ք վերաքննիչ դատարանը հայցի հիմքում դրված փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը չկատարելու անբարենպաստ հետևանքների կիրառման հիմքով հայցը մերժելու վերաբերյալ որոշում կայացնել այն պայմաններում, երբ ստորադաս դատարանը չի հրավիրել նախնական դատական նիստ, կողմերի հետ չի քննարկել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և նրանց միջև չի բաշխել ապացուցման պարտականությունը:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը, իր նախկին որոշումներում անդրադառնալով քննարկվող հարցին, գտել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*տե՛ս Էդգար Մարկոսյանը և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունում ապացուցման

պարտականությունը գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցման ուղղությամբ որոշակի դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությունն է, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով: Վճարել դատարանի գնահատմամբ նշված բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված):

Վճարել դատարանն արձանագրել է, որ ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և, ի վերջո, գործի ճիշտ լուծման համար չափազանց կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Հետևաբար օրենքով սահմանված որոշակի կանոնների պահպանմամբ գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելը, որը տեղի է ունենում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի շրջանակներում հրավիրված նախնական դատական նիստում, դատարանի կարևորագույն խնդիրներից մեկն է:

Վճարել դատարանն արձանագրել է, որ գործը դատաքննության նախապատրաստելը՝ որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն և պարտադիր փուլ, արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող դատավարական գործողությունների և դրանց հիման վրա առաջացող իրավահարաբերությունների ամբողջություն (համակարգ) է:

Վճարել դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանձնահատկություններին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: Այսինքն՝ դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար, և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողությունները պետք է ուղղված լինեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանորմերի կիրառմանը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 49-րդ և 149<sup>բ</sup>-րդ հոդվածների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ ապացույցներ ներկայացնում են գործին մասնակցող անձինք, սակայն դատարանը գործի նախապատրաստական փուլում ապացուցման առարկան և բեռը բաշխելուց հետո կողմերին հնարավորություն է ընձեռում ներկայացնելու այն ապացույցները, որոնցով վերջիններս կարող են հիմնավորել իրենց պահանջները և առարկությունները (*դեռ Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի թիվ ԵԷԿ/1637/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վկայակոչված իրավական դիրքորոշումը՝ Վճարել դատարանը փաստել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի

նպատակը քաղաքացիական գործի արդյունավետ քննության ապահովումն է: Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշված նպատակի իրականացումը պայմանավորված է դատավարության այս փուլի խնդիրների ճիշտ իրականացմամբ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործող քաղաքացիադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հետևյալ հիմնական խնդիրները՝

- վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելը,
- դատավարության մասնակիցների կազմը ճշտելը և նրանց մասնակցությունն ապահովելը,
- գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելը,
- ապացույցների բավարար համակցության ձևավորումը (ապացույցների կենտրոնացումը) ապահովելը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանցքային տարրը նախնական դատական նիստն է, այն գործը դատաքննության նախապատրաստելու այնպիսի իրավական կառուցակարգ է, որն ապահովում է դատավարության քննարկվող փուլի հիմնական խնդիրների լուծումը, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասի իրականացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը նախնական դատական նիստում իրականացվող գործողությունների շարքում նախատեսել է նաև ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական գործողությունները: Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանի կողմից կատարվող նշված գործողություններն ուղղված են գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելու և մինչև դատաքննությունը բոլոր հնարավոր ապացույցները կենտրոնացնելու՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրների լուծմանը: Հետևաբար նախնական դատական նիստում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու և ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական գործողությունների շրջանակներում դատարանը կարող է ուսումնասիրել դատավարության այս փուլում ներկայացված ապացույցները և անհրաժեշտության դեպքում պարզել դրանց վերաբերելիության ու թույլատրելիության հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը նախատեսում է, որ դատարանը նախնական դատական նիստ հրավիրելու հարցի լուծման կապակցությամբ օժտված է հայեցողական լիազորությամբ, քանի որ նույն օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ դատական քննությունն արդյունավետ իրականացնելու համար դատարանը կարող է հրավիրել նախնական դատական նիստ:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանների կողմից հայեցողական լիազորությունների իրացման խնդրին՝ նշելով, որ պետախշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներին վերապահված «հայեցողությունը» վերջիններիս կողմից թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման իրավական նորմերով կանխորոշված հնարավորությունն է: Հայեցողական լիազորություններով օժտված իշխանական մարմինները պարտավոր են թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգել-

քի սկզբունքներով: Ըստ Վճռաբեկ դատարանի բնորոշման՝ «դատական հայեցողությունը» կոնկրետ իրավական վեճի լուծման գործընթացում օրենսդրությամբ կանխորոշված շրջանակներում դատարանի կողմից որոշակի դատավարական գործողության կատարման կամ այդպիսի գործողության կատարումից ձեռնպահ մնալու հնարավորությունն է: «Դատական հայեցողությունը», սակայն, չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ ազատություն. այս հասկացության սահմանները նախևառաջ պայմանավորված են գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներն ապահովելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև վիճելի իրավահարաբերության բնույթով և տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենսդրության առանձնահատկություններով (*յրեն օրինակ, ՀՀ Ֆինանսների նախարարության Շենգակիթի հարկային փոփոխությունն ընդդեմ անհար ձեռնարկարեր Գուրգեն Այվազյանի և մյուսների թիվ ԵՇԿ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>6</sup>-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նախնական դատական նիստ հրավիրելը թեև դատարանի հայեցողական լիազորությունն է, այնուամենայնիվ, դատարանն իր այդ հայեցողական լիազորության իրականացման հարցը լուծելիս պարտավոր է առաջնորդվել մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացման և պաշտպանության անհրաժեշտությամբ: Բացի այդ, յուրաքանչյուր գործով նախնական դատական նիստ հրավիրելու հարցը լուծելիս դատարանը պարտավոր է հիմք ընդունել գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական փուլի՝ գործի արդյունավետ քննության ապահովման նպատակի իրականացման և դատավարության այս փուլի խնդիրների լուծման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովման հնարավորությունը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքները և առանձնահատկությունները:

**ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**02.12.2016 թ.**

**23. Հակոբ Բաշմակյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0368/02/13**

**Էջ  
232–240**

*Խնդիր.* Արդյո՞ք գործին մասնակից չդարձված անձի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու եռամսյա ժամկետը պահպանած լինելու հարցը կարող է գնահատման արժանանալ նաև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո բողոքի քննության փուլում:

*\* Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք վերաքննիչ դատարանը պարտավոր է վերաքննիչ բողոքի պատասխանում ներկայացված դիրքորոշմանը և հիմնավորումներին անդրադառնալ նաև որոշման պարճատարանական մասում:*

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես Վճռաբեկ դատարանի, այնպես էլ Եվրոպական դատարանի որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը

նը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*տե՛ս Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*տե՛ս Սուսաննա Արարատի Միրզոյանի ընդդեմ Սուսաննա Միրզոյանի Միրզոյանի թիվ ԱՐԱԳ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով և գնահատման առարկա դարձնելով այն դեպքերը, երբ դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է իրավահավասարության ու մրցակցության սկզբունքների խախտում և բեկանել է դատական ակտը (*տե՛ս օրինակ, Գյումրու քաղաքապետարանն ընդդեմ Ֆելիքս Թորոսյանի թիվ 3-2343(ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.11.2006 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ գործին մասնակից չդարձած անձանց դատավարական գործողություններն ուղղակիորեն պայմանավորված են նրանց դատավարական կարգավիճակով և ուղղված են վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորման կապակցությամբ թույլ տրված այնպիսի սխալի վերացմանը, որն իրավահարաբերության ոչ բոլոր մասնակիցներին գործին մասնակից դարձնելու արդյունք է: Հետևաբար գործին մասնակից չդարձված անձը, որի իրավունքների և օրինական շահերի վերաբերյալ կայացվել է դատական ակտ, պետք է իր խախտված իրավունքներն արդյունավետ միջոցներով վերականգնելու հնարավորություն ունենա (*տե՛ս «Հայր և որդի Ադամյաններ» ՄՊԸ-ն ընդդեմ «Հինգերորդ Ասրդ» ՄՊԸ-ի թիվ ԵԱԳԳ/0199/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելելու, որ գործին մասնակից չդարձված անձանց համար երաշխավորված դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքը դրսևորվում է, մասնավորապես՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքով և դրա իրացման ընթացակարգով, որը կոչված է վերացնելու ստորադաս դատարանում թույլ տրված և բողոք բերող անձի իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական սխալը: Նշված իրավունքի իրացման համար օրենսդրի կողմից սահմանվել են պայմաններ, որոնց պահպանման դեպքում միայն կարող է ապահովվել այն: Մասնավորապես՝ որպեսզի գործին մասնակից չդարձված անձը հնարավորություն ունենա իրացնելու դատական պաշտ-



պանության իր իրավունքը, պետք է ներկայացնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջներին բավարարող բողոք այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել կամ կարող էր իմանալ նման դատական ակտի կայացման մասին, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո չի անցել քսան տարի: Նման ժամկետի սահմանումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված՝ դատավարական գործողությունները նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում կատարելու անհրաժեշտությունից՝ հստակեցնելով անձի կողմից իր իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելու ընթացակարգը:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածով սահմանվել է ոչ միայն վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման ժամկետ, այլ նաև վերաքննության կարգով դատական ակտի վերանայման քսանամյա վաղեմություն, որն ուղղակիորեն գործին մասնակից չդարձված անձին գրկում է վերաքննիչ բողոքարկման հնարավորությունից: Ընդ որում, ի տարբերություն հայցային վաղեմության ժամկետի, որը դատարանը կիրառում է միայն կողմի միջնորդությամբ, նշված եռամսյա ժամկետն ուղղակիորեն վերաքննությունը բացառող հանգամանք է և դատարանին պարտավորեցնում է սեփական նախաձեռնությամբ կիրառել այս նորմը՝ վերադարձնելով վերաքննիչ բողոքը: Վճռաբեկ դատարանը նաև հարկ է համարել ընդգծել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննությունն ընդհանրապես բացառող հանգամանք է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո քսան տարի անցնելը, որպիսի ժամկետը ենթակա չէ վերականգնման, փոխարենը՝ գործին մասնակից չդարձված անձի կողմից բողոք բերելու եռամսյա ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության դեպքում կարող է հարգելի ճանաչվել և վերականգնվել: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ «վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնում» եզրույթը նշանակում է ոչ թե վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետի հոսքի վերսկսում, այլ դատական ակտի բողոքարկման եղանակով անձի խախտված իրավունքների պաշտպանության տրամադրում: Այլ կերպ ասած, որպես կանոն, գործին մասնակից չդարձված անձը վերաքննիչ բողոք կարող է ներկայացնել դատական ակտի մասին տեղեկանալուց հետո եռամսյա ժամկետում, եթե դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո չի անցել քսան տարի: Այն դեպքերում, երբ քսան տարվա ժամկետը պահպանված է, սակայն եռամսյա ժամկետը խախտվել է օբյեկտիվ հիմքերով, օրենսդիրը հնարավորություն է տվել ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ դրանով իսկ ապահովելով դատական ակտի բողոքարկման եղանակով դատական պաշտպանության իրավունքի իրացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանը յուրաքանչյուր դեպքում գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս, ի թիվս այնի, պետք է պարզի, թե արդյոք բողոքը ներկայացվել է սահմանված եռամսյա ժամկետի ընթացքում: Ընդ որում, պայմանավորված վարույթ ընդունելու փուլի առանձնահատկություններով՝ վերաքննիչ դատարանն այդ հանգամանքը պարզում է՝ առերևույթ գնահատելով ժամկետը պահպանված լինելու հանգամանքը: Այլ կերպ ասած՝ եթե առերևույթ պահպանված է ժամկետը, վերաքննիչ դատարանը բողոքը պետք է վարույթ ընդունի, քանի որ դա է բխում անձի դատական պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքի էությունից: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ արդեն իսկ վերաքննիչ բողոքի քննության փուլում վերաքննիչ բողոքարկման ժամկետները պահպանված լինելու հարցի վերաբերյալ կասկածներ ծագելու դեպքում վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքը

վարույթ ընդունելու հանգամանքով և պարտավոր է անդրադառնալ ու գնահատման արժանացնել ժամկետը պահպանած լինելու փաստը: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ վերաքննիչ դատարանը բողոքի քննության փուլում նույնպես կարող է գնահատման արժանացնել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու պայմանների պահպանված լինելը և եթե պարզի, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելիս պահպանված չեն եղել վերաքննիչ բողոք բերելու ժամկետները, ապա ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով սահմանված լիազորություններով՝ վերաքննիչ բողոքը պետք է մերժի՝ հաշվի առնելով, որ ի սկզբանե առկա են եղել վերաքննությունը բացառող հանգամանքներ:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո գտել է, որ նման կարգավորումը կիրառելի է նաև բողոք բերելու համար սահմանված բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելիս: Այսինքն՝ եթե վերաքննիչ դատարանը բողոքը վարույթ ընդունելիս գնահատել է միջնորդությունը և այն հարգելի համարելով՝ վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ, սակայն բողոքի քննության փուլում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են միջնորդության ոչ հիմնավոր լինելու վերաբերյալ, ապա վերաքննիչ դատարանն այս դեպքում ևս պետք է մերժի վերաքննիչ բողոքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործին մասնակից չդարձված անձի կողմից վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված եռամսյա ժամկետը պահպանված լինելը վերաքննիչ դատարանը բողոքը վարույթ ընդունելու փուլում պարզում է՝ առերևույթ գնահատելով ներկայացված ապացույցները, ինչը չի գրկում վերաքննիչ բողոքի քննության փուլում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը բացառող հանգամանքներն ի հայտ գալու դեպքում մերժել վերաքննիչ բողոքը՝ արձանագրելով վերաքննիչ բողոքարկումը բացառող հանգամանքի առկայությունը:

### ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ

22.07.2016 թ.

24. «Յունիբանկ» ՓԲԸ-ն (ներկայումս «Յունիբանկ» ԲԲԸ) ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԼԴ/0039/04/14

Էջ  
241–253

*Խնդիր.* 1) Պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտը կարող է արդյո՞ք հիմք հանդիսանալ անձի մոտ անվիճելի վճարային պարտավորության առկայությունը հաստատելու համար, եթե այդ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացել է, և առկա չէ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին համապատասխան դատարանի որոշումը,

2) արդյո՞ք պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը ենթակա է վերականգնման միայն ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու դեպքում, եթե չի լրացել այդ դատական ակտով պարբերական վճարումների համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո մեկ տարվա ժամկետը:

\* Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք կողմերի միջև կնքված գրավոր համաձայնագիրը կարող է շարունակել համարվել պարտավորության կարարման ինքնուրույն հիմք այն պարագայում, երբ միևնույն պարտավորության չափի և կատարման պայմանների վերաբերյալ

կողմերի միջև դատական վեճի շրջանակներում կնքվել է հաշտության համաձայնություն, որը հաստատվել է դատարանի կողմից:

**Վճուարեկ դատարանի դիրքորոշումը.** Վճուարեկ դատարանն անդրադարձել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի վերոգրյալ իրավաւորմերի վերլուծությանը և արձանագրել է, որ հարկադրված սնանկության դեպքում վճարային պարտավորության անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առնվազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին բավարար անձին սնանկ ճանաչելու համար (տե՛ս «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Գևորգ Հարոյանի թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով ՀՀ վճուարեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Վճուարեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ վճարային պարտավորության անվիճելիությունն առկա է այն դեպքում, երբ պարտապանը չի առարկում սնանկ ճանաչելու պահանջի դեմ: Այդուհանդերձ, օրենքի վերոնշյալ դրույթը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ պարտապանը վիճարկում է պարտավորության անվիճելի լինելու փաստը, այլ կերպ ասած՝ առարկում է իրեն սնանկ ճանաչելու պահանջի դեմ, և այդ առարկությունները վերաբերում է վճարային պարտավորությանը (այլ ոչ թե կետանցին կամ կետանցի շարունակվելուն): Նման պայմաններում վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «անվիճելի վճարային պարտավորություն» եզրույթի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է այն դիտարկել նույն կետի «ա» և «բ» ենթակետերի համատեքստում: Մասնավորապես՝ վկայակոչված ենթակետերով որպես վճարային պարտավորության անվիճելիության երկու տարբեր, ինքնուրույն հիմքեր դիտարկվում են՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը (դատավճիռը) և գրավոր գործարքը՝ հաշվանցի հնարավորության բացակայության պայմանով:

Վճուարեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ իրավակիրառ պրակտիկան ընթացել է այն ուղղությամբ, որ միանվագ վճարային պարտավորություն նախատեսող օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տրված կատարողական թերթն օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետում կատարման չներկայացնելով՝ պարտատերը զրկվում է այդ վճռով սահմանված գումարը պահանջելու և հետագայում նաև այդ վճռով նախատեսված անվիճելի վճարային պարտավորության առկայության հիմքով պարտապանին սնանկ ճանաչելու իր իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն ազատվում է նույն վճռով սահմանված պարտավորությունից (տե՛ս «Արդշինբանկ» ԲԲԸ-ն ընդդեմ «Արոր-Բագրայր» արտադրական կոոպերատիվի թիվ ՀԲԴ-4/0024/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճուարեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշումը, «Արդշինբանկ» ԲԲԸ լուծարվող բանկն ընդդեմ Սյարսրյակ Երիցյանի թիվ ԵԱԲԴ/0018/04/10 քաղաքացիական գործով ՀՀ վճուարեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը):

Այսպիսով, Վճուարեկ դատարանն արձանագրել է, որ վճարային պարտավորության անվիճելիության հաստատման համար կարող է հիմք հանդիսանալ միայն վճարային պարտավորության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած և կատարելիության հատկանիշը պահպանած վճիռը: Այլ կերպ ասած՝ վճարային պարտավորության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը (վճիռը) «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի իմաստով կարող է հիմք հանդիսանալ վճարային պարտավորության անվիճելիությունը հաստատված համարելու և դրա հիման վրա անձին սնանկ ճանաչելու համար միայն այն դեպքում, եթե չի լրացել այդ դատական ակտի (վճռի) հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը, կամ կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացել է, սակայն առկա է

բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին համապատասխան դատարանի որոշումը: Հակառակ պարագայում, այսինքն՝ այն դեպքում, երբ լրացել է վճարային պարտավորության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը, և առկա չէ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին համապատասխան դատարանի որոշումը, ապա այդ վճիռը չի կարող հիմք հանդիսանալ վճարային պարտավորության անվիճելիությունը հաստատված համարելու և դրա հիման վրա անձին սնանկ ճանաչելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թեև ՀՀ Սահմանադրությունը և Կոնվենցիան ուղղակիորեն չեն ամրագրում դատական ակտերի կատարման իրավունքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ, սակայն դատական ակտերի կատարումը դիտարկվում է որպես արդար դատաքննության բաղկացուցիչ տարր. այն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունավետ կենսագործման համար, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը չի կարող երաշխավորված իրացվել, եթե վերջինիս խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական դատական ակտը մնում է անկատար:

ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՍԴԹ-1115 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նշված մոտեցումը համահունչ է նաև Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի հետ, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մասն անկատար: Ըստ Եվրոպական դատարանի՝ դժվար կլինի պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցնեք իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով (*լրևն HORNSBY v. GREECE գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետ, MOSTACCIUOLO v. ITALY (No. 2) գործով Եվրոպական դատարանի 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետ, RAYLYAN v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ կետ, Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կետ*):

Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարման վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերվող

հայեցակարգային մոտեցման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է. այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի և չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն սուբյեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ չնայած Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ուղղակիորեն չի ամրագրում դատական ակտի կատարման իրավունքը, այնուամենայնիվ, այն համարվում է արդար դատաքննության իրավունքի անօտարելի տարրը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատական ակտերի հարկադիր կատարման իրավահարաբերությունների շրջանակներում պետությունը պարտավոր է ապահովել ոչ միայն պահանջատիրոջ դատական պաշտպանության և արդար դատաքննության, այլ նաև սեփականության իրավունքը: Այսպես, ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*տե՛ս BURDOV v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետը, RAYLYAN v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 15.02.2007 թվականի վճիռը, 36-րդ կետը*):

Փաստորեն, Եվրոպական դատարանը մի շարք վճիռներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պահանջի իրավունքը, եթե այն բավականաչափ հիմնավորված է կատարելի լինելու համար, առավել ևս, եթե բխում է դատական ակտից, համարվում է սեփականություն Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով (*տե՛ս նաև, STRAN GREEK REFINERIES AND STRATIS ANDREADIS v. GREECE գործով Եվրոպական դատարանի 09.12.1994 թվականի վճիռը, 59-62-րդ կետեր, VASILOPOULOU v. GREECE գործով Եվրոպական դատարանի 21.03.2002 թվականի վճիռը, 22-25-րդ կետեր, TIMOFEYEV v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 23.10.2003 թվականի վճիռը, 45-րդ կետը, BURDOV v. RUSSIA (No. 2) գործով Եվրոպական դատարանի 15.01.2009 թվականի վճիռը, 87-րդ կետը*): Մասնավորապես՝ Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուի օգտին կայացրած վճռի կատարմանը հասնելու անհնարինությունը բերում է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին նախադասությամբ սահմանված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի միջամտության (*տե՛ս Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 01.12.2009 թվականի վճիռը, 68-րդ կետը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Եվրոպական դատարանի դիրքորոշումը միանշանակ է այն հարցում, որ դատական ակտով սահմանված պահանջի իրավունքը պետության կողմից ենթակա է պատշաճ պաշտպանության ոչ միայն դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների, այլ նաև սեփականության իրավունքի ապահովման շրջանակներում: Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը պարտավոր է պատշաճ կերպով կարգավորել դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտի հասարակական հարաբերությունները և ստեղծել կայուն իրավական հիմք դատական ակտերի պարտադիրության և կատարելիության սահմանադրական և կոնվենցիոն սկզբունքների իրացումն ապահովելու համար:

Անդրադառնալով դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի էությանը՝ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը

պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան (յրեն ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժինն ընդդեմ Անուշ Իսպիրյանի թիվ ՎԴ6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքը սահմանում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը:

Վճռաբեկ դատարանի մեկ այլ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված (յրեն ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի թիվ ՎԴ4/0104/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):

Օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետները՝ ամրագրելով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կարող է կատարման ներկայացվել տվյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի հիմքով հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, եթե բացակայում է կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատական ակտից բխող պահանջի իրավունքը սահմանափակված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ կատարողական թերթը մեկ տարվա ընթացքում կատարման ներկայացնելու ժամկետով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրատ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ հարկադիր կատարման ենթակա վերջնական դատական ակտի կատարումը պետք է տեղի ունենա դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի հետո, կամ պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարումն առանց կատարողական վարույթի հարուցման ընդհատվում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված մեկ տարվա ժամկետից հետո:

Գործող օրենսդրության պայմաններում նման դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը ևս պետք է կատարման ներկայացվի այդ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման իրավակարգավորումը չի բխում վերջնական դատական ակտի կատարման պահանջատիրոջ իրավունքի երաշխավորված իրացման համար անհրաժեշտ պայմանների սպահովման պետության պարտականության էությունից, միաժամանակ բացառելով պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարման որևէ հնարավորությունն առանց վարչական հարկադրանքի:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետների հարցում առկա իրավական խնդիրը լուծելու օրենսդրությամբ նախատեսված միակ միջոցը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու կառուցակարգն է, որը սահմանված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով և կատարվում է հետևյալ ընթացակարգով.

1) կատարողական թերթով պահանջատեր հանդիսացող անձը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում է ներկայացնում կատարողական թերթ տված դատարան,

2) կատարողական թերթ տված դատարանը քննում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը՝ այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում,

3) այդ դիմումի քննության արդյունքներով կատարողական թերթ տված դատարանը կայացնում է որոշում՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ դիմումը մերժելու մասին:

Վերոգրյալից հետևում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը համապատասխան դատարանի կողմից վերականգնվում է միայն այն դեպքում, երբ այդ ժամկետը բաց թողնելու պատճառը նույն դատարանի կողմից ճանաչվում է հարգելի: Այլ կերպ ասած, օրենսդիրը կատարողական թերթով պահանջատեր հանդիսացող անձին կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորություն է ընձեռել ոչ թե բոլոր, այլ միայն այն դեպքերում, երբ պահանջատերը նշված ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը, ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումի առկայության պայմաններում կատարողական թերթ տված դատարանը պարտավոր է հաշվի առնել կատարողական թերթը կատարման չներկայացնելու հիմքում ընկած բոլոր փաստական հանգամանքները և վերականգնել բաց թողած ժամկետը, եթե դա պայմանավորված է եղել դատական ակտով որոշված պարտավորությունը դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից հետո մեկ տարին գերազանցող ժամկետով, կամ պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարման ընդհատմամբ, երբ պարտատիրոջ կարծիքով սպառվել է դատական ակտի կամավոր կատարման հնարավորությունը:

Նշված մոտեցման ցուցաբերման դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել պարտատիրոջ և պարտապանի շահերի հավասարակշռված պաշտպանությունը:

# ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

22.04.2016 թ.

25. Վարդան Սարգսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչ. գործ թիվ ՎԴ/5366/05/14

Էջ  
254–262

**Խնդիր.** Արդյո՞ք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտն ունի հետադարձ ուժ այն պայմաններում, երբ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքը չի նախատեսում այդ ակտին հետադարձ ուժ հաղորդելու վերաբերյալ որևէ դրույթ, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված է, որ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում ունեն հետադարձ ուժ:

**Վճռարեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ սահմանադրական դատարանը, 29.11.2011 թվականի թիվ ՄԴՈ-1000 որոշմամբ անդրադառնալով իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիություն, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից»:

ՀՀ սահմանադրական դատարանը վկայակոչված որոշմամբ ընդգծել է նաև, որ ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի 4–րդ մասում ամրագրված նորմը սահմանադրական մակարդակով կարգավորում է ինչպես անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքների, այնպես էլ այլ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողությունը, և, ըստ այդմ՝ այդ դրույթը հասցեագրված է ինչպես օրենսդրին, այնպես էլ՝ այլ իրավաստեղծ մարմիններին: Այդ նորմի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը: Միաժամանակ այս նորմը սահմանում է այդ հայեցողությունն իրացնելու ընթացակարգը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը, իրացնելով իրեն Սահմանադրությամբ տրված հայեցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու նպատակահարմարության դեպքում տվյալ ակտում ամրագրում է այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ: Նշված հայեցողությունն իրացնելու այս ընթացակարգն ինքնանպատակ չէ և տրամաբանորեն բխում է Սահմանադրությամբ՝ իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնակարգման ընդհանուր տրամաբանությունից:



Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումներ կատարելու համար անձի պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով 04.07.2013 թվականի որոշման շրջանակներում: Վկայակոչված որոշմամբ Վճռաբեկ դատարանը մասնավորապես արձանագրել է հետևյալը.

- «(...) եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը մեղմացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ,
- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքին համապատասխան, եթե այդ օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ (...)» *(տե՛ս «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի տնօրեն Ալեքսանդր Արրահամյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնաթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ իրավական ակտը պատասխանատվությունը մեղմացնող է, եթե սանկցիայում նախատեսված պատասխանատվության տեսակը փոխարինվում է ավելի մեղմ պատասխանատվության տեսակով: Ընդ որում, տուգանքների դեպքում պատասխանատվությունը մեղմացնող է դիտվում այն դրույթը, որով նախկինում գործող տուգանքը փոխարինվել է նվազ չափի տուգանքով *(տե՛ս ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունն ընդդեմ Վայերի Ցակնայանի թիվ ՎԴ/3135/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վկայակոչված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ անձի իրավական վիճակը բարելավող, սովյալ դեպքում՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերն ունեն հետադարձ ուժ, եթե օրենսդիրը նախատեսել է այն: Ընդ որում, օրենքին հետադարձ ուժ հաղորդելու օրենսդրի կամքը պետք է հստակ ամրագրում ստացած լինի:

Անձի իրավական վիճակը բարելավող օրենքին հետադարձ ուժ տալու օրենսդրի հայեցողական լիազորության իրացումը պետք է հետևի այնպիսի սկզբունքային դրույթների, ինչպիսիք են իրավական որոշակիության սկզբունքը, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների պահպանման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման և մարդու իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում ունեն հետադարձ ուժ, այսինքն՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը

մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում տարածվում են նաև այդ ակտերի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա: Այլ կերպ ասած՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից ուղղակիորեն հետևում է, որ նշված օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն՝ անկախ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերում դրանց հետադարձ ուժ տվող հատուկ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանելով վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերի բոլոր դեպքերում հետադարձ ուժ ունենալու կանոն՝ օրենսդիրն իրացրել է անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու իր հայեցողական լիազորությունը՝ հանշիվ առնելով հանրային շահը, իրավական որոշակիության սկզբունքը, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների պահպանման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման և մարդու իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը հստակորեն արտահայտել է իր կամքը՝ նշված օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքների՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության վերաբերյալ՝ ամրագրելով, որ նույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում տարածվում են նաև այդ ակտերի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի բացակայությունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կամ լրացում նախատեսող բոլոր այն ակտերը, որոնք մեղմացնում կամ վերացնում են վարչական իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվությունը, ունեն հետադարձ ուժ՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից, քանի որ այդ ակտերում դրանց հետադարձ ուժ տալու մասին դրույթ ներառելու անհրաժեշտությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավակարգավորման պարագայում բացակայում է Ընդ որում, պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքում դրան հետադարձ ուժով գործողության վերաբերյալ դրույթի բացակայությունը չի կարող դիտարկվել որպես այդ ակտի՝ հետադարձ ուժի գործողության արգելք, քանի որ դա կհակասի իրավական որոշակիության և օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների պահպանման անհրաժեշտության սկզբունքներին:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենքի՝ ժամանակի մեջ գործողության հետևյալ կանոններով.

- ընդհանուր կանոնի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում

կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ գործող օրենքով,

- եթե մինչև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին դրոշման ընդունումն ուժի մեջ է մտել տվյալ իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենք, ապա վարչական իրավախախտում կատարած անձին պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքով՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից:

Վերոգրյալ իրավանորմերի համադրված վերլուծության լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիայի ժամանակի մեջ գործողության կանոնակարգմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի մինչև 21.06.2014 թվականը գործող խմբագրությամբ 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է եղել, որ երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով: 21.06.2014 թվականին ընդունված և 26.07.2014 թվականից ուժի մեջ մտած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ թիվ ՀՕ-78-Ն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի չափով»: Ընդ որում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքն այդ ակտի հետադարձ ուժով գործողության մասին որևէ դրույթ չի պարունակում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքը հանդիսանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով 124.4-րդ հոդվածի 1-ին մասով սանկցիայում նախատեսված պատասխանատվության միջոցի՝ տուգանքի չափը նվազել է. եթե մինչև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքի ուժի մեջ մտնելը սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելու համար նախատեսված էր տուգանք՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով, ապա նշված օրենքի ուժի մեջ մտնելուց հետո այդ նույն արարքի համար նախատեսված է տուգանք՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփո-

խություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքը՝ որպես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունը մեղմացնող ակտ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, ունի հետադարձ ուժ և տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա՝ անկախ նշված օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի բացակայության հանգամանքից:

**02.12.2016 թ.**

**26. Արտյոմ Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչ. գործ թիվ ՎԴ/3314/05/14**

**Էջ  
263–273**

*Խնդիր.* Կարող է արդյոք անձը ենթարկվել վարչական պատասխանատվության բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար այն պայմաններում, երբ առկա է ողջամիտ կասկած ենթադրյալ իրավախախտման կատարման վայրը ճանապարհային երթևեկության կանոնների իմաստով բնակավայր հանդիսանալու փաստի առկայամբ:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային երթևեկության կանոնները սահմանելու լիազորությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը: Վերջինս, հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթով իրեն վերապահված լիազորությունը, 28.06.2007 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշումը, որի թիվ 1 հավելվածով հաստատվել են Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները: Ընդ որում, երթևեկության արագության վերաբերյալ կանոնները նախատեսված են նշված որոշման թիվ 1 հավելվածի՝ «Երթևեկության արագությունը» վերտառությամբ VII բաժնի 65–72-րդ կետերով:

Օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124.4-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվություն է նախատեսել երթևեկության սահմանված արագությունը 1–10 կմ/ժ-ով գերազանցելու համար: Նշված հոդվածում նկարագրված արարքը, ըստ էության, դրսևորվում է ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության այն կանոնի խախտմամբ, որի համաձայն՝ վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ:

ՀՀ կառավարության վկայակոչված որոշման թիվ 1 հավելվածի VII բաժնի 68–70-րդ կետերի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ճանապարհային երթևեկության առավելագույն արագության սահմանումը պայմանավորված է ճանապարհի տվյալ վայրի՝ բնակավայրի սահմաններում կամ բնակավայրի սահմաններից դուրս գտնվելու հանգամանքով: Այսպես, որպես ընդհանուր կանոն՝ բնակավայրերում երթևեկության առավելագույն արագությունը սահմանված է 60 կմ/ժ, բնակավայրերից դուրս՝ 90 կմ/ժ, իսկ բնակավայրերում և բնակավայրերից դուրս ճանապարհների առանձին հատվածներում կարող է թույլատրվել նշված առավելագույն արագությունից տարբերվող երթևեկության արագություն՝ դրա համար հատուկ նախատեսված ճանապարհային երթևեկության նշանի կիրառմամբ:

Սույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից քննարկման ենթակա հարցը վերաբերում է մեխանիկական տրանսպորտային միջոցների վարորդների կողմից բնակավայրերում սահմանված երթևեկության առավելագույն արագության գերազանցման համար առաջացող վարչական պատասխանատվության կիրառման խնդիրներին: Այդ նկատառումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ ճանապարհային երթևեկության ոլորտում «բնակավայր» հասկացության էությանը:

Այսպես՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի իմաստով բնակավայր հասկացությունը բնորոշվում է որպես այնպիսի կառուցապատ տարածք, որի մուտքն ու ելքը նշված են բնակավայրի ճանապարհային նշաններով: Այսինքն՝ ճանապարհային երթևեկության ոլորտում բնակավայր է համարվում միայն այն կառուցապատ տարածքը, որի մուտքն ու ելքը նշված են հատուկ ճանապարհային նշաններով: Այդ ճանապարհային նշաններից են 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշանները, որոնք տեղակայվում են բնակավայրի բոլոր մուտքերի՝ բնակելի կառուցապատման փաստացի սահմանի վրա և կիրառվում են բնակավայրերի սկիզբը նշելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որևէ կառուցապատ տարածքում բնակավայրերի համար սահմանված երթևեկության առանձնահատուկ կանոնները, այդ թվում նաև՝ առավելագույն արագության կանոնը, կարող են ունենալ իրավաբանական նշանակություն և առաջացնել իրավական հետևանքներ, եթե այդ կառուցապատ տարածքը համապատասխանում է բնակավայր հասկացության հատկանիշներին: Այլ կերպ ասած՝ բնակավայրերում երթևեկության կարգը սահմանող ճանապարհային երթևեկության կանոնների պահանջներն այս կամ այն կառուցապատ տարածքում կարող են գործել միայն այդ կառուցապատ տարածքի մուտքերի վրա նշված ճանապարհային նշաններից որևէ մեկի տեղադրված լինելու դեպքում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ բնակավայրերում սահմանված երթևեկության 60 կմ/ժ առավելագույն արագության կանոնը կարող է գործել միայն այն դեպքում, երբ տվյալ կառուցապատ տարածքի մուտքի վրա՝ բնակելի կառուցապատման փաստացի սահմանի վրա տեղադրված է 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշաններից որևէ մեկը: Այսինքն՝ վերոնշյալ պայմանների առկայության պարագայում է միայն հնարավոր փաստել, որ տվյալ կառուցապատ տարածքում երթևեկության սահմանված առավելագույն արագությունը 60 կմ/ժ է (ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսված բացառությունների բացակայության դեպքում), որը գերազանցելն առաջացնում է վարչական պատասխանատվություն:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այս կամ այն մեխանիկական տրանսպորտային միջոցի համար ճանապարհային երթևեկության առավելագույն արագության սահմանված ռեժիմի փոփոխությունը, ընդհանուր կանոնի համաձայն, պայմանավորված է տվյալ տրանսպորտային միջոցի՝ բնակավայր մուտք գործելու հանգամանքով: Այսպես, բնակավայրից դուրս գտնվող ճանապարհներին վարորդը, որպես կանոն, կարող է երթևեկել առավել բարձր արագությամբ, քան բնակավայրի սահմաններում գտնվող ճանապարհներին, քանի որ ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ բնակավայրերից դուրս երթևեկության առավելագույն արագությունը 90 կմ/ժ է (ավտոմայրուղիներում՝ 110 կմ/ժ), իսկ բնակավայրերում՝ 60 կմ/ժ: Այսինքն՝ երթևեկության առավելագույն արագությունը սահմանող ճանապարհային նշանների բացակայության դեպքում, որպես կանոն, բնակավայրերից դուրս երթևեկելիս տրանսպորտային միջոցների նկատմամբ տարածվում է երթևեկության առավելագույն արագության 90 կմ/ժ-ի (ավտոմայրուղիներում՝ 110 կմ/ժ-ի) ռեժիմը, իսկ բնակավայրերում երթևեկելիս՝ 60 կմ/ժ-ի ռեժիմը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ անձը, բնակավայրից դուրս գտնվող ճանապարհով վարելով որևէ մեխանիկական տրանսպորտային

միջոց, մուտք է գործում բնակավայր, այդ անձի նկատմամբ սկսում է գործել ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ սահմանված՝ բնակավայրում երթևեկության թույլատրելի արագության ռեժիմը, որը ենթադրում է, որ վարորդը պետք է երթևեկի բնակավայրում թույլատրելի առավելագույն 60 կմ/ժ արագությունը չգերազանցող արագությամբ, եթե ճանապարհի այդ հատվածում 60 կմ/ժ արագությունից տարբերվող երթևեկության արագություն սահմանված չէ: Ընդ որում, մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է իր տրանսպորտային միջոցի արագությունը համապատասխանեցնել բնակավայրում թույլատրելի առավելագույն արագության ռեժիմին, եթե տվյալ բնակավայրի մուտքի վրա տեղադրված է 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշաններից որևէ մեկը, քանի որ միայն այդ պարագայում է կառուցապատ տարածքը համարվում բնակավայր՝ ճանապարհային երթևեկության կանոնների իմաստով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ անձը կարող է բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի հիմքով ենթարկվել վարչական պատասխանատվության հետևյալ պայմանների, *inter alia*, միաժամանակյա առկայության դեպքում.

1) իրավախախտումը կատարվել է այնպիսի վայրում, որը համապատասխանում է ճանապարհային երթևեկության ոլորտում «բնակավայր» հասկացության հատկանիշներին, այսինքն՝

- իրավախախտման վայրը կառուցապատ տարածք է,
- այդ կառուցապատ տարածքի մուտքերի վրա տեղադրված է 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշաններից որևէ մեկը,

2) իրավախախտման կատարման վայրում բնակավայրերում սահմանված 60 կմ/ժ առավելագույն արագությունից տարբերվող երթևեկության արագություն թույլատրված չէ (ճանապարհի տվյալ հատվածում 3.24 «Առավելագույն արագության սահմանափակում» ճանապարհային նշանը կիրառված չէ):

Վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածով սահմանված իրավանորմերի վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ նշված օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը (*տե՛ս օրինակ, Արդա Մագարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված վարչական վարույթի իրականացման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով

իրականացվող վարչական վարույթի ընթացքում իրավախախտման փաստը համարվում է հաստատված, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Նշված հանգամանքով պայմանավորված՝ օրենսդիրը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի համար նախատեսել է միայն երկու փուլ՝ իրավախախտման հատկանիշների պարզման (հարուցման) և վարչական ակտի ընդունման (եզրափակիչ) փուլերը: Նշված վարչական վարույթում ընթացիկ փուլի բացառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների ակնհայտ համընկնման, այդ համընկնման վերաբերյալ որևէ կասկածի կամ վերապահման բացակայության պայմաններում հաստատվում է իրավախախտման փաստը, և բացակայում է նաև իրավախախտման հետ կապված այլ հանգամանքների պարզման, հետևաբար նաև՝ ընթացիկ փուլի անհրաժեշտությունը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով որևէ իրավակարգավորում նախատեսված չէ այն դեպքերի համար, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում, և օրենսդրական համապատասխան կարգավորման բացակայության պարագայում վարչական մարմինը զրկված է այդ կասկածը փարատելու նպատակով ապացույցներ ձեռք բերելու և դրանք գնահատելու հնարավորությունից: Վճռաբեկ դատարանը գտել է, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների կասկած հարուցելու դեպքերի վերաբերյալ համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում հարուցված վարչական վարույթների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները (*լուսն Լուսինե Վիրաբյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎՂ/1570/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական վարույթն ընթացիկ փուլով անցկացնելու անհրաժեշտությունը բացակայում է: Նշված ընդհանուր կանոնը կիրառելի է, *inter alia*, այն դեպքերի համար, երբ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդի համար տեղի է ունեցել երթևեկության սահմանված առավելագույն արագության ռեժիմի փոփոխություն, սակայն որևէ ողջամիտ կասկած չի կարող առաջանալ ենթադրյալ իրավախախտման կատարման վայրի՝ բնակավայր հասկացության չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ, այսինքն՝ իրավախախտման կատարման վայրի՝ բնակավայր հանդիսանալու փաստն անվիճելի է անկախ այն հանգամանքից, թե տվյալ բնակավայրի կոնկրետ որ փողոցում է կատարվել իրավախախտումը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու որոշ դեպքերում այդ վարչական վարույթը պետք է ունենա ոչ միայն հարուցման և եզրափակիչ, այլ նաև ընթացիկ փուլ: Ըստ Վճռաբեկ դատարանի եզրահանգման՝ բնակավայրում

սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական վարույթը պետք է ունենա ընթացիկ փուլ՝ որպես վերը նշված ընդհանուր կանոնից բացառություն, հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) տվյալ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդի համար տեղի է ունեցել ճանապարհային երթևեկության առավելագույն արագության սահմանված ռեժիմի փոփոխություն,

2) ողջամիտ կասկած է առաջացել այն հարցի շուրջ, թե արդյոք տվյալ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդի կողմից 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագության գերազանցումը տեղի է ունեցել բնակավայրում, թե ոչ:

Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ որևէ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդ, բնակավայրերից դուրս գտնվող ճանապարհով երթևեկելով այդպիսի ճանապարհների համար սահմանված առավելագույն արագության ռեժիմով, մոտք է գործում բնակավայր, և ողջամիտ կասկած է առաջացել ենթադրյալ իրավախախտման կատարման վայրի՝ բնակավայր հանդիսանալու կամ չհանդիսանալու հարցի կապակցությամբ, ապա այդ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար միայն այն պարագայում, երբ վարչական վարույթի ընթացիկ փուլում հաստատվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացող՝ սույն որոշմամբ նկարագրված փաստական հանգամանքների առկայությունը:

Վերոգրյալ վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ճանապարհային երթևեկության առավելագույն արագության սահմանված ռեժիմի փոփոխության և ենթադրյալ իրավախախտման կատարման վայրի՝ բնակավայր հանդիսանալու կամ չհանդիսանալու վերաբերյալ ողջամիտ կասկածի առկայության դեպքում բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածում նկարագրված զանցակազմի առկայությունը կարող է հաստատվել կամ հերքվել բացառապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանմամբ վարչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացիկ փուլում համապատասխան միջոցներ ձեռնարկելով, քանի որ միայն այդ փուլում է հնարավոր ձեռք բերել տեղեկություններ և ապացույցներ այն մասին, թե ենթադրյալ իրավախախտման կատարման վայրը ճանապարհային երթևեկության կանոնների իմաստով հանդիսանում է արդյոք բնակավայր, թե ոչ:

**26.12.2016 թ.**

**27. Արթուր Միքայելյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչ. գործ թիվ ՎԴ/1769/05/15**

**Էջ  
274–281**

*Խնդիր.* Արդյոք ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական ակտը պետք է նշում պարունակի ճանապարհային երթևեկության այն կոնկրետ կանոնի մասին, որի խախտման համար անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում սահմանելով վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի



կարգը, նշված օրենսգրքի 282–րդ հոդվածում նախատեսել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ համապատասխան վարչական մարմնի կողմից ընդունվող վերջնական որոշումների տեսակները՝ (ա) վարչական տույժ նշանակելու մասին, (բ) գործի վարույթը կարճելու մասին: Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281–րդ հոդվածով օրենսդիրն ամրագրել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ ընդունվող վերը նշված որոշումների բովանդակությանը ներկայացվող պահանջները, որոնցից մեկն այն է, որ այդ որոշումները պետք է պարունակեն, *inter alia*, գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281–րդ հոդվածով վարչական իրավախախտման գործի վերաբերյալ ընդունված որոշումներին ներկայացվող գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը պարունակելու մասին պահանջը նախնառաջ պետք է դիտարկվի նույն օրենսգրքի 279–րդ հոդվածով նախատեսված՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի ընթացքում վարչական մարմնի կողմից պարտադիր պարզման ենթակա վերոգրյալ հանգամանքների համատեքստում: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ ընդունված որոշման մեջ պետք է շարադրված լինեն այն հանգամանքները, որոնք ենթակա են պարտադիր պարզման վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի ընթացքում. դրանք են, *inter alia*, (ա) վարչական իրավախախտում կատարված լինելու փաստը, (բ) անձի մեղավորությունը վարչական իրավախախտման կատարման մեջ, (գ) անձի՝ վարչական պատասխանատվության ենթակա լինելը, (դ) պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայությունը, (ե) վարչական իրավախախտման հետևանքով գույքային վնաս պատճառված լինելը, (զ) գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտման գործի վերաբերյալ ընդունվող վերջնական որոշումները պետք է համապատասխանեն նշված օրենսգրքով դրանց ներկայացվող հիմնավորվածության վերոգրյալ չափանիշներին:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության առաջացման համար հիմք հանդիսացող զանցակազմերի նկարագրությունը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, մասնավորապես՝ նույն օրենսգրքի 124–րդ, 124.1–րդ, 124.3–րդ, 124.4–րդ, 124.6–րդ և մի շարք այլ հոդվածներով: Օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածով վարչական պատասխանատվություն է նախատեսել ճանապարհային երթևեկության առանձին կանոնների խախտման համար. այդպիսի զանցանք է նաև նույն հոդվածի 21–րդ մասում նախատեսված կանգառի կամ կայանման կանոնների խախտումը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9–րդ հոդվածից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային երթևեկության կանոնները սահմանելու լիազորությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը: Վերջինս, հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի վկայակցված իրավադրույթով իրեն վերապահված լիազորությունը, 28.06.2007 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955–Ն որոշումը, որի թիվ 1 հավելվածով հաստատվել են Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները: Ընդ որում, կանգառի և կայանման կա-

նոնները նախատեսված են նշված որոշման թիվ 1 հավելվածի «Կանգառը և կայանումը» վերտառությամբ IX բաժնի 78–86–րդ կետերով:

Ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության առաջացման հիմք հանդիսացող և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նկարագրված զանցակազմների ուսումնասիրությունը վկայում է, որ որոշ դեպքերում այդ զանցակազմերը հղում են կատարում ճանապարհային երթևեկության կանոններին՝ առանց դրանք նկարագրելու կամ մանրամասնելու: Օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածի 21–րդ մասով ամրագրված զանցակազմի դիսպոզիցիան ունի հետևյալ տեսքը. «*տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը*»: Նշված օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ քննարկվող զանցակազմը չի կոնկրետացնում, թե որոնք են կանգառի կամ կայանման այն կանոնները, որոնց խախտման համար առաջանում է վարչական պատասխանատվություն: Սակայն ակնհայտ է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածի քննարկվող իրավադրույթի հիման վրա վարչական պատասխանատվությունը ծագում է ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955–Ն որոշման թիվ 1 հավելվածի «Կանգառը և կայանումը» վերտառությամբ IX բաժնի 78–86–րդ կետերով նախատեսված կանոնների խախտման համար: Հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածի 21–րդ մասի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է պարզել այն հարցը, թե տրանսպորտային միջոցի վարորդի կողմից խախտվել է արդյոք կանգառի կամ կայանման վերոգրյալ կանոններից որևէ մեկը, թե ոչ:

Անդրադառնալով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական ակտերի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան զանցակազմը հղում է կատարում ճանապարհային երթևեկության այս կամ այն կանոնին՝ առանց մանրամասնելու այդ կանոնի բովանդակությունը, ապա տվյալ զանցակազմի հիման վրա անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական ակտը պետք է նշում պարունակի ճանապարհային երթևեկության այն կոնկրետ կանոնի մասին, որի խախտման համար անձը ենթակա է վարչական պատասխանատվության: Նման դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281–րդ հոդվածով սահմանված այն իրավական կարգավորումը, որի համաձայն՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը պետք է պարունակի, *inter alia*, գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը: Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական գործի քննանակներում հաստատման ենթակա հանգամանքներից մեկը վարչական պատասխանատվության ենթակա անձի կողմից խախտված ճանապարհային երթևեկության կոնկրետ կանոնն է, որը պետք է անպայմանորեն ներառվի վարչական տույժ նշանակելու մասին որոշման բովանդակության մեջ, եթե վարչական պատասխանատվության հիմք հանդիսացող համապատասխան զանցակազմը չի պարունակում ճանապարհային երթևեկության տվյալ կանոնի նկարագրությունը:

02.12.2016 թ.

28. Գեղամ Սիմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԴ/5084/05/14

Էջ  
282–291

**Խնդիր.** Արդյո՞ք «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում նույն տարածքում կայանված ավտոմեքենայի՝ երկու տարբեր ժամերին կատարված լուսանկարները բավարար են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7–րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման փաստը հաստատված համարելու և նույն հոդվածի սանկցիայի կիրառմամբ վարչական պատասխանատվություն կիրառելու համար:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը նշել է, որ ավտոկայանատեղի համար գանձվող տուրքը համայնքի ավագանու կողմից հաստատված չափով համայնքի բյուջե գանձվող տեղական տուրք է, որի վճարման պարտավորությունը ծագում է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու պահից, իսկ այդ պարտականությունը չկատարելու իրավական հետևանքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7–րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության կիրառումն է Ընդ որում, օրենսդիրն ավտոկայանատեղի տուրքի վճարման ձևերը սահմանելու լիազորությունը վերապահել է համայնքի ավագանուն:

Անդրադառնալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7–րդ հոդվածի կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով վիճելի իրավահարաբերության ծագման պահին Երևան քաղաքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7–րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը կարող էր համարվել տեղի ունեցած հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքերում.

1. ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը 5 րոպեից ավելի ժամանակով կայանվել է Երևան քաղաքի համայնքային վճարովի ավտոկայանատեղում,

2. չի վճարվել համայնքի ավագանու կողմից հաստատված չափով տեղական տուրք:

Այլ կերպ ասած՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7–րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման դեպքի (գանցանքի) առկայության համար այն դեպքում, երբ համայնքի ավագանու որոշմամբ նախատեսված է համայնքային վճարովի ավտոկայանատեղում որոշակի ժամանակահատված անվճար կայանելու հնարավորություն, անհրաժեշտ է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը սահմանված անվճար ժամանակահատվածից ավելի ժամանակով համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու և համայնքի ավագանու կողմից հաստատված չափով տեղական տուրք չվճարելու փաստերի միաժամանակյա առկայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը պետք է որոշի այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում, և նշված ապացույցներից յուրաքանչյուրը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործով բարձրացրած իրավական հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն պայմաններում, երբ համայնքի ավագանու որոշմամբ նախատեսված է համայնքային վճարովի ավտոկայանատեղում որոշակի ժամանակահատված անվճար կայանելու հնարավորություն, Վարչական իրավախախտումների

վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման դեպքի առկայության համար անհրաժեշտ՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը սահմանված անվճար ժամանակահատվածից ավելի ժամանակով համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու փաստը կարող է հաստատվել այնպիսի ապացույցով, որը հնարավորություն կտա պարզելու (ստուգելու) կայանման տևողությունը:

Միաժամանակ նկատի ունենալով այն հանգամանքը, որ իրավակիրառ պրակտիկայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման դեպքն առավելապես հիմնավորվում է լուսանկարով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ ապացուցման այս միջոցի կիրառման առանձնահատկություններին: Այսպես՝ Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ լուսանկարը տեխնիկական միջոցներով ստացված և նյութական կրիչի վրա պահպանված՝ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների և օբյեկտիվ ազդանշանների՝ ժամանակի տվյալ պահին ունեցած ստատիկ՝ անշարժ պատկերի վերարտադրումն է: Այսինքն՝ լուսանկարը կարող է արձանագրել միայն օբյեկտիվ իրականության՝ լուսանկարահանման պահին ունեցած տեսքը, ինչը նշանակում է, որ այն չի կարող հիմք հանդիսանալ որևէ գործընթացի տևողությունը հաշվարկելու համար: Հետևաբար ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու տևողությունը լուսանկարներով կարող է հաշվարկվել միայն այն դեպքում, երբ լուսանկարների քանակությունը և դրանց լուսանկարահանման հաճախականությունը հնարավորություն կտան աներկբայորեն փաստելու, որ ավտոմեքենան նշված ժամանակահատվածում անընդմեջ կայանված է եղել վճարովի ավտոկայանատեղում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն ավտոմեքենայի՝ վճարովի ավտոկայանատեղում կայանված լինելու վերաբերյալ լուսանկարը բավարար չէ ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու իրավախախտման փաստը հաստատված համարելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու տևողությունը չի կարող հաշվարկվել նաև այնպիսի լուսանկարներով, որոնք կատարվել են այնպիսի ժամանակային միջակայքում, որը չի բացառում տրանսպորտային միջոցն ավտոկայանատեղից հեռանալու և կրկին վերադառնալու հանգամանքը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման դեպքի առկայությունը կարող է հիմնավորվել նաև տեսանյութով: Տեսանյութը տեխնիկական միջոցներով ստացված և նյութական կրիչի վրա պահպանված՝ օբյեկտիվ իրականության տեսողական ընկալման դինամիկ շարժուն պատկերի վերարտադրումն է, որը հնարավորություն է տալիս արձանագրելու օբյեկտիվ իրականության (դրա տեսանկարահանվող հատվածի) փոփոխությունը՝ ժամանակի (տեսանկարահանման տևողության) ընթացքում: Այսինքն, ի տարբերություն լուսանկարի՝ տեսանյութը հնարավորություն է տալիս հաշվարկելու դրանում վերարտադրված գործընթացի տևողությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն պայմաններում, երբ համայնքի ավագանու որոշմամբ նախատեսված է համայնքային վճարովի ավտոկայանատեղում որոշակի ժամանակահատված անվճար կայանելու հնարավորություն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման դեպքի առկայության համար անհրաժեշտ՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը սահմանված անվճար ժամանակահատվածից ավելի ժամանակով համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու փաստը կարող է հաստատվել տեսա-

նյութով կամ այնպիսի լուսանկարներով, որոնց քանակությունը և դրանց լուսանկարահանման հաճախականությունը հնարավորություն կտան հաշվարկելու անընդմեջ կայանման տևողությունը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տեսանյութն ու լուսանկարները միակ ապացույցները չեն, որոնք կարող են հաստատել տրանսպորտային միջոցի կայանման տևողությունը: Վճռաբեկ դատարանը չի բացառել վճարովի ավտոկայանատեղերն այնպիսի տեխնիկական միջոցներով համալրելու կամ ավտոկայանատեղերն այնպես կազմակերպելու հնարավորությունը, որը թույլ կտա այլ կերպ հաշվառել յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի կայանման տևողությունը:

## 26.12.2016 թ.

29. Հուսիկ Մարգարյանն ընդդեմ ՀՀ Ֆինանսների նախարարության, վարչ. գործ թիվ ՎԴ/10555/05/13

Էջ  
292–297

**Խնդիր.** Արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության մաքսային կանոնների խախտման համար, եթե լրացել է ենթադրյալ իրավախախտումը կատարելու հնարավոր վերջին օրվանից եռամյա ժամկետը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37–րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հատուկ ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր հանրային վնասակարությունը, և անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, քանի որ այդ ժամկետի լրանալուց հետո վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելը դառնում է աննպատակահարմար: Փաստորեն, վաղեմության ժամկետն անցնելը վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք է. վաղեմության ժամկետն անցած լինելու դեպքում անձին վարչական պատասխանատվությունից ազատելն իրավասու վարչական մարմնի պարտականությունն է, այլ ոչ թե հայեցողական լիազորությունը: Ըստ այդմ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247–րդ հոդվածը վաղեմության ժամկետի լրանալը դիտում է որպես վարչական գործով վարույթը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված վարչական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետները:

ՀՀ մաքսային օրենսգրքի 205–րդ հոդվածի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37–րդ հոդվածի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների (մաքսային կանոնների խախտումների) համար անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության օրենքով նախատեսված հատուկ ժամկետների ընթացքում, որոնց հաշվարկն սկսվում է մի դեպքում իրավախախտումը հայտնաբերվելու, իսկ մյուս դեպքում՝ այն կատարվելու օրվանից: Այսպես՝ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների (մաքսային կանոնների խախտումների) համար անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, եթե չեն լրացել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկամյա ժամկետը և իրավախախտումը կատարվելու օրվանից եռամյա ժամկետը: Փաստորեն, մաքսային կանոնները խախտելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը երկու ամիս է, որը հաշվարկվում է իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից:

Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է մաքսային կանոնները խախտելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մեկ այլ վաղեմության ժամկետ, որը տևում է 3 տարի և հաշվարկվում է ոչ թե իրավախախտման հայտնաբերման, այլ կատարման օրվանից:

Անփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների (մաքսային կանոնների խախտումների) համար վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի հետ կապված օրենսդրական կարգավորումները հանգում են հետևյալ երկու կանոններին.

1) անձը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար, եթե լրացել է իրավախախտման հայտնաբերման պահից երկամսյա ժամկետը,

2) անձը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար, եթե լրացել է իրավախախտման կատարման պահից եռամսյա ժամկետը,

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 198–րդ հոդվածով ամրագրված իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել մաքսային այն կանոնների խախտման համար, որոնք կապված են մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների նկատմամբ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 139.1–րդ հոդվածի ուժով գործող սահմանափակումների հետ և չեն առնչվում պետության ֆինանսական շահերին, մաքսային վճարների վճարման պարտականության կատարմանը, ինչպես նաև այդպիսի պարտականության կատարման ապահովմանը: Նշված վարչական իրավախախտումն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության սահմանված կարգի դեմ և դրսևորվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու եղանակով: Նշված արարքների կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնված, օտարված, ոչնչացված կամ կորցված ապրանքի մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 139–րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթից բխում է, որ «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքները և տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողման պահը գտնվում են մաքսային հսկողության ներքո: Հետևաբար ՀՀ մաքսային օրենսգրքի 198–րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է առաջանալ նաև «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքները և տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողումն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու դեպքում:

02.12.2016 թ.

30. Սասունիկ Մեջցյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի և մյուսների,  
վարչ. գործ թիվ ՎԴ/9692/05/13

Էջ  
298–309

**Խնդիր.** Առանց շինարարական թույլտվության շինարարական աշխատանքներ կատարելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը ենթակա է արդյո՞ք անվավեր ճանաչման այն հիմքով, որ տվյալ շինարարական աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվություն չի պահանջվում, այն պայմաններում, երբ կատարված շինարարական աշխատանքներն ընդգրկված չեն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների ցանկում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում վարչական պատասխանատվություն է նախատեսել շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված են շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու գանցակազմի հետևյալ դրսևորումները.

1) սեփականության կամ հոդօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը (բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան),

2) գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա բնակելի տուն ինքնակամ կառուցելը,

3) հոդօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը:

Թեև վկայակոչված իրավախախտումներից յուրաքանչյուրն ունի միայն իրեն բնորոշ առանձնահատկությունները (արարքի կատարման վայրը, կառուցվող շինության տեսակը, արարքը կատարող սուբյեկտը, կիրառվող սանկցիան), սակայն դրանց համար ընդհանուրն այն է, որ բոլոր դեպքերում այդ գանցակազմերը կարող են առկա լինել միայն ինքնակամ կառույցի (շենքի, շինության) կառուցման պարագայում: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված բոլոր արարքներն ընդգրկվում են շենքեր ու շինություններ ինքնակամ կառուցելու գանցանքի միասնական հասկացության մեջ, որի ոտնձգության օբյեկտը քաղաքաշինության բնագավառում օրենսդրությամբ սահմանված իրավակարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների ամբողջությունն է:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված վարչական իրավախախտման առարկան ինքնակամ կառույցն է (շենքը, շինությունը), հետևաբար ոչված իրավադրույթի ուժով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար նախևառաջ անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք անձի կողմից կատարված շինարարական աշխատանքներն ուղղված են եղել ինքնակամ կառույցի (շենքի, շինության) իրականացմանը, թե ոչ:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ինքնակամ կառույցի օրենսդրական բնորոշումը տրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետում, որի համաձայն՝ կառույցը համարվում է ինքնակամ, եթե այն կառուցվել է օրենքով կամ այլ իրավական ակտերով այդ նպատակի համար չհատկացված

հողամասում, կառուցվել կամ վերակառուցվել է առանց թույլտվության, կառուցվել կամ վերակառուցվել է թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական կանոնների էական խախտումներով:

Այսպիսով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով անձին պատասխանատվության ենթարկելու համար, ի թիվս նշված իրավադրույթում նկարագրված իրավախախտման այլ հատկանիշների, անհրաժեշտ է հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայությունը.

1. անձը կատարել է շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ օրենքով կամ այլ իրավական ակտերով այդ նպատակի համար չհատկացված հողամասում, կամ

2. անձը կատարել է շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ առանց թույլտվության, կամ

3. անձը կատարել է շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական կանոնների էական խախտումներով:

Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի համար վարչական պատասխանատվության առաջացման առանձնահատկություններին այն պայմաններում, երբ անձը կատարել է շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ առանց թույլտվության:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով, որի 6-րդ հոդվածի համաձայն՝ կառուցապատողները՝ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողները, պարտավոր են իրականացնել քաղաքաշինական գործունեություն շինարարության թույլտվության հիման վրա և բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան, բացառությամբ այն դեպքի, երբ նույն օրենքի համաձայն՝ իրականացվող քաղաքաշինական գործունեությունը շինարարության թույլտվություն չի պահանջում: Ընդ որում, շինարարության թույլտվության հասկացությունն օրենսդիրը սահմանել է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, որի համաձայն՝ շինարարության թույլտվությունը նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում կամ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որոշակի շինարարական գործունեություն իրականացնելու՝ կառուցապատողի իրավունքը հաստատող փաստաթուղթ է: Մինևնույն ժամանակ քննարկվող օրենքը նախատեսում է, որ ոչ բոլոր դեպքերում է շինարարական աշխատանքների կատարման համար պահանջվում շինարարության թույլտվության առկայություն: Այսինքն՝ օրենսդրի տեսանկյունից որոշ դեպքերում անձը կարող է իրականացնել շինարարական գործունեություն առանց տվյալ շինարարական աշխատանքները կատարելու իրավունքը հաստատող փաստաթղթի առկայության:

Վերոգրյալ իրավական վերլուծությունները վկայում են այն մասին, որ քաղաքաշինական գործունեության ոլորտում օրենսդրի կողմից սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ որոշակի շինարարական գործունեություն իրականացնելու համար շինարարության թույլտվության առկայությունը պարտադիր է: Նշված ընդհանուր կանոնից օրենսդիրը կատարել է մեկ բացառություն, որը նախատեսված է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում և հանգում է հետևյալին. շինարարության թույլտվություն չի պահանջվում այն շինարար-



րական աշխատանքների կատարման համար, որոնք բավարարում են ստորև ներկայացված բոլոր պահանջներին.

1. տվյալ շինարարական աշխատանքները շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքներ են,

2. տվյալ շինարարական աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության սահմանած ցանկում,

3. տվյալ շինարարական աշխատանքները չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը,

4. տվյալ շինարարական աշխատանքները չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի հիման վրա ՀՀ կառավարությունը 19.03.2015 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշումը: Նշված որոշման թիվ 1 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի 26-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտները, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հինգ կատեգորիաների, որոնցից 1-ինը ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներն են. դրանց թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների: Ընդ որում, ցածր ռիսկայնության աստիճանի (1-ին կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների) սպառիչ թվարկումը կատարված է ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման թիվ 4 հավելվածի թիվ 1 ցանկում:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ կառավարության վերագրյալ որոշումն ուժի մեջ է մտել 27.06.2015 թվականին, իսկ մինչ այդ գործում էր նույն հասարակական հարաբերությունները կարգավորող մեկ այլ ենթաօրենսդրական ակտ՝ ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» թիվ 91 որոշումը (ուժը կորցրել է 27.06.2015 թվականին), որի 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված էր Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնության աստիճանի (1-ին կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների) ցանկը, որոնց կատարման համար շինարարության թույլտվություն չէր պահանջվում՝ համաձայն նույն որոշման թիվ 2 հավելվածի:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված կոնկրետ շինարարական աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվություն չպահանջվելը բացառում է առանց շինարարական թույլտվության այդպիսի շինարարական աշխատանքներ կատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվության առաջացումը: Հետևաբար առանց շինարարական թույլտվության շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարար-

րական աշխատանքներ կատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154–րդ հոդվածի 1–ին մասում նկարագրված գանգակազմի շրջանակներում առաջացող վարչական պատասխանատվության հարցը լուծելու համար անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ շինարարական աշխատանքների կատարման համար թույլտվություն պահանջվելու կամ չպահանջվելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ կոնկրետ շինարարական գործունեության (շինարարական աշխատանքների) համար շինարարության թույլտվություն պահանջվելու կամ չպահանջվելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23–րդ հոդվածում ամրագրված պահանջները, մասնավորապես այն հանգամանքը, թե արդյոք տվյալ շինարարական աշխատանքները ներառված են շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ցանկում որպես ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքներ: Բացի այդ, նշված հարցը պարզելու համար անհրաժեշտ է բացահայտել նաև այն, թե արդյոք տվյալ շինարարական աշխատանքները չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը և չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

## ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

22.07.2016 թ.

31. Սարգիս Խարիկյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների, վարչ. գործ թիվ ՎԴ/12466/05/13

Էջ  
310–325

*Խնդիր.* Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն ամփոփել և վերահաստատել է ՀՀ իրավական համակարգում անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական քնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավական կառուցակարգի վերաբերյալ նախկին որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները:

### *Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.*

– Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է պարզել, *inter alia*, այն հանգամանքը, թե արդյոք ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումում նշված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, թե՛ ոչ: Այն դեպքում, երբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը դիմում ներկայացրած անձից բացի փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, վարչական մարմինը պարտավոր է այդ ֆիզիկական անձանց ևս մասնակից դարձնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վարչական վարույթին՝ նրանց որպես երրորդ անձ ներգրավելու միջոցով, ինչը թույլ կտա ապահովել վերջիններիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը (*սրեն Ռոբերտյու Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

– Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է պարզել, *inter alia*, այն հանգամանքը, թե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացրած ֆիզիկական անձը հանդիսանում է արդյոք այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդ, թե ոչ (*տե՛ս Զոյա Միլեոնիդուս ընդդեմ Երևանի համայնքի թիվ ՎԴ/10507/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

– Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է պարզել, *inter alia*, այն հանգամանքը, թե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տունը հանդիսանում է արդյոք օրինական կառույց, թե ոչ, քանի որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը կարող է վերականգնվել միայն այն բնակելի տների նկատմամբ, որոնք ինքնակամ կառույցներ չեն (*տե՛ս Միրանուշ Վարդանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0634/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

**22.04.2016 թ.**

**32. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, վարչ. գործ թիվ ՎԴ/6329/05/12**

**Էջ  
326–343**

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հակամրցակային համաձայնությունների կնքման և գերիշխող դիրքի չարաշահման դեպքում տնտեսվարող սուբյեկտներին «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկելու իրավական և փաստական հիմքերին, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու բնագավառում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման ընդհանուր սահմաններին և հատուկ չափանիշներին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը գտել է, որ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, երկկետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը: Միաժամանակ ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ. այն ենթակա է սահմանափակման՝ ազատ տնտեսական մրցակցության ապահովման նպատակից ելնելով: Հետևաբար նշված երկու իրավական սկզբունքների՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ներդաշնակ ու հետևողական իրացման պայմաններում է միայն հնարավոր հասնել շուկայական հարաբերությունների վրա խարսխված արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորմանն ու կայուն զարգացմանը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ շուկայական տնտեսության պայմաններում մրցակցային միջավայրի կառուցումն այն հիմնական ուղիներից մեկն է,

որով պետությունը կարողանում է բարձրացնել հասարակության բարեկեցությունը. տվյալ ոլորտում պետությունը պետք է հետամուտ լինի ինչպես ազատ տնտեսական մրցակցության գոյության համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը, այնպես էլ տնտեսությանը վնաս հասցնող գործողությունների կանխարգելմանը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1–ին և 2–րդ հոդվածներով սահմանված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ նշված օրենքի իրավակարգավորումները նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցության վրա հիմնված շուկայական տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովմանը և տարածվում են տնտեսվարող սուբյեկտների այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ձեռնարկատիրական գործունեության բնագավառում մրցակցությունն ամենաընդհանուր ձևով կարելի է բնորոշել որպես տնտեսվարող սուբյեկտների միջև մրցություն՝ ապրանքների (ծառայությունների) արտադրության և իրացման լավագույն պայմաններով հնարավորինս առավելագույն շահույթ ստանալու նպատակին հասնելու համար: Տնտեսական մրցակցության օրենսդրական բնորոշումը տրված է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածում, ըստ որի՝ մրցակցությունն ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեությունն է, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5–րդ հոդվածի 5–րդ մասով և 7–րդ հոդվածի 1–ին մասով օրենսդիրը, առաջնորդվելով ազատ տնտեսական մրցակցության համար անհրաժեշտ պայմանների ապահովման նկատառումներով, սահմանել է, որ հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը), ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհի կամ գերիշխող դիրքը չարաշահելն արգելվում են: Ավելին՝ օրենսդիրը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրել է, որ տնտեսվարող սուբյեկտներն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում նշված օրենքի պահանջները խախտելու համար և նույն օրենքի 31–րդ հոդվածի 1–ին մասում նախատեսել է նույն օրենքի խախտման համար կիրառվող պատասխանատվության միջոցները՝ նախագրուշացում կամ տուգանք: Բացի այդ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերում օրենսդիրը հստակ սահմանել է հակամրցակցային համաձայնություն կնքելու, ինչպես նաև գերիշխող դիրքի չարաշահման համար ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ որպես տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականությունն իրականացնող պետական մարմնի կողմից նշանակվող տուգանքի չափը, որը կազմում է 5.000.000 ՀՀ դրամից մինչև 200.000.000 ՀՀ դրամ:

Փաստորեն, շուկայական տնտեսության պայմաններում մրցակցության ազատության երաշխավորման անհրաժեշտությունից ելնելով՝ օրենսդիրն արգելել է հակամրցակցային համաձայնությունների, այսինքն՝ այնպիսի համաձայնությունների կնքումը (կայացումը), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը: Օրենսդիրը սահմանել է նաև հա-

կամրցակցային համաձայնությունների կնքման (կայացման) եղանակները, որանք են՝

1. տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված գործարքները,
2. տնտեսվարող սուբյեկտների համաձայնությունները,
3. տնտեսվարող սուբյեկտների ուղղակիորեն համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը,
4. տնտեսվարող սուբյեկտների անուղղակիորեն համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը,
5. տնտեսվարող սուբյեկտների միավորումների կողմից ընդունված որոշումները:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սահմանել է հակամրցակցային համաձայնությունների առարկան՝ նախատեսելով այն գործողությունների սպառիչ ցանկը, որոնց վերաբերյալ կարող են կնքվել (կայացվել) օրենքով արգելված հակամրցակցային համաձայնությունները: Հետևաբար հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու) համար որևէ տնտեսվարող սուբյեկտի պատասխանատվության ենթարկելու յուրաքանչյուր դեպքում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը պարտավոր է պարզել, թե օրենքով նախատեսված կոնկրետ ինչ եղանակով և կոնկրետ ինչ գործողության վերաբերյալ է կնքվել տվյալ հակամրցակցային համաձայնությունը և ցույց տալ այն փաստական տվյալները կամ թույլատրելի այն ապացույցները, որոնք հիմք են տնտեսվարող սուբյեկտի կատարած կոնկրետ գործողությունը կամ վարքագիծը որպես հակամրցակցային համաձայնության կնքում (կայացում) որակելու համար: Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով հակամրցակցային համաձայնությունը կարող է ապացուցված համարվել միայն այն դեպքում, եթե այդ մասին են վկայում տնտեսվարող սուբյեկտների՝ նույն հոդվածի 2-րդ մասում նշված գործողությունները կամ վարքագիծը, և եթե առկա է այդ մասին վկայող որևէ փաստական տվյալ, այդ թվում՝ գրավոր ապացույց, տեսագրություն, ձայնագրություն կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը նախատեսել է այն գործողությունների սպառիչ ցանկը, որոնց կատարումը կարող է որակվել որպես օրենքով արգելված գերիշխող դիրքի չարաշահում: Հետևաբար գերիշխող դիրքի չարաշահման համար որևէ տնտեսվարող սուբյեկտի պատասխանատվության ենթարկելու յուրաքանչյուր դեպքում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը պարտավոր է պարզել, թե օրենքով նախատեսված՝ գերիշխող դիրքի չարաշահման կոնկրետ ինչ գործողություն է կատարել տվյալ տնտեսվարող սուբյեկտը, և ցույց տալ այն փաստական հիմնավորումները, որոնք հիմք են այդ տնտեսվարող սուբյեկտի կատարած կոնկրետ գործողությունը կամ վարքագիծը որպես գերիշխող դիրքի չարաշահում որակելու համար:

Վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահ-

մանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը (տե՛ս օրինակ, ՀՀ Ֆինանսների նախարարության Շենգակիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհար ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԳ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված վարչական մարմնի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է վարչական մարմնին վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ վարչական մարմնի հնարավորությամբ,

3) վարչական մարմնի կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վարչական մարմինը չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ իրավական պետությունում պետաիշխանական լիազորություններով օժտված բոլոր սուբյեկտներին վերապահված հայեցողական լիազորությունները կարող են գործադրվել միայն իրավունքի սահմաններում: Հետևաբար հայեցողական վարչարարությունը ևս կաշկանդված, սահմանափակված է իրավունքով: Այդ իսկ պատճառով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն ամրագրել է, որ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել՝

- մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ,
- իրավահավասարության սկզբունքով,
- վարչարարության իրականացման համաչափության սկզբունքով,
- կամայականության արգելքի սկզբունքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է նաև, որ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ: Նշված իրավադրույթից հետևում է, որ վարչա-

կան մարմինները հայեցողական լիազորություններ իրականացնելիս կաշկանդված են նաև հայեցողության այն նպատակով, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամրագրված է հայեցողություն վերապահող օրենքում: Այսինքն՝ վարչական մարմինը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պարտավոր է պարզել իրեն հայեցողություն վերապահող օրենքի նպատակը և իր հայեցողությունն իրականացնել օրենքի սահմաններում՝ այդ նպատակին հասնելուն ուղղված միջոցների օգտագործմամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմինների կողմից օրենքով ամրագրված սահմանների խախտմամբ կամ օրենքով կանխարոշված նպատակին ոչ համահունչ կերպով հայեցողական լիազորությունների իրականացումը հանգեցնում է հայեցողական հետևյալ սխալների.

1) սխալ ենթադրություն հայեցողության բացակայության մասին (հայեցողության չօգտագործում),

2) տվյալ փաստակազմի համար օրենքով չնախատեսված իրավական հետևանքի կիրառում կամ հայեցողության չարաշահում (վերազանցում),

3) հայեցողության կիրառման ժամանակ փաստական հանգամանքների ոչ ամբողջական պարզում:

Հետևաբար վարչական մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը պետք է ստուգի հայեցողության կիրառման ժամանակ այնպիսի սխալների առաջացման հարցը, որոնք պայմանավորված են հայեցողության՝ օրենքով ուրվագծված սահմանների կամ օրենքով նախանշված նպատակի անտեսմամբ: Այլ կերպ ասած՝ հայեցողական լիազորությունների իրավաչափության գնահատման համար դատարանը, մասնավորապես, պետք է պարզի արդյոք վարչական հայեցողությունը հետևողականորեն է կիրառվել, թե՛ ոչ, և արդյոք վարչական մարմինը թույլ է տվել վերը նշված հայեցողական սխալներից որևէ մեկը, թե՛ ոչ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի և 36-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով, որ տնտեսվարող սուբյեկտները պատասխանատվություն են կրում նշված օրենքը խախտելու համար, այդ խախտումների դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցների՝ նախագուշացման կամ տուգանքի, ընտրության հարցում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին վերապահել է հայեցողական լիազորություն: Բացի այդ, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը հայեցողական լիազորությունով է օժտված նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումների համար կիրառվող տուգանքի չափի ընտրության հարցում, քանի որ նույն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) կամ գերիշխող դիրքը չարաշահելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է 5.000.000 ՀՀ դրամից մինչև 200.000.000 ՀՀ դրամ: Այսինքն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու կամ գերիշխող դիրքը չարաշահելու համար որևէ տնտեսվարող սուբյեկտի պատասխանատվության ենթարկելու և որպես պատասխանատվության միջոց տուգանքն ընտրելու յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն ինքն է որոշում նշանակվող տուգանքի չափը՝ հիմք ընդունելով օրենքով նախատեսված տուգանքի նվազագույն (5.000.000 ՀՀ դրամ) և առավելագույն (200.000.000 ՀՀ դրամ) շեմը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտման համար կի-

բառվող պատասխանատվության միջոցի ընտրության, ինչպես նաև որպես պատասխանատվության միջոց ընտրված տուգանքի չափի որոշման հարցում օժտված է հայեցողական լիազորություններով: Վճռաբեկ դատարանը գտել է, որ տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու բնագավառում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին վերապահված վերոգրյալ հայեցողական լիազորությունները կարող են գործադրվել միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավական սկզբունքներին և չափանիշներին համապատասխան: Բացի այդ, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հայեցողական լիազորությունների իրականացումը կաշկանդված է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով ուղղակիորեն կանխորոշված հետևյալ նպատակներով.

- պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը,
- ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր,
- նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը,
- նպաստել սպառողների շահերի պաշտպանությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ բացի ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին վերապահված հայեցողության վերը նշված ընդհանուր սահմաններից, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է նաև հատուկ պայմաններ ու պահանջներ, որոնցով պարտավոր է առաջնորդվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն իր հայեցողական լիազորությունների իրականացման ժամանակ: Այսպես, քննարկվող իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելիս ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը պարտավոր է հաշվի առնել նաև հետևյալ հանգամանքները.

- իրավախախտման բնույթը,
- իրավախախտման տևողությունը,
- իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի վրա,
- իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը սպառողների շահերի վրա,
- տնտեսվարող սուբյեկտի կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումների կրկնակիությունը,
- տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը,
- տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները,
- տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու հանգամանքները,
- տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը,
- տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը,
- տնտեսվարող սուբյեկտի գործունեության պատմությունը,
- հակամրցակցային համաձայնության համար տուգանք նշանակելու դեպքում նաև հակամրցակցային համաձայնության տեսակը (հորիզոնական, ուղղահայաց, խառը):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու բնագավառ-



նում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հայեցողական լիազորություններն իրականացնելիս ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը՝ որպես վարչական մարմին, պարտավոր է առաջնորդվել ինչպես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված իրավական սկզբունքներով ու չափանիշներով և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախանշված նպատակներով, այնպես էլ նույն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ պատասխանատվության կոնկրետ միջոցի կիրառման ժամանակ պարզման ենթակա հանգամանքներով:

**22.07.2016 թ.**

**33. Ավետիք Նիկողոսյանն ընդդեմ ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների հատկացման հարցերով հանձնաժողովի և մյուսների, վարչ. գործ թիվ ՎԴ/7837/05/13**

Էջ  
344–352

*Խնդիր.* Արդյո՞ք դատարանը կարող է անդրադառնալ վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատմանն առանց պարզելու վիճարկվող վարչական ակտի բնույթը, և արդյո՞ք վարչական ակտի իրավաչափության գնահատման հիմքերը նույնն են՝ անկախ դրա բնույթից:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ բացահայտել է վարչական վարույթի վերսկսման ինստիտուտի բովանդակությունը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված՝ այդ ինստիտուտի իրավակարգավորման հիմնական տարրերի միջոցով: Վերոնշյալ հոդվածի իրավակարգավորման հիմնական տարրերն են.

- վարույթը վերսկսվում է նշված հոդվածով և/կամ այլ օրենքներով նախատեսված վարույթը վերսկսելու հիմքերի առկայության դեպքում,
- վարույթը վերսկսելու ինստիտուտը կիրառելի է վարչական ակտի ընդունմամբ արդեն իսկ ավարտված վարչական վարույթի նկատմամբ,
- վարույթը վերսկսելու արդյունքում վերանայվում է՝ փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում վարչական ակտը,
- վարույթը վերսկսելու ինստիտուտը կիրառելի է միայն բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտերի առնչությամբ, և այդ ինստիտուտի կիրառմամբ կարող է վերանայվել միայն բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը:

Հիմք ընդունելով վարչական վարույթը վերսկսելու իրավակարգավորման վերոհիշյալ տարրերը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական վարույթի վերսկսումն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարչական ակտի ընդունմամբ արդեն իսկ ավարտված վարչական վարույթի վերաբացումն է, նորոգումն է, որի արդյունքում փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը (*յրեն «Ռուբեն Գևորգյան» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սևանի գարածքային հարկային տեսչության թիվ ՎԴ2/0302/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ Վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի ուժով կարող է բողոքարկվել վարչական

կարգով: Այդ դեպքում վարչական վարույթը, ի տարբերություն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51–րդ հոդվածով նախատեսված՝ վարույթի վերսկսմանը, ոչ թե նորոգվում է, այլ վարչական մարմինը, իրացնելով իր վերահսկողական լիազորությունը, ստուգում է վարչարարության օրինականությունը, որի արդյունքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76–րդ և 77–րդ հոդվածների կիրառմամբ իրավասու է հաստատել, վերացնել կամ փոփոխել բողոքարկված վարչական ակտը կամ ռեալ ակտը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ի տարբերություն բողոքարկման վարույթի, որի միջոցով ստուգվում է վարչարարության օրինականությունը, վերսկսման վարույթը նպատակ է հետապնդում ոչ թե վերստուգել վարչարարության օրինականությունը, այլ օրենքով նախատեսված հիմքերի դեպքում վերաբացել վարչական վարույթը՝ գնահատման առարկա դարձնելով այն հանգամանքները, որոնք առկա չեն եղել վարչական վարույթի ընթացքում և չէին կարող վարչական մարմնի կողմից հաշվի առնվել: Այն, որ վերսկսման վարույթը չի հետապնդում վարչարարության օրինականությունը ստուգելու նպատակ, բխում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51–րդ հոդվածից, որի համաձայն՝ վերսկսման վարույթի դեպքում վարչական մարմինը որոշում է ընդունում այլևս բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ թիվ ՎԴ2/0302/05/12 գործով կայացված որոշմամբ բացահայտել է «բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտեր» հասկացությունը, նշելով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51–րդ հոդվածում «բողոքարկման ոչ ենթակա ակտեր» ձևակերպումը վերաբերում է այն վարչական ակտերին, որոնք օրենքով սահմանված ժամկետում չեն բողոքարկվել ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով, ինչը նշանակում է, որ նշված դրույթը կիրառելի չէ այն դեպքերի վրա, երբ տվյալ վարչական ակտի իրավաչափությունը վիճարկվել է դատական կարգով, և առկա է դրա իրավաչափությունը գնահատող վերջնական դատական ակտ:

Այսպես, վերսկսման վարույթի դեպքում չի քննվում հիմնական վարչական ակտի իրավաչափությունը, քանի որ եթե անձը չի բողոքարկել վարչական ակտը, այսինքն՝ այն դարձել է անբողոքարկելի, ուստի նա այլևս չի կարող դրա իրավաչափությունը վիճարկել, այլ միայն կարող է վարչական վարույթի վերսկսման բացառապես օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պահանջել անբողոքարկելի վարչական ակտի վերանայում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51–րդ հոդվածով նախատեսված վարչական վարույթի վերսկսման հիմքերի վերլուծությունից բխում է, որ դրանք այնպիսի հանգամանքներ են կամ ապացույցներ, որոնք կան առաջացել են վարչական ակտի ընդունումից հետո, կան առաջացել են վարչական վարույթի ընթացքում, սակայն հայտնի չեն եղել կամ չէին կարող հայտնի լինել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձանց: Ուստի վարչական վարույթը վերսկսելու կամ բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը վերանայելու պահանջ ներկայացվելու դեպքում վարչական մարմինը ոչ թե քննում է վարչական ակտի իրավաչափության հարցը, այլ պարզում է դիմող անձի կողմից վկայակոչված վարչական վարույթը վերսկսելու հիմքերի առկայությունը և դրանց ազդեցությունը կայացված վարչական ակտի վրա:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ վերանայման արդյունքում կայացվելիք որոշման բովանդակությունը պայմանավորված է ոչ թե վարչական մարմնի հայեցողական լիազորությամբ, այլ բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտի վերանայման համար հիմք հանդիսացած հանգամանքի՝ այդ ակտի վրա ունեցած ազդեցությամբ:

Այսպիսով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի բովանդակությունից բխում է այն իրողությունը, որ վարչական մարմիններն իրավասու են ընդունելու նույն օրենքի 51-րդ, 53-րդ և 76-րդ հոդվածներով նախատեսված վարչական ակտերից որևէ մեկը:

Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայցի առարկան ընդհանուր առմամբ թե՛ նախկինում և թե՛ ներկայումս միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է, հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը: Հետևաբար վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննությունն իրականացնելիս դատարանը պետք է պարզի հայցի առարկայի նյութական հիմքը, այսինքն՝ վիճարկվող վարչական ակտի բնույթը, մասնավորապես այն, թե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ, 53-րդ և 76-րդ հոդվածներով նախատեսված վարչական ակտերից որն է վիճարկվում հայցվորի կողմից:

Վճռարեկ դատարանի գնահատմամբ նշված հարցի պարզումն էական նշանակություն ունի վիճարկման հայցի քննության համար, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ, 53-րդ և 76-րդ հոդվածներից յուրաքանչյուրով նախատեսված վարչական ակտի իրավական հիմքերը տարբեր են, հետևաբար դրանցից յուրաքանչյուրի իրավաչափությունը գնահատելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ վիճարկվող վարչական ակտի բնույթի մասին: Այսպես, եթե հիմնական վարչական ակտի («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով նախատեսված) դատական կարգով վիճարկման դեպքում ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա, իսկ բողոքարկման վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտի («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածով նախատեսված) վիճարկման դեպքում ստուգվում է վարչարարության օրինականության նկատմամբ վերադաս վարչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության իրավաչափությունը, ապա վարչական վարույթի վերսկսման արդյունքում ընդունված վարչական ակտի («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված) վիճարկման դեպքում ստուգվում է անբողոքարկելի վարչական ակտի վերանայման համար վարչական վարույթի վերսկսման օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը և վարչական մարմնի կողմից այդ հիմքի կիրառման և դրան համապատասխան որոշման կայացման իրավաչափությունը: Հետևաբար վարչական ակտի բնույթով պայմանավորված՝ փոխվում են նաև դրա իրավաչափության գնահատման հիմքերը:

Վճռարեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ հիմնական, բողոքարկման և անբողոքարկելի վարչական ակտի վերանայման (վերսկսման) վարույթների արդյունքում ընդունվում են բովանդակային առումով իրարից տարբերվող վարչական ակտեր: Այսպես, եթե հիմնական վարչական վարույթով ընդունվում է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանող, փոփոխող, վերացնող կամ ճանաչող վարչական ակտ, իսկ բողոքարկման վարույթի արդյունքում՝ հիմնական վարչական ակտի իրավաչափությունը գնահատող վարչական ակտ, ապա վերսկսման վարույթով օրենքով նախատեսված հիմքերի դեպքում վերաբացվում է վարչական վարույթը, որի արդյունքում ընդունվում է բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորց-

րած ճանաչելու վերաբերյալ վարչական ակտ՝ գնահատման առարկա դարձնելով այն հանգամանքները, որոնք առկա չեն եղել վարչական վարույթի ընթացքում և չէին կարող վարչական մարմնի կողմից հաշվի առնվել: Հետևաբար առանց պարզելու այն փաստը, թե վիճարկվող վարչական ակտը կոնկրետ ինչ վարույթի (հիմնական, բողոքարկման, վերանայման) արդյունքում է ընդունվել, հնարավոր չէ անդրադառնալ նաև այդ ակտի իրավաչափության գնահատմանը:

**26.12.2016 թ.**

**34. Աշոտ Մարտիրոսյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների, վարչ. գործ թիվ ՎԴ/1761/05/14**

**Էջ  
353–363**

**Խնդիր.** Արդյո՞ք վարչական մարմնի գործողության ոչ իրավաչափությունը հաստատված լինելու հանգամանքն ինքնին բավարար է պատճառված նյութական վնասի հատուցման համար:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Անդրադառնալով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման խնդրին, նախկինում կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որ պետք է առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որից հետո միայն անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադատության կամ դատական կարգով (որն Մեծ Հայրապետյանն ընդդեմ ՀՀ Կուրայքի մարզի սոցիալական ծառայությունների Հրազդանի տարածքային գործակալության պետ Վարդան Միրզոյանի թիվ ՎԴ/3280/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել հետևյալը.

Իրավական պետությունը պահանջում է արդյունավետ իրավական պաշտպանության ապահովում, ինչը նշանակում է, որ մասնավոր անձինք պետք է պետության ոչ իրավաչափ գործողություններից կամ անգործությունից պաշտպանվելու հնարավորություն ունենան: Ընդ որում, իրավական պաշտպանությունը ոչ միայն ենթադրում է, որ հետագայում հնարավոր կլինի վերստուգել պետության գործողությունների կամ անգործության իրավաչափությունը, այլ նաև այդպիսի գործողության կամ անգործության հետևանքով առաջացած վնասը կհատուցվի:

Արդյունավետ իրավական պաշտպանության ապահովման նպատակով օրենսդիրն ամրագրել է ոչ իրավաչափ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցման իրավական հնարավորություն՝ սահմանելով վարչական մարմինների պատասխանատվության վերաբերող այնպիսի իրավակարգավորում, որի միջոցով ապահովվում է անձանց կրած վնասների հատուցումը:

Վարչական մարմինների պարտականությունների խախտման հետևանքով անձանց կրած վնասների հատուցման վերաբերյալ դրույթներ ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն երաշխավորել է պետության ոչ իրավաչափ գործողություններից պաշտպանվելու իրական հնարավորություն, այլ նաև՝ այդ գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու և օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում հատուցում ստանալու իրական հնարավորություն:

Որևէ պահանջ ներկայացնելու համար յուրաքանչյուր օրենք սահմանում է որոշակի նախապայմաններ՝ այդ պահանջի կատարման համար իրական հնարավորություն ստեղծելու և դրանով պաշտպանվող իրավունքի իրացումն ապահովելու համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանվել են վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու պայմանները: Այսպես՝ վարչական մարմինների վարչարարության արդյունքում պետության պատասխանատվությունը ծագում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- իրականացվել է ոչ իրավաչափ (իսկ նույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ) վարչարարություն,
- պատճառվել է վնաս,
- իրականացված վարչարարության և պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ:

Ինչ վերաբերում է վարչարարություն իրականացրած անձի մեղքին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ ելնելով վարչարարություն իրականացնող անձի գործառնությունների բնույթից՝ վերջինիս կողմից իրականացված իշխանական գործողության արդյունքում անձին պատճառված վնասի հատուցման դեպքում վարչարարություն իրականացրած անձի մեղքը ենթադրվում է:

Այսպիսով, ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Այսինքն՝ վարչական մարմինների պարտականությունների խախտման և վնասի պատճառման միջև պետք է առկա լինի իրավական նշանակություն ունեցող պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝ վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելը դեռևս չի նշանակում, որ անձը վնասը կրել է հենց վարչարարության հետևանքով. անհրաժեշտ է, որ վարչարարության և պատճառված վնասի միջև առկա լինի անմիջական պատճառահետևանքային կապ: Պատճառահետևանքային կապի հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին գնահատման առարկա պետք է դառնա, և դրա առկայությունը որոշելիս առանցքային պետք է համարվի այն գաղափարը, որ պատճառահետևանքային կապի առկայության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ վնասի առաջացումը ոչ իրավաչափ վարչարարության անխուսափելի և անմիջական արդյունքն է: Հետևաբար ոչ իրավաչափ վարչարարության և առաջացած վնասների միջև պատճառահետևանքային կապ կարող է առկա լինել, եթե վնասի առաջացումը հանդիսանում է իրականացված վարչարարության օբյեկտիվորեն անհրաժեշտ և ուղղակի արդյունքը: Եթե բացասական հետևանքները կարող էին առաջանալ նաև առանց ոչ իրավաչափ վարչարարության (իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության), ուրեմն դրանց միջև պատճառահետևանքային կապը բացակայում է

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ նշված պայմաններից թեկուզ մեկի բացակայությունը բացառում է վնասի հատուցման պահանջի բավարարման հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման եղանակներն են հետևանքների վերացումը և դրամական միջոցներով հատուցումը, ընդ որում, նույն օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ դրամական միջոցներով հատուցումը կիրառվում է միայն սուբսիդիար, այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը:

Հետևանքների վերացման պահանջի իրավունքը պարտավորեցնում է պետությանը վերացնելու ոչ իրավաչափ ձևով ի վնաս անձի փոփոխված փաստացի

դրությունը կամ վերականգնել նախկին դրությունը, կամ էլ առնվազն ստեղծել դրան համարժեք դրություն: Միայն այն դեպքում, երբ դա անհնար է կամ անարդյունավետ, պետությունը կարող է վնասը հատուցել դրամական միջոցներով: Դրամական միջոցներով հատուցման պահանջը նպատակ է հետապնդում հատուցելու վնաս կրած անձի գույքի՝ դրամով արտահայտված այն նվազեցումը, որը պատճառվել է վարչական մարմնի վարչարարության արդյունքում: Այդ նվազեցումը ձևավորվում է վնաս կրած անձի՝ խախտման պահին առկա գույքային դրության և այն գույքային դրության տարբերությունից, որը կառաջանար, եթե վարչական մարմինը նման վարչարարություն չիրականացներ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ընդհանուր առմամբ վարչարարությանը պատճառված վնասի հատուցման պայմանը վարչական մարմնի իրավական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելն է և դրանց ու պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապը, իսկ դրամական միջոցներով հատուցելու պայման է նաև նախկին դրությունը վերականգնելու կամ առնվազն դրան համարժեք դրություն ստեղծելու անհնարինությունը կամ անարդյունավետությունը, այն է՝ եթե վարչարարությանը առաջացած հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն նշված պայմանների առկայության պարագայում է հնարավոր իրականացնել վնասի հատուցում: Հետևաբար վնասի հատուցման պահանջ քննող վարչական մարմինը կամ դատարանը նախևառաջ պարտավոր են պարզել վերը նշված բոլոր պայմանների առկայությունը, ինչը հնարավորություն կտա ճշգրտորեն որոշելու պատճառված վնասի չափը, հատուցման եղանակները և վնասի հատուցում իրականացնելու համար այլ կարևոր հանգամանքներ:

## ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ

22.04.2016 թ.

35. Անահիտ Սարգսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության և մյուսների, վարչ. գործ թիվ ՎԴ/0794/05/14

Էջ  
364–374

**Խնդիր.** – Արդյո՞ք պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելուց հետո կատարողական թերթը կրկին կատարման ներկայացվելուց հետո օրենքով նախատեսված պայմանների պահպանման դեպքում կատարողական վարույթը վերսկսվում է, թե՞ հարուցվում է նոր կատարողական վարույթ,

– պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելու դեպքում կրկին կատարման ներկայացրած կատարողական թերթի հիման վրա կարող է արդյո՞ք նոր կատարողական վարույթ հարուցվել, եթե կատարողական թերթը կրկին կատարման է ներկայացվել դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկամյա ժամկետը լրանալուց հետո, և առկա չէ կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակ-

տերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան, իսկ հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը: Դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը (*Կրեն ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնին ընդդեմ Անուշ Իսայիրյանի թիվ ՎԴ6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի մեկ այլ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նշված ընդհանուր ժամկետից բացի՝ որևէ այլ ժամկետի բացակայության պայմաններում կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար նույնպես պետք է հիմք ընդունվի վերոհիշյալ մեկ տարվա ժամկետը, քանի որ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելը, ըստ էության, կատարողական թերթը կատարման ներկայացնելն է՝ առանց որևէ էական առանձնահատկության: Հետևաբար տվյալ դեպքում նույնպես կատարողական թերթը պետք է կատարման ներկայացվի մեկ տարվա ընթացքում: Ուստի նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված, ինչն էլ հիմք է այն անվավեր ճանաչելու համար (*Կրեն ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի թիվ ՎԴ4/0104/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը կատարողական վարույթն ավարտելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով, իսկ կատարողական վարույթը կասեցնելու հետ կապված իրավահարաբերությունները՝ նույն օրենքի 37-րդ, 38-րդ, 39-րդ հոդվածներով՝ սահմանելով կատարողական վարույթն ավարտելու և կասեցնելու հիմքերը և դրանց իրավական հետևանքները: Վկայակոչված հոդվածներում ամրագրված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ կատարողական վարույթն ավարտելը և կատարողական վարույթը կասեցնելը՝ որպես ընթացակարգային ինստիտուտներ, առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ. կատարողական վարույթը կասեցնելուց հետո կասեցման հիմք հանդիսացած հանգամանքների վերանալու դեպքում կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, իսկ կատարողական վարույթն ավարտելու դեպքում, որպես ընդհանուր կանոն, այն չի կարող կրկին վերսկսվել: Նշված ընդհանուր կանոնից բացառությունը նախատեսված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությամբ, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. ավարտված կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, եթե այն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Փաստորեն, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը սահմանել է, որ կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել միայն հետևյալ երկու դեպքերում.

1. եթե կատարողական վարույթը կասեցվել է, և կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները վերացել են,

2. եթե կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Կատարողական վարույթն ավարտելու իրավական հետևանքները սահմանված են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելու դեպքում, որպես ընդհանուր կանոն, կատարողական թերթը վերադարձվում է պահանջատիրոջը (նրա ժառանգին) և կատարողական վարույթն ավարտելն ու կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելն արգելք չէ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար: Նշված ընդհանուր կանոնից բացառությունն այն է, որ կատարողական վարույթն ավարտելու դեպքում կատարողական թերթը չի վերադարձվում պահանջատիրոջը, եթե կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի հիմքով:

Այսպիսով, ընդհանուր կանոնի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելու և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելու դեպքում կատարողական թերթը կարող է ներկայացվել նոր կատարման. այդ դեպքում ավարտված կատարողական վարույթը չի կարող կրկին վերսկսվել, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը կատարողական վարույթն ավարտելուց և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելուց հետո այն կրկին (նոր) կատարման ներկայացնելու դեպքում կատարողական վարույթը վերսկսելու վերաբերյալ որևէ իրավակարգավորում չի պարունակում: Կատարողական վարույթն ավարտելուց և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելուց հետո այն նոր կատարման ներկայացվելու արդյունքում կարող է հարուցվել նոր կատարողական վարույթ՝ օրենքով նախատեսված որոշակի պայմանների պահպանված լինելու դեպքում:

Օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետները՝ ամբազրեղով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կարող է կատարման ներկայացվել տվյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում: Մինևույն ժամանակ օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել է հետևյալ կանոնը. պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտելու դեպքում կատարողական թերթը կարող է կրկին կատարման ներկայացվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետում, մասնավորապես՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելը, ըստ էության, կատարողական թերթը կատարման ներկայացնելն է՝ առանց որևէ էական տարբերության: Ուստի կատարողական թերթը կրկին (նոր) կատարման ներկայացնելու դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է կատարել մինևույն գործողությունները, ինչ որ կատարողա-



կան թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու պարագայում: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի հիմքով հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, եթե բացակայում է կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Իսկ կատարողական թերթը պահանջատիրոջը վերադարձնելու՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում կրկին (նոր) կատարման ներկայացված կատարողական թերթի հիման վրա հարկադիր կատարողը պարտավոր է նույն օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցել նոր կատարողական վարույթ: Հետևաբար կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու յուրաքանչյուր դեպքում պահանջատերը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ վերադարձված և կրկին ներկայացված կատարողական թերթի հիման վրա կարող է նոր կատարողական վարույթ հարուցվել միայն այն դեպքում, երբ կատարողական թերթը կրկին ներկայացնելիս պահանջատերը պահպանել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված մեկամյա ժամկետը, որի հաշվարկման սկիզբն է կատարման ենթակա դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը, կամ առկա է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելուց հետո կատարողական թերթը կրկին (նոր) կատարման ներկայացնելու հետևանքով ծագող իրավահարաբերությունների էությունը հանգում է, մասնավորապես, հետևյալին.

1. պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելուց հետո կատարողական թերթը կրկին կատարման ներկայացվելուց հետո օրենքով նախատեսված պայմանների պահպանման դեպքում կատարողական վարույթը ոչ թե վերսկսվում է, այլ կարող է հարուցվել նոր կատարողական վարույթ,

2. պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելու դեպքում կրկին կատարման ներկայացրած կատարողական թերթի հիման վրա կարող է նոր կատարողական վարույթ հարուցվել, եթե կատարողական թերթը կրկին կատարման է ներկայացվել դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում,

3. պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելու դեպքում դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամյա ժամկետի ավարտից հետո կրկին կատարման ներկայացված կատարողական թերթի հիման վրա նոր կատարողական վարույթ չի կարող հարուցվել, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

26.12.2016 թ.

36. Ջուլիետա Գյունաշյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, վարչ. գործ թիվ ՎԴ/3342/05/13

Էջ

375–385

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետային սահմանափակման իրավակարգավորումների առանձնահատկություններին, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով ավարտված կատարողական վարույթը վերսկսելու իրավական հնարավորության հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Նախկինում կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նշված ընդհանուր ժամկետից բացի որևէ այլ ժամկետի բացակայության պայմաններում կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար նույնպես պետք է հիմք ընդունվի վերոհիշյալ մեկ տարվա ժամկետը, քանի որ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելը, ըստ էության, կատարողական թերթը կատարման ներկայացնելն է՝ առանց որևէ էական առանձնահատկության: Հետևաբար տվյալ դեպքում նույնպես կատարողական թերթը պետք է կատարման ներկայացվի մեկ տարվա ընթացքում: Ուստի նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված (տես ՀՀ Արևմտիկի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արևմտիկի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի թիվ ՎԴ4/0104/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24.03.2011 թվականի թիվ ՀՕ-71-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 02.05.2011 թվականին), ի թիվս այլնի, փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 31-րդ և 41-րդ հոդվածներում:

Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում 1-ին մասը «Կատարողական թերթը» բառակապակցությունից հետո լրացվել է «առաջին անգամ» արտահայտությամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով. «3. Սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով պահանջատիրոջը վերադարձված կատարողական թերթը չի կարող կրկին կատարման ներկայացվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածում ևս կատարվել են փոփոխություններ, ինչի արդյունքում նշված հոդվածի 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Կատարողական վարույթն ավարտելու դեպքում կատարողական թերթը վերադարձվում է պահանջատիրոջը, բացառությամբ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ և 5-րդ կետերով սահմանված դեպքերի: Եթե կատարողական վարույթն ավարտվում է պահանջատեր քաղաքացու մահվան պատճառով, ապա կատարողական թերթը վերադարձվում է մահացածի ժառանգներին՝ նրանց գրավոր պահանջի դեպքում:

Կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը (որս ժառանգին) վերադարձնելն արգելք չէ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար:

Մույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արգելքի վերացման դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին»:

Վերը նշված օրենսդրական փոփոխություններից առաջ և դրանցից հետո գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 41-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

Մինչև 02.05.2011 թվականը գործող կարգավորումներով կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված է եղել ընդհանուր ժամկետ՝ մեկ տարի, որի հաշվարկը սկսվում էր դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Ընդ որում, կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու կամ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար որևէ տարբերակում նշված ժամանակահատվածում գործող իրավական կարգավորումներով նախատեսված չի եղել, որպիսի պայմաններում կատարողական թերթը կատարման ներկայացնելու մինչև մեկ տարվա ժամկետային սահմանափակումը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումների համաձայն, տարածվում էր ինչպես կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու, այնպես էլ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելուց հետո նոր կատարման ներկայացնելու բոլոր դեպքերի վրա:

Մինչդեռ ի տարբերություն մինչև 02.05.2011 թվականը գործող իրավակարգավորումների՝ 02.05.2011 թվականից հետո գործող իրավակարգավորումներով օրենսդիրը որդեգրել է այն մոտեցումը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեկ տարվա ժամկետային սահմանափակումը նախատեսված է միայն հետևյալ դեպքերի համար.

- երբ կատարողական թերթն առաջին անգամ է ներկայացվում կատարման,
- երբ կատարողական թերթը նոր կատարման է ներկայացվում կատարողական թերթը վերադարձնելու մասին պահանջատիրոջ կողմից դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտելուց և կատարողական թերթը վերադարձնելուց հետո:

Այլ կերպ ասած՝ ի տարբերություն մինչև 02.05.2011 թվականը գործող կարգավորումների, երբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետային սահմանափակումն ընդհանուր էր և տարածվում էր կատարողական թերթը կատարման ներկայացնելու բոլոր դեպքերի վրա, 02.05.2011 թվականից հետո գործող իրավակարգավորումներով նշված սահմանափակումը կրում է մասնավոր բնույթ և տարածվում է բացառապես օրենքով նախատեսված՝ վերը նշված դեպքերի վրա:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 02.05.2011 թվականից հետո գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար ընդհանուր ժամկետներ այլևս սահմանված չեն, իսկ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված մեկամյա ժամկետային սահմանափակումը 02.05.2011 թվականից հետո կիրառելի է բացառապես վերը նշված դեպքերի նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով կատարողական թերթը կատարման ներկայացնելու հարաբերությունների նկատմամբ կիրառելի օրենսդրության խնդրին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ.

- այն դեպքերում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից հաշվարկվող մեկ տարվա ժամկետը լրացել է մինչև ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24.03.2011 թվականի թիվ ՀՕ-71-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, այն է՝ մինչև 02.05.2011 թվականը, ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բոլոր դեպքերի համար կիրառման ենթակա է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը՝ մինչև 02.05.2011 թվականը գործող խմբագրությամբ, և ըստ այդմ, ցանկացած դեպքում դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից հաշվարկված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, եթե առկա չէ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը:
- այն դեպքերում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից հաշվարկվող մեկ տարվա ժամկետը լրացել կամ լրանում է ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24.03.2011 թվականի թիվ ՀՕ-71-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, ապա կիրառման ենթակա է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը՝ 02.05.2011 թվականից գործող խմբագրությամբ, և ըստ այդմ, կատարողական թերթը կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետային սահմանափակումը տարածվում է միայն այն դեպքերի վրա, երբ կատարողական թերթը կատարման է ներկայացվում առաջին անգամ, կամ նոր կատարման է ներկայացվում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով պահանջատիրոջը վերադարձված կատարողական թերթը: Պահանջատիրոջը վերադարձված կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու մյուս դեպքերի վրա օրենքով սահմանված մեկամյա ժամկետային սահմանափակումը չի տարածվում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հայցի ապահովման վերաբերյալ տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթն ուղղված է հայցի ապահովման միջոցներ կիրառելուն, որոնց ի կատար ածումը սպառում է կատարողական թերթով սահմանված պահանջը, հետևաբար կատարողական վարույթի խնդիրն իրականացված է, որպիսի պարագայում այն չի կարող նորոգվել վճռի կատարման համար: Հետևաբար հայցի ապահովման միջոց կիրառելուն ուղղված կատարողական վարույթի շրջանակներում չեն կարող իրականացվել գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարմանն ուղղված գործողություններ:

Ինչ վերաբերում է գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարմանը, ապա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կատարողական թերթ տալու առանձին հիմք է, և հաշվի առնելով, որ կատարողական վարույթի հարուցման հիմքը կատարողական թերթն է, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տրված կատարողական թերթի հիման վրա պետք է հարուցվի նոր կատարողական վարույթ:

**ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ**

22.07.2016 թ.

37. Ֆրունզիկ և Մարինե Փարենուզյաններն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանման և մյուսների, վարչ. գործ թիվ ՎԴ-6/0506/05/13

Էջ  
386–394

*Խնդիր.* Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ժամանակ թույլ տրված ոչ տեխնիկական բնույթի սխալն ուղղելու համար անհրաժեշտ է արդյոք գրանցված իրավունքի սուբյեկտի (շահագրգիռ անձանց) գրավոր համաձայնությունն այն պայմաններում, երբ ոչ տեխնիկական բնույթի սխալն առաջացել է պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը չի բացառել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթի ընթացքում սխալներ թույլ տալու հնարավորությունը՝ սահմանելով այդ սխալների ուղղման (շտկման, վերացման) կարգը: Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթում թույլ տրված սխալներն օրենսդիրը դասակարգել է երկու խմբի՝ 1) տեխնիկական բնույթի և 2) ոչ տեխնիկական բնույթի:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի իմաստով ոչ տեխնիկական բնույթի են համարվում պետական գրանցման ժամանակ թույլ տրված այն սխալները, որոնց ուղղումը հանգեցնում է՝

- գույքի պատկանելության փոփոխության,
- գույքի նկատմամբ իրավունքների բնույթի փոփոխության,
- գույքի նկատմամբ իրավունքների ծավալի փոփոխության,
- գույքի մակերեսի չափերի փոփոխության,
- գույքի կադաստրային արժեքի փոփոխության:

Վկայակոչված օրենքի համաձայն՝ տեխնիկական բնույթի են համարվում պետական գրանցման ժամանակ թույլ տրված այն սխալները, որոնց ուղղումը չի փոփոխում գույքի պատկանելությունը, գույքի նկատմամբ իրավունքների բնույթը, ծավալը, չի հանգեցնում գույքի մակերեսի չափերի կամ գույքի կադաստրային արժեքի փոփոխության:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթում թույլ տրվող սխալների նման դասակարգման գործնական նշանակությունն այն է, որ տեխնիկական և ոչ տեխնիկական բնույթի սխալների ուղղումը կատարվում է օրենքով սահմանված տարբեր ընթացակարգերով: Այսպես, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթում թույլ տրվող տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել գրանցող մարմնի պաշտոնատար անձի նախաձեռնությամբ՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով գրանցված իրավունքների սուբյեկտներին, իսկ ոչ տեխնիկական բնույթի սխալները, ընդհանուր կանոնի համաձայն, կարող են ուղղվել միայն շահագրգիռ անձանց գրավոր համաձայնության առկայության դեպքում: Փաստորեն, ի տարբերություն տեխնիկական բնույթի սխալների, որոնց ուղղման համար որևէ շահագրգիռ անձի համաձայնություն չի պահանջվում, ոչ տեխնիկական բնույթի սխալների ուղղման համար, որպես կանոն, անհրաժեշտ է շահագրգիռ անձանց գրավոր համաձայնության առկայություն: Ընդ որում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6–րդ մա-

սում օրենսդիրը սահմանել է, որ գրանցված իրավունքի սուբյեկտի համաձայնության բացակայության դեպքում ոչ տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել դատական կարգով:

Ոչ տեխնիկական բնույթի սխալների ուղղման ընթացակարգին վերաբերող վերոնշյալ ընդհանուր կանոնից օրենսդիրը կատարել է մեկ բացառություն, որը նախատեսված է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ: Նշված իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ ոչ տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել նաև առանց գրանցված իրավունքի սուբյեկտի (շահագրգիռ անձանց) համաձայնության առկայության, եթե այդ ոչ տեխնիկական բնույթի սխալներն առաջացել են պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով: Այդ դեպքում ոչ տեխնիկական բնույթի սխալների ուղղումը կատարվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ տեխնիկական բնույթի սխալների ուղղման ընթացակարգով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով գրանցված իրավունքի սուբյեկտներին: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը նախատեսել է գրանցման ժամանակ թույլ տրված ոչ տեխնիկական բնույթի սխալներն ուղղելու հնարավորություն նաև առանց գրանցված իրավունքի սուբյեկտի համաձայնության առկայության, եթե այդ ոչ տեխնիկական բնույթի սխալներն առաջացել են պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ, եթե անձը ոչ տեխնիկական բնույթի սխալներն ուղղելու պահանջի հիմքում դնում է այն փաստը, որ այդ սխալներն առաջացել են պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում՝ նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով, ապա Կահաստրի միակ պարտականությունն այդ հիմքի առկայությունը ստուգելն է, այն է՝ իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում առկա տվյալների հետ համադրելն է առանց կողմի վրա լրացուցիչ պարտականություն դնելու, այն է՝ գրանցված իրավունքի սուբյեկտների համաձայնությունը ներկայացնելու:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածում սահմանել է գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման ընթացքում թույլ տրված սխալների ուղղման հետևյալ կանոնները.

1) տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել առանց գրանցված իրավունքի սուբյեկտի կամ որևէ շահագրգիռ անձի համաձայնության առկայության՝ այդ մասին գրավոր իրազեկելով գրանցված իրավունքի սուբյեկտներին,

2) որպես ընդհանուր կանոն՝ ոչ տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել միայն գրանցված իրավունքի սուբյեկտի կամ այլ շահագրգիռ անձանց գրավոր համաձայնության առկայության դեպքում, իսկ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում ոչ տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել դատական ակտի հիման վրա,

3) որպես բացառություն՝ ոչ տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել առանց գրանցված իրավունքի սուբյեկտի կամ որևէ շահագրգիռ անձի համաձայնության առկայության՝ այդ մասին գրավոր իրազեկելով գրանցված իրավունքի սուբյեկտներին, եթե այդ ոչ տեխնիկական բնույթի սխալներն առաջացել են պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող

փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ բոլոր դեպքերում գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթում թույլ տրված սխալների ուղղում կատարելու հիմքն այդ սխալներն ուղղելու (շտկելու, վերացնելու) համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերի առկայությունն է, իսկ սխալների ուղղումը կարող է նախաձեռնվել ինչպես գրանցված իրավունքների սուբյեկտի, այնպես էլ գրանցող մարմնի պաշտոնատար անձի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման ընթացքում թույլ տրված սխալների ուղղման պահանջ ներկայացված լինելու դեպքում Դատարանը պարտավոր է նախ անդրադարձնալ թույլ տրված սխալների բնույթին, ապա «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված՝ թույլ տրված սխալների ուղղման կանոնների կիրառման հարցին:

**02.12.2016 թ.**

**38. Արմենակ Ղալեչյանն ընդդեմ Ճամբարակի քաղաքապետարանի և մյուսների, վարչ. գործ թիվ ՎԴ2/0462/05/13**

**Էջ  
395–404**

*Խնդիր.* Արդյո՞ք համայնքի տնտեսությունների գրքի որոշակի համարի տակ կատարված գրանցումը (գրառումը) Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտ է, և այդ գրանցման (գրառման) վերացման պահանջը ենթակա է քննության դատարանում:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ համայնքի տնտեսությունների գրքից քաղվածքը՝ որպես անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթուղթ, հիմք է հանդիսանում այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ տնտեսությունների գրքից քաղվածքը, այլ տվյալներից բացի, պարունակում է նշում այն անձանց մասին, ում սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման տվյալ անշարժ գույքի նկատմամբ: Ընդ որում, տնտեսությունների գրքից քաղվածքում նշվում են միայն այն անձանց անունները, ովքեր գրանցված (հաշվառված) են տնտեսությունների գրքում որպես սեփականատեր: Հետևաբար տնտեսությունների գրքում որոշակի անձի տվյալների վերաբերյալ կատարված գրանցումը (գրառումը) այդ անձին ընձեռում է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու իրավական հնարավորություն: Այլ կերպ ասած՝ տնտեսությունների գրքում կատարված գրանցումն (գրառումը) արտացոլում է այդ գրքից տրված քաղվածքում, ինչն էլ, որպես անշարժ գույքի առանձին միավորի նկատմամբ իրավունք հաստատող փաստաթուղթ, հիմք է հանդիսանում սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

Վարչական ակտին բնորոշ հատկանիշների վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

1) համայնքի տնտեսությունների գրքում կատարված գրանցումը (գրառումը) անհատական ակտ է, քանի որ վերաբերում է որոշակի ֆիզիկական անձանց, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) համայնքի տնտեսությունների գրքում կատարված գրանցումը (գրառումը) ունի արտաքին ներգործություն, քանի որ առնչվում է ֆիզիկական անձանց, ովքեր կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չեն գտնվում այն ընդունած մարմնի հետ, այսինքն՝ կարգավորում է վարչական մարմնի և ֆիզիկական անձանց միջև ծագած իրավահարաբերությունները,

3) համայնքի տնտեսությունների գրքում կատարված գրանցումը (գրառումը) ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում, քանի որ այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրավական նորմերի հիման վրա կատարված միակողմանի կարգադրություն է՝ ուղղված ֆիզիկական անձանց,

4) համայնքի տնտեսությունների գրքում կատարված գրանցումը (գրառումը) ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձանց առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը, այն է՝ որոշակի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու՝ վերջիններիս իրավական հնարավորության ճանաչմանը,

5) համայնքի տնտեսությունների գրքում կատարված գրանցումը (գրառումը) ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական անձանց համար, քանի որ վարչական մարմինը, ճանաչելով անձանց մոտ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու իրավունքի առկայությունը, դրանով իսկ բարելավում է այդ անձանց իրավական և փաստացի դրությունը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ համայնքի տնտեսությունների գրքում կատարված գրանցումը (գրառումը) Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտ է, քանի որ այն համապատասխանում է վարչական ակտին բնորոշ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր որակական հատկանիշներին: Այսինքն՝ համայնքի տնտեսությունների գրքում կատարված գրանցման (գրառման) վերացման պահանջը կարող է հանդիսանալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի առարկա ու քննվել այդ հայցատեսակին համապատասխան:

### ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

26.12.2016 թ.

39. Մեծեր Կակոյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության, վարչ. գործ թիվ ՎԴ/0811/05/15

Էջ  
405–415

*Խնդիր.* Այն դեպքում, երբ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ օտարվում է անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույք, արդյո՞ք «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով առաջին օտարված գույքի ձեռքբերման ժամանակահատվածը նշանակություն ունի երկրորդ և



ավելի թվով օտարումներն ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք նրակելու համար:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որի առանձնահատկություններից է այն, որ վերջինս կիրառվում է տնտեսական գործունեության բավականին լայն շրջանակում ընդգրկված գործարքների նկատմամբ, որոնք «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են ապրանքի մատակարարում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտ, որպես կանոն, ձեռնարկատիրական գործունեություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) իրականացրած գործարքներն են: Միևնույն ժամանակ, սակայն, բացի վերը նշված անձանց կողմից իրականացրած գործարքների, օրենսդիրն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով որդեգրել է այն մոտեցումը, որ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող մի շարք գործարքներ որոշակի պայմանների առկայության դեպքում ևս «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտարկվում են որպես ապրանքի մատակարարում, հետևաբար՝ նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ: Նշված գործարքներից են, մասնավորապես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ սահմանված գործարքները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությունը մեկնաբանելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ իրավական ակտը դրանում պարունակող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար՝ նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- Թե՛ն առաջին, թե՛ն հաջորդող գործարքներով տեղի է ունեցել անձի սեփականությունը հանդիսացող գույքի օտարում:
- Թե՛ն առաջին, թե՛ն հաջորդող օտարումները կատարվել են որևէ ձևով հատուցման դիմաց, այսինքն՝ գույքի օտարման դիմաց օտարողը ստացել է կամ պետք է ստանա վճար կամ այլ հանդիպական կատարում: Հետևաբար, օրինակ, եթե անձն իր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի որևէ գույքն օտարել է նվիրատվության գործարքով, որի դեպքում գույքն օտարողը որևէ վճար կամ այլ հանդիպական կատարում չի ստանում, ապա այդպիսի գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի քննարկվող դրույթի իմաստով չի կարող համարվել ապրանքի մատակարարում: Միաժամանակ, եթե նույն օրացուցային տարում նվիրատվության գործարքը նույն տեսակի գույքի օտարման առաջին գործարքն է, ապա դրան հաջորդող նույն տեսակի գույքի՝ հատուցման դիմաց կատարվող օտարման գործարքը ևս «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի քննարկվող դրույթի իմաստով չի կարող համարվել ապրանքի մատակարարում: Այս դեպքում ապրանքի մատակարարում կարող են համարվել նույն օրացուցային տարում հատուցման դիմաց նույն տեսակի գույքի օտարման առաջին գործարքին հաջորդող հատուցման դիմաց օտարման երկրորդ և հաջորդող գործարքները:

- Գործարքով օտարվել է այնպիսի տեսակի գույք, որպիսի տեսակի գույք (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենա, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողեր, ավտոտնակ) նախկինում մեկ օրացույցային տարվա ընթացքում արդեն օտարվել է նույն անձի կողմից (այսուհետև՝ նույն տեսակի գույք): Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ քննարկվող իրավական նորմում կիրառված «նույն տեսակի գույք» եզրույթը նշանակում է միանման հատկանիշներով օժտված, միևնույն նպատակային նշանակություն ունեցող գույք: Այսպես, օրինակ, բնակարանը և առանձնատունը չեն կարող քննարկող նորմի իմաստով համարվել նույն տեսակի գույք, քանի որ, թեև դրանք երկուսն էլ ունեն միևնույն նպատակային նշանակությունը, այն է՝ նախատեսված են մարդկանց բնակվելու համար, այնուամենայնիվ, դրանք չունեն միանման հատկանիշներ, քանի որ բնակարանը շենքում գտնվող առանձին տարածք է՝ բաղկացած բնակելի և օժանդակ մասերից, օժտված կոմունալ հարմարություններով, իսկ առանձնատունն առանձին հողամասի վրա կառուցված, բնակելի, օժանդակ և կոմունալ հարմարություններով օժտված շինություն է: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ, օրինակ, առաջին գործարքով հատուցման դիմաց օտարվել է բնակարան, իսկ երկրորդ գործարքով՝ առանձնատուն, ապա «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով առանձնատունն օտարելու գործարքը չի կարող համարվել ապրանքի մատակարարում, քանի որ առկա չէ նույն տեսակի գույքի երկրորդ և հաջորդող օտարում:
- Գործարքը նույն տեսակի գույքի՝ մեկ օրացույցային տարվա ընթացքում օտարման հերթական գործարք է, որը նույն անձի կողմից իրականացվում է երկրորդ կամ ավելի թվով անգամ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ օրացույցային տարին ներառում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը: Այսինքն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով երկրորդ և հաջորդող գործարքներն ապրանքի մատակարարում համարվելու համար անհրաժեշտ է, որպեսզի նույն տեսակի թե՛ առաջին, թե՛ երկրորդ և հաջորդող գործարքներն իրականացված լինեն միևնույն թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
- Գործարքով օտարվել է գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մինչև մեկ տարվա ընթացքում: Այսինքն՝ որպեսզի երկրորդ կամ հաջորդող գործարքով նույն տեսակի գույքի օտարման գործարքը համարվի ապրանքի մատակարարում, օտարվող գույքը պետք է ձեռք բերված լինի օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե գործարքը բավարարում է վերը նշված բոլոր պայմաններին, ապա այն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք, իսկ եթե նշված պայմաններից որևէ մեկը բացակայում է, ապա գործարքը չի կարող համարվել ապրանքի մատակարարում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրի կողմից որդեգրած մոտեցման համաձայն՝ ապրանքի մատակարարում համարվում են մեկ օրացույցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երկրորդ և հետագա գործարքները, եթե օտարվող գույքը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարել քննարկել հետևյալ հնարավոր իրավիճակները.

Այսպես, եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացրել է նույն տեսակի գույքի օտարման երկու գործարք, որոնցից առաջինով օտարել է այն գույքը, որը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարուց ավելի վաղ, իսկ երկրորդ գործարքով օտարել է այն գույքը, որը ձեռք է բերել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, ապա, ըստ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վերջ նշված կարգավորման՝ օտարման երկրորդ գործարքը դիտարկվում է որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք:

Այն դեպքում, սակայն, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկ օրացուցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարում է այն գույքը, որը ձեռք է բերել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ երկրորդ գործարքով՝ այն գույքը, որը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարուց ավելի վաղ, ապա օրենսդրի որդեգրած մոտեցման համաձայն՝ այս իրավիճակում երկրորդ գործարքը չի կարող դիտարկվել որպես ապրանքի մատակարարում: Ընդ որում, նման պայմաններում առաջին գործարքը նույնպես չի կարող դիտարկվել որպես ապրանքի մատակարարում, քանի որ քննարկվող իրավակարգավորման համաձայն՝ ապրանքի մատակարարում է երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը:

Առաջնորդվելով նույն տրամաբանությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ միայն այն փաստը, որ մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երկրորդ գործարքը համարվել է ապրանքի մատակարարում, ինքնին բավարար չէ, որպեսզի նույն օրացուցային տարում նույն տեսակի երրորդ գույքի օտարման գործարքը ևս դիտարկվի որպես ապրանքի մատակարարում: Մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երրորդ գործարքը ևս ապրանքի մատակարարում համարելու համար անհրաժեշտ է, որ, այդ գործարքով օտարվող գույքը ձեռք բերված լինի օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ նախատեսված գույքի օտարման երկրորդ կամ հաջորդող գործարքն ապրանքի մատակարարում համարելու տեսանկյունից էական է, որ տվյալ գործարքով մեկ օրացուցային տարում թվով երկրորդ կամ հաջորդող անգամ օտարվի այնպիսի գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ նույն օրացուցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարված գույքը ֆիզիկական անձի կողմից ձեռք բերելու ժամանակահատվածը որևէ նշանակություն չունի նույն օրացուցային տարվա ընթացքում հետագայում նույն տեսակի գույքն օտարելու գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար:

Այլ կերպ ասած՝ գործարքն ապրանքի մատակարարում համարելու համար էական է ոչ թե դրան նախորդող գործարքներով օտարված նույն տեսակի գույքի ձեռքբերման, այլ հենց տվյալ գործարքով օտարվող գույքի ձեռքբերման ժամանակահատվածը:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է օրենսդրի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությունում առկա «եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում» արտահայտության տառացի մեկնաբանությունից, որում օրենսդիրն օգտագործել է «տվյալ գույքի» արտահայտությունը՝ նկատի ունենալով քննարկվող գործարքով օտարվող գույքը, այլ ոչ թե նույն օրացուցային տարվա ընթացքում նախկինում օտարված գույքը:

Այսպիսով, մեկ օրացուցային տարվա ընթացքում երկրորդ և հաջորդող նույն տեսակի գույքի օտարման գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար այդ գույքի ձեռքբերման և օտարման գործարքների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի մեկ տարին՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է ձեռք բերվել տվյալ օրացուցային տարում առաջինն օտարված գույքը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ սույն գործով իրավահարաբերության ծագման պահից հետո «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.12.2012 թվականի թիվ ՀՕ-240-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 01.01.2013 թվականին) 4-րդ հոդվածով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, ինչի արդյունքում նախկինում գործող խմբագրության 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությունն ըստ էության վերաշարադրվել է 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետում, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանի կողմից սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման գործարքները որպես ապրանքի մատակարարում դիտարկելու վերաբերյալ հավասարապես կիրառելի են նաև 01.01.2013 թվականից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ այն հարցին, թե ինչպես է հաշվարկվում իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության իմաստով ապրանքի մատակարարում համարվող գործարքով օտարված գույքի ձեռքբերման և օտարման միջև ընկած ժամանակահատվածը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված հարցը ևս էական նշանակություն ունի գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ապրանքի մատակարարում դիտարկելու համար, քանի որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ սահմանված մյուս պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում գործարքը կարող է ապրանքի մատակարարում համարվել միայն այն դեպքում, երբ ֆիզիկական անձը գույքն օտարել է ձեռք բերման պահից մեկ տարվա ընթացքում:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ քննարկվող իրավիճակներում գործարքների կնքման պահի օրենսդրական կարգավորումներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների վերաբերյալ գործարքները կնքված են համարվում և դրանց նկատմամբ սեփականության իրավունքն անձանց մոտ ծագում է օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ ինչպես իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ, այնպես էլ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.12.2012 թվականի թիվ ՀՕ-240-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 01.01.2013 թվականին) 4-րդ հոդվածով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետում կատարված փոփոխություններից հետո գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետում սպառիչ կերպով սահմանված է այն գույքերի ցանկը, որոնց օտարումը նույն պարբերությամբ սահմանված մյուս պայմանների միաժամանակյա առկայու-

թյան դեպքում համարվում է ապրանքի մատակարարում: Ընդ որում, քննարկվող նորմերով սահմանված գույքերի ցանկում ներառված են ֆիզիկական անձանց պատկանող անշարժ գույքը և անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները, այսինքն՝ այնպիսի գույք, որի նկատմամբ սեփականության իրավունքի ծագումը և դադարումն օրենսդիրն այլ իրավական ակտերով պայմանավորել է պետական գրանցմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, գործարքը կարող է կնքված համարվել միայն դրանից ծագող իրավունքները, տվյալ դեպքում՝ սեփականության իրավունքը գրանցելու պահից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների օտարման պահը համընկնում է օտարման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման պահի հետ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ քննարկվող գործարքներն ապրանքի մատակարարում դիտարկելու համար այդ գործարքով օտարվող գույքի՝ օտարողի կողմից ձեռքբերման պահը վերջինիս անվամբ նշված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման պահն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող կարգավորումների համաձայն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով ԱԱՀ վճարողներ են համարվել նաև նույն օրենքի 6-րդ հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական անձինք: Ընդ որում, որպես ընդհանուր կանոն սահմանված է եղել, որ ԱԱՀ վճարող անձանց համար ապրանքի մատակարարման պահ է համարվել այն պահը, երբ ապրանքը հանձնվել է գնորդին:

Մինչդեռ 01.01.2013 թվականից օրենսդիրը տարանջատել է ԱԱՀ վճարող համարվող և ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձանց հասկացությունները, և ըստ նշված տարանջատման, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ապրանքի մատակարարում համարվող գործարքներ իրականացրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք 01.01.2013 թվականից հետո համարվում են ոչ թե ԱԱՀ վճարող, այլ ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը փոփոխության չի ենթարկվել, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ 01.01.2013 թվականից հետո «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը վերաբերում է բացառապես նույն օրենքի իմաստով ԱԱՀ վճարող համարվող անձանց:

Նման պայմաններում անդրադառնալով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքով օտարված գույքի օտարման պահի հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ 01.01.2013 թվականից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետով նախատեսված գործարքների իրականացման դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մոտ ապրանքը հանձնելու պահը պետք է համարվի տվյալ գործարքով գույքը ձեռք բերող անձի՝ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահը, քանի որ 01.01.2013 թվականից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետով նախատեսված գործարքների իրականացման դեպքում «Ավելացված արժեքի

հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը կիրառելի չէ, իսկ ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձանց կողմից ապրանքը հանձնելու պահի վերաբերյալ որևէ այլ կարգավորում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ:

Ինչ վերաբերում է մինչև 01.01.2013 թվականը ծագած իրավահարաբերություններին, այդ թվում՝ սույն գործով քննարկման առարկա իրավահարաբերությանը, ապա Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքի հանձնման պահի վերաբերյալ ընդհանուր կանոնը պետք է կիրառվի՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ նախատեսված գործարքներով օտարվող գույքի առանձնահատկությունների հաշվառմամբ, և ըստ այդմ, որպես ապրանքը հանձնելու պահ, հետևաբար՝ նաև՝ ֆիզիկական անձի մոտ հարկային պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) առաջացման պահ, պետք է դիտարկվի գույքը ձեռք բերող անձի՝ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահը:

Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է այն հանգամանքից, որ մինչև 01.01.2013 թվականը գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ապրանքը հանձնելու պահն օտարվող գույքը ձեռք բերողին փաստացի հանձնելու պահը դիտարկելու պարագայում հնարավոր են դեպքեր, երբ գույքի փաստացի հանձնման և ձեռք բերողի կողմից դրա նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահերը կարող են չհամընկնել: Այդպիսի դեպքերում հնարավոր է ստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի ուժով անձի մոտ կառաջանա հարկային պարտավորություն այն դեպքում, երբ գույքը փաստացի հանձնվել է ավելի վաղ, քան դրա նկատմամբ գրանցվել է ձեռքբերողի սեփականության իրավունքը, այլ կերպ ասած՝ անձի մոտ հարկային պարտավորությունը կառաջանա ավելի վաղ, քան օրենքով նախատեսված օտարումը: Նման պայմաններում առկա է անձի նկատմամբ հարկային օրենսդրությամբ նախատեսված տույժերի և տուգանքների անհարկի առաջադրման վտանգ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հաշվետու ժամանակաշրջանը, սահմանային իրավիճակներով պայմանավորված, վրա կհասնի ավելի վաղ, քան գույքի օտարումը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ ինչպես իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ, այնպես էլ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.12.2012 թվականի թիվ ՀՕ-240-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 01.01.2013 թվականին) 4-րդ հոդվածով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետում կատարված փոփոխություններից հետո գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետով նախատեսված գործարքն ապրանքի մատակարարում կարող է համարվել այն դեպքում, երբ, ի թիվս մյուս պայմանների, գույքն օտարող ֆիզիկական անձի՝ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման օրվա և գույքը ձեռք բերող անձի՝ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում մեկ տարին:

26.12.2016 թ.

40. «Հայֆուսկոգեներացիա» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առն-  
թեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԴ/11054/05/13

Էջ  
416–434

**Խնդիր.** – Արդյո՞ք անձը ենթակա է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածով սահմանված պատասխանատվության, եթե էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանի կարգաբերման–գործարկման աշխատանքների կատարման ընթացքում արտադրել և բաշխման ցանց է առաքել էլեկտրական էներգիա՝ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիայի գործողության ժամկետն ավարտված լինելու պայմաններում,

– ի՞նչ պայմանների առկայության դեպքում է ծագում էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանի կարգաբերման–գործարկման աշխատանքների արդյունքում արտադրված էլեկտրաէներգիան բաշխման ցանց առաքելուն ուղղված գործարքի արժեքից շահութահարկ և ավելացված արժեքի հարկ հաշվարկելու և վճարելու՝ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի հարկային պարտավորությունը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածով ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանել է պատասխանատվություն առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար: Նշված պատասխանատվությունն առաջանում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) ֆիզիկական և իրավաբանական անձինք զբաղվում են գործունեության որոշակի տեսակով, որի իրականացման համար օրենքով պահանջվում է լիցենզիա,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք այդ գործունեությունն իրականացնում են առանց համապատասխան լիցենզիայի առկայության:

Ընդ որում, վերը նշված իրավախախտման համար օրենսդիրը որպես պատասխանատվության միջոց է ընտրել տուգանքը, որի չափը պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի տրամադրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափով և կազմում է այդ դրույքաչափի տասնապատիկը: Բացի այդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի ուժով առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից ենթակա է բռնագանձման նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարը՝ որպես վնասի հատուցում:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ 26–րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ իրավական համակարգում մինչև 01.01.2012 թվականը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելը դիտարկվել է որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն: Նշված իրավախախտման համար օրենսդիրը որպես պատասխանատվության միջոց էր ընտրել տուգանքը, որի չափը պայմանավորված էր լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու արդյունքում ստացված և հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառությունով (համախառն եկամտով) և կազմում էր այդ իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ մինչև 01.01.2012 թվականը գործող հարկային օրենսդրության տեսանկյունից վերոգրյալ պա-

տասխանատվության միջոցն առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացրած անձի համար այդ գործունեության մասով համարվել է վերջնական հարկային պարտավորություն: Այսինքն՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացրած անձին «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ 26-րդ հոդվածի հիմքով պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու արդյունքում ստացված և հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով տուգանքի նշանակման դեպքում տվյալ անձն ազատվել է այդ գործունեության համար առաջացող մյուս բոլոր հարկային պարտավորություններից:

Փաստորեն, առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ մինչև 01.01.2012 թվականը գործող հարկային օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումները հանգում են հետևյալին.

1. առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությունը հանդիսացել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն,

2. առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար որպես պատասխանատվության միջոց ենթակա էր կիրառման տուգանքը,

3. նշված պատասխանատվության միջոցի՝ տուգանքի չափը կազմում էր լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու արդյունքում ստացված և հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսը,

4. առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար անձի նկատմամբ վերը նշված տուգանքի կիրառումը համարվել է վերջնական հարկային պարտավորություն՝ ապօրինի գործունեության մասով. այդ դեպքում լիցենզավորման ենթակա համապատասխան գործունեության համար որևէ այլ հարկային պարտավորություն չէր կարող առաջանալ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող և ներկայումս գործող իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ի տարբերություն ներկայումս գործող հարկային օրենսդրության՝ մինչև 01.01.2012 թվականը գործող հարկային օրենսդրության տեսանկյունից առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությունը հանդիսացել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն և այդպիսի իրավախախտում կատարած անձի նկատմամբ մինչև 01.01.2012 թվականը գործող օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցի (իրացման շրջանառության 50 տոկոսի չափով տուգանք) կիրառումն այդ գործունեության մասով համարվել է վերջնական հարկային պարտավորություն: Մինչդեռ ներկայումս գործող հարկային օրենսդրության համաձայն՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար նախատեսված պատասխանատվության միջոցի (լիցենզիայի համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույթաչափի տասնապատիկի չափով տուգանք և վնասի հատուցում՝ պետական տուրքի գումարի չափով) կիրառումը չի համարվում վերջնական հարկային պարտավորություն և անձին չի ազատում լիցենզավորման ենթակա գործունեության համար առաջացող մյուս բոլոր հարկային պարտավորություններից:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, էլեկտրական և ջերմային էներգիա սպառողների, ինչպես նաև պետական իշխանության մարմինների փոխհարաբերություններն



օրենսդիրը կարգավորել է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն՝ Էներգետիկայի բնագավառում որոշակի գործունեություն, մասնավորապես՝ էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրությունը (ներառյալ՝ դրանց համակցված արտադրություն) կամ էլեկտրական և ջերմային էներգիայի առուվաճառք, կարող է իրականացվել բացառապես համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում: Ընդ որում, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածների, ինչպես նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթների ուժով Էներգետիկայի բնագավառում իրականացվող գործունեությունը լիցենզավորելու, այդ գործունեության համար լիցենզիա ստանալու վերաբերյալ հայտի քննարկման և լիցենզիայի տրման կարգն ու պայմանները, գործունեության լիցենզիայի պայմանները սահմանելու իրավասությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության) գործունեությունը կարող է իրականացվել միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում: Այսինքն՝ էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրությունը (ներառյալ՝ դրանց համակցված արտադրությունը) օրենքի ուժով համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն: Հետևաբար տնտեսական գործունեության այդ տեսակով առանց համապատասխան լիցենզիայի առկայության զբաղվելու դեպքում առաջանում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված պատասխանատվություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածներով օրենսդիրը սահմանել էր էներգետիկայի բնագավառում տրվող լիցենզիաների հետևյալ տեսակները.

1) արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա, որով անձին տրվում էր էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայաններ կառուցելու իրավունք,

2) էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա, որով անձին տրվում էր էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու, ինչպես նաև շուկայի կանոններով այն վաճառելու իրավունք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 30.01.2002 թվականի թիվ 4 որոշմամբ (ուժը կորցրել է 02.01.2014 թվականին) հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման» կարգի՝ սույն որոշմամբ վկայակոչված համապատասխան իրավադրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրության համաձայն՝ էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և վաճառելու իրավունքով օժտված էր միայն էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձը, իսկ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձն օժտված չէր նման իրավունքով:

Մինևսույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ էլեկտրական կամ ջերմային (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայանների կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում ևս, ըստ էության, արտադրվում է էլեկտրական

էներգիա, որն առաքվում է բաշխման ցանց: Մակայն կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրությունը և առաքումն իրավահարաբերության ծագման պահին կարգավորվում էր հատուկ իրավական ռեժիմով, որը հանգում է հետևյալին.

1) էլեկտրական կամ ջերմային (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայանների կարգաբերման-գործարկման աշխատանքներ կարող էր կատարել միայն արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձը,

2) էլեկտրական կամ ջերմային (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայանների կարգաբերման-գործարկման աշխատանքները կատարվում են մինչև արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը,

3) կարգաբերման-գործարկման աշխատանքների արդյունքում բաշխման ցանց է առաքվում էլեկտրաէներգիա, որի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգելու նպատակով կնքվում է հատուկ պայմանագիր:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից մինչև այդ լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը կարգաբերման-գործարկման աշխատանքների կատարման ընթացքում էլեկտրաէներգիա արտադրելու և բաշխման ցանց առաքելու դեպքում անձը չի կարող ենթարկվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար, քանի որ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիայի առկայությունը բավարար և անհրաժեշտ պայման է մինչև այդ լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը կարգաբերման-գործարկման աշխատանքների կատարման ընթացքում էլեկտրաէներգիա արտադրելու և բաշխման ցանց առաքելու համար:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության առանձնահատկությունների վերաբերյալ վերը նշված օրենսդրական փոփոխությունները կատարվել են ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 07.12.2011 թվականի թիվ ՀՕ-308-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 01.01.2012 թվականին:

ՀՀ սահմանադրական դատարանը, 29.11.2011 թվականի թիվ ՄԴՈ-1000 որոշմամբ անդրադառնալով ժամանակի մեջ իրավական ակտի գործողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը: Միաժամանակ այս նորմը սահմանում է այդ հայեցողությունն իրացնելու ընթացակարգը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը, իրացնելով իրեն Սահմանադրությամբ տրված հայե-

ցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու նպատակահարմարության դեպքում տվյալ ակտում ամրագրում է այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ: Նշված հայեցողությունն իրացնելու այս ընթացակարգն ինքնանպատակ չէ և տրամաբանորեն բխում է Սահմանադրությամբ՝ իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնակարգման ընդհանուր տրամաբանությունից:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում կատարված այդ փոփոխությունները՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության առանձնահատկությունների վերաբերյալ, չեն կարող ունենալ հետադարձ ուժ. առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության առանձնահատկությունների վերաբերյալ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 07.12.2011 թվականի թիվ ՀՕ-308-Ն ՀՀ օրենքի իրավակարգավորումները չեն կարող տարածվել այդ օրենքի ուժի մեջ մտնելուց՝ 01.01.2012 թվականից առաջ ծագած հասարակական հարաբերությունների վրա: Այսինքն՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության առանձնահատկությունների վերաբերյալ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 07.12.2011 թվականի թիվ ՀՕ-308-Ն ՀՀ օրենքի իրավակարգավորումները չեն կարող կիրառվել այդ օրենքի ուժի մեջ մտնելուց՝ 01.01.2012 թվականից առաջ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար անձին պատասխանատվություն ենթարկելու դեպքում:

Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության վերաբերյալ սահմանադրաիրավական այն սկզբունքը, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավական ակտերը չեն գործում հետադարձ ուժով, իսկ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը թողնված է այդ իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանը, որն իրականացվում է տվյալ ակտում այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի ամրագրման ձևով: Մինչդեռ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 07.12.2011 թվականի թիվ ՀՕ-308-Ն ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 01.01.2012 թվականին, չի նախատեսում առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության մասով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում կատարված փոփոխությունների հետադարձ ուժի վերաբերյալ որևէ դրույթ:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի, և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը: Օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում սահմանել է, որ նշված օրենքի իմաստով եկամուտը հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումն է, որը հանգեցնում է հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը՝ այդ եկամուտների շարքում նախատեսելով նաև հարկատուի կողմից իրացվող ապրանքներից կամ արտադրանքից ստացվող հասույթը, որը հանգեցնում է նրա սեփական կապիտալի ավելացմանը:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ հարկատուն շահութահարկի գծով հարկվող շահույթը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվառումը պետք է

իրականացնի հաշվեգրման եղանակով՝ ելնելով այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից: Հետևաբար հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվառելու հարկատուի պարտավորությունն առաջանում է ոչ թե եկամտի փաստացի ստացման, այլ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու պահից: Օրենսդիրը սահմանել է նաև հարկվող շահույթը որոշելիս եկամտի ստացման իրավունքը ձեռք բերելու պահը: Մասնավորապես՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի (ա) կետի համաձայն՝ եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված հետևյալ դեպքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1) համապատասխան գումարն անվերապահորեն ենթակա է վճարման (հատուցման) հարկատուին,

2) հարկատուն կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները (սույնիսկ համապատասխան գումարի ստացման պահը հետաձգված լինելու կամ վճարումները մաս-մաս իրականացվելու դեպքերում):

Վճարել դատարանը նշել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և վաճառելու իրավունքով օժտված էր միայն էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձը, իսկ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձն օժտված չէր նման իրավունքով: Սակայն, մյուս կողմից, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 30.01.2002 թվականի թիվ 4 որոշմամբ (ուժը կորցրել է 02.01.2014 թվականին) հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման» կարգով սահմանված էր, որ էլեկտրական կամ ջերմային (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայանների կառուցման լիցենզիա ունեցող անձը մինչև այդ լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ, որոնց արդյունքում բաշխման ցանց առաքված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգվում են համապատասխան պայմանագրով: Այսինքն՝ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից մինչև լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը կատարվող կարգաբերման-գործարկման աշխատանքների արդյունքում բաշխման ցանց է առաքվում էլեկտրաէներգիա. այդ էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգվում նպատակով կնքվում է համապատասխան պայմանագիր, որի օրինակելի ձևը կամ պարտադիր պայմանները սահմանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

Վճարել դատարանն արձանագրել է, որ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրի օրինակելի ձևը հաստատվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 22.04.2005 թվականի թիվ 43-Ն որոշմամբ, որի համաձայն՝ այդ պայմանագիրն ունի, ի թիվ այլևի, հետևյալ պայմանները. Կառուցողը կարգաբերման-գործարկման աշխատանքների կատարման ընթացքում արտադրվող էլեկտրաէներգիան առաքում է Բաշխողին, իսկ Բաշխողը վճարում է առաքված էլեկտրաէներգիայի համար պայմանագրով սահմանված կարգով, այսինքն՝ էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի և առաքված էլեկտրաէներգիայի (հզորության) համար սակագնի սահմանման մասին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

վի որոշումների պատճենները Կառուցողի կողմից ներկայացնելուց և էլեկտրա-  
էներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հե-  
տո՝ մինչև առաջին հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 25-ը:

Այսպիսով, կարգաբերման–գործարկման աշխատանքների ընթացքում  
առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով արտադրական  
հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա  
ունեցող անձի կողմից մինչև լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը  
կատարվող կարգաբերման–գործարկման աշխատանքների արդյունքում  
բաշխման ցանց է առաքվում էլեկտրաէներգիա, որի դիմաց եկամուտ ստանա-  
լու իրավունքն արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգն-  
ման գործունեության լիցենզիա ունեցող անձը ձեռք է բերում հետևյալ պայման-  
ների միաժամանակյա առկայության դեպքում.

1) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կող-  
մից էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայան կառու-  
ցելու լիցենզիա ունեցող անձին տրամադրվել է էլեկտրաէներգիայի (հզորու-  
թյան) արտադրության լիցենզիա,

2) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կող-  
մից սահմանվել է տվյալ էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադ-  
րության կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը,

3) կնքվել է տվյալ էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադ-  
րության կայանից արտադրվող էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառ-  
քի պայմանագիր, և այն մտել է ուժի մեջ:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատա-  
րանը հանգել է այն եզրակացության, որ էլեկտրական և (կամ) ջերմային էներ-  
գիայի արտադրության կայան կառուցելու լիցենզիա ունեցող անձը՝ որպես  
հարկատու, էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայա-  
նի կարգաբերման–գործարկման աշխատանքների արդյունքում բաշխման  
ցանց առաքված էլեկտրաէներգիայի դիմաց «Շահութահարկի մասին»  
ՀՀ օրենքի իմաստով եկամտի ստացման իրավունք է ձեռք բերում վերոգրյալ  
պայմանների միաժամանակյա առկայության պարագայում, քանի որ կարգաբեր-  
ման–գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի  
հաշվառման պայմանագրով վճարման ենթակա գումարն անվերապահորեն  
հատուցման ենթակա է դառնում միայն այդ պայմանների առկայության պա-  
հից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման  
ժամկետից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկի՝ որ-  
պես անուղակի հարկի հարկվող օբյեկտն ավելացված արժեքի հարկ վճարող-  
ների կողմից իրականացվող օրենքով սահմանված բոլոր գործարքների (գոր-  
ծառնությունների) ամբողջ արժեքն է (շրջանառությունը): Ընդ որում, «Ավելաց-  
ված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի իմաստով ավելացված  
արժեքի հարկով հարկվում են, ի թիվս այլնի, հետևյալ գործարքները (գործառ-  
նությունները).

1) ապրանքների մատակարարումը, այսինքն՝ գույքի նկատմամբ սեփա-  
կանության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի  
փոխանցելուն ուղղված գործարքը,

2) անհատույց սպառումը, այսինքն՝ ավելացված արժեքի հարկ վճարող-  
ների կողմից ապրանքների անհատույց հատկացմանը կամ ծառայությունների  
անհատույց մատուցմանն ուղղված գործարքը:

Օրենսդիրը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8–րդ հոդվա-  
ծով սահմանել է ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը  
(հարկման բազան) որոշելու կարգը՝ ըստ համապատասխան գործարքների  
(գործառնությունների), որի համաձայն՝

1) ապրանքների մատակարարման դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում այդ գործարքի արժեքը դրամական արտահայտությամբ, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում՝ առանց ավելացված արժեքի հարկի,

2) ապրանքների անհատույց մատակարարման դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ օրենքին համապատասխան որոշվող մեծության, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը:

Ընդ որում, օրենսդիրը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածում հատուկ կարգավորման է ենթարկել ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց սպառման գործարքների դեպքում ավելացված արժեքի հարկի գծով ավելացված արժեքի հարկ վճարողի հարկային պարտավորության ծագման հետ կապված հարաբերությունները՝ ամրագրելով, որ այդ դեպքում ավելացված արժեքի հարկի գծով հարկ վճարողի հարկային պարտավորությունը ծագում է այն պահին, երբ, ի թիվ այլնի, ապրանքներն առաքվել կամ հանձնվել են գնորդներին, կամ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված կանոնները համադրելով ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 30.01.2002 թվականի թիվ 4 որոշմամբ (ուժը կորցրել է 02.01.2014 թվականին) հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման» կարգի վկայակոչված իրավադրույթների, ինչպես նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 22.04.2005 թվականի թիվ 43-Ն որոշմամբ հաստատված կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրի օրինակելի ձևի հետ՝ Վճարել դատարանը գտել է, որ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագիրը հատուցելի գործարք է: Այսպես, քննարկվող պայմանագրով Կառուցողը կարգաբերման-գործարկման աշխատանքների կատարման ընթացքում արտադրվող էլեկտրաէներգիան առաքում է Բաշխողին, իսկ Բաշխողը վճարում է առաքված էլեկտրաէներգիայի համար պայմանագրով սահմանված կարգով: Այսինքն՝ այդ պայմանագրով Բաշխողը Կառուցողի՝ էլեկտրաէներգիա առաքելու պարտավորության կատարման դիմաց կրում է այդ էլեկտրաէներգիայի համար վճարելու հանդիպական պարտավորություն: Այլ կերպ ասած՝ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով Կառուցողն առաքված էլեկտրաէներգիայի դիմաց Բաշխողից համապատասխան վճար ստանալու իրավունք ունի:

Փաստորեն, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագիրը հատուցելի գործարք է, որը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է ապրանքների մատակարարման գործարք. այն ուղղված է որոշակի արտադրանքի (էլեկտրական էներգիա) նկատմամբ Կառուցողի սեփականության իրավունքը որոշակի հատուցման դիմաց այլ անձի՝ Բաշխողին փոխանցելուն: Այսինքն՝ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագիրը չի կարող համարվել ապրանքների անհատույց մատակարարման (անհատույց սպառման) գոր-

ծառք՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով: Հետևաբար «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի՝ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց սպառման գործարքների դեպքում ավելացված արժեքի հարկի գծով հարկ վճարողի հարկային պարտավորության ծագման պահի հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավադրույթները տվյալ պայմանագրի նկատմամբ կիրառելի չեն:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ կարգաբերման–գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրի՝ որպես ապրանքների մատակարարման գործարքի համար արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի՝ ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ հնարավոր է որոշել ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը (հարկման բազան), այսինքն՝ այդ գործարքի արժեքը դրամական արտահայտությամբ, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում: Իսկ կարգաբերման–գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով առաքվող էլեկտրաէներգիայի դիմաց վճարման ենթակա կոնկրետ գումարի չափը կարող է պարզ դառնալ միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայան կառուցելու լիցենզիա ունեցող անձին տրամադրվել է էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա,

2) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանվել է տվյալ էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը,

3) կնքվել է տվյալ էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանից արտադրվող էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագիր, և այն մտել է ուժի մեջ:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ կարգաբերման–գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայան կառուցելու լիցենզիա ունեցող և ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անձը կարող է և պարտավոր է կատարել ավելացված արժեքի հարկի հաշվարկներ և վճարել ավելացված արժեքի հարկ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում, քանի որ կարգաբերման–գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը, այսինքն՝ այդ գործարքի արժեքը դրամական արտահայտությամբ, որոշելի է դառնում միայն այդ պայմանների առկայության դեպքում:

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ**

**22.07.2016 թ.**

**41. Ռազմիկ Մովսիսյանն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության, վարչ. գործ թիվ ՎԴ/11173/05/13**

**Էջ  
435–444**

*Խնդիր.* Արդյո՞ք լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման դեպքում նախկինում նշանակված կենսաթոշակը ենթակա է վերահաշվարկման ու՞՞ր կորցրած իրավական ակտով սահմանված կարգով:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով բողոքի հիմքում բարձրացված հարցադրումը, նախնառաջ հարկ է համարել անդրադառնալ վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառվող օրենսդրության հարցը որոշելու խնդրին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ կենսաթոշակի վերահաշվարկի իրավահարաբերություններն օրենքով սահմանված ինքնուրույն իրավահարաբերություններ են, որոնց ծագումը, բացառությամբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 38–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի, մյուս բոլոր դեպքերում պայմանավորված է կենսաթոշակառուի կողմից համապատասխան դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն իրավասու մարմին ներկայացնելով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ պետական կենսաթոշակների վերաբերյալ նախկինում գործող օրենսդրությամբ ևս կենսաթոշակի վերահաշվարկման իրավահարաբերության ծագումը պայմանավորված է եղել կենսաթոշակառուի կողմից նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու համար դիմելու հանգամանքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թե՛ նախկինում գործող և թե՛ ներկայումս գործող օրենսդրությունը նախատեսել է, որ կենսաթոշակը վերահաշվարկելու իրավունք վերապահող հանգամանքներ առաջանալու դեպքում վերահաշվարկ կատարելու իրավահարաբերությունները ծագում են միայն կենսաթոշակառուի կողմից համապատասխան դիմում ներկայացնելու հիմքով, բացառությամբ հիմնական կենսաթոշակի չափը կամ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը փոխվելու դեպքերի:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ թե՛ նախկինում գործող և թե՛ ներկայումս գործող օրենսդրությունը նախատեսել է, որ կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման դեպքում նախկինում նշանակված կենսաթոշակը ենթակա է վերահաշվարկման գործող օրենքի դրույթներին համապատասխան:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ կենսաթոշակը վերահաշվարկելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է կենսաթոշակառուի կողմից վերահաշվարկելու համար լիազոր մարմին դիմելու պահի դրությամբ գործող օրենսդրությունը:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ կենսաթոշակի նշանակման, հաշվարկման և վերահաշվարկման հետ կապված հարաբերությունները մինչև «Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010 թվականի թիվ ՀՕ–243–Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը, այն է՝ մինչև 01.01.2011 թվականը, կարգավորվել են նախ՝ «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 25.02.1992 թվականի թվականի թիվ ՀՕ–13 ՀՀ օրենքով, ապա՝ «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 06.12.1995 թվականի թիվ ՀՕ–26 ՀՀ օրենքով, այնուհետև՝ «Պետական կենսաթոշակների մասին» 19.11.2002 թվականի թիվ ՀՕ–519–Ն ՀՀ օրենքով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78–րդ հոդվածի 3–րդ մասի բովանդակությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ իրավական ակտն ուժը



կորցրած է ճանաչվում, այդ ակտի գործողությունը տարածվում է միայն մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա և չի տարածվում դրանից հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Այսինքն՝ ըստ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության համընդհանուր սկզբունքի՝ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ եղած ժամանակահատվածում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավական ակտի կիրառելիության հարցն ուղղակիորեն կապված է կարգավորման առարկան կազմող իրավահարաբերության ծագման պահի հետ:

ՀՀ սահմանադրական դատարանը 15.01.2008 թվականի թիվ ՄԴՌ-723 որոշմամբ նշել է, որ մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած և կենսաթոշակի նշանակում ստացած անձինք ակնկալիք են ունեցել, որ իրենց կենսաթոշակը ենթակա է հաշվարկման արտոնյալ կարգով, սակայն նույն օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով այդ արտոնյալ կարգը վերացվել է՝ անտեսելով նաև նշված պայմաններում աշխատած անձանց ակնկալիքն առ այն, որ իրենց կենսաթոշակը հաշվարկվելու է արտոնյալ կարգով: Անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքն իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը: ՀՀ սահմանադրական դատարանը, արձանագրելով նշանակված կենսաթոշակի վերահաշվարկի արդյունքում դրա տեսակի փոփոխման (վատթարացման) արգելքը, միաժամանակ ճանաչել է նաև որոշակի պայմաններում աշխատած և կենսաթոշակի նշանակում ստացած անձանց՝ արտոնյալ կենսաթոշակ ստանալու հանդեպ լեգիտիմ ակնկալիքը: Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանը լեգիտիմ ակնկալիքի առկայությունը ճանաչել է միայն այն անձանց համար, որոնք աշխատել և կենսաթոշակի նշանակում են ստացել: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ կենսաթոշակի հանդեպ լեգիտիմ ակնկալիքը ծագելու համար միայն աշխատելու փաստը բավարար չէ, անձի նկատմամբ պետք է արդեն իսկ նշանակված լինի կենսաթոշակ, կամ վերջինս պետք է արդեն իսկ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած լինի, որպեսզի դրա հանդեպ լեգիտիմ ակնկալիքը գործի: Ըստ այդմ՝ ՀՀ սահմանադրական դատարանը ճանաչել է ոչ թե որոշակի պայմաններում աշխատած անձանց լեգիտիմ ակնկալիքն այդ ընթացքում գործող իրավակարգավորումներով կենսաթոշակ ստանալու նկատմամբ, այլ արդեն իսկ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձանց լեգիտիմ ակնկալիքն այդ իրավունքը ձեռք բերելու պահին գործող իրավակարգավորումներով կենսաթոշակ ստանալու և դրա չափն այլևս չնվազեցնելու հանդեպ: ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ, որը, սակայն, չի կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանն անձի կենսաթոշակ ստանալու լեգիտիմ ակնկալիքը կապել է կենսաթոշակ ստանալու իրավունքի՝ արդեն իսկ ծագած լինելու հետ:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով անձի լեգիտիմ ակնկալիքի իրավունքին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ անձի լեգիտիմ ակնկալիքի պաշտպանությունը մի կողմից պարտավորեցնում է պետությանն անձի հանդեպ գործել բարեխիղճ, մյուս կողմից, սակայն, անձի լեգիտիմ ակնկալիքի պաշտպանության կի-

րառման համար կարևոր է նաև անձի դրսևորած վարքագծի բարելավությունն և ողջամտությունը: Այսինքն, թեև լեզվաբանական օգտագործվում է որպես անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ միջոց, այնուամենայնիվ, պետք է գոյություն ունենան նաև դրա չարաշահումը բացառող երաշխիքներ:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ անձի սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի իրացումը երաշխավորելու համար համապատասխան իրավակարգավորում ստեղծելու բացառիկ իրավասությունը վերապահված է օրենսդիր մարմնին, որը կոչված է իրականացնելու այդ բնագավառի, այդ թվում նաև՝ կենսաթոշակների հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական քաղաքականությունը: Ըստ այդմ, կենսաթոշակային օրենսդրությունը 1992–2011 թվականներն ընկած ժամանակահատվածում պարբերաբար ենթարկվել է փոփոխությունների: Այսպես՝ 01.07.1992 թվականից մինչև 01.01.1996 թվականը գործել է «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» թիվ ՀՕ–13 օրենքը, 01.01.1996 թվականից մինչև 01.01.2003 թվականը գործել է «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» թիվ ՀՕ–26 օրենքը, 01.01.2003 թվականից մինչև 01.01.2011 թվականը գործել է «Պետական կենսաթոշակների մասին» թիվ ՀՕ–519–Ն ՀՀ օրենքը, իսկ 01.01.2011 թվականից ուժի մեջ է մտել «Պետական կենսաթոշակների մասին» թիվ ՀՕ–243–Ն օրենքը:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վերը նշված իրավական ակտերն իրենց գործողության ընթացքում ևս բազմիցս ենթարկվել են փոփոխությունների և լրացումների, ինչը պայմանավորված է կենսաթոշակային համակարգի հավասարակշռության ապահովման, քաղաքացիների կենսաթոշակային ապահովության մակարդակի կայունության և աճի ապահովման անհրաժեշտությամբ:

**02.12.2016 թ.**

**42. Սամսոն Խարազյանն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և մյուսների, վարչ. գործ թիվ ՎԴ/4109/05/14**

**Էջ 445–452**

*Խնդիր.* «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ անձի դիմումը մերժելու մասին որոշումը չվիճարկելու պայմաններում անձի կողմից կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ կրկին դիմում ներկայացնելու դեպքում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իմաստով դժուր օրը պետք է համարվի կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ նշել է, որ գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը կապված է որոշակի հանգամանքների հետ, որոնց օրենքը տալիս է իրավական նշանակություն (իրավաբանական փաստեր): Մասնավորապես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը տարանջատել է «կենսաթոշակի իրավունք» և «կենսաթոշակ ստանալու իրավունք» հասկացությունները: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրի ծագման համար նախատեսվել են տարբեր իրավաբանական փաստեր: Մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքը ծագում է օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում, իսկ կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ կենսաթոշակի իրավունքի առկայությամբ պայմանավորված՝ համապատասխան մարմին սահմանված կարգով դիմելու պարագայում (*տես Արարար Ափոյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգ*

գույթյան ծառայության թիվ ՎԴ/6690/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ վարույթն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանվել է վարչական վարույթի ավելի կարճ՝ տասն աշխատանքային օրվա ժամկետ, սահմանվել է վարույթը եզրակացնող վարչական ակտի՝ որոշման կայացման համար հիմք հանդիսացող հանգամանքների շրջանակը, այն է՝ ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները: Բացի այդ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանվել է նաև, թե կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձի կողմից ներկայացված փաստաթղթերի և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալների հիման վրա կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմինն ինչպիսի որոշում կարող է ընդունել: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված որոշումներից մեկի ընդունմամբ ավարտվում է կենսաթոշակ նշանակելու դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով սպառիչ կերպով սահմանված են դիմումը մերժելու հիմքերը, իսկ նույն հոդվածի 8-րդ մասով սահմանվել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմին՝ կենսաթոշակ նշանակելու դիմումը մերժելու դեպքում հնգօրյա ժամկետում կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին պատշաճ կարգով ծանուցելու պարտականությունը: Ընդ որում, նշված ծանուցումը պետք է պարունակի մերժման պատճառները և բողոքարկման կարգը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված կարգավորումն ինքնանպատակ չէ, այն հնարավորություն է տալիս կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին, ով համաձայն չէ մերժման հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով՝ գործնականում իրացնելու իր արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները:

Վճռաբեկ դատարանը նաև հարկ է համարել նշել, որ նախկինում կայացրած որոշումներով անդրադարձել է վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի հարցին՝ նշելով, որ ՀՀ Սահմանադրության ուժով վարչական ակտի չվիճարկման պայմաններում յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական ակտն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված վարչական մարմնի լիազորությունների շրջանակում, և այն ենթակա է կատարման: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ չվիճարկված վարչական ակտն իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը (յուև Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Հրաչյա Քարամյանի թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը):

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմին՝ կենսաթոշակի նշանակումը մերժելու մասին որոշումը վարչական կամ դատական կարգով չի վիճարկվել, որևէ անձ, այդ թվում՝ դատարանը չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ անձի դիմումը մերժելու մասին որոշումը չվիճարկելու պայմաններում անձի կողմից կրկին ներկայացված դիմումով հարուցվում է նոր վարույթ, իսկ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով այդ դեպքում կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր պետք է համարվի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում կրկին դիմում ներկայացնելու օրը:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

22.04.2016 թ.

43. «Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության և մյուսների, վարչ. գործ թիվ ՎԴ/0830/05/14

Էջ  
453–466

*Խնդիր.* «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործն ընդդատյա է արդյոք վարչական դատարանին, թե՛ ընդհանուր իրավասության դատարանին:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Մույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդդատությունը՝ որպես դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որոնք կարգավորում են դատարանի քննությանը ենթակա բոլոր գործերի բաշխումը ՀՀ դատական իշխանության առաջին ստյանի կոնկրետ դատարանների միջև:

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՍԴՌ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը կանխորոշել է ընդհանուր իրավասության դատարանի ընդդատության շրջանակը, որն ընդգրկում է բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանի քննությանը վերապահված գործերի, իսկ ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը սահմանել է ՀՀ վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որը կազմված է հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերից: Փաստորեն, դատական գործերի տարանջատումը քաղաքացիականի և վարչականի պայմանավորված է այդ գործերով վիճելի իրավահարաբերության բնույթից. կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել այդ գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք տվյալ գործը ծագում է հանրային, թե մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից:

Այսպիսով, իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը):

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ինչպես ցանկացած հարաբերություն, այնպես էլ իրավական նորմերի միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունը՝ իրավահարաբերությունը, որոշակի փոխկապակցված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն) ամբողջություն (համակարգ) է, որոնց բովանդակային-որակական տարբերությունը հնարավորություն է տալիս իրավահարաբերությունները տարանջատելու միմյանցից: Մասնավորապես՝ հան-

րային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը:

Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձինք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ:

Իրավահարաբերության բովանդակությունը տվյալ հարաբերության սուբյեկտների փոխադարձ իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որը հանրային բնույթի իրավահարաբերության պարագայում հանգում է հետևյալին. այդ հարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանության սուբյեկտն ունի օրենքով սահմանված իր իշխանական լիազորություններն իրականացնելու պարտականություն, ինչն էլ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների իրացման անհրաժեշտ և բավարար պայմանն է:

Իրավահարաբերության օբյեկտն այն նյութական և (կամ) հոգևոր արժեքն է, ինչի կապակցությամբ որոշակի իրավաբանական փաստի (փաստական կազմի) հիման վրա կողմերի միջև ծագում է իրավահարաբերությունը: Հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սպասարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի կողմից այն իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ, քանի որ հանրային իրավունքով կարգավորվող հարաբերության շրջանակներում սուբյեկտը գործում է ոչ թե՛ իր, այլ հանրային շահերի վերհանման և ապահովման նպատակով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դեռում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերա-

պահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի իմաստով օրենքով նախատեսված դեպք է, երբ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց պատկանող քաղաքացիական իրավունքներն իրականացնելուց հրաժարվելը հանգեցնում է այդ իրավունքների դադարման:

Այսպես, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում նշված եղանակներով ապրանքային նշանի օգտագործումն ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի բովանդակային տարրն է, և ապրանքային նշանի չօգտագործումը դրա նկատմամբ բացառիկ իրավունքն իրականացնելուց հրաժարումն է Ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից դրա նկատմամբ բացառիկ իրավունքն իրականացնելուց հրաժարվելը, որը դրսևորվում է այն չօգտագործելու ձևով, օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում կարող է հանգեցնել ապրանքային նշանի նկատմամբ վերջինիս իրավատիրոջ բացառիկ իրավունքի դադարման, քանի որ ըստ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու դեպքում դրա իրավատերն ամբողջությամբ կամ մասնակիորեն զրկվում է ապրանքային նշանի նկատմամբ իր իրավունքներից: Նշված օրենսդրական կարգավորումները համահունչ են նաև ապրանքային նշանների իրավական պահպանության վերաբերյալ կարևորագույն միջազգային իրավական պայմանագրի՝ «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 20.03.1883 թվականի փարիզյան կոնվենցիայի դրույթներին, որոնց համաձայն՝ ներպետական օրենսդրությամբ կարող է նախատեսվել որոշակի արդարացի ժամկետում ապրանքային նշանի պարտադիր օգտագործման պայման, որի չպահպանումը կարող է հանգեցնել ապրանքային նշանի գրանցման վերացմանը:

Փաստորեն, վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ ապրանքային նշանի իրավատերը պարտավոր է բարեխղճորեն օգտվել ապրանքային նշանի նկատմամբ իր բացառիկ իրավունքից, որը նախևառաջ ենթադրում է գրանցված ապրանքային նշանի՝ օրենքով սահմանված կարգով օգտագործում: Գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից դրա՝ օրենքով սահմանված կարգով օգտագործումն այդ ապրանքային նշանի նկատմամբ ունեցած իրավունքների պահպանման պայմանն է, որը կոչված է ապահովելու ապրանքների և ծառայությունների բնականոն քաղաքացիական շրջանառությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով ապրանքային նշանի գրանցումը կարող է չեղյալ հայտարարվել դատական կարգով՝ համապատասխան շահագրգիռ անձի հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունն իրականացնում է օրենսդրությամբ իրեն վերապահված ապրանքային նշաններին պահպանություն տրամադրելու հետ կապված գործառնությունները, սակայն վերջինս խնդրո առարկա իրավահարաբերությունների շրջանակներում որպես կողմ հանդես չի գալիս, քանի որ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ

հայտարարելու վերաբերյալ իրավական վեճը ծագում է ապրանքային նշանի իրավատիրոջ (կամ դրա օգտագործման իրավունք ունեցող անձի) և ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձի միջև:

Հիմք ընդունելով ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

1. ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ վեճի սուբյեկտները բացառապես մասնավոր անձինք են՝ մի կողմից՝ ապրանքային նշանի իրավատերը կամ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձը, իսկ մյուս կողմից՝ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձը,

2. ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է քաղաքացիական իրավունքի մասնավոր սուբյեկտի՝ ապրանքային նշանի իրավատիրոջ կամ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ապրանքային նշանի օգտագործման հետ կապված իր քաղաքացիական իրավունքները բարեխիղճ իրականացնելու պարտականությանը և այդ քաղաքացիական իրավունքի իրականացումից հրաժարվելու անբարենպաստ իրավաբանական հետևանքներին,

3. թեև ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելը վերջին հաշվով միտված է հանրային շահի, մասնավորապես՝ շուկայական տնտեսության բնականոն գործունեության ապահովմանը, սակայն նշված իրավահարաբերությունը ծագում է ոչ թե այդ հանրային շահի իրացման, այլ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձի մասնավոր տնտեսական շահերի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացման և առարկայացման կապակցությամբ:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջի հիման վրա հարուցված գործերը չեն բխում հանրային իրավահարաբերություններից ծագող վեճից և ընդդատյալ չեն վարչական դատարանին: Այլ կերպ ասած՝ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ դատական գործերը բխում են մասնավոր՝ քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագող վեճից և ընդդատյալ են ընդհանուր իրավասության դատարանին:

**22.04.2016 թ.**

**44. Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԴ/4315/05/14**

**Էջ  
467–477**

*Խնդիր.* ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածում ամրագրված՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը կարող է արդյոք համարվել ապահովված այն պարագայում, երբ դատարանը չի կատարել այդ սկզբունքի բովանդակության մեջ ընդգրկվող՝ ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու առաջարկ ներկայացնելու, գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար համարժեք միջոցներ ձեռնարկելու, գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները պահանջելու դատավարական գործողությունները:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե

(„ex officio“) պարզելու սկզբունքը վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկն է: Քննարկվող վարչադատավարական սկզբունքի էությունն օրենսդիրը բացահայտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5–րդ հոդվածում, որի բովանդակությունը հանգում է հետևյալին.

1) վարչական դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով, առարկություններով.

- 2) վարչական դատարանը պարտավոր է՝
- իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար,
  - պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները,
  - մատնանշել հայցադիմումներում առկա ձևական սխալները,
  - առաջարկել ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՍԴՌ–1190 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու՝ վարչական դատարանին ուղղված օրենսդրական պահանջը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային–իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („ex officio“) սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքներ-



րը, հայցադիմումը ներկայացնում են ձևական սխալներով, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները կամ ճիշտ չեն տարբերակում հիմնական ու ածանցյալ պահանջները կամ ներկայացնում են ոչ բավարար փաստական տվյալներ: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ինչպես նաև ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հստակ կամ ոչ ճիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք, վիճարկման հայցով դիմելով վարչական դատարան, հայցում են իրենց իրավունքներին ու օրինական շահերին միջամտող վարչական ակտի վերացում: Ընդ որում, եթե նախքան տվյալ վարչական ակտի վիճարկման հայցով վարչական դատարան դիմելն այն բողոքարկվել է նաև վարչական կարգով, ապա ներկայացված հայցն օրենքի ուժով ներառում է նաև այդ վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վերացման պահանջը կարող է հանդիսանալ վիճարկման հայցի ինքնուրույն առարկա միայն այն դեպքում, երբ հայցվորը, դիմելով դատարան, հետապնդում է ոչ թե սկզբնական միջամտող վարչական ակտի, այլ վարչական բողոքի քննարկման արդյունքում ընդունված միջամտող վարչական ակտի՝ դատական կարգով վերացման նպատակ: Այլ կերպ ասած, տվյալ պարագայում հայցվորը, իրացնելով իր դատական պաշտպանության իրավունքը, ցանկանում է հասնել ոչ թե սկզբնական միջամտող վարչական ակտի, այլ սկզբնական միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վերացմանը: Հետևաբար այն դեպքում, երբ վարչական դատարան ներկայացված հայցապահանջը ոչ թե անձի՝ իր իրավունքներին և օրինական շահերին միջամտող սկզբնական վարչական ակտի, այլ սկզբնական վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքի քննարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկումն է, իսկ հայցի հիմքում ընկած են բացառապես սկզբնական վարչական ակտի բողոքարկման վարույթի ընթացքում վարչական մարմնի կողմից թույլ տրված ընթացակարգային խախտումները, ապա սկզբնական միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վերացման պահանջը կարող է հանդիսանալ վիճարկման հայցի ինքնուրույն առարկա:

Մինչդեռ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ անձը, դիմելով վարչական դատարան, պահանջում է վերացնել իր իրավունքներին և օրինական շահերին միջամտող սկզբնական վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտը, սակայն հայցի հիմքում դնում է ոչ թե սկզբնական վարչական ակտի բողոքարկման վարույթի ընթացքում վարչական մարմնի կողմից թույլ տրված ընթացակարգային խախտումները, այլ սկզբնական վարչական ակտի՝ նյութական կամ ընթացակարգային իրավական նորմերի խախտմամբ ընդունված լինելու հանգամանքը: Այսինքն՝ քննարկվող պարագայում հայցվորը, իրացնելով իր դատական պաշտպանության իրավունքը, իրականում ցանկանում է հասնել իր իրավունքներին և օրինական շահերին միջամտող սկզբնական վարչական ակտի վերացմանը, սակայն սխալմամբ պահանջում է վերացնել ոչ թե սկզբնական միջամտող վարչական ակտը, այլ այդ վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարանն ներկայացված հայցադիմումի բովանդակությունից ակնհայտ է, որ հայցվորը, դիմելով դատարան, իրականում հետապնդում է սկզբնական միջամտող վարչական ակտի վերացման նպատակ, սակայն սխալմամբ պահանջում է վերացնել սկզբնական միջամտող վարչական ակտի բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտը, ապա սկզբնական միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վիճարկումն առանց սկզբնական միջամտող վարչական ակտի վիճարկման չի կարող ապահովել անձի խախտված իրավունքների արդյունավետ պաշտպանություն, քանի որ միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վերացման դեպքում անգամ սկզբնական միջամտող վարչական ակտը շարունակում է գործել՝ պահպանելով իր միջամտող ազդեցությունն անձի իրավունքների և օրինական շահերի նկատմամբ:

Նախ և առաջ վերագրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր դեպքերում, երբ ներկայացվել է միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վիճարկման հայցապահանջ առանց սկզբնական միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջի, սակայն հայցի հիմքում ընկած իրավական և փաստական հանգամանքներից ակնհայտ է, որ հայցվորն իրականում ցանկանում է դատական կարգով վերացնել ոչ թե միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտը, այլ իր իրավունքներին և օրինական շահերին միջամտող սկզբնական վարչական ակտը, ապա վարչական դատարանը գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքի ուժով պարտավոր է առաջարկել հայցվորին ճշտել ոչ ճիշտ հայցապահանջը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ քննարկվող իրավիճակում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքի ուժով ոչ ճիշտ հայցապահանջը ճշտելու վերաբերյալ վարչական դատարանի կողմից հայցվորին առաջարկ ներկայացնելու և հայցվորի կողմից դատարանի նշված առաջարկն ընդունվելու դեպքում տեղի է ունենում ոչ թե հայցի առարկայի կամ հայցային պահանջների չափի փոփոխություն, այլ ներկայացված հայցապահանջի ճշգրտում և համապատասխանեցում հայցվորի իրական կամարտահայտությանն ու դատական պաշտպանության դիմելիս վերջինիս հետապնդած իրական նպատակին:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել նաև հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածից բխում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („*ex officio*“) սկզբունքը դատական ապացուցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկ-

բեռ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ պահանջելու վարչական դատարանի պարտականությամբ:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով քննարկվող հարցին, գտել է, որ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու գործընթացում դատարանի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում դատարանը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: Իսկ այդպիսի հետևողականության ցուցաբերման անարդյունավետության դեպքում դատարանը պարտավոր է վիճելի մնացած փաստի չապացուցման բացասական հետևանքները դնել այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա՝ հաշվի առնելով նաև, որ վարչական դատավարությունում վարչական ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը (*տես ՀՀ կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Միքստո» ՍՊԸ-ի թիվ ՎԴ3/0043/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ վարչական դատավարությունում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված): Վարչական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Ըստ այդմ՝ գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու հարցը կարգավորող օրենսդրական նորմերը՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները, հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, ով պարտավոր է ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի (վիճարկման հայց) հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի, որոշվում է այդ ակտի

ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Հետևաբար միջամտող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված բոլոր ապացույցների հետազոտումից հետո տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու դեպքում վարչական դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավասափորեն համարել հերքված (չապացուցված):

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ թեև վարչական դատավարությունում ապացուցման պարտականությունը կրում են կողմերը, սակայն վարչական դատարանը, կաշկանդված չլինելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, պարտավոր է գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ և պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու ու գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները: Հետևաբար վարչական դատավարությունում ապացուցման բեռի բաշխման կանոնները վճռորոշ նշանակություն են ստանում միայն այն դեպքում, երբ կողմերի ներկայացրած, ինչպես նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („ex officio“) սկզբունքի իրագործման պայմաններում ձեռք բերված ապացույցները բավարար չեն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության մասին օբյեկտիվ և հիմնավորված եզրահանգում կատարելու համար:

**02.12.2016 թ.**

45. Լինա Գյուլ-Բուդադյանի իրավահաջորդներ Նաիրա Ավետյանն ու մյուսներն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների, վարչ. գործ թիվ ՎԴ/4545/05/08

Էջ  
478–493

*Խնդիր.* Արդյո՞ք Երևանի քաղաքապետը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին, կարող է շարունակել մասնակցել վարչական գործի քննությանը, եթե նա՝ որպես պատասխանող, այդ գործին ի սկզբանե ներգրավված է եղել որպես տարածքային կառավարման մարմին, սակայն տվյալ գործի քննության ընթացքում Երևանի կարգավիճակը փոխվել է

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վարչական դատավարությունում դատավարական իրավահաջորդության և ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման ինստիտուտների վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, անհրաժեշտ է համարել անդրադառնալ Երևան քաղաքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում տեղի ունեցած հայեցակարգային փոփոխությունների արդյունքում Երևանի քաղաքապետի մասնակցությամբ վարչական գործերի շրջանակներում վերջինիս իրավահաջորդով կամ պատշաճ պատասխանողով փոխարինելու խնդրին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ըստ 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության՝ Երևան քաղաքն ունեցել է մարզի կարգավիճակ, և Երևան քաղաքում պետական կառավարման իրականացման կարգը սահմանվել է ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրով (ուժը կորցրել է 18.06.2009 թվականին), որի համաձայն՝ Երևանի տարածքում ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացրել է Երևանի քաղաքապետը՝ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ տարածքային կառավարումը պետության գործադիր իշխանության ոլորտում տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող գործունեության հատուկ տեսակ է: Գործելով պետու-

թյան անունից և իրականացնելով պետական կառավարման գործառնություններ՝ տարածքային կառավարման մարմիններն օժտված են պետախիշխանական լիազորություններով և կառավարչական գործունեությունն իրականացնում են բացառապես օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության շրջանակներում: Հետևաբար տարածքային կառավարումը, ինչպես նաև դրա գործառնություններն իրականացնող տարածքային կառավարման մարմինները հանդիսանում են պետական իշխանության միասնական կառուցակարգի բաղկացուցիչ մասը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ Երևան քաղաքի կարգավիճակը փոխվել է. Երևանը համայնք է, որի տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Ընդ որում, 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության անցումային դրույթներում նախատեսվել է նաև, որ մինչ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորումը Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումը և տարածքային կառավարումն իրականացվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Երևանի քաղաքապետի՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) ձևավորումից հետո Երևանի քաղաքապետը՝ որպես տարածքային կառավարման մարմին, դադարել է գոյություն ունենալ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Երևան քաղաքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում տեղի ունեցած վերը նշված հայեցակարգային փոփոխությունների արդյունքում Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի իրավահաջորդ է Հայաստանի Հանրապետությունը, քանի որ մինչև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Երևանի քաղաքապետի՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) ձևավորումը Երևանի քաղաքապետն ունեցել է պետական մարմնի (մարզպետի) կարգավիճակ և իրականացրել է պետական (տարածքային) կառավարման գործառնություններ՝ «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ Երևանի քաղաքապետը, հանդիսանալով տարածքային կառավարման մարմին, որևէ վարչական գործի շրջանակներում ներգրավված է եղել որպես դատավարության կողմ (հայցվոր, պատասխանող), սակայն տվյալ գործի քննության ընթացքում Երևանի քաղաքապետի կարգավիճակը փոխվել է՝ տարածքային կառավարման մարմնից վերածվելով տեղական ինքնակառավարման մարմնի, ապա վարչական դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի կանոններով լուծել Երևանի քաղաքապետին իրավահաջորդով փոխարինելու հարցը: Այլ կերպ ասած՝ եթե Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորումը և Երևանի քաղաքապետի՝ ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 12-րդ մասի ուժով տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) կարգավիճակի ձեռքբերումը տեղի են ունեցել Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի դեմ ներկայացված հայցի հիման վրա հարուցված վարչական գործի քննության ընթացքում, ապա վարչական դատարանը պետք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ վարչական մարմնի վերակազմակերպման հիմքով դատավարության մասնակից Երևանի քաղաքապետին փոխարինի իրավահաջորդով՝ Հայաստանի Հանրապետությունով:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ Երևանի քաղաքապետի կարգավիճակը փոխվելուց հետո ֆիզիկական և իրավաբանական անձինք դիմել են վարչական դատարան Երևանի քաղաքապետի՝

որպես տարածքային կառավարման մարմնի ընդունած վարչական ակտերի, կատարած գործողությունների կամ ցուցաբերած անգործության բողոքարկման պահանջով, և հայցը ներկայացվել է Երևանի քաղաքապետի (որպես համայնքի ղեկավարի) դեմ, ապա վարչական դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի կանոններով լուծել Երևանի քաղաքապետին պատշաճ պատասխանողով փոխարինելու հարցը, քանի որ Երևանի քաղաքապետը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին, չի կարող պատասխանել Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի դեմ ներկայացված հայցով: Այլ կերպ ասած՝ Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի կողմից ընդունված իրավական ակտերի, վերջինիս կատարած գործողությունների կամ ցուցաբերած անգործության՝ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորումից հետո վարչադատական կարգով բողոքարկման արդյունքում հարուցված վարչական գործերի քննության շրջանակներում Երևանի քաղաքապետը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին (համայնքի ղեկավար), չի կարող հանդիսանալ պատշաճ պատասխանող և պետք է փոխարինվի պատշաճ պատասխանողով, այսինքն՝ վիճելի իրավահարաբերության ենթադրյալ սուբյեկտով, որը տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետությունն է:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել նաև, որ Երևանի թաղային համայնքների ղեկավարների կողմից ընդունված վարչական ակտերի, կատարած գործողությունների կամ ցուցաբերած անգործության բողոքարկման պահանջով հարուցված դատական գործերի շրջանակներում պատշաճ պատասխանող է Երևանի քաղաքապետը, քանի որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Երևանի թաղային համայնքների իրավահաջորդը Երևան համայնքն է, հետևաբար Երևանի թաղային համայնքների ղեկավարների (թաղապետերի) իրավահաջորդը Երևան համայնքի ղեկավարն է՝ Երևանի քաղաքապետը:

**ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՅՈՒՑՈՒՄ**

**26.12.2016 թ.**

**46. Մեխակ Գաբրիելյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, վարչ. գործ թիվ ՎԴ/10561/05/13**

**Էջ  
494–504**

*Խնդիր.* Կարճ է արդյոք վարչական դատարանը գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը հաստատել օտարալեզու ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով՝ չպահանջելով օտարալեզու գրավոր ապացույց ներկայացրած դատավարության մասնակցից ներկայացնել այդ ապացույցը՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանության ձևով:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը նշել է, որ գրավոր ապացույցները վարչական դատավարությունում մեծ ապացուցողական նշանակություն ունեցող և տարածված ապացուցման միջոցներ են, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածում ամրագրված ձևակերպումից բխում է, որ որպես գրավոր ապացույց կարող է հանդես գալ ցանկացած նյութական կրիչ, որի վրա տատերի, թվերի, ծածկագրերի և այլ նշան-

ների կիրառմամբ արտացոլված են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին որոշակի տեղեկություններ: Ընդ որում, գրավոր ապացույցներում ապացուցողական նշանակություն ունի այն տեղեկությունը (միտքը), որը տառերի, թվերի, ծածկագրերի և այլ նշանների միջոցով արտացոլված է որոշակի նյութական կրիչի վրա և ընկալվում է դրա բովանդակության (տեքստի) ընթերցման միջոցով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածով օրենսդիրը կարգավորել է օտար լեզվով կազմված գրավոր ապացույցները հայերեն թարգմանությամբ ներկայացնելու կարգը և չթարգմանված ապացույցները դատարան ներկայացնելու դատավարական հետևանքները: Այսպես, վկայակոչված հոդվածի 8-րդ մասի ուժով դատարանն իրավասու է դատավարության մասնակցի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ օտարալեզու ապացույց ներկայացրած դատավարության մասնակցից պահանջել ներկայացնել նույն ապացույցը՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանության տեսքով: Ընդ որում, վարչական դատարանի նշված պահանջը չկատարելու դատավարական հետևանքները հանգում են հետևյալին. դատարանի պահանջից հետո օտար լեզվով կազմված գրավոր ապացույցի փոխարեն դրա՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությունը չներկայացնելու դեպքում դատարանը տվյալ ապացույցը կարող է հանել հետազոտման ենթակա ապացույցների շարքից:

Հիմք ընդունելով սահմանադրաիրավական այն դրույթը, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով ամրագրված դատավարության լեզվի սկզբունքը, ինչպես նաև քննարկվող հարցի շուրջ ձևավորված իրավակիրառ պրակտիկան՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատավարությունում օտար լեզվով կազմված փաստաթղթերի ներկայացման դեպքում ապացուցման պարտականություն ունեցող դատավարության մասնակիցների կողմից պետք է ներկայացվի նաև այդ փաստաթղթի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում գրավոր ապացույցը համարվում է պատշաճորեն թարգմանված, եթե թարգմանության իսկությունը վավերացված է նոտարական կարգով («Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ և 68-րդ հոդված): Օտարալեզու գրավոր ապացույցի հետ մեկտեղ դրանց պատշաճորեն հաստատված (թարգմանության իսկությունը նոտարական կարգով վավերացված) հայերեն թարգմանությունները չներկայացվելու դեպքում վարչական դատարանը պետք է օտար լեզվով կազմված փաստաթղթերը հանի հետազոտման ենթակա ապացույցների շարքից: Այլ կերպ ասած՝ վարչական դատարանը պարտավոր է օտար լեզվով կազմված գրավոր ապացույցը ճանաչել անթույլատրելի և հանել գործում առկա ապացույցների կազմից, եթե այդ ապացույցը ներկայացրած դատավարության մասնակիցը չի ներկայացրել նաև դրա պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը:

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

### ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

01.08.2016 թ.

1. Կարեն Սահակյանն ու մյուսներն ընդդեմ «ԵԱԶ» ամրանների գործարան» ԲԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/5797/02/15

Էջ  
505-511

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է բաժնետիրական ընկերության վերակազմակերպման՝ մասնավորապես բաժանման պահանջով հայց հարուցելու իրավունքի իրացման նախադրյալների հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է Եվրոպական դատարանի որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: **Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում:** Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրեն Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, **բացարձակ չեն և կարող են ենթարկվել սահմանափակումների**, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ (*յրեն Ալ-Արսանին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 35763/97 զանգայրով Եվրոպական դատարանի 21.11.2001 թվականի վճիռը, պարբ. 53, Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի թիվ 34791/97 զանգայրով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, պարբ. 35, Ռասպոն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 4210/00 զանգայրով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, պարբ. 90, «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 զանգայրով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, պարբ. 44*):

Միաժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է դատարան դիմելու արդյունավետ իրա-



վունք, այնուամենայնիվ, պետության հայեցողությանն է թողնված նշված նպատակի համար անհրաժեշտ միջոցների ընտրության հարցը (*Կրեն Էյրին ընդդեմ Բոլանդիայի թիվ 6289/73 գանգադուլ Եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը, պարբ. 26*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի և 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, որը ենթակա է իրականացման նաև հայց հարուցելով, քաղաքացիական գործերի ենթակայությանը համապատասխան իրականացնում է դատարանը: Այսինքն՝ դատական ենթակայության առկայության դեպքում համապատասխան քաղաքացիական գործերի քննությունը և լուծումը քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ հանձնված է դատական մարմինների իրավասությանը: Այլ կերպ ասած՝ ենթակայության ինստիտուտի էությունը կայանում է նրանում, որ այն բացառում է գործը լուծելու համար այլ մարմինն դիմելու հնարավորությունը: Միաժամանակ բոլոր այն դեպքերում, երբ մինչ դատարան դիմելն օրենքով սահմանված կարգով առկա է գործն այլ մարմինների քննելու իրավասություն, ապա տվյալ գործը ենթակա չէ դատարանում քննության, իսկ դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի: Ըստ այդմ էլ Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում վեճը դատարանին ենթակա լինելու հարցը պարզելիս դատարաններն առաջին հերթին պետք է ելնեն վիճելի իրավահարաբերության բնույթից, որից հետո հաշվի առնեն տվյալ վեճը կարգավորող նյութական իրավունքի նորմերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև հայցային վարույթի գործերը հարուցվում են դատարան հայցադիմում ներկայացնելու միջոցով և հայց ներկայացնելը հանդիսանում է գործի հարուցման նախապայման, այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ առկա չեն հայց հարուցելու իրավունքի նախադրյալները, որոնցից է նաև հայցը դատարանին ենթակա լինելու նախապայմանը, այդպիսի պարագայում բացակայում է հայցվորի՝ հայց հարուցելու իրավունքը, հետևաբար և դատավորը կայացնում է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով սույն գործով ներկայացված՝ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու պահանջի՝ դատարանում քննության ենթակա լինելու հարցին, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, սահմանելով իրավաբանական անձի վերակազմակերպման հետևյալ ձևերը՝ միաձուլում, միացում, **բաժանում**, առանձնացում և վերակազմավորում, միաժամանակ ամրագրել է, որ վերակազմակերպման, **մասնավորապես բաժանման և առանձնացման ձևերի** դեպքում այն իրականացվում է երկու եղանակով՝ **կամավոր և հարկադիր**: Որպես կանոն, իրավաբանական անձի, տվյալ դեպքում բաժնետիրական ընկերությունների **վերակազմակերպումը՝ այդ թվում նաև բաժանումը**, կատարվում է **կամավոր կարգով**՝ նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշման հիման վրա: Ընդ որում, բաժնետիրական ընկերության բաժանման մասին որոշում ընդունելու իրավասությունը պատկանում է բաժնետիրական ընկերության կառավարման բարձրագույն մարմնին՝ ընկերության ժողովին, որը հաստատում է նաև բաժանման կարգը և պայմանները:

Ի տարբերություն կամավոր կարգի՝ բաժնետիրական ընկերության **հարկադիր վերակազմակերպումը տեղի է ունենում դատարանի վճռով՝ բացառապես օրենքով նախատեսված դեպքերում**: Ընդ որում՝ դատարանի վճռով **հարկադիր վերակազմակերպումն** իրականացվում է բացառապես բաժանման կամ առանձնացման ձևերի դեպքում, քանի որ այդ դեպքում հնարավոր է **ընկե-**

**րության գույքային միջոցների նվազեցում:** Բացի այդ, բաժանման ձևով վերակազմակերպման արդյունքում վերակազմակերպվող ընկերությունը դադարում է գոյություն ունենալուց, իսկ նրա բոլոր իրավունքները և պարտականությունները փոխանցվում են նոր ստեղծվող ընկերություններին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական կարգով ընկերության բաժանման պահանջի դեպքում առկա է իրավաբանական անձի հարկադիր վերակազմակերպման պահանջ, որը ենթակա է դատարանի քննությանը միայն օրենքով նախատեսված դեպքերում, այսինքն՝ այն դեպքում, երբ օրենքով սահմանված կարգով ուղղակիորեն և հստակ ամրագրված է համապատասխան իրավասու անձի՝ տվյալ պահանջով հայց ներկայացնելու իրավունքը կամ տվյալ պահանջը դատարանին քննության ենթակա լինելը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բաժնետիրական ընկերության բաժնետերերն ընկերության վերակազմակերպման (տվյալ դեպքում՝ բաժանման) գործընթացի հետ կապված իրենց պահանջները կարող են ներկայացնել օրենքով սահմանված կարգով՝ իրենց իրավասությունների շրջանակում (*օրինակ՝ բաժնետերերն իրավունք ունի «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետով սահմանված կարգով դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով և այլն*): Ընդ որում, նշվածը կարող է իրականացվել միայն կամավոր կարգով բաժնետիրական ընկերության վերակազմավորման (տվյալ դեպքում բաժանման) դեպքերում:

Սույն գործով համահայցվորները՝ որպես «ԵԱԶ» ամրանների գործարան» ԲԲԸ բաժնետերեր, նախապես դիմել են ընկերության նախագահին՝ ցանկություն հայտնելով ընկերության գույքից առանձնացնել իրենց բաժնեմասը և խնդրելով հրավիրել բաժնետերերի ընդհանուր ժողով՝ այդ հարցի քննարկման նպատակով, որից հետո դիմել են դատարան՝ պահանջելով վերակազմակերպել, այն է՝ բաժնեղ ընկերությունը: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը վեճը դատարանում ենթակա չլինելու հիմքով մերժել է հայցադիմումի ընդունումը՝ հայտնելով, որ չի պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, չի ներկայացվել իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշում՝ վերակազմակերպում կատարելու անհամաձայնության վերաբերյալ: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը վերացրել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը՝ որոշման հիմքում դնելով այն հանգամանքը, որ մինչև դատարան դիմելը համահայցվորներն այդ հարցի քննարկման նպատակով դիմել են ընկերության նախագահին: Վճռաբեկ դատարանը գտել է, որ կամավոր կարգով իրավաբանական անձի վերակազմակերպման համար նախատեսված է հատուկ ընթացակարգ, որը պահպանելու դեպքում միայն համահայցվորները կարող են դիմել դատարան՝ բաժանման ձևով ընկերության վերակազմակերպումն իրականացնելու համար: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով չհրավիրելու պայմաններում ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված հարցի լուծումը չի կարող իրականացվել դատական կարգով՝ առանց այդպիսի դեպքն օրենքով նախատեսված լինելու պայմանի:

22.07.2016 թ.

2. «ԲԻԷՍԷՄԲԻ» ՍՊԸ-ն ընդդեմ «ՌԻՆԱՐՏ» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԱՆԴ/3828/02/15

Էջ

512-519

**Խնդիր.** Արդյո՞ք քաղաքացիական գործի հարուցման փուլում հայցադիմում ներկայացնելիս հայցվոր կողմի վրա դրված է պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականություն:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ դատարան հայց ներկայացնելը և քաղաքացիական գործի հարուցումը քաղաքացիական դատավարության առաջին և ինքնուրույն փուլն է, որից հետո միայն սկսվում է գործի շարժը և հնարավոր է դառնում դատավարական հետագա բոլոր գործողությունների կատարումը: Դատարանը քաղաքացիական գործի քննությանը և վեճի լուծմանը ձեռնամուխ է լինում իրենց իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը պաշտպանելու համար դատարան դիմող անձանց դիմումի հիման վրա (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 3-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներ): Հայցային վարույթի գործերը հարուցվում են դատարան հայցադիմում ներկայացնելու միջոցով, որն իրավունքի պաշտպանության վարույթի հարուցման դատավարական միջոց է, թեև հայց ներկայացնելը գործի հարուցման նախապայման է, այնուհանդերձ ինքնին բավարար չէ քաղաքացիական գործ հարուցելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը համապատասխանի օրենքով սահմանված դատավարական պահանջներին: Դատավորը հայցադիմումը վարույթ ընդունելու որոշում կարող է կայացնել միայն այն դեպքում, եթե հայցադիմում ընդունելիս ստուգում և պարզում է, որ հայցվորը հայց հարուցելու իրավունք ունի, այսինքն՝ երբ առկա են հայց հարուցելու իրավունքի նախադրյալները, և հայցվորը պահպանել է այն հարուցելու (դատարան դիմելու) օրենքով սահմանված կարգը, այլ կերպ ասած պահպանվել են հայցադիմումի գրավոր ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հակառակ դեպքում՝ այդ պահանջների չպահպանումը հիմք է հայցադիմումը վերադարձնելու համար, և հայցվորի մոտ ծագում է անհրաժեշտություն վերացնելու համապատասխան հայցադիմումի թերությունները (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդված):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա են հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջների ձևական խախտումներ, ինչպես նաև պրակտիկ խոչընդոտներ, որոնք հնարավոր է շտկել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, ապա դատավորը պետք է ձեռնամուխ լինի հայցադիմումը վարույթ ընդունելու, իսկ դրանում առկա անհստակությունները շտկելու գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, ինչը բխում է «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքներից (որեն «Եվրոպա» ՍՊԸ-ն ընդդեմ «Մայիուսկ կամար» ՍՊԸ-ի թիվ ԵԱԶԴ/1020/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.09.2014 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հայցադիմումին ներկայացվող՝ օրենքով սահմանված դատավարական պահանջներից է գործին մասնակցող անձանց, այդ թվում նաև՝ պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի հասցեն նշելը: Նման պահանջ սահմանելն ինքնանպատակ չէ և նպատակաուղղված է այն հարցի պարզաբանմանը, թե ներկայացված հայցադիմումն ընդդատյա է արդյո՞ք այն դատարանին, որին ներկայացվել է: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի հասցեն նշելը չի կարող նույնացվել այդ հասցեի վերաբերյալ համապատասխան ապացույց ներկայացնելու պարտականության հետ: Նման մոտեցման դեպքում անձի վրա դրվում է պարտակա-

նություն յուրաքանչյուր դեպքում պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրը նշելիս հայցադիմումին կից ներկայացնել նաև պատասխանողի կողմից որևէ հասցեում բնակվելու կամ գտնվելու վերաբերյալ հիմնավորող ապացույցներ: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ և 88-րդ հոդվածների տատացի մեկնաբանությունից նման հետևություն չի կարող բխեցվել: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ հայցադիմումում նշվում են գործին մասնակցող անձանց, այդ թվում նաև՝ պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի հասցեները, իսկ նույն օրենսգրքի 88-րդ հոդվածը, նախատեսելով հայցադիմումին կցվող փաստաթղթերի ցանկը, հայցվորին չի պարտավորեցնում հայցադիմումին կից ներկայացնել նաև պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ ապացույցներ: Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից չի բխում ապացույցները բացառապես հայցադիմումին կից ներկայացնելը՝ նկատի ունենալով նաև գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առկայությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ հայցադիմումի բովանդակությանը և ընդդատության ինստիտուտին առնչվող հոդվածների փոխկապակցված մեկնաբանությունից բխում է, որ օրենսդրորեն հայցվորի վրա դրված չէ պարտականություն հայցադիմում ներկայացնելիս ներկայացնելու նաև թույլատրելի ապացույցներ պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ: Հետևաբար գործող օրենսդրությամբ հայցվորի վրա դրված է միայն հայցադիմումում պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրը նշելու պարտականություն: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցադիմումի ընդունելիության փուլում ընդդատության հարցը պարզելիս գործում է պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ հայցադիմումում նշված հասցեի հավաստիության կանխավարկածը, որը կարող է ստուգվել գործի քննության հետագա փուլերում՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ օրենսդիրը դատարանին վերապահել է ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործն այլ դատարանի քննությանը հանձնելու լիազորություն:

## ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

20.01.2016 թ.

### 3. Մարտիայա Խոջումյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1324/02/12

Էջ  
520–531

**Խնդիր.** Արդյո՞ք ֆիզիկական անձինք պետք է կրեն իրենց գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտերի բողոքարկման համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականություն:

\* Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե իրավաչափ է արդյոք պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը մերժելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը՝ այդ որոշման եզրափակիչ մասում նշված միջնորդության մերժման մասին որևէ եզրահանգման բացակայության պայմաններում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի սոցիալական խմբի անդամների պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում այդ անձանց իրավունքների արդյունավետ դատա-

կան պաշտպանությունն ամրագրվում է որպես վերջիններիս իրավունքների ու ազատությունների ապահովման կարևորագույն երաշխիք:

Մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից 17.12.1991 թվականի թիվ 46/119 բանաձևով հաստատված հոգեկան հիվանդությամբ տառապողների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքներն անթույլատրելի են համարում հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց նկատմամբ որևէ խտրական մոտեցում, այսինքն՝ ցանկացած տարբերակումների, բացառությունների կամ նախապատվություն տալու դրսևորումներ, որոնց արդյունքում հոգեկան հիվանդությամբ տառապողների համար անհնարին կդառնա կամ կդժվարանա մարդու՝ միջազգայնորեն ճանաչված իրավունքներից հավասար օգտվելը: Վկայակոչված սկզբունքների համաձայն՝ անձը, ում գործունակությունը հանդիսանում է քննության առարկա, իրավունք ունի իրեն անգործունակ ճանաչելու մասին վճիռը բողոքարկել վերադաս դատական ատյան՝ այլ շահագրգիռ անձանց հետ հավասար պայմաններում:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 23.02.1999 թվականին ընդունված «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանությանն առնչվող սկզբունքների մասին» թիվ R(99)4 հանձնարարականով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին առաջարկվում է անգործունակ չափահաս անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ համապատասխան օրենսդրական կարգավորումներ ամրագրելիս առաջնորդվել այդ հանձնարարականում ամրագրված սկզբունքներով: Այդ սկզբունքների շարքում ներառված է նաև անձի՝ անձամբ լավելու իրավունքի պահպանման սկզբունքը ցանկացած դատաքննության ընթացքում, որը կարող է առնչվել այդ անձի գործունակությանը, ինչպես նաև անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ ակտերի պարբերաբար վերանայման և պատշաճ բողոքարկման հնարավորության ամրագրումը:

Եվրոպական դատարանը քննարկվող հարցի կապակցությամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անգործունակ ճանաչված անձին դատավարական իրավունքներից զրկելը կարող է արդարացված լինել այդ անձի պաշտպանության, այլ անձանց շահերի պաշտպանության և արդարադատության պատշաճ իրականացման անհրաժեշտությամբ: Սակայն, մյուս կողմից, անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ որոշումը դատարանի կողմից վերանայելու պահանջի իրավունքը հանդիսանում է անձի կարևորագույն իրավունքներից մեկը, քանի որ նման գործընթացը կարող է ուղղակիորեն ազդել բոլոր իրավունքների և ազատությունների իրականացման վրա, որոնք սահմանափակվել էին անձին անգործունակ ճանաչելու արդյունքում: Նման հնարավորության բացակայությունը չի կարող արդարացվել իրավաչափ նպատակով, որը կարող է դրվել անգործունակ ճանաչված անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմքում (*Կրեն Նասրայյա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 30.05.2013 թվականի վճիռը*):

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերի քննության շրջանակներում այդ ֆիզիկական անձի դատավարական կարգավիճակի առանձնահատկություններին, իր նախկին որոշումներից մեկում նշել է, որ անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի ուժով հավասարապես վերաբերում է նաև հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի սոցիալական խմբի անդամներին: Հաշվի առնելով այն իրավական հետևանքները, որոնք քաղաքացու համար ծագում են անգործունակ ճանաչվելու դեպքում, այն է՝ անձն անորոշ ժամկետով զրկվում է ինքնուրույնաբար, իր գործողություններով իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստանձնելու և դրանք կատարելու հնարավորությունից, ինչպես նաև սահմանափակվում են անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիության իրա-

վունքը՝ օրենսդիրն անձին անգործունակ ճանաչելը թույլատրում է բացառապես դատական կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է քաղաքացուն ծանուցել անգործունակ ճանաչելու վերաբերյալ իր կողմից կայացված վճռի մասին՝ այդ անձին հնարավորություն տալով օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու տվյալ վճիռը (*Կեն ըսար Շենգավիթ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումի՝ Վլադիմիր Օհանովին անգործունակ ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵՇԿ/0938/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը 07.04.2015 թվականի թիվ ՍԴՌ-1197 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանությունը պետք է ներառի, մասնավորապես, հետևյալ իրավունքները. դատարանում լսվելու իրավունքը, դատական քննությանը լիարժեք մասնակցության իրավունքը և դատական ակտի բողոքարկման իրավունքը: Այն անձանց համար, ում գործունակությունը քննվում է դատարանում, պետք է ապահովվեն իրավահավասարության, դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, արդար դատաքննության և դատական ակտերը բողոքարկելու իրավունքները: Նշված հիմնարար իրավունքների ուժով ցանկացած անձ, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է օժտված լինի համապատասխան դատավարական կարգավիճակով, կրի դատավարական պարտականություններ, ինչպես նաև օգտվի դատավարության մասնակցի կարգավիճակից բխող դատավարական իրավունքներից, ներառյալ՝ դատական ակտերը բողոքարկելու իրավունքը:

Վերոգրյալ միջազգային-իրավական փաստաթղթերի և իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է հետևյալ եզրակացության. Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանան այն ուղղությամբ, որ ֆիզիկական անձն իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական գործի շրջանակներում ունենա համապատասխան դատավարական կարգավիճակ, որը գործնականում թույլ կտա վերջինիս, *inter alia*, անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով բողոքարկելու իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը: Այլ կերպ ասած՝ այն ֆիզիկական անձը, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է ունենա դատավարության մասնակցի կարգավիճակից բխող այնպիսի դատավարական իրավունքներ, որոնք կընձեռեն վերջինիս՝ այդ գործի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտերը բողոքարկելու իրական հնարավորություն:

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանը 28.11.2007 թվականի թիվ ՍԴՌ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից:

ՀՀ սահմանադրական դատարանը 25.11.2008 թվականի թիվ ՍԴՌ-780 որոշմամբ հանգել է այն եզրակացության, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտի բողոքարկման իրավունքն է:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի թիվ ՍԴՌ-1037 որոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստու-

գումն է, այլև այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորագրած դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես՝ 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին, չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Վերոհիշյալ իրավական նորմերի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական ակտերի բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*լրեն «Ճաթ Միլայ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Եվրոպական դատարանի կողմից հստակ ձևավորված նախադեպային իրավունքը Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատական ատյաններ, այնուամենայնիվ, եթե դրանք ստեղծվել են, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում նաև՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից (*լրեն օրինակ, Միսկոկովսկան ընդդեմ Լեհաստանի գործով ՄԻԵԴ-ի 22.03.2007 թվականի վճիռը, 103-րդ կետը*):

«Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով 20.12.2007 թվականի վճռում Եվրոպական դատարանը, կրկնելով վերոնշյալ իրավական դիրքորոշումը, կրկին փաստել է, որ ներպետական օրենսդրությամբ բողոքարկման ընթացակարգերի առկայության պայմաններում Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել, որ իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձինք վերաքննիչ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից, որոնք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այնուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն սատիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն: Ավելին՝ այն սահմանափակումները, որոնք զուտ ֆինանսական բնույթ ունեն, պետք է մանրակրկիտ քննության առնվեն՝ ելնելով արդարադատության շահերից (*լրեն «Պայ-*

*քար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, 44-րդ և 45-րդ կետերը):*

25.05.2010 թվականի թիվ ՄԴՈ-890 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ օրենսդիրը, կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները, կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում նշել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայցցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառնիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից (*տես Շամսալ Կարապետյանն ընդդեմ Արայիկ Միրզոյանի թիվ ԱԲԿ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.01.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածն ամրագրում է դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու տեսքով արտոնություն կիրառելու հիմքերը՝ սահմանելով դատարան դիմելու համար գանձվող պետական տուրքի վճարումից ազատելու դեպքերի բավական լայն շրջանակ: Նշված դեպքերից մեկն այն է, որ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատարան դիմում ներկայացնող անձինք օրենքի ուժով ազատված են այդ դիմումների համար պետական տուրք վճարելու պարտականությունից: Բացի այդ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար: Ընդ որում, նմանատիպ իրավակարգավորում է նախատեսում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որի 171-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դիմողն ազատվում է քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի քննության հետ կապված դատական ծախսերից:



Օրենսդրական նման իրավակարգավորումներից բխում է, որ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտները, այսինքն՝ այդ ֆիզիկական անձի ընտանիքի անդամները, խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ հոգեբուժական հաստատության տնօրինությունը, օրենքի ուժով ազատված են ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի քննության հետ կապված դատական ծախսերից, այդ թվում նաև՝ պետական տուրքի վճարման պարտականությունից: Մինչդեռ օրենսդիրը ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի քննության առնչությամբ դատական ծախսերից այդ ֆիզիկական անձին ազատելու հետ կապված որևէ իրավակարգավորում չի սահմանել: Փաստորեն, ի տարբերություն ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների, ֆիզիկական անձն ազատված չէ իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի քննության հետ կապված դատական ծախսերից, մասնավորապես՝ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրք վճարելու պարտականությունից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի նման իրավակարգավորման արդյունքում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի դեպքում այդ անձը չի ազատվում պետական տուրքի վճարումից: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ քննարկվող խնդրի ամբողջական լուծման համար պետք է հիմք ընդունվի այն ելակետային դրույթը, որ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտերի դեմ այդ անձի կողմից բողոք բերելու հնարավորության առկայությունը և նրա խախտված իրավունքները վերականգնելը համարվում են սահմանադրական անվերապահ պահանջ՝ մարդու հիմնարար իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող խաթարել այդ իրավունքի բուն էությունը կամ օրենքի քաջի արդյունքում արգելափակել այն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արդարացված չի համարել այն իրավիճակը, երբ ֆիզիկական անձի անգործունակության հարցի քննության արդյունքում կայացված դատական ակտը բողոքարկելիս անգործունակ ճանաչվող անձի համար չի նախատեսվում պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն այն դեպքում, երբ նման դիմում ներկայացրած անձը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «Ժե» կետի և 2-րդ մասի համաձայն, ազատված է պետական տուրքի վճարումից: Առկա իրավակարգավորման պայմաններում լիարժեք կերպով չի երաշխավորվում հոգեկան խանգարումներ ունեցող անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքը՝ խոչընդոտելով վերջինիս՝ իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը: Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն. ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է դատական ակտի բողոքարկման սահմանադրական իրավունքի էությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հոգեկան խանգարումներ ունեցող անձինք, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում օժտված լինելով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքներով, իրենց գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտի բողոքարկման համար սահմանված պետական տուրքից ազատված չլինելու պայմաններ

րում գրկվում են իրենց գործունակության վերաբերյալ վերջնական դատական ակտերը բողոքարկելու, այսինքն՝ վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում վերջիններիս դատարանի մատչելիության իրավունքը պատշաճ կերպով իրացնելու հնարավորությունից: Այլ կերպ ասած՝ ֆիզիկական անձի՝ իր գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտի բողոքարկման համար սահմանված պետական տուրքից ազատված չլինելու արդյունքում վերջինս գրկվում է իր դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքի երաշխավորված իրացման հնարավորությունից:

Բացի այդ, ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերի քննության առնչությամբ դատական ծախսերի գծով արտոնություն սահմանելու հարցում օրենսդիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել, մի կողմից, այդ գործերը դատարանում հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների և, մյուս կողմից, այն ֆիզիկական անձանց միջև, ում անգործունակ ճանաչելու հարցը քննության է առնվում այդ գործերով:

ՀՀ Սահմանադրական դատարանը, 04.05.2010 թվականի թիվ ՄԴՌ-881 որոշմամբ անդրադառնալով խտրականության արգելքի համընդհանուր սկզբունքի բովանդակությանը, նշել է, որ այդ սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից: Մինչդեռ հաշվի առնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ֆիզիկական անձի՝ իր գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտի բողոքարկման համար սահմանված պետական տուրքից ազատված չլինելը չունի որևէ օբյեկտիվ հիմք և չի կարող հետապնդել որևէ իրավաչափ նպատակ: Հետևաբար, պետական տուրքի վճարման գծով արտոնություն սահմանելու հարցում ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի հարուցման իրավասություն ունեցող սուբյեկտների և այդ ֆիզիկական անձի միջև ցուցաբերվող տարբերակված մոտեցումը հանդիսանում է խտրականության արգելքի սկզբունքի խախտում, ինչը չի կարող համահունչ լինել իրավական պետությանը և ժողովրդավարական հասարակությանը ներկայացվող պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ վերջնական դատական ակտերն այդ անձի կամ վերջինիս ներկայացուցչի միջոցով բողոքարկելու իրավունքի պատշաճ իրացման նպատակով այդ ֆիզիկական անձը պետք է ազատված լինի վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականությունից, ինչը հնարավորություն կտա գործնականում ապահովել նրա արդար դատաքննության և դատական պաշտպանության հիմնարար իրավունքները, ինչպես նաև երաշխավորել հոգեկան խանգարումներով տառապող անձանց նկատմամբ խտրականության արգելքի սկզբունքի կյանքի կոչումը քաղաքացիական դատավարության շրջանակներում:

### ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

03.08.2016 թ.

4. Ասատուր Հարությունյան, քաղ. գործ թիվ ԵՄԴ/3384/02/15

Էջ  
532–539

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանը հատուկ և հայցային վարույթների առանձնահատկությունների լույսի ներքո անդրադարձել է փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու վերաբերյալ գործերով աշխատողի և գործատուի միջև իրավունքի մասին վեճի առկայության խնդրին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ յուրաքանչյուր քաղաքացիական գործի հարուցման հիմքը հայցի կամ դիմումի առկայությունն է, հետևաբար շահագրգիռ անձը քաղաքացիական դատավարության կարգով իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունն իրականացնում է դատարան կամ հայց, կամ դիմում ներկայացնելով: Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե քաղաքացիական գործի հարուցման հիմքում ընկած է դիմումը, թե հայցադիմումը, օրենսդիրն առանձնացրել է հատուկ և հայցային վարույթները, որոնք միմյանցից էականորեն տարբերվում են և ունեն գործերի քննության իրենց բնորոշ առանձնահատկություններ: Ըստ այդմ էլ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրին: Այսպես, հայցային վարույթը քաղաքացիական դատավարության հիմնական տեսակն է, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, հողային, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ իրավահարաբերություններից ծագող սուբյեկտիվ իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին վերաբերող վեճերի քննությանն ու լուծմանն ուղղված դատարանի գործողությունը, որը կարգավորվում է քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով: Իրավունքի պաշտպանության հայցային վարույթում առկա են՝

1) կողմի՝ խախտված կամ վիճարկվող իրավունքից ծագող և օրենքով սահմանված որոշակի կարգով քննության ենթակա **նյութաիրավական պահանջ**, այսինքն՝ հայց,

2) **սուբյեկտիվ իրավունքի մասին վեճ**,

3) հակադիր շահերով օժտված երկու կողմեր, որոնք օժտված են նաև իրենց իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանելու որոշակի լիազորություններով:

Մինչդեռ հատուկ վարույթի կարգով դատարանը հաստատում է քաղաքացիների կամ կազմակերպությունների գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, քաղաքացու որոշակի իրավական վիճակը կամ նրան պատկանող իրավունքը: Հատուկ վարույթը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝

1) այստեղ **իրավունքի մասին վեճ չկա**, քանի որ դիմողն այլ անձանց որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացնում,

2) հատուկ վարույթին բնորոշ է ոչ թե վեճի բացակայությունն ընդհանրապես, այլ դատական մարմինների քննությանն օրենքով հանձնված **իրավունքի մասին վեճի բացակայությունը**,

3) հատուկ վարույթում դատարանի լուծմանը ենթակա իրավունքի մասին վեճ չկա, ուստի այստեղ չկան նաև **հայցվոր ու պատասխանող**, այստեղ կան միայն դիմողներ և շահագրգիռ այլ անձինք,

**4) հատուկ վարույթում չկա նաև հայց:**

Այսպիսով հատուկ վարույթի գործերով բացակայում է իրավունքի մասին վեճը, իսկ շահագրգիռ անձն էլ որևէ մեկի դեմ որևէ պահանջ չի ներկայացնում: Այսինքն՝ հատուկ վարույթի գործերով **բացակայում է դատարանի քննությանը ենթակա (սրա լուծմանը հանձնված) իրավունքի մասին վեճը:**

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում **իրավունքի վերաբերյալ վեճի առկայությունն ստուգելիս** դատարանը պարտավոր է պարզել, թե արդյո՞ք գործի փաստերից ելնելով առերևույթ առկա է փոխադարձ կապ քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև, և արդյո՞ք նման փաստի հաստատումը կարող է որևէ կերպ ազդել այլ անձի իրավունքների ծավալի վրա: Ընդ որում, դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վեճի առկայության կամ բացակայության հարցը պետք է պարզի՝ **եղնելով տվյալ գործի փաստերից, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից** (տես ըստ դիմումի «Ֆիրմա-ՄՄ» ՍՊԸ-ի՝ հողամասի նկարմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ 3-445(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը):

Ամփոփելով վերը շարադրված վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը քաղաքացիական դատավարության կարգով իրացվում է հայցային և հատուկ վարույթների միջոցով, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ և դրանցով պայմանավորված՝ համապատասխան վարույթի իրականացման հատուկ ընթացակարգ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, 102-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի վերլուծությունից հետևում է, որ աշխատանքային իրավահարաբերություններում ինչպես աշխատողի, այնպես էլ գործատուի իրավունքները և օրինական շահերը ենթակա են պաշտպանության: Այսպես, այն դեպքում, երբ աշխատողը գործատուի հետ գտնվում է փաստացի աշխատանքային հարաբերություններում, սակայն գործատուն հրաժարվում է նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր կամ ընդունել աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ, ապա օրենսդիրն աշխատողին իրավունք է վերապահել դիմելու դատարան ընդդեմ գործատուի՝ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու պահանջով: Ընդ որում, նշված պահանջն աշխատողը կարող է ներկայացնել ինչպես փաստացի աշխատանքային հարաբերությունների գոյության ժամանակահատվածում, այնպես էլ փաստացի աշխատանքային հարաբերությունները դադարելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը դատական կարգով հաստատելու պահանջների դեպքում **աշխատողի և գործատուի միջև ըստ էության ծագում է վեճ իրավունքի մասին:** Այսինքն՝ հաստատվող փաստի և այլ անձի (տվյալ դեպքում՝ գործատուի) իրավունքների և պարտականությունների միջև առաջանում է փոխադարձ կապ, և նման փաստի հաստատումն իր հերթին ազդում է այլ անձի (տվյալ դեպքում՝ գործատուի) իրավունքների և պարտականությունների ծավալի վրա, քանի որ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը դատարանի կողմից հաստատվելուց հետո գործատուի մոտ ծագում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված համապատասխան իրավունքներ և պարտականություններ: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու վերաբերյալ աշխատողի և գործատուի միջև վեճի առկայության դեպքում գործը պետք է հարուցվի և քննվի հայցային վարույթի կարգով:

## ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

04.02.2016 թ.

5. ՌԴ պաշտպանության նախարարության Պոլևայա Դաշտային փոստ թիվ 04436 գորանաս, քաղ. գործ թիվ ՇԴ/0011/16/14

Էջ  
540–548

**Խնդիր.** Արդյո՞ք օտարերկրյա պետությունների դատարանների՝ քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու կամ ճանաչումը և կատարումը մերժելու վերաբերյալ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՌ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից անձանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանելու դատարանի դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 25.11.2008 թվականի թիվ ՍԴՌ-780 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի թիվ ՍԴՌ-1037 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է, այլև այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես՝ 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին կետով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին

ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին, չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Վերոհիշյալ իրավական նորմերի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր քաղաքիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է օտարերկրյա պետությունների դատական ակտերի ճանաչման հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը ենթադրում է պետական իշխանության գերակայություն, ինքնուրույնություն և անկախություն, ինչն իր մեջ ներառում է նաև պետության ամբողջ տարածքում արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասությունը: Հետևաբար օտարերկրյա դատական ակտերը Հայաստանի Հանրապետությունում ինքնըստինքյան չեն կարող ունենալ իրավական գործողության այն հատկանիշները (պարտադիրություն, անհերքելիություն, կատարելիություն, նախադատելիություն), ինչ ունեն ներպետական դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Միևնույն ժամանակ պետության ինքնիշխանությունը չի բացառում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչը նախևառաջ միջազգային համագործակցության դրսևորում է: Վերը նշվածով պայմանավորված՝ օրենսդիրը նախատեսել է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման կարգ՝ այդ ակտերի ճանաչման իրավասությունը վերապահելով ՀՀ դատարաններին: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտի ճանաչումն իրենից ներկայացնում է ՀՀ դատարանների կողմից այդ ակտերին այնպիսի իրավական հատկանիշների տրամադրում, որոնցով օժտված են Հայաստանի Հանրապետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, և թույլատրում այդ ակտի իրավական գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում: Այլ կերպ ասած՝ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտը միայն ճանաչման արդյունքում է Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերում պարտադիրության և կատարելիության հատկանիշներ: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247<sup>6</sup>-րդ հոդվածի 1-ին կետի և 247<sup>7</sup>-րդ հոդվածի 1-ին կետի փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ-ում ճանաչման ենթակա են օտարերկրյա պետությունների դատարանների՝ քաղաքացիական գործերով կայացրած վճիռները, որոշումները, օտարերկրյա պետությունների արբիտրաժային տրիբունալների վճիռները և որոշումները, ինչպես նաև միջազգային արբիտրաժի որոշումները, որոնք կատարում են ենթադրում (յրեն ըստ «Ինտերնացիոնալ Օնկրահինա» ՄՊԸ-ի միջնորդության Ուկրահինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոնտրոլին արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճիռը ճանա-

չելու և Հայաստանի Հանրապետության փարածքում կատարումը թույլատրելու պահանջների մասին թիվ ԵԿԴ/0024/16/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռարեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ օրենսդիրը, նախատեսելով ՀՀ-ում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորություն, այդուհանդերձ, այն չի սահմանել որպես բացարձակ և ոչնչով չպայմանավորված իրավունք, մասնավորապես, օրենսդիրն ամրագրել է, որ ՀՀ իրավասու դատարանը պարտավոր է պարզել, թե որքանով է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը համապատասխանում այն պահանջներին, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով: ՀՀ իրավասու դատարանը կարող է որոշում կայացնել օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու մասին միայն այն դեպքում, եթե պահպանված են համապատասխան միջազգային պայմանագրի պահանջները և բացակայում են ճանաչումը մերժելու՝ տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված հիմքերը: Վերոշարադրյալից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը թեև օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու ինքնուրույն հիմքեր չի նախատեսել, սակայն իմպերատիվ կերպով ամրագրել է, որ ՀՀ իրավասու դատարանները նմանատիպ միջնորդություններ քննելիս նախևառաջ պարտավոր են պարզել օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու՝ համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված հիմքերի առկայությունը:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածով ամրագրված մերժման հիմքերի վերլուծությունից հետևում է, որ դրանց նախատեսումն ինքնանպատակ չէ և անմիջականորեն պայմանավորված է ինչպես դատական վեճի կողմերի սուբյեկտիվ իրավունքների, այնպես էլ պետության և հասարակության շահերի պաշտպանությամբ: Այսպես, օրինակ, այնպիսի հիմքեր, ինչպիսիք են՝ օտարերկրյա դատական ակտի ուժի մեջ մտած լինելու հանգամանքը, կողմի պատշաճ ծանուցված լինելու փաստը, նույն կողմերի միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ ավելի վաղ ուժի մեջ մտած որոշման բացակայությունը, կոչված են կանխելու դեռևս կատարելիության հատկանիշ ձեռք չբերած կամ դատավարական ընթացակարգի խախտմամբ կայացված դատական ակտերի ճանաչումը և կատարումը՝ երաշխավորելով մյուս կողմի դատական պաշտպանության իրավունքը: Ընդ որում, այդպիսի հիմքերի ամրագրումը երկուստեք հավասարակշռում է ինչպես «հայցվորի», այնպես էլ «պատասխանողի» շահերը: Մասնավորապես, «հայցվորի» համար ակնհայտ է, որ սպառիչ ամրագրված հիմքերից բացի, որևէ այլ հիմքով չի կարող մերժվել դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու իր միջնորդությունը՝ սկստի ունենալով ներպետական օրենսդրությամբ համապատասխան հիմքերի բացակայությունը: Ինչ վերաբերում է «պատասխանողին», սպա, ինչպես արդեն նշվեց, վկայակոչված հիմքերը կոչված են կանխելու վերջինիս դատավարական իրավունքների խախտմամբ կայացված դատական ակտի ճանաչումը և դրա կատարումը: Այլ կերպ ասած՝ մերժման հիմքերի նախատեսումը բխում է անձի դատական պաշտպանության իրավունքից, իսկ դրանց իրավաչափ կիրառումն արդար դատաքննության իրավունքի իրացման կարևոր նախապայմանն է:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օտարերկրյա պետության դատական ակտերի ճանաչման գործընթացը ոչ միայն ենթադրում է ՀՀ իրավասու դատարանի կողմից այդ դատական ակտի ճանաչմանը խոչընդոտող՝ համապատասխան միջազգային պայմանագրով ամրագրված հիմքերի առկայության ստուգում, այլև՝ նշված հանգամանքների պարզման ուղղությամբ իրավասու դատարանի գործողությունների օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու իրավական հնարավորություն:

Վերը շարադրվածով հանդերձ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247<sup>6</sup>-247<sup>7</sup>-րդ հոդվածներով կարգավորելով օտարերկրյա պետությունների դատարանների որոշումները ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում չի նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերը ճանաչելու և կատարումը թույլատրելու կամ այդպիսի ակտի ճանաչումը մերժելու վերաբերյալ դատարանի որոշումը՝ դրանով իսկ բացառելով դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, այնինչ, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՄԴՌ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերը ճանաչելու և կատարումը թույլատրելու կամ այդպիսի ակտի ճանաչումը մերժելու վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունն անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նույնիսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով անմիջականորեն նախատեսված չլինելու պայմաններում, 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կենսագործելու և ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ակնհայտ է դառնում, որ ինչպես օտարերկրյա պետության դատական ակտը ՀՀ տարածքում ճանաչելու և հարկադիր կատարման միջոցներ կիրառելու մասին, այնպես էլ այդպիսի ակտի ճանաչումը մերժելու մասին ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման: Ընդ որում, նշված որոշումները ենթակա են բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կանոններով: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերը նշված որոշումներով, ըստ էության, եզրափակվում է օտարերկրյա դատական ակտի ճանաչման վարույթը:



# ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

25.05.2016 թ.

6. Հայկ Արմյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, վարչ. գործ թիվ ՎԴ/3540/05/14

Էջ  
549–565

*Խնդիր.* – Անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման բողոքարկման վերաբերյալ հայցապահանջն ընդդատյա է արդյոք վարչական, թե ընդհանուր իրավասության դատարանին,

- արդյոք անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ է,
- ինչ կանոններով պետք է քննվի անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը վերացնելուն ուղղված հայցապահանջը:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդդատությունը՝ որպես դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որոնք կարգավորում են դատարանի քննությանը ենթակա բոլոր գործերի բաշխումը ՀՀ դատական իշխանության առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև:

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՍԴՌ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

ՀՀ դատական օրենսգրքի 22–րդ հոդվածում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15–րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը կանխորոշել է ընդհանուր իրավասության դատարանի ընդդատության շրջանակը, որն ընդգրկում է բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանի քննությանը վերապահված գործերի: Իսկ ՀՀ դատական օրենսգրքի 35–րդ հոդվածում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10–րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը սահմանել է ՀՀ վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որը կազմված է հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերից: Փաստորեն, դատական գործերի տարանջատումը քաղաքացիականի և վարչականի պայմանավորված է այդ գործերով վիճելի իրավահարաբերության բնույթով. կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել այդ գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք տվյալ գործը ծագում է հանրային, թե մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից:

Այսպիսով, իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահա-

րաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը):

Վճռաբեկ դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակման և դրա հիման վրա դատական գործերի ընդդատության տարանջատման հարցին: Այսպես, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշման՝ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե ոչ,
2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե ոչ,
3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե ոչ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը (տե՛ս «Վեսթ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԳ/0823/05/14, թիվ ՎԳ/0830/05/14 և թիվ ՎԳ/1621/05/14 վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումները):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը ենթումը է բողոքարկման դատական կարգով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդրի կողմից սահմանված իրավադրույթի ուժով, որի համաձայն՝ հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանման գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում առաջին ատյանի դատարաններ են համարվում ընդհանուր իրավասության դատարանները և վարչական դատարանը: Հետևաբար, սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել պարզել, թե անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ հայցապահանջները և դրանց հիման վրա հարուցված գործերն առաջին ատյանի կոնկրետ դր դատարանին են ընդդատյա՝ ընդհանուր իրավասության դատարաններին, թե՛ վարչական դատարանին:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ հայցապահանջները բխում են հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա են վարչական դատարանի քննությանը: Այսպես՝

1. անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ գործով քննության ենթակա վեճի կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ հարկադիր կատարողը (Ծառայությունը),

2. անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ գործով քննության ենթակա վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ հարկադիր կատարողի (Ծառայության) կողմից հարկադիր կատարման ենթակա իրավական ակտերի կատարումն ապահովելու իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը,

3. անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ գործով վիճելի իրավահարաբերությունը ծագում է հարկադիր կատարման ենթակա հանրային իրավական դրամական պահանջների պարտադիրությունն ու կատարելիությունն ապահովելու հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացման և առարկայացման կապակցությամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, հանգել է այն եզրակացության, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման բողոքարկման վերաբերյալ հայցապահանջներն ընդդառյալ են վարչական դատարանին:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

Վերոգրյալից հետևում է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե ոչ: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական ակտը սահմանված է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է, այն ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար (*տե՛ս Ռոբերտ Հովհաննիսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ (*տե՛ս Վարդիթեր Ավոյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Օրենսդիրը վարչական ակտերով սահմանված հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով: Քննարկվող օրենքները սահմանում են, որ հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու համար հիմք է հանդիսանում օրենքով սահմանված կարգով կազմված և հարկադիր կատարողին ուղարկված դիմումը (գրությունը), որին կից համապատասխան վարչական մարմինը ներկայացնում է նաև հանրային իրավական դրամական պահանջ պարտակող վարչական ակտը, ինչպես նաև այդ վարչական ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելը, տվյալ վարչական ակտի ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող ապացույցները: Բացի այդ, այն դեպքում, երբ հանրային իրավական դրամական պահանջով պարտապանը ֆիզիկական անձ է, ապա այդ դրամական պահանջը ենթակա է հարկադիր կատարման, եթե այն չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերը նշված պահանջներին համապատասխանող դիմումը (գրությունը) և դրան կցված փաստաթղթերը հար-

կադիր կատարողին ներկայացնելու դեպքում վերջինս հարուցում է հանրային իրավական դրամական պահանջի կատարմանն ուղղված վարչական վարույթ՝ կայացնելով համապատասխան որոշում: Հակառակ պարագայում, այսինքն՝ այն դեպքում, երբ հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտն ընդունած վարչական մարմնի կողմից հարկադիր կատարողին ուղարկված դիմումը (գրությունը) և դրան կցված փաստաթղթերը չեն համապատասխանում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին, կամ եթե պարտապան ֆիզիկական անձից գանձման ենթակա հանրային իրավական դրամական պահանջը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է ներկայացված փաստաթղթերը վերադարձնել համապատասխան վարչական մարմին:

Անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման իրավական բնույթը համադրելով վարչական ակտին բնորոշ հատկանիշների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

1) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն անհատական իրավական ակտ է,

2) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ընդունվում է վարչական մարմնի՝ հարկադիր կատարողի (Ծառայության) կողմից,

3) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում,

5) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ուղղված է հանրային իշխանությանը օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ուղղակի իրավական հետևանքներ չի առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը չի սահմանում, չի փոփոխում, չի վերացնում կամ չի ճանաչում իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար:

Այսպիսով, անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը՝ որպես անհատական իրավական ակտ, օժտված չէ վարչական ակտին բնորոշ այնպիսի կարևոր առանձնահատկությամբ, ինչպիսին է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու՝ վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հատկանիշը: Հետևաբար վարչական ակտով նա-

խատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը ՀՀ իրավական համակարգում չի կարող համարվել վարչական ակտ, քանի որ այն օժտված չէ վարչական ակտին բնորոշ վերը նշված հատկանիշով և իր բնույթով ընդամենը վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի՝ որպես իրավական ընթացակարգի, սկիզբն ազդարարող իրավական ակտ է հանդիսանում:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

1) մի կողմից՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործն ընդդատյա է վարչական դատարանին և պետք է քննվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կանոնների համապատասխան,

2) մյուս կողմից՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը չի հանդիսանում վարչական ակտ, և այդ որոշման վերացման պահանջը չի կարող դառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի առարկա:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված խնդրահարույց իրավիճակի առաջացումը պայմանավորված է կատարողական վարույթի վերաբերյալ հարկադիր կատարողի կայացրած որոշումների, այդ թվում՝ նաև՝ վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման դատական կարգով բողոքարկման իրավական կառուցակարգի թերի և հանրային իշխանության մարմինների իրավական ակտերի, գործողությունների ու անգործության դատական կարգով բողոքարկման հարցում ընդհանուր հայեցակարգային մոտեցումների հակասող օրենսդրական կարգավորումներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՄԴՌ-1190 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործող օրենսդրությունը պատշաճ կերպով չի ապահովում հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթի շրջանակներում ընդունվող և վարչական ակտ չհանդիսացող անհատական իրավական ակտերի դեմ անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրացումը: Ուստի անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման դատական կարգով վիճարկման հարցում առկա իրավական խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել այն հանգամանքը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումների ուժով վերը նշված որոշումը ենթակա է բողոքարկման դատական կարգով: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ վերոգրյալ իրավագործող նորմի կիրառումը չի կարող խաթարվել դատավարական ընթացակարգերի անկատար կամ թերի լինելու պատճառով: Այլ կերպ ասած, օրենքով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված

հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վիճարկման իրավական հնարավորությունը պետք է երաշխավորված իրացվի՝ անկախ վարչադատավարական օրենսդրությամբ այդ որոշումների իրավաչափությունը դատական քննության անմիջական առարկա դարձնելու վերաբերյալ պատշաճ կառուցակարգի բացակայության հանգամանքից:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների՝ դատական կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն տվող միակ դատավարական կառուցակարգը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված ճանաչման հայցն է: Նշված հայցատեսակի միջոցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը՝ դրանով իսկ, ըստ էության, դատական քննության առարկա դարձնելով վիճելի կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները վերացնելուն ուղղված հայցապահանջները վարչական դատարանում ենթակա լինեն քննության ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված ճանաչման հայցի կանոններով: Այսինքն՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները վերացնելուն ուղղված հայցապահանջի հիման վրա հարուցված վարչական գործերը պետք է քննվեն այն նույն կարգով, որով քննվում են ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործերը: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն իրավաբանական իրողությունը, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վերացման նպատակով անձը չի կարող դատարան դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66–68–րդ հոդվածներով նախատեսված հայցատեսակներից որևէ մեկով, քանի որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վերացման հայցապահանջը չի համապատասխանում ո՛չ վիճարկման, ո՛չ պարտավորեցման, ո՛չ գործողության կատարման հայցատեսակներին:

Վերոգրյալ դատողություններից բխում է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները վերացնելուն ուղղված հայցադիմումը չի կարող չընդունվել վարչական դատարանի վարույթ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նման հայցատեսակ նախատեսված չլինելու պատճառաբանությամբ: Հետևաբար, վարչական դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78–րդ հոդվածի կանոնների կիրառմամբ լուծել նշված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նաև հատուկ ընդգծել, որ վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հար-

կադիր կատարողի որոշումը վերացնելուն ուղղված և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված ճանաչման հայցատեսակին համապատասխան ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու արդյունքում հարուցված վարչական գործի շրջանակներում վարչական դատարանը պետք է ստուգի այդ որոշման իրավաչափությունը, այսինքն՝ դրա համապատասխանությունը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին և քննարկվող անհատական իրավական ակտի՝ օրենքի խախտմամբ ընդունված լինելու դեպքում վճիռ կայացնի անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու մասին:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի գործող իրավակարգավորումները սահմանում են անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարողի ընդունած որոշումների, այդ թվում նաև՝ կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման կամ կատարած գործողությունների դեմ անձի իրավունքների և օրինական շահերի իրավական պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 11–14–րդ կետերով նախատեսել է անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման նպատակով հարուցված կատարողական վարույթը կարճելու պարտադիր հիմքերը: Այսինքն՝ վերոգրյալ իրավանքումների ուժով հարկադիր կատարողը պարտավոր է կարճել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման նպատակով հարուցված կատարողական վարույթը, եթե կատարողական վարույթի ընթացքում պարզվել են հետևյալ հանգամանքները.

- 1) անձը կատարել է իր պարտավորությունը մինչև անբողոքարկելի վարչական ակտը հարկադիր կատարման ուղարկելը,
- 2) բացակայում է վարչական ակտն անբողոքարկելի դառնալու օրենքով սահմանված հիմքը,
- 3) առկա են անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հարկադիր կատարման օրենքով սահմանված սահմանափակումները,
- 4) հանրային իրավական դրամական պահանջի կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին:

Այսպիսով, հարկադիր կատարողը, անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված յուրաքանչյուր կատարողական վարույթի ընթացքում պարզվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 11–14–րդ կետերում ամրագրված հանգամանքներից որևէ մեկի առկայությունը, պարտավոր է սեփական նախաձեռնությամբ կարճել հարուցված կատարողական վարույթը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի կարճման վերոգրյալ իրավական հիմքերից որևէ մեկի առկայության պայմաններում հարկադիր կատարողը սեփական նախաձեռնությամբ չի կարճում հարուցված կատարողական վարույթը, ապա հանրային իրավական դրամական պահանջով պարտապան հանդիսացող անձը կարող է օգտվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետով նախատեսված՝ կատարողական վարույթի ընթացքում միջնորդություններ անելու իր իրա-



վունքից՝ միջնորդելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերով ամրագրված համապատասխան հիմքով կարճել հարուցված կատարողական վարույթը: Հարկադիր կատարողի կողմից հանրային իրավական դրամական պահանջով պարտապան հանդիսացող անձի նշված միջնորդությունը մերժվելու դեպքում վերջինս կարող է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցով դիմել վարչական դատարան՝ պահանջելով ընդունել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթը կարճելու մասին բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը մերժվել է հարկադիր կատարողի կողմից:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ տվյալ պարագայում անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթը կարճելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելու հայցապահանջի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում կատարողական վարույթը կարճելու օրենքով նախատեսված իրավական հիմքերի առկայության կամ բացակայության և կատարողական վարույթի՝ կարճման ենթակա լինելու կամ չլինելու հանգամանքները կդառնան դատական քննության առարկա: Հետևաբար վարչական դատարանը, քննարկվող վարչական գործերի քննության ընթացքում պարզելով հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի կարճման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերով նախատեսված համապատասխան հիմքի առկայությունը, կարող է վճիռ կայացնել հանրային իրավական դրամական պահանջով պարտապան հանդիսացող անձի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու, այսինքն՝ կատարողական վարույթը կարճելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և հարկադիր կատարողին այդ վարչական ակտի ընդունմանը, այսինքն՝ կատարողական վարույթը կարճելուն, պարտավորեցնելու մասին:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում կատարված և 09.01.2015 թվականին ուժի մեջ մտած լրացումներով օրենսդիրը նախատեսել է անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարողի ընդունած որոշումների կամ կատարած գործողությունների արդյունքում անձի իրավունքների և օրինական շահերի իրավական պաշտպանության լրացուցիչ կառուցակարգ, որը կարող է նույնքան արդյունավետ կերպով ապահովել անձի խախտված իրավունքների գործնական վերականգնումը, որքան վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթը հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների անմիջական բողոքարկումը վարչական դատարան:

**28.09.2016 թ.**

**7. Գուրգեն Նիկոլյանն ընդդեմ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի, վարչ. գործ թիվ ՎԴ/0477/05/15**

**Էջ**

**566–578**

**Խնդիր.** Արդյո՞ք անգործունակ ճանաչված անձն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել իր նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ որոշումը, և արդյո՞ք այդ որոշումը ենթակա է բողոքարկման քաղաքացիական, թե՛ վարչական դատավարության կարգով:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձին անգործունակ ճանաչելու, նրան խնամակալության ներքո հանձնելու, իսկ ապաքինվելու դեպքում՝ նաև վերջինիս գործունակությունը վերականգնելու գործընթացներն իրականացվում են տարբեր ընթացակարգերով: Այսպես, անձն անգործունակ է ճանաչվում, և վերջինիս գործունակությունը վերականգնվում է դատարանի կողմից՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, իսկ միջանկյալ փուլում անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալի նշանակումն իրականացվում է այլ ընթացակարգով՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:

Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի սոցիալական խմբի անդամների պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում այդ անձանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունն ամրագրվում է որպես վերջիններիս իրավունքների ու ազատությունների ապահովման կարևորագույն երաշխիք: Մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից 17.12.1991 թվականի թիվ 46/119 բանաձևով հաստատված հոգեկան հիվանդությամբ տառապողների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքներն անթույլատրելի են համարում հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց նկատմամբ որևէ խտրական մոտեցում, այսինքն՝ ցանկացած տարբերակումների, բացառությունների կամ նախապատվություն տալու դրսևորումներ, որոնց արդյունքում հոգեկան հիվանդությամբ տառապողների համար անհնարին կդառնա կամ կդժվարանա մարդու՝ միջազգայնորեն ճանաչված իրավունքներից հավասար օգտվելը: Վկայակոչված սկզբունքների համաձայն՝ անձը, ում գործունակությունը հանդիսանում է քննության առարկա, իրավունք ունի իրեն անգործունակ ճանաչելու մասին վճիռը բողոքարկել վերադաս դատական աստյան՝ այլ շահագրգիռ անձանց հետ հավասար պայմաններում:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 23.02.1999 թվականին ընդունված «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանությանն առնչվող սկզբունքների մասին» թիվ R(99)4 հանձնարարականով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին առաջարկվում է անգործունակ չափահաս անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ համապատասխան օրենսդրական կարգավորումներ ամրագրելիս առաջնորդվել այդ հանձնարարականում ամրագրված սկզբունքներով: Այդ սկզբունքների շարքում ներառված են նաև անձի՝ անձամբ լավելու իրավունքի պահպանման սկզբունքը ցանկացած դատաքննության ընթացքում, որը կարող է առնչվել այդ անձի գործունակությանը, ինչպես նաև անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ ակտերի պարբերաբար վերանայման և պատշաճ բողոքարկման հնարավորության ամրագրումը:

Եվրոպական դատարանը քննարկվող հարցի կապակցությամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անգործունակ ճանաչված անձին դատավարական իրավունքներից զրկելը կարող է արդարացված լինել այդ անձի պաշտպանության, այլ անձանց շահերի պաշտպանության և արդարադատության պատշաճ իրականացման անհրաժեշտությամբ: Մակայն, մյուս կողմից, անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ որոշումը դատարանի կողմից վերանայելու պահանջի իրավունքը հանդիսանում է անձի կարևորագույն իրավունքներից մեկը, քանի որ նման գործընթացը կարող է ուղղակիորեն ազդել բոլոր իրավունքների և ազատությունների իրականացման վրա, որոնք սահմանափակվել էին անձին անգործունակ ճանաչելու արդյունքում: Նման հնարավորության բացակայությունը չի կարող արդարացվել իրավաչափ նպատակով, որը կարող է դրվել անգործունակ ճանաչված անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմքում (*տե՛ս Նապոլյա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 30.05.2013 թվականի վճիռը (վերջնական է դարձել 30.08.2013 թվականին)*):

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերի քննության շրջանակներում այդ ֆիզիկական անձի դատավարական կարգավիճակի առանձնահատկություններին, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի ուժով հավասարապես վերաբերում է նաև հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի սոցիալական խմբի անդամների: Հաշվի առնելով այն իրավական հետևանքները, որոնք քաղաքացու համար ծագում են անգործունակ ճանաչվելու դեպքում, այն է՝ անձն անորոշ ժամկետով գրկվում է ինքնուրույնաբար, իր գործողություններով իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստանձնելու և դրանք կատարելու հնարավորությունից, ինչպես նաև սահմանափակվում են անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիության իրավունքը՝ օրենսդիրն անձին անգործունակ ճանաչելը թույլատրում է բացառապես դատական կարգով: Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է քաղաքացուն ծանուցել անգործունակ ճանաչելու վերաբերյալ իր կողմից կայացված վճռի մասին՝ այդ անձին հնարավորություն տալով օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու տվյալ վճիռը (*տե՛ս ըստ Շենգալիթ վարչական շրջանի ինստանկալության և հոգաբարձության մարմնի դիմումի՝ Վլադիմիր Օհանուվին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵՇԴ/0938/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը 07.04.2015 թվականի թիվ ՍԴՌ-1197 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանությունը պետք է ներառի, մասնավորապես, հետևյալ իրավունքները՝ դատարանում լսվելու իրավունքը, դատական քննությանը լիարժեք մասնակցության իրավունքը և դատական ակտի բողոքարկման իրավունքը: Այն անձանց համար, ում գործունակությունը քննվում է դատարանում, պետք է ապահովվեն իրավահավասարության, դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, արդար դատաքննության և դատական ակտերը բողոքարկելու իրավունքները: Նշված հիմնարար իրավունքների ուժով ցանկացած անձ, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է օժտված լինի համապատասխան դատավարական կարգավիճակով, կրի դատավարական պարտականություններ, ինչպես նաև օգտվի դատավարության մասնակցի կարգավիճակից բխող դատավարական իրավունքներից, ներառյալ՝ դատական ակտերը բողոքարկելու իրավունքը:

Վերոգրյալ միջազգային-իրավական փաստաթղթերի և իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Հայաստանի Հանրապետությունում իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ ֆիզիկական անձն իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական գործի շրջանակներում ունենա համապատասխան դատավարական կարգավիճակ, որը գործնականում թույլ կտա վերջինիս, *inter alia*, անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով բողոքարկելու իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը: Այլ կերպ ասած՝ այն ֆիզիկական անձը, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է ունենա դատավարության մասնակցի կարգավիճակից բխող այնպիսի դատավարական իրավունքներ, որոնք կընձեռեն վերջինիս այդ գործի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտերը բողոքարկելու իրական հնարավորություն (*տե՛ս ըստ դիմումի Մարուսյա Խոջումյանի՝ Վերգուշ Կիրակոսյանին անգործունակ ճանաչելու մասին թիվ ԵԿԴ/1324/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.01.2016 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը, 07.04.2015 թվականի թիվ ՍԴՌ-1197 որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությանը, արձանագրել է սահմանադրականության խնդրի առկայություն՝ պատճառաբանելով, որ դատարան դիմող սուբյեկտների շրջանակում բացակայում է սուբյեկտը, ով պետք է ճանաչվի գործունակ, որպիսի պայմաններում գործունակ ճանաչված անձը զրկված է սեփական գործունակությունը ճանաչելու վերաբերյալ լավելու, դատական քննությանը մասնակցելու և դատական ակտի բողոքարկման իրավունքներն իրացնելու հնարավորությունից:

ՀՀ սահմանադրական դատարանը վերը նշված որոշմամբ արձանագրել է, որ Եվրոպական դատարանն անգործունակ ճանաչված անձի իրավական կարգավիճակի վերանայման վերաբերյալ դիմող սուբյեկտների հարցին մասնավորապես անդրադարձել է Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով 30.08.2013 թվականին կայացրած վճռում, որում դատարանը գտել է, որ ապաքինվածին իր գործունակությունը վերականգնելու պահանջով դատարան դիմելու հնարավորություն չնախատեսելը համահունչ չէ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համապատասխան օրենսդրական մոտեցումներին: Տվյալ վճռում Եվրոպական դատարանը նաև նշել է, որ նման արգելքը որևէ այլընտրանք, ինչպես, օրինակ, անգործունակ ճանաչված անձանց գործերի դատարանի կողմից պարբերական վերանայման կարգը, չի նախատեսում: Արդյունքում՝ Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում:

ՀՀ սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերը նշված նախադեպային որոշումներով ստեղծվել են բավարար հիմքեր՝ սույն որոշման մեջ մատնանշված միջազգային իրավական փաստաթղթերին համապատասխան՝ անգործունակ ճանաչված անձի համար դատարանում լաված լինելու, դատական քննությանը լիարժեք մասնակցելու և դատական ակտը բողոքարկելու իր իրավունքներն իրացնելու հնարավորության ապահովման համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ անգործունակ ճանաչված անձի գործունակությունը վերականգնելու պահանջով անգործունակ ճանաչված անձը վերը նշված իրավունքներից բացի պետք է ունենա նաև դատարան դիմելու իրավունք, ինչը համահունչ է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված անձի արդար դատաքննության իրավունքին:

Ինչ վերաբերում է անգործունակ ճանաչված անձին խնամակալության ներքո հանձնելու միջանկյալ փուլին՝ խնամակալ նշանակելու ընթացակարգին, ապա Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարել բացահայտել անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու հարաբերությունների, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու որոշման բնույթը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 92-րդ հոդվածով ամրագրված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ համայնքի ղեկավարը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարը, անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու (սահմանելու) հարաբերություններում հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող, որն իրականացնում է պետության կողմից պատվիրակված լիազորությունը:

Անդրադառնալով հանրային իրավահարաբերությունների հատկանիշների մեկնաբանությանը՝ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող: Այսինքն՝ հանրային են այն իրավահարաբերությունները, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում (տե՛ս ՀՀ գլխավոր դատախազու-

թյունն ընդդեմ Հայկ Մարգարյանի թիվ ԵԱԲԴ/1369/02/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձինք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը, որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ:

Իրավահարաբերության բովանդակությունը տվյալ հարաբերության սուբյեկտների փոխադարձ իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որը հանրային բնույթի իրավահարաբերության պարագայում հանգում է հետևյալին. այդ հարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանության սուբյեկտն ունի օրենքով սահմանված իր իշխանական լիազորություններն իրականացնելու պարտականություն, ինչն էլ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների իրացման անհրաժեշտ և բավարար պայմանն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող իշխանության մարմինը հանրային իրավահարաբերության շրջանակներում կարող է օժտված լինել ոչ թե իրավունքներով, այլ մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկն ընտրելու, այսինքն՝ օրենքով սահմանված որոշակի դեպքերում և բավարար փաստական հիմքերի առկայության պայմաններում վարչական հայեցողություն դրսևորելու հնարավորությամբ: Մինևս ժամանակ հանրային իրավահարաբերության՝ իշխանական լիազորություններով չօժտված կողմը, բացի իր հանրային սուբյեկտիվ իրավունքներից, կարող է կրել նաև այդ հարաբերության բովանդակության մեջ ներառված պարտականություններ, քանի որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց հանրային սուբյեկտիվ իրավունքներն իրացնելիս պետք է պահպանեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված ընթացակարգային իրավական կարգավորումներն ու օրենսդրական բոլոր պահանջները:

Իրավահարաբերության օբյեկտն այն նյութական և (կամ) հոգևոր արժեքն է, ինչի կապակցությամբ որոշակի իրավաբանական փաստի (փաստական կազմի) հիման վրա կողմերի միջև ծագում է իրավահարաբերությունը: Հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սպասարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի կողմից այն իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ, քանի որ հանրային իրավունքով կարգավորվող հարաբերության շրջանակներում սուբյեկտը գործում է ոչ թե իր, այլ հանրային շահերի վերհանման և ապահովման նպատակով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ իրավունքում «շահ» հասկացության դասակարգումը հանրայինի և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս փոխկապակցվածության մեջ և գրեթե միշտ փոխյուրացնում են միմյանց: Այսպես, իրավական շահը դասակարգվում է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին. հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը: Սակայն հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկ-

տային չափանիշով, այլ նաև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,
2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,
3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ (տե՛ս «Վեսթ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու հարաբերությունների բնույթի բացահայտման հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ՝

1. համայնքի ղեկավարը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարը, հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, որի լիազորություններն անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու (սահմանելու) հարաբերություններում սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով,
2. անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու (սահմանելու) հարաբերությունների բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այն է՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու պարտականությունը,
3. անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու հարաբերությունները ծագում են հանրային շահի իրացման կապակցությամբ, այն է՝ բխում են ինչպես անգործունակ ճանաչված անձի՝ որպես հասարակության խոցելի խավի ներկայացուցչի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, այնպես էլ քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից (օրինակ՝ բնականոն քաղաքացիական շրջանառության կայունության ապահովման անհրաժեշտությունից):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում վարչական մարմնի հասկացությունն օրենսդիրը նախ սահմանել է ինստիտուցիոնալ առումով՝ ամրագրելով, որ վարչական մարմիններ են Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմինները, տարածքային կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, այնուհետև վարչական մարմնի հասկացությունը սահ-

մանել է գործառնությանին առումով՝ նշելով, որ վարչական մարմիններ են նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինները:

Վերը նշված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական մարմին, քանի որ իրականացնում է հանրային գործառնությ, և որպես այդպիսի մարմին հանդես է գալիս համայնքի ղեկավարը՝ տեղական ինքնակառավարման մարմինը:

Անդրադառնալով խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշման բնույթին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հատակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար (*տես Ռոբերտյու Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎՂ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վարչական ակտի՝ վերը նշված բնորոշ հատկանիշների համատեքստում անդրադառնալով անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշման բնույթին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն վարչական ակտ է, քանի որ.

- անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումն անհատական իրավական ակտ է, որի հասցեատերն անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակված անձն է,
- անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումն ընդունվում է վարչական մարմնի կողմից,
- անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

- անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. լուծում է անգործունակ ճանաչված կոնկրետ անձի նկատմամբ խնամակալ նշանակելու հարցը,
- անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող՝ ինչպես անգործունակ ճանաչված անձի, այնպես էլ վերջինիս նկատմամբ որպես խնամակալ նշանակվող անձի համար:

Խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ վարչական մարմին հանդիսանալու, իսկ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումը վարչական ակտ լինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել հետևյալը.

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից 17.12.1991 թվականի թիվ 46/119 բանաձևով հաստատված հոգեկան հիվանդությանը տառապողների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքները նախատեսում են, որ հոգեկան խանգարման հետևանքով անձին անգործունակ ճանաչելու հետևանքով անձի նկատմամբ խնամակալություն սահմանելու վերաբերյալ ցանկացած որոշում կարող է կայացվել միայն ներպետական օրենսդրության հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատական մարմնի կողմից արդար քննության արդյունքում: Անձի նկատմամբ խնամակալության անհրաժեշտության հարցը ենթակա է վերանայման ողջամիտ ժամանակահատվածում՝ ներպետական օրենսդրության համապատասխան:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ ՀՀ ներպետական օրենսդրությամբ խնամակալություն սահմանելու վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունը վերապահված է ոչ թե դատական, այլ վարչական մարմնին՝ խնամակալության և հոգաբարձության մարմնին: Այդուհանդերձ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37–րդ հոդվածը հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը բողոքարկել դատարան, ինչը նշանակում է, որ օրենսդիրը, խնամակալություն սահմանելու վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունը վերապահելով վարչական մարմնին, այնուամենայնիվ նախատեսել է այդպիսի որոշման դատական վերահսկողության հնարավորություն:

Նշված ընթացակարգը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց պահանջել խնամակալի փոփոխություն: Հետևաբար սույն որոշմամբ իր առջև բարձրացրած հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը գտել է, որ ենթակա է պարզաբանման այն հարցը, թե արդյոք անգործունակ ճանաչված անձը ներառված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37–րդ հոդվածով նախատեսված շահագրգիռ անձանց շրջանակում, որոնք կարող են նախաձեռնել խնամակալության որոշման դատական բողոքարկում, թե ոչ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36–րդ, 37–րդ, 41–րդ հոդվածներում սահմանված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ խնամակալության ու հոգաբարձության մարմինը, հսկողություն իրականացնելով խնամակալների գործունեության նկատմամբ, համապատասխան հիմքերի առկայության դեպքում կարող է ազատել այն խնամակալին, որն իր պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, կամ հարգելի պատճառներով ի վիճակի չէ շարունակել իր պարտականությունների կատարումը:

Հաշվի առնելով, որ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու լիազորությունը վերապահված է խնամակալության ու հոգաբարձության մարմնին, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված դեպքերում վերջինս պետք է խնամակալ նշանակելու ընդհանուր կանոնների պահպանմամբ նշանակի նոր խնամակալ:



Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման կարգավորումը բխում է անգործունակ ճանաչված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Անգործունակ ճանաչված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից է բխում նաև շահագրգիռ անձանց կողմից խնամակալի նշանակումը դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը:

Այնուամենայնիվ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այնպիսի իրավիճակներում, երբ անգործունակ ճանաչված անձի շահը թելադրում է խնամակալի փոփոխություն, ՀՀ օրենսդրությունն անգործունակ ճանաչված անձի համար ուղղակիորեն չի նախատեսել իր նախաձեռնությամբ խնամակալության ու հոգաբարձության մարմնին դիմելու հնարավորություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ խնամակալի նշանակումը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն ունեցող անձանց կազմում անգործունակ ճանաչված անձին չներառելու պայմաններում գործնականում չեն բացառվում այնպիսի դեպքերը, երբ այդ անձինք, որոշակի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պայմաններից ելնելով, չբողոքարկեն խնամակալի նշանակումն այն դեպքում, երբ անգործունակ ճանաչված անձի շահն ուղղակիորեն թելադրում է այդպիսի բողոքարկումը:

Եվրոպական դատարանը Ստաննն ընդդեմ Բուլղարիայի գործով 17.01.2012 թվականի վճռում նշել է, որ անգործունակ ճանաչված անձի դատավարական իրավունքների սահմանափակումները կարող են իրավաչափ համարվել՝ ելնելով այդ անձի, այլոց շահերի պաշտպանության և արդարադատության պատշաճ կազմակերպման անհրաժեշտությունից: Այնուամենայնիվ, անգործունակ ճանաչված անձի՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումների նկատմամբ պետք է ցուցաբերվի տարբերակված մոտեցում՝ կախված այն հանգամանքից, թե անգործունակ ճանաչված անձը կոնկրետ ինչ հարց է պատրաստվում բարձրացնել դատարանի առջև, և ինչ նպատակի է նա ցանկանում հասնել դատական պաշտպանության միջոցով:

Պետությունն ազատ է որոշելու անգործունակ անձի կողմից անմիջականորեն դատարան դիմելու իրավունքի իրացման ընթացակարգը: Միևնույն ժամանակ Կոնվենցիայի 6–րդ հոդվածի հետ անհամատեղելի են այն դեպքերը, երբ ներպետական օրենսդրությունը ըննարկվող ոլորտում սահմանում է դատարանի մատչելիության որոշակի սահմանափակումներ բացառապես այն նպատակով, որ դատարաններն անհարկի չծանրաբեռնվեն ակնհայտ անհիմն դիմումներով: Այնուամենայնիվ, նշված խնդիրը կարելի է լուծել նվազ սահմանափակող միջոցներով, քան անմիջականորեն դատարան դիմելու հարցում անգործունակ անձանց նկատմամբ կիրառվող արգելքը. այդ միջոցներից են, օրինակ՝ անգործունակ անձանց կողմից դիմումների ներկայացման հաճախականության սահմանափակումը կամ անգործունակ անձանց դիմումների ընդունելիության նախնական ուսումնասիրության համակարգը (*Կրեն Սյրաննն ընդդեմ Բուլղարիայի գործով Եվրոպական դատարանի 17.01.2012 թվականի վճիռը, գանգապ թիվ 36760/06, կետ 241–242*):

Միաժամանակ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը 27.03.2008 թվականի վճռում մասնավորապես նշել է, որ անգործունակության փաստն անհրաժեշտաբար չի նշանակում, որ նա ունակ չէ ընկալելու իր վիճակը (*Կրեն Շյուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 27.03.2008 թվականի վճիռը, գանգապ թիվ 44009/05, կետ 108*):

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործով իր առջև բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հոգեկան խանգարում ունեցող անձը պետք է ունենա անձամբ լսվելու հնարավորություն՝ անգործունակ ճանաչվելու հետևանքով իր նկատմամբ խնամակալություն սահմանելու վերաբերյալ գործերով՝ իր տեսակետն արտահայտելու համար, քանի որ նշված որոշման կայացումը վերջինիս համար ոչ պակաս

կարևոր է՝ հաշվի առնելով, որ իր իրավունքների և շահերի պաշտպանությունն այլևս պետք է իրականացվի բացառապես խնամակալի միջոցով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու գործերով հատկապես կարևոր է նրա ու խնամակալի միջև եղած հարաբերությունների պարզումը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է նաև, որ հնարավորության դեպքում ենթակա է պարզման նաև խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի ցանկությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հարցերի պարզումը հնարավոր չէ իրականացնել առանց անգործունակ ճանաչված անձին լսելու:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու հարցը քննելիս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հանգամանքների պարզումը հանդիսանում է խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ գործնականում բացառված չեն դեպքերը, երբ խնամակալության ու հոգաբարձության մարմինն անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու առանց վերջինիս ցանկությունը լսելու կամ առանց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հանգամանքները փաստացի հաշվի առնելու:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ խնամակալ նշանակելու մասին որոշման դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը նախնառաջ պայմանավորված է դատական կարգով վարչական մարմնի կողմից թույլ տված՝ անգործունակ անձի խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտությամբ այն դեպքերում, երբ խնամակալության և հոգաբարձության մարմինը, հակառակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ խնամակալի և անգործունակ ճանաչված անձի միջև եղած հարաբերությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև խնամարկյալի ցանկությունը հաշվի առնելու պարտականության, խնամակալ նշանակելու մասին որոշումը կայացնում է առանց օրենսդրությամբ սահմանված՝ վերը նշված պահանջները պատշաճ կատարելու:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև անձին անգործունակ ճանաչելու, անձի գործունակությունը վերականգնելու վերաբերյալ գործերով (որոնց լուծումը վերապահված է դատարանին) և անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ գործերով (որոնց լուծումը վերապահված է խնամակալության և հոգաբարձության մարմնին) քննարկվող հարցերի շրջանակը և բնույթը տարբեր են, այնուամենայնիվ, անձի իրավունքների տեսակետից նշված բոլոր հարցերը նույն կարևորությունն ունեն անգործունակ ճանաչված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առումով: Դա նշանակում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև անգործունակ ճանաչված անձի՝ խնամակալ նշանակելու վերաբերյալ որոշումը դատական կարգով բողոքարկելու իրավունքի նկատմամբ, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ անգործունակ ճանաչված անձը ոչ միայն պետք է ունենա դատարան դիմելու իրավունք, այլ նաև պետք է ունենա դատական քննությանը լիարժեք մասնակցելու և դատական ակտը բողոքարկելու իր իրավունքներն իրացնելու հնարավորություն:

Հետևաբար այն դեպքում, երբ խնամակալություն սահմանելու վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունը ներպետական օրենսդրությամբ վերապահված է վարչական մարմնին, իսկ ՀՀ օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված չէ խնամակալին փոխելու հարցով իր նախաձեռնությամբ խնամակալության և հոգաբարձության մարմնին դիմելու՝ անգործունակ ճանաչված անձի

հնարավորությունը, սակայն առկա է շահագրգիռ անձի կողմից նշված որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, Վճռաբեկ դատարանը վերագրյալ միջազգային-իրավական փաստաթղթերի և իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության հիման վրա գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին կետում «շահագրգիռ անձանց» եզրույթը պետք է մեկնաբանվի այնպես, որ անգործունակ ճանաչված անձը ևս հնարավորություն ունենա դատական կարգով բողոքարկելու իր նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով բողոքարկելու նշված գործերով կայացված դատական ակտերը, այսինքն՝ անգործունակ ճանաչված անձը ևս պետք է ընդգրկված լինի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված շահագրգիռ անձանց շրջանակում:

**08.06.2016 թ.**

**8. Գայանե Մնոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԴ/3889/05/15**

**Էջ  
579–586**

**Խնայիր.** Վճռաբեկ դատարանը բացահայտել է վարչական ակտի բնորոշման մեջ «անձի համար իրավունքներ կամ պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու» պայմանը՝ միաժամանակ անդրադառնալով գործողության կատարման հայց ներկայացնելու ժամկետներին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ սահմանադրական դատարանը, 22.02.2011 թվականի թիվ ՍԴՌ-942 որոշմամբ անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ վարչական դատարան ներկայացվող հայցերի տեսակներին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից դրսևորվող անգործության արդյունքում անձանց խախտված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը երաշխավորելուն է կոչված ինչպես պարտավորեցման, այնպես էլ գործողության կատարման հայցը: Ընդ որում, պարտավորեցման հայցի դեպքում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ այնպիսի անգործության, որն առնչվում է վարչական ակտի ընդունմանը, իսկ գործողության կատարման հայցի դեպքում՝ այնպիսի անգործությանը, որը չի առնչվում վարչական ակտի ընդունմանը»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենքի ուժով պարտավորեցման հայցի շրջանակներում հայցվորին իրավունք է վերապահված պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը վարչական մարմինը մերժել է կամ որը վերջինս չի ընդունել: Ինչ վերաբերում է գործողության կատարման հայցին, ապա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված գործողության կատարման հայցի հասկացության վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ նշված հայցատեսակով հայցվորը կարող է վարչական մարմնից պահանջել՝ ա) կատարելու որոշակի գործողություններ կամ բ) ձեռնպահ մնալու այնպիսի գործողությունների կատարումից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը: Փաստորեն, գործողության կատարման հայցով դատարան դիմած անձը կարող է վարչական մարմնից պահանջել դրսևորելու վարչական ակտի ընդունման հետ չկապված՝ ինչպես ակտիվ վարքագիծ՝ կատարելու որոշակի գործողություններ, այնպես էլ պասիվ վարքագիծ՝ ձեռնպահ մնալու որոշակի գործողությունների կատարումից: Միաժամանակ նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործողության կատարման հայցով անձը վարչական մարմնից կարող է պահանջել դրսևորելու միայն այնպիսի վարքագիծ (թե՛ ակտիվ, թե՛ պասիվ), որը չդրսևորելու խախտում է կամ անմիջականորեն կարող է խախտել

նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: Հետևաբար գործողության կատարման հայցով անձը կարող է վարչական մարմնից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողությունների կատարումից, որոնց համապատասխանաբար կատարումը կամ չկատարումը կարող է ապահովել անհրաժեշտ պայմաններ անձի իրավունքների իրականացման համար կամ վերացնել վերջինիս իրավունքների իրականացման խոչընդոտները (յրեն Շուշանիկ Տրդատյանն ընդդեմ ՀՀ աղետի գոյու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հարկացման հարցերով հանձնաժողովի թիվ ՎԴ/6072/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2015 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է վարչական ակտին բնորոշ հատկանիշներին: Մասնավորապես, վերոգրյալ հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ որևէ փաստաթուղթ որպես վարչարարության արդյունք հանդիսացող վարչական ակտ դիտելու համար առաջին հերթին անհրաժեշտ է վարչական ակտի բաղկացուցիչ մասերը կազմող տարրերի միաժամանակյա առկայությունը: Այսպես, վարչական ակտը պետք է ընդունվի վարչական մարմնի կողմից և ունենա արտաքին ներգործություն, ընդունվի հանրային իրավունքի բնագավառում և հետապնդի կոնկրետ գործի կարգավորման նպատակ, ուղղված լինի անձի համար իրավունքներ կամ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Իսկ նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է վարչական ակտի առկայությունը (յրեն Եղիշե Հարությունյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0687/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել վարչական ակտի բնորոշման մեջ «անձի համար իրավունքներ կամ պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու» պայմանը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նորմատիվ իրավական ակտերում մասնավոր անձանց ընդհանուր և վերացական եղանակով ամրագրված հանրային սուբյեկտիվ իրավունքները կամ պարտականությունները որոշակիացված չեն: Դրանք որոշակիացվում և իրագործվում են հիմնականում վարչական (անհատական) ակտերի միջոցով, հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական ակտով իրավունքի կամ պարտականության սահմանումը, փոփոխումը կամ վերացումը նորմատիվ իրավական ակտում սահմանված համապատասխան իրավունքի կամ պարտականության կոնկրետացում է, նորմատիվ իրավական ակտի կենսագործումը՝ կոնկրետ փաստական հանգամանքներում:

Այսինքն՝ վարչական ակտը նորմատիվ իրավական ակտով վերացական եղանակով սահմանված սուբյեկտիվ իրավունքները կամ պարտականությունները վերագրում է կոնկրետ անձանց՝ ելնելով կոնկրետ փաստական հանգամանքներից:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով միջամտող վարչական ակտին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն տարբեր եղանակներով միջամտում է անձի որևէ կոնկրետ իրավունքի իրականացմանը կամ նեղացնում վերջինիս ազատ գործելու հնարավորությունը՝ նրա վրա դնելով որոշակի պարտականություն:

Անդրադառնալով գործողության կատարման հայց ներկայացնելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված իրավական նորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործողության կատարման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից սահմանվել են երեք տարբեր ժամկետներ՝ պայմանավորված գործողության կատարման խնդրանքով դիմում ստանալուց հետո վարչական մարմնի դրսևորած վարքագծով և հայցվող գործողության կատարման համար սահմանված հատուկ ժամկետների առկայությամբ կամ բացակայությամբ: Այսպես, այն դեպքերում, երբ վարչական մարմինը մերժում է հայցվող գործողության կատարումը, հայցվողը կարող է գործողության կատարման հայց ներկայացնել մեկամսյա ժամկետում այդպիսի մերժման մասին իրազեկվելու պահից: Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցվող գործողության կատարման մերժումը պետք է լինի այնպիսին, որ ակնհայտորեն արտահայտի վարչական մարմնի բացասական դիրքորոշումը՝ հայցվող գործողության կատարման վերաբերյալ: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշման համար հինք է հանդիսացել այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով գործողության կատարման հայցի ներկայացման համար սահմանված են տարբերակված ժամկետներ, և վարչական մարմնի կողմից գործողության կատարում հայցող անձին երկիրնաստությունների կամ տարակարծությունների տեղիք տվող պատասխան տրամադրելու պայմաններում անձի կողմից կարող են սխալ հաշվարկվել հայց ներկայացնելու դատավարական ժամկետները, ինչը կհանգեցնի վերջինիս դատական պաշտպանության իրավունքի արհեստական սահմանափակման:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ հայցվող գործողության վերաբերյալ անձի դիմումին ի պատասխան վարչական մարմինը ներկայացրել է գրություն, որի բովանդակությունից ակնհայտորեն չի բխում հայցվող գործողության կատարումը մերժելու մասին, գործողության կատարման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ժամկետները չեն կարող կիրառվել: Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված ժամկետին, սպա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դրանով նախատեսված հայց ներկայացնելու ժամկետները նախատեսված են այն դեպքերի համար, երբ հայցվող գործողության համար օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված է տվյալ գործողության կատարման ժամկետներ (օրինակ՝ «Տեղեկատվության ազատության մասին») ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով տեղեկության տրամադրման վերաբերյալ գրավոր հարցման պատասխանի տրամադրման համար սահմանված ժամկետները):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված հայց ներկայացնելու ժամկետները սահմանված են այնպիսի դեպքերի համար, երբ հայցվող գործողության կատարման համար օրենքով կամ այլ իրավական ակտով որևէ ժամկետ սահմանված չէ, և այդ գործողության կատարման վերաբերյալ առկա չէ վարչական մարմնի մերժումը:

# ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՌԻԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

## ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1089/02/13

դատարանի որոշում

2016 թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1089/02/13

Նախագահող դատավոր՝

Կ. Հակոբյան

Դատավորներ՝

Ա. Խատատյան

Լ. Գրիգորյան

### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սամվել Ֆրանգուլյանի ներկայացուցիչ Վահե Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սամվել Ֆրանգուլյանի ընդդեմ Հենրիկ Ֆրանգուլյանի՝ Երևանի Նոր Արեշի 8-րդ փողոցի թիվ 89/1 հասցեի 432,0 քմ մակերեսով համատեղ սեփականություն հանդիսացող հողամասից բաժնեմասն առանձնացնելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատարանական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Սամվել Ֆրանգուլյանը պահանջել է Երևանի Նոր Արեշի 8-րդ փողոցի թիվ 89/1 հասցեի 432,0 քմ մակերեսով համատեղ սեփականություն հանդիսացող հողամասից քննելով առանձնացնել իր բաժինը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 23.02.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.05.2015 թվականի որոշմամբ Սամվել Ֆրանգուլյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.02.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սամվել Ֆրանգուլյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189–րդ, 197–րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6–րդ հոդվածը, 53–րդ հոդվածի 1–ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը վճռի հիմքում դրել է ոչ թե փորձագիտական եզրակացությունը, այլ դատական նիստին որպես վկա հրավիրված փորձագետների բացատրությունները:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ դատարան այդպես էլ չեն ներկայացվել թույլատրելի և վերաբերելի այնպիսի ապացույցներ, որոնք հնարավորություն կընձեռենին առանձնացնելու ընդհանուր օգտագործման հողամասը: Մինչդեռ հայցվորը, հստակեցնելով հայցապահանջը, հղում է կատարել փորձագիտական եզրակացությանը, որը Վերաքննիչ դատարանի կողմից համարվել է ոչ թույլատրելի և վերաբերելի ապացույց:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ եթե համասեփականատերերի միջև առկա չէ փոխհամաձայնություն հողը բաժանելու հարցում, ապա բաժինն առանձնացնելը դառնում է անհնարին: Ակնհայտ է, որ եթե համասեփականատերերի միջև լիներ փոխադարձ համաձայնություն, ապա առանց նման վեճի առկայության կառանձնացվեր հողամասի իրեն պատկանող մասը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.05.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի առանձին որակական, քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ 02.04.2013 թվականի թիվ ԱՏ–28/03/2013/–2–0238 տեղեկանքի համաձայն՝ Երևանի Նոր Արեշի 8–րդ փողոցի թիվ 89/1 հասցեի 432,0քմ մակերեսով հողամասի համասեփականատերերն են Հենրիկ Ֆրանգուլյանը (Նոր Արեշի 8–րդ փողոց, թիվ 89/1) և Սամվել Ֆրանգուլյանը (Նոր Արեշի 8–րդ փողոց, թիվ 89/2) **(հատոր 1–ին, գ.թ. 6):**

2. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09012013–01–1208 վկայականի համաձայն՝ Երևանի Նոր Արեշի 8–րդ փողոցի թիվ 89/2 հասցեի բնակելի տունը սեփականության իրավունքով գրանցված է Սամվել Ֆրանգուլյանի անվամբ, իսկ 0,0432հա հողամասը՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն **(հատոր 1–ին, գ.թ. 8):**

3. ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ–ի 26.09.2014 թվականի թիվ 13–0480Դ փորձագետի եզրակացության համաձայն՝ Երևան քաղաքի Նոր Արեշի 8–րդ փողոցի թիվ 89/1 հասցեի 432,0քմ մակերեսով հողամասը հնարավոր է երկու համասեփակաւնատերերի միջև բաժանել: Հստակագծային առկա իրավիճակից, առանձնացվող հատվածները նպատակային օգտագործման թողնելու անհրաժեշտությունից և բաժանմաների առանձնացումը փոքրածավալ շինարարական աշխատանքներ կատարելու պայմանից, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նորմատիվ ակտերի պահանջներից ելնելով՝ առաջարկ-

վում է նշված հասցեի հողամասի առանձնացման երկու տարբերակ, որոնք բերված են եզրակացությանը կից թիվ 2 և թիվ 3 հավելվածներում:

Առաջին տարբերակով (թիվ 2 հավելված) առաջարկվում է Երևանի Նոր Արեշի 8-րդ փողոցի թիվ 89/1 հասցեի շինությունից ազատ 66,5 քմ մակերեսով հողամասը թողնել ընդհանուր օգտագործման, քանի որ ելնելով երկրաչափական չափերից և դիրքից՝ հնարավոր չէ առանձնացնել երկու մասերի և ապահովել սպասարկման ու շահագործման համար անհրաժեշտ առանձին մուտքեր: Ընդհանուր օգտագործման է թողնվում նաև շինություններով ծանրաբեռնված 70,2 քմ մակերեսով հողամասը, քանի որ նշված մակերեսն օգտագործվում է կողմերի կողմից ընդհանուր (կողմերի կողմից տարբեր հարկերում օգտագործվող տարածքներ, որոնք գտնվում են միմյանց վրա): Նշված տարբերակով կողմերից յուրաքանչյուրին հասանելիք հողամասի մակերեսը կազմում է 147,65 քմ: Հայցվորին հասանելիք, շինություններից ազատ հողամասի մակերեսը կազմում է 110,1 քմ մակերես, 24,12 քմ մակերեսը միայն իր կողմից օգտագործվող շինություններով ծանրաբեռնված հողամասն է, իսկ 13,44 քմ մակերեսը միայն իր կողմից օգտագործվող ավտոտնակով ծանրաբեռնված հողամասն է: Պատասխանողին հասանելիք, շինություններից ազատ հողամասի մակերեսը կազմում է 37,25 քմ, 42,0 քմ մակերեսը միայն իր կողմից օգտագործվող բնակելի տան շինություններով ծանրաբեռնված հողամասն է, իսկ 68,4 քմ մակերեսը միայն իր կողմից օգտագործվող երկհարկանի տնով ծանրաբեռնված հողամասն է: Նշված տարբերակով առաջարկվում է հայցվորին հատկացնել իր կողմից օգտագործվող 37,56 քմ մակերեսով շինություններով ծանրաբեռնված հողամասը և 110,1 քմ մակերեսով շինություններից ազատ հողամասը, իսկ պատասխանողին՝ իր կողմից օգտագործվող շինություններով ծանրաբեռնված 110,4 քմ մակերեսով հողամասը և 37,25 քմ մակերեսով շինություններից ազատ հողամասը:

Երկրորդ տարբերակով (թիվ 3 հավելված) առաջարկվում է կողմերի փոխհամաձայնության պայմաններում շինությունից ազատ 17,0 քմ մակերեսով հողամասը և շինություններով ծանրաբեռնված 49,6 քմ մակերեսով հողամասը թողնել ընդհանուր օգտագործման: Նշված տարբերակով կողմերից յուրաքանչյուրին հասանելիք հողամասի մակերեսը կազմում է 182,7 քմ: Առաջարկվում է հայցվորին տրամադրել բնակելի տնից իր կողմից օգտագործվող տարածքները, ընդհանուր օգտագործվող պատշգամբից 6,8 քմ մակերես, որոնցով ծանրաբեռնված է 24,12 քմ մակերեսով հողամաս: Պատասխանողին տրամադրել իր կողմից օգտագործվող շինությունները, ընդհանուր օգտագործվող 4,3 քմ մակերեսով միջանցքը, ընդհանուր օգտագործվող պատշգամբից 13,8 քմ մակերես՝ որպես մուտք տրամադրելով գոյություն ունեցող մուտքը: Նշված տարբերակով հայցվորին հասանելիք շինություններից ազատ հողամասի մակերեսը կազմում է 145,14 քմ, 24,12 քմ մակերեսը միայն իր կողմից օգտագործվող, շինություններով ծանրաբեռնված հողամասն է, իսկ 13,44 քմ մակերեսը միայն իր կողմից օգտագործվող, ավտոտնակով ծանրաբեռնված հողամասն է: Պատասխանողին հասանելիք, շինություններից ազատ հողամասի մակերեսը կազմում է 52,3 քմ, 62,0 քմ մակերեսը միայն իր կողմից օգտագործվող բնակելի տան շինություններով ծանրաբեռնված հողամասն է, իսկ 68,4 քմ մակերեսը միայն իր կողմից օգտագործվող երկհարկանի տնով ծանրաբեռնված հողամասն է:

Ելնելով Նոր Արեշի 8-րդ փողոցի թիվ 89/1 հասցեի հողամասի հատակագծային իրավիճակից՝ հողամասի առանձնացման երկրորդ տարբերակի պարագայում հայցվորին տրամադրվելիք շինություններից ազատ հողամասի մակերեսը կազմում է 123,6 քմ՝ իրեն հասանելիք 145,14 քմ մակերեսի փոխարեն, որը փոքր է հասանելիքից 21,54 քմ մակերեսով: Պատասխանողին տրամադրվելիք շինություններից ազատ հողամասի մակերեսը կազմում է 73,8 քմ՝ իրեն հասանելիք 52,3 քմ մակերեսի փոխարեն, որը մեծ է հասանելիքից 21,5 քմ մակերեսով, որը փոխհամաձայնության պայմաններում հնարավոր է փոխհատուցել (**հատող 1-ին, գ.թ. 54-74**):

5. 09.02.2015 թվականի դատական նիստի ընթացքում փորձագետներ Անահիտ Հակոբյանը և Հակոբ Դեմիրճյանը հայտնել են, որ հնարավոր չէ առանց կողմերի փոխհամաձայնության առանձնացնել հայցվորի բաժնեմասը, քանի որ պատասխանողի սեփականության մի մասը գտնվում է հայցվորի կողմից օգտագործվող տարածքում, իսկ հայցվորի սեփականության մի մասը՝ պատասխանողի տարածքում: Նրանք հայտնել են նաև, որ նշված տարբերակները նախատեսվել են կողմերի փոխհամաձայնության պայմանով, և այդ դեպքում նա-



խընտրելի է հողամասերի բաժանման առաջին տարբերակը, որովհետև շինարարական աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն գրեթե չի լինի (**հատոր 1–ին, գ.թ. 110–112**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197–րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. կարո՞ղ է արդյոք ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքից բաժինը բնեղենով առանձնացվել այն պարագայում, երբ անշարժ գույքի մի մասը պետք է թողնվի ընդհանուր օգտագործման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է դրա մասնակիցների միջև բաժանվել նրանց համաձայնությամբ: Նույն հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակից իրավունք ունի պահանջել առանձնացնելու իր բաժինն ընդհանուր գույքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197–րդ հոդվածի 3–րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը:

Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197–րդ հոդվածի կարգավորումներին, նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջելու ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնություն: Միամտամասկ այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ այդպիսի առանձնացումն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը միայն նրանց համաձայնությամբ, քանի որ այդպիսի համաձայնության բացակայությունը կհանգեցնի կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության սկզբունքի խախտման, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման: Վերոգրյալ համաձայնության պարտադիր լինելը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը նրան փոխհատուցում վճարելու իրավունք ունեն նույնպես միայն նրա համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել, և

ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի (*տե՛ս Դավիթ Ասարյանն ընդդեմ Սվեդլյանսա Ասարյանի և Արթուր Գասիսյանի թիվ ԵՄԳ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Ջարգացնելով վերը նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը *Նելլի Հարությունյանն ընդդեմ Աղաջան Ավագյանի թիվ ԵԷԳ/1661/02/09 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշմամբ* նշել է, որ գոյություն ունեցող իրավակարգավորումը հնարավոր է համարում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնել ինչպես բնեղենով, այնպես էլ դրամական հատուցմամբ: Ընդ որում, նախապատվությունը տրվում է բաժինը բնեղենով առանձնացնելուն, քանի որ այս դեպքում անձը շարունակում է պահպանել իր սեփականության իրավունքը բնեղենով առանձնացված մասի նկատմամբ, մինչդեռ փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնեմասի նկատմամբ դադարում է:

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ընդհանուր սեփականությունից բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջներ քննելիս դատարաններն առաջին հերթին պետք է հաշվի առնեն, թե արդյոք առաջարկվող տարբերակով (տարբերակներով) բաժնեմասի առանձնացման դեպքում հնարավոր է ապահովել առանձին ձևավորվող բաժնեմասերի ինքնուրույն օգտագործումը: Ընդ որում, առանձնացվող բաժնեմասերը կամ դրանցից որևէ մեկը սերվիտուտով ծակաբեռնելը կամ ընդհանուր օգտագործման թողնելը չի կարող համարվել ընդհանուր սեփականության բաժինն առանձնացնելու պահանջը բացառող հանգամանք, քանի որ բաժանվող օբյեկտների այդպիսի փոխկապվածությունը, որպես այդպիսին, չի սահմանափակում դրանց ինքնուրույն օգտագործման հնարավորությունը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրն ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի բաժանումը կամ դրանից բաժնի առանձնացումը բացառապես չի պայմանավորել բաժինների իդեալապես առանձնացման տեխնիկական հնարավորությամբ: Նման հետևությունը բխում է նաև նույն հոդվածի 4-րդ կետի շարադրանքից, համաձայն որի՝ բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող *գույքի անհամաչափությունը* բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը բաժանելիս փորձագետի եզրակացությամբ այդպիսի բաժանումը հնարավոր է համարվում առանձնացվող գույքի անհամաչափությունը փոխհատուցելու կամ որոշ տարածքներ ընդհանուր օգտագործման թողնելու տարբերակներով, իրավաչափ է առաջարկվող տարբերակներից որևէ մեկով գույքի բնեղենով բաժանումը: Այսինքն՝ այն դեպքում, երբ համապատասխան փորձագիտական եզրակացությամբ առաջարկվում է վիճելի գույքի (տվյալ դեպքում՝ հողամասի) որոշ մասերի բնեղենով առանձնացում, իսկ մյուս մասը թողնվում է ընդհանուր օգտագործման, ապա դա չի կարող բացառել դատարանների կողմից նման հայցապահանջների բավարարումը, քանի որ, ըստ էության, այն դիտարկվում է որպես բնեղենով առանձնացնելու հնարավոր տարբերակ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1) գրավոր և իրեղեն ապացույցներով, 2) փորձագետների եզրակացություններով, 3) վկաների ցուցմունքներով, 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանին առաջադրել հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձաքննության ընթացքում, ինչպես նաև նշել այն մասնագիտացված փորձագիտական հաստատությունը կամ այն փորձագետին, որոնց դատարանը կարող է հանձնարարել փորձաքննության կատարումը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը պետք է պարունակի՝

1. նշում կիրառված մեթոդների մասին,
2. կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը,
3. հետազոտությունների արդյունքում արված հետևությունները,
4. առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը հետազոտվում է դատական նիստում և գնահատվում է մյուս ապացույցների հետ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը կարող է հրավիրել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դրա վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար, եթե գործի հանգամանքներից բխում են դրա անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

Դատարանը հրավիրում է գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դրա վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար, եթե այդ մասին միջնորդել են կողմերը, կամ միջնորդել է կողմերից մեկը:

Վկայակոչված իրավակարգավորումներից հետևում է, որ դատարանը փորձաքննություն նշանակելու հարցը պետք է լուծի՝ ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից, ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության վերաբերյալ օրենսդրական պահանջներից, հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակից և արդարադատության արդյունավետության շահերի ապահովման առաջնահերթությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փորձագետի եզրակացությունը գնահատվում է ընդհանուր հիմունքներով, և ինչպես գործով ձեռք բերված ցանկացած այլ ապացույց, այն ենթակա է գնահատման գործում առկա մյուս ապացույցների հետ համակցության մեջ, ինչը հնարավորություն է տալիս ստուգելու ոչ միայն փորձագետի եզրակացության տրամաբանությունը, այլ նաև կատարված հետազոտության գիտական հիմնավորվածության աստիճանն ու կատարված հետևությունների լրիվությունն ու հավաստիությունը: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածում սահմանված ապացույցներից որևէ մեկը, այդ թվում նաև՝ փորձագետի եզրակացությունը որևէ առավելություն չունի գործում առկա մյուս ապացույցների նկատմամբ և ենթակա է գնահատման ընդհանուր կարգով՝ վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ապացույցի յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, ինչը կարող է պայմանավորված լինել ապացույցի կազմավորման բնույթով, աղբյուրով, արտահայտման ձևով և այլ գործոններով: Հետևաբար անգամ ընդհանուր կարգով գնահատումն անհրաժեշտ է իրականացնել այդ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Անդրադառնալով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն առանձնացրել է այն հիմնական չափորոշիչները, որոնք ենթակա են կիրառման վերոնշյալ ապացույցի գնահատումը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից իրականացնելիս:

**Վերաբերելիության առումով** փորձագետի եզրակացությունը գնահատելիս նախևառաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե փորձագետին առաջադրված հարցերը որքանով նշանակություն ունեն գործի լուծման համար, ապա միայն անդրադառնալ այդ

հարցադրումների վերաբերյալ արված եզրահանգումներին: Ընդ որում, հարցադրումների բովանդակությունը ոչ միայն էական նշանակություն ունի փորձագետի եզրակացության վերաբերելիության գնահատման տեսանկյունից, այլև կարևորվում է երկու և ավելի եզրակացությունների պարագայում դրանց միջև առկա հակասությունները վեր հանելու առումով:

Փորձագետի եզրակացությունը *թույլատրելիության տեսանկյունից* գնահատման ենթարկելիս առաջնահերթ կարևորվում են փորձաքննությունն իրականացնող անձի որակավորումը և ձեռնհասությունը, նշված անձի օբյեկտիվությունը, սահմանված դատավարական կարգի պահպանված լինելը, հետազոտության ընթացքի և արդյունքների պատշաճ դատավարական ձևակերպումը:

*Արժանահավարտության տեսանկյունից* փորձագետի եզրակացության գնահատում իրականացնելիս պետք է հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը, փորձաքննությանը տրամադրված նյութի որակը և բավարարությունը, ելակետային տվյալների բնույթը, փորձագետի հետևությունների փաստարկվածության աստիճանը, գործին մասնակցող անձանց՝ փորձաքննությանը ներկա գտնվելու իրական հնարավորությունը, եզրակացության համապատասխանությունը գործում առկա այլ ապացույցներին (*տե՛ս «Կանաչասպարում» ՊՓԲԸ-ի անանկության գործով կատարարիչ Հովհաննես Եղյանն ընդդեմ Կարեն Ախիկյանի և մյուսների թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Նոր Արեշի 8-րդ փողոցի թիվ 89/1 հասցեի 432,0 քմ մակերեսով հողամասի համասեփականատերերն են Հենրիկ Ֆրանգուլյանը (Նոր Արեշի 8-րդ փողոցի թիվ 89/1 հասցեն) և Սամվել Ֆրանգուլյանը (Նոր Արեշի 8-րդ փողոցի թիվ 89/2 հասցեն): Համաձայն ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի 26.09.2014 թվականի թիվ 13-0480Դ փորձագետի եզրակացության՝ Երևան քաղաքի Նոր Արեշի 8-րդ փողոցի թիվ 89/1 հասցեի 432,0 քմ մակերեսով հողամասը հնարավոր է երկու համասեփականատերերի միջև բաժանել: Նշված եզրակացությամբ առաջարկվել է Նոր Արեշի 8-րդ փողոցի թիվ 89/1 հասցեի հողամասի առանձնացման երկու տարբերակ, որոնք բերվել են փորձագիտական եզրակացությանը կից թիվ 2 և 3 հավելվածներում: Առաջին տարբերակով առաջարկվել է Նոր Արեշի 8-րդ փողոցի թիվ 89/1 հասցեի շինությունից ազատ 66,5 քմ մակերեսով հողամասը թողնել ընդհանուր օգտագործման, քանի որ ելնելով երկրաչափական չափերից և դիրքից՝ այն հնարավոր չէ առանձնացնել երկու մասերի և ապահովել սպասարկման ու շահագործման համար անհրաժեշտ առանձին մուտքեր: Ընդհանուր օգտագործման է թողնվել նաև շինություններով ծանրաբեռնված 70,2 քմ մակերեսով հողամասը, քանի որ նշված մակերեսն օգտագործվում է կողմերի կողմից (կողմերի կողմից տարբեր հարկերում օգտագործվող տարածքներ, որոնք գտնվում են միմյանց վրա): Նշված տարբերակով կողմերից յուրաքանչյուրին հասանելիք հողամասի մակերեսը կազմում է 147,65 քմ: Առաջարկվող երկրորդ տարբերակով վիճելի հողամասի բաժանումը հնարավոր է համարվել միայն կողմերի փոխհամաձայնության պայմաններում:

09.02.2015 թվականի դատական նիստի ընթացքում փորձաքննությունն իրականացրած փորձագետներ Անահիտ Հակոբյանը և Հակոբ Դեմիրճյանը հայտնել են, որ հնարավոր չէ առանց կողմերի փոխհամաձայնության ընդհանուր գույքից հայցվորի բաժինն առանձնացնել, քանի որ պատասխանողի սեփականության մի մասը գտնվում է հայցվորի կողմից օգտագործվող տարածքում, իսկ հայցվորի սեփականության մի մասը՝ պատասխանողի տարածքում: Փորձագետները հայտնել են նաև, որ նշված տարբերակները նախատեսվել են կողմերի փոխհամաձայնության պայմանով, և այդ դեպքում նախընտրելի է հողամասերի բաժանման առաջին տարբերակը, որովհետև շինարարական աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն գրեթե չի լինի:

Սույն գործով Դատարանը, արձանագրելով, որ ըստ դատաքննության ընթացքում փորձագետների տրված բացատրությունների՝ վիճելի հողամասից հնարավոր չէ առանց կողմերի փոխհամաձայնության առանձնացնել հայցվորի բաժնեմասը, քանի որ պատասխանողի սեփականության մի մասը գտնվում է հայցվորի կողմից օգտագործվող տարածքում, իսկ հայցվորինը՝ պատասխանողի տարածքում, հանգել է այն հետևության, որ հայցվորի կողմից ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության կանոններին համա-

պատասխան չեն ներկայացվել ապացույցներ, որոնք թույլ կտան Դատարանին առանձնացնել ընդհանուր օգտագործման հողամասը, իսկ հողամասի բաժանման վերաբերյալ փորձագիտական եզրակացությամբ առաջարկած տարբերակները կիրառելի են միայն փոխադարձ համաձայնության պայմաններում, որպիսին սույն գործով առկա չէ:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Վկայակոչված իրավանորմերից և դրանց մեկնաբանմանն ուղղված վերլուծություններից հետևում է, որ նմանատիպ փաստական և իրավական հիմքերով վեճերով գործի լուծման համար նախևառաջ էական նշանակություն ունի ընդհանուր գույքից համասեփականատիրոջ բաժինը բնեղենով առանձնացնելու հնարավորության հարցը, որպիսի փաստը կարող է հաստատվել միայն համապատասխան մասնագիտական եզրակացությամբ:

Սույն գործում առկա՝ ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ–ի 26.09.2014 թվականի թիվ 13–0480Դ փորձագետի եզրակացությանը կից թիվ 2 հավելվածի համաձայն՝ Երևան քաղաքի Նոր Արեշի 8–րդ փողոցի թիվ 89/1 հասցեի 432,0 քմ մակերեսով հողամասը երկու համասեփականատերերի միջև հնարավոր է բաժանել ընդհանուր օգտագործման տարածքներ թողնելու պայմանով:

Վերոգրյալից հետևում է, որ փորձագիտական եզրակացությանը կից թիվ 2 հավելվածով առաջարկվող տարբերակով՝ առանց համասեփականատերերի փոխհամաձայնության նախապայմանի, տրվել է Երևան քաղաքի Նոր Արեշի 8–րդ փողոցի թիվ 89/1 հասցեի 432,0 քմ մակերեսով հողամասից՝ բացառությամբ շինությունից ազատ 66,5 քմ մակերեսով և շինություններով ծանրաբեռնված 70,2 քմ մակերեսով հողամասերի, որոնք թողնվում են որպես ընդհանուր օգտագործման տարածքներ, հայցվորի բաժինը բնեղենով առանձնացնելու հնարավորություն: Ընդ որում, բաժանվող հողամասի որոշ մասերը համասեփականատերերի ընդհանուր օգտագործմանը թողնելը չի բացառում տվյալ պահանջի բավարարումը:

Ինչ վերաբերում է դատաքննության ընթացքում փորձագետների տրված բացատրություններին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ բացատրությունները դատարանների կողմից ենթակա էին գնահատման միայն փորձագիտական եզրակացության հետ համակցության մեջ վերցված: Ընդ որում, փորձագիտական եզրակացության առկայության պայմաններում միայն դատաքննության ընթացքում փորձագետների տրված բացատրությունները բավարար չեն հաստատված համարելու այն փաստը, որ փորձագիտական եզրակացությունում նշված երկու տարբերակներում հողամասի բաժանումը հնարավոր է կատարել միայն համասեփականատերերի փոխհամաձայնության պայմաններում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են ստորադաս դատարանների այն եզրահանգումները, որ հայցվորի կողմից ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության կանոններին համապատասխան չեն ներկայացվել ապացույցներ, որոնք թույլ կտան Դատարանին առանձնացնել ընդհանուր օգտագործման հողամասը, իսկ հողամասի բաժանման վերաբերյալ փորձագիտական եզրակացությամբ առաջարկած տարբերակները կիրառելի են միայն փոխադարձ համաձայնության պայմաններում, որպիսին սույն գործով առկա չէ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով չեն իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ պատճառաբանությունների լույսի ներքո «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ–ի 26.09.2014 թվականի թիվ 13–0480Դ փորձագիտական եզրակացությանը որպես ապացույց գնահատելու համար անհրաժեշտ է գործն ուղարկել նոր քննության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը, այդ թվում նաև՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.09.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցը, ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.09.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0333/02/14  
2016 թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0333/02/14

Նախագահող դատավոր՝

Ա. Պետրոսյան

Դատավորներ՝

Ա. Սմբատյան

Գ. Կարախանյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
- Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
- Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լեյլի Պետրոսյանի, Թերեզա և Մարի Նախյանների ներկայացուցիչ Սամվել Սիմոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.09.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մնացական Նախյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանի ընդդեմ Լեյլի Պետրոսյանի, Թերեզա և Մարի Նախյանների՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք համայնքում գտնվող՝ Լեյլի Պետրոսյանին, Մնացական, Թերեզա և Մարի Նախյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,0758 հա մակերեսով տնամերձ հողամասից Մնացական Նախյանի բաժնեմասն առանձնացնելու, դրա վրա 663.250 ՀՀ դրամի չափով բռնագանձում տարածելու, իսկ բաժնեմասն առանձնացնելու անհնարինության դեպքում՝ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատարանական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Մնացական Նախյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանը պահանջել է ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք համայնքում գտնվող՝ Լեյլի Պետրոսյանին, Մնացական, Թերեզա և Մարի Նախյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,0758 հա մակերեսով տնամերձ հողամասից առանձնացնել Մնացական Նախյանի բաժնեմասը, դրա վրա 663.250 ՀՀ դրամի չափով բռնագանձում տարածել, իսկ բաժնեմասն առանձնացնելու անհնարինության դեպքում՝ գույքը վաճառել հրապարակային սակարկություններով:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Նարինյան) (այսուհետ՝ Դատարան) 03.04.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.09.2015 թվականի որոշմամբ Մնացական Նախոյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 03.04.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լեյլի Պետրոսյանի, Թերեզա և Մարի Նախոյանների ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը սնանկության գործով կառավարչին լիազորում է սնանկ ճանաչված անձի անունից կատարել անհրաժեշտ գործողություններ, որոնք, սակայն, պետք է իրականացվեն նյութական և դատավարական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով սնանկության կառավարիչը չի հանդիսանում նյութաիրավական հարաբերության պատշաճ սուբյեկտ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի հիմքով պահանջի իրավունքը պատկանում է պահանջատիրոջը, որպիսի պայմաններում կառավարչի՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում համապատասխան լիազորություններ ունենալու պնդումները չեն համապատասխանում իրականությանը:

Այսինքն՝ սույն գործի քննության շրջանակներում հայցվորն առաջին հերթին պետք է հիմնավորեր, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի հիմքով իրավասու է պահանջելու պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածել, ինչը, սակայն, չի արել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.09.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 03.04.2015 թվականի վճիռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած 06.12.2013 թվականի թիվ ԱՐԱԴ/0049/04/13 վճռով Մնացական Նախոյանը ճանաչվել է սնանկ (**հատոր 1-ին, գ.թ. 7-8**):

2) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2013 թվականի թիվ ԱՐԱԴ/0049/04/13 որոշմամբ Աշոտ Տեր-Վարդանյանը նշանակվել է Մնացական Նախոյանի սնանկության գործով կառավարիչ (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

3) Անշարժ գույքի սկստումամբ իրավունքի պետական գրանցման 14.11.2002 թվականի թիվ 1027254 վկայականի համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք համայնքի 0,15 հա մակերեսով տնամերձ հողամասն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Լեյլի Պետրոսյանին, Մնացական, Թերեզա և Մարի Նախոյաններին (**հատոր 1-ին, գ.թ. 10-12**):

4) 31.07.2013 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Լեյլի Պետրոսյանը, Թերեզա և Մարի Նախոյանները ու Մնացական Նախոյանը ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք համայնքում գտնվող, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող 0,15 հա մակերեսով տնամերձ հողամասի կեսը՝ 0,0758 հա մակերեսով, վաճառել են Դուստրիկ Նախոյանին (**հատոր 1-ին, գ.թ. 37**):

5) Մնացական Նախոյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանը 09.04.2014 թվականին դատարան ներկայացված հայցադիմումով, վկայակոչելով ՀՀ քա-



դաքացիական օրենսգրքի 197-րդ, 200-րդ հոդվածները, պահանջել է առանձնացնել Արագածոտնի մարզի Աղձք գյուղում գտնվող 0,0758 հա տնամերձ հողամասի՝ Մնացական Նախոյանի բաժնետնասը և դրա վրա բռնագանձում տարածել (**հատոր 1-ին, գ.թ. 4-5**):

6) Մնացական Նախոյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանը 19.09.2014 թվականին Դատարան է ներկայացրել «Հայցադիմումի պարզաբանում», որով դարձյալ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ, 200-րդ հոդվածները՝ խնդրել է սնանկության վարույթում Մնացական Նախոյանի պարտավորությունները կատարելու համար Արագածոտնի մարզի Աղձք գյուղում գտնվող 0,0758 հա տնամերձ հողամասի՝ Մնացական Նախոյանի բաժնետնասի վրա բռնագանձում տարածել 663.250 ՀՀ դրամի չափով: Մնացած սեփականատերերի կողմից պարտապանի բաժնետնասը գնելուց հրաժարվելու դեպքում տարածքը վաճառել հրապարակային սակարկություններով՝ մնացած սեփականատերերին իրենց բաժնետնասերի արժեքը վերադարձնելու պայմանով (**հատոր 2-րդ, գ.թ. 28-29**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարունատարությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում սնանկության գործով կառավարիչը կարող է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի հիմքով դիմել դատարան սնանկ ճանաչված պարտապանի ընդհանուր սեփականության գույքում ունեցած բաժինն առանձնացնելու և դրա վրա սնանկության վարույթում գրանցված պահանջնասերերի պարտավորությունների կատարման համար բռնագանձում տարածելու պահանջով:*

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը սնանկության գործով դիմում է դատարան նույն օրենքով նախատեսված դեպքերում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը **պարտապանի անունից** դիմում է դատարաններ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի դատավարական իրավունքներն իրացնում է կառավարիչը: Մասնավորապես՝ վերջինս պարտապանի անունից դիմում է դատարաններ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից: Նշվածից հետևում է, որ սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի անունից դատարան հայց ներկայացնելու իրավունքը ևս իրացնում է կառավարիչը:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով վճռաբեկ բողոքի հիմքում բարձրացված հարցադրումը, միաժամանակ հիմք ընդունելով հայցի փաստական և իրավական հիմքը, անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի իրավակարգավորման առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա **պարտատերն** իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է, կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջելու շուկայական գնով գնել պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ նույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի իրավական վերլուծությանը, նշել է, որ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու **պարտատիրոջ պահանջի իրավունքը** ծագում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված այն դեպքի համար, երբ ընդհանուր սեփականության մասնակից պարտապանի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման համար: Նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում ապահովելու ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների իրավունքների առավելագույն պաշտպանությունն իրենց հետ ընդհանուր գույքում բաժին ունեցող պարտապանի ունեցած պարտավորությունների կատարման գործընթացում (*տե՛ս Լաուրա Ղալիջյանն ընդդեմ Արսեն Մակարյանի, Լիաննա Ղազարյանի և Ալյա Մակարյանի թիվ ԼԴ4/0280/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումն ունի հստակ սուբյեկտային կազմ՝ **պարտատեր** և **պարտապան**, որոնք քաղաքացիադատավարական վարույթում համապատասխանաբար հանդես են գալիս որպես հայցվոր և պատասխանող: Ընդ որում, պարտապանը միաժամանակ հանդիսանում է ընդհանուր սեփականության մասնակից, և նրա այլ գույքը բավարար չէ պարտատիրոջ հանդեպ ունեցած պարտավորությունը կատարելու համար: Այսպիսով, ընդհանուր սեփականությունում պարտապանի բաժնի առանձնացման և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջի իրավունքը **պատկանում է** ընդհանուր սեփականության մասնակից հանդիսացող պարտապանի **պահանջատիրոջը**: Հետևաբար շահագրգիռ անձը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի հիմքով դիմելով դատարան, ի թիվս այլ հանգամանքների, նախևառաջ պետք է հիմնավորի ընդհանուր սեփականության համապատասխան մասնակցի՝ իր նկատմամբ չկատարված պարտավորություններ ունենալու հանգամանքը:

Վերը շարադրվածի համատեքստում անդրադառնալով բողոքի հիմքում բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կառավարիչը սնանկ ճանաչված պարտապանի անունից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածով նախատեսված կարգով դատարան դիմելու իրավունք չունի այն դեպքում, երբ պահանջում է առանձնացնել սնանկ ճանաչված պարտապանի՝ ընդհանուր գույքում ունեցած բաժնեմասը և դրա վրա բռնագանձում տարածել սնանկության վարույթում գրանցված պարտատիրոջ պահանջը բավարարելու համար: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը նախևառաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարիչը հայց հարուցում է բացառապես սնանկ ճանաչված պարտապանի անունից, որը տվյալ պարագայում սնանկության վարույթում գրանցված պահանջատերերի հետ փոխհարաբերություններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի իմաստով ևս հանդիսանում է պարտապան, մինչդեռ, ինչպես

բխում է վերը շարադրված վերլուծությունից, նման հայցապահանջով դատարան կարող է դիմել պարտատերն ընդդեմ պարտապանի:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սնանկության գործով կառավարիչը, իրականացնելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունները, պարտավոր է գրանցված պահանջատերերի պահանջները բավարարելու համար հավաքագրել և իրացնել պարտապանին պատկանող ակտիվներն ու գույքը: Ընդհանուր սեփականությունում պարտապանի մասնակցության պայմաններում օգտվելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված իրավունքից՝ սնանկության գործով կառավարիչը, ելնելով նպատակահարմարությունից, կարող է ընդհանուր սեփականությունում պարտապանի բաժինն օտարել բնեղենով՝ առանց այդ բաժինն առանձնացնելու կամ բաժինն առանձնացնելուն միտված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված գործողությունները կատարելուց հետո, բայց բոլոր դեպքերում հանդես գալով որպես սնանկ ճանաչված պարտապանի ներկայացուցիչ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած 06.12.2013 թվականի թիվ ԱՐԱԴ/0049/04/13 վճռով Մնացական Նախոյանը ճանաչվել է սնանկ: ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2013 թվականի թիվ ԱՐԱԴ/0049/04/13 որոշման համաձայն՝ Աշոտ Տեր-Վարդանյանը նշանակվել է Մնացական Նախոյանի սնանկության գործով կառավարիչ: ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք համայնքի 0,0758 հա մակերեսով տնամերձ հողամասն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Լեյլի Պետրոսյանին, Մնացական, Թերեզա և Մարի Նախոյաններին:

Մնացական Նախոյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանը 09.04.2014 թվականին դատարան ներկայացված հայցադիմումով, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ, 200-րդ հոդվածները, պահանջել է առանձնացնել Արագածոտնի մարզի Աղձք գյուղում գտնվող 0,0758 հա տնամերձ հողամասի՝ Մնացական Նախոյանի բաժնեմասը և դրա վրա բռնագանձում տարածել: Մնացական Նախոյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանը 19.09.2014 թվականին Դատարան է ներկայացրել «Հայցադիմումի պարզաբանում», որով դարձյալ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ, 200-րդ հոդվածները՝ խնդրել է սնանկության վարույթում Մնացական Նախոյանի պարտավորությունները կատարելու համար Արագածոտնի մարզի Աղձք գյուղում գտնվող 0,0758 հա տնամերձ հողամասի՝ Մնացական Նախոյանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածել 663.250 ՀՀ դրամի չափով, իսկ մնացած սեփականատերերի կողմից պարտապանի բաժնեմասը գնելուց հրաժարվելու դեպքում տարածքը վաճառել հրապարակային սակարկություններով՝ մնացած սեփականատերերին իրենց բաժնեմասերի արժեքը վերադարձնելու պայմանով:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ «Կառավարիչը ներկայացրել է պարտապան Մնացական Նախոյանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջ, որի իրավունքը տրված է միայն պահանջատիրոջը, սակայն Կառավարիչը, ով հանդես է գալիս «Մասնկության մասին» ՀՀ օրենքով տրված լիազորությունների շրջանակներում, պահանջատերերի անունից հանդես գալու լիազորությունն չունի: Այսինքն՝ ներկայացված պահանջը ներկայացրել է այն անձը, ով նման պահանջի իրավունք չունի»:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի 03.04.2015 թվականի վճիռը և գործը նոր քննության ուղարկելով, անհիմն է համարել Դատարանի պատճառաբանությունները և գտել, որ «սնանկության գործով կառավարիչը, դիմելով Դատարան, իրականացրել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր լիազորությունները, մինչդեռ Դատարանը, հիմք ընդունելով միայն այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածն ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնելու իրավունք նախատեսել է պարտատիրոջ համար, եզրակացրել է, որ սնանկության գործով կառավարիչը նման իրավունք չունի», և արձանագրել է, որ «Դատարանը հաշվի չի առել սնանկության վարույթի առանձնահատկությունները և այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը սնանկության վարույթի նկատմամբ կիրառվում են այնքանով, որքանով «Մասնկության մասին» ՀՀ օրենքով այլ բան նախատեսված չէ, որի

արդյունքում կայացրել է չհիմնավորված դատական ակտ»: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ Դատարանի կողմից, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածի համապատասխան, չի կատարվել գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ Վերաքննիչ դատարանը նյութական իրավունքի նորմի սխալ մեկնաբանման արդյունքում անտեսել է այն հանգամանքը, որ ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա պարտավորության չափով բռնագանձում տարածելու պահանջ ներկայացնելու իրավունքը բացառապես պատկանում է պարտատիրոջը: Հետևաբար սնանկության գործով կառավարիչը, հանդես գալով սնանկ ճանաչված անձի (պարտապանի) անունից՝ «Մնակության մասին» ՀՀ օրենքով տրված լիազորությունների շրջանակներում, չի կարող հայց ներկայացնել դատարան՝ սնանկ ճանաչված պարտապանի՝ ընդհանուր գույքում ունեցած բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա սնանկության վարույթում գրանցված պահանջներով բռնագանձում տարածելու պահանջների մասին, որպիսի իրավաչափ եզրահանգման էլ սույն գործով հանգել է Դատարանը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227–րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 10.09.2015 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–րդ հոդվածի 1–ին կետի 6–րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6–րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

### ***5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68–րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3–րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «իա. 1» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են սնանկության կառավարիչները՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Սույն գործով բողոք բերած անձինք վճռաբեկ բողոք ներկայացնելիս միաժամանակ միջնորդել են հետաձգել պետական տուրքի վճարումը, որը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.12.2015 թվականի որոշմամբ բավարարվել է:

Նկատի ունենալով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ բեկանման և փոփոխման, ինչի արդյունքում Մնացական Նախոյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանի հայցը ենթակա է մերժման, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա, հետաձգված պետական տուրքի գումարը վճարելու պարտականությունը պետք է կրի հայցվոր կողմը, միաժամանակ, սակայն, նկատի ունենալով, որ հայցը հարուցված է սնանկության գործով կառավարչի կողմից, որն էլ իր հերթին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «իա. 1» կետի հիմքով ազատված է դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարման ենթակա պետական տուրքի վճարումից, վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում այդ հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.09.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 03.04.2015 թվականի վճիռ:

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.12.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի վճարման հարցը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «իա. 1» կետի հիմքով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/0936/02/14**  
դատարանի որոշում 2016 թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0936/02/14  
Նախագահող դատավոր՝ Գ. Կարախանյան  
Դատավորներ՝ Ն. Տավարացյան  
Ա. Պետրոսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22-ին դռնբաց դատական նիստում, քննելով Էմմա Չթյանի, Մարգարիտա Մեհրաբյանի, Հայրապետ, Դիանա, Նորիկ Չիչյանների ներկայացուցիչ Աշոտ Աբրահամյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.02.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Շենքերի կառավարում» համատիրության ընդդեմ Նորիկ, Էմմա Չթյանների, Մարգարիտա Մեհրաբյանի, Հայրապետ, Դիանա և Նորիկ Չիչյանների՝ 147.566 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատարանական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ «Շենքերի կառավարում» համատիրությունը (այսուհետ՝ Համատիրություն) պահանջել է Նորիկ, Էմմա Չթյաններից, Մարգարիտա Մեհրաբյանից, Հայրապետ, Դիանա և Նորիկ Չիչյաններից բռնագանձել 147.566 ՀՀ դրամ:  
Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Զ. Նախշբարյան) (այսուհետ՝ Դատարան) 24.10.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 04.02.2015 թվականի որոշմամբ Էմմա Չթյանի, Մարգարիտա Մեհրաբյանի, Հայրապետ, Դիանա, Նորիկ Չիչյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 24.10.2014 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել է, և գործի վարույթը՝ Նորիկ Չթյանի մասով, կարճվել է. վճիռը՝ մնացած մասով, թողնվել օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Էմմա Չթյանի, Մարգարիտա Մեդրաբյանի, Հայրապետ, Դիանա, Նորիկ Չիչյանների (այսուհետ՝ Համապատասխանողներ) ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համատիրությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի խմբագրությանը ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը, 68-րդ հոդվածի 2-րդ մասը, սխալ է մեկնաբանել «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ կետը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները: Մասնավորապես՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի վերլուծությունից հետևում է, որ բնակչի վճարման պարտավորությունն առաջանում է Համատիրության կողմից համապատասխան աշխատանքների կատարման փաստով, իսկ բնակչի ուժերով և միջոցներով պարտադիր նորմերի պահանջների կատարման պարագայում վերջինիս կողմից Համատիրության հանդեպ վճարումներ կատարելու պարտականություն չի առաջացնում: Համատիրությունը, չներկայացնելով որևէ ապացույց՝ աշխատանքներն իր կողմից կատարված լինելու վերաբերյալ, և հիմնվելով իր կողմից սահմանված վերացական սակագների վրա, հաշվարկել է անհիմն վճարային պարտավորություններ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ վճարային պարտավորության համար չի կարող հիմք հանդիսանալ որևէ փաստաթուղթ, որի վերաբերյալ բազմաբնակարան շենքի բնակիչները չեն իրագեկվել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 26.05.2009 թվականի ՄԴՈ-804 որոշումը, մասնավորապես, նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցին, նշել է, որ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների բնույթով պայմանավորված՝ այդ վճարների չափը չի կարող սահմանվել վերացականորեն. յուրաքանչյուր կոնկրետ աշխատանքի համար կազմվում և սեփականատերերի քննարկմանն է ներկայացվում նախահաշիվ, նախահաշվային գումարներն ընդգրկվում են շենքի տարեկան բյուջեում: Սեփականատերերն են ընտրում շենքի կառավարման մարմինը և որոշում այն միջոցառումների և աշխատանքների շրջանակը, որոնք ենթակա են պարտադիր կատարման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.02.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Օրենսդիրը հստակ պարտավորություն է սահմանել ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր սեփականատիրոջ համար գույքի պահպանման և շահագործման համար վճարումներ կատարելու: Այսինքն՝ անկախ կատարված կամ կատարվելիք աշխատանքների փաստական հանգամանքներից՝ պատասխանողների համար օրենքի ուժով ծագել է պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարումներ իրականացնելու պարտավորությունը: Համատիրության կողմից ներկայացված պարտքի վերաբերյալ գումարի չափը վերացական չէ, քանի որ Համատիրությունն իր ստեղծման օրվանից իրականացրել է պարտադիր նորմերի պահանջների կատարման բոլոր աշխատանքները, իսկ պատասխանողները, անհիմն կերպով խուսափելով իրենց պարտականությունից, պահանջում են կատարված աշխատանքների ապացույցներ:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման պետ Ա. Հովհաննիսյանի կողմից 01.07.2004 թվականին հաստատված Համատիրության կանոնադրության փոփոխության 1.1 կետի համաձայն՝ Համատիրությունը, ի թիվս այլ շենքերի, Երևանի Գյուլբենկյան փողոցի թիվ 22 շենքի սեփականատերերի անդամության վրա հիմնադրված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կոոպերատիվ է: Նշված կանոնադրության փոփոխության 2.3 կետի համաձայն՝ Համատիրությունը բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի կողմից լիազորված է իրականացնել շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման հետևյալ պարտադիր գործառնությունները՝ ապահովել շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարումը, օրենքով նախատեսված կարգով շինության սեփականատերերին ներկայացնել ամսական, տարեկան և այլ հաշվետվություններ ու ծանուցումներ, կազմել և շինության սեփականատերերի քննարկմանը ներկայացնել պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների նախահաշիվ **(1-ին հատոր, գ.թ. 12-14):**

2) 20.09.2004 թվականին տրված թիվ 0129076 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Գյուլբենկյան փողոցի 22-րդ շենքի թիվ 31 բնակարանի նկատմամբ գրանցված է Նորիկ Չթյանի, Էմմա Չթյանի, Հայրապետ Չիչյանի, Մարգարիտա Մեհրաբյանի, Դիանա Չիչյանի, Նորիկ Չիչյանի սեփականության իրավունքը **(1-ին հատոր գ.թ. 8):**

3) Համատիրության կողմից կազմված տեղեկանքի համաձայն՝ Երևանի Գյուլբենկյան փողոցի 22-րդ շենքի թիվ 31 բնակարանի սեփականատերերի պարտքը Համատիրության նկատմամբ 2003 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2013 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամակահատվածի համար 01.12.2013 թվականի դրությամբ կազմում է 147.566 ՀՀ դրամ, որը հաշվարկվել է նույն ժամանակահատվածի համար պարտադիր նորմերի կատարման համար (կոշտ-կենցաղային աղբի տեղափոխման և բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանման համար) վճարման ենթակա ամսական հաշվարկային գումարների հիման վրա: Տեղեկանքը ստորագրված է Համատիրության թիվ 3 մասնաճյուղի տնօրենի և ավագ հաշվապահի կողմից **(1-ին հատոր, գ.թ. 5):**

**4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարային պարտավորությունների առաջացման հիմքերի և դրանց կատարման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

2) Վերաքննիչ դատարանի կողմից «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. ենթակա է արդյոք բավարարման «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների բռնագանձման վերաբերյալ բազ-



մարնակարան շենքի կառավարման մարմնի հայցապահանջն այն դեպքում, երբ վերջինիս կողմից չեն ներկայացվել ինչպես այդ վճարների առաջացման հիմքերի, այնպես էլ համապատասխան պարտադիր նորմերի կարարման վերաբերյալ բավարար սպացույցներ:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման հարաբերությունները և սահմանում է բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման կարգը, կառավարման ձևերը, շենքի կառավարման մարմինների իրավասությունները, դրանց կազմավորման, գործունեության, գործունեության դադարման կարգը, ինչպես նաև դրանց փոխհարաբերությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների հետ:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության սեփականատերերի պարտականությունը այդ սեփականությունն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով պահպանելն ու շահագործելն է: Ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր սեփականատեր պարտավոր է իր բաժնին համաչափորեն մասնակցել պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին, հարկերին, տուրքերին և մյուս վճարներին, ինչպես նաև գույքի պահպանման և շահագործման այլ ծախսերին:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Շինության սեփականատերերը պարտավոր են իրականացնել ընդհանուր բաժնային սեփականության պահպանման այն պահանջները և պարտադիր միջոցառումներն ու աշխատանքները (այսուհետ՝ պարտադիր նորմեր), որոնց չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել ընդհանուր բաժնային սեփականությանը, շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին:

2. Պարտադիր նորմերի մեջ ներառվում են հակահրդեհային, սանիտարական, քաղաքաշինական, կոմունալ սպասարկման, փոստային բաժանորդային պահարանների սպասարկման և այլ միջոցառումներ:

Պարտադիր նորմերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Շինության բոլոր սեփականատերերը պարտավոր են, շինության սեփականատերերի ժողովի կողմից նույն օրենքով սահմանված կարգով հաստատված նորմերից ելնելով, կատարել համապատասխան վճարումներ կամ իրենց ուժերով ու միջոցներով իրականացնել պարտադիր նորմերի պահանջները:

4. Նույն հոդվածով նախատեսված աշխատանքների իրականացման համար վճարի չափը շինության սեփականատիրոջ համար սահմանվում է՝ ելնելով շենքի բաժնային սեփականության մեջ նրա բաժնի չափից:

Վճարման ենթակա գումարի չափի, ժամկետների և կարգի մասին շենքի կառավարման մարմինը նախօրոք ծանուցում է շինության սեփականատերերին՝ նույն օրենքով սահմանված կարգով...:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ շինությունների սեփականատերերի կողմից պարտադիր նորմերի իրականացման համար նախատեսված վճարման ենթակա գումարի վճարումը երկու անգամ ուշացնելու դեպքում շենքի կառավարման մարմինն իրավունք ունի դրա բռնագանձման համար դիմելու դատարան՝ մինչ այդ գրավոր նախազգուշացնելով պարտատիրոջը, բացի այդ, շենքի կառավարման մարմինն իրավունք ունի պարտադիր նորմերն իրականացնելու այլ միջոցներից՝ չվճարողներից պահանջելով հատուցել դրա հետևանքով իրեն և շինության այլ սեփականատերերին պատճառված վնասները:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը կա-

րող է իրականացվել շինության սեփականատերերի կողմից ստեղծված իրավաբանական անձի համատիրության միջոցով:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ շինության սեփականատերերն ընդհանուր բաժնային գույքի պարտադիր նորմերի մասով կառավարման նպատակով կարող են ստեղծել իրավաբանական անձ՝ համատիրություն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ համատիրության ստեղծման մասին որոշման մեջ պետք է արտացոլվեն պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ցանկը, ինչպես նաև շինության սեփականատերերի կողմից տրված այլ լիազորություններ:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «դ», «ե» և «զ» ենթակետերի համաձայն՝ շենքի կառավարման մարմինը պահպանում է շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարումը, նույն օրենքով նախատեսված կարգով շինության սեփականատերերին ներկայացնում է ամսական, տարեկան և այլ հաշվետվություններ ու ծանուցումներ, կազմում և շինության սեփականատերերի քննարկմանն է ներկայացնում պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների նախահաշիվ, իր կամ շինության սեփականատերերի անունից տրված լիազորությունների սահմաններում և շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բյուջեի հոդվածներով նախատեսված պայմաններով և չափով կնքում է պայմանագրեր:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ կառավարչի կողմից յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 15-ը, պատրաստվում է հաշվետվություն շինությունների սեփականատերերի կողմից անվանական վճարումների, նախատեսված և իրականացված աշխատանքների ընթացքի վերաբերյալ և ծանուցվում է բնակիչներին: Շինության սեփականատերի պահանջով նշված հաշվետվությունը տրամադրվում է նրան, որի դիմաց գանձվում են միայն հաշվետվության բազմացման ծախսերը:

«Համատիրության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի «զ» ենթակետի համաձայն՝ համատիրության ընդհանուր ժողովի իրավասությունն է համատիրության տարեկան հաշվեկշռի հաստատումը:

«Համատիրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ համատիրության տարեկան հաշվեկշիռը և բազմաբնակարան շենքի տարեկան բյուջեն հաստատվում են ընդհանուր ժողովում մեկ տարվա համար՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը, և կարող են տարվա ընթացքում փոխվել միայն ընդհանուր ժողովի որոշմամբ: Բազմաբնակարան շենքի տարեկան բյուջեն կազմելիս և հաստատելիս հաշվի են առնվում շենքի ընդհանուր սեփականության շահագործման, սպասարկման, պահպանման և նորոգման անհրաժեշտությունը, ինչպես նաև համատիրության գործունեության ապահովման խնդիրները:

ՀՀ սահմանադրական դատարանը, 26.05.2009 թվականի թիվ ՍԴՈ-804 որոշմամբ գնահատելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանադրականությունը, արձանագրել է, որ «պարտադիր նորմ» հասկացության իրավական բովանդակությունը բացահայտված է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետում, ըստ որի՝ պարտադիր նորմերը սեփականության պահպանման այն պահանջները և պարտադիր միջոցառումներն ու աշխատանքներն են, որոնց չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել ընդհանուր բաժնային սեփականությանը, շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին: Պարտադիր նորմերի մեջ, ըստ նույն հոդվածի 2-րդ կետի, ներառվում են հակահրդեհային, սանիտարական, քաղաքաշինական, կոմունալ սպասարկման և այլ միջոցառումներ: Համաձայն նույն կետի՝ պարտադիր նորմերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, որը սպառիչ կերպով սահմանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմնի, այն է՝ բազմաբնակարան շենքի սեփականատերերի ժողովի լիազորությունները, ի թիվս այլնի, ժողովին լիազորում է ընտրել բազմաբնակարան շենքի կառավարման ձևը և կառա-

վարման մարմինը: Այս լիազորությանը համապատասխան՝ նույն օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է, որ **պարտադիր նորմերի պահպանման հարցերում** ընդհանուր բաժնային գույքի կառավարման համար բազմաբնակարան շենքի սեփականատերերը կարող են ընտրել շենքի կառավարման մարմին, մասնավորապես՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը կարող է իրականացվել շինության սեփականատերերի կողմից ստեղծված իրավաբանական անձի՝ համատիրության միջոցով (...), իսկ նույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ համատիրության ստեղծման մասին որոշման մեջ պետք է արտացոլվի **պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ցանկը:**

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշման՝ շենքի սեփականատերերը, կառավարման մարմին ձևավորելիս դրա ձևավորման համար հիմք հանդիսացող համապատասխան փաստաթղթում պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ցանկը ներառելով, **այդպիսով ըստ էության հաստատում են ավյալ բազմաբնակարան շենքի համար անհրաժեշտ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքների ցանկը:**

Ելնելով «պարտադիր նորմ» հասկացության բովանդակությունից և պարտադիր վճարների գանձման նպատակառոչվածությունից՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ այդ վճարը բազմաբնակարան շենքի **ընդհանուր բաժնային սեփականության պահպանման համար անհրաժեշտ միջոցառումներին և աշխատանքներին սեփականատերերի համաչափ մասնակցության ձև է:** Ընդ որում, սեփականատերն ազատ է մասնակցության ձևերի միջև ընտրություն կատարելու հարցում: Վճարն այն այլընտրանքային ձևն է, որը փոխարինում է անհրաժեշտ աշխատանքները սեփական ծախսերով և միջոցներով կատարելուն: ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը ձևավորվում է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի, «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի «գ» ենթակետի, նույն օրենքի 27-րդ հոդվածի իրավանորմերի գործողության արդյունքում: Ըստ այդմ՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշված նորմերի գործողության արդյունքում արձանագրել է հետևյալ իրավակիրառական պրակտիկան. մինչ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքներ կատարելը բազմաբնակարան շենքի կառավարման մարմինը կազմում է ընթացիկ տարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ ակտ, այնուհետև՝ նախահաշիվ, և նախահաշվային գումարն ընդգրկվում է շենքի տարեկան բյուջեի մեջ: Այն քննարկվում և հաստատվում է ընդհանուր ժողովում: Բյուջեի հաստատումից հետո դրա ծախսային մասը բաժանվում է սեփականատերերի վրա՝ ըստ ընդհանուր բաժնային սեփականության մեջ նրանց բաժնեմասի չափի: Այս փաստն արձանագրվում է համատիրության ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշմամբ, որում սահմանվում է պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը:

Ամփոփելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների բնույթով պայմանավորված՝ այդ վճարների չափը չի կարող սահմանվել վերացականորեն: Այդ չափը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշվի կոնկրետ բազմաբնակարան շենքի համար կոնկրետ աշխատանքների նախահաշվից ելնելով: Այս տրամաբանությունից շեղումը կհակասի պարտադիր նորմերի կատարմանն ուղղված՝ սեփականատերերի կողմից վճարվող վճարների՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարրի բնույթին և բովանդակությանը: Սեփականատերերի կամքը և համաձայնությունը դրսևորվում են պարտադիր նորմերի կատարման սպառնվման ողջ գործընթացում: Սեփականատերերն են ընտրում շենքի կառավարման մարմինը, նրանք են որոշում այն միջոցառումների և աշխատանքների շրջանակը, որոնք ենթակա են պարտադիր կատարման, սեփականատերերն են որոշում վճարների վճարման կարգն ու ժամկետները, և **վերջապես, սեփականատերերն ազատ են որոշելու պարտադիր նորմերի պահպանմանն իրենց մասնակցության ձևը՝ կամ վճարելով համապատասխան վճարը, կամ համապատասխան աշխատանքներն անձամբ կատարելով:**

Վճռաբեկ դատարանը, ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշման լույսի ներքո վերլուծելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի, «Համատիրության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, արձանագրում է, որ բազմաբնակարան շենքի շինության սեփականատերն օրենքի ուժով պարտավոր է իր սեփականության բաժնին համաչափորեն մասնակցել պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին: Սեփականատիրոջ համար, սակայն, վերոգրյալ պարտականությունը կարող է առաջանալ միայն օրենսդրությամբ ամրագրված որոշակի պարտադիր պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում: Մասնավորապես դրանք են վճարային պարտավորության առաջացման որոշակի օբյեկտիվ հիմքը և օրենսդրության կողմից սահմանված հատուկ ընթացակարգի պահպանումը:

Այսպես, վճարային պարտավորության առաջացման օբյեկտիվ հիմքում է հետևյալին. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված վճարը բազմաբնակարան շենքի սեփականատերերից գանձման ենթակա այն գումարն է, որն անհրաժեշտ է ՀՀ կառավարության կողմից սահմանված բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի շրջանակներում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջները բավարարելու նպատակով շենքի սեփականատերերի կողմից որոշված կոնկրետ աշխատանքների իրականացման համար: Այլ կերպ ասած՝ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափն առաջանում է ոչ թե վերացականորեն, այլ որոշակի օբյեկտիվ նախադրյալներից, մասնավորապես՝ արդեն իսկ սեփականատերերի քննարկմանը և հաստատմանը ներկայացված ու կանխորոշված աշխատանքների նախահաշվից ելնելով, որից հետո միայն այդ աշխատանքների արժեքը բաշխվում է սեփականատերերի միջև:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականատերերի մոտ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված վճարային պարտականությունը կարող է առաջանալ միայն պարտադիր նորմերի կատարմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքները փաստացի կատարված լինելու դեպքում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է նույն օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ պարբերությունից, համաձայն որի՝ կառավարչի կողմից յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 15-ը, պատրաստվում է հաշվետվություն շինությունների սեփականատերերի կողմից անվանական վճարումների, նախատեսված և իրականացված աշխատանքների ընթացքի վերաբերյալ և ծանուցվում է բնակիչներին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջները բավարարելու համար անհրաժեշտ գումարի վճարման պարտականությունն այդ շենքի շինությունների սեփականատերերի մոտ կարող է առաջանալ միայն հետևյալ իրավական ընթացակարգի սահմաններում և դրա պահպանման արդյունքում.

1. բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից կազմվում է ընթացիկ տարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ ակտ,
2. այդ ակտի հիման վրա բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից կազմվում է ընթացիկ տարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ նախահաշիվ,
3. ընթացիկ տարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ նախահաշվային գումարն ընդգրկվում է տարեկան բյուջեի մեջ,
4. շենքի տարեկան բյուջեն քննարկվում և հաստատվում է ընդհանուր ժողովում,
5. բյուջեի հաստատումից հետո դրա ծախսային մասը բաժանվում է սեփականատերերի միջև՝ ըստ ընդհանուր բաժնային սեփականության մեջ նրանց բաժնեմասի չափի: Նշված փաստն արձանագրվում է համատիրության ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշմամբ, որում սահմանվում է պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը,

6. փաստացի կատարվում են նախատեսված աշխատանքները, ինչն արձանագրվում է բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից կազմված հաշվետվություններում,

7. յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 15-ը, պատրաստվում է շինությունների սեփականատերերի կողմից անվանական վճարումների, նախատեսված և իրականացված աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն, որի մասին ծանուցվում է բնակիչներին,

8. շինությունների սեփականատերերը նախօրոք ծանուցվում են իրենց կողմից պարտադիր նորմերի իրականացման համար նախատեսված վճարային պարտավորության չափի, ժամկետների և կարգի մասին, ընդ որում, այդ գումարի վճարումը երկու անգամ ուշացնելու դեպքում շենքի կառավարման մարմինն իրավունք է ձեռք բերում դրա բռնագանձման համար դիմելու դատարան՝ մինչ այդ գրավոր նախագուշակներով պարտատիրոջը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացույցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճարել դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները:

Վճարել դատարանը հարկ է համարում նշել, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Համատիրությունը Երևանի Գյուլբենկյան 22-րդ շենքի կառավարման մարմինն է: ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման պետ Ա. Հովհաննիսյանի կողմից 01.07.2004 թվականին հաստատված Համատիրության կանոնադրու-

թյան փոփոխության 2.3 կետի համաձայն՝ Համատիրությունը բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի կողմից լիազորված է իրականացնելու շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման հետևյալ պարտադիր գործառնությունները՝ ապահովել շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարումը, օրենքով նախատեսված կարգով շինության սեփականատերերին ներկայացնել ամսական, տարեկան և այլ հաշվետվություններ ու ծանուցումներ, կազմել և շինության սեփականատերերի քննարկմանը ներկայացնել պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների նախահաշիվ: 20.09.2004 թվականին տրված թիվ 0129076 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Գյուլբենկյան փողոցի 22-րդ շենքի թիվ 31 բնակարանի նկատմամբ գրանցված է Նորիկ Չթյանի, Էմմա Չթյանի, Հայրապետ Չիցյանի, Մարգարիտա Մեհրաբյանի, Դիանա Չիցյանի, Նորիկ Չիցյանի սեփականության իրավունքը: Համատիրության կողմից կազմված տեղեկանքի համաձայն՝ Երևանի Գյուլբենկյան փողոցի 22-րդ շենքի թիվ 31 բնակարանի սեփականատերերի պարտքը Համատիրության նկատմամբ 2003 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2013 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամակահատվածի համար 01.12.2013 թվականի դրությամբ կազմում է 147.566 ՀՀ դրամ, որը հաշվարկվել է նույն ժամանակահատվածի համար պարտադիր նորմերի կատարման համար վճարման ենթակա ամսական հաշվարկային գումարների հիման վրա:

Դատարանը հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականատերերը պարտավոր են կատարել պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարումներ, և հիմք ընդունելով Համատիրության կողմից կազմված վերը նշված տեղեկանքը՝ հանգել է այն հետևության, որ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված ծախսերի չվճարված պարտքի գումարը ենթակա է բռնագանձման Համապատասխանողներից:

Վերաքննիչ դատարանը, Համապատասխանողների մասով Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Համատիրությունը, դիմելով դատարան, պահանջել է պատասխանողներից բռնագանձել 147.566 ՀՀ դրամ՝ որպես պարտադիր նորմերի կատարման համար (կոշտ-կենցաղային աղբի տեղափոխման և բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանման համար) վճարման ենթակա գումար:

«Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 04.10.2007 թվականի թիվ 1161-Ն որոշմամբ հաստատված «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմեր» վերտառությամբ թիվ 1 հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտադիր իրականացման են ենթակա հետևյալ միջոցառումները և աշխատանքները՝

1) սպառման թափոնների հեռացում՝ առնվազն երեք օրը մեկ անգամ, իսկ +5° C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ամեն օր.

2) ընդհանուր օգտագործման տարածքների, աղբամուղի ու աղբահավաք խցերի դեզինսեկցիայի (պայքար միջատների դեմ) և դեռատիզացիայի (պայքար կրծողների դեմ) իրականացում՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ.

3) ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրում՝ առնվազն երկու օրը մեկ անգամ.

4) ծխաօդատար ուղիների մաքրում-կարգաբերում՝ առնվազն տարեկան մեկ անգամ.

4.1) նոր կառուցվող բազմաբնակարան շենքերի փոստային բաժանորդային պահարանների սպասարկում.

5) վերանորոգման աշխատանքների և կանխարգելիչ միջոցառումների իրականացում ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 04-ի N 1161-Ն որոշման N 2 հավելվածում նշված շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջների ապահովմանը.

6) ...:

Վկայակոչված իրավակարգավորումից հետևում է, որ աղբահանության վճարը և բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանման վճարը սույն գործով ներկայացված հայցապահանջում մատնանշված ժամանակահատվածի համար (մինչև «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը) «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ վճար է, որպիսի պարագայում դրա վճարման պարտականությունը բազմաբնակարան շենքի շինության սեփականատիրոջ վրա կարող է դրվել սույն որոշմամբ մատնանշված ընթացակարգի պահպանված լինելու պայմաններում: Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վերոնշյալ ընթացակարգի պահպանման և դրա արդյունքում առաջացած վճարային պարտավորության ապացուցման արդյունքում միայն Համատիրությունը կարող է Համապատասխանողներից պահանջել պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարները, քանի որ, ինչպես արդեն նշվել է, այդ վճարի չափն առաջանում է ոչ թե վերացականորեն, այլ որոշակի օբյեկտիվ նախադրյալներից, մասնավորապես՝ արդեն իսկ սեփականատերերի քննարկմանը և հաստատմանը ներկայացված ու կանխորոշված աշխատանքների նախահաշվից ելնելով, որից հետո միայն այդ կատարվելիք աշխատանքների արժեքը բաշխվում է սեփականատերերի միջև:

Նման պայմաններում Վճարել դատարանը գտնում է, որ Համատիրության կողմից որպես ապացույց ներկայացված տեղեկանքը բավարար չէ Համապատասխանողների վճարային պարտականությունը հաստատված համարելու համար, որպիսի պայմաններում այն չի կարող համարվել սույն գործի լուծման համար բավարար ապացույց: Հետևաբար բավարարելով հայցը՝ Դատարանը չի պահպանել ապացույցները գործի լուծման համար բավարարության տեսանկյունից գնահատելու օրենսդրական պահանջը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

*Վերոնշյալ պարճառարանություններով հերքվում են վճարել բողոքի պարասխառում բերված փաստարկները:*

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն՝ Համապատասխանողների մասով հայցը բավարարելու մասով Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասով բեկանելու և այդ մասով գործը նոր քննության ուղարկելու համար: Ընդ որում, Վճարել դատարանը Վերաքննիչ դատարանի որոշումը վերանայում և բեկանում է միայն այդ մասով, քանի որ Համապատասխանողների կողմից Վերաքննիչ դատարանի որոշումը վճարելության կարգով բողոքարկվել է միայն Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասով:

### ***5. Վճարել դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճարել բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը, այդ թվում նաև՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.06.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցը, ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.02.2015 թվականի որոշման՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.10.2014 թվականի վճիռը՝ Էմմա Չթյանից, Մարգարիտա Մեհրաբյանից, Հայրապետ, Դիանա, Նորիկ Չիչյաններից հոգուտ «Շենքերի կառավարում» համատիրության 147.566 ՀՀ դրամ բռնագանձելու մասով օրինական ուժի մեջ թողնելու մասը, և գործն այդ մասով ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.06.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0169/02/15  
2016 թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0169/02/15

Նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան  
Դատավորներ՝ Ա. Հունանյան  
Լ. Գրիգորյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 26-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Սեյվր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.12.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ Նշան Ալեքսանյանի՝ գույքն արգելանքից հանելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է իր գրավատանը գրավադրված «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «5IRM111» պետհամարանիշի ավտոմեքենայի վրա դրված կալանքը վերացնել և նշված գույքը հանել արգելանքից:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ավինյան) (այսուհետ՝ Դատարան) 05.06.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 22.12.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 05.06.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

#### 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 3-րդ կետը, 233-րդ հոդվածը, «Դատարանի ակտերի հարկադիր կարարման մասին»*

ՀՀ օրենքի 5–րդ, 43–րդ, 44–րդ և 45–րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության նկատմամբ Նշան Ալեքսանյանի ունեցած պարտավորությունն ապահովված է գրավով, որի առարկան «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենան է: Նշան Ալեքսանյանը չի կատարել Ընկերության նկատմամբ իր ստանձնած և գրավով ապահովված պարտավորությունը, իսկ նշված ավտոմեքենայի վրա դրված արգելանքի պատճառով Ընկերությունը՝ որպես գրավատու, զրկվել է այդ գույքի արժեքից բավարարում ստանալու իր իրավունքից: Հետևաբար տվյալ դեպքում վերը նշված գույքը պետք է հանվի արգելանքից, ինչը գրավ դրված գույքի արժեքից Նշան Ալեքսանյանի հանդեպ իր պահանջի բավարարում ստանալու հնարավորություն կտա Ընկերությանը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենայի վրա դրված արգելանքը ենթակա է վերացման՝ անկախ թիվ ԱՎԴ2/0050/01/12 քրեական գործով 31.05.2013 թվականին կայացված դատավճռով բավարարված քաղաքացիական հայցի լրիվ կատարման և նույն դատավճռով առանց քննության թողնված քաղաքացիական հայցերով վեճերի վերաբերյալ վերջնական դատական ակտերի կայացման հանգամանքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.12.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ընկերության («Վարկատու») և Նշան Ալեքսանյանի («Վարկառու») միջև 18.06.2012 թվականին կնքված թիվ Պ–916 վարկային պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը Նշան Ալեքսանյանին տրամադրել է սպառողական վարկ՝ 14.000.000 ՀՀ դրամի չափով, որի մարման վերջնաժամկետը 18.07.2012 թվականն է, իսկ Վարկատուի նշված պարտավորության կատարման ապահովման համար գրավ է դրվել թիվ Գ–916 գրավատոմսում նշված շարժական գույքը: Նույն պայմանագրի 5–րդ կետի համաձայն՝ Վարկառուի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարկատուն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և 2 ամիս անց իրացնելու այն «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (**հատոր 1–ին, գ.թ. 11**):

2. 18.06.2012 թվականին տրամադրված թիվ Գ–916 գրավատոմսի համաձայն՝ Նշան Ալեքսանյանի կողմից որպես թիվ Պ–916 վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց գրավադրվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենան, որը գնահատվել է 32.000.000 ՀՀ դրամ (**հատոր 1–ին, գ.թ. 11**):

3. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Երևանի հաշվառման–քննական բաժնի պետի կողմից 18.02.2015 թվականին տրված թիվ 17/31767 գրության համաձայն՝ «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ 25.06.2012 թվականին գրանցվել է Ընկերության գրավի իրավունքը, ՀՀ ոստիկանության ՔԳԿ ՀԿԳ քննության վարչության ավագ քննիչի 23.07.2012 թվականի թիվ 7/1–3885 գրությամբ 25.07.2012 թվականին սահմանվել է կալանք, իսկ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 30.07.2011 թվականի թիվ 17/78094 գրությամբ 31.07.2012 թվականին կիրառվել է արգելանք (**հատոր 1–ին, գ.թ. 64–67**):

4. Թիվ ԱՎԴ2/0050/01/12 քրեական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 31.05.2013 թվականի դատավճռի համաձայն՝ Նշան Ալեքսանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178–րդ հոդվածի 2–րդ մասի 2–րդ կետով և նույն հոդվածի 3–րդ մասի 1–ին կետով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և դատապարտվել է ազատազրկման 10 տարի ժամկետով՝ առանց գույ-

քի բռնագրավման: Դատավճռով Նշան Ալեքսանյանի դեմ ներկայացված քաղաքացիական հայցերից մեկը բավարարվել է, իսկ մյուս երկուսը թողնվել են առանց քննության: Մինչև այս փաստի դատավճռով սահմանվել է, որ Նշան Ալեքսանյանի անվամբ գրանցված և իրենդեմն ապացույց ճանաչված գույքի՝ «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM111» պետհամարանիշի ավտոմեքենայի վրա դրված կալանքը պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռով որոշված քաղաքացիական հայցի լրիվ բռնագանձումը կատարելը և առանց քննության թողնված հայցերով քաղաքացիական դատավարության կարգով վեճերի վերաբերյալ վերջնական դատական ակտերի կայացումը: Նշված դատավճիռը 24.01.2014 թվականին մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 1–ին, գ.թ. 19–56**):

5. Ընկերության տնօրենի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM111» պետհամարանիշի ավտոմեքենան 14.01.2015 թվականի դրությամբ գտնվել է գրավատանը (**հատոր 1–ին, գ.թ. 13**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գրավի առարկա հանդիսացող և արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցի հիման վրա հարուցված գործերի առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) արդյո՞ք գրավատուն իրավունք ունի դիմելու դատարան գրավի առարկա հանդիսացող և արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ պահանջով,

2) ինչպիսի՞ նյութաիրավական պայմանների առկայության դեպքում է արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը ենթակա բավարարման:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8–րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը (...):

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31–րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը (...):

Համանման բովանդակությամբ իրավադրույթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 10–րդ հոդվածի 1–ին մասով, 60–րդ հոդվածի 1–ին մասով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1–ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ գույքի վրա կալանք դնելը կիրառվում է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ գույքի վրա կալանք դնելը կիրառվում է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (...) գրավատուի գույքի նկատմամբ գրավատուի գույքային իրավունքն է, որը միաժա-

մանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավառուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականատերեր չհամարվող անձինք կարող են ունենալ հետևյալ գույքային իրավունքները (...) (4) գրավի (...) իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անցումն այլ անձի հիմք չէ այդ գույքի նկատմամբ սեփականատեր չհամարվող անձանց գույքային իրավունքների դադարման համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացնել ինչպես այդ գույքի սեփականատերը, այնպես էլ դրա օրինական տիրապետողը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը ներկայացվում է ընդդեմ պարտապանի և (կամ) պահանջատիրոջ (...):

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վկայակոչված նորմերից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական նորմերի ուժով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածում և 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածում գործածվող «սեփականություն» եզրույթը մեկնաբանելիս պետք է ելակետ ընդունել և հաշվի առնել սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) իրավակիրառ պրակտիկան:

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել, որ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներն ու շահերը նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև «գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք, գործի բոլոր հանգամանքներից ելնելով, դիմումատուն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ (*լրևն օրինակ, Մինասյանը և Մամերջյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ 23.06.2009 թվականի վճիռը, 55-րդ կետը*):

Միաժամանակ ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացությունը բնորոշել է ընդլայնված կերպով՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*լրևն Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium գործով ՄԻԵԴ 20.11.1995 թվականի վճիռը*): Ըստ ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*լրևն Burdov v. Russia գործով ՄԻԵԴ 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետը*):

Մեկ այլ գործի շրջանակներում ՄԻԵԴ-ն արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածում կիրառվող «գույք» եզրույթը սահմանափակված չէ միայն ֆիզիկական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով. այն իր մեջ ընդգրկում է նաև ակտիվներ հանդիսացող որոշ այլ իրավունքներ ու

շահեր, որոնցից է, օրինակ, պարտավորության գույքային ապահովման իրավունքը (*լրեն Գաս Դոսիեր – Und Fördertechnik GmbH v. The Netherlands գործով ՄԻԵԴ 23.02.1995 թվականի վճիռը, 53-րդ կետ*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի և 226-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ գրավի իրավունքը կամ գրավը պարտավորությունների իրային-իրավական ապահովման միջոց է, որը գրավատուին իրավունք է վերապահում հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալու գրավի առարկայի արժեքից: Վերոգրյալ բնորոշումից բխում է, որ գրավով ապահովված պարտավորության պարտատերը գրավի առարկայի արժեքից իր պահանջի բավարարման նախապատվության իրավունք ունի մյուս պարտատերերի նկատմամբ, այսինքն՝ գրավով ապահովված պարտավորության պարտապահի մյուս պարտատերերի համեմատությամբ գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ պահանջը ենթակա է բավարարման նախապատվության իրավունքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ են իրային իրավունքներին ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները.

- «բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված),
- «հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականության ներքո (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետ):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավի իրավունքը պետք է դիտարկել որպես «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ (1) գրավի իրավունքը հանդիսանում է գրավատուի սահմանափակ իրային իրավունքը, (2) գրավատուն ունի հիմնական պարտավորության չկատարման դեպքում նախապատվության իրավունքով գրավադրված գույքի արժեքից իր պահանջների բավարարում ստանալու «օրինական սպասելիք»: Հետևաբար սեփականության իրավունքի պաշտպանության թե՛ սահմանադրաիրավական, թե՛ կոնվենցիոն ընթացակարգերը հավասարապես կիրառելի են նաև գրավի իրավունքի պաշտպանության նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քրեական գործի շրջանակներում քաղաքացիական հայցի ապահովման նպատակով գույքի վրա կալանք դնելու՝ որպես կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի միջոցի կիրառման առանձնահատկություններին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու դեպքում, որպես կանոն, դատարանը պետք է վերացնի գույքի վրա դրված կալանքը: ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ քաղաքացիական հայցը դատարանի կողմից առանց քննության թողնվելու դեպքում գույքի վրա դրված կալանքը կարող է պահպանվել քրեական գործով վարույթի ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, միայն այն դեպքում, երբ դրա վերաբերյալ առկա է քաղաքացիական հայցվորի կամ այլ շահագրգիռ անձանց կողմից դատարան ներկայացված միջնորդություն: Այլ կերպ՝ այդպիսի միջնորդության բացակայության դեպքում դատարանն իրավունք չունի սեփական նախաձեռնությամբ պահպանելու գույքի վրա դրված կալանքը (*լրեն Արթուր Վասիլի Անդրեասյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0200/01/13 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.06.2016 թվականի որոշումը, 20.2-րդ կետ*):

Անդրադառնալով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով սահմանված իրավադրույթների վերլուծությանը՝ ՀՀ վճարելի դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ նշված իրավական նորմով օրենսդիրն արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձանց համար սահմանել է իրավունք՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Ընդ որում, նշված հոդվածով ամրագրված իրավակարգավորումները նպատակաուղղված են երաշխավորելու թե՛ քաղաքացիական, թե՛ քրեական գործերի շրջանակներում արգելադրված գույքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի իրավունքների պաշտպանությունը տվյալ գործով վարույթի ավարտից հետո: Բացի այդ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ շահագրգիռ անձը պետք է արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմի գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, և նշված հայցապահանջը պետք է քննվի քաղաքացիական դատավարության կարգով (*տե՛ս Տիգրան Ենոքյանի ընդդեմ պարտապան Սամվել Սյրեփանյանի և պահանջատեր Լիլիա Սյրեփանյանի թիվ ԿԳ/0289/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է արգելանքի տակ գտնվող գույքը դատական կարգով արգելանքից հանելու իրավական կառուցակարգը, որը հանգում է հետևյալին.

1) անձը կարող է արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել դատարան,

2) արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց կարող է ներկայացնել ինչպես այդ գույքի սեփականատերը կամ դրա օրինական տիրապետողը, այնպես էլ արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու կապակցությամբ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով իրավական շահագրգռվածություն ունեցող ցանկացած անձ,

3) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել ընդդեմ պարտապանի և (կամ) պահանջատիրոջ և ընդդատյա է գույքի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

Վճարելի դատարանը փաստում է, որ արգելանքի տակ գտնվող գույքը դատական կարգով արգելանքից հանելու վերոգրյալ կառուցակարգը նպատակաուղղված է անձի գույքային իրավունքների և, հատկապես, սեփականության իրավունքի պաշտպանության ապահովմանը: Թե՛ն գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը բավարարելու իրավական հիմքերն օրենսդրորեն սահմանված չեն, սակայն Վճարելի դատարանի գնահատմամբ այդ հայցը ենթակա է բավարարման այն դեպքերում, երբ այս կամ այն գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցի հիման վրա հարուցված գործի քննությամբ հիմնավորվում է, որ գույքն արգելանքի վերցնելը խախտում է այդ գույքից անարգել օգտվելու՝ կոնվենցիոն իմաստով սեփականատիրոջ իրավունքը:

Այս առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում մեջբերել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջները:

Այսպես, ըստ ՄԻԵԴ-ի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը պետք է հիմնված լինի օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրա-

վունքի գերակայության էությունից (*տե՛ս The Former King of Greece and others v. Greece գործով ՄԻԵԴ-ի 23.11.2000 թվականի վճիռը, 79-րդ կետ*): Հետևաբար առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունը իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշների (*տե՛ս James and Others v. The United Kingdom գործով ՄԻԵԴ-ի 21.02.1986 թվականի վճիռը, 67-րդ կետ*):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (*տե՛ս James and Others v. The United Kingdom գործով ՄԻԵԴ-ի 21.02.1986 թվականի վճիռը, 46-րդ կետ*):

Սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափության երրորդ պայմանը նախատեսում է, որ միջամտությունը պետք է ապահովի արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (*տե՛ս Sporrang and Lönnroth v. Sweden գործով ՄԻԵԴ-ի 23.09.1982 թվականի վճիռը, 69-րդ կետ*): Մասնավորապես, գույքից անարգել օգտվելու իրավունքի ցանկացած միջամտության դեպքում կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև պետք է գոյություն ունենա համաչափության որոշակի ողջամիտ հարաբերակցություն (*տե՛ս Scollo v. Italy գործով ՄԻԵԴ-ի 28.09.1995 թվականի վճիռը, 32-րդ կետ*): ՄԻԵԴ-ի գնահատմամբ նման բարենպաստ հավասարակշռության հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի միջամտության պատճառով սեփականատերը ստիպված է կրել անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ ծանրություն (*տե՛ս The Former King of Greece and others v. Greece գործով ՄԻԵԴ-ի 23.11.2000 թվականի վճիռը, 89-րդ կետ*):

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավի իրավունքից՝ որպես Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով անձի՝ իր «գույքից» անարգել օգտվելու իրավունքի իրականացման նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը կարող է թույլատրելի համարվել վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Հստ այդմ, արգելանքի տակ գտնվող և գրավի առարկա հանդիսացող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ գրավատուի հայցը ենթակա է բավարարման, եթե այդ գույքն արգելանքի վերցնելը կամ արգելանքի տակ պահելը չի համապատասխանում սեփականության իրավունքի իրականացման նկատմամբ միջամտության թույլատրելի սահմաններին և չափանիշներին:

#### **Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Նշան Ալեքսանյանի կողմից Ընկերության մոտ գրավադրվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենան՝ որպես Ընկերության հետ 18.06.2012 թվականին կնքված վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց, և այդ ավտոմեքենայի նկատմամբ 25.06.2012 թվականին գրանցվել է Ընկերության գրավի իրավունքը: Նշված տրանսպորտային միջոցի նկատմամբ քրեական գործի շրջանակներում 25.07.2012 թվականին սահմանվել է կալանք քննիչի համապատասխան որոշման հիման վրա, և 31.07.2012 թվականին կիրառվել է արգելանք:

Թիվ ԱՎԴՆ2/0050/01/12 քրեական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 31.05.2013 թվականին կայացված և 24.01.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռով Նշան Ալեքսանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և դատապարտվել է ազատազրկման 10 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Դատավճռով Նշան Ալեքսանյանի դեմ ներկայացված քաղաքացիական հայցերից մեկը բավարարվել է, իսկ մյուս երկուսը թողնվել են առանց քննության: Միևնույն ժամանակ դատավճռով սահմանվել է, որ Նշան Ալեքսանյանի անվամբ գրանցված և իրեղեն ապացույց

ճանաչված գույքի՝ «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենայի վրա դրված կալանքը պետք է թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռով բավարարված քաղաքացիական հայցի լրիվ բռնագանձումը կատարելը և առանց քննության թողնված հայցերով քաղաքացիական դատավարության կարգով վեճերի վերաբերյալ վերջնական դատական ակտերի կայացումը:

Սույն գործով Դատարանը մերժել է «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենան արգելանքից հանելու վերաբերյալ Ընկերության հայցը: Դատարանն իր վճռի հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ սույն գործով չի ապացուցվել, որ թիվ ԱՎԴ-2/0050/01/12 քրեական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 31.05.2013 թվականի դատավճռով բավարարված քաղաքացիական հայցով պահանջը կատարվել է, կամ առանց քննության թողնված քաղաքացիական հայցերով վեճերի վերաբերյալ կայացվել են վերջնական դատական ակտեր:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ ըստ էության հիմնավոր համարելով Դատարանի վերոգրյալ պատճառաբանությունը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի ուսումնասիրությունը վկայում է, որ Ընկերության նկատմամբ Նշան Ալեքսանյանի ստանձնած վարկային պարտավորությունն ապահովված է գրավով, որի առարկան «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենան է: Նշված գույքի նկատմամբ Ընկերության գրավի իրավունքը պետք է դիտարկել որպես «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, և այդ գույքից անարգել օգտվելու Ընկերության իրավունքի իրականացման նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը կարող է իրավաչափ համարվել միայն սույն որոշմամբ նկարագրված պայմանների միաժամանակյա ամկայության դեպքում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ընկերության մոտ գրավադրված «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ Նշան Ալեքսանյանի վերաբերյալ քրեական գործի շրջանակներում քննիչի կողմից սահմանվել է կալանք՝ որպես կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի միջոց, և դրա հիման վրա այդ գույքի նկատմամբ կիրառվել է արգելանք: Նշված քրեական գործի շրջանակներում կայացված դատավճռով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը պահպանել է «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ արգելանքը՝ դրա վերացումը կատարելով այդ դատավճռով բավարարված քաղաքացիական հայցի կատարման, ինչպես նաև առանց քննության թողնված քաղաքացիական հայցերի վերաբերյալ դատական ակտերի կայացման հետ:

Սույն քաղաքացիական գործի շրջանակներում Ընկերությունը պահանջում է վերացնել նշված ավտոմեքենայի նկատմամբ կիրառված արգելանքը, ինչը հնարավորություն կտա Ընկերությանն իրացնելու Նշան Ալեքսանյանի նկատմամբ ունեցած պահանջի՝ գրավի առարկայի արժեքից բավարարում ստանալու գրավառուի իր իրավունքը: Մինչդեռ ստորագաս դատարանները մերժել են Ընկերության հայցը՝ հաշվի առնելով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 31.05.2013 թվականի դատավճռի՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Ընկերության կողմից իր «գույքից» («Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենայի գրավի իրավունք) անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը դրսևորվել է քրեական վարույթի շրջանակներում այդ ավտոմեքենայի նկատմամբ արգելանք կիրառելու և քրեական վարույթը եզրափակող վերջնական դատական ակտով այն անորոշ ժամկետով պահպանելու եղանակով: Հետևաբար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել Ընկերության՝ իր «գույքից» անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ վերոգրյալ միջամտության իրավաչափության հարցը՝ հիմք ընդունելով այս խնդրի շուրջ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում ձևավորված սկզբունքային դրույթները:



Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության մոտ գրավադրված գույքի նկատմամբ քրեական վարույթի շրջանակներում կալանք կիրառելը և դրա հետևանքով այդ գույքի վրա արգելանք դնելը նախատեսված է օրենքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232–238–րդ հոդվածներ): Բացի այդ, «գույքից» անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ կիրառվող նման միջամտությունը բխում է հանրային շահից և հետապնդում է իրավաչափ նպատակ, քանի որ քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը կոչված է սեփականության կամ այլ գույքային իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերը: Այսինքն՝ Ընկերության կողմից իր «գույքից» («Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենայի գրավի իրավունք) անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ քննարկվող միջամտությունը բավարարում է սեփականության իրավունքի իրականացման նկատմամբ միջամտության թույլատրելիության առաջին երկու պայմանները:

Վճռաբեկ դատարանը, սակայն, գտնում է, որ Ընկերության մոտ գրավադրված գույքի նկատմամբ քրեական վարույթի շրջանակներում կիրառված կալանքի հետևանքով այդ գույքի վրա դրված արգելանքը պահպանելը չի ապահովում արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև, քանի որ սեփականության իրավունքի նման միջամտության պատճառով Ընկերությունը կրում է անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ ծանրություն: Այսպես, «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենայի վրա դրված արգելանքի պատճառով Ընկերությունը գրկված է այդ գույքի արժեքից Նշան Ալեքսանյանի նկատմամբ ունեցած պահանջի բավարարում ստանալու գրավառուի իր իրավունքն իրացնելու հնարավորությունից: Մինչդեռ գրավի իրավունքի առանձնահատկությունն այն է, որ գրավով ապահովված պարտավորության պարտատերը գրավի առարկայի արժեքից իր պահանջի բավարարման նախապատվության իրավունք ունի մյուս պարտատերերի հանդեպ, այսինքն՝ գրավով ապահովված պարտավորության պարտապանի մյուս պարտատերերի համեմատությամբ գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ պահանջը ենթակա է բավարարման նախապատվության իրավունքով: Հետևաբար անկախ թիվ ԱՎԴ-2/0050/01/12 քրեական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 31.05.2013 թվականի դատավճռով բավարարված քաղաքացիական հայցի կատարման, ինչպես նաև առանց քննության թողնված քաղաքացիական հայցերի վերաբերյալ դատական ակտերի կայացման հանգամանքից՝ 18.06.2012 թվականի թիվ Պ-916 վարկային պայմանագրից բխող Ընկերության պահանջի իրավունքը բոլոր դեպքերում ենթակա է բավարարման գրավադրված գույքի արժեքից՝ Նշան Ալեքսանյանի մյուս պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով: Այսինքն՝ թիվ ԱՎԴ-2/0050/01/12 քրեական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 31.05.2013 թվականի դատավճռով բավարարված քաղաքացիական հայցի կատարման, ինչպես նաև առանց քննության թողնված քաղաքացիական հայցերի վերաբերյալ դատական ակտերի կայացման փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը չի կարող էական նշանակություն ունենալ սույն գործի քննության և լուծման համար, և այդ փաստերի ապացուցված լինելը կամ չլինելը որևէ կերպ չի կարող ազդել սույն գործի ելքի վրա: Այլ կերպ ասած՝ Դատարանը չէր կարող մերժել Ընկերության հայցը վերոգրյալ հանգամանքների ապացուցված չլինելու հիմքով, քանի որ Նշան Ալեքսանյանի մյուս պարտատերերի թիվ ԱՎԴ-2/0050/01/12 քրեական գործով քաղաքացիական հայցվորների համեմատությամբ գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ՝ Ընկերության պահանջը բոլոր դեպքերում ենթակա է բավարարման նախապատվության իրավունքով՝ գրավի առարկայի արժեքի հաշվին:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ տվյալ դեպքում «Maserati Quattroporte 4.2 V8» մակնիշի «51RM11» պետհամարանիշի ավտոմեքենայի վրա դրված արգելանքը պահպանելը հանդիսանում է ոչ իրավաչափ միջամտություն Ընկերության՝ որպես գրավառուի, իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իրականացման նկատմամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի փաստերը գնահատելու համար:

#### **5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը, այդ թվում նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 02.05.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.12.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 02.05.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ1/0935/02/14  
2016 թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ1/0935/02/14

Նախագահող դատավոր՝

Ն. Բարսեղյան

Դատավորներ՝

Ս. Միքայելյան

Հ. Ենքոյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Նորովի» սահմանափակ պատասխանատվու-  
թյամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Մարգարիտա Հովսեփյանի  
և Ալբերտ Պետրոսյանի ներկայացուցիչ Կարինե Մուրադյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վե-  
րաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ալ-  
բերտ Պետրոսյանի սնանկության գործով կառավարիչ Արսեն Չիտյանի ընդդեմ Ընկերու-  
թյան, երրորդ անձինք «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Մարինե Մանուկյանի,  
ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կոտայքի  
մարզային ստորաբաժանման, Ալբերտ Պետրոսյանի՝ առաջին գործարքի անվավերության  
հետևանքներ կիրառելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ալբերտ Պետրոսյանի սնանկության գործով կառավարիչ Արսեն  
Չիտյանը պահանջել է Ալբերտ Պետրոսյանի և Ընկերության միջև 16.06.2011 թվականին  
կնքված Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող թվով 52 հողամասերի առուվաճառ-  
քի պայմանագիրը (վավերացված «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Մարինե  
Մանուկյանի կողմից, գրանցված սեղանամատյանում 1469 համարի տակ) ճանաչել կեղծ և  
առաջին և որպես առաջին գործարքի անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել այդ  
գործարքի հիման վրա Ընկերության անվամբ կատարված սեփականության իրավունքի  
պետական գրանցումները և ճանաչել Ալբերտ Պետրոսյանի սեփականության իրավունքը  
Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող թվով 52 հողամասերի նկատմամբ:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Թորոսյան)  
(այսուհետ՝ Դատարան) 27.05.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.10.2015 թվականի որոշմամբ Ընկերության և Ալբերտ Պետրոսյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 27.05.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Ընկերության և Ալբերտ Պետրոսյանի ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ է ներկայացրել Ալբերտ Պետրոսյանի սնանկության գործով կառավարիչ Արսեն Չիտչյանի ներկայացուցիչ Լիաննա Մանուկյանը:

**2. Ընկերության ներկայացուցչի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ, 53-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 304-րդ հոդվածները, 306-րդ հոդվածի 1-ին կետը: Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հերքյալ փաստարկներով.*

Ալբերտ Պետրոսյանի սնանկության գործով կառավարիչ Արսեն Չիտչյանը կեղծ գործարքի առկայությունը հիմնավորել է՝ նշելով, որ Ալբերտ Պետրոսյանը թոյլ է տվել իրավախախտում, այն է՝ կանխագգալով, որ 3 տարի անց իրեն սնանկ են ճանաչելու, իրեն պատկանող որոշ տարածքներ վաճառել է այլ Ընկերության: Իրականում, սակայն, այդ գործարքը կնքելով՝ Ալբերտ Պետրոսյանն իրացրել է սեփական գույքը տնօրինելու սահմանադրական իր իրավունքը և չէր կարող որևէ կերպ կանխատեսել վերահաս դատական ակտերը՝ կնքելով առուվաճառքի կեղծ գործարք, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Ստորադաս դատարանների դատական ակտերի հիմքում դրված «Տիգրիս» ՄՊԸ-ի գնահատման հաշվետվությունները պարունակում են մի շարք խախտումներ: Մասնավորապես՝ «Տիգրիս» ՄՊԸ-ն առանց իրավական և փաստական հիմքերի գնահատվող հողատարածքը գյուղատնտեսական նշանակությունից վերածել է բնակավայրերի նշանակության, նույնիսկ՝ «բնակարանի»: Բացի այդ, ընդամենը յոթ օրվա ընթացքում կատարված ավելի քան հինգ տասնյակ հողակտորների գնահատման հաշվետվություններն ուղղակի հակասում են ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրված ՀՀ անշարժ գույքի շուկայի պաշտոնական վերլուծություններում ամրագրված տվյալներին: Ավելին, տվյալ դեպքում քննության առարկա պետք է դառնային այն հարցադրումները, թե ինչ վիճակում են եղել հողատարածքները 2011 թվականի հունիս ամսվա դրությամբ, և ինչ վիճակում են դրանք այժմ, սեփականատերերի կազմը և տարբերությունը, կատարված աշխատանքները, երբ և ում կողմից են կատարվել այժմ հողատարածքներում առկա աշխատանքները և այլն, որպիսի հարցադրումները վերոհիշյալ գնահատման հաշվետվություններով անտեսվել են: Նման պայմաններում Դատարանն անտեսել է երրորդ անձ Ալբերտ Պետրոսյանի՝ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդությունը, որի բավարարվելու դեպքում կբացահայտվեին վերոհիշյալ խախտումները:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 929-րդ հոդվածը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը, 29-րդ հոդվածը, 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հերքյալ փաստարկներով.*

Վիճարկվող պայմանագրով գնորդ հանդիսացող Ընկերությունը վաճառողին փոխկապակցված անձ չէ, քանի որ պայմանագիրը կնքելիս՝ 16.06.2011 թվականի դրությամբ, Ընկերության հիմնադիրը և միակ մասնակից-տնօրենը հանդիսացել է Սարիամ Ավետիսյանը, ով Ալբերտ Պետրոսյանի ազգականը չէ, հետևաբար չի կարող համարվել պարտապանին փոխկապակցված անձ: «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի կիրառման համար անհրաժեշտ է փոխանցումների՝ անհատույց լինելու պայմանը, մինչդեռ տվյալ դեպքում պայմանագիրն անհատույց չէ, սահմանված է գին՝ 10.400.000

ՀՀ դրամ, և պայմանագրի 3-րդ կետով կողմերը հավաստիացրել են, որ պայմանագրի ստորագրման պահին գնորդը վճարել է գույքի գինը, իսկ վաճառողը ստացել է այն ամբողջությամբ: Հակառակը հիմնավորող ապացույցներ սույն գործով չեն ներկայացվել:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.10.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Այբերպ Պետրոսյանի ներկայացուցչի վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ հոդվածները, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 304-րդ, 306-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ի սկզբանե Ընկերության հիմնադիրը և միակ մասնակիցը հանդիսացել է Մարիամ Ավետիսյանը, և միայն հետագայում է Ընկերության մասնակից դարձել Զարեհ Պետրոսյանը:

Դատարանի կողմից անհիմն պատճառաբանությամբ մերժվել է փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը, իսկ Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել դրա վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկներին: Նման պայմաններում ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերի հիմքում դրվել են «Տիգրիս» ՍՊԸ-ի գնահատման հաշվետվությունները, որոնցում սխալ է նշված գնահատվող հողամասերի նպատակային նշանակությունը, ինչպես նաև, չնայած այն հանգամանքին, որ գնահատման առարկա են հանդիսացել հողամասերը, գնահատման հաշվետվություններում նշվել է «բնակարանի մակերեսի արժեք» արտահայտությունը: Ուստի փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն է ներկայացվել հողամասերի շուկայական արժեքը որոշելու համար:

Սույն գործով վիճարկվող պայմանագիրը չի կարելի դիտարկել կեղծ գործարք, քանի որ պայմանագրով Այբերպ Պետրոսյանի հետ փոխկապակցված անձ չհանդիսացող անձի կողմից հիմնադրված և նրա տնօրինությամբ գործած Ընկերության կողմից փաստացի ձեռք է բերվել և վերջինիս անվամբ պետական գրանցում է ստացել վիճելի պայմանագրի առարկա հանդիսացող հողատարածքը: Այսինքն՝ վիճելի պայմանագիրն առաջացրել է իրավական հետևանքներ՝ դադարել է վաճառողի սեփականության իրավունքը, իսկ գնորդը ձեռք է բերել սեփականության իրավունք, որպիսի փաստը հիմնավորվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողամասերի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցմամբ:

2) Վերաքննիչ դատարանը կիրառել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերը, որոնք չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները սույն գործով կիրառելի չեն, քանի որ սույն գործով վիճարկվող պայմանագիրն անհատույց չէ, պայմանագրի գինը սահմանված է 10.400.000 ՀՀ դրամ, իսկ պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ կողմերը հավաստիացրել են, որ պայմանագրի ստորագրման պահին գնորդը՝ Ընկերությունը, վճարել է գույքի գինը, իսկ վաճառողն ստացել է այն ամբողջությամբ: Ընդ որում, Ընկերությունը թույլ չի տվել որևէ իրավախախտում՝ առանց դրամարկղային ձևակերպումների 10.400.000 ՀՀ դրամը կանխիկ վաճառողին՝ Այբերպ Պետրոսյանին փոխանցելով, քանի որ վերջինս ֆիզիկական անձ է, ում ձեռնարկատիրական գործունեությունը չի հանդիսացել հողամասերի վաճառքը, ուստի «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի սահմանափակումները սույն գործով կիրառելի չեն:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.10.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

## 2.2. Վճռաբեկ բողոքների պարասիսանների հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն իրականացրել է բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն՝ հիմնավորելով, որ Ալբերտ Պետրոսյանի և Ընկերության միջև 16.06.2011 թվականին կնքված գործարքը կեղծ է, կողմերն իրականում առուվաճառքի պայմանագիր կնքելու նպատակ չեն հետապնդել, այլ նպատակ են ունեցել այդ գործարքով խուսափելու Ալբերտ Պետրոսյանի՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հանդեպ ունեցած համապարտ պարտավորությունը կատարելուց՝ կանխատեսելով վերահաս դատական ակտերը: Իսկ այն հանգամանքը, որ վիճելի գործարքը կնքելու պահին Ընկերության միակ մասնակից է հանդիսացել Մարիամ Ավետիսյանը, որն է նշանակություն չի կարող ունենալ սույն գործի համար, ավելին, գործարքի կնքումից շուրջ վեց ամիս անց Ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր է դարձել Ալբերտ Պետրոսյանի որդին՝ Ջարեհ Պետրոսյանը: Գործարքի կեղծ լինելու մասին է վկայում նաև այն, որ գործարքի կնքումից երեք ամիս անց, ըստ էության որևէ կապ և առնչություն չունենալով Ընկերության հետ Ջարեհ Պետրոսյանը լիազորագիր է տվել Ալբերտ Պետրոսյանին՝ լիազորելով նաև իր անունից մասնակցելու Ընկերության ընդհանուր ժողովին, քվեարկելու, կանոնադրությունում և հիմնադիր փաստաթղթերում կատարելու փոփոխություններ և այլն:

Բացի այդ, գործարքի դիմաց վճարումը, համաձայն «Դրամարկդային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի, կարող էր կատարվել միայն անկանխիկ եղանակով, սակայն նոտարական գործի փաստաթղթերում բացակայում է 10.400.000 ՀՀ դրամի վճարման փաստաթուղթը, ինչը ևս մեկ անգամ հիմնավորում է, որ նշված գործարքը կեղծ է:

«Տիգրիս» ՍՊԸ-ի գնահատման հաշվետվությունները թույլատրելի և վերաբերելի ապացույցներ են, իսկ բողոք բերած անձանց կողմից վկայակոչված ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրված ՀՀ անշարժ գույքի շուկայի 2011 թվականի առաջին կիսամյակի վերլուծության վերաբերյալ փաստաթուղթը սույն գործով թույլատրելի ապացույց չէ: Բացի այդ, Ալբերտ Պետրոսյանի ներկայացուցիչը, Դատարան ներկայացնելով փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն, չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ ինքը հնարավորություն չի ունեցել ձեռք բերելու նշված ապացույցը:

## 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ալբերտ Պետրոսյանի և Ընկերության միջև 16.06.2011 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ալբերտ Պետրոսյանը վաճառել է, իսկ Ընկերությունը որպես սեփականություն ձեռք է բերել Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող թվով 52 հողակտորները: Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ հողակտորներից յուրաքանչյուրը վաճառվել է 200.000 ՀՀ դրամով: Վաճառքի ընդհանուր գումարը կազմել է 10.400.000 ՀՀ դրամ: Կողմերը հավաստիացրել են, որ պայմանագրի ստորագրման պահին գնորդը վճարել է գույքի գինը, իսկ վաճառողը ստացել է այն ամբողջությամբ: Նշված պայմանագրից ծագող Ընկերության սեփականության իրավունքը ենթարկվել է պետական գրանցման (**հատոր 1-ին, գ.թ. 111-112, 120**):

2. 29.07.2008 թվականին տրված, Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող թվով 52 հողամասերի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականների համաձայն՝ նշված հողամասերի նպատակային նշանակությունը հանդիսանում է գյուղատնտեսական, իսկ օգտագործման նպատակը՝ վարելահող: Վկայականները սեփականության իրավունքով տրված են Ալբերտ Պետրոսյանին (**հատոր 4-րդ, գ.թ. 17-171**):

3. Պարտատեր «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի, երաշխավոր Ալբերտ Պետրոսյանի (Պետրոսյան), ինչպես նաև պարտապան «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ի միջև 20.08.2009 թվականին կնքվել է երաշխավորության պայմանագիր, որով Ալբերտ Պետրոսյանը (Պետրոսյան) պարտավորվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով պատասխանատվություն կրել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի առջև՝ ի ապահովումն վարկատու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և վարկառու «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ի միջև 20.08.2009 թվականին կնքված գլխավոր վարկային պայմանագրի (**հատոր 1-ին, գ.թ. 24-25**):

4. Գրավառու «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի, գրավառու Ալբերտ Պետրոսյանի (Պետրոսյան), ինչպես նաև վարկառու «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ի միջև 28.07.2010 թվականին կնքվել է թիվ CA/B/09-0071-01 անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագիր, որով, ի ապահովումն վարկատու «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և վարկառու «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ի միջև 20.08.2009 թվականին կնքված գլխավոր վարկային պայմանագրի կատարման, գրավադրվել է Ալբերտ Պետրոսյանին (Պետրոսյան) սեփականության իրավունքով պատկանող՝ Արագածոտնի մարզում գտնվող 30 միավոր անշարժ գույք (**հատոր 1-ին, գ.թ. 33-40**):

5. ՀՀ բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի արբիտրաժային տրիբունալի 20.12.2011 թվականի թիվ 004-02/11/11 վճռով «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ի և Ալբերտ Պետրոսյանի (Պետրոսյան)՝ վարկային պարտքն ամբողջությամբ բռնագանձելու, վարկային պայմանագրով նախատեսված տոկոսներն ու տույժերը հաշվեգրելու և բռնագանձելու, բռնագանձումը գրավադրված գույքերի, իսկ դրանց անբավարարության դեպքում «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքերի և դրամական միջոցների վրա տարածելու պահանջի մասին, բավարարվել է մասնակիորեն: Ի թիվս այլնի՝ վճռվել է բռնագանձումը տարածել 28.07.2010 թվականին «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի, «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ի և Ալբերտ Պետրոսյանի միջև կնքված անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագրով գրավադրված և Ալբերտ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի, իսկ գրավի առարկաների իրացումից ստացված գումարների անբավարարության դեպքում՝ նաև «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա: Նշված վճռի հիմքում ընկած է վարկատու «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և վարկառու «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ի միջև 29.07.2010 թվականին կնքված թիվ LA/B/09-0048-02 վարկային պայմանագիրը (**հատոր 1-ին, գ.թ. 46-64**):

6. Թիվ ԵԿԴ/2958/02/11 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.10.2012 թվականի վճռով «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ի, Ալբերտ Պետրոսյանի (Պետրոսյան), «Շեյփինգ Զոն» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է: Դատարանը, ի թիվս այլնի, վճռել է բռնագանձումը տարածել 28.07.2010 թվականին կնքված անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագրով գրավի առարկա հանդիսացող գույքի, իսկ գրավի առարկաների անբավարարության դեպքում՝ «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ի, Ալբերտ Պետրոսյանի (Պետրոսյան) ու «Շեյփինգ Զոն» ՍՊԸ-ի այլ գույքի վրա: Նշված վճռի հիմքում ընկած է վարկատու «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և վարկառու «ԱՐԵՎԱԼԱՆՋ» ՍՊԸ-ի միջև 24.08.2009 թվականին կնքված թիվ LA/B/09-0048-01 վարկային պայմանագիրը (**հատոր 1-ին, գ.թ. 68-86**):

7. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.05.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Ալբերտ Պետրոսյանը ճանաչվել է սնանկ (**հատոր 1-ին, գ.թ. 19**):

8. ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության պետի 26.03.2015 թվականի թիվ 3-2/0586-15 գրությամբ տրամադրված տվյալների համաձայն՝ Ընկերության մասնակիցներն են հանդիսացել Զարեհ Պետրոսյանը՝ մուտք գործելու ամսաթիվ՝ 15.12.2011 թվական (100% բաժնեմաս), Մարիամ Ավետիսյանը՝ մուտք գործելու ամսաթիվ՝ 13.06.2011 թվական, դուրս գալու ամսաթիվ՝ 09.12.2011 թվական (100% բաժնեմաս), Վազգեն Պետրոսյանը՝ մուտք գործելու ամսաթիվ՝ 16.05.2013 թվական, դուրս գալու ամսաթիվ՝ 28.06.2013 թվական (70% բաժնեմաս): Ընկերության տնօրենը 13.06.2011 թվականից մինչև 16.05.2013 թվականը եղել է Մարիամ Ավետիսյանը: Ընկերության 15.05.2013 թվականի փոփոխություններով կանոնադրության համաձայն՝ Ընկերության մասնակից են հանդիսացել Զարեհ Պետրոսյանը (30% բաժնեմաս) և Վազգեն Պետրոսյանը (70% բաժնեմաս) (**հատոր 5-րդ, գ.թ. 121-123, հատոր 1-ին, գ.թ. 133-134**):

9. ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության պետի 31.10.2013 թվականի թիվ 3-2/1881-13 գրության համաձայն՝ Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Երևան քաղաքի Չարենցի փողոց թիվ 22/1 (**հատոր 1-ին, գ.թ. 109**):

10. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման պետի

14.05.2014 թվականի թիվ ԿԲ-2/3189 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Չարենցի փողոցի թիվ 22/1 և 22/3 հասցեները միավորվել են և սեփականության իրավունքով պետական գրանցում են ստացել Երևան քաղաքի Չարենցի փողոց թիվ 22/3 գրասենյակի տարածք հասցեով՝ Ալբերտ Պետրոսյանի (Պետրոսյան) անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 121**):

11. Զարեն Ալբերտի Պետրոսյանը 06.09.2011 թվականին տրված լիազորագրով լիազորել է Ալբերտ Բենիամինի Պետրոսսիանին (Պետրոսյան), ի թիվս այլ գործողությունների, իր անունից մասնակցելու Ընկերության ընդհանուր ժողովին, քվեարկելու, կանոնադրության և հիմնադիր փաստաթղթերում կատարելու փոփոխություններ և լրացումներ (**հատոր 1-ին, գ.թ. 115-116**):

12. «Տիգրիս» ՍՊԸ-ի կողմից 23.06.2014 թվականին կազմված Կոտայքի մարզի Չորաղբյուր գյուղի թվով 52 հողամասերի գնահատման հաշվետվությունների «Գնահատվող օբյեկտի նկարագրությունը» բաժիններում նշված է, որ հողամասերը հանդիսանում են 4,4 հա մակերեսով հողային համալիրի մի մասը, որը նախատեսված է բնակելի տների կառուցման համար: «Շուկայական արժեքի հաշվարկը» բաժնում որպես հողամասերի գործառնական նշանակություն նշված է «վարելահող», որից հետո նշված է՝ «գնահատվող բնակարանի 1<sup>2</sup> արժեքի հաշվարկ», ինչպես նաև նշվել է. «Հաշվի առնելով այն փաստը, որ գնահատվող հողատարածքը գյուղատնտեսական կարգավիճակից վերածվել է տնամերձի, հետևաբար ստացված արժեքին պետք է ավելացնել նաև կադաստրային արժեքը» (**հատոր 1-ին, գ.թ. 143-205, հատորներ 2-րդ, 3-րդ**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել կեղծ գործարքի իրավական բնույթը՝ անդրադառնալով հետևյալ հարցադրումներին.*

1. *ինչպիսին է կեղծ գործարքի կողմերի ներքին կամքի և արտահայտած կամահայրնության հարաբերակցությունը,*
2. *արդյո՞ք կեղծ գործարքի բոլոր կողմերի կամքը պետք է ուղղված լինի այդպիսի գործարքի կնքմանը,*
3. *արդյո՞ք գործարքի փաստացի կատարումն ինքնին արգելք է կեղծ գործարքի առկայությունը հաստատելու համար,*
4. *որո՞նք են կեղծ գործարքի անվավերության հետևանքները:*

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքների հիմքերը և հիմնավորումները, ըստ էության, նույնաբովանդակ են, նպատակահարմար է համարում դրանց անդրադառնալ ներքոշարադրյալ՝ ընդհանուր պատճառաբանությամբ.

1. Վճռաբեկ բողոքներն առաջին հիմքով հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք **ուղղված են** քա-



դաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ) հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առոչինչ է:

Վկայակոչված հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն անվավեր գործարքները դասակարգել է երկու խմբի՝ վիճահարույց գործարքներ, որոնք անվավեր են դատարանի կողմից այդպիսին ճանաչելու ուժով, և առոչինչ գործարքներ, որոնք անվավեր են օրենքի ուժով՝ անկախ նման ճանաչումից: Միաժամանակ օրենսդիրը, որպես առոչինչ գործարքների տեսակ, նախատեսել է նաև կեղծ գործարքը: Կեղծ գործարքներն առոչինչ համարելը պայմանավորված է նրանով, որ դրանցում իրականությունը խեղաթյուրվում է դիտավորյալ կերպով՝ բացասական ազդեցով քաղաքացիական շրջանառության բարեխիղճ մասնակիցների շահերի վրա: Կեղծ գործարք կնքվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է ստեղծել իրավահարաբերության առկայության պատրանք՝ քողարկելու համար գործարքի կնքման իրական շարժառիթները: Այլ կերպ ասած՝ կեղծ գործարքը ծառայում է որպես միջոց՝ գործարքին մասնակից չհանդիսացող երրորդ անձի համար իրականությունը դիտավորյալ խեղաթյուրելու համար (օրինակ՝ պարտավորության կատարումից խուսափելու համար գույքն առերևույթ օտարելը՝ պարտատիրոջ մոտ գույքի անբավարարության տպավորություն ստեղծելու համար):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախնառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտություն» հասկացությունները: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց **ներքին կամքի և արտաքին կամահայտության համակցությունն է**: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությամբ (*յուև Նելլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համիաս» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կեղծ գործարքը համարվում է կամքի արատով գործարք, քանի որ այն չի պա-

րունակում գործարքի կողմերի նպատակադրված կամային ակտը՝ ներքին կամքը, ուղղված իրավունքների և պարտականությունների ծագմանը, փոփոխմանը կամ դադարմանը: Կեղծ գործարքի դեպքում կողմերը չունեն իրական նպատակ՝ կնքելու գործարք՝ իրավունքներ և պարտականություններ առաջացնելով, փոփոխելով կամ դադարեցնելով, նրանց իրական նպատակը իրավահարաբերության պատրանք ստեղծելն է՝ իրական կամքը թաքցնելու նպատակով:

ՀՀ վճռաբեկ դատարանը շինծու գործարքի վերաբերյալ նախկինում կայացրած որոշումներից մեկով արձանագրել է, որ երկկողմ գործարքը կնքողներից միայն մեկ կողմի մոտ խաթարված կամքի առկայության դեպքում չի կարող այդ գործարքը գնահատվել շինծու, քանի որ նման փաստերի առկայությունը հնարավոր հիմք է տալիս հանգելու հետևության, որ հարցը վերաբերում է խաբեությանը կնքված գործարքին (վիճահարույց գործարք), որի համար օրենսդիրը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդված) սահմանել է անվավեր ճանաչելու այլ հիմքեր և դրանից բխող հետևանքներ (լրեն Հասմիկ Բլորցյանն ընդդեմ՝ Վահե Արվազյանի և մյուսների թիվ 3-793 (ՎԻ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործարքը կեղծ որակելու համար ևս անհրաժեշտ է, որպեսզի գործարքի բոլոր կողմերի կամքն ուղղված լինի առերևույթ հարաբերության ծագման տպավորություն ստեղծելուն, հակառակ դեպքում, եթե գործարքի կողմերից միայն մեկն է նման նպատակ հետապնդում, ապա առկա կլինի կամքի արատով այլ գործարք, քանի որ երկկողմ գործարքը համաձայնեցված կամքի արտահայտություն է, և եթե գործարքը ձևակերպվում է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, ապա դա չի կարող լինել միայն մեկ կողմի ցանկությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ չնայած կեղծ գործարքի կողմերը ձևակերպվող գործարքի որևէ իրավական հետևանք փաստացի առաջացնելու մտադրություն չունեն, այդուհանդերձ, որպեսզի երրորդ անձինք հնարավորություն ունենան վստահելու կեղծ գործարքին, գործարքի կողմերը, որպես կանոն, ստեղծում են փաստացի հարաբերության առկայության պատրանք՝ այդ թվում ձևականորեն առաջացնելով այն հետևանքները, որոնք պետք է առաջանային, եթե կնքվեր իրական գործարք (այդ թվում նաև՝ գործարքից բխող իրավունքները պետական գրանցման ենթարկելով): Վերը շարադրվածը վերաբերում է ինչպես գործարքի ձևին, այնպես էլ բովանդակությանը, կողմերին և դրսևորած կամահայտնությանը: Այլ կերպ ասած՝ ստեղծվում է տպավորություն, որ գործարքի բոլոր տարրերը պահպանված են: Ընդ որում, կեղծ գործարքը կարող է և փաստացի կատարված լինել (մասնակի կամ լրիվ), սակայն կատարման նպատակը նույնպես պատրանքն իրականությանը մոտեցնելը լինի՝ հետագայում, այդուհանդերձ, գործարքի իրավական հետևանքներն առաջացնելու ցանկություն չունենալով: Եվ հակառակը, հնարավոր է նաև գործարքը կատարված չլինի, սակայն իրականում չլինեն կեղծ գործարքի մյուս հատկանիշները, և տվյալ դեպքում առկա լինի միայն պարտավորության խախտում: Ուստի, միայն գործարքի կատարված լինելը կամ չլինելը չի կարող բացառել կեղծ գործարքի առկայությունը, և այդ հանգամանքը պետք է գնահատվի մյուս հանգամանքների համատեքստում:

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ կեղծ գործարքի առկայությունը գնահատելիս դատարանները պետք է գնահատման արժանացնեն գործարքի կողմերի մոտակա և հեռահար նպատակները՝ հաշվի առնելով, որ գործարքի կնքման մոտակա նպատակը գործարքի տպավորություն ստեղծելն է, իսկ հեռահար նպատակը՝ կողմերի կամ նրանցից մեկի համար որևէ առավելություն ստանալը կամ որևէ սահմանափակում շրջանցելը: Հեռահար նպատակի մասին կարող է վկայել, օրինակ, չկատարված պարտավորության, օրինական ուժի մեջ մտած՝ չկատարված դատական ակտի կամ այլ նմանատիպ հանգամանքների առկայությունը: Ի տարբերություն հեռահար նպատակի, որի առկայությունը հաստատելու համար կարող են ներկայացվել ուղղակի ապացույցներ, մոտակա նպատակն ապացուցելը բարդ է՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է գործարքի կողմերի ներքին կամքին, հետևաբար՝ մոտակա կամքը բացահայտելու համար կարող են ներկայացվել նաև անուղղակի ապացույցներ: Մոտակա կամքը բացահայտելու համար կարող է ուղենշային լինել, օրինակ, գործարքի կողմերի դրսևորած վարքագծի արդյունավետության գնահատումը, մասնավոր-

րապես այն, որ եթե տվյալ գործարքի իրավական հետևանքներին կարելի է հասնել ավելի խնայողական և կարճ ճանապարհով, առանց լրացուցիչ գործարքների կնքման, ապա առկա ավելորդ օղակները կարող են վկայել քողարկված նպատակի առկայության մասին (օրինակ՝ ավելորդ գործարքներ կարող են կնքվել լրացուցիչ ծախսեր ցույց տալու՝ հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով): Կամ գործարքը կեղծ լինելու մասին կարող է վկայել այն հանգամանքը, որ գործարքի կողմերից մեկն ի սկզբանե ի վիճակի չէր լինելու կատարել գործարքով ստանձնած պարտավորությունները (օրինակ՝ համապատասխան սարքավորումների, աշխատուժի բացակայության պատճառով):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը կեղծ գործարքների անվավերության հատուկ հետևանքներ չի նախատեսել: Հետևաբար, ըստ էության, պետք է կիրառելի լինեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածով նախատեսված հետևանքները: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ կեղծ գործարքի դեպքում գործարքի փաստացի կատարում, **որպես կանոն**, տեղի չի ունենում, նմանատիպ դեպքերում վերոգրյալ նորմի կիրառումն ունի առանձնահատկություններ, մասնավորապես՝ որպես անվավերության հետևանք կարող են լինել նախկին սեփականատիրոջ տիտղոսի վերականգնումը, դատական ակտով գործարքի կեղծ լինելու հանգամանքը հաստատելը, որը կարող է հանգեցնել որպես անվավերության հետևանք այլ ածանցյալ պահանջներ ներկայացնելուն (օրինակ՝ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելը):

Վերոգրյալ իրավական վերլուծությունների համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում առանձնացնել կեղծ գործարքի հետևյալ տարրերը, որոնց գնահատումը կոնկրետ գործի շրջանակներում կնպաստի բացահայտելու կեղծ գործարքի առկայությունը՝

1. Կեղծ գործարքի **օբյեկտն** այն իրավահարաբերություններն են, որից կողմերը ցանկանում են խուսափել, այսինքն՝ կեղծ գործարք կնքելու իրական պատճառ հանդիսացող հարաբերությունները: Որպես հատուկ օբյեկտ՝ կարելի է առանձնացնել քաղաքացիաիրավական շրջանառության այն կոնկրետ սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը, որոնք ոտնահարվում են կեղծ գործարք կնքելու հետևանքով (օրինակ՝ պարտավորության կատարումից խուսափելու նպատակով կնքված կեղծ գործարքի դեպքում պարտատիրոջ շահերը):

2. **Օբյեկտիվ կողմից** կեղծ գործարքները դրսևորվում են այնպիսի գործողություններով (անգործությամբ), որի արդյունքում ստեղծվում է իրական հարաբերության առկայության տպավորություն: Գործարքը կնքելուց հետո կողմերի վարքագիծը, **որպես կանոն**, դրսևորվում է անգործությամբ՝ կողմերը չեն իրականացնում համապատասխան գործողություններ՝ գործարքի իրական հետևանքների առաջացման համար:

3. Կեղծ գործարքի **սուբյեկտիվ կողմը** դրսևորվում է գործարքի բոլոր կողմերի դիտավորությամբ: Կեղծ գործարքի առկայությունը հաստատելու համար բավարար չէ միայն մեկ կողմի դիտավորությունը՝ կնքելու կեղծ գործարք: Կողմերից մեկի դիտավորության բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ գործարքի կեղծ լինելը հաստատելու համար, քանի որ գործարքի բարեխիղճ կողմը չպետք է տուժի մյուս կողմի անբարեխիղճության հետևանքով: Բացի այդ, կեղծ գործարքի նպատակը իրավահարաբերության պատրանք ստեղծելն է, իսկ նման տպավորություն ստեղծելու համար անհրաժեշտ է, որպեսզի բոլոր կողմերն ի սկզբանե նման ցանկություն ունենան:

Սույն գործով Դատարանը, հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ գործում առկա ապացույցներով հիմնավորվում է, որ վիճարկվող պայմանագիրը նպատակ չի հետապնդել կողմերի համար առաջացնելու իրավունքներ և պարտականություններ, կողմերը գիտակցել են, որ տվյալ գործարքով իրենց համար որևէ իրավունք և պարտականություն չի առաջանալու, գործարքի կնքումը հետապնդել է այլ նպատակ: Այբերտ Պետրոսյանը, հանդիսանալով «ԱՐԵՎԱՆՋ» ՍՊԸ-ի տնօրենը և միակ մասնակիցը, տեղյակ է եղել, որ «ԱՐԵՎԱՆՋ» ՍՊԸ-ի կողմից պատշաճ կարգով չեն իրականացվում վարկային պարտավորությունները, և որ ինքը «ԱՐՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հանդեպ ունի համապարտ պարտավորություն, ուստի, կանխատեսելով վերահաս դատական ակտերը, գույքային պատասխանատվությունից խուսափելու նպատակով 16.06.2011 թվականի առուվաճառքի պայմանագրի հիման վրա Կոտայքի մարզի

Ձորաղբյուր գյուղում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող թվով 52 հողամասերն առերևույթ ցածր գնով (որպիսի հանգամանքը հաստատվում է «Տիգրիս» ՍՊԸ-ի կողմից կազմված և օրենքի պահանջներին համապատասխանող մասնագիտական հաշվետվություններով) փոխանցել է Ընկերությանը: Դատարանը նաև նշել է, որ պայմանագրի դիմաց վճարում չի կատարվել, քանի որ գործով չի ներկայացվել անկանխիկ ձևով կատարված վճարման փաստաթուղթ, իսկ պայմանագրում պարզապես նշվել է, որ գումարը վճարված է: Դատարանը կարևորել է, որ գործարքի կնքումից հետո «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին որևէ վճարում չի կատարվել, «ԱՐԵՎԱԼԱՆՁ» ՍՊԸ-ի միակ մասնակից Ալբերտ Պետրոսյանի և Ընկերության հասցեները համընկնում են, Ընկերությունը գրանցվել է գործարքի կնքումից 3 օր առաջ, իսկ գործարքի կնքումից 6 ամիս անց Ընկերության մասնակից է դարձել Ալբերտ Պետրոսյանի որդին, ով, դեռևս Ընկերության մասնակից չդարձած, լիազորել է Ալբերտ Պետրոսյանին իր անունից հանդես գալ Ընկերությունում: Դատարանը գտել է, որ վերոգրյալ հանգամանքները վկայում են գործարքի կեղծ լինելու մասին:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ալբերտ Պետրոսյանի և Ընկերության վերաքննիչ բողոքները, հիմնավոր է համարել Դատարանի՝ վերը շարադրված պատճառաբանությունները և, վերահաստատելով ստորադաս դատարանի եզրահանգումը, արձանագրել է, որ գործում առկա ապացույցներով, մասնավորապես՝ երաշխավորության, գրավի պայմանագրերով, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի արբիտրաժային տրիբունալի, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռներով հիմնավորվում է, որ գործարքի կողմերը նպատակ են հետապնդել խուսափելու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հանդեպ «ԱՐԵՎԱԼԱՆՁ» ՍՊԸ-ի պարտավորություններով Ալբերտ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի, այդ թվում՝ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող թվով 52 օտարված հողամասերի վրա բռնագանձում տարածելուց: Վերաքննիչ դատարանը միաժամանակ գտել է, որ ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված գրություններով, Ջարեհ Պետրոսյանի կողմից տրված լիազորագրով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից տրված գրությամբ հիմնավորվում է, որ Ընկերության գործողություններն ուղղորդվել են Ալբերտ Պետրոսյանի կողմից, ուստի կնքված գործարքը կրել է ձևական բնույթ՝ կնքվելով առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տես Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ՝ Նվեր Մկրտչյանի թիվ ԵՆԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը

հաստատելու կամ մերժելու համար (տե՛ս Սվերլյանսա Ժուլիկյանն ընդդեմ Անահիպ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կեղծ գործարքի առկայությունը որոշելիս դատարանը յուրաքանչյուր գործով պետք է բացահայտի կեղծ գործարքին բնորոշ հատկանիշները: Ընդ որում, յուրաքանչյուր հատկանիշի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունը պետք է ձևավորվի գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում՝ հաշվի առնելով **ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը**, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը: Հետևաբար կեղծ գործարքի առկայությունը հաստատված համարելու պահանջի վերաբերյալ սույն քաղաքացիական գործի քննության շրջանակներում ստորադաս դատարանները պարտավոր էին բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատել յուրաքանչյուր ապացույց՝ պարզելու համար կեղծ գործարք կնքելու իրական շարժառիթները, գործարքի իրավական հետևանքները փաստացի առաջացնելու՝ կողմերի, այն է՝ Ալբերտ Պետրոսյանի և Ընկերության՝ ի դեմս տնօրեն Մարիամ Ավետիսյանի **ներքին կամքի** բացակայությունը, գործարքի **երկու կողմերի** դիտավորությունը՝ ուղղված իրավահարաբերության ծագման տպավորություն ստեղծելուն, վերջիններիս մոտակա և հեռահար նպատակները՝ կապված գործարքի կնքման հետ, ինչպես նաև գործարքի փաստացի կատարված լինելու հանգամանքը **կեղծ գործարքի մյուս հատկանիշների համատեքստում**:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով չեն իրականացրել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատում կեղծ գործարքի վերոնշյալ պայմանների առկայությունը պարզելու ուղղությամբ: Այսպես, ստորադաս դատարանները գործարքի կեղծ լինելը և մասնավորապես՝ կեղծ գործարքի կնքման իրական շարժառիթը հիմնավորել են՝ վկայակոչելով Ալբերտ Պետրոսյանի՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հանդեպ ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու հեռահար նպատակը՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի և Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի արբիտրաժային տրիբունալի վճիռները, 20.08.2009 թվականի վարկային և երաշխավորության պայմանագրերը, որոնցով հաստատված են համարել այն հանգամանքը, որ Ալբերտ Պետրոսյանը, իմանալով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի նկատմամբ իր համապարտ պարտավորության մասին և կանխորոշելով անբարենպաստ դատական ակտերը, գույքային պատասխանատվությունից խուսափելու նպատակով 16.06.2011 թվականին կնքել է առուվաճառքի պայմանագիրը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները գործարքի կնքման իրական շարժառիթի՝ ոչ իրավաչափ նպատակի առկայությունը հաստատված են համարել՝ առանց գնահատելու գործում առկա բոլոր ապացույցները, մասնավորապես՝ անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագիրը: Այսպես, նշված պայմանագրով, ի ապահովումն վարկատու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և վարկառու «ԱՐԵՎԱԼԱՋ» ՍՊԸ-ի միջև 20.08.2009 թվականին կնքված գլխավոր վարկային պայմանագրի կատարման, գրավադրվել է Ալբերտ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Արագածոտնի մարզում գտնվող 30 միավոր անշարժ գույք:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ այն պարտավորությունը, որի կատարումից ենթադրաբար խուսափել է Ալբերտ Պետրոսյանը, ապահովված է եղել գրավով, որպիսի հանգամանքը միանշանակ չի դարձնում ստորադաս դատարանների այն եզրահանգումը, որ կնքված գործարքի իրական նպատակը եղել է Ալբերտ Պետրոսյանի՝ պարտավորության կատարումից խուսափելը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները որևէ կերպ չեն պարզել գործարքի մյուս կողմի, մասնավորապես՝ Ընկերության՝ ի դեմս տնօրեն Մարիամ Ավետիսյանի **դիտավորությունը**, ում՝ Ալբերտ Պետրոսյանի հետ որևէ փոխկապակցվածության վերաբերյալ ապացույց սույն գործով չի ներկայացվել: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հաստատված համարելով կեղծ գործարքի առ-

կայությունը՝ ստորադաս դատարանները չեն բացահայտել **երկու կողմերի ներքին կամքը**՝ անտեսելով, որ հողամասերի գնորդ է հանդիսացել **Ընկերությունը՝ որպես քաղաքացիական իրավունքի ինքնուրույն սուբյեկտ**, հետևաբար այն հանգամանքները, որ վիճելի գործարքի կնքումից ամիսներ անց փոխվել են Ընկերության մասնակիցները, որոնց թվում եղել է նաև Ալբերտ Պետրոսյանի որդին՝ Զարեհ Պետրոսյանը, և որ գործարքի կնքումից հետո որոշակի ժամանակ անց Ընկերության գործունեության վայրի հասցեն համընկել է Ալբերտ Պետրոսյանին պատկանող հասցեի հետ, դեռևս **ինքնին**, գործում առկա մյուս ապացույցների համակցությունից դուրս, առանց կեղծ գործարքի վերոգրյալ բոլոր հատկանիշները գործով վեր հանելու և գնահատելու, չեն կարող վկայել այն մասին, որ վիճելի գործարքը կողմերի՝ **Ընկերության և Ալբերտ Պետրոսյանի** համար իրավական հետևանքներ չի առաջացրել:

Որպես կեղծ գործարքի հատկանիշներից, մասնավորապես, գործարքը փաստացի կատարված չլինելու հանգամանքի հիմնավորում՝ ստորադաս դատարանները պատճառաբանել են, որ Ընկերության կողմից Ալբերտ Պետրոսյանին պայմանագրի գինը վճարած լինելու հանգամանքը կարող էր հաստատվել միայն անկանխիկ ձևով կատարված վճարման փաստաթղթերով, որպիսին գործի նյութերում առկա չէ, ուստի այդ հանգամանքի հիման վրա ստորադաս դատարանները հաստատված են համարել պայմանագրի գինը վճարած չլինելու փաստը՝ եզրակացության գալով նաև գործարքի կեղծ լինելու մասին: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վիճելի պայմանագրի 3-րդ կետով կողմերը հավաստիացրել են, որ նույն պայմանագրի ստորագրման պահին գնորդը վճարել է գույքի գինը, իսկ վաճառողը ստացել է այն ամբողջությամբ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պայմանագրում նման պայմանի առկայության պարագայում գործում է պայմանագրի գինն Ընկերության կողմից Ալբերտ Պետրոսյանին վճարած լինելու կանխավարկածը, քանի դեռ ապացույցների համակցության մեջ այլ բան չի ապացուցվել: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ նույնիսկ կանխիկ գործառնությունների իրավակարգավորումների խախտումն ինքնին չէր կարող բացառել պայմանագրի գինը վճարած լինելու հանգամանքը՝ հաշվի առնելով, որ նոտարական կարգով վավերացված պայմանագրով կողմերը հավաստիացրել են գումարի վճարած լինելը: Այլ կերպ ասած, այն դեպքում, երբ առուվաճառքի պայմանագրում որպես ապրանքի դիմաց վճարման պահ նշվել է պայմանագրի ստորագրման պահը, ապա պայմանագիրը գնորդի և վաճառողի կողմից ստորագրված լինելու հանգամանքը կարող է վկայել գնորդի կողմից ապրանքի դիմաց վճարում կատարված լինելու փաստը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրի գինը վճարած չլինելու հանգամանքը հաստատված համարելիս ևս ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտում: Ավելին, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ վերոգրյալ իրավական վերլուծության յուրաքանչյուր անգամ գործարքի դիմաց վճարում կատարված չլինելը, այսինքն՝ գործարքը փաստացի կատարված չլինելը, պետք է գնահատվեր կեղծ գործարքի մնացած հատկանիշների և գործում առկա մյուս ապացույցների համակցության մեջ:

Ստորադաս դատարանները, որպես գործարքի կեղծ բնույթը և գործարքի հետևանքներն առաջացնելու կողմերի ներքին կամքի բացակայությունը հիմնավորող ապացույց, վկայակոչել են նաև «Տիգրիս» ՍՊԸ-ի կողմից 23.06.2014 թվականին կազմված Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող թվով 52 հողամասերի գնահատման հաշվետվությունները, որոնցով հաստատված են համարել այն հանգամանքը, որ նշված հողամասերի շուկայական արժեքը 16.06.2011 թվականի դրությամբ կազմել է 268.300.000 ՀՀ դրամ, որի հիման վրա եկել են այն հետևության, որ վիճարկվող պայմանագրի գինն էականորեն ցածր է պայմանագրի կնքման ժամանակահատվածում գործող շուկայական գնից, ինչը նույնպես վկայում է գործարքի կեղծ բնույթի մասին: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով վերոնշյալ հաշվետվությունները, արձանագրում է, որ գնահատման իրականացնելիս հիմք են ընդունվել այնպիսի երկարատև տվյալներ, որոնք հակասության մեջ են մտնում գործում առկա այլ ապացույցների հետ, մասնավորապես՝ գնահատման հաշվետվությունների «Գնահատվող օբյեկտի նկարագրությունը» վերտառությամբ 8-րդ կետում նշվել է. «Հողամասերը գտնվում են Ձորաղբյուր համայնքում և կազմում են ավելի քանի 4,4 հա հողային համալիր, որը նախատեսված է բնակելի տների կառուցման համար»,

իսկ «Շուկայական արժեքի հաշվարկ» վերտառությամբ 11-րդ բաժնում գնահատողը նշել է. «Հաշվի աննելով այն փաստը, որ գնահատվող հողատարածքը գյուղատնտեսական կարգավիճակից վերածվել է տնամերձի, հետևաբար ստացված արժեքին պետք է ավելացնել նաև կադաստրային արժեքը»: Գնահատման հաշվետվության մեջբերված հատվածներից հետևում է, որ փորձագետը գնահատման օբյեկտ հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը նշել է որպես բնակավայրերի, մինչդեռ գործի նյութերում առկա Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող թվով 52 հողամասերի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականների համաձայն՝ նշված հողամասերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ օգտագործման նպատակը՝ վարելահող: Ընդ որում, գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ 16.06.2011 թվականի դրությամբ նշված հողամասերի նպատակային նշանակությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով փոխվել է սահմանվել է որպես բնակավայրերի: Նման պայմաններում փորձագետի այն նշումը, որ «գնահատվող հողատարածքը գյուղատնտեսական կարգավիճակից վերածվել է տնամերձի», և հողամասերի շուկայական արժեքը որոշելիս հողամասերը բնակավայրերի նպատակային նշանակության դիտարկելը կասկածի տակ են դնում գնահատման հաշվետվությունների արժանահավատությունը: Բացի այդ, գնահատման հաշվետվությունների «Շուկայական արժեքի հաշվարկ» վերտառությամբ 11-րդ բաժնի 1.1 կետում նշվել է «Գնահատվող բնակարանի 1 քմ արժեք» արտահայտությունը, մինչդեռ տվյալ դեպքում գնահատման առարկա են դարձվել ոչ թե բնակարաններ, այլ՝ հողամասեր:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, գնահատման հաշվետվությունները դիտարկելով որպես 16.06.2011 թվականի դրությամբ վիճելի հողամասերի շուկայական արժեքը և ըստ այդմ՝ գործարքի կետը լինելը հիմնավորող ապացույց, չեն անդրադարձել Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող թվով 52 հողամասերի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականներին, չեն գնահատել դրանք համակցության մեջ՝ անտեսելով գնահատման հաշվետվություններում առկա հակասությունները:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, հաստատված համարելով Ալբերտ Պետրոսյանի և Ընկերության միջև կնքված առովանաքի պայմանագրի կետը բնույթը, չեն իրականացրել ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտություն և համակցության մեջ չեն գնահատել կետը գործարքի բոլոր հատկանիշների առկայությունը՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որպիսի պարագայում առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքների 1-ին հիմքի վերաբերյալ վճռաբեկ բողոքների պատասխաններում նշված փաստարկները:

2. Վճռաբեկ բողոքները երկրորդ հիմքով հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու՝

ա) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում.

բ) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները ցանկացած երրորդ անձանց, որոնք կատարվել են սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի հետ փոխկապակցված են համարվում՝

ա) պարտապանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական, դուստր կամ կախյալ իրավաբանական անձը.

բ) պարտապանի ղեկավարը, ինչպես նաև տնօրենների խորհրդի (դիտորդի խորհրդի) անդամը, պարտապանի կողմից գործադիր մարմնի անդամը, գլխավոր հաշվապահը

(հաշվապահը), ինչպես նաև սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու պահից վերջին մեկ տարվա ընթացքում նշված պաշտոններից ազատված անձը.

գ) պարտապանի կանոնադրական (բաժնետեղակալ, փայտափայտ) կապիտալի 20 և ավելի տոկոսին տիրապետող անձը.

դ) պարտապանին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձը կամ մարմնի անդամը:

Պարտապանի նկատմամբ փոխկապակցված է համարվում նաև անձը, որը նույն մասում նշված ֆիզիկական անձանց հետ գտնվում է նույն հողվածի երկրորդ մասով սահմանված հարաբերությունների մեջ, իսկ նույն մասի «գ» կամ «դ» կետերի հիմքով իրավաբանական անձի փոխկապակցվածության դեպքում՝ նաև այդ անձի՝ նույն մասի «բ» կետում նշված պաշտոն զբաղեցնող ֆիզիկական անձը:

Նույն հողվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձ պարտապանի հետ փոխկապակցված են համարվում նրա ամուսինը, նրանց հետ երկու աստիճան ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, եղբայրը, քույրը և նրանց հետ ուղիղ վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, ամուսնու եղբայրը, քույրը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներից մեկում արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով, որի նպատակը պարտապանի գույքի հավաքագրումն է՝ սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման նպատակով (*Կրևու Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարչի Աղասի Արսենյանն ընդդեմ Գայանե և Ռուբեն Զուլումյանների թիվ ԵԿԴ/2304/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշումը*):

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ փաստակազմը՝

- ա) պարտապանի կատարած փոխանցման անհատույց լինելը,
- բ) փոխանցումը պարտապանի հետ փոխկապակցված անձանց կատարած լինելը,
- գ) փոխանցումը պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում կատարած լինելը:

Իսկ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ փաստակազմը՝

- ա) պարտապանի կատարած փոխանցման անհատույց լինելը,
- բ) փոխանցումը պարտապանի սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարած լինելը ցանկացած երրորդ անձի:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի՝ սույն գործով կիրառելիության հարցին, արձանագրել է, որ գործում առկա չէ Ընկերության կողմից Ալբերտ Պետրոսյանին հողամասերի արժեքի վճարման վերաբերյալ գրավոր ապացույց, մինչդեռ Ալբերտ Պետրոսյանին 10.400.000 ՀՀ դրամ վճարելու պարտականությունը Ընկերության կողմից կատարելու հանգամանքը կարող էր հաստատվել միայն Ընկերության կողմից անկանխիկ ձևով կատարված վճարման փաստաթղթերով:

Վերը նշված մեկնաբանությունների համատեքստում համադրելով և գնահատելով սույն քաղաքացիական գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումները հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի կիրառման համար անհրաժեշտ պայմաններից է փոխանցումը փոխկապակցված անձին կատարած լինելը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց առուվաճառքի պայմանագրի կնքման պահին գործարքի մյուս կողմի՝ պարտապանի հետ փոխ-



կապակցված անձ հանդիսանալու մասին: Հետևաբար միայն այս պայմանի բացակայությունն արդեն իսկ բավարար է վերոնշյալ կետը սույն գործով կիրառելի չլինելու համար:

Անդրադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով սահմանված պայմաններից փոխանցման անհատուցելիությանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով սնանկության կառավարչի կողմից վիճարկվող և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով հատուցելի գործարք համարվող **առուվաճառքի** պայմանագրի համաձայն՝ Ալբերտ Պետրոսյանի՝ մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն գույքը հանձնելու պարտականությանը համապատասխանում է Ընկերության՝ այդ ապրանքն ընդունելու և **դրա համար վճարելու** պարտականությունը: Ընդ որում, նշված պայմանագրի 3-րդ կետով կողմերը հավաստիացրել են, որ սույն պայմանագրի ստորագրման պահին գնորդը վճարել է գույքի գինը, իսկ վաճառողն ստացել է այն ամբողջությամբ: **Հետևաբար սույն գործով պարտապահի կողմից կատարված փոխանցումը ենթադրվում է հատուցելի այլ բան ապացուցված չլինելու պայմաններում:** Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի հիմքով կատարված փոխանցումը հետ պահանջելու հիմքերի առկայության մասով հայցվորի կողմից չի ապացուցվել գործարքի անհատուց լինելը: Հայցվորը վկայակոչել է միայն այն, որ անկանխիկ վճարումը հավաստող ապացույց առկա չէ նոտարական գործում, որպիսի հանգամանքը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բավարար չէ գործարքի անհատուց լինելը հավաստելու համար, քանի որ անգամ անկանխիկ վճարումների կանտոնները խախտելը դեռևս չի նշանակում, որ գործարքը եղել է անհատուց՝ հաշվի առնելով, որ վիճարկվող գործարքում, որն ստացել է նոտարական վավերացում, կողմերն ընդունել են, որ **վճարումը փաստացի կատարված է:**

Նման պայմաններում սույն գործով բացակայում են «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ պայմանները, ուստի անհիմն է Վերաքննիչ դատարանի՝ 16.06.2011 թվականի հողամասի առուվաճառքի պայմանագրի նկատմամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի կիրառելի լինելու վերաբերյալ եզրահանգումը:

*Նշված պարճատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքների 2-րդ հիմքի վերաբերյալ վճռաբեկ բողոքների պարասիսաններում նշված փաստարկները:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվորեն հետազոտելու և արդյունքում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու նպատակով:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. «Նորովի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Մարգարիտա Հովսեփյանի և Ալբերտ Պետրոսյանի ներկայացուցիչ Կարինե Մուրադյանի վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/1469/02/14  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/1469/02/14**  
**2016 թ.**

Հ. Ենոքյան  
Ս. Միքայելյան  
Ն. Բարսեղյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Սոնա Բորյանի (Շիրինյան) և Լուսինե Շիրինյանի ներկայացուցիչ Աշոտ Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ալբերտ Այնաջյանի ընդդեմ Սոնա Բորյանի (Շիրինյան), Լուսինե Շիրինյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման՝ համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և դրա հիման վրա կատարված գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Ալբերտ Այնաջյանը պահանջել է ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Բաֆֆու 77-րդ շենքի թիվ 14 բնակարանի նկատմամբ, անվավեր ճանաչել 13.10.2008 թվականին կնքված այդ բնակարանի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Կատվալյան) (այսուհետ՝ Դատարան) 02.02.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 09.04.2015 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 02.02.2015 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սոնա Բորյանի (Շիրինյան) և Լուսինե Շիրինյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ալբերտ Այնաջյանը և նրա ներկայացուցիչը:

## 2. Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198–րդ, 201–րդ, 298–րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5–րդ, 47–րդ, 48–րդ, 51–րդ, 53–րդ, 220–րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս չի կատարել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ինչի արդյունքում հանգել է սխալ հետևության:

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ Լուսինե Շիրինյանը, հանդիսանալով նվիրատու Սոնա Բոբյանի (Շիրինյան) քույրը, իմացել է, որ Սոնա Բոբյանը (Շիրինյան) և Ալբերտ Այնաշյանն ամուսիններ են, այդ հանգամանքը բավարար է համարել եզրակացնելու համար, որ Լուսինե Շիրինյանը պետք է իմանար վիճելի բնակարանի՝ համատեղ սեփականություն հանդիսանալու ու Սոնա Բոբյանի (Շիրինյան) մոտ նվիրատվության գործարքի կնքման համար անհրաժեշտ լիազորության բացակայության մասին: Մինչդեռ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198–րդ հոդվածի պահանջը՝ միայն Սոնա Բոբյանի (Շիրինյան) և Ալբերտ Այնաշյանի ամուսիններ լինելու փաստի հաստատումը բավարար հիմք չէ ենթադրելու, որ Սոնա Բոբյանը (Շիրինյան) համատեղ գույքը տնօրինելու լիազորություն չի ունեցել, քանի որ ընդհանուր սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը մնացած մասնակիցների պահանջով կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին: Սույն գործով, սակայն, վերաքննիչ բողոքի քննության ընթացքում չի ապացուցվել այն հանգամանքը, որ Լուսինե Շիրինյանն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար համատեղ սեփականատերերի միջև համաձայնության բացակայության մասին:

Այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին Վերաքննիչ դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզումները: Սույն գործով, սակայն, Սոնա Բոբյանի (Շիրինյան)՝ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայության մասին Լուսինե Շիրինյանի իմանալու կամ իմանալու ակնհայտ հնարավորության առկայությունը հիմնավորող որևէ հիմնավոր ապացույց Ալբերտ Այնաշյանը չի ներկայացրել Դատարանում գործի քննության ընթացքում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործով ձեռք բերված ապացույցներով չի հաստատվել այն հանգամանքը, որ Ալբերտ Այնաշյանը տվել է իր գրավոր համաձայնությունը Սոնա Բոբյանին (Շիրինյան)՝ վիճելի բնակարանը քրոջը՝ Լուսինե Շիրինյանին նվիրելու կապակցությամբ:

Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով անթույլատրելի է համարել Բարկեն Օհանյանի՝ որպես վկա դատարանում տրված ցուցմունքները՝ պատճառաբանելով, որ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների վկաների ցուցմունքներ վկայակոչելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանն անվավեր է ճանաչել նվիրատվության գործարքն ամբողջությամբ՝ որևէ կերպ չհիմնավորելով նշված հանգամանքը, մինչդեռ Սոնա Բոբյանը (Շիրինյան) իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասը կարող էր տնօրինել իր հայեցողությամբ՝ նվիրելով այն իր քրոջը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.04.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Մեքապոլի վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

### **2.1. Վճարել բողոքի պարասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է և իրավաչափ: Վերաքննիչ դատարանը, արձանագրելով վիճարկվող գործարքի կնքման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման վերաբերյալ վավերապայմանների բացակայությունը, փաստել է, որ սույն գործով բնակարանի վերաբերյալ նվիրատվության պայմանագիրը կնքելիս պարտադիր պետք է առկա լիներ Ալբերտ Այնաջյանի՝ որպես գույքի համատեղ սեփականատիրոջ նոտարական կարգով հաստատված համաձայնությունը, մինչդեռ բացի այն, որ գործարքը կնքելիս այն բացակայել է, Սոնա Բոբյանը տվել է ակնհայտ կեղծ հայտարարություն այն մասին, որ ինքն ամուսնացած չէ:

Լուսինե Շիրինյանը գործարքը վավերացնելու ժամանակ քաջատեղյակ է եղել բնակարանի՝ Սոնա Բոբյանի (Շիրինյան) և Ալբերտ Այնաջյանի համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված լինելու և Ալբերտ Այնաջյանի կողմից, որպես Սոնա Բոբյանի (Շիրինյան) ամուսին, գործարքի կնքմանը մասնակցելու անհրաժեշտության մասին: Հետևաբար անհիմն է բողոքի այն պատճառաբանությունը, թե Լուսինե Շիրինյանը չի իմացել հաստատված փաստերի միջև համաձայնության բացակայության մասին:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 23.09.2008 թվականին կնքված բնակարանի առուվաճառքի պայմանագրով վաճառողներ Արման Անդրեասյանը և Գարիկ Անդրեասյանը վաճառել են, իսկ գնորդ Սոնա Շիրինյանը որպես սեփականություն ձեռք է բերել Երևան քաղաքի Բաֆֆու 77-րդ շենքի թիվ 14 հասցեում գտնվող բնակարանը (**հատոր 1-ին, գ.թ. 58**):

2) 13.10.2008 թվականին կնքված բնակարանի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ նվիրատու Սոնա Շիրինյանը պարտավորվել է նվիրառու Լուսինե Շիրինյանի սեփականությանն անհատույց հանձնել Երևանի Բաֆֆու 77-րդ շենքի թիվ 14 հասցեում գտնվող բնակարանը (**հատոր 1-ին, գ.թ. 11**):

3) Սեփականության իրավունքի պետական գրանցման 29.10.2008 թվականի թիվ 2622443 վկայականի համաձայն՝ Երևանի Բաֆֆու 77-րդ շենքի թիվ 14 բնակարանի նկատմամբ գրանցված է Լուսինե Շիրինյանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 53-54**):

4) Սույն գործով 19.01.2015 թվականին դատաքննության ընթացքում որպես վկա ցուցմունք տված Բաբկեն Օհանյանը հայտնել է, որ Ալբերտ Այնաջյանը տեղյակ է եղել, որ վիճելի գույքը ձեռք է բերվել Լուսինե Շիրինյանի համար, սակայն հաշվի առնելով, որ վերջինս գույքը ձեռք բերելու պահին խնդիրներ է ունեցել ամուսնու հետ, գործարքը կնքվել է Լուսինե Շիրինյանի քրոջ՝ Սոնա Շիրինյանի անվամբ: Ալբերտ Այնաջյանը խուսափել է միջամտել Լուսինե Շիրինյանի և Սոնա Շիրինյանի հարաբերություններին՝ հայտնելով, որ կարող են գործարքից ծագող իրավունքները գրանցել այնպես, ինչպես ցանկանում են: Ալբերտ Այնաջյանը քաջատեղյակ է եղել, որ բնակարանը Լուսինե Շիրինյանին է լինելու: Ալբերտ Այնաջյանը գործարքը կնքելիս գտնվել է նոտարական գրասենյակի բակում, սակայն ի պատասխան գործարքի կողմերի, ինչպես նաև վկայի (ով նոտարական գրասենյակ է գնացել կողմերին օգնելու փաստաթղթերի հարցում) առաջարկին՝ ներս մտնելու և մասնակցելու գործարքի կնքմանը՝ համաձայնություն տալու միջոցով, Ալբերտ Այնաջյանը հրաժարվել է ներս մտնել՝ հայտնելով, որ ինչպես ցանկանում են, կարող են գրանցել, որից հետո էլ Սոնա Շիրինյանը տվել է հայտարարություն ամուսնացած չլինելու մասին, որպեսզի հնարավոր լինի կնքել գործարքը (**հատոր 1-ին, գ.թ. 77**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության դեպքում մյուս համասեփականատիրոջ (համասեփականատերերի) կողմից համաձայնություն տալու հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք համապեղ սեփականության մասնակցի կողմից կնքված նվիրատվության գործարքը մյուս մասնակցի պահանջով կարող է անվավեր ճանաչվել այն դեպքում, երբ գործում առկա չէ որևէ գրավոր ապացույց այն մասին, որ մյուս մասնակիցը փվել է իր համաձայնությունը գործարքը կնքելիս:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ՝ անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքելու ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների պահանջով՝ գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 599-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվությունը թույլատրվում է համատեղ սեփականության բոլոր մասնակիցների համաձայնությամբ՝ նույն օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված կանոնների պահպանմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ օրենքին, այլ իրավական ակտերին կամ կողմերի համաձայնությունը համապատասխան միակողմ գործարք կնքելու համար անհրաժեշտ և բավարար է մեկ կողմի կամքի արտահայտությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ և 201-րդ հոդվածներով նախատեսված վերոնշյալ իրավադրույթների մեկնաբանությանը, արձանագրել է, որ համատեղ սեփականության

մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար բավարար չէ համատեղ սեփականության մասնակիցների՝ ամուսիններ հանդիսանալու մասին գործարքի մյուս կողմի, մասնավորապես՝ գնորդի տեղեկացված լինելու փաստը: Նման պահանջը դատարանի կողմից կարող է բավարարվել միայն, եթե միաժամանակ առկա են երկու պայմաններ՝

1. համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայությունը,

2. գործարքի մյուս կողմի այդ մասին իմանալը կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայությունը (*տե՛ս Թագուշ Պերրոսյանն ընդդեմ Ժաննա Ղազարյանի թիվ 3-459(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը, Գայանե Թումասյանն ընդդեմ Հովհաննես Երիցյանի և մյուսների թիվ ԱՐԴ/0956/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկնաբանել է ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության վերաբերյալ իրավադրոյթները՝ արձանագրելով, որ օրենսդիրը, հաշվի առնելով ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի ծագման հիմքը՝ ամուսնական հարաբերությունները և օրենքով նախատեսված այլ դեպքերը, ըստ էության, ամրագրել է ընդհանուր գույքը տնօրինելու ժամանակ մյուս համասեփականատերերի համաձայնության և դրա տնօրինման գործարք կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության գույքը տնօրինելու ժամանակ մասնակիցների համաձայնության առկայության կանխավարկածը նվիրատվության հարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ, քանի որ համատեղ սեփականության գույքի նվիրատվության դեպքում օրենսդիրը նախատեսել է սահմանափակումներ: Այսպես, համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության ձևով տնօրինման համար պարտադիր կերպով անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի համաձայնությունը, և չի սահմանվել բացառություն (*տե՛ս Նարինե Նալբանդյանն ընդդեմ «Ինտերկո Բոնաթրաքշն» ՓԲԸ-ի բաժնետերեր Հրաչ-Ներսես Կապրիելյանի, Արագած Ախոյանի թիվ ԵՔԴ/0256/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով վերոնշյալ որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, արձանագրում է, որ ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության դեպքում կիրառելի չէ համատեղ սեփականության մասնակցի՝ գույքը տնօրինելու համաձայնության կանխավարկածը: Նկատի ունենալով այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված իրավակարգավորումից բացի, օրենսդիրը նախատեսել է նաև հատուկ կարգավորում նվիրատվության գործարքի համար՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 599-րդ հոդվածի 1-ին կետով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից նման հատուկ նորմ նախատեսելն ինքնանպատակ չէ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածում ամրագրելով «համատեղ սեփականության բոլոր մասնակիցների համաձայնությունը» արտահայտությունը՝ օրենսդիրը կարևորել է համատեղ սեփականության բոլոր մասնակիցների կամահայտությունը նվիրատվության գործարք կնքելիս: Հետևաբար ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը նվիրելիս պահանջվում է բոլոր համասեփականատերերի համաձայնությունը, իսկ համասեփականատիրոջ համաձայնության առկայության կանխավարկածը չի գործում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ի տարբերություն գործարքների՝ համատեղ սեփականության մասնակցի համաձայնությունն ինքնին չի առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում իրավունքներ ու պարտականություններ: Այդպիսի համաձայնության դերն ավելի սահմանափակ է: Համաձայնությունն անհրաժեշտ նախապայման է, որի առկայությամբ երկու կամ ավելի կողմերի համաձայնեցված կամքի արտահայտությունը (երկկողմ կամ բազմակողմ գործարքների դեպքում) կամ մեկ կողմի կամահայտությունը (միակողմ գործարքի դեպքում) հնարավորություն է ստանում առաջացնելու, փոփոխելու

կամ դադարեցնելու իրավահարաբերություն, այլ կերպ ասած՝ այն հանդիսանում է անհրաժեշտ նախապայման գործարքի կնքման համար:

Անդրադառնալով նվիրատվության գործարք կնքելու համար համատեղ սեփականության մասնակցի համաձայնության ձևին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը համաձայնության կոնկրետ ձև չի նախատեսել ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ, այնպես էլ նույն օրենսգրքի 599-րդ հոդվածի 1-ին կետերով:

ՀՀ սահմանադրական դատարանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 24.02.2012 թվականի թիվ ՍԴՈ-1009 որոշման եզրափակիչ մասում արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այդ մասի առաջին նախադասության դրույթների սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքելու ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ՝ նկատի ունենալով, որ ներքոհիշյալ դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի **պոզիտիվ համաձայնությունը**, ինչը կփաստի գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը: Այդ դեպքերն են.

ա) երբ համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել և սեփականության իրավունքի գրանցման վկայականում հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համասեփականության իրավունքով,

բ) երբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը, քննարկելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանադրականության հարցը, արձանագրել է մասնակցի պոզիտիվ համաձայնության անհրաժեշտությունը որոշակի դեպքերում՝ չմասնավորեցնելով համաձայնության ձևը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության դեպքում մյուս մասնակցի համաձայնությունը կարող է դրսևորվել ցանկացած ձևով՝ պայմանով, որ այդ համաձայնությունը լինի հստակ արտահայտված: Բացի այդ, նկատի ունենալով, որ համատեղ սեփականության մասնակցի համաձայնությունը գործարք չէ, այլ անհրաժեշտ նախապայման է գործարքի կնքման համար՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նվիրատվության դեպքում մյուս մասնակցի համաձայնության ձևի նկատմամբ ենթակա չեն կիրառման գործարքի ձևի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, այլ կերպ ասած՝ նման համաձայնության արտահայտման համար պարտադիր չէ նոտարական ձևի պահպանման պահանջը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և



փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տես Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Եվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԳ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տես Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Սույն գործով չեն վիճարկվել հետևյալ փաստերը. Սոնա Շիրինյանը և Ալբերտ Այնաջյանն ամուսնացել են 1999 թվականին, նրանց ամուսնությունը գրանցվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) մարմնում, Սոնա Շիրինյանը և Ալբերտ Այնաջյանը դատական կարգով ամուսնալուծվել են 2011 թվականին:

Սույն գործում առկա ապացույցների համաձայն՝ 23.09.2008 թվականին կնքված բնակարանի առուվաճառքի պայմանագրով վաճառողներ Արման Անդրեասյանը և Գարիկ Անդրեասյանը վաճառել են, իսկ գնորդ Սոնա Շիրինյանը որպես սեփականություն ձեռք է բերել Երևան քաղաքի Բաֆֆու 77-րդ շենքի թիվ 14 հասցեում գտնվող բնակարանը: 13.10.2008 թվականին կնքված բնակարանի նվիրատվության պայմանագրով նվիրատու Սոնա Շիրինյանը պարտավորվել է նվիրատու Լուսինե Շիրինյանի սեփականությանն անհատույց հանձնել Երևանի Բաֆֆու 77-րդ շենքի թիվ 14 հասցեում գտնվող բնակարանը: Սեփականության իրավունքի պետական գրանցման 29.10.2008 թվականի թիվ 2622443 վկայականի համաձայն՝ Երևանի Բաֆֆու 77-րդ շենքի թիվ 14 բնակարանի նկատմամբ գրանցվել է Լուսինե Շիրինյանի սեփականության իրավունքը: Սոնա Շիրինյանի՝ 13.10.2008 թվականին նոտարական կարգով վավերացված հայտարարության համաձայն՝ բնակարանը ձեռք բերելու պահին ինքն ամուսնացած չի եղել, այդ գույքի նկատմամբ այլ անձինք չունեն սեփականության կամ այլ իրավունքներ:

Սույն գործով Դատարանը մերժել է հայցապահանջն այն հիմնավորմամբ, որ հայցվորը տեղյակ է եղել նվիրատվության գործարքի մասին և 2008 թվականից մինչև դատարան դիմելու օրը միջոցներ չի ձեռնարկել վիճելի գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու, գրանցելու, այլ անձանց ոտնձգություններից պաշտպանելու, այսինքն՝ սեփականատիրոջ իր իրավագործություններն իրականացնելու ուղղությամբ, որպիսի հանգամանքը վկայում է նրա կողմից իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին: Դատարանը, **գնահատելով վկայի ցուցմունքները**, հանգել է այն եզրակացության, որ հայցվորը, իմանալով գործարքի մասին, ներկա գտնվելով նոտարական գրասենյակում, արդեն իսկ տվել է իր համաձայնությունը նման գործարքի կնքման համար և իր գործողություններով հրաժարվել է իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը, արձանագրել է, որ համատեղ սեփականատիրոջ համաձայնությունը՝ համատեղ սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման վերաբերյալ, որպես միակողմ գործարք, նույնպես **պետք է ձևակերպվեր գրավոր** և վավերացվեր նոտարական կարգով, ինչը, սակայն, բացակայում է: Ավելին, նոտարական գրասենյակում Սոնա Շիրինյանը հայտարարություն է տվել, որ նշված գույքը ձեռք բերելու պահին ամուսնացած չի եղել, որպեսզի դրանով շրջանցի համատեղ սեփականություն հանդիսացող գույքի օտարման արգելք հանդիսացող համասեփականատիրոջ համաձայնությունը: Հետևաբար բողոքում նշված այն հիմքը, թե Դատարանը վկայի ցուցմունքներով չէր կարող պարզել գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքի առկայությունը, այն է՝ համասեփականատիրոջ համաձայնությունը, հիմնավոր է, քանի որ այն կարող էր հաստատվել բացառապես գրավոր ձևակերպված, ստորագրված և նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ: Մինչդեռ ամուսնու՝ նոտարական գրասենյակի բակում գտնվելու հանգամանքը, եթե նույնիսկ դա այդպես է, ինքնին չի նշանակում, որ ամուսինը համաձայն է եղել համատեղ սեփականություն հանդիսացող գույքը նվիրելու հարցում: Վերոգրյալի հիման

վրա Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ նվիրատվության պայմանագիրը ենթակա է անվավեր ճանաչման՝ հաշվի առնելով այն, որ պայմանագրի մյուս կողմ հանդիսացող Սոնա Բոդյանի (Շիրիյան) քույրն ակնհայտորեն պետք է իմանար իր քրոջ ամուսնության մեջ գտնվելու մասին, ինչպես նաև ամուսնու համաձայնության անհրաժեշտության մասին:

Վերոնշյալ վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով ի հավաստումն Ալբերտ Այնաջյանի կողմից վիճելի գործարքի կնքման համար տրված համաձայնության՝ վկայակոչվել է վկա Բաբկեն Օհանյանի ցուցմունքը, որը Վերաքննիչ դատարանի կողմից որակվել է որպես անթույլատրելի ապացույց:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինելու համար տրված համաձայնության՝ գործարքի կնքման նախապայման լինելու և դրա ձևի վերաբերյալ օրենսդրական հատուկ կարգավորում նախատեսված չլինելու պարագայում կիրառելի չեն Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված ապացուցման միջոցների սահմանափակումները: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկայի ցուցմունքը սույն գործով թույլատրելի ապացույց էր և ենթակա էր գնահատման գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի վերաբերյալ տեղեկություն բովանդակելու տեսանկյունից: Մասնավորապես՝ վկայի ցուցմունքի համաձայն՝ Ալբերտ Այնաջյանը տեղյակ է եղել, որ վիճելի գույքը ձեռք է բերվել Լուսինե Շիրիյանի համար, սակայն հաշվի առնելով, որ վերջինս գույքը ձեռք բերելու պահին խնդիրներ է ունեցել ամուսնու հետ, գործարքը կնքվել է Լուսինե Շիրիյանի քրոջ՝ Սոնա Շիրիյանի անվամբ: Համաձայն վկայի ցուցմունքի՝ Ալբերտ Այնաջյանը խուսափել է միջամտել Լուսինե Շիրիյանի և Սոնա Շիրիյանի հարաբերություններին՝ հայտնելով, որ կարող են գործարքից ծագող իրավունքները գրանցել այնպես, ինչպես ցանկանում են: Վկան հայտնել է, որ Ալբերտ Այնաջյանը քաջատեղյակ է եղել, որ բնակարանը Լուսինե Շիրիյանի համար է ձեռք բերվել: Վկան միաժամանակ հայտնել է, որ Ալբերտ Այնաջյանը գործարքը կնքելիս գտնվել է նոտարական գրասենյակի բակում, սակայն ի պատասխան գործարքի կողմերի, ինչպես նաև վկայի (ով նոտարական գրասենյակ է գնացել կողմերին օգնելու փաստաթղթերի հարցում) առաջարկին՝ ներս մտնելու և մասնակցելու գործարքի կնքմանը՝ համաձայնություն տալու միջոցով, Ալբերտ Այնաջյանը հրաժարվել է ներս մտնել՝ հայտնելով, որ ինչպես ցանկանում են, կարող են գրանցել, որից հետո էլ Սոնա Շիրիյանը տվել է հայտարարություն՝ ամուսնացած չլինելու մասին, որպեսզի հնարավոր լինի կնքել գործարքը:

Վկայի ցուցմունքի գնահատման արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ այն տեղեկություն է բովանդակում սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին, հետևաբար այն նաև վերաբերելի ապացույց է: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով միայն վկայի ցուցմունքը բավարար չէ համատեղ սեփականության մյուս մասնակցի համաձայնության առկայության փաստը հաստատված համարելու համար՝ հետևյալ հիմնավորմամբ.

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Սույն գործով Դատարանը, որպես Ալբերտ Այնաջյանի համաձայնության առկայությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ և բավարար ապացույց, վճռում գնահատել է միայն վկայի ցուցմունքը: Մինչդեռ նշված ապացույցի բովանդակության վերլուծությունից հետևում է, որ վկան հստակ և որոշակի ցուցմունք չի տվել այն մասին, որ Ալբերտ Այնաջյանը որևէ ձևով տվել է իր համաձայնությունը նվիրատվության գործարք կնքելու համար: Վկայի ցուցմունքից կարելի է միայն նման ենթադրություն անել, ընդ որում, կարելի է ենթադրություն անել նաև հակառակի մասին:

Նման պայմաններում վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով միայն վկայի ցուցմունքը բավարար չէր գործարքի կնքման նախապայման հանդիսացող համաձայնության առկայության փաստը հաստատված համարելու համար: Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ՝ վկայի ցուցմունքը միայն գործում առկա այլ ապացույցների համակցության մեջ գնահատվելու պարագայում կարող է թույլ տալ եզրահանգումներ անել այն մասին՝ արդյոք Ալբերտ Այնստայնի գործողությունները (անգործությունը) միտված եղել են նվիրատվության գործարքի կնքմանը համաձայնություն տալուն, թե ոչ:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չի իրականացվել ապացույցների լրիվ և բազմակողմանի հետազոտություն և գնահատում, որպիսի պարագայում առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

*Նշված պարճատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

### **5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից, իսկ նույն կետի «բ» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է ոչ գույքային պահանջի գործերով՝ բազային տուրքի 20-պատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, **պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում**, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Սույն գործով Սոնա Բորյանը (Շիրինյան) և Լուսինե Շիրինյանը վճարել են բողոքի համար վճարել են 20.000 ՀՀ դրամ՝ միաժամանակ միջնորդելով հետաձգել պակաս վճարված պետական տուրքի վճարումը: ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատը, բավարարելով պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգելու մասին բողոք բերած անձանց միջնորդությունը, 19.08.2015 թվականի որոշմամբ հետաձգել է վճարել բողոքի համար սահմանված պետական տուրքի չվճարված մասի վճարումը:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճարել դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերգորյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա–Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի, այդ թվում՝ ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.08.2015 թվականի որոշմամբ հետաձգված պակաս վճարված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/1149/02/12**  
**2016 թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/1149/02/12

Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան

Դատավորներ՝ Ն. Բարսեղյան

Մ. Հարթենյան

#### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22-ին դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) ընդդեմ Հենրիկ Սարգսյանի, երրորդ անձ ՀՀ կառավարության ատրնեներ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պետությանը պատճառված վնասը հատուցելու պահանջի մասին,

#### ՊԱՐԶԵՑ

##### **1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Դատախազությունը պահանջել է Հենրիկ Սարգսյանից բռնազանձել 21.699.750 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված վնաս:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Հովհաննիսյան) 18.10.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.02.2014 թվականի որոշմամբ (դատավորներ՝ Տ. Նազարյան, Կ. Հակոբյան, Ի. Վարդանյան) Հենրիկ Սարգսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 18.10.2013 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.03.2014 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.02.2014 թվականի որոշման դեմ Դատախազության վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Կատվայան) (այսուհետ՝ Դատարան) 30.09.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.12.2014 թվականի որոշմամբ Դատախազության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.09.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 337-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով այն, որ պետությունն իր իրավասու մարմնի միջոցով իր իրավունքի խախտման մասին իմացել է մինչև 01.01.2009 թվականը, հաշվի չի առել, որ Դատախազության կողմից հայցը հարուցվել է «Աերո Վան» ՍՊԸ-ի հիմնադիր և տնօրեն Հենրիկ Սարգսյանի դեմ, որը չարամտորեն խուսափել է խոշոր չափերի՝ ընդհանուր 5.005.400 ՀՀ դրամ շահութահարկի գումարը պետական բյուջե վճարելուց և ստեղծել է կանխամտածված սնանկության հատկանիշներ՝ պետությանը պատճառելով խոշոր չափի՝ 21.699.750 ՀՀ դրամի վնաս: Հետևաբար հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբ պետք է համարվեր Դատախազության կողմից նշված փաստի՝ պետական շահերի խախտման մասին իմանալը:

Այսպես, Դատախազության ներկայացրած ապացույցներով հիմնավորվում է, որ պատասխանողի կողմից պետությանը վնաս պատճառելու մասին Դատախազությունն իմացել է միայն Կոմիտեի քննչական վարչության քննիչի կողմից Հենրիկ Սարգսյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցելը մերժելու և նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին 03.08.2012 թվականի որոշմամբ, ինչն էլ պետք է համարել հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.12.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ կառավարության առընթեր հարկային պետական ծառայության օպերատիվ հետախուզական վարչության 3-րդ բաժնի աշխատակիցների կողմից կազմված 03.05.2006 թվականի թիվ 1004686 ստուգման ակտի համաձայն՝ «Աերո Վան» ՍՊԸ-ում իրականացված բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգմամբ արձանագրվել է, որ ընկերության կողմից արտերկրում իրականացված գործունեության արդյունքում ստացված 25.027.200 ՀՀ դրամի շահույթն ընկերությունը չի ներառել ՀՏ ներկայացված շահութահարկի հաշվարկում, որի հիմքով ընկերությանն առաջադրվել է 5.005.400 ՀՀ դրամ լրացուցիչ գանձման ենթակա շահութահարկի գումար (**հատոր 1-ին, գ.թ. 11-16**).

2) ՀՀ տնտեսական դատարանի 13.02.2007 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Սպանդարյանի հարկային տեսչության հայցն ընդդեմ «Աերո Վան» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է: Վճռվել է «Աերո Վան» ՍՊԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 6.188.800 ՀՀ դրամ՝ որպես շահութահարկի և դրա վրա հաշվարկված տույժերի գումար (**հատոր 1-ին, գ.թ. 17-18**).

3) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա. Ասատրյանի՝ «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մա-

սին» 03.08.2012 թվականի որոշմամբ «Աերո Վան» ՍՊԸ-ի տնօրեն Հենրիկ Սարգսյանի կողմից հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու և անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծման փաստի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ և 193-րդ հոդվածներով քրեական հետապնդում չի իրականացվել՝ համաներման հիմքով: Համաներում կիրառելիս հիմք է ընդունվել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 19.06.2009 թվականի որոշումը: Միաժամանակ նշված որոշմամբ արձանագրվել է, որ «Հենրիկ Սարգսյանը, հանդիսանալով «Աերո Վան» ՍՊԸ-ի հիմնադիրն ու տնօրենը, սեփական շահերից ելնելով, պարտատիրոջ՝ պետության հանդեպ ունեցած պարտավորությունները չկատարելու միջոցով շահույթ ստանալու նպատակով չի վճարել «Աերո Վան» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունները՝ հնարավորություն ունենալով վճարելու դրանք, այսինքն՝ կանխամտածված ձևով ստեղծել է անվճարունակության հատկանիշներ՝ պետությանը պատճառելով խոշոր չափի՝ 21.699.750 ՀՀ դրամի վնաս (15.10.2011 թվականի դրությամբ), այսինքն՝ կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով» (**հատոր 1-ին, գ.թ. 7-8**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հարկային պարտավորությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասի գումարը տնտեսվարող սուբյեկտի տնօրենից (գործադիր մարմնի ղեկավարից) բռնագանձելու պահանջով հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման խնդրի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 337-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. ո՞ր պահից է սկսվում հայցային վաղեմության ընթացքը հարկային պարտավորությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասի գումարը փոխադարձ սուբյեկտի փոփոխից (գործադիր մարմնի ղեկավարից) բռնագանձելու պահանջով այն դեպքում, երբ փոխադարձ սուբյեկտի փոփոխի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վնասներ հատուցելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափի նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառով անձի կողմից:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է միայն, եթե՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահ

հերի խախտման փաստի մասին, ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել կամ հայց չի ներկայացնում դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո, կամ

2) պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելն օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կամ

3) դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ է դիմել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, կամ

4) հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված է գույքային վնաս, կամ

5) պետական շահերի պաշտպանության հայցը հարուցվում է այլ երկրների դատարաններում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տեղի ունեցող արբիտրաժներում, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն) լիազորում է այլ մարմնի կամ կազմակերպության:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում, դատական պրակտիկայի միասնականությունն ապահովելու նկատառումով, արդեն իսկ անդրադարձել է դատախազության՝ հարկային պարտավորությունները տնտեսվարող սուբյեկտի տնօրենից (գործադիր մարմնի ղեկավարից) բռնագանձելու պահանջի իրավաչափության հարցին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված պետական շահերի պաշտպանության իրավասությունը կոնկրետացվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածում, որտեղ ամրագրված են դատախազության այն լիազորությունները, որոնցով իրականացվելու է պետական շահերի պաշտպանություն: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պետական շահերի պաշտպանության իրականացումը, կախված լիազորությունների բովանդակությունից, ունի իրականացման տարբեր մեխանիզմներ: Այսպես, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատախազությունն օգտվում է դատավարական այն իրավունքներից և կրում է այն պարտականությունները, որոնք ունենալու էր պետական այն մարմինը, ով հայց ներկայացնելու պարտականություն ուներ: Հետևաբար դատախազությունը գրկված չէ վարչական դատավարության կարգով տնտեսվարող սուբյեկտի դեմ հարկային պարտավորությունների կատարմանը պարտավորեցնելու հայց ներկայացնելու հնարավորությունից, եթե պետական իրավասու մարմինը ցուցաբերում է անգործություն կամ դիմել է դատախազությանը նման հայց ներկայացնելու միջնորդությամբ: Անդրադառնալով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այդ լիազորությունը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ հայց հարուցելու լիազորությամբ օժտված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Նշված իրավակարգավորումը վերլուծելով չվճարված հարկային պարտավորությունների արդյունքում պետությանը պատճառված վնասը հատուցելու խնդրի համատեքստում, ինչպես նաև հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հիման վրա հարուցված քրեական գործի կարճման պարագայում արարքի՝ որպես հանցագործության վերաբերյալ խոսք լինել չի կարող, մինչդեռ քաղաքացիաիրավական հարաբերությունը (վնաս պատճառելու հիմքով ծագող իրավահարաբերությունը) շարունակում է գոյություն ունենալ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ նման իրավիճակում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի (կամ պատասխանատու պաշտոնատար անձի) կատարած գործողությունների (անգործության) հետևանքով հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում պետությանը պատճառված վնասը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարից բռնագանձելու պահանջ ներկայացնելու լիազորությամբ որևէ պետական մարմին օժտված չէ: Վերոգրյալի արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ դատախազությունն իրավասու է, որպես **պետությանը պատճառված վնասի** հատուցում, հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու հայց ներկայացնել քաղաքացիական դատավարության կարգով (*տես օրինակ, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Վալենտինա Մկրտչյանի թիվ ԵԿԿ/3058/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):



Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից սվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու պահանջի հիմքում ընկած իրավահարաբերությունը նախկինում կայացրած որոշումներում որակվել է որպես պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերություն, իսկ վնասի հատուցման իրավահարաբերության նկատմամբ, որպես քաղաքացիաիրավական հարաբերության, կիրառելի են քաղաքացիական իրավունքի ընդհանուր ինստիտուտները, այդ թվում՝ նաև՝ հայցային վաղեմության ինստիտուտը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*տե՛ս Ռազմիկ, Միրանուշ, Կարեն, Տիգրան Մանուչարյանները և Կարինե Հարությունյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, Երևանի քաղաքապետարանի թիվ ԵԿԿ/0502/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Հայցային վաղեմության գործնական կիրառության համար կարևոր նշանակություն ունի հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից հետևում է, որ հայց հարուցելու իրավունքը ծագած է համարվում միայն այն պահին, երբ *իրավագոր անձն* իմացել է կամ պետք է իմացած լիներ իրավախախտման փաստի մասին: Հետևաբար հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելու համար էական են իրավունքի խախտման առկայությունը և դրա մասին շահագրգիռ անձի իմանալու կամ այդպիսի հավանականության առկայության պահը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ յուրաքանչյուր դեպքում հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի փաստական հանգամանքները, վիճելի իրավահարաբերության բնույթը և սուբյեկտային կազմը: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է օրենսդրական կարգավորման տրամաբանությունից: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հայցային վաղեմության ժամկետի լրանալը սահմանել է որպես հայցը մերժելու հիմք, ինչը նշանակում է, որ անգամ այն դեպքում, երբ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմում է ներկայացրել քաղաքացիական դատավարության սկզբնական փուլերում (գործը դա-

տաքննության նախապատրաստելու), դատարանը, այնուամենայնիվ, պետք է գործը քննի ըստ էության և վերջնական դատական ակտում զնահատական տա հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ միջնորդությանը: Օրենսդրի այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցային վաղեմության ինստիտուտի առանձին տարրերի՝ կիրառելի ժամկետի (ընդհանուր, կրճատ կամ երկար), այդ ժամկետի հաշվարկի սկզբի, ընդհատման կամ կասեցման հարցերը որոշ դեպքերում հնարավոր է պարզել միայն վիճելի իրավահարաբերության որոշակիացման արդյունքում, այսինքն՝ պարզելով վիճելի իրավահարաբերության տեսակը (վարձակալության, հողային, ընտանեկան, աշխատանքային և այլ), մասնակիցների շրջանակը, իրավունքների և պարտականությունների ծավալը:

Հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար առավել կարևորվում է իրավագոր անձի կարգավիճակը: Քաղաքացիական իրավահարաբերություններում, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից գատ, որպես իրավագոր անձ կարող է հանդես գալ նաև պետությունը: Վերջինս քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում է այդ նպատակի համար լիազորված պետական մարմինների միջոցով: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ որպես իրավագոր անձ քաղաքացիական դատավարության կարգով դատարան է դիմում պետությունը՝ ի դեմս պետական մարմնի, հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է նախևառաջ պարզել՝ արդյոք տվյալ պետական մարմինն իրավասու է վիճելի իրավահարաբերության շրջանակներում ներկայացնելու պետության շահերը, և երկրորդ՝ երբ է վերջինս բացահայտել կամ պետք է բացահայտած լիներ պետական շահի խախտման փաստը: Ընդ որում, թե՛ առաջին և թե՛ երկրորդ հարցադրումների շրջանակներում պետք է ուսումնասիրել տվյալ պետական մարմնի՝ օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակը:

Վճռաբեկ դատարանը սույն որոշման շրջանակներում արդեն իսկ արձանագրել է, որ հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու պահանջի հիմքում ընկած իրավահարաբերությունը պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերություն է, իսկ այդ իրավահարաբերությունից բխող պահանջի իրավունքը պատկանում է դատախազությանը, որը վերջինս կարող է իրացնել քաղաքացիադատավարական կարգով հայց հարուցելով: Այսինքն՝ դատարանում վերը նշված իրավահարաբերությունից բխող պետական շահը ներկայացնելու *իրավասու մարմինը* դատախազությունն է, իսկ թե երբ է վերջինս բացահայտել կամ պետք է բացահայտած լիներ պետական շահի խախտման փաստը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել հայցի փաստական հանգամանքները և ի հիմնավորումն դրանց՝ դատարան ներկայացված ապացույցները:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այն դեպքերում, երբ **պետությանը պատճառված վնասի** հատուցման հայցը ներկայացվել է տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի դեմ, ում լիազորությունն է հարկային հաշվետվությունների ներկայացումը, անհրաժեշտ է ապացուցել տվյալ անձի կողմից ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության կատարած լինելու փաստի առկայությունը, որպիսին հիմնավորվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված ապացույցներով:

Վերոնշյալ եզրահանգումների համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքը: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը նշել է, որ չնայած քաղաքացիական պատասխանատվության ծագման պայմանները հանգամանքների բերումով կարող են որոշ դեպքերում համընկնել քրեական պատասխանատվության առաջացման պայմանների հետ, այդուհանդերձ, քաղաքացիաիրավական հայցը պետք է լուծվի քաղաքացիական պարտավորական իրավունքի սկզբունքների հիման վրա: Քրեական գործով իրականացված դատավարության արդյունքը որոշիչ չէ վնասի հատուցման վերաբերյալ գործով: Տուժողն իրավունք ունի պահանջելու վնասների հատուցում անկախ այն հանգամանքից՝ պատասխանողը դատապարտվել է, թե արդարացվել, և փոխհատուցման հարցը պետք է դառնա իրավական ինքնուրույն զնահատման առարկա, որի պարագայում ապացուցման չափորոշիչներն էականորեն տարբերվում են քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերից: Դատարանի կարծիքով այն, որ միևնույն արարքը կարող է առաջացնել քրեական գործի հետ նույնական (ընդհանուր) հանգամանքներից (փաստերից)

բխող վնասը հատուցելու քաղաքացիաիրավական պարտականություն, բավարար հիմքեր չի ստեղծում անձի նկատմամբ կիրառված քաղաքացիաիրավական պատասխանատվությունը դիտել նաև «քրեական պատիժ» (տե՛ս *Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի գործով Եվրոպական դատարանի 11.02.2003 թվականի վճիռը*, պարբ. 38):

Միաժամանակ հաշվի առնելով նմանատիպ գործերով դատական պրակտիկան՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատախազությունը, իրացնելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով իրեն վերապահված լիազորությունը, հայց է հարուցել տնտեսվարող սուբյեկտի տնօրենի դեմ՝ չվճարված կամ պակաս վճարված հարկային պարտավորությունները որպես պետության պատճառված վնաս գանձելու պահանջի մասին, և պահանջի փաստական հիմքում վկայակոչել է համապատասխան սուբյեկտի՝ նշված արարքի համար համաներում կիրառելու, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հիմքով ազատված լինելու փաստը, իսկ ի հիմնավորումն այդ փաստի՝ ներկայացրել է քրեական դատավարության կարգով կայացված համապատասխան որոշում, հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելու համար անհրաժեշտ է պարզել տվյալ որոշման վերաբերյալ դատախազության իրազեկման պահը, որպիսի փաստը ենթակա է պարզման՝ հաշվի առնելով այդ որոշման կայացման ընթացակարգում դատախազության լիազորությունների շրջանակը:

Սույն գործով դիմելով դատարան՝ Դատախազությունը պահանջել է պատասխանող Հենրիկ Սարգսյանից, որպես **պետությանը պատճառված վնասի** հատուցում, բռնագանձել 21.699.750 ՀՀ դրամ: Ի հիմնավորումն հայցապահանջի՝ Դատախազությունը ներկայացրել է Կոմիտեի քննչական վարչության՝ «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» 03.08.2012 թվականի որոշումը, համաձայն որի՝ «Աերո Վան» ՍՊԸ-ի տնօրեն Հենրիկ Սարգսյանի կողմից հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու և անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծման փաստի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ և 193-րդ հոդվածներով քրեական հետապնդում չի իրականացվել՝ համաներման հիմքով: Միաժամանակ նշված որոշմամբ արձանագրվել է, որ «Հենրիկ Սարգսյանը ... **կանխամտածված ձևով ստեղծել է անվճարունակության հատկանիշներ՝ պետությանը պատճառելով խոշոր չափի՝ 21.699.750 ՀՀ դրամի վնաս, այսինքն՝ կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով**»:

Սույն գործով Դատարանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 23.10.2008 թվականի գրությունը (հատոր 2-րդ, գ.թ. 89), ըստ որի՝ ՀՀ օդանավերի պետական ռեգիստրում «Աերո Վան» ՍՊԸ-ի անվամբ գրանցված օդանավեր չկան, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ի 16.04.2007 թվականի գրությունը (հատոր 2-րդ, գ.թ. 85), համաձայն որի՝ «Աերո Վան» ՍՊԸ-ի անձնական տվյալներով սեփականատեր գրանցված չէ, հանգել է այն հետևության, որ վերը նշված փաստաթղթերից պարզ է դառնում, որ պետությունն իմացել է կամ պետք է իմանար, որ ընկերությունից հարկային պարտավորությունների գումարի գանձումն անհնարին էր դեռևս 2006–2007 թվականներին, մինչդեռ հայցվորը դատարան է դիմել 19.12.2012 թվականին՝ բաց թողնելով խախտված իրավունքի պաշտպանության հայցով դատարան դիմելու, այսինքն՝ հայցային վաղեմության օրենքով սահմանված ժամկետը:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Դատախազության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, ըստ էության, հիմնավոր է համարել վերը նշված պատճառաբանությունները: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հավելել է, որ «էական չէ, թե պետության որ մարմինն է տեղեկացված եղել այդ իրավունքի խախտման մասին՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը, ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ի դեմս ԴԱՀԿ ծառայության, թե ՀՀ գլխավոր դատախազությունը, որն օժտված է նման կարգի հայցեր հարուցելու իրավասությամբ: Այդ հարցն ավելի շատ առնչվում է ՀՀ պետական մարմինների փոխգործակցության խնդիրներին և որևէ կերպ չի կարող անդրադառնալ քաղաքացու իրավունքներին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի կիրառմանը»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարաններն անտեսել են վիճելի իրավահարաբերության բնույթը, առանձնահատկությունները, ինչի արդյունքում անտեսել են նաև այն հանգամանքը, որ նշված իրավահարաբերություններում ՀՀ վճռաբեկ դատարանի՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում որպես իրավագործ անձ հանդես է գալիս դատախազությունը: Հետևաբար Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ «էական չէ, թե պետության որ մարմինն է տեղեկացված եղել այդ իրավունքի խախտման մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը, ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ի դեմս ԴԱՀԿ ծառայության, թե ՀՀ գլխավոր դատախազությունը, որն օժտված է նման կարգի հայցեր հարուցելու իրավասությամբ» անհիմն է, քանի որ հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման համար գործնական նշանակություն ունի միայն *իրավագործ անձի* տեղեկանալու հանգամանքը, որպիսին սույն գործով Դատախազությունն է:

Անդրադառնալով այն հարցին, թե երբ է իմացել կամ պետք է իմացած լիներ Դատախազությունը իրավախախտման փաստի մասին, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով հայցի փաստական հիմքում վկայակոչված հանգամանքը և ի հիմնավորումն այդ հանգամանքի ներկայացված ապացույցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել, և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե ընդունվել է համաներման ակտ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է ..., վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման **պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է համապատասխան դատախազին:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել նույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ **հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:**

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատախազությունն՝ ի դեմս դատախազի, լինելով քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող իրավասու պետական մարմին, օրենսդրորեն օժտված է նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը ստուգելու, այսինքն՝ այդ որոշումը վերացնելու կամ դրա օրինականությունը հաստատելու լիազորությամբ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պետությունը՝ ի դեմս Դատախազության, տնտեսվարող սուբյեկտի տնօրենի կողմից պետության գույքային շահերի խախտման ենթադրյալ փաստի մասին իմացել կամ պետք է իմանար քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետում համապատասխան դատախազի կողմից ստանալու պահից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները պատշաճ քննություն չեն իրականացրել՝ սույն գործով հայցային վաղեմության ժամկետի հոսքի սկիզբը ճիշտ որոշելու համար, ինչի արդյունքում և սխալ հետևության են հանգել սույն գործով հայցային վաղեմության կիրառելիության վերաբերյալ:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար, որպիսի քննության ընթացքում անհրաժեշտ է պարզել հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը:

### **5. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարել բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճարել բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճարել դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճարել բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա–Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/2775/02/14**  
դատարանի որոշում 2016 թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/2775/02/14  
Նախագահող դատավոր՝ Գ. Կարախանյան  
Դատավորներ՝ Ն. Տավարացյան  
Ա. Պետրոսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին դռնբաց դատական նիստում, քննելով Արթուր Իչմիլյանի ներկայացուցիչ Մարտուն Մկոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.06.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Նաիրի Ինչուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Արթուր Իչմիլյանի՝ գործարար համբավն արատավորող զրպարտիչ արտահայտության վերացման և գործարար համբավին պատճառված վնասի փոխհատուցում վճարելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Արթուր Իչմիլյանին՝ փոխհատուցելու Ընկերության գործարար համբավին պատճառված վնասը՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, վերացնել վերջինիս մեքենայի վրա առկա՝ Ընկերությանը զրպարտող գրությունը և ապրանքային նշանը, ինչպես նաև Արթուր Իչմիլյանից բռնագանձել նախապես վճարված 4.000 ՀՀ դրամ պետական տուրքը:  
Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 03.03.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Արթուր Իչմիլյանին պարտավորեցնել փոխհատուցել Ընկերության գործարար համբավին պատճառված վնասը՝ 1.800.000 ՀՀ դրամի չափով, վերացնել «BMW 525I» մակնիշի «19 ՕՕ 264» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետնապակու վրա գետեղված «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ» արտահայտությունը և Ընկերության ապրանքային նշանը, Արթուր Իչմիլյանից հոգուտ Ընկերության բռնագանձել 36.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջի մասով պետական տուրքի փոխհատուցում, Ընկերությունից հոգուտ Արթուր Իչմիլյանի բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրություն:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.06.2015 թվականի որոշմամբ Արթուր Իչմիլյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.03.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արթուր Իչմիլյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը, 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերությունն ընդունել է այն փաստը, որ իր հասցեին գրպարտիչ արտահայտության մասին իմացել է 12.08.2014 թվականին, սակայն դատարան է դիմել 16.10.2014 թվականին՝ բաց թողնելով դատարան դիմելու օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ սույն գործով որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնման սուբյեկտ հանդես է եկել Ընկերությունը, որը չի հանդիսանում ֆիզիկական անձ, իսկ բաց թողնված հայցային վաղեմության ժամկետի վերականգնման սուբյեկտ կարող է հանդես գալ բացառապես ֆիզիկական անձը: Բացի այդ, Ընկերությունը, 12.08.2014 թվականին իմանալով իր հասցեին կատարված գրպարտչական գործողությունների մասին, օրենքով սահմանված կարգով և ժամկետում դատարան դիմելու փոխարեն իր իրավունքների պաշտպանությունը փորձել է իրականացնել արտադատական կարգով, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված որոշումներով արտահայտված դիրքորոշումների համաձայն՝ հարգելի ճանաչելու համար հիմք հանդիսացող հանգամանքները պետք է լինեն այնպիսին, որ **գրկեն անձին** դատարան դիմելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի և 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետի մեկնաբանությունները հակասում են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով 02.04.2010 թվականին, թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով 27.04.2012 թվականին, թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով 27.04.2012 թվականին, թիվ ԵԿԴ/3124/02/11 քաղաքացիական գործով 25.12.2012 թվականին և թիվ ԱՎԴ3/0144/02/12 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականին կայացված որոշումներում տվյալ նորմերին տրված մեկնաբանություններին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.06.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Դատարանի 03.03.2015 թվականի վճռով հայցադիմումի բավարարված մասը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Արթուր Իչմիլյանը վերաքննիչ բողոքում չի վկայակոչել այն փաստը, որ Ընկերությունը խախտել է դատարան դիմելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը: Վերաքննիչ բողոքը բերվել է միայն այն պատճառաբանությամբ, որ չի պահպանվել դատարան դիմելու վեցամսյա ժամկետը, և որ տարածված տեղեկությունը չունի գրպարտության հատկանիշներ, ուստի վաղեմության մեկամսյա ժամկետի քննարկման մասով վճռաբեկ բողոք ընդհանրապես չէր կարող ներկայացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը վերաբերում է հայցվորի անձի հետ կապված հանգամանքներին, որպիսի հանգամանք է նաև Ընկերության կողմից իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար ՀՀ ոստիկանապետին դիմելը, որը կարող է ընդգրկվել նշված հոդվածում ներառված «և այլն» թվարկման մեջ:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետ Ա. Գալստյանին հասցեագրված 01.09.2014 թվականի թիվ Ն/ՏՄ-06/1-5070 գրությամբ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Արթուր Իշմիրյանին՝ վերացնել կանխամտածված կեղծ գովազդը և լուծել «BMW 525I» մակնիշի «19 ՕՕ 264» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սեփականատիրոջ վարչական պատասխանատվության հարցը (**հատոր 1-ին, գ.թ. 24**):

2) Ընկերությանն ուղղված 19.09.2014 թվականի թիվ 17-2-15486 գրությամբ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը նշել է, որ կանխամտածված կեղծ գովազդի և (կամ) անբարեխիղճ գովազդի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի որևէ նորմով պատասխանատվություն նախատեսված չէ (**հատոր 1-ին, գ.թ. 25**):

3) 16.10.2014 թվականին Ընկերության կողմից Դատարան ներկայացված հայցադիմումում Ընկերությունը նշել է, որ 12.08.2014 թվականին իրենց աշխատակիցները Երևանի փողոցներից մեկով երթևեկելիս նկատել են Արթուր Իշմիրյանին պատկանող «BMW 525I» մակնիշի «19 ՕՕ 264» հաշվառման համարանիշի ավտոմեքենան, որի հետնապակու վրա զետեղված է եղել «ՆԱԻԻԻ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ» արտահայտությունը և Ընկերության ապրանքային նշանը:

Միաժամանակ Ընկերությունը միջնորդել է հարգելի համարել Դատարան դիմելու մեկամսյա ժամկետի բացթողումն այն հիմնավորմամբ, որ 12.08.2014 թվականին տեղեկանալով իր հասցեին կատարված զրպարտչական գործողությունների մասին՝ Ընկերությունը 01.09.2014 թվականին դիմել է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը, որից պատասխանը ստացվել է շուրջ մեկ ամիս անց՝ 24.09.2014 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 3-7**):

4) 23.12.2014 թվականին Դատարանին հասցեագրված դիմումով Արթուր Իշմիրյանի ներկայացուցիչ Դավիթ Սրապիոնյանը միջնորդել է կիրառել հայցային վաղեմություն և կայացնել հայցը մերժելու մասին վճիռ (**հատոր 2-րդ, գ.թ. 4-5**):

5) Արթուր Իշմիրյանի ներկայացուցիչ Դավիթ Սրապիոնյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 03.03.2015 թվականի վճիռի դեմ սաև այն հիմքով, որ հայցվորը բաց է թողել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետով սահմանված մեկամսյա ժամկետը՝ Դատարան դիմելով տեղեկանալու պահից ավելի, քան երկու ամիս անց (**հատոր 2-րդ, գ.թ. 81-82**):

**4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարճրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի և 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետի մեկնաբանությունը հակասում է թիվ ԵԵԴ/0723/02/09 քաղաքացիական գործով 02.04.2010 թվականի, թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով 27.04.2012 թվականի, թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով 27.04.2012 թվականի, թիվ ԵԿԴ/3124/02/11 քաղաքացիական գործով 25.12.2012 թվականի և թիվ ԱՎԴ3/0144/02/12 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տվյալ նորմերին տրված մեկնաբանությամբ,

2) վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի և 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:



Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերկյալ իրավական հարցադրումներին:

1) վիրավորանքի կամ գրպարտության դեպքում անձի կողմից իր պարտիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու համար դատարանն դիմելու ժամկետներն ինչպես են հարաբերակցվում միմյանց և հայցային վաղեմության ժամկետի հետ,

2) արդյո՞ք իրավաբանական անձը կարող է ներկայացնել հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն:

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ գրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ գրպարտություն կատարած անձի դեմ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ գրպարտության մասին անձին հայտնի դատնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ գրպարտության պահից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ բացառիկ դեպքերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հաշվառմամբ հարգելի է ճանաչում հայցային վաղեմության ժամկետի բացթողումը, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իրավակարգավորմանը, արձանագրել է, որ օրենսդիրը հնարավորություն է տվել շահագրգիռ անձին դատարան դիմելու բոլոր դեպքերում՝ ոչ ուշ, քան մինչև վիրավորանքի կամ գրպարտության պահից վեց ամիսը լրանալը: ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ գրպարտությունը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ անձը տեղեկանում է գրպարտության կամ վիրավորանքի մասին վեց ամիսը լրանալուց հետո, բաց է թողնվում հայցային վաղեմության ժամկետը (տե՛ս Թայթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոնշյալ ժամկետներն այնպիսի ժամկետներ են, որոնց ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար **այդ ժամկետներն իրենց բնույթով համապատասխանում են հայցային վաղեմության ժամկետին**, և դրանց նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության վերաբերյալ կանոնակարգումները (տե՛ս Վանո Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի, երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը):

Զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ մեկամսյա ժամկետը, որպես հայցային վաղեմության ժամկետ ներառված լինելով վեցամսյա ժամկետում, ենթակա է վերականգնման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված կարգով: Մինչդեռ վեցամսյա ժամկետի բացթողման դեպքում այն վերականգնման ենթակա չէ: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրական նման ձևակերպումը ենթադրում է, որ վիրավորանքի և գրպարտության

դեպքում դրա տարածման մակարդակը նվազում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում, որից հետո առարկայագուրկ է դառնում նման պահանջի ներկայացումը: Մյուս կողմից հատկանշական է այն, որ բոլոր դեպքերում վեցամսյա ժամկետում հայցի ներկայացումը **դեռևս չի նշանակում հայցային վաղեմության ժամկետի պահպանում**, քանի որ այդ դեպքում իմաստագուրկ է դառնում մեկամսյա ժամկետի նախատեսումը: Ընդհանրացնելով վերոնշյալ եզրահանգումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմության հարց բարձրացնելիս դատարանները **նախևառաջ պետք է գնահատեն վեցամսյա ժամկետի պահպանված լինելու հանգամանքը**, ապա դրա շրջանակներում անդրադառնան մեկամսյա ժամկետի պահպանված լինելու հարցին:

Հայցային վաղեմության ժամկետը բաց թողած լինելու կամ չլինելու փաստի ապացուցումը վիրավորանքի և գրպարտության հետևանքով պատճառված վնասների հատուցման գործերով առանձնահատուկ է այնքանով, որքանով ժամկետի հաշվարկման սկիզբը կապված է տուժողի տեղեկացված լինելու հետ: Այս առումով գրեթե անհնար է պատասխանողի (հայցային վաղեմություն վկայակոչող անձի) կողմից այնպիսի ապացույցների ներկայացումը, որոնք կհաստատեն նշված փաստերի առկայությունը: Այսինքն՝ օբյեկտիվորեն տուժողին է հայտնի կոնկրետ տեղեկատվությունն իրեն հասու լինելու ժամանակը, հետևաբար տուժողի կողմից այլ բան ապացուցված չլինելու դեպքում հայցային վաղեմության սկիզբ է համարվում համապատասխան տեղեկատվության հրապարակման օրը:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման համար անհրաժեշտ փաստերի ապացուցումը կարող է իրականացվել այնպիսի ապացույցներով, որոնք առավել հավանական են դարձնում կոնկրետ փաստի գոյությունը: Եթե ապացուցման պարտականություն կրող կողմը ներկայացրել է բացառապես անտուղակի ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ առավել հավաստի են դարձնում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը, ապա նման ապացույցները չպետք է մերժվեն զուտ այն հիմքով, որ ուղղակի ապացույցներ չեն (*տես Գեղամ Գալստյանը և Նորիկ Պետրոսյանն ընդդեմ Պարույր Հայրիկյանի թիվ ԵԿԴ/3124/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով դատարանին հնարավորություն է ընձեռել հարգելի ճանաչելու հայցային վաղեմության ժամկետի բացթողումը բացառիկ դեպքերում: Ընդ որում, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության միայն այն հանգամանքների պայմաններում, երբ բացառիկ դեպքը կապված է հայցվորի անձի հետ, այն է՝ հայցվորի ծանր հիվանդությունը, անօգնական վիճակը, անգրագիտությունը և այլն: Ավելին, հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե բացթողման պատճառները տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսվա ընթացքում, իսկ եթե հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից, ապա՝ վաղեմության ժամկետի ընթացքում (*տես Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասարղյանի թիվ ԵԿԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Անփոփելով վերոգրյալը՝ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետը հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորում է անձի՝ վիրավորանքի կամ գրպարտության մասին տեղեկացված լինելու պահով: Հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ գրպարտությունը, որպիսի պահից մեկամսյա ժամկետում իրավունքի պաշտպանության վերաբերյալ հայցադիմում դատարան չներկայացնելու դեպքում բաց է թողնվում հայցային վաղեմության ժամկետը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վիրավորանքի կամ գրպարտության հետևանքով անձն իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու համար դատարան կարող է դիմել վիրավորանքի կամ գրպարտության մասին տեղեկանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, ընդ որում, միայն այն դեպքում, եթե վիրավորանքի կամ գրպարտության պահից չի անցել վեց ամսից ավելի: Այլ կերպ ասած՝ մեկամսյա ժամկետը պետք է ընդգրկված լինի վեցամսյա ժամկետի մեջ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վեցամսյա ժամկետի բացթողման դեպքում անձը զրկվում է դատարան դիմելու հնարավորու-

թյունից: Ինչ վերաբերում է մեկամայա ժամկետին, ապա այն ենթակա է վերականգնման վերը նշված հիմքերի առկայության դեպքում:

2) 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման դրույթ է պարունակում նաև 06.12.2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, ինչպես նաև 63-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ:

Համանման դրույթ է պարունակում նաև 06.12.2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածը, որի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: **Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացների ընթացք չի սովորում:** Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայությունը քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*տե՛ս Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Եվրոպական դատարանի վերը նշված դիրքորոշումից հետևում է, որ դատարանի մատչելիության իրավունքը մարմնավորում է ոչ միայն հայց հարուցելու, այլև արդեն իսկ հարուցված հայցով **գործի ըստ էության քննության և լուծման իրավունքը**:

Վճռաբեկ դատարանը, Եվրոպական դատարանի վերոնշյալ դիրքորոշման լույսի ներքո գնահատելով հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հնարավորությունը, գտնում է, որ օրենսդրական այս կառուցակարգն ուղղակիորեն կապված է դատարանի մատչելիության իրավունքի հետ: Մասնավորապես՝ հայցային վաղեմության ժամկետի լրասալը, որի կիրառման մասին դիմել է Վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար, որպիսի պայմաններում դատարան դիմած շահագրգիռ անձը զրկվում է իր պահանջը հարկադրաբար իրականացնելու, իր խախտված իրավունքները դատարանի միջոցով պաշտպանելու հնարավորությունից: Մինչդեռ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը կարող է պայմանավորված լինել նաև օրյեկտիվ հանգամանքներով: Այդ իսկ նկատառումով էլ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածում նախատեսել է հայցային վաղեմության ժամկետի բացթողումը դատարանի կողմից հարգելի ճանաչելու կառուցակարգ: Օրենսդրական նշված դրույթի տառացի մեկնաբանությունից, սակայն, հետևում է, որ նման հնարավորություն վերապահված է միայն քաղաքացի հայցվորին: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԳ-3/0144/02/12 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշմամբ ևս արձանագրել է, որ որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնում հայցող սուբյեկտ կարող են հանդես գալ բացառապես ֆիզիկական անձինք, որպիսի եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքների բնույթով, որոնք օրենսդիրը համարել է հարգելի ճանաչելու հիմք: Վճռաբեկ դատարանը, իրացնելով իրեն վերապահված օրենքի միատեսակ կիրառության ապահովման, իրավունքի զարգացմանը նպաստելու գործառնությունները, գտնում է, որ վերը նշված ընթացակարգը կիրառելի է նաև իրավաբանական անձանց պարագայում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության այն դրույթից, ըստ որի՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներն անձի հիմնական իրավունքներից են, որոնք վերապահված են նաև իրավաբանական անձանց: Այսպես, օրենսդիրը, իրավաբանական անձանց դասելով քաղաքացիական իրավունքի սուբյեկտների շարքը, ընձեռնելով քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու, քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու հնարավորություն, միաժամանակ նախատեսել է այդ իրավունքների դատական պաշտպանության կարգ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրելով, որ հայցվորներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք հայց են հարուցել: Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով դատական պաշտպանության իրավունքի իրացման հարցում հայցային վաղեմության ինստիտուտի նշանակությունը, մասնավորապես այն, որ նշված ինստիտուտը որոշակիորեն սահմանափակում է շահագրգիռ անձի դատարանի մատչելիության իրավունքը, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը հարկ է մեկնաբանել վերը նշված սահմանադրաիրավական դրույթների լույսի ներքո, որի արդյունքում իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ իրավաբանական անձը ևս կարող է օգտվել հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հնարավորությունից՝ հաշվի առնելով, որ այն դատարանի մատչելիության իրավունքի իրացման դրսևորումներից մեկն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկով նշել է, որ «հայցային վաղեմության ժամկետի վերականգնում» եզրույթը նշանակում է ոչ թե հայցային վաղեմության ժամկետի հոսքի վերսկսում, այլ անձի խախտված իրավունքների պաշտպանության տրամադրում՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերի առկայության դեպքում: Հայցային վաղեմության ժամկետի վերականգնումը կիրառելի է որպես բացառիկ միջոց, և եթե առկա են մի շարք հանգամանքներ: Նախևառաջ՝ հարգելի համարելու պատճառները պետք է կապված լինեն հայցվորի անձի հետ: Բոլոր այն հանգամանքները, որոնք կապված են այլ անձանց հետ և թեկուզ իրականում խոչընդոտել են հայց-

վորի՝ իր իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելուն, չեն կարող համարվել հարգելի: Երկրորդ՝ հարգելի ճանաչելու համար հիմք հանդիսացող հանգամանքները պետք է լինեն այնպիսին, որ **գրկեն անձին դատարան դիմելու հնարավորությունից:** Ընդ որում, նշված շրջանակում չեն կարող ներառվել այն դեպքերը, երբ անձը, ի վիճակի չլինելով դատարան դիմել անձամբ, ունեցել է ներկայացուցչի միջոցով հանդես գալու հնարավորություն (*լրեն Գազիկ Հարությունյանն ընդդեմ Արա Նահապետյանի թիվ ԱՎԴ3/0144/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո գնահատելով իրավաբանական անձի կողմից հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու հարցը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ իրավաբանական անձի նկատմամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342–րդ հոդվածի իրավակարգավորումը, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածի համատեքստում, միայն այն բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնց պատճառով իրավաբանական անձը **գրկվել է դատարան դիմելու հնարավորությունից:** Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորում է այն, որ օրենսդրի կողմից նման հանգամանքների սպառնիչ ցանկ չի նախատեսվել: Ուստի յուրաքանչյուր դեպքում դատարանների կողմից գնահատման է արժանի տվյալ հանգամանքի՝ իրավաբանական անձի համար դատարան դիմելուն խոչընդոտ հանդիսանալու աստիճանը:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետ Ա. Գալստյանին 01.09.2014 թվականին հասցեագրված թիվ Ն/ՏՄ–06/1–5070 գրությամբ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Արթուր Իչմիլյանին՝ վերացնելու կանխամտածված կեղծ գովազդը և լուծել «BMW 525I» մակնիշի «19 ՕՕ 264» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սեփականատիրոջ վարչական պատասխանատվության հարցը: Ընկերությանն ուղղված 19.09.2014 թվականի թիվ 17–2–15486 գրությամբ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը նշել է, որ կանխամտածված կեղծ գովազդի և (կամ) անբարեխիղճ գովազդի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի որևէ նորմով պատասխանատվություն նախատեսված չէ: 16.10.2014 թվականին Ընկերության կողմից Դատարան ներկայացված հայցադիմումում Ընկերությունը նշել է, որ 12.08.2014 թվականին իրենց աշխատակիցները Երևանի փողոցներից մեկով երթնելելիս նկատել են Արթուր Իչմիլյանին պատկանող «BMW 525I» մակնիշի «19 ՕՕ 264» հաշվառման համարանիշի ավտոմեքենան, որի հետևապակու վրա գետեղված է եղել «ՆԱԻԻԻ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ ԶԻ ՓՈՒՏՀԱՏՈՒՑՈՒՄ» արտահայտությունը և Ընկերության ապրանքային նշանը: Միաժամանակ Ընկերությունը միջնորդել է հարգելի համարել Դատարան դիմելու մեկամյա ժամկետի բացթողումը: 23.12.2014 թվականին Դատարանին հասցեագրված դիմումով Արթուր Իչմիլյանի ներկայացուցիչ Դավիթ Սրապիտնյանը միջնորդել է կիրառել հայցային վաղեմություն և կայացնել հայցը մերժելու մասին վճիռ:

Սույն գործով Դատարանը հայցը մասնակիորեն բավարարելու և հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ մինչ Դատարան դիմելն Ընկերությունը ձեռնարկել է ակտիվ քայլեր իր իրավունքների պաշտպանության համար, ուստի մեկամյա ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը հիմնավոր է, և բացի այդ, հայց ներկայացնելու վեցամսյա ժամկետն Ընկերության կողմից պահպանվել է, որի պարագայում Արթուր Իչմիլյանի միջնորդությունն անհիմն է:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, ըստ էության հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք սույն գործով բաց է թողնվել հայցային վաղեմության ժամկետը: Գնահատելով դա-

տարան դիմելու համար սահմանված հայցային վաղեմության ժամկետի պահպանված լինելու հարցը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով չի ներկայացվել որևէ ապացույց գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածելու ստույգ օրը հաստատված համարելու համար: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այլ բան ապացուցված չլինելու պայմաններում վեցամսյա ժամկետի սկիզբ պետք է համարել Ընկերության կողմից այդ տեղեկությունների մասին տեղեկանելու օրը՝ 12.08.2014 թվականը:

Տվյալ դեպքում իր գործարար համբավն արատավորող տեղեկությունների տարածման մասին տեղեկացված լինելով դեռևս **12.08.2014 թվականին**՝ Ընկերությունը Դատարան է դիմել միայն **16.10.2014 թվականին**՝ տեղեկացված լինելուց հետո ավելի, քան երկու ամիս անց, հետևաբար բաց է թողել հայցային վաղեմության մեկամսյա ժամկետը:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք Ընկերությունը կարող էր ներկայացնել հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, և արդյոք այդ միջնորդությունը ենթակա էր բավարարման, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունը կարող էր ներկայացնել հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, ուստի անհիմն է վճռաբեկ բողոքի փաստարկն այն մասին, որ Ընկերությունը նման միջնորդություն չէր կարող ներկայացնել: Միաժամանակ, սակայն, անդրադառնալով վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը վերականգնելու հիմք սույն գործով առկա չէ, Վճռաբեկ դատարանն այն համարում է հիմնավոր հետևյալ պատճառաբանությամբ. սույն գործով Ընկերությունը, 16.10.2014 թվականին հայցադիմում ներկայացնելով Դատարան, միաժամանակ միջնորդել է հարգելի համարել դատարան դիմելու մեկամսյա ժամկետի բացթողումը՝ պատճառաբանելով, որ Ընկերությունն իր խախտված իրավունքների մասին իմացել է 12.08.2014 թվականին, որից հետո խախտված իրավունքները վերականգնելու համար 01.09.2014 թվականին դիմել է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետին, իսկ պատասխան գրությունը ստացել է միայն 24.09.2014 թվականին:

Ստորադաս դատարանները, պատճառաբանելով, որ մինչ դատարան դիմելն Ընկերությունը ձեռնարկել է ակտիվ քայլեր իր իրավունքների պաշտպանության համար, մեկամսյա ժամկետի բացթողումը հարգելի են որակել:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է վիրավորանքի կամ զրպարտության միջոցով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դեպքում **դատական կարգով** իրավունքները պաշտպանելու հնարավորություն՝ որպես արտադատական կարգով իրավունքների պաշտպանության միակ եղանակ նախատեսելով նույն հոդվածի 10-րդ կետով սահմանված դեպքը, այն է՝ անձը չի կարող օգտվել նույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչև դատարան դիմելը «Ջանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը:

Վերոնշյալ իրավանորմի բովանդակությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը վիրավորանքից կամ զրպարտությունից պաշտպանելու հնարաբերություններում անձի իրավունքների պաշտպանության դատական պաշտպանության եղանակը՝ արտադատական կարգով իրավունքների պաշտպանության հնարավորություն ընձեռելով միայն մեկ կոնկրետ դեպքում և կոնկրետ եղանակով, այն է՝ «Ջանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում պահանջելու միջոցով (որպիսի գործողության կատարման դեպքում ևս հայց ներկայացնելու մեկամսյա ժամկետը պետք է պահպանվի), մինչդեռ սույն գործով Ընկերությունը, դատարան դիմելու փոխարեն, իր իրավունքների պաշտպանությունը փորձել է իրականացնել այլ եղանակով, այն է՝ ոստիկանություն դիմելու միջոցով, ինչի արդյունքում դատարան է դիմել սահմանված մեկամսյա ժամկետի ավարտից հետո:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/3124/02/11 քաղաքացիական գործով 25.12.2012 թվականի՝ վերը նշված որոշմամբ արդեն իսկ նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով նախատեսված վեճերի համար հատուկ՝ կրճատ հայցային վաղեմության ժամկետի սահմանումը պայմանավորված է նրանով, որ վիրավորանքի և գրպարտության դեպքում դրա տարածման մակարդակը նվազում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում, որից հետո առարկայագուրկ է դառնում նման պահանջի ներկայացումը: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով նախատեսված կրճատ ժամկետը պայմանավորված է երկու կողմերի իրավունքներով և օրինական շահերով՝ նպատակ ունենալով ապահովելու արդարացի հավասարակշռություն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ընկերության կողմից Դատարան ներկայացված ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդության մեջ նշված հանգամանքները կապված չեն դատարան դիմելու **հնարավորությունից զրկված լինելու հետ**, քանի որ Ընկերությունը հնարավորություն ուներ դիմելու դատարան՝ անկախ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետին դիմելու հանգամանքից: Հետևաբար առկա չէր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված բացառիկ դեպք, որը հիմք կհանդիսանար հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության առկայության պայմաններում հայցը ենթակա էր մերժման, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից, ուստի ստորադաս դատարանների կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը և 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետը, որն ազդել է գործի ելքի վրա:

*Վերը շարադրված պարճառարանություններով հերքվում է վճռաբեկ բողոքի պատահանում բերված փաստարկը՝ հայցային վաղեմության ժամկետի վերականգման հիմքի առկայության վերաբերյալ: Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի պատահանի այն փաստարկին, թե վաղեմության մեկամսյա ժամկետի քննարկման մասով Արթուր Իչմիլյանը չէր կարող վճռաբեկ բողոք ներկայացնել, քանի որ նշված հիմքով վերաքննիչ բողոք չի ներկայացրել, սպա Վճռաբեկ դատարանն այն համարում է անհիմն, քանի որ Արթուր Իչմիլյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքի հիմքերից մեկը վերաբերել է հենց մեկամսյա ժամկետի խախտմանը հայց ներկայացնելուն:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի սույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռարեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստարանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռարեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռարեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռարեկ բողոքի բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է փոփոխման, իսկ Ընկերության հայցը՝ մերժման, Վճռարեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետը, գտնում է, որ Ընկերությունից հոգուտ Արթուր Իչմիլյանի պետք է բռնագանձել 64.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, և 74.000 ՀՀ դրամ՝ որպես վճռարեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռարեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.06.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Արթուր Իչմիլյանի՝ 1.800.000 ՀՀ դրամ բռնագանձելու, ինչպես նաև «BMW 525I» մակնիշի «19 00 264» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետնապակու վրա գետեղված «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ ՉԻ ՓՈԽՇԱՏՈՒՑՈՒՄ» արտահայտությունը և «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի ապրանքային նշանը վերացնելու պահանջների մասով, մերժել:

2. «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ից հոգուտ Արթուր Իչմիլյանի բռնագանձել 64.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք, և 74.000 ՀՀ դրամ՝ որպես վճռարեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/4072/02/14  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/4072/02/14**  
**2016 թ.**  
Կ. Հակոբյան  
Ա. Խառատյան  
Տ. Նազարյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22-ին դռնբաց դատական նիստում, քննելով «ՓԼԵՅ ԳՈՈՒԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Կարինե Լալարեկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ)՝ որոշակի գործողություն կատարելուն պարտադրելու և գումար բռնագանձելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Բանկին պարտադրել իր հաշվին փոխանցել որպես վարկ տրամադրված 140.000 ԱՄՆ դոլարը, ինչպես նաև բռնագանձել այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 29.04.2014 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 02.07.2015 թվականի վճռով հայցը մերժվել է, Ընկերությունից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բռնագանձվել է 1.310.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.10.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.07.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ, ինչպես նաև Ընկերությունից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բռնագանձվել է 4.200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, 140.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ սկսած

29.04.2014 թվականից մինչև Վերաքննիչ դատարանի որոշման կայացման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տոկոսագումարի 3%-ը՝ որպես ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ, 1092-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածները: Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, որի հետևանքով անտեսել է, որ Բանկի և Ընկերության միջև կնքված գլխավոր վարկային պայմանագրի ու ենթավարկային պայմանագրի շրջանակներում Բանկը, տեղյակ լինելով, որ Ընկերությունը դեռևս գրավի առարկաները չի ներկայացրել և չի ձևակերպել, սեփական ռիսկով Ընկերության հաշվին է փոխանցել 140.000 ԱՄՆ դոլար՝ առանց Ընկերությանը տեղյակ պահելու:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ հետագայում Բանկը միակողմանի, ինքնակամ, առանց պայմանագրով նախատեսված կարգով Ընկերությանը պահանջ ներկայացնելու և տեղեկացնելու, դատարանի վճռի բացակայության պայմաններում վերջինիս հաշվին առկա ողջ գումարը հետ է գանձել՝ խախտելով նրա իրավունքները և վնաս պատճառելով նրան:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը սխալ է մեկնաբանել Բանկի Տնօրինության 08.06.2010 թվականի որոշմամբ հաստատված Վարկավորման հիմնական պայմանների (այսուհետ՝ Վարկավորման հիմնական պայմաններ) 6.1 և Բանկի 26.12.2012 թվականի Տնօրինության նիստի թիվ 40 որոշմամբ հաստատված Բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների (այսուհետ՝ Ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ) 13.5 կետերի դրույթները, քանի որ Բանկին իրավունք վերապահված չի եղել անակցեպտ կարգով Ընկերության հաշվից բռնագանձելու պարտավորության ողջ գումարը: Բանկն իրավունք է ունեցել Ընկերությունից պահանջելու անհապաղ վերադարձնել վարկի ամբողջ գումարը՝ հաշվարկված տոկոսների և տույժերի հետ միասին, որպիսի իրավունքի առկայությունը դեռևս բավարար չէր միակողմանի, անակցեպտ կարգով Ընկերության հաշիվները տնօրինելու համար:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Ծառայությունների մատուցման հիմնական պայմանների 13.5 կետը վերաբերում է անակցեպտ կարգով Ընկերության հաշվից ծառայության վճարները և միջնորդավճարները բռնագանձելուն: Նշված կետում սահմանվել է, որ անակցեպտ կարգով հաշվից բռնագանձում իրականացնելու համար անհրաժեշտ է հաճախորդի համաձայնությունը, որը բացակայում է:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Վարկավորման հիմնական պայմանների 8.3 կետով Բանկին իրավունք էր վերապահված նույն պայմանների 6-րդ կետը խախտելու դեպքում դիմելու դատարան՝ օրենքով սահմանված կարգով բռնագանձում տարածելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.10.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝  
1) Բանկի և Ընկերության միջև 28.03.2014 թվականին կնքված գլխավոր վարկային պայմանագրի (այսուհետ՝ Գլխավոր վարկային պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Բանկը պատրաստակամություն է հայտնել Ընկերությանը մատչելի դարձնելու առավելագույնը

300.000.000 ՀՀ դրամի հաջորդական վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆոններ և Բանկում գործող այլ ֆինանսական ծառայություններ, իսկ նույն պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 15 օրվա ընթացքում Բանկին գրավ դնել նույն կետում նշված թվով 4 անվանում գույքը, իսկ նշված պայմանը չկատարելու դեպքում Բանկին իրավունք է վերապահվել Ընկերությունից պահանջելու վաղաժամկետ կատարել վարկային պարտավորություններն ամբողջ ծավալով: Ընկերության կողմից վարկային պարտավորությունները վաղաժամկետ չկատարելու դեպքում Բանկին իրավունք է վերապահվել իր պահանջները բավարարելու Ընկերության գույքի հաշվին **(գ.թ. 9)**:

2) Գլխավոր վարկային պայմանագրի 3.3 կետի բովանդակությունից բխում է, որ Վարկավորման հիմնական պայմաններն այդ պայմանագրի անբաժանելի մասն են **(գ.թ. 9)**:

3) Գլխավոր վարկային պայմանագրի 3.4 կետի համաձայն՝ այդ պայմանագրից բխող բոլոր հարաբերությունները կարգավորվում են նշված պայմանագրի կնքման պահին գործող Բանկի ներքին իրավական ակտերին և ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան **(գ.թ. 9)**:

4) Ծառայությունների մատուցման հիմնական պայմանների 13.5 կետի համաձայն՝ Բանկն իրավունք ունի անակցեպտ կարգով Ընկերության հաշվից գանձելու բոլոր ծառայությունների դիմաց սահմանված վճարները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով առաջացած պարտավորությունների գումարները..., ինչպես նաև երրորդ անձանց կողմից մատուցված ծառայությունների վճարները, որոնք կազմել են Ընկերությանը մատուցված ծառայությունների մաս **(գ.թ. 12-14)**:

5) Վարկավորման հիմնական պայմանների 6.1 կետի համաձայն՝ Բանկը, անկախ ստորև նշված խախտման համար նախատեսված տույժերի կամ տուգանքների վճարման հանգամանքից, իրավունք ունի Ընկերությունից պահանջելու անհապաղ վերադարձնել վարկի ամբողջ գումարը՝ հաշվարկված տոկոսների, տույժերի և այլ վճարումների հետ միասին, եթե Ընկերության կողմից վարկային պայմանագրով, դրա հավելվածներով, Վարկավորման հիմնական պայմաններով, դրա կատարումն ապահովող պայմանագրերով, ինչպես նաև այլ պայմանագրերով նախատեսված և Ընկերության ու Բանկի միջև օրենքով նախատեսված այլ հիմքերով առաջացած որևէ պարտավորություն, պայման, դրույթ խախտվել է, չի ապահովվել կամ ոչ պատշաճ է կատարվել **(գ.թ. 45)**:

6) Բանկի գործադիր տնօրենի՝ Ընկերության տնօրենին հասցեագրված 23.06.2014 թվականի թիվ 754 գրության համաձայն՝ Գլխավոր վարկային պայմանագրի 2.1 կետում նշված պարտավորությունն Ընկերությունը կատարել է ոչ պատշաճ՝ նույն կետում նշված թվով 4 անվանում գույքը 15 օրվա ընթացքում Բանկին գրավ չի դրել, որի հետևանքով վերջինս Ընկերության հաշվին առկա միջոցներից 29.04.2014 թվականին վաղաժամկետ մարել է վարկի գումարը: Այդ միջոցները բավարար չեն եղել վարկային պարտավորությանը առաջացած պարտքն ամբողջությամբ մարելու համար **(գ.թ. 15)**:

7) Բանկի և Ընկերության միջև 28.03.2014 թվականին կնքված ենթավարկային պայմանագրի համաձայն՝ Բանկն Ընկերությանը տրամադրել է 140.000 ԱՄՆ դոլար վարկ, որը Ընկերության հաշվին փոխանցել է 28.03.2014 թվականին **(գ.թ. 10, 15)**:

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և կզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ բանկի կողմից վարկի գումարի անակցեպտ կարգով հետ գանձման իրավունքի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ, 1092-րդ հոդվածները և ՀՀ քաղաքացիական դա-

տավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական մխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վարկատրի կողմից անակցեպտ կարգով վարկատրի հաշվից գումարների գանձման հնարավորության հարցին:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ նույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից բխում է, որ վարկային պայմանագրով վարկատուն ստանձնում է վարկատրուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու հետ վերադարձնել այդ դրամական միջոցները և տոկոսներ վճարել դրանցից, իսկ վարկատուն, իր հերթին, ձեռք է բերում այդ միջոցներն ստանալու իրավունք և ստանձնում վարկատրուին տոկոսներ վճարելու ու ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն: Միաժամանակ նշված հոդվածով ամրագրվել է, որ վարկային հարաբերությունների նկատմամբ փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը կիրառելի են, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերով և բուն վարկային պայմանագրով: Այսինքն՝ վարկային հարաբերությունները կարգավորելու առումով օրենսդիրը նախապատվությունը տվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերին և վարկային պայմանագրին, որոնցով այլ բան նախատեսված չլինելու դեպքում միայն տվյալ հարաբերությունների նկատմամբ կարող են գործել փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը:

Անդրադառնալով վարկային հարաբերությունների շրջանակներում վարկատրի կողմից վարկատրի դրամական միջոցների անակցեպտ գանձման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը նախնառաջ հարկ է համարում նշել, որ անակցեպտ գանձումը, ընդհանրապես, բանկի կողմից հաճախորդի հաշվից դրամական միջոցների գանձումն է՝ առանց վերջինիս առանձին կարգադրության, սակայն պայմանով, որ հաճախորդն այդպիսի գանձման համաձայնությունը նախապես տվել է կողմերի միջև կնքված պայմանագրով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ոչ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերով, ոչ նույն օրենսգրքի՝ փոխառության հարաբերությունները կարգավորող նորմերով նախատեսված չեն վարկատրի հաշվից վարկի գումարի անակցեպտ գանձման բանկի (վարկատրուի) իրավունքը: Այդուհանդերձ, պայմանագրի ազատության սկզբունքից ելնելով և հիմք ընդունելով վարկային պայմանագրի առանձնահատկությունները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդպիսի իրավունքը կարող է նախատեսված լինել վարկային պայմանագրով: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարկային պայմանագրով կարող է նախատեսված լինել ոչ միայն վարկատրի հաշվից որոշակի վճարների, այլև վարկի գումարի անակցեպտ գանձման բանկի իրավունքը: Սակայն ելնելով կողմերի հավասարության և քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության սկզբունքներից՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վարկի գումարն անակցեպտ գանձելու բանկի իրավունքը չի կարող լինել ինքնանպատակ, այլ պետք է պայմանավորված լինի որոշակի հանգամանքների վրա հասնելու փաստով (օրինակ՝ վարկատրի կողմից վարկային պայմանագրի պայմանների խախտմամբ), հակառակ դեպքում այդպիսի իրավունքը կհակասի վարկային հարաբերությունների բուն էությանը:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Գլխավոր վարկային պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 15 օրվա ընթացքում Բանկին գրավ դնել նույն կետում նշված՝ թվով 4 անվանում գույքը: Նշված պայմանը չկատարելու դեպքում Բանկին իրավունք է վերապահվել Ընկերությունից պահանջելու վաղաժամկետ կատարել վարկային պարտավորություններն անբողջ ծավալով, իսկ Ընկերության կողմից վարկային պարտավորությունները վաղաժամկետ չկատարելու դեպքում՝ իր պահանջները բավարարելու Ընկերության գույքի հաշվին:

Վարկավորման հիմնական պայմանների 6.1 կետի համաձայն՝ Բանկը, անկախ ստորև նշված խախտման համար նախատեսված տույժերի կամ տուգանքների վճարման հանգամանքից, իրավունք ունի Ընկերությունից պահանջել անհապաղ վերադարձնել վարկի ամբողջ գումարը՝ հաշվարկված տոկոսների, տույժերի և այլ վճարումների հետ միասին, եթե Ընկերության կողմից վարկային պայմանագրով, դրա հավելվածներով, Վարկավորման հիմնական պայմաններով, դրա կատարումն ապահովող պայմանագրերով, ինչպես նաև այլ պայմանագրերով նախատեսված և Ընկերության ու Բանկի միջև օրենքով նախատեսված այլ հիմքերով առաջացած որևէ պարտավորություն, պայման, դրույթ խախտվել է, չի ապահովվել կամ ոչ պատշաճ է կատարվել:

Ընկերությունը Գլխավոր վարկային պայմանագրի 2.1 կետում նշված իր պարտավորությունը, համաձայն Բանկի գործադիր տնօրենի 23.06.2014 թվականի թիվ 754 գրության, կատարել է ոչ պատշաճ, քանի որ նույն կետում նշված գույքն ամբողջությամբ Բանկում գրավ չի դրել: Նշված հանգամանքը Բանկի համար հիմք է հանդիսացել անակցեպտ կարգով Ընկերության հաշվից հետ գանձելու արդեն իսկ տրամադրված վարկի գումարը:

Սույն գործով Դատարանը, պատճառաբանելով, որ «Գլխավոր վարկային պայմանագրի 2.1 կետով նախատեսված է, որ Վարկառուն պարտավորվում է 15 օրվա ընթացքում Բանկին գրավ դնել պայմանագրի նույն կետով նախատեսված գույքը, ինչը չի կատարվել, այսինքն՝ Վարկառուի կողմից թույլ է տրվել Գլխավոր վարկային պայմանագրի հիշյալ կետի խախտում», «Գլխավոր վարկային պայմանագրի անբաժանելի մաս են կազմում «Վարկավորման հիմնական պայմանները», որն Ընկերության տնօրենն ստացել է 28.03.2014 թվականին», «Վարկավորման պայմանների 6.1 կետի համաձայն՝ Բանկն իրավունք ունի Վարկառուից պահանջելու անհապաղ վերադարձնել վարկի ամբողջ գումարը՝ հաշվարկված տոկոսների, տույժերի և այլ վճարների հետ միասին, եթե Վարկառուն թույլ է տվել Գլխավոր վարկային պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության, պայմանի խախտում», «Ստորագրելով հաշվի բացման դիմում-պայմանագիրը՝ Ընկերությունը Բանկին թույլատրել է իր հաշիվներից գանձել բոլոր կիրառելի միջնորդավճարներն ու այլ վճարները», իսկ «Բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների 13.5 կետով հստակ սահմանված է, որ Բանկն իրավունք ունի անակցեպտ կարգով գանձել հաճախորդի հաշվից բոլոր ծառայությունների դիմաց սահմանված վճարները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով առաջացած պարտավորությունների գումարները, որոնք համաձայնեցված են Բանկի և հաճախորդի միջև», գտել է, որ Բանկի գործողությունը՝ կապված «Ընկերության հաշվից վերջինիս տրամադրված վարկի գումարի մեծ մասի անակցեպտ գանձումը, չի կարող որևէ պարագայում որակվել որպես անհիմն, անօրինական և պայմանագրով չնախատեսված հիմքերով անհիմն հարստացում»:

Վերաքննիչ դատարանը, Ընկերության վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, ըստ էության, հիմնավոր է համարել դատարանի վերը նշված եզրահանգումները:

Մինչդեռ վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում

եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործում առկա ապացույցները չեն գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Ծառայությունների մատուցման հիմնական պայմանների 13.5 կետի համաձայն՝ Բանկն իրավունք ունի անակցեպտ կարգով գանձելու Ընկերության հաշվից բոլոր ծառայությունների դիմաց սահմանված վճարները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով առաջացած պարտավորությունների գումարները..., որոնք սահմանված են Սակագներով կամ այլ կերպ համաձայնեցված են Բանկի և հաճախորդի միջև, ինչպես նաև երրորդ անձանց կողմից մատուցված ծառայությունների վճարները, որոնք կազմել են Ընկերությանը մատուցված ծառայությունների մաս:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ անդրադարձել է պայմանագրի մեկնաբանման հարցին և արձանագրել է, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (*սրեն «Կարապ» ՄՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՄՊԸ-ի թիվ ՇՄ/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայությունների մատուցման հիմնական պայմանների 13.5 կետի տառացի նշանակությունը Վճռաբեկ դատարանի համար պարզ է և հնարավորություն է տալիս որոշելու դրա բովանդակությունը, որպիսի հանգամանքները բավարար են այդ կետը մեկնաբանել՝ ելնելով դրանում առկա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

Վճռաբեկ դատարանը Ծառայությունների մատուցման հիմնական պայմանների 13.5 կետը, դրանում առկա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելով, մեկնաբանելու արդյունքում արձանագրում է, որ դրանով Բանկին իրավունք է վերապահվել անակցեպտ կարգով Ընկերության հաշվից գանձելու միայն Բանկի կողմից մատուցված բոլոր ծառայությունների դիմաց սահմանված վճարները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով առաջացած պարտավորությունների գումարները, որոնք համաձայնեցված են Բանկի և հաճախորդի միջև, ինչպես նաև երրորդ անձանց կողմից մատուցված ծառայությունների վճարները, որոնք կազմել են Ընկերությանը մատուցված ծառայությունների մաս: Նշված կանոնը ներառված է «Միջնորդավճարներ և այլ վճարներ» վերտառությամբ բաժնում, որի 13.1 կետի համաձայն՝ հաճախորդը պարտավորվում է Բանկին միջնորդավճար վճարել մատուցված ծառայությունների դիմաց..., որի չափը որոշվում է Բանկի կողմից սահմանված համապատասխան սակագներով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բանկի կողմից անակցեպտ կարգով հետ գանձված գումարը, որն իրենից ներկայացրել է Ընկերությանը տրամադրված վարկի գումար, վերը նշված կանոնի իմաստով միջնորդավճար կամ այլ

վճար չէր կարող հանդիսանալ: Բացի այդ, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, Գլխավոր վարկային պայմանագրի 2.1 կետով և Վարկավորման հիմնական պայմանների 6.1 կետով Գլխավոր վարկային պայմանագրով նախատեսված որևէ պարտավորություն, այդ թվում նաև՝ այդ պայմանագրի 2.1 կետում նշվածը չկատարելու դեպքում Բանկին իրավունք է վերապահվել Ընկերությունից պահանջելու վաղաժամկետ կատարել վարկային պարտավորություններն ամբողջ ծավալով՝ անհապաղ վերադարձնել վարկի ամբողջ գումարը՝ հաշվարկված տոկոսների, տույժերի և այլ վճարումների հետ միասին: Ընդ որում, Գլխավոր վարկային պայմանագրի 3.4 կետի համաձայն՝ պայմանագրի ամուլությանը կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բանկի և Ընկերության միջև կնքված վարկային պայմանագրով կամ դրա անբաժանելի մասը կազմող պայմաններով նախատեսված չէ Ընկերության կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում վերջինիս տրամադրված վարկի գումարն անակցեպտ հետ գանձելու Բանկի իրավունքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), քացառությամբ նույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր՝ նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով անհիմն հարստացման ինստիտուտին, փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածից հետևում է, որ անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ,

2. գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացումն անօրինական ձևով (*լրենս Անժելիկա Գասպարյանն ընդդեմ Զելին Սիմոնյանի թիվ ԵԱԶԴ/0455/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տույն գործով առկա է Բանկի կողմից անհիմն հարստացում, քանի որ վերջինիս մոտ 140.000 ԱՄՆ դոլարի ավելացումը պայմանավորված է Ընկերության մոտ նույն գումարի պակասեցմամբ, և Բանկը նշված գումարը ձեռք է բերել առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ վարկային պայմանագրով կամ դրա անբաժանելի մասը կազմող պայմաններով սահմանված հիմքերի, որպիսի պարագայում նշված գումարը ենթակա էր Բանկից հետ գանձման, ինչը, սակայն, անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1097-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անհիմն դրամական հարստացման գումարի վրա ենթակա են հավելագրման ուրիշի միջոցներից օգտվելու համար տոկոսներ (հոդված 411)՝ սկսած այն օրվանից, երբ ձեռք բերողն իմացել է կամ պետք է իմանար դրամական միջոցների ստացման կամ խնայման անհիմն լինելու մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տույն գործով արդեն իսկ հաստատված է, որ Բանկը 29.04.2014 թվականին անակցեպտ կարգով հետ է գանձել որպես վարկ տրամադրված գումարը, անակցեպտ հետգանձման արդյունքում առկա է անհիմն դրամական հարստացում, հետևաբար տվյալ դեպքում կիրառման ենթակա է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը: Միաժամանակ

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվարկը պետք է սկսվի 29.04.2014 թվականից, այն է՝ Բանկի կողմից վարկի գումարի անակցայետ հետզանձման օրվանից, քանի որ օրենքով, այլ իրավական ակտերով, վարկային պայմանագրով և դրա անբաժանելի մասը կազմող պայմաններով վարկի գումարի անակցայետ հետզանձման իրավունք նախատեսված չլինելու դեպքում Բանկը պարտավոր էր հետզանձման պահից իմանալ, որ Հնկերության հաշվից անակցայետ հետ գանձված դրամական միջոցները տնօրինում է առանց իրավական հիմքերի:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհիմն հարստացման առկայության պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները 29.04.2014 թվականից ենթակա էին հաշվեգրման և Բանկից բռնագանձման, ինչը ևս անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոք բերած անձի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ, 1092-րդ հոդվածները և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ ու վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ գույքային պահանջի գործերով առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150



տոկոսից, նույն պահանջի գործերով դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարանի հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով, նույն պահանջի գործերով դատարանի դատական ակտերի դեմ բերված վճարելի բողոքների համար հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճարելի բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով հայցադիմումը դատարան ներկայացնելիս Ընկերությունը վճարել է 20.000 ՀՀ դրամի չափով պետական տուրք: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.09.2014 թվականի որոշմամբ պետական տուրքի չվճարված մասի վճարման ժամկետը հետաձգվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2015 թվականի որոշմամբ Ընկերության միջնորդությունը բավարարվել է, և վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգվել է:

ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 12.02.2016 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի միջնորդությունը բավարարվել է, և վճարելի բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգվել է:

Նման պայմաններում նկատի ունենալով, որ վճարելի բողոքը ենթակա է բավարարման՝ վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով Բանկից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ենթակա է բռնագանձման 2.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (140.000 ԱՄՆ դոլար x 2%) և 140.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ սկսած 29.04.2014 թվականից մինչև սույն որոշման կատարման պահը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվելիք տոկոսագումարի 2%-ը՝ որպես հայցադիմումը դատարան ներկայացնելու համար սահմանված ու Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.09.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար՝ Ընկերության կողմից հայցադիմումը դատարան ներկայացնելու համար նախապես վճարված 20.000 ՀՀ դրամի հաշվանցմամբ, 4.200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (140.000 ԱՄՆ դոլար x 3%) և 140.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ սկսած 29.04.2014 թվականից մինչև սույն որոշման կատարման պահը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվելիք տոկոսագումարի 3%-ը՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, ինչպես նաև հաշվի առնելով գույքային պահանջի գործերով վճարելի բողոքների համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ բազային տուրքի հազարապատիկի չգերազանցելու սահմանափակումը, միաժամանակ նկատի ունենալով, որ սույն գործով հայցագնի 3%-ը գերազանցում է բազային տուրքի հազարապատիկը՝ վճարելի դատարանը գտնում է, որ Բանկից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ենթակա է բռնագանձման 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար սահմանված ու ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 12.02.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Սույն գործով նկատի ունենալով, որ Ընկերությունը հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, և վճարելի բողոքը ենթակա է բավարարման, վճարելի դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից նախապես վճարված 20.000

ՀՀ դրամ պետական տուրքի գումարը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Բանկի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «ՓԼԵՅ ԳՈՈՒԴ» ՍՊԸ-ի հայցը բավարարել: «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ին պարտադրել «ՓԼԵՅ ԳՈՈՒԴ» ՍՊԸ-ի հաշվին փոխանցել որպես վարկ տրամադրված 140.000 ԱՄՆ դոլարը: «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ից հոգուտ «ՓԼԵՅ ԳՈՈՒԴ» ՍՊԸ-ի բռնագանձել 140.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411–րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 29.04.2014 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

2. «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բռնագանձել 2.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և 140.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ սկսած 29.04.2014 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411–րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվելիք տոկոսագումարի 2%–ը՝ որպես հայցադիմումը դատարան ներկայացնելու համար սահմանված ու Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.09.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար՝ հաշվանցելով Ընկերության կողմից հայցադիմումը դատարան ներկայացնելու համար նախապես վճարված 20.000 ՀՀ դրամը:

«ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ից հոգուտ «ՓԼԵՅ ԳՈՈՒԴ» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումը դատարան ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

«ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բռնագանձել 4.200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և 140.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ սկսած 29.04.2014 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411–րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվելիք տոկոսագումարի 3%–ը՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

«ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված ու ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 12.02.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԳ1/2015/02/14  
2016 թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԳ1/2015/02/14

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ն. Բարսեղյան  
Ս. Միքայելյան  
Մ. Հարթենյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «ՍՄԱՐՏՍՈՎԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերու-  
թյուն) ներկայացուցիչ Աննա Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-  
կան դատարանի 04.12.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «ՌԵՍՈ» ապահովագրա-  
կան ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ Ընկերության և Սարգիս Գրիգորյանի՝  
գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից և Սարգիս  
Գրիգորյանից համապարտության կարգով հոգուտ իրեն բռնագանձել 8.530.000 ՀՀ դրամ՝  
որպես ապահովագրության պայմանագրով տուժողներին վճարված ապահովագրական  
հատուցման գումար, ինչպես նաև 170.600 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես  
վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Թորո-  
սյան) (այսուհետ՝ Դատարան) 18.09.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի-  
որեն՝ վճռվել է Ընկերությունից հոգուտ Կազմակերպության բռնագանձել 8.530.000  
ՀՀ դրամ՝ որպես ապահովագրության պայմանագրով տուժողներին վճարված ապահովագ-  
րական հատուցման գումար, ինչպես նաև 170.600 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական  
տուրքի գումար: Քաղաքացիական գործի վարույթը՝ Սարգիս Գրիգորյանի դեմ պահանջի  
մասով կարճվել է՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.12.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.09.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021–րդ, 1025–րդ, 1058–րդ, 1072–րդ հոդվածները, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5–րդ, 10–րդ, 27–րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության պայմաններում Կազմակերպությունը կարող է իր կողմից հատուցված գումարը հետ պահանջել Ընկերությունից բացառապես «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում, այլ ոչ թե ցանկացած դեպքում, երբ առաջանում է ապահովագրի քաղաքացիական պարտավորությունը, քանի որ հենց դա է ապահովագրության իմաստը:

Վերաքննիչ դատարանը, կիրառելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածը, չի նշել, թե տվյալ նորմի որ կետի հիման վրա է հետադարձ պահանջի իրավունք առաջացել Ընկերության նկատմամբ: Մինչդեռ Կազմակերպությունն իր կողմից հատուցած գումարը սեփականատիրոջից՝ Ընկերությունից, պահանջելու որևէ իրավական հիմք չունի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.12.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել, կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Կազմակերպության միջև 28.06.2013 թվականին կնքված թիվ SE 276554 Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱԴԴԱ) վկայագրի (այսուհետ՝ Վկայագիր) համաձայն՝ Ընկերությունն ապահովագրել է «Ֆորդ Տրանզիտ 150L» մակնիշի թիվ 38ILU61/1113L հաշվառման համարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Վկայագրի 6–րդ կետով որպես լիազորված տիրապետող նշվել է Սարգիս Գրիգորյանը (**գ.թ. 8**).

2) Թիվ ԿԴԻ/0122/01/13 քրեական գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 03.02.2014 թվականի դատավճռով (օրինական ուժի մեջ է մտել 29.04.2014 թվականին) Սարգիս Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242–րդ հոդվածի 3–րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 6 տարի 8 ամիս ժամկետով: Նշված դատավճռի համաձայն՝ Սարգիս Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա, 19.08.2013 թվականին վարելով «Ֆորդ Տրանզիտ 150L» մակնիշի թիվ 38ILU61/1113L հաշվառման համարանիշի միկրոավտոբուսը, Երևան–Սևան ավտոճանապարհի 22–րդ կմ հատվածում իրականացնելով ավտոմոբիլի ընթացքի ոչ պատշաճ կառավարում, թույլ է տվել ՃԵԿ–ի 55–րդ, 65–րդ և 66–րդ կետերի, ինչպես նաև «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23–րդ հոդվածի 3–րդ մասի պահանջներին հակասող գործողություն, տեխնիկական տեսակետից ստեղծել վթարային իրադրություն և արդյունքում բախվել է կանաչապատ գոտու եզրաքարին, որի

հետևանքով միկրոավտոբուսը շրջվել է, և ուղևորներ Լարիսա Հախվերդյանը, Վանուշ Ղազարյանը, Արմինե Մասցակախյանը և Լուսաբերտ Բաղդասարյանը մահացել են, ուղևոր Հրանտ Սուքիասյանը ստացել է առողջության միջին ծանրության մարմնական վնասվածքներ, իսկ Հայկանուշ Գորոյանը, Լիաննա Ախոյանը և Վաչագան Ազիզյանը ստացել են առողջությանն ու կյանքին առավել վտանգ սպառնացող ծանր վնասվածքներ: Դատավճռով արձանագրվել է, որ Սարգիս Գրիգորյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է հանցանքն ակոհոլի ազդեցության տակ կատարելը, քանի որ փորձագետի 26.08.2013 թվականի թիվ 0628 եզրակացության համաձայն՝ Սարգիս Գրիգորյանի արյան փորձանմուշի մեջ ակոհոլի պարունակությունը կազմել է 0,085 գր/լ (**գ.թ. 9–13**).

3) Կազմակերպության՝ 02.07.2014 թվականի ապահովագրական հատուցման վերաբերյալ (անձնական վնասներ) թվով 12 որոշումների, ինչպես նաև թվով 24 վճարման հանձնարարականների համաձայն՝ 19.08.2013 թվականին տեղի ունեցած վերոնշյալ պատահարը Կազմակերպությունը ճանաչել է ապահովագրական և պատահարի արդյունքում տուժողներին և նրանց իրավահաջորդներին վճարել է ապահովագրական հատուցում՝ ընդհանուր 8.530.000 ՀՀ դրամի չափով (**գ.թ. 14–37, 68–91**):

**4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 2–րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021–րդ, 1072–րդ, ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021–րդ, 1072–րդ, ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադիր) նկատմամբ ապահովագրական ընկերությունն ունի հետադարձ պահանջի իրավունք, եթե առկա չեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածով նախատեսված հիմքերը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (**տրանսպորտային միջոցների**, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: (...) Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրի սեփականատերը պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, եթե ապացուցում է, որ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով: Նման դեպքերում առավել վտանգի աղբյուրի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են աղբյուրն ապօրինի տիրապետած անձինք: Աղբյուրի սեփականատիրոջ տիրապետումից այդ աղբյուրի ապօրինի վերցնելու մեջ նրա մեղքի առկայության դեպքում պատասխանատվությունը կարող է դրվել ինչպես առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ, այնպես էլ այն ապօրինի ձեռք բերողի վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովադրին (ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մատով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1025-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն գլխով սահմանված դրույթները կիրառվում են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունների նկատմամբ, **եթե այլ կարգավորում նախատեսված չէ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով:**

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրով նույն օրենքով սահմանված պայմաններով ապահովագրվում է տուժած անձանց պատճառված վնասների հատուցման համար ապահովագրված անձանց պատասխանատվությունը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (տուբրոգացիայի) իրավունք ունի՝

**1) վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե՝**

ա. նա ապահովագրական պատահարի ժամանակ ավտոտրանսպորտային միջոցը վարել է ալկոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո.

բ. նա առանց հիմնավոր պատճառի լքել է պատահարի վայրը կամ խուսափել է ալկոհոլի, թմրանյութերի կամ այլ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ քննություն անցնելուց.

գ. նա ապահովագրական պատահարի պահին չի ունեցել ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ օրենքով սահմանված կարգով զրկված է եղել այդպիսի իրավունքից, բացառությամբ նույն մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքի.

դ. ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին.

**2) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ, եթե՝**

ա. ավտոտրանսպորտային միջոցը վնասի պատճառման պահի դրությամբ չի անցել տեխնիկական զննություն, և պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը, որը կարող էր բացահայտվել տեխնիկական զննություն անցնելու դեպքում.

բ. ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին.

գ. ավտոտրանսպորտային միջոցի վարումը վստահել է այն վարելու իրավունք չունեցող անձին և գիտեր կամ կարող էր իմանալ, որ այդ անձը չունի վարելու իրավունք.

դ. ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական ընկերությանը ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ապահովագրական ընկերությանը մինչև ապահովագրական պատահարը.

### 3) ինչպես նաև՝

ա. պատահարի տարածքի կամ ճանապարհի սեփականատիրոջ նկատմամբ, եթե պատահար տեղի է ունեցել տարածքի կամ ճանապարհի անսարքության կամ թերության պատճառով, և դրանում առկա է սեփականատիրոջ մեղքը.

բ. ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական զննություն իրականացրած կազմակերպության նկատմամբ, եթե պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը, որը չի բացահայտվել տեխնիկական զննության ընթացքում՝ դրա թերի կամ ոչ պատշաճ իրականացման հետևանքով.

գ. օրենքով սահմանված դեպքերում և կարգով այլ անձանց նկատմամբ, որոնց մեղքով տեղի է ունեցել պատահարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում մի քանի անձի նկատմամբ, ապա այդ անձինք ապահովագրական ընկերության նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածով սահմանված՝ վնաս չպատճառած անձի վրա վնասի հատուցման պարտականություն ղնելու՝ օրենքով նախատեսված հիմքերից մեկն առավել վտանգի աղբյուր հանդիսացող տրանսպորտային միջոցով պատճառված վնասը սեփականատիրոջ կողմից հատուցելն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ տրանսպորտային միջոցով վնաս պատճառելիս այդ միջոցի սեփականատերը միայն այն դեպքում պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, երբ ապացուցում է, որ.

1. առավել վտանգի աղբյուրն օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) փոխանցվել է այլ անձի տիրապետմանը, կամ

2. առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, և միայն այդ դեպքում է, որ տրանսպորտային միջոցի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են տրանսպորտային միջոցն ապօրինի տիրապետած անձինք (*տես Տիգրան-Քոչարյանի ընդդեմ Աշոտ և Արթուր Քոչարյանների թիվ ԵԱԲԴ/0610/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածն առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջն ազատում է վնասը հատուցելու պարտավորությունից հետևյալ դեպքերում.

- անհաղթահարելի ուժի,
- տուժողի դիտավորության և
- առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ տիրապետումից աղբյուրն այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով դուրս գալու դեպքերում (*տես Նարինե Զաքարյանը և Էլեն Դանիելյանի օրինական ներկայացուցիչ Գեննտղի Դանիելյանի ընդդեմ «Միքսձոր» ՍՊԸ-ի և Արշակ Աղաբեկյանի թիվ ՍԴ3/0498/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ սեփականատերը, իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրելով, փաստացի հնարավորություն է ստանում ապահովագրավճարի դիմաց ապահովագրողին փոխանցելու վնասը (որը կարող է պատճառված լինել ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ ավտոմեքենայի լիազորված տիրապետողի կողմից) հատուցելու իր պարտականությունը: Ապահովագրողն էլ օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում հնարավորություն ունի հետադարձ պահանջի միջոցով հետ ստանալու իր կողմից կատարված հատուցումը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և տուժողի իրավահարաբերություններին՝ մասնավորապես նախատեսելով սեփականատիրոջ պատասխանատվության պայմանները և այն բացառող դեպքերը, ապա «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության»

մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և ապահովագրական ընկերության միջև ծագած իրավահարաբերություններին՝ մասնավորապես ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքին:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքը նախատեսված է վնաս պատճառողի, վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) և (կամ) օրենքով սահմանված այլ անձանց նկատմամբ: Վճռաբեկ դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ սեփականատիրոջ (ապահովադրի) պատասխանատվության հիմքերը հստակ և սպառիչ սահմանված են նույն հոդվածով, հետևաբար սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ այլ հիմքերով հետադարձ պահանջ չի կարող ներկայացվել: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ ավտոմեքենայի սեփականատերն ապահովագրել է իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը, ապա ապահովագրական ընկերության կողմից տուժող կողմին հատուցում վճարելու դեպքում ապահովագրական ընկերությունը սեփականատիրոջ դեմ հետադարձ պահանջ կարող է ներկայացնել միայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով թվարկված դեպքերում:

Սույն գործով Դատարանը, հաշվի առնելով, որ Կազմակերպությունը տուժողներին հատուցել է վնասները, գտել է, որ առկա է Կազմակերպության հետադարձ պահանջի իրավունքը պատասխանողների նկատմամբ, ուստի Ընկերության դեմ Կազմակերպության պահանջը ենթակա է բավարարման:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության վերաքննիչ բողոքը, հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումները և հավելել, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի իրավունք ունի ինչպես վնաս պատճառած անձի նկատմամբ, երբ վերջինս ավտոտրանսպորտային միջոցը վարել է ալկոհոլի ազդեցության տակ, այնպես էլ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Կազմակերպության միջև 28.06.2013 թվականին կնքվել է Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության վկայագիր, որում որպես լիազորված տիրապետող նշվել է Սարգիս Գրիգորյանը: Վերջինին մեղավորությամբ տեղի ունեցած պատահարի արդյունքում տուժողներին պատճառված վնասը հատուցել է Կազմակերպությունը: Օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ պատահարի ժամանակ Սարգիս Գրիգորյանը գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հիմնավոր համարելով Կազմակերպության հայցն ընդդեմ Ընկերության, անտեսել են, որ սույն գործով Կազմակերպությունն իր հայցադիմումում չի վկայակոչել և չի հիմնավորել, թե «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածով սահմանված՝ Ընկերության դեմ հետադարձ պահանջի իրավունքի ծագման որ հիմքն է առկա սույն գործով, որի բացակայության պայմաններում Ընկերության դեմ հետադարձ պահանջ ներկայացվել չէր կարող: Հետևաբար, հաշվի առնելով, որ սույն գործով առկա չէ սեփականատիրոջ դեմ հետադարձ պահանջ ներկայացնելու՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպության հայցն ընդդեմ Ընկերության ենթակա էր մերժման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:



Այսպիսով, վճարելի բողոքի հիմքի առկայությունը Վճարելի դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերաբնիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճարելի դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարելի դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճարելի դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճարելի դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### ***5. Վճարելի դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարելի բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճարելի բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով, նկատի ունենալով, որ վճարելի բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, իսկ հայցը՝ մերժման, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի իրավակարգավորումը և հաշվի առնելով, որ սույն գործով Ընկերությունը վճարելի բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, իսկ պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգվել է ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.04.2016 թվականի որոշմամբ, Վճարելի դատարանը գտնում է, որ Կազմակերպությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 235.900 (8.530.000 \* 3% - 20.000) ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար սահմանված և ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.04.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար: Միաժամանակ նկատի ունենալով, որ Ընկերությունը վերաքննիչ բողոքի համար

վճարել է 10.000 ՀՀ դրամ, իսկ պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգվել է Վերաքննիչ դատարանի 09.11.2015 թվականի որոշմամբ, Վճարելի դատարանը գտնում է, որ Կազմակերպությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 245.900 (8.530.000 \* 3% - 10.000) ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և Վերաքննիչ դատարանի 09.11.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար: Միաժամանակ Կազմակերպությունից հոգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի մասի հատուցման գումար, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի մասի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճարելի բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.12.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ–ի հայցն ընդդեմ «ՄՄԱՐՏՍՈՎԹ» ՍՊԸ–ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, մերժել:

2. «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ–ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 235.900 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար սահմանված և ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.04.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար: «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ–ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 245.900 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.11.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար:

«ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ–ից հոգուտ «ՄՄԱՐՏՍՈՎԹ» ՍՊԸ–ի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի մասի գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի մասի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ-2/0189/02/15  
2016 թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ-2/0189/02/15

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Լ. Գրիգորյան  
Ա. Պետրոսյան  
Կ. Չիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՑԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Գյուլնարա Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-  
րաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կո-  
տայքի մարզի Բյուրեղավան քաղաքային համայնքի (այսուհետ՝ Համայնք) ընդդեմ Գյուլնա-  
րա Սարգսյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Համայնքը պահանջել է Գյուլնարա Սարգսյանից բռնագանձել  
380.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնաս, որից 200.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբա-  
նական ծառայության վճար, իսկ 180.000 ՀՀ դրամը՝ որպես տրանսպորտային և մասնագետ  
ներգրավելու համար կատարված ծախսեր:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Սեդրա-  
կյան) (այսուհետ՝ Դատարան) 01.07.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
24.12.2015 թվականի որոշմամբ Համայնքի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի  
01.07.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գյուլնարա Սարգսյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համայնքը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17–րդ և 1058–րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Գյուլնարա Սարգսյանի գործողություններով Համայնքին վնաս է պատճառվել, քանի որ վերջինս թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործի շրջանակներում ստիպված է եղել իր իրավունքները պաշտպանելու համար կատարել ծախսեր: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունը պայմանավորված է վնասի առաջացման և վնաս պատճառած անձի ոչ իրավաչափ գործողությունների պատճառահետևանքային կապով, մեղքի առկայությամբ, իսկ անձի՝ իրավունքների և ազատությունների (թեկուզև ենթադրյալ) դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ինքնին չի կարող դիտվել որպես ոչ իրավաչափ գործողություն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Գյուլնարա Սարգսյանը թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործի շրջանակներում իրացրել է իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իր իրավունքը: Նման պայմաններում թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործի շրջանակներում Համայնքի կատարած դատական ծախսերը չեն կարող դիտվել որպես վերջինիս պատճառված վնաս, քանի որ Գյուլնարա Սարգսյանի՝ դատական պաշտպանության իրավունքի իրացմանն ուղղված գործողությունները չեն կարող գնահատվել որպես ոչ իրավաչափ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի որոշման մեջ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17–րդ հոդվածին տրված մեկնաբանությունը հակասում է նույնանման փաստական հանգամանքներ ունեցող թիվ 3–2431(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի որոշման մեջ նշված նորմին տրված մեկնաբանություններին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.12.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 01.07.2015 թվականի վճռին:

**2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Գյուլնարա Սարգսյանի անհիմն գործողությունների՝ ակնհայտ անհիմն հայցապահանջ ներկայացնելու արդյունքում Համայնքին պատճառվել է 350.000 ՀՀ դրամի վնաս, որը ենթակա է հատուցման Գյուլնարա Սարգսյանի կողմից: Սույն գործով ապացուցվել է այն հանգամանքը, որ Գյուլնարա Սարգսյանի մեղքով Համայնքն իր իրավունքների պաշտպանության նպատակով կատարել է ծախսեր և կրել է վնասներ: Մասնավորապես, Համայնքը հաստիքով իրավաբան չունենալու պատճառով իր շահերը պատշաճ իրականացնելու համար ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է կնքել փաստաբան Արսեն Դանիելյանի հետ: Ներկայացուցչի մասնակցությունը դատարանում ապահովելու համար կատարվել են տրանսպորտային ծախսեր: Համայնքի աշխատակազմում ճարտարապետի թափուր հաստիքի պատճառով տվյալ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հարցի պարզաբանման համար հրավիրել է նաև համապատասխան ճարտարապետ–մասնագետ, որի կողմից մատուցված ծառայության համար ևս կատարվել են ծախսեր:

Գյուլնարա Սարգսյանի ներկայացրած հայցապահանջն ակնհայտ անհիմն է եղել, քանի որ նրա կողմից չեն պահպանվել ՀՀ կառավարության կողմից շինարարական թույլտվություն ստանալու համար սահմանված պայմանները, բացի այդ, Գյուլնարա Սարգսյանի կողմից ներկայացրած նախագիծը հողազավթումով է, ինչը բացահայտվել է հրավիրված ճարտարապետի կատարած մասնագիտական զննության արդյունքում:

### 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ըստ Գյուլնարա Սարգսյանի հայցի ընդդեմ Համայնքի՝ շինարարության թույլտվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 24.02.2015 թվականի որոշմամբ գործի վարույթը կարճվել է Գյուլնարա Սարգսյանի կողմից հայցից հրաժարվելու հիմքով: Նշված որոշմամբ ՀՀ վարչական դատարանը դատական ծախսերին անդրադարձել է և կողմերի միջև բաշխել միայն պետական տուրքը (**հատոր 1–ին, գ.թ. 50**):

2. Համայնքի և «Արսեն Դանիելյան» Ա/Ձ–ի միջև 22.08.2014 թվականին կնքված թիվ ՀՀԿՄԲԲ–ԾՁԲ–58 ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի 1.1–րդ կետի համաձայն՝ Արսեն Դանիելյանը պարտավորվել է պատվիրատուին մատուցել փաստաբանական ծառայություններ, մասնավորապես՝ Համայնքի անունից հանդես գալ ՀՀ վարչական դատարանում թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործով, իսկ նույն պայմանագրի 1.2–րդ կետի համաձայն՝ պայմանագրի գինը սահմանվել է 200.000 ՀՀ դրամ (**հատոր 1–ին, գ.թ. 3**):

3. 18.09.2014 թվականի թիվ 7715 բանկային փոխանցմամբ «Արսեն Դանիելյան» Ա/Ձ–ի հաշվին մուտքագրվել է 200.000 ՀՀ դրամ, իսկ վճարման նպատակը բաժնուժն նշվել է՝ «փաստաբանական ծառայություն» (**հատոր 1–ին, գ.թ. 20**):

4. Համայնքի ղեկավարի օգնական Հ. Լալայանի 17.03.2015 թվականի գեկուցագրով՝ ուղղված Բյուրեղավանի քաղաքապետ Հ. Բալասանյանին, հայտնվել է, որ թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործով Համայնքին պատճառվել է զգալի նյութական վնաս՝ 200.000 ՀՀ դրամ վճարվել է փաստաբան Արսեն Դանիելյանին, 150.000 ՀՀ դրամ պետք է վճարվի ճարտարապետ–մասնագետ Հայկ Վարդանյանին, և 30.000 ՀՀ դրամի չափով կատարվել են տրանսպորտային ծախսեր (**հատոր 1–ին, գ.թ. 15**):

5. Սույն գործով Համայնքի հայցի առարկան 380.000 ՀՀ դրամի չափով պատճառված վնասի հատուցումն է, որպես հայցի փաստական հիմք Համայնքը վկայակոչել է թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործի շրջանակներում գործի քննության հետ կապված իր կողմից դատական ծախսեր կատարելու հանգամանքը, իսկ որպես հայցի իրավական հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17–րդ հոդվածը (**հատոր 1–ին, գ.թ. 1–2**):

### 4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17–րդ հոդվածի մեկնաբանությունը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3–2431(ՎԴ) քաղաքացիական գործով 26.01.2007 թվականին կայացրած որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք վարչական դատավարության կարգով գործի քննության հետ կապված դատական ծախսերը կարող են դիմարկվել որպես պարզադատված վնաս, և արդյո՞ք այդ ծախսերը որպես վնաս ենթակա են հարուցման մեկ այլ հայցով հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56–րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և **գործի քննության հետ կապված այլ ծախսերից**:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ, 3–րդ և 8–րդ կետերի համաձայն՝ օրենսդիրը գործի քննության հետ կապված այլ ծախսերի մեջ, *inter alia* (ի թիվս այլոց), ներառել է կողմերի՝ գործի քննության վայր ժամանելու (...) հետ կապված ծախսերը, դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները և դատարանի կողմից անհրաժեշտ ճանաչված այլ ծախսերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասը բովանդակում է դատարանի դիրքորոշումը դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ: Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը բովանդակում է եզրահանգում դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է (...): Հայցից հրաժարվելու կամ դատական ակտի դեմ ներկայացրած բողոքը հետ վերցնելու դեպքում անձը կրում է դրա հետևանքով առաջացած դատական ծախսերի հատուցման պարտականությունը, բացառությամբ այն դեպքի, երբ մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու կամ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը կողմը դիմել է այն վերադարձնելու մասին: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչների վճարների գծով դատական ծախսի հատուցումը դրվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ համայնքի վրա, եթե գործը լուծվել է ի վնաս իրենց: Հատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է նույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ վճռի կայացման, վճռի պարզաբանման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ լրացուցիչ վճիռ կայացնել, եթե չի լուծել դատական ծախսերի հարցը:

Վերը նշված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ գործի քննության վայր ժամանելու (...) հետ կապված ծախսերը, դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները և դատարանի կողմից անհրաժեշտ ճանաչված այլ ծախսերը վարչական դատավարությունում դիտարկվում են որպես **դատական ծախսեր**, հետևաբար որպես դատական ծախս գործն ըստ էության լուծող դատական ակտով պետք է բաշխվեն կողմերի միջև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես դատական ծախս թե՛ հայցվորը և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել այդպիսի ծախսերի կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող սպացույց: Եթե վարչական դատարանը համապատասխան սպացույցի առկայության դեպքում գործն ըստ էության լուծող դատական ակտով չի անդրադառնում դատական ծախսերի՝ կողմերի միջև բաշխման հարցին, ապա գործին մասնակցող անձինք գրկված չեն կատարված ծախսերի բաշխման հարցը լուծելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի հիմքով ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 142–րդ հոդվածով սահմանված կարգով դիմել վճիռը կայացրած դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով:

Մյուս կողմից, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև նույն օրենսգրքի 131–րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները.

2) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Այլ կերպ ասած՝ բացի լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով վարչական դատարան դիմելու հնարավորությունից՝ կողմերին վերապահված է վարչական դատարանի դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն, ինչը նշանակում է, որ այն դեպքում, երբ վարչական դատարանը համապատասխան ապացույցի առկայության դեպքում վճռով չի անդրադառնում դատական ծախսերի՝ կողմերի միջև բաշխման հարցին, կամ կողմերի կարծիքով վարչական դատարանի կողմից դատական ծախսերը բաշխվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60–րդ հոդվածով սահմանված կարգի խախտմամբ, կողմերը գրկված չեն դատական ծախսերի բաշխման մասով վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր դեպքերում վարչական դատավարության կարգով գործի քննության հետ կապված դատական ծախսերը կողմերի միջև բաշխվում են համապատասխան ապացույցների առկայության դեպքում: Վերոշարադրյալը նշանակում է, որ կողմերը, իրավունք ունենալով ակնկալել վարչական դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտով կողմերի միջև դատական ծախսերի բաշխման հարցի լուծում, միաժամանակ պարտավոր են գործի քննության ընթացքում դատարանին ներկայացնել դատական ծախսերը հավաստող ապացույց, քանի որ գործում այդպիսի ապացույցների առկայությամբ է պայմանավորված դատական ծախսերի առկայությունը, եթե առանձին ծախսերի վերաբերյալ օրենքով կամ այլ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

Միաժամանակ հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին այն դեպքերում, երբ ՀՀ վարչական դատարանում գործի քննությունն ավարտվել է գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96–րդ հոդվածի 1–ին մասը սահմանել է ՀՀ վարչական դատավարության կարգով քննվող գործի վարույթի կարճման հիմքերը, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97–րդ հոդվածի 1–ին մասով օրենսդիրը նախատեսել է, որ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է որոշում, որով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման հնարավորությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96–րդ ու 97–րդ հոդվածների և ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՄԴՌ–1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման համադրված վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ վարչական դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելն ըստ էության եզրափակում է վարչական գործի քննությունը, ավարտում գործի վարույթը՝ առանց բավարարման թողնելով իր ենթադրաբար խախտված իրավունքների պաշտպանության խնդրանքով դատարան դիմած անձի պահանջը: Ավելին՝ վարչական գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր իրավաբանական հետևանքների տեսանկյունից նմանվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին: Ըստ այդմ, ՀՀ վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշները, ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՄԴՌ–1190 որոշման մեջ

արտահայտած իրավական դիրքորոշումները, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման իրավական բնույթը, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումները, գտնում է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով (տե՛ս «Ճասթ Սի-լայ» ՄԳԸ-ն ընդդեմ ՀՀ կատավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը և հաշվի առնելով գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման իրավական բնույթը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ դատական ծախսերի հարցը չլուծելու դեպքում վարչական դատարանը չի կարող լրացուցիչ վճիռ կայացնել դատական ծախսերի բաշխման վերաբերյալ: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին կետի տառացի մեկնաբանությունից, համաձայն որի՝ լրացուցիչ վճիռ կայացնելու իրավասությունը վերապահված է բացառապես վճիռ կայացրած դատարանին, մինչդեռ վարչական դատարանում գործի վարույթը կարճելու դեպքում վճիռ չի կայացվում, ինչը փաստացի գրկում է դատարանին գործի վարույթը կարճելու դեպքում լրացուցիչ վճիռ կայացնելու հնարավորությունից:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով գործի վարույթը կարճելու մասին որոշումների բողոքարկման հնարավորության վերաբերյալ վերև արտահայտված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ դատարանը չի լուծել դատական ծախսերի բաշխման հարցը, գործին մասնակից անձինք գրկված չեն դատական ծախսերի բաշխման մասով վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև նշել, որ դատական ծախսերը հավաստող ապացույցների առկայության վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումը վերաբերում է նաև վարչական դատարանում գործի վարույթը կարճելու դեպքերին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ այն դեպքերում, երբ վարչական դատավարության կարգով գործի քննության ընթացքում կողմերը չեն ներկայացնում դատական ծախսերը հաստատող ապացույցներ, վերջիններս գործի քննության ավարտից հետո գրկվում են վարչական դատավարության կարգով այլ գործի շրջանակներում այդպիսի ծախսերը պահանջելու հնարավորությունից, քանի որ դատական ծախսերի առկայությունը պայմանավորված է կոնկրետ գործի առկայությամբ, իսկ դատական ծախսերի բաշխման հետ կապված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կարգավորումների տրամաբանությունից հետևում է, որ օրենսդիրը կոնկրետ գործի շրջանակներում կատարված դատական ծախսերի բաշխման հարցը լուծելու հնարավորություն նախատեսել է բացառապես այդ գործի շրջանակներում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական դատավարության կարգով գործի քննության հետ կապված դատական ծախսերը չեն կարող առանձին հայցի առարկա դառնալ նաև քաղաքացիական դատավարությունում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը հանդիսանում է մասնագիտացված առաջին ատյանի դատարան, որն ըստ էության քննում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՀՀ դատական օրենսգրքի հիման վրա վարչական դատարանի ստեղծմամբ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում 2008 թվականի հունվարի 1-ից ներդրվեց մասնագիտացված վարչական արդարադատության ինստիտուտը:

Վարչական դատարանում վարչական գործերով դատավարության կարգը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և ՀՀ դատական օրենսգրքով, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:



ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է վարչական դատավարության սկզբունքները: Առանձին սկզբունքներ էականորեն տարբերվում են քաղաքացիական դատավարության սկզբունքներից, մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածն ամրագրում է գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքը, որը վարչական դատավարությանը բնորոշ կարևորագույն սկզբունքներից մեկն է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանվել է վարչական դատավարության կարգով գործի քննության հետ կապված դատական ծախսերի բաշխման կարգը, որը ունի վարչական արդարադատությանը բնորոշ մի շարք առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է, բացառությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 10-րդ կետերում նշված դեպքերի: Նշված դեպքերում դատարանը կարող է դատական ծախսերի հատուցման պարտականությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն դնել պատասխանողի վրա (...), իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե որոշումը, գործողությունը կամ անգործությունը ճանաչվում է ոչ իրավաչափ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա ընդունված (կատարված) լինելու պատճառով, և եթե այդ փաստաթղթերը կամ տեղեկությունները ներկայացրել է դատավարության մասնակիցը, ապա դատական ծախսերի հատուցման պարտականությունը կարող է դրվել այդ մասնակցի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ նա տեղյակ չի եղել կամ չէր կարող տեղյակ լինել տվյալ փաստաթղթերի կամ տեղեկությունների կեղծ լինելու մասին:

Հաշվի առնելով, որ դատական ծախսերի բաշխման նպատակը դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետության ապահովման մաս է կազմում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության ոլորտում դատական ծախսերի բաշխումը՝ այդ ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված, չի կարող քննության առարկա դառնալ քաղաքացիական դատավարության շրջանակներում:

Միաժամանակ սույն գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ անդրադառնալով վարչական դատավարության կարգով քննվող գործով դատական ծախսերի և վնասի ինստիտուտների հարաբերակցությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ նույն օրենքով կամ պայմանագրով: Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կտրամադր քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (*տես Նախալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴՅ/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած իր որոշմամբ անդրադառնալով վնասի ինստիտուտի իրավական վերլուծությանը և արձանագրելով, որ քաղաքացիական իրավունքում վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունը պայմանավորված է վնասի առաջացման և վնաս պատճառած անձի գործողությունների պատճառա-

հետևանքային կապով, մեղքի առկայությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, նշել է, որ միակ բացառությունն օրենսդիրը կատարել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով, երբ արդար դատաքննության իրավունքից անբարեխիղճ օգտվելը կարող է վնասներ հատուցելու պարտականություն առաջացնել: Նման դեպքերում մեղքի առկայության և վնասների հատուցման հիմք է դատարանի կողմից հայցն ակնհայտ անհիմն ճանաչելը: Այս դեպքում միայն պատասխանողն իրավունք ունի վնասների հատուցման պահանջով դիմելու դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի հիմքով դատարանի կողմից ակնհայտ անհիմն գնահատված հայց ներկայացրած անձի դեմ վնասների հատուցման պահանջով դատարան դիմելու դեպքից գատ որևէ այլ դեպքում պատասխանողի մոտ հայցվորի նկատմամբ դատարան դիմելու հետևանքով իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջի իրավունք չի առաջանում:

Վերոնշյալ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Նշված իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա): Անձի՝ իրավունքների և ազատությունների (թեկուզև ենթադրյալ) դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ինքնին չի կարող դիտվել որպես ոչ իրավաչափ գործողություն: Անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացումն առանց իրավական հիմնավորման չի կարող դիտվել որպես այլ անձին (մասնավորապես, դատավարության մյուս կողմին) վնաս պատճառելու դրսևորում (յո՛ւն Շուշանիկ Գրիգորյանն ընդդեմ Արարատ Մովսիսյանի թիվ 3-2431(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի որոշումը):

Անվիտիվելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ծախսերի բռնագանձման հիմքը նույնական չէ վնասի պատճառման հետևանքով առաջացած պարտավորությունների ընդհանուր հիմքերի հետ, քանի որ դատական ծախսերի կազմի և բաշխման հետ կապված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ դատական ծախսերն այն ծախսերն են, որոնք կողմը կատարում է դատական կարգով իր իրավունքները պաշտպանելու համար, իսկ դատական ծախսերի բաշխման ընդհանուր սկզբունքն այն է, որ անձը, ում օգտին կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտը, պետք է դատական ծախսերի հատուցում ստանա մյուս կողմի հաշվին: Մինչդեռ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ վարքագծի միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Պատասխանողի կրած դատական ծախսերը հայցվորի կողմից նրան պատճառված վնաս չեն կարող դիտարկվել, քանի որ հայցվորը, իր ենթադրյալ իրավունքի պաշտպանության նպատակով դիմելով դատարան, չի դրսևորել հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծ: Այս երկու ինստիտուտների տարբերությունը դրսևորվում է նաև վրա հասնող հետևանքների առումով՝ դատական ծախսերը հատուցվում են խելամտության սահմաններում, այսինքն՝ դրանց իրական ծավալը կարող է ավելի մեծ լինել, քան փաստացի հատուցման չափը, սակայն վնասի ինստիտուտի առնչությամբ այս սկզբունքը կիրառելի չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ վնասները ենթակա են հատուցման ամբողջ ծավալով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գյուլնարա Մարգարյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Համայնքի՝ շինարարության թույլտվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 24.02.2015 թվականի որոշմամբ թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործի վարույթը կարճվել է՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով: Նշված որոշմամբ ՀՀ վարչական դատարանը դատական ծախսերին անդրադարձել է և կողմերի միջև բաշխել միայն պետական տուրքը:

Սույն գործով Համայնքը հայց է ներկայացրել դատարան՝ պահանջելով Գյուլնարա Սարգսյանից բռնագանձել 380.000 ՀՀ դրամ՝ որպես թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործով կատարված դատական ծախսերի տեսքով պատճառված վնաս, որից 200.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանական ծառայության վճար, իսկ 180.000 ՀՀ դրամը՝ որպես տրանսպորտային և մասնագետ ներգրավելու համար կատարված ծախսեր՝ հայցի իրավական հիմքում դնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը:

Դատարանը, մերժելով հայցը, արձանագրել է, որ մասնագետ ներգրավելու համար կատարված ծախսերի հարցը ենթակա էր քննության թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործի շրջանակներում, հետևաբար այդ ծախսի բռնագանձման պահանջը՝ որպես վնաս, տվյալ քաղաքացիական գործի շրջանակներում անհիմն է և չի բխում քաղաքացիական օրենսդրության տրանսպորտայինից, ինչպես նաև արձանագրել է, որ թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործի վարույթը կարճելու մասին 24.02.2015 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանը փաստաբանական ծառայության վճարին որպես դատական ծախսի չի անդրադարձել, իսկ որոշման հրապարակումից հետո Համայնքը չի դիմել վարչական դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով, և գտել է, որ հայցապահանջի և հայցապահանջի իրավական հիմնավորման չհատակեցման և համապատասխան ապացույցների անբավարարության պայմաններում չի հիմնավորվում Գյուլնարա Սարգսյանի կողմից Համայնքին վնաս պատճառելու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը և գործն ուղարկելով նոր քննության, պատճառաբանել է, որ գործով հիմնավորվել է այն հանգամանքը, որ թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործով Գյուլնարա Սարգսյանի գործողություններով **Համայնքին վնաս է պատճառվել**, մասնավորապես՝ Համայնքը վերոնշյալ վարչական գործով՝ որպես պատասխանող, ստիպված է եղել իր իրավունքները պաշտպանելու համար կատարել ծախսեր, որպիսի հանգամանքը Դատարանը հաշվի չի առել:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի վերոնշյալ պատճառաբանությանը, արձանագրում է հետևյալը.

Համայնքը, հայց ներկայացնելով դատարան, պահանջել է Գյուլնարա Սարգսյանից գումար բռնագանձել՝ **որպես պատճառված վնաս**, ընդ որում նշել է, որ այդ գումարի մի մասն են կազմում թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործով փաստաբանի ծառայությունների համար կատարված վճարումները, իսկ մյուս մասը՝ նույն գործի քննության ընթացքում Համայնքի կողմից կատարված տրանսպորտային և մասնագետ ներգրավելու համար ծախսերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Համայնքի հայցի առարկան ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի հիմքով 380.000 ՀՀ դրամի չափով պատճառված վնասի հատուցումն է, որ մեկ այլ՝ վարչական գործի շրջանակներում գործի քննության հետ կապված դատական ծախսերի բռնագանձման պահանջ է: Այսինքն՝ տվյալ դեպքում Համայնքը գումարի բռնագանձման պահանջի շրջանակներում մեկ այլ՝ վարչական գործի դատական ծախսերը դիտարկել է որպես իրեն պատճառված վնաս: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Գյուլնարա Սարգսյանը, դիմելով ՀՀ վարչական դատարան, իրականացրել է 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատական պաշտպանության իր իրավունքը:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ վարչական դատավարության կարգով դատական ծախսերի բաշխումը կարող է իրականացվել բացառապես կոնկրետ գործի շրջանակներում: Հետևաբար Համայնքը պետական տուրքից բացի այլ դատական ծախսերի բաշխման հարցի լուծում ակնկալելու դեպքում պարտավոր էր վարչական գործի շրջանակներում ներկայացնել դատական ծախսերը հիմնավորող ապացույցներ, որոնց առկայության պայմաններում ՀՀ վարչական դատարանի կողմից դատական ծախսերի բաշխման հարցը չլուծվելու դեպքում գրկված չէր ՀՀ վարչական դատարանի որոշումը դատական ծախսերի բաշխման մասով բողոքարկելու իրավունքից: Մինչդեռ տվյալ պարագայում թիվ ՎԴ/4837/05/12 վարչական գործով կայացված գործի վարույթը կարճելու մասին որոշման շրջանակներում դատական ծախսի բաշխման և այդ որոշման բողոքարկված չլինելու պայմաններում Վճռաբեկ դատարանն այդ հարցը համարում է լուծված և գտնում է, որ

Համայնքը չէր կարող այլ գործի, մասնավորապես, քաղաքացիական գործի շրջանակներում ակնկալել նման հարցի լուծում:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, հայցը մերժելով, կայացրել է օրինական և հիմնավորված դատական ակտ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անհիմն կերպով վարչական գործի շրջանակներում կատարված դատական ծախսը որակելով որպես վնաս, սխալ եզրահանգման է եկել գործի ելքի վերաբերյալ:

*Վճռաբեկ բողոքի պատրասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պարճատարանություններով:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, ուստի Դատարանի վճռին պետք է տալ օրինական ուժ՝ սույն որոշման պատճառաբանություններով հանդերձ:

Միաժամանակ վերոհիշյալ դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի սույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

### ***5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

վերաքննիչ կամ վճարեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հողվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հողվածի 9-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճարեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հողվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Սույն գործով նկատի ունենալով, որ ՀՀ վճարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.04.2016 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Գյուլնարա Սարգսյանի միջնորդությունը բավարարվել է, իսկ վճարեկ բողոքը ենթակա է բավարարման՝ Վճարեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում վճարեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը՝ 11.400 ՀՀ դրամի չափով (380.000 ՀՀ դրամ  $\times$  3%), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հողվածի հիմքով ենթակա է բռնագանձման Համայնքից հօգուտ Հայաստանի Հանրապետության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հողվածներով՝ Վճարեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.07.2015 թվականի վճիռն՝ սույն որոշման պատճառարանություններով:

2. ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքային համայնքից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 11.400 ՀՀ դրամ՝ որպես վճարեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.04.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ <b>ԵԿԴ/1320/02/14</b>
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1320/02/14	<b>2016 թ.</b>
Նախագահող դատավոր՝	Ա. Խառատյան
Դատավորներ՝	Կ. Հակոբյան Ա. Սմբատյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին դռնբաց դատական նիստում, քննելով Վարդան Աթայանի ներկայացուցիչ Հայկ Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.01.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վարդան Աթայանի ընդդեմ Մանվել Տեր-Առաքելյանի, Երրորդ անձ «Ռեզնում» լրատվական գործակալության (այսուհետ՝ Գործակալություն)՝ ի դեմս Հայաստանի ներկայացուցչության՝ պատիվը և արժանապատվությունն արատավորող տեղեկությունները հերքելու, հրապարակայնորեն ներողություն խնդրելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարունությունը**

Դիմելով դատարան՝ Վարդան Աթայանը պահանջել է պարտավորեցնել Մանվել Տեր-Առաքելյանին սույն քաղաքացիական գործով կայացված վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում «<http://www.regnum.ru>» կայքի միջոցով հրապարակայնորեն հերքելու 31.03.2014 թվականին «<http://www.regnum.ru>» կայքում տեղադրված հարցազրույցի ընթացքում հրապարակված զրպարտություն համարվող փաստացի տվյալները և հրապարակայնորեն ներողություն խնդրել իրենից զրպարտության ու վիրավորանքի համար, Մանվել Տեր-Առաքելյանից բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես փոխհատուցում վիրավորանքի հետևանքով իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորելու համար, 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես փոխհատուցում զրպարտության հետևանքով իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատա-

վորելու համար, 1.000 ՀՀ դրամ՝ որպես վիրավորանքի և զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնաս:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 20.08.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Մանվել Տեր-Առաքելյանից հոգուտ Վարդան Աթայանի բռնագանձվել է 800.000 ՀՀ դրամ՝ որպես վիրավորանքի համար փոխհատուցում: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.01.2016 թվականի որոշմամբ Մանվել Տեր-Առաքելյանի և Վարդան Աթայանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 20.08.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարդան Աթայանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վիրավորանքի դեպքում անձը դատական կարգով կարող է միաժամանակ ներկայացնել հրապարակայնորեն ներողություն խնդրելու և փոխհատուցում վճարելուն պարտավորեցնելու պահանջներ: Դատարանն առաջին հերթին պետք է բավարարի ներողություն խնդրելուն պարտավորեցնելու մասին պահանջը, և եթե պատասխանատվության միայն այդ միջոցն անբավարար է վիրավորանքի հետևանքով պատճառված վնասը փոխհատուցելու համար, ապա պետք է սահմանի նաև նյութական հատուցում, մինչդեռ տվյալ դեպքում Դատարանը բավարարել է միայն նյութական հատուցման պահանջը:

Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի 15.11.2011 թվականի թիվ ՍԴԴ-997 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ կետին տված մեկնաբանությանը, քանի որ ստորադաս դատարանները թեև համարել են, որ վիրավորանքի փաստն առկա է, այդուհանդերձ կիրառել են բացառապես նյութական փոխհատուցման ձևը, իսկ ոչ նյութական փոխհատուցումը, որը պետք է կիրառվեր որպես առաջնահերթություն, առհասարակ չի կիրառվել:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130.1-րդ, 219-րդ և 220-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, մերժելով Վարդան Աթայանի վերաքննիչ բողոքը, բողոքում նշված որևէ հիմք և հիմնավորում քննության առարկա չի դարձրել, բողոքի որևէ փաստարկի չի անդրադարձել, ինչը միանշանակ ազդել է գործի ելքի վրա: Եթե Վերաքննիչ դատարանն անդրադառնար բողոքի բոլոր հիմքերին և քննության առարկա դարձներ այն փաստարկը, որ Վարդան Աթայանն իրավունք է ունեցել ներկայացնել ինչպես ոչ նյութական, այնպես էլ նյութական հատուցման պահանջ, իսկ Դատարանն էլ առաջին հերթին պետք է բավարարեր ոչ նյութական հատուցման պահանջը (ներողություն խնդրելուն պարտավորեցնելու մասին), ապա կկայացներ Վարդան Աթայանի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին դատական ակտ:

Բողոքարկվող որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով 27.05.2010 թվականի և թիվ ԵԷԴ/1643/02/09 քաղաքացիական գործով 08.05.2014 թվականի որոշումներին:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 11.01.2016 թվականի որոշումը՝ Վարդան Աթայանի վերաքննիչ բողոքը մերժելու մասով, բեկանել և փոփոխել՝ Վարդան Աթայանի պահանջը բավարարելով մասնակիորեն, այն է՝ պարտավորեցնել Մանվել Տեր-Առաքելյանին սույն քաղաքացիական գործով կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում «<http://www.regnum.ru>» կայքի միջոցով վիրավորանքի համար հրապարակայնորեն ներողություն խնդրել Վարդան Աթայանից:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 31.03.2014 թվականին Գործակալության կայքէջում հրապարակվել է Մանվել Տեր-Առաքելյանի հարցազրույցը՝ «Կովելու եմ մինչև վերջ» (Буду драться до конца) վերնագրով: Հարցազրույցի շրջանակում արված «տխրահոչակ» արտահայտությունը, ինչպես նաև «պուղելի պահակի» աշխատանք առաջարկելը Դատարանը գնահատել է որպես Վարդան Աթայանի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող վիրավորական արտահայտություններ և հայցը բավարարելով մասնակիորեն՝ վճռել է Մանվել Տեր-Առաքելյանից բռնագանձել 800.000 ՀՀ դրամ՝ մերժելով ներողություն խնդրելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջը (**հատոր 1–ին, գ.թ. 13–14, 133–153**):

2) Վարդան Աթայանի ներկայացուցիչը 24.09.2015 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որում, ի թիվս այլնի, նշել է, որ Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածը և, մասնավորապես, հաշվի չի առել վիրավորանքի դեպքում ներողություն խնդրելուն պարտավորեցնելու փոխհատուցման ձևի առաջնահերթությունը (**հատոր 2–րդ, գ.թ. 11–19**):

3) Վերաքննիչ դատարանը 11.01.2016 թվականի որոշման նկարագրական մասում շարադրել է Վարդան Աթայանի վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածի խախտման վերաբերյալ հիմքը և դրա կապակցությամբ ներկայացված հիմնավորումը, սակայն որոշման պատճառաբանական մասում որևէ անդրադարձ չի կատարել վերաքննիչ բողոքի այդ հիմքին և հիմնավորմանը (**հատոր 2–րդ, գ.թ. 138–147**):

### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 2–րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219–րդ հոդվածի մեկնաբանությունը (արտահայտված Վերաքննիչ դատարանի գործողություններում) հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով 27.05.2010 թվականի և թիվ ԵԷԴ/1643/02/09 քաղաքացիական գործով 08.05.2014 թվականի որոշումներով տվյալ նորմին տրված մեկնաբանությանը,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածի 7–րդ կետի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219–րդ, 220–րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերագրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

*1) արդյո՞ք միայն նյութական փոխհատուցումը բավարար է վիրավորանքի կամ գրպարտության դեպքում անձի պարվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին*



պարզաձևությամբ վնասի հատուցման համար այն դեպքում, երբ հայցվորը ներկայացրել է ինչպես ոչ նյութական, այնպես էլ նյութական հատուցման պահանջ,

2) արդյո՞ք վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին:

1) 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14–րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 27–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Համանման դրույթներ է պարունակում նաև 06.12.2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: ՀՀ Սահմանադրության 23–րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է, իսկ 42–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և զաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից (...):

Նույն հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև **այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու**, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ գրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ գրպարտություն կատարած անձի դեմ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է: Նույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածի 3–րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ գրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրա-

կանությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) **հրապարակայնորեն ներողություն խնդրել. ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը.**

2) **եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը. հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը.**

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1.000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Նույն հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) **եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.**

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2.000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

ՀՀ սահմանադրական դատարանը 15.11.2011 թվականի թիվ ՍԴՈ-997 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետք է առանձնակի վերապահումներով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը՝ նկատի ունենալով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ունանց կողմից: Բացի այդ, նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը, ինչպես նաև **մատչելի այլ միջոցներով** հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարավորությունը: ՀՀ սահմանադրական դատարանը նաև նշել է, որ արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց **որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը**: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար:

Նախկինում կայացված որոշմամբ ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ մարդու արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնական աղբյուրն է, պետության գոյության հիմնական պատճառներից մեկը: Մարդու արժանապատվության մասին նշված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, որոնց համաձայն՝ մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ է արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրությունը հռչակել է, որ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է: Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվությունը ճանաչվում է որպես բարձրագույն արժեք, որպես մարդու իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, ինչից հետևում է, որ յուրաքանչյուր մարդու արժանապատվությունը են-

թակա է պաշտպանության պետության կողմից: Միաժամանակ ազատորեն արտահայտվելու իրավունքն ընկած է ժողովրդավարական հասարակության և իրավական պետության հիմքում, այն հանդիսանում է ժողովրդավարական հասարակության զարգացման հիմնական խթաններից մեկը և 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 27-րդ և Կոնվենցիայի 10-րդ հոդվածներն անվերապահորեն հետապնդում են վերը նշված նպատակը: Սակայն ինչպես նշված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում, այս ազատության իրականացումը կապված է պարտականությունների և պատասխանատվության հետ: Չպետք է անտեսել նաև այլ իրավունքները, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային՝ մարդու հիմնարար իրավունքներին վերաբերող փաստաթղթերում նշված արժանապատվության և մասնավոր կյանքի իրավունքը, որոնք պակաս կարևոր չեն ժողովրդավարական հասարակության և իրավական պետության համար: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ այն դեպքերում, երբ մարդու արժանապատվության և արտահայտվելու ազատության իրավունքի բախում է տեղի ունենում, անհրաժեշտ է գտնել պարզ հավասարակշռություն սրանց միջև: Սրանցից յուրաքանչյուրն էլ ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ բաղադրամասեր են, և երկուսն էլ պետք է ներդաշնակորեն առկա լինեն ժողովրդավարական հասարակությունում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված անձի արժանապատվության գործնականում ապահովման իրավական երաշխիք է (տե՛ս Անիկ Դավթյանն ընդդեմ Տիգրան Վիրաբյանի թիվ ԱԿԳ/0179/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրելով, որ քննարկման առարկա հարցի շրջանակներում գործ ունենք մի կողմից տեղեկատվություն տարածելու և խոսքի ազատության, մյուս կողմից անձի՝ իր պատվի, արժանապատվության, գործարար համբավի նկատմամբ հարգանք պահանջելու Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և երաշխավորված իրավունքների հետ, ի թիվս այնի, անհրաժեշտ է համարել նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերը հնարավորություն են տալիս անձին նախատեսված **մեկ կամ մի քանի միջոցների կիրառմամբ** զրպարտող կամ վիրավորող սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու պահանջ ներկայացնել: Այդուհանդերձ, ՀՀ վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ դատարաններ կոնկրետ դեպքում պետք է անհրաժեշտ գնահատական տան այն հանգամանքին, թե արդյոք կողմերը որևէ փորձ արել են վեճը լուծել «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված արտադատական կարգով, այն է՝ արդյոք անձը մինչև դատարան հայց ներկայացնելը դիմել է համապատասխան լրատվամիջոցին հերքում հրապարակելու պահանջով, և այդ պահանջին զանգվածային լրատվության միջոցը որևէ ընթացք տվել է, թե ոչ: Բացի այդ, դատարանները քննարկվող հարցի վերաբերյալ գործեր քննելիս նախ պետք է ջանքեր գործադրեն գործը հաշտությամբ լուծելու ուղղությամբ, այնուհետև գործում առկա բոլոր ապացույցների գնահատմամբ անհրաժեշտ է պարզել՝ **արդյո՞ք հնարավոր չէ վերականգնել անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասը ոչ նյութական փոխհատուցում նշանակելու միջոցով, քանի որ օրենսդիրը մինչև նյութական փոխհատուցում սահմանելը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով սահմանել է նաև պատճառված վնասի վերականգնման այլ միջոցների ընտրության և կիրառման հնարավորություն** (վիրավորանքի դեպքում՝ հրապարակային ներողություն խնդրել, եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեությունից իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը, զրպարտության դեպքում՝ եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեությունից իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը):

Ամփոփելով նշվածը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանները պետք է փորձեն գործում առկա ապացույցների գնահատմամբ **մինչև նյութական փոխհատուցում սահմանելը քննարկման առարկա դարձնել խախտված իրավունքների վերա-**

**կանգնման օրենքով նախատեսված այլ միջոցների կիրառման հնարավորությունը**, որը գանգվածային լրատվության միջոցների դեպքում չի խոչընդոտի նրանց հետագա բնականոն գործունեությունը՝ միաժամանակ բացառելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումը (տե՛ս օրինակ, Վանո Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի, երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ–ի թիվ 17/0749/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել հետևյալը. հաշվի առնելով այն, որ անձի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը ոչ նյութական բարիքներ են, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով օրենսդիրը դրանց հասցված վնասը հատուցելու **առաջնահերթ** ձևեր է սահմանել ոչ նյութական միջոցները՝ նյութական կամ ոչ նյութական հատուցման պահանջ ներկայացնելու ընտրության հարցը վերապահելով վիրավորանքի կամ գրպարտության ենթարկված անձին: Ընդ որում, անձը կարող է պահանջել օրենքով սահմանված հատուցման ձևերից մեկը կամ մի քանիսը: Դա նշանակում է, որ եթե անձը վիրավորանքի կամ գրպարտության համար պահանջել է միայն փոխհատուցման ոչ նյութական միջոց, դատարանը պարտավոր է բավարարվել միայն ոչ նյութական փոխհատուցման միջոց կիրառելով, իսկ եթե անձը պահանջել է հատուցման և ոչ նյութական, և նյութական միջոցներ կիրառել, ապա առաջին հերթին կիրառման է ենթակա հատուցման ոչ նյութական միջոցը, և միայն դրա անբավարարության դեպքում դատարանը կարող է կիրառել նյութական փոխհատուցման միջոցը: Դատարանն իրավասու չէ հատուցման ոչ նյութական և նյութական միջոցներ կիրառելու պահանջներ ներկայացված լինելու պարագայում կիրառել միայն նյութական միջոցը, քանի որ դա կենթադրի նյութական հատուցման միջոցներ տրամադրելով ոչ նյութական բարիքների դեմ անարգել ոտնձգելու հնարավորություն, ինչը կհակասի մարդու արժանապատվության՝ բարձրագույն արժեք լինելու գաղափարին: Այլ կերպ ասած՝ ոչ նյութական արժեքին վնաս պատճառելու պարագայում միայն նյութական հատուցման միջոց կիրառելը չի կարող համարվել համաչափ պատասխանատվություն, եթե տուժողի համար իր ոտնահարված արժանապատվության վերականգնման համար որպես առաջնային փոխհատուցման ձև ներկայացվել է հենց ոչ նյութական հատուցման պահանջը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև հավելել, որ երբ վնաս է պատճառվում ոչ նյութական արժեքի, վնաս պատճառողի կողմից ոչ նյութական հատուցում տրամադրելիս է, որ որպես կանոն ապահովվում է վնասի հատուցման համաչափությունը, քանի որ ոչ նյութական հատուցում տրամադրելիս (հրապարակայնորեն ներողություն խնդրելիս կամ հրապարակայնորեն հերքում հրապարակելիս) վնաս պատճառողը նույնպես որոշակի ոչ նյութական գրկանքներ է կրում՝ մասնավորապես ընդունելով իր կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելը: Դա հատկապես կարևոր է տուժող կողմի համար, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է հրապարակայնորեն: Այլ կերպ ասած, որպես կանոն, հենց ոչ նյութական հատուցման պայմաններում է, որ որոշակիորեն վերականգնվում են անձի ոտնահարված ոչ նյութական արժեքները: Դա է պատճառը, որ օրենսդիր կողմից որպես առաջնային փոխհատուցման ձև նախատեսվել են հենց ոչ նյութական հատուցումները՝ չբացառելով նաև միայն նյութական հատուցում ներկայացնելու պահանջ ներկայացնելու հնարավորությունը, որպիսի կարգավորումը բխում է հայցվորի տնօրինչականության սկզբունքի էությունից:

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի սույն օրենսգրքի 130.1 հոդվածով սահմանված պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ որոշման պատճառաբանական մասը, ի թիվս այլնի, պետք է պարունակի եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130.1-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

ՀՀ վճարեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի մեկնաբանությանը, նշել է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտը պետք է վերանայի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայելիս պետք է պարտադիր անդրադառնա վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերին և հիմնավորումներին (*տես Տիգրան Կիրակոսյանի ընդդեմ Վիկտոր Խոյրդյանի թիվ ԵՆԳ/0871/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 27.05.2010 թվականի որոշումը*):

ՀՀ վճարեկ դատարանը մեկ այլ գործով արձանագրել է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում **նշված բոլոր հիմքերը**՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը կկրի հուշակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն զուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադառնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ (*տես Համայակ Ոսկանյանի ընդդեմ Վոլոդյա Հակոբյանի, և Վոլոդյա Հակոբյանի ընդդեմ Համայակ Ոսկանյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի փարածքային պորտաբաժանման թիվ ԵՆԳ/1643/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Վճարեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանական մասում վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալու և դրանց գնահատական տալու պահանջն օրենսդրի կողմից ինքնասպասարկող չի սահմանվել: ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*տես Սուսաննա Արարարի Միրզոյանի ընդդեմ Սուսաննա Միրզոյանի Միրզոյանի թիվ ԱՐԱԳ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկման ինստիտուտի միջոցով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը կկրի զուտ ձևական բնույթ, եթե վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում կայացնի բողոքը մերժելու մասին՝ առանց գնահատման արժանացնելու բողոքում ներկայացված յուրաքանչյուր հիմք և ըստ այդմ անձին գրվելով բողոքում բարձրացված յուրաքանչյուր հիմքի կապակցությամբ վերադաս դատարանի եզրահանգումը ստանալու իրավունքից:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործի փաստերի համաձայն՝ 31.03.2014 թվականին Գործակալության կայքէջում հրապարակված հարցազրույցի շրջանակում արված «տխրահոչակ» արտահայտությունը, ինչպես նաև «պողեղի պահակի» աշխատանք առաջարկելը Դատարանը գնահատել է որպես Վարդան Աթայանի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող վիրավորական արտահայտություններ և հայցը բավարարելով մասնակիորեն՝ վճռել է Սանվել Տեր-Առաքելյանից բռնագանձել 800.000 ՀՀ դրամ՝ մերժելով ներողություն խնդրելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջը՝ պատճառաբանելով, որ միայն 800.000 ՀՀ դրամ փոխհատուցման տրամադրումը համաչափ է թույլ տրված խախտմանը:

Վերաքննիչ դատարանը, 11.01.2016 թվականի որոշման ներածական մասում նշելով, որ քննվում է նաև Վարդան Աթայանի (ներկայացուցիչ Հայկ Հարությունյան) վերաքննիչ բողոքը, նկարագրական մասում նշելով այդ բողոքի հիմքերը և հիմնավորումները, վերաքննիչ բողոք ներկայացրած անձի պահանջը, նույն որոշման պատճառաբանական մասում չի անդրադարձել բողոքի բոլոր հիմքերին և, մասնավորապես, այն հարցին, թե Դատարանն արդյոք ճիշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ կետը, այսինքն՝ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշման պատճառաբանական մասում որևէ եզրահանգում չի կատարել ոչ նյութական փոխհատուցման միջոց կիրառված չլինելու հիմնավորվածության վերաբերյալ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով Վարդան Աթայանի վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին և, մասնավորապես, վերաքննիչ բողոքում բարձրացված այն հարցին, թե արդյոք Դատարանը ճիշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ կետը՝ ոչ նյութական փոխհատուցման միջոց չկիրառելով այն դեպքում, երբ հայցապահանջով ներկայացված է եղել նման պահանջ, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ և 220-րդ հոդվածների, արդյունքում նաև՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ կետի խախտում, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Այսպիսով, Վարդան Աթայանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 11.01.2016 թվականի որոշումը մասնակիորեն՝ Վարդան Աթայանի վերաքննիչ բողոքը մերժելու մասով, բեկանելու և գործը բեկանված մասով նույն դատարան նոր քննության ուղարկելու համար՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վարդան Աթայանի վերաքննիչ բողոքը քննելու և, մասնավորապես, Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կիրառումը գնահատելու համար:

***5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ գործն ուղարկվում է Վերաքննիչ դատարան՝ նոր քննության, գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.01.2016 թվականի որոշման՝ Վարդան Աթայանի վերաքննիչ բողոքը մերժելու մասը, և այդ մասով գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2174/02/11  
դատարանի որոշում 2016 թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2174/02/11  
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան  
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան  
Հ. Ենոքյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22-ին դռնբաց դատական նիստում, քննելով Ամալյա Ստեփանյանի և նրա ներկայացուցիչ Արտավազդ Պետրոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.06.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մարինա Բաղենյանի (Պողիկյան) և Ամելիա Հարությունյանի օրինական ներկայացուցիչ Մարինա Բաղենյանի (Պողիկյան) ընդդեմ Լուիզա Հարությունյանի և Ամալյա Ստեփանյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառանգական զանգվածից բաժնետնան առանձնացնելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Ամալյա Ստեփանյանի ընդդեմ Մարինա Բաղենյանի (Պողիկյան), Ամելիա Հարությունյանի օրինական ներկայացուցիչ Մարինա Բաղենյանի (Պողիկյան), Լուիզա Հարությունյանի խնամակալ Սոֆյա Ավետիսյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառանգությունը բաժանելու պահանջների մասին, և ըստ հայցի Լուիզա Հարությունյանի խնամակալ Սոֆյա Ավետիսյանի ընդդեմ Ամալյա Ստեփանյանի, երրորդ անձինք Մարինա Բաղենյանի (Պողիկյան) և Ամելիա Ստեփանյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառանգությունը բաժանելու, բաժինը փոխհատուցելու և հաշվանց կատարելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Մարինա Բաղենյանը (Պողիկյան)՝ նաև որպես Ամելիա Հարությունյանի օրինական ներկայացուցիչ, պահանջել է իրեն և անչափահաս Ամելիա Հարությունյանին ճանաչել 16.09.2010 թվականին մահացած Ռեզազի Հարությունյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ և ժառանգական զանգվածի մեջ մտնող անշարժ և շարժա-



կան գույքից առանձնացնել իրենց պատկանող բաժնեմասը: Մասնավորապես, ի թիվս այլ գույքային միավորների, պահանջել է ճանաչել իրենց սեփականության իրավունքը Ռազմիկ Հարությունյանի կողմից Ամալյա Ստեփանյանի հայաստանյան բանկային հաշվին փոխանցված 230.000 եվրոյից 180.000 եվրոյի 1/2 մասի նկատմամբ և այն առանձնացնել ժառանգության զանգվածից (քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0559/02/11):

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ամալյա Ստեփանյանը պահանջել է իրեն ճանաչել 16.09.2010 թվականին մահացած Ռազմիկ Հարությունյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և ժառանգական զանգվածի մեջ մտնող անշարժ ու շարժական գույքը բաժանել կողմերի միջև:

Դիմելով դատարան՝ Լուիզա Հարությունյանի օրինական ներկայացուցիչ Սոֆյա Ավետիսյանը, ի թիվս այլ գույքային միավորների՝ պահանջել է ճանաչել Լուիզա Հարությունյանի սեփականության իրավունքը Ռազմիկ Հարությունյանի կողմից Ամալյա Հարությունյանի բանկային հաշվին փոխանցված 230.000 եվրոյից 164.206 եվրոյի նկատմամբ և այն վերադարձնել (քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2174/02/11):

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.02.2012 թվականի որոշմամբ թիվ ԵԱԲԴ/0559/02/11 և թիվ ԵԱԲԴ/2174/02/11 քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում, և միացված գործի վարույթը շարունակվել է թիվ ԵԱԲԴ/2174/02/11 համարի ներքո:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Զ. Նախշարյան) (այսուհետ՝ Դատարան) 09.12.2014 թվականին վճռել է. «Մարինա Բաղեմյանի (Պողիկյան), Ամելիա Հարությունյանի (օրինական ներկայացուցիչ Մարինա Բաղեմյան (Պողիկյան)), Ամալյա Ստեփանյանի, Լուիզա Հարությունյանի խնամակալ Սոֆյա Ավետիսյանի հայցապահանջները բավարարել մասնակի. Մարինա Բաղեմյանին (Պողիկյան) ճանաչել քաղաք Երևան, Ազատության պողոտա 9/3 շենքի թիվ 22 բնակարանի՝ Ռազմիկ Հարությունյանի անվամբ սեփականության իրավունքով ձևակերպված 1/4 մասի և Ռազմիկ Հարությունյանի անվամբ «Ալբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ում հաշվին առկա 7.500 եվրո գումարի նկատմամբ համատեղ սեփականատեր: Մարինա Բաղեմյանին (Պողիկյան), Ամելիա Հարությունյանին, Լուիզա Հարությունյանին և Ամալյա Ստեփանյանին ճանաչել հանգուցյալ Ռազմիկ Հարությունյանի ժառանգական զանգվածի՝ Ամալյա Ստեփանյանի անվամբ «Ալբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ում հաշվեհամարին գտնվող 180.000 եվրո գումարի, քաղաք Երևան, Ազատության պողոտա 9/3 շենքի թիվ 22 բնակարանի՝ Ռազմիկ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 1/8-ական մասի, «Մաքսֆոն» տիպի երաժշտական գործիքի, Ռազմիկ Հարությունյանի անվամբ «Ալբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ում առկա հաշվեհամարի 3.750 եվրո գումարի և տոկոսների նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ՝ յուրաքանչյուրը 1/4 մասով: «Մաքսֆոն» տիպի երաժշտական գործիքը թողնել Ամալյա Ստեփանյանի տնօրինության տակ՝ դադարեցնելով Մարինա Բաղեմյանի (Պողիկյան), Ամելիա Հարությունյանի և Լուիզա Հարությունյանի սեփականության իրավունքը նշված երաժշտական գործիքի նկատմամբ՝ Ամալյա Ստեփանյանի կողմից նրանց բաժիններին համապատասխան 25.000-ական դրամ փոխհատուցում տալու պահից: Դադարեցնել Ամալյա Ստեփանյանի, Մարինա Բաղեմյանի (Պողիկյան) և Ամելիա Հարությունյանի սեփականության իրավունքը քաղաք Երևան, Ազատության պողոտա 9/3 շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ՝ յուրաքանչյուրին իր բաժնեմասին համապատասխան Լուիզա Հարությունյանի կողմից Մարինա Բաղեմյանին (Պողիկյան) և Ամելիա Հարությունյանին՝ 5.610.939 ՀՀ դրամ փոխհատուցում վճարելու պահից, Ամալյա Ստեփանյանին՝ 935.156,5 ՀՀ դրամ փոխհատուցում վճարելու պահից՝ ճանաչելով Լուիզա Հարությունյանին քաղաք Երևան, Ազատության պողոտա 9/3 շենքի թիվ 22 բնակարանի միանձնյա սեփականատեր: Թիվ ԵԱԲԴ/2174/02/12 քաղաքացիական գործի վարույթը՝ «Հոնդա Ակորդ» մակնիշի 21 OL 944 պետհամարանիշի ավտոմեքենայի պահանջի մասով, կարճել: Մնացած մասով Մարինա Բաղեմյանի (Պողիկյան), Ամելիա Հարությունյանի (օրինական ներկայացուցիչ Մարինա Բաղեմյան (Պողիկյան)), Ամալյա Ստեփանյանի, Լուիզա Հարությունյանի խնամակալ Սոֆյա Ավետիսյանի հայցապահանջները մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.06.2015 թվականի որոշմամբ Ամալյա Ստեփանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. որոշվել է Դատարանի 09.12.2014 թվականի վճիռը մասնակիորեն՝ Ամալյա Ստեփանյանից պետական տուրք բռնագանձելու մասով, բեկանել և փոփոխել այն՝ Ամալյա Ստեփանյանի մասով պետական տուրքի հարցը համարել լուծված: Դատարանի 09.12.2014 թվականի վճիռը՝ մնացած մասերով, թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ամալյա Ստեփանյանը և նրա ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279–րդ, 280–րդ, 1184–րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186–րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապես են հերքելով փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ռազմիկ Հարությունյանի կողմից Ամալյա Ստեփանյանին «Ակբա–Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ–ի համապատասխան հաշվեհամարին փոխանցված գումարն Ամալյա Ստեփանյանին հանձնվել է օրինական հիմքերով, ուստի Ամալյա Ստեփանյանի անվամբ արտարժույթային հաշվեհամարում եղած 180.000 եվրոն հանդիսացել է վերջինիս սեփականությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վիճելի գումարը Ռազմիկ Հարությունյանի կողմից փոխանցվել է ոչ թե իր անձնական հաշվեհամարին, այլ իր մոր՝ Ամալյա Ստեփանյանի հաշվեհամարին՝ որպես սեփականություն իր հայեցողությամբ այն տնօրինելու իրավունքով և պայմանով, ուստի վիճելի գումարը ժառանգության բացման ժամանակ ժառանգատուին չի պատկանել և չէր կարող մտնել ժառանգության գանգվածի մեջ ու բաժանվել ժառանգների միջև: Ընդ որում, Ամալյա Ստեփանյանի կողմից Ռազմիկ Հարությունյանից վերոնշյալ գումարն օրինական հիմքով ի սեփականություն ստանալու հանգամանքը հիմնավորվում է նաև գործում առկա գրավոր ապացույցով, այն է՝ «Ակբա–Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ–ի կողմից Ամալյա Ստեփանյանին տրված թիվ 220318000142002 հաշվեհամարով կատարված գործարքների քաղվածքի բնօրինակով, որի ուսումնասիրությունից հետևում է, որ նշված գումարն Ամալյա Ստեփանյանն իր իսկ անվամբ ձևակերպել է որպես ավանդ, ինչպես նաև նշված հաշվեհամարից գումարային փոխանցումները կատարվել են բացառապես վերջինիս հանձնարարությամբ: Հետագայում Ամալյա Ստեփանյանը գումարն ամբողջությամբ հանել է հաշվեհամարից, և սույն գործի քննության պահին նշված գումարն այլևս գոյություն չի ունեցել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 12.06.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցերը մասնակիորեն՝ Ռազմիկ Հարությունյանի կողմից Ամալյա Ստեփանյանի հայաստանյան բանկային հաշվին ուղարկված 180.000 եվրոն ժառանգական գանգվածի մեջ ներառելու և այն ժառանգների միջև բաժանելու պահանջների մասով, մերժել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Լուիզա Հարությունյանը ժառանգատու Ռազմիկ Հարությունյանի և Լիաննա Ավետիսյանի (մահացած 15.01.2006 թվականին) դուստրն է՝ Ռազմիկ Հարությունյանի առաջին ամուսնությունից ծնված երեխան (**հատոր 1–ին գ.թ. 32, հատոր 3–րդ գ.թ. 20**):

2) Ամայյա Ստեփանյանը ժառանգատու Ռազմիկ Հարությունյանի մայրն է, իսկ Մարինա Բաղեմյանը (Պողիկյան) և Ամելիա Հարությունյանը հանդիսանում են համապատասխանաբար ժառանգատու Ռազմիկ Հարությունյանի երկրորդ կինը և երկրորդ ամուսնությունից ծնված երեխան (**հատոր 1–ին գ.թ. 41, 55**):

3) 22.09.2010 թվականի թիվ ԱԲ038903 մահվան վկայականի համաձայն՝ Ռազմիկ Հեկտորի Հարությունյանը մահացել է 16.09.2010 թվականին (**հատոր 1–ին գ.թ. 42**):

4) Ահաբեկչական գործողությունների և հանցանքների զոհերի երաշխիքային հիմնադրամի կողմից տրված և 03.10.2008 թվականին հաստատված «Համաձայնության հաստատում» փաստաթղթի համաձայն՝ «Գործ TL200674677–1, Արությունյան CIVIL Թուլուզից, Ռեֆ. CIVI 08/00276, Պարոն Ռազմիկ Արությունյանը /ծնված՝ 17.09.1970 թ., ք. Կիրովաբադում, բնակվող՝ Ռ. Կրնոյի 1–ին փակուղի, բն. 324, Կաստանե Թողուսան 31320 հասցեում, մի կողմից և երաշխիքային հիմնադրամը, որի նստավայրն է Վենսեն 94 ՍԵՂԵՔՍ, Դեֆրանս փող. 64, մյուս կողմից կնքեցին սույն փաստաթուղթը հետևյալի մասին. 15 հունվարի 2005 թվականին Կաստանե Թողուսանում /31320/ տեղի ունեցած դեպքերից հետո, որը պատճառ հանդիսացավ, մասնավորապես, տիկին Լիանա Արությունյանի մահվան, ինչպես նաև պարոն Ռազմիկ Արությունյանին հասցրած լուրջ վնասվածքների, իրեն հատկացվող փոխհատուցումը՝ որպես բարոյական վնաս, կապված կտջ կորստյան, ինչպես նաև ցանկացած պատճառների արդյունքում առաջացած ֆինանսական վնաս, ամրագրվում է ընդհանուր համաձայնությամբ, ըստ փոխհատուցման գործարքի, 273.676,01 եվրո գումարի չափով, որի մանրամասները ներկայացված են փոխհատուցմանը վերաբերող կից փաստաթղթերում» (**հատոր 1–ին, գ.թ. 34**):

5) «Ակրա–Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ–ի «Արաբկիր» մասնաճյուղի կողմից 08.10.2010 թվականին տրամադրված՝ Ամայյա Ստեփանյանի բանկային հաշվի քաղվածքի համաձայն՝ 10.02.2010 թվականին Ամայյա Ստեփանյանին փոխանցվել է (մուտք) 230.000 եվրո գումար, որը 11.02.2010 թվականին (ելք) ձևակերպվել է որպես ավանդ: Միաժամանակ 04.02.2010 թվականից սկսած Ամայյա Ստեփանյանի կողմից իրականացվել են տարբեր գործարքներ, ինչի արդյունքում մնացորդը տվյալ հաշվի վրա 30.06.2010 թվականի դրությամբ կազմել է 0 (զրո) (**հատոր 1–ին, գ.թ. 53–54**):

6) «Ակրա–Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ–ի կողմից 30.05.2012 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Ամայյա Ստեփանյանը 07.04.2010 թվականին բանկում ունեցած իր հաշվից կատարել է 109.000 ԱՄՆ դոլարի փոխանցում՝ «փոխանցում հաշվին բնակարանի արժեք» նկարագրությամբ (**հատոր 3–րդ, գ.թ. 104–105**):

#### 4. Վճուրբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը

Վճուրբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճուրբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184–րդ, 1186–րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճուրբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք ժառանգարուի կողմից իրեն պարկանող դրամական միջոցներն այլ անձի բանկային հաշվին փոխանցած լինելու պայմաններում այդ դրամական միջոցները կարող են ներառվել ժառանգության զանգվածի մեջ ու բաժանվել ժառանգների միջև:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միանական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքի կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող

գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես՝

1) ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները.

2) քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքը.

3) անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները.

4) այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ժառանգումը մահացած անձի իրավունքների և պարտականությունների՝ օրենքով սահմանված կարգով փոխանցումն է այլ անձանց: Օրենսդիրը, կարգավորելով այդ կապակցությամբ ծագած հարաբերությունները, ժառանգման ինստիտուտի յուրաքանչյուր տարրին հասցեագրված հստակ պահանջներ է ամրագրել: Այսպես, ժառանգության ինստիտուտի առանցքային տարրերից է ժառանգության զանգվածը, որի բովանդակությունը կազմում է ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները: Ժառանգության զանգվածի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրը, ընդհանրական կերպով սահմանելով ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի կազմը, միաժամանակ նախատեսել է հետևյալ սահմանափակումները՝

ա) ժառանգության զանգվածի կազմում չեն կարող ներառվել ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները.

բ) ժառանգության զանգվածի կազմում կարող է ներառվել միայն ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը:

Վերը նշված սահմանափակումներն ինքնանպատակ չեն, այլ բխում են ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններից:

Ժառանգման իրավահարաբերությունների հիմքում ընկած է ընդհանուր իրավահաջորդության դրույթը, հետևաբար փոխանցման ենթակա է ոչ թե ցանկացած գույք կամ գույքային իրավունք կամ պարտականություն, այլ ժառանգության բացման պահին ժառանգատուին պատկանող համապատասխան գույքը կամ գույքային իրավունքը կամ պարտականությունը: Միևնույն ժամանակ փոխանցման ենթակա է ոչ թե ժառանգատուին պատկանող ցանկացած գույք կամ գույքային իրավունք կամ պարտականություն, այլ միայն նրանք, որոնք ժառանգատուի մահվան պարագայում անգամ շարունակում են իրենց օբյեկտիվ գոյությունը: Հետևաբար ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված այն իրավունքները և պարտականությունները, որոնք, ըստ էության, սերտաճելով ժառանգատուի անձի հետ, դադարում են նրա մահվամբ, չեն կարող ժառանգության զանգվածի մեջ մտնել և փոխանցվել իրավահաջորդության կարգով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ժառանգության զանգվածի մաս կարող են կազմել նաև դրամական միջոցները: Դրամը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, միաժամանակ սեփականության իրավունքի օբյեկտ է: Որպես սեփականության իրավունքի օբյեկտ՝ այն կարող է քաղաքացիական շրջանառությունում հանդես գալ կանխիկ և անկանխիկ եղանակով: Եթե կանխիկ շրջանառության պարագայում անձի սեփականության իրավունքը հավաստվում է դրամական միջոցների՝ համապատասխան անձի կողմից տիրապետման փաստով, ապա անկանխիկ շրջանառության պարագայում առաջնային նշանակություն են ձեռք բերում տվյալ անձի անումով առկա դրամական միջոցների հաշիվները և դրանցում մուտք եղած դրամական միջոցները:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ ժառանգության իրավահարաբերություններից բխող վեճերով որպես ժառանգության զանգվածի մաս վկայակոչվում են դրամական միջոցները, դատարանները, որպես գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ, պետք է պարզեն հետևյալ փաստական տվյալները՝

- վկայակոչված դրամական միջոցներն արդյո՞ք գոյություն ունեն օբյեկտիվ իրականությունում,
- եթե այո, ապա կանխիկ, թե անկանխիկ եղանակով,
- եթե կանխիկ, ապա արդյո՞ք այդ դրամական միջոցները մինչև ժառանգության բացման օրը փաստացի գտնվել են ժառանգատուի տիրապետման ներքո,
- եթե անկանխիկ, ապա արդյո՞ք համապատասխան բանկային հաշիվը պատկանել է ժառանգատուին (նշված փաստի հավաստիք կարող է, օրինակ, լինել բանկային հաշվի պայմանագիրը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ահաբեկչական գործողությունների և հանցանքների գոհերի երաշխիքային հիմնադրամի կողմից 03.10.2008 թվականին հաստատված «Համաձայնության հաստատում» վերտառությամբ փաստաթղթով Ռազմիկ Հարությունյանը՝ որպես բարոյական վնաս, կապված իր կոնց՝ Լիաննա Ավետիսյանի կորստյան (մահվան) հետ, ինչպես նաև որպես իրեն հասցրած վնասվածքների հատուցում, ստացել է 273.676,01 եվրո գումար: Հետագայում՝ 10.02.2010 թվականին, Ռազմիկ Հարությունյանը նշված գումարից 230.000 եվրո գումարը փոխանցել է իր մոր՝ Ամալյա Ստեփանյանի համապատասխան հաշվեհամարին: 11.02.2010 թվականին Ամալյա Ստեփանյանը 230.000 եվրո գումարը ձևակերպել է որպես ավանդ իր անվամբ: Ըստ գործում առկա՝ «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի «Արաբկիր» մասնաճյուղի կողմից 08.10.2010 թվականին տրամադրված՝ Ամալյա Ստեփանյանի բանկային հաշվի քաղվածքի համաձայն՝ 10.02.2010 թվականին Ամալյա Ստեփանյանին փոխանցվել է (մուտք) 230.000 եվրո գումար, որը 11.02.2010 թվականին (ելք) ձևակերպվել է որպես ավանդ: Միաժամանակ 04.02.2010 թվականից սկսած՝ Ամալյա Ստեփանյանի կողմից իրականացվել են տարբեր գործարքներ, ինչի արդյունքում մնացորդը տվյալ հաշվի վրա 30.06.2010 թվականի դրությամբ կազմել է 0 (զրո) դրամ: Մասնավորապես, ըստ գործում առկա՝ «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի կողմից 30.05.2012 թվականին տրված տեղեկանքի՝ Ամալյա Ստեփանյանը 07.04.2010 թվականին բանկում ունեցած իր հաշվից կատարել է 109.000 ԱՄՆ դոլարի փոխանցում՝ «Փոխանցում հաշվին բնակարանի արժեք» նկարագրությամբ:

Սույն գործով Դատարանը, արձանագրելով, որ Դատարանին չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ Ամալյա Ստեփանյանի և Ռազմիկ Հարությունյանի միջև կնքված է եղել որևէ, այդ թվում նաև՝ նվիրատվության գործարք, որի շրջանակներում փոխանցվել է 230.000 եվրոն, գտել է, որ Ամալյա Ստեփանյանի հաշվին փոխանցված 230.000 եվրոն պատկանել է հանգուցյալ Ռազմիկ Հարությունյանին և մտնում է վերջինիս ժառանգության զանգվածի մեջ:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Վերը նշված վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով ներկայացվել է ժառանգատուին ենթադրաբար պատկանող դրամական միջոցները ժառանգության զանգվածում ներառելու և այն ժառանգների միջև բաժանելու պահանջ: Հետևաբար սույն գործով նախևառաջ պետք է հիմնավորվելիս տվյալ դրամական միջոցների առկայությունը և դրանք ժառանգատուին պատկանելու փաստը:

Սույն գործում առկա տեղեկանքի համաձայն՝ ժառանգատու Ռազմիկ Հարությունյանը վիճելի դրամական միջոցները դեռևս իր կենդանության օրոք՝ 10.02.2010 թվականին, փոխանցել է պատասխանող Ամալյա Ստեփանյանի՝ «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում առկա բանկային հաշվին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 912-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բանկային հաշվի պայմանագրով բանկը պարտավորվում է ընդունել և հաճախորդի (հաշվի տիրոջ) բացած հաշվի վրա մուտքագրել մուտք եղող դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրությունները: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ:

Վկայակոչված իրավակարգավորումից հետևում է, որ դրամական միջոցների՝ համապատասխան անձի բանկային հաշվին մուտագրվելու պահից դրանց նկատմամբ պահանջի իրավունքը պատկանում է միայն տվյալ անձին, և վերջինս իրավունք ունի դրանք տնօրինելու սեփական հայեցողությամբ: Հետևաբար դրամական միջոցների՝ համապատասխան անձի բանկային հաշվին մուտագրվելու պահից գործում է այդ միջոցների՝ տվյալ անձի սեփականությունը լինելու կանխավարկաձևը, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:

Վերոգրյալի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատասխանող Ամայա Ստեփանյանի՝ «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում առկա բանկային հաշվին 10.02.2010 թվականին կատարված փոխանցմամբ դադարել է 230.000 եվրոյի, համապատասխանաբար նաև դրա մաս կազմող՝ 180.000 եվրոյի նկատմամբ Ռազմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը, ինչը միաժամանակ պայմանավորել է այդ դրամական միջոցների նկատմամբ Ամայա Ստեփանյանի սեփականության իրավունքի ծագման փաստը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը հիմնավորվում է նաև կողմերի դրսևորած հետագա վարքագծի գնահատմամբ:

Այսպես,

- Ռազմիկ Հարությունյանը, դրամական միջոցները փոխանցելով Ամայա Ստեփանյանի բանկային հաշվին, որևէ կամք չի դրսևորել այդ միջոցների հետագա տնօրինման վերաբերյալ.
- Ամայա Ստեփանյանը դրամական միջոցների՝ իր բանկային հաշվին մուտքագրվելուց հետո տնօրինել է նշված դրամական միջոցները՝ բանկային ավանդի պայմանագիր, հետագայում նաև այլ գործարքներ կնքելով,
- գործում առկա չէ որևէ ապացույց, որը հիմնավորում է Ռազմիկ Հարությունյանի և Ամայա Ստեփանյանի միջև պարտավորական հարաբերությունների առկայության փաստը:

Վերը շարադրված փաստական հանգամանքները ևս անուղակիորեն վկայում են, որ Ռազմիկ Հարությունյանի կողմից վիճելի դրամական միջոցների փոխանցումն իրականացվել է առանց դրանց նկատմամբ սեփականության իրավունքի պահպանման մտադրության, հետևաբար Ամայա Ստեփանյանի բանկային հաշվին մուտքագրվելու պահից դադարել են հանդիսանալ Ռազմիկ Հարությունյանի սեփականությունը և վերջինիս ժառանգության բացման ժամանակ չէին կարող մտնել նրա ժառանգության զանգվածի մեջ:

Ավելին, գործում առկա ապացույցի համաձայն՝ փոխանցված դրամական միջոցներով 04.02.2010 թվականից սկսած Ամայա Ստեփանյանի կողմից իրականացվել են տարբեր գործարքներ, ինչի արդյունքում մնացորդը վերջինիս բանկային հաշվի վրա 30.06.2010 թվականի դրությամբ կազմել է 0 (զրո) դրամ: Այսինքն՝ վիճելի դրամական միջոցները ժառանգության բացման պահին այլևս գոյություն չեն ունեցել օբյեկտիվ իրականությունում, որպիսի հանգամանքը ևս բացառում է դրանք՝ ժառանգության զանգվածում ներառելու և ժառանգների միջև բաժանելու հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճելի դրամական միջոցները (230.000 եվրոյի մաս կազմող 180.000 եվրոն) Ռազմիկ Հարությունյանի ժառանգության զանգվածի մաս չեն կազմում, հետևաբար չէին կարող ներառվել ժառանգության զանգվածում և բաժանվել ժառանգների միջև, մինչդեռ ստորադաս դատարանները վերոգրյալի անտեսմամբ սխալ եզրահանգման են եկել գործի լուծման համար նշանակություն ունեցող նշված փաստերի վերաբերյալ, ինչը հանգեցրել է վեճի սխալ լուծմանը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանում է միայն Դատարանի վճիռը՝ Մարինա Բադեյանին (Պողիկյան), Ամելիա Հարությունյանին, Լուիզա Հարությունյանին և Ամալյա Ստեփանյանին հանգուցյալ Ռազմիկ Հարությունյանի ժառանգական զանգվածի՝ Ամալյա Ստեփանյանի անվամբ «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ում հաշվեհամարին գտնվող 180.000 եվրոյի նկատմամբ ժառանգություն ընդունած ժառանգ ճանաչելու և այն ժառանգների միջև բաժանելու բավարարված պահանջների մատուցման օրինական ուժի մեջ թողնելու մատուցման նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվել է միայն այդ մատուցման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խեղամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից, իսկ նույն կետի «բ» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է ոչ գույքային պահանջի գործերով՝ բազային տուրքի 20-պատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, **պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում**, պետական տուրքը սահմանված ժամկետում քյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Ամայյա Ստեփանյանը վճարել է բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամի չափով պետական տուրք և միջնորդել է պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգել, որը ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 09.10.2015 թվականի որոշմամբ բավարարվել է:

Հիմք ընդունելով վերը նշված իրավակարգավորումները, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ սույն գործով վճարել է բողոքը ենթակա է բավարարման, իսկ հայցերը մասնակիորեն՝ Ռազմիկ Հարությունյանի կողմից Ամայյա Ստեփանյանի բանկային հաշվին փոխանցված դրամական միջոցները ժառանգական զանգվածի մեջ ներառելու և այն ժառանգների միջև բաժանելու պահանջի մատով, մերժման, միաժամանակ նկատի ունենալով, որ մասնակի մերժման ենթակա հայցերը հարուցվել են առանձին և մեկ վարույթում քննվել են գործերի միացման արդյունքում, Վճարել դատարանը գտնում է, որ հայցվորներից յուրաքանչյուրից ՀՀ պետական քյուջե ենթակա է բռնագանձման 30.000-ական ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 09.10.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար:

Միաժամանակ հայցվորներից յուրաքանչյուրից հոգուտ Ամայյա Ստեփանյանի ենթակա է բռնագանձման 10.000-ական ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի կես մասի գումար, ինչպես նաև 5.000-ական ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի կես մասի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.06.2015 թվականի որոշման՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.12.2014 թվականի վճիռը՝ Մարինա Բաղդեմյանին (Պողիկյան), Ամելիա Հարությունյանին, Լուիզա Հարությունյանին և Ամայյա Ստեփանյանին հանգուցյալ Ռազմիկ Հարությունյանի ժառանգական զանգվածի՝ Ամայյա Ստեփանյանի անվամբ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում հաշվեհամարին գտնվող 180.000 եվրոյի նկատմամբ՝ յուրաքանչյուրին 1/4 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու մատով, օրինական ուժի մեջ թողնելու մասը, և այդ մասով այն փոփոխել՝ Մարինա Բաղդեմյանի (Պողիկյան), Ամելիա Հարությունյանի օրինական ներկայացուցիչ Մարինա Բաղդեմյանի, Լուիզա Հարությունյանի խնամակալ Սոֆյա Ավետիսյանի հայցերը՝ Ամայյա Ստեփանյանի անվամբ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում հաշվեհամարին գտնվող 180.000 եվրոյի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և այն բաժանելու պահանջների մատով, մերժել:

2. Մարինա Բաղդեմյանից (Պողիկյան) ՀՀ պետական քյուջե բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 09.10.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար:



Սոֆյա Ավետիսյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 09.10.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար:

Մարինա Բաղենյանից (Պողիկյան) հոգուտ Ամալյա Ստեփանյանի բռնագանձել 15.000 ՀՀ դրամ, որից 10.000 ՀՀ դրամը՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի կես մասի գումար, 5.000 ՀՀ դրամը՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի կես մասի գումար:

Սոֆյա Ավետիսյանից հոգուտ Ամալյա Ստեփանյանի բռնագանձել 15.000 ՀՀ դրամ, որից 10.000 ՀՀ դրամը՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի կես մասի գումար, 5.000 ՀՀ դրամը՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի կես մասի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սրորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սրորագրություններ*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԳ/0137/02/13  
 դատարանի որոշում 2016 թ.  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԳ/0137/02/13  
 Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան  
 Դատավորներ՝ Ն. Բարսեղյան  
 Մ. Հարթենյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>Նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
	Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին դռնբաց դատական նիստում, քննելով ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Արթուր Արշակյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.02.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գագիկ Արշակյանի, ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Արթուր Արշակյանի ընդդեմ Վահան Քոչարյանի և Գուրգեն Քոչարյանի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Սանվել Ջոհրաբյանի, «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի, «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի իրավահաջորդ ՀՀ նոտարական պալատի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր)՝ Գագիկ Արշակյանին Հայկազ Արշակյանին պատկանող գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և Գագիկ Արշակյանի սեփականությունը Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի թիվ 42 շենքի թիվ 6 բնակարանի, Երևանի Նոր Նորքի 7-րդ զանգվածի թիվ 16 շենքի թիվ 26 բնակարանի և նշված բնակարաններում գտնվող, ժառանգական զանգվածի մեջ մտնող շարժական գույքի նկատմամբ ճանաչելու, 18.09.2012 թվականին «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ թիվ 9003 գրանցամատյանում կատարված ըստ օրենքի ժառանգության իրավունքի գրանցումը, 18.09.2012 թվականին «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ թիվ 9002 գրանցամատյանում կատարված սեփականության իրավունքի գրանցումը և որպես հետևանք՝ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտարի կողմից թիվ 9002 և թիվ 9003 գրանցամատյաններում կատարված իրավունքի գրանցման հիման վրա Կադաստրի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի թիվ 42 շենքի թիվ 6 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, Քանաքարա Թաղևոսյանի և

Գուրգեն Քոչարյանի միջև 18.10.2012 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը և որպես հետևանք՝ Կադաստրի կողմից կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, Քանաքարա Թաղևոսյանի և Վահան Քոչարյանի միջև 26.09.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և որպես հետևանք՝ Կադաստրի կողմից 26.09.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրից ծագած իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, և ըստ հայցի ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Արթուր Արշակյանի ընդդեմ Վահան Քոչարյանի, Գուրգեն Քոչարյանի, երրորդ անձ «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի, «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի իրավահաջորդ ՀՀ նոտարական պալատի, Կադաստրի՝ Քանաքարա Թաղևոսյանի և Գուրգեն Քոչարյանի միջև 18.10.2012 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը և որպես հետևանք՝ Կադաստրի կողմից կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, Քանաքարա Թաղևոսյանի և Վահան Քոչարյանի միջև 26.09.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և որպես հետևանք՝ Կադաստրի կողմից 26.09.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրից ծագած իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու, Արթուր Արշակյանին Հայկազ Արշակյանին պատկանած գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի թիվ 42 շենքի թիվ 6 բնակարանի, Երևանի Նոր Նորք 7-րդ գանգվածի թիվ 16 շենքի թիվ 26 բնակարանի և նշված բնակարաններում գտնվող շարժական գույքի նկատմամբ Արթուր Արշակյանի սեփականության իրավունքը ճանաչելու, 18.09.2012 թվականին «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ թիվ 9003 գրանցամատյանում կատարված ըստ օրենքի ժառանգության իրավունքի գրանցումը, 18.09.2012 թվականին «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ թիվ 9002 գրանցամատյանում կատարված սեփականության իրավունքի գրանցումը և որպես հետևանք՝ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտարի կողմից թիվ 9002 և թիվ 9003 գրանցամատյաններում կատարված իրավունքի գրանցման հիման վրա Կադաստրի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի թիվ 42 շենքի թիվ 6 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

## ՊԱՐԶԵՑ

### 1. Գործի դատարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գագիկ Արշակյանը պահանջել է իրեն ճանաչել Հայկազ Արշակյանին պատկանող գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ, ճանաչել իր սեփականությունը Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի թիվ 42 շենքի թիվ 6 բնակարանի, Երևանի Նոր Նորքի 7-րդ գանգվածի թիվ 16 շենքի թիվ 26 բնակարանի և նշված բնակարաններում գտնվող ժառանգական գանգվածի մեջ մտնող շարժական գույքի նկատմամբ, անվավեր ճանաչել 18.09.2012 թվականին «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ թիվ 9003 գրանցամատյանում կատարված ըստ օրենքի ժառանգության իրավունքի գրանցումը, 18.09.2012 թվականին «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ թիվ 9002 գրանցամատյանում կատարված սեփականության իրավունքի գրանցումը և որպես հետևանք՝ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտարի կողմից թիվ 9002 և 9003 գրանցամատյաններում կատարված իրավունքի գրանցման հիման վրա Կադաստրի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի թիվ 42 շենքի թիվ 6 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, անվավեր ճանաչել Քանաքարա Թաղևոսյանի և Գուրգեն Քոչարյանի միջև 18.10.2012 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը և որպես հետևանք՝ Կադաստրի կողմից կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, անվավեր ճանաչել Քանաքարա

Թաղևոսյանի և Վահան Քոչարյանի միջև 26.09.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և որպես հետևանք՝ Կադաստրի կողմից 26.09.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրից ծագած իրավունքների պետական գրանցումը:

Դիմելով դատարան՝ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Արթուր Արշակյանը պահանջել է անվավեր ճանաչել Քանաքարա Թաղևոսյանի և Գուրգեն Քոչարյանի միջև 18.10.2012 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը և որպես հետևանք՝ Կադաստրի կողմից կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, Քանաքարա Թաղևոսյանի և Վահան Քոչարյանի միջև 26.09.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և որպես հետևանք՝ Կադաստրի կողմից 26.09.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրից ծագած իրավունքների պետական գրանցումը, իրեն ճանաչել Հայկազ Արշակյանին պատկանող անշարժ գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ և ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի թիվ 42 շենքի թիվ 6 բնակարանի, Երևանի Նոր Նորքի 7-րդ գանգվածի թիվ 16 շենքի թիվ 26 բնակարանի և նշված բնակարաններում գտնվող շարժական գույքի նկատմամբ, անվավեր ճանաչել 18.09.2012 թվականին «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ թիվ 9003 գրանցամատյանում կատարված ըստ օրենքի ժառանգության իրավունքի գրանցումը, 18.09.2012 թվականին «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ թիվ 9002 գրանցամատյանում կատարված սեփականության իրավունքի գրանցումը և որպես հետևանք՝ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտարի կողմից թիվ 9002 և թիվ 9003 գրանցամատյաններում կատարված իրավունքի գրանցման հիման վրա Կադաստրի կողմից Քանաքարա Թաղևոսյանի անվամբ Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի թիվ 42 շենքի թիվ 6 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ն. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 28.08.2015 թվականի վճռով Գագիկ Արշակյանի և ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Արթուր Արշակյանի հայցերը մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.02.2016 թվականի որոշմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Արթուր Արշակյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 28.08.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Արթուր Արշակյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գուրգեն և Վահան Քոչարյանների ներկայացուցիչ Արևիկ Եղիազարյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ, 782-րդ հոդվածները, 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, որը պետք է կիրառել, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հեղուկալ փաստարկներով:*

Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, այլապես հիմնավորված կհամարեր Արթուր Արշակյանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով ժառանգությունն ընդունելու հանգամանքը: Մասնավորապես՝ վկաներ Օֆիկ Պետրոսյանի, Մարիետա Մանուկյանի, Ռուբիկ Մանուկյանի, Էլյա Գրիգորյանի, Մարինե Տոնոյանի, Աննա Ավետիսյանի ցուցմունքները, Գագիկ Ավետիսյանի միջոցով հոր՝ Հայկազ Արշակյանի թաղման նպատակով ստանալու հանգամանքը, Ալեքսանդր Ուսացովի ստացականը և հայտարարությունը, «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի ավիափոխադրումների ստուգաթերթի-

կը վկայում են այն մասին, որ Արթուր Արշակյանը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է հոր ժառանգությունը:

Վերաքննիչ դատարանը, գնահատելով Գագիկ Ավետիսյանի հայտարարությունը, կարևորել է հանձնարարության իրավահարաբերությունների առկայությունն ապացուցելու անհրաժեշտությունը՝ հաշվի չառնելով, որ Գագիկ Ավետիսյանի կողմից տրված և նոտարական կարգով հաստատված հայտարարությունը բավարար ապացույց է՝ կողմերի միջև հանձնարարության իրավահարաբերությունների առկայությունը հաստատված համարելու համար:

Ինչ վերաբերում է Ալեքսանդր Ուսայովի ստացականի և հայտարարության կապակցությամբ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ փոխառությամբ վերցրած գումարի վերաբերյալ ապացույց կարող է հանդիսանալ միայն փոխատուի մոտ գտնվող պարտքի վերաբերյալ փաստաթուղթը, պարտապանի կողմից տրված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար տալը հավաստող այլ փաստաթուղթ, ապա Հայկազ Արշակյանի և Ալեքսանդր Ուսայովի միջև փոխառության հարաբերությունների առկայության կամ բացակայության փաստը պարտավորության կողմերի միջև երբեք չի վիճարկվել, իսկ ստացականի առկայությունն արդեն իսկ հաստատում է, որ կողմերի միջև առկա են եղել փոխառության հարաբերություններ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.02.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճուրքի բողոքի պարտախանի հիմնավորումները**

Վճուրքի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ սույն գործի քննության ընթացքում Արթուր Արշակյանը որևէ ապացույցով չի հիմնավորել, որ հոր՝ Հայկազ Արշակյանի ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքով ընդունված ժառանգ է: Մասնավորապես, վերջինս նշել է, որ իր խնդրանքով Գագիկ Ավետիսյանը ստացել է ժառանգատուի թաղման միանվագ գումարը և փոխանցել իրեն, սակայն պետության կողմից տրված թաղման միանվագ գումարը ժառանգության զանգվածի մեջ չի մտնում, որպիսի հանգամանքը բացառում է Արթուր Արշակյանի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքով ընդունելու փաստը: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Արթուր Արշակյանը հոր մահից հետո 6 ամսվա ընթացքում բնակվել է Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի թիվ 42 շենքի թիվ 6 բնակարանում, ինչը հաստատվում է վկաների ցուցմունքներով, ապա վերոնշյալ ցուցմունքներն իրենց մեջ պարունակում են էական հակասություններ և չեն կարող հիմք հանդիսանալ վկայակոչված փաստը հաստատելու համար: Հատկանշական է, որ Արթուր Արշակյանի կողմից որպես ապացույց ներկայացված «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի ավիափոխադրումների ստուգաթերթիկը ևս չի կարող փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունելու հիմք հանդիսանալ, քանի որ այն ևս պարունակում է էական հակասություններ: Անդրադառնալով բողոքաբերի կողմից ժառանգատուի պարտքերի մարմանը, ինչի հավաստման կապակցությամբ ներկայացվել է Ալեքսանդր Ուսայովի կողմից 24.09.2001 թվականին տրված ստացականը և 03.04.2014 թվականին նոտարական կարգով հաստատված հայտարարությունը, ապա դրանք պատշաճ ապացույցներ չեն և իրենց բովանդակությամբ չեն հաստատում, որ ժառանգատուն Ալեքսանդր Ուսայովից փոխառությամբ վերցրել է 75.000 ԱՄՆ դոլար:

### **3. Վճուրքի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճուրքի բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության Էրեբունի և Նուբարաշեն տարածքային բաժնի պետի կողմից 02.12.2010 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Հայկազ Արշակյանի և Քանաքարա Թադևոսյանի ամուսնությունը թիվ 626 ակտով գրանցվել է 11.06.1957 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 12**):

2) Սույն գործով չեն վիճարկվում փաստերն առ այն, որ Հայկազ Արշակյանի և Քանաքարա Թաղևոսյանի երեխաներն են Գագիկ, Արթուր, Անահիտ Արշակյանները, իսկ Վահան և Գուրգեն Քոչարյաններն Անահիտ Արշակյանի երեխաներն են:

3) ՀՀ ժողովրդական պատգամավորների Երևան քաղաքի հորհրդային շրջխորհրդի գործադիր կոմիտեի 29.08.1994 թվականի թիվ 36/125 որոշման համաձայն՝ Երևանի Նորքի 7-րդ մ/շ, 16-րդ շենքի թիվ 26 բնակարանը հանձնվել է Քանաքարա Թաղևոսյանին՝ որպես անձնական սեփականություն (**հատոր 1-ին, գ.թ. 21**):

4) Սեփականության իրավունքի պետական գրանցման 30.06.2003 թվականի թիվ 1770424 վկայականի համաձայն՝ Երևանի Նոր Նորք համայնքի 7 մ/շ, 16-րդ շենքի թիվ 26 բնակարանի նկատմամբ գրանցված է Քանաքարա Թաղևոսյանի սեփականության իրավունքը՝ հորհրդային շրջխորհրդի գործկոմի 29.08.1994 թվականի թիվ 36/125 որոշման հիման վրա (**հատոր 4-րդ, գ.թ. 76-77**):

5) Սեփականության իրավունքի պետական գրանցման 04.11.2002 թվականի թիվ 478692 վկայականի համաձայն՝ Երևանի Ավան համայնքի Նարեկացու թաղամասի 42-րդ շենքի թիվ 6 բնակարանի նկատմամբ գրանցված է Հայկազ Արշակյանի սեփականության իրավունքը՝ Երթաղխորհրդի գործկոմի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշման հիման վրա (**հատոր 4-րդ, գ.թ. 80-81**):

6) 27.06.2001 թվականին տրված թիվ ԱԱ 160610 մահվան վկայականի համաձայն՝ Հայկազ Արշակյանը մահացել է 26.06.2001 թվականին ՌԴ Դոնի Ռոստով քաղաքում: Մահը գրանցվել է 27.06.2001 թվականին ԵՀՍ ՔԿԱԳ տարածքային բաժնում (**հատոր 1-ին, գ.թ. 11**):

7) 10.07.2007 թվականին տրված թիվ ԱԱ 097128 մահվան վկայականի համաձայն՝ Անահիտ Արշակյանը մահացել է 02.07.2007 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 132**):

8) 21.01.2013 թվականին տրված թիվ ԱԲ 117999 մահվան վկայականի համաձայն՝ Քանաքարա Թաղևոսյանը մահացել է 18.01.2013 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 109**):

9) 18.09.2012 թվականին «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Է. Շաբոյանի կողմից վավերացված սեփականության իրավունքի վկայագրի համաձայն՝ Քանաքարա Թաղևոսյանը, ով Հայկազ Արշակյանի (մահացած 26.06.2001 թվականին) կենդանի մնացած կինն է, սեփականության իրավունք ունի հիշյալ ամուսինների գույքի 1/2 բաժնի նկատմամբ: Ընդհանուր համատեղ գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը, բաղկացած է Երևանի Ավան համայնքի Նարեկացու թաղամասի 42-րդ շենքի թիվ 6 բնակարանից, որը ժառանգատուին է պատկանում անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոր Նորք տարածքային ստորաբաժանման կողմից 04.11.2002 թվականին տրված 478692 սեփականության իրավունքի վկայականով (**հատոր 1-ին, գ.թ. 139**):

10) 18.09.2012 թվականին «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Է. Շաբոյանի կողմից վավերացված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Հայկազ Արշակյանի (մահացած 26.06.2001 թվականին) գույքի նկատմամբ ժառանգ է կինը՝ Քանաքարա Թաղևոսյանը: Ժառանգական գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը, բաղկացած է Երևանի Ավան համայնքի Նարեկացու թաղամասի 42-րդ շենքի թիվ 6 բնակարանի 1/6 բաժնից, որը ժառանգատուին է պատկանում անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոր Նորք տարածքային ստորաբաժանման կողմից 04.11.2002 թվականին տրված 478692 սեփականության իրավունքի վկայականով: Նշված անշարժ գույքի 1/3 բաժնի նկատմամբ դեռևս ժառանգության իրավունքի վկայագիր չի տրվել (**հատոր 1-ին, գ.թ. 139**):

11) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 24.09.2012 թվականի թիվ 24092012-01-1344 վկայականի համաձայն՝ Երևան, Ավան, Նարեկացու թաղամասի 42-րդ շենքի թիվ 6 բնակարանի 2/3 բաժնի նկատմամբ գրանցվել է Քանաքարա Թաղևոսյանի սեփականության իրավունքը (հիմք՝ 18.09.2012 թվականի թիվ 9002, 9003 սեփականության իրավունքի և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր): Նշված անշարժ գույքի 1/3 բաժնեմասի նկատմամբ դեռևս ժառանգության իրավունքի վկայագիր չի տրվել (**հատոր 1-ին, գ.թ. 138**):

12) «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Օ. Հակոբյանի կողմից 26.09.2012 թվականին վավերացված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Քա-

նաքարա Թաղևույսյանը Երևանի Նոր Նորքի 7-րդ մ/շ., 16-րդ շենքի թիվ 26 հասցեում գտնվող բնակարանը նվիրել է Վահան Քոչարյանին **(հատոր 1-ին, գ.թ. 136):**

13) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 01.10.2012 թվականի թիվ 01102012-01-0959 վկայականի համաձայն՝ Երևանի Նոր Նորք վարչական շրջանի 7-րդ միկրոշրջանի 16-րդ շենքի թիվ 26 բնակարանի նկատմամբ գրանցվել է Վահան Քոչարյանի սեփականության իրավունքը (հիմք՝ 26.09.2012 թվականի նվիրատվության պայմանագիր՝ հ.6238) **(հատոր 1-ին, գ.թ. 134):**

14) 18.10.2012 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Քանաքարա Թաղևույսյանը Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի 42-րդ շենքի թիվ 6 բնակարանը 16.000.000 ՀՀ դրամով վաճառել է Գուրգեն Քոչարյանին **(հատոր 1-ին, գ.թ. 129-130):**

15) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 19.10.2012 թվականի վկայականի համաձայն՝ Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի 42-րդ շենքի թիվ 6 բնակարանի նկատմամբ գրանցվել է Գուրգեն Քոչարյանի սեփականության իրավունքը (հիմք՝ 18.10.2012 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիր) **(հատոր 4-րդ, գ.թ. 90):**

16) 27.12.2012 թվականին «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Է. Մակարյանի կողմից վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Գուրգեն Քոչարյանը և Ֆենյա Քոչարյանը (որոնց անունից «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Գայանե Ենգիբարյանի կողմից 18.10.2012 թվականին վավերացված թիվ 3542 լիազորագրով հանդես է գալիս Վահան Քոչարյանը) Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի 42-րդ շենքի թիվ 6 բնակարանը վաճառել են Մանվել Զոհրաբյանին, ում սեփականության իրավունքը 08.01.2013 թվականին գրանցվել է, և վերջինիս տրվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական **(հատոր 4-րդ, գ.թ. 91-92):**

17) 04.02.2013 թվականին «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Է. Մակարյանի կողմից վավերացված համաձայնագրով՝ Գուրգեն Քոչարյանը, Ֆենյա Քոչարյանը՝ մի կողմից, և Մանվել Զոհրաբյանը՝ մյուս կողմից, կնքել են համաձայնագիր՝ «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Է. Մակարյանի կողմից 27.12.2012 թվականին վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը լուծելու մասին **(հատոր 4-րդ, գ.թ. 93):**

18) Վահան Քոչարյանի՝ 04/03/2013-1-0341 դիմումին ի պատասխան Կադաստրի 06.03.2013 թվականի թիվ ԱՏ-04/03/2013-1-0341 տեղեկանքի համաձայն՝ ըստ Երևանի Նարեկացու թաղամասի 42-րդ շենքի թիվ 6 հասցեի կադաստրային գործի տվյալների՝ 04.02.2013 թվականի պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրից ծագող իրավունքների նկատմամբ պետական գրանցում չի կատարվել, քանի որ վերը նշված հասցեի անշարժ գույքի նկատմամբ ԴԱՀԿ ծառայության կողմից 04.02.2013 թվականին ՈՍ0212-88674/13 (հաղորդագրություն Ե12000083289), 04.02.2013 թվականին ՈՍ0116-88885/13 (հաղորդագրություն 12000083290) որոշումներով կիրառվել է սահմանափակում, որը բացառում է իրավունքի պետական գրանցումը **(հատոր 4-րդ, գ.թ. 94):**

19) 11.10.2013 թվականին տրված «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի ավիափոխադրումների ստուգաթերթիկի հայերեն թարգմանության համաձայն՝ կարգավար Ավանեսովի հերթափոխի ժամանակ (03.07.2001 թ. 08:30-04.07.2001 թ. 08:30) տեղի է ունեցել բեռների քննարկում (ներմուծում), ըստ որի՝ Ռոստով քաղաքից տեղափոխվել է աճյուն, որի ուղարկողն ու ստացողը հանդիսացել է Արթուր Արշակյանը **(հատոր 4-րդ, գ.թ. 68-69):**

20) Ալեքսանդր Ուսայրովի կողմից 24.09.2001 թվականին տրված ռուսերեն ստացականի հայերեն թարգմանության համաձայն՝ վերջինս Արթուր Արշակյանից ստացել է 75.000 ԱՄՆ դոլարին համարժեք 2.205.000 ռուբլի, որն իր կողմից նախապես՝ 15.01.2001 թվականի փոխառության պայմանագրով տրվել է Հայկազ Արշակյանին (Արթուր Արշակյանի հորը) **(հատոր 4-րդ, գ.թ. 125-126):**

21) Ալեքսանդր Ուսայրովի կողմից 03.04.2014 թվականին նոտարական կարգով հաստատված հայտարարության հայերեն թարգմանության համաձայն՝ 15.01.2001 թվականին իր և Հայկազ Արշակյանի միջև կնքվել է 2.125.000 ռուբլի գումարի չափով փոխառության պայմանագիր, որը համարժեք է 75.000 ԱՄՆ դոլարին: 26.06.2001 թվականին մահացել է Հայկազ Արշակյանը, իսկ նրա որդին՝ Արթուր Արշակյանը, 24.09.2001 թվականին Ալեք-

սանդր Ուսայրովին է փոխանցել տվյալ գումարը: Վերջինս նաև հայտարարել է, որ Հայկազ Արշակյանի, ինչպես նաև վերոնշյալ փոխառության պայմանագրով նրա ժառանգների նկատմամբ ֆինանսական պահանջներ չունի (**հատոր 4-րդ, գ.թ. 127-128**):

22) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության պետական ծառայության» 01.09.2014 թվականի թիվ ԱՊ/ԱԱր-2/6941-14 գրության համաձայն՝ 26.06.2001 թվականին մահացած Հայկազ Արշակյանի՝ 52.320 ՀՀ դրամ թաղման միանվագ գումարը և 30.520 ՀՀ դրամ ժառանգվող գումարը վճարվել են Գագիկ Ավետիսյանին: Միաժամանակ հայտնվել է, որ փաստաթղթային հիմքերը հանձնվել են «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին (**հատոր 6-րդ, գ.թ. 88**):

23) Գագիկ Ավետիսյանի՝ նոտարական կարգով հաստատված 13.12.2014 թվականի հայտարարության հայերեն թարգմանության համաձայն՝ վերջինս Հայկազ Արշակյանի հարսնետղբայրն է և հաստատում է, որ մահացածի որդու՝ Արթուր Արշակյանի խնդրանքով 26.06.2001 թվականին պետությունից ստացել է գումար և 18.07.2001 թվականին այն փոխանցել է Արթուր Արշակյանին (**հատոր 8-րդ, գ.թ. 3-5**):

24) Վկաներ Օֆիկ Պետրոսյանը, Ռուբիկ Մանդալյանը, Մարիետա Մանդալյանը, Էլյա Գրիգորյանը, Մարինե Տոնոյանը, Աննա Ավետիսյանը, ըստ էության, նույնաբովանդակ ցուցմունքներով հայտնել են, որ Արթուր Արշակյանը հոր՝ Հայկազ Արշակյանի աճյունը տեղափոխել է Հայաստան, եղբոր՝ Գագիկ Արշակյանի հետ միասին կատարել է հուղարկավորության ծախսերը, հոր մահից հետո որոշ ժամանակ բնակվել է Երևանի Ավան վարչական շրջանի Նարեկացու թաղամասի 42-րդ շենքի թիվ 6 բնակարանում (**հատոր 8-րդ, գ.թ. 70-71, 103-104, 132, դատական նիստի արձանագրություն**):

25) Վկաներ Էմմա Խաչատրյանը, Արթուր Խաչատրյանը, Ռուզաննա Մնացականյանը, Սերյոժա Քոչարյանը, ըստ էության, նույնանման ցուցմունքներ են տվել այն մասին, որ իրենց ունեցած տեղեկությունների համաձայն՝ Հայկազ Արշակյանի հուղարկավորությունը կազմակերպել է Գագիկ Ավետիսյանը, իսկ, մասնավորապես, Արթուր Արշակյանը հոր հուղարկավորությանը չի մասնակցել (**հատոր 8-րդ, գ.թ. 103-104, 106, 108, 129-130, 132, դատական նիստի արձանագրություն**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և կորստանքները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ժառանգի կողմից փաստացի Կիրապելյունան հիմքով ժառանգությունն ընդունելու կամքի դրսևորման առանձնահատկություններին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումները:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության գանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես:



ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգություն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը.

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններին կամ հավակնություններին պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է վկայակոչված հոդվածների վերլուծությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: **Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման** (յրեն օրինակ, Արմինե Հակոբյանը և Մանվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նորարարական փարածքի նորարար Ալվարո Մելքոնյանի և մյուսների թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու հանգամանքը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում, գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը կամ **այլ ապացույցներ**, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը (յրեն Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի և մյուսների թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից մասնատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (յրեն Կրիստա Մարգարյանն ընդդեմ Հարություն Մարգարյանի և մյուսների թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում **ժառանգի կողմից ժա-**

**ռանգված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն արդեն իսկ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք նպատակաուղղված են ժառանգության ընդունմանը:** Եթե ժառանգը, գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, ըստ էության գիտակցաբար կատարում է ակտիվ գործողություններ, իսկ նման գործողությունների կատարումն օրենսդիրը համարում է ժառանգության ընդունման եղանակներից մեկը: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ գործով հիմնավորված է ժառանգատուի մահվանից հետո ժառանգված գույքի փաստացի տիրապետման և կառավարման հանգամանքը, ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար այլևս անհրաժեշտություն չկա ապացուցելու այլ ակտիվ, գիտակցված գործողությունների կատարման վերաբերյալ փաստեր ... *(տե՛ս Սամվել Հովհաննիսյանն ընդդեմ Լիդա Հովհաննիսյանի և մյուսների թիվ ԱՐԱԴ/0420/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):*

Ջարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով ժառանգությունն ընդունելու համար բավարար է նաև ժառանգի կողմից ժառանգատուի պարտքերն իր հաշվին վճարելը կամ երրորդ անձանցից ժառանգատուին հասանելիք գումարներն ստանալը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի և 1186-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումների փոխկապակցված մեկնաբանության արդյունքում գտնում է, որ ժառանգատուին հասանելիք գումարները ևս պետք է կազմեն ժառանգության զանգվածի մաս: Այսինքն՝ այն դեպքերում, երբ ժառանգի կողմից ժառանգությունն ընդունվում է ժառանգատուին հասանելիք գումարները երրորդ անձանցից ստանալով, ապա պետք է ապացուցվի դրանց նկատմամբ ժառանգատուի՝ նախքան մահանալը որևէ իրավունք (այդ թվում նաև՝ պահանջի իրավունք) ունենալը: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգատուի մահվան կապակցությամբ տրամադրվող գումարները, այդ թվում՝ թաղման նպաստը, ժառանգության զանգվածի մաս կազմել չեն կարող, նախ՝ քանի որ դրանք ստանալու իրավունքը ծագում է ժառանգատուի մահվան դեպքում, և երկրորդ՝ դրանք ոչ թե ժառանգատուին հասանելիք գումարներ են, որոնց նկատմամբ ժառանգատուն ունեցել է պահանջի իրավունք, այլ պետության կողմից իր սոցիալական ապահովության ներքո գտնվող անձի մահվան դեպքում հուղարկավորության կազմակերպման համար տրվող գումար:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ Արթուր Արշակյանի վկայակոչած ու ներկայացրած ապացույցներով չի հիմնավորվում իր կողմից փաստացի տիրապետման հիմքով հոր ժառանգությունն ընդունելու փաստը: Դատարանը, մասնավորապես, նշել է, որ երրորդ անձի կողմից հրավիրված վկաները հակասական ցուցմունքներ են տվել Արթուր Արշակյանի՝ Հայաստան գալու և Հայաստանից մեկնելու ժամանակահատվածի, հոր հուղարկավորությունը կազմակերպելու, հոր բնակարանում բնակվելու վերաբերյալ: Անդրադառնալով «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի ավիափոխադրումների ստուգաթերթիկին՝ Դատարանը, մասնավորապես, գտել է, որ եթե անգամ վերջինս հաստատում է, որ Հայկազ Արշակյանի աճյունը ստացել է Արթուր Արշակյանը, ապա այն դեռևս բավարար չէ հաստատված համարելու Արթուր Արշակյանի՝ հոր մահից հետո ժառանգությունն ընդունած լինելու հանգամանքը: Դատարանը նաև նշել է, որ Ալեքսանդր Ուսայովի հայտարարությունը չի կարող հաստատել փոխառության հարաբերությունների առկայությունը, քանի որ նուտարի կողմից հաստատվել է միայն հայտարարության՝ Ալեքսանդր Ուսայովի կողմից իր ներկայությամբ ստորագրված լինելու հանգամանքը: Դատարանը նաև փաստել է, որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ պետությունից ստանալով Հայկազ Արշակյանի թաղման գումարը՝ Գագիկ Ավետիսյանը գործել է Արթուր Արշակյանի հանձնարարությանը և hoգոտ նրա:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, ըստ էության հիմնավոր է համարել վերը շարադրված եզրահանգումները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տե՛ս Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ՝ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տե՛ս Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վերը շարադրվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործով չեն իրականացրել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում ու գնահատում՝ Արթուր Արշակյանի կողմից հոր ժառանգությունն ընդունելու պայմանների առկայությունը պարզելու ուղղությամբ: Այսպես՝ ստորադաս դատարանները, գնահատելով վկաների ցուցմունքները, առկա հակասությունների պատճառաբանությամբ եզրահանգել են, որ դրանք չեն հաստատում Արթուր Արշակյանի կողմից հոր ժառանգությունն ընդունելու հանգամանքը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկաների ցուցմունքներում առկա հակասություններն ինքնին չեն բացառում ցուցմունքների ապացուցողական նշանակությունը: Հետևաբար սույն գործով ստորադաս դատարանները, բացահայտելով վկաների ցուցմունքների միջև առկա հակասությունների՝ սույն գործի լուծման համար էական լինելու կամ չլինելու հանգամանքը, դրանք պետք է գնահատեն մնացած բոլոր ապացույցների համակցության մեջ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի ավիափոխադրումների ստուգաթերթիկը, վկաներ Օֆիկ Պետրոսյանի, Մարիետա Մանդալյանի, Ռուբիկ Մանդալյանի, Էլյա Գրիգորյանի, Մարինե Տոնոյանի, Աննա Ավետիսյանի ցուցմունքները վկայում են այն մասին, որ Հայկազ Արշակյանի մահից հետո **որոշակի ժամանակ** Արթուր Արշակյանը գտնվել է Հայաստանի Հանրապետությունում: Նման պարագայում, չնայած հոր աճյունը Հայաստան տեղափոխելն ինքնին չի կարող վկայել ժառանգությունն ընդունելու մասին, սակայն կարող է **նախապայման լինել**՝ հաստատված համարելու հոր մահվանից հետո Արթուր Արշակյանի՝ Հայաստանում գտնվելու փաստը:

Անդրադառնալով Ալեքսանդր Ուսայովի կողմից տրված ստացականի և հայտարարության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ստորադաս դատարանները նշված ապացույցները ևս գործում առկա մյուս ապացույցների համակցության մեջ չեն գնահատել և հաշվի չեն առել, որ սույն գործով վիճարկվում է ոչ թե փոխառության հարաբերությունների առկայությունը, այլ ժառանգի կողմից իր հաշվին ժառանգատուի պարտքերը մարելու հանգամանքը: Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են, որ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ օրենսդիրը պարտատիրոջ վրա պարտականություն է դրել պարտքի կատարումն ընդունելիս պարտապանի պահանջով կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին **նրան ստացական տալ** (...) (*տե՛ս Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դա-*

տարանի 28.06.2012 թվականի որոշումը): Մեկ այլ որոշմամբ էլ ՀՀ վճռաբեկ դատարանը հնարավոր է համարել նաև անուղղակի ապացույցներով պարտապանի կողմից պարտավորության կատարումը հիմնավորելը՝ մանրամասնելով նմանատիպ դեպքերը (տես *Ղասեն Արդդյահ Նեմարն ընդդեմ Աշոտ Հարությունյանի և մյուսների թիվ ԵԱԲԳ/0704/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*): Նման պարագայում վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարաններն Ալեքսանդր Ուսայովի կողմից տրված ստացականը և հայտարարությունը պետք է գնահատելին նաև վերոնշյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ պարզելու համար ինչպես ենթադրյալ պարտավորության կատարված լինելը, այնպես էլ մինչ այդ՝ պարտավորության առկայությունը հավաստող ապացույց լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ անհիմն է համարում ստորադաս դատարանների եզրահանգումը՝ Գագիկ Ավետիսյանի՝ Արթուր Արշակյանի հանձնարարությամբ գործելու վերաբերյալ: Նախ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 782–րդ հոդվածի 3–րդ կետի համաձայն՝ հանձնարարության պայմանագիրը կնքվում է գրավոր, սակայն հաշվի առնելով, որ նույն հոդվածը գործարքի ձևը չպահպանելը չի դիտարկում որպես գործարքի անվավերության հիմք, գտնում է, որ սույն գործով կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298–րդ հոդվածի 1–ին կետի իրավակարգավորումն այն մասին, որ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Հետևաբար հանձնարարության հարաբերությունների առկայությունը սույն գործով կարող էր հաստատված համարել գործում առկա գրավոր ապացույցների համակցության մեջ՝ հատկապես նկատի ունենալով, որ հանձնարարության հարաբերությունների ենթադրյալ կողմերի միջև այդ կապակցությամբ որևէ վեճ առկա չէ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետությունից ստացած թաղման գումարը չի կարող ընդգրկվել ժառանգության զանգվածի մեջ, ուստի այս կապակցությամբ վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները հիմնավոր են: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները չեն գնահատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության պետական ծառայության» կողմից տրված գրությունը՝ բացահայտելու համար, թե «**30.520 ՀՀ դրամ ժառանգվող գումար**» արտահայտությունն ինչ գումարի է վերաբերում, և արդյոք նշված գումարը մտել է ժառանգության զանգվածի մեջ: Ուստի սույն ապացույցը գնահատելիս նույնպես ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածի խախտում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չի իրականացվել գործում առկա ապացույցների լրիվ և բազմակողմանի հետազոտում ու գնահատում, որպիսի պարագայում առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

*Վերը նշված պարզապարզություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխառում նշված մյուս փաստարկները:*

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227–րդ և 228–րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործը նոր քննության է ուղարկվում միայն Արթուր Արշակյանի պահանջների մասով, քանի որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկվել են միայն այդ մասով:

### **5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, սպացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստարանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.10.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.02.2016 թվականի որոշումը և գործը՝ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Արթուր Արշակյանի պահանջների մասով ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.10.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/3838/02/14  
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/3838/02/14  
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան  
Դատավորներ՝ Ա. Հունանյան  
Ա. Պետրոսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին դռնբաց դատական նիստում, քննելով «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Միքայել Խչեյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վահե Դավթյանի ընդդեմ Ընկերության՝ օրապահիկի, օժանդակության գումարի պարտքը բռնագանձելու, հրամաններն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու, ինչպես նաև հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը բռնագանձելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատարանական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Վահե Դավթյանը պահանջել է անվավեր ճանաչել իրեն խիստ նկատողություն հայտարարելու մասին Ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնակատարի 24.10.2014 թվականի թիվ 153/7 հրամանը, աշխատանքից ազատելու մասին Ընկերության գլխավոր տնօրենի 30.10.2014 թվականի թիվ 306K հրամանը և իրեն վերականգնել Ընկերության գործերի կառավարման ծառայության պետի տեղակալի և գլխավոր տնօրենի մամուլի քարտուղարի պաշտոններում՝ վճարելով հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակաշրջանի համար միջին աշխատավարձը՝ սկսած 30.10.2014 թվականից մինչև աշխատանքի վերականգնելը, Ընկերությունից բռնագանձել 2.656.000 ՀՀ դրամ՝ որպես գործուղման համար պակաս վճարված օրապահիկի գումար, Ընկերությունից բռնագանձել 225.000 ՀՀ դրամ՝ որպես երեխայի ծննդյան կապակցությամբ կոլեկտիվ պայմանագրի 3.4.4 կետով նախատեսված և չվճարված նյութական օգնության գումար:

Գործի քննության ընթացքում հայցվորը, գործողման համար պակաս վճարված օրապահիկի բռնագանձման պահանջի մասով փոփոխելով հայցագրի չափը, պահանջել է Ընկերությունից բռնագանձել 2.589.861 ՀՀ դրամ՝ որպես գործողման համար պակաս վճարված օրապահիկի գումար:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 03.08.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Ընկերությունից հոգուտ Վահե Դավթյանի բռնագանձել 2.589.861 ՀՀ դրամ՝ որպես գործողման համար չվճարված օրապահիկ և 225.000 ՀՀ դրամ՝ որպես երեխայի ծննդյան կապակցությամբ կոլեկտիվ պայմանագրի 3.4.4 կետով նախատեսված և չվճարված նյութական օգնություն: Հայցը՝ մնացած մասերով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.12.2015 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցիչ Միքայել Խչեյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.08.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վահե Դավթյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը, 178-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 209-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետը, 337-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ կառավարության 08.06.1998 թվականի թիվ 352 որոշման թիվ 1 հավելվածով սահմանված ցանկի 1-ին կետը և 08.08.2013 թվականի թիվ 853-Ն որոշման հավելվածով սահմանված ցանկի 1-ին կետը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2335-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված կարգի 2-րդ, 7-րդ, 9-րդ կետերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող՝ ՀՀ կառավարության 08.06.1998 թվականի թիվ 352 (ուժը կորցրել է 01.01.2013 թվականին) և 08.08.2013 թվականի թիվ 853-Ն որոշումները պարունակում են աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների պարտիչ ցանկերը, որոնց մեջ չեն ներառվում գործողման ծախսերը, օրապահիկը: Հետևաբար կարելի է փաստել, որ օրապահիկը և աշխատավարձը ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված երկու բովանդակային առումով տարբեր հասկացություններ են: «Օրապահիկ» հասկացությունը չի ընդգրկվում «աշխատավարձ» հասկացության մեջ, և դրանք չեն կարող նույնացվել:

Փաստորեն, գործողման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը չեն համարվում աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ վճարում, հետևաբար հայցվորի՝ օրապահիկի գումարը բռնագանձելու մասին պահանջի նկատմամբ տարածվում է հայցային վաղեմություն, և կիրառելի է հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը՝ երեք տարի: Ավելին, եթե նույնիսկ գործողման ծախսերի հատուցումը դիտարկվի աշխատավարձին հավասարեցված վճարում, ապա այդ դեպքում ևս այն չի կարող ընդգրկվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բացառություններում, քանի որ նշված իրավական նորմի համաձայն՝ հայցային վաղեմություն չի տարածվում միայն աշխատավարձի բռնագանձման հետ կապված պահանջների նկատմամբ:

Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ հայցվորն իր իրավունքների խախտման մասին կարող էր իմանալ աշխատանքային հարաբերությունների դադարման պահին վերջնահաշվարկ կատարելիս, անհիմն է, քանի որ հայցվորին գործողման ծախսերն օրենքով սահմանված կարգով վճարվել էին գործողման մեկնելուց առաջ, ուստի հայցվորը գործողման մեկնելու օրվա դրությամբ պետք է տեսչակ լինել գործողման ծախսերի չափի մասին:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 53-րդ, 220-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 57-րդ հոդվածը:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության վերաքննիչ բողոքը՝ երեխայի ծննդյան կապակցությամբ Ընկերության 2012–2014 թվականների կոլեկտիվ պայմանագրի 3.4.4 կետով նախատեսված և չվճարված նյութական օգնության գումարը վճարելու պահանջի մասով, հաշվի չի առել այն, որ նշված կոլեկտիվ պայմանագրի 2.4 կետի համաձայն՝ նույն պայմանագրի իրականացման հետ կապված ծախսումներն իրականացվում են Ընկերության բյուջեի սահմաններում: Այսինքն՝ Ընկերության 2012–2014 թվականների կոլեկտիվ պայմանագրով մի կողմից նախատեսվում է աշխատողի իրավունքը՝ երեխայի ծննդյան դեպքում վճարվող նյութական օգնություն ստանալու վերաբերյալ, իսկ մյուս կողմից նախատեսվում է նշված իրավունքի իրացման կարգը, որի համաձայն՝ նյութական օգնությունը, հանդիսանալով ծախսում, պետք է կատարվի Ընկերության բյուջեի սահմաններում: Հետևաբար Ընկերությունը, գտնվելով ոչ բարվոք ֆինանսական դրության մեջ և չունենալով համապատասխան միջոցներ իր բյուջեում, չէր կարող և իրավունք ուներ չվճարելու նշված նյութական օգնությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.12.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ գործողման համար չվճարված օրապահիկի՝ 2.589.861 ՀՀ դրամի և երեխայի ծննդյան կապակցությամբ չվճարված նյութական օգնության՝ 225.000 ՀՀ դրամի բռնագանձման պահանջների մասով հայցը մերժել կամ այդ մասերով գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները**

ՀՀ վճարել դատարանի թիվ ՎԳ/0961/05/09 վարչական գործով 05.02.2010 թվականի որոշմամբ սահմանվել է, որ օրապահիկը փոխհատուցման վճար է, իսկ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 7–րդ հոդվածի համաձայն՝ փոխհատուցման վճարն աշխատանքի վարձատրության տարր է, հետևաբար ստորադաս դատարանները միանգամայն իրավաչափորեն եզրակացրել են, որ օրապահիկի բռնագանձման պահանջի նկատմամբ չի կարող կիրառվել հայցային վաղեմություն: Սույն գործով առաջացած իրավահարաբերությունները հիմնականում ծագել են 2008–2012 թվականների ընթացքում, հետևաբար բողոք բերած անձի կողմից վկայակոչված՝ ՀՀ կառավարության 08.08.2013 թվականի թիվ 853–Ն որոշումը չի կարող հետադարձ ուժ ունենալ:

Երեխայի ծննդյան համար չվճարված նյութական օգնությունը բռնագանձելու պահանջը բավարարելու հիմքում դրված ստորադաս դատարանների պատճառաբանությունները ևս լիովին իրավաչափ են, հետևաբար այդ մասով ևս վճարել բողոքն անհիմն է:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերության և Վահե Դավթյանի միջև 11.07.2008 թվականին կնքվել է թիվ 409 աշխատանքային պայմանագիրը, որով Վահե Դավթյանն ընդունվել է աշխատանքի Ընկերությունում (**հատոր 1–ին, գ.թ. 118**):

2. Ընկերության գլխավոր տնօրենի 05.09.2008 թվականի թիվ 523–Ն հրամանով սահմանվել են Ընկերության աշխատողների՝ գործողման մեջ գտնվելու յուրաքանչյուր օրվա համար օրապահիկի չափերը (**հատոր 1–ին, գ.թ. 28**):

3. Ըստ Ընկերության և Վահե Դավթյանի կողմից ներկայացված հաշվարկների՝ աշխատանքային գործունեության ընթացքում Վահե Դավթյանը 17.08.2008 թվականից մինչև 08.04.2014 թվականն ընկած ժամանակահատվածներում մեկնել է գործուղումների Մոսկվա, Ստամբուլ, Օդեսա, Մոչի, Թբիլիսի քաղաքներ, ԼՂՀ: Նրան վճարված օրապահիկի գումարը կազմել է 1.716.000 ՀՀ դրամ (**հատոր 2–րդ, գ.թ. 8, 21–22**):

4. Ըստ Վահե Դավթյանի կողմից ներկայացված հաշվարկի՝ ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2335–Ն որոշման հիման վրա իրեն վճարման ենթակա և փաստացի վճարված օրապահիկի տարբերությունը կազմում է 2.589.861 ՀՀ դրամ, որից 2.172.162 ՀՀ դրամը՝ որպես 07.08.2008 թվականից մինչև 13.11.2011 թվականը կատարված գործու-



դումների ծախսերի գումար, իսկ 417.699 ՀՀ դրամը՝ 16.05.2012 թվականից մինչև 08.04.2014 թվականը կատարված գործուղումների ծախսերի գումար (**հատոր 2-րդ, գ.թ. 21-22**):

5. 26.07.2012 թվականին գործատուի, որի ներկայացուցիչ է հանդիսացել Ընկերությունը՝ ի դեմս գլխավոր տնօրեն Վիկտոր Ռեբեցի, և աշխատողների միջև, որոնց ներկայացուցիչ է հանդիսացել Հայաստանի երկաթուղայինների արհեստակցական կազմակերպությունների հանրապետական ճյուղային միությունը՝ ի դեմս նախագահ Աշոտ Խլղաթյանի, կնքվել է Ընկերության 2012-2014 թվականների կոլեկտիվ պայմանագիրը (այսուհետ՝ Կոլեկտիվ պայմանագիր), որի «Հիմնական հասկացություններ» վերտառությամբ 1-ին բաժնի 2.4 կետի համաձայն՝ նույն պայմանագրի իրականացման հետ կապված ծախսումներն իրականացվում են ընկերության բյուջեի սահմաններում (**հատոր 1-ին, գ.թ. 97**):

6. Կոլեկտիվ պայմանագրի «Գործատուի սոցիալական պատասխանատվությունը» վերտառությամբ 3-րդ բաժնի 3.4.4 կետի համաձայն՝ ի լրումն ՀՀ գործող կարգով երեխայի ծննդի դեպքում վճարվող գումարի, նյութական օգնություն ցուցաբերել ծնողներից մեկին երեխայի ծննդյան դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 103**):

7. 11.12.2013 թվականին տրված թիվ ԱԲ 291418 ծննդյան վկայականի համաձայն՝ 09.12.2013 թվականին ծնվել է Վահե Դավթյանի որդին՝ Դավիդ Դավթյանը (**հատոր 1-ին, գ.թ. 93**):

8. Սույն գործով Վահե Դավթյանը հայցադիմումը դատարան է ներկայացրել 22.12.2014 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 3-7**):

9. Սույն գործով պատասխանողի ներկայացուցիչները 13.04.2015 թվականին միջնորդություն են ներկայացրել դատարան՝ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 73**):

#### **4. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ գործով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի, 178-րդ հոդվածի և 209-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի, 178-րդ հոդվածի և 209-րդ հոդվածի 1-ին մասի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք գործուղման մեկնած աշխատողին հարուցվող գործուղման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, հանդիսանում են աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճարում:*

Վերոգրյալի համատեքստում քննելով վճարել բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ.

1) *վճարել բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պարճատարանությամբ.*

Վճարել դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցադրմանը պատասխանելու համար հարկ է նախևառաջ անդրադառնալ աշխատավարձի հասկացության օրենսդրական բնորոշմանը և գործուղման հետ կապված ծախսերի, այդ թվում՝ օրապահիկի իրավական բնույթի և էության վերլուծությանը: Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով օրապահիկի վճարման հետ կապված իրավահարաբերությունները ծագել են 2008 թվականից սկսած տարբեր ժամանակահատվածներում կայացած գործու-

ղումների կապակցությամբ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ինչպես գործող, այնպես էլ վիճելի իրավահարաբերության ծագման համապատասխան ժամանակահատվածներում գործող աշխատանքային օրենսդրության վերլուծությանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի՝ մինչև 24.06.2010 թվականը գործող խմբագրությամբ 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ աշխատավարձն աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է: Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց ցանկացած եղանակով տրված լրացուցիչ վարձատրությունը:

Նույն հոդվածի՝ 24.06.2010 թվականից մինչև 01.12.2014 թվականը գործող խմբագրությամբ 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ աշխատավարձը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է: Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ վարձատրությունը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի գործող խմբագրության համաձայն՝ աշխատավարձը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է: Նույն հոդվածի 3-րդ մասի գործող խմբագրության համաձայն՝ աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ աշխատավարձը:

Հիմնական աշխատավարձն օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտով, աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար սահմանված վարձատրության չափն է:

Լրացուցիչ աշխատավարձը նույն օրենսգրքով, օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով, գործատուի իրավական ակտով սահմանված հիմնական աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող հավելումները, հավելավճարները, լրավճարները և պարգևատրումներն են:

Հավելումը նույն օրենսգրքով, օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված դեպքերում և չափերով հիմնական աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող լրացուցիչ վարձատրությունն է, որը վճարվում է ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանք կատարելու և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքների համար:

Հավելավճարը նույն օրենսգրքով, օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված դեպքերում և չափերով հիմնական աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող լրացուցիչ վարձատրությունն է, որը վճարվում է որակավորման (դասային, դիվանագիտական, գիտական աստիճան, կոչում և այլն), աշխատանքային ստաժի համար:

Լրավճարը, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով նախատեսված դեպքերում և չափերով հիմնական աշխատավարձից, հավելումից, հավելավճարից և պարգևատրումից բացի, աշխատողին վճարվող ցանկացած ձևի վարձատրությունն է:

Պարգևատրումն օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված կարգով և չափերով աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է:

Վերլուծելով վերոնշյալ իրավակարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, սահմանելով և հետագայում խմբագրելով աշխատավարձի հասկացությունը, ըստ էության զարգացրել է աշխատավարձի հասկացության վերաբերյալ այն դիրքորո-

շունը, որ աշխատավարձը կայուն աշխատանքային զբաղվածության դիմաց պարբերաբար տրվող որոշակի չափով հատուցում է, որի չափը սահմանվում է օրենքով, այլ իրավական ակտով կամ կողմերի համաձայնությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատավարձի հիմնական հատկանիշներն են.

- 1) այն վարձատրություն է կատարված կամ կատարվելիք աշխատանքի դիմաց,
- 2) աշխատավարձի վճարման պայմանները սահմանվում են աշխատանքային պայմանագրով կամ օրենսդրությամբ,
- 3) աշխատավարձ վճարելու գործատուի պարտականությունը և աշխատավարձ ստանալու աշխատողի իրավունքը ծագում են աշխատանքային հարաբերությունների ծագման պահից հետո:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատավարձը բաղկացած է պարտադիր (հիմնական) և լրացուցիչ մասերից, որտեղ հիմնական աշխատավարձն այն հարաբերականորեն կայուն գումարն է, որը գործատուն վճարում է յուրաքանչյուր աշխատողի ամեն ամիս, իսկ լրացուցիչ աշխատավարձը հիմնական աշխատավարձից բացի աշխատողին կատարվող վճարումն է որոշակի հանգամանքների առկայության պայմաններում:

«Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 11.09.2001 թվականին, ուժի մեջ է մտել 18.10.2001 թվականին, ուժը կորցրել է 07.08.2010 թվականին) 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքի վարձատրության տարրերն են՝ ա) տարիֆային աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափը), բ) տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) նկատմամբ հաշվարկվող հավելումները և պարզևավճարները, գ) փոխհատուցումները:

ՀՀ կառավարության «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» 08.06.1998 թվականի թիվ 352 որոշման (ուժի մեջ է մտել 10.07.1998 թվականին, ուժը կորցրել է 01.01.2013 թվականին) «Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների) ցանկը» վերտառությամբ թիվ 1 հավելվածի 1-ին կետի (12.05.2005 թվականի խմբագրությամբ) համաձայն՝ **աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ և դրանց հավասարեցված եկամուտներ** են համարվում՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան որոշակի ժամկետով (անձնական բնույթի ծառայություններ մատուցելու մասին, տնային և անտրոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերի շրջանակներում վճարումները (վարձատրությունը)՝

- ա) աշխատավարձը (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ վարձատրություն)՝ ներառյալ՝
  - արտաժամյա աշխատանքի վարձատրությունը,
  - գիշերային աշխատանքի վարձատրությունը,
  - ոչ աշխատանքային (հանգստյան, տոնական, հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը,
  - լրավճարները, հավելավճարները (այդ թվում՝ դասային և հատուկ կոչումների, գիտական աստիճանների համար) և պարզևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից),
  - աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները (**բացառությամբ օրենքով սահմանված դեպքերում տրվող փոխհատուցման և օգնության գումարների**),
  - պարապտրոդի ժամանակ վճարումը,
  - օրինական գործադուլին մասնակցող աշխատողներին վճարումը,
  - լրացուցիչ և հատուկ ընդմիջումների վճարումը,

- առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար վճարումը (եթե աշխատողի առողջության ստուգումը պարտադիր է և պայմանավորված է աշխատանքի բնույթով),

- աշխատանքի այլ վայր փոխադրվելու կամ այլ վայրում աշխատանքի ընդունվելու դեպքում տեղափոխման համար նախապատրաստվելու և նոր վայրում տեղավորվելու ժամանակահատվածի համար վարձատրությունը.

բ) ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) տրամադրվող վճարովի արձակուրդի համար, ինչպես նաև աշխատողին աշխատանքից ազատելու ժամանակ ամենամյա արձակուրդի տրամադրման դեպքում վճարվող աշխատավարձը.

գ) նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապորդի դիմաց վճարված աշխատավարձը,

դ) հեղինակային վարձատրությունը (բացառությամբ ռոյալթիների):

ՀՀ կառավարության «Աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանելու մասին» 08.08.2013 թվականի թիվ 853-Ն որոշման հավելվածով սահմանված «Աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների» ցանկի 1-ին կետի (03.07.2014 թվականի խմբագրությամբ) համաձայն՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ են համարվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան որոշակի ժամկետով և անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերի, ինչպես նաև աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի շրջանակներում կատարվող հետևյալ վճարումները (վարձատրությունը՝

1) աշխատավարձը (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ վարձատրություն)՝ ներառյալ ա. արտաժամյա աշխատանքի վարձատրությունը,

բ. գիշերային աշխատանքի վարձատրությունը,

գ. հանգստյան և ոչ աշխատանքային (տոնական և հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը,

դ. լրավճարները, հավելումները, հավելավճարները և պարգևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից),

ե. աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները (**բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրվող փոխհատուցման գումարների**, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վճարվող ժամանակավոր անաշխատունակության նպատակների գումարների, օգնության գումարների, ինչպես նաև վարձու աշխատողների սոցիալական կարիքների բավարարման նպատակով տրվող գումարների),

զ. պարապորդի ժամանակ վճարումը, այդ թվում նաև՝ նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապորդի դիմաց վճարված աշխատավարձը,

է. օրինական գործադուլին մասնակցող աշխատողներին վճարումը,

ը. լրացուցիչ և հատուկ ընդմիջումների վճարումը,

թ. աշխատանքի ծավալի ավելացման դեպքում աշխատանքի վարձատրությունը,

ժ. առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար վճարումը (եթե աշխատողի առողջության ստուգումը պարտադիր է և պայմանավորված է աշխատանքի բնույթով):

Նույն ցանկի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ են համարվում նաև ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) վճարովի արձակուրդի գումարները, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելիս (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի գործողությունը դադարեցնելիս) չօգտագործված արձակուրդի համար վճարվող հատուցումը (փոխհատուցումը), հեղինակային վարձատրությունը (բացառությամբ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ ենթակետով սահմանված ռոյալթիների):

Վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում միասնական պրակտիկա ապահովելու նպատակով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է տարբերա-

կում մտցնել աշխատավարձի կազմում ներառվող, իրենց բնույթով փոխհատուցման գումարների և աշխատավարձի կազմում չներառվող փոխհատուցման գումարների միջև:

Փոխհատուցման բնույթ կրող և աշխատավարձի կազմի մեջ մտնող վճարումներն **ուղղակիորեն** կապված են աշխատողի կողմից իր կանոնավոր աշխատանքային պարտականությունները կատարելու հետ՝ ի տարբերություն այն փոխհատուցումների, որոնք ուղղված են աշխատողի կողմից աշխատանքային կամ այլ պարտականությունների կատարման ընթացքում կատարված **ծախսերի** փոխհատուցմանը: Վերջիններս, ի տարբերություն աշխատավարձի կազմի մեջ մտնող փոխհատուցումների, աշխատողի համար տնտեսական օգուտների չեն հանգեցնում, այլ վերականգնում են կատարված **ծախսերը** (կամ ապահովում համապատասխան **ծախսերի** կատարումը):

Վերլուծելով գործող ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման բնույթ կրող վճարները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նման վճար է, օրինակ, աշխատավարձի կազմի մեջ մտնող հավելումը՝ հաշվի առնելով, որ վերջինս վճարվում է ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանք կատարելու և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքների համար: Այլ կերպ ասած՝ հավելումը նույնպես իր բնույթով փոխհատուցողական է, որը, սակայն, ներառվում է աշխատավարձի կազմի մեջ՝ ուղղակիորեն նախատեսված լինելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով **որպես լրացուցիչ աշխատավարձ**: Փաստորեն, եթե, օրինակ, ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանք կատարելու և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված **աշխատանքների** դիմաց լրացուցիչ վճարումներն ուղղված են փոխհատուցելու կատարվող աշխատանքի անբարենպաստ հետևանքները, ապա վերոնշյալ երկրորդ խմբում ներառվող փոխհատուցման գումարները վերականգնում են աշխատողի կատարած **ծախսերը**՝ ուղղակիորեն կապված չլինելով հիմնական աշխատանքային պարտականությունների կատարման համար վճարումների հետ:

Հաշվի առնելով սույն գործով առաջադրված հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գործողման հետ կապված **ծախսերի**, այդ թվում՝ օրապահիկի բնույթին, արձանագրում է հետևյալը.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ աշխատանքի էական պայման է նաև աշխատանքի վայրը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 209–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ գործողման մեկնած աշխատողներին երաշխավորվում է նրանց աշխատատեղի (պաշտոնի) և աշխատավարձի պահպանումը գործողման ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև նրանց վճարվում է օրապահիկ, և հատուցվում են գործողման հետ կապված **ծախսերը**: Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ այդ վճարումների **նվազագույն** չափը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2335–Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված «Ծառայողական գործողման մեկնած աշխատողների գործողման **ծախսերի** հատուցման վճարման» կարգի 2–րդ կետի համաձայն՝ ծառայողական գործողումը գործատուի կամ նրա ներկայացուցչի կողմից աշխատողի հիմնական աշխատանքի վայրից դուրս որոշակի ժամկետով այլ վայրում աշխատանք կատարելու հանձնարարություն է: Նույն կարգի 7–րդ կետի համաձայն՝ գործողված աշխատողին հատուցվում է օրապահիկը, գիշերավարձը, աշխատանքի հիմնական վայրից գործողման վայրեր մեկնելու և վերադառնալու ճանապարհածախսը, ճանապարհին հարկադրական կանգառի ժամանակ հյուրանոցներում և համանման օբյեկտներում տեղերն ամրագրելու վճարը, պետական տուրքերը, մուտքի արտոնագրի ձևակերպման հետ կապված **ծախսերը**, ինչպես նաև ծառայողական գործողման հետ կապված կապի (հեռախոս, ֆաքս, ինտերնետ ծառայություն), փաստաթղթերի թարգմանության և վավերացման, գործողման հետ կապված այլ **ծախսեր**՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:

Նշված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտականությունները պետք է կատարվեն **աշ-**

**խատավայրում**, որը նշված է հենց աշխատանքային պայմանագրում (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում՝ հրամանում): Բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում աշխատողին հանձնարարել իր աշխատանքային պարտականությունները ժամանակավորապես կատարել իր հիմնական աշխատավայրից դուրս՝ այլ վայրում, աշխատողի աշխատանքի կատարումը ձևակերպվում է որպես գործուղում, որի կապակցությամբ օրենսդիրը, ելնելով աշխատողի օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, աշխատողի համար սահմանել է որոշակի երաշխիքներ և փոխհատուցումներ: Ընդ որում, թեև աշխատանքային օրենսդրությամբ սահմանված չեն «երաշխիք» և «փոխհատուցում» եզրույթները, սակայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս Վճռաբեկ դատարանին եզրահանգելու, որ երաշխիքներն այն միջոցները, եղանակներն ու պայմաններն են, որոնց օգնությամբ ապահովվում է քաղաքացիների (աշխատողների) ընդհանուր կամ հատուկ իրավունքների և ազատությունների իրականացումը, իսկ փոխհատուցումները աշխատողին իր կատարած կամ նրա կողմից հաստատապես կատարվելիք **այն ծախսերի հատուցումն (վերականգնումն)** են, որոնք նրան անհրաժեշտ են եղել կամ պետք է լինեն իր աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 31.12.1997 թվականին, ուժը կորցրել է 01.01.2013 թվականին) մեկնաբանության հիման վրա անդրադառնալով այն հարցին, թե արդյոք գործուղման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, հանդիսանում են փոխհատուցման վճարներ, և ըստ այդմ՝ արդյոք դրանք ենթակա են նվազեցման համախառն եկամտից, եզրահանգել է, որ գործուղման վճարները, այդ թվում՝ օրապահիկը, **փոխհատուցման վճար են (տես «Բեյազ կալկազ տրանս սերվիս» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնաթեր պետական եկամտորների կոմիտեի Շահունյանի հարկային տեսչության թիվ ՎԴ/0961/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.02.2010 թվականի որոշումը):**

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության վերը նշված որոշումներով աշխատավարձին են հավասարեցվել աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված որոշ այլ վճարումներ ևս՝ աշխատավարձի իրավական կարգավորման ռեժիմը տարածելով նաև այդ վճարումների նկատմամբ, հարկ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք գործուղման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, ներառված են վիճելի իրավահարաբերության ծագման համապատասխան ժամանակահատվածներում գործող ՀՀ կառավարության որոշումներով սահմանված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների ցանկում:

Վճռաբեկ դատարանը, վկայակոչված նորմերը մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, արձանագրում է, որ ինչպես ՀՀ կառավարության՝ գործող 08.08.2013 թվականի թիվ 853-Ն, այնպես էլ 10.07.1998 թվականից մինչև 01.01.2013 թվականն ընկած ժամանակահատվածում գործող 08.06.1998 թվականի թիվ 352 որոշումներով նախատեսվել է աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների սպառիչ ցանկ, որում գործուղման ծախսերն ընդհանրապես և (կամ) օրապահիկը մասնավորապես չեն ներառվել: Ավելին, ՀՀ կառավարության 08.08.2013 թվականի թիվ 853-Ն որոշման հավելվածի 1-ին կետի «ե» ենթակետի և 08.06.1998 թվականի թիվ 352 որոշման թիվ 1 հավելվածի «ա» կետի 5-րդ պարբերության բովանդակությունից հետևում է, որ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները հավասարեցվել են աշխատավարձին, իսկ դրանցից սահմանվել է բացառություն, այն է՝ աշխատավարձին հավասարեցված վճարում չեն համարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրվող **փոխհատուցման գումարները**: Աշխատավարձին հավասարեցված վճարումների վերաբերյալ ներկայացված իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2008 թվականից ի վեր գործող՝ աշխատավարձին հավասարեցված վճարումների ցանկը սահմանող ՀՀ կառավարության որոշումների համաձայն՝ գործուղման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, լինելով փոխհատուցման գումար, ոչ միայն չեն ներառվել աշխատավարձին հավասարեցված վճարումների ցանկում, այլև բացառվել է դրանց՝ աշխատավարձին հավասարեցված վճարում լինելու հանգամանքը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործողման համար կատարված ծախսերի փոխհատուցումները պատկանում են աշխատավարձի կազմի մեջ չմտնող փոխհատուցումների շարքին: Դրանք ոչ թե վարձատրություն են աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց, այլ վերականգնում են այն ծախսերը, որոնք աշխատողը կատարել է իր աշխատանքի սովորական վայրից դուրս աշխատանք կատարելու համար: Գործողման ծախսերի՝ աշխատավարձի կազմում չներառվելու մասին է վկայում նաև այն, որ գործողման դեպքում աշխատողը ստանում է աշխատավարձ: Այսինքն՝ աշխատողին գործողման դեպքում վճարվում է ինչպես աշխատավարձ՝ կատարված աշխատանքի դիմաց, այնպես էլ գործողման ընթացքում կատարված հիմնավորված ծախսերի փոխհատուցում (այդ թվում նաև՝ օրապահիկ):

Վերոգրյալ իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործողման դեպքում աշխատողի համար օրենսդրությամբ նախատեսված են հետևյալ երաշխիքներն ու փոխհատուցումները.

1. աշխատատեղի պահպանում,
2. աշխատավարձի պահպանում,
3. կատարված ծախսերի, այդ թվում՝ օրապահիկի վճարումը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործողման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, հանդիսանում են փոխհատուցման վճարներ, որոնք տրվում են աշխատողին աշխատանքային պարտականությունները ժամանակավորապես իր հիմնական աշխատավայրից դուրս՝ այլ վայրում կատարելու կապակցությամբ կատարված կամ կատարվելիք որոշակի **ծախսերը հատուցելու** (այլ ոչ թե աշխատանքի դիմաց վարձատրելու) նպատակով: Հետևաբար գործողման ծախսերը, ի տարբերություն, օրինակ, հավելման, չեն կարող ներառվել աշխատանքի վարձատրության տարրերի մեջ մտնող փոխհատուցման վճարների մեջ՝ հաշվի առնելով աշխատավարձի (կամ դրան հավասարեցված վճարների)՝ կատարված **աշխատանքի** դիմաց վարձատրության բնույթ ունենալը, իսկ գործողման ծախսերի՝ կատարված **ծախսերի** փոխհատուցման բնույթ ունենալը: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործողման ծախսերը, այդ թվում՝ օրապահիկը, չեն հանդիսանում աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճար:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմությունը իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածն է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն չի տարածվում աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, աշխատավարձի, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջներով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու առանձնահատկություններին, արձանագրել է, որ օրենսդիրը, ՀՀ աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների համար սահմանելով հայցային վաղեմության ընդհանուր՝ երեք տարվա ժամկետ, նախատեսել է նաև որոշակի բացառություններ նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դեպքերի համար: Այսպես, աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, **աշխատավարձի**, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների վրա հայցային վաղեմություն ընդհանրապես չի տարածվում, իսկ որոշ պահանջների համար հնարավոր է համարել օրենքով հայցային վաղեմության ընդհանուր ժամկետների համեմատ կրճատ կամ ավելի երկար՝ հատուկ ժամկետների նախատեսումը (*տե՛ս Մեյրան Սյրեփանյանի ընդդեմ «Երևանի քաղաքապետարանի Դ. Դեմիրճյանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի թիվ ԵՇԴ/0906/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների վերաբերյալ վերոշարադրյալ իրավական վերլուծությունների համադրման արդյունքում պարզ է դառնում, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասում որպես բացառություն նշված «աշխատավարձ» եզրույթն իր մեջ ներառում է բացառապես աշխատանքի կատարման դիմաց

պարբերաբար տրվող հիմնական և լրացուցիչ աշխատավարձը, ինչպես նաև աշխատավարձին հավասարեցված վճարումները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վահե Դավթյանը Դատարանից պահանջել է Ընկերությունից բռնագանձել 2.589.861 ՀՀ դրամ՝ որպես գործուղման համար պակաս վճարված օրապահիկ: 13.04.2015 թվականին Ընկերությունը Դատարան է ներկայացրել «Հայցային վաղեմություն կիրառելու մասին» միջնորդություն՝ պահանջելով չվճարված օրապահիկը բռնագանձելու պահանջի նկատմամբ կիրառել հայցային վաղեմություն:

Դատարանը, մերժելով պակաս վճարված օրապահիկը բռնագանձելու պահանջի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու մասին պատասխանողի միջնորդությունը, պատճառաբանել է, որ գործուղման վճարների նկատմամբ չի կարող տարածվել հայցային վաղեմություն, քանի որ դրանք՝ որպես աշխատանքի դիմաց կատարված փոխհատուցում, ներառվում են այն բացառություններում, որոնց նկատմամբ հայցային վաղեմություն չի կիրառվում:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի վերը նշված պատճառաբանությունը, գտել է, որ Դատարանն արդարացիորեն չի կիրառել հայցային վաղեմություն՝ պատճառաբանելով, որ Ընկերությունը հայցվորի հանդեպ կրում է հիմնական աշխատանքի վայրից դուրս, որոշակի ժամկետում այլ վայրում աշխատանքային հանձնարարություն կատարելու հետ կապված ծախսերի համար տրվող փոխհատուցման վճարման պարտավորություն, որը աշխատանքի վարձատրության մաս է հանդիսանում:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները թեև իրավացիորեն գտել են, որ **օրապահիկը** հանդիսանում է **փոխհատուցման վճար**, սակայն, մինևնույն ժամանակ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30–րդ հոդվածի 3–րդ մասի ուժով բացառել են սույն գործով հայցի առարկա՝ պակաս վճարված օրապահիկի բռնագանձման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության կիրառումը: Մինչդեռ վերոնշյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո արձանագրելով, որ գործուղման ծախսերը, մասնավորապես, օրապահիկը, չեն հանդիսանում աշխատավարձին հավասարեցված վճար, և պակաս վճարված օրապահիկի բռնագանձման պահանջի նկատմամբ կիրառելի համարելով հայցային վաղեմության ժամկետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30–րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի հայցային վաղեմության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել աշխատանքային հարաբերությունների նկատմամբ՝ աշխատանքային օրենսդրությամբ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթների բացակայության դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ արտահայտել է դիրքորոշում առ այն, որ աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ **հայցային վաղեմության կիրառման** վերաբերյալ դրույթները (*տես Ադիլ Արդարյանն ընդդեմ «Վանաձորի աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մասնկապալանական մասնագիտացված մարզադպրոց» ՀՈԱԿ–ի թիվ ԼԳ/1071/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335–րդ հոդվածի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ հայցվորը ծառայողական գործուղումների է մեկնել 17.08.2008 թվականից մինչև 08.04.2014 թվականն ընկած ժամանակահատվածում: Ըստ Ընկերության և Վահե Դավթյանի կողմից ներկայացված հաշվարկների՝ նշված ժամանակաշրջանում մեկնած գործուղումների համար հայցվորին, որպես օրապահիկ, փաստացի վճարվել է ընդամենը 1.716.000 ՀՀ դրամ: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ինչպես գործուղման ժամանակահատվածի, այնպես էլ գործուղման համար փաստացի վճար-



ված օրապահիկի գումարի հաշվարկի մասով հայցվորի և բողոք բերած անձի ներկայացրած հաշվարկներում արտացոլված տվյալները, ըստ էության, իրար չեն հակասում: Ավելին, բողոք բերած անձը ոչ միայն չի վիճարկել օրապահիկի պակաս վճարված գումարի վերաբերյալ հայցվորի կողմից ներկայացրած հաշվարկը, ըստ որի՝ պակաս վճարված օրապահիկի չափը կազմում է 2.589.861 ՀՀ դրամ (որից 2.172.162 ՀՀ դրամը՝ որպես 07.08.2008 թվականից մինչև 13.11.2011 թվականը կատարված գործուղումների ծախսերի գումար, իսկ 417.699 ՀՀ դրամը՝ 16.05.2012 թվականից մինչև 08.04.2014 թվականը կատարված գործուղումների ծախսերի գումար), այլ նաև գործի քննության ընթացքում ներկայացրել է դիմում՝ նշված գումարի բռնագանձման պահանջի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու մասին:

ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2335-Ն որոշման թիվ 1 հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ: Գործուղումից վերադառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատողը պարտավոր է ներկայացնել գործուղման վկայականը, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը, գործուղման ծախսերը հաստատող փաստաթղթերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ սահմանված օրապահիկի տրամադրման ժամանակահատվածի հետ կապված իրավակարգավորումը և հաշվի առնելով կողմերի ներկայացրած հաշվարկները՝ Վճռաբեկ դատարանը, սույն գործով այլ բան ապացուցված չլինելու պայմաններում, գտնում է, որ գործում է այն կանխավարկածը, որ Վահե Դավթյանը յուրաքանչյուր գործուղման համար նախատեսված օրապահիկը ստացել է գործուղման մեկնելուց առաջ, ուստի առնվազն գործուղման մեկնելու օրը վերջինս պարտավոր էր իմանալ իրեն պակաս վճարված օրապահիկի մասին: Հետևաբար մինչև 2011 թվականի դեկտեմբեր ամիսը մեկնած գործուղումների, այն է՝ 17.08.2008 թվականից մինչև 13.11.2011 թվականն ընկած ժամանակահատվածում գործուղումների համար պակաս վճարված օրապահիկի մասին հայցվորին հայտնի է դարձել նշված ժամանակահատվածում մեկնած գործուղումների ժամանակ՝ համապատասխանաբար Մոսկվա գործուղման համար՝ 11.10.2008, 25.03.2009, 07.09.2009, 16.03.2010, 28.07.2010, 22.08.2010, 17.10.2010, 14.04.2011, 09.09.2011, 13.11.2011 թվականներին, Ստամբուլ՝ 10.02.2010 թվականին, Օդեսա՝ 18.09.2010 թվականին, Սոչի՝ 26.06.2011 թվականին, Թբիլիսի՝ 17.08.2008, 03.10.2011 թվականներին, որոնց համար պակաս վճարված օրապահիկի չափը, ըստ հայցվորի հաշվարկի, կազմում է 2.172.162 ՀՀ դրամ: Մինչդեռ նշված գումարը բռնագանձելու պահանջ հայցվորը ներկայացրել է 22.12.2014 թվականին, երբ արդեն լրացել է իրավունքը խախտած անձի հայցով նշված գումարի մասով դատարան դիմելու եռամյա ժամկետը, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 17.08.2008 թվականից մինչև 13.11.2011 թվականն ընկած ժամանակահատվածում մեկնած գործուղումների համար պակաս վճարված օրապահիկը՝ 2.172.162 ՀՀ դրամը, բռնագանձելու պահանջի նկատմամբ պետք է կիրառվեր հայցային վաղեմություն, և այդ մասով հայցը ենթակա էր մերժման, ինչը, սակայն, անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Ինչ վերաբերում է 16.05.2012 թվականից մինչև 08.04.2014 թվականը կատարված գործուղումների ծախսերի գումարի՝ 417.699 ՀՀ դրամի բռնագանձման պահանջին, ապա այդ գումարի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելի չէ, հետևաբար այս մասով բողոքում ներկայացված փաստարկները հիմնավոր չեն:

*Վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները բողոքի առաջին հիմքի վերաբերյալ հերքվում են վերոնշյալ պարճատարանություններով:*

## *2. Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պարճատարանությամբ.*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և **կոլեկտիվ պայմանագրերով:**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային օրենսդրությանը և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան՝ աշխատանքային և դրա հետ անմիջականորեն

կապված հարաբերությունների կարգավորումն իրականացվում է **աշխատողների և գործատուների կնքած կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի** միջոցով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կոլեկտիվ պայմանագիրը գործատուի (գործատուի ներկայացուցիչ) և աշխատողների ներկայացուցիչների կամ գործատուների միության և արհեստակցական միության, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության միջև գրավոր ձևով կնքված կամավոր համաձայնությունն է, որը կարգավորում է աշխատողների և գործատուների միջև աշխատանքային հարաբերությունները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմանների վերաբերյալ գործատուի և տվյալ կազմակերպությունում աշխատողների ներկայացուցիչների միջև կնքված գրավոր համաձայնությունն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունում կնքված կոլեկտիվ պայմանագիրը տարածվում է այդ կազմակերպության բոլոր աշխատողների վրա:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպության կոլեկտիվ պայմանագրով կողմերը սահմանում են աշխատանքային օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով կամ հանրապետական, ճյուղային և տարածքային կոլեկտիվ պայմանագրերով չկարգավորվող կամ դրանց չհակասող և դրանցով նախատեսված պայմանների համեմատ աշխատողների դրությունը չվատթարացնող պայմաններ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը բովանդակում է աշխատողների և գործատուների փոխադարձ պարտավորությունները նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հարցերի կամ դրանց մի մասի վերաբերյալ:

Նշված իրավական նորմերի համադրումից հետևում է, որ կոլեկտիվ պայմանագիրը **աշխատանքային հարաբերությունների առանձին և ինքնուրույն կարգավորիչ է**, որն արտահայտում է գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող բոլոր աշխատողների կամ նրանց մի մասի խմբային շահերը և բովանդակում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հարցերի կամ դրանց մի մասի շուրջ աշխատողների և գործատուների **փոխադարձ պարտավորություններ**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և վերջինիս աշխատողների միջև 26.07.2012 թվականին կնքվել է Կոլեկտիվ պայմանագիր, որի 3-րդ բաժնով սահմանվել է գործատուի սոցիալական պատասխանատվությունն աշխատողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքների ոլորտում, և նախատեսվել են աշխատողների համար սոցիալական երաշխիքներ, ի թիվս որոնց՝ Կոլեկտիվ պայմանագրի 3.4.4-րդ կետով սահմանվել է պարտականություն գործատուի համար՝ ի լրումն ՀՀ գործող կարգով երեխայի ծննդի դեպքում վճարվող գումարի, նյութական օգնություն ցուցաբերել ծնողներից մեկին երեխայի ծննդյան դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով: Մինչև ժամանակ Կոլեկտիվ պայմանագրի 2.4-րդ կետով սահմանվել է, որ նույն պայմանագրի իրականացման հետ կապված ծախսումներն իրականացվում են ընկերության բյուջեի սահմաններում:

Կոլեկտիվ պայմանագրի նշված կետերի համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Կոլեկտիվ պայմանագրով աշխատողների համար սահմանվել է հատուկ սոցիալական երաշխիք՝ երեխայի ծննդյան դեպքում ստանալու նյութական օգնություն, և Ընկերությունը՝ որպես գործատու, համապատասխանաբար ստանձնել է պարտականություն՝ իր բյուջեի սահմաններում ապահովելու նշված երաշխիքի իրականացումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վահե Դավթյանը 11.07.2008 թվականից հանդիսացել է Ընկերության աշխատակիցը, իսկ 09.12.2013 թվականին ծնվել է Վահե Դավթյանի որդին: Ընկերությունը, առարկելով երեխայի ծննդյան կապակցությամբ նյութական օգնության գումարը բռնագանձելու մասին պահանջի դեմ, նշել է, որ ըստ Կոլեկտիվ պայմանագ-

րի՝ աշխատողի երեխայի ծննդյան դեպքում նյութական օգնությունը, հանդիսանալով ծախսում, պետք է կատարվի Ընկերության բյուջեի սահմաններում, և տվյալ դեպքում Ընկերությունը, գտնվելով ծանր ֆինանսական դրության մեջ և չունենալով համապատասխան միջոցներ իր բյուջեում, չէր կարող և իրավունք ուներ չվճարելու նշված նյութական օգնությունը:

Վերը նշված մեկնաբանությունների համատեքստում գնահատելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ տվյալ դեպքում Ընկերությունը Կոլեկտիվ պայմանագրի հիման վրա ստանձնել է պարտականություն՝ աշխատողի երեխայի ծննդյան դեպքում նյութական օգնություն ցուցաբերելու աշխատողին, ընդ որում, Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում բողոք բերած անձի այն փաստարկը, որ նյութական օգնությունը ենթադրում է որոշակի ծախս, հետևաբար այն պետք է կատարվեր Ընկերության բյուջեի սահմաններում: Մինչդեռ պատասխանողը, կրելով երեխայի ծննդյան դեպքում նյութական օգնություն տալու համար Ընկերության բյուջեում անհրաժեշտ միջոցների բացակայության փաստն ապացուցելու պարտականությունը, չի ներկայացրել այդ փաստը հիմնավորող ապացույցներ: Ինչ վերաբերում է գործում առկա՝ Ընկերության այլ աշխատակիցների կողմից Ընկերության տնօրենին հասցեագրված դիմումներին առ այն, որ աշխատակիցները պահանջում են երեխայի ծննդյան համար Կոլեկտիվ պայմանագրով նախատեսված նյութական օգնությունը, ապա դրանք չեն կարող վերոհիշյալ փաստը հաստատող ապացույցներ հանդիսանալ, քանի որ տեղեկություններ չեն պարունակում Ընկերության կողմից՝ նշված նյութական օգնությունը իր բյուջեում համապատասխան միջոցների բացակայության պատճառով վճարելու անհնարինության փաստի մասին:

Վերոնշյալ պատճառաբանությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր չէ, հետևաբար Դատարանը, նշված պահանջի մատուցելու հայցը բավարարելով, իսկ Վերաքննիչ դատարանն այդ մատուցելու Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, կայացրել են օրինական և հիմնավորված դատական ակտեր:

*Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները բողոքի երկրորդ հիմքի վերաբերյալ հիմնավորվում են վերոնշյալ պատճառաբանություններով:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

ՀՀ վճռաբեկ դատարանը *Լևիկ և Սարգիս Աղաբեկյաններն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ «ՅՈՐ ԶՈՅՍ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/Օ139/02/13 քաղաքացիական գործով 28.11.2014 թվականի որոշմամբ* արձանագրել է, որ օրենսդիրն իմպերատիվ ձևով սահմանել է պարտականություն՝ վարույթ ընդունելու միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ դատարանի կողմից կայացվել է «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում, ապա հայցվորի մոտ արդեն իսկ ձևավորվում է այն համոզմունքը, որ հայցը ներկայացվել է օրենքի պահանջների պահպանմամբ, այդ թվում՝ պահպանված է նաև օրենքով սահմանված կարգով և չափով **պետական տուրքի վճարված լինելու պահանջը**: Դատավարության յուրաքանչյուր փուլը, այդ թվում նաև՝ քաղաքացիական գործի հարուցման փուլն ուղղված է յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի իրացման ապահովմանը, տվյալ պարագայում՝ դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը պահպանված է համարվում նաև այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, և կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի (*Կրեն Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների ու մյուսների թիվ ԱՐԴ/Օ062/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն անհրաժեշտ է մեկնաբանել Կոնվենցիայի նախաբանի յուրի ներքո, որը, ի թիվս այլոց, իրավունքի գերակայությունն ամրագրում է որպես Պայմանավորվող պետությունների ընդհանուր ժառանգության մաս: Իրավունքի գերակայության հիմնարար հայեցակետերից է իրավական որոշակիության սկզբունքը, որը inter alia պահանջում է, որ դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի (տես Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, գանգատ թիվ 28342/95, կետ 61):

Սույն գործով Վահե Դավթյանը 22.12.2014 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան, որին պետական տուրքի վճարման անդորրագիր չի կցել (**հատոր 1-ին, գ.թ. 3-7**): Դատարանը 25.12.2014 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ՝ չանդրադառնալով պետական տուրքի հարցին (**հատոր 1-ին, գ.թ. 1**): 03.08.2015 թվականի վճռով Դատարանը դատական ծախսերի հարցը համարել է լուծված (**հատոր 2-րդ,**

**գ.թ. 82):** 03.09.2015 թվականի լրացուցիչ վճռով Դատարանը վճռել է Ընկերությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել բռնագանձվելիք 2.589.861 ՀՀ դրամի՝ որպես գործուղման համար չվճարված օրապահիկի և 225.000 ՀՀ դրամի՝ որպես երեխայի ծննդյան կապակցությամբ կոլեկտիվ պայմանագրի 3.4.4-րդ կետով նախատեսված և չվճարված նյութական օգնության գումարների 2 տոկոսը՝ որպես չվճարված պետական տուրքի գումար (**հատոր 2-րդ, գ.թ. 102**):

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն՝ 2.172.162 ՀՀ դրամ՝ որպես պակաս վճարված օրապահիկ, բռնագանձելու պահանջի մասով, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն այդ մասով ենթակա է քեկանման, իսկ հայցը՝ մերժման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս պահանջի մասով հայցադիմումի համար պետական տուրք վճարելու պարտականությունը (2.172.162 ՀՀ դրամի 2 տոկոսը) պատասխանողի վրա դրվել չի կարող: Հետևաբար այս մասով պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ ելնելով վերն արտահայտված իրավական դիրքորոշումներից:

Վճռաբեկ դատարանը նաև գտնում է, որ Վահե Դավթյանից հոգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 65.164 ՀՀ դրամ (2.172.162 \* 3%)՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, ինչպես նաև 65.164 ՀՀ դրամ (2.172.162 \* 3%)՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2015 թվականի որոշման՝ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունից հոգուտ Վահե Դավթյանի՝ 2.172.162 ՀՀ դրամ՝ որպես գործուղման համար չվճարված օրապահիկի գումար բռնագանձելու պահանջի մասով հայցը բավարարելու և դրա հետ կապված՝ կողմերի միջև դատական ծախսերի բաշխման մասով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.08.2015 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասը, և այդ մասով այն փոփոխել՝ Վահե Դավթյանի հայցն ընդդեմ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության՝ 2.172.162 ՀՀ դրամ՝ որպես գործուղման համար չվճարված օրապահիկի գումար բռնագանձելու պահանջի մասով, մերժել՝ այդ մասով հայցադիմումի համար նախատեսված դատական ծախսերի հարցը համարելով լուծված:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Վահե Դավթյանից հոգուտ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 65.164 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վահե Դավթյանից հոգուտ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 65.164 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ <b>ԿԴ2/0078/04/14</b>
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ2/0078/04/14	<b>2016 թ.</b>
Նախագահող դատավոր՝	Ն. Տավարացյան
Դատավորներ՝	Ա. Պետրոսյան
	Գ. Կարախանյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.04.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ Տեսչության դիմումի ընդդեմ Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանին ճանաչել սնանկ:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Սեդրակյան) (այսուհետ՝ Դատարան) 03.02.2015 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.04.2015 թվականի որոշմամբ Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 03.02.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մկրտիչ Հարությունյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի աահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնարանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, այլապես կպարզեր, որ Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանի պարտավորությունները պետական բյուջեի նկատմամբ առաջացել են 2011 թվականի սեպտեմբերին, այսինքն՝ 2011 թվականի 3-րդ եռամսյակի հաշվարկների հիմքով, որոնց ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետը եռամսյակին հաջորդող ամսվա՝ հոկտեմբերի 20-ն է: Հետևաբար Տեսչության Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանի պարտավորությունների մասին հայտնի է դարձել 20.10.2011 թվականից անմիջապես հետո: 11.11.2011 թվականին էլ հարկային մարմնի կողմից ՀՀ վարչական դատարան 7.960.481 ՀՀ դրամի բռնագանձման պահանջ է ներկայացվել, և ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԳ/7022/05/11 վարչական գործով կայացրած վճռի հիման վրա տրվել է կատարողական թերթ, որն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի սպահովելու նպատակով: ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ կատարումն ապահովելու նպատակով: ՀՀ արդարադատության նախարարության 16.05.2014 թվականի որոշմամբ կատարողական վարույթն ավարտվել է, իսկ 24.11.2014 թվականին Տեսչությունը դիմել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանին սնանկ ճանաչելու պահանջով, որը բավարարվել է: Հետևաբար Տեսչության գործողություններն օրենքի շրջանակներում են, այսինքն՝ որպես լիազորված պետական մարմին՝ Տեսչությունն Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանին սնանկ ճանաչելու պահանջը ներկայացրել է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.04.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 03.02.2015 թվականի վճռին:

### **2.1. Վճռարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռարեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Տեսչությունն առաջին անգամ պարտավորությունների հաշվարկը Մկրտիչ Հարությունյանին ներկայացրել է 06.10.2011 թվականին, որը կարող է դիտվել որպես պարտավորության հայտնաբերման պահ:

Բացի այդ, թիվ ՎԳ/7022/05/11 վարչական գործով Տեսչությունը բաց է թողել դատական ակտը կատարման ներկայացնելու ժամկետը, որը ՀՀ վարչական դատարանի 17.03.2014 թվականի որոշմամբ ճանաչվել էր հարգելի և վերականգնվել: Այնուհետև ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.05.2014 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 17.03.2014 թվականի որոշումը վերացվել է, որի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) 16.05.2014 թվականի որոշմամբ կատարողական վարույթն ավարտել է: Իրականում թիվ ՎԳ/7022/05/11 վարչական գործի շրջանակներում Ծառայությունը Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանին պատկանող գույքի կամ դրամական միջոցների բացակայության հիմքով կատարողական վարույթն ավարտել էր 04.04.2012 թվականի որոշմամբ, ինչը նշանակում է, որ Տեսչությունը Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանին պատկանող գույքի կամ դրամական միջոցների բացակայության մասին իմացել է դեռևս 2012 թվականի ապրիլ ամսին, մինչդեռ սնանկ ճանաչելու դիմումը դատարան ներկայացրել է 24.11.2014 թվականին, այսինքն՝ 32 ամիս անց: Հետևաբար Տեսչությունը, խախտելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջները, գրկվել է սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունքից:

### **3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ըստ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչության հայցի ընդդեմ Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, թիվ ՎԳ/7022/05/11 գործով ՀՀ վարչական դատարանի 23.08.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանից

hoqouat ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտուների կումիտեի Կենտրոնի հարկային տեսչության բոնագանձվել է 5.195.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գծով պարտքի գումար, և 105.915 ՀՀ դրամ՝ որպես հայցապահանջի բավարարված մասով հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար (**հատոր 1-ին, գ.թ. 18-23, 53-56**):

2) 24.11.2014 թվականին Տեսչությունը դատարան է ներկայացրել դիմում՝ Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին: Դիմումի հիմքում դրվել է ՀՀ վարչական դատարանի 23.08.2012 թվականի օրինական ուժի մեջ թիվ ՎԴ/7022/05/11 վճռով հաստատված վճարային պարտավորությունը, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով 19.11.2014 թվականի դրությամբ 240.459 ՀՀ դրամի չափով և եկամտային հարկի գծով 19.11.2014 թվականի դրությամբ 92.145 ՀՀ դրամի չափով Մկրտիչ Հարությունյանի պարտավորությունները (**հատոր 1-ին, գ.թ. 3-5, 25**):

3) Մկրտիչ Հարությունյանի կողմից 12.01.2015 թվականին առարկություն է ներկայացվել դատարան, որով վերջինս, առարկելով իրեն սնանկ ճանաչելու մասին դիմումի դեմ, նշել է, որ ՀՀ վարչական դատարանի 23.08.2012 թվականի օրինական ուժի մեջ թիվ ՎԴ/7022/05/11 վճիռը ենթակա չէ կատարման, քանի որ անցել է այդ վճռի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը (**հատոր 1-ին, գ.թ. 49**):

**4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ պարտապանին հարկադրաբար սնանկ ճանաչելու առանձնահատկություններին այն դեպքում, երբ վճարային պարտավորության անվիճելիությունը հիմնավորվում է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ բխում է օրենքով սահմանված հարկեր, գուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից:*

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

- ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,
- բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),
- գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),
- դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:



«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով (այդ թվում՝ հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարումների գծով) համապատասխան իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները պարտապանին սնանկ ճանաչելու նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում պարտավոր են պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դիմել դատարան հետևյալ դեպքերում և ժամկետներում՝ լիազորված պետական համապատասխան մարմինը՝ հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուշացնելու դեպքում պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում, պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում, պարզվում է, որ այդ գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան 60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված պետական մարմինների սահմանված ժամկետում սնանկության դիմում չներկայացնելու դեպքում դրանք ներկայացնում են դատախազության մարմինները՝ նույն օրենքով սահմանված կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է տվյալ անձին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելուց ձեռնպահ մնալու մասին կառավարության որոշումը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 6-րդ հոդվածում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձինք նույն հոդվածում նախատեսված դեպքերում և ժամկետում պարտապանին սնանկ ճանաչելու դիմում չներկայացնելու դեպքում անձնական գույքային պատասխանատվություն են կրում դրա հետևանքով՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետությանը և համայնքին պատճառված վնասի համար:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հարկադրված սնանկության դեպքում պարտապանը սնանկ է ճանաչվում, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Ընդ որում, օրենսդիրը, ամրագրելով, որ վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, միաժամանակ սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում նույնիսկ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու դեպքում պարտավորությունն անվիճելի է: Այդ հիմքերն են՝

- երբ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,
- երբ պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ պահանջի հաշվանցը),
- երբ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ պահանջի հաշվանցը),

- երբ պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

ՀՀ սահմանադրական դատարանը, 25.02.2008 թվականի թիվ ՍԴՈ-735 որոշմամբ անդրադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իմաստով «անվճարունակություն» հասկացությանը, նշել է որ «անվճարունակությունը» մի վիճակ է, երբ պարտապանն ընդհանուր առմամբ անկարող է վճարել իր պարտքերը պարտավորությունները կատարելու համար նախատեսված ժամկետներում, կամ երբ պարտապանի պարտավորությունների ընդհանուր գումարը գերազանցում է նրա ակտիվների արժեքը: Այսինքն՝ անվճարունակությունը նշանակում է վճարելու կարողության բացակայություն: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենքը հիմնվում է «անվճարունակության կանխավարկածի» վրա, այն է՝ եթե պարտապանն ի վիճակի չէ կատարելու ժամկետանց վճարային պարտավորությունները, ապա ի սկզբանե ենթադրվում է, որ նա փաստացիորեն անվճարունակ է, և այդ ենթադրությունը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ ժամկետանց պարտավորությունը չի կատարվել կամ վիճարկվել ու հերքվել: Ընդ որում, «անվճարունակության կանխավարկածն» իր հերթին հիմնվում է պարտապանի «բարեխղճության և պարտաճանաչության կանխավարկածի» վրա, այսինքն՝ եթե պարտապանը չի կատարում իր պարտավորությունները, ապա ի սկզբանե պարտավորության չկատարումը բացատրվում է ոչ թե նրա անբարեխղճությամբ, այլ վճարում կատարելու կարողության բացակայությամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ելնելով անձին սնանկ ճանաչելու տարբեր հիմքերի առանձնահատկություններից՝ օրենսդիրն անձին սնանկ ճանաչելու յուրաքանչյուր հիմքի համար սահմանել է տարբեր կարգավորումներ: Այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե սնանկության դիմումի հիմքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված որ հիմքն է ընկած, կիրառվում է տվյալ հիմքին բնորոշ օրենսդրական կարգավորումը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության դիմումի հիմքում ընկած է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետը, այն է՝ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունենալու հանգամանքը (ներառյալ պահանջի հաշվանցը), ապա համապատասխան իրավասու պետական մարմինը պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել, եթե հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուշացվում է: Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումն իրավասու պետական մարմինը պետք է **ներկայացնի պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում:** Միաժամանակ օրենսդիրը սահմանել է, որ պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում համապատասխան պետական մարմինների կողմից սնանկության դիմում չներկայացվելու դեպքում անձին սնանկ ճանաչելու դիմումը ներկայացնում են դատախազության մարմինները՝ նույն օրենքով սահմանված կարգով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ըստ էության օրենսդիրը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանելով սնանկության դիմում ներկայացնելու ժամկետային սահմանափակում, միաժամանակ նախատեսել է նաև դրա խախտման հետևանքները՝ մի դեպքում՝ սնանկության դիմում ներկայացնելու իրավունքը վերապահելով այլ պետական մարմին՝ դատախազությանը, մյուս դեպքում՝ սահմանելով համապատասխան պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվություն ժամկետի խախտման հետևանքով Հայաստանի Հանրապետությանը և համայնքին պատճառված վնասի համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ վերապահված պարտականությունների՝ սահմանված ժամկետում չիրագործումն ինքնին չի հանգեցնում պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերի վերացմանը, այլ պարտապանին սնանկ ճանաչելու իրավունքը փոխանցվում է պետական այլ մարմնին՝ դատա-

խագույթյանը, որպիսի պայմաններում իրավասու պետական մարմինը դադարում է լինել պատշաճ դիմող:

Ընդ որում, վերոգրյալ իրավական վերլուծությունները վերաբերում են միայն «Մասնկույթյան մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված հիմքին:

Մինչդեռ օրենսդիրն այլ կարգավորում է սահմանել այն դեպքերի համար, երբ սնանկության դիմումի հիմքում դրված է «Մասնկույթյան մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը: Այսպես՝ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության դիմումի հիմքում ընկած է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, իսկ պարտապանը ողջամիտ ժամկետում չի կատարում այդ վճռից բխող իր պարտավորությունը, ապա պարտատերն իրավասու է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու երկու եղանակով, այն է՝ կամ սնանկության դիմումով դիմել դատարան, կամ օրենքով սահմանված ժամկետում օրինական ուժի մեջ մտած վճիռը ներկայացնել հարկադիր կատարման: Ընդ որում, այն դեպքում, երբ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարզվում է, որ գույքը բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար, կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան **60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան:**

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության հիմքում դրված է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, ապա պարտատերը սնանկության դիմումը դատարան պետք է ներկայացնի վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված կարգով կատարման ներկայացնելու ժամկետի սահմաններում: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում կատարման ներկայացնելու դեպքում տվյալ վճռից բխող իրավունքներն ու պարտականությունները ենթակա չեն իրականացման:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությանը՝ որպես անձին սնանկ ճանաչելու հիմքին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ պարտապանից գումար պահանջելու և հետագայում սնանկ ճանաչելու պարտատիրոջ իրավունքի ծագման հիմքում ընկած է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, և նշված դատական ակտն օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետում կատարման չի ներկայացվում, պարտատերը գրկվում է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն ազատվում է նույն վճռով սահմանված պարտավորությունից: Նշվածի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ «Մասնկույթյան մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով պարտապանին սնանկ ճանաչելու հիմքը բացակայում է (լրևս «Արդյունքանկ» ԲԲԸ-ն ընդդեմ «Արոր-Բագրասր» արտադրական կոոպերատիվի թիվ ՀՔԴ/0024/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշումը):

Միաժամանակ վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ այն դեպքում, երբ սնանկ ճանաչելու վճռի հիմքում դրված է Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորությունների (այդ թվում՝ հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարումների գծով) կատարմանը պարտավորեցնող՝ օրինական ուժի մեջ մտած վճռի, «Մասնկույթյան մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումը չի կարող կիրառվել: Այլ կերպ ասած՝ պահանջատեր հանդիսացող պետական

կամ համայնքային մարմինը կաշկանդված չէ վեցամսյա ժամկետով, և նշված ժամկետում նրա լիազորությունների չկատարումը չի ենթադրում հայց հարուցելու իրավունքի փոխանցում դատախազությանը:

Անփոփոխելի վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով սնանկության դիմումը քննելիս դատարանները պետք է նախևառաջ պարզեն սնանկության դիմումի հիմքում ընկած՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին կետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայությունը, որից հետո միայն բացահայտեն համապատասխան հիմքի (հիմքերի) հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հիմքի համար օրենսդրի կողմից սահմանված իրավակարգավորումները:

Սույն գործով Դատարանը դիմումը բավարարելիս պատճառաբանել է, որ սովյալ դեպքում պարտատիրոջ նկատմամբ պարտապանի պարտավորությունները մարված չեն, վճռի կայացման պահին դրանք գերազանցում են օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, որպիսի պայմաններում դիմումը ենթակա է բավարարման: Միաժամանակ Դատարանը, անդրադառնալով Մկրտիչ Հարությունյանի կողմից ներկայացված առարկությանը, արձանագրել է, որ պատասխանող Մկրտիչ Հարությունյանն առարկել է դիմումի դեմ, սակայն չի ներկայացրել առարկությունը հիմնավորող բավարար ապացույցներ, որպիսի պայմաններում առարկության մեջ նշված փաստերը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է առարկություն ներկայացնող կողմը:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով, Դատարանի վճիռը քննարկելով և գործը նոր քննության ուղարկելով, պատճառաբանել է, որ «սովյալ դեպքում դիմումի հիմքում դրվել է ՀՀ վարչական դատարանի 23.08.2012 թվականի թիվ ՎԴ/7022/055/11 վճիռը, որն օրինական ուժի մեջ է մտել 21.01.2013 թվականին, մինչդեռ Տեսչությունը դիմումը դատարան է ներկայացրել 24.11.2014 թվականին»: Միաժամանակ վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «Դատարանը, մինչև անձին սնանկ ճանաչելու հիմքերին անդրադառնալը, պարտավոր էր պարզել հետևյալ հանգամանքները՝ էրբ է համարվում Տեսչության կողմից պարտապանի պարտավորության հայտնաբերման պահը, արդյո՞ք Տեսչության կողմից սնանկ ճանաչելու մասին դիմումը ներկայացվել է պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում, էթե ոչ, ապա արդյո՞ք նման պայմաններում Տեսչությունը սույն գործով հանդիսանում է պատշաճ դիմող»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործով Տեսչության կողմից Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում դրվել է ՀՀ վարչական դատարանի 23.08.2012 թվականի օրինական ուժի մեջ թիվ ՎԴ/7022/05/11 վճռով հաստատված անվիճելի պարտավորությունը, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով 19.11.2014 թվականի դրությամբ 240.459 ՀՀ դրամի չափով և եկամտային հարկի գծով 19.11.2014 թվականի դրությամբ 92.145 ՀՀ դրամի չափով Մկրտիչ Հարությունյանի պարտավորությունները: Տեսչությունը համապատասխան դիմումը դատարան է ներկայացրել 24.11.2014 թվականին: Մկրտիչ Հարությունյանը Դատարան ներկայացված առարկությամբ նշել է, որ Տեսչության պահանջը ենթակա է մերժման օրենքով սահմանված վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով: Միաժամանակ առարկությունում նշվել է, որ ՀՀ վարչական դատարանի 23.08.2012 թվականի թիվ ՎԴ/7022/055/11 վճիռը ենթակա չէ կատարման, քանի որ անցել է այդ վճռի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով անձին սնանկ ճանաչելու Տեսչության դիմումի հիմքում ընկած է երկու հիմք՝

- 1) ՀՀ վարչական դատարանի 23.08.2012 թվականի օրինական ուժի մեջ թիվ ՎԴ/7022/05/11 վճռով հաստատված անվիճելի պարտավորությունը,
- 2) օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունը՝ սովյալ դեպքում պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով և եկամտային հարկի գծով Մկրտիչ Հարությունյանի պարտավորությունները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերից յուրաքանչյուրի կապակցությամբ սույն գործով ենթակա էին պարզման հետևյալ հանգամանքները՝

*ՀՀ վարչական դատարանի 23.08.2012 թվականի օրինական ուժի մեջ թիվ ՎԴ/7022/05/11 վճռով հաստատված անվիճելի պարտավորության կապակցությամբ պետք է պարզվեն՝*

1) արդյո՞ք վճռով ճանաչված վճարային պարտավորությունը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, եթե այո,

2) արդյո՞ք թույլ է տվել այդ պարտավորության 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցն արդյո՞ք շարունակվում է, եթե այո,

3) արդյո՞ք բաց չի թողնվել տվյալ վճիռն օրենքով սահմանված կարգով կատարման ներկայացնելու ժամկետը:

*Օրենքով սահմանված հարկեր, փոփոխություններ կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորության սնանկության հիմքի կապակցությամբ պետք է պարզվեն՝*

1) արդյո՞ք պարտապանը թույլ է տվել այդ պարտավորությունների նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին արդյո՞ք նշված կետանցը շարունակվում է,

2) ո՞ր պահին է Տեսչությունը հայտնաբերել Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանի պարտավորությունը,

3) արդյո՞ք «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով անձին սնանկ ճանաչելու դիմումը Տեսչության կողմից ներկայացվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված պարտավորության հայտնաբերման պահից վեցամսյա ժամկետի պահպանմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված հանգամանքներն էական նշանակություն ունեն սույն գործի լուծման համար, որոնք, սակայն, Դատարանում գործի ընթացքում չեն պարզվել, ինչով էլ պայմանավորված՝ Վերաքննիչ դատարանը բեկանել է Դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չի իրականացվել լրիվ և բազմակողմանի քննություն՝ սնանկության հիմքերից յուրաքանչյուրի հիմնավորվածությունը և դրանցից յուրաքանչյուրի կապակցությամբ օրենքով սահմանված ընթացակարգի պահպանված լինելը պարզելու ուղղությամբ, հետևաբար առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի հանգամանքները պարզելու համար:

*Վերոնշյալ պարճառաբանություններով մասնակիորեն հիմնավորվում են վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները:*

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի՝ դատական ակտը օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գտել է, որ առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն, որի շրջանակներում, ի թիվս այլ հարցերի, ենթակա է պարզման Տեսչության՝ պատշաճ հացվոր հանդիսանալու հանգամանքը, սակայն Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով սնանկության դիմումի հիմքում դրված են երկու տարբեր իրավական հիմքեր, որոնցից յուրաքանչյուրի համար օրենսդիրը նախատեսել է կարգավորման որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, այն դեպքում, երբ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, սուրբեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, օրենսդիրը ոչ միայն ժամկետային սահմանափակում է նախատեսել սնանկության դիմում ներկայացնելու կապակցությամբ, այլև այդ ժամկետում դիմում չներկայացնելու դեպքում նման լիազորությունը փոխանցված է համարում այլ մարմնի՝ ի դեմս դատախազության: Մինչդեռ այն դեպքում, երբ պահանջը բխում է օրի-

նական ուժի մեջ մտած վճռով ճանաչված պարտավորությունից, օրենսդիրը սնանկության դիմումներ կայացնելու սուբյեկտի հարցում որևէ սահմանափակում չի նախատեսել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից բարձրացված՝ վերը նշված հարցադրումը կիրառելի է միայն սնանկության դիմումի հիմքում դրված՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից բխող պահանջի պարագայում, մինչդեռ նույն սնանկության դիմումի հիմքում դրված մյուս՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված պարտավորությունից բխող պահանջի պարագայում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները սխալ են, քանի որ Տեսչությունն այս մասով պատշաճ սուբյեկտ է: Նման պարագայում Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի որոշումը մասամբ սխալ է պատճառաբանված, գտնում է, որ այն պետք է օրինական ուժի մեջ թողնել սույն որոշման պատճառաբանություններով:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բողոք բերած անձը վճարել է վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումարը, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, գտնում է, որ գործի քննության ներկա փուլում դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.04.2015 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Վճռաբեկ բողոքի կապակցությամբ դատական ծախսի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԴ/4073/02/14**  
**2016 թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/4073/02/14

Նախագահող դատավոր՝

Ս. Միքայելյան

Դատավորներ՝

Ն. Բարսեղյան

Մ. Հարթենյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Փերոյանի ներկայացուցիչ Սոնա Գուլբա-  
յանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2015 թվականի  
որոշման դեմ՝ ըստ հայցի Անի Սարգսյանի ընդդեմ Արմեն Փերոյանի, երրորդ անձ Երևան  
քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝  
երեխայի մշտական բնակության վայրը որոշելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայ-  
ցի Արմեն Փերոյանի ընդդեմ Անի Սարգսյանի՝ երեխայի տեսակցության կարգ սահմանելու  
պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նահապատրույթությունը**

Դիմելով դատարան՝ Անի Սարգսյանը պահանջել է Մարիամ Փերոյանի (ծնված  
02.05.2010 թվականին) բնակության վայրը սահմանել մոր՝ Անի Սարգսյանի բնակության  
վայրը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Արմեն Փերոյանը պահանջել է տրամադրել  
տեսակցություն անչափահաս Մարիամ Փերոյանի հետ հետևյալ ժամանակացույցով՝ գիշե-  
րակացով՝ յուրաքանչյուր ուրբաթ օրը ժամը 18:00-ից մինչև կիրակի օրը ժամը 16:00-ն,  
առանց մոր՝ Անի Սարգսյանի ներկայության:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատա-  
րանի (դատավոր՝ Ն. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 06.08.2015 թվականի վճռով հայ-  
ցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն. վճռվել է՝  
02.05.2010 թվականին ծնված Մարիամ Փերոյանի բնակության վայրը սահմանել մոր՝ Անի  
Սարգսյանի հետ, 02.05.2010 թվականին ծնված Մարիամ Փերոյանի հետ նրա հայր Արմեն  
Փերոյանի՝ երեխայի հետ շփվելու և նրա դաստիարակությանը մասնակցելու համար սահ-

մանել տեսակցության կարգ՝ յուրաքանչյուր շաբաթվա երեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 18:00–ից մինչև 21:00–ն, և կիրակի օրը՝ ժամը 10:00–ից մինչև 20:00–ն՝ սկզբնական շրջանում երեխայի մոր ներկայությամբ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.12.2015 թվականի որոշմամբ Արմեն Փերոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 06.08.2015 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել՝ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 02.05.2010 թվականին ծնված Մարիամ Փերոյանի հետ նրա հայր Արմեն Փերոյանի՝ երեխայի հետ շփվելու և դաստիարակությանը մասնակցելու համար սահմանվել է տեսակցության կարգ՝ յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ ու շաբաթ օրերին՝ ժամը 18:00–21:00–ն, և կիրակի օրը՝ ժամը 10:00–20:00–ն՝ սկզբնական շրջանում երեխայի մոր ներկայությամբ: Վճիռը՝ մնացած մասով, թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Փերոյանի ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Անի Սարգսյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (ընդունվել է 20.11.1989 թվականին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 22.07.1993 թվականից) 3–րդ հոդվածի 1–ին կետը, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41–րդ հոդվածի 2–րդ մասը, 42–րդ հոդվածի 2–րդ մասը, 54–րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48–րդ հոդվածի 1–ին և 6–րդ կետերը, 53–րդ հոդվածը, 132–րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, երեխայի մոր ներկայությամբ տեսակցության կարգ սահմանելով, խախտել է ընտանեկան օրենսդրության պահանջները, քանի որ Արմեն Փերոյանը, առանց երեխայի մոր ներկայության տեսակցելով իր երեխայի հետ, կարող է լիարժեք զբաղվել նրա խնամքով և դաստիարակությամբ: Ընդ որում, Արմեն Փերոյանը, բնակվելով ՌԴ–ում, հաճախակի է այցելում Հայաստանի Հանրապետություն և մշտական հաճախումների ընթացքում միշտ հանդիպում է դստերը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ թեև Արմեն Փերոյանը բնակվում է ՌԴ–ում, նա ունի բավարար միջոցներ և ցանկություն երեխայի խնամքով զբաղվելու և նրան տեսակցելու համար: Բացի այդ, երեխան բավական մեծ է և չունի մոր մշտական խնամքի կարիքը, առողջապես նորմալ վիճակում է, ուստի չկա անհրաժեշտություն տեսակցություն նշանակելու մոր ներկայությամբ: Ավելին, գիշերակացով երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելը հնարավորություն կտա Արմեն Փերոյանին՝ արդյունավետ խնամելու և դաստիարակելու իր երեխային:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.12.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «Երեխայի հետ տեսակցության կարգ սահմանել հետևյալ կերպ. տրամադրել տեսակցություն անչափահաս Մարիամ Փերոյանի հետ՝ գիշերակացով յուրաքանչյուր ուրբաթ օրը ժամը 18:00–ից մինչև կիրակի օրը ժամը 16:00–ն, առանց մոր՝ Անի Սարգսյանի ներկայության»:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, իսկ Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքները և գործում առկա ապացույցները գնահատելով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, կայացրել է հիմնավոր դատական ակտ՝ տեսակցության կարգ նշանակելով հանգստյան օրերին: Անչափահաս Մարիամ Փերոյանը վատառողջ է և գտնվում է մշտական



հսկողության ներքո, ուստի առանց մոր ներկայության հնարավոր չէ երեխայի հետ տեսակցություն սահմանել: Բացի այդ, անհնար է նաև երեխայի հետ տեսակցություն սահմանելը գիշերակացով, քանի որ երեխան հազվադեպ է հոր հետ շփման մեջ գտնվել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ռուսաստանի Դաշնության Դաշնային միգրացիոն ծառայության վարչության-634 կողմից 20.06.2011 թվականին տրված թիվ 2956449 անձնագրի՝ ռուսերենից թարգմանության համաձայն՝ Մարիամ Արմենի Փերոյանը ծնվել է 02.05.2010 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 16**):

2) Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 11.04.2015 թվականի թիվ 27/01-47/1032 «Ակտ-եզրակացության» համաձայն՝ Անի Սարգսյանը և Արմեն Փերոյանը համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ունեցել են մեկ երեխա՝ Մարիամ Փերոյանը՝ ծնված 02.05.2010 թվականին: Անի Սարգսյանը, 28.07.2011 թվականին վերցնելով երեխային, հեռացել է Արմեն Փերոյանից: Ըստ Անի Սարգսյանի հայտարարության՝ Արմեն Փերոյանն իր անչափահաս երեխայի հետ վերջին անգամ հանդիպել է 2013 թվականի աշնանը: Հանձնաժողովն առաջարկել է Արմեն Փերոյանի տեսակցությունն իր անչափահաս դստեր հետ սահմանել յուրաքանչյուր շաբաթվա երեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 18.00-21.00-ն, և կիրակի օրը՝ ժամը 10.00-20.00-ն՝ սկզբնական շրջանում երեխայի մոր մասնակցությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 88-89**):

### **4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ երեխայից առանձին ապրող ծնողի՝ երեխայի հետ շփվելու և նրա դաստիարակությանը մասնակցելու վերաբերյալ գործի քննության ընթացքում երեխայի լավագույն շահերի բացահայտման և գնահատման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 132-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է ամերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1. իրավաչափ է արդյոք երեխայից առանձին ապրող հոր՝ երեխայի հետ մոր ներկայությամբ և առանց գիշերակացի տեսակցության կարգի սահմանում այն դեպքում, երբ գործով չեն բացահայտվել երեխայի լավագույն շահերը, և չի պարզվել դրանց հարաբերակցությունը տեսակցության սահմանվող կարգի հետ,

2. իրավաչափ է արդյոք երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու վերաբերյալ դատական ակտի եզրափակիչ մասում «սկզբնական շրջանում մոր ներկայությամբ» արտահայտության օգտագործումն այն պարագայում, երբ «սկզբնական շրջան» արտահայտության հստակ ժամանակային տևողությունը բացահայտված չէ:

1. 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր (...) ընտանեկան կյանքի (...) նկատմամբ հարգանքի իրավունք:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների (...) իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները հարգում են ծնողների (...) պատասխանատվությունը, իրավունքները և պարտականությունները՝ երեխայի զարգացող ունակություններին համապատասխան ուղղություն տալու երեխային՝ նրա կողմից նույն կոնվենցիայով ճանաչված իրավունքներն իրականացնելիս:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երեխան (...) ծննդյան պահից ձեռք է բերում, (...) որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մասնակից պետությունները հարգում են ծնողներից մեկից կամ երկուսից բաժանված երեխայի իրավունքը՝ կանոնավոր կերպով անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ երեխան, որի ծնողները բնակվում են տարբեր պետություններում, իրավունք ունի կանոնավոր կերպով, բացառությամբ հատուկ հանգամանքների, անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանել երկու ծնողների հետ (...):

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մասնակից պետությունները գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Ծնողները (...) երեխայի դաստիարա-

կության ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվություն: Երեխայի լավագույն շահերը նրանց հիմնական հոգածության առարկան են:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին: Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու (...) իրավունք (...):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան ունի իր ծնողների (...) հետ շփվելու իրավունք: Ծնողների ամուսնության դադարեցումը, այն անվավեր ճանաչվելը կամ նրանց առանձին ապրելը չեն ազդում երեխայի իրավունքների վրա: Ծնողների առանձին (ընդ որում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում երեխան նրանցից յուրաքանչյուրի հետ շփվելու իրավունք ունի:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակել իրենց երեխաներին (...):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ: Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան (...):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխայից առանձին ապրող ծնողը իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփումը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին: Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը երեխաների դաստիարակության հետ կապված վեճերը քննելիս գործին պետք է մասնակից դարձնի խնամակալության և հոգաբարձության մարմնին, անկախ նրանից, թե ով է ներկայացրել երեխայի պաշտպանության մասին հայց: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը, և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ձեռք է բերում ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսաապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, իսկ ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Երեխաների և ծնողների նշված իրավունքների լիարժեք իրականացման և ծնողների նշված պարտականությունների պատ-

շաճ կատարման հրամայականից ելնելով՝ ծնողների համար երաշխավորված է նաև այլ անձանց հանդեպ իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունքը: Նշվածի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմյան երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ (*տե՛ս նաև Մարգարիտ Հովհաննիսյանն ընդդեմ Արթուր Թորոսյանի թիվ ԵԱԴԴ/1513/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*):

Վկայակոչված հողվածներով նախատեսված իրավանքների բովանդակությունից հետևում է, որ ծնողները ոչ միայն իրավունք ունեն, այլև պարտավոր են դաստիարակել իրենց երեխային, ինչպես նաև պատասխանատվություն են կրում իրենց երեխայի դաստիարակության և զարգացման համար: Ընդ որում, երեխաների դաստիարակության հարցում ծնողների իրավունքներն ու պարտականությունները հավասար են: Երեխայից առանձին ապրող ծնողը ևս իրավունք ունի շփվելու իր երեխայի հետ և մասնակցելու նրա դաստիարակությանը, իսկ այն ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը չի վնասում երեխայի ֆիզիկական և ու հոգեկան վիճակին, նրա բարոյական զարգացմանը: Ավելին, երեխան, իր հերթին, ունի իր ծնողների հետ շփվելու իրավունք, իսկ ծնողներից առանձին (այդ թվում՝ տարբեր պետություններում) ապրելու հանգամանքը չի կարող խոչընդոտել այդ իրավունքի պատշաճ իրականացումը:

Երեխայի դաստիարակությանը մասնակցելու և նրա հետ շփվելու ծնողի իրավունքը բխում է նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված՝ ընտանեկան կյանքի նկատմամբ յուրաքանչյուրի հարգանքի իրավունքի էությունից, որի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից երեխայի և ծնողների՝ միմյանց հետ շփվելու իրավունքն ընտանեկան կյանքի հիմնարար տարրերից մեկն է (*տե՛ս Eriksson v. Sweden գործով Եվրոպական դատարանի 22.06.1989 թվականի վճիռը, 58-րդ կետ*): Ավելին, ըստ Եվրոպական դատարանի՝ բնականոն ընտանեկան հարաբերությունները չեն դադարում ծնողներից մեկի առանձնանալու կամ նրանց ամուսնալուծվելու դեպքում, անգամ եթե դրա արդյունքում երեխան դադարում է բնակվել ծնողներից մեկի հետ (*տե՛ս Mustafa and Armağan Akin v. Turkey գործով Եվրոպական դատարանի 06.04.2010 թվականի վճիռը, 19-րդ կետ*):

Բացի այդ, Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պաշտպանության ներքո է գտնվում նաև ծնողի՝ իր երեխայի հետ վերամիավորվելու իրավունքը, և անդամ պետությունները պոզիտիվ պարտականություն են կրում օժանդակելու այդ վերամիավորմանը: Ընդ որում, պետության վերոհիշյալ պոզիտիվ պարտականությունը տարածվում է նաև երեխայի հետ շփվելու և բնակության վայրի վերաբերյալ ծնողների և (կամ) երեխայի ընտանիքի այլ անդամների միջև ծագած վեճերի վրա (*տե՛ս Gluhaković v. Croatia գործով Եվրոպական դատարանի 12.04.2011 թվականի վճիռը, 56-րդ կետ*):

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ծնողական իրավունքները, այդ թվում նաև՝ երեխայից առանձին ապրող ծնողի կողմից իր երեխայի հետ անմիջականորեն շփվելու իրավունքը, չեն կարող իրականացվել երեխայի շահերին հակառակ. դրանց իրականացումը չպետք է վնասի երեխայի շահերին: Փաստորեն, երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման վերաբերյալ վեճեր քննելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է հաշվի առնի երեխայի լավագույն շահերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե դատարանի կողմից քննվող վեճը լուծելիս կիրառվող միջոցն ինչպիսի ազդեցություն կունենա երեխայի շահերի վրա, մասնավորապես՝ նրա հոգեկան, հոգևոր ու բարոյական զարգացման և դաստիարակության վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ ևս արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովման:

նը (յրեն Անի Մարտիրոսյանն ընդդեմ Գորգեն Խալաթյանի թիվ ԵԱԲԴ/0474/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշումը):

Անդրադառնալով «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ Եվրոպական դատարանը ևս արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում նաև՝ դատարանների կողմից երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից (յրեն *C. v. Finland* գործով Եվրոպական դատարանի 09.05.2006 թվականի վճիռը, 52–րդ կետ, գանձաբաժնի թիվ 18249/02):

Եվրոպական դատարանը մեկ այլ վճռով իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ Կոնվենցիայի 8–րդ հոդվածն արգելում է ծնողի շահերից ելնելով թույլատրել նրան կատարել այնպիսի գործողություններ, որոնք կվսասեն երեխայի առողջությանն ու զարգացմանը (յրեն *Johansen v. Norway* գործով Եվրոպական դատարանի 07.08.1996 թվականի վճիռը, 78–րդ կետ):

Վերոնշյալ իրավական վերլուծություններից բխում է, որ երեխայի՝ ծնողներից մեկից կամ երկուսից առանձին բնակվելը, ծնողների ամուսնալուծված լինելը կամ արտասահմանում բնակվելը չպետք է խոչընդոտ հանդիսանան ծնողների հետ կատարվող կերպով անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու երեխայի իրավունքի, ինչպես նաև երեխայից առանձին ապրող ծնողի՝ իր երեխայի հետ անմիջականորեն շփվելու իրավունքի իրականացման համար, եթե դա չի հակասում երեխայի լավագույն շահերին: Ավելին, ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխայի իրավունքներին ու լավագույն շահերին հակառակ, և երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման վերաբերյալ վեճեր քննելու յուրաքանչյուր դեպքում դատարանի խնդիրն է բացահայտել երեխայի լավագույն շահերը՝ հաստատելով ողջամիտ հավասարակշռություն ծնողի իրավունքների և երեխայի լավագույն շահերի միջև:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ երեխայից առանձին բնակվող ծնողի ծնողական իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ ծնողին առկա ուշադրության արժանի հանգամանքները, եթե դրանք հաշվի առնելը չի հակասում երեխայի լավագույն շահերին:

Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 8–րդ հոդվածի խախտում է արձանագրել այն դեպքում, երբ տեսակցության կարգ սահմանելիս հաշվի չի առնվել ամուսնալուծված և երեխայից առանձին բնակվող հոր ուշադրության արժանի այնպիսի անձնական հանգամանքը, ինչպիսին է վերջինիս աշխատանքային գրաֆիկը, որը խոչընդոտել է ըստ սահմանված տեսակցության կարգի երեխայի հետ շփվելուն և հորը զրկել է իր երեխային արդյունավետ տեսակցելու հնարավորությունից (յրեն *Gluhaković v. Croatia* գործով Եվրոպական դատարանի 12.04.2011 թվականի վճիռը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ Հայաստանի Հանրապետության ներպետական ընտանեկան օրենսդրությամբ, թե՛ միջազգային իրավական ակտերում «երեխայի լավագույն շահ» հասկացության բովանդակությունը հստակեցված չէ. նշված հասկացության բովանդակությունը ենթակա է բացահայտման իրավակիրառ (հատկապես՝ դատական) պրակտիկայի շրջանակներում:

Այսպես՝ Եվրոպական դատարանն անդրադարձել է օրենսդրական ձևակերպումներին ուղղված իրավական որոշակիության սկզբունքից բխող պահանջներին և դիրքորոշում արտահայտել առ այն, որ օրենքներում քիչ թե շատ անորոշ տերմինների առկայությունն անխուսափելի է, քանի որ դրա միջոցով ապահովվում է իրավունքի ճկունությունն ու ունակությունը՝ հետևելու փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար որոշակիության պահանջը բացարձակ չէ, և օրենքներում առկա որոշ եզրույթների մեկնաբանումն ու կիրառումը դատական պրակտիկայի խնդիրն է (յրեն *The Sunday Times v. the United Kingdom* գործով Եվրոպական դատարանի 26.04.1979 թվականի վճիռը, 49–րդ կետ):

ՀՀ սահմանադրական դատարանը 05.10.2010 թվականի թիվ ՄԴՌ-919 որոշմամբ գտել է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ

լինել, և դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև՝ դատական պրակտիկայում: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք է: Ընդ որում, նշված հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Բացի այդ, համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ երեխայի լավագույն շահը չի կարող որոշվել ընդհանուր բնույթի իրավական դատողությունների միջոցով և կախված է յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից՝ հիմք ընդունելով երեխայի շահերի առաջնայնությունը (*յրեն Schneider v. Germany գործով Եվրոպական դատարանի 15.09.2011 թվականի վճիռը, 100-րդ կետ*):

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «երեխայի շահ» կամ «երեխայի լավագույն շահեր» հասկացություններն իրավակիրառ պրակտիկայում պետք է ընկալվեն ու կիրառվեն հետևյալ երեք իմաստներով.

1) որպես երեխայի իրավունք. երեխան ունի իր լավագույն շահերի բացահայտման և դրանց առաջնային նշանակության տրամադրման իրավունք այն դեպքում, երբ իրավասու մարմնի կողմից կայացվող որոշումն առնչվում է երեխայի և այլ անձանց իրավունքներին ու շահերին, և առկա է դրանց հավասարակշռման անհրաժեշտություն,

2) որպես իրավական-մեկնաբանողական սկզբունք. երեխայի իրավական վիճակին առնչվող տարբեր մեկնաբանությունների և ընկալումների տեղիք տվող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի՝ ելնելով երեխայի լավագույն շահերի առավել ապահովման նկատառումից,

3) որպես ընթացակարգային կարգավորման կանոն. երեխային առնչվող որոշումների ընդունման ընթացքում պետք է բացահայտվի նաև երեխայի իրավունքների և շահերի վրա այդ որոշման հնարավոր ազդեցությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով երեխայից առանձին ապրող ծնողի՝ իր երեխայի հետ շփվելու իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ երեխայի հետ տեսակցելու իրավունքի իրականացման հարցին, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ երեխայի մոր ներկայությամբ տեսակցության կարգ սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել, *inter alia*, երեխայի տարիքը, մշտական խնամքի տակ գտնվելու անհրաժեշտությունը, առողջական այնպիսի խնդիրների առկայությունը, որոնք խոչընդոտում են առանց մոր ներկայության երեխայի հետ հոր շփմանը (*յրեն Էդգար Ամրոյանն ընդդեմ Քրիստինա Գաբրունիայի թիվ ԵՇԴ/0990/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.08.2009 թվականի որոշումը*):

Փաստորեն, մոր ներկայությամբ երեխայի հետ շփվելու և նրա դաստիարակությանը մասնակցելու համար տեսակցության կարգ սահմանելիս երեխայի լավագույն շահերի բացահայտման համար դատարանը պետք է հիմք ընդունի, *inter alia*, հետևյալ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը.

- երեխայի տարիքը,
- երեխայի՝ իր հետ բնակվող ծնողի մշտական խնամքի տակ գտնվելու անհրաժեշտությունը,
- առողջական այնպիսի խնդիրների առկայությունը, որոնք խոչընդոտում են առանց երեխայի հետ բնակվող ծնողի ներկայության մյուսի ծնողի և երեխայի շփմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ դատարանների կողմից երեխայի լավագույն շահերի բացահայտման գործում կարևոր նշանակություն ունի երեխայի դաստիարակության վերաբերյալ գործերով խնամակալության և հոգաբարձության մարմնին դատավարությանը մասնակից դարձնելը: Նշված մարմնի վրա ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով դրված է երեխայի և այն անձի կյանքի հետազոտություն անցկացնելու պարտականություն, ով հավակնում է նրա դաստիարակությանը: Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է նաև հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը ներկայացնել դատարան: Թեև խնա-

մակալության և հոգաբարձության մարմնի եզրակացությունը դատարանի համար կրում է մասնագիտական–խորհրդատվական բնույթ, և դատարանն այն պարտավոր է գնահատել գործում առկա այլ ապացույցների հետ համակցության մեջ, այնուամենայնիվ, նմանատիպ գործերով վերոնշյալ եզրակացության առկայությունը պարտադիր է, քանի որ դրանում արտահայտված փաստարկները գործում առկա մյուս ապացույցների հետ համադրության արդյունքում դատարանին հնարավորություն են ընձեռում կոնկրետ գործով պարզելու երեխայի լավագույն շահը: Այնուամենայնիվ, դատարանը չպետք է սահմանափակվի միայն խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացության մեջ նշված դրույթները կրկնելով, այլ պետք է հավաստիանա դրանց հիմնավորվածության մեջ և այն համեմատի գործով ձեռք բերված մյուս ապացույցների հետ, որից հետո միայն, հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը, որոշի գործի ելքը:

Վերոհիշյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ երեխայի դաստիարակության հետ կապված յուրաքանչյուր գործ քննելիս դատարանը պետք է բացահայտի երեխայի լավագույն շահերը, մասնավորապես՝ դատարանը, գործին մասնակից դարձնելով խնամակալության և հոգաբարձության մարմնին, պետք է հավաստիանա երեխայի դաստիարակությանը հավակնող անձի կյանքի հետազոտության արդյունքում կայացված եզրակացության հիմնավորվածության մեջ, ապա այն համեմատի գործով ձեռք բերված մյուս ապացույցների հետ, որից հետո միայն, հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը, որոշի, թե ծնողական իրավունքների իրականացման ինչպիսի միջոց պետք է սահմանվի: Այլ կերպ ասած՝ դատարանը չի կարող ընդհանուր իրավական դատողությունների միջոցով բացահայտել երեխայի լավագույն շահերն ու սահմանվող միջոցի ազդեցությունը դրանց վրա, այլ պետք է յուրաքանչյուր գործով հավասարակշռի ծնողի իրավունքներն ու անձնական հանգամանքները և երեխայի լավագույն շահերը, մասնավորապես՝ պարզի, թե արդյոք ծնողական իրավունքի իրականացման սահմանվող եղանակը բացասական ազդեցություն կունենա երեխայի հոգեկան, հոգևոր ու բարոյական զարգացման և դաստիարակության վրա, թե ոչ:

*2. Անդրադասունալով երկրորդ հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ վեճն ըստ էության լուծելու դեպքում դատարանը կայացնում է վճիռ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132–րդ հոդվածի 5–րդ կետի 1–ին ենթակետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի յուրաքանչյուր պահանջը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու մասին կամ գործի վարույթը կարճելու մասին դատարանի եզրակացությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում (...): Նույն հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով կայացված որոշումը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220–րդ հոդվածի 6–րդ կետի 1–ին և 2–րդ ենթակետերի համաձայն՝ որոշման եզրափակիչ մասը պետք է պարունակի վերաքննիչ բողոքն ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու կամ վերաքննիչ վարույթը կարճելու մասին դատարանի եզրակացությունը, վերաքննիչ բողոքը բավարարելու դեպքում՝ համապատասխան դատավարական հետևանքը:

Եվրոպական դատարանն իր նախադեպային որոշմամբ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ներպետական իրավունքի նորմերը պետք է լինեն բավարար չափով հասանե-

լի, հստակ և կանխատեսելի իրենց կիրառման մեջ (*լրևն Broniowski v. Poland գործով Եվրոպական դատարանի 22.06.2004 թվականի վճիռը, 147-րդ կետը*): Բացի այդ, համաձայն Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների՝ օրենսդրական նորմերը պետք է կիրառվեն ողջամիտ հստակությամբ և կապակցվածությամբ, որպեսզի հնարավոր լինի որքան հնարավոր է խուսափել իրավական անորոշություններից և երկիմաստություններից: Եվրոպական դատարանն ընդգծել է նաև պետությունների բարձրագույն դատական ատյանների դերն իրավական անորոշությունը հնարավորինս հաղթահարելու հարցում (*լրևն Beian v. Romania գործով Եվրոպական դատարանի 06.12.2007 թվականի վճիռը, 33-րդ և 39-րդ կետեր*):

Մինևույն ժամանակ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն թե՛ օրենսդրական, թե՛ վարչական և թե՛ դատական գործունեության արդյունք հանդիսացող իրավական անորոշություններից խուսափելու համար: Փաստորեն, իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է ոչ միայն օրենսդրական ձևակերպումների, այլև դատարանների կայացրած որոշումների հստակություն և կանխատեսելիություն: Ընդ որում, դատական ակտերը պետք է ուղղված լինեն օրենսդրական անհստակությունների վերացմանը և չպետք է պարունակեն անհասկանալի և անորոշ եզրահանգումներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով դատական ակտի որոշակիության խնդրին, արտահայտել է դիրքորոշում առ այն, որ դատական ակտը պետք է լինի որոշակի. այն պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, դրա բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որ դատավարության մասնակիցների համար ակնառու և ակնհայտ լինի, թե իրենց ինչ իրավունք է տրամադրվում, իրենց որ իրավունքն է սահմանափակվում, իրենց ինչ իրավունքից են զրկվում, կամ իրենց վրա ինչ պարտականություն է դրվում (*լրևն Դավիթ Ասատրյանն ընդդեմ Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի թիվ ԵՄԳ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Անփոփոխելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերին ներկայացվող իրավական որոշակիության պահանջը, ի թիվս այլ հանգամանքների, ենթադրում է, որ տվյալ դատական ակտը պետք է գործով ներկայացված բոլոր պահանջներին տա այնպիսի պատասխան, որը բացառում է կողմերի հարաբերություններում անորոշությունը, ինչպես նաև դատական ակտը կողմերի հայեցողությամբ տարբեր եղանակներով կատարելու հնարավորությունը:

#### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով Դատարանը բավարարել է Անի Սարգսյանի հայցը և Մարիամ Փերոյանի բնակության վայր է սահմանել մոր՝ Անի Սարգսյանի բնակության վայրը: Միաժամանակ Դատարանը մասնակիորեն բավարարել է նաև Արմեն Փերոյանի հակընդդեմ հայցը և սահմանել է վերջինիս կողմից իր երեխայի հետ շփվելու և նրա դաստիարակությանը մասնակցելու համար տեսակցության կարգ՝ «յուրաքանչյուր շաբաթվա երեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 18:00–ից մինչև 21:00–ն, և կիրակի օրը՝ ժամը 10:00–ից մինչև 20:00–ն սկզբնական շրջանում երեխայի մոր ներկայությամբ»:

Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով Արմեն Փերոյանի վերաքննիչ բողոքը և մասնակիորեն՝ երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու մասով, բեկանելով և փոփոխելով Դատարանի վճիռը, սահմանել է Արմեն Փերոյանի կողմից իր երեխայի հետ շփվելու և նրա դաստիարակությանը մասնակցելու համար տեսակցության նոր կարգ՝ «յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ և շաբաթ օրերին՝ ժամը 18:00–ից մինչև 21:00–ն, և կիրակի օրը՝ ժամը 10:00–ից մինչև 20:00–ն սկզբնական շրջանում երեխայի մոր ներկայությամբ»: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ առանց գիշերակացի և



«սկզբնական շրջանում» մոր ներկայությամբ տեսակցության վերոգրյալ կարգը բխում է երեխայի լավագույն շահերից:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով ստորադաս դատարանները սահմանել են Արմեն Փերոյանի և վերջինիս երեխայի՝ Մարիամ Փերոյանի տեսակցության կարգ՝ առանց գիշերակացի և «սկզբնական շրջանում» երեխայի մոր ներկայությամբ: Մինչդեռ ստորադաս դատարանները չեն պատճառաբանել, թե տեսակցության նման կարգ սահմանելը որքանով է համապատասխանում երեխայի լավագույն շահերին: Մասնավորապես՝ սույն գործով ստորադաս դատարանները չեն պարզել, թե Արմեն Փերոյանի կողմից իր երեխային առանց գիշերակացի կամ «սկզբնական շրջանում» երեխայի մոր ներկայությամբ տեսակցելն ինչպես է հարաբերակցվում երեխայի՝ Մարիամ Փերոյանի լավագույն շահերի բացահայտման և իրացման իրավական անհրաժեշտության հետ: Մինչդեռ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից բխում է, որ ինչպես երեխան, այնպես էլ նրանից առանձին ապրող ծնողն ունեն միմյանց հետ արդյունավետ շփվելու իրավունք, և ծնողի այդ իրավունքը կարող է սահմանափակվել այն դեպքում, երբ դրա իրականացումը հակասում է երեխայի լավագույն շահերին: Երեխայի լավագույն շահը չի կարող որոշվել ընդհանուր բնույթի իրավական եզրահանգումների արդյունքում և պետք է հիմնվի կոնկրետ գործի հանգամանքների վրա՝ ծնողական իրավունքների և երեխայի շահերի միջև արդարացի հավասարակշռությունն ապահովելու նպատակով:

Սույն գործով Դատարանը տեսակցության կարգ սահմանելիս հիմք է ընդունել Հանձնաժողովի 11.04.2015 թվականի եզրակացությունը և իր վճռի եզրափակիչ մասում ամբողջությամբ կրկնել է այդ եզրակացությամբ առաջարկվող տեսակցության կարգը: Մինչդեռ քննարկվող եզրակացության մեջ ևս չի հիմնավորվել տեսակցության առաջարկվող կարգի նպատակահարմարությունը կամ դրա համապատասխանությունը երեխայի լավագույն շահերին, ինչն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև երեխայի դաստիարակության հետ կապված գործերով խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացության ամկայությունը պարտադիր է, այնուամենայնիվ, դատարանը չպետք է սահմանափակվի միայն խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացության մեջ նշված դրույթները կրկնելով, այլ պետք է հավաստիանա դրանց հիմնավորվածության մեջ և այն համեմատի գործով ձեռք բերված մյուս ապացույցների հետ, որից հետո միայն, հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը, որոշի ներկայացված հայցապահանջների մերժման կամ բավարարման հարցը:

Տվյալ դեպքում, հիմնվելով միայն Հանձնաժողովի եզրակացության վրա, Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով է հաստատված համարել այն հանգամանքը, որ առանց մոր ներկայության կամ գիշերակացով տեսակցության կարգ սահմանելը չի բխում երեխայի լավագույն շահերից: Վերաքննիչ դատարանը չի պարզել սույն գործով երեխայի լավագույն շահերի գնահատման չափանիշ հանդիսացող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են երեխայի մոտ առանց մոր ներկայության հոր հետ շփվելուն խոչընդոտող առողջական խնդիրների առկայությունը, հոր հետ կանոնավոր կերպով անձնական հարաբերություններ և կապեր պահպանած լինելու հանգամանքը, երեխայի տարիքը, հոր՝ երեխայի դաստիարակությանը մասնակցելու համար բավարար միջոցներ և ցանկություն ունենալու հանգամանքը, ինչպես նաև ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա չեն բավարար ապացույցներ, որոնք կարող են հաստատել Արմեն Փերոյանի կողմից իր երեխային առանց գիշերակացի կամ «սկզբնական շրջանում» երեխայի մոր ներկայությամբ տեսակցելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը՝ ելնելով երեխայի լավագույն շահերից:

Ինչ վերաբերում է թե՛ Դատարանի վճռում և թե՛ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ տեղ գտած «սկզբնական շրջանում մոր ներկայությամբ» արտահայտությանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտի եզրափակիչ մասում նման անորոշ վերապահում կատարելը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ դրա բովանդակությունից դատավարության մասնակիցների համար չի կարող պարզ լինել մոր ներկայությամբ սահմանված տեսակցության կարգի հստակ ժամանակահատվածը: Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերում տեղ գտած վերոգրյալ արտահայտությունը կողմերի հարաբերություններում ստեղծում է անորոշություն, ինչպես նաև դատական ակտը կողմերի հայեցողությամբ տարբեր եղանակներով կատարելու հնարավորություն: Հետևաբար վերոգրյալ պատճառաբանությունների համատեքստում Դատարանի վճիռը և Վերաքննիչ դատարանի որոշումը չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները չեն բացահայտել Մարիամ Փերոյանի լավագույն շահերն ու վերջինիս և իրենից առանձին ապրող հոր՝ առանց մոր ներկայության կամ գիշերակացով տեսակցության կարգի հնարավոր ազդեցությունը երեխայի լավագույն շահերի վրա: Բացի այդ, սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

*Նշված պարճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործը նոր քննության է ուղարկվում միայն երեխայի տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին Արմեն Փերոյանի հակընդդեմ հայցի մասով, քանի որ սույն գործով Դատարանի վճիռը՝ վերաքննության կարգով, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ վճռաբեկության կարգով, բողոքարկվել են միայն այդ մասով:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը, այդ թվում նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.04.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը, ենթակա են լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

3. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2015 թվականի որոշումը և գործը՝ ըստ հակընդդեմ հայցի Արմեն Փերոյանի ընդդեմ Անի Սարգսյանի՝ երեխայի տեսակցության կարգ սահմանելու պահանջի մատով, ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

4. Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.04.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5370/02/14  
դատարանի որոշում 2016 թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5370/02/14  
Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան  
Դատավորներ՝ Ա. Խառատյան  
Գ. Կարախանյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին դռնբաց դատական նիստում, քննելով «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.03.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Բանկի ընդդեմ Ֆինանսական համակարգի հաշտարար (այսուհետ՝ Հաշտարար) Փիրուզ Սարգսյանի, երրորդ անձ Վարդան Ամիրյանի՝ 23.09.2014 թվականի թիվ 15-2009/14 որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին, և ըստ հայցի Վարդան Ամիրյանի ընդդեմ Բանկի, երրորդ անձ Հաշտարար Փիրուզ Սարգսյանի՝ պատճառված վնասի փոխհատուցման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է չեղյալ ճանաչել Հաշտարար Փիրուզ Սարգսյանի 23.09.2014 թվականի թիվ 15-2009/14 որոշումը (քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5370/02/14):

Դիմելով դատարան՝ Վարդան Ամիրյանը պահանջել է պարտավորեցնել Բանկին իր հաշվին վերականգնել 3.889.000 ՀՀ դրամը և չպահանջել հաշվարկված տոկոսները կամ չպահանջել 3.889.000 ՀՀ դրամը և հաշվարկված տոկոսները (քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0306/02/15):

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 26.02.2015 թվականի որոշմամբ թիվ ԵԿԴ/0306/02/15 և թիվ ԵԿԴ/5370/02/14 քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում, և գործի քննությունը շարունակվել է թիվ ԵԿԴ/5370/02/14 համարի ներքո:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Բսանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 16.11.2015 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթն ըստ Վարդան Ամիրյանի հայցի ընդդեմ Բանկի, երրորդ անձ Հաշտարար Փիրուզ Սարգսյանի՝ պատճառված վնասի փոխհատուցման պահանջի մասով, կարճվել է՝ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ Հաշտարարի որոշման առկայության հիմքով, իսկ Բանկի հայցն ընդդեմ Հաշտարար Փիրուզ Սարգսյանի, երրորդ անձ Վարդան Ամիրյանի՝ Հաշտարարի 23.09.2014 թվականի թիվ 15-2009/14 որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.03.2016 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.11.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հաշտարար Փիրուզ Սարգսյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, խախտել է 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հեղուկ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի 09.10.2012 թվականի թիվ ՍԴՈ-1051 որոշմամբ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածին տված մեկնաբանությանը: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 09.10.2012 թվականի թիվ ՍԴՈ-1051 որոշումը, պատճառաբանել է, որ ՀՀ սահմանադրական դատարանն այդ որոշմամբ արդեն իսկ դիտել է Հաշտարարի ինստիտուտը որպես (2005 թվականի խմբագրությամբ) ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացումն ապահովող այլընտրանքային իրավական հնարավորություն: Մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանը նշված որոշմամբ նշել է, որ այն դեպքում, երբ կազմակերպությունը Հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ իր ազատ կամահայտնությամբ, հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու սահմանափակ հնարավորությունն նախատեսելն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի հարուցում: Իսկ այն դեպքում, երբ առկա չէ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարանում վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է ՀՀ Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 18-րդ և 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացումն ապահովող իրացման արգելափակմանը: Այսինքն՝ Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու համաձայնագիր չունենալու պայմաններում ՀՀ սահմանադրական դատարանը ևս համարել է, որ ֆինանսական կազմակերպության իրավունքի սահմանափակումն ըստ էության հանգեցնում է ՀՀ Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 18-րդ և 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը:

Բացի այդ, եթե ստորադաս դատարանները Բանկի հայցը քննեն ըստ էության, օբյեկտիվորեն հետազոտեն ու գնահատեն սույն գործի փաստերը, ապա կհաստատեն, որ Բանկի կողմից հաճախորդին տրված գաղտնի ծածկագրի կիրառմամբ վերջինիս հաշվից ելքագրվել են գումարներ, ինչի համար Բանկը չպետք է կրեր որևէ պատասխանատվություն, մինչդեռ անհիմն ձևով, առանց համապատասխան փաստական ու իրավական հիմ-

նավորման, Հաշտարարի որոշմամբ Բանկին առաջադրվել է հաճախորդի հաշվից արդեն ելքագրված գումարները կրկնակի վճարելու պարտականություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.03.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

**2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Տվյալ դեպքում Դատարանը Բանկի հայցը քննել է հայցի իրավական և փաստական հիմքերի շրջանակներում, իսկ Վերաքննիչ դատարանն էլ Բանկի վերաքննիչ բողոքը քննել է վերաքննիչ բողոքի սահմաններում: Հակառակ դեպքում, եթե Դատարանն անդրադառնար Հաշտարարի որոշման ըստ էության, ապա սեփական նախաձեռնությամբ կընդլայներ հայցի հիմքը, թույլ կտար տնօրինչականության և մրցակցության սկզբունքների խախտում, իսկ Վերաքննիչ դատարանն էլ թույլ կտար վերաքննության սահմանների խախտում:

Բացի այդ, ստորադաս դատարաններն իրավացիորեն նշել են, որ Բանկը մինչև հաճախորդի կողմից Հաշտարարի որոշման անվերապահորեն գրավոր համաձայնելը և դրա արդյունքում այդ որոշման պարտադիր դառնալը, ունեցել է դատարանի դիմելու և գործի ըստ էության քննություն պահանջելու իրավունք, մինչդեռ Բանկը չի օգտվել իր այդ իրավունքից:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի («Վարկատու») և Վարդան Ամիրյանի («Վարկատու») միջև 13.04.2013 թվականին կնքված թիվ 32748 վարկային գծի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.5 կետի համաձայն՝ Պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում Վարկատուն կարող է դիմել ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, կամ դատարան: Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Բանկը հրաժարվել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն պահանջներով, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում **250.000 ՀՀ դրամը** կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում **500.000 ՀՀ դրամը** կամ դրան համարժեք արտարժույթը (**հատոր 2-րդ, գ.թ. 22-25**):

2) 23.09.2014 թվականի թիվ 15-2009/14 որոշմամբ Հաշտարարը բավարարել է Վարդան Ամիրյանի կողմից 22.07.2014 թվականին Բանկի դեմ ներկայացված 3.889.000 ՀՀ դրամի պահանջը մասնակիորեն՝ 2.592.882 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 22-35**):

3) 30.10.2014 թվականին Վարդան Ամիրյանն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնել է թիվ 07-116/14 գործի շրջանակներում Հաշտարարի 23.09.2014 թվականի թիվ 15-2009/14 որոշման հետ, որից հետո որոշումը կողմերի համար դարձել է պարտադիր (**հատոր 2-րդ, գ.թ. 79**):

4) Գործում առկա չէ Բանկի և Հաշտարարի գրասենյակի միջև Հաշտարարի որոշումը վիճարկելու իրավունքից հրաժարվելու մասին կնքված համաձայնագիր:

**4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտում «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի մեկնաբանությունը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի 09.10.2012 թվականի թիվ ՍԴՌ-1051 որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է ամերևույթ դատական սխալ, որն ազդել է

գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում Հաշտարարի որոշումները դատական կարգով վիճարկելու հիմքերի սահմանափակումը չի հանգեցնում դատական պաշտպանության մատչելիության իրավունքի խախտմանը:*

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման դրույթ է պարունակում նաև 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, ինչպես նաև 63-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էության կիրառելի են դրանց նկատմամբ:

Համանման դրույթ է պարունակում նաև 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածը, որի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էության կիրառելի են դրանց նկատմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: **Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում:** Դժվար է պատկերացնել իրավունքի գերակա-

յություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*տե՛ս Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պաշտպանության իրավունքը՝ ապահովել այն թե՛ նորմատիվ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանել դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կազմակերպության և քաղաքացիների միջև կնքվող գործարքները նշում են պարունակում գործարքից բխող պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորության մասին: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ Կազմակերպությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել, Կազմակերպության և քաղաքացիների միջև կնքվող գործարքները պետք է նշում պարունակեն այդ մասին:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են վիճարկել իրավասու դատարան ֆինանսական հա-



մակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով: Նույն հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ **Կազմակերպությունը կարող է Գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:**

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի համաձայն՝ իրավասու դատարանը չեղյալ է ճանաչում Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը, եթե՝

1) պահանջը ենթակա չէ քննության Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից.

2) Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացրել նույն օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների խախտմամբ.

3) բացահայտվել են Ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքներ:

ՀՀ սահմանադրական դատարանը, 09.10.2012 թվականի թիվ ՍԴՌ–1051 որոշմամբ գնահատելով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի սահմանադրականությունը, արձանագրել է, որ այն դեպքում, երբ Կազմակերպությունը Հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ իր ազատ կամահայտնությամբ, հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու սահմանափակ հնարավորություն նախատեսելն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի հարուցում: Իսկ այն դեպքում, երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է ՀՀ Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 18–րդ և 19–րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը:

Արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի, ինչպես նաև այդ հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված 18–րդ հոդվածի դրույթներով Կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը միայն այն իրավակարգավորման շրջանակներում, երբ **Կազմակերպությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամովին հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ:**

Ամփոփելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հաշտարարի որոշումը հաճախորդի կողմից ընդունելու պարագայում դառնում է պարտադիր, և Կազմակերպությունն այդ որոշումը կարող է ըստ էության վիճարկել դատական կարգով, եթե նա **Հաշտարարի գրասենյակի հետ կնքած գրավոր համաձայնագրով չի հրաժարվել Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից**, իսկ այն դեպքում, երբ առկա չէ նման գրավոր համաձայնություն, ապա կազմակերպությունը Հաշտարարի որոշումը կարող է վիճարկել ոչ թե ըստ էության, այլ միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածով նախատեսված սահմանափակ հիմքերով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի («Վարկատու») և Վարդան Ամիրյանի («Վարկառու») միջև 13.04.2013 թվականին կնքված թիվ 32748 վարկային գծի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.5 կետի համաձայն՝ Պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում Վարկատուն կարող է դիմել ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կամ դատարան: **Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Բանկը հրաժարվել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն պահանջներով, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:** 23.09.2014 թվականի թիվ 15–2009/14 որոշմամբ Հաշտարարը

բավարարել է Վարդան Ամիրյանի կողմից 22.07.2014 թվականին Բանկի դեմ ներկայացված 3.889.000 ՀՀ դրամի պահանջը մասնակիորեն՝ 2.592.882 ՀՀ դրամի չափով: 30.10.2014 թվականին Վարդան Ամիրյանն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնել է թիվ 07–116/14 գործի շրջանակներում Հաշտարարի 23.09.2014 թվականի թիվ 15–2009/14 որոշման հետ, որից հետո որոշումը կողմերի համար դարձել է պարտադիր: Գործում առկա չէ Բանկի և Հաշտարարի գրասենյակի միջև Հաշտարարի որոշումը վիճարկելու իրավունքից հրաժարվելու մասին կնքված համաձայնագիր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տես Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ՝ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԳ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը: Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավա-հարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույց մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել բազմակողմանի հետազոտության մասին (*տես Ալվարո Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն Խաչատրյանի և այլոց թիվ ԿԴ3/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը*):

Սույն գործով Դատարանը, Բանկի հայցը մերժելով, պատճառաբանել է, որ վերջինս չի ապացուցել «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածով ամրագրված իրավական հիմքերից որևէ մեկի առկայությունը, ուստի Հաշտարարի 23.09.2014 թվականի որոշումը հիմնավոր է:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, նշել է, որ Բանկի կողմից չեն ներկայացվել համապատասխան փաստաթղթեր և դրանք հիմնավորող ապացույցներ, որոնք կհաստատեն Հաշտարարի որոշման չեղյալ ճանաչելու հիմքերից որևէ մեկի առկայությունը, ուստի Դատարանն իրավացիորեն ներկայացված պահանջն անհիմն է համարել:

Անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերջիններս չեն իրականացրել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, մասնավորապես պատճառաբանելով, որ Բանկը չի ապացուցել «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածով ամրագրված իրավական հիմքերից որևէ մեկի առկայությունը, անտեսել են այն հանգամանքը, որ Բանկը Հաշտարարի որոշումը վիճարկում է ըստ էության, և գործում առկա չէ Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից Բանկի կողմից կամուկին հրաժարվելու վերաբերյալ Հաշտարարի գրասենյակի հետ օրենքով սահմանված կարգով հա-

մաճայնագիր կնքված լինելու վերաբերյալ որևէ ապացույց: Ավելին, ի կատարումն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների, Բանկի և Վարդան Ամիրյանի միջև 13.04.2013 թվականին կնքված թիվ 32748 Պայմանագրի 5.5 կետում նշում է կատարվել այն մասին, որ Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Բանկը հրաժարվել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն պահանջներով, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, մինչդեռ սույն գործով գույքային պահանջի և գործարքի գումարի չափը գերազանցում է համապատասխանաբար 250.000 և 500.000 ՀՀ դրամը, ուստի Բանկի կողմից Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից մասամբ հրաժարումը սույն գործով չի կարող սահմանափակել Բանկի՝ Հաշտարարի որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորությունը:

Այսինքն՝ ստորադաս դատարանները Հաշտարարի որոշումը վիճարկելու իրավունքից կամովին հրաժարվելու համաձայնագիր կնքված լինելու կամ չլինելու փաստը չպարզելով, սխալ մեկնաբանելով ՀՀ սահմանադրական դատարանի 09.10.2012 թվականի թիվ ՍԴՈ-1051 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, Բանկին գրկել են Հաշտարարի որոշումը դատարանում ըստ էության վիճարկելու հնարավորությունից՝ դրանով իսկ խախտելով Բանկի՝ Կոնվենցիայով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքը: Հետևաբար սույն քաղաքացիական գործով ստորադաս դատարանները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտմամբ չզննատելով գործում առկա բոլոր ապացույցները, սխալ եզրահանգման են եկել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի մյուս փաստարկին՝ Հաշտարարի որոշումն ըստ էության սխալ լինելու վերաբերյալ, ապա ստորադաս դատարանների կողմից գործի լուծման վրա ուղղակիորեն ազդող վերոհիշյալ դատավարական իրավունքի խախտումը թույլ տալու պայմաններում վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ բողոքի այդ փաստարկին, քանի որ ստորադաս դատարանները Հաշտարարի որոշման ըստ էության իրավաչափ լինելու վերաբերյալ քննություն չեն կատարել:

*Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պարզադատարանություններով:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը վճռաբեկ դատարանը դիտում է քավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը՝ 23.09.2014 թվականի թիվ 15-2009/14 որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասով, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան նոր քննության ուղարկելու համար: Ընդ որում, վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործը նոր քննության է ուղարկում միայն Բանկի հայցապահանջի մասով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով բողոքարկվել է միայն Բանկի կողմից և միայն իր հայցը մերժելու մասով:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարզադատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.03.2016 թվականի որոշումը և գործը՝ ըստ հայցի «Հայլեկոնուբանկ» ԲԲԸ-ի ընդդեմ Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյանի, երրորդ անձ Վարդան Ամիրյանի՝ 23.09.2014 թվականի թիվ 15-2009/14 որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մատով, ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/4542/02/14  
2016 թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/4542/02/14

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ն. Բարսեղյան  
Ս. Միքայելյան  
Հ. Ենքյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հրանտ Ավետիսյանի ներկայացուցիչ Աշոտ Ղազարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.07.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հրանտ Ավետիսյանի ընդդեմ «Տրանստունիվերսալ» ՓԲԸ-ի (ասուհետ՝ Ընկերություն)՝ գումար բռնագանձելու և հրամանն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Հրանտ Ավետիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության հիմնադրի 19.08.2014 թվականի որոշումը, ինչպես նաև Ընկերությունից հոգուտ իրեն բռնագանձել 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք 1.815.000 ՀՀ դրամ փոխառության գումարը և դրա վրա հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսները՝ 30.10.2014 թվականից մինչև պարտավորության դադարման օրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 06.03.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Ընկերությունից հոգուտ Հրանտ Ավետիսյանի բռնագանձել 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք 1.815.000 ՀՀ դրամ, դրա վրա հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսները՝ 30.10.2014 թվականից մինչև պարտավորության դադարման օրը, ինչպես նաև 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.07.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 06.03.2015 թվականի վճիռը բեկանվել է մասնակիորեն և փոփոխվել՝ հայցը

բավարարված մասով մերժվել է, իսկ վճիռը՝ հայցի մերժված մասով, մնացել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հրանտ Ավետիսյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ասհաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետը, 878-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 880-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս չի կատարել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն՝ հանգելով սխալ եզրակացության: Մասնավորապես՝ Հրանտ Ավետիսյանի կողմից Ընկերությանը փոխառությամբ գումար տրամադրելու փաստը հիմնավորված է եղել ինչպես դրամարկղային մուտքի օրդերով, այնպես էլ՝ Ընկերության 2011 թվականի հուլիս ամսվա դրամարկղային շարժի վերաբերյալ փաստաթղթով, ինչը Վերաքննիչ դատարանը փոխառությամբ գումար տրամադրելը հիմնավորող ապացույց չի համարել՝ վկայակոչելով ՀՀ կառավարության 08.10.2003 թվականի «Դրամարկղային գործառնությունների կարգը հաստատելու մասին» թիվ 1408-Ն որոշումը: Վերաքննիչ դատարանը Հրանտ Ավետիսյանի կողմից Ընկերությանը փոխառությամբ գումար տրամադրելու փաստը հիմնավորող դրամարկղային մուտքի օրդերի և Ընկերության 2011 թվականի հուլիս ամսվա դրամարկղային շարժի վերաբերյալ փաստաթղթի առկայության պայմաններում հիմնվել է վերջինիս ներկայացուցչի հայտարարությունների վրա այն մասին, որ այդ փաստաթղթերը կեղծ են՝ առանց պահանջելու Ընկերության նշված ժամանակահատվածի դրամական շարժի վերաբերյալ փաստաթղթերն Ընկերության հաշվապահությունից, համապատասխան բանկային կազմակերպություններից, ինչպես նաև հարկային մարմին ներկայացված հաշվետվությունները, որոնցով ևս հիմնավորվում է Հրանտ Ավետիսյանի կողմից Ընկերությանը փոխառությամբ 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք 1.815.000 ՀՀ դրամ տրամադրված լինելու փաստը:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-332-րդ հոդվածները, 337-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել հայցային վաղեմության ինստիտուտը: Փոխառությամբ տրամադրված գումարը վերադարձնելու ժամկետ որոշված չի եղել, հետևաբար այն պետք է վերադարձվեր այդ մասին փոխառուի պահանջը ներկայացվելու օրվանից՝ 30.09.2014 թվականից հետո երեսօրյա ժամկետում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը գտել է, որ գործով պատասխանող կողմի՝ հայցային վաղեմություն կիրառելու դիմումը ենթակա է բավարարման, և այս հիմքով ևս պահանջը՝ մերժման այն դեպքում, երբ հայցային վաղեմության ժամկետը չի էլ լրացել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.07.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հրանտ Ավետիսյանը 07.10.2007 թվականին աշխատանքի է ընդունվել Ընկերությունում՝ որպես տնօրեն, իսկ 25.08.2014 թվականին ազատվել է աշխատանքից՝ համաձայն Ընկերության հիմնադրի 25.08.2014 թվականի թիվ 158/2014 հրամանի (**հատոր 1-ին, գ.թ.12, 13**):

2) Ընկերության կողմից 26.07.2011 թվականին տրված դրամարկղային մուտքի օրդերի համաձայն՝ Հրանտ Ավետիսյանից ստացվել է 1.815.000 ՀՀ դրամ (5.000 ԱՄՆ դոլար): Որպես ստացման հիմք՝ նշվել է «փոխառության պայմանագիրը», նպատակը՝ «տուգանքի մուծման համար»: Անդորրագրում գլխավոր հաշվապահի դիմաց առկա ստորագրությունն իրականացվել է Հրանտ Ավետիսյանի կողմից (**հատոր 1–ին, գ.թ. 11**):

3) Հրանտ Ավետիսյանի կողմից դատարան է ներկայացվել 2011 թվականի հուլիս ամսվա դրամարկղի շարժի վերաբերյալ փաստաթղթի պատճենը, որի համաձայն, ի թիվս այլ գործարքների, մատնանշված է նաև «մուտք Հրանտից (5.000 դոլար – 1.815.000 ՀՀ դրամ)» (**հատոր 1–ին, գ.թ. 98**):

4) Հրանտ Ավետիսյանի կողմից Ընկերության տնօրեն Լ. Ալեքսանյանին հասցեագրված 30.09.2014 թվականի դիմումով վերջինին ներկայացվել է փոխառությամբ տրամադրված գումարը վերադարձնելու վերաբերյալ պահանջ (**հատոր 1–ին, գ.թ. 14**):

5) Ի պատասխան Հրանտ Ավետիսյանի 30.09.2014 թվականի դիմումի՝ Ընկերության տնօրեն Լ. Ալեքսանյանը 07.10.2014 թվականի թիվ 10 գրությամբ Հրանտ Ավետիսյանին հայտնել է, որ Ընկերության՝ իրեն հանձնված հաշվապահական փաստաթղթերում համապատասխան տեղեկատվություն չկա, ինչպես նաև դիմումում վկայակոչված պարտավորությունն Ընկերության մոտ բացակայում է (**հատոր 1–ին, գ.թ. 15**):

6) 15.03.2011 թվականի թիվ 15 հրամանի համաձայն՝ Հրանտ Ավետիսյանն իր դիմումի համաձայն 2011 թվականի ապրիլի 1–ից ազատվել է աշխատանքից (**հատոր 1–ին, գ.թ. 38**):

7) Հրանտ Ավետիսյանի անհատական հաշվետվությունների համաձայն՝ Հրանտ Ավետիսյանը 10.07.2007 թվականին ընդունվել է աշխատանքի, 01.04.2011 թվականին ազատվել աշխատանքից, ապա 01.09.2011 թվականին դարձյալ ընդունվել աշխատանքի (**հատոր 1–ին, գ.թ. 39–40**):

8) ՀՀ ֆինանսների նախարարության Էրեբունու հարկային տեսչության կողմից 26.12.2014 թվականի գրությամբ դատարան ներկայացված՝ Էրեբունու ՀՏ–ում հաշվառված Ընկերության վերաբերյալ 29.07.2011 թվականին Էրեբունուի ՀՏ–ի կողմից կազմված թիվ 1000745 ստուգման ակտի համաձայն՝ Ընկերության տնօրեն Հրանտ Ավետիսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության: Ընկերության 2011 թվականի հուլիս–սեպտեմբեր ամիսների հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացվել են տնօրեն Հրանտ Ավետիսյանի կողմից (**հատոր 2–րդ, գ.թ. 23**):

9) Ընկերության ներկայացուցչի կողմից Վերաքննիչ դատարանում 03.07.2015 թվականի դատական նիստի ընթացքում ներկայացվել է գրավոր բացատրություն, որում նաև խնդրել է հայցը մերժել հայցային վաղեմության ժամկետները լրացած լինելու հիմքով (**հատոր 3–րդ, գ.թ. 36–37**):

#### **4. Վճարելի դատարանի պարճառաբանությունները և կզրահանգումները**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331–րդ հոդվածի սխալ կիրառման, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.*

- *արդյո՞ք սահմանված պահանջներին չհամապատասխանող դրամարկղի մուտքի օրդերը և դրամարկղային շարժի վերաբերյալ փաստաթուղթը կարող են համարվել թույլատրելի պացուց փոխառության հարաբերության առկայությունը հաստատված համարելու համար,*
- *արդյո՞ք Վերաքննիչ դատարանը կարող է քննարկման առարկա դարձնել հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը, եթե այն չի ներկայացվել և քննարկվել առաջին արյանի դատարանում:*

Վերոգրյալի համատեքստում քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) *վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պարճառարանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877–րդ հոդվածի 1–ին կետի 1–ին պարբերության համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառուին վերադարձնել մինևույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխառուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 2–րդ կետի համաձայն ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխառուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող **այլ փաստաթուղթ**:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված հոդվածների վերլուծությանը, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ փոխառության պայմանագիրը **գրավոր ձևով կնքվող** գործարք է, որի ուժով փոխատուն փոխառուին է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխառուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխառուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրանով նախատեսված դրամը կամ այլ գույքը հանձնելու պահից (*տես Վահե Սահակյանն ընդդեմ Լեոնիդ Ներսիսյանի թիվ ԵՔԴ/0916/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը, փոխառության պայմանագրի համար պարտադիր համարելով գրավոր ձևը, ապացույցների թույլատրելիության շրջանակը սահմանափակել է միայն գրավոր ապացույցներով՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու **ցանկացած փաստաթուղթ**, որը կհաստատի փոխառության հարաբերությունների առկայությունը: Օրենսդիրը, պարտադիր համարելով փաստաթղթի ներկայացումը, չի սահմանել գրավոր ապացույցների սպառիչ ցանկ՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54–րդ հոդվածի պահանջների համապատասխանող **ցանկացած գրավոր ապացույց**, որը կհաստատի փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին հանդամամբ:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը **վերաբերելի և թույլատրելի** տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տես Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Ջարգացնելով նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ յուրաքանչյուր դեպքում որևէ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ կանոններով.



1) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով:

ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որով սպառիչ սահմանված է ապացուցման միջոցների շրջանակը: Մասնավորապես՝ գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել միայն գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների և գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

2) օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված թույլատրելիության նշված կանոնը ենթադրում է ապացույցի դատավարական ձևի համապատասխանությունն օրենքի պահանջներին՝ աղբյուրի, ստացման եղանակի, պայմանների, ինչպես նաև ապացույցի ձևակերպման տեսանկյունից:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերոնշյալ կանոնի համատեքստում ապացույցի թույլատրելիությունը պետք է դիտարկվի ոչ միայն դատավարական, այլ նաև նյութաիրավական օրենսդրության նորմերը պահպանված լինելու առումով:

3) գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնի բովանդակությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ օրենքում կամ իրավական ակտում ուղղակիորեն նշված չէ այն ապացույցը, որով թույլատրվում է հաստատել այս կամ այն փաստը, ապա վերջինս կարող է հաստատվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ցանկացած ապացույցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով, **այլ ապացույցների կիրառումը բացառվում է**, կամ.
- գործի հանգամանքները կարող են հաստատվել օրենքով նախատեսված ապացույցներով (անհրաժեշտ ապացույց), սակայն **այլ ապացույցների վարույթ ներգրավելու հնարավորությունը սահմանափակված չէ**:

Ապացույցների թույլատրելիության նշված կանոնի մասնավոր դրսևորումներից է նաև այս կամ այն ապացույցի օգտագործման արգելքը, որը նշանակում է, որ ի հավաստում գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի չի կարող ներկայացվել որևէ կոնկրետ ապացույց, եթե նյութական օրենսդրությունն արգելում է դրա օգտագործումը (*տես «ՋԻ ԷՅՁ ՍԹՈՐԻՋ ԷՆԹԵՐՓՐԱՅԶՍ» ՍՊԸ-ն ընդդեմ Սևակ Արզարունու, Արարյուն Մարտիրոսյանի թիվ ԵԿԴ/2593/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հրանտ Ավետիսյանը 07.10.2007 թվականին աշխատանքի է ընդունվել Ընկերությունում որպես տնօրեն, իսկ 25.08.2014 թվականին ազատվել է աշխատանքից՝ համաձայն Ընկերության հիմնադրի 25.08.2014 թվականի թիվ 158/2014 հրամանի: Ընկերության կողմից 26.07.2011 թվականին տրված դրամարկղային մուտքի օրդերի համաձայն՝ Հրանտ Ավետիսյանից ստացվել է 1.815.000 ՀՀ դրամ (5.000 ԱՄՆ դոլար): Որպես ստացման հիմք՝ նշվել է «փոխառության պայմանագիրը», նպատակը՝ «տուգանքի մուծման համար»: Անդորրագրում գլխավոր հաշվապահի դիմաց առկա ստորագրությունն իրականացվել է Հրանտ Ավետիսյանի կողմից: Հրանտ Ավետիսյանի կողմից դատարան է ներկայացվել 2011 թվականի հուլիս ամսվա դրամարկղի շարժի վերաբերյալ փաստաթղթի պատճենը, որի համաձայն, ի թիվս այլ գործարքների, մատնանշված է նաև «մուտք Հրանտ

տից (5.000 դոլար–1.815.000 ՀՀ դրամ)»: ՀՀ ֆինանսների նախարարության Էրեբունու հարկային տեսչության կողմից 26.12.2014 թվականի գրությամբ դատարան ներկայացված՝ Էրեբունու ՀՏ–ում հաշվառված Ընկերության վերաբերյալ 29.07.2011 թվականին Էրեբունի ՀՏ–ի կողմից կազմված թիվ 1000745 ստուգման ակտի համաձայն՝ Ընկերության տնօրեն Հրանտ Ավետիսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության: Ընկերության 2011 թվականի հուլիս–սեպտեմբեր ամիսների հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացվել են տնօրեն Հրանտ Ավետիսյանի կողմից:

Սույն գործով Դատարանը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության Էրեբունու հարկային տեսչության կողմից 26.12.2014 թվականին տրված գրությունը, հաստատված է համարել հայցվորի՝ Ընկերության տնօրեն լինելու փաստը և ներկայացված դրամարկղի մուտքի օրդերի հիման վրա միաժամանակ հաստատված համարելով փոխառություն տրամադրելու հանգամանքը՝ հիմնավոր է համարել հայցվորի պահանջը՝ փոխառության գումարը վերադարձնելու մասով:

Վերաքննիչ դատարանը, գնահատելով ներկայացված դրամարկղային մուտքի օրդերը և «2011թ. հուլիս ամսվա դրամարկղի շարժ» վերտառությամբ փաստաթուղթը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 08.10.2003 թվականի «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1408–Ն որոշմամբ սահմանված կարգով, գտել է, որ «...հայցվորի կողմից որպես պարտավորության առկայությունը հիմնավորող փաստաթուղթ վկայակոչված դրամարկղային մուտքի օրդերը, ըստ էության, չի համապատասխանում ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ կազմակերպությունների մուտքի օրդերին ներկայացվող պահանջներին», ինչպես նաև «2011 թվականի հուլիս ամսվա դրամարկղի շարժ» վերտառությամբ փաստաթուղթը նույնպես «ՀՀ կառավարության 08.10.2003 թվականի «Դրամարկղային գործառնությունների կարգը հաստատելու մասին» թիվ 1408–Ն որոշմամբ սահմանված կարգի խախտմամբ է կազմված և ստորագրված է քացառապես Հրանտ Ավետիսյանի կողմից, ինչպես նաև ներկայացված է առանց Ընկերության կնիքի, որպիսի պայմաններում վերոհիշյալ ապացույցը ևս սույն գործով թույլատրելի ապացույց համարվել, հետևաբար նաև ապացուցողական նշանակություն ունենալ չի կարող», ուստի Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ «...հայցվոր Հրանտ Ավետիսյանի կողմից **չեն ներկայացվել իր վկայակոչած փաստերը հիմնավորող թույլատրելի և վերաբերելի ապացույցներ...**»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը շարադրված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

«Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.10.2003 թվականի թիվ 1408–Ն որոշման 4–րդ կետի համաձայն՝ կազմակերպության դրամարկղ կանխիկ դրամի մուտքագրման (ընդունման) փաստաթղթավորումը կատարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11–րդ հոդվածի 2–րդ մասին համապատասխան՝ հաշվապահական հաշվառումը վարող ստորաբաժանման կամ անձի, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի կողմից լիազորված այլ անձի (այսուհետ՝ հաշվապահություն) կողմից: (...) Կանխիկ դրամի մուտքագրման (ընդունման) գործառնությունները կատարվում են դրամարկղային մուտքի օրդերով: (...) Կազմակերպությունների դեպքում մուտքի օրդերի ձախ մասը ստորագրվում է գլխավոր հաշվապահի կամ կազմակերպության ղեկավարի կողմից լիազորված այլ անձի (այսուհետ՝ հաշվապահ), գանձապահի կամ նրա պարտականությունները կատարող անձի (այսուհետ՝ գանձապահ) և վճարողի կողմից, իսկ այլ մասում անդորրագիրը ստորագրվում է հաշվապահի և գանձապահի կողմից: (...) Ստորագրված մուտքի օրդերը կնքվում է գանձապահի դրոշմակնիքով կամ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կնիքով, եթե կազմակերպությունը (անհատ ձեռնարկատերը) կնիք ունի՝ այնպես, որ միաժամանակ կնքված լինեն մուտքի օրդերի և՛ ձախ, և՛ այլ մասերը (անդորրագիրը), որից հետո այն տրվում է դրամը վճարողին: Նույն որոշման 14–րդ կետի համաձայն՝ կանխիկ դրամի բոլոր

մուտքագրումները և ելքագրումները գրանցվում են դրամարկղային գրքում՝ մուտքի և ելքի օրդերների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին **տեղեկություններ պարունակող** ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի հիմքով գրավոր ապացույց համարվելու համար անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան ապացույցը պարունակի գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ, այսինքն՝ **իր բովանդակությամբ** հնարավորություն տա դատարանին՝ պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այլ կերպ ասած՝ գրավոր ապացույցները դատարանի համար էական նշանակություն ունեն իրենց բովանդակության տեսակետից, գրավոր ապացույցներում ապացուցողական նշանակություն ունի որոշակի նյութական կրիչներում արտացոլված **միտքը**, որն ընկալվում է ընթերցման միջոցով:

Վճռաբեկ դատարանը, «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.10.2003 թվականի թիվ 1408-Ն որոշման վկայակոչված կարգավորումները համադրելով գրավոր ապացույցի հասկացության վերաբերյալ վերը շարադրված մեկնաբանությունների հետ, գտնում է, որ դրամարկղային մուտքի օրդերը՝ որպես կանխիկ դրամի մուտքագրման (ընդունման) գործառնությունները հավաստող փաստաթուղթ, գրավոր ապացույցի տեսակ է և ելնելով վիճելի իրավահարաբերության բնույթից՝ միանգամայն կարող է համարվել ն՝ որպես թույլատրելի, և՛ որպես վերաբերելի ապացույց: Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոխառությունն իր բնույթով դրամական շարժի՝ փոխատուից փոխառուին դրամական միջոցներ փոխանցելու վերաբերյալ իրավահարաբերություն է, որի առկայության փաստը կարող է հիմնավորվել ցանկացած գրավոր ապացույցով: Հետևաբար դրամարկղային մուտքի օրդերը փոխառության իրավահարաբերություններից բխող վեճերով թույլատրելի գրավոր ապացույց է և ենթակա է գնահատման գործով ձեռք բերված ապացույցների համակցության մեջ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.10.2003 թվականի թիվ 1408-Ն որոշմամբ կարգավորված են հաշվապահական հաշվառման փաստաթղթերի կազմման, վարման կարգը, այդ թվում՝ դրամարկղային մուտքի օրդերին ներկայացվող պահանջները: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գրավոր ապացույցի համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին ներկայացվող վավերապայմաններին, պահանջներին (կազմման, բովանդակության առումով) կանխորոշում է այդ ապացույցի (մասնավորապես՝ մուտքի օրդերի) **արժանահավատությունը**, հետևաբար այդ փաստաթղթերի անհամապատասխանությունը սահմանված պահանջներին հանդիսանում է նշված ապացույցի **ոչ թե թույլատրելիության կամ վերաբերելիության, այլ արժանահավատության գնահատման միջոց**: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե անգամ ներկայացված փաստաթուղթն իր վավերապայմաններով լիարժեքորեն չի համապատասխանում նմանատիպ փաստաթղթերին ներկայացվող պահանջներին, դա դեռևս չի բացառում այդ փաստաթղթի ապացուցողական ուժը: Հետևաբար, եթե ներկայացված փաստաթղթի բովանդակությունը կազմող վավերապայմանները լիարժեք չեն, դա կարող է նվազեցնել ապացույցի արժանահավատությունը, բայց ոչ կանխորոշել դրա անթույլատրելիությունը կամ ոչ վերաբերելիությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ հայցվորի կողմից ներկայացված դրամարկղային մուտքի օրդերը և «2011 թվականի հուլիս ամսվա դրամարկղի շարժ» վերտառությամբ փաստաթուղթը սույն գործով թույլատրելի չեն, քանի որ պահպանված չեն այդ փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջները:

Անդրադառնալով նշված ապացույցների վերաբերելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդ փաստաթղթերը բովանդակում են տեղեկություններ, որոնք վերաբերում են Ընկերության դրամարկղ ենթադրաբար դրամական միջոցների՝ որպես փոխառության գումար մուտք լինելուն: Հետևաբար դրանք ուղղակիորեն առնչվում են Հրանտ Ավետիսյանի և Ընկերության միջև ենթադրաբար ծագած փոխառության հարաբերություններին, ուստիև պարունակում են տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են սույն գործի լուծման համար: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրամարկղային մուտքի օրդերը և «2011 թվականի հուլիս ամսվա դրամարկղի շարժ» վերտառությամբ փաստաթուղթը սույն գործով նաև վերաբերելի ապացույցներ են:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ ապացույցները դիտարկելով որպես սույն գործով թույլատրելի և վերաբերելի ապացույցներ, գտնում է, որ նշված ապացույցները պետք է գնահատվեն արժանահավատության տեսանկյունից: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ստորադաս դատարաններում գործի քննության ընթացքում վիճարկվել են հայցվորի պահանջի հիմքում ընկած գրավոր ապացույցներն ինչպես տվյալ փաստաթղթերին ներկայացվող պահանջներին համապատասխանելու, այնպես էլ հայցվորի կողմից տվյալ փաստաթղթերը ստորագրելու իրավասություն ունենալու հիմքով: Մասնավորապես՝ Ընկերությունը վիճարկել է դրամարկղային մուտքի օրդերի և դրամարկղային շարժի վերաբերյալ փաստաթղթի համապատասխանությունը սահմանված պահանջներին՝ հայտնելով, որ դրանք չեն համապատասխանում նմանատիպ փաստաթղթերին ներկայացվող պահանջներին: Ընկերության կողմից վիճարկվել է դրամարկղային մուտքի օրդերի կազմման ժամանակը, վիճարկվել է նաև դրամարկղային մուտքի օրդերի վրա նշված ժամանակահատվածում Հրանտ Ավետիսյանի՝ որպես Ընկերության տնօրենի՝ դրամարկղային մուտքի օրդերը ստորագրելու իրավասություն ունենալը՝ որպես վիճարկման հիմք ներկայացնելով Ընկերության տնօրեն Հրանտ Ավետիսյանի՝ աշխատանքից ազատելու 15.03.2011 թվականի թիվ 15 հրամանը, ինչպես նաև վերջինիս անհատական հաշվետվությունները:

Դատարանն անդրադարձել է միայն Հրանտ Ավետիսյանի՝ որպես Ընկերության տնօրենի՝ դրամարկղային մուտքի օրդերը ստորագրելու իրավասություն ունենալու հարցին և ՀՀ ֆինանսների նախարարության Էրեբունու հարկային տեսչության կողմից 26.12.2014 թվականին տրված գրության հիման վրա եզրակացրել, որ Հրանտ Ավետիսյանը վիճելի ժամանակահատվածում հանդիսացել է Ընկերության տնօրեն, որի հիման վրա բավարարել է հայցն այս մասով՝ չանդրադառնալով բարձրացված մյուս հարցերին:

Վերաքննիչ դատարանը, գնահատելով հայցվորի կողմից ներկայացված ապացույցները՝ դրամարկղային մուտքի օրդերը և «2011 թվականի հուլիս ամսվա դրամարկղի շարժ» վերտառությամբ փաստաթուղթը, դրանք համարել է ոչ թույլատրելի և ոչ վերաբերելի՝ արդյունքում չիրականացնելով ապացույցների արժանահավատության գնահատում գործում առկա մյուս ապացույցների համատեքստում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից չի իրականացվել ապացույցների լրիվ և բազմակողմանի հետազոտությունը, որպիսի պարագայում առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

*2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հերկյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմություն կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վկայակոչված հոդվածների վերլուծությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, ամրագրելով

հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է կարգ, որի առկայության դեպքում դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի հայցային վաղեմության հարցը: Այն է՝ պետք է առկա լինի հայցային վաղեմություն կիրառելու մասին գործին մասնակցող անձի կողմից դիմում, և այդ դիմումը պետք է ներկայացվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Այսինքն՝ օրենսդրի կողմից հստակ սահմանվել է ժամկետ, այն է՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը ներկայացնել **մինչև վճռի կայացումը** (տե՛ս *Ռատիկ Ենգիբարյանի անանկության գործով կատավարիչն ընդդեմ «Վանասկն Ապակի» ՍՊԸ-ի և մյուսների թիվ ՇԴ/0376/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Սույն գործով Ընկերության ներկայացուցչի կողմից Վերաքննիչ դատարանում 03.07.2015 թվականի դատական նիստի ընթացքում ներկայացվել է գրավոր լրացուցիչ բացատրություն, որում միջնորդվել է կիրառել հայցային վաղեմություն և հայցը մերժել նաև այդ հիմքով:

Վերաքննիչ դատարանը, քննարկելով ներկայացված միջնորդությունը և գնահատելով հայցվորի կողմից ներկայացված ապացույցները, գտել է, որ սույն գործով լրացել են հայցային վաղեմության ժամկետները: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ հայցը ենթակա էր մերժման նաև այդ հիմքով, ուստի բավարարել է վերաքննիչ բողոքը նաև այս հիմքով:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ընկերության կողմից հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն ներկայացվել է միայն Վերաքննիչ դատարանին՝ նման միջնորդություն չներկայացվելով առաջին ատյանի դատարանին մինչև վճիռ կայացնելը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության միջնորդությունը չէր կարող քննարկվել Վերաքննիչ դատարանի կողմից՝ հաշվի առնելով, որ այդ միջնորդությունը Ընկերությունը չէր ներկայացրել Դատարանին մինչև վճիռ կայացնելը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը կարող էր գնահատել ներկայացված միջնորդությունը հիմնավորվածության տեսանկյունից միայն այն դեպքում, եթե միջնորդությունը ներկայացված լիներ Դատարանին մինչև վճիռ կայացնելը: Հետևաբար Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ «պատասխանող կողմի՝ հայցային վաղեմություն կիրառելու դիմումը ենթակա է բավարարման, և այս հիմքով ևս պահանջը՝ մերժման», անհիմն է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործը նոր քննության է ուղարկում միայն գումարի բռնագանձման պահանջի մասով, քանի որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկվել են միայն այդ մասով:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Սույն գործով վճռաբեկ բողոք բերած անձը միջնորդել է հետաձգել վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը, որը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.11.2015 թվականի որոշմամբ բավարարվել է:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.07.2015 թվականի որոշումը և գործը՝ գումարի բռնագանձման պահանջի մատով, ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.11.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3082/02/13  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3082/02/13  
2016 թ.

Կ. Հակոբյան  
Ա. Խառատյան  
Տ. Նազարյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Վլադիմիր Սահակյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-  
րաքննիչ քաղաքացիական դատարանի 22.09.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հով-  
սեփի Հովսեփյանի ընդդեմ Վլադիմիր Սահակյանի՝ փոխհամաձայնագրով ստանձնած պար-  
տավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Հովսեփի Հովսեփյանը պահանջել է Վլադիմիր Սահակյանից  
բռնագանձել 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Հովսեփի Հովսեփյանը 10.03.2015 թվականին հայցապահանջի հստակեցման վերաբե-  
րյալ դիմումով պահանջել է պարտադրել Վլադիմիր Սահակյանին կատարելու փոխհամա-  
ձայնագրով ստանձնած պարտավորությունը, այն է՝ վաճառել բնակարանը և ստացված գու-  
մարից 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը փոխանցել իրեն:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության  
դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 25.03.2015 թվականի վճռով  
հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
22.09.2015 թվականի որոշմամբ Վլադիմիր Սահակյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և  
Դատարանի 25.03.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վլադիմիր Սահակյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճուարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճուարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետը՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ, 348-րդ, 408-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 28-րդ, 32-րդ, 53-րդ, 95-րդ, 130.1-րդ, 149.7-րդ, 149.8-րդ հոդվածները, 219-րդ հոդվածի 1-ին կետը և 220-րդ հոդվածի 1-ին կետը, 220.4-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ, որի արդյունքում եկել է սխալ եզրահանգման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը 14.07.2014 թվականի որոշմամբ սույն քաղաքացիական գործը նշանակել է դատաքննության, 04.08.2014 թվականին դատաքննությունն ավարտվել է, և վճռի հրապարակման օր է հայտարարվել 15.08.2014 թվականը: Սակայն 15.08.2014 թվականին Դատարանը որոշում է կայացրել գործի վարույթը վերսկսելու մասին և 29.09.2014 թվականին նշանակել է քննության: Դատարանը վերը նշված որոշմամբ չի նշանակել նախնական դատական նիստ, հետևաբար Դատարանը, գործի վարույթը վերսկսելով, շարունակել է գործի դատաքննությունը:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ 10.03.2015 թվականին հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի հստակեցման վերաբերյալ դիմումը, որով վերջինս պահանջել է պարտադրել Վլադիմիր Սահակյանին կատարելու փոխհամաձայնագրով ստանձնած պարտավորությունը՝ վաճառել բնակարանը և ստացված գումարից 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը փոխանցել իրեն, ներկայացվել է դատաքննության ընթացքում, մինչդեռ հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ դիմումը կարող է ներկայացվել միայն նախնական դատական նիստի ժամանակ:

Այն, որ Հովսեփի Հովսեփյանի ներկայացրած դիմումն իրենից ներկայացնում է հայցապահանջն ավելացնելու (փոփոխելու) դիմում, հաստատվում է այն հանգամանքով, որ ի սկզբանե հայցվորի կողմից ներկայացվել է գումարի բռնագանձման պահանջ, որի վերաբերյալ պատասխանողը ներկայացրել է իր առարկությունները, մինչդեռ բնակարանը վաճառել պարտավորեցնելու պահանջն էականորեն տարբերվում է գումարի բռնագանձման պահանջից, հանդիսանում է ինքնուրույն պահանջ, ինչը հաստատվում է նաև Դատարանի վճռի պատճառաբանական մասում վերջինիս արած հետևությամբ առ այն, որ Հովսեփի Հովսեփյանի հայցապահանջը՝ Վլադիմիր Սահակյանին 04.08.2008 թվականի փոխհամաձայնագրով ստանձնած պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու մասին, չի ենթադրում գումարի բռնագանձում, այլ ենթադրում է պարտավորության կատարում:

Բացի այդ, փոխհամաձայնությամբ ստանձնած պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով Վլադիմիր Սահակյանը հնարավորություն չի ունեցել որևէ դիրքորոշում հայտնելու կամ պատասխան ներկայացնելու, քանի որ վերջինս տեղյակ չի եղել հայցապահանջն ավելացնելու վերաբերյալ Հովսեփի Հովսեփյանի դիմումի մասին: Հայցվորի դիմումը պատասխանողին տրամադրվել է միայն 19.05.2015 թվականին՝ վճռի հրապարակումից մոտ երկու ամիս անց:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը խախտել է անձի արդար դատաքննության իրավունքը՝ Վլադիմիր Սահակյանին գրկելով նոր պահանջի վերաբերյալ առարկություններ, այդ թվում նաև՝ հայցային վաղեմության կիրառմամբ հայցը մերժելու մասին դիմում ներկայացնելու հնարավորությունից:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածը, 220.4-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Պատասխանող Վլադիմիր Սահակյանը բնակվում է Երևան քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 25 շենքի 9-րդ բնակարանում, դատական բոլոր ծանուցումները ստացել է նշված



հասցեում: Միաժամանակ Վլադիմիր Սահակյանը հաշվառված է Երևան քաղաքի Արաբկիրի 21-րդ փողոցի թիվ 2 շենքի 12-րդ բնակարանում: Վերը նշված երկու հասցեներն էլ գտնվում են Երևան համայնքի Արաբկիր վարչական շրջանում, այսինքն՝ պատասխանողի բնակության վայրն Արաբկիր վարչական շրջանն է, սակայն գործը քննվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, այսինքն՝ տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է նշված հանգամանքը, որը հիմք էր դատական ակտը բողոք դեպքերում բեկանելու համար՝ պատճառաբանելով, որ Երևան քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 25 շենքի 9-րդ բնակարանը սպասարկվում է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

3) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 448-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ փոխհամաձայնագրի էական պայման է հանդիսացել բնակարանը 110.000 ԱՄՆ դոլարով Տիգրան Քոչարյանին վաճառելը, այլ ոչ թե բնակարանն ընդհանրապես վաճառելը: Հետևաբար, եթե պատասխանողի պարտավորության խախտման հիմքում դրվում է փոխհամաձայնագիրը, ապա պետք է դիտարկել փոխհամաձայնագրի էական պայմաններն ամբողջությամբ՝ բնակարանը 2008 թվականին Տիգրան Քոչարյանին 110.000 ԱՄՆ դոլարով վաճառելու համատեքստում, այլ ոչ թե մասնակի՝ բնակարանը վաճառելը՝ առանց հաշվի առնելու համաձայնագրում նշված կոնկրետ անձին և կոնկրետ գնով վաճառելու հանգամանքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.09.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

### 3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վլադիմիր Սահակյանի և Հովսեփ Հովսեփյանի միջև 04.08.2008 թվականին կնքվել է փոխհամաձայնագիր, որով կողմերը եկել են համաձայնության այն մասին, որ Արաբկիրի 21-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 12 բնակարանը վաճառելու են Տիգրան Քոչարյանին 110.000 ԱՄՆ դոլարով, որից Վլադիմիր Սահակյանը պարտավորվել է 60.000 ԱՄՆ դոլարը ստացականով տալ Հովսեփ Հովսեփյանին առուվաճառքից հետո՝ գումարը ստանալու օրը, իսկ Հովսեփ Հովսեփյանն իր ընտանիքի անդամների հետ միասին պարտավորվել է նոտարի կողմից սահմանված ժամկետում ազատել բնակարանը և հանձնել գնորդին նորմալ վիճակում՝ առանց գույքահարկի և կոմունալ ծախսերի պարտքի (**հատոր 1-ին, գ.թ. 39**):

2) Դատարան ներկայացված հայցադիմումով Հովսեփ Հովսեփյանը պահանջել է Վլադիմիր Սահակյանից բռնագանձել 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 66-67**):

3) Դատարանի 21.01.2014 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, և գործը նախապատրաստվել է դատաքննության (**հատոր 1-ին, գ.թ. 63**):

4) Դատարանի 14.07.2014 թվականի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության (**հատոր 1-ին, գ.թ. 105**):

5) 04.08.2014 թվականին գործի քննությունն ավարտվել է, և վճռի հրապարակման օր է նշանակվել 15.08.2014 թվականը (**դատական նիստի արձանագրություն, հատոր 1-ին, գ.թ. 142-152**):

6) Դատարանի 15.08.2014 թվականի որոշմամբ գործի քննությունը վերսկսվել է՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը շարունակելու անհրաժեշտությունից ելնելով (**հատոր 1-ին, գ.թ. 154**):

7) Հովսեփ Հովսեփյանը 10.03.2015 թվականի դատական նիստի ընթացքում ներկայացրել է «հայցապահանջի հստակեցում» վերառությամբ դիմում, որով պահանջել է պարտավորեցնել պատասխանողին՝ կատարելու պարտավորագրով ստանձնած պարտավորությունը, այն է՝ վաճառել բնակարանը և ստացված գումարից 60.000 ԱՄՆ դոլարը

տրամադրել իրեն: Նույն օրը Դատարանն ավարտել է գործի քննությունը (**հատոր 1–ին, գ.թ. 97–98, 169–171**):

8) Գործում առկա չէ ապացույց առ այն, որ հայցվորի կողմից 10.03.2015 թվականի «հայցադիմումի հստակեցում» վերտառությամբ դիմումը պատասխանող Վլադիմիր Սահակյանին ուղարկվել է, և վերջինս հնարավորություն է ունեցել դրա վերաբերյալ դիրքորոշում հայտնելու:

9) Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալի 15.10.2015 թվականի թիվ 25/02–4–3485 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Մ. Բաղրամյան պողոտայի թիվ 25 հասցեն գտնվում է Արաբկիր վարչական շրջանի տարածքում (**ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից**):

10) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 13.10.2014 թվականի թիվ ԴԴ-20–Ե–24455/15 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Սարշալ Բաղրամյան թիվ 25 հասցեի հետ կապված վեճերն ընդդատյա են Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին (**ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում հայցվորի կողմից հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու իրավունքի իրացման առանձնահատկությունների վերաբերյալ իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32–րդ, 149<sup>7</sup>–րդ և 220.4–րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին. արդյո՞ք դատարանը կարող է թույլատրել հայցի հիմքի կամ առարկայի փոփոխություն դատաքննության փուլում, և արդյո՞ք հայցվորի կողմից հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու մասին պատասխանողին չտեղեկացնելով՝ դատարանը չի խախտում վերջինիս արդար դատաքննության իրավունքը, այդ թվում նաև՝ կողմերի մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքները:

Վերոգրյալի համատեքստում քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) *վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հեղկյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ եթե գործով քննությունն իրականացվում է դատաքննության նախապատրաստության փուլով, ապա հայցվորն իրավունք ունի փոխելու հայցի հիմքը և առարկան, ավելացնելու կամ նվազեցնելու հայցային պահանջների չափը մինչև առաջին ատյանի դատարանում գործով դատաքննության սկսվելը: Հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննության ավարտը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>7</sup>–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ հայցվորի կողմից հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխվել մինչև դատաքննություն նշանակելը: Դատարանը կարող է թույլ չտալ նման փոփոխությունը, եթե այն բերում է

հայցի էություն փոփոխության: Հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխվել գործը քննող դատարանի առարկայական ընդդատության սահմաններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>7</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պատասխանողը հայցադիմումի լրացումը ստանալուց հետո կարող է ներկայացնել փոփոխված հայցադիմումի վերաբերյալ իր պատասխանը նույն օրենսգրքի 95-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով հայցի հիմքին և առարկային, դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ հայցի առարկան այն նյութաիրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում: Ընդ որում, հայցի առարկայից պետք է տարբերել հայցի օբյեկտը, այսինքն՝ այն առարկան, որին ուղղված է հայցի առարկայի բովանդակությունը կազմող պահանջը:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը:

Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ հայցի փաստական հիմքից բացի՝ հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը, բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնելու համապատասխան պահանջ (յրեն *Վիզեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ գործով կայացրած որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Հենց հայցի հիմքով ու առարկայով են որոշվում հայցերի նույնությունն ու տարբերությունը մինևույն սուբյեկտային կազմի դեպքում: ՀՀ օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու հնարավորությունը, ընդ որում, հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն իրենից ներկայացնում է այն հանգամանքների փոփոխությունը, որոնց վրա հիմնվում է այդ նյութաիրավական պահանջը (յրեն *Ա/2 Էդմոնդ Ասարյանը և Կարինե Բաղջյանն ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը, հայցվորին ընձեռելով հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու իրավունք, միաժամանակ նախատեսել է այդ իրավունքի իրացման որոշակի ընթացակարգ: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետի և 149<sup>7</sup>-րդ հոդվածի 1-ին կետի փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ այն դեպքում, երբ գործի քննությունն իրականացվում է գործը դատաքննության նախապարաստելու փուլով, օրենսդիրը հայցի հիմքի կամ առարկայի փոփոխությունը սահմանափակել է դատավարության այս փուլի շրջանակներով: Նման սահմանափակում նախատեսելը մի կողմից պայմանավորված է գործի արդյունավետ քննության անհրաժեշտությամբ, մյուս կողմից բխում է գործը դատաքննության նախապարաստելու փուլի խնդիրներից: Գործը դատաքննության նախապարաստվում է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառելի օրենսդրության հարցը պարզելու, ապացուցման առարկան որո-

շելու և ապացույցների կենտրոնացման խնդիրների իրականացման համար, որոնց անհրաժեշտությունն առաջանում է նաև հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու պարագայում: Հետևաբար օրենսդիրը, հայցվորին հնարավորություն ընձեռելով փոխելու հայցի հիմքը կամ առարկան, գործը լիարժեք կերպով դատաքննության նախապատրաստելու, արդյունքում նաև՝ գործի ժամանակին և ճիշտ լուծումն ապահովելու նկատառումով սահմանափակել է դատավարական նշված իրավունքի իրականացման հնարավորությունը գործը դատաքննության նախապատրաստելու փուլի շրջանակներով: Այլ կերպ ասած՝ հայցվորը հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխել միայն գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ի տարբերություն տնօրինչական այլ գործողությունների (օրինակ՝ հայց հարուցել, բողոք բերել և այլն) հայցի հիմքի կամ առարկայի փոփոխության դեպքում օրենսդիրը հստակ չի նախատեսել դատավարական այն փաստաթղթի տեսակը և անվանումը (ի տարբերություն, օրինակ, հայցադիմումի, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի), որոնցով կարող է իրականացվել նման փոփոխությունը: Վճռաբեկ դատարանը միասնական դատական պրակտիկա ապահովելու նպատակով գտնում է, որ նման փոփոխության դեպքում էական է ոչ թե դատավարական փաստաթղթի անվանումը, այլ դրա բովանդակությունը՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպես է այն վերնագրված (օրինակ՝ «հայցադիմումի հստակեցում», «հայցադիմումի լրացում», «հայցապահանջի փոփոխություն») և այլն): Հետևաբար բոլոր նման դեպքերում դատարանները պետք է հանգամանալից ուսումնասիրեն համապատասխան դատավարական փաստաթուղթը՝ պարզելու համար, թե արդյոք այն բովանդակում է հայցի առարկայի կամ հիմքի փոփոխություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիրը, հայցվորին իրավունք վերապահելով օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոխել հայցի հիմքը կամ առարկան, միևնույն ժամանակ իրավունք է վերապահել պատասխանողին՝ ստանալու փոփոխված հայցադիմումը և այն ստանալուց հետո փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու ընդհանուր կանոններով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված իրավակարգավորումն ինքնանպատակ չէ և կոչված է ապահովելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիական դատավարությունը կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքը՝ երաշխավորելով գործին մասնակցող անձանց իրավունքների լիարժեք իրականացումը:

Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրահանգումը բխում է նաև Կոնվենցիայով երաշխավորված՝ յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումներից: Մասնավորապես՝ Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (տե՛ս Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը, կետ 38):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով (տե՛ս Լիլիթ Գևորգյան ընդդեմ Սվեդրյանսա Միքայելյանի թիվ ԵԷԴ/1730/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ պատասխանողը չի տեղեկացվում հայցի հիմքի կամ առարկայի փոփոխության վերաբերյալ, որպես հետևանք գրկվում է փոփոխված հայցադիմումի վերաբերյալ պատասխան ներկայացնելու՝ օրենսդրորեն իրեն վերապահված դատավարական իրավունքն իրացնելու հնարավորությունից՝ հայտնվելով հայցվորի համեմատ էականորեն նվազ բարենպաստ վիճակում, ինչն իրավահավասարության և մրցակցության սկզբունքների խախտում է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վլադիմիր Սահակյանի և Հովսեփ Հովսեփյանի միջև 04.08.2008 թվականին կնքված փոխհամաձայնագրով կողմերը որոշել են Երևանի Արաբկիրի 21-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 12 բնակարանը վաճառել Տիգրան Քոչարյանին 110.000 ԱՄՆ դոլարով, որից Վլադիմիր Սահակյանը պարտավորվել է 60.000 ԱՄՆ դոլարը ստացակաճով տալ Հովսեփ Հովսեփյանին առավաճառքից հետո՝ գումարը ստանալու օրը, իսկ վերջինս իր ընտանիքի անդամների հետ միասին պարտավորվել է նոտարի կողմից սահմանված ժամկետում ազատել բնակարանը և հանձնել գնորդին:

Սույն գործով դիմելով Դատարան՝ Հովսեփ Հովսեփյանը պահանջել է Վլադիմիր Սահակյանից բռնագանձել 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ 10.03.2015 թվականի դատական նիստի ընթացքում ներկայացրել է «հայցապահանջի հստակեցում» վերտառությամբ փաստաթուղթ, որով պահանջել է «պարտավորեցնել պատասխանողին՝ կատարելու պարտավորագրով ստանձնած պարտավորությունը, այն է՝ վաճառել բնակարանը և ստացված գումարից 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար տալ հայցվորին»: Նույն օրը Դատարանն ավարտել է գործի քննությունը: Ո՛չ պատասխանող Վլադիմիր Սահակյանը, ո՛չ վերջինիս ներկայացուցիչը 10.03.2015 թվականի դատական նիստին ներկա չեն գտնվել, իսկ գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ հայցվորի կողմից 10.03.2015 թվականի «հայցադիմումի հստակեցում» վերտառությամբ դիմումը պատասխանող Վլադիմիր Սահակյանին ուղարկվել է, և վերջինս հնարավորություն է ունեցել դրա վերաբերյալ դիրքորոշում հայտնելու:

Դատարանը, փոփոխված հայցապահանջը բավարարելով, նշել է, որ Հովսեփ Հովսեփյանի հայցապահանջը չի ենթադրում գումարի բռնագանձում, այլ ենթադրում է պատասխանող կողմին պարտավորեցնել կատարելու 04.08.2008 թվականի փոխհամաձայնագրով ստանձնած պարտավորությունը, իսկ 04.08.2008 թվականի փոխհամաձայնագրի առարկան է հանդիսանում Երևանի Արաբկիրի 21-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 12 բնակարանը վաճառելը և 60.000 ԱՄՆ դոլարը Հովսեփ Հովսեփյանին տալու Վլադիմիր Սահակյանի պարտավորությունը:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, նշել է, որ Դատարան ներկայացված հայցադիմումի բովանդակության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայցվորի պահանջն ի սկզբանե վերաբերել է փոխհամաձայնագրերով սահմանված պարտավորությունները կատարել պարտադրելուն, ինչի վերջնական արդյունքը պետք է հանդիսանար պատասխանողի կողմից հայցվորին 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար տալը, իսկ պատասխանողն իր կողմից ներկայացված առարկություններում անդադարձել է վերոգրյալ փոխհամաձայնագրերով ստանձնած պարտավորությունների կատարման հարցին և հստակ արտահայտել է իր դիրքորոշումն այդ մասով, ուստի գտել է, որ սույն գործով տեղի է ունեցել հայցապահանջի հստակեցում, որը որևէ կերպ չի կարող նույնականացվել հայցի առարկայի փոփոխության հետ: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել բողոքաբերի փաստարկն առ այն, որ վերջինս գրկված է եղել այդ հայցապահանջի հստակեցման կապակցությամբ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը դրանք անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հովսեփ Հովսեփյանի 21.01.2014 թվականի հայցադիմումի պահանջն՝ ուղղված Վլադիմիր Սահակյանին, եղել է 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ բռնագանձելը, ինչն էլ տվյալ դեպքում հանդիսանում է սույն գործով հայցի առարկան: Ինչ վերաբերում է 04.08.2008 թվականի փոխհամաձայնագրին, ապա տվյալ դեպքում այն հանդիսանում է Հովսեփ Հովսեփյանի կողմից ներկայացված գումարի բռնագանձման հայցի փաստական հիմքը, որով պայմանավորվել է կողմերի միջև իրավա-

հարաբերությունների առաջացումը: Մինչդեռ 10.03.2015 թվականին հայցվորի կողմից Դատարանին ներկայացրած «հայցապահանջի հստակեցում» վերառությամբ փաստաթղթով հայցվորը պահանջել է պարտավորեցնել պատասխանողին՝ կատարելու պարտավորագրով ստանձնած պարտավորությունը՝ վաճառել բնակարանը և իրեն փոխանցել 60.000 ԱՄՆ դոլար: Այսինքն՝ 10.03.2015 թվականին հայցվորի կողմից Դատարանին «հայցապահանջի հստակեցում» վերառությամբ փաստաթղթով ներկայացված պահանջի առարկան ոչ թե գումարի բռնագանձումն է, այլ՝ պարտավորագրով ստանձնած պարտավորության կատարումը՝ նախ բնակարանի վաճառքը, որից հետո միայն վաճառքից ստացված գումարից 60.000 ԱՄՆ դոլարը հայցվորին փոխանցելը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հովսեփի Հովսեփյանին բնակարանը վաճառել պարտավորեցնելու պահանջը, ըստ էության, հայցի առարկայի փոփոխություն է, քանի որ գումարի բռնագանձման և պայմանագրով ստանձնած պարտավորության կատարման պահանջները միմյանցից տարբեր պահանջներ են: Մասնավորապես, եթե գումարի բռնագանձումը ենթադրում է դրամական միջոցների (գույքի) փոխանցում պարտապանից պահանջատիրոջը, ապա պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումը կարող է պայմանավորված չլինել գույքի փոխանցման հետ, անգամ այն դեպքում, երբ երկու պահանջների հիմքում ընկած է միևնույն փաստական հանգամանքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով 10.03.2015 թվականին փոխվել է հայցի առարկան, հետևաբար պատասխանող Վլադիմիր Սահակյանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>7</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով իրավունք ուներ տեղեկանալու հայցադիմումի փոփոխության մասին և դրա վերաբերյալ ներկայացնելու իր դիրքորոշումը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը հնարավորություն չի ընձեռել պատասխանողին փոփոխված հայցադիմումին ծանոթանալու և դրա վերաբերյալ պատասխան ներկայացնելու, այսինքն՝ իր գործողություններով պատասխանող Վլադիմիր Սահակյանին դրել է հայցվորի համեմատ էականորեն նվազ բարենպաստ վիճակում՝ զրկելով նրան օրենքով սահմանված կարգով իր դատավարական իրավունքից օգտվելու հնարավորությունից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենսդիրը հայցվորին վերապահել է հայցի հիմքը և առարկան փոփոխելու, հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու իրավունք՝ մինչև դատաքննության նշանակելը, մինչդեռ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Հովսեփի Հովսեփյանի ներկայացրած դիմումն ըստ էության հայցի առարկայի ու հիմքի փոփոխություն է, որը ներկայացվել է դատաքննության փուլում:

Վճռաբեկ դատարանի նշված եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ Դատարանը գործը քննել է դատաքննության նախապատրաստման փուլով, 14.07.2014 թվականի որոշմամբ գործը նշանակել է դատաքննության, իսկ 04.08.2014 թվականին գործի քննությունն ավարտել է և վճռի հրապարակման օր է նշանակել 15.08.2014 թվականը: Դատարանը 15.08.2014 թվականի որոշմամբ վերսկսել է գործի քննությունը՝ անհրաժեշտ համարելով շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով քաղաքացիական դատավարության փուլերին, նշել է, որ քաղաքացիական դատավարության յուրաքանչյուր փուլ ունի քաղաքացիական դատավարության ընդհանուր նպատակից բխող իր նպատակը, խնդիրները, դրանց լուծմանն ուղղված գործողությունների շրջանակը: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ կայացնելով գործը դատաքննության նշանակելու մասին որոշումը՝ դատարանը մի կողմից արձանագրում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի ավարտը, մյուս կողմից՝ անցումը դատաքննության փուլին, որի շրջանակներում էլ իրականացվում է գործի ըստ էության քննությունը և լուծումը: Մասնավորապես՝ դատավարության այս փուլում դատարանը պարզում է հայցվորի պահանջները, պատասխանողի առարկությունները, անմիջականորեն հետազոտում է ապացույցները, պարզում է գործի փաստական հանգամանքները, կոնկրետ իրավահարաբերության սահմաններում կողմերի իրական իրավունքները և պարտականությունները: Վերը շարադրվածով պայմանավորված՝ դատավարության այս փուլում գործին մասնակցող անձանց հիմնա-

կան իրավունքները հանգում են իրենց դիրքորոշումը ներկայացնելուն և ապացույցների հետազոտմանը մասնակցելուն (տե՛ս «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Մարինե Նազարյանի և մյուսների թիվ ԵՇԳ/0700/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի փաստական հանգամանքների պարզումն իրականացվում է դատաքննության փուլում, հետևաբար սույն գործով Դատարանը, անհրաժեշտ համարելով շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը, 15.08.2014 թվականի որոշմամբ վերսկսել է գործի դատաքննությունը, որի ընթացքում հայցվորն այլևս չունի հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու, հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու իրավունք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև բողոքաբերի փաստարկն առ այն, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանի կողմից հայցի առարկայի փոփոխությունը թույլատրվել է դատաքննության փուլում:

*2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պայմանադրությամբ*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220.4-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ պատասխանող Վլադիմիր Սահակյանի բնակության հասցեն Երևան քաղաքի Մարշալ Բաղդասարյան պողոտայի 25-րդ շենքի թիվ 9 բնակարանն է, որը գտնվում է Արաբկիր վարչական շրջանի տարածքում, հետևաբար հայցը ենթակա էր հարուցման Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Մինչդեռ սույն գործով հայցադիմումը ներկայացվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, վարույթ է ընդունվել և քննվել նշված դատարանի կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի պահանջները, հայցը վարույթ է ընդունել և գործը քննել ընդդատության կանոնների խախտմամբ, ինչը դատական ակտի անվերապահ բեկանման հիմք է, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով վերաքննիչ բողոքի համապատասխան փաստարկին, այն հիմնավոր չի համարել՝ պատճառաբանելով, որ Երևան քաղաքի Բաղդասարյան թիվ 25 շենքի 9-րդ բնակարանը սպասարկվում է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից՝ որևէ կերպ չհիմնավորելով իր այդ եզրահանգումը:

*Մտորադաս դատարանների կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի նման խախտման պայմաններում Վճռաբեկ դատարանը բողոքի՝ նյութաիրավական նորմերի խախտման վերաբերյալ հիմքին հնարավոր չի համարում անդրադառնալ:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը, այդ թվում նաև՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.02.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.09.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.02.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԳԴ4/0504/02/14**  
**2016 թ.**

Քաղաքացիական գործ թիվ **ԳԴ4/0504/02/14**

Նախագահող դատավոր՝ **Կ. Չիլինգարյան**  
Դատավորներ՝ **Մ. Հարթենյան**  
**Լ. Գրիգորյան**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**  
**Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ**  
**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**  
**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**  
**Մ. ԴՐՄԵՅԱՆԻ**  
**Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ**  
**Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ**  
**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**  
**Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ**  
**Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ**

2016 թվականի ապրիլի 22-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Արեգնազ Կարապետյանի վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.05.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ Արեգ-  
նազ Կարապետյանի դիմումի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստա-  
տելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Արեգնազ Կարապետյանը պահանջել է հաստատել իրավաբա-  
նական նշանակություն ունեցող այն փաստը, որ Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկու  
շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված թիվ 1286  
ամուսնության վկայականը պատկանում է 04.09.1926 թվականին ծնված Սերգեյ Հապետնա-  
կի Կարապետյանին:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝  
Ա. Գաբրիելյան) (այսուհետ՝ Դատարան) 16.09.2014 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
21.05.2015 թվականի որոշմամբ Արեգնազ Կարապետյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և  
Դատարանի 16.09.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արեգնազ Կարապետյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ և 219-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառարանել է հետևյալ փաստարկներով.*

Թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը չեն իրականացրել սույն գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, մասնավորապես, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ամուսնության վկայականի հայերեն թարգմանված տարբերակից բացի, ներկայացվել է նաև վկայականի բնօրինակը՝ ռուսերեն լեզվով, որը պատճենահանված է թարգմանության էջի հակառակ կողմում: Թարգմանությանն ու դրանում առկա վրիպակներին անդրադառնալիս Վերաքննիչ դատարանը պետք է այդ փաստաթուղթն ուսումնասիրեր բնօրինակ փաստաթղթի հետ համակցության մեջ և միայն դրանից հետո հանգեղ համապատասխան եզրակացության:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով Դատարանն անհիմն կերպով նախնական դատական նիստ չի հրավիրել և նախապատրաստական գործողություններ չի իրականացրել, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.05.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ դիմումը բավարարել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 05.08.2014 թվականին ներկայացված դիմումով Արեգնազ Կարապետյանը պահանջել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկո շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված թիվ 1286 ամուսնության վկայականը պատկանում է 04.09.1926 թվականին ծնված Մերգեյ Հապետնակի Կարապետյանին (**գ.թ. 2-3**):

2) Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Մարգարյանի կողմից վավերացված Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկո շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված 31.10.1946 թվականի թիվ 3236 ամուսնության վկայականի հայերեն թարգմանության պատճենի համաձայն՝ Մերգեյ Արմենակի Կարապետյանը և Արեգնազ Մակիչի Կիրակոսյանն ամուսնացել են, և ամուսնանալուց հետո կողմերին տրվել է Կիրակոսյան ազգանունը (**գ.թ. 5, 22**):

3) Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Մարգարյանի կողմից վավերացված Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկո շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված 31.10.1946 թվականի թիվ 3236 ամուսնության վկայականի հայերեն թարգմանության պատճենի դարձերեսին արտատպված է օտարալեզու փաստաթուղթ (**գ.թ. 5, 22**):

4) Սույն գործով նախնական դատական նիստ չի հրավիրվել (**հիմք՝ դատական նիստերի արձանագրություններ, գ.թ. 30-35**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սովյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ օտար լեզվով կազմված փաստաթղթերի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանություններն ապա-

ցուցման պարտականություն ունեցող դատավարության մասնակիցների կողմից դատարան ներկայացնելու անհրաժեշտության և այդ թարգմանությունները չներկայացնելու իրավաբանական հետևանքների, ինչպես նաև հատուկ վարույթի կարգով քննվող գործերով նախնական դատական նիստ հրավիրելու հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդիրներին.*

1. արդյո՞ք դատարանը պարտավոր է որպես սպացույց հետազոտել օդայր լեզվով կազմված գրավոր փաստաթղթերը,

2. արդյո՞ք դատարանն սպահովել է հարուկ վարույթի կարգով քննվող սույն քաղաքացիական գործի արդյունավետ քննությունը՝ դրա շրջանակներում նախնական դատական նիստ չհրավիրելու և դիմողի հետ սպացուցում պահանջող փաստերի շրջանակը չքննարկելու պայմաններում:

1. 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 12–րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է հայերեն: Նույն հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1) գրավոր և իրեղեն ապացույցներով, 2) փորձագետների եզրակացություններով, 3) վկաների ցուցմունքներով, 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները: Նույն հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ գրավոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 55–րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն (...) ստանալու փաստաթղթերից իրենց համար հասկանալի լեզվով կատարված թարգմանությունների տեքստերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավոր ապացույցները քաղաքացիական դատավարությունում մեծ ապացուցողական նշանակություն ունեցող և տարածված ապացուցման միջոցներ են, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54–րդ հոդվածում ամրագրված ձևակերպումից բխում է, որ որպես գրավոր ապացույց կարող է հանդես գալ ցանկացած նյութական կրիչ, որի վրա տառերի, թվերի, ծածկագրերի և այլ նշանների կիրառմամբ արտացոլված են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին որոշակի տեղեկություններ: Ընդ որում, գրավոր ապացույցներում ապացուցողական նշանակություն ունի այն տեղեկությունը (միտքը), որը տառերի, թվերի, ծածկագրերի և այլ նշանների միջոցով ար-

տացույցով և որոշակի նյութական կրիչի վրա և ընկալվում է դրա բովանդակության (տեքստի) ընթերցման միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վկայակոչված իրավանորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրն ուղղակիորեն չի կարգավորում օտար լեզվով կազմված փաստաթղթերը և դրանց թարգմանությունները դատարան ներկայացնելու կարգը և չթարգմանված ապացույցները դատարան ներկայացնելու դատավարական հետևանքները՝ սահմանափակվելով միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի այն իրավակարգավորմամբ, որ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ստանալու փաստաթղթերից իրենց համար հասկանալի լեզվով կատարված թարգմանությունների տեքստերը:

Հիմք ընդունելով 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածով ամրագրված այն դրույթը, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով ամրագրված դատավարության լեզվի սկզբունքը, ինչպես նաև քննարկվող հարցի շուրջ ձևավորված իրավակիրառ պրակտիկան՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օտար լեզվով կազմված փաստաթղթերի ներկայացման դեպքում ապացուցման պարտականություն ունեցող դատավարության մասնակիցների կողմից պետք է ներկայացվի նաև այդ փաստաթղթի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում գրավոր ապացույցը համարվում է պատշաճորեն թարգմանված, եթե թարգմանության իսկությունը վավերացված է նոտարական կարգով («Նոտարիատի մասին») ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ և 68-րդ հոդված): Օտարալեզու գրավոր ապացույցի հետ մեկտեղ դրանց պատշաճորեն հաստատված (թարգմանության իսկությունը նոտարական կարգով վավերացված) հայերեն թարգմանությունները չներկայացվելու դեպքում դատարանը պետք է օտար լեզվով կազմված փաստաթղթերը հանի հետազոտման ենթակա ապացույցների շարքից: Այլ կերպ ասած՝ դատարանը պարտավոր է օտար լեզվով կազմված գրավոր ապացույցը ճանաչել անթույլատրելի և հանել գործում առկա ապացույցների կազմից, եթե այդ ապացույցը ներկայացրած դատավարության մասնակիցը չի ներկայացրել նաև դրա պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>5</sup>-րդ հոդվածի համաձայն (...) գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով դատարանը ձեռնամուխ է լինում գործը դատաքննության նախապատրաստելուն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>6</sup>-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս դատավորը (...) դատական քննությունը արդյունավետ իրականացնելու համար կարող է հրավիրել նախնական դատական նիստ (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ և 10-րդ ենթակետերի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում, մասնավորապես, կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը (...), իրականացնում է գործի արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի համաձայն՝ դատարանները հատուկ վարույթի գործերը քննում են նույն օրենսգրքով նախատեսված դատավարության ընդհանուր կանոնների համաձայն, այն բացառություններով և լրացումներով, որոնք սահմանված են նույն օրենսգրքի 28-36 գլուխներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործը դատաքննության նախապատրաստելը՝ որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ, արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող դատավարական գործողությունների և դրանց հիման վրա առաջացող իրավահարաբերությունների ամբողջություն (համակարգ) է:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանձնահատկություններին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: Այսինքն՝ դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար, և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողությունները պետք է ուղղված լինեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավաբանական կիրառմանը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 49-րդ և 149<sup>օ</sup>-րդ հոդվածների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ ապացույցներ ներկայացնում են գործին մասնակցող անձինք, սակայն դատարանը գործի նախապատրաստական փուլում ապացուցման առարկան և բեռը բաշխելուց հետո կողմերին հնարավորություն է ընձեռում ներկայացնելու այն ապացույցները, որոնցով վերջիններս կարող են հիմնավորել իրենց պահանջները և առարկությունները: Հետևաբար գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական ինստիտուտի ամրագրումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ, և դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար (տե՛ս Երևանի քաղաքապետարանի «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի թիվ ԵԷԴ/1637/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նպատակը քաղաքացիական գործի արդյունավետ քննության ապահովումն է, որը ենթադրում է՝

- *ողջամիտ ժամկետում գործի քննության ապահովում,*
- *օրինական և հիմնավորված դատական ակտի կայացման ապահովում,*
- *դատական խնայողության ապահովում:*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշված նպատակի իրականացումը պայմանավորված է դատավարության այս փուլի խնդիրների ճիշտ իրականացմամբ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործող քաղաքացիադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հետևյալ հիմնական խնդիրները՝ *վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելը, դատավարության մասնակիցների կազմը ճշտելը և նրանց մասնակցությունն ապահովելը, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելը, ապացույցների բավարար հանակցության ձևավորումը (ապացույցների կենտրոնացումը) ապահովելը:*

Անդրադառնալով հատուկ վարույթի կարգով քննվող գործերով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի անցկացման հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հատուկ վարույթի կարգով քննվող գործերի դեպքում գործը դատաքննության նախապատրաստելու փուլին վերաբերող կանոնները գործում են սահմանափակ ծավալով՝ պայմանավորված վարույթի այս տեսակի առանձնահատկություններով: Այսպես, եթե քաղաքացիական դատավարության քննարկվող փուլը հավասարապես կիրառելի է և՛ հայցային, և՛ հատուկ վարույթի կարգով քննվող գործերի համար, ապա նույնը չի կարելի պնդել դատավարության այս փուլի խնդիրների և գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների կապակցությամբ: Հատուկ վարույթի կարգով քննվող գործերի շրջանակներում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի որոշ գործողություններ օբյեկտիվորեն չեն կարող իրականացվել (օրինակ՝ հայցի ապահովման, հակընդդեմ

ապահովման կիրառումը) կամ էլ իրականացվում են վարույթի այս տեսակի առանձնահատկությունների հաշվառմամբ (օրինակ՝ հայցի հիմքի և առարկայի պարզումը դրսևորում է դիմումի հիմքը և առարկան ճշգրտելով):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանցքային տարրը նախնական դատական նիստն է. այն գործը դատաքննության նախապատրաստելու այնպիսի իրավական կառուցակարգ է, որն ապահովում է դատավարության քննարկվող փուլի հիմնական խնդիրների լուծումը, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասի իրականացումը: Ընդ որում, նախնական դատական նիստի հրավիրմանը և դրա ընթացքում որոշակի դատավարական գործողությունների կատարմանը վերաբերող իրավակարգավորումները հատուկ վարույթի կարգով քննվող գործերի նկատմամբ կիրառելի են այնքանով, որքանով դրանք օբյեկտիվորեն հնարավոր է իրացնել վարույթի այդ տեսակով քննվող գործերի շրջանակներում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2–րդ կետի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը նախնական դատական նիստում իրականացվող գործողությունների շարքում նախատեսել է նաև **ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու** դատավարական գործողությունը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախնական դատական նիստի ընթացքում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու նախապատրաստական գործողությունը կարող է իրականացվել ինչպես հայցային, այնպես էլ հատուկ վարույթի կարգով քննվող քաղաքացիական գործերի դեպքում: Դատարանի կողմից կատարվող նշված գործողությունն ուղղված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելու և մինչև դատաքննությունը բոլոր հնարավոր ապացույցները կենտրոնացնելու՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրների լուծմանը: Հետևաբար նախնական դատական նիստում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ (հատուկ վարույթում՝ դիմողի հետ) քննարկելու դատավարական գործողության շրջանակներում դատարանը կարող է ուսումնասիրել դատավարության այս փուլում ներկայացված ապացույցները և անհրաժեշտության դեպքում պարզել դրանց վերաբերելիության ու թույլատրելիության հարցը:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը նախատեսում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում իրականացվող նախապատրաստական գործողությունների գերակշիռ մասն իրականացվում է բացառապես նախնական դատական նիստի ընթացքում՝ այդպիսի նիստ հրավիրելու հնարավորությունը թողնելով դատարանի հայեցողությանը: Փաստորեն, դատարանը նախնական դատական նիստ հրավիրելու հարցի լուծման կապակցությամբ օժտված է հայեցողական լիազորությամբ, քանի որ նույն օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 1–ին կետը սահմանում է, որ դատական քննությունն արդյունավետ իրականացնելու համար դատարանը կարող է հրավիրել նախնական դատական նիստ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանների կողմից հայեցողական լիազորությունների իրացման խնդրին՝ նշելով, որ պետիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներին վերապահված «հայեցողությունը» վերջիններիս կողմից թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման իրավական նորմերով կանխորոշված հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը:

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշման՝ «դատական հայեցողությունը» կոնկրետ իրավական վեճի լուծման գործընթացում օրենսդրությամբ կանխորոշված շրջանակներում դատարանի կողմից որոշակի դատավարական գործողության կատարման կամ այդպիսի գործողության կատարումից ձեռնպահ մնալու հնարավորությունն է: «Դատական հայեցողությունը», սակայն, չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ ազատություն: Իրավական պետության հիմքում ընկած իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որպեսզի երաշխավորվի կամայականության արգելքը, և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները: Ըստ այդմ, «դատական հայեցողության» սահմանները նախևառաջ պայմանավորված են գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներն ապահովելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև վիճելի իրավահարաբերության բնույթով և տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենսդրության առանձնահատկություններով (*տե՛ս օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և մյուսների թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նախնական դատական նիստ հրավիրելը թե՛ն դատարանի հայեցողական լիազորությունն է, այնուամենայնիվ, դատարանն իր այդ հայեցողական լիազորության իրականացման հարցը լուծելիս պարտավոր է առաջնորդվել մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացման և պաշտպանության անհրաժեշտությամբ: Բացի այդ, յուրաքանչյուր գործով նախնական դատական նիստ հրավիրելու հարցը լուծելիս դատարանը պարտավոր է հիմք ընդունել գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական փուլի՝ գործի արդյունավետ քննության ապահովման նպատակի իրականացման և դատավարության այս փուլի խնդիրների լուծման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովման հնարավորությունը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքները և առանձնահատկությունները:

#### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հատուկ վարույթի կարգով քննվող սույն քաղաքացիական գործը հարուցվել է Արեգնազ Կարապետյանի դիմումի հիման վրա, որով վերջինս պահանջել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկու շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված թիվ 1286 ամուսնության վկայականը պատկանում է 04.09.1926 թվականին ծնված Սերգեյ Հապետնակի Կարապետյանին:

Սույն գործով Դատարանը դիմումը մերժելիս պատճառաբանել է, որ Արեգնազ Կարապետյանի կողմից չի ներկայացվել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, որով կհաստատվի այն հանգամանքը, որ Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկու շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից 31.10.1946 թվականին տրված թիվ 1286 ամուսնության վկայականը պատկանում է 04.09.1926 թվականին ծնված Սերգեյ Հապետնակի Կարապետյանին:

Վերաքննիչ դատարանը, Արեգնազ Կարապետյանի վերաքննիչ բողոքը մերժելով և վերահաստատելով Դատարանի նշված դիրքորոշումը, գտել է, որ Արեգնազ Կարապետյանի կողմից չի ներկայացվել այն փաստաթուղթը, որի պատկանելիության փաստը հաստատելու պահանջով վերջինս դիմել է դատարան. դիմողը ներկայացրել է ոչ թե Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկու շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից Արեգնազ Մակիչի Կիրակոսյանի և Սերգեյ Հապետնակի Կարապետյանի ամուսնության վերաբերյալ տրված թիվ 1286 ամուսնության վկայականը, այլ 31.10.1946 թվականին տրված թիվ 3236 ամուսնության վկայականի հայերեն թարգմանության լուսապատճենը, որը հավաստում է Արեգնազ Մակիչի Կիրակոսյանի և Սերգեյ Ար-

մենակի Կարապետյանի ամուսնության փաստը: Հետևաբար դիմողի կողմից Դատարանին ներկայացված 31.10.1946 թվականին տրված թիվ 3236 ամուսնության վկայականը վերաբերելի չէ սույն գործին, իսկ Սերգեյ Հաբեթնյանի Կարապետյանի փաստաթղթերի լուսապատճեններն էլ գուրկ են ապացուցողական նշանակությունից՝ հաստատման ենթակա փաստի վերաբերյալ տեղեկություններ չպարունակելու պատճառով: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ սույն գործով Դատարանը նախնական դատական նիստ չի հրավիրել և չէր կարող խախտել նախնական դատական նիստում կատարվող գործողություններին վերաբերող դատավարական իրավունքի որևէ նորմ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվող իրավաբանական փաստի՝ Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկու շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված թիվ 1286 ամուսնության վկայականը 04.09.1926 թվականին ծնված Սերգեյ Հասպրնասկի Կարապետյանին պատկանելու հանգամանքի առկայությունը հիմնավորելու նպատակով Արեգնազ Կարապետյանը պետք է նշված ամուսնության վկայականը դատարան ներկայացնելը բնօրինակի կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Իսկ այն դեպքում, եթե Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկու շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված թիվ 1286 ամուսնության վկայականը կազմված է օտար լեզվով, ապա այն պետք է դատարան ներկայացվել այդ փաստաթղթի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանության հետ միասին:

Ըստ բողոք բերած անձի՝ Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկու շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված թիվ 1286 ամուսնության վկայականը կազմված է օտար լեզվով և օտար լեզվով էլ ներկայացվել է դատարան: Մինչդեռ Արեգնազ Կարապետյանը դատարան չի ներկայացրել Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկու շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված թիվ 1286 ամուսնության վկայականի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը: Դրա փոխարեն սույն գործի նյութերում առկա է Արեգնազ Կարապետյանի և Սերգեյ Արմենակի Կարապետյանի ամուսնության 31.10.1946 թվականի թիվ 3236 վկայականի՝ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից հաստատված հայերեն թարգմանության լուսապատճենը, որը չի կարող համարվել վերաբերելի ապացույց՝ Արեգնազ Կարապետյանի կողմից հայցվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար:

Փաստորեն, Արեգնազ Կարապետյանը, կրելով սույն գործով ապացուցման պարտականությունը, դատարանին չի ներկայացրել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի հաստատմանն ուղղված վերաբերելի ապացույց: Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ ստադաս դատարանները պարտավոր էին հետազոտել օտարալեզու գրավոր փաստաթուղթը, ապա Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, նշված փաստարկը գնահատում է անհիմն՝ օտարալեզու գրավոր փաստաթուղթը թույլատրելի ապացույց չլինելու պատճառաբանությամբ:

Մինչև սույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ սույն գործով Դատարանը չի հրավիրել նախնական դատական նիստ և չի իրականացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված՝ ապացուցում պահանջող փաստերի շրջանակը դիմողի հետ քննարկելու նախապատրաստական գործողությունը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը դատաքննության նախապատրաստելու փուլում նախնական դատական նիստ հրավիրելու և այդ նիստի շրջանակներում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը դիմողի հետ քննարկելու դեպքում հնարավոր կլիներ ապահովել սույն գործի արդյունավետ քննությունը հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ սույն գործով դիմող Արեգնազ Կարապետյանի դիմումը Դատարանի կողմից մերժվել է այն հիմքով, որ վերջինս չի ներ-



կայացրել որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց այն մասին, որ Ադրբեջանի Բաքու քաղաքի Դերժինսկու շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված թիվ 1286 ամուսնության վկայականը պատկանում է 04.09.1926 թվականին ծնված Սերգեյ Հապետնասկի Կարապետյանին: Դատարանը, մասնավորապես, իր վճռով ոչ վերաբերելի է ճանաչել Արեգնազ Կարապետյանի և Սերգեյ Արմենսկի Կարապետյանի ամուսնության 31.10.1946 թվականի թիվ 3236 վկայականի՝ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից հաստատված հայերեն թարգմանության լուսապատճենը, որը, որպես գրավոր ապացույց, ներկայացվել էր դիմողի կողմից:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով նախնական դատական նիստ հրավիրելու և դրա շրջանակներում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը դիմողի հետ քննարկելու դեպքում Դատարանը կարող էր պարզել Արեգնազ Կարապետյանի դիմումին կից ներկայացված ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության հարցը՝ կողմին հնարավորություն ընձեռելով ներկայացնելու իր կողմից հայցվող իրավաբանական փաստի հաստատման համար անհրաժեշտ և պատշաճ կարգով ձևակերպված ապացույցները: Այլ կերպ ասած՝ միայն նախնական դատական նիստ հրավիրելու և դրա շրջանակներում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը դիմողի հետ քննարկելու դեպքում Դատարանը կարող էր լուծել ապացույցների բավարար համակցության ձևավորումը (ապացույցների կենտրոնացումը) ապահովելու՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրը և հասնել դատավարության այդ փուլի վերջնական նպատակին՝ սույն քաղաքացիական գործի արդյունավետ քննության ապահովմանը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը պարտավոր էր իրացնել նախնական դատական նիստ հրավիրելու իր հայեցողական լիազորությունը, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր ապահովել Արեգնազ Կարապետյանի հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորված դատական պաշտպանությունը և սույն գործի արդյունավետ քննության համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը՝ հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

### ***5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմումը Դատարան ներկայացնելիս Արեգնազ Կարապետյանի կողմից վճարվել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը՝ 2.000 ՀՀ դրամը, իսկ Վերաքննիչ դատարանն իր 27.10.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» և Վճռաբեկ դատարանն իր 23.09.2015 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշումներով Արեգնազ Կարապետյանին ազատել են պետական տուրքի վճարումից, գտնում է, որ գործի քննության ներկա փուլում դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.05.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0930/02/13  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0930/02/13  
**2016 թ.**  
Ս. Նազարյան  
Կ. Հակոբյան  
Ա. Խառատյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի «Երևանի  
էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ  
քաղաքացիական դատարանի 09.07.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության  
ընդդեմ «ԱՐՄԻՆԿՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ հենաայուների օգտագործ-  
ման թիվ 73 պայմանագրով առաջացած տույժերի գումարը բռնագանձելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագան-  
ձել իր և Կազմակերպության միջև թիվ 73 պայմանագրով սահմանված տույժի գումարը՝  
4.263.100 ՀՀ դրամի չափով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) 18.10.2013 թվականի վճռով հայցը  
մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ն. Տավարացյան,  
Գ. Խաչատրյան, Ս. Միքայելյան) 27.02.2014 թվականի որոշմամբ Ընկերության վե-  
րաքննիչ բողոքը մերժվել է, և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների  
ընդհանուր իրավասության դատարանի 18.10.2013 թվականի վճռը թողնվել է օրինա-  
կան ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.07.2014 թվա-  
կանի որոշմամբ Ընկերության վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վերաքննիչ քաղա-  
քացիական դատարանի 27.02.2014 թվականի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկ-

վել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 02.03.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.07.2015 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 02.03.2015 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչը:

**2.1. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործի քննության ընթացքում Կազմակերպությունը երբևէ կասկած չի հայտնել Ընկերության կողմից ներկայացված տուժանքի գումարի հաշվարկի հիմնավորվածության վերաբերյալ: Ավելին, Ընկերությունը պարտքի չափի և մարման անհրաժեշտության մասին պատշաճ ձևով ծանուցել է Կազմակերպությանը, որը որևէ գործողություն չի ձեռնարկել իր պարտավորությունները կատարելու համար:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գործը քննել է և որոշում է կայացրել առանց հայցի հիմքում դրված փաստական հանգամանքների բազմակողմանի հետազոտման, իրական հանգամանքների և կողմերի դրսևորած փոխհարաբերությունների պարզման, կողմերի հետ ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և նրանց միջև ապացուցման պարտականության չքննարկման, ինչի պատճառով էլ գործի փաստերից բխող հետևությունները, օրենքի մեկնաբանությունը և կիրառումը սխալ են:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.07.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.03.2015 թվականի վճիռին:

**2.2. Վճռաբեկ բողոքի պարասահմանի փաստարկները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ Ընկերությունը չի ապացուցել իր պահանջի հիմքում ընկած փաստերի առկայությունը, քանի որ Ընկերության կողմից կազմված տույժերի հաշվարկը սույն գործով չի կարող համարվել թույլատրելի ապացույց: Հետևաբար Ընկերության հայցը չի կարող բավարարվել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Կազմակերպության միջև 13.03.2008 թվականին կնքված «Հենսպյունների օգտագործման իրավունքի» թիվ 05 պայմանագրի 2.4-րդ կետի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավորվել է մինչև տվյալ ամսվա հաջորդող ամսի 01-ը վճարել ծառայությունների գումարը: Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ վճարման ժամկետները խախտելու դեպքում Կազմակերպությունը պետք է վճարի տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 1%-ի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 17-18**):

2) 07.08.2009 թվականի համաձայնագրի համաձայն՝ Ընկերության և Կազմակերպության միջև 13.03.2008 թվականին կնքված «Հենասյունների օգտագործման իրավունքի» թիվ 05 պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է անորոշ ժամկետով (**հատոր 1-ին, գ.թ. 19**):

3) Ընկերության և Կազմակերպության միջև 01.09.2011 թվականին կնքված «Հենասյունների օգտագործման իրավունքի» հենասյունների օգտագործման թիվ 73 պայմանագրի 2.4-րդ կետի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավորվել է մինչև տվյալ ամսվա հաջորդող ամսի 3-ը վճարել ծառայությունների գումարը: Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ վճարման ժամկետները խախտելու դեպքում Կազմակերպությունը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 0,5%-ի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 15-16**):

4) Ընկերության կողմից կազմված՝ Կազմակերպության հետ կնքված պայմանագրով նախատեսված տույժերի հաշվարկի համաձայն՝ Կազմակերպության կողմից պայմանագրերով նախատեսված վարձավճարները 2010–2012 թվականների ընթացքում պարբերաբար ուշացնելու համար 01.01.2013 թվականի դրությամբ հաշվարկվել է 4.263.100 ՀՀ դրամ տույժ (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

#### **4. Վճարելի դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն վճարելի բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. կարո՞ղ է արդյոք վերաքննիչ դատարանը հայցի հիմքում դրված փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը չկատարելու անբարենպաստ հետևանքների կիրառման հիմքով հայցը մերժելու վերաբերյալ որոշում կայացնել այն պայմաններում, երբ ստորադաս դատարանը չի հրավիրել նախնական դատական նիստ, կողմերի հետ չի քննարկել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և նրանց միջև չի բաշխել ապացուցման պարտականությունը:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>5</sup>-րդ հոդվածի համաձայն՝ (...) գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով դատարանը ձեռնամուխ է լինում գործը դատաքննության նախապատրաստելուն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս դատավորը (...) դատական քննությունը արդյունավետ իրականացնելու համար կարող է հրավիրել նախնական դատական նիստ (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում, մասնավորապես, կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը, ինչպես նաև սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ քաղաքացիական դատավարությունում իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր նախկին որոշումներում անդրադառնալով քննարկվող հարցին, գտել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*տես Էդգար Մարկոսյանը և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական դատավարությունում ապացուցման պարտականությունը գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցման ուղղությամբ որոշակի դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությունն է, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և, ի վերջո, գործի ճիշտ լուծման համար չափազանց կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Հետևաբար օրենքով սահմանված որոշակի կանոնների պահպանմամբ գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելը, որը տեղի է ունենում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի շրջանակներում հրավիրված նախնական դատական նիստում, դատարանի կարևորագույն խնդիրներից մեկն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործը դատաքննության նախապատրաստելը՝ որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն և պարտադիր փուլ, արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող դատավարական գործողությունների և դրանց հիման վրա առաջացող իրավահարաբերությունների ամբողջություն (համակարգ) է:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանձնահատկություններին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործը դատաքննության նախապատրաստելու

ինստիտուտը նպատակադրված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: Այսինքն՝ դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար, և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողությունները պետք է ուղղված լինեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավադրման կիրառմանը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 49-րդ և 149<sup>8</sup>-րդ հոդվածների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ ապացույցներ ներկայացնում են գործին մասնակցող անձինք, սակայն դատարանը գործի նախապատրաստական փուլում ապացուցման առարկան և բեռը բաշխելուց հետո կողմերին հնարավորություն է ընձեռում ներկայացնելու այն ապացույցները, որոնցով վերջիններս կարող են հիմնավորել իրենց պահանջները և առարկությունները (*յրես Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի թիվ ԵԷԴ/1637/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վկայակոչված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նպատակը քաղաքացիական գործի արդյունավետ քննության ապահովումն է: Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշված նպատակի իրականացումը պայմանավորված է դատավարության այս փուլի խնդիրների ճիշտ իրականացմամբ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործող քաղաքացիադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հետևյալ հիմնական խնդիրները՝

- վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելը,
- դատավարության մասնակիցների կազմը ճշտելը և նրանց մասնակցությունն ապահովելը,
- գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելը,
- ապացույցների բավարար համակցության ձևավորումը (ապացույցների կենտրոնացումը) ապահովելը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանցքային տարրը նախնական դատական նիստն է. այն գործը դատաքննության նախապատրաստելու այնպիսի իրավական կառուցակարգ է, որն ապահովում է դատավարության քննարկվող փուլի հիմնական խնդիրների լուծումը, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասի իրականացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը նախնական դատական նիստում իրականացվող գործողությունների շարքում նախատեսել է նաև ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական գործողությունները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի կողմից կատարվող նշված գործողություններն ուղղված են գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելու և մինչև դատաքննությունը բոլոր հնարավոր ապացույցները կենտրոնացնելու՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրների լուծմանը: Հետևաբար նախնական դատական նիստում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու և

ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական գործողությունների շրջանակներում դատարանը կարող է ուսումնասիրել դատավարության այս փուլում ներկայացված ապացույցները և անհրաժեշտության դեպքում պարզել դրանց վերաբերելիության ու թույլատրելիության հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ դատարանը նախնական դատական նիստ հրավիրելու հարցի լուծման կապակցությամբ օժտված է հայեցողական լիազորությամբ, քանի որ նույն օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ դատական քննությունն արդյունավետ իրականացնելու համար դատարանը կարող է հրավիրել նախնական դատական նիստ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանների կողմից հայեցողական լիազորությունների իրացման խնդրին՝ նշելով, որ պետաիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներին վերապահված «հայեցողությունը» վերջիններիս կողմից թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման իրավական նորմերով կանխորոշված հնարավորությունն է: Հայեցողական լիազորություններով օժտված իշխանական մարմինները պարտավոր են թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշման՝ «դատական հայեցողությունը» կոնկրետ իրավական վեճի լուծման գործընթացում օրենսդրությամբ կանխորոշված շրջանակներում դատարանի կողմից որոշակի դատավարական գործողության կատարման կամ այդպիսի գործողության կատարումից ձեռնպահ մնալու հնարավորությունն է: «Դատական հայեցողությանը», սակայն, չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ ազատություն. այս հասկացության սահմանները նախևառաջ պայմանավորված են գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներն ապահովելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև վիճելի իրավահարաբերության բնույթով և տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենսդրության առանձնահատկություններով (*տե՛ս օրինակ, ՀՀ Ֆինանսների նախարարության Շենգակիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհար ձեռնարկարեր Գուրգեն Այվազյանի և մյուսների թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հաշվառմամբ վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>9</sup>-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նախնական դատական նիստ հրավիրելը թե՛ն դատարանի հայեցողական լիազորությունն է, այնուամենայնիվ, դատարանն իր այդ հայեցողական լիազորության իրականացման հարցը լուծելիս պարտավոր է առաջնորդվել մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացման և պաշտպանության անհրաժեշտությամբ: Բացի այդ, յուրաքանչյուր գործով նախնական դատական նիստ հրավիրելու հարցը լուծելիս դատարանը պարտավոր է հիմք ընդունել գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական փուլի՝ գործի արդյունավետ քննության ապահովման նպատակի իրականացման և դատավարության այս փուլի խնդիրների լուծման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովման հնարավորությունը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքները և առանձնահատկությունները:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործով Դատարանն Ընկերության հայցը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Ընկերության և Կազմակերպության միջև կնքված «Հենայունների օգտագործման իրավունքի» պայմանագրերով սահմանված ծառայությունների համար Կազմակերպությունը վճարել է ոչ պատշաճ կերպով, ինչի հետևանքով առաջացել է տույժի գումարը: Ըստ Դատարանի վճռի՝ Ընկերության կողմից Դատարան ներկայացված



հաշվարկից հստակ երևում է, թե Կազմակերպությունն ամսական որքան գումար պետք է վճարեր, որքան է վճարել, ինչքան են կազմում ուշացված օրերի քանակը և պարտքի չափը:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Կազմակերպության վերաքննիչ բողոքը և, բեկանելով ու փոփոխելով Դատարանի վճիռը, մերժել է Ընկերության հայցը: Վերաքննիչ դատարանն այդ որոշումը պատճառաբանել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից դատարան ներկայացված «Հաշվարկ» վերտառությամբ փաստաթուղթը չի կարող համարվել թույլատրելի ապացույց: Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով, որ Ընկերությունն է կրել իր կողմից վկայակոչված հանգամանքների ապացուցման բեռը և չի ապացուցել իր հայցապահանջի հիմքում ընկած փաստերը թույլատրելի ապացույցներով, գտել է, որ հայցը բավարարելու հիմքեր սույն գործով առկա չեն եղել: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ նշել է, որ «(...) *յուլյալ դեպքում Դատարանի կողմից սույն գործի քննությունն իրականացվել է առանց գործի նախապարտասրական փուլի, (...) Դատարանը (...) չի պարզել սույն գործով ապացուցման առարկան և չի բաշխել ապացուցման բեռը (...)*»:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով ստորադաս դատարանների վկայակոչված եզրահանգումներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն քաղաքացիական գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված՝ Ընկերության և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով նախատեսված վճարումները Կազմակերպության կողմից ժամանակին չկատարելու համար սահմանված տուժանքի գումարի բռնագանձման հայցապահանջի հիման վրա: Հետևաբար սույն գործով ապացուցման առարկան են կազմում հետևյալ փաստական հանգամանքները.

1) Ընկերության և Կազմակերպության միջև կնքված համապատասխան պայմանագրի առկայությունը,

2) Ընկերության և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով սահմանված վճարումների գծով Կազմակերպության ստանձնած պարտավորության կատարման կարգը և ժամկետը,

3) Ընկերության և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով սահմանված վճարումների գծով Կազմակերպության ստանձնած պարտավորության՝ տուժանքով ապահովված լինելը,

4) Ընկերության և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով սահմանված վճարումների ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանված տուժանքի չափը և հաշվարկման կարգը,

5) Կազմակերպության մոտ Ընկերության հետ կնքված պայմանագրով նախատեսված տուժանքի գծով չկատարված պարտավորության առկայությունը,

6) Կազմակերպության մոտ Ընկերության հետ կնքված պայմանագրով նախատեսված տուժանքի գծով չկատարված պարտավորության չափը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող նշված փաստերի ապացուցման բեռը կրում է հայցվոր Ընկերությունը, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնի համաձայն՝ քաղաքացիական գործերով դատարան դիմող սուբյեկտը պետք է ապացուցի իր պահանջների հիմքում ընկած փաստերը, որոնց հետ իրավունքի նորմերը կապում են որոշակի իրավահարաբերության առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հետևաբար սույն գործի նոր քննության վարույթի շրջանակներում Դատարանը պետք է վերագրյալ փաստերից յուրաքանչյուրի ապացուցման պարտականությունը դնեք հայցվոր Ընկերության վրա:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քաղաքացիադատավարական օրենսդրության համաձայն՝ ապացուցման բեռը դատարանի կողմից բաշխվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հրավիրվող նախնական դատական նիստի ընթացքում: Նախնական դատական նիստում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապա-

տասխան կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխելու՝ դատարանի կողմից կատարվող դատավարական գործողություններն ուղղված են գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելու և մինչև դատաքննությունը բոլոր հնարավոր ապացույցները կենտրոնացնելու՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրների լուծմանը և դրանով իսկ գործի արդյունավետ քննության ապահովմանը:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը գործի նոր քննության վարույթի շրջանակներում ընդհանրապես նախնական դատական նիստ չի հրավիրել և չի կատարել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխելու նախապատրաստական գործողությունները:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ անդրադարձել է Դատարանի կողմից սույն գործի նոր քննության ընթացքում նախնական դատական նիստ չհրավիրելու և անհրաժեշտ դատավարական գործողությունները չկատարելու հարցին՝ նշելով, որ սույն գործով Դատարանը չի պարզել ապացուցման առարկան և կողմերի միջև չի բաշխել ապացուցման բեռը: Այնուհետև Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ընկերությունը, կրելով իր կողմից վկայակոչված հանգամանքների ապացուցման բեռը, չի ապացուցել իր հայցապահանջի հիմքում ընկած փաստերը, ուստի նրա հայցը ենթակա է մերժման: Փաստորեն, Վերաքննիչ դատարանը մի կողմից արձանագրել է, որ սույն գործի նոր քննության ընթացքում Դատարանը նախնական դատական նիստ չի հրավիրել և գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները որոշելու, մինչև դատաքննությունը բոլոր հնարավոր ապացույցները կենտրոնացնելու համար անհրաժեշտ նախապատրաստական գործողություններ չի կատարել, իսկ մյուս կողմից մերժել է Ընկերության հայցը՝ վերջինիս հայցապահանջի հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման պարտականության չկատարման բացասական հետևանքների կիրառմամբ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անդրադարձել է նաև Ընկերության կողմից ներկայացված «Հաշվարկ» վերտառությամբ փաստաթղթին և գտել, որ նշված փաստաթուղթը չի կարող համարվել թույլատրելի ապացույց:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի նոր քննության վարույթի ընթացքում Դատարանի կողմից նախնական դատական նիստ չհրավիրելու, այդ նիստի շրջանակներում Ընկերության և Կազմակերպության հետ ապացուցում պահանջող փաստերի շրջանակը քննարկելու և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան նրանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական գործողությունները չկատարելու պայմաններում Վերաքննիչ դատարանը չէր կարող քննության ենթակա վեճի լուծումը պայմանավորել Ընկերության հայցապահանջի հիմքում ընկած փաստական հանգամանքների չապացուցման բացասական հետևանքներով:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ սույն գործի նոր քննության վարույթի շրջանակներում նախնական դատական նիստ հրավիրելու հայեցողական լիազորության իրականացման հարցը լուծելիս Դատարանը պարտավոր էր առաջնորդվել մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացման և պաշտպանության անհրաժեշտությամբ, ինչպես նաև հիմք ընդունել գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական փուլի՝ գործի արդյունավետ քննության ապահովման նպատակի իրականացման և դատավարության այս փուլի խնդիրների լուծման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովման հնարավորությունը՝ հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքները և առանձնահատկությունները:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործի նոր քննության վարույթում նախնական դատական նիստ հրավիրելու և դրա շրջանակներում Ընկերության և Կազմակերպության հետ ապացուցում պահանջող փաստերի շրջանակը քննարկելու և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան նրանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու դեպքում Դատարանը կարող էր պարզել ներկայացված ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության հարցը՝ կողմերին հնարա-

վորությունը ընձեռնելով ներկայացնելու իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերի հաստատման համար անհրաժեշտ և պատշաճ կարգով ձևակերպված ապացույցները: Այլ կերպ ասած՝ միայն նախնական դատական նիստ հրավիրելու և դրա շրջանակներում Ընկերության և Կազմակերպության հետ ապացուցում պահանջող փաստերի շրջանակը քննարկելու և նրանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու դեպքում Դատարանը կարող էր լուծել ապացույցների բավարար համակցության ձևավորումը (ապացույցների կենտրոնացումը) ապահովելու՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրը և հասնել դատավարության այդ փուլի վերջնական նպատակին՝ սույն քաղաքացիական գործի արդյունավետ քննության ապահովմանը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը պարտավոր էր իրացնել նախնական դատական նիստ հրավիրելու իր հայեցողական լիազորությունը, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր ապահովել Ընկերության և Կազմակերպության իրավունքների ու օրինական շահերի երաշխավորված դատական պաշտպանությունը և սույն գործի արդյունավետ քննության համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը՝ հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները: Վերաքննիչ դատարանը, պարզելով, որ սույն գործի նոր քննության ընթացքում Դատարանը չի հրավիրել նախնական դատական նիստ, կողմերի հետ չի քննարկել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և նրանց միջև չի բաշխել ապացուցման պարտականությունը, պարտավոր էր սույն գործն ուղարկել նոր քննության՝ նշված դատավարական գործողությունները կատարելու համար, քանի որ ապացուցման առարկան որոշելու և դրա մեջ ընդգրկվող յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելու դեպքում է միայն հնարավոր ապահովել սույն գործի ճիշտ լուծումը:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն գործով ապացուցման առարկան պարզելու, նախնական դատական նիստի շրջանակներում կողմերի հետ ապացուցում պահանջող փաստերի շրջանակը քննարկելու և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան նրանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական գործողությունները կատարելու, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցները գնահատելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

*Վճռաբեկ բողոքի պատրաստմանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պարճառարանություններով:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

##### ***5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը, այդ թվում նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.11.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.11.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0368/02/13**  
**2016 թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0368/02/13

Նախագահող դատավոր՝

Հ. Ենքյան

Դատավորներ՝

Գ. Կարախանյան

Ն. Բարսեղյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
- Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
- Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հակոբ Բաշմալյանի ներկայացուցիչ Վարազդատ Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.05.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Հակոբ Բաշմալյանի՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Հակոբ Բաշմալյանը պահանջել է իրեն ճանաչել Երևանի Գյուլբենկյան 36-րդ շենքի թիվ 31 բնակարանի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 07.05.2013 թվականի վճռով Հակոբ Բաշմալյանի դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.05.2015 թվականի որոշմամբ, որպես գործին մասնակից չդարձված անձ, Ռաֆֆի Նախչբեդյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է՝ Դատարանի 07.05.2013 թվականի վճիռը, և Հակոբ Բաշմալյանի դիմումը թողնվել է առանց քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հակոբ Բաշմալյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 35-րդ, 103-րդ, 131-րդ, 205-րդ, 207-րդ, 220-րդ և 220.1-րդ հոդվածները:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ դիմումի քննության ընթացքում իրավունքի մասին որևէ վեճ ծագած չի եղել, բացի այդ, ամերևույթ առկա չի եղել փոխադարձ կապ քննարկվող փաստի և Ռաֆֆի Նախշբերյանի իրավունքների միջև, իսկ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու փաստի հաստատումը չէր կարող որևէ կերպ ազդել Ռաֆֆի Նախշբերյանի իրավունքների ծավալի վրա:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Հակոբ Բաշմակյանի անունից դատարան դիմում ներկայացնելու պահին Ռաֆֆի Նախշբերյանը խնդրո առարկա անշարժ գույքի մասով չի ունեցել որևէ իրավունք և պարտականություն, հետևաբար վերջինիս իրավունքների և պարտականությունների մասով դատական ակտ չի կայացվել: Այսինքն՝ դիմումի քննության ժամանակ բացառվում էր վերջինիս դատավարական կարգավիճակ շնորհելու հնարավորությունը, հետևաբար՝ որպես երրորդ անձ ներգրավվելու հնարավորությունը:

Վերաքննիչ դատարանը չի գնահատել վերաքննիչ բողոքի պատասխանում նշված այն փաստարկը, որ Ռաֆֆի Նախշբերյանը տեղեկացվել է սույն քաղաքացիական գործի մասին թիվ ԵԿԴ/1986/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում, դեռ ավելին՝ սույն գործով մասնակցելով 29.07.2014 թվականի դատական նիստին՝ դիրքորոշում է հայտնել սույն գործով 07.05.2013 թվականին կայացված վճռի մասին և ծանոթացել գործի նյութերին: Հետևաբար վերջինս 07.05.2013 թվականի վճռի մասին տեղեկացված է եղել այդ պահին, սակայն վերաքննիչ բողոք բերել է եռամսյա ժամկետի խախտմամբ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը վարույթ է ընդունել նշված բողոքը՝ կողմի՝ «www.datalex.am» կայքից տեղեկացված լինելու փաստը հիմք ընդունելով՝ անտեսելով բողոքի պատասխանում այդ կապակցությամբ արտահայտված փաստարկները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.05.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 07.05.2013 թվականի վճռին:

## 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ռաֆֆի Նախշբերյանը, որպես գործին մասնակից չդարձված անձ, 10.02.2015 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որին կցել է նաև միջնորդություն՝ հայտնելով, որ բաց է թողել վճիռը մեկամսյա ժամկետում բողոքարկելու հնարավորությունը և խնդրել է հարգելի համարել բաց թողնված ժամկետը՝ վճռի բողոքարկման եռամսյա ժամկետի սկիզբը հաշվարկելով 19.12.2014 թվականից (**հատոր 2-րդ, գ.թ. 5-11**):

2. Վերաքննիչ դատարանը 17.02.2015 թվականի որոշմամբ բավարարել է վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու վերաբերյալ Ռաֆֆի Նախշբերյանի միջնորդությունը և վարույթ է ընդունել վերջինիս՝ որպես գործին մասնակից չդարձված անձի վերաքննիչ բողոքը (**հատոր 2-րդ, գ.թ. 22**):

3. Հակոբ Բաշմակյանի ներկայացուցիչ Վարազդատ Ասատրյանի կողմից 24.03.2015 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան, որում մասնավորապես նշվել է, որ Ռաֆֆի Նախշբերյանը սույն գործով 07.05.2013 թվականին կայացված վճռի մասին տեղեկացված է եղել թիվ ԵԿԴ/1986/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում և անգամ 29.07.2014 թվականի դատական նիստին դրա վերաբերյալ դիրքորոշում է հայտնել (**հատոր 2-րդ, գ.թ. 35-39**):

4. Թիվ ԵԿԴ/1986/02/13 քաղաքացիական գործով հայցադիմումի, հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը դատաքննության նախապատրաստելու մասին որոշման, դատական նիստի արձանագրման համառոտագրման համաձայն՝ Լուսինե Ազոյանի կողմից հայցադիմում է ներկայացվել ընդդեմ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի, Ռաֆֆի Զոհրապ Գարեգին Խաչիկ Նակշբերյանի և Սոնիա Նակշբերյանի՝ ժառանգության իրավունքի և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայագրերն անվավեր ճանաչելու պահանջների մասին, և 29.07.2014 թվականին նշանակված դատական նիստին մասնակցել է նաև Ռաֆֆի Նակշբերյանը (**հատոր 2-րդ, գ.թ. 40, 42, 48-49**):

5. Վերաքննիչ դատարանը որոշման «Վերաքննիչ բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները և պահանջը» մասում ներկայացրել է Հակոբ Բաշմակյանի՝ վերաքննիչ բողոքի վերաբերյալ դիրքորոշումը և հիմնավորումները, այդ թվում՝ Ռաֆֆի Նակշբերյանի կողմից սույն գործով վճռի մասին տեղեկացված լինելու հանգամանքը, սակայն որոշման պատճառաբանական մասում դրանց անդրադարձ չի կատարել (**հատոր 2-րդ, գ.թ. 78-81**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարունաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի, 220-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի միատեսակ կիրառության համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի, 220-րդ հոդվածի 5-րդ կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) արդյո՞ք գործին մասնակից չդարձված անձի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու եռամսյա ժամկետը պահպանված լինելու հարցը կարող է գնահատման արժանանալ նաև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո բողոքի քննության փուլում,

2) արդյո՞ք վերաքննիչ դատարանը պարտավոր է վերաքննիչ բողոքի պարասխանում ներկայացված դիրքորոշմանը և հիմնավորումներին անդրադառնալ նաև որոշման պարունաբանական մասում:

1) 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման դրույթ է բովանդակում նաև 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, ինչպես նաև 63-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրեն Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*յրեն Սուսաննա Արարապի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միհրանի Միրզոյանի թիվ ԱՐԱԳ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ կետի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, վերաքննիչ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի:



ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 5-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով և գնահատման առարկա դարձնելով այն դեպքերը, երբ դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, հիմք ընդունելով 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է իրավահավասարության ու մրցակցության սկզբունքների խախտում և բեկանել է դատական ակտը (*լրեն օրինակ, Գյումրու քաղաքապետարանն ընդդեմ Ֆելիքս Թորոսյանի թիվ 3-2343(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.11.2006 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ գործին մասնակից չդարձած անձանց դատավարական գործողություններն ուղղակիորեն պայմանավորված են նրանց դատավարական կարգավիճակով և ուղղված են վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորման կապակցությամբ թույլ տրված այնպիսի սխալի վերացմանը, որն իրավահարաբերության ոչ բոլոր մասնակիցներին գործին մասնակից դարձնելու արդյունք է: Հետևաբար գործին մասնակից չդարձված անձը, որի իրավունքների և օրինական շահերի վերաբերյալ կայացվել է դատական ակտ, պետք է իր խախտված իրավունքներն արդյունավետ միջոցներով վերականգնելու հնարավորություն ունենա (*լրեն «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊԸ-ն ընդդեմ «Հինգերորդ Ասյո» ՍՊԸ-ի թիվ ԵԱԴԿ/0199/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելելու, որ գործին մասնակից չդարձված անձանց համար երաշխավորված դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքը դրսևորվում է, մասնավորապես, դատական ակտը բողոքարկելու իրավունքով և դրա իրացման ընթացակարգով, որը կոչված է վերացնելու ստորադաս դատարանում թույլ տրված և բողոք բերող անձի իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական սխալը: Նշված իրավունքի իրացման համար օրենսդրի կողմից սահմանվել են պայմաններ, որոնց պահպանման դեպքում միայն կարող է ապահովվել այն: Մասնավորապես՝ որպեսզի գործին մասնակից չդարձված անձը հնարավորություն ունենա իրացնելու դատական պաշտպանության իր իրավունքը, պետք է ներկայացնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջներին բավարարող բողոք այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել կամ կարող էր իմանալ նման դատական ակտի կայացման մասին, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո չի անցել քսան տարի: Նման ժամկետի սահմանումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված՝ դատավարական գործողությունները նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում կատարելու անհրաժեշտությունից՝ հստակեցնելով անձի կողմից իր իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելու ընթացակարգը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածով սահմանվել է ոչ միայն վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման ժամկետ, այլ նաև վերաքննության կարգով դատական ակտի վերանայման քսանամյա վաղեմություն, որն ուղղակիորեն գործին մասնակից չդարձված անձին գրկում է վերաքննիչ բողոքարկման հնարավորությունից: Ընդ որում, ի տարբերություն հայցային վաղեմության ժամկետի, որը դատարանը կիրառում է միայն կողմի միջնորդությամբ, նշված եռամսյա ժամկետն ուղղակիորեն վերաքննությունը բացառող հանգամանք է և դատարանին պարտավորեցնում է սեփական նախաձեռնությամբ կիրառել այս նորմը՝ վերադարձնելով վերաքննիչ բողոքը: Վճռաբեկ դատարանը նաև հարկ է համարում ընդգծելու, որ ՀՀ քա-

դաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննությունն ընդհանրապես բացառող հանգամանք է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո քսան տարի անցնելը, որպիսի ժամկետը ենթակա չէ վերականգնման, փոխարենը՝ գործին մասնակից չդարձված անձի կողմից բողոք բերելու եռամսյա ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության դեպքում կարող է հարգելի ճանաչվել և վերականգնվել: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ «վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնում» եզրույթը նշանակում է ոչ թե վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետի հոսքի վերսկսում, այլ դատական ակտի բողոքարկման եղանակով անձի խախտված իրավունքների պաշտպանության տրամադրում: Այլ կերպ ասած, որպես կանոն, գործին մասնակից չդարձված անձը վերաքննիչ բողոք կարող է ներկայացնել դատական ակտի մասին տեղեկանալուց հետո եռամսյա ժամկետում, եթե դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո չի անցել քսան տարի: Այն դեպքերում, երբ քսան տարվա ժամկետը պահպանված է, սակայն եռամսյա ժամկետը խախտվել է օբյեկտիվ հիմքերով, օրենսդիրը հնարավորություն է տվել ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ դրանով իսկ ապահովելով դատական ակտի բողոքարկման եղանակով դատական պաշտպանության իրավունքի իրացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը յուրաքանչյուր դեպքում գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս, ի թիվս այլնի, պետք է պարզի, թե արդյոք բողոքը ներկայացվել է սահմանված եռամսյա ժամկետի ընթացքում: Ընդ որում, պայմանավորված վարույթ ընդունելու փուլի առանձնահատկություններով՝ վերաքննիչ դատարանն այդ հանգամանքը պարզում է՝ առերևույթ գնահատելով ժամկետը պահպանված լինելու հանգամանքը: Այլ կերպ ասած՝ եթե առերևույթ պահպանված է ժամկետը, վերաքննիչ դատարանը բողոքը պետք է վարույթ ընդունի, քանի որ դա է բխում անձի դատական պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքի էությունից: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արդեն իսկ վերաքննիչ բողոքի քննության փուլում վերաքննիչ բողոքարկման ժամկետները պահպանված լինելու հարցի վերաբերյալ կասկածներ ծագելու դեպքում վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հանգամանքով, և պարտավոր է անդրադառնալ ու գնահատման արժանացնել ժամկետը պահպանած լինելու փաստը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, վերաքննիչ դատարանը բողոքի քննության փուլում նույնպես կարող է գնահատման արժանացնել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու պայմանների պահպանված լինելը և եթե պարզի, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելիս պահպանված չեն եղել վերաքննիչ բողոք բերելու ժամկետները, ապա դեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով սահմանված լիազորություններով՝ վերաքննիչ բողոքը պետք է մերժի՝ հաշվի առնելով, որ ի սկզբանե առկա են եղել վերաքննությունը բացառող հանգամանքներ:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո գտնում է, որ նման կարգավորումը կիրառելի է նաև բողոք բերելու համար սահմանված բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելիս: Այսինքն՝ եթե վերաքննիչ դատարանը բողոքը վարույթ ընդունելիս գնահատել է միջնորդությունը և այն հարգելի համարելով՝ վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ, սակայն բողոքի քննության փուլում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են միջնորդության ոչ հիմնավոր լինելու վերաբերյալ, ապա վերաքննիչ դատարանն այս դեպքում ևս պետք է մերժի վերաքննիչ բողոքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործին մասնակից չդարձված անձի կողմից վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված եռամսյա ժամկետը պահպանված լինելը վերաքննիչ դատարանը բողոքը վարույթ ընդունելու փուլում պարզում է՝ առերևույթ գնահատելով ներկայացված ապացույցները, ինչը չի գրկում վերաքննիչ բողոքի քննության փուլում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը բացառող հանգամանքներն ի հայտ գալու դեպքում մերժել վերաքննիչ բողոքը՝ արձանագրելով վերաքննիչ բողոքարկումը բացառող հանգամանքի առկայությունը:

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձը, վերաքննիչ բողոքի պատճենը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավունք ունի պատասխան ուղարկելու վերաքննիչ դատարան և գործին մասնակցող այլ անձանց: Նույն հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի պատասխանում պետք է նշվեն վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ դիրքորոշումը և դրա հիմնավորումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բողոք բերած անձն իրավունք ունի ներկա գտնվելու վերաքննիչ դատարանի նիստին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում վերաքննիչ դատարանի նիստին կարող են կանչվել բողոք բերած անձը, ինչպես նաև գործին մասնակցող անձինք, որոնք պատշաճ ձևով ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի նույն օրենսգրքի 130.1-րդ հոդվածով սահմանված պահանջները: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որոշման նկարագրական մասը, ի թիվս այլնի, պետք է պարունակի վերաքննիչ բողոքի պատասխանի առկայության դեպքում պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որոշման պատճառաբանական մասը, ի թիվս այլնի, պետք է պարունակի եզրահանգում բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ: Նույն կետը նաև մասնավորեցնում է պարզաբանման ենթակա հարցերի շրջանակը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130.1-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում, մասնավորապես՝ *Մակերյն ընդդեմ Շվեյցարիայի* գործով, արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, **որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում** (*տես Մակերյն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի վճիռը, կետ 38*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պայմանավորված վերաքննության վարույթի և վերաքննիչ դատարանում գործի քննության առանձնահատկություններով՝ վերաքննիչ դատարանում անձն իր դատավարական իրավունքները, որպես կանոն, իրացնում է վերաքննիչ բողոքի կամ դրա պատասխանի ներկայացմամբ՝ հաշվի առնելով, որ բացատրություն տալու անհրաժեշտությունը որոշում է դատարանը: Ամեն դեպքում անձը չպետք է գրկվի իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից, որն էլ հիմնականում արվում է գրավոր եղանակով՝ վերաքննիչ բողոքում և դրա պատասխանում: Ընդ որում, վերաքննիչ բողոքի պատասխանն չներկայացնելը, ի տարբերություն հայցադիմումի պատասխան չներկայացնելու, չի կարող մեկնաբանվել ի վնաս այդ անձի: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան, ապա այն պատշաճ գնահատման պետք է արժանանա՝ հաշվի առնելով, որ դատավարական նման իրավունքի սահմանումն ինքնամատակ չէ: Վերաքննիչ բողոքի պատասխանը ոչ թե պետք է պարզապես շարադրվի վերաքննիչ դատարանի որոշման նկարագրական մասում, այլ նաև պատճառաբանական մասում վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնա բողոքի պատասխանի փաստարկներին՝ պարզելու համար վերաքննիչ բողոքի հիմքերի հիմնավորվածությունը վերաքննիչ բո-

դոքի պատասխանի փաստարկների համատեքստում: Այլ կերպ ասած՝ վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները պետք է հնարավորություն տան եզրակացություն անելու ոչ միայն վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների, այլ նաև բողոքի պատասխանում դրանց կապակցությամբ ներկայացված դիրքորոշումների և հիմնավորումների վերաբերյալ: Նման եզրահանգման համար հիմք է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130.1-րդ հոդվածով ամրագրված՝ դատական ակտի պատճառաբանվածության պահանջը, որը հնարավոր չէ լիարժեք ապահովել, եթե վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չարժանացնի վերաքննիչ բողոքի պատասխանի փաստարկները, որոնք կարող են վերաբերել ինչպես բողոքի հիմքերին և հիմնավորումներին, այնպես էլ վերաքննությունը բացառող հանգամանքներին:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը 17.02.2015 թվականի որոշմամբ բավարարել է վերաքննիչ բողոք բերելու մեկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու վերաբերյալ Ռաֆֆի Նախշբերյանի միջնորդությունը և վարույթ է ընդունել վերջինիս՝ որպես գործին մասնակից չդարձված անձի վերաքննիչ բողոքը: 24.03.2015 թվականին Հակոբ Բաշմակյանի ներկայացուցիչը ներկայացրել է վերաքննիչ բողոքի պատասխան, որում, ի թիվս այլնի, նշել է, որ Ռաֆֆի Նախշբերյանը բաց է թողել վերաքննիչ բողոք ներկայացնելու եռամսյա ժամկետը:

Վերաքննիչ դատարանը որոշման «Վերաքննիչ բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները և պահանջը» մասում ներկայացրել է պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները, այդ թվում նաև՝ սույն քաղաքացիական գործով 07.05.2013 թվականի վճռի մասին թիվ ԵԿԴ/1986/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում Ռաֆֆի Նախշբերյանի տեղեկանալու և 29.07.2014 թվականի դատական նիստին դրա վերաբերյալ դիրքորոշում հայտնելու մասին փաստարկները, սակայն որոշման պատճառաբանական մասում դրանք ընդհանրապես չի գնահատել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով հարգելի է համարել բողոքարկման ժամկետի բացթողումը և վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ, սակայն բուն վերաքննության փուլում կասկածներ են առաջացել վերաքննիչ բողոքարկման ժամկետները պահպանված լինելու և մասնավորապես՝ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու կամ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու հանգամանքներով և բուն վերաքննության փուլում վերոգրյալի կապակցությամբ կասկածներ առաջանալու դեպքում պարտավոր է անդրադառնալ դրանց հիմնավորվածությանը: Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանը բավարարվել է միայն որոշման նկարագրական մասում վերաքննիչ բողոքի պատասխանի փաստարկները շարադրելով՝ որոշման պատճառաբանական մասում որևէ կերպ գնահատման չարժանացնելով վերաքննիչ բողոքի պատասխանում բարձրացված՝ սույն գործով վերաքննությունը բացառող հանգամանքների առկայությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը, որոշման նկարագրական մասում ուղղակիորեն մեջբերելով բողոքի պատասխանի փաստարկները և չգնահատելով դրանք, չի փարատել բողոքի քննության ընթացքում ի հայտ եկած և վերաքննությունը բացառող հանգամանքների առկայության վերաբերյալ կասկածները, որի արդյունքում էլ սահմանափակել է Հակոբ Բաշմակյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

*Վերաքննիչ դատարանի կողմից վերը նշված հիմքով դատավարական իրավունքի խախտում թույլ տալու պայմաններում Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ վճռաբեկ բողոքի մյուս հիմնավորումներին:*

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խեղամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարել բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճարել բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով այն, որ վճարել բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճարել դատարանը գտնում է, որ այդ հարցը, այդ թվում նաև՝ ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 07.10.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցը, ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.05.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 07.10.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0039/04/14  
2016 թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0039/04/14  
Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան  
Դատավորներ՝ Ս. Միքայելյան  
Ն. Բարսեղյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅՄԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին դռնբաց դատական նիստում, քննելով «Յունիքանկ» ՓԲԸ-ի (ներկայումս՝ «Յունիքանկ» ԲԲԸ) (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Նուրիջան Կիրակոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.12.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի դիմումի ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատարարական նախապարունությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ: ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Խ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 29.10.2014 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.12.2014 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 29.10.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնարանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հերկյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ գնահատում չի իրականացրել: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ընկերությանը սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելիս Բանկը որպես անվիճելի վճարային պարտավորության երկու ինքնուրույն հիմքեր ներկայացրել է թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 10.09.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, ինչպես նաև Բանկի և Ընկերության միջև 30.07.2012 թվականին կնքված «21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիրը, որից հստակ երևում է, որ առկա է վճարային պարտավորություն:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ 30.07.2012 թվականի համաձայնագիրը ևս հանդիսանում է անվիճելի վճարային պարտավորության լիարժեք և ինքնուրույն իրավական նշանակություն ունեցող հիմք: Այսպես, այն կնքվել է 30.07.2012 թվականին, իսկ դրանով պարտավորության կատարման վերջնաժամկետ է սահմանվել 23.07.2018 թվականը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նշված համաձայնագրին, այն քննության առարկա չի դարձրել և չի պատճառաբանել, թե ինչու նշված ապացույցով չի հաստատվում պարտավորության անվիճելիությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.12.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 29.10.2014 թվականի վճիռին:

### **2.1. Վճարել բողոքի պարտախանի հիմնավորումները**

Բանկի կողմից վարկային պարտավորության վաղաժամկետ կատարման պահանջի սուբյեկտիվ իրավունքը ծագել է թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով 10.09.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճիռից, սակայն դիմումատուի սուբյեկտիվ իրավունքի իրականացման համար օրենքով նախատեսված ժամկետի ավարտով ավարտվել է նաև այդ իրավունքների իրականացման իրավական հնարավորությունը, որը հանգեցրել է տվյալ սուբյեկտիվ իրավունքի դադարման: Այսինքն՝ համապարտ պարտապաններից գումար պահանջելու և հետագայում նաև սնանկ ճանաչելու Բանկի իրավունքը ծագել է թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով 08.08.2012 թվականին հրապարակված և 10.09.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով, և նշված դատական ակտն օրենքով սահմանված մեկ տարվա ընթացքում կատարման չներկայացնելով, ինչպես նաև 30.04.2014 թվականին թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ Բանկի միջնորդությունը՝ կատարողական թերթը հարկադիր կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու և վերականգնելու վերաբերյալ, մերժելու պայմաններում Բանկը զրկվել է իր իրավունքի իրականացման հնարավորությունից: Հետևաբար օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմքով անվիճելի վճարային պարտավորությունը բացակայում է, ուստի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3–րդ հոդվածի 2–րդ մասի ուժով բացակայում է Ընկերությանը սնանկ ճանաչելու իրավական հիմքը:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Բանկի և Ընկերության միջև 30.07.2012 թվականին կնքված «21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագրի համաձայն՝ վարկի առկա մնացորդ կազմող 84.137,72 ԱՄՆ դոլարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ ենթակա են մարման համաձայնագրով սահմանված գրաֆիկով՝ մինչև 23.07.2018 թվականը: Նույն համաձայնագրի 2–րդ կետի համաձայն՝ վարկի առկա մնացորդի նկատմամբ սահմանվում է տարեկան 14% տոկոսադրույք: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից և կազմել է 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրի անբաժանելի մասը (**հատոր 1–ին, գ.թ. 34–36**):

2. Ըստ Բանկի հայցի ընդդեմ Ընկերության, «Ղազումյանի Գուգար» ՍՊԸ–ի, Ալբերտ Շամիրյանի և Կարինե Օհանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08.08.2012 թվականին կայացված և 10.09.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը: Նշված վճռով հաստատված հաշտության համաձայնության 4–րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է կատարել 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրով վարկի առկա մնացորդ կազմող 84.137,72 ԱՄՆ դոլարի և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների մարում՝ համաձայն ներկայացված գրաֆիկի՝ յուրաքանչյուր ամսվա 21–ին, մինչև 21.07.2018 թվականը: Հաշտության համաձայնության 8–րդ կետի համաձայն՝ Ընկերության կողմից համաձայնության 4–րդ կետով սահմանված ժամանակացույցով, ինչպես նաև վարկի և տոկոսագումարների ամսական մարման ժամկետներից որևիցե մեկը 5 բանկային օրվանից ավելի խախտելը Բանկի համար հիմք կհանդիսանա Ընկերությունից պահանջելու տվյալ պահին առկա պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում: Հաշտության համաձայնության 10–րդ կետի համաձայն՝ Ընկերության կողմից հաշտության համաձայնության 4–րդ կետում նախատեսված պարտավորություններից որևէ մեկը խախտելու հանգամանքը հիմք է նույն հաշտության համաձայնության հիման վրա տրված կատարողական թերթը ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու համար (**հատոր 1–ին, գ.թ. 93–96**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտով պարտապան հանդիսացող անձի մոտ անվիճելի վճարային պարտավորության առկայությունը հաստատված համարելու և պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավական կառուցակարգի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1. *արդյո՞ք կողմերի միջև կնքված գրավոր համաձայնագիրը կարող է շարունակել համարվել պարտավորության կատարման ինքնուրույն հիմք այն պարագայում, երբ միևնույն պարտավորության չափի և կատարման պայմանների վերաբերյալ կողմերի միջև դատական վեճի շրջանակներում կնքվել է հաշտության համաձայնություն, որը հասարակվել է դատարանի կողմից,*

2. *պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտը կարող է արդյո՞ք հիմք հանդիսանալ անձի մոտ անվիճելի վճարային պարտավորության առկայությունը հասարակելու համար, եթե այդ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացել է, և առկա չէ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին համապարասխան դատարանի որոշումը,*

3. *արդյո՞ք պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը ենթակա է վերականգնման միայն ժամկետը բաց թողնելու պարճառը հարգելի ճանաչելու դեպքում, եթե չի լրացել այդ դատական ակտով պարբերա-*



կան վճարումների համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո մեկ փարվա ժամկետը:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը (...):

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը (...):

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ:

Համանման բովանդակությամբ իրավադրոյթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասով, 60-րդ հոդվածի 1-ին մասով, 61-րդ հոդվածի 1-ին մասով, 63-րդ հոդվածի 1-ին մասով և 74-րդ հոդվածով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ պահանջի հաշվանցը) (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (...) դատական ակտերի (...) հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին անգամ կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ (...) եթե լրացել է [կատարողական թերթը] կատարման ներկայացնելու ժամկետը, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը, (...) հարկադիր կատարողը կատարողական թերթը վերահարձնում է պահանջատիրոջը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ քաղաքացի-պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել: Պահանջատերը բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը ներկայացնում է կատարողական թերթ տված դատարան: Դատարանը դիմումը քննում է այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում: Պահանջատերը և պարտապանը պատշաճ ձևով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ դիմումի քննության համար: Դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի վերոգրյալ իրավանդումների վերլուծությանը և արձանագրել է, որ հարկադրված սնանկության դեպքում վճարային պարտավորության անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առնվազն 60-օրյա ժամկետով կետանցը, և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին բավարար՝ անձին սնանկ ճանաչելու համար (տե՛ս «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Գևորգ Հարոյանի թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ վճարային պարտավորության անվիճելիությունն առկա է այն դեպքում, երբ պարտապանը չի առարկում սնանկ ճանաչելու պահանջի դեմ: Այդուհանդերձ, օրենքի վերոնշյալ դրույթը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ պարտապանը վիճարկում է պարտավորության անվիճելի լինելու փաստը, այլ կերպ ասած՝ առարկում է իրեն սնանկ ճանաչելու պահանջի դեմ, և այդ առարկությունները վերաբերում է վճարային պարտավորությանը (այլ ոչ թե կետանցին կամ կետանցի շարունակվելուն): Նման պայմաններում վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «անվիճելի վճարային պարտավորություն» եզրույթի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է այն դիտարկել նույն կետի «ա» և «բ» ենթակետերի համատեքստում: Մասնավորապես՝ վկայակոչված ենթակետերով որպես վճարային պարտավորության անվիճելիության երկու տարբեր, ինքնուրույն հիմքեր դիտարկվում են՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը (դատավճիռը) և գրավոր գործարքը՝ հաշվանցի հնարավորության բացակայության պայմանով:

Վերը նշված իրավական վերլուծությունները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն քաղաքացիական գործը հարուցվել է Բանկի դիմումի հիման վրա, որով վերջինս պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ՝ Ընկերության մոտ առկա վճարային պարտավորության անվիճելիությունը հիմնավորելով ստորև նշված ապացույցներով.

1) Բանկի և Ընկերության միջև 30.07.2012 թվականին կնքված «21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիրը,

2) թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.08.2012 թվականի վճիռը, որն օրինական ուժի մեջ է մտել 10.09.2012 թվականին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Բանկի և Ընկերության միջև 30.07.2012 թվականին կնքված «21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագրով կողմերը որոշել են, որ վարկի առկա մնացորդ կազմող 84.137,72 ԱՄՆ դոլարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ ենթակա են մարման համաձայնագրով սահմանված գրաֆիկով՝ յուրաքանչյուր ամսվա 23-ին, մինչև 23.07.2018 թվականը: Նշված համաձայնագրով որոշակի փոփոխության է ենթարկվել կողմերի միջև 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագիրը, մասնավորապես՝ սահմանվել է վարկի առկա մնացորդը՝ 84.137,72 ԱՄՆ դոլար, ինչպես նաև դրա մարման ժամկետները և կարգը: Այդ համաձայնագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից և կազմել է 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրի անբաժանելի մասը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կողմերի միջև 30.07.2012 թվականին կնքված համաձայնագիրը, հանդիսանալով 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրի անբաժանելի մասը, չի կարող դիտարկվել որպես կողմերի միջև առկա պարտավորության ինքնուրույն հիմք:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08.08.2012 թվականին կայացված և 10.09.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, որով Ընկերությունը պարտավորվել է 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրով վարկի առկա մնացորդ կազմող 84.137,72 ԱՄՆ դոլարի և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների մարում՝ համաձայն ներկայացված գրաֆիկի՝ յուրաքանչյուր ամսվա 21-ին, մինչև 21.07.2018 թվականը: Այսինքն՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված վճռով հաստատված հաշտության համաձայնությունը կազմելիս կողմերը 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագիրը հիմք են ընդունել դրանում 30.07.2012 թվականին կնքված համաձայնագրով կատարված փոփոխություններով հանդերձ, մասնավորապես՝ նշված հաշտության համաձայնությամբ ևս վարկի առկա մնացորդը կազմում է 84.137,72 ԱՄՆ դոլար, իսկ մարման վերջնաժամկետ է սահմանվել 2018 թվականի հուլիս ամիսը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշտության համաձայնությունը կողմերի միջև փոխզիջման արդյունքում ձեռքբերված պայմանավորվածություն է, որը հաստատվում է դատարանի կողմից: Հաշտության համաձայնություն կնքելը տնօրինչական դատավարական գործողություն է, որի միջոցով կողմերը տնօրինում են ինչպես իրենց նյութական, այնպես էլ դատավարական իրավունքները: Մասնավորապես, կնքելով նման համաձայնություն՝ կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ որոշակի փոփոխության են ենթարկում վիճելի իրավահարաբերությունը՝ այդ իրավահարաբերության շրջանակներում ստանձնելով նոր պարտավորություններ կամ վիճելի իրավահարաբերությունը փոխարինելով մեկ այլ իրավահարաբերությամբ կամ ուղղակիորեն դադարեցնելով այն: Վերը նշվածում դրսևորվում է հաշտության համաձայնության նյութաիրավական (քաղաքացիաիրավական) կողմը: Հաշտության համաձայնությամբ կողմերը միաժամանակ տնօրինում են իրենց դատավարական իրավունքները, ինչի արդյունքում դատավարության հետագա ընթացքը գործի վարույթի կարճամաբ դադարում է: Նշվածում էլ դրսևորվում է հաշտության համաձայնության դատավարական կողմը: Ընդ որում, հաշտության համաձայնությունը հաստատող դատարանի վճիռն իր դատավարական նշանակությամբ և հետևանքներով հավասարեցված է գործն ըստ էության լուծող վճիռին, որի կամավոր չկատարումը հանգեցնում է դատական ակտի հարկադիր կատարման:

Այսպիսով, թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 10.09.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է Բանկի և Ընկերության միջև կնքված հաշտության համաձայնությունը, հանդիսանում է Ընկերության մոտ վճարային պարտավորության անվիճելիության միակ հիմքը, քանի որ այդ հաշտության համաձայնությամբ Բանկը և Ընկերությունը 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրով (30.07.2012 թվականին կնքված համաձայնագրով կատարված փոփոխություններով) նախատեսված պարտավորական հարաբերությունները փոխարինել են նոր իրավահարաբերությամբ: Նշված հաշտության համաձայնությամբ սահ-

մանվել է Բանկի կողմից Հնկերությանը տրամադրված վարկի պարտքի առկա մնացորդը, այդ գումարի մարման կարգը՝ պարբերաբար վճարման եղանակով, ինչպես նաև պարտքի մարման վերջնաժամկետը՝ 21.07.2018 թվականը: Հետևաբար վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ անվիճելի պարտավորության առկայությունը հաստատվում է նաև 30.07.2012 թվականին կնքված «21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագրով, անհիմն է:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իրավակիրառ պրակտիկան ընթացել է այն ուղղությամբ, որ միանվագ վճարային պարտավորություն նախատեսող օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տրված կատարողական թերթն օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետում կատարման չներկայացնելով՝ պարտատերը գրկվում է այդ վճռով սահմանված գումարը պահանջելու և հետագայում նաև այդ վճռով նախատեսված անվիճելի վճարային պարտավորության առկայության հիմքով պարտավարման մասնակցության իր իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն ազատվում է նույն վճռով սահմանված պարտավորությունից (*լրեն «Արդշինքանկ» ԲԲԸ–ն ընդդեմ «Արոր–Բագրայր» արտադրական կոոպերատիվի թիվ ՀՔԴ/0024/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշումը*, «Արդշինքանկ» ԲԲԸ լուծարվող բանկն ընդդեմ Սպարտակ Երիցյանի թիվ ԵԱԲԴ/0018/04/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճարային պարտավորության անվիճելիության հաստատման համար կարող է հիմք հանդիսանալ միայն վճարային պարտավորության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած և կատարելիության հատկանիշը պահպանած վճիռը: Այլ կերպ ասած՝ վճարային պարտավորության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը (վճիռը) «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին կետի «ա» ենթակետի իմաստով կարող է հիմք հանդիսանալ վճարային պարտավորության անվիճելիությունը հաստատված համարելու և դրա հիման վրա անձին սնանկ ճանաչելու համար միայն այն դեպքում, եթե չի լրացել այդ դատական ակտի (վճռի) հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը, կամ կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացել է, սակայն առկա է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին համապատասխան դատարանի որոշումը: Հակառակ պարագայում, այսինքն՝ այն դեպքում, երբ լրացել է վճարային պարտավորության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը, և առկա չէ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին համապատասխան դատարանի որոշումը, ապա այդ վճիռը չի կարող հիմք հանդիսանալ վճարային պարտավորության անվիճելիությունը հաստատված համարելու և դրա հիման վրա անձին սնանկ ճանաչելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ՀՀ Սահմանադրությունը և Կոնվենցիան ուղղակիորեն չեն ամրագրում դատական ակտերի կատարման իրավունքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ, սակայն դատական ակտերի կատարումը դիտարկվում է որպես արդար դատաքննության բաղկացուցիչ տարր. այն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունավետ կենսագործման համար, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը չի կարող երաշխավորված իրացվել, եթե վերջինիս խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական դատական ակտը մնում է անկատար:

ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՍԴՈ–1115 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառնություններ իրա-

կանացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարրը և «իր գործի հրապարակային քննության» որպես դատավարական գործընթացի փուլ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված մոտեցումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) ձևավորած նախադեպային իրավունքի հետ, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնան անկատար: Ըստ ՄԻԵԴ-ի՝ դժվար կլինի պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցնեք իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով (*յրեն HORNSBY v. GREECE գործով ՄԻԵԴ-ի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետ, MOSTACCIUOLO v. ITALY (No. 2) գործով ՄԻԵԴ-ի 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետ, RAYLYAN v. RUSSIA գործով ՄԻԵԴ-ի 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ կետ, Խաչատրյանսն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ի 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կետ*):

Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարման վերաբերյալ ՄԻԵԴ-ի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերվող հայեցակարգային մոտեցման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է. այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի և չի հասնի իր նպատակների, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն սուբյեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ չնայած Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ուղղակիորեն չի ամրագրում դատական ակտի կատարման իրավունքը, այնուամենայնիվ, այն համարվում է արդար դատաքննության իրավունքի անօտարելի տարրը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ դատական ակտերի հարկադիր կատարման իրավահարաբերությունների շրջանակներում պետությունը պարտավոր է ապահովել ոչ միայն պահանջատիրոջ դատական պաշտպանության և արդար դատաքննության, այլ նաև սեփականության իրավունքը: Այսպես, ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*յրեն BURDOV v. RUSSIA գործով ՄԻԵԴ-ի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետ, RAYLYAN v. RUSSIA գործով ՄԻԵԴ-ի 15.02.2007 թվականի վճիռը, 36-րդ կետ*):

Փաստորեն, ՄԻԵԴ-ը մի շարք վճիռներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պահանջի իրավունքը, եթե այն բավականաչափ հիմնավորված է կատարելի լինելու համար, առավել ևս, եթե բխում է դատական ակտից, համարվում է սեփականություն Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով (*յրեն՝ նաև, STRAN GREEK REFINERIES AND STRATIS ANDREADIS v. GREECE գործով ՄԻԵԴ-ի 09.12.1994 թվականի վճիռը, 59-62-րդ կետեր, VASILOPOULOU v. GREECE գործով ՄԻԵԴ-ի 21.03.2002 թվականի վճիռը, 22-25-րդ կետեր, TIMOFEYEV v. RUSSIA գործով ՄԻԵԴ-ի 23.10.2003 թվականի վճիռը, 45-րդ կետ, BURDOV v. RUSSIA (No. 2) գործով ՄԻԵԴ-ի 15.01.2009 թվականի վճիռը, 87-րդ կետ*): Մասնավորապես՝ Խաչատրյանսն ընդդեմ Հայաստանի գործով վճռում ՄԻԵԴ-ը նշել է, որ դիմումատուի օգտին կայացրած վճիռի կատարմանը հասնելու անհնարիությունը բերում է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին նախադասությամբ սահմանված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի միջամտության (*յրեն Խաչատրյանսն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ի 01.12.2009 թվականի վճիռը, 68-րդ կետ*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՄԻԵԴ-ի դիրքորոշումը միանշանակ է այն հարցում, որ դատական ակտով սահմանված պահանջի իրավունքը պետության կողմից ենթակա է պատշաճ պաշտպանության ոչ միայն դատական պաշտպանության

և արդար դատաբնության իրավունքների, այլ նաև սեփականության իրավունքի ապահովման շրջանակներում: Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը պարտավոր է պատշաճ կերպով կարգավորել դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտի հասարակական հարաբերությունները և ստեղծել կայուն իրավական հիմք դատական ակտերի պարտադիրության և կատարելիության սահմանադրական և կոնվենցիոն սկզբունքների իրացումն ապահովելու համար:

Անդրադառնալով դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան *(տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժինն ընդդեմ Անուշ Իսախրյանի թիվ ՎԴ6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքը սահմանում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը:

ՀՀ վճռաբեկ դատարանի մեկ այլ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված *(տե՛ս ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի թիվ ՎԴ4/0104/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետները՝ ամրագրելով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կարող է կատարման ներկայացվել տվյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի հիմքով հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, եթե բացակայում է կատարողական թերթ տված դատարանի որոշումը բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատական ակտից բխող պահանջի իրավունքը սահմանափակված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ կատարողական թերթը մեկ տարվա ընթացքում կատարման ներկայացնելու ժամկետով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ հարկադիր կատարման ենթակա վերջնական դատական ակտի կատարումը պետք է տեղի ունենա դատական ակտի ուժ մեջ մտնելու օրվանից մեկ տարի հետո, կամ պարտապանի կողմից դատական ակտի կանավոր կատարումը առանց կա-

տարողական վարույթի հարուցման ընդհատվում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված մեկ տարվա ժամկետից հետո:

Գործող օրենսդրության պայմաններում նման դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը ևս պետք է կատարման ներկայացվի այդ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը չի բխում վերջնական դատական ակտի կատարման պահանջատիրոջ իրավունքի երաշխավորված իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման պետության պարտականության էությունից, միաժամանակ բացառելով պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարման որևէ հնարավորությունն առանց վարչական հարկադրանքի:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետների հարցում առկա իրավական խնդիրը լուծելու օրենսդրությամբ նախատեսված միակ միջոցը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու կառուցակարգն է, որը սահմանված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով և կատարվում է հետևյալ ընթացակարգով.

1) կատարողական թերթով պահանջատեր հանդիսացող անձը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում է ներկայացնում կատարողական թերթ տված դատարան,

2) կատարողական թերթ տված դատարանը քննում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը՝ այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում,

3) այդ դիմումի քննության արդյունքներով կատարողական թերթ տված դատարանը կայացնում է որոշում՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ դիմումը մերժելու մասին:

Վերոգրյալից հետևում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը համապատասխան դատարանի կողմից վերականգնվում է միայն այն դեպքում, երբ այդ ժամկետը բաց թողնելու պատճառը նույն դատարանի կողմից ճանաչվում է հարգելի: Այլ կերպ ասած, օրենսդիրը կատարողական թերթով պահանջատեր հանդիսացող անձին կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորություն է ընձեռել ոչ թե բոլոր, այլ միայն այն դեպքերում, երբ պահանջատերը նշված ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը, ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումի առկայության պայմաններում կատարողական թերթ տված դատարանը պարտավոր է հաշվի առնել կատարողական թերթը կատարման ներկայացնելու հիմքում ընկած բոլոր փաստական հանգամանքները և վերականգնել բաց թողած ժամկետը, եթե դա պայմանավորված է եղել դատական ակտով որոշված պարտավորությունը դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից հետո մեկ տարին գերազանցող ժամկետով, կամ պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարման ընդհատմամբ, երբ պարտատիրոջ կարծիքով սպառվել է դատական ակտի կամավոր կատարման հնարավորությունը:

Նշված մոտեցման ցուցաբերման դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել պարտատիրոջ և պարտապանի շահերի հավասարակշռված պաշտպանությունը:

Սույն գործով Դատարանը Բանկի դիմումի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում ապացուցվել է Ընկերության սնանկության հիմքերի առկայությունը: Մասնավորապես՝ Դատարանն արձանագրել է, որ «Ընկերության մոտ 60 օրից ավելի ժամկետով կետանցված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող պարտապանի վարկային պարտավորության առկայությունը պայմանավորված է 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագ-

րով, 20.03.2009 թվականին կնքված վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրով և 30.07.2012 թվականին կնքված 21.07.2008 թվականի թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրով ծագած, ինչպես նաև թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.08.2012 թվականին հրապարակված և 10.09.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված վարկային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հանգամանքով, ինչի արդյունքում Ընկերության ընդհանուր պարտավորությունները Բանկի նկատմամբ կազմել է ընդամենը 86.319,09 ԱՄՆ դոլար»:

Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով վերաքննիչ բողոքը և գործը նոր քննության ուղարկելով, պատճառաբանել է, որ թեև Ընկերությանը սնանկ ճանաչելու դիմումի հիմքում Բանկը դրել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 10.09.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճիռը, այնուամենայնիվ, վերոհիշյալ վճռից ակնհայտ է, որ բաց է թողնվել վերջինիս հիման վրա կատարողական թերթը հարկադիր կատարման ներկայացնելու՝ օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետը: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Դատարանը պետք է պարզեր՝ արդյո՞ք այդ ընթացքում վճիռը ներկայացվել է հարկադիր կատարման, արդյո՞ք բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչվել է դատական կարգով, թե՛ ոչ, և միմիայն այդ երկու հանգամանքների պարզումից հետո հնարավոր կլինե՞ր արձանագրել, որ պահանջատերը պահպանել է հարկադիր կարգով պահանջների բռնագանձման իրավունքի իրականացման իրավական հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության մոտ վճարային պարտավորության առկայությունը հավաստող միակ հիմքը (վերը նշված դատողությունների լույսի ներքո) թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 10.09.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճիռը, վերաբերում է Ընկերության կողմից Բանկի օգտին կատարվելիք պարբերական վճարումների բռնագանձմանը: Մինչդեռ սույն գործով Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջով Բանկը դատարան է դիմել 26.04.2014 թվականին, այսինքն՝ թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկամյա ժամկետը լրանալուց հետո: Հետևաբար Բանկը բաց է թողել թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 10.09.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու օրենքով սահմանված մեկամյա ժամկետը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործը նոր քննության ուղարկելով, իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ տվյալ դեպքում պետք է պարզել սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող այն հարցը, թե արդյո՞ք թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը դատական կարգով վերականգնվել է, թե ոչ:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի պատասխանում վկայակոչված ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.04.2014 թվականի թիվ ԼԴ/0604/02/10 որոշմանը, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության 48-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ մինչև դատաքննությունը պարտավոր է գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտել տվյալ պահին իրեն հայտնի այն ապացույցները, որոնց վրա նա հղում է կատարում որպես իր պահանջների և առարկությունների ապացուցման հիմք, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով:



ՀՀ քաղաքացիական դատավարության 48-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն հղում կատարելու միայն այն ապացույցների նկատմամբ, որոնց հետ գործին մասնակցող մյուս անձինք նույն օրենսգրքով սահմանված կարգով ծանոթացել են նախօրոք:

ՀՀ քաղաքացիական դատավարության 48-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ դատաքննությունն սկսվելուց հետո գործին մասնակցող անձի ներկայացրած լրացուցիչ ապացույցներն ընդունում է դատարանը, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է մինչև դատաքննությունը սկսվելը նման ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով: Եթե գործին մասնակցող մյուս անձինք նախապես ստացած չեն լինում դատաքննության ընթացքում ներկայացված լրացուցիչ ապացույցը, ապա դատարանը պարտավոր է գործին մասնակցող անձանց տրամադրել ողջամիտ ժամկետ՝ ապացույցին ծանոթանալու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Վճռաբեկ դատարանը, համակողմանիորեն վերլուծելով վկայակոչված քաղաքացիադատավարական իրավանդությունները, արձանագրում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պարտավոր են ապացույցները ներկայացնել առաջին ատյանի դատարանում գործի վարույթի շրջանակներում, մինչև դատաքննությունը սկսվելը: Օրենսդիրը վերը նշված ընդհանուր կանոնից բացառություն նախատեսել է այն դեպքի համար, երբ գործին մասնակցող անձը հիմնավորում է մինչև դատաքննությունը սկսվելը նման ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով: Անդրադառնալով վերադաս ատյաններում ապացույցներ ներկայացնելու հնարավորության հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը, ամրագրելով ոչ լրիվ վերաքննության ինստիտուտը, սահմանափակել է վերանայման այս վարույթում ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը բացառությամբ այն դեպքի, երբ ապացույցն առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով: Ինչ վերաբերում է վճռաբեկ վարույթին, ապա դատավարության այս փուլում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին ընդհանրապես նոր ապացույց ներկայացնելու հնարավորություն չի նախատեսել, ինչը պայմանավորված է դատական այս ատյանին 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով վերապահված օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունով:

Սույն գործով Ընկերությունը թիվ ԼԳ/0604/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.04.2014 թվականի որոշումը ներկայացրել է վերաքննիչ բողոքին կից: Վերաքննիչ դատարանի կողմից նշված որոշումը որևէ գնահատման չի արժանացել, իսկ Դատարանում այն ընդհանրապես ներկայացված չի էլ եղել, որպիսի պայմաններում վերոնշյալ հիմնավորումներով Վճռաբեկ դատարանն այդ որոշմանը չի անդրադառնում:

*Վերը նշված պատճառարանություններով հերքվում են նաև վճռաբեկ բողոքի պատասխանի մյուս փաստարկները:*

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով չի հիմնավորվում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի առկայությունը, որպիսի պայմաններում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով

նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի՝ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բողոք բերած անձը վճարել է վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումարը, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, գտնում է, որ գործի քննության ներկա փուլում դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.12.2014 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Վճռաբեկ բողոքի կապակցությամբ դատական ծախսի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

# ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/5366/05/14  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Գ. Ղարիբյան  
Ք. Մկոյան  
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/5366/05/14**  
2016 թ.

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստի-  
կանություն» ծառայության վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի  
27.05.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վարդան Սարգսյանի ընդդեմ ՀՀ ոստիկա-  
նության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝  
Ծառայության 04.08.2014 թվականի թիվ 1401954532 որոշումը, որպես ոչ իրավաչափ վարչա-  
կան ակտ, մասնակիորեն՝ 8.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասով  
անվավեր ճանաչելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Վարդան Սարգսյանը պահանջել է մասնակիորեն՝ 8.000 ՀՀ դրա-  
մի չափով վարչական տույժ նշանակելու մասով անվավեր ճանաչել Ծառայության 04.08.2014  
թվականի թիվ 1401954532 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան)  
03.12.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.05.2015  
թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.12.2014  
թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչաիրավական հարաբերություններում անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին տրվում է հետադարձ ուժ միայն փոփոխություն նախատեսող իրավական ակտում հետադարձ ուժի հանգամանքը սահմանելու արդյունքում: Հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածը կարող է կիրառելի դառնալ միայն այդ պարագայում, մինչդեռ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքով տվյալ հարաբերությունների համար հետադարձ ուժ չի նախատեսվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է քեկանել Վերաքննիչ դատարանի 27.05.2015 թվականի որոշումը և «կայացնել նոր որոշում»:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ծառայության 04.08.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401954532 որոշման համաձայն՝ Վարդան Սարգսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության և տուգանվել 10.000 ՀՀ դրամով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի կատարման համար, քանի որ վերջինս երթևեկելիս 21.06.2014 թվականին գերազանցել է սահմանված արագությունը 2 կմ/ժ-ով (**հատոր 1-ին, գ.թ. 8**):

2. Ծառայության պետի 05.09.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին 04.08.2014 թվականի թիվ 1401954532 որոշումը անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին» թիվ 17-4-14558 որոշման համաձայն՝ Վարդան Սարգսյանը դիմումով խնդրել է վերանայել «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401954532 որոշումը, որի վերանայման արդյունքում Ծառայության պետը որոշել է նշված որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ առանց բավարարման, քանի որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքը հետադարձ ուժ չի նախատեսել, հետևաբար չի տարածվում այդ ակտի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

**4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերի՝ հետադարձ ուժով գործողության

մասին, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.*

– արդյո՞ք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պարասխանաարվությունը մեղմացնող կամ վերացնող ակտն ունի հետադարձ ուժ այն պայմաններում, երբ պարասխանաարվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքը չի նախատեսում այդ ակտին հետադարձ ուժ հաղորդելու վերաբերյալ որևէ դրույթ, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված է, որ վարչական իրավախախտումների համար պարասխանաարվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում ունեն հետադարձ ուժ:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն նույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում (...):

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների (...) գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե նույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ սահմանադրական դատարանը, 29.11.2011 թվականի թիվ ՄԴՈ-1000 որոշմամբ անդրադառնալով իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մտտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից»:

ՀՀ սահմանադրական դատարանը վկայակոչված որոշմամբ ընդգծել է նաև, որ 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը սահմանադրական մակարդակով կարգավորում է ինչպես անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքների, այնպես էլ այլ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողությունը, և, ըստ այդմ՝ այդ դրույթը հասցեագրված է ինչպես օրենսդրին, այնպես էլ՝ այլ իրավաստեղծ մարմիններին: Այդ նորմի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը: Միաժամանակ այս նորմը սահմանում է այդ հայեցողությունն իրացնելու ընթացակարգը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը, իրացնելով իրեն Սահմանադրությամբ տրված հայեցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու նպատակահարմարության դեպքում տվյալ ակտում ամրագրում է այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ

դրույթ: Նշված հայեցողությունն իրացնելու այս ընթացակարգն ինքնասնպատակ չէ և տրամաբանորեն բխում է Սահմանադրությամբ՝ իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնակարգման ընդհանուր տրամաբանությունից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, այսինքն՝ տարածվում են նաև այդ ակտերի հրատարակումից առաջ կատարված իրավախախտումների վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումներ կատարելու համար անձի պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով 04.07.2013 թվականի որոշման շրջանակներում: Վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը մասնավորապես արձանագրել է հետևյալը.

- «(...) եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը մեղմացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ,
- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքին համապատասխան, եթե այդ օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ (...)» *(տե՛ս «Արևելիս հյուրանոցային համայնք» ՓԲԸ-ի տնօրեն Ալեքսանդր Արախաւմյանն ընդդէմ ՀՀ կառավարությանն առնչօթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ իրավական ակտը պատասխանատվությունը մեղմացնող է, եթե սանկցիայում նախատեսված պատասխանատվության տեսակը փոխարինվում է ավելի մեղմ պատասխանատվության տեսակով: Ընդ որում, տուգանքների դեպքում պատասխանատվությունը մեղմացնող է դիտվում այն դրույթը, որով նախկինում գործող տուգանքը փոխարինվել է նվազ չափի տուգանքով *(տե՛ս ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունն ընդդէմ Վայերի Ցականյանի թիվ ՎԴ/3135/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վկայակոչված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ անձի իրավական վիճակը բարելավող, տվյալ դեպքում՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերն ունեն հետադարձ ուժ, եթե օրենսդիրը նախատեսել է այն: Ընդ որում, օրենքին հետադարձ ուժ հաղորդելու օրենսդրի կամքը պետք է հստակ ամրագրում ստացած լինի:

Անձի իրավական վիճակը բարելավող օրենքին հետադարձ ուժ տալու օրենսդրի հայեցողական լիազորության իրացումը պետք է հետևի այնպիսի սկզբունքային դրույթների, ինչպիսիք են իրավական որոշակիության սկզբունքը, օրենսդրության նկատմամբ լեզիտիմ ակնկալիքների պահպանման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման և մարդու իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում ունեն հետադարձ ուժ, այսինքն՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում տարածվում են նաև այդ ակտերի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա: Այլ կերպ ասած՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից ուղղակիորեն հետևում է, որ նշված օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն՝ անկախ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերում դրանց հետադարձ ուժ տվող հատուկ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանելով վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերի բոլոր դեպքերում հետադարձ ուժ ունենալու կանոն՝ օրենսդիրն իրացրել է անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու իր հայեցողական լիազորությունը՝ հաշվի առնելով հանրային շահը, իրավական որոշակիության սկզբունքը, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների պահպանման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման և մարդու իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը հստակորեն արտահայտել է իր կամքը՝ նշված օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքների՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության վերաբերյալ՝ ամրագրելով, որ նույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում տարածվում են նաև այդ ակտերի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի բացակայությունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կամ լրացում նախատեսող բոլոր այն ակտերը, որոնք մեղմացնում կամ վերացնում են վարչական իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվությունը, ունեն հետադարձ ուժ՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից, քանի որ այդ ակտերում դրանց հետադարձ ուժ տալու մասին դրույթ ներառելու անհրաժեշտությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավակարգավորման պարագայում բացակայում է: Ընդ որում, պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքում դրան հետադարձ ուժով գործողության վերաբերյալ դրույթի բացակայությունը չի կարող դիտարկվել որպես այդ ակտի՝ հետադարձ ուժի գործողության արգելք, քանի որ դա կհակասի իրավական որոշակիության և օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների պահպանման անհրաժեշտության սկզբունքներին:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենքի՝ ժամանակի մեջ գործողության հետևյալ կանոններով.

- ընդհանուր կանոնի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ գործող օրենքով,

- եթե մինչև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունումն ուժի մեջ է մտել տվյալ իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենք, ապա վարչական իրավախախտում կատարած անձին պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքով՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից:

Վերոգրյալ իրավանորմերի համադրված վերլուծության լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիայի ժամանակի մեջ գործողության կանոնակարգմանը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի մինչև 21.06.2014 թվականը գործող խմբագրությամբ 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է եղել, որ երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

21.06.2014 թվականին ընդունված և 26.07.2014 թվականից ուժի մեջ մտած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ թիվ ՀՕ-78-Ն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի չափով»: Ընդ որում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքն այդ ակտի հետադարձ ուժով գործողության մասին որևէ դրույթ չի պարունակում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքը հանդիսանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունը մեղմացնող ակտ, քանի որ այդ ակտով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով 124.4-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում նախատեսված պատասխանատվության միջոցի՝ տուգանքի չափը նվազել է. եթե մինչև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքի ուժի մեջ մտնելը սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելու համար նախատեսված էր տուգանք՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով, ապա նշված օրենքի ուժի մեջ մտնելուց հետո այդ նույն արարքի համար նախատեսված է տուգանք՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքը՝ որպես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունը մեղմացնող ակտ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, ունի հետադարձ ուժ և տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա՝ անկախ նշված օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի բացակայության հանգամանքից:



**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարագրումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Վարդան Սարգսյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է մասնակիորեն՝ 8.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասով, անվավեր ճանաչել Ծառայության 04.08.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401954532 որոշումը: Նշված որոշումը Վարդան Սարգսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության և տուգանվել 10.000 ՀՀ դրամով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի կատարման համար, քանի որ վերջինս երթևեկելիս 21.06.2014 թվականին գերազանցել է սահմանված արագությունը 2 կմ/ժ-ով:

Ծառայությանը ներկայացրած դիմումով Վարդան Սարգսյանը խնդրել է վերանայել «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401954532 որոշումը, քանի որ սահմանված տուգանքի չափը պետք է հաշվարկվեր նոր օրենքի համաձայն:

Ծառայության պետ Ա. Գալստյանը 05.09.2014 թվականի որոշմամբ Ծառայության «Վարչական տույժ նշանակելու մասին» 04.08.2014 թվականի թիվ 1401954532 որոշումը թողել է անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ առանց բավարարման՝ պատճառաբանելով, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքը հետադարձ ուժ չի նախատեսել, հետևաբար չի տարածվում այդ ակտի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա:

Սույն գործով Դատարանը, հայցը բավարարելով, վճի հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Ծառայությունը Վարդան Սարգսյանին վարչական պատասխանատվության ենթարկելիս պարտավոր էր առաջնորդվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ ոչ թե մինչև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող, այլ նույն հոդվածի՝ վիճարկվող վարչական ակտի ընդունման օրվա (04.08.2014 թվականի) դրությամբ գործող խմբագրությամբ: Ըստ Դատարանի՝ Ծառայության 04.08.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401954532 որոշման ընդունման օրվա դրությամբ գործող «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքի կիրառման դեպքում Վարդան Սարգսյանի նկատմամբ նշանակված տուգանքի չափը կկազմեր ոչ թե 10.000 ՀՀ դրամ, այլ՝ 2.000 ՀՀ դրամ, ուստի վիճարկվող վարչական ակտը՝ 8.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասով, ենթակա է անվավեր ճանաչման:

Վերաքննիչ դատարանը, Ծառայության վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, վերահաստատել է Դատարանի վերոգրյալ եզրահանգումները: Մինչև սույն ժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ «(...) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-78-Ն ՀՀ օրենքով մեղմացվել է սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելու համար նախատեսված պատասխանատվությունը, ինչը (...) պետք է գնահատվի որպես պատասխանատվությունը մեղմացնող և հետադարձ ուժ ունեցող իրավական ակտ (...)»:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ օրենսդիրը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանելով, որ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում ունեն հետադարձ ուժ, իրացրել է անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու իր հայեցողական լիազորությունը: Հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կամ լրացում նախատեսող բոլոր այն ակտերը, որոնք մեղմացնում կամ վերացնում են վարչական իրավախախտումները,

րի համար նախատեսված պատասխանատվությունը, ունեն հետադարձ ուժ՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից, քանի որ այդ ակտերում դրանց հետադարձ ուժ տալու մասին դրույթ ներառելու անհրաժեշտությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավակարգավորման պարագայում բացակայում է: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունը մեղմացնող ակտ է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքը, որն ունի հետադարձ ուժ և տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա՝ անկախ նշված օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի բացակայության հանգամանքից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքը տարածվում է նաև դրա ուժի մեջ մտնելուց առաջ կատարված վարչական իրավախախտումների վրա: Հետևաբար Վարդան Սարգսյանի կողմից 21.06.2014 թվականին կատարված վարչական իրավախախտման՝ սահմանված արագությունը 2 կմ/ժ-ով գերազանցելու համար վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս Ծառայությունը պետք է առաջնորդվեր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ ոչ թե մինչև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող, այլ՝ նույն հոդվածի՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքով փոփոխված խմբագրությամբ:

Փաստորեն, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքին՝ որպես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող ակտի, պետք է տրվեր հետադարձ ուժ: Այլ կերպ ասած՝ Ծառայությունը, 04.08.2014 թվականին կայացնելով «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401954532 որոշումը, պետք է Վարդան Սարգսյանի նկատմամբ նշանակվող տուգանքի չափի հաշվարկման համար հիմք ընդուներ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-78-Ն օրենքի 3-րդ հոդվածով փոփոխված տարբերակը, որպիսի պայմաններում նշանակվող տուգանքի չափը կկազմեր ոչ թե 10.000 ՀՀ դրամ, այլ՝ 2.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ Ծառայության 04.08.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401954532 որոշումը, ընդունվել է 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի խախտմամբ և ենթակա էր անվավեր ճանաչման: Հետևաբար ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերով իրավացիորեն են եզրահանգել, որ Ծառայության 04.08.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401954532 որոշումը մասնակիորեն՝ Վարդան Սարգսյանի նկատմամբ 8.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ոչ իրավաչափ վարչական ակտ է և այդ մասով պետք է ճանաչվի անվավեր:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը, մասնակիորեն անվավեր ճանաչելով Ծառայության 04.08.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401954532 որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի նշված վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Ծառայության կողմից վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.05.2015 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է ստնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԳ/3314/05/14**  
**2016 թ.**

Վարչական գործ թիվ ՎԳ/3314/05/14

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Գ. Ղարիբյան  
Ք. Մկոյան  
Ա. Առաքելյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՑՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02–ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Արտյոմ Նազարյանի վճռաբեկ բողոքը  
ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.09.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի  
Արտյոմ Նազարյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն»  
ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն)՝ Ոստիկանության 30.04.2014 թվականի «Վար-  
չական տույժ նշանակելու մասին» թիվ 1401616158 որոշումը և այդ որոշման դեմ բերված  
վարչական բողոքի վերաբերյալ Ոստիկանության պետի կողմից 06.06.2014 թվականին ըն-  
դունված թիվ 17–4–8960 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Արտյոմ Նազարյանը պահանջել է անվավեր ճանաչել Ոստիկանու-  
թյան 30.04.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401616158 որոշումը,  
ինչպես նաև այդ որոշման դեմ բերված վարչական բողոքի վերաբերյալ Ոստիկանության պե-  
տի կողմից 06.06.2014 թվականին ընդունված «Ճանապարհային ոստիկանության վարչական  
տույժ նշանակելու մասին 30.04.2014 թվականի թիվ 1401616158 որոշումն անփոփոխ, իսկ վար-  
չական բողոքն առանց բավարարման թողնելու մասին» թիվ 17–4–8960 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան)  
19.03.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.09.2015  
թվականի որոշմամբ Արտյոմ Նազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
19.03.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արտյոմ Նազարյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածները, 144-րդ հոդվածի 1-ին մասը, 146-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը չի ձեռնարկել համարժեք միջոցներ՝ պարզելու համար սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Ստորադաս դատարանները, մասնավորապես, հաստատված են համարել, որ վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է որևէ կասկած չհարուցող ակնհայտ համընկնում: Մինչդեռ սույն գործում առկա չեն բավարար ապացույցներ այն մասին, որ Ոստիկանության 30.04.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401616158 որոշմամբ Արտյոմ Նազարյանին մեղսագրվող արարքը կատարվել է բնակավայրում, որտեղ սահմանված է 60 կմ/ժ առավելագույն արագություն, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.09.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ոստիկանության 30.04.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401616158 որոշման համաձայն՝ Արտյոմ Նազարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 10.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Արտյոմ Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող «VOLKSWAGEN» մակնիշի «24SO479» պետհամարանիշի տրոնսպորտային միջոցի վարորդը 20.04.2014 թվականին՝ ժամը 09:58-ին, Սուրենավան գյուղում երթևեկել է 72 կմ/ժ արագությամբ, այսինքն՝ (հանելով արագաչափ սարքի հնարավոր սխալմանը 10 կմ/ժ չափը) գերազանցել է երթևեկության սահմանված արագությունը 2 կմ/ժ-ով (**գ.թ. 8**).

2. Արտյոմ Նազարյանը վարչական կարգով բողոքարկել է Ոստիկանության 30.04.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401616158 որոշումը, որի քննարկման արդյունքում Ոստիկանության պետի կողմից 06.06.2014 թվականին ընդունված թիվ 17-4-8960 որոշման համաձայն՝ Արտյոմ Նազարյանի վարչական բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ բողոքարկվող վարչական ակտը՝ անփոփոխ (**գ.թ. 10**):

## **4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ բնակավայրում երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու համար նախատեսված վարչական պատասխանատվության կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա

ձևավորելու համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածները խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերագրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. կարո՞ղ է արդյոք անձը ենթարկվել վարչական պատասխանատվության բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար այն պայմաններում, երբ առկա է ողջամիտ կասկած ենթադրյալ իրավախախտման կատարման վայրը ճանապարհային երթևեկության կանոնների իմաստով բնակավայր հանդիսանալու փաստի առկայությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ ներկայումս գործող խմբագրությամբ 124.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված, տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով (...) հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքի կիրառման ընթացքում ծագող հարաբերություններն ուղղակիորեն չեն կարգավորվում նույն օրենքի դրույթներով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցն իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, իսկ 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ:

Նույն օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում (...):

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում առաջացող հարաբերությունները, սահմանում է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի պետական քաղաքականության սկզբունքները և

ուղղությունները, ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման իրավական հիմքերը, ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման բնագավառի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, ինչպես նաև ճանապարհային երթևեկության մասնակիցների իրավունքները և պարտականությունները:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. (...) բնակավայր՝ կառուցապատ տարածք, որի մուտքն ու ելքը նշված են բնակավայրի ճանապարհային նշաններով (...):

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը (...) (գ) հաստատում է ճանապարհային երթևեկության կանոնները (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային երթևեկության կանոնները սահմանելու լիազորությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը: Վերջինս, հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթով իրեն վերապահված լիազորությունը, 28.06.2007 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշումը, որի թիվ 1 հավելվածով հաստատվել են Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները: Ընդ որում, երթևեկության արագության վերաբերյալ կանոնները նախատեսված են նշված որոշման թիվ 1 հավելվածի՝ «Երթևեկության արագությունը» վերտառությամբ VII բաժնի 65-72-րդ կետերով:

Այսպես, ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի VII բաժնի 65-րդ կետի համաձայն՝ վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ (...):

Նույն որոշման թիվ 1 հավելվածի VII բաժնի 68-րդ կետի համաձայն՝ բնակավայրերում տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է 60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ (...):

ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի VII բաժնի 69-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ բնակավայրերից դուրս երթևեկությունը թույլատրվում է 90 կմ/ժ ոչ ավելի արագությամբ (...) (110 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ ավտոմայրուղիներով):

Նույն որոշման թիվ 1 հավելվածի VII բաժնի 70-րդ կետի համաձայն՝ բնակավայրերում և բնակավայրերից դուրս ճանապարհների առանձին հատվածներում, 3.24՝ «Առավելագույն արագության սահմանափակում» նշանի կիրառմամբ, կարող է թույլատրվել երթևեկելու սահմանված առավելագույնից բարձր արագությամբ:

Բացի այդ, ՀՀ կառավարությունը 26.10.2006 թվականի «Ճանապարհային լուսացույցների և ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշանների և ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» թիվ 1699-Ն որոշման թիվ 3 հավելվածով հաստատել է ճանապարհային նշանների և ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները:

Այսպես, նշված որոշման թիվ 3 հավելվածի I բաժնի 3-րդ կետի համաձայն՝ ճանապարհային նշանը ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոց է, որն ունի վահանակի տեսք ու որոշակի ձև և որի վրա կատարված են այնպիսի նշումներ ու մակագրություններ, որոնք ճանապարհային երթևեկության մասնակիցներին տեղեկացնում են ճանապարհային պայմանների և երթևեկության ռեժիմների, բնակավայրերի ու այլ օբյեկտների գտնվելու վայրի մասին:

Նույն որոշման թիվ 3 հավելվածի՝ «Նշանների կիրառման և տեղակայման կանոնները» վերտառությամբ III բաժնի 52.27-րդ կետի համաձայն՝ 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշանները կիրառվում են այն բնակավայրերի սկիզբը նշելու համար, որտեղ գործում

են բնակավայրերում երթևեկության կարգը սահմանող ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները: Նշանները տեղակայվում են բնակավայրի բոլոր մուտքերի վրա՝ բնակելի կառուցապատման փաստացի սահմանի վրա (...):

Վերոգրյալ իրավական նորմերի բովանդակությունից բխում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124.4-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվություն է նախատեսել երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելու համար: Նշված հոդվածում նկարագրված արարքը, ըստ էության, դրսևորվում է ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության այն կանոնի խախտմամբ, որի համաձայն՝ վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ:

ՀՀ կառավարության վկայակոչված որոշման թիվ 1 հավելվածի VII բաժնի 68-70-րդ կետերի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ճանապարհային երթևեկության առավելագույն արագության սահմանումը պայմանավորված է ճանապարհի տվյալ վայրի՝ բնակավայրի սահմաններում կամ բնակավայրի սահմաններից դուրս գտնվելու հանգամանքով: Այսպես, որպես ընդհանուր կանոն՝ բնակավայրերում երթևեկության առավելագույն արագությունը սահմանված է 60 կմ/ժ, բնակավայրերից դուրս՝ 90 կմ/ժ, իսկ բնակավայրերում և բնակավայրերից դուրս ճանապարհների առանձին հատվածներում կարող է թույլատրվել նշված առավելագույն արագությունից տարբերվող երթևեկության արագություն՝ դրա համար հատուկ նախատեսված ճանապարհային երթևեկության նշանի կիրառմամբ:

Սույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից քննարկման ենթակա հարցը վերաբերում է մեխանիկական տրանսպորտային միջոցների վարորդների կողմից բնակավայրերում սահմանված երթևեկության առավելագույն արագության գերազանցման համար առաջացող վարչական պատասխանատվության կիրառման խնդիրներին: Այդ նկատառումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ճանապարհային երթևեկության ոլորտում «բնակավայր» հասկացության էությանը:

Այսպես՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի իմաստով բնակավայր հասկացությունը բնորոշվում է որպես այնպիսի կառուցապատ տարածք, որի մուտքն ու ելքը նշված են բնակավայրի ճանապարհային նշաններով: Այսինքն՝ ճանապարհային երթևեկության ոլորտում բնակավայր է համարվում միայն այն կառուցապատ տարածքը, որի մուտքն ու ելքը նշված են հատուկ ճանապարհային նշաններով: Այդ ճանապարհային նշաններից են 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշանները, որոնք տեղակայվում են բնակավայրի բոլոր մուտքերի՝ բնակելի կառուցապատման փաստացի սահմանի վրա և կիրառվում են բնակավայրերի սկիզբը նշելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որևէ կառուցապատ տարածքում բնակավայրերի համար սահմանված երթևեկության առանձնահատուկ կանոնները, այդ թվում նաև՝ առավելագույն արագության կանոնը, կարող են ունենալ իրավաբանական նշանակություն և առաջացնել իրավական հետևանքներ, եթե այդ կառուցապատ տարածքը համապատասխանում է բնակավայր հասկացության հատկանիշներին: Այլ կերպ ասած՝ բնակավայրերում երթևեկության կարգը սահմանող ճանապարհային երթևեկության կանոնների պահանջներն այս կամ այն կառուցապատ տարածքում կարող են գործել միայն այդ կառուցապատ տարածքի մուտքերի վրա նշված ճանապարհային նշաններից որևէ մեկի տեղադրված լինելու դեպքում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակավայրերում սահմանված երթևեկության 60 կմ/ժ առավելագույն արագության կանոնը կարող է գործել միայն այն դեպքում, երբ տվյալ կառուցապատ տարածքի մուտքի վրա՝ բնակելի կառուցապատման փաստացի սահմանի վրա տեղադրված է 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշաններից որևէ մեկը: Այսինքն՝ վերոնշյալ պայմանների առկայության պարագայում է միայն հնարավոր փաստել, որ տվյալ կառուցապատ տարածքում երթևեկության սահմանված առավելագույն արագությունը 60 կմ/ժ է (ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսված բացառությունների բացակայության դեպքում), որը գերազանցելն առաջացնում է վարչական պատասխանատվություն:



Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս կամ այն մեխանիկական տրանսպորտային միջոցի համար ճանապարհային երթևեկության առավելագույն արագության սահմանված ռեժիմի փոփոխությունը, ընդհանուր կանոնի համաձայն, պայմանավորված է տվյալ տրանսպորտային միջոցի՝ բնակավայր մուտք գործելու հանգամանքով: Այսպես, բնակավայրից դուրս գտնվող ճանապարհներին վարորդը, որպես կանոն, կարող է երթևեկել առավել բարձր արագությամբ, քան բնակավայրի սահմաններում գտնվող ճանապարհներին, քանի որ ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ բնակավայրերից դուրս երթևեկության առավելագույն արագությունը 90 կմ/ժ է (ավտոմայրուղիներում՝ 110 կմ/ժ), իսկ բնակավայրերում՝ 60 կմ/ժ: Այսինքն՝ երթևեկության առավելագույն արագությունը սահմանող ճանապարհային նշանների բացակայության դեպքում, որպես կանոն, բնակավայրերից դուրս երթևեկելիս տրանսպորտային միջոցների նկատմամբ տարածվում է երթևեկության առավելագույն արագության 90 կմ/ժ-ի (ավտոմայրուղիներում՝ 110 կմ/ժ-ի) ռեժիմը, իսկ բնակավայրերում երթևեկելիս՝ 60 կմ/ժ-ի ռեժիմը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ անձը, բնակավայրից դուրս գտնվող ճանապարհով վարելով որևէ մեխանիկական տրանսպորտային միջոց, մուտք է գործում բնակավայր, այդ անձի նկատմամբ սկսում է գործել ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ սահմանված՝ բնակավայրում երթևեկության թույլատրելի արագության ռեժիմը, որը ենթադրում է, որ վարորդը պետք է երթևեկի բնակավայրում թույլատրելի առավելագույն 60 կմ/ժ արագությունը չգերազանցող արագությամբ, եթե ճանապարհի այդ հատվածում 60 կմ/ժ արագությունից տարբերվող երթևեկության արագություն սահմանված չէ: Ընդ որում, մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է իր տրանսպորտային միջոցի արագությունը համապատասխանեցնել բնակավայրում թույլատրելի առավելագույն արագության ռեժիմին, եթե տվյալ բնակավայրի մուտքի վրա տեղադրված է 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշաններից որևէ մեկը, քանի որ միայն այդ պարագայում է կառուցապատ տարածքը համարվում բնակավայր՝ ճանապարհային երթևեկության կանոնների իմաստով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձը կարող է բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի հիմքով ենթարկվել վարչական պատասխանատվության հետևյալ պայմանների, *inter alia*, միաժամանակյա առակայության դեպքում.

1) իրավախախտումը կատարվել է այնպիսի վայրում, որը համապատասխանում է ճանապարհային երթևեկության ոլորտում «բնակավայր» հասկացության հատկանիշներին, այսինքն՝

- իրավախախտման վայրը կառուցապատ տարածք է,
- այդ կառուցապատ տարածքի մուտքերի վրա տեղադրված է 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշաններից որևէ մեկը,

2) իրավախախտման կատարման վայրում բնակավայրերում սահմանված 60 կմ/ժ առավելագույն արագությունից տարբերվող երթևեկության արագություն թույլատրված չէ (ճանապարհի տվյալ հատվածում 3.24 «Առավելագույն արագության սահմանափակում» ճանապարհային նշանը կիրառված չէ):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածով սահմանված իրավանքների վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ նշված օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պա-

տասնամյակության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը (յրեն օրինակ, Արդա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված վարչական վարույթի իրականացման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի ընթացքում իրավախախտման փաստը համարվում է հաստատված, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Նշված հանգամանքով պայմանավորված՝ օրենսդիրը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի համար նախատեսել է միայն երկու փուլ՝ իրավախախտման հատկանիշների պարզման (հարուցման) և վարչական ակտի ընդունման (եզրափակիչ) փուլերը: Նշված վարչական վարույթում ընթացիկ փուլի բացառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների ակնհայտ համընկնման, այդ համընկնման վերաբերյալ որևէ կասկածի կամ վերապահման բացակայության պայմաններում հաստատվում է իրավախախտման փաստը, և բացակայում է նաև իրավախախտման հետ կապված այլ հանգամանքների պարզման, հետևաբար նաև՝ ընթացիկ փուլի անհրաժեշտությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավախախտություն ծագման պահին գործող խմբագրությամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով որևէ իրավակարգավորում նախատեսված չէ այն դեպքերի համար, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում, և օրենսդրական համապատասխան կարգավորման բացակայության պարագայում վարչական մարմինը զրկված է այդ կասկածը փարատելու նպատակով ապացույցներ ձեռք բերելու և դրանք գնահատելու հնարավորությունից: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների կասկած հարուցելու դեպքերի վերաբերյալ համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում հարուցված վարչական վարույթների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները (յրեն Լուսինե Վիրաբյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/1570/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական վարույթն ընթացիկ փուլով անցկացնելու անհրաժեշտությունը բացակայում է: Նշված ընդհանուր կանոնը կիրառելի է, inter alia, այն դեպքերի համար, երբ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդի համար տեղի է ունեցել երթևեկության սահմանված առավելագույն արագության ռեժիմի փոփոխություն, սակայն որևէ ողջամիտ կասկած չի կարող առաջանալ ենթադրյալ իրավախախտման կատարման վայրի՝ բնակավայր հասկացության չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ, այսինքն՝ իրավախախտման կատարման վայրի՝ բնակավայր հանդիսանալու փաստն անվիճելի է անկախ այն հանգամանքից, թե տվյալ բնակավայրի կոնկրետ որ փողոցում է կատարվել իրավախախտումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու որոշ դեպքերում այդ վարչական վարույթը պետք է ունենա ոչ միայն հարուցման և եզրափակիչ, այլ նաև ընթացիկ փուլ: Ըստ Վճռաբեկ դատարանի եզրահանգման՝ բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական վարույթը պետք է ունենա ընթացիկ փուլ՝ որպես վերը նշված ընդհանուր կանոնից բացառություն, հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) տվյալ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդի համար տեղի է ունեցել ճանապարհային երթևեկության առավելագույն արագության սահմանված ռեժիմի փոփոխություն,

2) ողջամիտ կասկած է առաջացել այն հարցի շուրջ, թե արդյոք տվյալ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդի կողմից 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագության գերազանցումը տեղի է ունեցել բնակավայրում, թե ոչ:

Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ որևէ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդ, բնակավայրերից դուրս գտնվող ճանապարհով երթևեկելով այդպիսի ճանապարհների համար սահմանված առավելագույն արագության ռեժիմով, մուտք է գործում բնակավայր, և ողջամիտ կասկած է առաջացել ենթադրյալ իրավախախտման կատարման վայրի՝ բնակավայր հանդիսանալու կամ չհանդիսանալու հարցի կապակցությամբ, ապա այդ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար միայն այն պարագայում, երբ վարչական վարույթի ընթացիկ փուլում հաստատվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացող՝ սույն որոշմամբ նկարագրված փաստական հանգամանքների առկայությունը:

Վերոգրյալ վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ ճանապարհային երթևեկության առավելագույն արագության սահմանված ռեժիմի փոփոխության և ենթադրյալ իրավախախտման կատարման վայրի՝ բնակավայր հանդիսանալու կամ չհանդիսանալու վերաբերյալ ողջամիտ կասկածի առկայության դեպքում բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածում նկարագրված զանցակազմի առկայությունը կարող է հաստատվել կամ հերքվել բացառապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանմամբ վարչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացիկ փուլում համապատասխան միջոցներ ձեռնարկելով, քանի որ միայն այդ փուլում է հնարավոր ձեռք բերել տեղեկություններ և ապացույցներ այն մասին, թե ենթադրյալ իրավախախտման կատարման վայրը ճանապարհային երթևեկության կանոնների իմաստով հանդիսանում է արդյոք բնակավայր, թե ոչ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ոստիկանության 30.04.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401616158 որոշման համաձայն՝ Արտյոմ Նազարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 10.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Արտյոմ Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող «VOLKSWAGEN» մակնիշի «24S0479» պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 20.04.2014 թվականին՝ ժամը 09:58-ին, Սուրենական գյուղում երթևեկել է 72 կմ/ժ արագությամբ, այսինքն՝ (հանելով արագաչափ սարքի հնարավոր սխալանքի 10 կմ/ժ չափը) գերազանցել է երթևեկության սահմանված արագությունը 2 կմ/ժ-ով:

Արտյոմ Նազարյանը վարչական կարգով բողոքարկել է Ոստիկանության 30.04.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401616158 որոշումը, որի քննարկման արդյունքում Ոստիկանության պետի կողմից 06.06.2014 թվականին ընդունված թիվ 17-4-8960 որոշման համաձայն՝ Արտյոմ Նազարյանի վարչական բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ բողոքարկվող վարչական ակտը՝ անփոփոխ:

Դատարանը, հայցը մերժելով, մասնավորապես, պատճառաբանել է, որ «(...) հայցվորն արագության սահմանված չափի գերազանցումով երթևեկել է Սուրենավան գյուղի փարածքում, իսկ այդ գյուղի փարածք մուտք գործելուց առաջ հայցվորը տեղյակ է եղել, որ մուտք է գործում բնակավայր, անկախ այն հանգամանքից՝ մուտքից առաջ համապարասխան բնակավայրի վերաբերյալ ճանապարհային նշան առկա է եղել, թե ոչ (...):»

Վերաքննիչ դատարանը մերժել է Արտյոմ Նազարյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության հիմնավոր համարելով Դատարանի պատճառաբանությունները: Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ, մասնավորապես, նշել է, որ «(...) [Արտյոմ Նազարյանի] այն պնդումը, որ մինչև փաստակարահանող սարքին հասնելը որևէ բնակավայրի տեղակայման մասին տեղեկացնող տեղեկատվության նշանի չի հանդիպել, հիմք չի կարող հանդիսանալ (...) սույն գործով վիճարկվող վարչական փուլից նշանակելու մասին որոշումն անվավեր ճանաչելու համար (...):»

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ոստիկանության 30.04.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401616158 որոշմամբ Արտյոմ Նազարյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել լուսանկարահանող տեխնիկական միջոցի՝ արագաչափ սարքի միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնի խախտման՝ բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար, որի առկայությունը վարչական մարմինը հաստատված է համարել այդ տեխնիկական միջոցի օգտագործմամբ ստացված լուսանկարի հիման վրա: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ լուսանկարը հնարավորություն չի տալիս պարզելու այն հարցը, թե լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է արդյոք որևէ կասկած հարուցող ակնհայտ համընկնում:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ բնակավայրում սահմանված 60 կմ/ժ երթևեկության առավելագույն արագությունը գերազանցելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է վրա հասնել հետևյալ պայմանների, inter alia, միաժամանկյա առկայության դեպքում.

1) իրավախախտումը կատարվել է այնպիսի վայրում, որը համապատասխանում է ճանապարհային երթևեկության ոլորտում «բնակավայր» հասկացության հատկանիշներին, այսինքն՝ իրավախախտման վայրը կառուցապատ տարածք է, որի մուտքերի վրա տեղադրված է 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշաններից որևէ մեկը,

2) իրավախախտման կատարման վայրում թույլատրված չէ երթևեկել բնակավայրերում սահմանված 60 կմ/ժ առավելագույն արագությունից ավելի բարձր արագությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե („ex officio“): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով (...) և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետա-

գոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

Վերոգրյալ իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („ex officio“) սկզբունքը դատական ապացուցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով ապացույցներ պահանջելու վարչական դատարանի պարտականությամբ: Թեև վարչական դատավարությունում ապացուցման պարտականությունը կրում են կողմերը, սակայն վարչական դատարանը, կաշկանդված չլինելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, պարտավոր է գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ և պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու ու գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը չի կատարել իր այդ դատավարական պարտականությունը և չի պահանջել անհրաժեշտ ապացույցներ սույն գործի քննության ու լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Այսպես, սույն գործի փաստական կողմի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Արտյոմ Նազարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության քննակալարում սահմանված արագությունը գերազանցելու համար, իսկ գործի քննության ընթացքում չէր կարող առկա չլինել ողջամիտ կասկած այն հարցի շուրջ, թե ենթադրյալ իրավախախտման կատարման վայրը ճանապարհային երթուղիության կանոնների իմաստով հանդիսանում է արդյոք բնակավայր, թե ոչ: Հետևաբար, տվյալ դեպքում Դատարանը պետք է պարզեր այն հանգամանքը, թե Ոստիկանության 30.04.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401616158 որոշմամբ Արտյոմ Նազարյանին մեղսագրվող ենթադրյալ իրավախախտման կատարման պահին այդ իրավախախտման կատարման վայրը ճանապարհային երթուղիության կանոնների իմաստով համապատասխանում էր արդյոք բնակավայր հասկացության չափանիշներին, թե ոչ: Մասնավորապես, սույն գործով Դատարանը պետք է պարզեր՝ արդյոք վիճարկվող վարչական ակտով արձանագրված արագության գերազանցումը կատարվել է այնպիսի կառուցապատ տարածքում, որի մուտքերի վրա ենթադրյալ իրավախախտման կատարման պահին տեղադրված է եղել 5.23.1 և 5.23.2 «Բնակավայրի սկիզբ» նշաններից որևէ մեկը:

Մինչդեռ Դատարանը չի ձեռնարկել համարժեք միջոցներ Ոստիկանության 30.04.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401616158 որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքների ամբողջական վերհանման և դրանց վերաբերյալ բոլոր հնարավոր ապացույցների ձեռքբերման ուղղությամբ, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150–152–րդ և 163–րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո բարձրացված հարցադրումներին պատասխանելու նպատակով:

### **5. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56–րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարարամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակի, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169–171–րդ հոդվածներով, 172–րդ հոդվածի 1–ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.09.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/1769/05/15  
2016 թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/1769/05/15

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Առաքելյան  
Հ. Բեդլյան  
Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն . ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 26-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Արթուր Միքայելյանի ներկայացուցիչ Հայկ Սա-  
հակյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.01.2016 թվականի  
որոշման դեմ՝ ըստ հայցի Արթուր Միքայելյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապար-  
հային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն)՝ Ոստիկանության  
09.02.2015 թվականի թիվ 1502652006 որոշումը վերացնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Արթուր Միքայելյանը պահանջել է վերացնել Ոստիկանության  
09.02.2015 թվականի թիվ 1502652006 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան)  
20.08.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.01.2016  
թվականի որոշմամբ Արթուր Միքայելյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և  
Դատարանի 20.08.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արթուր Միքայելյանի ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124-րդ հոդվածի 21-րդ մասը, նույն օրենսգրքի 281-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը չի պարունակում գործի քննության ընթացքում հաստատված բոլոր հանգամանքների շարադրանքը: Այսպես, Ոստիկանության 09.02.2015 թվականի թիվ 1502652006 որոշումը որևէ ձևով չի բովանդակում կանգառի և կայանման այն կոնկրետ կանոնը, որի խախտման համար Արթուր Միքայելյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124-րդ հոդվածի 21-րդ մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության: Հետևաբար վիճարկվող վարչական ակտն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.01.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

Ոստիկանության 09.02.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502652006 որոշման համաձայն՝ Արթուր Միքայելյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124-րդ հոդվածի 21-րդ մասով, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինս 12.01.2015 թվականին Երևան քաղաքի Ազատության և Բարայան փողոցների խաչմերուկի հատվածում խախտել է կանգառ կատարելու կանոնները (**գ.թ. 7**):

## **4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական ակտերի բովանդակությանը ներկայացվող պահանջների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական ակտը պետք է նշում պարունակի ճանապարհային երթևեկության այն կոնկրետ կանոնի մասին, որի խախտման համար անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում, արդյոք տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք նա ենթակա է վարչական պատասխանատվության, կան արդյոք պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող



հանգամանքներ, պատճառվել է արդյոք գույքային վնաս, (...) ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման գործը, մարմինը (պաշտոնատար անձը) գործի վերաբերյալ որոշում է ընդունում: (...) Որոշումը պետք է պարունակի՝ այն ընդունած մարմնի (պաշտոնատար անձի) անվանումը, գործի քննության ժամանակաթիվը, տեղեկություններ այն անձի մասին, որի վերաբերյալ քննվում է գործը, գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը, տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտի նշումը, գործի վերաբերյալ ընդունված որոշումը (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ (1) վարչական տույժ նշանակելու մասին, (2) գործի վարույթը կարճելու մասին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ հոդվածի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը, եթե կանգառ կատարելու անհրաժեշտությունը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վճարել նատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում սահմանելով վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի կարգը, նշված օրենսգրքի 282-րդ հոդվածում նախատեսել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ համապատասխան վարչական մարմնի կողմից ընդունվող վերջնական որոշումների տեսակները՝ (ա) վարչական տույժ նշանակելու մասին, (բ) գործի վարույթը կարճելու մասին: Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածով օրենսդիրն ամրագրել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ ընդունվող վերջնական որոշումների բովանդակությանը ներկայացվող պահանջները, որոնցից մեկն այն է, որ այդ որոշումները պետք է պարունակեն, *inter alia*, գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը:

Վճարել նատարանի գնահատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածով վարչական իրավախախտման գործի վերաբերյալ ընդունված որոշումներին ներկայացվող՝ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը պարունակելու մասին պահանջը նախևառաջ պետք է դիտարկվի նույն օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի ընթացքում վարչական մարմնի կողմից պարտադիր պարզման ենթակա վերոգրյալ հանգամանքների համատեքստում: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ ընդունված որոշման մեջ պետք է շարադրված լինեն այն հանգամանքները, որոնք ենթակա են պարտադիր պարզման վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի ընթացքում. դրանք են, *inter alia*, (ա) վարչական իրավախախտում կատարված լինելու փաստը, (բ) անձի մեղավորությունը վարչական իրավախախտման կատարման մեջ, (գ) անձի՝ վարչական պատասխանատվության ենթակա լինելը, (դ) պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայությունը, (ե) վարչական իրավախախտման հետևանքով գույքային վնաս պատճառված լինելը, (զ) գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այսպիսով, Վճարել նատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտման գործի վերաբերյալ ընդունվող վերջնական որոշումները պետք է համապատասխանեն նշված օրենսգրքով դրանց ներկայացվող հիմնավորվածության վերոգրյալ չափանիշներին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության առաջացման համար հիմք հանդիսացող զանցակազմերի նկարագրությունը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, մասնավորապես՝ նույն օրենսգրքի 124-րդ, 124.1-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.6-րդ և մի շարք այլ հոդվածներով: Օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն է նախատեսել ճանապարհային երթևեկության առանձին կանոնների խախտման համար. այդպիսի զանցանք է նաև նույն հոդվածի 21-րդ մասում նախատեսված կանգառի կամ կայանման կանոնների խախտումը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը (...) (գ) հաստատում է ճանապարհային երթևեկության կանոնները (...):

Նշված իրավանքումից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային երթևեկության կանոնները սահմանելու լիազորությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը: Վերջինս, հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրոյթով իրեն վերապահված լիազորությունը, 28.06.2007 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշումը, որի թիվ 1 հավելվածով հաստատվել են Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները: Ընդ որում, կանգառի և կայանման կանոնները նախատեսված են նշված որոշման թիվ 1 հավելվածի «Կանգառը և կայանումը» վերտառությամբ IX բաժնի 78–86-րդ կետերով:

Ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության առաջացման հիմք հանդիսացող և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նկարագրված զանցակազմերի ուսումնասիրությունը վկայում է, որ որոշ դեպքերում այդ զանցակազմերը հղում են կատարում ճանապարհային երթևեկության կանոններին՝ առանց դրանք նկարագրելու կամ մանրամասնելու: Օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով ամրագրված զանցակազմի դիսպոզիցիան ունի հետևյալ տեսքը. «*տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը*»: Նշված օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ քննարկվող զանցակազմը չի կոնկրետացնում, թե որոնք են կանգառի կամ կայանման այն կանոնները, որոնց խախտման համար առաջանում է վարչական պատասխանատվություն: Սակայն ակնհայտ է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի քննարկվող իրավադրոյթի հիման վրա վարչական պատասխանատվությունը ծագում է ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի «Կանգառը և կայանումը» վերտառությամբ IX բաժնի 78–86-րդ կետերով նախատեսված կանոնների խախտման համար: Հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է պարզել այն հարցը, թե տրանսպորտային միջոցի վարորդի կողմից խախտվել է արդյոք կանգառի կամ կայանման վերոգրյալ կանոններից որևէ մեկը, թե ոչ:

Անդրադառնալով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական ակտերի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան զանցակազմը հղում է կատարում ճանապարհային երթևեկության այս կամ այն կանոնին՝ առանց մանրամասնելու այդ կանոնի բովանդակությունը, ապա տվյալ զանցակազմի հիման վրա անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական ակտը պետք է նշում

պարունակի ճանապարհային երթևեկության այն կոնկրետ կանոնի մասին, որի խախտման համար անձը ենթակա է վարչական պատասխանատվության: Նման դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածով սահմանված այն իրավական կարգավորումը, որի համաձայն՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը պետք է պարունակի, *inter alia*, գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը: Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական գործի շրջանակներում հաստատման ենթակա հանգամանքներից մեկը վարչական պատասխանատվության ենթակա անձի կողմից խախտված ճանապարհային երթևեկության կոնկրետ կանոնն է, որը պետք է անպայմանորեն ներառվի վարչական տույժ նշանակելու մասին որոշման բովանդակության մեջ, եթե վարչական պատասխանատվության հիմք հանդիսացող համապատասխան զանցակազմը չի պարունակում ճանապարհային երթևեկության տվյալ կանոնի նկարագրությունը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածով վարչական իրավախախտման գործի վերաբերյալ ընդունված որոշումներին ներկայացվող՝ *գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը պարունակելու մասին պահանջը* ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու որոշումների առումով պետք է մեկնաբանվի հետևյալ կերպ.

1) ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական տույժ նշանակելու մասին որոշումը պետք է պարունակի, *inter alia*, Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության այն կանոնի նորմատիվ ձևակերպումը կամ այդ կանոնը սահմանող իրավանորմին ուղղված հղումը, որը խախտվել է տվյալ անձի կողմից,

2) եթե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված համապատասխան զանցակազմը չի պարունակում ճանապարհային երթևեկության կոնկրետ կանոնի նկարագրությունը, ապա այդ զանցակազմի հիմքով վարչական տույժ նշանակելու մասին որոշումը պետք է պարունակի, *inter alia*, ճանապարհային երթևեկության այն կանոնի իրավական նկարագրությունը, որի խախտման համար անձը ենթակա է վարչական պատասխանատվության,

3) ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական տույժ նշանակելու մասին որոշումը պետք է պարունակի, *inter alia*, տվյալ անձի կողմից կատարված այն արարքի նկարագրությունը, որն առաջացրել է ճանապարհային երթևեկության կոնկրետ կանոնի խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արթուր Միքայելյանը Ոստիկանության 09.02.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502652006 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավախարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 124-րդ հոդվածի 21-րդ մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինս 12.01.2015 թվականին Երևան քաղաքի Ազատության և Բաբայան փողոցների խաչմերուկի հատվածում խախտել է կանգառ կատարելու կանոնները: Ընդ որում, Ոստիկանության 09.02.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502652006 որոշման բովանդակության մեջ առկա չէ որևէ նշում այն մասին, թե Արթուր Միքայելյանը կանգառ կատարելու կոնկրետ որ կանոնի խախտման համար է ենթարկվել վարչական պատասխանատվության:

Դատարանը մերժել է Ոստիկանության 09.02.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502652006 որոշումը վերացնելու մասին Արթուր Միքայելյանի հայցապահանջը՝ պատճառաբանելով, որ վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են: Դատարանը մասնավորապես գտել է, որ Ոստիկանության 09.02.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502652006 որոշումը «(...) համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ դրան առաջադրված պահանջներին (...),» քանի որ այն բավարարում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի

281-րդ հոդվածով վարչական իրավախախտման գործի վերաբերյալ ընդունված որոշումներին ներկայացվող բոլոր չափանիշներին:

Վերաքննիչ դատարանը մերժել է Արթուր Միքայելյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության համաձայնելով Դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման հետ: Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ, մասնավորապես, նշել է, որ Ոստիկանության 09.02.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502652006 որոշումը լիովին համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի պահանջներին, քանի որ «(...) *վիճարկվող ակտում հարակրոն վկայակոչված է և այն իրավական նորմը, որի հիմքով հայցվորը ենթարկվել է պարասխանարվության, և այն արարքը, որը նախատեսված է Կրկին իրավական նորմով որպես պարասխանարվության ենթարկելու հանգամանք (...)*»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, արձանագրում է հետևյալը.

Սույն գործով վիճարկվող վարչական ակտի բովանդակության ուսումնասիրությունից հետևում է, որ Ոստիկանությունը, Արթուր Միքայելյանին ենթարկելով վարչական պատասխանատվության կանգառի կանոնների խախտման համար, այդ ակտում չի նշել, թե Արթուր Միքայելյանը ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի IX բաժնով սահմանված կանգառի կոնկրետ որ կանոն է խախտել: Վարչական մարմինը բավարարվել է միայն վիճարկվող որոշման մեջ արձանագրելով, որ Արթուր Միքայելյանը 12.01.2015 թվականին Երևան քաղաքի Ազատության և Բաբայան փողոցների խաչմերուկի հատվածում խախտել է կանգառ կատարելու կանոնները՝ առանց մանրամասն շարադրելու վերջինիս կողմից կատարված արարքի փաստական և իրավական նկարագրությունը: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում Ոստիկանության 09.02.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502652006 որոշումը չի պարունակում Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության այն կանոնի նորմատիվ ձևակերպումը կամ այդ կանոնը սահմանող իրավանորմին ուղղված հղումը, որը խախտվել է Արթուր Միքայելյանի կողմից, ինչպես նաև վերջինիս կողմից կատարված այն արարքի նկարագրությունը, որը հակասում է (չի համապատասխանում) ճանապարհային երթևեկության կոնկրետ կանոնով սահմանված իրավակարգավորման բովանդակությանը:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ոստիկանության 09.02.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502652006 որոշումը՝ որպես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշում, պետք է պարունակեր ճանապարհային ենթակետության այն կանոնի հստակ շարադրանքը, որը խախտվել է Արթուր Միքայելյանի կողմից՝ հղում կատարելով ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի IX բաժնով սահմանված կանգառի կոնկրետ կանոնը սահմանող իրավական նորմին (նորմերին), ինչպես նաև Արթուր Միքայելյանի կողմից կատարված այն արարքի մանրամասն նկարագրությունը, որի կատարումը դիտվում է որպես ճանապարհային երթևեկության համապատասխան կանոնի խախտում: Նշված պայմաններին բավարարելու դեպքում միայն Ոստիկանության 09.02.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502652006 որոշումը կհամապատասխաներ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածով սահմանված պահանջներին: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի խախտմամբ ընդունված լինելու հիմքով, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### ***5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ (...) վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ գանգատներով (...):

Հաշվի առնելով, որ հայցվորն ազատված է պետական տուրքի վճարումից, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցադիմումի, վերաքննիչ բողոքի և վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի վճարման պարտականությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է կատարման Ոստիկանության կողմից, հետևաբար վերջինից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.01.2016 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 09.02.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502652006 որոշումը ճանաչել անվավեր:

2. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի գումար:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/5084/05/14**  
**2016 թ.**

Վարչական գործ թիվ **ՎԴ/5084/05/14**

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

**Ք. Մկոյան**  
**Ա. Առաքելյան**  
**Գ. Ղարիբյան**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**  
**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**  
**Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ**  
**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**  
**Մ. ԴՐՄԵՅԱՆԻ**  
**Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ**  
**Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ**  
**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**  
**Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ**  
**Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ**

2016 թվականի դեկտեմբերի 02-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Գեղամ Սիմոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչա-  
կան վերաքննիչ դատարանի 01.10.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ Գեղամ Սիմոնյանի  
հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ **Քաղաքապետարան**)՝ 16.05.2014  
թվականի թիվ **Վ-20/1561** որոշումը վերացնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Գեղամ Սիմոնյանը պահանջել է վերացնել Քաղաքապետարանի  
16.05.2014 թվականի թիվ **Վ-20/1561** որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ **Գ. Սոսյան**) (այսուհետ՝ **Դատարան**) 06.05.2015  
թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ **Վերաքննիչ դատարան**) 01.10.2015  
թվականի որոշմամբ Գեղամ Սիմոնյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
06.05.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գեղամ Սիմոնյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Քաղաքապետարանը:

## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

**Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.**

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանապեղերի տեղական տնտեսական գոտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 16-րդ, հոդվածները, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 27-րդ հոդվածը, 42-րդ հոդվածի 7-րդ մասը:

**Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.**

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գործում բացակայում է վարչական իրավախախտման դեպքի առկայությունը հաստատող թույլատրելի և վերաբերելի որևէ ապացույց և բողոքը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ իրավախախտման փաստը հաստատվում է գործում առկա «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի 31.03.2014 թվականի թիվ ԵԼ-ՓՄ/00141603 գրությանը, որը, բացի իրավախախտման դեպքի շարադրանքից, բովանդակում է նաև կից լուսանկարներ, որոնք պարունակում են տեսանկարահանող սարքի միջոցով ֆիքսված իրավախախտման տարեթիվը և ժամը, մինչդեռ դրանով չի կարելի հաստատված համարել 28.03.2014 թվականի 14:42:14-ից մինչև 15:23:56-ը տրանսպորտային միջոցի անընդմեջ կայանված լինելու փաստը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է քեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 01.10.2015 թվականի որոշումը՝ հայցը բավարարել:

### 2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Բողոքաբերին ուղարկված արձանագրությանը կից իրավախախտման լուսանկարներով ապացուցվում է, որ վերջինիս պատկանող տրանսպորտային միջոցը 28.03.2014 թվականին ժամը 14:42-ին և ժամը 15:23-ին 2 անգամ կայանված է եղել ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարովի ավտոկայանատեղերին բնորոշ կարմիր գետնանշումներով գետնանշված և օրենսդրությամբ նախատեսված ճանապարհային նշաններով կահավորված հատվածում, իսկ համապատասխան տեսագրության միջոցով հաստատվում է այն փաստը, որ նշված տրանսպորտային միջոցը 28.03.2014 թվականին ժամը 14:42:13-ից մինչև ժամը 14:48:14-ը, այսինքն՝ 6 րոպե անընդմեջ կայանված է եղել:

### 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության վարչության պետին հասցեագրված «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի 31.03.2014 թվականի թիվ ԵԼ-ՓՄ/00141603 գրության համաձայն՝ «VAZ 21099» մակնիշի «11L099» համարանիշի տրանսպորտային միջոցը 28.03.2014 թվականին ժամը 14:42-ից մինչև 28.03.2014 թվականին ժամը 15:23-ը կայանվել է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի հատված 8-ում գտնվող ավտոկայանման տեղում և չի վճարել «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 25.12.2012 թվականի թիվ 557-Ն որոշմամբ նախատեսված տրանսպորտային միջոցների կայանատեղերի համար սահմանված տեղական տուրքը: Նույն գրությամբ հայտնվել է, որ ուղարկվում է «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից տեսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված իրավախախտման մասին ապացույցներ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու համար (գ.թ. 12).

2) Երևանի քաղաքապետարանի 04.04.2014 թվականի թիվ 0025433 արձանագրության համաձայն՝ «VAZ 21099» մակնիշի «11 LL 099» համարանիշի տրանսպորտային միջոցը 28.03.2014 թվականին ժամը 14:42-ից մինչև 28.03.2014 թվականին ժամը 15:23-ը կայանել է Երևանի Մաշտոցի պողոտայի հատված 8-ում գտնվող վճարովի ավտոկայանատեղում և չի



վճարել «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 25.12.2012 թվականի թիվ 557-Ն որոշմամբ նախատեսված տրանսպորտային միջոցների կայանատեղերի համար սահմանված տեղական տուրքը (**գ.թ. 8**)։

3) Երևանի քաղաքապետարանի 16.05.2014 թվականի թիվ Վ-20/1561 որոշմամբ Գեղամ Սիմոնյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի կիրառմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 5.000 ՀՀ դրամ տուգանքի (**գ.թ. 9**)։

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման փաստի ապացուցման վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 27-րդ հոդվածի պահանջները խախտելու հետևանքով առկա է աներևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով։

*Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում նույն տարածքում կայանված ավտոմեքենայի՝ երկու տարբեր ժամերին կարգաված լուսանկարները բավարար են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի դիպլոմից հայտնի նկարագրված իրավախախտման փաստը հաստատված համարելու և նույն հոդվածի սանկցիայի կիրառմամբ վարչական պատասխանատվություն կիրառելու համար։*

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում տուրքերի տեսակները, չափը, վճարման կարգը։

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ավտոկայանատեղի համար գանձվող տուրքը ավտոտրանսպորտային միջոցը ավտոկայանատեղում կայանելու համար նույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից հաստատված չափով և նույն օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է։

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ավտոկայանատեղի տուրքի վճարման ձևերը սահմանում է համայնքի ավագանին։

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ավտոկայանատեղի տուրքի վճարման պարտավորությունը ծագում է տրանսպորտային միջոցը ավտոկայանատեղում կայանելու պահից։

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ավտոկայանատեղի տուրք չվճարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն։

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վերը նշված իրավակարգավորումներից հետևում է, որ ավտոկայանատեղի համար գանձվող տուրքը համայնքի ավագանու կողմից հաստատված չափով համայնքի բյուջե գանձվող տեղական տուրք է, որի վճարման պարտավորությունը ծագում է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու պահից, իսկ այդ պարտականությունը չկատարելու իրավական հետևանքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության կիրառումն է: Ընդ որում, օրենսդիրն ավտոկայանատեղի տուրքի վճարման ձևերը սահմանելու լիազորությունը վերապահել է համայնքի ավագանուն:

«Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու թիվ 563-Ն որոշման՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 6-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ընթացիկ տարվա մեկ ժամվա տուրքը վճարվում է հետևյալ կերպ՝ ավտոկայանատեղում կայանելու պահից մինչև 5 րոպե տեղական տուրք չի վճարվում, իսկ 5 րոպեից ավելի կայանելու համար վճարվում է Երևան քաղաքի ավագանու որոշմամբ մեկ ժամվա համար սահմանված տուրքի դրույքաչափը՝ յուրաքանչյուր մեկ ժամի համար:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճելի իրավահարաբերության ծագման պահին Երևան քաղաքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը կարող էր համարվել տեղի ունեցած հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքերում.

1. ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը 5 րոպեից ավելի ժամանակով կայանվել է Երևան քաղաքի համայնքային վճարովի ավտոկայանատեղում,

2. չի վճարվել համայնքի ավագանու կողմից հաստատված չափով տեղական տուրք:

Այլ կերպ ասած՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման դեպքի (գանցանքի) առկայության համար այն դեպքում, երբ համայնքի ավագանու որոշմամբ նախատեսված է համայնքային վճարովի ավտոկայանատեղում որոշակի ժամանակահատված անվճար կայանելու հնարավորություն, անհրաժեշտ է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը սահմանված անվճար ժամանակահատվածից ավելի ժամանակով համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու և համայնքի ավագանու կողմից հաստատված չափով տեղական տուրք չվճարելու փաստերի միաժամանակյա առկայությունը:

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողությունը կարող է իրականացվել անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերի միջոցով (նկարահանող, ձայնագրանշանային համակարգեր և այլն):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ գուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը պետք է որոշի այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում, և նշված ապացույցներից յուրաքանչյուրը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործով բարձրացրած իրավական հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պայմաններում, երբ համայնքի ավագանու որոշմամբ նախատեսված է համայնքային վճարովի ավտոկայանատեղում որոշակի ժամանակահատված անվճար կայանելու հնարավորություն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման դեպքի առկայության համար անհրաժեշտ՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը սահմանված անվճար ժամանակահատվածից ավելի ժամանակով համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու փաստը կարող է հաստատվել այնպիսի ապացույցով, որը հնարավորություն կտա պարզելու (ստուգելու) կայանման տևողությունը:

Միաժամանակ նկատի ունենալով այն հանգամանքը, որ իրավակիրառ պրակտիկայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման դեպքն առավելապես հիմնավորվում է լուսանկարով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ապացուցման այս միջոցի կիրառման առանձնահատկություններին: Այսպես՝ Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ լուսանկարը տեխնիկական միջոցներով ստացված և նյութական կրիչի վրա պահպանված՝ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների և օպտիկական ազդանշանների՝ ժամանակի տվյալ պահին ունեցած ստատիկ՝ անշարժ պատկերի վերարտադրումն է: Այսինքն՝ լուսանկարը կարող է արձանագրել միայն օբյեկտիվ իրականության՝ լուսանկարահանման պահին ունեցած տեսքը, ինչը նշանակում է, որ այն չի կարող հիմք հանդիսանալ որևէ գործընթացի տևողությունը հաշվարկելու համար: Հետևաբար ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու տևողությունը լուսանկարներով կարող է հաշվարկվել միայն այն դեպքում, երբ լուսանկարների քանակությունը և դրանց լուսանկարահանման հաճախականությունը հնարավորություն կտան աներկբայորեն փաստելու, որ ավտոմեքենան նշված ժամանակահատվածում անընդմեջ կայանված է եղել վճարովի ավտոկայանատեղում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն ավտոմեքենայի՝ վճարովի ավտոկայանատեղում կայանված լինելու վերաբերյալ լուսանկարը բավարար չէ ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու իրավախախտման փաստը հաստատված համարելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու տևողությունը չի կարող հաշվարկվել նաև այնպիսի լուսանկարներով, որոնք կատարվել են այնպիսի ժամանակային միջակայքում, որը չի բացառում տրանսպորտային միջոցը ավտոկայանատեղից հեռանալու և կրկին վերադառնալու հանգամանքը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման դեպքի առկայությունը կարող է հիմնավորվել նաև տեսանյութով: Տեսանյութը տեխնիկական միջոցներով ստացված և նյութական կրիչի վրա պահպանված՝ օբյեկտիվ իրականության տեսողական ընկալման դինամիկ՝ շարժուն պատկերի վերարտադրումն է, որը հնարավորություն է տալիս արձանագրելու օբյեկտիվ իրականության (դրա տեսանկարահանվող հատվածի) փոփոխությունը՝ ժամանակի (տեսանկարահանման տևողության) ընթացքում: Այսինքն, ի տարբերություն լուսանկարի՝ տեսանյութը հնարավորություն է տալիս հաշվարկելու դրանում վերարտադրված գործընթացի տևողությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պայմաններում, երբ համայնքի ավագանու որոշմամբ նախատեսված է համայնքային վճարովի ավտոկայանատեղում որոշակի ժամանակահատված անվճար կայանելու հնարավորություն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման դեպքի առկայության համար անհրաժեշտ՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը սահմանված անվճար ժամանակահատվածից ավելի ժամանակով համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու փաստը կարող է հաստատվել տեսակյությամբ կամ այնպիսի լուսանկարներով, որոնք քանակությունը և դրանց լուսանկարահանման հաճախականությունը հնարավորություն կտան հաշվարկելու անընդմեջ կայանման տևողությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տեսանյութն ու լուսանկարները միակ ապացույցները չեն, որոնք կարող են հաստատել տրանսպորտային միջոցի կայանման տևողությունը: Վճռաբեկ դատարանը չի բացառում վճարովի ավտոկայանատեղերն այնպիսի տեխնիկական միջոցներով համարելու կամ ավտոկայանատեղերն այնպես կազմակերպելու հնարավորությունը, որը թույլ կտա այլ կերպ հաշվառել յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի կայանման տևողությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության վարչության պետին հասցեագրված՝ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի 31.03.2014 թվականի թիվ ԵԼ-ՓՄ/00141603 գրության համաձայն՝ «VAZ 21099» մակնիշի «11LL099» համարանիշի տրանսպորտային միջոցը 28.03.2014 թվականի ժամը 14:42-ից մինչև 28.03.2014 թվականի ժամը 15:23-ը կայանվել է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի հատված 8-ում գտնվող ավտոկայանման տեղում և չի վճարել «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 25.12.2012 թվականի թիվ 557-Ն որոշմամբ նախատեսված տրանսպորտային միջոցների կայանատեղերի համար սահմանված տեղական տուրքը: Նույն գրությամբ հայտնվել է, որ ուղարկվում են «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից տեսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված իրավախախտման մասին ապացույցներ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի վերը նշված գրության մեջ նկարագրված արարքի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետի կողմից 04.04.2014 թվականին կազմվել է թիվ 0025433 արձանագրությունը, որի հիման վրա էլ 16.05.2014 թվականին կայացվել է սույն գործով վիճարկվող թիվ Վ-20/1561 որոշումը:

Դատարան ներկայացված վիճարկման հայցով Գեղամ Սիմոնյանը, ի թիվս այլ փաստարկների, հայտնել է, որ բացակայում է իրավախախտման համար հիմք հանդիսացող այն ապացույցը, որով հնարավոր կլինի պնդել, որ իրեն պատկանող տրանսպորտային միջոցը վեց ռուպե տևողությամբ անընդմեջ կայանվել է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի 8-րդ հատվածում, իսկ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի 31.03.2014 թվականի թիվ ԵԼ-ՓՄ/00141603 գրությամբ և լուսանկարներով այն չի հաստատվում:

Դատարանը, հայցը մերժելով, որևէ կերպ չի անդրադարձել վերը նշված փաստարկին:

Վերաքննիչ դատարանը որպես Գեղամ Սիմոնյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժելու հիմնավորում նշել է. «...իրավախախտման փաստը հաստատվում է գործում առկա «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի 31.03.2014 թվականի թիվ ԵԼ-ՓՄ/00141603 գրությամբ, որը, բացի իրավախախտման դեպքի շարադրանքից, բովանդակում է նաև լուսանկարներ, որոնք պարունակում են տեսանկարահանող սարքի միջոցով ֆիքսված իրավախախտման տարեթիվը և ժամը, այն է՝ «2014-03-28 14:42:14» և «2014-03-28 15:23:56»»: Նշվածը Վերաքննիչ դատարանը համարել է բավարար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված և սույն վեճի լուծման հա-

մար էական նշանակություն ունեցող իրավախախտումը բողոքաբերի կողմից կատարված լինելու փաստը հաստատված համարելու համար:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմի վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վարչական դատավարությունում առանցքային նշանակություն ունի գործի փաստերն ի պաշտոնն («ex officio») պարզելու սկզբունքը, որը նպատակադրված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության և լուծման միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատավարական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնն պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու գործով օբյեկտիվ ճշմարտությունը և արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը (*տե՛ս Ալվարդ Եղիազարյանն և Տելեմակ Եղիազարյանն ընդդեմ ՀՀ աղերսի գուրու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների հարկացման հարցերով հանձնաժողովի թիվ ՎԳ/3654/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն պարզելու դատարանի լիազորության իրացման առանձնահատկությունների վերաբերյալ՝ ընդգծելով, որ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (*տե՛ս ՀՀ կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչությունն ընդդեմ «Զորջ ընդ Բրանդ» ՍՊԸ-ի թիվ ՎԳ/5525/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործի փաստերն ի պաշտոնն պարզելու գործընթացում դատարանի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում դատարանը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: Իսկ այդպիսի հետևողականության

ցուցաբերման անարդյունավետության դեպքում դատարանը պարտավոր է վիճելի մնացած փաստի չապացուցման բացասական հետևանքները դնել այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա՝ հաշվի առնելով նաև, որ վարչական դատավարությունում վարչական ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը (տե՛ս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Միքսնոր» ՍՊԸ-ի թիվ ՎԴ3/0043/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է ձեռնարկել համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար, պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները, անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով: Իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ վիճարկման հայցով գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով վարչական դատարանը պարտավոր է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ, համարել ոչ բավարար փաստական տվյալները, պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրա-

ծեշտ բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած հանգամանքներն ու դրանց ազդեցությունն այդ ակտի իրավաչափության վրա:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածներով սահմանված պարտականությունների ոչ պատշաճ կատարումը կարող է հանգեցնել ոչ արդյունավետ դատաքննության իրականացմանը, ինչը գործնականում կբացառի վեճի պատշաճ քննության և ճիշտ լուծման հնարավորությունը, հետևաբար, եթե դատարանը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում վկայակոչված իրավանդումների պահանջները և իր նախաձեռնությամբ չի ձեռնարկում համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար, չի պահանջում, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները, ապա դրա հետևանքով չի ապահովվում վարչական արդարադատության խնդիրների լուծումը, մասնավորապես՝ հանրային-իրավական վեճերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ու լուծումը, օրինականության վերականգնումն ու ամրապնդումը:

Սույն գործով վիճարկվող վարչական ակտը կայացնելու համար, ըստ դրանում առկա գրառման, հիմք է ընդունվել տեխնիկական միջոցի օգտագործմամբ ստացված տեսանյութը և 04.04.2014 թվականին կազմված թիվ 0025433 արձանագրությունը, հետևաբար նշված վարչական ակտի իրավաչափությունը որոշելու համար Դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի և 124-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պարտավոր էր ձեռնարկել համարժեք միջոցներ՝ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար, մասնավորապես, պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ ապացույց հանդիսացող տեխնիկական միջոցի օգտագործմամբ ստացված տեսանյութը: Մինչդեռ Դատարանը չի կատարել գործի պատշաճ քննությանն ու լուծմանն ուղղված անհրաժեշտ դատավարական գործողությունները, չի պահանջել վարչական ակտը կայացնելու համար հիմք հանդիսացած տեխնիկական միջոցի օգտագործմամբ ստացված տեսանյութը, ինչի արդյունքում հայցվորին վերագրված իրավախախտման փաստը հաստատված է համարել առանց բավարար ապացույցների, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը չի ձեռնարկել որևէ միջոց սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույցը, այն է՝ տեխնիկական միջոցի օգտագործմամբ ստացված տեսանյութը ձեռք բերելու ուղղությամբ և Գեղամ Մինոյանին վերագրվող խախտումը հաստատված է համարել նշված ապացույցի բացակայության պայմաններում՝ հիմք ընդունելով միայն գործում առկա երկու լուսանկարները, որոնցով չի հիմնավորվում ավտոմեքենայի՝ 5 բոպեից ավելի անընդմեջ կայանման փաստը, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա:

*Նշված պարճատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատրասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ քննությունն ապահովելու նպատակով գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.10.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/10555/05/13  
2016 թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/10555/05/13

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Բաբայան  
Ա. Աբովյան  
Ա. Սարգսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 26-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝  
Նախարարություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.01.2015  
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հուսիկ Մարգարյանի ընդդեմ Նախարարության՝  
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կտրվելի (այսուհետ՝ կտրվել)  
հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու  
մասին» որոշումը վերացնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Հուսիկ Մարգարյանը պահանջել է անվավեր ճանաչել կտրվելի  
հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու  
մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան)  
05.05.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.01.2015  
թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
05.05.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել սույն գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ 02.11.2009 թվականին կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը, 11.01.2010 թվականին կնքված համաձայնագիրը, վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի փորձաքննության ակտերը: Նշված ապացույցների սխալ գնահատման հետևանքով Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով եկել է այն եզրահանգման, որ «ԳՈՒԴԵՆ ՖԻԼԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկրված ապրանքը այլ անձի՝ «ԱՅԶԻՎԻԱՅ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Կազմակերպություն) չի հանձնվել: Մինչդեռ մաքսային մարմնի տրամադրության տակ եղած ապացույցները բավարար են Ընկերության կողմից ներկրված և մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների հանձնման փաստն ապացուցելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.01.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

## 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Իրավաբանական անձի պետական գրանցման թիվ 03Ա074680 վկայականի թիվ 001, թիվ 002 և թիվ 005 ներդիրների համաձայն՝ Հուսիկ Մարգարյանը 24.08.2007 թվականից մինչև 01.09.2010 թվականը հանդիսացել է Ընկերության տնօրեն (**հատոր 2–րդ, գ.թ. 18–20**):

2. Կոմիտեի հետաքննության վարչության պետի «Վարչական տույժ նշանակելու մասին» 13.09.2013 թվականի որոշման համաձայն՝ Հուսիկ Մարգարյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 198–րդ հոդվածով ենթարկվել է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 349.920.072 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Ընկերությունը 2009–2010 թվականների ընթացքում «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 699.840.143 ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանք (անկար խողովակ) և մաքսային հսկողության ներքո գտնվող այդ ապրանքն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնել է Կազմակերպությանը՝ վերամշակման համար (**հատոր 1–ին, գ.թ. 17–19**):

## 4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ մաքսային կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք անձը ենթակա է վարչական պարասխանարվության մաքսային կանոնների խախտման համար, եթե լրացել է ենթադրյալ իրավախախտումը կատարելու հնարավոր վերջին օրվանից եռամյա ժամկետը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ (...) մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից 3 տարվա ընթացքում (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում (...) (7) վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին նույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը (...):

ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները, ըստ մաքսային ռեժիմների, մաքսային հսկողության տակ են գտնվում (...) (գ) «Ժամանակավոր ներմուծում» և «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմների դեպքում՝ ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողման պահը (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը ՀՀ մաքսային օրենսգրքի 139.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ արգելվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը կամ ոչնչացնելը (...): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքները և տրանսպորտային միջոցները կորցնելու դեպքում անձը կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՀ մաքսային օրենսգրքի «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 38-րդ գլխի 205-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է նույն գլխով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նույն գլխին չհակասող մատով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հատուկ ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր հանրային վնասակարությունը, և անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, քանի որ այդ ժամկետի լրանալուց հետո վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելը դառնում է աննպատակահարմար: Փաստորեն, վաղեմության ժամկետն անցնելը վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք է. վաղեմության ժամկետն անցած լինելու դեպքում անձին վարչական պատասխանատվությունից ազատելն իրավասու վարչական մարմնի պարտականությունն է, այլ ոչ թե հայեցողական լիազորությունը: Ըստ այդմ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածը վաղեմության ժամկետի լրանալը դիտում է որպես վարչական գործով վարույթը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված վարչական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետները:

ՀՀ մաքսային օրենսգրքի 205-րդ հոդվածի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների (մաքսային կանոնների խախտումների) համար անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության օրենքով նախատեսված հատուկ ժամկետների ընթացքում, որոնց հաշվարկն սկսվում է մի դեպքում իրավախախտումը հայտնաբերվելու, իսկ մյուս դեպքում՝ այն կատարվելու օրվա-

նից: Այսպես՝ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների (մաքսային կանոնների խախտումների) համար անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, եթե չեն լրացել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկամյա ժամկետը և իրավախախտումը կատարվելու օրվանից եռամյա ժամկետը: Փաստորեն, մաքսային կանոնները խախտելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը երկու ամիս է, որը հաշվարկվում է իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից: Մինևույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է մաքսային կանոնները խախտելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մեկ այլ վաղեմության ժամկետ, որը տևում է 3 տարի և հաշվարկվում է ոչ թե իրավախախտման հայտնաբերման, այլ կատարման օրվանից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների (մաքսային կանոնների խախտումների) համար վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի հետ կապված օրենսդրական կազավորումները հանգում են հետևյալ երկու կանոններին.

1) անձը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար, եթե լրացել է իրավախախտման հայտնաբերման պահից երկամյա ժամկետը,

2) անձը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար, եթե լրացել է իրավախախտման կատարման պահից եռամյա ժամկետը,

ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով ամրագրված իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել մաքսային այն կանոնների խախտման համար, որոնք կապված են մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների նկատմամբ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 139.1-րդ հոդվածի ուժով գործող սահմանափակումների հետ և չեն առնչվում պետության ֆինանսական շահերին, մաքսային վճարների վճարման պարտականության կատարմանը, ինչպես նաև այդպիսի պարտականության կատարման ապահովմանը: Նշված վարչական իրավախախտումն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության սահմանված կարգի դեմ և դրսևորվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու եղանակով: Նշված արարքների կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնված, օտարված, ոչնչացված կամ կորցված ապրանքի մաքսային արժեքի հիսուս տոկոսի չափով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթից բխում է, որ «ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքները և տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողման պահը գտնվում են մաքսային հսկողության ներքո: Հետևաբար ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է առաջանալ նաև «ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքները և տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողումն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Հուսիկ Մարգարյանի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Կոմիտեի հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը: Նշված վարչական ակտով Ընկերության նախկին տնօրեն Հուսիկ Մարգարյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով ենթարկվել է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 349.920.072 ՀՀ դրամի չափով, այն

բանի համար, որ Ընկերությունը 2009–2010 թվականների ընթացքում «ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 699.840.143 ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանք (անկար խողովակ) և մաքսային հսկողության ներքո գտնվող այդ ապրանքն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնել է Կազմակերպությանը՝ վերամշակման համար:

Սույն գործով Դատարանը բավարարել է Հուսիկ Մարգարյանի հայցը և անվավեր է ճանաչել Կոմիտեի հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը՝ պատճառաբանելով նաև, որ վիճարկվող վարչական ակտի ընդունման պահին՝ 13.09.2013 թվականին, ՀՀ մաքսային օրենսգրքի 198–րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար Հուսիկ Մարգարյանին վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության եռամյա ժամկետը լրացած է եղել, քանի որ Հուսիկ Մարգարյանի՝ Ընկերության տնօրենի պաշտոնում պաշտոնավարման վերջին օրը 01.09.2010 թվականն է:

Վերաքննիչ դատարանը մերժել է Նախարարության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության հիմնավոր համարելով Դատարանի վերոգրյալ դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանը, գնահատելով ստորադաս դատարանների վերոգրյալ եզրահանգումների հիմնավորվածությունը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Կոմիտեի հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը Ընկերության նախկին տնօրեն Հուսիկ Մարգարյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 198–րդ հոդվածով ենթարկվել է վարչական պատասխանատվության այն բանի համար, որ Ընկերությունը 2009–2010 թվականների ընթացքում «ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքն (անկար խողովակը) առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնել է Կազմակերպությանը: Ընդ որում, սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է 13.09.2013 թվականին, իսկ Հուսիկ Մարգարյանը Ընկերության տնօրենի պաշտոնը զբաղեցրել է 24.08.2007 թվականից մինչև 01.09.2010 թվականը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների (մաքսային կանոնների խախտումների) համար անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, եթե չեն լրացել այդ պատասխանատվության վաղեմության ժամկետները՝ իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկամյա ժամկետը և իրավախախտումը կատարվելու օրվանից եռամյա ժամկետը: Տվյալ դեպքում Ընկերության նախկին տնօրեն Հուսիկ Մարգարյանի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 198–րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումը տեսականորեն կարող էր կատարվել առավելագույնը մինչև 01.09.2010 թվականը, այսինքն՝ մինչև այն պահը, երբ Հուսիկ Մարգարյանը հանդիսացել է Ընկերության տնօրեն: Փաստորեն, սույն գործով վիճարկվող վարչական ակտով Ընկերության նախկին տնօրեն Հուսիկ Մարգարյանին վերագրվող ենթադրյալ իրավախախտման կատարման վերջին օրը, խախտման ստույգ օրը պարզ չլինելու պայմաններում, կարող էր հանդիսանալ ամենաուշը 01.09.2010 թվականը (Հուսիկ Մարգարյանի տնօրեն հանդիսանալու վերջնաժամկետի օր), և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37–րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության վաղեմության եռամյա ժամկետի հաշվարկը պետք է կատարել հենց այդ օրվանից՝ 01.09.2010 թվականից: Հետևաբար Ընկերության նախկին տնօրեն Հուսիկ Մարգարյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 198–րդ հոդվածով նախատեսված զանցանքի կատարման համար վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է 01.09.2013 թվականին՝ ենթադրյալ իրավախախտման ենթադրյալ կատարման օրվանից երեք տարի հետո:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Ընկերության նախկին տնօրեն Հուսիկ Մարգարյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 198–րդ հոդվածով նախատեսված զանցանքի կատարման համար վարչական պատասխանատվության է ենթարկվել 13.09.2013 թվականին՝ Կոմիտեի հետաքննության վարչության պետի «Վարչական տույժ

նշանակելու մասին» որոշմամբ, այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության վաղեմության եռամյա ժամկետն անցնելուց հետո: Հետևաբար սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ և 247-րդ հոդվածների խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման, քանի որ անձը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար, եթե լրացել է իրավախախտման կատարման պահից եռամյա ժամկետը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, անվավեր ճանաչելով Կոմիտեի հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, որպիսի պարագայում և վճռաբեկ բողոքում առաջ քաշած հանգամանքները լիովին անհիմն են: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Նախարարության կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարած լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.01.2015 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/9692/05/13  
2016 թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/9692/05/13

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Աբովյան  
Ա. Բաբայան  
Ա. Սարգսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետի և Ռուբեն Աղաջանյանի  
վճռաբեկ բողոքները ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.07.2015 թվականի որոշման  
դեմ՝ ըստ հայցի Սասունիկ Մշեցյանի ընդդեմ Երևանի քաղաքապետի, Երևանի քաղաքա-  
պետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության (այ-  
սուհետ՝ Ծառայություն) պետի, երրորդ անձ Ռուբեն Աղաջանյանի՝ Ծառայության պետի  
02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշումը վերացնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Սասունիկ Մշեցյանը պահանջել է վերացնել Ծառայության պետի  
02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան)  
06.11.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ծառայության պետի  
02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշումը ճանաչվել է անվավեր, իսկ Սասունիկ Մշեցյանի  
հայցը՝ Ծառայության պետի դեմ ուղղված պահանջի մատով, մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.07.2015  
թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետի և Ռուբեն Աղաջանյանի վերաքննիչ բողոքնե-  
րը մերժվել են, և Դատարանի 06.11.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Երևանի քաղաքապետը և Ռուբեն  
Աղաջանյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

**2. Երևանի քաղաքապետի վճռարենկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռարենկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91-Ն որոշումը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի թիվ 47 հասցեում գտնվող հարթակի բեռնացման աշխատանքները, որոնք Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշմամբ հասցեագրվում են Սասունիկ Մշեցյանին, ներառված չեն ՀՀ կառավարության կողմից սահմանված այն շինարարական աշխատանքների ցանկում, որոնց կատարման համար շինարարության թույլտվություն չի պահանջվում: Այսինքն՝ Սասունիկ Մշեցյանի կողմից իրականացված շինարարական աշխատանքների համար պահանջվում է շինարարության թույլտվություն, որը տվյալ դեպքում առկա չի եղել: Հետևաբար Սասունիկ Մշեցյանը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Սասունիկ Մշեցյանի կողմից կատարված ինքնակամ շինարարության հետևանքով խախտվել են Ռուբեն Աղաջանյանի իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.07.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

**2.1. Ռուբեն Աղաջանյանի վճռարենկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռարենկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ, 245-րդ, 247-րդ, 252-րդ, 255-րդ, 275-րդ և 279-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարչության մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշումը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ և 251-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 19-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Սասունիկ Մշեցյանի կողմից կատարված շինարարական աշխատանքները դասվում են շինարարության թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքների շարքին, քանի որ ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշման թիվ 2 հավելվածի 5-րդ կետի «գ», «դ» և «ե» ենթակետերը տվյալ դեպքում կիրառելի չեն: Փաստորեն, Սասունիկ Մշեցյանը կատարել է խնդրո առարկա շինարարական աշխատանքներն ինքնակամ կերպով՝ առանց թույլտվության, հետևաբար վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշումն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են:

Միաժամանակ սույն գործի քննությանը հաստատվել է, որ Սասունիկ Մշեցյանի կատարած շինարարական աշխատանքների հետևանքով փակվել է Ռուբեն Աղաջանյանի տան պատշգամբի և ննջարանի լուսավորությունը: Հետևաբար Դատարանը, անվավեր ճանաչելով վիճարկվող վարչական ակտը, Ռուբեն Աղաջանյանին գրկել է իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:



Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.07.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել, կամ գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի կողմից 09.08.2013 թվականին կազմված թիվ 008310 արձանագրության համաձայն՝ վերջինս հայտնաբերել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտում՝ արձանագրելով, որ Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի թիվ 47 տան 2-րդ հարկի տիրապետող Սասունիկ Մշեցյանը 2-րդ հարկի աստիճանահարթակի վրա իրականացրել է ինքնակամ բեռոնե աշխատանքներ, որի հետևանքով բնական լուսավորությունից զրկվել է Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի թիվ 45 տան պատշգամբը և ննջարանը (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

2. Ծառայության պետի 02.10.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-34/33 որոշման համաձայն՝ Սասունիկ Մշեցյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինս Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի թիվ 47 հասցեում՝ 2-րդ հարկի աստիճանավանդակի վրա, ինքնակամ իրականացրել է բեռոնե շինարարական աշխատանքներ: Մինչև ժամանակ նույն որոշմամբ Սասունիկ Մշեցյանը պարտավորեցվել է քանդել ինքնակամ կառույցը և տարածքը բերել նախկին տեսքի (**հատոր 1-ին, գ.թ. 14-15**):

3. Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշումը վերացնելու հայցապահանջի հիմքում Սասունիկ Մշեցյանը դրել է ոչ միայն այն փաստարկը, որ իր կողմից իրականացված շինարարական աշխատանքների համար շինարարության թույլտվություն չի պահանջվում, այլ նաև վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում թույլ տրված ընթացակարգային խախտումներին առնչվող մի շարք այլ փաստարկներ, մասնավորապես՝ վիճարկվող վարչական ակտը կազմվել է հասցեատիրոջ է ուղարկվել օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ, վիճարկվող վարչական ակտը չի համապատասխանում գրավոր վարչական ակտին ներկայացվող օրենսդրական պահանջներին, վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում խախտվել է Սասունիկ Մշեցյանի լավամ լինելու իրավունքը և այլն (**հատոր 1-ին, գ.թ. 3-10, հատոր 2-րդ, 69-82, հատոր 3-րդ, գ. թ. 80-88**):

### **4. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքներում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անորոշաժամայն այն իրավական հարցին, թե առանց շինարարական թույլտվության շինարարական աշխատանքներ կատարելու համար անձին վարչական պարտախանարվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը ենթակա է արդյոք անվավեր ճանաչման այն հիմքով, որ տվյալ շինարարական աշխատանքների կատարման համար շինարարու-

թյան թույլտվություն չի պահանջվում, այն պայմաններում, երբ կարարված շինարարական աշխատանքներն ընդգրկված չեն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների ցանկում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը» վերտառությամբ 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: Գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա բնակելի տուն ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և կարգավորում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող (...): (...) Կառուցապատողները պարտավոր են՝ (ա) կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ (...) շինարարության թույլտվության հիման վրա, (...) (գ) քաղաքաշինական գործունեություն (բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) իրականացնել բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան (...): (...) Նույն հոդվածով նախատեսված պարտականությունները չեն առաջանում, եթե իրականացվող քաղաքաշինական գործունեությունը չի պահանջում շինարարության թույլտվություն՝ համաձայն նույն օրենքի 23-րդ հոդվածի (...):

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: (...) Շինարարության թույլտվություն չի պահանջվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված շենքերի, շինությունների ընկացիկ նորոգման, ներքին հարդարման տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը և չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման (ուժի մեջ է 27.06.2015 թվականից) թիվ 1 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառու-

ցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի 26-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտները, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հետևյալ հինգ կատեգորիաների՝

- 1) ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ I կատեգորիա.
- 2) միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ II կատեգորիա.
- 3) միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ III կատեգորիա.
- 4) բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ IV կատեգորիա.
- 5) բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ V կատեգորիա:

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ (...) ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների (...):

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում վարչական պատասխանատվություն է նախատեսել շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված են շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու զանցակազմի հետևյալ դրսևորումները.

1) սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը (բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան),

2) գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա բնակելի տուն ինքնակամ կառուցելը,

3) հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը:

Թեև վկայակոչված իրավախախտումներից յուրաքանչյուրն ունի միայն իրեն բնորոշ առանձնահատկությունները (արարքի կատարման վայրը, կառուցվող շինության տեսակը, արարքը կատարող սուբյեկտը, կիրառվող սանկցիան), սակայն դրանց համար ընդհանուրն այն է, որ բոլոր դեպքերում այդ զանցակազմերը կարող են առկա լինել միայն ինքնակամ կառույցի (շենքի, շինության) կառուցման պարագայում: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված բոլոր արարքներն ընդգրկվում են շենքեր ու շինություններ ինքնակամ կառուցելու զանցանքի միասնական հասկացության մեջ, որի ոտնձգության օբյեկտը քաղաքաշինության բնագավառում օրենսդրությամբ սահմանված իրավակարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների ամբողջությունն է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված վարչական իրավախախտման առարկան ինքնակամ կառույցն է (շենքը, շինությունը), հետևաբար նշված իրավադրույթի ուժով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար նախևառաջ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք անձի կողմից կատարված շինարարական աշխատանքներն ուղղված են եղել ինքնակամ կառույցի (շենքի, շինության) իրականացմանը, թե ոչ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինքնակամ կառույցի օրենսդրական բնորոշումը տրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետում, որի համաձայն՝ կառույցը համարվում է ինքնակամ, եթե այն կառուցվել է օրենքով կամ այլ իրավական ակտերով այդ նպատակի համար չհատկացված հողամասում, կառուցվել կամ վերակառուցվել է առանց թույլտվության, կառուցվել կամ վերակառուցվել է թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական կանոնների էական խախտումներով:

Այսպիսով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով անձին պատասխանատվության ենթարկելու համար, ի թիվս նշված իրավադրույթում նկարագրված իրավախախտման այլ հատկանիշների, անհրաժեշտ է հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայությունը.

1. անձը կատարել է շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ օրենքով կամ այլ իրավական ակտերով այդ նպատակի համար չհատկացված հողամասում, կամ

2. անձը կատարել է շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ առանց թույլտվության, կամ

3. անձը կատարել է շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական կանոնների էական խախտումներով:

Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի համար վարչական պատասխանատվության առաջացման առանձնահատկություններին այն պայմաններում, երբ անձը կատարել է շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ առանց թույլտվության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով, որի 6-րդ հոդվածի համաձայն՝ կառուցապատողները՝ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողները, պարտավոր են իրականացնել քաղաքաշինական գործունեություն շինարարության թույլտվության հիման վրա և բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան, բացառությամբ այն դեպքի, երբ նույն օրենքի համաձայն՝ իրականացվող քաղաքաշինական գործունեությունը շինարարության թույլտվություն չի պահանջում: Ընդ որում, շինարարության թույլտվության հասկացությունն օրենսդիրը սահմանել է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, որի համաձայն՝ շինարարության թույլտվությունը նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում կամ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որոշակի շինարարական գործունեություն իրականացնելու՝ կառուցապատողի իրավունքը հաստատող փաստաթուղթ է: Միևնույն ժամանակ քննարկվող օրենքը նախատեսում է, որ ոչ բոլոր դեպքերում է շինարարական աշխատանքների կատարման համար պահանջվում շինարարության թույլտվության առկայություն: Այսինքն՝ օրենսդրի տեսանկյունից որոշ դեպքերում անձը կարող է իրականացնել շինարարական գործունեություն առանց տվյալ շինարարական աշխատանքները կատարելու իրավունքը հաստատող փաստաթղթի առկայության:

Վերոգրյալ իրավական վերլուծությունները վկայում են այն մասին, որ քաղաքաշինական գործունեության ոլորտում օրենսդրի կողմից սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ որոշակի շինարարական գործունեություն իրականացնելու համար շինարարության թույլտվության առկայությունը պարտադիր է: Նշված ընդհանուր կանոնից օրենսդիրը կատարել է մեկ բացառություն, որը նախատեսված է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում և հանգում է հետևյալին. շինարարության թույլտվություն չի պահանջվում այն շինարարական աշխատանքների կատարման համար, որոնք բավարարում են ստորև ներկայացված բոլոր պահանջներին.

1. տվյալ շինարարական աշխատանքները շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքներ են,

2. տվյալ շինարարական աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության սահմանած ցանկում,

3. տվյալ շինարարական աշխատանքները չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը,

4. տվյալ շինարարական աշխատանքները չեն հակասում սահմանված սերվիտուտների:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների հիման վրա ՀՀ կառավարությունը 19.03.2015 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշումը: Նշված որոշման թիվ 1 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի 26-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտները, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հինգ կատեգորիաների, որոնցից 1-ինը ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներն են. դրանց թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների: Ընդ որում, ցածր ռիսկայնության աստիճանի (1-ին կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների) սպառիչ թվարկումը կատարված է ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման թիվ 4 հավելվածի թիվ 1 ցանկում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ կառավարության վերոգրյալ որոշումն ուժի մեջ է մտել 27.06.2015 թվականին, իսկ մինչ այդ գործում էր նույն հասարակական հարաբերությունները կարգավորող մեկ այլ ենթաօրենսդրական ակտ՝ ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» թիվ 91 որոշումը (**ուժը կորցրել է 27.06.2015 թվականին**), որի 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված էր Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնության աստիճանի (1-ին կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների) ցանկը, որոնց կատարման համար շինարարության թույլտվություն չէր պահանջվում՝ համաձայն նույն որոշման թիվ 2 հավելվածի:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված կոնկրետ շինարարական աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվություն չպահանջվելը բացառում է առանց շինարարական թույլտվության այդպիսի շինարարական աշխատանքներ կատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվության առաջացումը: Հետևաբար առանց շինարարական թույլտվության շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ կատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված զանցակազմի շրջանակներում առաջացող վարչական պատասխանատվության հարցը լուծելու համար անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ շինարարական աշխատանքների կատարման համար թույլտվություն պահանջվելու կամ չպահանջվելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կոնկրետ շինարարական գործունեության (շինարարական աշխատանքների) համար շինարարության թույլտվություն պահանջվելու կամ չպահանջվելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում ամրագրված պահանջները, մասնավորապես այն հանգամանքը, թե արդյոք տվյալ շինարարական աշխատանքները ներառված են շինարարության թույլտվության չպահանջվող աշխատանքների՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ցանկում որպես ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքներ: Բացի այդ, նշված հարցը պարզելու համար անհրաժեշտ է բացահայտել նաև այն, թե արդյոք տվյալ շինարարական աշխատանքները չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը և չեն հակասում սահմանված սերվիտուտների:

Անփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը կատարում է հետևյալ եզրահանգումները.

1) անձը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության առանց շինարարական թույլտվության շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ կատարելու համար, եթե տվյալ շինարարական աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվություն չի պահանջվում,

2) առանց շինարարական թույլտվության շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ կատարելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս վարչական մարմինը պարտավոր է պարզել, թե արդյոք տվյալ շինարարական աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվություն պահանջվում է, թե ոչ,

3) անձի կողմից իրականացված շինարարական աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվություն պահանջվելու կամ չպահանջվելու հանգամանքը ենթակա է պարզման՝ հիմք ընդունելով ներքոգրյալ չափանիշները.

(ա) արդյոք տվյալ շինարարական աշխատանքները ներառված են շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ցանկում՝ որպես ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքներ,

(բ) արդյոք տվյալ շինարարական աշխատանքները չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը և չեն հակասում սահմանված սերվիտուտներին,

4) խնդրո առարկա իրավախախտման համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված համապատասխան վարչական վարույթի ընթացքում վերը նշված (ա) և (բ) կետերում առաջ քաշված հարցերը պարզվելու և դրանց դրական պատասխան տրվելու դեպքում վարչական մարմինը չի կարող անձին ենթարկել վարչական պատասխանատվության առանց շինարարական թույլտվության շենքերի, շինությունների կամ այլ կառույցների կառուցմանը կամ վերակառուցմանն ուղղված շինարարական աշխատանքներ կատարելու համար:

#### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտով՝ Ծառայության պետի 02.10.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-34/33 որոշմամբ, Սատունիկ Մշեցյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինս Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի թիվ 47 հասցեում՝ 2-րդ հարկի աստիճանավանդակի վրա, ինքնակամ իրականացրել է բետոնե շինարարական աշխատանքներ:

Սույն գործով Դատարանը Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշումը ճանաչել է անվավեր՝ պատճառաբանելով, որ Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի թիվ 47 հասցեում Սատունիկ Մշեցյանի կատարած շինարարական աշխատանքները համապատասխանում են ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշման թիվ 2 հավելվածի «Միջհարկային ծածկեր և հատակներ» վերտառությամբ 5-րդ կետի «գ», «դ» և «ե» ենթակետերում նախատեսված շինարարական աշխատանքներին, որոնց կատարման համար շինարարության թույլտվություն չի պահանջվում: Հետևաբար, ըստ Դատարանի վճռի Սատունիկ Մշեցյանը թույլ չի տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտում: Բացի այդ, Դատարանը վճռում նշել է նաև, որ «(...) նման պայմաններում, երբ արձանագրվածը բավարար է հայցը հիմնավոր ճանաչելու համար, (...) բացակայում է հայցի ընթացակարգային հիմքերը քննարկելու անհրաժեշտությունը (...):»:

Վերաքննիչ դատարանը, բողոքարկվող որոշմամբ մերժելով Ռուբեն Աղաջանյանի և Երևանի քաղաքապետի վերաքննիչ բողոքները և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, ըստ էության համաձայնել է Դատարանի այն դիրքորոշման հետ, որ տվյալ դեպքում Սատու-

նիկ Մշեցյանի կատարած շինարարական աշխատանքների համար շինարարության թույլտվություն չի պահանջում: Մինչև ժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում թույլ են տրվել հետևյալ խախտումները.

1) չի պարզվել այն հանգամանքը, թե Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի թիվ 47 հասցեում Սասունիկ Մշեցյանի կատարած շինարարական աշխատանքները կոնկրետ որ հիմքով են որակվել որպես ինքնակամ, այսինքն՝ տվյալ դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմի առկայությունը չի ապացուցվել,

2) չի պարզվել Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշմամբ Սասունիկ Մշեցյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածը,

3) չի պարզվել Սասունիկ Մշեցյանի կատարած շինարարական աշխատանքների բնույթն ու ծավալը:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթում թույլ տրված վերոգրյալ բացթողումների հետևանքով խախտվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ, 247-րդ, 252-րդ, 275-րդ, 279-րդ հոդվածների պահանջները, իսկ նշված խախտումների առկայությունն ինքնին բավարար հիմք է վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու համար՝ անկախ Սասունիկ Մշեցյանի կատարած շինարարական աշխատանքների համար շինարարության թույլտվություն պահանջվելու կամ չպահանջվելու հանգամանքից:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործում առկա փաստական հանգամանքների ուսումնասիրությունից հետևում է, որ Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշմամբ Սասունիկ Մշեցյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով՝ առանց շինարարության թույլտվության Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի թիվ 47 հասցեի բնակելի տան աստիճանահարթակի վրա առկա անցքի փակմանն ուղղված շինարարական աշխատանքներ կատարելու համար: Հետևաբար սույն գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս ստորադաս դատարանները պետք է պարզեին, *inter alia*, թե արդյոք վերը նշված շինարարական աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվություն պահանջվում է, թե ոչ: Սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերը նշված հարցին անդրադառնալիս ստորադաս դատարանները մասնավորապես պետք է բացահայտեին հետևյալ հարցերը. (ա) արդյոք Սասունիկ Մշեցյանի կողմից կատարված շինարարական աշխատանքները ներառված են շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ցանկում որպես ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքներ, (բ) արդյոք Սասունիկ Մշեցյանի կողմից կատարված շինարարական աշխատանքները չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը և չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Սասունիկ Մշեցյանի կողմից խնդրո առարկա շինարարական աշխատանքների կատարման և նրան վարչական պատասխանատվության ենթարկելու ժամանակ (2013 թվական) շինարարության թույլտվություն չպահանջվող ցածր ռիսկայնության շինարարական աշխատանքների ցանկը սահմանված է եղել ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշմամբ: Հիմք ընդունելով վերը նշված նորմատիվ իրավական ակտով հաստատված ցանկը՝ Դատարանը գտել է, որ Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշմամբ Սասունիկ Մշեցյանին մեղսագրվող շինարարական աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվություն չի պահանջվում, քանի որ այդ շինարարական աշխատանքները համապատասխանում են ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշման թիվ 2 հավելվածի «Միջհարկային ծածկեր և հատակներ» վերտառությամբ 5-րդ կետի «գ», «դ» և «ե» ենթակետերում նախատեսված շինարարական աշխատանքներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշման թիվ 2 հավելվածի **(ուժը կորցրել է 27.06.2015 թվականին)** «Միջհարկային ծածկեր և հատակներ» վերտառությամբ 5-րդ կետում, մասնավորապես, ներառված են հետևյալ շինարարական աշխատանքները, որոնց կատարման համար շինարարության թույլտվություն չի պահանջվում. (գ) ցեմենտային, բետոնե և ասֆալտապատ հատակների փոսերի լցում, (դ) հատակների ու դրանց հիմնատակների նորոգում, (ե) կերամիկական, ցեմենտե, մարմարե և այլ սալիկավոր հատակների վնասված սալիկների փոխում, փոխարինում և պոկվածների տեղադրում:

Սույն գործի փաստերի և վերոգրյալ իրավադրույթների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշմամբ նշված շինարարական աշխատանքները չեն կարող համարվել հատակների փոսերի լցում կամ հատակների ու դրանց հիմնատակների նորոգում կամ սալիկավոր հատակների վնասված սալիկների փոխում, փոխարինում և պոկվածների տեղադրում: Այսպես՝ սույն գործի քննությամբ հաստատվել է, որ Սասունիկ Մշեցյանը ոչ թե լցրել է աստիճանահարթակի հատակի վրա առկա փոսը կամ նորոգել է աստիճանահարթակի հատակը (հիմնատակը), այլ փակել է աստիճանահարթակի վրա առկա անցքը՝ ըստ էության մեծացնելով աստիճանահարթակի հատակի բետոնապատ մակերեսը: Բացի այդ, Սասունիկ Մշեցյանի կատարած շինարարական աշխատանքները որևէ կերպ չեն կարող որակվել որպես կերամիկական, ցեմենտե, մարմարե և այլ սալիկավոր հատակների վնասված սալիկների փոխում, փոխարինում և պոկվածների տեղադրում, քանի որ սույն գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվում է այն, որ աստիճանահարթակի հատակը սալիկավոր չէ, և Սասունիկ Մշեցյանը չի փոխել, փոխարինել այդ հատակի սալիկները կամ չի տեղադրել պոկված սալիկներ:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ Երևանի Ավան 6-րդ փողոցի թիվ 47 հասցեում Սասունիկ Մշեցյանի կատարած շինարարական աշխատանքները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշման՝ իրավահարաբերության ծագման պահին գործող թիվ 2 հավելվածի «Միջհարկային ծածկեր և հատակներ» վերտառությամբ 5-րդ կետի «գ», «դ» և «ե» ենթակետերում նախատեսված շինարարական աշխատանքներին: Ավելին՝ Սասունիկ Մշեցյանի կողմից կատարված շինարարական աշխատանքներն առհասարակ ընդգրկված չեն շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների՝ ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշման՝ իրավահարաբերության ծագման պահին գործող թիվ 2 հավելվածով սահմանված ցանկում որպես ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքներ:

Փաստորեն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշմամբ Սասունիկ Մշեցյանին հասցեագրվող շինարարական աշխատանքների կատարման համար իրականում պահանջվել է շինարարության թույլտվություն: Հետևաբար նշված վարչական ակտը չէր կարող անվավեր ճանաչվել այն հիմքով, որ խնդրո առարկա շինարարական աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվություն չի պահանջվում, ինչն անտեսվել է թե՛ Դատարանի, թե՛ Վերաքննիչ դատարանի կողմից:

Անդրադառնալով Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշումը, անկախ Սասունիկ Մշեցյանի կատարած շինարարական աշխատանքների համար շինարարության թույլտվություն պահանջվելու կամ չպահանջվելու հանգամանքից անվավեր ճանաչման ենթակա լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներից մեկում անդրադառնալով վարչական դատավարությունում վերաքննության սահմաններին, արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ թեև վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար, սակայն չի կարող սեփական



նախաձեռնությամբ դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել (*տե՛ս ՀՀ առողջապահության նախարարությունն ընդդեմ «Ռեվերդի» ՍՊԸ-ի թիվ ՎԳ/3271/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը Ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշումն անվավեր ճանաչելու մասին դատական ակտ է կայացրել բացառապես այն հիմքով, որ Սասունիկ Մշեցյանը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով, քանի որ վերջինս կատարել է շինարարության թույլտվություն չպահանջող շինարարական աշխատանքներ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի նշված եզրահանգումը, իր դատական ակտում վկայակոչել է վիճարկվող վարչական ակտի անվավերության ևս մի քանի հիմքեր, որոնք, մասնավորապես, վերաբերում են վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում առերևույթ թույլ տրված ընթացակարգային խախտումներին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը դուրս է եկել Դատարանի վճիռը վերաքննության կարգով վերանայման ենթարկելու օրենսդրորեն կանխորոշված սահմաններից, քանի որ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի հիմքում դրել է այնպիսի իրավական և փաստական հանգամանքներ, որոնք Դատարանում քննության առարկա չեն դարձվել:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150–152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի մնացած հիմքերն ու հիմնավորումները քննության առարկա դարձնելու համար գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

### **5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169–171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Ռուբեն Աղաջանյանի վճռաբեկ բողոքը բավարարել, իսկ Երևանի քաղաքապետի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.07.2015 թվականի որոշումը և գործը՝ ըստ հայցի Սասունիկ Մշեցյանի ընդդեմ Երևանի քաղաքապետի, երրորդ անձ Ռուբեն Աղաջանյանի՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 02.10.2013 թվականի թիվ Վ-34/33 որոշումը վերացնելու պահանջի մասին, ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/12466/05/13  
2016 թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/12466/05/13

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Առաքելյան  
Ք. Մկոյան  
Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Սարգիս Խարիկյանի ներկայացուցիչ Կարինե  
Քաջազնունու վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.10.2015 թվականի  
որոշման դեմ՝ ըստ հայցի Սարգիս Խարիկյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այ-  
սուհետ՝ Քաղաքապետարան), ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի  
պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), երրորդ անձինք՝ Նաիրա Մանուկյանի, Գևորգ  
Խարիկյանի՝ Երևանի քաղաքապետի 19.04.2013 թվականի թիվ 1805-Ա որոշումն անվավեր  
ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ այդ որոշման հիման վրա Նաիրա Մանու-  
կյանի անվամբ 18.05.2013 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումն ան-  
վավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Սարգիս Խարիկյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի  
քաղաքապետի 19.04.2013 թվականի թիվ 1805-Ա որոշումը և որպես անվավերության  
հետևանք՝ այդ որոշման հիման վրա Նաիրա Մանուկյանի անվամբ 18.05.2013 թվականին  
կատարված իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան)  
19.03.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.10.2015  
թվականի որոշմամբ Նաիրա Մանուկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, իսկ Քաղա-  
քապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 19.03.2015  
թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է Դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սարգիս Խարիկյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Քաղաքապետարանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածները:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վարչական վարույթի նյութերով չի հաստատվում «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների կիրառման համար անհրաժեշտ բոլոր պայմանների և պահանջների առկայությունը, ինչը հիմք է վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու համար: Այսպես, սույն գործի քննությանը չի հաստատվել այն հանգամանքը, որ Նաիրա Մանուկյանը Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ունեցել է իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ, որը չի պահպանվել: Բացի այդ, Սարգիս Խարիկյանը հաշվառված է եղել նշված հասցեում դեռևս 1987 թվականից, ուստի վերջինս ևս գույքային իրավունքներ ունի վիճելի անշարժ գույքի նկատմամբ: Հետևաբար Սարգիս Խարիկյանը պետք է մասնակից դարձվեր Երևանի քաղաքապետի 19.04.2013 թվականի թիվ 1805-Մ որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթին, ինչը տեղի չի ունեցել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 հասցեում գտնվող անշարժ գույքը պետական սեփականություն է, ուստի այդ անշարժ գույքի նկատմամբ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը չի կարող կիրառելի լինել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.10.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.03.2015 թվականի վճիռը:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ սույն գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները կարող են պարզվել միայն գործի նոր քննության ընթացքում:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետին հասցեագրված 12.03.2013 թվականի դիմումով Նաիրա Մանուկյանը խնդրել է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի համաձայն օրինականացնել Ծերենցի փողոցի թիվ 82 տան օրինական գույքին կից շինությունը և/կամ հողամասը (**հատոր 1-ին, գ.թ. 34**).

2) Երևանի քաղաքապետի գլխավոր խորհրդականին հասցեագրած 03.04.2013 թվականի թիվ 20-Ել-513 գրությամբ Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետը Երևան քաղաքի Ծերենցի փողոցի 82 հասցեում Նաիրա Մանուկյանին պատկանող բնակելի տան կարգավիճակի մասին հայտնել է հետևյալը. «(...) տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ նշված հասցեում հողա-

մասի մակերեսը փաստացի կազմում է 210,6քմ, որն ամբողջությամբ տնօրինվում է առանց փաստաթղթերի (...» (**հատոր 2–րդ, գ.թ. 30**).

3) Երևան քաղաքի Մալաթիա–Մեքաստիա վարչական շրջանի ղեկավարի 08.05.2013 թվականի տեղեկանքի համաձայն՝ Նաիրա Մանուկյանը 29.05.1999 թվականից փաստացի բնակվում է Երևանի Ծերենցի թիվ 82 տանը (**հատոր 1–ին, գ.թ. 36**).

4) Երևանի քաղաքապետը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387–Ն որոշմամբ, 19.04.2013 թվականին ընդունել է «Երևանի Ծերենցի փողոցի Հ.82/1 բնակելի տան և հողամասի նկատմամբ Նաիրա Ժորժիկի Մանուկյանի իրավունքները վերականգնելու մասին» թիվ 1805–Ա որոշումը, որի 1–ին կետով վերականգնվել է Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Նաիրա Մանուկյանի սեփականության իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 210,6քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 210,6քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք–շինությունների նկատմամբ, իսկ նույն որոշման 3–րդ կետով Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 հասցեի բնակելի տանը տրամադրվել է հասցե՝ «Ծերենց փողոց, թիվ 82/1 տուն» (**հատոր 2–րդ, գ.թ. 26–27**).

5) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18052013–01–0205 վկայականի համաձայն՝ Երևանի քաղաքապետի 19.04.2013 թվականի թիվ 1805–Ա որոշման և հողամասի հատակագծի հիման վրա Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82/1 բնակելի տան և հողամասի նկատմամբ 18.05.2013 թվականին գրանցվել է Նաիրա Մանուկյանի սեփականության իրավունքը (**հատոր 1–ին, գ.թ. 41**).

6) Բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 20.11.2013 թվականի թիվ 392598 տեղեկանքի համաձայն՝ Սարգիս Խարիկյանը 09.01.1987 թվականից հաշվառված է եղել Ծերենցի տուն թիվ 82 հասցեում, 06.09.2012 թվականին հանվել է հաշվառումից սեփականատիրոջ դիմումով (**հատոր 1–ին, գ.թ. 25**).

7) Էլեկտրական էներգիայի մատակարարման 14.11.2008 թվականի թիվ 0301978 պայմանագրի համաձայն՝ Երևանի Ծերենցի թիվ 82 հասցեի էլեկտրաէներգիայի սպառողը Սարգիս Խարիկյանն է (**հատոր 1–ին, գ.թ. 10–11**).

8) Գույքահարկի և հողի հարկի վճարումների ընդունման 20.04.2009 թվականի թիվ ԳՀԱ1122268 անդորրագրի և Երևան քաղաքի Մալաթիա–Մեքաստիա թաղապետարանի գույքահարկի և հողի հարկի բաժնի պետի կողմից 22.04.2009 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Երևանի Ծերենցի թիվ 82 հասցեի հողի հարկ վճարողը Սարգիս Խարիկյանն է (**հատոր 1–ին, գ.թ. 18–19**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և կզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ իրավական համակարգում անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավական կառուցակարգի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21–րդ հոդվածի, ինչպես նաև «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական

բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1. արդյո՞ք «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթին պետք է մասնակից դարձվեն այդ անշարժ գույքը փաստացի որպես սեփականը տիրապետող բոլոր անձինք,

2. արդյո՞ք «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով կարող է վերականգնվել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփականը) տիրապետող միայն մեկ ֆիզիկական անձի սեփականության իրավունքն այն պայմաններում, երբ այդ անշարժ գույքը փաստացի որպես սեփական գույք տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձի կողմից, որը ևս համապատասխան իրավունք ունի,

3. արդյո՞ք «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով կարող է վերականգնվել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի տիրապետող ֆիզիկական անձի սեփականության իրավունքն այն պայմաններում, երբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվում, որ տվյալ ֆիզիկական անձը, փաստացի տիրապետելով այդ անշարժ գույքը, ունեցել է համապատասխան իրավունքներ դրա նկատմամբ, կամ այդ անշարժ գույքը հանդիսանում է օրինական կառույց:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներ են՝

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետում նշված վարույթի մասնակիցները վարչական վարույթում ներգրավվում են իրենց դիմումի համաձայն կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ ետօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց, անհրաժեշտության դեպքում՝ նաև վկային, փորձագետին, թարգմանչին և այլ մարմինների ներկայացուցիչներին, վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված և նույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (...) այն անհատական բնակելի տները և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա նույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, ով (ուլքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3–րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 1–ին և 2–րդ հոդվածներով նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք է ֆիզիկական անձի դիմումի հիման վրա կայացված Երևանի քաղաքապետի որոշումը, որում պարտադիր նշվում են իրավունք ձեռք բերող ֆիզիկական անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին), բնակելի տան հասցեն, տեղեկատվություն բնակելի տան կառուցման տարեթվի մասին, տեղեկատվություն այն մասին, որ անշարժ գույքը բավարարում է նույն օրենքի 1–ին և 2–րդ հոդվածներով նախատեսված պայմանները: (...) Նույն օրենքի ուժով ձեռք բերվող ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում համայնքի ղեկավարի որոշումը կայացվում է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության առկայության դեպքում, բացառությամբ, եթե սույն օրենքի ուժով ձեռք բերվող ընդհանուր սեփականության իրավունքի մասնակիցները գրանցված ամուսիններ են, և դիմումը ներկայացրել է ամուսիններից մեկը (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը կարգավորել է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված որոշակի կատեգորիայի անշարժ գույքի նկատմամբ այդ գույքը փաստացի որպես սեփականը տիրապետող ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման և պատշաճ ձևակերպման հետ կապված հարաբերությունները: «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածով օրենսդիրը սահմանել է, որ իրավունք հաստատող փաստաթղթերը (քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կամ հողիատկացման հիմքերը) չպահպանված և որոշակի չափանիշների բավարարող անշարժ գույքը համարվում է այն որպես սեփական գույք տիրապետող ֆիզիկական անձանց սեփականությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԳ/4651/05/12 վարչական գործով 30.04.2015 թվականին կայացրած որոշման շրջանակներում անդրադարձել է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման՝ մինչև 05.06.2010 թվականը գործող խմբագրությամբ (վերտառություն) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավական կառուցակարգին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 27.04.2010 թվականի թիվ ՀՕ–50–Ն ՀՀ օրենքով «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ, ինչի արդյունքում օրենսդիրն իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակին վերաբերող իրավակարգավորումները հավասարապես տարածել է ոչ միայն Երևան քաղաքի վարչական տարածքում, այլև Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքների վարչական տարածքներում գտնվող համապատասխան կատեգորիայի անշարժ գույքի վրա՝ սահմանելով, որ յուրաքանչյուր համայնքի վարչական տարածքում գտնվող, օրենքով նախատեսված պայմաններին ու պահանջներին բավարարող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք է ֆիզիկական անձի դիմումի հիման վրա կայացված տվյալ համայնքի ղեկավարի որոշումը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչև 05.06.2010 թվականը գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նորմերի վերաբերյալ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշմամբ կատարված մեկնաբանությունները հավասարապես կիրառելի են նաև ներկայումս գոր-



ծող «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի իրավադրոյթների մեկնաբանության դեպքում:

Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված և որոշակի չափանիշների բավարարող անշարժ գույքի նկատմամբ վերականգնվում է այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականության իրավունքը, ով (ուլքեր) փաստացի տիրապետում է (են) այդ անշարժ գույքը որպես սեփական գույք: Ընդ որում, խոսքը վերաբերում է այն ֆիզիկական անձանց, ովքեր ոչ միայն փաստացի տիրապետում են համապատասխան անշարժ գույքը, այլ նաև հանդիսանում են այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ, որոնց սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են բացառապես օրենքով սահմանված կարգով կառուցված բնակելի տների (օրինական կառույցների), դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերի նկատմամբ սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերի և (կամ) հողհատկացման հիմքերի պահպանված չլինելու դեպքում օրինական կառույցի սեփականատիրոջ իրավունքների վերականգնման հարցերը: Այսինքն՝ հիշատակված օրենքը վերաբերում է այն անշարժ գույքին, որի վերաբերյալ առկա են եղել իրավունքներ և ենթակա է քննարկման այդ իրավունքների վերականգնման հարցը, ինչը չի կարող առկա լինել ինքնակամ կառույցի պարագայում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման գործընթացը համապատասխան ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթ է, որը եզրափակվում է համապատասխան վարչական ակտով, այն է՝ համայնքի ղեկավարի որոշմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական վարույթը վարչական մարմնի, մասնավորապես՝ ՀՀ նախարարությունների և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է, իսկ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նշված դրույթի շրջանակներում որպես վարչական ակտի տարատեսակ ներառված է բարենպաստ վարչական ակտը, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված և որոշակի չափանիշների բավարարող անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ համայնքի ղեկավարի համապատասխան որոշումը վարչական ակտ է, քանի որ այն համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտի հասկացության սահմանմանը: Ըստ այդ սահմանման՝ վարչական ակտին բնորոշ հատկանիշներն են վարչական մարմնի կողմից ընդունված անհատական իրավական ակտ լինելը, արտաքին ներգործություն ունենալը, հանրային իրավունքի ոլոր-

տում ընդունված լինելը, կոնկրետ գործի կարգավորմանն ուղղված լինելը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար իրավունքների և պարտականությունների սահմանումը, փոփոխումը, վերացումը կամ ճանաչումը: Այսպես՝

- իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումն անհատական իրավական ակտ է,
- իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ որոշումն ընդունվում է վարչական մարմնի՝ համապատասխան համայնքի ղեկավարի կողմից,
- իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,
- իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում,
- իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումն ուղղված է հանրային իշխանությանը օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,
- իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական անձի համար. դրանով վարչական մարմինը, ճանաչելով անձի մոտ արդեն իսկ ծագած իրավունքի առկայությունը, բարելավում է վերջինիս իրավական և փաստացի դրությունը:

Օրենսդիրը հստակ սահմանել է, որ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեության՝ վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու համար ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման համար անհրաժեշտ՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը:

Համայնքի ղեկավարը կարող է որոշում կայացնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձի սեփականության իրավունքը վերականգնելու մասին միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում եկել է այն եզրահանգման, որ դիմում ներկայացրած ֆիզիկական անձի, ինչպես նաև այդ դիմումում նշված անշարժ գույքի կարգավիճակը լիովին համապատասխանում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պահանջներին: Ընդ որում, վկայակոչված օրենքով կարող են վերականգնվել նախկինում գոյություն ունեցող (համապատասխան հասցե ունեցող) այնպիսի անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, որոնց վերաբերյալ առկա են եղել իրավունք հաստատող փաստաթղթեր, որոնք, սակայն, չեն պահպանվել:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնումը տեղի է ունենում ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացվող համայնքի ղեկավարի որոշման հիման վրա, որն էլ տվյալ ֆիզիկական անձին իրավունք է վերապահում օրենքով սահմանված համապատասխան ընթացակարգով գրանցելու իր սեփականության իրավունքը:

Ընդ որում, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է, որ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում համայնքի ղեկավարի որոշումը կայացվում է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության առկայության դեպքում: Եթե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը, որը համապատասխանում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է մի քանի ֆիզիկական անձանց կողմից, որոնք այդ անշարժ գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներ ունեն, ապա վարչական մարմինն իրավասու չէ վերականգնելու իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփականը) տիրապետող միայն մեկ ֆիզիկական անձի սեփականության իրավունքն ամբողջ անշարժ գույքի նկատմամբ: Տվյալ պարագայում իրավասու վարչական մարմինը կամ կարող է իր որոշմամբ վերականգնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփականը) տիրապետող միայն մեկ ֆիզիկական անձի սեփականության իրավունքն անշարժ գույքի այն մասի նկատմամբ, որը նրա կողմից փաստացի որպես սեփական գույք տիրապետվում է կամ կարող է վերականգնել այդ անշարժ գույքը փաստացի (որպես սեփական գույք) տիրապետող բոլոր ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը՝ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի տեսքով, եթե առկա է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնությունը: Սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնությունը չի պահանջվում միայն այն դեպքում, եթե ձեռք բերվող ընդհանուր սեփականության իրավունքի մասնակիցները գրանցված ամուսիններ են, և դիմումը ներկայացրել է ամուսիններից մեկը:

Հետևաբար վարչական մարմինը պարտավոր է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարզել, *inter alia*, այն հանգամանքը, թե արդյոք ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումում նշված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, թե՛ ոչ: Այն դեպքում, երբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը դիմում ներկայացրած անձից բացի փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, վարչական մարմինը պարտավոր է այդ ֆիզիկական անձանց ևս մասնակից դարձնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վարչական վարույթին՝ նրանց որպես երրորդ անձ ներգրավելու միջոցով, ինչը թույլ կտա ապահովել վերջիններիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը (*լրեն սակ Ռոբերտ Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Նշված իրավանդումում ամրագրված իրավակարգավորումը

բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, հատկապես այն հարաբերությունների մատվ, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում: «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով կարգավորվող վարույթի առանձնահատկությունները սահմանվում են նշված օրենքով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ միայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ խոսքով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված վարչական վարույթի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է միայն այն հարաբերությունների մատվ, որոնք «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով կամ կարգավորված են մասամբ կամ առհասարակ կարգավորված չեն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սահմանված կարգով կառուցված բնակելի տների (օրինական կառույցների), դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերի նկատմամբ սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերի և (կամ) հողհատկացման հիմքերի պահպանված չլինելու դեպքում օրինական կառույցի սեփականատիրոջ իրավունքների վերականգնման վերաբերյալ վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատկությունները ՀՀ իրավական համակարգում կարգավորվում են «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ վերը նշված վարչական վարույթում երրորդ անձանց վերաբերյալ որևէ առանձնահատկություն, ինչը նշանակում է, որ այդ վարչական վարույթում երրորդ անձանց կարգավիճակին առնչվող հարցերի վերաբերյալ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում օրենսդիրը սահմանել է, որ երրորդ անձինք վարչական վարույթի այն մասնակիցներն են, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով, այսինքն՝ այն անձինք, որոնց համար վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտը կարող է առաջացնել իրավական հետևանքներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովելու վարույթին մասնակցող անձի՝ լսված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է 27.11.2005 թվականի խմբագրությանը ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝ այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (*տես Իվանովի և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի վճիռը, պարբ. 70*): Հետևաբար վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցու-

թյունը վարչական վարույթին (տե՛ս ՀՀ աշխարհային պետական տեսչությունն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյանսկիովի թիվ ՎԳ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):

Այսպիսով, ՀՀ իրավական համակարգում օրենսդրի կողմից երրորդ անձանց վարչական վարույթում ներգրավելու իրավական հնարավորություն նախատեսելու հիմնական նպատակը երրորդ անձանց սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանություն ապահովելն է: Սակայն օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքների պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Փաստորեն, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը (տե՛ս Տիգրան Արարյանի ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի թիվ ՎԳ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավակարգավորումների միջոցով օրենսդիրը հետապնդում է հստակ նպատակ, այն է՝ որոշակի պահանջների բավարարող և իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի տիրապետող և դրա սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ հանդիսացող ֆիզիկական անձանց հնարավորություն տալ վերականգնելու իրենց սեփականության իրավունքն այդ անշարժ գույքի նկատմամբ: Հետևաբար «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր պահանջներից մեկն այն է, որ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ կարող է վերականգնվել միայն այդ անշարժ գույքը փաստացի տիրապետող այն ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը, ովքեր հանդիսանում են այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ:

Այսպիսով, վարչական մարմինը պարտավոր է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարզել, *inter alia*, այն հանգամանքը, թե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացրած ֆիզիկական անձը հանդիսանում է արդյոք այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդ, թե ոչ (տե՛ս Զոյա Սիմեոնիդուն ընդդեմ Երևան համայնքի թիվ ՎԳ/10507/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է նշված օրենքով սահմանված որոշակի պահանջներին բավարարող միայն այն բնակելի տների նկատմամբ, որոնք կառուցվել են օրենքով սահմանված կարգով, այսինքն՝ օրինական կառույցներ են: Հետևաբար «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր պահանջներից մեկն այն է, որ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի տիրապետող և այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ հանդիսացող ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը կարող է վերականգնվել միայն այն դեպքում, երբ բնակելի տունը չի հանդիսանում ինքնակամ կառույց՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությանը սահմանված պայմանների կամ քա-

դաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շինություն:

Այլ կերպ ասած՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը կարող է վերականգնվել միայն այն բնակելի տների նկատմամբ, որոնք ինքնական կառույցներ չեն: Հետևաբար վարչական մարմինը պարտավոր է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարզել, *inter alia*, այն հանգամանքը, թե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տունը հանդիսանում է արդյոք օրինական կառույց, թե ոչ (*տես նաև Միրանուշ Վարդանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/0634/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթը հարուցվել է Երևանի քաղաքապետին հասցեագրված Նաիրա Մանուկյանի դիմումի հիման վրա, որով վերջինս խնդրել է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի հիմքով օրինականացնել Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 տան օրինական գույքին կից շինությունը և/կամ հողամասը:

Երևանի քաղաքապետը 19.04.2013 թվականին ընդունել է «Երևանի Ծերենցի փողոցի Հ.82/1 բնակելի տան և հողամասի նկատմամբ Նաիրա Ժորժիկի Մանուկյանի իրավունքները վերականգնելու մասին» թիվ 1805-Ա որոշումը, որի 1-ին կետով Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ վերականգնվել է Նաիրա Մանուկյանի սեփականության իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 210,6 քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 210,6 քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

Դատարանը, հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ Երևանի քաղաքապետի վիճարկվող որոշումն ընդունվել է 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-57-րդ հոդվածների, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների խախտմամբ: Մասնավորապես՝ Դատարանը նշել է, որ վարչական վարույթի նյութերով չի հաստատվում, որ Նաիրա Մանուկյանը Երևան քաղաքի Ծերենցի թիվ 82 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ երբևէ ունեցել է սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթեր և (կամ) հողիատկացման հիմքեր: Ըստ Դատարանի՝ «(...) վարչական վարույթի նյութերով չի հաստատվում սեփականաշնորհված անշարժ գույքը (...) միայն Նաիրա Մանուկյանի կողմից որպես սեփական գույք տիրապետվելու (...) հանգամանքը, (...) վարչական վարույթի նյութերով հաստատվում է, որ Նաիրա Մանուկյանը (...) Ծերենցի թիվ 82 հասցեում սեփական հողամաս չի ունեցել (...):»:

Բացի այդ, Դատարանը գտել է նաև, որ Քաղաքապետարանը պարտավոր էր սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթին մասնակից դարձնել նաև Սարգիս Խարիկյանին, որը ևս հաշվառված է եղել և որոշակի ընդհատումներով բնակվել է Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 տանը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Նաիրա Մանուկյանի վերաքննիչ բողոքը, մասնակիորեն բավարարելով Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը և բեկանելով Դատարանի վճիռն ու գործն ուղարկելով նոր քննության, պատճառաբանել է, որ սույն գործի լուծման համար որոշիչ նշանակություն ունեցող մի շարք հարցեր իրենց պատաս-

խանները կարող են ստանալ միայն գործի նոր քննության ընթացքում: Վերաքննիչ դատարանի կողմից առաջ քաշված և գործի նոր քննության ընթացքում պարզման ենթակա հանգամանքները, մասնավորապես, հանգում են հետևյալին. արդյո՞ք Նաիրա Մանուկյանը Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 հասցեում տիրապետել է որևէ անշարժ գույքի՝ որպես սեփական գույք, և այդ անշարժ գույքի օրինականացումը խախտում է արդյո՞ք այլ անձանց իրավունքները, ինչպես նաև արդյո՞ք վիճարկվող վարչական ակտը վերաբերում է նաև նշված հասցեում գտնվող ինքնակամ կառույցներին, թե ոչ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ Երևանի քաղաքապետի 19.04.2013 թվականի թիվ 1805-Ա որոշումը վարչական ակտ է, քանի որ այն համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածում նախատեսված՝ վարչական ակտի հասկացության սահմանմանը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետին հասցեագրած դիմումով Նաիրա Մանուկյանը խնդրել է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի (28.06.2008 թվականի թիվ ՀՕ-117-Ն) համաձայն օրինականացնել Ծերենցի փողոցի թիվ 82 տուն հասցեի օրինական գույքը: Այսինքն՝ Նաիրա Մանուկյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը վերաբերել է Ծերենցի փողոցի թիվ 82 հասցեի տան նկատմամբ գույքային իրավունքների վերականգնմանը, մինչդեռ Երևանի քաղաքապետի 19.04.2013 թվականի թիվ 1805-Ա որոշման համաձայն՝ վերականգնվել է Նաիրա Մանուկյանի սեփականության իրավունքը Երևանի Ծերենցի փողոցի թիվ 82/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ, թեև նշված թիվ 82/1 հասցեն հիշատակված գույքին տրամադրվել է նույն որոշման 3-րդ կետով միայն: Փաստորեն, Նաիրա Մանուկյանի իրավունքները Երևանի քաղաքապետի որոշմամբ վերականգնվել է այնպիսի հասցեի գույքի նկատմամբ, որպիսի հասցե նախկինում գոյություն չի ունեցել, հետևաբար դրա վերաբերյալ իրավունք հաստատող փաստաթղթեր չէին կարող առկա լինել ընդհանրապես:

Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնումը տեղի է ունենում համապատասխան ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացվող համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ, որի հիման վրա տվյալ ֆիզիկական անձն իրավական հնարավորություն է ստանում օրենքով սահմանված համապատասխան ընթացակարգով գրանցելու իր սեփականության իրավունքը: Այդպիսի որոշման ընդունման նախադրյալը վարչական մարմնի կողմից վարչական վարույթի ընթացքում նշված օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմաններին ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը պարզելն է:

Ընդհանրացնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական մարմինը պարտավոր է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարզել, *inter alia*, հետևյալ հանգամանքները.

1) արդյո՞ք իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տունը հանդիսանում է օրինական կառույց, թե ոչ,

2) արդյո՞ք իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայաց-

րած ֆիզիկական անձը հանդիսանում է այդ անշարժ գույքը փաստացի, որպես սեփական գույք տիրապետող անձ, թե ոչ,

3) արդյոք իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացրած ֆիզիկական անձը հանդիսանում է այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդ, թե ոչ,

4) արդյոք ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումում նշված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, թե՛ ոչ: Ընդ որում, եթե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը դիմում ներկայացրած անձից բացի փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, վարչական մարմինը պարտավոր է այդ ֆիզիկական անձանց ևս մասնակից դարձնել վարչական վարույթին՝ նրանց որպես երրորդ անձ ներգրավելու միջոցով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Նաիրա Մանուկյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացված, սույն գործով վիճարկվող Երևանի քաղաքապետի 19.04.2013 թվականի թիվ 1805–Ա որոշմամբ լուծվել է Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 (82/1) հասցեում գտնվող իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տան և հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցը: Մինչդեռ սույն գործում առկա ապացույցների բովանդակությունից հետևում է, որ վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը չի պարզել, թե Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 հասցեի բնակելի տունը հանդիսանում է արդյոք օրինական կառույց, թե ոչ: Բացի այդ, վարչական մարմինը չի պարզել նաև այն հանգամանքը, թե քննարկվող անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացրած ֆիզիկական անձը՝ Նաիրա Մանուկյանը, հանդիսանում է արդյոք այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդ, թե ոչ:

Մինչույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի քննության ընթացքում հիմնավորվել է, որ Սարգիս Խարիկյանը դեռևս 09.01.1987 թվականից հաշվառված է եղել Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 հասցեի բնակելի տանը, և փաստացի (որպես սեփական գույք) տիրապետել է դրա մի մասը: Հետևաբար «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 (82/1) հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի նկատմամբ Նաիրա Մանուկյանի սեփականության իրավունքը չէր կարող վերականգնվել այդ հասցեում գտնվող այն անշարժ գույքի նկատմամբ, որը փաստացի որպես սեփական գույք տիրապետվում էր այլ անձի՝ Սարգիս Խարիկյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Երևանի քաղաքապետը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35–րդ և 38–րդ հոդվածների հիմքով պարտավոր էր Սարգիս Խարիկյանին ծանուցել 19.04.2013 թվականի թիվ 1805–Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին և ապահովել այդ վարչական վարույթի ընթացքում վերջինիս լաված լինելու իրավունքի պատշաճ իրացումը, քանի որ նշված վարչական վարույթի ընթացքում քննարկվել է Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82 (82/1) հասցեում գտնվող իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու հարցը, և ընդունվող վարչական ակտով կարող էին շոշափվել Սարգիս Խարիկյանի իրավունքները և օրինական շահերը: Մինչդեռ սույն գործում առկա չէ որևէ ապացույց Սարգիս Խարիկյանին նշված վարչական վարույթին մասնակից դարձնելու և նրան վարույթի մասին ծանուցելու վերաբերյալ: Այսինքն՝ վարչական մարմինը չի կատարել Սարգիս Խարիկյանին վարչական վարույթին մասնակից դարձնելու և նրան ծանուցելու՝ օրենքով սահմանված իր պարտականությունը, ինչի արդյունքում չի ապահովվել Սարգիս Խարիկյանի լաված լինելու իրավունքը՝ վերջինիս գրկելով իր իրավունքները գործնականում լիարժեք պաշտպանելու հնարավորությունից:



Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետի 19.04.2013 թվականի թիվ 1805-Ա որոշումն ընդունվել է օրենքի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ հոդվածների, ինչպես նաև «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ: Հետևաբար Դատարանն իր վճռում իրավացիորեն է եզրահանգել, որ Երևանի քաղաքապետի 19.04.2013 թվականի «Երևանի Ծերենցի փողոցի Հ.82/1 բնակելի տան և հողամասի նկատմամբ Նաիրա Ժորժիկի Մանուկյանի իրավունքները վերականգնելու մասին» թիվ 1805-Ա որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ոչ իրավաչափ վարչական ակտ է և պետք է ճանաչվի անվավեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Նաիրա Մանուկյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է Երևանի քաղաքապետի 19.04.2013 թվականի թիվ 1805-Ա որոշման հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի Ծերենցի փողոցի թիվ 82/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Նաիրա Մանուկյանի անվամբ Կոմիտեի կողմից 18.05.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 18052013-01-0205) ևս ենթակա էր անվավեր ճանաչման:

Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից առաջ քաշված հարցադրումներին պատասխանելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ գործի դատաքննության ընթացքում հիմնավորվել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում առկա են Սարգիս Խաբիկյանի կողմից ներկայացված հիմնական հայցապահանջով վիճարկվող վարչական ակտը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու թե՛ իրավական, թե՛ փաստական բավարար հիմքեր:

*Նշված պատճառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը քեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվոր Սարգիս Խարիկյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 40.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սարգիս Խարիկյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Քաղաքապետարանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.10.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 19.03.2015 թվականի վճիռին:

2. Երևանի քաղաքապետարանից հոգուտ Սարգիս Խարիկյանի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/6329/05/12  
2016 թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/6329/05/12

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Առաքելյան  
Ք. Մկոյան  
Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերու-  
թյուն) ներկայացուցիչ Լեոնիկ Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի 08.10.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ ՀՀ տնտե-  
սական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնա-  
ժողով)՝ Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշումը մասնակիորեն՝ Ընկերու-  
թյանը վերաբերելի 3-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 15-րդ, 16-րդ, 21-րդ կետերի մասով, անվավեր  
ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է մասնակիորեն՝ Ընկերությանը վերա-  
բերելի 3-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 15-րդ, 16-րդ, 21-րդ կետերի մասով, անվավեր ճանաչել  
Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 20.02.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.10.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.02.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հանձնաժողովը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Տարեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 36-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, 26-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 27-րդ հոդվածը, 29-րդ հոդվածի 1-ին մասը, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 144-րդ հոդվածի 1-ին մասը, 146-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը, 2-րդ կետի «բ» ենթակետը: Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է վերաքննիչ բողոքի հիմքերն ու դրանց հիմնավորումները՝ անհիմն կերպով հաստատված համարելով, որ Ընկերության գործողությունների հետևանքով «Սգնի» ՍՊԸ-ն դուրս է մղվել շուկայից: Մինչդեռ Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշման մեջ արձանագրված փաստերի համաձայն՝ «Սգնի» ՍՊԸ-ն շարունակել է իր բնականոն տնտեսական գործունեությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթին մասնակից չեն դարձվել «Բուսֆարս», «Էդգանի», «Մեգի էլ» և «Կամելիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, և չեն պարզվել գնումների գործընթացում վերջիններիս կողմից դրսևորած վարքի պատճառները, ինչը բացահայտելու պարագայում կհաստատվեր, որ գնումների գործընթացում եղած բացթողումներն ունեն օբյեկտիվ պատճառներ, ու կհերքվեր հակամրցակցային համաձայնության առկայությունը:

Վերաքննիչ դատարանը Հանձնաժողովի հայեցողական լիազորությունների կիրառությունը չի գնահատել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված չափանիշների լույսի ներքո՝ չպարզելով երեք առանձին իրավախախտումների համար առաջադրված տուգանքների չափի վերաբերյալ Հանձնաժողովի դրսևորած հայեցողական վարչարարության իրավաչափությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.10.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, կամ գործն ուղարկել նոր քննության:

**2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի փաստարկները**

Հանձնաժողովի կողմից վարչական վարույթն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, վարչական վարույթի ընթացքում ձեռք են բերվել բոլոր անհրաժեշտ և բավարար ապացույցները, Հանձնաժողովն ապահովել է գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը և բացահայտումը: Դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից գնահատվել են գործում առկա բոլոր ապացույցները, պարզվել են գործի համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, հիմնավորվել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը: Հետևաբար Վերաքննիչ դատարանի 08.10.2015 թվականի որոշումը հիմնավոր է և կայացվել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հանձնաժողովի 11.06.2012 թվականի «Պետական գնումների ոլորտում կատարված ուսումնասիրության արդյունքների և մի շարք տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 277-Ա որոշման համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է. «(...) 3. Ընկերության կողմից «Սգնի» ընկերության մասնակցությամբ պետական գնումների շրջանակներում հայտարարված մրցույթներում 2009–2010 թվականներ

րի ընթացքում *ցեֆտրիաքսոն* դեղը մրցույթը հայտարարած բուժհաստատություններին անվճար կարգով տրամադրելու կամ դեղի՝ ինքնարժեքից ցածր գնային առաջարկ ներկայացնելու գործողությունները համարել գերիշխող դիրքի չարաշահում: 4. Ընկերություն նկատմամբ գերիշխող դիրքի չարաշահման համար նշանակել տուգանք՝ քսան միլիոն ՀՀ դրամի չափով: (...) 7. «Պետական գնումների շրջանակներում ձեռքբերվող դեղեր, բժշկական պարագաներ, նյութեր, հատուկ սարքեր և սարքավորումներ» ապրանքային շուկայում Ընկերության և «Եվրոֆարմ», «Ռուսֆարմ», «Էդգանի», «Մեգի էլ», «Ամիկուս» և «Կամելիա» ընկերություններից յուրաքանչյուրի միջև 2009 և 2010 թվականների ընթացքում պետական գնումների շրջանակներում հայտարարված մրցակցային բանակցություններում հաղթողի վերաբերյալ նախապես ձեռք բերված պայմանավորվածությունը, որի արդյունքում տեղի է ունեցել մրցակցության սահմանափակում և պետական բյուջեի միջոցների վատնում, համարել հակամրցակցային համաձայնություն: 8. Հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար Ընկերության նկատմամբ նշանակել տուգանք տասնհինգ միլիոն դրամի չափով: (...) 15. Ընկերության և բուժհաստատությունների միջև 2010 թվականին «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ մրցույթների արդյունքում կնքվող պայմանագրերից էականորեն տարբերվող պայմաններով պայմանագրեր կնքելը և դրանց հիման վրա մատակարարում իրականացնելը որակել որպես հակամրցակցային համաձայնություն: 16. Բուժհաստատությունների հետ հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար Ընկերության նկատմամբ նշանակել տուգանք՝ տասնհինգ միլիոն ՀՀ դրամի չափով: (...) 21. Հանձնարարել Ընկերությանը՝ հետագայում բացառել օրենքի խախտումները, 3-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել նույն որոշման 4-րդ, 8-րդ և 16-րդ կետերով սահմանված տուգանքների վճարումը հավաստող տեղեկատվություն (...)» **(հատոր 1-ին, գ.թ. 103-123):**

2. Հանձնաժողովի 11.06.2012 թվականի «Պետական գնումների ոլորտում կատարված ուսումնասիրության արդյունքների և մի շարք տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 277-Ա որոշման համաձայն՝

- «Ցեֆտրիաքսոն դեղ և դրա համարժեքներ» ապրանքային շուկայում Ընկերության գործողությունները որպես գերիշխող դիրքի չարաշահում որակելու համար Հանձնաժողովը վկայակոչել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (26.12.2008 թվականից մինչև 12.04.2011 թվականը)՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ», «է», «ը», «թ» կետերը: Ըստ Հանձնաժողովի՝ Ընկերությունը, ունենալով գերիշխող դիրք «Ցեֆտրիաքսոն դեղ և դրա համարժեքներ» ապրանքային շուկայում, 2009-2010 թվականների ընթացքում չարաշահել է իր գերիշխող դիրքը՝ պետական բուժհաստատությունների կողմից հայտարարված մրցույթներում ցեֆտրիաքսոն դեղի գծով ներկայացնելով դեղի ձեռքբերման ինքնարժեքից ցածր գնային առաջարկներ, ինչպես նաև նվիրատվություններ կատարելով ցեֆտրիաքսոն դեղի գծով պահանջարկ ունեցող բուժհաստատություններին՝ նպատակ է հետապնդել միայնակ բավարարելու ցեֆտրիաքսոն դեղի գծով շուկայում գոյություն ունեցող պահանջարկը՝ «Սզնի» ընկերության կողմից իր ապրանքն իրացնելու հնարավորությունը բացառելու կամ սահմանափակելու համար **(հատոր 1-ին, գ.թ. 108):**

- «Պետական գնումների շրջանակներում ձեռքբերվող դեղեր, բժշկական պարագաներ, նյութեր, հատուկ սարքեր և սարքավորումներ» ապրանքային շուկայում Ընկերության և մի շարք տնտեսվարող սուբյեկտների միջև 2009 և 2010 թվականների ընթացքում նախապես ձեռք բերված պայմանավորվածությունը որպես հակամրցակցային համաձայնություն որակելու համար Հանձնաժողովը վկայակոչել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» և «ը» կետերը: Ըստ Հանձնաժողովի՝ Ընկերությունը մի կողմից և «Եվրոֆարմ», «Ռուսֆարմ», «Էդգանի», «Մեգի էլ», «Ամիկուս» և «Կամելիա» ընկերություններն առանձին-առանձին մյուս կողմից 2009 և 2010 թվականների ընթացքում պետական գնումների շրջանակներում հայտարարված մրցակցային բանակցություններում եկել են հակամրցակցային համաձայնության առ այն, որ նշված մրցույթներում մշտապես

հաղթող ճանաչվի Ընկերությունը, ինչի արդյունքում տեղի է ունեցել մրցակցության սահմանափակում և պետական բյուջեի միջոցների վատնում, քանի որ ձևական մրցույթներ կազմակերպելու միջոցով Ընկերությունը հնարավորություն է ունեցել շուկայականից էականորեն տարբերվող գներով իրացնելու իր ապրանքը, ինչը տեղի չէր ունենա բուժհաստատությունների կողմից հայտարարված մրցակցային բանակցությունների շուրջ հակամրցակցային համաձայնության չգալու դեպքում (**հատոր 1-ին, գ.թ. 116-117**):

- Ընկերության և մի շարք բժշկական հաստատությունների միջև 2010 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ պայմանագրեր կնքելը և դրանց հիման վրա մատակարարում իրականացնելը որպես հակամրցակցային համաձայնություն որակելու համար Հանձնաժողովը վկայակոչել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «դ», «է» և «ը» կետերը: Ըստ Հանձնաժողովի՝ Ընկերության և բուժհաստատություններից յուրաքանչյուրի միջև առանձին կայացել է հակամրցակցային համաձայնություն, որը հանգեցրել է մրցակցության սահմանափակմանը դեղերի և բժշկական պարագաների իրացման շուկայում: Բուժհաստատությունների կողմից մրցույթ չի հայտարարվել, որն էլ հնարավորություն է տվել բուժհաստատություններից յուրաքանչյուրին և Ընկերությանը գալու հակամրցակցային համաձայնության և գնման առարկայի վերաբերյալ կնքելու արտամրցութային պայմանագիր՝ մրցույթի արդյունքում հաղթող կազմակերպության հետ սովորաբար կնքվող պայմանագրերից էականորեն տարբերվող պայմաններով: Ընդ որում, մրցույթի դեպքում Ընկերությունը նման գնային առաջարկների պայմաններում չէր հաղթի և չէր կարող իրացնել ապրանքը շուկայականից թանկ գներով (**հատոր 1-ին, գ.թ. 120-121**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հակամրցակային համաձայնությունների կնքման և գերիշխող դիրքի չարաշահման դեպքում տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև վարչական մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրականացման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանների կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 7-րդ, 36-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 6-րդ, 37-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հակամրցակային համաձայնությունների կնքման և գերիշխող դիրքի չարաշահման դեպքում Կնքման վարող սուբյեկտներին «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարասխանադրության ենթարկելու իրավական և փաստական հիմքերին, ինչպես նաև Կնքման վարող սուբյեկտներին պարասխանադրության ենթարկելու բնագավառում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով Հանձնաժողովին վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման ընդհանուր սահմաններին և հատուկ չափանիշներին:*

ա) 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ (...) Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 33.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են (...):

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝ տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն՝ ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի իմաստով հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների կողմից ընդունված որոշումները (...), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնությունները վերաբերում են՝

ա) իրացման կամ ձեռքբերման խտրական և (կամ) տարբերակված գների սահմանմանը.  
բ) ապրանքի գնի չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը (...).  
գ) շուկայի բաժանմանը տարածքային սկզբունքով, ըստ իրացման կամ ձեռքբերման ծավալի, ապրանքի տեսականու, իրացնողների կամ ձեռքբերողների խմբերի կամ այլ եղանակով.

դ) այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն (շուկա մուտք գործելը սահմանափակելուն) կամ շուկայից նրանց դուրս մղելուն, որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը մուտք չի գործել շուկա կամ դուրս է մղվել շուկայից կամ կատարել է լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար.

ե) իրացման կամ ձեռքբերման գների գեղչերի կամ արտոնությունների սահմանմանը, փոփոխմանը կամ պահպանմանը, եթե դրանք նպատակաուղղված են այլ տնտեսվարող սուբյեկտի շուկայից դուրս մղմանը.

զ) մրցույթների կամ աճուրդների պայմանների վերաբերյալ պայմանավորվածությանը կամ արդյունքների կեղծմանը (խեղաթյուրմանը).

է) այնպիսի պայմանների առաջարկմանը կամ կիրառմանը, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ.

ը) այլ տնտեսվարող սուբյեկտների առևտրի կամ արտադրության արդիականացման կամ զարգացման կամ ներդրումների սահմանափակմանը.

թ) պայմանագրի կողմին, ներառյալ առևտրի օբյեկտներին, լրացուցիչ պարտավորությունների պարտադրմանը, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ.

ժ) ի վնաս սպառողի շահերի ապրանքների ներկրման կամ արտադրության չհիմնավորված կրճատմանը կամ ապրանքները պահելու, փչացնելու, ոչնչացնելու միջոցով ապրանքային շուկայում պակասորդի ստեղծմանը կամ պահպանմանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնությունը համարվում է ապացուցված, եթե՝

ա) առկա է այդ մասին վկայող որևէ փաստական տվյալ (այդ թվում՝ ցանկացած գրավոր փաստաթուղթ կամ գրավոր այլ ապացույց, տեսագրություն կամ ձայնագրություն) կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց.

բ) այդ մասին են վկայում տնտեսվարող սուբյեկտների՝ նույն հոդվածի 2-րդ մասում նշված գործողությունները կամ վարքագիծը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը) արգելվում է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհի կամ գերիշխող դիրքի (...) չարաշահումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահում է համարվում՝

ա) իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական և (կամ) տարբերակված գների սահմանումը կամ կիրառումը կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը.

բ) այլ տնտեսվարող սուբյեկտի առևտրի կամ արտադրության արդիականացման կամ ներդրումների սահմանափակումը.

գ) ի վնաս սպառողի շահերի ապրանքների ներկրման կամ արտադրության չհիմնավորված կրճատումը կամ ապրանքները պահելու, փչացնելու, ոչնչացնելու միջոցով ապրանքային շուկայում պակասորդի ստեղծումը կամ պահպանումը.

դ) այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների կիրառումը.

ե) պայմանագրի կողմին, ներառյալ առևտրի օբյեկտներին, լրացուցիչ պարտավորությունների պարտադրումը, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ.

զ) տնտեսվարող սուբյեկտների վերակազմակերպման կամ տնտեսական կապերի խզման պարտադրումը.

է) այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտելու (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելու գործողությունը կամ վարքագիծը, որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը մուտք չի գործել շուկա կամ դուրս է մղվել շուկայից կամ կատարել է լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար.

ը) այնպիսի պայմանների առաջարկը կամ կիրառումը, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ այն դեպքում, երբ համանման պայմաններ չեն առաջարկվել տվյալ ապրանքային շուկայում գործող մյուս տնտեսվարող սուբյեկտներին.

թ) իրացման կամ ձեռքբերման գների գեղչերի կամ արտոնությունների սահմանումը, փոփոխումը կամ պահպանումը, եթե դրանք նպատակաուղղված են մրցակցության սահմանափակմանը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման նպատակով ստեղծվում է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմին՝ Հանձնաժողով:



«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «գ» կետերի համաձայն՝ Հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու որոշումներ նույն օրենքի հնարավոր կամ փաստացի խախտումների (...) վերաբերյալ, տալու նախագրուշացում խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու հանձնարարությանը, նշանակելու տուգանք՝ խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու և տուգանքը վճարելու հանձնարարությանը՝ սահմանելով հանձնարարության կատարման ժամկետ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի խախտման դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ տալու նախագրուշացում կամ նշանակելու տուգանք:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից նույն օրենքի խախտումների կրկնակիությունը, տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը և (կամ) պատմությունը: Հակամրցակցային համաձայնության համար տուգանք նշանակելիս Հանձնաժողովը հաշվի է առնում նաև նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հակամրցակցային համաձայնության տեսակը (հորիզոնական, ուղղահայաց, խառը):

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը խախտելու համար տնտեսվարող սուբյեկտները (...) կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամ (...): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահումն առաջացնում է տուգանքի նշանակում հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամի չափով (...):

Վճարել դատարանը գտնում է, որ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը: Միաժամանակ ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ. այն ենթակա է սահմանափակման՝ ազատ տնտեսական մրցակցության ապահովման նպատակից ելնելով: Հետևաբար նշված երկու իրավական սկզբունքների՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ներդաշնակ ու հետևողական իրացման պայմաններում է միայն հնարավոր հասնել շուկայական հարաբերությունների վրա խարսխված արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորմանն ու կայուն զարգացմանը:

Վճարել դատարանի գնահատմամբ շուկայական տնտեսության պայմաններում մրցակցային միջավայրի կառուցումն այն հիմնական ուղիներից մեկն է, որով պետությունը կարողանում է բարձրացնել հասարակության բարեկեցությունը. տվյալ ոլորտում պետությունը պետք է հետամուտ լինի ինչպես ազատ տնտեսական մրցակցության գոյության համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը, այնպես էլ տնտեսությանը վնաս հասցնող գործողությունների կանխարգելմանը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ նշված օրենքի իրավակարգավորումները նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցության վրա հիմնված շուկայական տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովմանը և տարածվում են տնտեսվարող սուբյեկտների այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել

ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձեռնարկատիրական գործունեության բնագավառում մրցակցությունն ամենաընդհանուր ձևով կարելի է բնորոշել որպես տնտեսվարող սուբյեկտների միջև մրցություն՝ ապրանքների (ծառայությունների) արտադրության և իրացման լավագույն պայմաններով հնարավորինս առավելագույն շահույթ ստանալու նպատակին հասնելու համար: Տնտեսական մրցակցության օրենսդրական բնորոշումը տրված է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում, ըստ որի՝ մրցակցությունը ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեությունն է, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով և 7-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը, առաջնորդվելով ազատ տնտեսական մրցակցության համար անհրաժեշտ պայմանների ապահովման նկատառումներով, սահմանել է, որ հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը), ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհի կամ գերիշխող դիրքը չարաշահելն արգելվում են: Ավելին՝ օրենսդիրը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է, որ տնտեսվարող սուբյեկտներն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում նշված օրենքի պահանջները խախտելու համար և նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսել է նույն օրենքի խախտման համար կիրառվող պատասխանատվության միջոցները՝ նախագգուշացում կամ տուգանք: Բացի այդ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում օրենսդիրը հստակ սահմանել է հակամրցակցային համաձայնություն կնքելու, ինչպես նաև գերիշխող դիրքի չարաշահման համար Հանձնաժողովի՝ որպես տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականությունն իրականացնող պետական մարմնի կողմից նշանակվող տուգանքի չափը, որը կազմում է 5.000.000 ՀՀ դրամից մինչև 200.000.000 ՀՀ դրամ:

Փաստորեն, շուկայական տնտեսության պայմաններում մրցակցության ազատության երաշխավորման անհրաժեշտությունից ելնելով՝ օրենսդիրն արգելել է հակամրցակցային համաձայնությունների, այսինքն՝ այնպիսի համաձայնությունների կնքումը (կայացումը), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը: Օրենսդիրը սահմանել է նաև հակամրցակցային համաձայնությունների կնքման (կայացման) եղանակները. դրանք են՝

1. տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված գործարքները,
2. տնտեսվարող սուբյեկտների համաձայնությունները,
3. տնտեսվարող սուբյեկտների ուղղակիորեն համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը,
4. տնտեսվարող սուբյեկտների անուղղակիորեն համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը,
5. տնտեսվարող սուբյեկտների միավորումների կողմից ընդունված որոշումները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սահմանել է հակամրցակցային համաձայնությունների առարկան՝ նախատեսելով այն գործողությունների սպառիչ ցանկը, որոնց վերաբերյալ կարող են կնքվել (կայացվել) օրենքով արգելված հակամրցակցային համաձայնությունները: Հետևաբար հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու) համար որևէ տնտեսվարող սուբյեկտի պատասխանատվության ենթարկելու յուրաքանչյուր դեպքում Հանձնաժողովը պարտավոր է պարզել, թե օրենքով նախատեսված կոնկրետ ինչ եղա-

նակով և կոնկրետ ինչ գործողության վերաբերյալ է կնքվել տվյալ հակամրցակցային համաձայնությունը և ցույց տալ այն փաստական տվյալները կամ թույլատրելի այն ապացույցները, որոնք հիմք են տնտեսվարող սուբյեկտի կատարած կոնկրետ գործողությունը կամ վարքագիծը որպես հակամրցակցային համաձայնության կնքում (կայացում) որակելու համար: Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով հակամրցակցային համաձայնությունը կարող է ապացուցված համարվել միայն այն դեպքում, եթե այդ մասին են վկայում տնտեսվարող սուբյեկտների՝ նույն հոդվածի 2-րդ մասում նշված գործողությունները կամ վարքագիծը, և եթե առկա է այդ մասին վկայող որևէ փաստական տվյալ, այդ թվում՝ գրավոր ապացույց, տեսագրություն, ձայնագրություն կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը նախատեսել է այն գործողությունների սպառիչ ցանկը, որոնց կատարումը կարող է որակվել որպես օրենքով արգելված գերիշխող դիրքի չարաշահում: Հետևաբար գերիշխող դիրքի չարաշահման համար որևէ տնտեսվարող սուբյեկտի պատասխանատվության ենթարկելու յուրաքանչյուր դեպքում Հանձնաժողովը պարտավոր է պարզել, թե օրենքով նախատեսված՝ գերիշխող դիրքի չարաշահման կոնկրետ ինչ գործողություն է կատարել տվյալ տնտեսվարող սուբյեկտը, և ցույց տալ այն փաստական հիմնավորումները, որոնք հիմք են այդ տնտեսվարող սուբյեկտի կատարած կոնկրետ գործողությունը կամ վարքագիծը որպես գերիշխող դիրքի չարաշահում որակելու համար:

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է մասնակիորեն՝ 3-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 15-րդ, 16-րդ, 21-րդ կետերի մատով, անվավեր ճանաչել Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշումը: Նշված վարչական ակտի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

- Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշման **3-րդ կետով** «Ցեֆտրիաքսոն դեղ և դրա համարժեքներ» ապրանքային շուկայում 2009-2010 թվականների ընթացքում Ընկերության կատարած որոշակի գործողությունները ճանաչվել են որպես գերիշխող դիրքի չարաշահում, իսկ **4-րդ կետով** Ընկերության նկատմամբ գերիշխող դիրքի նշված չարաշահման համար նշանակվել է տուգանք՝ 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամի չափով,
- Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշման **7-րդ կետով** «Պետական գնումների շրջանակներում ձեռքբերվող դեղեր, բժշկական պարագաներ, նյութեր, հատուկ սարքեր և սարքավորումներ» ապրանքային շուկայում Ընկերության և մի շարք տնտեսվարող սուբյեկտների միջև 2009 և 2010 թվականների ընթացքում նախապես ձեռք բերված պայմանավորվածությունը ճանաչվել է որպես հակամրցակցային համաձայնություն, իսկ **8-րդ կետով** այդ հակամրցակցային համաձայնությունը կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար Ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 15.000.000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամի չափով,
- Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշման **15-րդ կետով** Ընկերության և մի շարք բժշկական հաստատությունների միջև 2010 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ պայմանագրեր կնքելը և դրանց հիման վրա մատակարարում իրականացնելը ճանաչվել են որպես հակամրցակցային համաձայնություն, իսկ **16-րդ կետով** այդ հակամրցակցային համաձայնությունը (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար Ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 15.000.000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամի չափով,
- Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշման **21-րդ կետով** Ընկերությանը հանձնարարվել է հետագայում բացառել օրենքի խախտումները, 3-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել նույն որոշման 4-րդ, 8-րդ և 16-րդ կետերով սահմանված տուգանքների վճարումը հավաստող տեղեկատվություն:

Դատարանը, մերժելով Ընկերության հայցը, պատճառաբանել է, որ տվյալ դեպքում առկա չեն վարչական ակտը վիճարկվող մասերով վերացնելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով նախատեսված իրավական հիմքերը, քանի որ Հանձնաժողովը 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշմամբ իրավաչափորեն է Ընկերությանը ենթարկել պատասխանատվության:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, գտել է, որ Հանձնաժողովի կողմից վարչական վարույթն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, վարչական վարույթի ընթացքում ձեռք են բերվել բոլոր անհրաժեշտ և բավարար ապացույցները՝ ապահովելով գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը և բացահայտումը: Ինչ վերաբերում է Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշմամբ Ընկերության նկատմամբ տուգանքի նշանակման իրավաչափության խնդրին, ապա Վերաքննիչ դատարանը նշել է, որ «(...) վիճարկվող որոշմամբ Ընկերության նկատմամբ կիրառված պարտախանսարկության միջոցի և դրա չափի ընտրության հիմնավորումներն արդարացի են և ապահովում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված (...) հայեցողության լիազորության չարահասան և կամայականության արգելման սկզբունքների անխաթար գործողությունը (...):»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Հանձնաժողովն Ընկերությանը ենթարկել է պատասխանատվության «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումների, այն է՝ Ընկերության կողմից գերիշխող դիրքի չարաշահման և երկու տարբեր հակամրցակցային համաձայնությունների կնքման համար:

Սույն գործի փաստերից հետևում է, որ վիճարկվող վարչական ակտի 7-րդ կետով «Պետական գնումների շրջանակներում ձեռքբերվող դեղեր, բժշկական պարագաներ, նյութեր, հատուկ սարքեր և սարքավորումներ» ապրանքային շուկայում Ընկերության և մի շարք տնտեսվարող սուբյեկտների («Եվոֆարմ», «Ռուսֆարմ», «Էդգանի», «Մեգի էլ», «Ամփկուս» և «Կամելիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ) միջև 2009 և 2010 թվականների ընթացքում նախապես ձեռք բերված պայմանավորվածությունը ճանաչելով որպես հակամրցակցային համաձայնություն՝ Հանձնաժողովը վկայակոչել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» և «ը» կետերը: Փաստորեն, ըստ Հանձնաժողովի՝ Ընկերության և նշված տնտեսվարող սուբյեկտների միջև կնքվել է հակամրցակցային համաձայնություն, որը վերաբերել է՝

1) մրցույթների կամ աճուրդների պայմանների վերաբերյալ պայմանավորվածությանը կամ արդյունքների կեղծմանը կամ խեղաթյուրմանը (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետ),

2) այլ տնտեսվարող սուբյեկտների առևտրի կամ արտադրության արդիականացման կամ զարգացման կամ ներդրումների սահմանափակմանը (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետ):

Մինչդեռ Հանձնաժողովը սույն գործի քննության ընթացքում չի ներկայացրել բավարար փաստական տվյալներ կամ օրենքով չարգելված ապացույցներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ «Պետական գնումների շրջանակներում ձեռքբերվող դեղեր, բժշկական պարագաներ, նյութեր, հատուկ սարքեր և սարքավորումներ» ապրանքային շուկայում Ընկերության և մի շարք տնտեսվարող սուբյեկտների միջև 2009 և 2010 թվականների ընթացքում նախապես ձեռք բերված պայմանավորվածության առկայությունը հաստատված համարելու համար: Այսպես, սույն գործով վիճարկվող վարչական ակտի բովանդակությունից հետևում է, որ Հանձնաժողովն ուսումնասիրել է Ընկերության և որոշ տնտեսվարող սուբյեկտների վարքա-

գիծը «Պետական գնումների շրջանակներում ձեռքբերվող դեղեր, բժշկական պարագաներ, նյութեր, հատուկ սարքեր և սարքավորումներ» ապրանքային շուկայում 2009 և 2010 թվականներին տեղի ունեցած մի շարք մրցույթների ընթացքում և համադրելով ձեռք բերված տեղեկությունները՝ հանգել է այն եզրակացության, որ Ընկերության և այդ տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրի միջև կնքվել է հակամրցակցային համաձայնություն: Մինչդեռ տվյալ դեպքում Հանձնաժողովը պարտավոր էր գնահատել ոչ թե տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրի վարքագիծը՝ առանձին-առանձին, այլ Ընկերության և «Եվրոֆարմ», «Ռուսֆարմ», «Էդգանի», «Մեգի էլ», «Ամիկուս» և «Կամելիա» ընկերություններից յուրաքանչյուրի կողմից դրսևորված փոխհամաձայնեցված վարքագիծը: Այլ կերպ ասած՝ սույն գործի քննության ընթացքում Հանձնաժողովը չի հստակեցրել Ընկերության և մի շարք տնտեսվարող սուբյեկտների միջև առերևույթ կնքված հակամրցակցային համաձայնության կնքման (կայացման) կոնկրետ եղանակը և չի ներկայացրել որևէ ապացույց, որով կարող է հիմնավորվել Ընկերության և «Եվրոֆարմ», «Ռուսֆարմ», «Էդգանի», «Մեգի էլ», «Ամիկուս» և «Կամելիա» ընկերությունների միջև առանձին-առանձին կնքված գործարքների, նրանց միջև ձեռք բերված համաձայնությունների, վերջիններիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն համաձայնեցված գործողությունների կամ վարքագծի առկայության փաստական հանգամանքը: Ավելին՝ Հանձնաժողովը չի հիմնավորել նաև այն հանգամանքը, որ Ընկերության կողմից առերևույթ դրսևորված խնդրո առարկա վարքագիծը վերաբերել է մրցույթների կամ աճուրդների պայմանների վերաբերյալ պայմանավորվածությանը կամ արդյունքների կեղծմանը կամ խեղաթյուրմանը կամ այլ տնտեսվարող սուբյեկտների առևտրի կամ արտադրության արդիականացման կամ զարգացման կամ ներդրումների սահմանափակմանը, ինչը հաշվի չի առնվել ստորադաս դատարանների կողմից:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի 7-րդ կետով «Պետական գնումների շրջանակներում ձեռքբերվող դեղեր, բժշկական պարագաներ, նյութեր, հատուկ սարքեր և սարքավորումներ» ապրանքային շուկայում Ընկերության և մի շարք տնտեսվարող սուբյեկտների («Եվրոֆարմ», «Ռուսֆարմ», «Էդգանի», «Մեգի էլ», «Ամիկուս» և «Կամելիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ) միջև 2009 և 2010 թվականների ընթացքում նախապես ձեռք բերված պայմանավորվածությունը ճանաչելով որպես հակամրցակցային համաձայնություն՝ Հանձնաժողովը վարչական վարույթի շրջանակներում կազմակերպված լուսմներին մասնակից է դարձրել այդ տնտեսվարող սուբյեկտներից միայն երկուսին՝ «Եվրոֆարմ» և «Ամիկուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին: Մինչդեռ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով Հանձնաժողովը պարտավոր էր վարչական վարույթի ընթացքում կազմակերպված լուսմներին մասնակից դարձնել նաև մյուս տնտեսվարող սուբյեկտներին («Ռուսֆարմ», «Էդգանի», «Մեգի էլ» և «Կամելիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ) և լսել նրանց բացատրությունները՝ Ընկերության և վերջիններիս միջև առերևույթ ձեռք բերված պայմանավորվածության առկայության կամ բացակայության և այդ պայմանավորվածությունը հակամրցակցային համաձայնություն համարելու կամ չհամարելու հարցերը պարզելու նպատակով:

Սույն գործի փաստերից հետևում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի 15-րդ կետով Ընկերության և մի շարք բուժհաստատությունների միջև 2010 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ մրցույթների արդյունքում կնքվող պայմանագրերից էականորեն տարբերվող պայմաններով պայմանագրեր կնքելը և դրանց հիման վրա մատակարարում իրականացնելը որակելով որպես հակամրցակցային համաձայնություն՝ Հանձնաժողովը վկայակոչել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «դ», «է» և «ը» կետերը: Փաստորեն, ըստ Հանձնաժողովի՝ Ընկերության և մի շարք բուժհաստատությունների միջև կնքվել է հակամրցակցային համաձայնություն, որը վերաբերել է՝

1) այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն (շուկա մուտք գործելը սահմանափակելուն) կամ շուկայից նրանց դուրս մղելուն, որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը մուտք չի գործել շուկա կամ դուրս է մղվել շուկայից կամ կա-

տարել է լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետ),

2) այնպիսի պայմանների առաջարկմանը կամ կիրառմանը, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետ),

3) այլ տնտեսվարող սուբյեկտների առևտրի կամ արտադրության արդիականացման կամ զարգացման կամ ներդրումների սահմանափակմանը (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետ):

Մինչդեռ Հանձնաժողովը սույն գործի քննության ընթացքում չի ներկայացրել բավարար փաստական տվյալներ կամ օրենքով չարգելված ապացույցներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ Ընկերության և մի շարք բժշկական հաստատությունների միջև առերևույթ կնքված հակամրցակցային համաձայնությունն ապացուցված համարելու համար: Ավելին՝ Հանձնաժողովը չի հիմնավորել նաև այն հանգամանքը, որ Ընկերության կողմից դրսևորված խնդրո առարկա վարքագիծը վերաբերել է այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն կամ շուկա մուտք գործելը սահմանափակելուն կամ շուկայից նրանց դուրս մղելուն կամ այնպիսի պայմանների առաջարկմանը կամ կիրառմանը, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ կամ այլ տնտեսվարող սուբյեկտների առևտրի կամ արտադրության արդիականացման կամ զարգացման կամ ներդրումների սահմանափակմանը, ինչը հաշվի չի առնվել ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննության ընթացքում ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշման 7-րդ և 15-րդ կետերով նշված Ընկերության գործողությունները հակամրցակցային համաձայնություն որակելու վերաբերյալ Հանձնաժողովի եզրահանգումները հիմնված են սոսկ ենթադրությունների վրա, չունեն բավարար իրավական և փաստական հիմնավորումներ, քանի որ Հանձնաժողովը սույն գործի քննության ընթացքում չի ներկայացրել Ընկերության կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում նշված գործողությունների կատարման վերաբերյալ որևէ փաստական տվյալ, այդ թվում՝ գրավոր ապացույց, տեսագրություն, ձայնագրություն կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց:

Սույն գործի փաստերից հետևում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի 3-րդ կետով «**Ցեֆաորիաքսոն** դեղ և դրա համարժեքներ» ապրանքային շուկայում 2009–2010 թվականների ընթացքում Ընկերության կատարած որոշակի գործողությունները ճանաչելով որպես գերիշխող դիրքի չարաշահում՝ Հանձնաժողովը վկայակոչել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ», «է», «ը», «թ» կետերը: Փաստորեն, ըստ Հանձնաժողովի՝ տվյալ դեպքում գերիշխող դիրքի չարաշահումը դրսևորվել է Ընկերության կողմից թույլ տրված հետևյալ գործողություններով.

1) իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական և (կամ) տարբերակված գների սահմանումը կամ կիրառումը կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետ),

2) այլ տնտեսվարող սուբյեկտի առևտրի կամ արտադրության արդիականացման կամ ներդրումների սահմանափակումը (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետ),

3) այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտելու (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելու գործողությունը կամ վարքա-

գիծը, որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը մուտք չի գործել շուկա կամ դուրս է մղվել շուկայից կամ կատարել է լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետ),

4) այնպիսի պայմանների առաջարկը կամ կիրառումը, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ այն դեպքում, երբ համանման պայմաններ չեն առաջարկվել տվյալ ապրանքային շուկայում գործող մյուս տնտեսվարող սուբյեկտներին (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետ),

5) իրացման կամ ձեռքբերման գների գեղչերի կամ արտոնությունների սահմանումը, փոփոխումը կամ պահպանումը, եթե դրանք նպատակաուղղված են մրցակցության սահմանափակմանը (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «թ» կետ):

Մինչդեռ Հանձնաժողովը սույն գործի քննության ընթացքում չի ներկայացրել բավարար փաստական տվյալներ կամ օրենքով չարգելված ապացույցներ, որոնք կարող են վկայել այն մասին, որ Ընկերության կողմից կատարվել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ», «է», «ը», «թ» կետերով նախատեսված գործողություններից որևէ մեկը: Այլ կերպ ասած՝ Հանձնաժողովը չի հիմնավորել այն հանգամանքը, որ «Ցեֆտրիաքսոն դեղ և դրա համարժեքներ» ապրանքային շուկայում 2009–2010 թվականների ընթացքում Ընկերության կողմից դրսևորված վարքագիծը գերիշխող դիրքի չարաշահում է, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպես, օրինակ, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետի բովանդակությունից հետևում է, որ այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտելու (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելու վարքագիծը կարող է որակվել որպես գերիշխող դիրքի չարաշահում միայն այն դեպքում, եթե այդ վարքագծի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը մուտք չի գործել շուկա կամ դուրս է մղվել շուկայից կամ կատարել է լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Սզնի» ընկերության մասնակցությամբ պետական գնումների շրջանակներում հայտարարված մրցույթներում 2009–2010 թվականների ընթացքում **ցեֆտրիաքսոն** դեղը մրցույթը հայտարարած բուժհաստատություններին անվճար կարգով տրամադրելու կամ դեղի՝ ինքնարժեքից ցածր գնային առաջարկ ներկայացնելու՝ սույն գործով վիճարկվող վարչական ակտի 3-րդ կետով արձանագրված Ընկերության գործողությունները որպես իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետով նախատեսված վարքագծի դրսևորմամբ գերիշխող դիրքի չարաշահում գնահատելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք Ընկերության նշված գործողությունների հետևանքով «Սզնի» ընկերությունը մուտք չի գործել «**Ցեֆտրիաքսոն** դեղ և դրա համարժեքներ» ապրանքային շուկա կամ դուրս է մղվել այդ շուկայից կամ կատարել է լրացուցիչ ծախսեր՝ այդ շուկայից դուրս չմղվելու համար:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ սույն գործի քննության ընթացքում Հանձնաժողովը որևէ կերպ չի հիմնավորել, որ «**Ցեֆտրիաքսոն** դեղ և դրա համարժեքներ» ապրանքային շուկայում 2009–2010 թվականների ընթացքում Ընկերության կողմից դրսևորված վարքագծի հետևանքով «Սզնի» ընկերությունը մուտք չի գործել շուկա կամ դուրս է մղվել շուկայից կամ կատարել է լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար: Ավելին՝ Հանձնաժողովի 11.06.2012 թվականի թիվ 277-Ա որոշմամբ արձանագրվել է, որ «Սզնի» ընկերությունը 2011 թվականին Հայաստանի Հանրապետություն է ներկրել **ցեֆտրիաքսոն** դեղի նոր խմբաքանակ՝ 40.000 հատով:

բ) 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն (...) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրանում հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը (տե՛ս օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգամիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկարեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԳ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումները՝ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված վարչական մարմնի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.



1) հայեցողական լիազորությունը պետք է վարչական մարմնին վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ վարչական մարմնի հնարավորությանը,

3) վարչական մարմնի կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վարչական մարմինը չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իրավական պետությունում պետաիշխանական լիազորություններով օժտված բոլոր սուբյեկտներին վերապահված հայեցողական լիազորությունները կարող են գործադրվել միայն իրավունքի սահմաններում: Հետևաբար հայեցողական վարչարարությունը ևս կաշկանդված, սահմանափակված է իրավունքով: Այդ իսկ պատճառով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն ամրագրել է, որ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել՝

- մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ,
- իրավահավասարության սկզբունքով,
- վարչարարության իրականացման համաչափության սկզբունքով,
- կամայականության արգելքի սկզբունքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է նաև, որ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ: Նշված իրավադրույթից հետևում է, որ վարչական մարմինները հայեցողական լիազորություններ իրականացնելիս կաշկանդված են նաև հայեցողության այն նպատակով, որն ուղակիորեն կամ անուղակիորեն ամրագրված է հայեցողության վերապահող օրենքում: Այսինքն՝ վարչական մարմինը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պարտավոր է պարզել իրեն հայեցողություն վերապահող օրենքի նպատակը և իր հայեցողությունն իրականացնել օրենքի սահմաններում՝ այդ նպատակին հասնելուն ուղղված միջոցների օգտագործմամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմինների կողմից օրենքով ամրագրված սահմանների խախտմամբ կամ օրենքով կանխորոշված նպատակին ոչ համահունչ կերպով հայեցողական լիազորությունների իրականացումը հանգեցնում է հայեցողական հետևյալ սխալների.

1) սխալ ենթադրություն հայեցողության բացակայության մասին (հայեցողության չօգտագործում),

2) տվյալ փաստակազմի համար օրենքով չնախատեսված իրավական հետևանքի կիրառում կամ հայեցողության չարաշահում (վերազանցում),

3) հայեցողության կիրառման ժամանակ փաստական հանգամանքների ոչ ամբողջական պարզում:

Հետևաբար վարչական մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը պետք է ստուգի հայեցողության կիրառման ժամանակ այնպիսի սխալների առաջացման հարցը, որոնք պայմանավորված են հայեցողության՝ օրենքով ուրվագծված սահմանների կամ օրենքով նախանշված նպատակի անտեսմամբ: Այլ կերպ ասած՝ հայեցողական լիազորությունների իրավաչափության գնահատման համար դատարանը, մասնավորապես, պետք է պարզի արդյոք վարչական հայեցողությունը հետևողականորեն է կիրառվել, թե՛ ոչ, և արդյոք վարչական մարմինը թույլ է տվել վերը նշված հայեցողական սխալներից որևէ մեկը, թե՛ ոչ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի և 36-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով, որ տնտեսվարող սուբյեկտները պատասխանատվություն են կրում նշված օրենքը խախտելու համար, այդ խախտումների դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցների՝ նախազգուշացման կամ տուգանքի, ընտրության հարցում

Հանձնաժողովին վերապահել է հայեցողական լիազորություն: Բացի այդ, Հանձնաժողովը հայեցողական լիազորությունով է օժտված նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումների համար կիրառվող տուգանքի չափի ընտրության հարցում, քանի որ նույն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) կամ գերիշխող դիրքը չարաշահելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է 5.000.000 ՀՀ դրամից մինչև 200.000.000 ՀՀ դրամ: Այսինքն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու կամ գերիշխող դիրքը չարաշահելու համար որևէ տնտեսվարող սուբյեկտի պատասխանատվության ենթարկելու և որպես պատասխանատվության միջոց տուգանքն ընտրելու յուրաքանչյուր կոնկրետ դեպքում Հանձնաժողովն ինքն է որոշում նշանակվող տուգանքի չափը՝ հիմք ընդունելով օրենքով սախատեսված տուգանքի նվազագույն (5.000.000 ՀՀ դրամ) և առավելագույն (200.000.000 ՀՀ դրամ) շեմը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հանձնաժողովը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտման համար կիրառվող պատասխանատվության միջոցի ընտրության, ինչպես նաև որպես պատասխանատվության միջոց ընտրված տուգանքի չափի որոշման հարցում օժտված է հայեցողական լիազորություններով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու բնագավառում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով Հանձնաժողովին վերապահված վերոգրյալ հայեցողական լիազորությունները կարող են գործադրվել միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավական սկզբունքներին և չափանիշներին համապատասխան: Բացի այդ, Հանձնաժողովի հայեցողական լիազորությունների իրականացումը կաշկանդված է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով ուղղակիորեն կանխորոշված հետևյալ նպատակներով.

- պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը,
- ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր,
- նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը,
- նպաստել սպառողների շահերի պաշտպանությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բացի Հանձնաժողովին վերապահված հայեցողության վերը նշված ընդհանուր սահմաններից, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է նաև հատուկ պայմաններ ու պահանջներ, որոնցով պարտավոր է առաջնորդվել Հանձնաժողովն իր հայեցողական լիազորությունների իրականացման ժամանակ: Այսպես, քննարկվող իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը պարտավոր է հաշվի առնել նաև հետևյալ հանգամանքները.

- իրավախախտման բնույթը,
- իրավախախտման տևողությունը,
- իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի վրա,
- իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը սպառողների շահերի վրա,
- տնտեսվարող սուբյեկտի կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումների կրկնակիությունը,
- տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը,
- տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները,
- տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու հանգամանքները,
- տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը,
- տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը,
- տնտեսվարող սուբյեկտի գործունեության պատմությունը,

- հակամրցակցային համաձայնության համար տուգանք նշանակելու դեպքում նաև հակամրցակցային համաձայնության տեսակը (հորիզոնական, ուղղահայաց, խառը):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու բնագավառում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հայեցողական լիազորություններն իրականացնելիս Հանձնաժողովը՝ որպես վարչական մարմին, պարտավոր է առաջնորդվել ինչպես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված իրավական սկզբունքներով ու չափանիշներով և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախանշված նպատակներով, այնպես էլ նույն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ պատասխանատվության կոնկրետ միջոցի կիրառման ժամանակ պարզման ենթակա հանգամանքներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Հանձնաժողովն իրացրել է կիրառվող պատասխանատվության միջոցի և նշանակվող տուգանքի չափի ընտրության հարցում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված հայեցողական լիազորությունները:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Ընկերությանը պատասխանատվության ենթարկելիս Հանձնաժողովը՝ որպես վարչական մարմին, պարտավոր էր անդրադառնալ օրենքով իրեն վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման համար հիմք հանդիսացող բոլոր պայմանների և հանգամանքների բացահայտմանը՝ առաջնորդվելով ինչպես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված իրավական սկզբունքներով ու չափանիշներով և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախանշված նպատակներով, այնպես էլ նույն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ պատասխանատվության կոնկրետ միջոցի կիրառման ժամանակ պարզման ենթակա հանգամանքներով: Ըստ այդմ՝ սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողովը պարտավոր էր պարզել իրեն հայեցողություն վերապահող՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նպատակները և իր հայեցողությունն իրականացնել այդ նպատակներին հասնելուն ուղղված միջոցների օգտագործմամբ: Բացի այդ, Հանձնաժողովը սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարտավոր էր պարզել նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բոլոր հանգամանքները, որոնք Հանձնաժողովը պարտավոր էր հաշվի առնել Ընկերությանը պատասխանատվության ենթարկելիս: Քննարկվող հանգամանքների պարզումը հիմք է տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու բնագավառում օրենքով Հանձնաժողովին վերապահված հայեցողական լիազորություններն իրականացնելու համար, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Հանձնաժողովը պարտավոր էր բացահայտել քննարկվող գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննության ընթացքում ստորադաս դատարանները չեն պարզել նաև այն հարցը, թե վիճարկվող վարչական ակտով Ընկերությանը պատասխանատվության ենթարկելիս տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու բնագավառում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հայեցողական լիազորությունները Հանձնաժողովի կողմից իրացվել են արդյոք օրենքով կանխորոշված նպատակներին համահունչ կերպով և օրենքով ամրագրված սահմանների պահպանմամբ, թե՛ ոչ:

*Նշված պարճառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Հանձնաժողովի 11.06.2012 թվականի «Պետական գնումների ոլորտում կատարված ուսումնասիրության արդյունքների և մի շարք տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 277-Ա որոշման (վիճարկվող կետերի մասով) իրավաչափությունը գնահատելու նպատակով:

### **5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.10.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԳ/7837/05/13**  
**2016 թ.**

Վարչական գործ թիվ ՎԳ/7837/05/13

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Գ. Ղարիբյան  
Ք. Մկոյան  
Ա. Առաքելյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ քաղաքաշինության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.04.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ավետիք Նիկողոսյանի ընդդեմ ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների հատկացման հարցերով հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով), երրորդ անձինք ՀՀ քաղաքաշինության նախարարության, Սոֆյա Համազասպի Նիկողոսյանի, Արմեն Նիկողոսյանի, Երանուհի Նիկողոսյանի, Սոֆյա Արմենի Նիկողոսյանի և Սոնյա Նիկողոսյանի՝ 13.03.2013 թվականի միջամտող վարչական ակտը մասնակի անվավեր ճանաչելու և գործողություն կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Ավետիք Նիկողոսյանը պահանջել է մասնակի անվավեր ճանաչել Հանձնաժողովի 13.03.2013 թվականի վարչական ակտը և պարտավորեցնել Հանձնաժողովին կատարելու որոշակի գործողություններ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ.Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 01.07.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.04.2015 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 01.07.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ավետիք Նիկողոսյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ կառավարության 26.11.2009 թվականի թիվ 1402-Ն որոշման 2-րդ կետի 6.1-րդ ենթակետը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 27-րդ, 124-րդ, 146-րդ, 151-րդ, 152-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Սույն գործով ստորադաս դատարանները չեն պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, չեն պատճառաբանել դատական ակտերը, ինչպես նաև դատական ակտերի մեջ չեն պատճառաբանել դատարանների համոզմունքի ձևավորումը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հանձնաժողովի կողմից 13.03.2013 թվականին որոշում կայացնելու պահին առկա է եղել «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի կողմից 17.06.2010 թվականին տրված եզրակացությունը, որի համաձայն՝ տան տեխնիկական վիճակն ընդհանուր առմամբ գնահատվել է անբավարար, վնասվածության մակարդակը դասվել է 3-րդ աստիճանի, և տունը ենթակա է ուժեղացման ու հիմնանորոգման, ինչպես նաև 25.12.2012 թվականին տրված եզրակացությունը, որի համաձայն՝ բնակելի տան ներքին լայնական մեկ պատում նոր ինքնակամ բացվածք իրականացնելու նպատակով կա կազմատված տեղամաս, որը գտնվում է բարձրթողի վիճակում: Նշված եզրակացություններն էլ հիմք են հանդիսացել Հանձնաժողովի կողմից 13.03.2013 թվականի որոշման կայացման համար, հետևաբար Հանձնաժողովը որևէ խախտում թույլ չի տվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.04.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

ՀՀ կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետը չի նախատեսում բնակարանի քանդված չլինելու հիմքով մերժելու հնարավորություն, ուստի նման հիմքով միջամտող վարչական ակտ կայացնելը կհանդիսանա ոչ իրավաչափ վարչական ակտ և ենթակա կլինի վերացման:

Ինչ վերաբերում է գործում առկա ապացույցների գնահատմանը և պատճառաբանված որոշում կայացնելու հիմնահարցին, ապա ստորադաս դատարանները պատշաճ գնահատման են ենթարկել գործում առկա բոլոր ապացույցները, և ընդունված դատական ակտերն առավել քան հիմնավորված և պատճառաբանված են:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հանձնաժողովի՝ 23.02.2011 թվականին ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքում կայացած արտագնա նիստի թիվ 2 արձանագրությունից քաղվածքի համաձայն՝ որոշվել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում Լեռնանցք համայնքում կառուցված բնակելի տներից տուն ստացողների ցուցակում չընդգրկել Ավետիք Նիկողոսյանի ընտանիքին:

Նույն քաղվածքում, որպես ծրագրում Ավետիք Նիկողոսյանի ընտանիքին չընդգրկելու պատճառ, նշվել է, որ «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի կողմից 17.06.2010 թվականին տրված եզրակացության համաձայն՝ չնայած տան կրող կոնստրուկցիաներում կան 4-րդ

աստիճանի առանձին հատկանշական վնասվածքներ՝ տան վնասվածության մակարդակը գնահատվել է 3-րդ աստիճանի, տունը ենթակա է ուժեղացման և հիմնանորոգման (**հատոր 1-ին, գ.թ 54**).

2. Հանձնաժողովի 13.03.2013 թվականի նիստի թիվ 1 արձանագրությունից քաղվածքի համաձայն՝ հայցվոր Ավետիք Նիկողոսյանը 27.12.2012 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարություն դիմումին կից ներկայացրել է «Հայսեյսմզին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի կողմից իր բնակելի տան տեխնիկական վիճակի հետազննության արդյունքներով 25.12.2012 թվականին տրված եզրակացությունը՝ խնդրելով ևս մեկ անգամ քննարկել ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շրջանակներում իր ընտանիքին ընդգրկելու հարցը: Հանձնաժողովը որոշել է անփոփոխ թողնել Հանձնաժողովի 23.02.2011 թվականի որոշումը (**հատոր 1-ին, գ.թ 55-57**).

3. «Հայսեյսմզին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի 17.06.2010 թվականի՝ «ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք գյուղի բնակիչ Ավետիք Նիկողոսյանի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ» եզրակացության համաձայն՝ չնայած տան կրող կոնստրուկցիաներում կան 4-րդ աստիճանի առանձին հատկանշական վնասվածքներ՝ տան տեխնիկական վիճակն ընդհանուր առմամբ գնահատվում է անբավարար, իսկ վնասվածության մակարդակը դասվում է 3-րդ աստիճանի: Տունը ենթակա է ուժեղացման և հիմնանորոգման (**հատոր 1-ին, գ.թ 58**).

4. «Հայսեյսմզին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի 25.12.2012 թվականի՝ «ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք գյուղի բնակիչ Ավետիք Նիկողոսյանի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ» եզրակացության համաձայն՝ տան տեխնիկական վիճակն ընդհանուր առմամբ գնահատվում է խիստ անբավարար ու վթարավտանգ, իսկ վնասվածության մակարդակը, ըստ գործող շինարարական նորմերի և մեթոդական ցուցումների չափորոշիչների, դասվում է 4-րդ աստիճանի: Տունը ենթակա է ապամոնտաժման (**հատոր 1-ին, գ.թ 65**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ անբողոքարկելի վարչական ակտի վերանայման համար վերսկսված վարչական վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք դատարանը կարող է անդրադառնալ վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատմանը առանց պարզելու վիճարկվող վարչական ակտի բնույթը, և արդյո՞ք վարչական ակտի իրավաչափության գնահատման հիմքերը նույնն են՝ անկախ դրա բնույթից:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական

մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրագեցնելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի մասնակիցների դիմումի հիման վրա պարտավոր է որոշում ընդունել բողոքարկմանն ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, եթե՝

ա) վարչական ակտ ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հոգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել:

բ) առկա են նոր ապացույցներ, որոնք կարող են հանգեցնել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձի համար ավելի բարենպաստ որոշում ընդունելուն:

գ) ի հայտ են եկել տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող այնպիսի նոր հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձանց, կամ թեև հայտնի են եղել նրանց, սակայն այդ անձանցից անկախ հանգամանքներով չեն ներկայացվել վարչական ակտն ընդունող վարչական մարմին:

դ) առկա են օրենքով նախատեսված այլ հիմքեր:

Նույն մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է: Դրա ընթացքում կիրառվում են վարչական վարույթի իրականացման՝ նույն օրենքով նախատեսված ընդհանուր կանոնները:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշմամբ բացահայտել է վարչական վարույթի վերսկսման ինստիտուտի բովանդակությունը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված՝ այդ ինստիտուտի իրավակարգավորման հիմնական տարրերի միջոցով:

Վերոնշյալ հոդվածի իրավակարգավորման հիմնական տարրերն են.

- վարույթը վերսկսվում է նշված հոդվածով և/կամ այլ օրենքներով նախատեսված՝ վարույթը վերսկսելու հիմքերի առկայության դեպքում,
- վարույթը վերսկսելու ինստիտուտը կիրառելի է վարչական ակտի ընդունմամբ արդեն իսկ ավարտված վարչական վարույթի նկատմամբ,
- վարույթը վերսկսելու արդյունքում վերանայվում է՝ փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում վարչական ակտը,
- վարույթը վերսկսելու ինստիտուտը կիրառելի է միայն բողոքարկմանն ոչ ենթակա վարչական ակտերի առնչությամբ, և այդ ինստիտուտի կիրառմամբ կարող է վերանայվել միայն բողոքարկմանն ոչ ենթակա վարչական ակտը:

Հիմք ընդունելով վարչական վարույթը վերսկսելու իրավակարգավորման վերոհիշյալ տարրերը՝ ՀՀ վճարելի դատարանը գտել է, որ վարչական վարույթի վերսկսումն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարչական ակտի ընդունմամբ արդեն իսկ ավարտված վարչական վարույթի վերաբացումն է, նորոգումն է, որի արդյունքում փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում բողոքարկմանն ոչ ենթակա վարչական ակտը (տե՛ս «Ռուբեն Գևորգյան» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սևանի փարաօքային հարկային տեսչության թիվ ՎԴ2/0302/05/12 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի մի-



ջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Վկայակոչված նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի ուժով կարող է բողոքարկվել վարչական կարգով: Այդ դեպքում վարչական վարույթը, ի տարբերություն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված՝ վարույթի վերսկսմանը, ոչ թե նորոգվում է, այլ վարչական մարմինը, իրացնելով իր վերահսկողական լիազորությունը, ստուգում է վարչարարության օրինականությունը, որի արդյունքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ և 77-րդ հոդվածների կիրառմամբ իրավասու է հաստատել, վերացնել կամ փոփոխել բողոքարկված վարչական ակտը կամ ռեալ ակտը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ի տարբերություն բողոքարկման վարույթի, որի միջոցով ստուգվում է վարչարարության օրինականությունը, վերսկսման վարույթը նպատակ է հետապնդում ոչ թե վերստուգել վարչարարության օրինականությունը, այլ օրենքով նախատեսված հիմքերի դեպքում վերաբացել վարչական վարույթը՝ գնահատման առարկա դարձնելով այն հանգամանքները, որոնք առկա չեն եղել վարչական վարույթի ընթացքում և չէին կարող վարչական մարմնի կողմից հաշվի առնվել: Այն, որ վերսկսման վարույթը չի հետապնդում վարչարարության օրինականությունը ստուգելու նպատակ, բխում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածից, որի համաձայն՝ վերսկսման վարույթի դեպքում վարչական մարմինը որոշում է ընդունում այլևս **բողոքարկման ոչ ենթակա** վարչական ակտի վերաբերյալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը վերոնշյալ թիվ ՎԴ2/0302/05/12 գործով կայացված որոշմամբ բացահայտել է «բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտեր» հասկացությունը, նշելով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածում «բողոքարկման ոչ ենթակա ակտեր» ձևակերպումը վերաբերում է այն վարչական ակտերին, որոնք օրենքով սահմանված ժամկետում չեն բողոքարկվել ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով, ինչը նշանակում է, որ նշված դրույթը կիրառելի չէ այն դեպքերի վրա, երբ տվյալ վարչական ակտի իրավաչափությունը վիճարկվել է դատական կարգով, և առկա է դրա իրավաչափությունը գնահատող վերջնական դատական ակտ:

Այսպես, վերսկսման վարույթի դեպքում չի քննվում հիմնական վարչական ակտի իրավաչափությունը, քանի որ եթե անձը չի բողոքարկել վարչական ակտը, այսինքն՝ այն դարձել է անբողոքարկելի, ուստի նա այլևս չի կարող դրա իրավաչափությունը վիճարկել, այլ միայն կարող է վարչական վարույթի վերսկսման բացառապես օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պահանջել անբողոքարկելի վարչական ակտի վերանայում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված վարչական վարույթի վերսկսման հիմքերի վերլուծությունից բխում է, որ դրանք այնպիսի հանգամանքներ են կամ ապացույցներ, որոնք կամ առաջացել են վարչական ակտի ընդունումից հետո, կամ առաջացել են վարչական վարույթի ընթացքում, սակայն հայտնի չեն եղել կամ չէին կարող հայտնի լինել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձանց: Ուստի վարչական վարույթը վերսկսելու կամ բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը վերանայելու պահանջ ներկայացվելու դեպքում վարչական մարմինը ոչ թե քննում է վարչական ակտի իրավաչափության հարցը, այլ պարզում է դիմող անձի կողմից վկայակոչված վարչական վարույթը վերսկսելու հիմքերի առկայությունը և դրանց ազդեցությունը կայացված վարչական ակտի վրա:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերանայման արդյունքում կայացվելիք որոշման բովանդակությունը պայմանավորված է ոչ թե վարչական մարմնի հայեցողական լիազորությամբ, այլ բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտի վերանայման համար հիմք հանդիսացած հանգամանքի՝ այդ ակտի վրա ունեցած ազդեցությամբ:

Այսպիսով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի բովանդակությունից բխում է այն իրողությունը, որ վարչական մարմիններն իրավասու են ընդունելու նույն օրենքի 51-րդ, 53-րդ և 76-րդ հոդվածներով նախատեսված վարչական ակտերից որևէ մեկը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումը Դատարան ներկայացնելու ժամանակահատվածում գործել է 28.11.2007 թվականին ընդունված, 01.01.2008 թվականից ուժի մեջ մտած և 07.01.2014 թվականին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, իսկ գործի քննությունն իրականացվել է 07.01.2014 թվականից ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով, ի թիվս այնի, հայցադիմումին կցվում են նաև վիճարկվող ակտը կամ դրա պատճենը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով, ի թիվս այնի, հայցադիմումին կցում են վիճարկվող ակտը կամ դրա պատճենը, եթե այն հնարավոր է ներկայացնել:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկման հայցի առարկան ընդհանուր առմամբ թե՛ նախկինում և թե՛ ներկայումս միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է, հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը: Հետևաբար վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննությունն իրականացնելիս դատարանը պետք է պարզի հայցի առարկայի նյութական հիմքը, այսինքն՝ վիճարկվող վարչական ակտի բնույթը, մասնավորապես այն, թե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ, 53-րդ և 76-րդ հոդվածներով նախատեսված վարչական ակտերից որն է վիճարկվում հայցվորի կողմից:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հարցի պարզումը էական նշանակություն ունի վիճարկման հայցի քննության համար, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ, 53-րդ և 76-րդ հոդվածներից յուրաքանչյուրով նախատեսված վարչական ակտի իրավական հիմքերը տարբեր են, հետևաբար դրանցից յուրաքանչյուրի իրավաչափությունը գնահատելու համար անհրաժեշտ է

հստակ պատկերացում ունենալ վիճարկվող վարչական ակտի բնույթի մասին: Այսպես, եթե հիմնական վարչական ակտի («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53–րդ հոդվածով նախատեսված) դատական կարգով վիճարկման դեպքում ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա, իսկ բողոքարկման վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտի («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76–րդ հոդվածով նախատեսված) վիճարկման դեպքում ստուգվում է վարչարարության օրինականության նկատմամբ վերադաս վարչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության իրավաչափությունը, ապա վարչական վարույթի վերսկսման արդյունքում ընդունված վարչական ակտի («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51–րդ հոդվածով նախատեսված) վիճարկման դեպքում ստուգվում է անբողոքարկելի վարչական ակտի վերանայման համար վարչական վարույթի վերսկսման օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը և վարչական մարմնի կողմից այդ հիմքի կիրառման և դրան համապատասխան որոշման կայացման իրավաչափությունը: Հետևաբար վարչական ակտի բնույթով պայմանավորված՝ փոխվում են նաև դրա իրավաչափության գնահատման հիմքերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հանձնաժողովի՝ 23.02.2011 թվականի որոշմամբ «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ–ի կողմից 17.06.2010 թվականին տրված եզրակացության հիման վրա աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակելի տներից տուն ստացողների ցուցակում Ավետիք Նիկողոսյանի ընտանիքը չի ընդգրկվել: Ավետիք Նիկողոսյանը 27.12.2012 թվականին Հանձնաժողով է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք գյուղի բնակիչ Ավետիք Նիկողոսյանի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ–ի 25.12.2012 թվականի եզրակացությունը և խնդրել է ևս մեկ անգամ քննարկել Լեռնանցք համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շրջանակներում իր ընտանիքին դիտարկելու հարցը: Հանձնաժողովի 13.03.2013 թվականի նիստի թիվ 1 արձանագրությունից քաղվածքի համաձայն՝ որոշվել է Հանձնաժողովի 23.02.2011 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ այն իրավաչափ լինելու պատճառաբանությամբ:

Սույն գործով Դատարանը, Ավետիք Նիկողոսյանի հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ «Հանձնաժողովի 13.03.2013 թվականի որոշումն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4–րդ և 37–րդ հոդվածների պահանջների խախտումներով, քանի որ վարչական մարմինը չի ապահովել տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ անտեսելով վարույթում «Վանսեյսմշին» ՄՊԸ–ի 06.12.2008 թվականի և «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ–ի 25.12.2012 թվականի եզրակացությունները, ինչը հանգեցրել է ՀՀ կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1337–Ն որոշման 1–ին կետով հաստատված «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության» կարգի 2–րդ կետի սխալ կիրառմանը՝ արդյունքում խախտելով նաև 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 34–րդ հոդվածի դրույթը, որպիսի խախտումները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63–րդ հոդվածի 1–ին մասով սահմանված իրավական հիմքեր են հանդիսանում վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու համար: Դատարանը գտել է նաև, որ Հանձնաժողովի որոշման վերացման պայմաններում բավարարման է ենթակա նաև Ավետիք Նիկողոսյանի մյուս պահանջը՝ Հանձնաժողովին գործողություն կատարելուն պարտավորեցնելու մասին, քանի որ վիճարկվող որոշման վերացմամբ պայմանավորված վերանում է նրա ընտանիքի՝ բնակարանային պայմանների բարելավման համապատասխան ցուցակում չընդգրկվելու խոչընդոտը»:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի նշված եզրահանգումները, մերժել է Նախարարության վերաքննիչ բողոքը՝ Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները գործում եղած ապացույցները գնահատելիս չեն անդրադարձել սույն գործով վիճարկվող վարչական ակտի բնույթին, ինչի արդյունքում չի պարզվել սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստը, թե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ, 53-րդ և 76-րդ հոդվածներով նախատեսված վարչական ակտերից կոնկրետ որն է վիճարկման հայցի առարկան: Այսինչ, այդ փաստի պարզումը գործի քննության լրիվությունը, օբյեկտիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու առումով ունի որոշիչ նշանակություն, քանի որ վարչական ակտի բնույթը ճիշտ պարզելու հանգամանքով է պայմանավորված վարչական ակտի իրավաչափության գնահատման հիմքերի ճիշտ ընտրությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հիմնական, բողոքարկման և անբողոքարկելի վարչական ակտի վերանայման (վերսկսման) վարույթների արդյունքում ընդունվում են բովանդակային առումով իրարից տարբերվող վարչական ակտեր: Այսպես, եթե հիմնական վարչական վարույթով ընդունվում է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանող, փոփոխող, վերացնող կամ ճանաչող վարչական ակտ, իսկ բողոքարկման վարույթի արդյունքում՝ հիմնական վարչական ակտի իրավաչափությունը գնահատող վարչական ակտ, ապա վերսկսման վարույթով օրենքով նախատեսված հիմքերի դեպքում վերաբացվում է վարչական վարույթը, որի արդյունքում ընդունվում է բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ վարչական ակտ՝ գնահատման առարկա դարձնելով այն հանգամանքները, որոնք առկա չեն եղել վարչական վարույթի ընթացքում և չէին կարող վարչական մարմնի կողմից հաշվի առնվել: Հետևաբար առանց պարզելու այն փաստը, թե վիճարկվող վարչական ակտը կոնկրետ ինչ վարույթի (հիմնական, բողոքարկման, վերանայման) արդյունքում է ընդունվել, հնարավոր չէ անդրադառնալ նաև այդ ակտի իրավաչափության գնահատմանը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները չեն իրականացրել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով չեն պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի փաստարկն առ այն, որ ստորադաս դատարանների կողմից խախտվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 27-րդ հոդվածները:

Ստորադաս դատարանների կողմից վերը նշված դատավարական նորմերի խախտման պայմաններում Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքում և վճռաբեկ բողոքի պատասխանում բերված մյուս փաստարկներին հնարավոր չի համարում անդրադառնալ գործի քննության ներկա փուլում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.04.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԳ/1761/05/14**  
**2016 թ.**

Վարչական գործ թիվ ՎԳ/1761/05/14

Նախագահող դատավոր՝

Ա. Առաքելյան

Դատավորներ՝

Ք. Մկոյան

Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության վճռաբեկ բո-  
ղոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.11.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի  
Աշոտ Մարտիրոսյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի  
պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), երրորդ անձինք ՀՀ ֆինանսների նախարարու-  
թյան (այսուհետ՝ Նախարարություն), Կարապետ Մարտիրոսյանի, Ալվարդ Վարդանյանի՝  
6.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով պատճառված վնասը հատուցելուն պար-  
տավորեցնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Աշոտ Մարտիրոսյանը պահանջել է պարտավորեցնել Կոմիտեին  
հատուցել 6.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով պատճառված վնասը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան)  
16.04.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.11.2015  
թվականի որոշմամբ Կոմիտեի և Նախարարության վերաքննիչ բողոքները մերժվել են, և  
Դատարանի 16.04.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը, հաշվի չառնելով, որ պատասխանողի ոչ իրավաչափ վարքագծի, վնասի և դրանց միջև պատճառահետևանքային կապի առկայության ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը, խախտելով գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն պարզելու իր պարտականությունը, քննարկման առարկա չի դարձրել այն հանգամանքը, թե արդյոք հայցվորի նկատմամբ պարտքի մարումը հնարավոր չէր այլ եղանակներով, քան Շուշան Մկրտչյանին պատկանող և արգելանքի չվերցված Երևան քաղաքի Լյուքսեմբուրգի 2-րդ նրբանցքի թիվ 6/11 հասցեի անշարժ գույքի արժեքից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ տվյալ դեպքում հայցվորի կողմից չի հիմնավորվել իր կրած վնասի առկայությունը, վնասի չափը և հետևանքների վերացման այլ միջոցների սպառված լինելու հանգամանքը, ինչի հետևանքով Հայաստանի Հանրապետության վրա դրել է անհամաչափ պարտականություն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում պատճառված վնասի և պատասխանողի ոչ իրավաչափ վարչարարության միջև առկա չէ պատճառահետևանքային կապ, բացի այդ, հայցվորին վնասը պատճառվել է Շուշան Մկրտչյանի և Վահե Գրիգորյանի կողմից պարտավորությունը դիտավորյալ չկատարելու, այլ ոչ թե պատասխանողի ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.11.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

## 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) թիվ ԵԱՆԴ/0525/02/10 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Աշոտ Մարտիրոսյանի ընդդեմ Գայանե, Շուշան Մկրտչյանների և Վահե Գրիգորյանի՝ պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 12.04.2010 թվականի «Հայցի ապահովում կիրառելու մասին» որոշմամբ արգելանք է դրել Գայանե, Շուշան Մկրտչյանների և Վահե Գրիգորյանի անվամբ գրանցված շարժական և անշարժ գույքի, ինչպես նաև դրամական միջոցների վրա **(հատոր 1-ին, գ.թ. 12)**.

2) Կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական կենտրոն» ստորաբաժանման 29.04.2010 թվականի թիվ ԱԱ-3/3843 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հանկարծիք կատարումն ապահովող ծառայությանը հայտնվել է, որ Շուշան Մկրտչյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ **(հատոր 1-ին, գ.թ. 13)**.

3) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՆԴ/0525/02/10 քաղաքացիական գործով 15.12.2011 թվականին կայացրած վճռով հաստատված հաշտության համաձայնության համաձայն՝ Շուշան Մկրտչյանը և Վահե Գրիգորյանը պարտավորվել են նշված քաղաքացիական գործով վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր ամիս Աշոտ Մարտիրոսյանին վճարել 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ մինչև 6.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ պարտքի մարումը:

Նշված հաշտության համաձայնությամբ կողմերը համաձայնել են նաև, որ վերացվի Վահե Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող «Մերսեդես C 240» մակնիշի 17 SS 934 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա դրված արգելանքը:

Սույն վճռով մասնակի վերացվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.04.2010 թվականի «Հայցի ապահովում կիրառելու մասին» որոշմամբ դրված արգելանքը՝ արգելանքից հանվել է «Մերսեդես C 240» մակնիշի 17 SS 934 պետհամարանիշի ավտոմեքենան (**հատոր 1–ին, գ.թ. 8–10**).

4) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք բաժնի 06.09.2012 թվականի որոշման համաձայն՝ թիվ ԵԱՆԳ/0525/02/10 քաղաքացիական գործով 26.03.2012 թվականին վերսկսված թիվ 01/07–1402/12 կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետի հիմքով, այն է՝ կատարողական գործողությունների ընթացքում պարտապանը և նրան պատկանող գույք կամ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել (**հատոր 1–ին, գ.թ. 18**).

5) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք բաժնի 11.09.2014 թվականի թիվ 15298/07 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.03.2012 թվականի թիվ ԵԱՆԳ/0525/02/10 կատարողական թերթերի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան և Նոր–Նորք բաժնում հարուցված թիվ 01/07–1402/12 և թիվ 01/07–1550/12 կատարողական վարույթներով պարտապաններ Վահե Գրիգորյանից և Շուշանիկ Մկրտչյանից հոգուտ պահանջատեր Աշոտ Մարտիրոսյանի գումար չի բռնագանձվել (**հատոր 1–ին, գ.թ. 69**).

6) թիվ ՎԳ/3778/05/12 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.07.2013 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով Կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի 29.04.2010 թվականի թիվ ԱԱ–3/3843 գրությամբ տրամադրված տեղեկատվությունը ճանաչվել է ոչ իրավաչափ (**հատոր 1–ին, գ.թ. 19–23**).

7) Կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման 20.02.2014 թվականի թիվ Ե–09 գրության համաձայն՝ Աշոտ Մարտիրոսյանի ներկայացուցիչ Արմեն Ասատրյանի դիմումը՝ պատճառոված վնասը հատուցելու վերաբերյալ, մերժվել է (**հատոր 1–ին, գ.թ. 77**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական մարմնի ոչ իրավաչափ գործողության և անձանց պատճառոված վնասի միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Մինևսույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5–րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադատույժ հեղինակ իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք վարչական մարմնի գործողության ոչ իրավաչափությունը հասարակած լինելու հանգամանքն ինքնին բավարար է պարզադատված նյութական վնասի հարուցման համար:*



«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման նույն օրենքի 7-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ նույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցումն իրականացվում է վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով: Նշված կանոնը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ պատասխանատվություն կրողի վարչարարության հետևանքով առաջացած դրությունը, օրենքի կամ այլ իրավական ակտի ընդունման կամ փոփոխման ուժով, ոչ իրավաչափ է դառնում հետագայում, և այդ դրության հետևանքները կարող են վերագրվել տվյալ պատասխանատվությունը կրողին և ենթակա չեն վերացման այլ կարգով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են նույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում է լուծվում է դիմումի քննարկման համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

ՀՀ վճարելի դատարանը, անդրադառնալով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման խնդրին, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որից հետո միայն անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը քննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադատության կամ դատական կարգով (տե՛ս Միեր Հայրապետյանն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի սոցիալական ծառայությունների Հրազդանի տարածքային գործակալության պետ Վարդան Միրզոյանի թիվ ՎԴ/3280/05/09 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել հետևյալը.

Իրավական պետությունը պահանջում է արդյունավետ իրավական պաշտպանության ապահովում, ինչը նշանակում է, որ մասնավոր անձինք պետք է պետության ոչ իրավաչափ գործողություններից կամ անգործությունից պաշտպանվելու հնարավորություն ունենան: Ընդ որում, իրավական պաշտպանությունը ոչ միայն ենթադրում է, որ հետագայում հնարավոր կլինի վերստուգել պետության գործողությունների կամ անգործության իրավաչափությունը, այլ նաև այդպիսի գործողության կամ անգործության հետևանքով առաջացած վնասը կհատուցվի:

Արդյունավետ իրավական պաշտպանության ապահովման նպատակով օրենսդիրն ամրագրել է ոչ իրավաչափ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցման իրավական հնարավորություն՝ սահմանելով վարչական մարմինների պատասխանատվության վերաբերող այնպիսի իրավակարգավորում, որի միջոցով ապահովվում է անձանց կրած վնասների հատուցումը:

Վարչական մարմինների պարտականությունների խախտման հետևանքով անձանց կրած վնասների հատուցման վերաբերյալ դրույթներ ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն երաշխավորել է պետության ոչ իրավաչափ գործողություններից պաշտպանվելու իրական հնարավորություն, այլ նաև՝ այդ գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու և օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում հատուցում ստանալու իրական հնարավորություն:

Որևէ պահանջ ներկայացնելու համար յուրաքանչյուր օրենք սահմանում է որոշակի նախապայմաններ՝ այդ պահանջի կատարման համար իրական հնարավորություն ստեղծելու և դրանով պաշտպանվող իրավունքի իրացումն ապահովելու համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանվել են վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու պայմանները: Այսպես՝ վարչական մարմինների վարչարարության արդյունքում պետության պատասխանատվությունը ծագում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- իրականացվել է ոչ իրավաչափ (իսկ նույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ) վարչարարություն,
- պատճառվել է վնաս,
- իրականացված վարչարարության և պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ:

Ինչ վերաբերում է վարչարարություն իրականացրած անձի մեղքին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ելնելով վարչարարություն իրականացնող անձի գործառնությունների բնույթից՝ վերջինիս կողմից իրականացված իշխանական գործողության արդյունքում անձին պատճառված վնասի հատուցման դեպքում վարչարարություն իրականացրած անձի մեղքը ենթադրվում է:

Այսպիսով, ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Այսինքն՝ վարչական մարմինների պարտականությունների խախտման և վնասի պատճառման միջև պետք է առկա լինի իրավական նշանակություն ունեցող **պատճառահետևանքային կապը**: Այլ կերպ ասած՝ վարչարարությունն ոչ իրավաչափ ճանաչելը դեռևս չի նշանակում, որ անձը վնասը կրել է հենց վարչարարության հետևանքով. անհրաժեշտ է, որ վարչարարության և պատճառված վնասի միջև առկա լինի **անմիջական պատճառահետևանքային կապ**: Պատճառահետևանքային կապի հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին գնահատման առարկա պետք է դառնա, և դրա առկայությունը որոշելիս առանցքային պետք է համարվի այն գաղափարը, որ պատճառահետևանքային կապի առկայության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ վնասի առաջացումը ոչ իրավաչափ վարչարարության **անխուսափելի և անմիջական արդյունքն է**: Հետևաբար ոչ իրավաչափ վարչարարության և առաջացած վնասների միջև պատճառահետևանքային կապ կարող է առկա լինել, եթե վնասի առաջացումը հանդիսա-

նում է իրականացված վարչարարության օբյեկտիվորեն անհրաժեշտ և ուղղակի արդյունքը: Եթե բացասական հետևանքները կարող էին առաջանալ նաև առանց ոչ իրավաչափ վարչարարության (իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության), ուրեմն դրանց միջև պատճառահետևանքային կապը բացակայում է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ նշված պայմաններից թեկուզ մեկի բացակայությունը բացառում է վնասի հատուցման պահանջի բավարարման հնարավորությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածների իրավական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման եղանակներն են հետևանքների վերացումը և դրամական միջոցներով հատուցումը, ընդ որում, նույն օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ դրամական միջոցներով հատուցումը կիրառվում է միայն սուբսիդիար, այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը:

Հետևանքների վերացման պահանջի իրավունքը պարտավորեցնում է պետությանը վերացնելու ոչ իրավաչափ ձևով ի վնաս անձի փոփոխված փաստացի դրությունը կամ վերականգնել նախկին դրությունը, կամ էլ առնվազն ստեղծել դրան համարժեք դրություն: Միայն այն դեպքում, երբ դա անհնար է կամ անարդյունավետ, պետությունը կարող է վնասը հատուցել դրամական միջոցներով: Դրամական միջոցներով հատուցման պահանջը նպատակ է հետապնդում հատուցելու վնաս կրած անձի գույքի՝ դրամով արտահայտված այն նվազեցումը, որը պատճառվել է վարչական մարմնի վարչարարության արդյունքում: Այդ նվազեցումը ձևավորվում է վնաս կրած անձի՝ խախտման պահին առկա գույքային դրության և այն գույքային դրության տարբերությունից, որը կառաջանար, եթե վարչական մարմինը նման վարչարարություն չիրականացներ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ընդհանուր առմամբ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պայմանը վարչական մարմնի իրավական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելն է և դրանց ու պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապը, իսկ դրամական միջոցներով հատուցելու պայման է նաև նախկին դրությունը վերականգնելու կամ առնվազն դրան համարժեք դրություն ստեղծելու անհնարինությունը կամ անարդյունավետությունը, այն է՝ եթե վարչարարությամբ առաջացած հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն նշված պայմանների առկայության պարագայում է հնարավոր իրականացնել վնասի հատուցում: Հետևաբար վնասի հատուցման պահանջ քննող վարչական մարմինը կամ դատարանը նախնառաջ պարտավոր են պարզել վերը նշված բոլոր պայմանների առկայությունը, ինչը հնարավորություն կտա ճշգրտորեն որոշելու պատճառված վնասի չափը, հատուցման եղանակները և վնասի հատուցում իրականացնելու համար այլ կարևոր հանգամանքներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վճարելի դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմի վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վարչական դատավարությունում առանցքային նշանակություն ունի գործի փաստերն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքը, որը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության և լուծման միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատավարական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու գործով օբյեկտիվ ճշմարտությունը և արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը (*տե՛ս Ալվարո Երիսագարյան և Տելենակ Երիսագարյան ընդդեմ ՀՀ ադելի գուրու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությանը իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների հատկացման հարցերով հանձնաժողովի թիվ ՎԴ/3654/05/13 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Իր մեկ այլ որոշմամբ ՀՀ վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության իրացման առանձնահատկությունների վերաբերյալ՝ ընդգծելով, որ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգեղու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (*տե՛ս ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի Արարկի-րի հարկային տեսչությունն ընդդեմ «Ջորջ ընդ Բրանդն» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/5525/05/08 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Միաժամանակ ՀՀ վճարելի դատարանը նշել է, որ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու գործընթացում դատարանի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում դատարանը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: Իսկ այդպիսի հետևողականության ցուցաբերման անարդյունավետության դեպքում դատարանը պարտավոր է վիճելի մնացած փաստի չապացուցման բացասական հետևանքները դնել այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա՝ հաշվի առնելով նաև, որ վարչական դատավարությունում վարչական ակտի համար հինք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը (*տե՛ս ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի Արարչայի տեսչության հարկային տեսչությունն ընդդեմ «Միքսնադ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3/0043/05/10 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլինելու առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործի ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեին տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է ձեռնարկել համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար, պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները, անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է նաև, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածներով սահմանված պարտականությունների ոչ պատշաճ կատարումը կարող է հանգեցնել ոչ արդյունավետ դատաքննության իրականացմանը, ինչը գործնականում կբացառի վեճի պատշաճ քննության և ճիշտ լուծման հնարավորությունը, հետևաբար, եթե դատարանը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում վկայակոչված իրավանորմերի պահանջները և իր նախաձեռնությամբ չի ձեռնարկում համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար, չի պահանջում, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները, ապա դրա հետևանքով չի ապահովվում վարչական արդարադատության խնդիրների լուծումը, մասնավորա-

պես՝ հանրային-իրավական վեճերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ու լուծումը, օրինականության վերականգնումն ու ամրապնդումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ԵԱՆԴ/0525/02/10 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Աշոտ Մարտիրոսյանի ընդդեմ Գայանե, Շուշան Մկրտչյանների և Վահե Գրիգորյանի՝ պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 12.04.2010 թվականի «Հայցի ապահովում կիրառելու մասին» որոշմամբ արգելանք է դրել Գայանե, Շուշան Մկրտչյանների և Վահե Գրիգորյանի անվամբ գրանցված շարժական և անշարժ գույքի, ինչպես նաև դրամական միջոցների վրա: Կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական կենտրոն» ստորաբաժանման 29.04.2010 թվականի թիվ ԱԱ-3/3843 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը հայտնվել է, որ Շուշան Մկրտչյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՆԴ/0525/02/10 քաղաքացիական գործով 15.12.2011 թվականին կայացրած վճռով հաստատված հաշտության համաձայնության համաձայն՝ Շուշան Մկրտչյանը և Վահե Գրիգորյանը պարտավորվել են նշված քաղաքացիական գործով վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր ամիս Աշոտ Մարտիրոսյանին վճարել 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ մինչև 6.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ պարտքի մարումը: Նշված հաշտության համաձայնությամբ կողմերը համաձայնել են նաև, որ վերացվի Վահե Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «Մերսեդես C 240» մակնիշի 17 SS 934 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա դրված արգելանքը: Սույն վճռով մասնակի վերացվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.04.2010 թվականի հայցի ապահովում կիրառելու մասին որոշմամբ դրված արգելանքը՝ արգելանքից հանվել է «Մերսեդես C 240» մակնիշի 17 SS 934 պետհամարանիշի ավտոմեքենան:

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք բաժնի 06.09.2012 թվականի որոշման համաձայն՝ թիվ ԵԱՆԴ/0525/02/10 քաղաքացիական գործով 26.03.2012 թվականին վերակսված թիվ 01/07-1402/12 կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ կատարողական գործողությունների ընթացքում պարտապանը և նրան պատկանող գույք կամ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել: Թիվ ՎԴ/3778/05/12 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.07.2013 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով Կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի 29.04.2010 թվականի թիվ ԱԱ-3/3843 գրությամբ տրամադրված տեղեկատվությունը ճանաչվել է ոչ իրավաչափ:

Դատարանը, սույն գործով Աշոտ Մարտիրոսյանի հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ «... առկա է եղել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման կողմից ոչ իրավաչափ տեղեկատվության տրամադրման փաստ, որի արդյունքում հայցվորին հասցվել է նյութական վնաս, քանի որ պարտապան Շուշան Մկրտչյանին պարտավորող գույքի և դրամական միջոցների չհայտնաբերման պարտավորվել է հարուցված կարարողական վարույթն և, ըստ էության, անհնարին է դարձել դատական ակտի կատարումը:

Այսինքն՝ հայցվորը գրկվել է իր սեփականությունից (դրամական միջոցներից) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանմանն ոչ իրավաչափ տեղեկատվության տրամադրման արդյունքում ...»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռն անփոփոխ թողնելով, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները՝ հավելելով, որ սույն գործով առկա են օրենսդրի կողմից սահմանված վնասի հատուցման պայմանները, այն է՝ վարչարարության ոչ իրավաչափ ճանաչված լինելու հանգամանքը և վնասի հատուցման վերաբերյալ հայցվորի դիմումը մերժվելը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են, քանի որ վարչարարության ոչ իրավաչափ լինելն ինքնին բավարար չէ վնասի հատուցում իրականացնելու համար: Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջը կարող է բավարարվել միայն այն դեպքում, երբ վնասը պատճառվել է ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում, դրա ուղղակի հետևանք է, այսինքն՝ առկա է անմիջական պատճառահետևանքային կապ: Մինչդեռ սույն գործով վնասի հատուցման պարտադիր պայման հանդիսացող ոչ իրավաչափ վարչարարության և վնասի միջև պատճառահետևանքային կապը հաստատված չէ, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը հայցվորի պահանջի բավարարման հիմքում դրել է Կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման 29.04.2010 թվականի թիվ ԱԱ-3/3843 գրությամբ տրամադրված տեղեկատվության՝ թիվ ՎԲ/3778/05/12 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.07.2013 թվականի վճռով ոչ իրավաչափ ճանաչված լինելու հանգամանքը և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք բաժնի 11.09.2014 թվականի թիվ 15298/07 գրությունը, որի համաձայն՝ պարտապաններ Վահե Գրիգորյանից և Շուշանիկ Մկրտչյանից հոգուտ պահանջատեր Աշոտ Մարտիրոսյանի գումար չի բռնագանձվել, սակայն չի պատճառաբանել, թե որն է վարչական մարմնի ոչ իրավաչափ վարչարարության և հայցվորի կրած վնասի միջև պատճառահետևանքային կապը: Դատարանը չի պարզել սույն վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, թե հայցվորին պատճառված վնասն արդյո՞ք Կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման 29.04.2010 թվականի թիվ ԱԱ-3/3843 գրությամբ տրամադրված տեղեկատվության ուղղակի, անմիջական հետևանք է, թե՞ հնարավոր է, որ այն առաջացած լիներ այլ անձանց գործողությունների արդյունքում: Ավելին՝ Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ թիվ ԵԱՆԴ/0525/02/10 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.12.2011 թվականի վճռով, որով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, նույն համաձայնության հիման վրա մասնակի վերացվել է հայցվորի պահանջների բավարարման նպատակով կիրառված հայցի ապահովումը, և արգելանքից հանվել է պարտապան Վահե Գրիգորյանին պատկանող՝ «Մերսեդես C 240» մակնիշի 17 ՏՏ 934 պետհամարանիշի ավտոմեքենան: Սույն գործով գնահատման պետք է արժանանար նաև այն հանգամանքը, թե արդյո՞ք արգելանքը վերացվելու պայմաններում թիվ ԵԱՆԴ/0525/02/10 քաղաքացիական գործով կայացված դատական ակտի կատարման անհնարինության և Կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման 29.04.2010 թվականի թիվ ԱԱ-3/3843 գրությամբ տրամադրված ոչ իրավաչափ տեղեկատվության միջև պատճառահետևանքային **անմիջական** կապն առկա է, թե՞ հայցվորին պատճառված վնասը կարող էր հետևանք լինել նաև այլ գործողությունների (մասնավորապես՝ կիրառված արգելանքի վերացման):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմնի ոչ իրավաչափ գործողությունների և առաջացած վնասի միջև պատճառահետևանքային կապը հաստատված համարելու նպատակով սույն գործով Դատարանը չի կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Դատարանը, դրամական միջոցներով վնասը հատուցել պարտավորեցնելուց առաջ պետք է քննարկեր նաև վնասի հատուցման օրենքով սահմանված եղանակների հարցը, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը նախատեսել է դրամական միջոցներով վնասի հատուցումից առաջ հետևանքների վերացումն անհնարին կամ անբավարար լինելը կամ հետևանքների վերացման համար պատճառված գույքային վնասից ավելի մեծ ծախսերի անհրաժեշտությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը չի ձեռնարկել համարժեք միջոցներ՝ սույն գործի

լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար, և չի պահանջել, որ ներկայացվեն սույն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատավարական նորմերի վերը նշված խախտումները շտկելու, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150–րդ, 151–152–րդ և 163–րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը՝ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժելու մասով, բեկանելու և գործն ամբողջությամբ նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և կզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56–րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169–171–րդ հոդվածներով, 172–րդ հոդվածի 1–ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.11.2015 թվականի որոշումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության վերաքննիչ բողոքը մերժելու մասով, և գործն ամբողջությամբ ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորտագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորտագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/0794/05/14  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ք. Մկոյան  
Ա. Առաքելյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0794/05/14**  
**2016 թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22–ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Անահիտ Սարգսյանի ներկայացուցիչ Մելսիկ  
Մանուկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.05.2015 թվականի  
որոշման դեմ՝ ըստ հայցի Անահիտ Սարգսյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարա-  
րության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝  
Ծառայություն), երրորդ անձ Հասմիկ Մերգոյանի՝ Ծառայության 29.10.2013 թվականի «Կա-  
տարողական վարույթը վերսկսելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու, և որպես  
հետևանք՝ Ծառայության 10.03.2014 թվականի «Կատարողական գործողությունները  
վերսկսելու մասին» որոշումը վերացնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Անահիտ Սարգսյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայու-  
թյան 29.10.2013 թվականի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» որոշումը, և որ-  
պես հետևանք՝ վերացնել Ծառայության 10.03.2014 թվականի «Կատարողական գործողու-  
թյունները վերսկսելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան)  
26.12.2014 թվականի վճռով հայցը մերժվել է ամբողջությամբ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.05.2015  
թվականի որոշմամբ Անահիտ Սարգսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
26.12.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անահիտ Սարգսյանի ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ծառայությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 123-րդ, 124-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի դատական ակտը չի բխում գործի իրավական և փաստական հանգամանքներից:

Ստորադաս դատարանը սույն վարչական գործով վեճի քննության ժամանակ չի գարգացրել այս կամ այն ապացույցն արժանահավատ համարելու, մեկի առավելությունը մյուսի նկատմամբ, ինչպես նաև այս կամ այն ապացույցը մերժելու մասին համալիր ինստիտուտի ձևավորումն ու կառուցումը, հակառակ դեպքում կհամոզվել, որ երբեք իրավաչափ ու իրատեսական չէ Դատարանի եզրահանգումն այն մասին, որ վիճահարույց կատարողական վարույթով վեճի առարկա համարվող Երևան քաղաքի, Հ. Էմինի թիվ 103/2 տան նկատմամբ արգելանք չի կիրառվել, այլ արգելանքը կիրառվել է նույն անձանց միջև, մինչև նույն առարկայի վերաբերյալ թիվ ԵԱԲԴ/1128/02/11 քաղաքացիական գործի շրջանակներում, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանն անթույլատրելիորեն փաստել է, որ նման պայմաններում վիճահարույց կատարողական վարույթի վերսկսելն արգելք չէ:

Վերաքննիչ դատարանը չի կատարել սույն գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, ճիշտ չի գնահատել գործով ձեռք բերված ապացույցները և հաշվի չի առել, որ Ծառայության վիճարկվող որոշումները խախտում են Անահիտ Սարգսյանի իրավունքներն ու օրինական շահերը և պետք է վերացվեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.05.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասահանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Ծառայության 18.06.2012 թվականի որոշմամբ կատարողական վարույթը ոչ թե կարճվել է, այլ՝ ավարտվել, հետևաբար այն կարող էր վերսկսվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. թիվ ԵԱԲԴ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.09.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա պահանջատեր Հասմիկ Սերգոյանին 07.05.2012 թվականին տրվել է թիվ ԵԱԲԴ-1128/02/11 կատարողական թերթը, որի համաձայն՝ Անահիտ Սարգսյանին պետք է վտարել Հասմիկ Սերգոյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Հ. Էմինի փողոցի թիվ 103/2 հասցեում գտնվող բնակելի տնից (**հատոր 1-ին, գ.թ. 39**).

2. Ծառայության 11.05.2012 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշման համաձայն՝ վերը նշված կատարողական թերթի հիման վրա Ծառայության Կենտրոնական մարմնի հարկադիր կատարման օպերատիվ բաժնի առաջին կարգի խորհրդատու Ս. Յարայանի (այսուհետ՝ Հարկադիր կատարող) կողմից հարուցվել է թիվ 01/08-114/12 կատարողական վարույթը (**հատոր 1-ին, գ.թ. 40**).

3. թիվ ԵԱԲԴ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 13.06.2012 թվականի «Դատական ակտի կատարումը հետաձգելու մասին» որոշման համաձայն՝ Անահիտ Սարգսյանի դիմումը բավարարվել է, և նույն դատարանի 29.09.2011 թվականի վճռի կատարումը հետաձգվել է մինչև 30.10.2012 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 96-97**).

4. 19.06.2012 թվականին Ծառայություն ներկայացրած դիմումով պահանջատեր Հասմիկ Սերգոյանը խնդրել է վերադարձնել թիվ ԵԱԲԴ/1128/02/11 կատարողական թերթը՝ նշելով, որ «անհրաժեշտության դեպքում հոկտեմբերի 30-ից հետո այն կներկայացնի կատարման» (**հատոր 1-ին, գ.թ. 43**).

5. Ծառայության 19.06.2012 թվականի «Կատարողական վարույթն ավարտելու մասին» որոշման համաձայն՝ Հարկադիր կատարողը, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով, 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, որոշել է ավարտել 11.05.2012 թվականին հարուցված թիվ 01/08-114/12 կատարողական վարույթը և թիվ ԵԱԲԴ/1128/02/11 կատարողական թերթը վերադարձնել պահանջատիրոջը (**հատոր 1-ին, գ.թ. 44**).

6. Հասմիկ Սերգոյանը 29.10.2013 թվականին Ծառայությանը հասցեագրված դիմումով 07.05.2012 թվականին տրված թիվ ԵԱԲԴ-1128/02/11 կատարողական թերթը կրկին ներկայացրել է կատարման (**հատոր 1-ին, գ.թ. 46**).

7. Ծառայության 29.10.2013 թվականի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» որոշման համաձայն՝ Հարկադիր կատարողը, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 39-րդ հոդվածներով, որոշել է վերսկսել է 19.06.2012 թվականին ավարտված թիվ 01/08-114/12 կատարողական վարույթը՝ թիվ 01/08-214/13 համարով (**հատոր 1-ին, գ.թ. 47**).

8. թիվ ԵԱԲԴ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 19.12.2013 թվականի «Դատական ակտի կատարումը հետաձգելու մասին» որոշման համաձայն՝ Անահիտ Սարգսյանի դիմումը բավարարվել է, և նույն դատարանի 29.09.2011 թվականի վճռի կատարումը հետաձգվել է մինչև 10.03.2014 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 98-99**).

9. Ծառայության 27.12.2013 թվականի «Կատարողական գործողությունները հետաձգելու մասին» որոշման համաձայն՝ Հարկադիր կատարողը, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն հոդվածի 2-րդ մասով, որոշել է հետաձգել 29.10.2013 թվականին վերսկսված թիվ 01/08-214/13 կատարողական վարույթով կատարողական գործողությունները մինչև 10.03.2014 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 17**).

10. Ծառայության 10.03.2014 թվականի «Կատարողական գործողությունները վերսկսելու մասին» որոշման համաձայն՝ Հարկադիր կատարողը, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 39-րդ հոդվածներով, որոշել է վերսկսել 27.12.2013 թվականի որոշմամբ հետաձգված թիվ 01/08-214/13 կատարողական վարույթով կատարողական գործողությունները (**հատոր 1-ին, գ.թ. 54**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելուց հետո կատարողական թերթը կրկին (սուր) կատարման ներկայացնելու իրավական հետևանքների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. արդյո՞ք պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելուց հետո կատարողական թերթը կրկին կատարման ներկայացվելուց հետո օրենքով նախատեսված պայմանների պահպանման դեպքում կատարողական վարույթը վերսկսվում է, թե՞ հարուցվում է նոր կատարողական վարույթ,

2. պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելու դեպքում կրկին կատարման ներկայացրած կատարողական թերթի հիման վրա կարող է արդյոք նոր կատարողական վարույթ հարուցվել, եթե կատարողական թերթը կրկին կատարման է ներկայացվել դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկամյա ժամկետը լրանալուց հետո, և առկա չէ կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն ապահովում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դատական ակտերի հարկադիր կատարումը:

Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված է ՀՀ Սահմանադրության, օրենքների և իրավական այլ ակտերի պահանջները կատարելու հարկադիր կատարողի պարտականությունը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (...) դատական ակտերի (...) հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին անգամ կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում՝ պահանջատիրոջից կամ նրա ներկայացուցչից (...) կատարողական թերթ ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ (...) եթե լրացել է [կատարողական թերթը] կատարման ներկայացնելու ժամկետը, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը, (...) հարկադիր կատարողը կատարողական թերթը վերադարձնում է պահանջատիրոջը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական վարույթը կասեցնելու և վերսկսելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կասեցված կատարողական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո՝ պահանջատիրոջ դիմումով կամ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե պահանջատերը դիմում է ներկայացրել կատարողական թերթը վերադարձնելու մասին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելու դեպքում կատարողական թերթը վերադարձվում է պահանջատիրոջը, բացառությամբ նույն հոդվածի առաջին մասի 2-րդ և 5-րդ կետերով սահմանված դեպքերի: Կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը (...) վերադարձնելն արգելք չէ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արգելքի վերացման դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան, իսկ հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը: Դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը (յրեն ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնին ընդդեմ Անուշ Բասիրյանի թիվ ՎԴ6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանի մեկ այլ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նշված ընդհանուր ժամկետից բացի՝ որևէ այլ ժամկետի բացակայության պայմաններում կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար նույնպես պետք է հիմք ընդունվի վերոհիշյալ մեկ տարվա ժամկետը, քանի որ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելը, ըստ էության, կատարողական թերթը կատարման ներկայացնելն է՝ առանց որևէ էական առանձնահատկության: Հետևաբար տվյալ դեպքում նույնպես կատարողական թերթը պետք է կատարման ներկայացվի մեկ տարվա ընթացքում: Ուստի նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված, ինչն էլ հիմք է այն անվավեր ճանաչելու համար (յրեն ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի թիվ ՎԴ4/0104/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը կատարողական վարույթն ավարտելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով, իսկ կատարողական վարույթը կասեցնելու հետ կապված իրավահարաբերությունները՝ նույն օրենքի 37-րդ, 38-րդ, 39-րդ հոդվածներով՝ սահմանելով կատարողական վարույթն ավարտելու և կասեցնելու հիմքերը և դրանց իրավական հետևանքները: Վկայակոչված հոդվածներում ամրագրված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ կատարողական վարույթն ավարտելը և կատարողական վարույթը կասեցնելը՝ որպես ընթացակարգային ինստիտուտներ, առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ. կատարողական վարույթը կասեցնելուց հետո կասեցման հիմք հանդիսացած հանգամանքների վերանալու դեպքում կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, իսկ կատարողական վարույթն ավարտելու դեպքում, որպես ընդհանուր

կանոն, այն չի կարող կրկին վերսկսվել: Նշված ընդհանուր կանոնից բացառությունը նախատեսված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությամբ, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. ավարտված կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, եթե այն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Փաստորեն, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը սահմանել է, որ կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել միայն հետևյալ երկու դեպքերում.

1. Եթե կատարողական վարույթը կասեցվել է, և կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները վերացել են,

2. Եթե կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Կատարողական վարույթն ավարտելու իրավական հետևանքները սահմանված են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելու դեպքում, որպես ընդհանուր կանոն, կատարողական թերթը վերադարձվում է պահանջատիրոջը (սրա ժառանգին) և կատարողական վարույթն ավարտելն ու կատարողական թերթը պահանջատիրոջը (սրա ժառանգին) վերադարձնելն արգելք չէ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար: Նշված ընդհանուր կանոնից բացառությունն այն է, որ կատարողական վարույթն ավարտելու դեպքում կատարողական թերթը չի վերադարձվում պահանջատիրոջը, եթե կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի հիմքով:

Այսպիսով, ընդհանուր կանոնի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելու և կատարողական թերթը պահանջատիրոջը (սրա ժառանգին) վերադարձնելու դեպքում կատարողական թերթը կարող է ներկայացվել նոր կատարման. այդ դեպքում ավարտված կատարողական վարույթը չի կարող կրկին վերսկսել, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը կատարողական վարույթը ավարտելուց և կատարողական թերթը պահանջատիրոջը (սրա ժառանգին) վերադարձնելուց հետո այն կրկին (նոր) կատարման ներկայացնելու դեպքում կատարողական վարույթը վերսկսելու վերաբերյալ որևէ իրավակարգավորում չի պարունակում: Կատարողական վարույթն ավարտելուց և կատարողական թերթը պահանջատիրոջը (սրա ժառանգին) վերադարձնելուց հետո այն նոր կատարման ներկայացվելու արդյունքում կարող է հարուցվել նոր կատարողական վարույթ՝ օրենքով նախատեսված որոշակի պայմանների պահպանված լինելու դեպքում:

Օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետները՝ ամբազրելով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կարող է կատարման ներկայացվել տվյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում: Մինևույն ժամանակ օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել է հետևյալ կանոնը. պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթը ավարտելու դեպքում կատարողական թերթը կարող է կրկին կատարման ներկայացվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետում, մասնավորապես՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելը, ըստ էության, կատարողական թերթը կատարման ներկայացնելն է՝ առանց որևէ էական տարբերության: Ուստի կատարողական թերթը կրկին (նոր) կատարման ներկայացնելու դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է կատարել մինևույն գործողություններ:

րը, ինչ որ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու պարագայում: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի հիմքով հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, եթե բացակայում է կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Իսկ կատարողական թերթը պահանջատիրոջը վերադարձնելու՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում կրկին (նոր) կատարման ներկայացված կատարողական թերթի հիման վրա հարկադիր կատարողը պարտավոր է նույն օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցել նոր կատարողական վարույթ: Հետևաբար կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու յուրաքանչյուր դեպքում պահանջատերը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ վերադարձված և կրկին ներկայացված կատարողական թերթի հիման վրա կարող է նոր կատարողական վարույթ հարուցվել միայն այն դեպքում, երբ կատարողական թերթը կրկին ներկայացնելիս պահանջատերը պահպանել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված մեկամյա ժամկետը, որի հաշվարկման սկիզբն է կատարման ենթակա դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը, կամ առկա է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելուց հետո կատարողական թերթը կրկին (նոր) կատարման ներկայացնելու հետևանքով ծագող իրավահարաբերությունների էությունը հանգում է, մասնավորապես, հետևյալին.

1. պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելուց հետո կատարողական թերթը կրկին կատարման ներկայացվելուց հետո օրենքով նախատեսված պայմանների պահպանման դեպքում կատարողական վարույթը ոչ թե վերսկսվում է, այլ կարող է հարուցվել նոր կատարողական վարույթ,

2. պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելու դեպքում կրկին կատարման ներկայացրած կատարողական թերթի հիման վրա կարող է նոր կատարողական վարույթ հարուցվել, եթե կատարողական թերթը կրկին կատարման է ներկայացվել դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում,

3. պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելու դեպքում դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամյա ժամկետի ավարտից հետո կրկին կատարման ներկայացված կատարողական թերթի հիման վրա նոր կատարողական վարույթ չի կարող հարուցվել, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ըստ հայցի Հասմիկ Սերգոյանի ընդդեմ Անահիտ Սարգսյանի՝ բնակարանից վտարելու պահանջի մասին, թիվ ԵԱԲԴ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.09.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է. վճռվել է Անահիտ Սարգսյանին վտարել Հասմիկ Սերգոյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Հ. Էմինի փողոցի թիվ 103/2 հասցեում գտնվող բնակելի տնից: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 27.02.2012 թվականին:

Պահանջատեր Հասմիկ Սերգոյանը թիվ ԵԱԲԴ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության

դատարանի կայացրած վճռի հիման վրա 07.05.2012 թվականին տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման է ներկայացրել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված մեկամյա ժամկետի ընթացքում, և Հարկադիր կատարողը 11.05.2012 թվականին հարուցել է թիվ 01/08–114/12 կատարողական վարույթը:

19.06.2012 թվականին Ծառայություն ներկայացրած դիմումով պահանջատեր Հասմիկ Սերգոյանը խնդրել է վերադարձնել թիվ ԵԱԲԴ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.09.2011 թվականի վճռի հիման վրա տրված կատարողական թերթը: Հիմք ընդունելով պահանջատեր Հասմիկ Սերգոյանի վերոգրյալ դիմումը՝ Հարկադիր կատարողը 19.06.2012 թվականի որոշմամբ ավարտել է 11.05.2012 թվականին հարուցված թիվ 01/08–114/12 կատարողական վարույթը՝ ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով:

Ծառայությանը հասցեագրված դիմումով պահանջատեր Հասմիկ Սերգոյանը թիվ ԵԱԲԴ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճռի հիման վրա 07.05.2012 թվականին տրված կատարողական թերթը կրկին (սոր) կատարման է ներկայացրել 29.10.2013 թվականին: Հիմք ընդունելով պահանջատեր Հասմիկ Սերգոյանի վերոգրյալ դիմումը և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28–րդ և 39–րդ հոդվածներով՝ Հարկադիր կատարողը սույն գործով վիճարկվող՝ 29.10.2013 թվականի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» որոշմամբ վերսկսել է 19.06.2012 թվականին ավարտված թիվ 01/08–114/12 կատարողական վարույթը՝ թիվ 01/08–214/13 համարով:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, 19.12.2013 թվականի որոշմամբ բավարարելով Անահիտ Սարգսյանի դիմումը, թիվ ԵԱԲԴ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.09.2011 թվականի վճռի կատարումը հետաձգել է մինչև 10.03.2014 թվականը:

Հարկադիր կատարողը 27.12.2013 թվականի որոշմամբ 29.10.2013 թվականին վերսկսված թիվ 01/08–214/13 կատարողական վարույթով կատարողական գործողությունները հետաձգել է մինչև 10.03.2014 թվականը, իսկ սույն գործով վիճարկվող՝ Ծառայության 10.03.2014 թվականի «Կատարողական գործողությունները վերսկսելու մասին» որոշմամբ Հարկադիր կատարողը վերսկսել է 27.12.2013 թվականի որոշմամբ հետաձգված թիվ 01/08–214/13 կատարողական վարույթով կատարողական գործողությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով Անահիտ Սարգսյանը վիճարկում է Ծառայության 29.10.2013 թվականի և 10.03.2014 թվականի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» որոշումները:

Դատարանը մերժել է Անահիտ Սարգսյանի հայցը՝ պատճառաբանելով, որ պահանջատեր Հասմիկ Սերգոյանի 29.10.2013 թվականի դիմումի հիման վրա վերսկսելով 19.06.2012 թվականի որոշմամբ ավարտված կատարողական վարույթը՝ Հարկադիր կատարողը դրսևորել է իրավաչափ վարքագիծ, քանի որ թիվ ԵԱԲԴ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.09.2011 թվականի վճռի կատարումը նույն դատարանի որոշմամբ հետաձգվել է մինչև 30.10.2012 թվականը, «(...) որպիսի իրողությունն էլ հիմք է տվել պահանջատեր Հասմիկ Սերգոյանին այդ վճռի հիման վրա տրված կատարողական թերթը վերսկսելու կատարման ներկայացնելու այդ ժամկետից հետո մեկ տարվա ընթացքում մինչև 30.10.2013 թվականը, ինչն էլ սույն դեպքում իրականացվել է (...):»:

Վերաքննիչ դատարանը մերժել է Անահիտ Սարգսյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ հիմնավոր համարելով Դատարանի վերոգրյալ հետևություններն ու գտնելով, որ Դատարանի կողմից ճիշտ են գնահատվել գործում եղած ապացույցները, ճիշտ են պարզվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, և ճիշտ են մեկնաբանվել կիրառված իրավական նորմերը:



Վերը նշված իրավական դիրքորոշումների յույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելու դեպքում կրկին կատարման ներկայացրած կատարողական թերթի հիման վրա կարող է նոր կատարողական վարույթ հարուցվել, եթե կատարողական թերթը կրկին կատարման է ներկայացվել դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում, իսկ այդ ժամկետի ավարտից հետո կրկին կատարման ներկայացված կատարողական թերթի հիման վրա նոր կատարողական վարույթ չի կարող հարուցվել, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Հետևաբար թիվ ԵԱԲԳ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճռով պահանջատեր Հասմիկ Սերգոյանը կարող էր այդ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն ինչպես առաջին անգամ, այնպես էլ կրկին կատարման ներկայացնել կատարման ենթակա դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկամյա ժամանակահատվածում: Մինչդեռ սույն գործի փաստերից հետևում է, որ Հասմիկ Սերգոյանը թիվ ԵԱԲԳ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճռի հիման վրա տրված կատարողական թերթը կրկին (նոր) կատարման է ներկայացրել 29.10.2013 թվականին, այսինքն՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետի ավարտից հետո, և չի ներկայացրել կատարողական թերթ տված դատարանի որոշումը բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Նման պայմաններում հարկադիր կատարողը պարտավոր էր վերադարձնել թիվ ԵԱԲԳ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճռի հիման վրա տրված կատարողական թերթը, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական թերթը վերադարձնում է պահանջատիրոջը, եթե լրացել է այն կատարման ներկայացնելու ժամկետը, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Հարկադիր կատարողը ոչ թե վերադարձրել է թիվ ԵԱԲԳ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.09.2011 թվականի վճռի հիման վրա տրված և 29.10.2013 թվականին կրկին (նոր) կատարման ներկայացված կատարողական թերթը, այլ 29.10.2013 թվականի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» որոշմամբ վերսկսել է 19.06.2012 թվականին ավարտված թիվ 01/08-114/12 կատարողական վարույթը՝ թիվ 01/08-214/13 համարով:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման վարույթը կարգավորող օրենսդրական նորմերի համաձայն՝ պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտվելուց հետո կատարողական թերթը կրկին կատարման ներկայացվելու դեպքում կատարողական վարույթը չի կարող վերսկսվել, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Տվյալ դեպքում թիվ ԵԱԲԳ/1128/02/11 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.09.2011 թվականի վճռի հիման վրա տրված և կատարման ներկայացված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթը չէր կարող վերսկսվել, քանի որ այդ կատարողական թերթի հիման վրա 11.05.2012 թվականին հարուցված թիվ 01/08-114/12 կատարողական վարույթը Հարկադիր կատարողի 19.06.2012 թվականի որոշմամբ ավարտվել էր այն հիմքով, որ պահանջատեր Հասմիկ Սերգոյանը դիմում է ներկայացրել կատարողական թերթը վերադարձնելու մասին:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Ծառայության 29.10.2013 թվականի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» որոշումն ընդունվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով և 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական նորմերի խախտմամբ և ենթակա էր անվավեր ճանաչման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Ծառայության 29.10.2013 թվականի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» որոշումը հիմք է հանդիսացել հետագայում Ծառայության կողմից 10.03.2014 թվականի «Կատարողական գործողությունները վերսկսելու մասին» որոշման կայացման համար, որով Հարկադիր կատարողը վերսկսել է 27.12.2013 թվականի որոշմամբ հետաձգված թիվ 01/08–214/13 կատարողական վարույթով կատարողական գործողությունները: Հետևաբար Ծառայության 10.03.2014 թվականի «Կատարողական գործողությունները վերսկսելու մասին» որոշումը ևս պետք է ճանաչվեր անվավեր, ինչը ևս հաշվի չի առնվել ստորադաս դատարանների կողմից:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150–152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործի մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվոր Անահիտ Սարգսյանը հայցադիմումի համար վճարել է 4.000 ՀՀ դրամ, վերաքննիչ բողոքի համար՝ 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, իսկ վճռաբեկ բողոքի համար սահմանված 40.000 ՀՀ դրամի չավիով պետական տուրքի վճարումը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.09.2015 թվականի որոշմամբ հետաձգվել է, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անահիտ Սարգսյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա են հատուցման Ծառայության կողմից, իսկ վճռաբեկ բողոքի համար սահմանված և հետաձգված պետական տուրքի գումարը ենթակա է վճարման Ծառայության կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.05.2015 թվականի որոշումը և այն փոփոխել. Անահիտ Սարգսյանի հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության 29.10.2013 թվականի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» որոշումը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության 10.03.2014 թվականի «Կատարողական գործողությունները վերսկսելու մասին» որոշումը:

2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից հոգուտ Անահիտ Սարգսյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից հոգուտ Անահիտ Սարգսյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.09.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/3342/05/13  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Վարչական գործ թիվ ՎԳ/3342/05/13  
**2016 թ.**

Ա. Աբովյան  
Ա. Բաբայան  
Ա. Սարգսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 26-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Ջուլիետա Գյունաշյանի վճռաբեկ բողոքը  
ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.06.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ջուլիետա Գյունաշյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), երրորդ անձ Գևորգ Վարդանյանի՝ 30.04.2013 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Ջուլիետա Գյունաշյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 30.04.2013 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 11.12.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 05.06.2015 թվականի որոշմամբ Ջուլիետա Գյունաշյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.12.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ջուլիետա Գյունաշյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ծառայությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը և 41-րդ հոդվածի 3-րդ մասը, չի կիրառել նույն օրենքի 31-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի կողմից «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառումն անհիմն է և չպատճառաբանված, քանի որ սույն գործով չի հիմնավորվել պարտապանի գույքի բացակայության կամ անբավարարության փաստը, որպիսի պարագայում նշված նորմի կիրառումը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Պահանջատեր Գևորգ Վարդանյանը երկու տարի ուշացումով՝ 07.12.2011 թվականին, Ծառայություն է ներկայացրել 10.11.2009 թվականին տրված կատարողական թերթի բնօրինակը, որի հիման վրա էլ հարկադիր կատարողը 09.12.2011 թվականի որոշմամբ վերսկսել է 17.02.2010 թվականին ավարտված կատարողական վարույթը և իրականացրել է հարկադիր էլեկտրոնային աճուրդ այն դեպքում, երբ հարկադիր կատարողը պարտավոր էր կատարողական թերթը վերադարձնել պահանջատիրոջը, ինչը նշանակում է, որ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին 30.04.2013 թվականի որոշումն ընդունվել է օրենքի պահանջների խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.06.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Թիվ ԵԲԴ/1107/02/08 վճիռն օրինական ուժի մեջ է մտել 21.05.2009 թվականին, նշված վճիռի հիման վրա կատարողական թերթը պահանջատիրոջը տրվել է 10.11.2009 թվականին, իսկ կատարողական թերթը պահանջատիրոջ կողմից առաջին անգամ կատարման է ներկայացվել 18.11.2009 թվականին, այսինքն՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո:

Նման պայմաններում դատարաններն իրավաչափորեն են հանգել այն եզրակացության, որ առկա չեն «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու հիմքեր:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ըստ հայցի Գևորգ Վարդանյանի ընդդեմ Ջուլիետա Գյունաշյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ Ջուլիետա Գյունաշյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Գևորգ Վարդանյանի՝ իր կողմից գնված՝ Երևան քաղաքի Տիգրան Մեծի նրբանցքի 13-րդ շենքի թիվ 5 բնակարանի գինը համաչափորեն պակասեցնելու պահանջի մասին թիվ ԵԲԴ/1107/02/08 քաղաքացիական գործով Երևանի քաղաքացիական դատարանը 07.11.2008 թվականի որոշմամբ բավարարել է հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին Գևորգ Վարդանյանի միջնորդությունը և որոշել է 10.800.000 ՀՀ դրամի չափով արգելանք դնել պատասխանող Ջուլիետա Գյունաշյանի գույքի և դրամական միջոցների վրա (**կատարողական վարույթի հատոր 1-ին, գ.թ. 2**).

2) Երևանի քաղաքացիական դատարանի վերը նշված որոշման հիման վրա պահանջատեր Գևորգ Վարդանյանին 07.11.2008 թվականին տրվել է կատարողական թերթ (**հատոր 1-ին, գ.թ. 27, կատարողական վարույթի հատոր 1-ին, գ.թ. 3**).

3) Ծառայության 18.11.2008 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշման համաձայն՝ վերը նշված կատարողական թերթի հիման վրա Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի ավագ հարկադիր կատարող Ա. Պողոսյանի կող-

մից հարուցվել է թիվ 01/01-1898/08 կատարողական վարույթը՝ Ջուլիետա Գյունաշյանի գույքի վրա արգելանք դնելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 28, կատարողական վարույթի հատոր 1-ին, գ.թ. 4**).

4) Ծառայության 10.02.2009 թվականի «Կատարողական վարույթն ավարտելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի ավագ հարկադիր կատարող Ա. Պողոսյանը, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով, 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, նույն հոդվածի 2-րդ մասով, որոշել է ավարտել 18.11.2008 թվականին հարուցված թիվ 01/01-1898/08 կատարողական վարույթը (**հատոր 1-ին, գ.թ. 29, կատարողական վարույթի հատոր 1-ին, գ.թ. 71**).

5) ըստ հայցի Գևորգ Վարդանյանի ընդդեմ Ջուլիետա Գյունաշյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ Ջուլիետա Գյունաշյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Գևորգ Վարդանյանի՝ իր կողմից գնված Երևան քաղաքի Տիգրան Մեծի նրբանցքի 13-րդ շենքի թիվ 5 բնակարանի գինը համաչափորեն պակասեցնելու պահանջի մասին թիվ ԵԲԴ/1107/02/08 քաղաքացիական գործով Երևանի քաղաքացիական դատարանի 20.02.2009 թվականի վճռով Գևորգ Վարդանյանի **հայցը բավարարվել է՝** Ջուլիետա Գյունաշյանից հօգուտ Գևորգ Վարդանյանի բռնագանձվել է 10.800.000 ՀՀ դրամ, իսկ Ջուլիետա Գյունաշյանի հակընդդեմ հայցը մերժվել է (**հատոր 1-ին, գ.թ. 72-75**).

6) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից պահանջատեր Գևորգ Վարդանյանին 10.11.2009 թվականին տրվել է թիվ ԵԿԴ/1107/02/08 կատարողական թերթը, որում առկա գրառման համաձայն՝ թիվ ԵԲԴ/1107/02/08 քաղաքացիական գործով Երևանի քաղաքացիական դատարանի 20.02.2009 թվականի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 21.05.2009 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 31, կատարողական վարույթի հատոր 1-ին, գ.թ. 75**).

7) նշված կատարողական թերթը պահանջատիրոջ կողմից Ծառայությանն է ներկայացվել 18.11.2009 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 30-րդ, կատարողական վարույթի հատոր 1-ին, գ.թ. 74**).

8) Ծառայության 18.11.2009 թվականի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի ավագ հարկադիր կատարող Ա. Պողոսյանը, հիմք ընդունելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության 10.11.2009 թվականի թիվ ԵԿԴ/1107/02/08 կատարողական թերթը և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 67-րդ հոդվածներով և 39-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, որոշել է վերսկսել 10.02.2009 թվականին ավարտված թիվ 01/01-1989/08 կատարողական վարույթը՝ որպես թիվ 01/01-2090/09 կատարողական վարույթ՝ Ջուլիետա Գյունաշյանից գումար բռնագանձելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 32, կատարողական վարույթի հատոր 1-ին, գ.թ. 76**).

9) Ծառայության 17.02.2010 թվականի «Կատարողական վարույթն ավարտելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի ավագ հարկադիր կատարող Ա. Պողոսյանը, նկատի ունենալով, որ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ԵԷԴ/0467/02/09 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 01/01-691/09 կատարողական վարույթով արգելանք է դրվել Երևան քաղաքի Տիգրան Մեծի նրբանցքի 13-րդ շենքի թիվ 5 բնակարանի վրա, և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով, 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և նույն հոդվածի 2-րդ մասով, որոշել է ավարտել 18.11.2008 թվականին հարուցված թիվ 01/01-1898/08 կատարողական վարույթը (**հատոր 1-ին, գ.թ. 35, կատարողական վարույթի հատոր 1-ին, գ.թ. 119**).

10) Գևորգ Վարդանյանը 07.12.2011 թվականին Ծառայություն կատարման է ներկայացրել 10.11.2009 թվականին տրված թիվ ԵԿԴ/1107/02/08 կատարողական թերթը (**կատարողական վարույթի հատոր 2-րդ, գ.թ. 8, 9**).

11) Ծառայության 09.12.2011 թվականի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Տ. Մաճկալյանը, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման

մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 39-րդ և 67-րդ հոդվածներով, որոշել է վերսկսել 17.02.2010 թվականին ավարտված թիվ 01/01-2090/09 կատարողական վարույթը՝ որպես թիվ 01/02-6465/11 կատարողական վարույթ (կատարողական վարույթի հատոր 2-րդ, գ.թ. 11)։

12) Ծառայության 30.04.2013 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Ա. Մակյանը, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ և 43-րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4-րդ հոդվածներով, որոշել է Ջուլիետա Գյունաշյանին պատկանող Երևան քաղաքի Տիգրան Մեծի նրբանցքի 13-րդ շենքի թիվ 5 հասցեի անշարժ գույքը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի՝ աճուրդի սկիզբ նշանակելով 17.05.2013 թվականը (հատոր 1-ին, գ.թ. 48-49, կատարողական վարույթի հատոր 2-րդ, գ.թ. 119-120)։

#### 4. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու ժամկետների, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով ավարտված կատարողական վարույթը վերսկսելու իրավական հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար։ Միևնույն ժամանակ վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 41-րդ հոդվածների սխալ մեկնաբանման ու կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով։

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետային սահմանափակման իրավակարգավորումների առանձնահատկություններին, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով ավարտված կատարողական վարույթը վերսկսելու իրավական հնարավորության հարցին։*

Մինչև 02.05.2011 թվականը գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում**՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը։

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացու գույքի բացակայության կամ անբավարարության հետևանքով պահանջատերերի չբավարարված պահանջներով կատարողական թերթերը պահպանում են իրենց ուժը մինչև դրանց կատարումը։

Մինչև 02.05.2011 թվականը գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ եթե ստացված կատարողական թերթը չի համապատասխանում նույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված պահանջներին, կամ **եթե լրացել է այն կատարման ներկայացնելու ժամկետը**, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը, հարկադիր կատարողը կատարողական թերթը վերադարձնում է պահանջատիրոջը։

Մինչև 02.05.2011 թվականը գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համա-

ձայն՝ կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելն արգելք չէ **կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար**:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված իրավական նորմերի կարգավորումներին, արձանագրել է, որ **կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է**, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նշված ընդհանուր ժամկետից բացի որևէ այլ ժամկետի բացակայության պայմաններում **կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար** նույնպես պետք է հիմք ընդունվի վերոհիշյալ մեկ տարվա ժամկետը, քանի որ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելը, ըստ էության, կատարողական թերթը կատարման ներկայացնելն է՝ առանց որևէ էական առանձնահատկության: Հետևաբար տվյալ դեպքում նույնպես կատարողական թերթը պետք է կատարման ներկայացվի մեկ տարվա ընթացքում: Ուստի նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված (յրեն ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի թիվ ՎԴ4/0104/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24.03.2011 թվականի թիվ ՀՕ-71-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 02.05.2011 թվականին), ի թիվս այլնի, փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 31-րդ և 41-րդ հոդվածներում:

Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում 1-ին մասը «Կատարողական թերթը» բառակապակցությունից հետո լրացվել է «**առաջին անգամ**» արտահայտությամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով. «3. Սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով պահանջատիրոջը վերադարձված կատարողական թերթը չի կարող կրկին կատարման ներկայացվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածում ևս կատարվել են փոփոխություններ, ինչի արդյունքում նշված հոդվածի 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Կատարողական վարույթն ավարտելու դեպքում կատարողական թերթը վերադարձվում է պահանջատիրոջը, բացառությամբ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ և 5-րդ կետերով սահմանված դեպքերի: Եթե կատարողական վարույթն ավարտվում է պահանջատեր քաղաքացու մահվան պատճառով, ապա կատարողական թերթը վերադարձվում է մահացածի ժառանգներին՝ նրանց գրավոր պահանջի դեպքում:

Կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելն արգելք չէ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արգելքի վերացման դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին»:

Վերը նշված օրենսդրական փոփոխություններից առաջ և դրանցից հետո գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 41-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Մինչև 02.05.2011 թվականը գործող կարգավորումներով կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված է եղել ընդհանուր ժամկետ՝ մեկ տարի, որի



հաշվարկը սկսվում էր դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Ընդ որում, կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու կամ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար որևէ տարբերակում նշված ժամանակահատվածում գործող իրավական կարգավորումներով նախատեսված չի եղել, որպիսի պայմաններում կատարողական թերթը կատարման ներկայացնելու մինչև մեկ տարվա ժամկետային սահմանափակումը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումների համաձայն, տարածվում էր ինչպես կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու, այնպես էլ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելուց հետո նոր կատարման ներկայացնելու բոլոր դեպքերի վրա:

Մինչդեռ ի տարբերություն մինչև 02.05.2011 թվականը գործող իրավակարգավորումների՝ 02.05.2011 թվականից հետո գործող իրավակարգավորումներով օրենսդիրը որդեգրել է այն մոտեցումը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեկ տարվա ժամկետային սահմանափակումը նախատեսված է միայն հետևյալ դեպքերի համար.

- երբ կատարողական թերթն առաջին անգամ է ներկայացվում կատարման,
- երբ կատարողական թերթը նոր կատարման է ներկայացվում կատարողական թերթը վերադարձնելու մասին պահանջատիրոջ կողմից դիմում ներկայացնելու հիմքով կատարողական վարույթն ավարտելուց և կատարողական թերթը վերադարձնելուց հետո:

Այլ կերպ ասած՝ ի տարբերություն մինչև 02.05.2011 թվականը գործող կարգավորումների, երբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետային սահմանափակումն ընդհանուր էր և տարածվում էր կատարողական թերթը կատարման ներկայացնելու բոլոր դեպքերի վրա, 02.05.2011 թվականից հետո գործող իրավակարգավորումներով նշված սահմանափակումը կրում է մասնավոր բնույթ և տարածվում է բացառապես օրենքով նախատեսված՝ վերը նշված դեպքերի վրա:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 02.05.2011 թվականից հետո գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար ընդհանուր ժամկետներ այլևս սահմանված չեն, իսկ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված մեկամյա ժամկետային սահմանափակումը 02.05.2011 թվականից հետո կիրառելի է բացառապես վերը նշված դեպքերի նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով կատարողական թերթը կատարման ներկայացնելու հարաբերությունների նկատմամբ կիրառելի օրենսդրության խնդրին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

- այն դեպքերում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից հաշվարկվող մեկ տարվա ժամկետը լրացել է մինչև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24.03.2011 թվականի թիվ ՀՕ-71-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, այն է՝ մինչև 02.05.2011 թվականը, ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բոլոր դեպքերի համար կիրառման ենթակա է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը՝ մինչև 02.05.2011 թվականը գործող խմբագրությամբ, և ըստ այդմ, ցանկացած դեպքում դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից հաշվարկված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, եթե առկա չէ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը:
- այն դեպքերում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից հաշվարկվող մեկ տարվա ժամկետը լրացել կամ լրանում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24.03.2011 թվականի թիվ ՀՕ-71-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, ապա կիրառման ենթակա է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը՝ 02.05.2011 թվականից գոր-

ծող խմբագրությամբ, և ըստ այդմ, կատարողական թերթը կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետային սահմանափակումը տարածվում է միայն այն դեպքերի վրա, երբ կատարողական թերթը կատարման է ներկայացվում առաջին անգամ, կամ նոր կատարման է ներկայացվում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով պահանջատիրոջը վերադարձված կատարողական թերթը: Պահանջատիրոջը վերադարձված կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու մյուս դեպքերի վրա օրենքով սահմանված մեկամյա ժամկետային սահմանափակումը չի տարածվում:

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԲԴ/1107/02/08 քաղաքացիական գործով Երևանի քաղաքացիական դատարանը 07.11.2008 թվականին որոշում է կայացրել «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին», որի հիման վրա նույն օրը պահանջատեր Գևորգ Վարդանյանին տրվել է կատարողական թերթ:

Վերը նշված կատարողական թերթի հիման վրա հայցի ապահովման միջոցի կիրառումն ապահովելու նպատակով Ծառայության կողմից 18.11.2008 թվականին հարուցվել է թիվ 01/01-1898/08 կատարողական վարույթը:

Հայցի ապահովմանն ուղղված կատարողական գործողություններն ավարտելով՝ Ծառայությունը 10.02.2009 թվականի որոշմամբ ավարտել է 18.11.2008 թվականին հարուցված թիվ 01/01-1898/08 կատարողական վարույթը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով:

Թիվ ԵԲԴ/1107/02/08 քաղաքացիական գործով 20.02.2009 թվականին կայացված վճռի հիման վրա 10.11.2009 թվականին Գևորգ Վարդանյանին տրվել է կատարողական թերթ, համաձայն որի՝ նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 21.05.2009 թվականին:

Նշված կատարողական թերթը Գևորգ Վարդանյանի կողմից կատարման է ներկայացվել 18.11.2009 թվականին և նույն օրվա որոշմամբ Ծառայությունը վերսկսել է 10.02.2009 թվականին ավարտված թիվ 01/01-1989/08 կատարողական վարույթը որպես թիվ 01/01-2090/09 կատարողական վարույթ:

Ծառայությունը, 17.02.2010 թվականի որոշմամբ, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, կրկին ավարտել է 18.11.2008 թվականին հարուցված թիվ 01/01-1898/08 կատարողական վարույթն այն դեպքում, երբ հայցի ապահովման միջոցների կիրառմանն ուղղված կատարողական վարույթն արդեն մեկ անգամ նույն հիմքով ավարտվել էր:

Գևորգ Վարդանյանը 07.12.2011 թվականին Ծառայությանն ուղղված դիմումով նոր կատարման է ներկայացրել թիվ ԵԲԴ/1107/02/08 քաղաքացիական գործով 10.11.2009 թվականին տրված կատարողական թերթը:

Ծառայության 09.12.2011 թվականի որոշմամբ վերստին վերսկսվել է 17.02.2010 թվականին ավարտված կատարողական վարույթը, որի շրջանակներում ընդունվել է սույն գործով վիճարկվող՝ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» 30.04.2013 թվականի որոշումը:

Դատարանը, Ջուլիետա Գյունաշյանի հայցը մերժելով, պատճառաբանել է, որ «...Կատարողական թերթը ՀՀ ԱԵ ԴԱՀԿ ծառայություն է մուտքագրվել 18.11.2009 թվականին, իսկ վճիռն ըստ կատարողական թերթում առկա գրառումների՝ օրինական ուժի մեջ է մտած եղել 2009 թվականի մայիսի 21-ին:

Կատարողական թերթի հիման վրա ՀՀ ԱԵ ԴԱՀԿ Ծառայության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն բաժնում վերսկսվել է նույն գործի շրջանակներում նախկինում հայցի ապահովման հիմքով ավարտված կատարողական վարույթը (...):

(...) թիվ ԵԿԴ/1107/02/08 կատարողական թերթը կատարման է ներկայացվել «Կատարական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված ժամկետում, հերևաբար ՀՀ վարչական դատարանը հիմնավոր չի համարում Հայցվորի այն դատողությունները, որ կատարողական թերթը կատարման է ներկայացվել ժամկետի խախտմամբ»:

Վերաքննիչ դատարանը, Ջուլիետա Գյունաշյանի վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ «...07.12.2011 թվականին պահանջատեր Գևորգ Վարդանյանը Ծառայու-

թյուն է ներկայացրել 10.11.2009 թվականին իրեն ցրված կարարողական թերթի բնօրինակը, որի հիման վրա հարկադիր կարարողի 09.12.2011 թվականի որոշմամբ վերսկսվել է 17.02.2010 թվականին ավարտված կարարողական վարույթը, որը և կարարողական վարույթի հեղափոխ ընթացքի հիմք է հանդիսանում: Ընդ որում, «Դատական ակտերի հարկադիր կարարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի ու, մասնավորապես, դրա 2-րդ մասի ուժով, այդ կարարողական թերթն իր ուժը պահպանում է մինչև դրա կարարումը, իսկ նույն օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարարողական վարույթն ավարտելը և կարարողական թերթը պահանջարկորջը վերադարձնելն արգելք չէ կարարողական թերթը նոր կարարման ներկայացնելու համար»:

Մինչև և վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով կատարողական վարույթն ավարտելու և վերսկսելու իրավակարգավորումներին, նշել է, որ օրենսդիրը կատարողական վարույթն ավարտելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով, իսկ կատարողական վարույթը կասեցնելու հետ կապված իրավահարաբերությունները՝ նույն օրենքի 37-րդ, 38-րդ, 39-րդ հոդվածներով՝ սահմանելով կատարողական վարույթն ավարտելու և կասեցնելու հիմքերը և դրանց իրավական հետևանքները: Վկայակոչված հոդվածներում ամրագրված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ կատարողական վարույթն ավարտելը և կատարողական վարույթը կասեցնելը՝ որպես ընթացակարգային ինստիտուտներ, առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ. կատարողական վարույթը կասեցնելուց հետո կասեցման հիմք հանդիսացած հանգամանքների վերանայու դեպքում կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, իսկ կատարողական վարույթն ավարտելու դեպքում, որպես ընդհանուր կանոն, այն չի կարող կրկին վերսկսվել: Նշված ընդհանուր կանոնից բացառությունը նախատեսված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությամբ, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. ավարտված կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, եթե այն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելու և կատարողական թերթը պահանջատիրոջը (սրա ժառանգին) վերադարձնելու դեպքում կատարողական թերթը կարող է ներկայացվել նոր կատարման. **այդ դեպքում ավարտված կատարողական վարույթը չի կարող կրկին վերսկսվել**, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը կատարողական վարույթը ավարտելուց և կատարողական թերթը պահանջատիրոջը (սրա ժառանգին) վերադարձնելուց հետո այն կրկին (նոր) կատարման ներկայացնելու դեպքում կատարողական վարույթը վերսկսելու վերաբերյալ որևէ իրավակարգավորում չի պարունակում: Կատարողական վարույթն ավարտելուց և կատարողական թերթը պահանջատիրոջը (սրա ժառանգին) վերադարձնելուց հետո այն նոր կատարման ներկայացվելու արդյունքում կարող է հարուցվել նոր կատարողական վարույթ՝ օրենքով նախատեսված որոշակի պայմանների պահպանված լինելու դեպքում (տես Անահիտ Սարգսյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ասպակովող ծառայության թիվ ՎԳ/0794/05/14 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 07.12.2011 թվականին Գևորգ Վարդանյանի կողմից կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու պայմաններում 17.10.2010 թվականին ավարտված կատարողական վարույթը ենթակա չէր

վերսկսման, քանի որ այն չէր ավարտվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ 17.10.2010 թվականին ավարտված կատարողական վարույթը վերսկսման ենթակա չլինելու պայմաններում դատարանի վճռի հիման վրա նոր կատարման ներկայացված կատարողական թերթի հիման վրա կատարողական վարույթ հարուցելու հարցը ենթակա էր քննարկման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում ամրագրված իրավակարգավորումների, այդ թվում՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետային սահմանափակումների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների հաշվառմամբ:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԲԴ/1107/02/08 քաղաքացիական գործով Երևանի քաղաքացիական դատարանի 20.02.2009 թվականի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 21.05.2009 թվականին, ինչը նշանակում է, որ նշված վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից հաշվարկվող մեկ տարվա ժամկետը լրացել է 24.05.2010 թվականին, այսինքն՝ մինչև ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24.03.2011 թվականի թիվ ՀՕ-71-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, այն է՝ մինչև 02.05.2011 թվականը, հետևաբար տվյալ դեպքում կիրառման ենթակա է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը՝ մինչև 02.05.2011 թվականը գործող խմբագրությամբ, որպիսի պայմաններում Գևորգ Վարդանյանի կողմից 07.12.2011 թվականին նոր կատարման ներկայացրած կատարողական թերթը Ծառայության կողմից ենթակա էր վերադարձման վերջինիս, քանի որ այն նոր կատարման էր ներկայացվել դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամյա ժամկետը լրանալուց հետո և բացակայել է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԲԴ/1107/02/08 քաղաքացիական գործով Երևանի քաղաքացիական դատարանի 20.02.2009 թվականի վճիռը 21.05.2009 թվականին օրինական ուժի մեջ մտնելու պայմաններում Գևորգ Վարդանյանի կողմից 07.12.2011 թվականին կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու հիմքով Ծառայությունն իրավասու չէր ոչ վերսկսելու 17.10.2010 թվականին ավարտված կատարողական վարույթը, ոչ հարուցելու նոր կատարողական վարույթ: Հետևաբար կատարողական վարույթը վերսկսելու, ինչպես նաև նոր կատարողական վարույթ հարուցելու՝ Ծառայության իրավասության բացակայության պայմաններում, և որպես դրա հետևանք՝ կատարողական վարույթի բացակայության պայմաններում Ծառայությունը չէր կարող նաև ընդունել սույն գործով վիճարկվող «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» 30.04.2013 թվականի որոշումը, ինչն անտեսվել է ստորագրած դատարանների կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոք բերած անձի փաստարկներն առ այն, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել մինչև 02.05.2011 թվականը գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 41-րդ հոդվածները, և գտնում է, որ նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառումը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա հարուցված կատարողական վարույթը վճռի հիման վրա տրված կատարողական թերթի հիման վրա վերսկսելու իրավական հնարավորությանը:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն ապահովում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դատական ակտերի հարկադիր կատարումը:

Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի հարկադիր կատարման ապահովելու պայմանները և կարգը սահմանված են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով, որի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական թերթը, ի թիվս այլնի, տրվում է նաև դատարանի վճիռների, դատավճիռների, որոշումների և դատարանի արձակած վճարման կարգադրությունների հիման վրա:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հայցի ապահովման վերաբերյալ տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթն ուղղված է հայցի ապահովման միջոցներ կիրառելուն, որոնց ի կատար ածումը սպառում է կատարողական թերթով սահմանված պահանջը, հետևաբար կատարողական վարույթի խնդիրը իրականացված է, որպիսի պարագայում այն չի կարող նորոգվել վճռի կատարման համար: Հետևաբար հայցի ապահովման միջոց կիրառելուն ուղղված կատարողական վարույթի շրջանակներում չեն կարող իրականացվել գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարմանն ուղղված գործողություններ:

Ինչ վերաբերում է գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարմանը, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կատարողական թերթ տալու առանձին հիմք է, և հաշվի առնելով, որ կատարողական վարույթի հարուցման հիմքը կատարողական թերթն է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տրված կատարողական թերթի հիման վրա պետք է հարուցվի նոր կատարողական վարույթ:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ԵԲԴ/1107/02/08 քաղաքացիական գործով 20.02.2009 թվականին կայացված վճռի հիման վրա տրված կատարողական թերթի հիմքով Ծառայության կողմից ոչ թե հարուցվել է նոր կատարողական վարույթ, այլ վերսկսվել է դեռևս 10.02.2009 թվականին ավարտված թիվ 01/01-1989/08 կատարողական վարույթը, որն ուղղված է եղել հայցի ապահովման միջոց կիրառելուն, ինչը ստորադաս դատարանների կողմից ևս անտեսվել է:

Վերը նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ֆիզիկական անձինք՝ հարկադիր կատարողների գործողությունները գանգատարկելու վերաբերյալ դիմումներով:

Հաշվի առնելով, որ հայցվորն ազատված է պետական տուրքի վճարումից, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցադիմումի, վերաքննիչ բողոքի և վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի վճարման պարտականությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի ուժով պետք է կրի Ծառայությունը, հետևաբար վերջինից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայց ներկայացնելու, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.06.2015 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող արդարադատության կապիտան Ա. Մակյանի 30.04.2013 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը:

2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումար, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ6/0506/05/13  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ք. Մկոյան  
Ա. Առաքելյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ6/0506/05/13**  
**2016 թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Ֆրունզիկ և Մարինե Փարեմուզյանների ներկա-  
յացուցիչ Ալեքսանդր Ծատիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի  
10.07.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ Ֆրունզիկ և Մարինե Փարեմուզյանների հայցի ընդ-  
դեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշ-  
խատակազմի Լոռու մարզային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր), երրորդ անձ  
Վերգինե Բեջանյանի՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը սեփականու-  
թյան իրավունքի հիմքի հետ համապատասխանեցնելուն պարտավորեցնելու, Կադաստրի  
ղեկավար Ռ. Մանուկյանի 01.06.2013 թվականի թիվ ՌՄ-2/79 և 30.07.2013 թվականի թիվ  
ՌՄ-2/93 գրություններն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐՁԵՑ**

**1. Գործի դատարանական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Ֆրունզիկ և Մարինե Փարեմուզյանները պահանջել են պարտա-  
վորեցնել Կադաստրին սեփականության իրավունքի պետական գրանցումը համապատաս-  
խանեցնել սեփականության իրավունքի հիմքի հետ, անվավեր ճանաչել Կադաստրի ղեկա-  
վար Ռ. Մանուկյանի 01.06.2013 թվականի թիվ ՌՄ-2/79 և 30.07.2013 թվականի թիվ ՌՄ-2/93  
գրությունները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ալավերդյան) (այսուհետ՝ Դատարան)  
12.02.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.07.2015  
թվականի որոշմամբ Ֆրունզիկ և Մարինե Փարեմուզյանների ներկայացուցչի վերաքննիչ  
բողոքը մերժվել է, և Դատարանի 12.02.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ֆրունզիկ և Մարինե Փարեմուզյան-  
ների ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վերգինե Բեջանյանի ներկայացուցիչը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Գույքի նկատմամբ իրավունքների պեղտակյան գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 27-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պեղտակյան գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ ոչ տեխնիկական սխալի ուղղումը կարող է կատարվել ոչ միայն շահագրգիռ անձանց համաձայնության առկայության, այլ նաև այդպիսի համաձայնության բացակայության դեպքում՝ դատական կարգով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վիճելի սեփականության իրավունքի պեղտակյան գրանցումը չի համապատասխանում այդ գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերին: Այսպես, խնդրո առարկա սեփականության իրավունքի պեղտակյան գրանցումը կատարվել է միայն Հնայակ Փարենուզյանի անվամբ, մինչդեռ սեփականության իրավունքի գրանցման հիմքերի համաձայն՝ տվյալ անշարժ գույքի համասեփակա-նատերեր են հանդիսացել նաև Ֆրունզիկ և Մարինե Փարենուզյանները և վերջիններիս ծնողները: Հետևաբար Վերաքննիչ դատարանը, խախտելով Ֆրունզիկ և Մարինե Փարենուզյանների սեփականության իրավունքը, անտեսել է, որ Դատարանը պետք է վճիռ կայացներ սեփականության իրավունքի պեղտակյան գրանցումը դրա հիմքի հետ համապատասխանեցնելու Կադաստրին պարտավորեցնելու մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.07.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն է հանգել այն հետևության, որ Ֆրունզիկ և Մարինե Փարենուզյանների հայցը ենթակա էր մերժման: Այսպես, սույն գործով վերջիններիս կողմից պահանջվում է ուղղել 06-037-017-000027 կադաստրային համարի գույքի պեղտակյան գրանցման ժամանակ թույլ տրված ոչ տեխնիկական բնույթի սխալը, որը կարող է ուղղվել միայն շահագրգիռ անձանց գրավոր համաձայնության առկայության դեպքում, ինչն էլ տվյալ դեպքում բացակայում է: Հետևաբար սույն գործով ստորադաս դատարանները կայացրել են օրինական և հիմնավորված դատական ակտեր, որոնք ենթակա չեն բեկանման:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավարի կողմից տրված՝ համայնքի տնտեսությունների 2-րդ գրքի թիվ 106 գրանցումից արված քաղվածքի համաձայն՝ Կառլեն Փարենուզյանի անվամբ գրանցված է 0,3հա մակերեսով հողամաս, որի վրա առկա է բնակելի տուն օժանդակ շինություններով՝ կառուցված 1960 թվականին, ընտանիքի կազմում նշված են Հռիփսիկ Դավթյանը, Հնայակ Փարենուզյանը, Մարինե Փարենուզյանը և Ֆրունզիկ Փարենուզյանը (**հատոր 1-ին, գ.թ. 16**).

2. Համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1788145 վկայականի՝ Լոռու մարզի Թեղուտ համայնքում գտնվող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասի և 262,7քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավարի կողմից տրված համայնքի տնտեսությունների 2-րդ գրքի թիվ 106 գրանցումից արված քաղվածքի հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պեղտակյան գրանցման միասնական թիվ 06-037-4-3 մատյանի 010 համարի տակ 04.04.2003



թվականին գրանցվել է Հնայակ Փարենուզյանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 10-11**).

3. Կադաստրի ղեկավար Ռ. Մանուկյանի 01.06.2013 թվականի թիվ ՌՄ-2/79 գրության համաձայն՝ Ֆրունզիկ Փարենուզյանի կողմից 31.05.2013 թվականին ներկայացված դիմումի կապակցությամբ վերջինիս հայտնվել է, որ Թեղուտ համայնքում գտնվող թիվ 06-037-0017-0027 ծածկագրով բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ 04.04.2003 թվականին կատարված թիվ 1788145 սեփականության իրավունքի գրանցման վկայականի՝ «սեփականատիրոջ անունը, (անվանումը)» բաժնում սեփականատերերի ավելացում կարող է կատարվել միայն շահագրգիռ անձի (գրանցված սուբյեկտի) գրավոր համաձայնության ատկայության դեպքում, քանի որ տվյալ դեպքում ուղղումը հանգեցնում է գույքի պատկանելիության փոփոխության (**հատոր 1-ին, գ.թ. 23**).

4. Կադաստրի ղեկավար Ռ. Մանուկյանի 30.07.2013 թվականի թիվ ՌՄ-2/93 գրության համաձայն՝ Կադաստրը, ի պատասխան Ֆրունզիկ և Մարինե Փարենուզյանների դիմումի, հայտնել է, որ իրենց արդեն իսկ նախկին գրությամբ տեղեկացվել էր, որ անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1788145 վկայականում գույքի պատկանելիության փոփոխություն կատարելու համար անհրաժեշտ է ներկայացնել գրանցված սուբյեկտի կամ վերջինիս մահվան դեպքում նրա իրավահաջորդության վերաբերյալ համապատասխան փաստաթղթով հանդես եկող անձի գրավոր համաձայնությունը և համայնքի ղեկավարի կողմից տրամադրված պարզաբանում համասեփականատերերի վերաբերյալ, ինչպես նաև ճշտված համասեփականատերերի անվամբ քաղվածք (**հատոր 1-ին, գ.թ. 28**).

5. Թիվ ԱԲ021033 մահվան վկայականի համաձայն՝ Հնայակ Փարենուզյանը մահացել է 12.03.2010 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 20**).

6. «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 06.10.2010 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Հնայակ Փարենուզյանի մահից հետո նրա գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում տղան՝ Ամատունի Բեջանյանը, իսկ ժառանգական գույքը, որի համար տրվել է վկայագիրը, բաղկացած է հանգուցյալի անվամբ եղած բնակելի տնից և տնամերձ հողամասից, որոնք գտնվում են Լոռու մարզի Թեղուտ գյուղում (**հատոր 1-ին, գ.թ. 46**).

7. «Նոյեմբերյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 20.01.2014 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Ամատունի Բեջանյանի (մահացած՝ 05.07.2013 թվականին) գույքի նկատմամբ համապատասխան բաժնով ժառանգ է համարվում մայրը՝ Վերգինե Բեջանյանը, իսկ ժառանգական գույքը, որի համար տրվել է վկայագիրը, բաղկացած է բնակելի տնից և տնամերձ հողամասից, որը գտնվում է՝ ՀՀ Լոռու մարզ, գյուղ Թեղուտ 3-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 5 հասցեում (**հատոր 1-ին, գ.թ. 45**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի ատկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթում թույլ տրված սխալների ուղղման ընթացակարգի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ժամանակ թույլ տրված ոչ տեխնիկական բնույթի սխալն ուղղելու համար անհրաժեշտ է արդյոք գրանցված իրավունքի սուբյեկտի (շահագրգիռ անձանց) գրավոր համաձայնությունն այն պայմաններում, երբ ոչ տեխնիկական բնույթի սխալն առաջա-

ցել է պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանվում են գույքի նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների պետական գրանցման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, գրանցում իրականացնող մարմնի իրավունքների և պարտականությունների իրավական հիմքերը, գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթի առանձնահատկությունները:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալների ուղղումը կատարվում է գրանցված իրավունքների սուբյեկտների դիմումների հիման վրա կամ գրանցող մարմնի պաշտոնատար անձի նախաձեռնությամբ՝ անհրաժեշտ փաստաթղթերի անկայության դեպքում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական գրանցման ժամանակ թույլ տրված այն սխալները, որոնց ուղղումը չի փոփոխում գույքի պատկանելությունը, դրա նկատմամբ իրավունքների բնույթը, ծավալը կամ չի հանգեցնում գույքի մակերեսի չափերի կամ կադաստրային արժեքի փոփոխության (այսուհետ՝ տեխնիկական բնույթի սխալներ), կարող են ուղղվել գրանցող մարմնի պաշտոնատար անձի նախաձեռնությամբ՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով գրանցված իրավունքների սուբյեկտներին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական գրանցման ժամանակ թույլ տրված այն սխալները, որոնց ուղղումը հանգեցնում է գույքի պատկանելության, դրա նկատմամբ իրավունքների բնույթի, ծավալի, գույքի մակերեսի չափերի կամ կադաստրային արժեքի փոփոխության (այսուհետ՝ ոչ տեխնիկական բնույթի սխալներ), կարող են ուղղվել միայն շահագրգիռ անձանց գրավոր համաձայնության անկայության դեպքում, բացառությամբ նույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:

Պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով առաջացած ոչ տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով՝ նաև առանց գրանցված իրավունքների սուբյեկտի համաձայնության՝ այդ մասին գրավոր իրազեկելով գրանցված իրավունքների սուբյեկտներին: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ոչ տեխնիկական բնույթի սխալները շահագրգիռ անձի դիմումով կարող են ուղղվել առանց գրանցված իրավունքի սուբյեկտի համաձայնության՝ դատական ակտի հիման վրա:

Վերոգրյալ իրավանքների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը չի բացառել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթի ընթացքում սխալներ թույլ տալու հնարավորությունը՝ սահմանելով այդ սխալների ուղղման (շտկման, վերացման) կարգը: Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթում թույլ տրված սխալներն օրենսդիրը դասակարգել է երկու խմբի՝ **1) տեխնիկական բնույթի և 2) ոչ տեխնիկական բնույթի:**

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի իմաստով **ոչ տեխնիկական բնույթի** են համարվում պետական գրանցման ժամանակ թույլ տրված այն սխալները, որոնց ուղղումը հանգեցնում է՝

- գույքի պատկանելության փոփոխության,
- գույքի նկատմամբ իրավունքների բնույթի փոփոխության,
- գույքի նկատմամբ իրավունքների ծավալի փոփոխության,
- գույքի մակերեսի չափերի փոփոխության,
- գույքի կադաստրային արժեքի փոփոխության:

Վկայակոչված օրենքի համաձայն՝ **տեխնիկական բնույթի** են համարվում պետական գրանցման ժամանակ թույլ տրված այն սխալները, որոնց ուղղումը չի փոփոխում գույքի պատկանելությունը, գույքի նկատմամբ իրավունքների բնույթը, ծավալը, չի հանգեցնում գույքի մակերեսի չափերի կամ գույքի կադաստրային արժեքի փոփոխության:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթում թույլ տրվող սխալների նման դասակարգման գործնական նշանակությունն այն է, որ տեխնիկական և ոչ տեխնիկական բնույթի սխալների ուղղումը կատարվում է օրենքով սահմանված տարբեր ընթացակարգերով: Այսպես, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթում թույլ տրվող տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել գրանցող մարմնի պաշտոնատար անձի նախաձեռնությամբ՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով գրանցված իրավունքների սուբյեկտներին, իսկ ոչ տեխնիկական բնույթի սխալները, ընդհանուր կանոնի համաձայն, կարող են ուղղվել միայն շահագրգիռ անձանց գրավոր համաձայնության առկայության դեպքում: Փաստորեն, ի տարբերություն տեխնիկական բնույթի սխալների, որոնց ուղղման համար որևէ շահագրգիռ անձի համաձայնություն չի պահանջվում, ոչ տեխնիկական բնույթի սխալների ուղղման համար, որպես կանոն, անհրաժեշտ է շահագրգիռ անձանց գրավոր համաձայնության առկայություն: Ընդ որում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ գրանցված իրավունքի սուբյեկտի համաձայնության բացակայության դեպքում ոչ տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել դատական կարգով:

Ոչ տեխնիկական բնույթի սխալների ուղղման ընթացակարգին վերաբերող վերոնշյալ ընդհանուր կանոնից օրենսդիրը կատարել է մեկ բացառություն, որը նախատեսված է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ: Նշված իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ ոչ տեխնիկական բնույթի սխալները կարող են ուղղվել նաև առանց գրանցված իրավունքի սուբյեկտի (շահագրգիռ անձանց) համաձայնության առկայության, եթե այդ ոչ տեխնիկական բնույթի սխալներն առաջացել են պետական գրանցման համար հինք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով: Այդ դեպքում ոչ տեխնիկական բնույթի սխալների ուղղումը կատարվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ տեխնիկական բնույթի սխալների ուղղման ընթացակարգով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով գրանցված իրավունքի սուբյեկտներին: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը նախատեսել է գրանցման ժամանակ թույլ տրված ոչ տեխնիկական բնույթի սխալներն ուղղելու հնարավորություն նաև առանց գրանցված իրավունքի սուբյեկտի համաձայնության առկայության, եթե այդ ոչ տեխնիկական բնույթի սխալներն առաջացել են պետական գրանցման համար հինք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, եթե անձը **ոչ տեխնիկական բնույթի սխալներն** ուղղելու պահանջի հիմքում դնում է այն փաստը, որ այդ սխալներն առաջացել են պետական գրանցման համար հինք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով, ապա Կադաստրի միակ պարտականությունը այդ հիմքի առկայությունը ստուգելն է, այն է՝ իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում առկա տվյալների հետ համադրելն է առանց կողմի վրա լրացուցիչ պարտականություն դնելու, այն է՝ գրանցված իրավունքի սուբյեկտների համաձայնությունը ներկայացնելու:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածում սահմանել է գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման ընթացքում թույլ տրված սխալների ուղղման հետևյալ կանոնները.

1) **տեխնիկական բնույթի** սխալները կարող են ուղղվել առանց գրանցված իրավունքի սուբյեկտի կամ որևէ շահագրգիռ անձի համաձայնության առկայության՝ այդ մասին գրավոր իրազեկելով գրանցված իրավունքի սուբյեկտներին,

2) որպես ընդհանուր կանոն՝ **ոչ տեխնիկական բնույթի** սխալները կարող են ուղղվել միայն գրանցված իրավունքի սուբյեկտի կամ այլ շահագրգիռ անձանց գրավոր համաձայնության առկայության դեպքում, իսկ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում **ոչ տեխնիկական բնույթի** սխալները կարող են ուղղվել դատական ակտի հիման վրա,

3) որպես բացառություն՝ **ոչ տեխնիկական բնույթի** սխալները կարող են ուղղվել առանց գրանցված իրավունքի սուբյեկտի կամ որևէ շահագրգիռ անձի համաձայնության առկայության՝ այդ մասին գրավոր իրազեկելով գրանցված իրավունքի սուբյեկտներին, եթե այդ **ոչ տեխնիկական բնույթի** սխալներն առաջացել են պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ բոլոր դեպքերում գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթում թույլ տրված սխալների ուղղում կատարելու հիմքն այդ սխալներն ուղղելու (շտկելու, վերացնելու) համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերի առկայությունն է, իսկ սխալների ուղղումը կարող է նախաձեռնվել ինչպես գրանցված իրավունքների սուբյեկտի, այնպես էլ գրանցող մարմնի պաշտոնատար անձի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման ընթացքում թույլ տրված սխալների ուղղման պահանջ ներկայացված լինելու դեպքում, Դատարանը պարտավոր է նախ անդրադարձնել թույլ տրված սխալների բնույթին, ապա «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված՝ թույլ տրված սխալների ուղղման կանոնների կիրառման հարցին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Լոռու մարզի Թեղուտ համայնքում գտնվող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասի և 262,7 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 06-037-4-3 մատյանի 010 համարի տակ 04.04.2003 թվականին գրանցվել է միայն Հնայակ Փարեմուզյանի սեփականության իրավունքը: Ընդ որում, սեփականության իրավունքի նշված պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթուղթը Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավարի կողմից տրված համայնքի տնտեսությունների 2-րդ գրքի թիվ 106 գրանցումից քաղվածքն է: Ըստ այդ քաղվածքի՝ Լոռու մարզի Թեղուտ համայնքում գտնվող 0,3 հա մակերեսով հողամասը և դրա վրա առկա բնակելի տունն ու օժանդակ շինությունները գրանցված են Կառլեն Փարեմուզյանի անվամբ, որի ընտանիքի անդամներն են Հռիփսիկ Դավթյանը, Հնայակ Փարեմուզյանը, Մարինե Փարեմուզյանը և Ֆրունզիկ Փարեմուզյանը:

Ֆրունզիկ Փարեմուզյանն առաջին անգամ, իսկ հետագայում նաև Ֆրունզիկ և Մարինե Փարեմուզյանները դիմել են Կադաստր՝ խնդրելով Լոռու մարզի Թեղուտ համայնքում գտնվող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասի և 262,7 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 06-037-4-3 մատյանի 010 համարի տակ 04.04.2003 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը համապատասխանեցնել սեփականության իրավունքի գրանցման հիմքի (Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավարի կողմից տրված համայնքի տնտեսությունների 2-րդ գրքի թիվ 106 գրանցումից արված քաղվածքի) հետ: Կադաստրի ղեկավար Ռ. Մանուկյանը 01.06.2013 թվականի թիվ ՌՄ-2/79 և 30.07.2013 թվականի թիվ ՌՄ-2/93 գրություններով, ըստ էության, մերժել է թե՛ Ֆրունզիկ Փարեմուզյանի կողմից ներկայացված առաջին դիմումը, թե՛ Ֆրունզիկ և Մարինե Փարեմուզյանների կողմից ներկայացված երկրորդ դիմումը՝ պատճառաբանելով, որ դիմումատուները չեն ներկայացրել սեփականության իրավունքի գրանցված սուբյեկտի կամ վերջինիս մահվան դեպքում նրա իրավահաջորդի (շահագրգիռ անձանց) գրավոր համաձայնությունը, որի առկայությու-

նը պարտադիր է պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալների՝ գույքի պատկանելիության փոփոխության հանգեցնող համապատասխան ուղղում կատարելու համար:

Սույն գործով Դատարանը մերժել է Ֆրունզիկ և Մարինե Փարենուզյանների հայցը՝ պատճառաբանելով, որ Կադաստրն իրավասու չէր առանց շահագրգիռ անձանց համաձայնության կատարելու Ֆրունզիկ Փարենուզյանի կողմից ներկայացված առաջին դիմումով, ինչպես նաև Ֆրունզիկ և Մարինե Փարենուզյանների կողմից ներկայացված երկրորդ դիմումով պահանջվող ոչ տեխնիկական բնույթի սխալի ուղղումը: Դատարանը գտել է նաև, որ Կադաստրի ղեկավար Ռ. Մանուկյանի 01.06.2013 թվականի թիվ ՌՄ-2/79 և 30.07.2013 թվականի թիվ ՌՄ-2/93 գրությունները, որոնցով, ըստ էության, մերժվել են Ֆրունզիկ և Մարինե Փարենուզյանների դիմումները, չեն ընդունվել օրենքի խախտմամբ և ենթակա չեն անվավեր ճանաչման:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռն անփոփոխ թողնելով, հիմնավոր է համարել Դատարանի վերոգրյալ եզրահանգումները՝ գտնելով, որ պետական գրանցման ընթացքում թույլ տրված ոչ տեխնիկական բնույթի սխալն ուղղելու համար անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ անձանց գրավոր համաձայնությունը, ինչը տվյալ դեպքում բացակայել է:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 31.12.1998 թվականի թիվ 867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման» կարգի 3-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթեր են հանդիսանում (...) գյուղական բնակավայրերում տնտեսությունների գրքերից (ծխամատյաններից) քաղվածքները (...):

Նշված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ տնտեսությունների գրքից քաղվածքը՝ որպես անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթուղթ, հիմք է հանդիսանում այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման համար: Սույն գործի փաստերի և վերոգրյալ իրավադրույթի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Լոռու մարզի Թեղուտ համայնքում գտնվող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասի և 262,7 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 06-037-4-3 մատյանի 010 համարի տակ 04.04.2003 թվականի պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթուղթն է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի քննության ընթացքում ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածում սահմանված՝ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթում թույլ տրված սխալների ուղղման կանոնների համաձայն՝ այն ոչ տեխնիկական բնույթի սխալները, որոնք առաջացել են պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով, կարող են ուղղվել առանց գրանցված իրավունքի սուբյեկտի կամ որևէ շահագրգիռ անձի համաձայնության առկայության՝ այդ մասին գրավոր իրազեկելով գրանցված իրավունքների սուբյեկտներին:

Հետևաբար տվյալ դեպքում ստորադաս դատարանները պետք է պարզեին այն հանգամանքը, թե Ֆրունզիկ Փարենուզյանի կողմից ներկայացված առաջին դիմումով, ինչպես նաև Ֆրունզիկ և Մարինե Փարենուզյանների կողմից ներկայացված երկրորդ դիմումով պահանջվող ոչ տեխնիկական բնույթի սխալի ուղղումը կարող էր արդյոք կատարվել առանց գրանցված իրավունքի սուբյեկտի կամ որևէ շահագրգիռ անձի համաձայնության:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հարցադրմանը պատասխանելու նպատակով անհրաժեշտ է բացահայտել այն հանգամանքը, թե քննարկվող ոչ տեխնիկական

քննության սխալը առաջացել է արդյոք Լոռու մարզի Թեղուտ համայնքում գտնվող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասի և 262,7 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 06-037-4-3 մատյանի 010 համարի տակ 04.04.2003 թվականի պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթում՝ Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավարի կողմից տրված համայնքի տնտեսությունների 2-րդ գրքի թիվ 106 գրանցումից արված քաղվածքում նշված տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու հետևանքով, թե ոչ: Այսինքն՝ սույն գործի քննության և ճիշտ լուծման նպատակով Լոռու մարզի Թեղուտ համայնքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ 04.04.2003 թվականին կատարված պետական գրանցման մատյանում և վկայականում առկա գրառումները համադրելով վերը նշված քաղվածքում առկա տվյալների հետ՝ անհրաժեշտ է պարզել, թե խնդրո առարկա ոչ տեխնիկական բնույթի սխալն առաջացել է արդյոք Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավարի կողմից տրված համայնքի տնտեսությունների 2-րդ գրքի թիվ 106 գրանցումից արված քաղվածքում առկա տվյալները գրանցման մատյանում կամ գրանցման վկայականում սխալ կամ թերի գրառելու արդյունքում, թե ոչ, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Անփոփոխելի վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոգրյալ հարցերը պարզելու համար գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

### **5. Վճռաբեկ դատարանի պայրճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը, այդ թվում նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.11.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 10.07.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.11.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ2/0462/05/13  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Աբովյան  
Ա. Բաբայան  
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ2/0462/05/13  
2016 թ.

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Արմենակ Ղալեյանի ներկայացուցիչներ Վիկ-  
տոր Բաղդասյանի և Արևիկ Եղիազարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի 10.06.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արմենակ Ղալեյանի ընդդեմ  
Ճամբարակի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), ՀՀ կառավարությանն  
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գեղարքունիքի տարածքային  
ստորաբաժանման, երրորդ անձինք Հակոբ Նաղարյանի և Անիկ Նաղարյանի՝ Ճամբարակ  
համայնքի (այսուհետ՝ Համայնք) տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի գրանցումը  
մասնակի՝ Մանյա Նաղարյանի մատով, անվավեր ճանաչելու, որպես անվավերության  
հետևանք՝ 20.04.2006 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստ-  
րի պետական կոմիտեի Ճամբարակի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Ստորա-  
բաժանում) կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական  
թիվ 05-002-4-7 մատյանի 000283 համարի տակ կատարված սեփականության իրավունքի  
պետական գրանցումը մասնակի՝ Մանյա Նաղարյանի մատով, ոչ իրավաչափ ճանաչելու, և  
11.05.2006 թվականին Ստորաբաժանման կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետա-  
կան գրանցման միասնական թիվ 05-002-4-7 մատյանի 000283 համարի տակ կատարված  
գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Արմենակ Ղալեյանը պահանջել է մասնակի՝ Մանյա Նաղարյա-  
նի մատով, անվավեր ճանաչել Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի  
գրանցումը, որպես անվավերության հետևանք՝ մասնակի՝ Մանյա Նաղարյանի մատով, ոչ  
իրավաչափ ճանաչել 20.04.2006 թվականին Ստորաբաժանման կողմից գույքի նկատմամբ



իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 05-002-4-7 մատյանի 000283 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և մասնակի անվավեր ճանաչել 11.05.2006 թվականին Ստորաբաժանման կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 05-002-4-7 մատյանի 000283 համարի տակ կատարված գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) (այսուհետ՝ Դատարան) 19.11.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.06.2015 թվականի որոշմամբ Հակոբ և Անիկ Նադարյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Դատարանի 19.11.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Արմենակ Ղալեյանի ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հակոբ Նադարյանը:

## ***2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը***

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 9-րդ կետերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, օբյեկտիվորեն չգնահատելով սույն գործի փաստական հանգամանքները և սխալ մեկնաբանելով վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմերը, անհիմն կերպով հանգել է այն եզրակացության, որ Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի գրանցումը վարչական ակտ չի հանդիսանում: Մինչդեռ Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի գրանցումը (գրառումը) վարչական ակտ է, և դրա վիճարկման հայցապահանջի հիման վրա հարուցված սույն վարչական գործի վարույթը ենթակա չէր կարճման:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.06.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.11.2014 թվականի վճիռին:

### ***2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները***

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման: Տվյալ դեպքում սեփականության իրավունքի վիճարկվող պետական գրանցումը կատարվել է 15.03.2006 թվականին տրված Համայնքի տնտեսությունների գրքից քաղվածքի հիման վրա, որի՝ վարչական ակտ հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքը որևէ էական նշանակություն չունի սույն գործի քննության և լուծման համար:

### ***3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը***

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Արմենակ Ղալեյանի և Միխայել Սամոդորովի միջև 12.08.1992 թվականին կնքված բնակելի տան առուծախի պայմանագրի (վավերացված նոտարական կարգով, գրանցված է սեղանամատյանում 300 համարով) համաձայն՝ Արմենակ Ղալեյանը ձեռք է բերել Կրասնոսելսկի (ներկայիս Ճամբարակ) Մյասնիկյան (ներկայիս Պ. Սևակ) թիվ 33 հասցեի բնակելի տունը (**հատոր 1-ին, գ.թ. 37**).

2) 12.09.1992 թվականի տան տեխնիկական անձնագրի համաձայն՝ Կրասնոսելսկի Մյասնիկյան թիվ 33 հասցեի տան սեփականատերն Արմենակ Ղալեյանն է (**հատոր 1-ին, գ.թ. 35-36**).

3) քաղաքացիներին հաշվառելու համար տնային գրքի համաձայն՝ Մանյա Հայրոյի Նաղարյանը 2005 թվականին հաշվառվել է Ճամբարակի Պարոյր Սևակի թիվ 33 հասցեում որպես սեփականատեր (**հատոր 1-ին, գ.թ. 30-32**).

4) ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի քաղաքապետի 08.05.2014 թվականի թիվ 66 գրությամբ ներկայացված Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի գրանցման էջի պատճենի համաձայն՝ նշված համարի ներքո գրառված են Արմենակ Ղալեյյանի և Մանյա Նաղարյանի անունները, նրանց անձնագրային տվյալները (**հատոր 2-րդ, գ.թ. 65-67**).

5) Համայնքի ղեկավարի կողմից 15.03.2006 թվականին տրված Համայնքի տնտեսությունների գրքից քաղվածքի համաձայն՝ Պ. Սևակի հասցեում Արմենակ Ղալեյյանի անվամբ գրանցված է 0,10 հա մակերեսով հողամաս, որի վրա առկա է բնակելի տուն՝ օժանդակ շինություններով (կառուցման տարին նշված չէ), ընտանիքի կազմում նշվել է Մանյա Նաղարյանը (**հատոր 1-ին, գ.թ. 38**).

6) Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2030338 վկայականի համաձայն՝ Ճամբարակի Պ. Սևակի թիվ 33 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ Ճամբարակի տնտեսությունների գրքից 15.03.2006 թվականի քաղվածքի հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 05-002-4-7 մատյանի 000283 համարի տակ 20.04.2006 թվականին գրանցվել է Արմենակ Ղալեյյանի և Մանյա Նաղարյանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 39-40**).

7) Արմենակ Ղալեյյանի և Մանյա Նաղարյանի միջև 03.05.2006 թվականին կնքված «Բնակելի տան նվիրատվության պայմանագրի» համաձայն՝ Արմենակ Ղալեյյանը Մանյա Նաղարյանին նվիրել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Պ. Սևակի թիվ 33 հասցեում գտնվող տան, հողի և գունի՝ իրեն պատկանող մասը (**հատոր 1-ին, գ.թ. 44-45**).

8) վերը նշված նվիրատվության պայմանագրի հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 05-002-4-7 մատյանի 000283 համարի տակ 11.05.2006 թվականին կատարվել է Մանյա Նաղարյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, հիմք՝ Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2131324 վկայական (**հատոր 1-ին, գ.թ. 46-48**).

9) թիվ ԱԲ 113223 մահվան վկայականի համաձայն՝ Մանյա Նաղարյանը մահացել է 08.04.2013 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 49**).

10) ՀՀ Ճամբարակ նոտարական տարածքի նոտար Լալա Մելիքյանի 29.10.2013 թվականի թիվ Ե-32 գրության համաձայն՝ 08.04.2013 թվականին մահացած Մանյա Նաղարյանի մահից հետո վեց ամսվա ընթացքում Ճամբարակ նոտարական տարածքի նոտարին ժառանգության ընդունման դիմում են ներկայացրել նրա երկրորդ հերթի ժառանգներ Հակոբ Նաղարյանը և Անիկ Նաղարյանը (**հատոր 1-ին, գ.թ. 124**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 9-րդ կետերի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք Համայնքի տնտեսությունների գրքի որոշակի համարի տակ կատարված գրանցումը (գրառումը) Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտ է, և այդ գրանցման (գրառման) վերացման պահանջը ենթակա է քննության դատարանում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումը Դատարան ներկայացնելու ժամանակահատվածում գործել է 28.11.2007 թվականին ընդունված, 01.01.2008 թվականից ուժի մեջ մտած և 07.01.2014 թվականին ուժը կորցրած ՀՀ վարչական

դատավարության օրենսգիրքը, իսկ գործի քննությունն իրականացվել է 07.01.2014 թվականից ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Նույնաբովանդակ իրավակարգավորում է սահմանվել նաև 07.01.2014 թվականից ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով:

Մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

07.01.2014 թվականից ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ գույքորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

1) վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության.

(...)

9) եթե բացահայտվել են նույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը.

(...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

վարչական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ, տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ, տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար. քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում: Եթե վերը թվարկված մարմիններից բացի, վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա նույն օրենքի իմաստով՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ:

վարչարարություն՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի, դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են (*տե՛ս Սվեդլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Այսպիսով, վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վիճարկման հայցի առարկան միջանոց վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*տե՛ս Սամվել Մելքունյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԳ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե ոչ: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական ակտը սահմանված է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ յուրաքանչյուր գործով վարչական ակտի հատկանիշների պարզաբանման համար դատարանը պետք է գնահատի վիճարկվող ակտի անհատական ակտ լինելու, վարչական մարմնի կողմից ընդունված լինելու, արտաքին ներգործություն ունենալու, հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու, կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելու, անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու հանգամանքների միաժամանակյա առկայությունը (*տե՛ս «Օլիմպ» արտադրական կոոպերատիվն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ/4538/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հստակորեն որոշված հասցեատեր,
- վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,
- վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,
- վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությանը օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությանը օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,
- վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությանը օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,
- վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար (*տե՛ս Ռոբերտ Հովհաննիսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար՝ փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմենակ Ղալեյանը ձեռք է բերել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Պ. Սևակ փողոց թիվ 33 հասցեում գտնվող անշարժ գույքը 12.08.1992 թվականին կնքված «Բնակելի տան առուծախի պայմանագրով» և հանդիսացել է այդ անշարժ գույքի սեփականատերը: Հետագայում՝ 01.10.2005 թվականին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Պ. Սևակ փողոց թիվ 33 տանը Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի գրանցման ներքո հաշվառվել է նաև Մանյա Նադարյանը: Նշված հասցեում գտնվող անշարժ գույքի՝ բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ 20.04.2006 թվականին գրանցվել է Արմենակ Ղալեյանի և Մանյա Նադարյանի սեփականության իրավունքը: Ընդ որում, նշված պետական գրանցման համար հիմք է հանդիսացել Ճամբարակի տնտեսությունների գրքից 15.03.2006 թվականի քաղվածքը, որի համաձայն՝ Պ. Սևակի հասցեում Արմենակ Ղալեյանի անվամբ գրանցված է 0,10 հա մակերեսով հողամաս, այդ հողամասի վրա առկա է բնակելի տուն՝ օժանդակ շինություններով, իսկ Արմենակ Ղալեյանի ընտանիքի կազմում նշվել է նաև Մանյա Նադարյանի անունը: Արմենակ Ղալեյանը ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Պ. Սևակի թիվ 33 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ իրեն պատկանող մասը 03.05.2006 թվականին կնքված «Բնակելի տան նվիրատվության պայմանագրով» նվիրել է Մանյա Նադարյանին: Նշված պայմանագրի հիման վրա Ճամբարակի Պ. Սևակի թիվ 33 հասցեի անշարժ գույքի նկատմամբ 11.05.2006 թվականին գրանցվել է Մանյա Նադարյանի սեփականության իրավունքը:

Այսպիսով, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Պ. Սևակի թիվ 33 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է Մանյա Նադարյանի սեփականության իրավունքը, ով մահացել է 08.04.2013 թվականին:

Սույն գործով դիմելով դատարան՝ Արմենակ Ղալեյանը ներկայացրել է հետևյալ հայցապահանջները.

1) մասնակիորեն՝ Մանյա Նաղարյանի մատով, անվավեր ճանաչել Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի գրանցումը,

2) մասնակիորեն՝ Մանյա Նաղարյանի մատով, ոչ իրավաչափ ճանաչել 20.04.2006 թվականին Ստորաբաժանման կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 05-002-4-7 մատյանի 000283 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը,

3) մասնակիորեն անվավեր ճանաչել 11.05.2006 թվականին Ստորաբաժանման կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 05-002-4-7 մատյանի 000283 համարի տակ կատարված գրանցումը:

Ընդ որում, Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջը հայցվորը համարել է հիմնական հայցապահանջ, որի մերժումը կամ բավարարումը կանխորոշում է դրանից ածանցվող մյուս հայցապահանջների լուծման ելքը:

Դատարանը, բավարարելով Արմենակ Ղալեյանի հայցը, պատճառաբանել է, որ Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի տակ Մանյա Նաղարյանի մատով կատարված գրանցումը կատարվել է օրենքի խախտմամբ՝ արդյունքում հանգեցնելով Արմենակ Ղալեյանի իրավունքների խախտման:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Հակոբ և Անիկ Նաղարյանների վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռն ու գործի վարույթը կարճել՝ գտնելով, որ սույն գործով ներկայացված հիմնական հայցապահանջը ենթակա չէ որևէ դատարանում քննության: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի տակ 2005 թվականին կատարված գրանցումը (գրառումը) վարչական ակտ չի հանդիսանում, և դրա իրավաչափությունը չի կարող վիճարկվել թե՛ վարչական դատավարության, թե՛ քաղաքացիական դատավարության կարգով: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարել անդրադառնալ և քննության առնել վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

06.05.1999 թվականից ուժի մեջ մտած «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) սահմանված է եղել. «Անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար կազմված կադաստրային գործն իր մեջ ընդգրկում է անշարժ գույքի առանձին միավորների նկատմամբ իրավունքներ և սահմանափակումներ հաստատող հետևյալ փաստաթղթերը՝

ա) անշարժ գույքի սուբյեկտներին հատկացված և որպես սեփականություն կամ օգտագործման անցած հողերի (տնամերձ, այգեգործական (ամառանոցային), բնակելի տան շինարարության և դրա սպասարկման, գյուղացիական կամ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն վարելու, ինչպես նաև քաղաքաշինական գործունեություն ծավալելու համար) և շենքերի, շինությունների մասին. (...):»:

ՀՀ կառավարության 31.12.1998 թվականի թիվ 867 որոշմամբ (ուժի մեջ է մտել 15.03.1999 թվականին) հաստատվել է կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգը (այսուհետ՝ Կարգ), որի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներն իրականացվում են անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերի և կադաստրային քարտեզների հիման վրա:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթեր են հանդիսանում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովների որոշումները՝ կնքված համապատասխան համայնքների ղեկավարների

կողմից, հողի սեփականության իրավունքի ժամանակավոր վկայականները, հողի սեփականության իրավունքի պետական ակտերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականները, շենքերի սեփականության վկայագրերը, այգեգործների անդամատոմսերը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասերի ձեռքբերման վերաբերյալ փաստաթղթերը և հողամասերի հատակագծերը՝ տրված իրավասու պետական մարմինների կողմից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված օտարման, սեփականաշնորհման, վարձակալության մասին պայմանագրերը, անշարժ գույքի բռնագանձման վերաբերյալ վճիռներն ու դատավճիռները, կտակի, ըստ օրենքի իրավահաջորդության կամ ժառանգման վերաբերյալ փաստաթղթերը, գյուղական բնակավայրերում տնտեսությունների գրքերից (ծխամատյաններից) քաղվածքները, անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթեր:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 22.10.1997 թվականի «Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման կարգի և անշարժ գույքի համակարգված դիտարկումների (մոնիտորինգ) իրականացման մասին» թիվ 465 որոշմամբ հաստատված կարգին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության կառավարության 22.10.1997 թվականի թիվ 465 որոշմամբ հաստատվել է «Անշարժ գույքի պետական գրանցման կարգը», որի 9-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի, հողի և ամրակալված օբյեկտի համար կազմվում է կադաստրային գործ, որի մեջ, ի թիվս այլնի. ընդգրկվում են նաև հետևյալ փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի հատկացման վերաբերյալ փաստաթղթեր, անշարժ գույքի նկատմամբ իրավագործություններ հաստատող այլ փաստաթղթեր: Նույն կարգի 11-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավագործություններ ունեցող սուբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի տարածքային մարմիններ են ներկայացնում անշարժ գույքի պետական գրանցման ենթակա փաստաթղթերը: Անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմիններն ստուգում են ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը: Անհամապատասխանության դեպքում՝ ներկայացված փաստաթղթերը հնգօրյա ժամկետում վերադարձվում են՝ թերությունների մասին պարտադիր նշումներով: Փաստաթղթերի ստուգումից հետո կազմվում է անշարժ գույքի վերաբերյալ կադաստրային գործ և գրանցում է կատարվում անշարժ գույքի պետական գրանցման միասնական մատյանում:

Վկայակոչված իրավանդությունների բովանդակությունից հետևում է, որ տնտեսությունների գրքից քաղվածքը՝ որպես անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթուղթ, հիմք է հանդիսանում այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման համար: Վճարել դատարանի գնահատմամբ՝ տնտեսությունների գրքից քաղվածքը, այլ տվյալներից բացի, պարունակում է նշում այն անձանց մասին, ում սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման տվյալ անշարժ գույքի նկատմամբ: Ընդ որում, տնտեսությունների գրքից քաղվածքում նշվում են միայն այն անձանց անունները, ովքեր գրանցված (հաշվառված) են տնտեսությունների գրքում որպես սեփականատեր: Հետևաբար տնտեսությունների գրքում որոշակի անձի տվյալների վերաբերյալ կատարված գրանցումը (գրառումը) այդ անձին ընձեռում է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու իրավական հնարավորություն: Այլ կերպ ասած՝ տնտեսությունների գրքում կատարված գրանցումն (գրառումը) արտացոլվում է այդ գրքից տրված քաղվածքում, ինչն էլ, որպես անշարժ գույքի առանձին միավորի նկատմամբ իրավունք հաստատող փաստաթուղթ, հիմք է հանդիսանում սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննությամբ հաստատվել է այն հանգամանքը, որ Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի ներքո գրանցված են Արմենակ Ղալեյանը և Մանյա Նադարյանը, իսկ նշված գրքից 15.03.2006 թվականին տրված քաղվածքի հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցման միասնական թիվ 05-002-4-7 մատյանի 000283 համարի տակ 20.04.2006 թվականին գրանցվել է Արմենակ Ղալեյանի և Մանյա Նադարյանի սեփականության իրավունքը Ճամբարակի Պ. Սևակի թիվ 33 հասցեի անշարժ գույքի նկատմամբ:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

1) Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի ներքո կատարված գրանցումն (գրառումը) անհատական ակտ է, քանի որ վերաբերում է որոշակի ֆիզիկական անձանց, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր. այն ուղղված է Արմենակ Ղալեյանին և Մանյա Նադարյանին,

2) Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի ներքո կատարված գրանցումն (գրառումը) ունի արտաքին ներգործություն, քանի որ առնչվում է ֆիզիկական անձանց, ովքեր կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չեն գտնվում այն ընդունած մարմնի հետ, այսինքն՝ կարգավորում է վարչական մարմնի և ֆիզիկական անձանց միջև ծագած իրավահարաբերությունները,

3) Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի ներքո կատարված գրանցումն (գրառումը) ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում, քանի որ այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի, այն է՝ Ճամբարակի քաղաքապետի կողմից իրավական նորմերի հիման վրա կատարված միակողմանի կարգադրություն է՝ ուղղված Արմենակ Ղալեյանին և Մանյա Նադարյանին,

4) Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի ներքո կատարված գրանցումն (գրառումը) ընդունվել է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձանց՝ Արմենակ Ղալեյանին և Մանյա Նադարյանին, առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը, այն է՝ Ճամբարակի Պ. Սևակի թիվ 33 հասցեի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու՝ վերջիններիս իրավական հնարավորության ճանաչմանը,

5) Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի ներքո կատարված գրանցումն (գրառումը) ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական անձանց համար, քանի որ դրանով վարչական մարմինը, ճանաչելով անձանց մոտ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու իրավունքի առկայությունը, դրանով իսկ բարելավել է Արմենակ Ղալեյանի և Մանյա Նադարյանի իրավական և փաստացի դրությունն ու միաժամանակ վատթարացրել է նրանցից յուրաքանչյուրի իրավական և փաստացի դրությունը, քանի որ այդ գրանցման արդյունքում սահմանափակվել է թե՛ Արմենակ Ղալեյանի և թե՛ Մանյա Նադարյանի՝ Ճամբարակի Պ. Սևակի թիվ 33 հասցեի անշարժ գույքի նկատմամբ միանձնյա սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի գրանցումը (գրառումը) Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտ է, քանի որ այն համապատասխանում է վարչական ակտին բնորոշ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր որակական հատկանիշներին: Այսինքն՝ Համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի 27-րդ համարի գրանցման (գրառման) վերացման պահանջը կարող է հանդիսանալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի առարկա ու քննվել այդ հայցատեսակին համապատասխան: Հետևաբար սույն վարչական գործի վարույթը ենթակա չէր կարճման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 9-րդ կետերի հիմքով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:



Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը, կարճելով սույն վարչական գործի վարույթը, ըստ էության չի անդրադարձել վերաքննիչ բողոքի որևէ հիմքին կամ հիմնավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերաքննիչ բողոքի հիմքերը քննության առնելու և դրանց հիմնավորվածությունը ստուգելու նպատակով գործն անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

**5. Վճռաբեկ դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 10.06.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/0811/05/15  
2016 թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/0811/05/15

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Գ. Ղարիբյան  
Հ. Բեդկյան  
Ա. Առաքելյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝  
Նախարարություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.12.2015  
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մհեր Կակոյանի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարար-  
ության Նոր Նորքի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ 16.12.2014 թվականի  
թիվ 1647 որոշումն ամբողջությամբ վերացնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Մհեր Կակոյանը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության  
16.12.2014 թվականի թիվ 1647 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Այվազյան) (այսուհետ՝ Դատարան)  
14.07.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 22.12.2015  
թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
14.07.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ (դատավոր Հ. Բեդկյանը գրավոր շարադ-  
րել է հատուկ կարծիք):

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 3.1-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները, խախտել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը, չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը, 24-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր: Բողոք բերած անձը նշված պնդումները պարզապես անհիմն է հեղուկալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գործարքն ավելացված արժեքի հարկով հարկվող որակելու համար անհրաժեշտ է, որ երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի ձեռքբերման և օտարման միջև ընկած ժամանակահատվածը չգերազանցի մեկ տարին՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է ձեռք բերվել օտարվող գույքերից առաջինը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում առկա են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման համար անհրաժեշտ բոլոր վավերապայմանները, այն է՝ տեղի է ունեցել առուվաճառք, որի արդյունքում սեփականության իրավունքով հայցվորին պատկանող՝ «NISSAN X-TRAIL 2.5i» մակնիշի և «VOLKSWAGEN PASSAT 2.8i» մակնիշի ավտոմեքենաներն օտարվել են, օտարվող գույքերը նույն տեսակի անձնական օգտագործման մեքենաներ են, երկու մեքենաների օտարումը տեղի է ունեցել մեկ օրացուցային տարում՝ 2012 թվականին, օտարվող ավտոմեքենաներից մեկը՝ «VOLKSWAGEN PASSAT 2.8i» մակնիշի ավտոմեքենան, ձեռք է բերվել 20.06.2012 թվականին և օտարվել 29.06.2012 թվականին, այսինքն՝ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Տեսչության վիճարկվող որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.12.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Դատարան՝ նոր քննության կամ կայացնել նոր դատական ակտ:

### 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Երևանի հաշվառման-քննական բաժնի 11.06.2015 թվականի տեղեկանքի համաձայն՝ «NISSAN X-TRAIL 2.5i» մակնիշի JN1TANT31Z0001631 նույնականացման համարով ավտոմեքենան 16.04.2008 թվականին հաշվառվել է քաղաքացի Միեր Կակոսյանի (ք. Երևան, Շոպրոնի թիվ 4 նրբանցք, 6-17) անվամբ, հատկացվել են թիվ 14 ՕՍ 340 հաշվառման համարանիշները, իսկ 22.11.2011 թվականին կատարվել է համարանիշի փոփոխություն և հատկացվել են թիվ 09 ՎՎ 009 հաշվառման համարանիշները: Նշված ավտոմեքենան 20.06.2012 թվականին հաշվառումից հանվել է օտարման նպատակով (գ.թ. 51).

2. 20.06.2012 թվականի տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրով Միեր Կակոսյանը «NISSAN X-TRAIL 2.5i» մակնիշի ավտոմեքենան 3.000.000 ՀՀ դրամով վաճառել է Ստեփան Ղազարյանին (գ.թ. 43).

3) 29.06.2012 թվականի տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրով Միեր Կակոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող «VOLKSWAGEN PASSAT 2.8i» մակնիշի ավտոմեքենան 1.000.000 ՀՀ դրամով վաճառել է Գերասիմ Պետրոսյանին: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «VOLKSWAGEN PASSAT 2.8i» մակնիշի ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է Միեր Կակոսյանին՝ հիմք 20.06.2012 թվականին տրված թիվ N01AA575560 սեփականության վկայական (գ.թ. 39).

4) ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 16.12.2014 թվականի թիվ 1647 որոշման համաձայն՝ Միեր Կակոսյանի չկատարած հարկային պարտավորությունը 15.12.2014 թվականի դրությամբ կազմում է 254.668 ՀՀ դրամ: Հարկային պարտավորությունն առաջացել է 2012 թվականի 2-րդ եռամսյակի հաշվարկից (գ.թ. 37):

#### 4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացված նույն տեսակի գույքի երկրորդ և ավելի թվով օտարման գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ապրանքի մատակարարում որակելու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Մինչև նույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. այն դեպքում, երբ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ օտարվում է անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն փեռասկի գույք, արդյո՞ք «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով առաջին օտարված գույքի ձեռքբերման ժամանակահատվածը նշանակություն ունի երկրորդ և ավելի թվով օտարումներն ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք որակելու համար:*

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ ԱԱՀ վճարողներ են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և նույն օրենքի 6-րդ հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք (...):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:

Նշված կետով սահմանվել են նաև այն դեպքերը, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները ևս համարվում են ապրանքի մատակարարում:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որի առանձնահատկություններից է այն, որ վերջինս կիրառվում է տնտեսական գործունեության բավականին լայն շրջանակում ընդգրկված գործարքների նկատմամբ, որոնք «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են ապրանքի մատակարարում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտ, որպես կանոն, ձեռնարկատիրական գործունեություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) իրականացրած գործարքներն են: Մինչև նույն ժամանակ, սակայն, բացի վերը նշված անձանց կողմից իրականացրած գործարքների, օրենսդիրն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով որդեգրել է այն մոտեցումը, որ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող մի շարք գործարքներ որոշակի պայմանների առկայության դեպքում ևս «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտարկվում են որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ: Նշված գործարքներից են, մասնավորապես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ սահմանված գործարքները:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության համաձայն՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի, որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությունը մեկնաբանելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ իրավական ակտը դրանում պարունակող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- թե՛ առաջին, թե՛ հաջորդող գործարքներով տեղի է ունեցել անձի սեփականությունը հանդիսացող գույքի օտարում,
- թե՛ առաջին, թե՛ հաջորդող օտարումները կատարվել են որևէ ձևով հատուցման դիմաց, այսինքն՝ գույքի օտարման դիմաց օտարողը ստացել է կամ պետք է ստանա վճար կամ այլ հանդիպական կատարում: Հետևաբար, օրինակ, եթե անձն իր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի որևէ գույքն օտարել է նվիրատվության գործարքով, որի դեպքում գույքն օտարողը որևէ վճար կամ այլ հանդիպական կատարում չի ստանում, ապա այդպիսի գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի քննարկվող դրույթի իմաստով չի կարող համարվել ապրանքի մատակարարում: Միաժամանակ, եթե նույն օրացուցային տարում նվիրատվության գործարքը նույն տեսակի գույքի օտարման առաջին գործարքն է, ապա դրան հաջորդող նույն տեսակի գույքի՝ հատուցման դիմաց կատարվող օտարման գործարքը ևս «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի քննարկվող դրույթի իմաստով չի կարող համարվել ապրանքի մատակարարում: Այս դեպքում ապրանքի մատակարարում կարող են համարվել նույն օրացուցային տարում **հատուցման դիմաց** նույն տեսակի գույքի օտարման առաջին գործարքին հաջորդող հատուցման դիմաց օտարման երկրորդ և հաջորդող գործարքները:

- գործարքով օտարվել է այնպիսի տեսակի գույք, որպիսի տեսակի գույք (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենա, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողեր, ավտոտնակ) նախկինում մեկ օրացուցային տարվա ընթացքում արդեն օտարվել է նույն անձի կողմից (այսուհետև՝ նույն տեսակի գույք): Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քննարկվող իրավական նորմում կիրառված «նույն տեսակի գույք» եզրույթը նշանակում է միանման հատկանիշներով օժտված, միևնույն նպատակային նշանակություն ունեցող գույք: Այսպես, օրինակ, բնակարանը և առանձնատունը չեն կարող քննարկվող նորմի իմաստով համարվել նույն տեսակի գույք, քանի որ, թեև դրանք երկուսն էլ ունեն միևնույն նպատակային նշանակությունը, այն է՝ նախատեսված են մարդկանց բնակվելու համար, այնուամենայնիվ, դրանք չունեն միանման հատկանիշներ, քանի որ բնակարանը շենքում գտնվող առանձին տարածք է բաղկացած բնակելի և օժանդակ մասերից, օժտված կոմունալ հարմարություններով, իսկ առանձնատունը առանձին հողամասի վրա կառուցված, բնակելի, օժանդակ և կոմունալ հարմարություններով օժտված շինություն է: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ, օրինակ, առաջին գործարքով հատուցման դիմաց օտարվել է բնակարան, իսկ երկրորդ գործարքով՝ առանձնատուն, ապա «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով առանձնատունն օտարելու գործարքը չի կարող համարվել ապրանքի մատակարարում, քանի որ առկա չէ նույն տեսակի գույքի երկրորդ և հաջորդող օտարում:
- գործարքը նույն տեսակի գույքի՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում օտարման հերթական գործարք է, որը նույն անձի կողմից իրականացվում է երկրորդ կամ ավելի թվով անգամ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրացուցային տարին ներառում է հունվարի 1–ից մինչև դեկտեմբերի 31–ն ընկած ժամանակահատվածը: Այսինքն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով երկրորդ և հաջորդող գործարքներն ապրանքի մատակարարում համարվելու համար անհրաժեշտ է, որպեսզի նույն տեսակի թե՛ առաջին, թե՛ երկրորդ և հաջորդող գործարքներն իրականացված լինեն միևնույն թվականի հունվարի 1–ից մինչև դեկտեմբերի 31–ն ընկած ժամանակահատվածում:
- գործարքով օտարվել է գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մինչև մեկ տարվա ընթացքում: Այսինքն՝ որպեսզի երկրորդ կամ հաջորդող գործարքով նույն տեսակի գույքի օտարման գործարքը համարվի ապրանքի մատակարարում, օտարվող գույքը պետք է ձեռք բերված լինի օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե գործարքը բավարարում է վերը նշված բոլոր պայմաններին, ապա այն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ–ով հարկվող գործարք, իսկ եթե նշված պայմաններից որևէ մեկը բացակայում է, ապա գործարքը չի կարող համարվել ապրանքի մատակարարում:
- Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից որդեգրած մոտեցման համաձայն՝ ապրանքի մատակարարում համարվում են մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երկրորդ և հետագա գործարքները, եթե օտարվող գույքը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:
- Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում քննարկել հետևյալ հնարավոր իրավիճակները.
  - Այսպես, եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացրել է նույն տեսակի գույքի օտարման երկու գործարք, որոնցից առաջինով օտարել է այն գույքը, որը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարուց ավելի վաղ, իսկ երկրորդ գործարքով օտարել է այն գույքը, որը ձեռք է բերել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, ապա, ըստ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի վերը նշված կարգավորման՝ օտարման երկրորդ գործարքը դիտարկվում է որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ–ով հարկվող գործարք:

Այն դեպքում, սակայն, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկ օրացուցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարում է այն գույքը, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ երկրորդ գործարքով՝ այն գույքը, որը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարուց ավելի վաղ, ապա օրենսդրի որդեգրած մոտեցման համաձայն՝ այս իրավիճակում երկրորդ գործարքը չի կարող դիտարկվել որպես ապրանքի մատակարարում: Ընդ որում, նման պայմաններում առաջին գործարքը նույնպես չի կարող դիտարկվել որպես ապրանքի մատակարարում, քանի որ քննարկվող իրավակարգավորման համաձայն՝ ապրանքի մատակարարում է երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը:

Առաջնորդվելով նույն տրամաբանությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ միայն այն փաստը, որ մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երկրորդ գործարքը համարվել է ապրանքի մատակարարում, ինքնին բավարար չէ, որպեսզի նույն օրացուցային տարում նույն տեսակի երրորդ գույքի օտարման գործարքը ևս դիտարկվի որպես ապրանքի մատակարարում: Մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երրորդ գործարքը ևս ապրանքի մատակարարում համարելու համար անհրաժեշտ է, որ, այդ գործարքով օտարվող գույքը ձեռք բերված լինի օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ նախատեսված գույքի օտարման երկրորդ կամ հաջորդող գործարքն ապրանքի մատակարարում համարելու տեսանկյունից էական է, որ տվյալ գործարքով մեկ օրացուցային տարում թվով երկրորդ կամ հաջորդող անգամ օտարվի այնպիսի գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ նույն օրացուցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարված գույքը ֆիզիկական անձի կողմից ձեռք բերելու ժամանակահատվածը որևէ նշանակություն չունի նույն օրացուցային տարվա ընթացքում հետագայում նույն տեսակի գույքն օտարելու գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար:

Այլ կերպ ասած՝ գործարքն ապրանքի մատակարարում համարելու համար էական է ոչ թե դրան նախորդող գործարքներով օտարված նույն տեսակի գույքի ձեռքբերման, այլ հենց տվյալ գործարքով օտարվող գույքի ձեռքբերման ժամանակահատվածը:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է օրենսդրի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությունում առկա «եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում» արտահայտության տառացի մեկնաբանությունից, որում օրենսդիրն օգտագործել է «տվյալ գույքի» արտահայտությունը՝ նկատի ունենալով քննարկվող գործարքով օտարվող գույքը, այլ ոչ թե նույն օրացուցային տարվա ընթացքում նախկինում օտարված գույքը:

Այսպիսով, մեկ օրացուցային տարվա ընթացքում երկրորդ և հաջորդող նույն տեսակի գույքի օտարման գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար այդ գույքի ձեռքբերման և օտարման գործարքների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի մեկ տարին՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է ձեռք բերվել տվյալ օրացուցային տարում առաջինն օտարված գույքը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործով իրավահարաբերության ծագման պահից հետո ««Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.12.2012 թվականի թիվ ՀՕ-240-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 01.01.2013 թվականին) 4-րդ հոդվածով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, ինչի արդյունքում նախկինում գործող խմբագրության 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությունն ըստ էության վերաշարադրվել է 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետում, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանի կողմից սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսա-

կի գույքի օտարման գործարքները որպես ապրանքի մատակարարում դիտարկելու վերաբերյալ հավասարապես կիրառելի են նաև 01.01.2013 թվականից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն հարցին, թե ինչպես է հաշվարկվում իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության իմաստով ապրանքի մատակարարում համարվող գործարքով օտարված գույքի ձեռքբերման և օտարման միջև ընկած ժամանակահատվածը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հարցը ևս էական նշանակություն ունի գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ապրանքի մատակարարում դիտարկելու համար, քանի որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ սահմանված մյուս պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում գործարքը կարող է ապրանքի մատակարարում համարվել միայն այն դեպքում, երբ ֆիզիկական անձը գույքն օտարել է ձեռք բերման պահից մեկ տարվա ընթացքում:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ քննարկվող իրավիճակներում գործարքների կնքման պահի օրենսդրական կարգավորումներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ շարժական գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների սեփականության, գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքները ենթակա են պետական գրանցման: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող տրանսպորտային միջոցի սեփականության, գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքը ծագում է (պետությունը ճանաչում է) պետական գրանցման պահից:

Վերը նշված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների վերաբերյալ գործարքները կնքված են համարվում և դրանց նկատմամբ սեփականության իրավունքն անձանց մոտ ծագում է օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ինչպես իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ, այնպես էլ ««Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.12.2012 թվականի թիվ ՀՕ-240-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 01.01.2013 թվականին) 4-րդ հոդվածով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետում կատարված փոփոխություններից հետո գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետում սպառիչ կերպով սահմանված է այն գույքերի ցանկը, որոնց օտարումը նույն պարբերությամբ սահմանված մյուս պայմանների միաժամանակյա առկայության դեպքում համարվում է ապրանքի մատակարարում: Ընդ որում, քննարկվող նորմերով սահմանված գույքերի ցանկում ներառված են ֆիզիկական անձանց պատկանող անշարժ գույքը և անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները, այսինքն՝ այնպիսի գույք, որի նկատմամբ սեփականության



իրավունքի ծագումը և դադարումն օրենսդիրն այլ իրավական ակտերով պայմանավորել է պետական գրանցմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

Վերը նշված իրավական նորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, գործարքը կարող է կնքված համարվել միայն դրանից ծագող իրավունքները, տվյալ դեպքում՝ սեփականության իրավունքը գրանցելու պահից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների օտարման պահը համընկնում է օտարման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման պահի հետ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ քննարկվող գործարքներն ապրանքի մատակարարում դիտարկելու համար այդ գործարքով օտարվող գույքի՝ օտարողի կողմից ձեռքբերման պահը վերջինիս անվամբ նշված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման պահն է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ վճարողներ են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և նույն օրենքի 6-րդ հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները (այսուհետ՝ անձինք), բացառությամբ նույն հոդվածով և նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքերի:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ վճարողների կողմից հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառման, ինչպես նաև դրա հետ կապված հարկային պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) ծագման պահ է համարվում այն պահը, երբ ապրանքները առաքվել կամ հանձնվել են գնորդներին կամ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.12.2012 թվականի թիվ ՀՕ-240-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 01.01.2013 թվականին) փոփոխություն է կատարվել նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում, որը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Նույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարում են ԱԱՀ վճարող համարվող և (կամ) ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք»: Միաժամանակ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը լրացվել է 3.1-րդ հոդվածով, որի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, եթե նրանց իրականացրած գործարքները, նույն օրենքի համաձայն, ապրանքի մատակարարում են:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող կարգավորումների համաձայն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով ԱԱՀ վճարողներ են համարվել նաև նույն օրենքի 6-րդ հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական անձինք: Ընդ որում, որպես ընդհանուր կանոն սահմանված է եղել, որ ԱԱՀ վճարող անձանց համար ապրանքի մատակարարման պահ է համարվել այն պահը, երբ ապրանքը հանձնվել է գնորդին:

Մինչդեռ 01.01.2013 թվականից օրենսդիրը տարանջատել է ԱԱՀ վճարող համարվող և ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձանց հասկացությունները, և ըստ նշված տարանջատման, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ապրանքի

մատակարարում համարվող գործարքներ իրականացրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք 01.01.2013 թվականից հետո համարվում են ոչ թե ԱԱՀ վճարող, այլ ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը փոփոխության չի ենթարկվել, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ 01.01.2013 թվականից հետո «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը վերաբերում է բացառապես նույն օրենքի իմաստով ԱԱՀ վճարող համարվող անձանց:

Նման պայմաններում անդրադառնալով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքով օտարված գույքի օտարման պահի հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 01.01.2013 թվականից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետով նախատեսված գործարքների իրականացման դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մոտ ապրանքը հանձնելու պահը պետք է համարվի տվյալ գործարքով գույքը ձեռք բերող անձի՝ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահը, քանի որ 01.01.2013 թվականից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետով նախատեսված գործարքների իրականացման դեպքում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը կիրառելի չէ, իսկ ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձանց կողմից ապրանքը հանձնելու պահի վերաբերյալ որևէ այլ կարգավորում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ:

Ինչ վերաբերում է մինչև 01.01.2013 թվականը ծագած իրավահարաբերություններին, այդ թվում՝ նույն գործով քննարկման առարկա իրավահարաբերությանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքի հանձնման պահի վերաբերյալ ընդհանուր կանոնը պետք է կիրառվի նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ նախատեսված գործարքներով օտարվող գույքի առանձնահատկությունների հաշվառմամբ, և ըստ այդմ, որպես ապրանքը հանձնելու պահ, հետևաբար նաև՝ ֆիզիկական անձի մոտ հարկային պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) առաջացման պահ, պետք է դիտարկվի գույքը ձեռք բերող անձի՝ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահը:

Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է այն հանգամանքից, որ մինչև 01.01.2013 թվականը գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ապրանքը հանձնելու պահն օտարվող գույքը ձեռք բերողին փաստացի հանձնելու պահը դիտարկելու պարագայում հնարավոր են դեպքեր, երբ գույքի փաստացի հանձնման և ձեռք բերողի կողմից դրա նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահերը կարող են չհամընկնել: Այդպիսի դեպքերում հնարավոր է ստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի ուժով անձի մոտ կառաջանա հարկային պարտավորություն այն դեպքում, երբ գույքը փաստացի հանձնվել է ավելի վաղ, քան դրա նկատմամբ գրանցվել է ձեռքբերողի սեփականության իրավունքը, այլ կերպ ասած՝ անձի մոտ հարկային պարտավորությունը կառաջանա ավելի վաղ, քան օրենքով նախատեսված օտարումը: Նման պայմաններում առկա է անձի նկատմամբ հարկային օրենսդրությամբ նախատեսված տույժերի և տուգանքների անհարկի առաջադրման վտանգ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հաշվետու ժամանակաշրջանը, սահմանային իրավիճակներով պայմանավորված, վրա կհասնի ավելի վաղ, քան գույքի օտարումը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ, այնպես էլ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.12.2012 թվականի թիվ ՀՕ-240-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 01.01.2013 թվականին) 4-րդ հոդվածով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետում կատարված փոփոխություններից հետո գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի

հարկի մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1–ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետով նախատեսված գործարքն ապրանքի մատակարարում կարող է համարվել այն դեպքում, երբ, ի թիվս մյուս պայմանների, գույքն օտարող ֆիզիկական անձի՝ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման օրվա և գույքը ձեռք բերող անձի՝ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում մեկ տարին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «NISSAN X–TRAIL 2.5I» մակնիշի JNITANT3IZ0001631 նույնականացման համարով ավտոմեքենան 16.04.2008 թվականին հաշվառվել է Միեր Կակոյանի անվամբ: Միեր Կակոյանը «NISSAN X–TRAIL 2.5I» մակնիշի JNITANT3IZ0001631 նույնականացման համարով ավտոմեքենան վաճառել է 20.06.2012 թվականին: Միեր Կակոյանը 20.06.2012 թվականին ձեռք է բերել «VOLKSWAGEN PASSAT 2.8I» մակնիշի ավտոմեքենան, որը վաճառել է 29.06.2012 թվականին կնքված գործարքով:

Սույն գործով Դատարանը, հայցը բավարարելու և Տեսչության 16.12.2014 թվականի թիվ 1647 որոշումն անվավեր ճանաչելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ «NISSAN X–TRAIL 2.5I» մակնիշի ավտոմեքենան Միեր Կակոյանը ձեռք է բերել դեռևս 2008 թվականին, հետևաբար Միեր Կակոյանի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում չեն կատարվել նույն տեսակի գույքի (ավտոմեքենայի) երկու ձեռքբերում և երկու օտարում:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտել է, որ օրենքի իմաստով Միեր Կակոյանի կողմից իրականացված գործարքները չեն կարող համարվել ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ, իսկ Միեր Կակոյանն այդ հիմքով չի կարող համարվել ավելացված արժեքի հարկ վճարող:

Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Դատարանի եզրահանգումները, ՀՀ ֆինանսների նախարարության վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի վճիռը թողել անփոփոխ:

Մինչդեռ վերը նշված վերլուծությունների լույսի ներքո Վճարեկ դատարանը գտնում է, որ ստորագրած դատարանների պատճառաբանություններն անհիմն են, քանի որ «VOLKSWAGEN PASSAT 2.8I» մակնիշի ավտոմեքենայի առուվաճառքի գործարքը ԱԱՀ–ով հարկվող որակելու համար որևէ էական նշանակություն չունի այն հանգամանքը, թե երբ է ձեռք բերվել «NISSAN X–TRAIL 2.5I» մակնիշի ավտոմեքենան, որը 2012 թվականին առաջինն է օտարվել, ինչը հաշվի չի առնվել ստորագրած դատարանների կողմից:

Վճարեկ դատարանը գտնում է, որ Միեր Կակոյանի կողմից 29.06.2012 թվականին իրականացված ավտոմեքենայի օտարման գործարքն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով որպես ապրանքի մատակարարում որակելու, հետևաբար նաև որպես ԱԱՀ–ով հարկվող գործարք դիտարկելու համար Դատարանը պարտավոր էր պարզել՝ արդյո՞ք առկա են գործարքն ապրանքի մատակարարում դիտարկելու համար իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1–ին կետի երրորդ պարբերությամբ սահմանված բոլոր վավերապայմանները, թե՛ ոչ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա Վճարեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր են բողոք բերած անձի փաստարկները Վերաքննիչ դատարանի կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի սխալ կիրառության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23–րդ և 24–րդ հոդվածները Վերաքննիչ դատարանի կողմից կիրառած չլինելու վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկներին, ապա Վճարեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում ընդունվել է դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերող՝ նրանց համար ավելի բարենպաստ օրենք, և թե՛ դա նախատեսված է այդ օրենքով:

Սույն գործով Դատարանը, գտնելով, որ վիճելի գործարքն ապրանքի մատակարարում չէ, և նշված հիմքը բավարար համարելով Տեսչության 16.12.2014 թվականի թիվ 1647 որոշումն անվավեր ճանաչելու համար, վերջինին իրավաչափությունը հերքող կամ հաստատող մյուս հանգամանքները, այդ թվում՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածների կիրառելիության հարցը քննության առարկա չի դարձրել:

Վերաքննիչ դատարանը, առանց հաշվի առնելու Դատարանի կողմից թույլ տրված վերոգրյալ խախտումը, Դատարանի վճիռը հիմնավոր է համարել՝ իր պատճառաբանությունների հիմքում ևս դնելով բացառապես այն հանգամանքը, որ վիճելի գործարքն ապրանքի մատակարարում չի համարվում:

Շեռևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ վիճելի գործարքն ապրանքի մատակարարում համարվելու հանգամանքը սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո պարզելու, ինչպես նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու և վիճարկվող որոշման իրավաչափությունը օրենքով սահմանված կարգով գնահատելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.12.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/11054/05/13  
2016 թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/11054/05/13

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Բաբայան  
Ա. Աբովյան  
Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 26-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական  
եկամոտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի 11.05.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Հայֆուսկոգեներացիա»  
ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի (իրավանախորդ՝ ՀՀ ֆինանսների նա-  
խարարություն (այսուհետ՝ Նախարարություն)) Կոմիտեի ստուգումների կազմակերպման  
և դիտարկման վարչության (այսուհետ՝ Վարչություն) 27.09.2013 թվականի թիվ 1002942  
ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Վարչության  
27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան)  
19.10.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ Վարչության 27.09.2013 թվականի թիվ  
1002942 ստուգման ակտը ճանաչվել է անվավեր:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.03.2016 թվականի որոշմամբ վերակազմա-  
կերպման հիմքով Նախարարությունը փոխարինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեով:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.05.2016  
թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.10.2015 թվա-  
կանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. *Վերաքննիչ դատարանը խախտել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման՝ Ընկերության կողմից լիցենզիա ստանալու հայտ ներկայացնելը և պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը բավարար համարելով Ընկերության գործունեությունը լիցենզավորված համարելու համար այն պարագայում, երբ լիցենզավորող մարմինը դեռևս որոշում չէր կայացրել Ընկերությանը լիցենզիա տրամադրելու վերաբերյալ: Հետևաբար Ընկերությունն իրականացրել է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն և պետք է ենթարկվեր պատասխանատվության «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի հիմքով:

2. *Վերաքննիչ դատարանը խախտել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 42-րդ հոդվածները, «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը հաշվեգրման եղանակով եկամուտների և ծախսերի հաշվառում իրականացնելու պարտավորությունը կախվածության մեջ է դնում ոչ թե պայմանագրի պայմաններից կամ սակագրի սահմանված լինելու հանգամանքից, այլ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ եկամտի համար նախատեսված ծախսերը ճանաչելու պահից: Ավելին՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ պայմանագրով նախատեսված վճարումը կատարելու պայմաններն անխուսափելիորեն վրա էին հասնելու՝ հաշվի առնելով Ընկերության կողմից կատարված աշխատանքների և ներդրումների ծավալը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին էլեկտրաէներգիան առաքվել է ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում, հետևաբար այն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է «ապրանքի մատակարարում»: Այսինքն՝ Ընկերությունը 2011 թվականի ընթացքում արտադրել է առաքել է էլեկտրական էներգիա, որի դիմաց ստացվելիք գումարից ենթակա էր հաշվարկման ավելացված արժեքի հարկ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.05.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ «կայացնել նոր դատական ակտ»:

**2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքը գուրկ է իրավական հիմնավորվածությունից, բողոքում բերված փաստարկներն իրականությանը չեն համապատասխանում, իսկ վճռաբեկ բողոք ներկայացնելը կրում է ձևական բնույթ: Վճռաբեկ բողոքում նշված՝ Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ակտով Ընկերության նկատմամբ առաջադրված՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա գումարի չափը չի համապատասխանում իրականությանը:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

*Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.*

1. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 03.12.2008 թվականի թիվ 670Ա որոշմամբ Ընկերությանը «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կայանի կառուցման համար տրվել է «Էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի կառուցման» թիվ 0303 լիցենզիան, որը գործում է 03.12.2008 թվականից մինչև 07.10.2009 թվականը (**հատոր 1-ին, գ.թ.. 54-60**):

2. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 06.08.2010 թվականի թիվ 418Ա որոշմամբ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կայանի կառուցման համար Ըն-

կերտությանը տրամադրված թիվ 0303 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Ընկերության հայտը մերժվել է: Նույն որոշման համաձայն՝ նշված լիցենզիայի գործողության ժամկետը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.09.2009 թվականի թիվ 607U որոշմամբ երկարաձգվել էր մինչև 07.08.2010 թվականը, սակայն կայանի կառուցման աշխատանքները չեն ավարտվել (**հատոր 1–ին, գ.թ. 70–73**):

3. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 21.12.2011 թվականի թիվ 598U որոշմամբ Ընկերությանը 15 տարի ժամկետով տրամադրվել է Երևան քաղաքի Ավան վարչական շրջանում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության «Ինքնավար ջերմային էլեկտրակայան–1 (ԻՋԷԿ–1)» կայանում «Էլեկտրական էներգիայի (իզոլյացիայի) արտադրության» թիվ 0442 լիցենզիան (**հատոր 1–ին, գ.թ. 61–68**):

4. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 21.12.2011 թվականին ընդունված և 21.01.2012 թվականին ուժի մեջ մտած թիվ 602U որոշման 1–ին կետի համաձայն՝ Ընկերության էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության «Ինքնավար ջերմային էլեկտրակայան–1 (ԻՋԷԿ–1)» կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանվել է 36,369 ՀՀ դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 43,643 ՀՀ դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը (**հատոր 1–ին, գ.թ. 24**):

5. 21.12.2009 թվականին Ընկերության (Կառուցող), «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ–ի (Բաշխող) և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ–ի (Ծառայություններ մատուցող) միջև կնքված «Կարգաբերման–գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման» թիվ ENA–09–27 պայմանագրի 1.1–րդ կետի համաձայն՝ Կառուցողը կարգաբերման–գործարկման աշխատանքների կատարման ընթացքում արտադրվող էլեկտրաէներգիան առաքում է Բաշխողին, Ծառայություններ մատուցողը հաշվառում է այն, իսկ Բաշխողը վճարում է առաքված էլեկտրաէներգիայի համար պայմանագրով սահմանված կարգով: Նույն պայմանագրի 3.1–րդ կետի համաձայն՝ Բաշխողը վճարում է կարգաբերման–գործարկման աշխատանքների ընթացքում ստացված էլեկտրաէներգիայի համար պայմանագրի 6.1–րդ կետում նշված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումների պատճենները Կառուցողի կողմից ներկայացնելուց և էլեկտրաէներգիայի (իզոլյացիայի) առուվաճառքի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև առաջին հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 25–ը: Նույն պայմանագրի 6.1–րդ կետի համաձայն՝ Կառուցողը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրաէներգիայի (իզոլյացիայի) արտադրության լիցենզիայի որոշման պատճենը և առաքված էլեկտրաէներգիայի (իզոլյացիայի) համար սակագնի սահմանման մասին որոշման պատճենը ներկայացնում է Բաշխողին (**հատոր 1–ին, գ.թ. 14–19**):

6. Ընկերության (Վաճառող) և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ–ի (Գնորդ) միջև 25.01.2012 թվականին կնքված «Էլեկտրաէներգիայի առուվաճառքի (...)» թիվ ENA–12–01 պայմանագրի 2–րդ կետի համաձայն՝ Վաճառողը վաճառում, իսկ Գնորդն ամբողջությամբ գնում է Վաճառողի առաքած էլեկտրաէներգիան՝ նույն պայմանագրով սահմանված կարգով (**հատոր 1–ին, գ.թ. 25–35**):

7. Վարչության կողմից 27.09.2013 թվականին կազմված թիվ 1002942 ակտի համաձայն՝ Ընկերությունում կատարված ստուգման արդյունքում պարզվել է հետևյալը.

ա) Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտի 1–ին կետի համաձայն՝ Ընկերությունը խախտել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7–րդ հոդվածի և 42–րդ հոդվածի պահանջները: Այսպես, ըստ ստուգման ակտի՝ Ընկերությունը 2012 թվականի նոյեմբերի 30–ին 2012 թվականի հունվարի 1–ի մատակարարման ամսաթվով էլեկտրոնային եղանակով դուրս է գրել 406.913.160 ՀՀ դրամ (այդ թվում ավելացված արժեքի հարկ՝ 67.818.860 ՀՀ դրամ) գումարով թիվ Ա1581308449 հարկային հաշիվը, որը վերաբերում է 2009 թվականի դեկտեմբերից մինչև 2011 թվականի դեկտեմբերը ներառյալ առաքված էլեկտրաէներգիայի ծավալներին, որոնց գումարներն ամբողջությամբ ցույց է տվել 2012 թվականի հունվար ամսվա ավելացված արժեքի հարկի հաշվարկով: Վերը նշված հաշվով 2011 թվականին վերաբերող առաքված էլեկտրաէներգիայի ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 215.292.636 ՀՀ դրամ (այդ թվում ավելացված արժեքի հարկ՝ 35.882.106 ՀՀ դրամ): Այսինքն՝ Ընկերությունը 2011 թվականի իրացման շրջանառությունը

պակաս է ցույց տվել 179.410.530 ՀՀ դրամով, որին վերաբերող համախառն եկամտից նվազեցումները կազմել են 190.449.995 ՀՀ դրամ, իսկ 2011 թվականի 1 տոկոս նվազագույն շահութահարկը պակաս է հաշվարկել 1.735.175 ՀՀ դրամով: Բացի այդ, ստուգման ակտով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն, հաշվարկվել է նաև տույժ՝ 642.849 ՀՀ դրամի չափով՝ հաշվի առնելով Ընկերության անձնական հաշվի քարտում առկա գերավճարը: Այսպիսով, շահութահարկի գծով Ընկերությանը ստուգման ակտով առաջադրված լրացուցիչ վճարման ենթակա գումարի չափը կազմել է 2.378.024 ՀՀ դրամ:

բ) Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտի 5-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը խախտել է «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Այսպես, Ընկերությունը 2011 թվականի իրացման շրջանառությունը 179.410.530 ՀՀ դրամով պակաս ցույց տալու հետևանքով 2011 թվականի հունվարից դեկտեմբեր ամիսը ներառյալ հաշվարկել է ավելացված արժեքի հարկի պակաս գումարներ՝ ընդամենը 35.882.106 ՀՀ դրամի չափով, այդ գումարն Ընկերությունը ցույց է տվել 2012 թվականի հունվարին, և այն ենթակա է նվազեցման: Համաձայն «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի՝ ավելացված արժեքի հարկի պակաս ցույց տրված գումարները (35.882.106 ՀՀ դրամ) 50 տոկոս տուգանքի (17.941.053 ՀՀ դրամ) հետ միասին՝ ընդամենը 53.823.159 ՀՀ դրամի չափով, ենթակա են գանձման պետական բյուջե: Բացի այդ, ստուգման ակտով, համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի, հաշվարկվել է նաև տուգանք նվազեցված հարկի գումարի 10 տոկոսի չափով, ընդամենը՝ 3.588.211 ՀՀ դրամ, իսկ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջները չեն կիրառվել Ընկերության անձնական հաշվի քարտում առկա գերավճարների պատճառով: Այսպիսով, ավելացված արժեքի հարկի գծով Ընկերությանը ստուգման ակտով առաջադրված լրացուցիչ վճարման ենթակա գումարի չափը կազմել է 57.411.370 ՀՀ դրամ, որից ենթակա է պակասեցման 35.882.106 ՀՀ դրամը:

գ) Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտի 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը 2011 թվականին առանց համապատասխան լիցենզիայի արտադրել և առաքել է էլեկտրաէներգիա, որի համար, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն, Ընկերությունից ենթակա է բռնագանձման տուգանք՝ տվյալ գործունեության համար սահմանված պետական տուրքի տասնապատիկի չափով (1.000.000 ՀՀ դրամ), ինչպես նաև օրենքով սահմանված պետական տուրքի գումարը (100.000 ՀՀ դրամ)՝ որպես վնաս: Այսպիսով, առանց համապատասխան լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար Ընկերությանը ստուգման ակտով առաջադրված գանձման ենթակա գումարի չափը կազմել է 1.100.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 48-52**):

#### **4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար առաջացող պատասխանատվության առանձնահատկությունների, ինչպես նաև էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանի կարգաբերման-գործարկման աշխատանքների արդյունքում շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորությունների առաջացման հիմքերի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճարելի բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

- *արդյո՞ք անձը ենթակա է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված պարտասխանարվության, եթե էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանի կարգաբերման-գործարկման աշխատանքների կարգաբերումը:*



- ման ընթացքում արտադրել և բաշխման ցանց է առաքել էլեկտրական էներգիա՝ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիայի գործողության ժամկետն ավարտված լինելու պայմաններում,
- ինչ պայմանների առկայության դեպքում է ծագում էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանի կարգաբերման-գործարկման աշխատանքների արդյունքում արտադրված էլեկտրաէներգիան բաշխման ցանց առաքելուն ուղղված գործարքի արժեքից շահութահարկ և ավելացված արժեքի հարկ հաշվարկելու և վճարելու՝ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի հարկային պարտավորությունը:

**1. Վճարել բողոքն առաջին հիմքով անհիմն է հեղինակ պարճառաքանությանը.**

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով: Առանց լիցենզիայի նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն և լիցենզավորման համար գանձվող պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ներկայումս գործող խմբագրության համաձայն՝ (...) օրենքով սահմանված լիցենզավորման (...) ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի (...) իրականացնելու (...) դեպքերում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման (...) համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամից: (...) Նույն հոդվածի առաջին (եթե իրականացվող գործունեությունն օրենքով ենթակա է լիցենզավորման) և երկրորդ պարբերություններում նշված խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտումներ կատարած անձանցից գանձվում է նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում (...):

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ 26-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված (չհաշվառված) կամ հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված կամ առանց լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար օրենսդրությամբ թույլատրված վայրերից դուրս այդ գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ձեռնարկատիրական կամ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն)՝ գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով (...): Նույն հոդվածով նախատեսված տուգանքն ապօրինի գործունեություն իրականացնողների համար ապօրինի գործունեության մասով վերջնական հարկային պարտավորություն է (...):

Օրենսդիրը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանել է պատասխանատվություն առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար: Նշված պատասխանատվությունն առաջանում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) ֆիզիկական և իրավաբանական անձինք զբաղվում են գործունեության որոշակի տեսակով, որի իրականացման համար օրենքով պահանջվում է լիցենզիա,
- 2) ֆիզիկական և իրավաբանական անձինք այդ գործունեությունն իրականացնում են առանց համապատասխան լիցենզիայի առկայության:

Ընդ որում, վերը նշված իրավախախտման համար օրենսդիրը որպես պատասխանատվության միջոց է ընտրել տուգանքը, որի չափը պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի տրամադրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափով և կազմում է այդ դրույքաչափի տասնապատիկը: Բացի այդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի ուժով առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար ֆիզիկական և իրավա-

բանական անձանցից ենթակա է բռնազանձման նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարը՝ որպես վնասի հատուցում:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ 26–րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ իրավական համակարգում մինչև 01.01.2012 թվականը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելը դիտարկվել է որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն: Նշված իրավախախտման համար օրենսդիրը որպես պատասխանատվության միջոց էր ընտրել տուգանքը, որի չափը պայմանավորված էր լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու արդյունքում ստացված և հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառությունով (համախառն եկամտով) և կազմում էր այդ իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մինչև 01.01.2012 թվականը գործող հարկային օրենսդրության տեսանկյունից վերոգրյալ պատասխանատվության միջոցն առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացրած անձի համար այդ գործունեության մասով համարվել է վերջնական հարկային պարտավորություն: Այսինքն՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացրած անձին «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ 26–րդ հոդվածի հիմքով պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու արդյունքում ստացված և հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով տուգանքի նշանակման դեպքում տվյալ անձն ազատվել է այդ գործունեության համար առաջացող մյուս բոլոր հարկային պարտավորություններից:

Փաստորեն, առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ մինչև 01.01.2012 թվականը գործող հարկային օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումները հանգում են հետևյալին.

1. առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությունը հանդիսացել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն,
2. առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար որպես պատասխանատվության միջոց ենթակա էր կիրառման տուգանքը,
3. նշված պատասխանատվության միջոցի՝ տուգանքի չափը կազմում էր լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու արդյունքում ստացված և հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսը,
4. առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար անձի նկատմամբ վերը նշված տուգանքի կիրառումը համարվել է վերջնական հարկային պարտավորություն՝ ապօրինի գործունեության մասով. այդ դեպքում լիցենզավորման ենթակա համապատասխան գործունեության համար որևէ այլ հարկային պարտավորություն չէր կարող առաջանալ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող և ներկայումս գործող իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ ի տարբերություն ներկայումս գործող հարկային օրենսդրության՝ մինչև 01.01.2012 թվականը գործող հարկային օրենսդրության տեսանկյունից առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությունը հանդիսացել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն և այդպիսի իրավախախտում կատարած անձի նկատմամբ մինչև 01.01.2012 թվականը գործող օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցի (իրացման շրջանառության 50 տոկոսի չափով տուգանք) կիրառումն այդ գործունեության մասով համարվել է վերջնական հարկային պարտավորություն: Մինչդեռ ներկայումս գործող հարկային օրենսդրության համաձայն՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար նախատեսված պատասխանատվության միջոցի (լիցենզիայի համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով տուգանք և վնասի հատուցում՝ պետական տուրքի գումարի

չափով) կիրառումը չի համարվում վերջնական հարկային պարտավորություն և անձին չի ազատում լիցենզավորման ենթակա գործունեության համար առաջացող մյուս բոլոր հարկային պարտավորություններից:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, նույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա (...) սպառողների փոխհարաբերությունները:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանձնաժողովը՝ (ա) սահմանում է էլեկտրական, ջերմային էներգիայի (...) կարգավորվող սակագները (...), (բ) լիցենզավորում է էներգետիկայի բնագավառում իրականացվող գործունեությունները (...):

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում որոշումն ընդունվելուց երեսուն օր հետո (...):

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության) (...) գործունեությունները կարող են իրականացվել միայն հանձնաժողովի կողմից տրված համապատասխան գործունեության լիցենզիաների առկայության դեպքում: Էլեկտրական և ջերմային էներգիայի (...) առուվաճառք իրականացնել (վաճառքի նպատակով գնել) կարող են միայն նույն օրենքին համապատասխան գործունեության լիցենզիա ունեցող անձինք՝ լիցենզիայի պայմանների և շուկայի կանոնների համաձայն:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործունեության լիցենզիա ստանալու վերաբերյալ հայտի քննարկման և գործունեության լիցենզիայի տրման կարգն ու պայմանները սահմանում է հանձնաժողովը:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ գործունեության լիցենզիայի պայմանները սահմանում է հանձնաժողովը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձին տրվում է իրավունք՝ լիցենզիայի պայմանների համաձայն կառուցել արտադրող էլեկտրական և (կամ) ջերմային (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայաններ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և շուկայի կանոններով դա վաճառելու իրավունք:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է հանրային ծառայությունները կարգավորող մարմնի ստեղծման և գործունեության կարգը:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի իմաստով հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտը (...) իր մեջ ներառում է (ա) էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման (...) համակարգերը (...):

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (...):

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 30.01.2002 թվականի թիվ 4 որոշմամբ (ուժի մեջ է մտել 14.03.2002 թվականին, ուժը կորցրել է 02.01.2014 թվականին) հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման» կարգի 3.18-րդ կետի համաձայն՝ էլեկտրական կամ ջերմային (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայանների կառուցման Լիցենզիա ունեցող Անձը մինչև Լիցեն-

զիայի գործողության ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ: (...) Կարգաբերման-գործարկման աշխատանքների արդյունքում բաշխման ցանց առաքված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգվում են համապատասխան պայմանագրով, որի օրինակելի ձևը կամ պարտադիր պայմանները սահմանում է Հանձնաժողովը, և որը ենթակա է գրանցման Հանձնաժողովում:

Սույն կարգի 3.20-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) գործունեությունների Լիցենզիաներ տրամադրելու և էլեկտրական, ջերմային էներգիայի արտադրության, հաղորդման (փոխադրման), բաշխման (...) սակագնի սահմանման վերաբերյալ Որոշումներն ընդունում է միաժամանակ:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, էլեկտրական և ջերմային էներգիա սպառողների, ինչպես նաև պետական իշխանության մարմինների փոխհարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն՝ էներգետիկայի բնագավառում որոշակի գործունեություն, մասնավորապես՝ էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրությունը (ներառյալ՝ դրանց համակցված արտադրություն) կամ էլեկտրական և ջերմային էներգիայի առուվաճառք, կարող է իրականացվել բացառապես համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում: Ընդ որում, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածների, ինչպես նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթների ուժով էներգետիկայի բնագավառում իրականացվող գործունեությունը լիցենզավորելու, այդ գործունեության համար լիցենզիա ստանալու վերաբերյալ հայտի քննարկման և լիցենզիայի տրման կարգն ու պայմանները, գործունեության լիցենզիայի պայմանները սահմանելու իրավասությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության) գործունեությունը կարող է իրականացվել միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում: Այսինքն՝ էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրությունը (ներառյալ՝ դրանց համակցված արտադրությունը) օրենքի ուժով համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն: Հետևաբար տնտեսական գործունեության այդ տեսակով առանց համապատասխան լիցենզիայի առկայության զբաղվելու դեպքում առաջանում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված պատասխանատվություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածներով օրենսդիրը սահմանել էր էներգետիկայի բնագավառում տրվող լիցենզիաների հետևյալ տեսակները.

1) արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա, որով անձին տրվում էր էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայաններ կառուցելու իրավունք,

2) էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա, որով անձին տրվում էր էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու, ինչպես նաև շուկայի կանոններով այն վաճառելու իրավունք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 30.01.2002 թվականի թիվ 4 որոշմամբ (ուժը կորցրել է 02.01.2014 թվականին) հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման» կարգի՝ սույն որոշմամբ վկայակոչված համապատասխան իրավադրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրության համա-

ծայն՝ էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և վաճառելու իրավունքով օժտված էր միայն էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձը, իսկ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձն օժտված չէր նման իրավունքով:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ էլեկտրական կամ ջերմային (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայանների կարգաբերման–գործարկման աշխատանքների ընթացքում ևս, ըստ էության, արտադրվում է էլեկտրական էներգիա, որն առաքվում է բաշխման ցանց: Սակայն կարգաբերման–գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրությունը և առաքումն իրավահարաբերության ծագման պահին կարգավորվում էր հատուկ իրավական ռեժիմով, որը հանգում է հետևյալին.

1) էլեկտրական կամ ջերմային (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայանների կարգաբերման–գործարկման աշխատանքներ կարող էր կատարել միայն արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձը,

2) էլեկտրական կամ ջերմային (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայանների կարգաբերման–գործարկման աշխատանքները կատարվում են մինչև արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը,

3) կարգաբերման–գործարկման աշխատանքների արդյունքում բաշխման ցանց է առաքվում էլեկտրաէներգիա, որի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգելու նպատակով կնքվում է հատուկ պայմանագիր:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից մինչև այդ լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը կարգաբերման–գործարկման աշխատանքների կատարման ընթացքում էլեկտրաէներգիա արտադրելու և բաշխման ցանց առաքելու դեպքում անձը չի կարող ենթարկվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածով սահմանված պատասխանատվության՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար, քանի որ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիայի առկայությունը բավարար և անհրաժեշտ պայման է մինչև այդ լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը կարգաբերման–գործարկման աշխատանքների կատարման ընթացքում էլեկտրաէներգիա արտադրելու և բաշխման ցանց առաքելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտի 14–րդ կետով Ընկերությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի հիմքով տուգանվել է 1.000.000 ՀՀ դրամով այն բանի համար, որ վերջինս 2011 թվականի ընթացքում առանց լիցենզիայի իրականացրել է լիցենզավորման ենթակա գործունեություն՝ արտադրել և առաքել է էլեկտրաէներգիա, ինչպես նաև Ընկերությունից գանձվել է 100.000 ՀՀ դրամ վնասի հատուցում լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով:

Դատարանը, անդրադառնալով Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտով առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար Ընկերության նկատմամբ առաջադրված տուգանքի և գանձման ենթակա վնասի հատուցման իրավաչափությանը, գտել է, որ վիճարկվող վարչական ակտն այդ մասով անվավեր է:

Վերաքննիչ դատարանը ևս գտել է, որ վիճարկվող վարչական ակտը՝ վերը նշված մասով, անվավեր է, քանի որ էլեկտրաէներգիայի մատակարարումը կատարվել է կարգաբերման–գործարկման աշխատանքների շրջանակներում, որի համար էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա ունենալու անհրաժեշտությունը բացակայում է:

Մինչդեռ վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների նշված եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2011 թվականի ընթացքում Ընկերությունը «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կայանում արտադրել է էլեկտրական էներգիա և այն առաքել է բաշխիչ ցանց՝ կարգաբերման-գործարկման աշխատանքների շրջանակներում՝ 21.12.2009 թվականի «Կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման» թիվ ENA-09-27 պայմանագրի հիման վրա: Մինչդեռ սույն գործի փաստական կողմի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կայանի կառուցման համար Ընկերությանը տրված «էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի կառուցման» թիվ 0303 լիցենզիայի գործողության ժամկետն ավարտվել է 07.08.2010 թվականին: Այսինքն՝ Ընկերությունը 2011 թվականին չի ունեցել արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա, որը վերջինիս իրավական հնարավորություն կտար կարգաբերման-գործարկման աշխատանքների կատարման ընթացքում արտադրելու և բաշխման ցանց առաքելու էլեկտրական էներգիա:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 2011 թվականի ընթացքում Ընկերությունը «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կայանում կատարված կարգաբերման-գործարկման աշխատանքների շրջանակներում արտադրել է էլեկտրաէներգիա և այն առաքել է բաշխիչ ցանց՝ առանց այդ գործունեության համար օրենսդրությամբ պահանջվող համապատասխան լիցենզիայի առկայության: Փաստորեն, Ընկերությունը ենթակա է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար օրենքով սահմանված պատասխանատվության, քանի որ վերջինս առանց համապատասխան լիցենզիայի առկայության զբաղվել է գործունեության որոշակի տեսակով, որի իրականացման համար օրենքով պահանջվում է լիցենզիա, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Մինևս այն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Ընկերությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով ենթարկվել է պատասխանատվության այն բանի համար, որ վերջինս առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությունը (էլեկտրաէներգիայի արտադրություն և առաքում) իրականացրել է 2011 թվականի ընթացքում: Մինչդեռ սույն գործով վիճարկվող վարչական ակտով առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը ենթարկվել է պատասխանատվության «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ոչ թե իրավախախտումը թույլ տալու պահին գործող, այլ 01.01.2012 թվականից հետո գործող իրավակարգավորումների կիրառմամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության առանձնահատկությունների վերաբերյալ վերը նշված օրենսդրական փոփոխությունները կատարվել են ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 07.12.2011 թվականի թիվ ՀՕ-308-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 01.01.2012 թվականին:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների (...) գործողությունը տա-

րաձվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե նույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ (...):

ՀՀ սահմանադրական դատարանը, 29.11.2011 թվականի թիվ ՄԴՌ-1000 որոշմամբ անդրադառնալով ժամանակի մեջ իրավական ակտի գործողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը: Միաժամանակ այս նորմը սահմանում է այդ հայեցողությունն իրացնելու ընթացակարգը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը, իրացնելով իրեն Սահմանադրությամբ տրված հայեցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու նպատակահարմարության դեպքում տվյալ ակտում ամրագրում է այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ: Նշված հայեցողությունն իրացնելու այս ընթացակարգն ինքնանպատակ չէ և տրամաբանորեն բխում է Սահմանադրությամբ՝ իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնակարգման ընդհանուր տրամաբանությունից:

Վերոգրյալ սահմանադրաիրավական և օրենսդրական իրավակարգավորումները, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները համադրելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 07.12.2011 թվականի թիվ ՀՕ-308-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում կատարված այդ փոփոխությունները՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության առանձնահատկությունների վերաբերյալ, չեն կարող ունենալ հետադարձ ուժ. առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության առանձնահատկությունների վերաբերյալ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 07.12.2011 թվականի թիվ ՀՕ-308-Ն ՀՀ օրենքի իրավակարգավորումները չեն կարող տարածվել այդ օրենքի ուժի մեջ մտնելուց՝ 01.01.2012 թվականից առաջ ծագած հասարակական հարաբերությունների վրա: Այսինքն՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության առանձնահատկությունների վերաբերյալ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 07.12.2011 թվականի թիվ ՀՕ-308-Ն ՀՀ օրենքի իրավակարգավորումները չեն կարող կիրառվել այդ օրենքի ուժի մեջ մտնելուց՝ 01.01.2012 թվականից առաջ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար անձին պատասխանատվության ենթարկելու դեպքում:

Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության վերաբերյալ սահմանադրաիրավական այն սկզբունքը, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավական ակտերը չեն գործում հետադարձ ուժով, իսկ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը թողնված է այդ իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանը, որն իրականացվում է տվյալ ակտում այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի ամրագրման ձևով: Մինչդեռ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխու-

թյուններ և լրացում կատարելու մասին» 07.12.2011 թվականի թիվ ՀՕ-308-Ն ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 01.01.2012 թվականին, չի նախատեսում առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության մասով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում կատարված փոփոխությունների հետադարձ ուժի վերաբերյալ որևէ դրույթ:

Փաստորեն, տվյալ դեպքում Ընկերությունը ենթակա էր պատասխանատվության 2011 թվականին գործող, այլ ոչ թե վիճարկվող վարչական ակտի ընդունման պահին գործող օրենսդրության հիման վրա, քանի որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Ընկերությանը վերագրվող հակաիրավական արարքը՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության (էլեկտրաէներգիայի արտադրություն և առաքում) իրականացումը, կատարվել է 2011 թվականին: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ընկերությանն առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության համար պատասխանատվության ենթարկելիս պետք է կիրառվեին «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ 26-րդ հոդվածի իրավակարգավորումները, որոնց ուժով Ընկերության նկատմամբ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար որպես պատասխանատվության միջոց ենթակա էր նշանակման տուգանք՝ այդ գործունեությամբ զբաղվելու արդյունքում ստացված և հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով, այլ ոչ թե լիցենզիայի տրամադրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ Ընկերության նկատմամբ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար 1.000.000 ՀՀ դրամ տուգանք, ինչպես նաև 100.000 ՀՀ դրամ վնասի հատուցման գումար առաջադրելու մասով (Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտի 14-րդ կետ), ընդունվել է օրենքի խախտմամբ: Վարչական մարմինը սխալմամբ կիրառել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ վիճարկվող վարչական ակտի ընդունման պահին գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումները, այնինչ պետք է կիրառեր իրավախախտումը թույլ տալու պահին գործող՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումները:

## 2. Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պարճառարանությամբ.

ա) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը հարկ վճարողների կողմից նույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Նույն օրենքի իմաստով՝ (ա) եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եկամուտների թվին են դասվում, մասնավորապես՝ (ա) ապրանքների, արտադրանքի (...) իրացումից ստացվող հասույթը (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող օբյեկտը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով:



Հաշվեգրման եղանակով հաշվառման դեպքում հարկատուներն և ծախսերի հաշվառումն իրականացնում է, համապատասխանաբար ելնելով հարկատուի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվառելիս հարկատուն հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները՝ (ա) եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է հարկատուին անվերապահ վճարման (հատուցման), կամ հարկատուն կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս (...):

Վերը նշված իրավանքների վերլուծությունից հետևում է, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է: Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի, և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը: Օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում սահմանել է, որ նշված օրենքի իմաստով եկամուտը հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումն է, որը հանգեցնում է հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը՝ այդ եկամուտների շարքում նախատեսելով նաև հարկատուի կողմից իրացվող ապրանքներից կամ արտադրանքից ստացվող հասույթը, որը հանգեցնում է նրա սեփական կապիտալի ավելացմանը:

Վճարել նատարանը փաստում է, որ հարկատուն շահութահարկի գծով հարկվող շահույթը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվառումը պետք է իրականացնի հաշվեգրման եղանակով՝ ելնելով այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից: Հետևաբար հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվառելու հարկատուի պարտավորությունն առաջանում է ոչ թե եկամտի փաստացի ստացման, այլ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու պահից: Օրենսդիրը սահմանել է նաև հարկվող շահույթը որոշելիս եկամտի ստացման իրավունքը ձեռք բերելու պահը: Մասնավորապես՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի (ա) կետի համաձայն՝ եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված հետևյալ դեպքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1) համապատասխան գումարն անվերապահորեն ենթակա է վճարման (հատուցման) հարկատուին,

2) հարկատուն կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները (նույնիսկ համապատասխան գումարի ստացման պահը հետաձգված լինելու կամ վճարումները մաս-մաս իրականացվելու դեպքերում):

Վճարել նատարանը փաստում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և վաճառելու իրավունքով օժտված էր միայն էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձը, իսկ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձն օժտված չէր նման իրավունքով: Սակայն, մյուս կողմից, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 30.01.2002 թվականի թիվ 4 որոշմամբ (ուժը կորցրել է 02.01.2014 թվականին) հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման» կարգով սահմանված էր, որ էլեկտրական կամ ջերմային (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայանների կառուցման լիցենզիա ունեցող անձը մինչև այդ լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ, որոնց արդյունքում բաշխման ցանց առաքված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգվում են համապատասխան

պայմանագրով: Այսինքն՝ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից մինչև լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը կատարվող կարգաբերման-գործարկման աշխատանքների արդյունքում բաշխման ցանց է առաքվում էլեկտրաէներգիա. այդ էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգելու նպատակով կնքվում է համապատասխան պայմանագիր, որի օրինակելի ձևը կամ պարտադիր պայմանները սահմանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրի օրինակելի ձևը հաստատվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 22.04.2005 թվականի թիվ 43-Ն որոշմամբ, որի համաձայն՝ այդ պայմանագիրն ունի, ի թիվ այլևի, հետևյալ պայմանները. Կառուցողը կարգաբերման-գործարկման աշխատանքների կատարման ընթացքում արտադրվող էլեկտրաէներգիան առաքում է Բաշխողին, իսկ Բաշխողը վճարում է առաքված էլեկտրաէներգիայի համար պայմանագրով սահմանված կարգով, այսինքն՝ էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի և առաքված էլեկտրաէներգիայի (հզորության) համար սակագնի սահմանման մասին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումների պատճենները Կառուցողի կողմից ներկայացնելուց և էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև առաջին հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 25-ը:

Այսպիսով, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից մինչև լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը կատարվող կարգաբերման-գործարկման աշխատանքների արդյունքում բաշխման ցանց է առաքվում էլեկտրաէներգիա, որի դիմաց եկամուտ ստանալու իրավունքն արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձը ձեռք է բերում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայան կառուցելու լիցենզիա ունեցող անձին տրամադրվել է էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա,
- 2) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանվել է տվյալ էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը,
- 3) կնքվել է տվյալ էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանից արտադրվող էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագիր, և այն մտել է ուժի մեջ:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայան կառուցելու լիցենզիա ունեցող անձը՝ որպես հարկատու, էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանի կարգաբերման-գործարկման աշխատանքների արդյունքում բաշխման ցանց առաքված էլեկտրաէներգիայի դիմաց «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամտի ստացման իրավունք է ձեռք բերում վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում, քանի որ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով վճարման ենթակա գումարն անվերապահորեն հատուցման ենթակա է դառնում միայն այդ պայմանների առկայության պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

բ) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (...) անտուրակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը) (...):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ (1) ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով (...), (3) անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառումը՝ նույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող անձանց կողմից ապրանքների անհատույց հատկացում կամ ծառայությունների անհատույց մատուցում տվյալ անձանց կամ այլ անձանց կամ նրանց ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում՝ տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող գներից էականորեն ցածր գներով (...):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (հարկման բազան) որոշվում է հետևյալ կարգով. (1) ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում (...) ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ (...)՝ առանց ԱԱՀ-ի, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում (...), (6) ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման (...) դեպքում (...) հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ նույն օրենքին համապատասխան որոշվող մեծության (...), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը (...):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարողների կողմից հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառման, ինչպես նաև դրա հետ կապված հարկային պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) ծագման պահ է համարվում այն պահը, երբ տեղի է ունեցել ներքոհիշյալ դեպքերից որևէ մեկը՝ (1) ապրանքները առաքվել կամ հանձնվել են գնորդներին կամ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին (...):

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավելացված արժեքի հարկի՝ որպես անուղղակի հարկի հարկվող օբյեկտն ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից իրականացվող օրենքով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքն է (շրջանառությունը): Ընդ որում, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով ավելացված արժեքի հարկով հարկվում են, ի թիվս այլնի, հետևյալ գործարքները (գործառնությունները).

1) ապրանքների մատակարարումը, այսինքն՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելուն ուղղված գործարքը,

2) անհատույց սպառումը, այսինքն՝ ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից ապրանքների անհատույց հատկացմանը կամ ծառայությունների անհատույց մատուցմանն ուղղված գործարքը:

Օրենսդիրը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանել է ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը (հարկման բազան) որոշելու կարգը՝ ըստ համապատասխան գործարքների (գործառնությունների), որի համաձայն՝

1) ապրանքների մատակարարման դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում այդ գործարքի արժեքը դրամական արտահայտությամբ, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում՝ առանց ավելացված արժեքի հարկի,

2) ապրանքների անհատույց մատակարարման դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ օրենքին համապատասխան որոշվող մեծության, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը:

Ընդ որում, օրենսդիրը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածում հատուկ կարգավորման է ենթարկել ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց սպառման գործարքների դեպքում ավելացված արժեքի հարկի գծով ավելացված արժեքի հարկ վճարողի հարկային պարտավորության ծագման հետ կապված հարաբերությունները՝ ամրագրելով, որ այդ դեպքում ավելացված արժեքի հարկի գծով հարկ վճարողի հարկային պարտավորությունը ծագում է այն պահին, երբ, ի թիվ այլնի, ապրանքներն առաքվել կամ հանձնվել են գնորդներին, կամ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը, որով կողմն իր պարտականությունների կատարման համար պետք է վճար կամ այլ հանդիպական կատարում ստանա, հատուցելի է, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անհատույց է ճանաչվում այն պայմանագիրը, որով մի կողմը պարտավորվում է որևէ բան տրամադրել մյուս կողմին՝ առանց նրանից վճար կամ այլ հանդիպական կատարում ստանալու:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված վերոգրյալ կանոնները համադրելով ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 30.01.2002 թվականի թիվ 4 որոշմամբ (ուժը կորցրել է 02.01.2014 թվականին) հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման» կարգի վկայակոչված իրավադրոյթների, ինչպես նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 22.04.2005 թվականի թիվ 43-Ն որոշմամբ հաստատված կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրի օրինակելի ձևի հետ՝ Վճարեկ դատարանը գտնում է, որ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագիրը հատուցելի գործարք է: Այսպես, քննարկվող պայմանագրով Կառուցողը կարգաբերման-գործարկման աշխատանքների կատարման ընթացքում արտադրվող էլեկտրաէներգիան առաքում է Բաշխողին, իսկ Բաշխողը վճարում է առաքված էլեկտրաէներգիայի համար պայմանագրով սահմանված կարգով: Այսինքն՝ այդ պայմանագրով Բաշխողը Կառուցողի՝ էլեկտրաէներգիա առաքելու պարտավորության կատարման դիմաց կրում է այդ էլեկտրաէներգիայի համար վճարելու հանդիպական պարտավորություն: Այլ կերպ ասած՝ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով Կառուցողն առաքված էլեկտրաէներգիայի դիմաց Բաշխողից համապատասխան վճար ստանալու իրավունք ունի:

Փաստորեն, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագիրը հատուցելի գործարք է, որը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է ապրանքների մատակարարման գործարք. այն ուղղված է որոշակի արտադրանքի (էլեկտրական էներգիա) նկատմամբ Կառուցողի սեփականության իրավունքը որոշակի հատուցման դիմաց այլ անձի՝ Բաշխողին փոխանցելուն: Այսինքն՝ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագիրը չի կարող համարվել ապրանքների անհատույց մատակարարման (անհատույց սպառման) գործարք՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով: Հետևաբար «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի՝ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց սպառման գործարքների դեպքում ավելացված արժեքի հարկի գծով հարկ վճարողի հարկային պարտավորության ծագման պահին հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավադրոյթները տվյալ պայմանագրի նկատմամբ կիրառելի չեն:

Անփոփոխելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճարեկ դատարանը գտնում է, որ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող

Էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրի՝ որպես ապրանքների մատակարարման գործարքի համար արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի՝ ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ հնարավոր է որոշել ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը (հարկման բազան), այսինքն՝ այդ գործարքի արժեքը դրամական արտահայտությամբ, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում: Իսկ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով առաքվող էլեկտրաէներգիայի դիմաց վճարման ենթակա կոնկրետ գումարի չափը կարող է պարզ դառնալ միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայան կառուցելու լիցենզիա ունեցող անձին տրամադրվել է էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա,

2) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանվել է տվյալ էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը,

3) կնքվել է տվյալ էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայանից արտադրվող էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագիր, և այն մտել է ուժի մեջ:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի արտադրության կայան կառուցելու լիցենզիա ունեցող և ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անձը կարող է և պարտավոր է կատարել ավելացված արժեքի հարկի հաշվարկներ և վճարել ավելացված արժեքի հարկ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում, քանի որ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրով ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը, այսինքն՝ այդ գործարքի արժեքը դրամական արտահայտությամբ, որոշելի է դառնում միայն այդ պայմանների առկայության դեպքում:

*Անդրադառնալով սույն գործով վիճարկվող վարչական ակտի՝ Ընկերության նկատմամբ շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասերի իրավաչափության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.*

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտի 1-ին կետով Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն այն բանի համար, որ Ընկերությունը պակաս է ցույց տվել 2011 թվականի եկամուտը՝ դրա մեջ չներառելով այդ թվականին առաքված էլեկտրաէներգիայի համար իրեն վճարման ենթակա գումարը, իսկ 5-րդ կետով Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն այն բանի համար, որ Ընկերությունը, խախտելով «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, պակաս է ցույց տվել 2011 թվականի իրացման շրջանառությունը՝ դրա մեջ չներառելով այդ թվականին առաքված էլեկտրաէներգիայի համար իրեն վճարման ենթակա գումարը:

Դատարանը բավարարել է Ընկերության հայցը և շահութահարկի ու ավելացված արժեքի հարկի գծով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորության մասով անվավեր է ճանաչել Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտը՝ պատճառաբանելով, որ Ընկերությունը 2011 թվականին չի ունեցել այդ տարվա ընթացքում առաքված էլեկտրաէներգիայի համար եկամտի ստացման իրավունք: Բացի այդ, ըստ Դատարանի՝ 21.12.2009 թվականի «Կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման» թիվ ENA-09-27 պայմանագրի հիման վրա առաքված ապրանքի (էլեկտրաէներգիայի) գինը 2011 թվականին դեռևս որոշված չէր, և Ըն-

կերտությունը չէր կարող որոշել իր հարկվող շրջանառությունը և դրա հիման վրա հաշվարկել ավելացված արժեքի հարկի կոնկրետ չափը:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ Ընկերությունն առաքված էլեկտրական էներգիայից ստացվելիք եկամուտը չէր կարող հաշվեգրման եղանակով հաշվառել 2011 թվականի հարկվող օբյեկտը որոշելիս, քանի որ մինչև առաքված էլեկտրաէներգիայի սակագինը սահմանելու վերաբերյալ որոշում կայացնելն Ընկերությունը չէր կարող հստակ իմանալ հետագայում ստացվելիք եկամտի չափը և չէր կարող այն հաշվառել որպես եկամուտ: Բացի այդ, ըստ Վերաքննիչ դատարանի, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում արտադրված էլեկտրաէներգիայի առաքման գործարքով ավելացված արժեքի հարկի հաշվարկման պարտավորությունն Ընկերության մոտ ծագել է 2012 թվականին՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ կնքված էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ 2011 թվականին կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքված էլեկտրաէներգիայի դիմաց ստացված հարկվող շրջանառությունն Ընկերությունը կարող էր ցույց տալ միայն 2012 թվականին:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով վիճարկվող վարչական ակտի՝ Ընկերության նկատմամբ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար Ընկերությանը պատասխանատվության ենթարկելու մասի իրավաչափության վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները փաստում են այն մասին, որ տվյալ դեպքում առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար Ընկերությունը պետք է ենթարկվեր պատասխանատվության «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումների կիրառմամբ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ պարագայում Ընկերությանը չէին կարող առաջադրվել հարկային, այդ թվում նաև՝ ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գծով առաջացող պարտավորություններ, քանի որ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար անձի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված տուգանքի կիրառումը համարվել է վերջնական հարկային պարտավորություն: Այլ կերպ ասած՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացրած անձին՝ Ընկերությանը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ 26-րդ հոդվածի հիմքով պատասխանատվության ենթարկելու դեպքում Ընկերությունը չէր կարող կրել այդ գործունեության համար առաջացող այլ հարկային պարտավորություններ:

Հաշվի առնելով վերոգրյալ պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու (Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտի 1-ին կետ) և Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասերով (Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտի 5-րդ կետ), ևս ընդունվել է օրենքի խախտմամբ. տվյալ դեպքում վարչական մարմինը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված այն իրավակարգավորումը, որ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար անձի նկատմամբ տուգանքի կիրառումը վերջնական հարկային պարտավորություն է՝ սպօրինի գործունեության մասով:

Փաստորեն, սույն գործով Դատարանն անտեսել է այն, որ Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտի 14-րդ կետի՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2012 թվականը գործող խմբագրությամբ 26-րդ հոդվածի խախտմամբ ընդունված լինելու հանգամանքն ինքնին բացառում է Ընկերության նկատմամբ շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրելու հնարավորությունը՝ դրանով իսկ համապատասխան մասերով անվավեր դարձնելով սույն գործով վիճարկվող վարչական ակտը, ինչը հաշվի չի առնվել նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված վերոգրյալ նյութական իրավունքի նորմերի խախտումները չեն կարող հանգեցնել Վերաքննիչ դատարանի որոշման բեկանման, քանի որ Դատարանը, անվավեր ճանաչելով Վարչության 27.09.2013 թվականի թիվ 1002942 ստուգման ակտը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր:

*Նշված պայրճառաբանություններով մասնակիորեն հիմնավորվում են վճռաբեկ բողոքի պատրասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը սխալ է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

### **5. Վճռաբեկ դատարանի պայրճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարած լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.05.2016 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սարդագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սարդագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/11173/05/13  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ք. Մկոյան  
Ա. Առաքելյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/11173/05/13  
2016 թ.

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նա-  
խարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառա-  
յություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.02.2015 թվականի  
որոշման դեմ՝ ըստ հայցի Ռազմիկ Մովսիսյանի ընդդեմ Ծառայության՝ Ծառայության պե-  
տի առաջին տեղակալ Ս. Սախյանի կողմից կազմված թիվ ՄՄ/ԼԼ-1/10287-13 միջամտող  
վարչական ակտն անվավեր ճանաչելու և 1992-2003 թվականներին առանձնապես վնասա-  
կար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած ժամանակահատվածի համար կեն-  
սաթոշակի վերահաշվարկ կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատարարական նախապարունությունը**

Դիմելով դատարան՝ Ռազմիկ Մովսիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայու-  
թյան պետի առաջին տեղակալ Ս. Սախյանի կողմից կազմված 23.09.2013 թվականի թիվ  
ՄՄ/ԼԼ-1/10287-13 միջամտող վարչական ակտը և Ծառայությանը պարտավորեցնել կա-  
տարելու 1992-2003 թվականներին առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայ-  
մաններում աշխատած ժամանակահատվածի համար կենսաթոշակի վերահաշվարկ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան)  
07.10.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.02.2015  
թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 07.10.2014  
թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:



## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն ՀՀ օրենքը, որը պետք է կիրառեր, կիրառել է «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ 1992–2003 թվականներին Ռազմիկ Մովսիսյանի աշխատած ժամանակահատվածը ստաժում 1,5 անգամ հաշվարկվել չէր կարող, քանի որ կենսաթոշակի գործում առկա է եղել մինչև 1992 թվականն արտոնյալ պայմաններով աշխատելու մասին գործատուի տված տեղեկանքը, իսկ 1992–2003 թվականներին արտոնյալ պայմաններով աշխատելու մասին տեղեկանքը Ռազմիկ Մովսիսյանը Ծառայության Երևանի Ավան և Նոր Նորքի տարածքային բաժին է ներկայացրել 2011 թվականին՝ արդեն իսկ «Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010 թվականի ՀՕ-243-Ն ՀՀ օրենքի գործողության ժամանակահատվածում, երբ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժը 1,5 անգամ հաշվարկելու դրույթ սահմանված չի եղել: Այսինքն՝ Ռազմիկ Մովսիսյանի՝ 1992–2003 թվականներին առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած ժամանակահատվածը 1,5 անգամ հաշվարկելը չի բխում ՀՀ կենսաթոշակային օրենսդրության պահանջներից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.02.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

## 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 13.03.2013 թվականին «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ 41–09 տեղեկանքի համաձայն՝ Ռազմիկ Մովսիսյանը լրիվ աշխատանքային օրով աշխատել է հանքի ստորգետնյա տեղամասում 11.02.1971 թվականից մինչև 13.03.2013 թվականը՝ որպես հանքի ստորգետնյա տեղամասի երկրաբան (**հատոր 1–ին, գ.թ. 16**):

2) Ռազմիկ Մովսիսյանին 1985 թվականի մարտ ամսին արտոնյալ պայմաններով նշանակվել է կենսաթոշակ (**հատոր 1–ին, գ.թ. 19–21**):

3) 28.08.2013 թվականին Ռազմիկ Մովսիսյանը դիմել է Ծառայությանը՝ խնդրելով 1992–2003 թվականների համար առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած ժամանակահատվածի համար կատարել կենսաթոշակի վերահաշվարկ: Ծառայությունը 23.09.2013 թվականի թիվ ՄՄ/ԼԼ–1/10287–13 գրությամբ մերժել է Ռազմիկ Մովսիսյանի դիմումն այն պատճառաբանությամբ, որ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժը 1,5 անգամ հաշվարկելու և այդ հիմքով կենսաթոշակը վերահաշվարկելու դրույթ Ռազմիկ Մովսիսյանի կողմից արտոնյալ պայմաններով աշխատելու մասին տեղեկանքը Ծառայություն ներկայացնելու պահին գործող օրենսդրությունը չի նախատեսել (**հատոր 1–ին, գ.թ. 19–21**):

## 4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և կզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն ՀՀ օրենքի 38–րդ հոդվածի 1–ին մասը, 55–րդ հոդվածի 1–ին մասը չկիրառելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման դեպքում նախկինում նշանակված կենսաթոշակը ենթակա է վերահաշվարկման ուժը կորցրած իրավական ակտով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով բողոքի հիմքում բարձրացված հարցադրումը, նախնառաջ հարկ է համարում անդրադարձնալ վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառվող օրենսդրության հարցը որոշելու խնդրին:

22.12.2010 թվականին ընդունված և 01.01.2011 թվականից գործող «Պետական կենսաթոշակների մասին» թիվ ՀՕ-243-Ն ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե՝

1) փոխվել է աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը կամ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ տվյալ ամսվա 1-ից.

2) աշխիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (կենսաթոշակը կենսաթոշակատուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց) 12 ամիս հետո կենսաթոշակատուն ներկայացրել է կենսաթոշակը նշանակելուց (կենսաթոշակը կենսաթոշակատուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած լինելու մասին տեղեկանք՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից.

3) կենսաթոշակատուն ներկայացրել է մինչև կենսաթոշակ նշանակելը (կենսաթոշակի տեսակը փոխելը) ընկած ժամանակահատվածում իր կամ մահացած կերակրողի աշխատանքային կամ մինչև տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքն ընկած ժամանակահատվածի այլ գործունեության վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից.

4) հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակատուն, մինչև տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը, կենսաթոշակը նշանակելուց (վերահաշվարկելուց) 12 ամիս հետո ներկայացրել է այլ գործունեության ժամանակահատվածի մասին փաստաթուղթ՝ դիմումը և այդ փաստաթուղթը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ կենսաթոշակի վերահաշվարկի իրավահարաբերություններն օրենքով սահմանված ինքնուրույն իրավահարաբերություններ են, որոնց ծագումը, բացառությամբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, մյուս բոլոր դեպքերում պայմանավորված է կենսաթոշակատուի կողմից համապատասխան դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն իրավասու մարմին ներկայացնելով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պետական կենսաթոշակների վերաբերյալ նախկինում գործող օրենսդրությամբ ևս կենսաթոշակի վերահաշվարկման իրավահարաբերության ծագումը պայմանավորված է եղել կենսաթոշակատուի կողմից նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու համար դիմելու հանգամանքով:

Այսպես, «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 25.02.1992 թվականի թիվ ՀՕ-13 ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 01.07.1992 թվականին, ուժը կորցրել է 01.01.1996 թվականին) 35-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ նշանակված կենսաթոշակի վերահաշվարկումը կատարվում է կենսաթոշակի բարձրացման իրավունք վերապահող հանգամանքներ առաջանալիս՝ այն ամսվա սկզբից, որի ընթացքում կենսաթոշակատուն դիմել է կենսաթոշակը վերահաշվարկելու համար:

Նույն օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ այն կենսաթոշակատուները, որոնք տարիքային կամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակելուց հետո առնվազն 2 տարի աշխատել են ավելի բարձր վաստակով, քան այն վաստակը, որից հաշվարկվել էր կենսաթոշակը, կարող են դիմել կենսաթոշակի վերահաշվարկման համար: Կենսաթոշակի նոր չափը որոշվում է կենսաթոշակի վերահաշվարկման համար դիմելուն նախորդած վերջին 5 տարիների ընդհանուր վաստակից հաշվարկվող ամսական միջին վաստակի վաստակի համեմատությամբ, նույն օրենքով սահմանված կարգով:

Կենսաթոշակատուն, որը ոչ լրիվ ստաժի դեպքում տարիքային կամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակելուց հետո առնվազն 2 տարի աշխատել է, կարող է

դիմել կենսաթոշակի վերահաշվարկման համար: Կենսաթոշակի նոր չափը որոշվում է դիմելու պահին առկա փաստացի ընդհանուր ստաժին համամասնական չափով:

Կենսաթոշակի յուրաքանչյուր հաջորդ վերահաշվարկը կատարվում է նույն հողվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված նախորդ վերահաշվարկից ոչ շուտ, քան 2 տարի հետո:

Եթե կենսաթոշակառուն, շարունակելով աշխատել, ձեռք է բերել լրիվ կենսաթոշակի նշանակման համար բավարար ստաժ, ապա նրա դիմումի համաձայն կատարվում է կենսաթոշակի համապատասխան վերահաշվարկ՝ անկախ այն բանից, թե ոչ լրիվ ստաժի դեպքում կենսաթոշակ նշանակելուց հետո որքան ժամանակ է անցել:

Կենսաթոշակի վերահաշվարկը կենսաթոշակառուի ընտրությամբ կատարվում է կամ այն վաստակից, որից կենսաթոշակը սկզբնապես նշանակվել է կամ էլ վերջին 5 տարիների ընդհանուր վաստակից հաշվարկվող ամսական միջին փաստացի վաստակից: Այն դեպքերում, երբ կենսաթոշակի նշանակումից հետո կենսաթոշակառուն ընտանեկան դրության փոփոխման, աշխատանքի ընդունվելու կամ այն դադարեցնելու կապակցությամբ ձեռք է բերում կամ կորցնում ընտանիքի անաշխատունակ անդամներին տրվող հավելումի իրավունք կամ այդ հավելումի չափը ենթակա է փոփոխման, նրա դիմումի համաձայն կատարվում է կենսաթոշակի համապատասխան վերահաշվարկ:

Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Նույն օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ նախկին օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված կենսաթոշակի վերահաշվարկը կատարվում է կենսաթոշակառուի ցանկությամբ, եթե կենսաթոշակառուն ներկայացնում է նույն օրենքով նախատեսված՝ կենսաթոշակի բարձրացման իրավունք տվող համապատասխան փաստաթղթեր (աշխատանքային ստաժի, վաստակի չափի, ընտանիքի կազմի վերաբերյալ և այլն):

Վերահաշվարկը կատարվում է դիմելուն նախորդած ոչ ավելի, քան 12 ամիսների համար:

«ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 06.12.1995 թվականի թիվ ՀՕ-26 ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 01.01.1996 թվականին, ուժը կորցրել է 10.04.2003 թվականին) 11-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով նախատեսված կենսաթոշակները հաշվարկվում են բազային (սոցիալական) կենսաթոշակին ավելացնելով յուրաքանչյուր մեկ լրիվ տարվա աշխատանքային (ապահովագրական) ստաժի համար տրվող հավելումը:

Նույն օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ նախկին օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակները վերահաշվարկվում են նույն օրենքին համապատասխան: Եթե վերահաշվարկված կենսաթոշակը ցածր է նախկին օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

«Պետական կենսաթոշակների մասին» 19.11.2002 թվականի թիվ ՀՕ-519-Ն ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 01.01.2003 թվականին, ուժը կորցրել է 01.01.2011 թվականին) 73-րդ հոդվածի համաձայն՝ մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով հաշվարկված ստաժին համապատասխան՝ հաշվի առնելով նույն օրենքի 17-19-րդ հոդվածներին համապատասխան սահմանված հիմնական կենսաթոշակի չափը, ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը և կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

«Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519 օրենքով նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է նույն օրենքով սահմանված կարգով: Այդ դեպքում կենսաթոշակի գործում առկա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժում առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատած ժամանակահատվածը, քաղաքացիական ավիացիայի աշխատողների՝ թռիչքային ժամերով հաշվարկված ժամկետները, վկայությամբ հաստատված ժամանակահատվածը, երեխաների խնամքի ժամանակահատ-

վածը, ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածն աշխատանքային ստաժում պահպանվում են նույնությամբ:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ նախկինում գործող և թե՛ ներկայումս գործող օրենսդրությունը նախատեսել է, որ կենսաթոշակը վերահաշվարկելու իրավունք վերապահող հանգամանքներ առաջանալու դեպքում վերահաշվարկ կատարելու իրավահարաբերությունները ծագում են միայն կենսաթոշակատուի կողմից համապատասխան դիմում ներկայացնելու հիմքով, բացառությամբ հիմնական կենսաթոշակի չափը կամ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը փոխվելու դեպքերի:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թե՛ նախկինում գործող և թե՛ ներկայումս գործող օրենսդրությունը նախատեսել է, որ կենսաթոշակը վերահաշվարկելու համար **լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման դեպքում** նախկինում նշանակված կենսաթոշակը ենթակա է վերահաշվարկման գործող օրենքի դրույթներին համապատասխան:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կենսաթոշակը վերահաշվարկելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է կենսաթոշակատուի կողմից վերահաշվարկելու համար լիազոր մարմին դիմելու պահի դրությամբ գործող օրենսդրությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 13.03.2013 թվականին «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ 41-09 տեղեկանքի համաձայն՝ Ռազմիկ Մովսիսյանը լրիվ աշխատանքային օրով աշխատել է հանքի ստորգետնյա տեղամասում 11.02.1971 թվականից մինչև 13.03.2013 թվականը՝ որպես հանքի ստորգետնյա տեղամասի երկրաբան: 28.08.2013 թվականին Ռազմիկ Մովսիսյանը դիմել է Ծառայությանը՝ խնդրելով 1992–2003 թվականների համար առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած ժամանակահատվածի համար կատարել կենսաթոշակի վերահաշվարկ: Ծառայությունը 23.09.2013 թվականի թիվ ՄՄ/ԼԼ–1/10287–13 գրությամբ մերժել է Ռազմիկ Մովսիսյանի դիմումը:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում Ռազմիկ Մովսիսյանի կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունները ծագել են մինչև 10.04.2003 թվականը գործող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ընդունումը, իսկ Ծառայության կողմից կիրառված 10.04.2003 թվականից գործող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ, այլ կիրառելի են «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 06.12.1995 թվականի թիվ ՀՕ–26 ՀՀ օրենքի դրույթները, որոնցով կենսաթոշակն արտոնյալ պայմաններով հաշվարկելու և նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու կանոններ նախատեսված են եղել:

Վերաքննիչ դատարանը, իրավաչափ համարելով Դատարանի եզրահանգումն առ այն, որ Ծառայության կողմից կիրառված 10.04.2003 թվականից գործող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ, այլ կիրառելի են «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 06.12.1995 թվականի թիվ ՀՕ–26 ՀՀ օրենքի դրույթները, մերժել է Ծառայության վերաքննիչ բողոքը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից սույն գործով «Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010 թվականի թիվ ՀՕ–243–Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ գործող իրավակարգավորումների կիրառումն իրավաչափ չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ կենսաթոշակը վերահաշվարկելու դիմումը և լրացուցիչ փաստաթուղթը (տեղեկանքը) Ռազմիկ Մովսիսյանը ներկայացրել է 28.08.2013 թվականին, հետևաբար վերը նշված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կենսաթոշակը վերահաշվարկելու կարգը պետք է որոշվի 28.08.2013 թվականի դրությամբ գործող օրենսդրության հիման վրա:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կենսաթոշակի նշանակման, հաշվարկման և վերահաշվարկման հետ կապված հարաբերությունները մինչև «Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010 թվականի թիվ ՀՕ–243–Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը, այն է՝ մինչև 01.01.2011 թվականը, կարգավորվել են նախ՝ «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշա-

կային ապահովության մասին» 25.02.1992 թվականի թվականի թիվ ՀՕ-13 ՀՀ օրենքով, ապա՝ «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 06.12.1995 թվականի թիվ ՀՕ-26 ՀՀ օրենքով, այնուհետև՝ «Պետական կենսաթոշակների մասին» 19.11.2002 թվականի թիվ ՀՕ-519-Ն ՀՀ օրենքով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա**, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Վերոնշյալից հետևում է, որ այն դեպքերում, երբ իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում, այդ ակտի գործողությունը տարածվում է **միայն մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա** և չի տարածվում դրանից հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Այսինքն՝ ըստ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության համընդհանուր սկզբունքի՝ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ եղած ժամանակահատվածում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավական ակտի կիրառելիության հարցն ուղղակիորեն կապված է կարգավորման առարկան կազմող իրավահարաբերության ծագման պահի հետ:

Սույն գործի փաստական հանգամանքները համադրելով վերոնշյալ իրավական վերլուծությունների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում կենսաթոշակի վերահաշվարկման իրավահարաբերության ծագման պահ է հանդիսանում Ռազմիկ Մովսիսյանի՝ Ծառայությանը կենսաթոշակի վերահաշվարկման վերաբերյալ դիմում տալու օրը, հետևաբար սույն գործով կիրառման ենթակա են Ռազմիկ Մովսիսյանի կողմից կենսաթոշակի վերահաշվարկման համար դիմում տալու օրվա՝ 28.08.2013 թվականի դրությամբ գործող իրավակարգավորումները, որոնք սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն ՀՀ օրենքով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը գործող իրավական ակտերը կիրառելի կլինեին միայն այն դեպքում, եթե Ռազմիկ Մովսիսյանը կենսաթոշակի վերահաշվարկման դիմումը ներկայացներ մինչև «Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը: Մինչդեռ վերջինս կենսաթոշակի վերահաշվարկման վերաբերյալ դիմումով Ծառայությանը դիմել է 28.08.2013 թվականին, հետևաբար սույն գործով կիրառելի են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, որոնց համաձայն՝ **նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է նույն օրենքով սահմանված կարգով:**

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը սպառնիչ կերպով սահմանում է կենսաթոշակը վերահաշվարկելու հիմքերը, և դրանցում բացակայում է դիմողի կողմից հայցվող՝ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատած ժամանակահատվածով պայմանավորված կենսաթոշակը վերահաշվարկելու հիմքը:

Անդրադառնալով ստորադաս դատարանների այն պատճառաբանությանը, որ Ռազմիկ Մովսիսյանի կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունները ծագել են մինչև «Պետական կենսաթոշակների մասին» 19.11.2002 թվականի թիվ ՀՕ-519-Ն ՀՀ օրենքի ընդունումը, հետևաբար Ռազմիկ Մովսիսյանը կենսաթոշակի վերահաշվարկման լեգիտիմ ակնկալիք է ունեցել, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սխալ են կիրառել լեգիտիմ ակնկալիքի ինստիտուտը, որին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը (տրևս «Պարսկյան կենսաթոշակների մասին» 19.11.2002 թվականի թիվ ՀՕ-519-Ն օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասին ՀՀ սահմանադրական դատարանի 15.01.2008 թվականի թիվ ՄԴՈ-723 որոշումը):

ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայման-

ներում **աշխատած և կենսաթոշակի նշանակում ստացած անձինք** ակնկալիք են ունեցել, որ իրենց կենսաթոշակը ենթակա է հաշվարկման արտոնյալ կարգով, սակայն նույն օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով այդ արտոնյալ կարգը վերացվել է՝ անտեսելով նաև նշված պայմաններում աշխատած անձանց ակնկալիքն առ այն, որ իրենց կենսաթոշակը հաշվարկվելու է արտոնյալ կարգով: Անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքն իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը:

ՀՀ սահմանադրական դատարանը, արձանագրելով նշանակված կենսաթոշակի վերահաշվարկի արդյունքում դրա տեսակի փոփոխման (վատթարացման) արգելքը, միաժամանակ ճանաչել է նաև որոշակի պայմաններում աշխատած և կենսաթոշակի նշանակում ստացած անձանց՝ արտոնյալ կենսաթոշակ ստանալու հանդեպ լեգիտիմ ակնկալիքը: Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանը լեգիտիմ ակնկալիքի առկայությունը ճանաչել է միայն այն անձանց համար, որոնք աշխատել և կենսաթոշակի նշանակում են ստացել:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ կենսաթոշակի հանդեպ լեգիտիմ ակնկալիքը ծագելու համար միայն աշխատելու փաստը բավարար չէ, անձի նկատմամբ պետք է արդեն իսկ նշանակված լինի կենսաթոշակ, կամ վերջինս պետք է արդեն իսկ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած լինի, որպեսզի դրա հանդեպ լեգիտիմ ակնկալիքը գործի: Ըստ այդմ՝ ՀՀ սահմանադրական դատարանը ճանաչել է ոչ թե որոշակի պայմաններում աշխատած անձանց լեգիտիմ ակնկալիքը այդ ընթացքում գործող իրավակարգավորումներով կենսաթոշակ ստանալու նկատմամբ, այլ արդեն իսկ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձանց լեգիտիմ ակնկալիքն այդ իրավունքը ձեռք բերելու պահին գործող իրավակարգավորումներով կենսաթոշակ ստանալու և դրա չափը այլևս չսվագեցնելու հանդեպ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ, որը, սակայն, չի կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք **ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա:**

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանն անձի կենսաթոշակ ստանալու լեգիտիմ ակնկալիքը կապել է կենսաթոշակ ստանալու իրավունքի՝ արդեն իսկ ծագած լինելու հետ:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով անձի լեգիտիմ ակնկալիքի իրավունքին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի լեգիտիմ ակնկալիքի պաշտպանությունը մի կողմից պարտավորեցնում է պետությանը անձի հանդեպ գործել բարեխիղճ, մյուս կողմից, սակայն, անձի լեգիտիմ ակնկալիքի պաշտպանության կիրառման համար կարևոր է նաև անձի դրսևորած վարքագծի բարեխիղճությունն և ողջամտությունը: Այսինքն, թեև լեգիտիմ ակնկալիքն օգտագործվում է որպես անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ միջոց, այնուամենայնիվ, պետք է գոյություն ունենան նաև դրա չարաշահումը բացառող երաշխիքներ:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ անձի սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի իրացումը երաշխավորելու համար համապատասխան իրավակարգավորում ստեղծելու բացառիկ իրավասությունը վերապահված է օրենսդիր մարմնին, որը կոչված է իրականացնելու այդ բնագավառի, այդ թվում նաև՝ կենսաթոշակների հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական քաղաքականությունը: Ըստ այդմ, կենսաթոշակային օրենսդրությունը 1992–2011 թվականներն ընկած ժամանակահատվածում պարբերաբար ենթարկվել է փոփոխությունների: Այսպես՝ 01.07.1992 թվականից մինչև 01.01.1996 թվականը գործել է «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» թիվ ՀՕ–13 օրենքը, 01.01.1996 թվականից մինչև 01.01.2003 թվականը գործել է «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» թիվ ՀՕ–26 օրենքը, 01.01.2003 թվականից մինչև 01.01.2011 թվականը գործել է «Պետական կենսաթոշակների մասին» թիվ ՀՕ–519–Ն ՀՀ օրենքը, իսկ 01.01.2011 թվականից ուժի մեջ է մտել «Պետական կենսաթոշակների մասին» թիվ ՀՕ–243–Ն օրենքը:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրում է, որ վերը նշված իրավական ակտերն իրենց գործողության ընթացքում ևս բազմիցս ենթարկվել են փոփոխությունների և լրա-

ցումների, ինչը պայմանավորված է կենսաթոշակային համակարգի հավասարակշռության ապահովման, քաղաքացիների կենսաթոշակային ապահովության մակարդակի կայունության և աճի ապահովման անհրաժեշտությամբ:

Սույն գործով ներկայացված հայցադիմումով Ռազմիկ Մովսիսյանը փաստում է, որ 1992 թվականին դիմել է 1987–1992 թվականների ժամանակահատվածի կենսաթոշակի վերահաշվարկման համար՝ ներկայացնելով աշխատանքի բնույթի մասին գործատուի կողմից տրված ճշտող տեղեկանքը, 1995 թվականին դիմել է 1990–1995 թվականների ժամանակահատվածի կենսաթոշակի վերահաշվարկման համար՝ ներկայացնելով աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկանք, մինչդեռ հետագայում՝ 1992–2003 թվականներն ընկած ժամանակահատվածում, արտոնյալ պայմաններում աշխատելու վերաբերյալ տեղեկանքը չի ներկայացրել և չի դիմել լիազոր մարմին՝ կենսաթոշակի վերահաշվարկման համար՝ մինչև «Պետական կենսաթոշակների մասին» թիվ ՀՕ–243–Ն օրենքն ուժի մեջ մտնելը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Պետական կենսաթոշակների մասին» թիվ ՀՕ–519–Ն օրենքի 73–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսվող դրույթն առ այն, որ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է նույն օրենքով սահմանված կարգով և համարվում է նոր նշանակում, ՀՀ սահմանադրական դատարանի 15.01.2008 թվականի թիվ ՄԴՈ–723 որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, ինչը նշանակում է, որ Ռազմիկ Մովսիսյանն առնվազն 15.01.2008 թվականից մինչև 01.01.2011 թվականը հնարավորություն է ունեցել լիազոր մարմինն ներկայացնելու կենսաթոշակի վերահաշվարկ կատարելու մասին դիմումը և արտոնյալ պայմաններում աշխատելու վերաբերյալ տեղեկանքը, սակայն ցուցաբերել է անգործություն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ռազմիկ Մովսիսյանը դեռևս «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» թիվ ՀՕ–26 օրենքի՝ մինչև 01.01.2003 թվականը ուժի մեջ լինելու, ինչպես նաև 01.01.2003 թվականից ուժի մեջ մտած «Պետական կենսաթոշակների մասին» թիվ ՀՕ–519–Ն ՀՀ օրենքի 73–րդ հոդվածի 2–րդ մասի՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 15.01.2008 թվականին անվավեր ճանաչելու պայմաններում գրկված չի եղել մինչև «Պետական կենսաթոշակների մասին» թիվ ՀՕ–519–Ն ՀՀ օրենքի ուժը կորցնելու պահը՝ 01.01.2011 թվականը, կենսաթոշակի վերահաշվարկման համար լիազոր մարմին դիմելու հնարավորությունից:

Ավելին, օրենսդրի կողմից կենսաթոշակային օրենսդրությունում պարբերաբար փոփոխություններ կատարելու պայմաններում վերջինս կարող էր կանխատեսել օրենսդրական այնպիսի փոփոխությունների հնարավորությունը, որոնց պայմաններում այլևս կբացակայեր նախկինում գործող օրենսդրության համաձայն կենսաթոշակի վերահաշվարկ կատարելու հնարավորությունը, հետևաբար լեգիտիմ ակնկալիքի սկզբունքը սույն գործով կիրառելի չէ, քանի որ հայցվորի կողմից չի դրսևորվել համապատասխան բարեխիղճ և ողջամիտ վարքագիծ, այն է՝ 1992–2003 թվականների ժամանակահատվածի համար կենսաթոշակի վերահաշվարկի պահանջը չի ներկայացվել նշված ժամանակահատվածում գործող կենսաթոշակային օրենսդրության գործողության ժամանակ, երբ նշված պահանջը կարող էր քննարկվել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում կիրառելի են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ գործող օրենքի կարգավորումները, որոնց համաձայն՝ նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է նույն օրենքով սահմանված կարգով, որը, սակայն, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատած ժամանակահատվածով պայմանավորված կենսաթոշակը վերահաշվարկելու հիմք չի նախատեսում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցը բավարարելու հիմք չէր կարող հանդիսանալ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Ռազմիկ Մովսիսյանի կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունները ծագել են մինչև «Պետական կենսաթոշակների մասին» 19.11.2002 թվականի թիվ ՀՕ–519–Ն ՀՀ օրենքի ընդունումը, քանի որ տվյալ դեպքում գործի լուծման համար էական նշանակություն ունի ոչ թե ընդհանրապես կենսաթոշակային իրավահարաբերության ծագման, այլ կենսաթոշակի վերահաշվարկման՝ որպես օրենքով նախատեսված ինքնուրույն իրավահարաբերության ծագման պահը: Ըստ այդմ,

կիրառելով կենսաթոշակի վերահաշվարկման դիմումը ներկայացնելու պահին գործող օրենքը՝ Ծառայությունն օրենքի կիրառման առումով որևէ սխալ թույլ չի տվել:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցվող գործողության իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գործողության կատարման հայցի քննարկման ընթացքում դատարանների կողմից պարզման ենթակա հարցերին՝ կարևորելով նշված հայցատեսակով վարչական մարմիններին պարտադրվող գործողությունների իրավաչափության գնահատման անհրաժեշտությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական մարմինն որոշակի գործողություն կատարելուն պարտավորեցնելու համար պետք է հաստատվի, որ հայցվող գործողությունը կատարելու համար առկա են փաստական և իրավական բավարար հիմքեր, և գործը քննելու ու դատական ակտ կայացնելու պահի դրությամբ գործող կոնկրետ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջներից բխում է հայցվող գործողությունը կատարելու վարչական մարմնի իրավասությունը:

Դատարաններն իրավասու չեն վարչական մարմնին պարտավորեցնելու կատարել այնպիսի գործողություն, որը կհանդիսանա ոչ իրավաչափ, հետևաբար որոշակի գործողություն կատարելուն վարչական մարմնին պարտավորեցնելու համար դատաքննությամբ պետք է ձեռք բերվեն բավարար և անհերքելի ապացույցներ առ այն, որ հայցվող գործողությունն իրավաչափ է:

Սույն գործով Դատարանը գործողության կատարման հայցը բավարարելիս, իսկ Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռն անփոփոխ թողնելիս պատճառաբանել են, որ սույն գործով կիրառելի են «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 06.12.1995 թվականի թիվ ՀՕ-26 ՀՀ օրենքի դրույթները, մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերում անտեսել են այն հանգամանքը, որ դատական ակտ կայացնելու պահի դրությամբ գործող իրավական ակտերի պահանջներից չի բխում հայցվող գործողության կատարումը, և գործող իրավական կարգավորումների պայմաններում առկա չեն հիմքեր սույն գործով հայցվող գործողության կատարումը վարչական մարմնին պարտավորեցնելու համար, հետևաբար հայցը ենթակա էր մերժման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:



Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը, գտնում է, որ Ռազմիկ Մովսիսյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 8.000 ՀՀ դրամ՝ որպես Դատարանի 06.12.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք: Բացի այդ, Ռազմիկ Մովսիսյանից հօգուտ Ծառայության պետք է բռնագանձել նաև 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք, և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169–171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.02.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Ռազմիկ Մովսիսյանի հայցը մերժել:
2. Ռազմիկ Մովսիսյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 8.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վարչական դատարանի 06.12.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք: Ռազմիկ Մովսիսյանից հօգուտ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք, և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/4109/05/14  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ք. Մկոյան  
Ա. Առաքելյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/4109/05/14  
2016 թ.

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նա-  
խարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառա-  
յություն) և ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բո-  
ղոքները ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.09.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի Սամսոն Խարազյանի ընդդեմ Ծառայության, երրորդ անձ՝ Նախարարության՝  
17.12.2012 թվականից մինչև 2013 թվականի մարտ ամիսը կենսաթոշակ նշանակելուն և  
08.01.1998 թվականից 05.01.2002 թվականն ընկած ժամանակահատվածն աշխատանքային  
ստաժում ներառելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարունությունը**

Դիմելով դատարան՝ Սամսոն Խարազյանը պահանջել է պարտավորեցնել Ծառայու-  
թյանը կատարելու վերահաշվարկ և վճարելու 17.12.2012 թվականից մինչև 2013 թվականի  
մարտ ամիսը չորս ամիսների չվճարած կենսաթոշակը՝ 134.400 ՀՀ դրամի չափով, ինչպես  
նաև կենսաթոշակում ներառել չորս տարվա աշխատանքային ստաժի և տասը տարվա ըն-  
թացքում կատարած սոցիալական վճարների դիմաց հասանելիք գումարը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան)  
14.04.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ծառայությանը պարտա-  
վորեցվել է 08.01.1998 թվականից 05.01.2002 թվականն ընկած ժամանակահատվածը ներա-  
ռել Սամսոն Խարազյանի աշխատանքային ստաժում: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 24.09.2015  
թվականի որոշմամբ Սամսոն Խարազյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարա-

նի 14.04.2015 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել. հայցը՝ 17.12.2012 թվականից մինչև 2013 թվականի մարտ ամիսը կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարվել է. Ծառայությանը պարտավորեցվել է 17.12.2012 թվականից մինչև 2013 թվականի մարտ ամիսը Սամսոն Խարազյանին նշանակելու կենսաթոշակ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ծառայությունը և Նախարարությունը: Վճռաբեկ բողոքների պատասխան է ներկայացրել Սամսոն Խարազյանը:

## **2. Ծառայության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 2005 թվականի խմբագրությանը ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Սամսոն Խարազյանը 17.12.2012 թվականին դիմել է Ծառայության աշխատակազմի Արտաշատի սոցիալական ապահովության տարածքային բաժին՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ կենսաթոշակ նշանակելու համար: Ներկայացված անձնագրի համաձայն՝ դիմողի անունը նշված է եղել «Սամսոն», իսկ աշխատանքային գրքույկի, բարձրագույն կրթության դիպլոմի համաձայն՝ նշված փաստաթղթերի իրավատիրոջ անունը նշված է եղել «Սամվել», այդ պատճառով աշխատանքային գրքույկը՝ որպես ստաժը հաստատող փաստաթուղթ, հիմք չի ընդունվել և 24.12.2012 թվականին մերժվել է կենսաթոշակ նշանակելու դիմումը: Սամսոն Խարազյանը 29.03.2013 թվականին կրկին դիմել է Ծառայության աշխատակազմի Արտաշատի սոցիալական ապահովության տարածքային բաժին՝ կենսաթոշակ նշանակելու համար, և պահանջվող փաստաթղթերի հետ ներկայացրել է նաև ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 28.02.2013 թվականի վճիռը, որն օրինական ուժի մեջ է մտել 29.03.2013 թվականին: Նշված վճռով հաստատվել է, որ աշխատանքային գրքույկը և բարձրագույն կրթության դիպլոմը պատկանում են Սամսոն Խարազյանին: Այսպիսով, Սամսոն Խարազյանը կենսաթոշակ ստանալու իրավունքը ձեռք է բերել 29.03.2013 թվականից՝ կենսաթոշակ նշանակելու համար ներկայացված իրավաչափ փաստաթղթերի հիման վրա: Հետևաբար Ծառայության կողմից կենսաթոշակը 17.12.2012 թվականից հաշվարկելու և վճարելու վերաբերյալ մերժումներն իրավաչափ են և բխում են առկա իրավակարգավորումներից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.09.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.04.2015 թվականի վճիռն:

### **2.1 Նախարարության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, կիրառել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ արդեն իսկ գոյություն ունեն երկու վարչական ակտեր՝ 24.12.2012 թվականին կենսաթոշակ նշանակելու մասին դիմումը մերժելու մասին և 29.03.2013 թվականին Սամսոն Խարազյանին կենսաթոշակ նշանակելու մասին: Վերաքննիչ դատարանի դատական ակտի արդյունքում վարչական մարմնի համար ստեղծվել է իրավական անորոշություն, այն է՝ առկա վարչական ակտերի գոյության պայմաններում նույն անձին վերաբերող և նույն հարցը կարգավորող մեկ այլ

վարչական ակտ ընդունելու պարտավորություն, որի հիմքերը բացակայում են ՀՀ օրենսդրությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.09.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.04.2015 թվականի վճռին:

## **2.2 Վճռաբեկ բողոքների պարասխանի հիմնավորումները**

Ծառայության և Նախարարության վճռաբեկ բողոքների իրավական հիմքերում և փաստարկներում բացակայում է օրենքի այն դրույթը, որը թույլ է տալիս կենսաթոշակի նշանակման ժամկետները փոխել, ուստի Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշումը կայացնելիս իրավացիորեն առաջնորդվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով:

## **3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 17.12.2012 թվականին դիմելով Ծառայությանը՝ Սամսոն Խարազյանը պահանջել է նշանակել տարիքային աշխատանքային կենսաթոշակ (**հատոր 1-ին, գ.թ. 86**):

2) Ծառայության 16.05.2013 թվականի թիվ Ա251/337 և 06.05.2014 թվականի թիվ ԱԳ/ԱզԱ-1/3359/14 գրությունների համաձայն՝ Ծառայությունը 24.12.2012 թվականին մերժել է Սամսոն Խարազյանի 17.12.2012 թվականի դիմումը՝ պատճառաբանելով, որ աշխատանքային գրքույկում և բարձրագույն կրթության դիպլոմում Սամսոն Խարազյանի անունը նշված է «Սամվել» (**հատոր 1-ին, գ.թ. 37-38, հատոր 2-րդ, գ.թ. 72**):

3) ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 28.02.2013 թվականի վճռով հաստատվել է, որ 20.11.1976 թվականին Սամվել Սուրենի Խարազյանի անվամբ տրված թիվ APM 0074877 աշխատանքային գրքույկը, նրանում ներառված 1976-2008 թվականների աշխատանքային ստաժի վերաբերյալ գրառումները և 24.12.2012 թվականին ՀՀ ազգային արխիվի Արարատի մարզային մասնաճյուղի կողմից տրված թիվ 1184 արխիվային տեղեկանքը, ինչպես նաև Սամվել Սուրենի Խարազյանի անվամբ Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի կողմից 30.06.1977 թվականին տրված թիվ Դ-1 000051 բարձրագույն կրթության դիպլոմը պատկանում և վերաբերում են Սամսոն Սուրենի Խարազյանին (**հատոր 1-ին, գ.թ. 87-89**):

4) Ծառայության 16.05.2013 թվականի թիվ Ա251/337 և 06.05.2014 թվականի թիվ ԱԳ/ԱզԱ-1/3359/14 գրությունների համաձայն՝ 29.03.2013 թվականին Սամսոն Խարազյանը կրկին դիմում է ներկայացրել Ծառայությանը՝ կենսաթոշակ նշանակելու մասին, և Ծառայությունը 29.03.2013 թվականից Սամսոն Խարազյանին նշանակել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ (**հատոր 1-ին, գ.թ. 37-38, հատոր 2-րդ, գ.թ. 72**):

## **4. Վճռաբեկ դատարանի պարզադատականությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքների քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ անձի դիմումը մերժելու մասին որոշումը չլիճարկելու պայմաններում անձի կողմից կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ կրկին դիմում ներկայացնելու դեպքում «Պետական կենսաթոշակ-

ների մասին» ՀՀ օրենքի իմաստով ընդ օրը պետք է համարվի կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **Նույն օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն** Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, եթե նույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով **կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի**, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում, և նրան նշանակվել է կենսաթոշակ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը կապված է որոշակի հանգամանքների հետ, որոնց օրենքը տալիս է իրավական նշանակություն (իրավաբանական փաստեր): Մասնավորապես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը տարանջատել է «**կենսաթոշակի իրավունք**» և «**կենսաթոշակ ստանալու իրավունք**» հասկացությունները: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրի ծագման համար նախատեսվել են տարբեր իրավաբանական փաստեր: Մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքը ծագում է օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում, իսկ կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ կենսաթոշակի իրավունքի առկայությամբ պայմանավորված՝ համապատասխան մարմնի սահմանված կարգով դիմելու պարագայում (*տես Արարար Ափոյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնջից ազգային անվտանգության ծառայության թիվ ՎԳ/6690/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմում ներկայացնելու օրը**: Դիմումին կցվում են օրենսդրությամբ սահմանված՝ **կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը**: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, **հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները**, կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) նշանակել կենսաթոշակ.

2) նշանակել կենսաթոշակ և տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին.

3) մերժել կենսաթոշակ նշանակելը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

1) անձը չունի կենսաթոշակի իրավունք.

2) կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում.

3) **ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար.**

4) անձն ունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող՝ նույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունք:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու և լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները և որոշումը բողոքարկելու կարգը, իսկ նույն հոդվածի 7-րդ մասի 4-րդ կետում նշված դեպքում՝ նաև կենսաթոշակի տեսակը փոխելու նրա իրավունքի և դրա իրականացման կարգի վերաբերյալ:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ վարույթն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանվել է վարչական վարույթի ավելի կարճ՝ տասն աշխատանքային օրվա ժամկետ, սահմանվել է վարույթը եզրափակող վարչական ակտի՝ որոշում կայացման համար հիմք հանդիսացող հանգամանքների շրջանակը, այն է՝ ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները:

Բացի այդ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանվել է նաև, թե կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձի կողմից ներկայացված փաստաթղթերի և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալների հիման վրա կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմինն ինչպիսի որոշում կարող է ընդունել: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված որոշումներից մեկի ընդունմամբ ավարտվում է կենսաթոշակ նշանակելու դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով սպառիչ կերպով սահմանված են դիմումը մերժելու հիմքերը, իսկ նույն հոդվածի 8-րդ մասով սահմանվել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի՝ կենսաթոշակ նշանակելու դիմումը մերժելու դեպքում հնգօրյա ժամկետում կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին պատշաճ կարգով ծանուցելու պարտականությունը: Ընդ որում, նշված ծանուցումը պետք է պարունակի մերժման պատճառները և բողոքարկման կարգը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված կարգավորումն ինքնանպատակ չէ, այն հնարավորություն է տալիս կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին, ով համաձայն չէ մերժման հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով՝ գործակալում իրացնելու իր արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները:

Վճռաբեկ դատարանը նաև հարկ է համարում նշել որ նախկինում կայացրած որոշումներով անդրադարձել է վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի հարցին՝ նշելով, որ ՀՀ Սահմանադրության ուժով վարչական ակտի չվիճարկման պայմաններում յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական ակտն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված վարչական մարմնի լիազորությունների շրջանակում, և այն ենթակա է կատարման: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ չվիճարկված վարչական ակտն իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը չի կարող կասկածի տակ դնել դրա **իրավաչափությունը** (տե՛ս *Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Հրայր Բարսեղյանի թիվ ՎԳ/2068/05/08 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը):

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի՝ կենսաթոշակի նշանակումը մերժելու մասին որոշումը վարչական կամ դատական կարգով չի վիճարկվել, որևէ անձ, այդ թվում՝ դատարանը չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ անձի դիմումը մերժելու մասին որոշումը չվիճարկելու պայմաններում անձի կողմից կրկին ներկայացված դիմումով հարուցվում է նոր վարույթ, իսկ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով այդ դեպքում կենսաթոշակ նշա-

նակելու համար դիմելու օր պետք է համարվի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում **կրկին** դիմում ներկայացնելու օրը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սամսոն Խարազյանը **17.12.2012 թվականին** դիմում է ներկայացրել Ծառայության Արտաշատի սոցիալական ապահովության տարածքային բաժին՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ կենսաթոշակ նշանակելու համար: 24.12.2012 թվականին Ծառայությունը Սամսոն Խարազյանի դիմումը մերժել է՝ պատճառաբանելով, որ ներկայացված աշխատանքային գրքույկում և բարձրագույն կրթության դիպլոմում Սամսոն Խարազյանի անունը նշված է «Սամվել Խարազյան»: Սամսոն Խարազյանը **29.03.2013 թվականին** կրկին դիմել է Ծառայության Արտաշատի սոցիալական ապահովության տարածքային բաժին և պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է նաև ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 28.02.2013 թվականի վճիռը, որով հաստատվել է, որ 20.11.1976 թվականին Սամվել Սուրենի Խարազյանի անվամբ տրված թիվ APM 0074877 աշխատանքային գրքույկը, նրանում ներառված 1976–2008 թվականների աշխատանքային ստաժի վերաբերյալ գրառումները և 24.12.2012 թվականին ՀՀ ազգային արխիվի Արարատի մարզային մասնաճյուղի կողմից տրված թիվ 1184 արխիվային տեղեկանքը, ինչպես նաև Սամվել Սուրենի Խարազյանի անվամբ Երևանի անասնաբուժական–անասնաբուժական ինստիտուտի կողմից 30.06.1977 թվականին տրված թիվ Դ-1 000051 բարձրագույն կրթության դիպլոմը պատկանում և վերաբերում են Սամսոն Սուրենի Խարազյանին: Ծառայությունը **29.03.2013 թվականին** Սամսոն Խարազյանին նշանակել է կենսաթոշակ:

Սույն գործով Դատարանը հայցը 17.12.2012 թվականից կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու պահանջի մասով մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում Սամսոն Խարազյանի կողմից 17.12.2012 թվականին Ծառայությանը ներկայացրած դիմումի ըննության ընթացքում առկա է եղել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33–րդ հոդվածի 7–րդ մասի 3–րդ կետով սահմանված՝ դիմումի մերժման հիմքը, այն է՝ ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն եղել կենսաթոշակ նշանակելու համար, ուստի Սամսոն Խարազյանի 17.12.2012 թվականի դիմումն իրավաչափորեն է մերժվել, որպիսի պայմաններում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33–րդ հոդվածի 2–րդ մասով սահմանված դիմելու օր է համարվել 29.03.2013 թվականը:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելու և Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում սահմանափակվել է անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը ոչ իր մեղքով, այլ փաստաթղթերում առկա թերությունների պատճառով, մինչդեռ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է այն փաստը, որ աշխատանքային գրքույկը և բարձրագույն կրթության դիպլոմը պատկանում են Սամսոն Խարազյանին, ուստի դիմում ներկայացնելու օր պետք է դիտարկել 17.12.2012 թվականը, այլ ոչ թե կրկին 29.03.2013 թվականին Ծառայության պահանջը կատարելուց հետո ներկայացված դիմումի օրը:

Մինչդեռ վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են, քանի որ Սամսոն Խարազյանի 17.12.2012 թվականի դիմումը Ծառայության կողմից 24.12.2012 թվականին մերժելու, և 17.12.2012 թվականին հարուցված, 24.12.2012 թվականին արդեն իսկ ավարտված վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը չլիճարկելու պայմաններում Սամսոն Խարազյանի կողմից կենսաթոշակ նշանակելու համար Ծառայություն դիմելու օր պետք է համարվի Սամսոն Խարազյանի կողմից կրկին դիմում ներկայացնելու օրը, այն է՝ 29.03.2013 թվականը, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայությունը Սամսոն Խարազյանին իրավաչափորեն կենսաթոշակ է նշանակել 29.03.2013 թվականին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր են վճռաբեկ բողոքների փաստարկները՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33–րդ հոդվածի սխալ մեկնաբանման վերաբերյալ, և արձանագրում է, որ սույն գործով ներկայացված պահանջների և դրանք հիմնավորող ապացույցների շրջա-

նակում Դատարանի կողմից կայացվել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ:

*Նշված պարճատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքների պարասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ և 19-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կանոնները կիրառելի են նաև երրորդ անձանց պարագայում (*յունի Տիգրան Սանասարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձինք Սյրելյա Մողմունյանի, «Ազրուպասարկուս» ԱՄ ՇՄ» ԲԲԸ-ի թիվ ՎԳ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):



Նկատի ունենալով, որ սույն գործով վճռաբեկ բողոքները ենթակա են բավարարման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը, գտնում է, որ Սամսոն Խարազյանից հոգուտ Ծառայության և Նախարարության ենթակա է բռնագանձման 20.000-ական ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.09.2015 թվականի որոշումը և 17.12.2012 թվականից մինչև 2013 թվականի մարտ ամիսը կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու պահանջը մերժելու մասով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 14.04.2015 թվականի վճռին:

2. Սամսոն Խարազյանից հոգուտ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

Սամսոն Խարազյանից հոգուտ ՀՀ ֆինանսների նախարարության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սրորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սրորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/0830/05/14  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Վարչական գործ թիվ ՎԳ/0830/05/14  
2016 թ.

Ա. Բաբայան  
Ա. Աբովյան  
Ա. Սարգսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Մաքրոնալդս Քորփորեյշն» ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Արտակ Ավանեսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.05.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ «Վեստ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) հայցի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն), երրորդ անձ Ընկերության՝ թիվ 4042 գրանցման համարն ունեցող «РОНАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու (ճանաչելու) պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է չեղյալ հայտարարել (ճանաչել) թիվ 4042 գրանցման համարն ունեցող «РОНАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 25.09.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.05.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.09.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 10-րդ հոդվածները և 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության փաստացի առկայությունը կամ բացակայությունն ընդհանրապես վարչարարության արդյունք չէ, իսկ վարչական դատավարության կարգով այդ իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջի մասին հայց ներկայացնելն անթույլատրելի է, հետևաբար սույն գործը ենթակա չէ վարչական դատարանի քննությանը:

Բացի այդ, Կազմակերպությունը սույն գործի քննության ընթացքում չի հիմնավորել այն հանգամանքը, որ «РОПАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի՝ Ընկերության անվանը գրանցված լինելը որևէ կերպ խախտում է իր իրավունքներն ու օրինական շահերը: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի ուժով Կազմակերպությունը չէր կարող նշված ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու (ճանաչելու) հայցապահանջով դիմել վարչական դատարան: Փաստորեն, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել սույն գործով վիճարկվող ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու (ճանաչելու) վերաբերյալ հայց հարուցելու՝ Կազմակերպության իրավական շահագրգռվածության հարցին, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.05.2015 թվականի որոշումը և կարճել գործի վարույթը կամ գործն ուղարկել նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

Գործակալության պաշտոնական ինտերնետային կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը թիվ 4042 գրացման համարի տակ 12.02.1999 թվականին գրանցված «РОПАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի իրավատերն է Հայաստանի Հանրապետությունում (*հիմք՝ Գործակալության պաշտոնական ինտերնետային կայք, ինտերնետային հղում՝ [http://www.aipa.am/search\\_mods/tm\\_database/view\\_item.php?id=970050](http://www.aipa.am/search_mods/tm_database/view_item.php?id=970050), հարյուր 1-ին, գ.թ. 7-8*):

## **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սովյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հանրային և մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերի ընդդատության տարանջատման և դրա հիման վրա ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջի հիման վրա հարուցված գործերի ընդդատության որոշման վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերկյալ իրավական հարցադրմանը. «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործն ընդդարյա է արդյո՞ք վարչական դատարանին, թե՛ ընդհանուր իրավասության դատարանին:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենսգիրքը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում (...), Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանում (...) և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում (...) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական և վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է նույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատավարությունն իրականացվում է գործի քննության ժամանակ գործող օրենքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդդատությունը՝ որպես դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որոնք կարգավորում են դատարանի քննությանը ենթակա բոլոր գործերի բաշխումը ՀՀ դատական իշխանության առաջին աստիճանի կոնկրետ դատարանների միջև:

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը կանխորոշել է ընդհանուր իրավասության դատարանի ընդդատության շրջանակը, որն ընդգրկում է բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանի քննությանը վերապահված գործերի, իսկ ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը սահմանել է ՀՀ վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որը կազմված է հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերից: Փաստորեն, դատական գործերի տարանջատումը քաղաքացիականի և վարչականի պայմանավորված է այդ գործերով վիճելի իրավահարաբերության բնույթից. կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել այդ գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք տվյալ գործը ծագում է հանրային, թե մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից:

Այսպիսով, իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը):

Անդրադառնալով հանրային իրավահարաբերությունների հատկանիշների մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող: Այսինքն՝ հանրային են այն իրավահարաբերությունները, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում (սրեն ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայկ Մարգարյանի թիվ ԵՍԷԳ/1369/02/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ իր մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ հանրային իրավահարաբերությունների մյուս բնորոշ առանձնահատկությունն այն է, որ պետական կառավարման մարմինների համար սահմանված լիազորությունների նպատակն այդ մարմինների կողմից իրենց վրա դրված հանրային պարտականությունների կատարումն է: Այդ պատճառով էլ հանրային իրավունքի նորմերը, որպես կանոն, սահմանում են, թե ինչպես պետք է իշխանական լիազորություններով օժտված մարմիններն օգտվեն իրենց լիազորություններից: Այլ կերպ ասած՝ հանրային իրավահարաբերությունում իշխանական լիազորություններով օժտված մարմինները գործում են օրենքով իրենց վերապահված իրավասությունների սահմաններում և պարտավոր են կատարել օրենքով իրենց վրա դրված պարտականությունները:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ հանրային իրավահարաբերությունների բովանդակությունը պետք է կազմի հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը: Հանրային իրավունքի նորմերը, պետական մարմիններին գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում ընձեռելով որոշակի լիազորություններ, միաժամանակ սահմանում են, թե ինչպես այդ մարմինները պետք է օգտվեն նշված լիազորություններից: Ընդ որում, իրավական պետությունում օրինականության սկզբունքին համահունչ գործադիր-կարգադրիչ գործունեություն իրականացնելիս վարչական մարմինների կողմից, որպես կանոն, այդպիսի իրավունքներից օգտվելը վերջիններիս համար կրում է պարտադիր բնույթ: Այսպես, վարչական մարմիններն իրավունք ունեն գործելու միայն ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան և դրանց շրջանակներում և իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով: Այլ կերպ ասած՝ վարչական մարմիններին գործադիր-կարգադրիչ գործունեության համար ընձեռված լիազորություններն ինքնասպասակ չեն. դրանց միջոցով իրականացվում են իրավական պետության բովանդակային սկզբունքները (տե՛ս «Նոյան Տապան» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչության թիվ ՎԳ/12145/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես ցանկացած հարաբերություն, այնպես էլ իրավական նորմերի միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունը՝ իրավահարաբերությունը, որոշակի փոխկապակցված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն) ամբողջություն (համակարգ) է, որոնց բովանդակային-որակական տարբերությունը հնարավորություն է տալիս իրավահարաբերությունները տարանջատելու միմյանցից: Սահմանվորապես՝ հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը:

Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձինք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ:

Իրավահարաբերության բովանդակությունը տվյալ հարաբերության սուբյեկտների փոխադարձ իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որը հանրային բնույթի իրավահարաբերության պարագայում հանգում է հետևյալին. այդ հարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանության սուբյեկտն ունի օրենքով սահմանված իր իշխանական լիազորություններն իրականացնելու պարտականություն, ինչն էլ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտի իրավունքների իրացման անհրաժեշտ և բավարար պայմանն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանրային իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող իշխանության մարմինը հանրային իրավահարաբերության շրջանակներում կարող է օժտված լինել ոչ թե իրավունքներով, այլ մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկն ընտրելու, այսինքն՝ օրենքով սահմանված որոշակի դեպքերում և բավարար փաստական հիմքերի առկայության պայմաններում վարչական հայեցողություն դրսևորելու հնարավորությամբ: Մինևույն ժամանակ հանրային իրավահարաբերության՝ իշխանական լիազորություններով չօժտված կողմը, բացի իր հանրային սուբյեկտի իրավունքներից, կարող է կրել նաև այդ հարաբերության բովանդակության մեջ ներառված պարտականություններ, քանի որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց հանրային սուբյեկտի իրավունքներն իրացնելիս պետք է պահպանեն նորմատիվ իրավական

ակտերով սահմանված ընթացակարգային իրավական կարգավորումներն ու օրենսդրական բոլոր պահանջները:

Իրավահարաբերության օբյեկտն այն նյութական և (կամ) հոգևոր արժեքն է, ինչի կապակցությամբ որոշակի իրավաբանական փաստի (փաստական կազմի) հիման վրա կողմերի միջև ծագում է իրավահարաբերությունը: Հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սպասարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի կողմից այն իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ, քանի որ հանրային իրավունքով կարգավորվող հարաբերության շրջանակներում սուբյեկտը գործում է ոչ թե իր, այլ հանրային շահերի վերհանման և ապահովման նպատակով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իրավունքում «շահ» հասկացության դասակարգումը հանրայինի և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս փոխկապակցվածության մեջ և գրեթե միշտ փոխլրացնում են միմյանց: Այսպես, իրավական շահը դասակարգվում է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին. հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայմանն չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը: Սակայն հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլ նաև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրա-

կանացույնը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում ու կարգով ճանաչվում է քաղաքացու կամ իրավաբանական անձի բացառիկ իրավունքը մտավոր գործունեության օբյեկտիվ արտահայտված արդյունքների և դրանց հավասարեցված իրավաբանական անձի, արտադրանքի, կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների անհատականացման միջոցների (ֆիրմային անվանում, ապրանքային նշան, սպասարկման նշան և այլն) նկատմամբ (մտավոր սեփականություն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մտավոր սեփականության օբյեկտներ են (...) քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցներ են ապրանքային նշանները (սպասարկման նշանները):

Վկայակոչված իրավական նորմերից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական նորմերի ուժով, իսկ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը, բացի վերոգրյալ երաշխիքներից, իրականացվում է նաև օրենքի ուժով: Ապրանքային նշանը՝ որպես քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոց, մտավոր սեփականության օբյեկտ է, իսկ մտավոր սեփականության իրավունքը սահմանադրական նորմի ուժով պաշտպանվում է օրենքով: Ավելին, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ ՄԻԵԴ) իր նախադեպային իրավունքում արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածն ըստ էության կիրառելի է նաև մտավոր սեփականության նկատմամբ (յուեն օրինակ «Անհոյգեր-Բուշ ինկ.» ընկերությունն ընդդեմ Պորտուգալիայի գործով ՄԻԵԴ-ի 11.01.2007 թվականի վճիռը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապրանքային նշաններին իրավական պահպանություն է տրամադրվում ոչ միայն դրանց գրանցման, այլ նաև դրանց հանրահայտ ճանաչելու, իսկ որոշ դեպքերում նաև ապրանքային նշանի օգտագործման ուժով: Ապրանքային նշանի իրավական պահպանությունը նպատակաուղղված է կանխելու անարդար մրցակցությունը, երաշխավորելու ներդրումների պաշտպանվածությունը, ինչպես նաև սպառողներին գեղծ պահելու կեղծ կամ սպալողմտորոշող գովազդից, անորակ ապրանքներից կամ ծառայություններից (յուեն «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԳ/4241/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հրաժարվելն իրենց իրավունքներն իրականացնելուց չի հանգեցնում այդ իրավունքների դադարման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:



«Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 20.03.1883 թվականի փարիզյան կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 25.12.1991 թվականից) 5-րդ հոդվածի «Գ» («C») կետի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե երկրում գրանցված նշանի օգտագործումը պարտադիր է, գրանցումը կարող է անվավեր ճանաչվել միայն արդարացի ժամկետի լրանալու դեպքում և միայն այն ժամանակ, երբ շահագրգիռ անձը չներկայացնի ապացույցներ, որոնք արդարացնում են նրա անգործության պատճառները:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է ապրանքային և սպասարկման նշանների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով ապրանքային նշանի օգտագործում է համարվում՝

1) դրա գեղեղուն այն ապրանքների վրա, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, կամ դրանց փաթեթավորման վրա.

2) դրա կիրառումը գովազդներում, հրատարակություններում, պաշտոնական ձևաթղթերում, ցուցանակներում միայն այն դեպքերում, երբ ապրանքների կամ դրանց փաթեթավորման վրա նշանի կիրառումն անհնար է.

3) նույն մասի 2-րդ կետում նշված գործողությունների կատարումը ծառայությունների համար:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանի գրանցումը կարող է ցանկացած անձի կողմից ներկայացված հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա չեղյալ հայտարարվել բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված՝ հինգ տարի անընդմեջ, կամ հայցը (հակընդդեմ հայցը) ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանն ընդհանրապես չի օգտագործվել կամ իրական օգտագործման մեջ չի դրվել ապրանքային նշանի իրավատիրոջ կամ նույն օրենքի համաձայն՝ այդ իրավունքն ունեցող անձի կողմից: Ապրանքային նշանի օգտագործման ապացույցները ներկայացնում է դրա իրավատերը կամ նույն օրենքի համաձայն՝ տվյալ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձը:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային նշանի գրանցումը կարող է չեղյալ հայտարարվել դատարան ներկայացված համապատասխան հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված հինգ տարի անընդմեջ կամ հայցը (հակընդդեմ հայցը) ավելի ուշ ներկայացնելու դեպքում դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում ընդհանրապես չի օգտագործվել կամ իրական օգտագործման մեջ չի դրվել ապրանքային նշանի իրավատիրոջ կամ նույն օրենքի համաձայն՝ տվյալ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այն ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը՝ հաշվի առնելով նույն օրենքի 17-րդ հոդվածի դրույթները:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերին համապատասխան՝ դատարանի վճռի հիման վրա ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու դեպքում դրա իրավատերը գրկվում է ապրանքային նշանի նկատմամբ իրավունքներից ամբողջովին կամ մասնակիորեն՝ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

Վերոգրյալ իրավանքների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքներն իրականացնում են իրենց հայեցողությամբ, և, որպես ընդհանուր կանոն, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց պատկանող քաղաքացիական իրավունքներն իրականացնելուց հրաժարվելը չի հանգեցնում այդ իրավունքների դադարման: Մինևնույն ժամանակ օրենքով կարող են նախատեսվել նշված ընդհանուր կա-

նունից բացառություններ: Այլ կերպ ասած՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց պատկանող քաղաքացիական իրավունքներն իրականացնելուց հրաժարվելը հանգեցնում է այդ իրավունքների դադարման միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Օրենսդիրն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրել է, որ ապրանքային նշանի գրանցումը կարող է դատական կարգով չեղյալ հայտարարվել բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանը դրա իրավատիրոջ կամ այն օգտագործելու իրավունք ունեցող անձի կողմից չի օգտագործվել օրենքով սահմանված կարգով հաշվարկվող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի իմաստով օրենքով նախատեսված դեպք է, երբ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց պատկանող քաղաքացիական իրավունքներն իրականացնելուց հրաժարվելը հանգեցնում է այդ իրավունքների դադարման:

Այսպես, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում նշված եղանակներով ապրանքային նշանի օգտագործումն ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի բովանդակային տարրն է, և ապրանքային նշանի չօգտագործումը դրա նկատմամբ բացառիկ իրավունքն իրականացնելուց հրաժարումն է: Ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից դրա նկատմամբ բացառիկ իրավունքն իրականացնելուց հրաժարվելը, որը դրսևորվում է այն չօգտագործելու ձևով, օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում կարող է հանգեցնել ապրանքային նշանի նկատմամբ վերջինիս իրավատիրոջ բացառիկ իրավունքի դադարման, քանի որ ըստ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու դեպքում դրա իրավատերն ամբողջությամբ կամ մասնակիորեն զրկվում է ապրանքային նշանի նկատմամբ իր իրավունքներից: Նշված օրենսդրական կարգավորումները համահունչ են նաև ապրանքային նշանների իրավական պահպանության վերաբերյալ կարևորագույն միջազգային իրավական պայմանագրի՝ «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 20.03.1883 թվականի փարիզյան կոնվենցիայի դրույթներին, որոնց համաձայն՝ ներպետական օրենսդրությամբ կարող է նախատեսվել որոշակի արդարացի ժամկետում ապրանքային նշանի պարտադիր օգտագործման պայման, որի չպահպանումը կարող է հանգեցնել ապրանքային նշանի գրանցման վերացմանը:

Փաստորեն, վերագրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ ապրանքային նշանի իրավատերը պարտավոր է բարեխղճորեն օգտվել ապրանքային նշանի նկատմամբ իր բացառիկ իրավունքից, որը նախևառաջ ենթադրում է գրանցված ապրանքային նշանի՝ օրենքով սահմանված կարգով օգտագործում: Գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից դրա՝ օրենքով սահմանված կարգով օգտագործումն այդ ապրանքային նշանի նկատմամբ ունեցած իրավունքների պահպանման պայմանն է, որը կոչված է ապահովելու ապրանքների և ծառայությունների բնականոն քաղաքացիական շրջանառությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով ապրանքային նշանի գրանցումը կարող է չեղյալ հայտարարվել դատական կարգով՝ համապատասխան շահագրգիռ անձի հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր նախկին որոշմամբ անդրադառնալով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումների բովանդակությանը, նշել է, որ նշված դրույթով օրենսդիրը նախատեսել է դատարանի կողմից ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հիմքերը, այն է՝ ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված՝ հինգ տարի անընդմեջ, կամ հայցը (հակընդդեմ հայցը) ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանը չօգտագործվելը կամ իրական օգտագործման մեջ չդրվելը: ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով դատարանն ղեկավարելով իրավունքը «ցանկացած անձին» վերապահելու իրավակարգավորումից չի կարող հետևել, որ անձն իրավական շահագրգռվածության բացակայության պարագայում

ևս կարող է ակնկալել դատական պաշտպանություն: Ցանկացած պարագայում դատարան դիմելը ենթադրում է խախտված իրավունքների վերականգնում՝ լինի դա մասնավոր իրավահարաբերությունից ծագած վեճի, թե հանրային իրավահարաբերությունից ծագած վեճի արդյունք: Բացի այդ, դատական պաշտպանության իրավունքը չի կարող լինել ինքնանպատակ, և անձը չի կարող դիմել դատարան, եթե առկա չէ վերջինիս «իրական (ռեալ)» իրավունքների խախտում կամ խախտման վտանգ (յուն *Ջորջիո ԱՐՄԱՆԻ Ս.Պ.Ա. Միլան, Սվիս Բրենչ Մենդրիսիո ընկերությունն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության թիվ ՎԴ/9190/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ վիճելի իրավահարաբերությունը ծագում է գրանցված ապրանքային նշանի՝ դրա իրավատիրոջ (կամ օգտագործման իրավունք ունեցող անձի) կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում օգտագործվելու կամ չօգտագործվելու հարցը պարզելու առնչությամբ: Ընդ որում, օրենքով սահմանված կարգով և ժամկետում ապրանքային նշանի օգտագործման վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է տվյալ ապրանքային նշանի իրավատերը (կամ օգտագործման իրավունք ունեցող անձը):

Այսպիսով, ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու հետ կապված իրավական վեճը ծագում է մի կողմից՝ ապրանքային նշանի իրավատիրոջ (կամ դրա օգտագործման իրավունք ունեցող անձի), իսկ մյուս կողմից՝ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձի միջև: Այլ կերպ ասած՝ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վիճելի իրավահարաբերությունն ունի հետևյալ սուբյեկտային կազմը. մի կողմից՝ ապրանքային նշանի իրավատերը կամ դրա օգտագործման իրավունք ունեցող անձը, իսկ մյուս կողմից՝ այն շահագրգիռ անձը, որը պահանջում է դատական կարգով չեղյալ հայտարարել ապրանքային նշանի գրանցումը:

Փաստորեն, թեև Գործակալությունն իրականացնում է օրենսդրությամբ իրեն վերապահված ապրանքային նշաններին պահպանություն տրամադրելու հետ կապված գործառնությունները, սակայն վերջինս խնդրո առարկա իրավահարաբերությունների շրջանակներում որպես կողմ հանդես չի գալիս, քանի որ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ իրավական վեճը ծագում է ապրանքային նշանի իրավատիրոջ (կամ դրա օգտագործման իրավունք ունեցող անձի) և ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձի միջև:

Հիմք ընդունելով ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

1. ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ վեճի սուբյեկտները բացառապես մասնավոր անձինք են՝ մի կողմից՝ ապրանքային նշանի իրավատերը կամ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձը, իսկ մյուս կողմից՝ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձը,

2. ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է քաղաքացիական իրավունքի մասնավոր սուբյեկտի՝ ապրանքային նշանի իրավատիրոջ կամ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ապրանքային նշանի օգտագործման հետ կապված իր քաղաքացիական իրավունքները բարեխիղճ իրականացնելու պարտականությանը և այդ քաղաքացիական իրավունքի իրականացումից հրաժարվելու անբարենպաստ իրավաբանական հետևանքներին,

3. թեև ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելը վերջին հաշվով միտված է հանրային շահի, մասնավորապես՝ շուկայական տնտեսության բնականոն գործունեության ապահովմանը, սակայն նշված իրավահարաբերությունը ծագում է ոչ թե այդ հանրային շահի իրացման, այլ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձի մաս-

նավոր տնտեսական շահերի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացման և առարկայացման կապակցությամբ:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջի հիման վրա հարուցված գործերը չեն բխում հանրային իրավահարաբերություններից ծագող վեճից և ընդդատյա չեն վարչական դատարանին: Այլ կերպ ասած՝ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ դատական գործերը բխում են մասնավոր՝ քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագող վեճից և ընդդատյա են ընդհանուր իրավասության դատարանին:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով Ընկերության անվամբ «РОНАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու Կազմակերպության հայցի հիման վրա:

Դատարանը բավարարել է Կազմակերպության հայցը և չեղյալ է հայտարարել Ընկերության անվամբ «РОНАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի գրանցումը: Դատարանն իր նշված վճռի հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ «РОНАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի իրավատերը՝ Ընկերությունը, չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ նշված ապրանքային նշանը Գործակալության կողմից գրանցվելու պահից՝ 12.02.1999 թվականից, մինչև հայցադիմումը ներկայացնելու օրը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով սահմանված եղանակներով երբևէ օգտագործվել է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի նշված եզրահանգումը և իր բողոքարկվող որոշմամբ մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ: Վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ սույն գործով քննվող վեճը բխում է հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա է վարչական դատարանի քննությանը, քանի որ ըստ Վերաքննիչ դատարանի որոշման՝ «(...) *համապարասիան գրանցամատյանում ապրանքային նշանների վերաբերյալ ցանկացած, այդ թվում՝ նաև՝ չեղյալ ճանաչելու մասին գրանցում կատարելու հիմքերի առկայության դեպքում համապարասիան լիազոր պետական մարմնի գործառնության իրականացումը հարուցված օրենքով նախատեսված լինելու պարագայում այդ հարաբերությունները կարող են որակվել միայն որպես հանրային (...)*»: Մինչև սույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի ուժով ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարանն դիմելու իրավական շահագրգռվածություն կարող է առկա լինել յուրաքանչյուր անձի մոտ, որոնք կարծում են, որ տվյալ ապրանքային նշանը չի օգտագործվել օրենքով սահմանված ժամանակահատվածում:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, արձանագրում է, որ սույն գործը բխում է ոչ թե հանրային, այլ մասնավոր իրավահարաբերություններից ծագող վեճից:

Այսպես,

1. «РОНАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ սույն գործով քննության ենթակա վեճի սուբյեկտները բացառապես մասնավոր անձինք են՝ մի կողմից՝ նշված ապրանքային նշանի իրավատերը՝ Ընկերությունը, իսկ մյուս կողմից՝ այդ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարանն դիմած անձը՝ Կազմակերպությունը,

2. «РОНАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ սույն գործով քննության ենթակա վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է քաղաքացիական իրավունքի մասնավոր սուբյեկտի՝ Ընկերության կողմից այդ ապրանքային նշանի օգտագործման հետ կապված իր քաղաքացիական իրավունքները բարեխիղճ իրականաց-

նելու պարտականությանը և այդ քաղաքացիական իրավունքի իրականացումից հրաժարվելու անբարենպաստ իրավաբանական հետևանքներին,

3. տույն գործով վիճելի իրավահարաբերությունը ծագում է «РОНАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած անձի՝ Կազմակերպության մոտ առերևույթ առկա մասնավոր տնտեսական շահերի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացման և առարկայացման կապակցությամբ:

Հետևաբար ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով Ընկերության անվամբ «РОНАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու Կազմակերպության հայցապահանջի հիման վրա հարուցված տույն գործն ընդդատյա չէ վարչական դատարանի քննությանը, որպիսի պարագայում ենթակա են կիրառման ընդդատության կանոնների խախտման դատավարական հետևանքները: Անդրադառնալով այդ հետևանքներին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ օրենսդիրը, նպատակ ունենալով վարչական արդարադատության համակարգում ապահովել դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, նախատեսել է հայցադիմումի վերահասցեագրման ինստիտուտը: Ընդ որում, այս կառուցակարգը վարչական դատավարության համակարգ ներդրվեց 05.12.2013 թվականին ընդունված և 07.01.2014 թվականին ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (մինչ այդ գործող՝ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նշված կանոնի խախտումը դիտում էր որպես գործի վարույթի կարճման հիմք): Հայցադիմումը վերահասցեագրելը սահմանելով որպես վարչական դատարանի պարտականություն՝ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է, որ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության: Այսպիսով, վարչական դատարանը, կաշկանդված լինելով արդարադատության պատշաճ իրականացման և անձանց իրավունքների ու ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության ապահովման կոնվենցիոն կարգավորումներով, պարտավոր է պարզել արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է վարչական դատարանին, թե՛ ոչ, և գործը վարչական դատարանին ընդդատյա չլինելու պարագայում վերահասցեագրել այն ըստ ընդդատության՝ դրանով իսկ ապահովելով անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի գործնական իրականացման երաշխավորումը:

Փաստորեն, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում սահմանել է, որ վարչական դատարանին որևէ գործի ընդդատյա չլինելու հանգամանքն այդ գործի քննության ընթացքում պարզվելու իրավաբանական հետևանքն այն է, որ վարչական դատարանը որոշում է կայացնում տվյալ գործն ըստ ընդդատության վերահասցեագրելու մասին:

Մինևն փաստանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը կարգավորել է նաև այն դեպքը, երբ վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության: Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության: «Որևէ դատարան» եզրույթի ներքո օրենսդիրն նկատի է ունեցել, որ վեճը վերապահված չէ ՀՀ-ում գործող ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների քննությանը և լուծմանը: Նման իրավակարգավորումը կոչված է բացառելու դատարանների իրավասությանը չհանձնված վեճերի քննությունը և լուծումը դատարանների կողմից: Եթե գործը ենթակա չէ դատարանին, ապա դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ խախտել այլ մարմինների իրավասությունը և լուծել նրանց վերապահված գործերը, հետևաբար գործի վարույթը ենթակա է կարճման:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելը տվյալ գործի քննության ընթացքում պարզվելու կապակցությամբ այլ իրավակարգավորումներ են սահմանվում գործող քաղաքացիադատավարական օրենսդրությամբ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Տարածքային ընդդատությունը» վերտառությամբ 12-րդ գլխի 86-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության, եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ գործի՝ ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելը տվյալ գործի քննության ընթացքում պարզվելու դեպքում դատարանը կարող է գործը հանձնել այլ դատարանի քննության, եթե այն վարույթ է ընդունվել տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ, ընդ որում, «այլ դատարան» եզրույթի ներքո օրենսդիրն նկատի է ունեցել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործեր քննող ընդհանուր իրավասության դատարաններին: Մինչդեռ գործող քաղաքացիադատավարական օրենսդրությունն առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործն այլ դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ որևէ իրավակարգավորում չի նախատեսում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կանոնը վերաբերում է միայն այն դեպքին, երբ գործը վարույթ է ընդունվել տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ, երբ գործը վարույթ է ընդունվել տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործի՝ առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելը տվյալ գործի քննության ընթացքում պարզվելու դեպքում դատարանն իրավասու չէ այն հանձնել այլ դատարանի քննությանը: Տվյալ պարագայում դատարանը պարտավոր է կարճել գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Այսինքն՝ այն դեպքում, երբ որևէ գործի քննության ընթացքում պարզվում է, որ այն վարույթ է ընդունվել առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ, դատարանը պարտավոր է վճիռ կայացնել գործի վարույթը կարճելու մասին այն հիմքով, որ տվյալ գործը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանում քննության: Ընդ որում, նշված հոդվածի հիմքով ենթակա են կարճման ոչ միայն այն գործերը, որոնցով վեճը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանի քննությանը, այլև այն գործերը, որոնցով վեճը ընդհանրապես ենթակա չէ որևէ այլ դատարանի քննությանը:

Փաստորեն, ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, որը տարբերակված մոտեցում է դրսևորել վեճը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա չլինելու և վեճը որևէ դատարանին ենթակա չլինելու հարցում, տարբերակված կերպով կարգավորելով նաև դրանցից բխող դատավարական հետևանքները (մի դեպքում սահմանելով վերահասցեագրման, մյուս դեպքում՝ գործի վարույթի կարճման հնարավորություն)՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը և՛ վեճն ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա չլինելու, և՛ ընդհանրապես որևէ դատարանին ենթակա չլինելու պարագայում նախատեսել է մեկ ընդհանուր դատավարական հետևանք՝ գործի վարույթի կարճում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային իրավահարաբերություններից ծագած վեճերից բխող գործերի դեպքում դատարան կարող է դիմել միայն իրավական շահագրգռվածություն ունեցող անձը («շահագրգիռ անձը»): Այսինքն՝ թե՛ ընդհանուր իրավասության, թե՛ վարչական դատարանին ընդդատյա գործերի հարուցման համար անհրաժեշտ է հայցվորի (դիմողի) մոտ համապատասխան հայցապահանջով դատարան դիմելու որոշակի իրավական շահագրգռվածության առկայություն՝ որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման կարևորագույն պայման, որը դրսևորվում է անձի՝ առերևույթ խախտված իրավունքների վերականգնման կամ այդպիսի խախտման վտանգը կանխելու անհրաժեշտությամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն գործով ներկայացված հայցադիմումը համապատասխան ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրելու, ինչպես նաև «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով Ընկերության անվամբ «РОНАЛДА МАК ДОНАЛДА» ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հայցապահանջով դատարան դիմած Կազմակերպության՝ սույն գործով «շահագրգիռ անձ» հանդիսանալու հարցն ընդհանուր իրավասության դատարանում պարզելու նպատակով գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վարչական դատարան:

### **5. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.05.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/4315/05/14  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Սարգսյան  
Ա. Աբովյան  
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ ՎԳ/4315/05/14  
**2016 թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի ապրիլի 22-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քա-  
ղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.06.2015 թվա-  
կանի որոշման դեմ՝ ըստ հայցի Ալեքսանդր Կարալովի ընդդեմ Քաղաքապետարանի՝ Քա-  
ղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության  
պետի (այսուհետ՝ Ծառայության պետ) 01.07.2014 թվականի թիվ Վ-26/1192 որոշումն անվա-  
վեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դարավարական նախապարունությունը**

Դիմելով դատարան՝ Ալեքսանդր Կարալովը պահանջել է անվավեր ճանաչել Ծառա-  
յության պետի 01.07.2014 թվականի թիվ Վ-26/1192 որոշումը (այսուհետ՝ Որոշում):

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան)  
04.12.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.06.2015  
թվականի որոշմամբ Ալեքսանդր Կարալովի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարա-  
նի 04.12.2014 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:



### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, չպարզելով Ալեքսանդր Կարալովի կողմից 29.03.2014 թվականին ժամը 16:16-ի և ժամը 16:25-ի միջակայքում, իրեն պատկանող տրանսպորտային միջոցն անընդմեջ 5 բուպեից ավելի ժամանակով համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանած լինելու հանգամանքը, համապատասխան տեսագրության բացակայության պայմաններում, միայն բողոքում նշված պատճառաբանությունների հիման վրա, հաստատված է համարել նշված փաստի բացակայությունը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ խնդրո առարկա տեսագրությունը Դատարանին չի ներկայացվել ոչ թե Քաղաքապետարանի, այլ Դատարանի անգործության հետևանքով, քանի որ վերջինս չի պահանջել այդ տեսագրությունը, իսկ Քաղաքապետարանը չի կարող կրել Դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի անբարենպաստ հետևանքները:

Հետևաբար Վերաքննիչ դատարանը պետք է գործն ուղարկեր ստորադաս դատարան՝ նոր քննության՝ ապահովելով գործի քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.06.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ծառայության պետի 01.07.2014 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշման համաձայն՝ Ալեքսանդր Կարալովը վարչական տույժ նշանակելու մասին 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124<sup>7</sup>-րդ հոդվածի կիրառմամբ նշանակվել է 5.000 ՀՀ դրամ տուգանք այն բանի համար, որ «OPEL VECTRA 1.8 I» մակնիշի տրանսպորտային միջոցը 29.03.2014 թվականին՝ ժամը 16:16-ից մինչև ժամը 16:25-ը, կայանելով վճարովի ավտոկայանատեղում՝ չի կատարել կայանատեղի համար օրենքով սահմանված համապատասխան վճարում **(գ.թ. 6-9)**.

2. Ալեքսանդր Կարալովը վարչական կարգով բողոքարկել է վարչական տույժ նշանակելու մասին 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշումը, որի քննարկման արդյունքում 01.07.2014 թվականին ընդունված «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշմամբ բողոքը չի բավարարվել և թիվ Վ-20/1059 որոշումը թողնվել է անփոփոխ **(գ.թ. 6-9)**.

3. 20.08.2014 թվականին ներկայացված հայցադիմումի համաձայն՝ Ալեքսանդր Կարալովը պահանջել է «ամբողջությամբ վերացնել պատասխանող կողմի 01.07.2014 թվականի թիվ Վ-26/1192 վարչական բողոքի մասին միջամտող վարչական ակտը» **(գ.թ. 3)**:

### **4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն (*ex officio*) պարզելու սկզբունքի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմա-

նատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

– ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածում ամրագրված՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը կարող է արդյոք համարվել ապահովված այն պարագայում, երբ դատարանը չի կատարել այդ սկզբունքի բովանդակության մեջ ընդգրկվող՝ ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու առաջարկ ներկայացնելու, գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար համարժեք միջոցներ ձեռնարկելու, գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները պահանջելու դատավարական գործողությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (ex officio): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ գուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչև վարչական հայց ներկայացնելը միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա հայցը

ներառում է նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (*ex officio*) պարզելու սկզբունքը վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկն է: Քննարկվող վարչադատավարական սկզբունքի էությունն օրենսդիրը բացահայտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածում, որի բովանդակությունը հանգում է հետևյալին.

1) վարչական դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով, առարկություններով.

2) վարչական դատարանը պարտավոր է՝

- իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար,
- պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները,
- մատնանշել հայցադիմումներում առկա ձևական սխալները,
- առաջարկել ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և անանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՄԴՈ-1190 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („*ex officio*“) պարզելու՝ վարչական դատարանին ուղղված օրենսդրական պահանջը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկա-

լելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները, հայցադիմումը ներկայացնում են ձևական սխալներով, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները կամ ճիշտ չեն տարբերակում հիմնական ու ածանցյալ պահանջները կամ ներկայացնում են ոչ բավարար փաստական տվյալներ: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ինչպես նաև ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հստակ կամ ոչ ճիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք, վիճարկման հայցով դիմելով վարչական դատարան, հայցում են իրենց իրավունքներին ու օրինական շահերին միջամտող վարչական ակտի վերացում: Ընդ որում, եթե նախքան տվյալ վարչական ակտի վիճարկման հայցով վարչական դատարան դիմելն այն բողոքարկվել է նաև վարչական կարգով, ապա ներկայացված հայցն օրենքի ուժով ներառում է նաև այդ վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վերացման պահանջը կարող է հանդիսանալ վիճարկման հայցի ինքնուրույն առարկա միայն այն դեպքում, երբ հայցվորը, դիմելով դատարան, հետապնդում է ոչ թե սկզբնական միջամտող վարչական ակտի, այլ վարչական բողոքի քննարկման արդյունքում ընդունված միջամտող վարչական ակտի՝ դատական կարգով վերացման նպատակ: Այլ կերպ ասած, տվյալ պարագայում հայցվորը, իրացնելով իր դատական պաշտպանության իրավունքը, ցանկանում է հասնել ոչ թե սկզբնական միջամտող վարչական ակտի, այլ սկզբնական միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վերացմանը: Հետևաբար այն դեպքում, երբ վարչական դատարան ներկայացված հայցապահանջը ոչ թե անձի՝ իր իրավունքներին և օրինական շահերին միջամտող սկզբնական վարչական ակտի, այլ սկզբնական վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքի քննարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկումն է, իսկ հայցի հիմքում ընկած են բացառապես սկզբնական վարչական ակտի բողոքարկման վարույթի ընթացքում վարչական մարմնի կողմից թույլ տրված ընթացակարգային խախտումները, ապա սկզբնական միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վերացման պահանջը կարող է հանդիսանալ վիճարկման հայցի ինքնուրույն առարկա:

Մինչդեռ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ անձը, դիմելով վարչական դատարան, պահանջում է վերացնել իր իրավունքներին և օրինական շահերին միջամտող սկզբնական վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտը, սակայն հայցի հիմքում դնում է ոչ թե սկզբնական վարչական ակտի բողոքարկման վարույթի ընթացքում վարչական մարմնի կողմից թույլ տրված ընթա-

ցակարգային խախտումները, այլ սկզբնական վարչական ակտի՝ նյութական կամ ընթացակարգային իրավական նորմերի խախտմամբ ընդունված լինելու հանգամանքը: Այսինքն՝ քննարկվող պարագայում հայցվորը, իրացնելով իր դատական պաշտպանության իրավունքը, իրականում ցանկանում է հասնել իր իրավունքներին և օրինական շահերին միջամտող սկզբնական վարչական ակտի վերացմանը, սակայն սխալմամբ պահանջում է վերացնել ոչ թե սկզբնական միջամտող վարչական ակտը, այլ այդ վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարան ներկայացված հայցադիմումի բովանդակությունից ակնհայտ է, որ հայցվորը, դիմելով դատարան, իրականում հետապնդում է սկզբնական միջամտող վարչական ակտի վերացման նպատակ, սակայն սխալմամբ պահանջում է վերացնել սկզբնական միջամտող վարչական ակտի բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտը, ապա սկզբնական միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վիճարկումն առանց սկզբնական միջամտող վարչական ակտի վիճարկման չի կարող ապահովել անձի խախտված իրավունքների արդյունավետ պաշտպանություն, քանի որ միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վերացման դեպքում անգամ սկզբնական միջամտող վարչական ակտը շարունակում է գործել՝ պահպանելով իր միջամտող ազդեցությունն անձի իրավունքների և օրինական շահերի նկատմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր դեպքերում, երբ ներկայացվել է միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի վիճարկման հայցապահանջ առանց սկզբնական միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջի, սակայն հայցի հիմքում ընկած իրավական և փաստական հանգամանքներից ակնհայտ է, որ հայցվորն իրականում ցանկանում է դատական կարգով վերացնել ոչ թե միջամտող վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտը, այլ իր իրավունքներին և օրինական շահերին միջամտող սկզբնական վարչական ակտը, ապա վարչական դատարանը գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքի ուժով պարտավոր է առաջարկել հայցվորին ճշտել ոչ ճիշտ հայցապահանջը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ քննարկվող իրավիճակում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքի ուժով ոչ ճիշտ հայցապահանջը ճշտելու վերաբերյալ վարչական դատարանի կողմից հայցվորին առաջարկ ներկայացնելու և հայցվորի կողմից դատարանի նշված առաջարկն ընդունվելու դեպքում տեղի է ունենում ոչ թե հայցի առարկայի կամ հայցային պահանջների չափի փոփոխություն, այլ ներկայացված հայցապահանջի ճշգրտում և համապատասխանեցում հայցվորի իրական կամարտահայտությանն ու դատական պաշտպանության դիմելիս վերջինիս հետապնդած իրական նպատակին:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածից բխում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքը դատական ապացուցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ պահանջելու վարչական դատարանի պարտականությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով քննարկվող հարցին, գտել է, որ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու գործընթացում դատարանի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում դատարանը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: Իսկ այդպիսի հետևողականության ցուցաբերման անարդյունավետության դեպքում դատարանը պարտավոր է վիճելի մնացած փաստի չապացուցման բացասական հետևանքները դնել այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա՝ հաշվի առնելով նաև, որ վարչական դատավարությունում վարչական ակտի հա-

մար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը (տե՛ս ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Միքսանդ» ՍՊԸ-ի թիվ ՎԴՅ/0043/05/10 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 01.04.2011 թվականի որոշումը):

Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ վարչական դատավարությունում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով: Վճարելի դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված): Վարչական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Ըստ այդմ՝ գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու հարցը կարգավորող օրենսդրական նորմերը՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները, հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, ով պարտավոր է ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի (վիճարկման հայց) հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի, որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Հետևաբար միջամտող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված բոլոր ապացույցների հետազոտումից հետո տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու դեպքում վարչական դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված):

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճարելի դատարանը հանգում է այն եզրակացության, որ թեև վարչական դատավարությունում ապացուցման պարտականությունը կրում են կողմերը, սակայն վարչական դատարանը, կաշկանդված չլինելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, պարտավոր է գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ և պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու ու գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները: Հետևաբար վարչական դատավարությունում ապացուցման բեռի բաշխման կանոնները վճռորոշ նշանակություն են ստանում միայն այն դեպքում, երբ կողմերի ներկայացրած, ինչպես նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պար-

գելու (ex officio) սկզբունքի իրագործման պայմաններում ձեռք բերված ապացույցները բավարար չեն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության մասին օբյեկտիվ և հիմնավորված եզրահանգում կատարելու համար:

**Վճարել դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ալեքսանդր Կարալովը 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124<sup>7</sup>-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակվել է 5.000 ՀՀ դրամ տուգանք այն բանի համար, որ Ալեքսանդր Կարալովն իրեն սեփականության իրավունքով պատկանող «06 ՕՍ 139» պետհամարանիշով «OPEL VECTRA 1.8 I» մակնիշի տրանսպորտային միջոցը 29.03.2014 թվականին՝ ժամը 16:16-ից մինչև ժամը 16:25-ը, կայանել է վճարովի ավտոկայանատեղում, սակայն չի կատարել կայանատեղիի համար սահմանված տեղական տուրքի վճարումը:

Ալեքսանդր Կարալովը վարչական կարգով բողոքարկել է վարչական տույժ նշանակելու մասին 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշումը: Վարչական բողոքի քննարկման արդյունքում Ծառայության պետը 01.07.2014 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշմամբ անփոփոխ է թողել 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշումը՝ Ալեքսանդր Կարալովի բողոքը թողնելով առանց բավարարման:

Դատարան ներկայացրած հայցադիմումով Ալեքսանդր Կարալովը պահանջել է վերացնել 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշման բողոքարկման արդյունքում Ծառայության պետի կողմից 01.07.2014 թվականին կայացված «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշումը:

Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ «...23.03.2014 թվականին կատարված տեսազրույցի ռուսումնասիրության ընթացքում վարչական մարմինը պարզել է, որ Ալեքսանդր Կարալովին պարկանող 06 ՕՍ 139 պետհամարանիշով «OPEL VECTRA 1.8 I» մակնիշի տրանսպորտային միջոցը 29.03.2014 թվականին՝ ժամը 16:16-ից մինչև ժամը 16:25 ընկած ժամանակահատվածում ժամը 16:16:11-ից մինչև 16:22:16-ը բերված է անշարժ վիճակի ք. Երևան, Մոսկովյան փողոցի հատված 10-ում գրնվող համայնքային վճարովի ավտոկայանատեղում: Դրանով հաստատվել է այն հանգամանքը, որ Ալեքսանդր Կարալովն իրեն պարկանող 06 ՕՍ 139 պետհամարանիշով «OPEL VECTRA 1.8 I» մակնիշի տրանսպորտային միջոցով կատարել է 6 րոպե տևողությամբ կայանում: Անդրադատնալով հայցվորի վկայակոչած այն փաստին, որ նա դիմել է Երևանի քաղաքապետին ք. Երևան, Մոսկովյան փողոցի հատված 10-ում գրնվող վճարովի ավտոկայանման տեղի ժամը 16:16-ից մինչև 16:25-ի տեսաձայնագրությունը ստանալու խնդրանքով, սակայն մերժվել է, քանի որ ամբողջական նկարահանում առկա չէ, Դատարանը նշված փաստը հիմնավոր չի համարել դրա վերաբերյալ որևէ ապացույց ներկայացված չլինելու պատճառաբանությամբ»:

Վերաքննիչ դատարանը, որպես վերաքննիչ բողոքը բավարարելու և Դատարանի վճիռը բեկանելու հիմնավորում, նշել է. «(...) սույն գործի նյութերով չի հիմնավորվում Ալեքսանդր Կարալովի կողմից ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124<sup>7</sup>-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում կատարելու փաստը: Մասնավորապես, սույն գործի նյութերով չի հիմնավորվում վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ Ալեքսանդր Կարալովի կողմից 06 ՕՍ 139 պետհամարանիշով «OPEL VECTRA 1.8 I» մակնիշի տրանսպորտային միջոցը ք. Երևան, Մոսկովյան փողոցի հատված 10-ում գրնվող համայնքային վճարովի ավտոկայանատեղում 29.03.2014 թվականին՝ ժամը 16:16-ից մինչև ժամը 16:25 ընկած ժամանակահատվածում ժամը 16:16:11-ից մինչև 16:22:16-ը (անընդմեջ առնվազն 5 րոպե) բերված է եղել անշարժ վիճակի, մինչդեռ հայցվորը Երևանի ավագանու կողմից օրենքի հիման վրա սահմանված դրույքաչափերով տեղական տուրքը չվճարելու համար կարող էր վարչական պատասխանատվության ենթարկվել 5 րոպեից ավելի համայնքային վճարովի ավտոկա-

յանսարեղում կայանելու փաստի հաստատված լինելու պարագայում: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գրել է, որ սույն գործով վիճարկվող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 01.07.2014 թվականի թիվ Վ-26/1192 որոշման համար հինք ծառայած փաստերի չափացուցման բացասական հետևանքները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով կրում է վարչական մարմինը, տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանը»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների փաստարկները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում նշել, որ Ալեքսանդր Կարալովի նկատմամբ 5.000 ՀՀ դրամ տուգանքը նշանակվել է 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշմամբ, որի վարչական կարգով բողոքարկման արդյունքում Ծառայության պետը 01.07.2014 թվականին կայացրել է «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշումը: Փաստորեն, Ալեքսանդր Կարալովի իրավունքներին միջամտող հիմնական վարչական ակտը 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշումն է: Մինչդեռ Ալեքսանդր Կարալովի ներկայացրած վիճարկման հայցի առարկան ոչ թե 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշման, այլ վարչական կարգով այդ ակտի բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտի՝ Ծառայության պետի 01.07.2014 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշման վիճարկման պահանջն է, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ սույն գործով Ծառայության պետի 01.07.2014 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշման վիճարկումն առանց 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշման վիճարկման չի կարող ապահովել Ալեքսանդր Կարալովի առերևույթ խախտված իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված հայցադիմումի բովանդակությունից ակնհայտ է, որ Ալեքսանդր Կարալովը, դիմելով դատարան, հետապնդել է ոչ թե Ծառայության պետի 01.07.2014 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշման, այլ իր իրավունքներին ու օրինական շահերին միջամտող սկզբնական վարչական ակտի՝ 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշման վերացման նպատակ: Փաստորեն, քննարկվող պարագայում Ծառայության պետի 01.07.2014 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշման վերացման դեպքում անգամ հիմնական միջամտող վարչական ակտը՝ 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշումը, շարունակելու է գործել՝ պահպանելով իր միջամտող ազդեցությունն Ալեքսանդր Կարալովի իրավունքների և օրինական շահերի նկատմամբ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („ex officio“) սկզբունքի ուժով պարտավոր էր առաջարկել Ալեքսանդր Կարալովին ճշտել ոչ ճիշտ հայցապահանջը: Մինչդեռ Դատարանը չի կատարել իր այդ պարտականությունը, ինչն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը սույն գործում համապատասխան ապացույցների բացակայության պայմաններում հաստատված է համարել, որ Ալեքսանդր Կարալովն իրականում չի կատարել վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124<sup>7</sup>-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը: Թեև սույն գործով Ալեքսանդր Կարալովին վերագրվող իրավախախտման փաստն ապացուցելու բեռը կրում է Քաղաքապետարանը, սակայն վերջինիս կողմից այդ պարտականությունը չկատարելու պարագայում Դատարանը պարտավոր էր ձեռնարկել համարժեք միջոցներ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու ուղղությամբ և պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները, մասնավորապես՝ վարչական վարույթի բոլոր նյութերը:



Փաստորեն, Վերաքննիչ դատարանը, Ծառայության պետի 01.07.2014 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշման համար հիմք ծառայած փաստերը համարելով չապացուցված (հերքված), հաշվի չի առել, որ Դատարանն իր նախաձեռնությամբ չի ձեռնարկել համարժեք միջոցներ՝ սույն գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար և չի պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

1. դիմելով դատարան՝ Ալեքսանդր Կարալովը պահանջել է վերացնել ոչ թե իր իրավունքներին ու օրինական շահերին միջամտող հիմնական վարչական ակտը՝ 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշումը, այլ այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում կայացված վարչական ակտը՝ Ծառայության պետի 01.07.2014 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշումը, սակայն հայցադիմումում ներկայացված փաստական և իրավական հանգամանքները վերաբերում են իր իրավունքներին ու օրինական շահերին միջամտող հիմնական վարչական ակտի՝ 19.05.2014 թվականի թիվ Վ-20/1059 որոշման իրավաչափությանը,

2. Դատարանը չի կատարել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի բովանդակության մեջ մտնող հետևյալ դատավարական պարտականությունները.

- Դատարանը չի առաջարկել Ալեքսանդր Կարալովին ճշտել ոչ հստակ հայցային պահանջը՝ համապատասխանեցնելով այն դատական պաշտպանության դիմելիս վերջինիս հետապնդած նպատակին,
- Դատարանն իր նախաձեռնությամբ չի ձեռնարկել համարժեք միջոցներ՝ սույն գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար,
- Դատարանը չի պահանջել, որ ներկայացվեն սույն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները,

3. Վերաքննիչ դատարանը, առանց հաշվի առնելու Դատարանի կողմից թույլ տրված վերոգրյալ խախտումները, Ծառայության պետի 01.07.2014 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-26/1192 որոշումն անվավեր է ճանաչել բացառապես այն հիմքով, որ սույն գործով էական նշանակություն ունեցող հանգամանքի՝ Ալեքսանդր Կարալովի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124<sup>7</sup>-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը կատարված լինելու փաստի ապացուցման բեռը կրում է Քաղաքապետարանը, մինչդեռ սույն գործի նյութերով չի հիմնավորվում Ալեքսանդր Կարալովի կողմից իրավախախտում կատարելու փաստը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատավարական նորմերի վերը նշված խախտումները շտկելու, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների յույսի ներքո գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169–171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.06.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

4. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/4545/05/08**  
**2016 թ.**

Վարչական գործ թիվ ՎԴ/4545/05/08

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Առաքելյան  
Ք. Մկոյան  
Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 02-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի, Վարդան Լեմենցյանի և Արգինե Մանուկյանի, Լինա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդ Արմինե Սանոյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.06.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լինա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդներ Նաիրա Ավետյանի, Արմինե Սանոյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր), Վարդան Լեմենցյանի, Արգինե Մանուկյանի, Երրորդ անձինք Բաբկեն Տեր-Մանվելյանի, Արմեն Ալլահվերդյանի՝ Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը՝ Արգինե Մանուկյանի, Վարդան Լեմենցյանի մասով (որոշման հավելվածի 10-րդ կետ), ինչպես նաև Երևանի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 45,5քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան նկատմամբ Վարդան Լեմենցյանի, Արգինե Մանուկյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, Երևանի քաղաքապետարանի և Վարդան Լեմենցյանի միջև 07.05.1999 թվականին կնքված հողի վարձակալության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու, Փ. Բուզանդի թիվ 38 տան 15,6քմ մակերեսով բնակելի և 29,2քմ օժանդակ մակերեսով տունը բնակելի ֆոնդում ընդգրկելու և Վ. Լեմենցյանի ընտանիքը երկու անձով վարձակալ ճանաչելու մասին Երևանի Կենտրոն համայնքի թաղապետ Ա. Զուրաբյանի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջների մասին,

## ՊԱՐԶԵՑ

### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Լինա Գյուլ-Բուդաղյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը՝ Վարդան Լեմենցյանի և Արգինե Մանուկյանի մասով (որոշման հավելվածի 10-րդ կետ), Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 45,5 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Վարդան Լեմենցյանի և Արգինե Մանուկյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, Երևանի քաղաքապետարանի և Վարդան Լեմենցյանի միջև 07.05.1999 թվականի կնքված հողի վարձակալության պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված պետական գրանցումը, ճանաչել Երևանի Կենտրոն համայնքի թաղապետ Ա. Զուրաբյանի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման առ ոչինչ լինելը:

ՀՀ վարչական դատարանի 12.07.2011 թվականի որոշմամբ Լինա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդներ են ճանաչվել Նաիրա Ավետյանը և Արմինե Սանոյանը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) 02.03.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (դատավորներ՝ Ա. Առաքելյան, Ա. Արսվյան, Գ. Ղարիբյան) 19.07.2012 թվականի որոշմամբ Լինա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդներ Նաիրա Ավետյանի և Արմինե Սանոյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն՝ ՀՀ վարչական դատարանի 02.03.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 30.10.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը՝ Արգինե Մանուկյանի, Վարդան Լեմենցյանի մասով (որոշման հավելվածի 10-րդ կետ), Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 45,5 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Վարդան Լեմենցյանի, Արգինե Մանուկյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, Երևանի քաղաքապետարանի և Վարդան Լեմենցյանի միջև 07.05.1999 թվականին կնքված հողի վարձակալության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումը ճանաչվել են անվավեր, իսկ Երևանի Կենտրոն համայնքի թաղապետ Ա. Զուրաբյանի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.06.2015 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի, Արգինե Մանուկյանի և Վարդան Լեմենցյանի, Լինա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդ Արմինե Սանոյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 30.10.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Երևանի քաղաքապետարանը, Արգինե Մանուկյանը և Վարդան Լեմենցյանը, Լինա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդ Արմինե Սանոյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

### 2. Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածը, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 11-րդ, 18-րդ հոդվածները, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասը, 110-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառել, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ և 21-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և անկասկածաբար և անհերքելի փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Երևան համայնքը չի հանդիսանում սույն գործով վիճարկվող 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը կայացրած մարմին կամ այդ որոշումը կայացրած մարմնի իրավահաջորդը չէ: Հետևաբար Երևան համայնքը սույն գործով ոչ պատշաճ պատասխանող է, իսկ պատշաճ պատասխանող ՀՀ կառավարությունը գործին մասնակից չի դարձվել, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ Արգինե Մանուկյանի, Վարդան Լեմենցյանի մասով Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը (որոշման հավելվածի 10-րդ կետ), ինչպես նաև 07.05.1999 թվականի Երևանի քաղաքապետարանի և Վարդան Լեմենցյանի միջև կնքված հողի վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 11.06.2015 թվականի որոշումը և այդ մասերով գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Լինա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդ Արմինե Մանուկյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, որը պետք է կիրառել, կիրառել է ՀՀ քնակարանային օրենսգրքի 51-րդ հոդվածը, «Պետական հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքը, որոնք չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Երևանի Կենտրոն համայնքի թաղապետ Ա. Զուրաբյանի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշմամբ համայնքի ղեկավարը տնօրինել է Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեի անշարժ գույքը, որը սեփականության իրավունքով պատկանել է Լինա Գյուլ-Բուդաղյանին: Փաստորեն, նշված որոշումն առնչվում է այնպիսի անշարժ գույքի, որը պետության, Երևանի քաղաքապետարանի կամ Կենտրոն համայնքի սեփականությունը չի հանդիսացել, հետևաբար Երևանի Կենտրոն համայնքի թաղապետ Ա. Զուրաբյանի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշումը պետք է ճանաչվի առ ոչինչ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, քանի որ այն ընդունվել է ոչ իրավասու մարմնի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.06.2015 թվականի որոշումը՝ Լինա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդ Արմինե Մանուկյանի բողոքը մերժելու մասով, և փոփոխել այն՝ ճանաչել Երևանի Կենտրոն համայնքի թաղապետ Ա. Զուրաբյանի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման առ ոչինչ լինելը:

### **2.2. Վարդան Լեմենցյանի և Արգինե Մանուկյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որը չպետք է կիրառել, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Քաղաքապետարանի և Վարդան Լեմենցյանի միջև կնքված հողի վարձակալության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու հիմքեր առկա չեն:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է նաև 10.09.2010 թվականին կազմված թիվ 09-2457 փորձագիտական եզրակացությունը, որում անտեսված է այն փաստը, որ Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում առկա են հին շինություններ, որոնք հասակագծում նշված չեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ Երևանի քաղաքապետարանի և Վարդան Լեմենցյանի միջև 07.05.1999 թվականին կնքված հողի վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 11.06.2015 թվականի որոշումը:

### 3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 26.11.2002 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1043981 վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Բուզանդի փողոց թիվ 38 տունը սեփականության իրավունքով պատկանում է Լինա Գյուլ-Բուդաղյանին, սեփականության իրավունքի գրանցման հիմքը վկայականում նշվել է պետոտարի 10.10.1984 թվականի թիվ 11247 բնակելի տան մասի նվիրատվության պայմանագիր, իսկ «Շենքի տվյալները» բաժնում կատարված գրառման համաձայն՝ Լինա Գյուլ-Բուդաղյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան մակերեսը կազմել է 166,36 քմ և ընդհանուր սեփականության իրավունքով՝ 34,0 քմ (**հատոր 1-ին, գ.թ. 10-12**):

2) Երևանի քաղաքապետի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշման 1-ին կետով թույլատրվել է Կենտրոնի թաղապետարանի կողմից ներկայացված 36 բնակարանների անհատույց սեփականաշնորհումը՝ որպես ընտանիքի անդամների համատեղ սեփականություն (համաձայն հավելվածի) (**հատոր 1-ին, գ.թ. 25**):

3) Երևանի քաղաքապետի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշման հավելվածի քաղվածքի համաձայն՝ Երևանի Կենտրոն համայնքի բնակելի ֆոնդի բնակարանների սեփականաշնորհման ցուցակի 10-րդ տողում ընդգրկված է Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեի մեկ սենյականոց բնակարանը՝ Վարդան Լեմենցյանի անվամբ սեփականաշնորհվելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 26**):

4) Երևանի քաղաքապետի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշման քաղվածքի համաձայն՝ թույլատրվել է Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեի մեկ սենյականոց բնակարանը (բնակելի՝ 15,6 քմ, ընդհանուր՝ 45,5 քմ մակերեսով) ձևակերպել Վարդան Լեմենցյանի և Արգիսե Մանուկյանի անվամբ՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն (**հատոր 1-ին, գ.թ. 198**):

5) Երևանի քաղաքապետի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշման հիման վրա 07.05.1999 թվականին կնքված «Հողի վարձակալության պայմանագիր» համաձայն՝ Երևանի քաղաքապետը՝ որպես վարձատու, Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 58,4 քմ մակերեսով հողամասը հանձնել է Վարդան Լեմենցյանի՝ որպես վարձակալի տիրապետմանն ու օգտագործմանը (**հատոր 1-ին, գ.թ. 86-88**):

6) Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 0121412 վկայականի համաձայն՝ Երևանի քաղաքապետի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշման հիման վրա 09.06.1999 թվականին գրանցվել է Վարդան Լեմենցյանի և Արգիսե Մանուկյանի սեփականության իրավունքը՝ Երևան քաղաքի Բուզանդի փողոցի 45,5 քմ ընդհանուր մակերեսով թիվ 38 բնակելի տան նկատմամբ, ինչպես նաև վերջիններիս վարձակալության իրավունքը՝ նույն հասցեում գտնվող 0,00584 հա մակերեսով հողամասի նկատմամբ (**հատոր 1-ին, գ.թ. 91-93**):

7) Երևանի քաղաքապետի 04.06.1997 թվականի թիվ 487 որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետը որոշել է թույլատրել Կենտրոն թաղապետարանին կարգավիճակ չունեցող (լքյալ) տներն ընդգրկել պետական բնակելի ֆոնդում և բացել վարձակալական քարտեր (**հատոր 2-րդ, գ.թ. 44**):

8) Երևանի Կենտրոնի թաղապետարանի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման համաձայն՝ Երևանի Կենտրոնի թաղապետը, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի

04.06.1997 թվականի թիվ 487 որոշումը, որոշել է Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեի 15,6քմ բնակելի և 29,2քմ օժանդակ մակերեսով տունն ընդգրկել բնակելի ֆոնդում և վարձակալ ճանաչել Վարդան Լեմենցյանին՝ ընտանիքի երկու անձով (**հատոր 1-ին, գ.թ. 82**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ սույն գործով վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ Երևան քաղաքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում տեղի ունեցած հայեցակարգային փոփոխությունների արդյունքում Երևանի քաղաքապետի մասնակցությամբ վարչական գործերի շրջանակներում վերջինիս իրավահաջորդով կամ պատշաճ պատասխանողով փոխարինելու իրավական խնդրի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանների կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք Երևանի քաղաքապետը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին, կարող է շարունակել մասնակցել վարչական գործի քննությանը, եթե նա՝ որպես պատասխանող, այդ գործին ի սկզբանե ներգրավված է եղել որպես տարածքային կառավարման մարմին, սակայն տվյալ գործի քննության ընթացքում Երևանի կարգավիճակը փոխվել է:

#### **4.1 Քննելով Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը՝ նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության մասնակիցներն են կողմերը՝ հայցվորը և պատասխանողը, ինչպես նաև երրորդ անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողն այն վարչական մարմինն է, պաշտոնատար անձը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի դեմ հայց է ներկայացվել վարչական դատարան:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու դեպքում (իրավաբանական անձի կամ վարչական մարմնի վերակազմակերպում, ֆիզիկական անձի մահ կամ պարտավորություններում անձանց փոփոխման այլ դեպքեր) դատարանը կատարում է այդ կողմի փոխարինում նրա իրավահաջորդով, որի վերաբերյալ կայացնում է որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրավահաջորդություն հնարավոր է դատավարության յուրաքանչյուր փուլում, իսկ 5-րդ մասի համաձայն՝ այն գործողությունները, որոնք կատարվել են դատավարության ընթացքում մինչև իրավահաջորդի՝ գործի մեջ մտնելը, նրա համար պարտադիր են այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին այն անձի համար, որին փոխարինել է իրավահաջորդը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործի քննության նախապատրաստման կամ դատաքննության ընթացքում հայցվորի միջնորդությամբ կամ նրա համաձայնությամբ դատարանը փոխարինում է պատասխանողին:

2. Եթե դատարանը հանգում է այն համոզման, որ հայցը ներկայացվել է ոչ այն պատասխանողի դեմ, որը պետք է պատասխանի ըստ հայցի, ապա դատարանը կարող է հայցվորի համաձայնությամբ ոչ պատշաճ պատասխանողին փոխարինել պատշաճ պատասխանողով: Եթե հայցվորը համաձայն չէ պատասխանողին փոխարինելուն, ապա դատարանը կարող է այդ անձին ներգրավել որպես երկրորդ պատասխանող:

3. Ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուց կամ գործում որպես երկրորդ պատասխանող ներգրավելուց հետո գործի վարույթը սկսվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլից:

4. Պատասխանողին փոխարինելու կամ պատշաճ պատասխանողին որպես երկրորդ պատասխանող ներգրավելու մասին դատարանը կայացնում է որոշում:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածով կարգավորել է վարչական դատավարությունում դատավարական իրավահաջորդության ծագման հիմքերի, կատարման կարգի և իրավական հետևանքների հետ կապված հարաբերությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված իրավադրույթների բովանդակությունից բխում է, որ դատավարական իրավահաջորդությունը վիճելի իրավահարաբերություններից կողմերից մեկի դուրս գալու դեպքում դատավարության կողմի փոխարինումն է նրա իրավահաջորդով: Ընդ որում, դատավարական իրավահաջորդությունը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում, իսկ իրավահաջորդին դատավարությանը թույլատրելը ձևակերպվում է դատարանի համապատասխան որոշմամբ՝ առանձին դատական ակտի տեսքով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է դատավարական իրավահաջորդության ծագման հիմքերը. այսպես՝ վարչական դատավարությունում իրավահաջորդությունը տեղի է ունենում դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու հետևյալ դեպքերում.

1. իրավաբանական անձի վերակազմակերպում,
2. վարչական մարմնի վերակազմակերպում,
3. ֆիզիկական անձի մահ,
4. պարտավորություններում անձանց փոփոխման այլ դեպքեր:

Այսպիսով, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում թվարկել է այն փաստակազմերի սպառիչ ցանկը, որոնց գործնականում առկայությունը հնարավորություն է ընձեռում վարչական դատարանին՝ կիրառելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված իրավական հետևանքը, այն է՝ դատավարության կողմին փոխարինել նրա իրավահաջորդով: Այսինքն՝ վարչական դատարանն իրավասու է դատավարության կողմին նրա իրավահաջորդով փոխարինելու մասին որոշում կայացնելու միայն վերը նշված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում: Հետևաբար վարչական դատարանն իրավասու չէ դատավարության կողմին փոխարինելու նրա իրավահաջորդով՝ հիմնվելով այնպիսի փաստակազմերի վրա, որոնք նախատեսված չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում: Ավելին՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունից բխում է, որ դատավարական իրավահաջորդությունը ենթադրում է, որ իրավահաջորդը շարունակում է մասնակցել վարչական դատավարությանը դատավարական իրավահարաբերությունների մարդոջ ծավալով՝ իրավանախորդի ունեցած բոլոր իրավունքներով ու պարտականություններով: Քանի որ դատավարական իրավահաջորդության դեպքում իրավահաջորդը շարունակում է մասնակցել վարչական դատավարությանը, ուստի այն բոլոր գործողությունները, որոնք կատարվել են մինչև իրավահաջորդի գործի մեջ մտնելը, վերջինիս համար պարտադիր են այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին այն անձի համար, որին փոխարինել է իրավահաջորդը:



Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով կարգավորել է վարչական գործի քննության ընթացքում ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու կամ պատշաճ պատասխանողին որպես երկրորդ պատասխանող ներգրավելու դատավարական կառուցակարգի առանձնահատկությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով ամրագրված իրավադրույթներից բխում է, որ ոչ պատշաճ պատասխանողը դատավարության մասնակից այն վարչական մարմինն է, պաշտոնատար անձը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի դեմ հայց է ներկայացվել վարչական դատարան, սակայն հետագայում գործի հանգամանքներով ժխտվել է դատավարության այդ մասնակցի՝ վիճելի պարտականության կրող լինելու, այսինքն՝ վիճելի իրավահարաբերության սուբյեկտ հանդիսանալու ենթադրությունը: Այլ կերպ ասած՝ եթե վարչական գործի քննության ընթացքում ժխտվում է այն ենթադրությունը, որ պատասխանողը վիճելի իրավահարաբերության սուբյեկտ է, ապա այդ դեպքում վերջինս ճանաչվում է ոչ պատշաճ պատասխանող և պետք է փոխարինվի պատշաճ պատասխանողով, այսինքն՝ վիճելի իրավահարաբերության ենթադրյալ սուբյեկտով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումը կարող է կատարվել վարչական դատարանի նախաձեռնությամբ կամ հայցվորի միջնորդությամբ, բայց բոլոր դեպքերում միայն հայցվորի համաձայնությամբ, որը բխում է տնօրինչականության սկզբունքից: Փաստորեն, ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումն առանց հայցվորի համաձայնության հնարավոր չէ, իսկ եթե հայցվորը համաձայն չէ ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուն, ապա վարչական դատարանը կարող է պատշաճ պատասխանողին, այսինքն՝ այն սուբյեկտին, որը պետք է պատասխանի ըստ ներկայացված հայցի, ներգրավել որպես երկրորդ պատասխանող: Բացի այդ, վարչական գործի քննության ընթացքում ոչ պատշաճ պատասխանողի կատարած գործողությունները դատավարությանը մասնակից դարձված պատշաճ պատասխանողի համար նշանակություն չունեն և վերջինիս համար որևէ իրավունք կամ պարտականություն չեն առաջացնում: Պատշաճ պատասխանողի համար ծագում են նոր վարչադատավարական իրավահարաբերություններ, հետևաբար պատշաճ պատասխանողի համար գործի քննությունն սկսվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլից:

Վերոգրյալ իրավական վերլուծությունից ակնհայտ է, որ քննարկվող վարչադատավարական ինստիտուտների՝ դատավարական իրավահաջորդության և ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման միջև առկա են էական տարբերություններ՝ ինչպես ըստ հիմքերի, այնպես էլ ըստ դատավարական հետևանքների: Եթե դատավարական իրավահաջորդության հիմքը կողմի՝ նյութական իրավունքներում կամ պարտականություններում տեղի ունեցած իրավահաջորդությունն է, ապա ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումն իրար փոխարինող անձանց միջև, որպես կանոն, ոչ մի նյութաիրավական կապ չի ենթադրում: Այսպիսով, դատավարական հետևանքների տեսանկյունից՝ դատավարական իրավահաջորդության դեպքում վարչադատավարական իրավահարաբերությունները պահպանվում են, իսկ ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման դեպքում վարչադատավարական իրավահարաբերությունները դադարում են, և ծագում են նոր վարչադատավարական իրավահարաբերություններ (յրեն նաև Սպարդուսկ Մարտիրոսյանն ընդդեմ Կենտրոն նոտարական փարածքի նոտար Էմմա Շարոյանի թիվ ՎԴ/5014/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.05.2015 թվականի որոշումը):

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Երևան քաղաքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում տեղի ունեցած հայեցակարգային փոփոխությունների արդյունքում Երևանի քաղաքապետի մասնակցությամբ վարչական գործերի շրջանակներում վերջինիս իրավահաջորդով կամ պատշաճ պատասխանողով փոխարինելու խնդրին:

1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն՝ Երևան քաղաքն ունի մարզի կարգավիճակ: Երևանի քաղաքապետին վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում է Հանրապետության Նախագահը: Տեղական ինքնակառավարումը Երևանում իրականացվում է թաղային համայնքներում:

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն՝ Երևանը համայնք է: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով (...):

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինները կազմավորվում են համապատասխան օրենքի ընդունումից հետո ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում: Մինչ այդ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումը և տարածքային կառավարումը իրականացվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրի (ուժը կորցրել է 18.06.2009 թվականին) 1.2-րդ կետի համաձայն՝ պետական կառավարումը Երևանում ապահովվում է Երևանի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Երևանի քաղաքապետն օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում Երևանի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնում է հետևյալ բնագավառներում՝ ֆինանսներ, քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն, տրանսպորտ և ճանապարհաշինություն, առևտուր, հանրային սնունդ և սպասարկում, գյուղատնտեսություն և հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, մշակույթ և սպորտ, բնության և շրջակա միջավայրի պահպանություն(...):

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 26.12.2008 թվականին, ուժի մեջ է մտել 26.01.2009 թվականին) 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Երևան քաղաքում (...) տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածից հետևում է, որ Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են Երևանի ավագանին և Երևանի քաղաքապետը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ավագանու ընտրություններից հետո Երևանի թաղային համայնքները համարվում են վերակազմակերպված՝ որպես Երևան համայնք:

Վերոգրյալ իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ ըստ 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության՝ Երևան քաղաքն ունեցել է մարզի կարգավիճակ, և Երևան քաղաքում պետական կառավարման իրականացման կարգը սահմանվել է ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրով (ուժը կորցրել է 18.06.2009 թվականին), որի համաձայն՝ Երևանի տարածքում ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացրել է Երևանի քաղաքապետը՝ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տարածքային կառավարումը պետության գործադիր իշխանության ոլորտում տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող գործունեության հատուկ տեսակ է: Գործելով պետության անունից և իրականացնելով պետական կառավարման գործառնություններ՝ տարածքային կառավարման մարմիններն օժտված են պետաիշխանական լիազորություններով և կառավարչական գործունեությունն իրականացնում են բացառապես օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության շրջանակներում: Հետևաբար տարածքային կառավարումը, ինչպես նաև դրա գործառնություններն իրականացնող տարածքային կառավարման մարմինները հանդիսանում են պետական իշխանության միասնական կառուցակարգի բաղկացուցիչ մասը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ Երևան քաղաքի կարգավիճակը փոխվել է. Երևանը համայնք է, որի տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Հնդ

որում, 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության անցումային դրույթներում նախատեսվել է նաև, որ մինչ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորումը Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումը և տարածքային կառավարումն իրականացվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Երևանի քաղաքապետի՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) ձևավորումից հետո Երևանի քաղաքապետը՝ որպես տարածքային կառավարման մարմին, դադարել է գոյություն ունենալ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Երևան քաղաքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում տեղի ունեցած վերը նշված հայեցակարգային փոփոխությունների արդյունքում Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի իրավահաջորդ է Հայաստանի Հանրապետությունը, քանի որ մինչև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Երևանի քաղաքապետի՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) ձևավորումը Երևանի քաղաքապետն ունեցել է պետական (տարածքային) կառավարման գործառնությունը՝ «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ Երևանի քաղաքապետը, հանդիսանալով տարածքային կառավարման մարմին, որևէ վարչական գործի շրջանակներում ներգրավված է եղել որպես դատավարության կողմ (հայցվոր, պատասխանող), սակայն տվյալ գործի քննության ընթացքում Երևանի քաղաքապետի կարգավիճակը փոխվել է՝ տարածքային կառավարման մարմնից վերածվելով տեղական ինքնակառավարման մարմնի, ապա վարչական դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի կանոններով լուծել Երևանի քաղաքապետին իրավահաջորդով փոխարինելու հարցը: Այլ կերպ ասած՝ եթե Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորումը և Երևանի քաղաքապետի՝ ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 12-րդ մասի ուժով տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) կարգավիճակի ձեռքբերումը տեղի են ունեցել Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի դեմ ներկայացված հայցի հիման վրա հարուցված վարչական գործի քննության ընթացքում, ապա վարչական դատարանը պետք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ վարչական մարմնի վերակազմակերպման հիմքով դատավարության մասնակից Երևանի քաղաքապետին փոխարինի իրավահաջորդով՝ Հայաստանի Հանրապետությունով:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ Երևանի քաղաքապետի կարգավիճակը փոխվելուց հետո ֆիզիկական և իրավաբանական անձինք դիմել են վարչական դատարան Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի ընդունած վարչական ակտերի, կատարած գործողությունների կամ ցուցաբերած անգործության բողոքարկման պահանջով, և հայցը ներկայացվել է Երևանի քաղաքապետի (որպես համայնքի ղեկավարի) դեմ, ապա վարչական դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի կանոններով լուծել Երևանի քաղաքապետին պատշաճ պատասխանողով փոխարինելու հարցը, քանի որ Երևանի քաղաքապետը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին, չի կարող պատասխանել Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի դեմ ներկայացված հայցով: Այլ կերպ ասած՝ Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի կողմից ընդունված իրավական ակտերի, վերջինիս կատարած գործողությունների կամ ցուցաբերած անգործության՝ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորումից հետո վարչադատական կարգով բողոքարկման արդյունքում հարուցված վարչական գործերի քննության շրջանակներում Երևանի քաղաքապետը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին (համայնքի ղեկավար), չի կարող հանդիսանալ պատշաճ պատասխանող և պետք է փոխարինվի պատշաճ պատասխանողով, այսինքն՝ վի-

ճելի իրավահարաբերության ենթադրյալ սուբյեկտով, որը տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետությունն է:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ Երևանի թաղային համայնքների ղեկավարների կողմից ընդունված վարչական ակտերի, կատարած գործողությունների կամ ցուցաբերած անգործության բողոքարկման պահանջով հարուցված դատական գործերի շրջանակներում պատշաճ պատասխանող է Երևանի քաղաքապետը, քանի որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Երևանի թաղային համայնքների իրավահաջորդը Երևան համայնքն է, հետևաբար Երևանի թաղային համայնքների ղեկավարների (թաղապետերի) իրավահաջորդը Երևան համայնքի ղեկավարն է՝ Երևանի քաղաքապետը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Լինա Գյուլ-Բուդաղյանի (սույն գործի քննության ընթացքում հայցվոր Լինա Գյուլ-Բուդաղյանը մահացել է, և վերջինիս իրավահաջորդներ են ճանաչվել Նաիրա Ավետյանը և Արմինե Սանոյանը) հայցի հիման վրա, որով վերջինս ներկայացրել է հետևյալ հայցապահանջները.

1. անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը՝ Վարդան Լեմենցյանի և Արգինե Մանուկյանի մասով (որոշման հավելվածի 10-րդ կետ),

2. անվավեր ճանաչել Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 45,5 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Վարդան Լեմենցյանի և Արգինե Մանուկյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը,

3. անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի և Վարդան Լեմենցյանի միջև 07.05.1999 թվականի կնքված հողի վարձակալության պայմանագիրը,

4. անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի և Վարդան Լեմենցյանի միջև 07.05.1999 թվականի կնքված հողի վարձակալության պայմանագրի հիման վրա կատարված պետական գրանցումը,

5. ճանաչել Երևանի Կենտրոն համայնքի թաղապետ Ա. Զուրաբյանի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման առ ոչինչ լինելը:

Դատարանը, մասնակիորեն բավարարելով ներկայացված հայցը, Երևանի Կենտրոն համայնքի թաղապետ Ա. Զուրաբյանի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հայցապահանջը մերժել է, իսկ Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցապահանջը՝ բավարարել: Միաժամանակ Դատարանն անվավեր է ճանաչել նաև Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 45,5 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Վարդան Լեմենցյանի և Արգինե Մանուկյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, Երևանի քաղաքապետարանի և Վարդան Լեմենցյանի միջև 07.05.1999 թվականի կնքված հողի վարձակալության պայմանագիրը և այդ պայմանագրի հիման վրա կատարված պետական գրանցումը՝ որպես Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ հիմնական հայցապահանջի բավարարման հետևանք:

Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքները և Դատարանի վճիռը թողել անփոփոխ՝ պատճառաբանելով, որ Դատարանն իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ հայցը մասնակիորեն ենթակա է բավարարման: Վերաքննիչ դատարանը, ելնելով այն իրողությունից, որ Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշման կայացման ժամանակ Երևան քաղաքում իրականացվել է պետական կառավարում, իսկ ներկայումս Երևան քաղաքն ունի համայնքի կարգավիճակ, այնուամենայնիվ, գտել է, որ Երևան համայնքի կարգավիճակի փոփոխությունը չի կարող հիմք հանդիսանալ Դատարանի վճիռի բեկանման համար, քանի որ դա չի ազդել գործի ելքի վրա: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Երևան քաղաքը համայնքի կարգավիճակ է ձեռք բերել 2009 թվականին, իսկ սույն գործով հայցը ներկայացվել է դեռևս 2008 թվականին, երբ Երևանի քաղաքապետարանն ուներ պետական մարմնի կարգավիճակ: Բացի այդ, Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը կայացվել է Կենտրոն թաղային համայնքի ղեկավար-

րի 14.08.1997 թվականի որոշման հիման վրա, «(...) իսկ թիվ 200 որոշման կայացման կազմակերպումն ու պատասխանատվությունը դրվել է Կենտրոնի թաղապետի վրա (...)»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցապահանջը ներկայացվել է 08.07.2008 թվականին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Երևանի քաղաքապետը դեռևս պետական կառավարման մարմին էր: Մինչդեռ սույն գործի քննության ընթացքում Երևանի քաղաքապետի կարգավիճակը փոխվել է՝ տարածքային կառավարման մարմնից վերածվելով տեղական ինքնակառավարման մարմնի:

Փաստորեն, սույլալ դեպքում Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու հայցապահանջի մատուցումը որպես պատասխանող ներգրավված Երևանի քաղաքապետարանը պետք է փոխարինվեր իրավահաջորդով, քանի որ եթե Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի դեմ ներկայացված հայցի հիման վրա հարուցված վարչական գործի քննության ընթացքում Երևանի քաղաքապետը ձեռք է բերել տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) կարգավիճակ, ապա վարչական դատարանը պետք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մատուցումը նախատեսված՝ վարչական մարմնի վերակազմակերպման հիմքով դատավարության մասնակից Երևանի քաղաքապետին փոխարինի վերջինիս իրավահաջորդով:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են, որ սույն գործով ներգրավված պատասխանողի՝ Երևանի քաղաքապետարանի կարգավիճակը գործի քննության ընթացքում փոխվել է, որի արդյունքում վերջինս դուրս է եկել վիճելի իրավահարաբերությունից և այլևս չի կարող պատասխանել սույն գործով ներկայացված՝ Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու և Երևանի քաղաքապետարանի և Վարդան Լեւոնեցյանի միջև 07.05.1999 թվականի կնքված հողի վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցապահանջների մատուցումը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Երևանի քաղաքապետարանի մասնակցությամբ գործի քննություն իրականացնելու հանգամանքն ազդեցություն չի ունեցել սույն գործի ելքի վրա, անհիմն է, քանի որ սույն գործի քննության ընթացքում պատասխանողի (Երևանի քաղաքապետարանի) կարգավիճակի փոփոխությունն անհնարին է դարձրել նրա հետագա մասնակցությունը գործի քննությանը: Ընդ որում, Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը Կենտրոն թաղային համայնքի ղեկավարի 14.08.1997 թվականի որոշման հիման վրա կայացված լինելու և դրա իրացման կազմակերպումն ու պատասխանատվությունը Կենտրոնի թաղապետի վրա դրված լինելու հանգամանքները սույլալ դեպքում որևէ նշանակություն չունեն սույն գործով պատասխանողի իրավահաջորդության հարցը լուծելու համար: Հետևաբար Դատարանը պարտավոր էր քննարկման առարկա դարձնել սույն գործով ներկայացված՝ Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու և Երևանի քաղաքապետարանի և Վարդան Լեւոնեցյանի միջև 07.05.1999 թվականի կնքված հողի վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցապահանջների մատուցումը որպես պատասխանող ներգրավված Երևանի քաղաքապետարանին իրավահաջորդով փոխարինելու հարցը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածով նախատեսված կանոններով վերջինիս փոխարինելու իրավահաջորդով՝ Հայաստանի Հանրապետությունով, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված՝ Երևանի քաղաքապետարանի 26.02.1999 թվականի թիվ 200 որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու և Երևանի քաղաքապետարանի ու Վարդան Լեւոնեցյանի միջև 07.05.1999 թվականի կնքված հողի վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու

վերաբերյալ հայցապահանջների, ինչպես նաև այդ պահանջներից ածանցվող՝ Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 45,5քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Վարդան Լեմենցյանի և Արզիսե Մանուկյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը և Երևանի քաղաքապետարանի ու Վարդան Լեմենցյանի միջև 07.05.1999 թվականի կնքված հողի վարձակալության պայմանագրի հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցապահանջների մատով սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

**4.2. Քննելով Լիսա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդ Արմինե Սանոյանի վճռաբեկ բողոքը՝ նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները. ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը պայմանավորված է ակնառու կոպիտ սխալներով, որոնք ի հայտ են գալիս առանց տվյալ վարչական ակտի իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտության: Ընդ որում, վարչական ակտի առոչնչության հիմքերից այն, որ վարչական ակտը կայացվել է դրա ընդունման լիազորությունը չունեցող, այսինքն՝ ոչ իրավասու վարչական մարմնի կողմից: Հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով վարչական ակտի առոչնչ լինելը ճանաչելու պահանջի հիման վրա հարուցված գործ քննելիս Դատարանը պետք է պարզի՝ արդյոք վարչական ակտն ընդունած մարմինը նման ակտ ընդունելու լիազորություն ուներ, և արդյոք այդ ակտը ոչ իրավասու մարմնի կողմից ընդունված լինելու կոպիտ սխալն ակնառու է, թե ոչ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կենտրոնի թաղապետարանի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշմամբ Երևանի Կենտրոնի թաղապետը, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 04.06.1997 թվականի թիվ 487 որոշումը, որոշել է Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեի 15,6քմ բնակելի և 29,2քմ օժանդակ մակերեսով տունն ընդգրկել բնակելի ֆոնդում և վարձակալ ճանաչել Վարդան Լեմենցյանին՝ ընտանիքի երկու անձով:

Երևանի Կենտրոնի համայնքի ղեկավարի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հայցապահանջի իրավական հիմքը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետն է: Այսպես, ըստ հայցվոր կողմի՝ Երևանի Կենտրոնի համայնքի ղեկավարն իրավասություն չի ունեցել ընդունելու Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող տունը տնօրինելու վերաբերյալ 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշումը, քանի որ նշված հասցեի անշարժ գույքը պետության, Կենտրոնի համայնքի կամ Երևանի քաղաքապետարանի սեփականությունը չի հանդիսացել, հետևապես այն չէր կարող տնօրինվել վարչական մարմնի կողմից:

Սույն գործի նոր քննության ընթացքում Դատարանը գտել է, որ Երևանի Կենտրոնի համայնքի ղեկավարի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշումն առ ոչինչ ճանաչելու հիմքերը բացակայում են:

Վերաքննիչ դատարանը, իր հերթին վերահաստատելով Դատարանի նշված եզրահանգումը, գտել է, որ «(...) Երևանի Կենտրոնի համայնքի ղեկավարի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշմամբ Կենտրոնի Կենտրոնի թաղապետի 04.06.1997 թվականի թիվ 487 որոշումը, որոշել է Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեի 15,6քմ բնակելի և 29,2քմ օժանդակ մակերեսով տունն ընդգրկել բնակելի ֆոնդում և վարձակալ ճանաչել Վարդան Լեմենցյանին՝ ընտանիքի երկու անձով: (...) Կենտրոնի թաղապետը կարգավիճակ չունեցող տուն դիմարկելու պարագայում պետք է փաստել, որ Կենտրոնի թաղապետը գործել է Երևանի քաղաքապետի 04.06.1997 թվականի թիվ 487 որոշմամբ իրեն վերապահված լիազորությունների և ՀՀ բնակարանային օրենսգրքով նախատեսված նորմերի սահմաններում (...)»:

Վերոգրյալ փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող՝ Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշումն ընդունվել է Երևանի քաղաքապետի 04.06.1997 թվականի թիվ 487 որոշման հիման վրա, որով Կենտրոնի թաղապետարանին թույլատրվել է կարգավիճակ չունեցող (լքյալ) տներն ընդգրկել պետական բնակելի ֆոնդում և բացել վարձակալական քարտեր: Փաստորեն, Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարի մոտ Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող անշարժ գույքը բնակելի ֆոնդում ընդգրկելու և դրա հիման վրա այն վարձակալության հանձնելու լիազորության իրավական հիմքը Երևանի քաղաքապետի 04.06.1997 թվականի թիվ 487 որոշումն է, այսինքն՝ Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարն ունեցել է 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշումն ընդունելու իրավասություն և առերևույթ հանդիսացել է նման վարչական ակտն ընդունելու իրավասու մարմին: Սակայն, Երևանի քաղաքապետի 04.06.1997 թվականի թիվ 487 որոշմամբ Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարի այդ լիազորության իրականացման համար նախատեսվել է որոշակի պայման (նախադրյալ), մասնավորապես՝ Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարն իրավասու է եղել պետական բնակելի ֆոնդում ընդգրկելու միայն կարգավիճակ չունեցող (լքյալ) տները և վարձակալական քարտեր բացելու միայն այդպիսի տների վերաբերյալ: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման առոչնչության հարցը լուծելու համար սույն գործով Դատարանը պետք է պարզեր, թե արդյոք Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարն ուներ նման ակտ ընդունելու լիազորություն, ինչը պայմանավորված է Երևան քաղաքի Բուզանդի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ վիճարկվող վարչական ակտի ընդունման պահին՝ 14.08.1997 թվականին, կարգավիճակ չունեցող (լքյալ) տուն հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքով: Ընդ որում, նշված հարցին բացասական պատասխան տրվելու դեպքում Դատարանը պետք է եզրահանգում կատարեր նաև այն մասին, թե արդյոք Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման՝ ոչ իրավասու մարմնի կողմից ընդունված լինելու կոպիտ սխալն ակնառու է, թե ոչ:

Մինչդեռ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ քննարկվող փաստական և իրավական հանգամանքների պարզումն էական նշանակություն ունի սույն գործով ներկայացված՝ Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարի 14.08.1997 թվականի թիվ 31/229 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու մասին հայցապահանջի մերժման կամ բավարարման համար, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հայցապահանջի մատով ևս առկա է սույն գործի նոր քննության անհրաժեշտություն:

#### **4.3. Քննելով Վարդան Լեւոնյանի և Արզիսե Մանուկյանի վճռաբեկ բողոքը՝ նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ զիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել, որը կարող է հանձնարարվել կամ մասնագիտացված փորձագիտական հաստատությանը, կամ փորձագետին: Նույն հոդվածի 4-րդ

մասի համաձայն՝ փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որով սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքերում դատարանը կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով միննույն կամ մեկ այլ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության):

Վերոգրյալ իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով: Իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին հանգամանք, որը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների արժանահավատության հարցին, իր նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը ստուգելուց հետո պարտավոր է ստուգել նաև տվյալ ապացույցի արժանահավատությունը և ապացույցների միջև հակասության դեպքում մերժել իր կարծիքով ոչ արժանահավատ ապացույցը՝ հիմնավորելով տվյալ մերժումը, իսկ փաստը հաստատել արժանահավատ ապացույցի հիման վրա (տես ՀՀ գլխավոր դատարանի օրենսդրությունն ընդդեմ «Զարյա» արտադրական կոդպերատիվի թիվ 3-81 (ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):

Իր մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների արժանահավատությունն ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է ապացուցման առարկան կազմող հանգամանքների հավաստիությունն ու հստակությունը: Արժանահավատ է այն ապացույցը, որը գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություն է բովանդակում: Ապացույցի արժանահավատության ստուգման և գնահատման չափորոշիչները տարբեր են՝ պայմանավորված հետազոտված ապացույցի տեսակով (տես Արմեն Կուրդինյանն ընդդեմ Սեդա Խուրշուդյանի թիվ ԵՇԿ/1342/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Ամփոփելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի ճիշտ լուծման նպատակով դատարանը պետք է ստուգի ապացույցների արժանահավատությունը, քանի որ միայն արժանահավատ ապացույցն է հնարավորություն տալիս հաստատելու կամ հերքելու գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Գործով ձեռք բերված որոշ ապացույցների ոչ հավաստիության վերաբերյալ կարող է վկայել դատարանի կողմից միննույն հանգամանքի կամ փաստի վերաբերյալ հակասական, միմյանց բացառող տեղեկությունների, տվյալների ստացումը: Ապացույցի հավաստիության մասին կարելի է դատել՝ առաջին հերթին ելնելով այդ տեղեկատվության աղբյուրի բնույթից (հատկանիշներից), այսինքն՝ ապացույցների արժանահավատությունն առաջին հերթին կախված է տեղեկատվության աղբյուրի որակից: Միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապացույցների արժանահավատությունը կախված է նաև գործով ձեռք բերված տարբեր ապացույցների՝ միմյանց համապատասխանությունից, հավաքված և հետազոտված բոլոր ապացույցների ընդհանուր գնահատականից, քանի որ գործով ձեռք բերված և հետազոտված բոլոր ապացույցների գնահատումը միայն կարող է վերհանել ապացույցների միջև եղած հակասությունները և



արդյունքում որոշել ապացույցների հավաստիությունը: Այլ կերպ ասած, եթե դատարանի մոտ կասկածներ են առաջանում՝ կապված ձեռք բերված և հետազոտվող ապացույցների հավաստիության վերաբերյալ, ապա այդ կասկածներն անհրաժեշտ է փարատել՝ տվյալ ապացույցներն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով (*տե՛ս նաև Ջոյա Միլտոնի-դուն ընդդեմ Երևան համայնքի թիվ ՎԳ/10507/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին կայացրած որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակելու փորձաքննություն՝ իր որոշմամբ սահմանելով հարցերի ցանկը և բովանդակությունը: Փորձագետի եզրակացությունն ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ (*տե՛ս «Օրինակ Մթոն» ՄՊԸ-ն ընդդեմ «Վագ քար» ՄՊԸ-ի թիվ ԱՎԴ1/0074/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Այսպիսով, վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատավարությունում գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանն իրավունք ունի նշանակելու փորձաքննություն: Նշանակված փորձաքննության արդյունքների նկատմամբ դատարանը պետք է ցուցաբերի անհրաժեշտ հետևողականություն՝ պարզելով ստացված փորձագիտական եզրակացության ամբողջականությունը, արժանահավատությունը և գործով հետազոտված այլ հանգամանքների ու ապացույցների հետ դրա համապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերի կայացման համար, ի թիվս այլ ապացույցների, հիմք են ընդունել նաև 10.09.2010 թվականի թիվ 09-2457 փորձագիտական եզրակացությունը: Վարդան Լեմեցյանը և Արգինե Մանուկյանը գործի քննության ընթացքում բազմիցս առարկել են նշված փորձագիտական եզրակացության արժանահավատության ու ամբողջականության դեմ՝ ըստ էության կասկածներ հայտնելով ինչպես փորձագետին տրամադրված փաստաթղթերի ու նյութերի հավաստիության, այնպես էլ փորձագետի կողմից կատարված հետևությունների արժանահավատության վերաբերյալ: Մինչդեռ թե՛ Դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը նշված փորձագիտական եզրակացությունը դրել են իրենց դատական ակտերի հիմքում՝ առանց անդրադառնալու տվյալ ապացույցի արժանահավատության վերաբերյալ Վարդան Լեմեցյանի և Արգինե Մանուկյանի կողմից ներկայացված փաստարկներին: Փաստորեն, ստորադաս դատարանները չեն պարզել 10.09.2010 թվականի թիվ 09-2457 փորձագիտական եզրակացության արժանահավատությունը, ամբողջականությունը և գործով հետազոտված այլ հանգամանքների ու ապացույցների հետ դրա համապատասխանությունը: Մինչդեռ վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հանգամանքների պարզումն էական նշանակություն ունի սույն գործի քննության և ճիշտ լուծման համար, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Հետևաբար վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված փորձագիտական եզրակացության արժանահավատության ու ամբողջականության գնահատման մասով ևս առկա է սույն գործի նոր քննության անհրաժեշտություն:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի, Լինա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդ Արմինե Մանուկյանի, Վարդան Լեմեցյանի և Արգինե Մանուկյանի վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դա-

տարանի որոշումը բեկանելու և սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Երևանի քաղաքապետին իրավահաջորդով փոխարինելու և սույն գործի քննությունը լրիվ ու բազմակողմանի իրականացնելու նպատակով գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և կզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքները ենթակա են բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Երևանի քաղաքապետարանի, Վարդան Լեմենցյանի և Արգինե Մանուկյանի վճռաբեկ բողոքները բավարարել, իսկ Լինա Գյուլ-Բուդաղյանի իրավահաջորդ Արմինե Մանուկյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն. բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.06.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/10561/05/13  
2016 թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/10561/05/13

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Բաբայան  
Ա. Աբովյան  
Ա. Սարգսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 26-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝  
Նախարարություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.01.2015  
թվականի որոշման դեմ՝ ըստ Մեխակ Գաբրիելյանի հայցի ընդդեմ Նախարարության՝  
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կտմիտեի (այսուհետ՝ Կտմիտե)  
հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու  
մասին» որոշումը վերացնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Մեխակ Գաբրիելյանը պահանջել է վերացնել Կտմիտեի հե-  
տաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մա-  
սին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան)  
05.05.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.01.2015  
թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
05.05.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## 2. Վճուարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճուարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել սույն գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ 02.11.2009 թվականին կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը, 11.01.2010 թվականին կնքված համաձայնագիրը, վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի փորձաքննության ակտերը: Նշված ապացույցների սխալ գնահատման հետևանքով Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով եկել է այն եզրահանգման, որ «ԳՈՒԴԵՆ ՖԻԼԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկրված ապրանքն այլ անձի՝ «ԱՅՁԻՎԻԱՅ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Կազմակերպություն) չի հանձնվել: Մինչդեռ մաքսային մարմնի տրամադրության տակ եղած ապացույցները բավարար են Ընկերության կողմից ներկրված և մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների հանձնման փաստն ապացուցելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.01.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

## 3. Վճուարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

3. 02.12.2010 թվականի թիվ C-38213, 13.12.2010 թվականի թիվ C-39659, 22.12.2010 թվականի թիվ C-40991, 10.01.2011 թվականի թիվ C-118, 20.09.2011 թվականի թիվ C-30048 բեռնամաքսային հայտարարագրերի համաձայն՝ Ընկերությունը «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 401.873.571 ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանք (անկար խողովակ) (**հատոր 1-ին, գ.թ. 61, 65, 68, 72, 75**):

4. Ընկերության (Պատվիրատու) և Կազմակերպության (Կատարող) միջև 02.11.2009 թվականին կնքված թիվ 01/09 պայմանագրի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է անորոշ ժամկետով Պատվիրատուի նյութերով (մետաղական խողովակներ) կատարել ավտոմեքենայի բարձր ճնշման գազի բալոնների արտադրման աշխատանքներ (**հատոր 1-ին, գ.թ. 19-21**):

5. 11.01.2010 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Ընկերության և Կազմակերպության միջև 02.11.2009 թվականին կնքված թիվ 01/09 պայմանագիրը լուծվել է (**հատոր 1-ին, գ.թ. 22**):

6. Ընկերության (Պատվիրատու) և Կազմակերպության (Կատարող) միջև 01.12.2009 թվականին կնքված թիվ 01/09 պայմանագրի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է 01.12.2009 թվականից մինչև 01.12.2010 թվականը Պատվիրատուի նյութերով (մետաղական խողովակներ) կատարել ավտոմեքենայի բարձր ճնշման գազի բալոնների արտադրման աշխատանքներ (**հատոր 1-ին, գ.թ. 58-60**):

7. Որպես Ընկերության կողմից վերամշակված արտադրանքի ծագման երկիրը որոշելու փորձագիտական եզրակացություններ Դատարան են ներկայացվել մի շարք օտարալեզու փաստաթղթեր (**հատոր 1-ին, գ.թ. 64, 67, 71, 74, 77, 79, 82**):

8. Իրավաբանական անձի պետական գրանցման թիվ 03Ա074680 վկայականի համաձայն՝ Մելխակ Գաբրիելյանը 02.09.2010 թվականից Ընկերության տնօրենն է (**հատոր 1-ին, գ.թ. 86**):

9. Կոմիտեի հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշման համաձայն՝ Մելխակ Գաբրիելյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 200.936.786 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Ընկերությունը 2010-2011 թվականների ընթացքում «ժամանակավոր ներմուծում» վերամ-

շակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 401.873.571 ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանք (անկար խողովակ) և մաքսային հսկողության ներքո գտնվող այդ ապրանքն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնել է Կազմակերպությանը՝ վերանշակման համար (**հատոր 1–ին, գ.թ. 16–17**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի կիրառման առանձնահատկությունների, ինչպես նաև օտարալեզու գրավոր ապացույցը՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությամբ չներկայացնելու իրավաբանական հետևանքների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Մինչև սույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27–րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.*

1) վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքը կարող է արդյոք համարվել ապահովված այն պարագայում, երբ դատարանը սեփական նախաձեռնությամբ չի ձեռնարկել համարժեք միջոցներ գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցի պարզման ուղղությամբ,

2) կարող է արդյոք վարչական դատարանը գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը հաստատել օտարալեզու ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով՝ չպահանջելով օտարալեզու գրավոր ապացույց ներկայացրած դատավարության մասնակցից ներկայացնել այդ ապացույցը՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանության ձևով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5–րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (ex officio): Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով (...) և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ դատարանը (...) առաջարկում է (...) համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտ-

ման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին (որևն *Ջաջուռի գյուղապետարանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առնաթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքը վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկն է. այն նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վար-

չական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքը դատական ապացուցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ պահանջելու վարչական դատարանի պարտականությամբ (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդված):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ վարչական դատավարությունում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված): Վարչական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնակատն ունեցողի ապահովման և արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Ըստ այդմ՝ գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու հարցը կարգավորող օրենսդրական նորմերը՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները, հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, ով պարտավոր է ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի (վիճարկման հայց) հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի, որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Հետևաբար միջամտող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված բոլոր ապացույցների հետազոտումից հետո տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու դեպքում վարչական դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված):

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ թեև վարչական դատավարությունում ապացուցման պարտականությունը կրում են կողմերը, սակայն վարչական դատարանը, կաշկանդված չլինելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, պարտավոր է գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ և պահանջել, որ ներկայացվեն գործի փաստա-

կան հանգամանքները պարզելու ու գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները (յրեն Ալեքսանդր Կարապովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները, ըստ մաքսային ռեժիմների, մաքսային հսկողության տակ են գտնվում (...) (գ) «ժամանակավոր ներմուծում» և «ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար» ռեժիմների դեպքում՝ ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողման պահը (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 139.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ արգելվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը կամ ոչնչացնելը (...): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքները և տրանսպորտային միջոցները կորցնելու դեպքում անձը կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով ամրագրված իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել մաքսային այն կանոնների խախտման համար, որոնք կապված են մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների նկատմամբ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 139.1-րդ հոդվածի ուժով գործող սահմանափակումների հետ և չեն առնչվում պետության ֆինանսական շահերին, մաքսային վճարների վճարման պարտականության կատարմանը, ինչպես նաև այդպիսի պարտականության կատարման ապահովմանը: Նշված վարչական իրավախախտումն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության սահմանված կարգի դեմ և դրսևորվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու եղանակով: Նշված արարքների կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնված, օտարված, ոչնչացված կամ կորցված ապրանքի մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթից բխում է, որ «ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքները և տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողման պահը գտնվում են մաքսային հսկողության ներքո: Հետևաբար ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվություն կարող է առաջանալ նաև «ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքները և տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողումն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Մեխակ Գաբրիելյանի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Կոմիտեի հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը: Նշված վարչական ակտով Ընկերության տնօրեն Մեխակ Գաբրիելյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով ենթարկվել է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 200.936.786 ՀՀ դրամի չափով, այն բանի



համար, որ Ընկերությունը 2010–2011 թվականների ընթացքում «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 401.873.571 ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանք (անկար խողովակ) և մաքսային հսկողության ներքո գտնվող այդ ապրանքն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնել է Կազմակերպությանը՝ վերամշակման համար:

Փաստորեն, սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունման հիմքում ընկած է այն փաստը, որ Ընկերության կողմից 2010–2011 թվականների ընթացքում «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքն (անկար խողովակը) առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնվել է Կազմակերպությանը: Հետևաբար Կոմիտեի հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու հայցապահանջի մերժման կամ բավարարման հարցը լուծելու համար էական նշանակություն ունի այն հարցի պարզումը, թե Ընկերության կողմից 2010–2011 թվականների ընթացքում «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքն (անկար խողովակը) առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնվել է արդյոք Կազմակերպությանը, թե ոչ:

Վարչական մարմինը սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոգրյալ փաստը ապացուցված է համարել Ընկերության և Կազմակերպության միջև 02.11.2009 թվականին և 01.12.2009 թվականին կնքված պայմանագրերի և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի «Հայէքսպերտիզա» ՄԴԼ-ի թվով 7 փորձաքննության ակտերի հիման վրա: Այսպես, ըստ վարչական մարմնի՝ այդ ապացույցները հիմք են տալիս հաստատված համարելու այն փաստը, որ Ընկերությունը 2010–2011 թվականների ընթացքում «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծած և մաքսային հսկողության ներքո գտնվող 401.873.571 ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանքն (անկար խողովակը) առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնել է Կազմակերպությանը՝ վերամշակման համար: Այնուհետև վերամշակման արդյունքում ստացված արտադրանքը՝ ավտոմեքենայի բարձր ճնշման գազի բալոնները, վերաարտահանելու համար Ընկերությունը դիմել է ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ և ստացել ծագման երկրի վերաբերյալ հավաստագրեր՝ կից վերոգրյալ փորձաքննության ակտերով, որոնցում որպես ապրանքի արտադրող նշված է Կազմակերպությունը:

Սույն գործով Դատարանը բավարարել է Մեխակ Գաբրիելյանի հայցը և անվավեր է ճանաչել Կոմիտեի հետաքննության վարչության պետի 13.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը՝ պատճառաբանելով նաև, որ Ընկերության կողմից ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքն (անկար խողովակը) առանց մաքսային մարմնի թույլտվության Կազմակերպությանը հանձնված լինելու փաստը չի ապացուցվել: Այսպես, ըստ Դատարանի եզրահանգման՝ վարչական մարմինը նշված փաստը հաստատված է համարել Ընկերության և Կազմակերպության միջև 02.11.2009 թվականին և 01.12.2009 թվականին կնքված պայմանագրերի և «Հայէքսպերտիզա» ՄԴԼ-ի թվով 7 փորձաքննության ակտերի հիման վրա, որոնք տրամադրվել են ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից: Մինչդեռ Դատարանը գտել է, որ վերոգրյալ ապացույցներով չի հաստատվում Ընկերության կողմից մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքը հանձնելու փաստը:

Վերաքննիչ դատարանը մերժել է Նախարարության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության հիմնավոր համարելով Դատարանի վերոգրյալ դիրքորոշումները: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ընկերության և Կազմակերպության միջև 02.11.2009 թվականին կնքված թիվ 01/09 պայմանագիրը լուծվել է 11.01.2010 թվականին կողմերի միջև կնքված համաձայնագրով, իսկ Ընկերության և Կազմակերպության միջև 01.12.2009 թվականին կնքված պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է 01.12.2010 թվականին: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը փաստել է, որ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից տրված համապատասխան փորձաքննության ակտերում նշված տվյալներն ինքնին բավարար չեն Ընկերության կողմից ներմուծված և մաքսային հսկողու-

թյան ներքո գտնվող անկար խողովակներն առանց մաքսային մարմնի թույլտվության Կազմակերպությանը հանձնված լինելու փաստը հաստատված համարելու համար:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցը՝ Ընկերության կողմից ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքն (անկար խողովակը) առանց մաքսային մարմնի թույլտվության Կազմակերպությանը հանձնված լինելու փաստի առկայությունը կամ բացակայությունը, ստորադաս դատարանները պարզել են Կոմիտեի (Նախարարության) կողմից ներկայացված հետևյալ ապացույցների՝ Ընկերության և Կազմակերպության միջև 02.11.2009 թվականին և 01.12.2009 թվականին կնքված պայմանագրերի, 02.11.2009 թվականի պայմանագիրը լուծելու վերաբերյալ 11.01.2010 թվականի համաձայնագրի և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի «Հայէքսպերտիզա» ՍՊԸ-ի թվով 7 փորձաքննության ակտերի հետազոտման և գնահատման միջոցով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոգրյալ փաստի ապացուցման պարտականությունը կրում է Կոմիտեն (Նախարարությունը), քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի (վիճարկման հայց) հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Այդուհանդերձ, Դատարանը, կաշկանդված չլինելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, պարտավոր էր սույն գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ և պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու ու գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները: Տվյալ դեպքում ապացուցման բեռի բաշխման կանոնները վճռորոշ նշանակություն կարող են ստանալ միայն այն դեպքում, երբ կողմերի ներկայացրած, ինչպես նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքի իրագործման պայմաններում ձեռք բերված ապացույցները բավարար չլինեն սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքն (անկար խողովակը) առանց մաքսային մարմնի թույլտվության Կազմակերպությանը հանձնված լինելու փաստի, առկայության կամ բացակայության մասին օբյեկտիվ և հիմնավորված եզրահանգում կատարելու համար:

Մինչդեռ սույն գործով ստորադաս դատարաններն անտեսել են, որ Ընկերության կողմից ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքը (անկար խողովակը) կարող էր առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնված լինել Կազմակերպությանը՝ անկախ վերջիններիս միջև պայմանագրային հարաբերությունների առկայությունից կամ բացակայությունից: Այլ կերպ ասած՝ Ընկերության և Կազմակերպության միջև 02.11.2009 թվականին կնքված թիվ 01/09 պայմանագրի՝ 11.01.2010 թվականի համաձայնագրով լուծված լինելը, ինչպես նաև Ընկերության և Կազմակերպության միջև 01.12.2009 թվականին կնքված պայմանագրի գործողության ժամկետը 01.12.2010 թվականին ավարտված լինելը չեն կարող անվիճելիորեն վկայել այն մասին, որ Ընկերությունը մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքն (անկար խողովակը) առանց մաքսային մարմնի թույլտվության չի հանձնել Կազմակերպությանը: Ավելին՝ սույն գործի փաստական կողմի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դիմելով ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ՝ Ընկերությունը ներկայացրել է 02.11.2009 թվականին կնքված թիվ 01/09 պայմանագիրը և այդ պայմանագրի հիման վրա ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի տրամադրած փորձաքննության ակտերով որպես արտահանվող ապրանքի (ավտոմեքենայի բարձր ճնշման գազի բալոնների) արտադրող նշվել է Կազմակերպությունը, այլ ոչ թե Ընկերությունը:

Անփոփոխվելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով Դատարանը, կաշկանդված չլինելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, պարտավոր էր

իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցը՝ Ընկերության կողմից ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքն (անկար խողովակը) առանց մաքսային մարմնի թույլտվության Կազմակերպությանը հանձնված լինելու փաստի առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով: Մինչդեռ Դատարանը չի կատարել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն պարզելու (ex officio) սկզբունքի էությունից բխող վերոգրյալ դատավարական պարտականությունը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Անդրադառնալով սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերը նշված փաստի հաստատման կամ հերքման հարցում ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի «Հայէքսպերտիզա» ՍՊԸ-ի թվով 7 փորձաքննության ակտերի ապացուցողական նշանակությունը՝ Վճարել դատարանն արձանագրում է հետևյալը.

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարությունն ընթանում է հայերեն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կողմը, նրա ներկայացուցիչը (...) իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե կողմն ապահովում է հայերեն թարգմանությունը (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են (...) գրավոր ապացույցները (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գրավոր ապացույցներ են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկություններ պարունակող իրավական ակտերը, տեղեկանքները, գործարար և մասնավոր թղթակցությունը և այլ գրավոր նյութեր (փաստաթղթեր): Գրավոր ապացույցներ են նաև էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով ստացված նյութերը, եթե առկա է հաղորդակցության իսկությունն ապացուցելու հնարավորություն:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ դատարանը, իր նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակցի միջնորդությամբ, կարող է օտարալեզու գրավոր ապացույց ներկայացրած դատավարության մասնակցից պահանջել գրավոր ապացույցը ներկայացնել օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությամբ: Նման թարգմանություն չներկայացնելու դեպքում դատարանը տվյալ ապացույցը կարող է հանել հետազոտման ենթակա ապացույցների շարքից:

Վճարել դատարանն արձանագրում է, որ գրավոր ապացույցները վարչական դատավարությունում մեծ ապացուցողական նշանակություն ունեցող և տարածված ապացուցման միջոցներ են, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածում ամրագրված ձևակերպումից բխում է, որ որպես գրավոր ապացույց կարող է հանդես գալ ցանկացած նյութական կրիչ, որի վրա տառերի, թվերի, ծածկագրերի և այլ նշանների կիրառմամբ արտացոլված են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին որոշակի տեղեկություններ: Ընդ որում, գրավոր ապացույցներում ապացուցողական նշանակություն ունի այն տեղեկությունը (միտքը), որը տառերի, թվերի, ծածկագրերի և այլ նշանների միջոցով արտացոլված է որոշակի նյութական կրիչի վրա և ընկալվում է դրա բովանդակության (տեքստի) ընթերցման միջոցով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածով օրենսդիրը կարգավորել է օտար լեզվով կազմված գրավոր ապացույցները հայերեն թարգմանությամբ ներկայացնելու կարգը և չթարգմանված ապացույցները դատարան ներկայացնելու դատավարական հետևանքները: Այսպես, վկայակոչված հոդվածի 8-րդ մասի ուժով դատարանն իրա-

վասու է դատավարության մասնակցի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ օտարալեզու ապացույց ներկայացրած դատավարության մասնակցից պահանջել ներկայացնել նույն ապացույցը՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանության տեսքով: Ընդ որում, վարչական դատարանի նշված պահանջը չկատարելու դատավարական հետևանքները հանգում են հետևյալին. դատարանի պահանջից հետո օտար լեզվով կազմված գրավոր ապացույցի փոխարեն դրա՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությունը չներկայացնելու դեպքում դատարանը տվյալ ապացույցը կարող է հանել հետազոտման ենթակա ապացույցների շարքից:

Հիմք ընդունելով սահմանադրաիրավական այն դրույթը, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով ամրագրված դատավարության լեզվի սկզբունքը, ինչպես նաև քննարկվող հարցի շուրջ ձևավորված իրավակիրառ պրակտիկան՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական դատավարությունում օտար լեզվով կազմված փաստաթղթերի ներկայացման դեպքում ապացուցման պարտականություն ունեցող դատավարության մասնակիցների կողմից պետք է ներկայացվի նաև այդ փաստաթղթի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում գրավոր ապացույցը համարվում է պատշաճորեն թարգմանված, եթե թարգմանության իսկությունը վավերացված է նոտարական կարգով («Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ և 68-րդ հոդված): Օտարալեզու գրավոր ապացույցի հետ մեկտեղ դրանց պատշաճորեն հաստատված (թարգմանության իսկությունը նոտարական կարգով վավերացված) հայերեն թարգմանությունները չներկայացվելու դեպքում վարչական դատարանը պետք է օտար լեզվով կազմված փաստաթղթերը հանի հետազոտման ենթակա ապացույցների շարքից: Այլ կերպ ասած՝ վարչական դատարանը պարտավոր է օտար լեզվով կազմված գրավոր ապացույցը ճանաչել անթույլատրելի և հանել գործում առկա ապացույցների կազմից, եթե այդ ապացույցը ներկայացրած դատավարության մասնակիցը չի ներկայացրել նաև դրա պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը:

Սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող վարչական ակտի հիմքում վարչական մարմնի կողմից դրված «Հայէքսպերտիզա» ՍՊԸ-ի թվով 7 փորձաքննության ակտերը սույն գործում բացակայում են. փոխարենը ներկայացված են թվով 7 օտարալեզու փաստաթղթեր (հատոր 1-ին, գ.թ. 64, 67, 71, 74, 77, 79, 82):

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ տվյալ դեպքում ստորադաս դատարանները հաշվի չեն առել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքի էությունից բխող և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածով սահմանված՝ օտար լեզվով կազմված փաստաթղթերը հայերեն թարգմանությամբ ներկայացնելու կարգը և չթարգմանված ապացույցները դատարան ներկայացնելու դատավարական հետևանքները: Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում Դատարանը պետք է սեփական նախաձեռնությամբ օտարալեզու ապացույց ներկայացրած դատավարության մասնակցից՝ Կոմիտեից (Նախարարությունից) պահանջել ներկայացնել նույն ապացույց՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանության տեսքով: Այլ կերպ ասած՝ Դատարանը չէր կարող իր վճիռն հիմքում դնել ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի «Հայէքսպերտիզա» ՍՊԸ-ի թվով 7 փորձաքննության ակտերը, որոնք սույն գործում առկա չեն կամ ենթադրաբար ներկայացված են օտարալեզու փաստաթղթերի տեսքով:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Դատարանը սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող՝ Ընկերության կողմից ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքն (անկար խողովակը) առանց մաքսային մարմնի թույլտվության Կազմակերպությանը հանձնված լինելու փաստի բացակայությունը հաստատված է համարել ենթադրաբար օտար լեզվով կազմված ու օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությամբ չներկայացված փաստաթղթերի հիման վրա, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատավարական նորմերի վերը նշված խախտումները վերացնելու, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

### **5. Վճռաբեկ դատարանի պարզադատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև նյութ կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.01.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

# ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

## ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/5797/02/15  
2016 թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/5797/02/15  
Նախագահող դատավոր՝

Ս. Թորոսյան

#### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2016 թվականի օգոստոսի 01-ին,  
քննարկելով «ԵԱԶ» ամրանների գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներ-  
կայացուցիչ Աշոտ Ավետիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատա-  
րանի 10.02.2016 թվականի որոշման դեմ,

#### ՊԱՐԶԵՑ

##### 1. Գործի դատարանական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Կարեն Սահակյանը, Սերժիկ Մարությանը, Արամ Կելիկյանը,  
Գրիգոր Լազարյանը, Գագիկ Ղուրբախյանը, Հրայր Գասպարյանը, Վահրամ Ալիմյանը,  
Արտավազ Ստեփանյանը, Լալազար Մինասյանը, Գագիկ Հակոբյանը, Աշոտ Կարապե-  
տյանը, Վրեժ Արշակյանը, Միլվա Առաքելյանը, Էֆրիկ Ավետիսյանը, Միրանուշ Կարապե-  
տյանը, Գևորգ Հարությունյանը, Կարեն Եղիազարյանը (այսուհետ՝ Համահայցվորներ) պա-  
հանջել են վերակազմակերպել, այն է՝ բաժանել Ընկերությունը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության  
դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 28.12.2015 թվականի  
որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան)  
10.02.2016 թվականի որոշմամբ Համահայցվորների վերաքննիչ բողոքը բավարարվել է՝

Դատարանի 28.12.2015 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համահայցվորների ներկայացուցիչ ժիրայր Սաֆարյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 21-րդ, 66-րդ, 68-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ իրավաբանական անձի, տվյալ դեպքում՝ Ընկերության վերակազմավորման (բաժանման) պահանջը պետք է քննության առնվի հիմնադիրների (մասնակիցների) ընդհանուր ժողովի որոշման հիման վրա: Այսինքն՝ առանց Ընկերության ընդհանուր ժողովի որոշման Ընկերության վերակազմավորման, տվյալ դեպքում՝ բաժանման հարցը չի կարող քննարկվել:

Համահայցվորները, Ընկերության վերակազմավորման պահանջով դիմելով Դատարան, խախտել են ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, այնպես էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի իմպերատիվ պահանջները, այն է՝ առանց դիմելու Ընկերությանն օրենքով նախատեսված ընթացակարգով ընդհանուր ժողով հրավիրելու, ժողովի օրակարգում իրենց առաջարկությունը ներկայացնելու, մնացած բաժնետերերի դիրքորոշումները ճշտելու, Ընկերության վերակազմակերպման (բաժանման) նպատակահարմարության ու հնարավորության հարցը քննարկելու, միանգամից դիմել են Դատարան՝ անտեսելով Ընկերության մյուս բաժնետերերի դիրքորոշումը:

Համահայցվորները դատարանին որևէ ապացույց չեն ներկայացրել այն մասին, որ իրենք օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով դիմել են Ընկերությանը հերթական ընդհանուր ժողովում նշված հարցն օրակարգ մտցնելու կամ նշված օրակարգով արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու վերաբերյալ: Մասնավորապես՝ Համահայցվորները որևէ ապացույց չեն ներկայացրել հետադարձ ծանուցման թերթիկի առկայության և Ընկերության ներկայացուցչի կողմից ստորագրված լինելու վերաբերյալ, որը հիմք կտար եզրահանգելու, որ Ընկերությունն անպատասխան է թողել ընդհանուր ժողով հրավիրելու վերջիններիս պահանջը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 10.02.2016 թվականի որոշումը:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Համահայցվորները 30.09.2015 թվականին դիմել են Ընկերության նախագահ Լ. Կարտոյանին բաժնետերերի ընդհանուր ժողով հրավիրելու պահանջով, որը մնացել է անհետևանք: Սույն գործով ներկայացված բողոքի հիմք հանդիսացող հանգամանքները վիճելի են, քանի որ դրանք ենթակա են ապացուցման քաղաքացիական գործի քննության ընթացքում, այլ ոչ թե՛ հայցադիմումի ընդունման փուլում: Մինչդեռ Դատարանը, հայցադիմումի ընդունումը մերժելով, սահմանափակել է Համահայցվորների դատարան դիմելու իրավունքը:

### 3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին անսլոն հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: **Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում:** Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, **բացարձակ չեն և կարող են ենթարկվել սահմանափակումների**, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կան այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ (*Կրեուզն Այ-Արսանին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 35763/97 գանգաբով Եվրոպական դատարանի 21.11.2001 թվականի վճիռը, պարբ. 53, Խալիֆաուին ընդդեմ Ֆրանսիայի թիվ 34791/97 գանգաբով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, պարբ. 35, Ռապոն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 4210/00 գանգաբով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, պարբ. 90, «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանգաբով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, պարբ. 44*):



Միաժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է դատարան դիմելու արդյունավետ իրավունք, այնուամենայնիվ, պետության հայեցողությանն է թողնված նշված նպատակի համար անհրաժեշտ միջոցների ընտրության հարցը (*Կենն Էյրին ընդդեմ Բոլանդիայի թիվ 6289/73 գանգալորով Եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը, պարբ. 26*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը (այսուհետ՝ դատարան):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքներին, ազատություններին և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, որը ենթակա է իրականացման նաև հայց հարուցելով, քաղաքացիական գործերի ենթակայությանը համապատասխան իրականացնում է դատարանը: Այսինքն՝ դատական ենթակայության առկայության դեպքում համապատասխան քաղաքացիական գործերի քննությունը և լուծումը քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ հանձնված է դատական մարմինների իրավասությանը: Այլ կերպ ասած՝ ենթակայության ինստիտուտի էությունը կայանում է նրանում, որ այն բացառում է գործը լուծելու համար այլ մարմին դիմելու հնարավորությունը: Միաժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ մինչև դատարան դիմելն օրենքով սահմանված կարգով առկա է գործն այլ մարմինների քննելու իրավասություն, ապա տվյալ գործը ենթակա չէ դատարանում քննության, իսկ դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի: Ըստ այդմ էլ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում վեճը դատարանին ենթակա լինելու հարցը պարզելիս դատարաններն առաջին հերթին պետք է ելնեն վիճելի իրավահարաբերության բնույթից, որից հետո հաշվի առնեն տվյալ վեճը կարգավորող նյութական իրավունքի նորմերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև հայցային վարույթի գործերը հարուցվում են դատարան հայցադիմում ներկայացնելու միջոցով, և հայց ներկայացնելը հանդիսանում է գործի հարուցման նախապայման, այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ առկա չեն հայց հարուցելու իրավունքի նախադրյալները, որոնցից է նաև հայցը դատարանին ենթակա լինելու նախապայմանը, այդպիսի պարագայում բացակայում է հայցվորի՝ հայց հարուցելու իրավունքը, հետևաբար և դատավորը կայացնում է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված վեճը դատարանում քննության ենթակա լինելու հարցն անհրաժեշտ է պարզել հետևյալ նյութաիրավական նորմերի մեկնաբանման լույսի ներքո:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝ օրենքով նախատեսված այլ եղանակներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձի վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) կատարվում է նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշման հիման վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական անձի բաժանման կամ նրա կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնացման ձևով իրավաբանական անձի վերակազմակերպումն իրականացվում է դատարանի վճռով:

Դատարանը նշանակում է իրավաբանական անձի արտաքին կառավարիչ և նրան հանձնարարում է իրականացնել իրավաբանական անձի վերակազմակերպում: Նշանակման պահից իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորություններն անցնում են արտաքին կառավարիչին: Արտաքին կառավարիչն իրավաբանական անձի անունից հանդես է գալիս դատարանում, կազմում է բաժանիչ հաշվեկշիռ և վերակազմակերպման արդյունքում ստեղծվող իրավաբանական անձանց կանոնադրությունների հետ միասին ներկայացնում է դատարան: Դատարանի կողմից այդ փաստաթղթերը հաստատելը հիմք է նոր ստեղծվող իրավաբանական անձանց պետական գրանցման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ բաժնետիրական ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության են պատկանում՝ ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշում ընդունելը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Ընկերության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) կատարվում է ժողովի որոշմամբ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության բաժանման կամ նրա կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնացման ձևով Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է դատարանի վճռով: Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության միաձուլման կամ միացման ձևով վերակազմակերպումը կարող է իրականացվել միայն լիազորված պետական մարմնի թույլտվությամբ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Ընկերության բաժանում է համարվում Ընկերության դադարումը՝ նրա բոլոր իրավունքների և պարտականությունների՝ նոր ստեղծվող ընկերություններին փոխանցմամբ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժանման մասին որոշումը պետք է ընդունվի բաժանվող Ընկերության ժողովում, որը պետք է հաստատի նաև բաժանման կարգը և պայմանները, բաժանիչ հաշվեկշիռը, ինչպես նաև բաժանվող Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը նոր ստեղծվող ընկերությունների բաժնետոմսերի և/կամ այլ արժեթղթերի:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով: Առաջին տարեկան ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո: Տարեկան ժողովը գումարվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ ժողովի իրավասությանն են պատկանում Ընկերության վերակազմակերպումը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով իրավաբանական անձի վերակազմակերպման հետևյալ ձևերը՝ միաձուլում, միացում, **բաժանում**, առանձնացում և վերակազմավորում, միաժամանակ ամրագրել է, որ վերակազմակերպման, **մասնավորապես բաժանման** և **առանձնացման ձևերի** դեպքում այն իրականացվում է երկու եղանակով՝ **կամավոր և հարկադիր**: Որպես կանոն, իրավաբանական անձի, տվյալ դեպքում բաժնետիրական ընկերությունների **վերակազմակերպումը՝ այդ**

**թվում նաև բաժանումը**, կատարվում է **կամավոր կարգով**՝ նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշման հիման վրա: Ընդ որում, բաժնետիրական ընկերության բաժանման մասին որոշում ընդունելու իրավասությունը պատկանում է բաժնետիրական ընկերության կառավարման բարձրագույն մարմնին՝ Ընկերության ժողովին, որը հաստատում է նաև բաժանման կարգը և պայմանները:

Ի տարբերություն կամավոր կարգի՝ բաժնետիրական ընկերության **հարկադիր վերակազմակերպումը տեղի է ունենում դատարանի վճռով՝ բացառապես օրենքով նախատեսված դեպքերում**: Ընդ որում՝ դատարանի վճռով **հարկադիր վերակազմակերպումն** իրականացվում է բացառապես բաժանման կամ առաձևացման ձևերի դեպքում, քանի որ այդ դեպքում հնարավոր է **ընկերության գույքային միջոցների նվազեցում**: Բացի այդ, բաժանման ձևով վերակազմակերպման արդյունքում վերակազմակերպվող ընկերությունը դադարում է գոյություն ունենալուց, իսկ նրա բոլոր իրավունքները և պարտականությունները փոխանցվում են նոր ստեղծվող ընկերություններին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական կարգով ընկերության բաժանման պահանջի դեպքում առկա է իրավաբանական անձի հարկադիր վերակազմակերպման պահանջ, որն ենթակա է դատարանի քննությանը միայն օրենքով նախատեսված դեպքերում, այսինքն՝ այն դեպքում, երբ օրենքով սահմանված կարգով ուղղակիորեն և հստակ ամրագրված է համապատասխան իրավասու անձի՝ տվյալ պահանջով հայց ներկայացնելու իրավունքը կամ տվյալ պահանջը դատարանին քննության ենթակա լինելը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաժնետիրական ընկերության բաժնետերերն Ընկերության վերակազմակերպման (տվյալ դեպքում՝ բաժանման) գործընթացի հետ կապված իրենց պահանջները կարող են ներկայացնել օրենքով սահմանված կարգով՝ իրենց իրավասությունների շրջանակում (*օրինակ՝ բաժնետերն իրավունք ունի «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետով սահմանված կարգով դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով և այլն*): Ընդ որում, նշվածը կարող է իրականացվել միայն կամավոր կարգով բաժնետիրական ընկերության վերակազմավորման (տվյալ դեպքում՝ բաժանման) դեպքերում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Համահայցվորները, որպես Ընկերության բաժնետերեր, դիմելով Դատարան՝ պահանջել են վերակազմակերպել, այն է՝ բաժանել Ընկերությունը: Գործի նյութերում առկա գրության համաձայն՝ Համահայցվորները դիմել են Ընկերության նախագահ Լևոն Կարտոյանին և ցանկություն են հայտնել Ընկերությանը պատկանող անշարժ, շարժական գույքից, այդ թվում նաև հիմնական և շրջանառու միջոցներից առանձնացնել իրենց բաժնեմասը և հաշվի առնելով, որ տվյալ պահանջը կախված է գույքի օտարման հնարավորության հետ, խնդրել են օրենքով սահմանված կարգով հրավիրել բաժնետերերի ընդհանուր ժողով՝ տվյալ պահանջը քննարկելու համար (**գ.թ. 15**):

Դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում չի պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, չի ներկայացվել իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշում՝ վերակազմակերպում կատարելու անհամաձայնության վերաբերյալ, ինչպես նաև չի մատնանշել այն օրենքը, որի դեպքում կգործի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը և հանգել է այն հետևության, որ վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Համահայցվորների վերաքննիչ բողոքը, որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ մինչև Դատարան դիմելը, Համահայցվորները, համապատասխան հարցի քննարկման նպատակով դիմել են Ընկերության նախագահ Լևոն Կարտոյանին՝ խնդրելով հրավիրել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով: Ընդ որում, նշված դիմումը հասցեատիրոջն ուղարկվել էր դեռևս 30.09.2015 թվականին, իսկ հայցադիմումը Դատարան է ներկայացվել 24.12.2015 թվականին, հետևաբար Դատարանի պատճառաբանությունն առ այն, որ Համահայցվորների կողմից չի պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, անհիմն է:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ կամավոր կարգով իրավաբանական անձի վերակազմակերպման համար նախատեսված է հատուկ ընթացակարգ, որը պահպանելու դեպքում միայն Համահայցվորները կարող են դիմել դատարան՝ բաժանման ձևով Ընկերության վերակազմակերպումն իրականացնելու համար: Հետևաբար, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով չիրավիրելու պայմաններում, Ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված հարցի լուծումը չի կարող իրականացվել դատական կարգով, առանց այդպիսի դեպքն օրենքով նախատեսված լինելու պայմանի:

Ինչ վերաբերում է Համահայցվորների այն պատճառաբանությանը, որ դիմել են ընդհանուր ժողով իրավիրելու խնդրանքով, սակայն դիմումը մնացել է անհետևանք, ապա հարկ է նշել, որ այդ հարցը կարող է լուծվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավակարգավորումների շրջանակներում:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համահայցվորները, չպահպանելով իրավաբանական անձի վերակազմակերպման համար նախատեսված հատուկ ընթացակարգը, չիրականացնելով և չսպառելով վեճի լուծման արտադատարանական եղանակները, Դատարանի կողմից չէին կարող ակնկալել քաղաքացիական գործի հարուցում և վեճի լուծում:

*Վերը նշված պարճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները:*

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Դատարանում վեճը քննության ենթակա չլինելու պայմաններում, բավարարելով վերաքննիչ բողոքը և վերացնելով Դատարանի 28.12.2015 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք հիմք են հանդիսանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.02.2016 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.12.2015 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/3828/02/15  
Նախագահող դատավոր՝

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/3828/02/15  
**2016 թ.**  
Ս. Միքայելյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորները*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի հուլիսի 22-ին  
քննարկելով «ԲԻԷՍԷՄԲԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Գևորգ  
Գևորգյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.12.2015 թվա-  
կանի որոշման դեմ,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է «ՌԻՆԱՐՏ» ՍՊԸ-ից (այսուհետ՝  
Կազմակերպություն) բռնագանձել 285.500 ՀՀ դրամ, ինչպես նաև նախապես վճարված  
պետական տուրքի գումարը:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դա-  
տարանի (դատավոր՝ Ա. Բաղիրյան) (այսուհետ՝ Դատարան) 24.08.2015 թվականի որոշ-  
մամբ Ընկերության հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
21.12.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
24.08.2015 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է օրի-  
նական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնա-  
վորումներով.

*Վերաքննիչ դատարանը խստիվել է 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադ-  
րության 39-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատու-  
թյունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա)*

6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 48-րդ, 87-րդ, 90-րդ, 92-րդ հոդվածները:

*Քողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հերկյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, Դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելով, պատճառաբանել է, որ «...թեև հայցվոր Ընկերությունը որպես պատասխանող Կազմակերպության հասցե նշել է Երևանի Նոր Նորք 8-րդ գանգված, 36 շ., բն. 12 հասցեն, միաժամանակ հայցադիմումին կից չի ներկայացրել որևէ թույլատրելի ապացույց (Կազմակերպության կանոնադրություն, իրավաբանական անձանց պետական ռեգիստրից կատարված հարցում), որով կհիմնավորվեր, որ նշված հասցեն իրականում պատասխանող Կազմակերպության գտնվելու վայրի հասցեն է»: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ և 92-րդ հոդվածները հայցադիմումին կից «Կազմակերպության կանոնադրություն» և/կամ «իրավաբանական անձանց պետական ռեգիստրից կատարված հարցում» ներկայացնելու պարտականություն չեն սահմանում: Վկայակոչված իրավակարգավորումները չեն սահմանում նաև պատասխանող Կազմակերպության գտնվելու վայրի հասցեն հիմնավորելու պարտականություն:

Փաստորեն, Դատարանի կողմից Ընկերության վրա դրված, սակայն օրենքով չսահմանված պարտականությանը Վերաքննիչ դատարանը հավելել է օրենքով չսահմանված՝ փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունը, այնինչ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածով հայցվորի վրա պատասխանողի գտնվելու վայրի հասցեն հիմնավորելու և/կամ դրա վերաբերյալ ապացույց ներկայացնելու պարտականություն սահմանված չէ:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածը ևս որևէ փաստաթուղթ ներկայացնելու (այդ թվում՝ հասցեի վերաբերյալ հարցման պատասխան կամ կանոնադրություն) պահանջ չի սահմանում: Հետևաբար հայցադիմումին որևէ փաստաթուղթ (բացի սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթղթի կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի) կցելը հայցվորի իրավունքն է, այլ ոչ թե՛ պարտականությունը:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանը, խախտելով դատավարական իրավունքի նորմերը, Ընկերությանը զրկել է դատական պաշտպանության իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 21.12.2015 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ»:

**3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացնելիս պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրը նշելու օրենսդրորեն սահմանված պահանջը պահպանելու և դրա վերաբերյալ թույլատրելի ապացույց ներկայացնելու հարցի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է աներևույթ

դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք քաղաքացիական գործի հարուցման փուլում հայցադիմում ներկայացնելիս հայցվոր կողմի վրա դրված է պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականություն:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման դրույթ է պարունակում նաև 06.12.2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, ինչպես նաև 63-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: **Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում:** Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը*, կետ 52):

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը եզրահանգել է նաև, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, բացարձակ չեն և կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ (*Կրեուզն ընդդեմ Լեհաստանի 19.06.2001 թվականի վճիռը*, կետ 52):

սանին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 35763/97 գանձաբով Եվրոպական դատարանի 21.11.2001 թվականի վճիռը պարբ. 53, Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի թիվ 34791/97 գանձաբով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, պարբ. 35, «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանձաբով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, պարբ. 44): Միաժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է դատարան դիմելու արդյունավետ իրավունք, այնուամենայնիվ, պետության հայեցողությանն է թողնված նշված նպատակի համար անհրաժեշտ միջոցների ընտրության հարցը (յո՛ւս էլ յո՛րին ընդդեմ Իռլանդիայի թիվ 6289/73 գանձաբով Եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը, պարբ. 26):

Անդրադառնալով անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԳՈ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմատեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանել դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության, եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ:



ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայցադիմումը ներկայացվում է գրավոր:

2. Հայցադիմումում պետք է նշվեն՝

1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը.

2) գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը, հայրանունը (այսուհետ՝ անուն), իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը՝ դրա առկայության դեպքում, հայցվոր իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը.

3) հայցագինը, եթե հայցը ենթակա է գնահատման.

4) հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները.

5) հայցապահանջները հաստատող ապացույցները.

6) բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը.

7) հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները.

8) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Հայցադիմումում կարող են նշվել նաև այլ տեղեկություններ, եթե դրանք անհրաժեշտ են վեճի ճիշտ լուծման համար, ինչպես նաև հայցվորի միջնորդությունները:

3. Հայցադիմումն ստորագրում է հայցվորը կամ նրա կողմից դրա համար լիազորված ներկայացուցիչը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայցադիմումին կցվում է սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

1<sup>1</sup>. Հայցադիմումին կարող են կցվել նաև հայցապահանջները հաստատող ապացույցներ:

2. Եթե հայցադիմումն ստորագրված է հայցվորի ներկայացուցչի կողմից, դրան կցվում է նաև վերջինիս՝ հայց հարուցելու լիազորությունները հավաստող լիազորագիրը:

3. Պայմանագիր կնքելու հարկադրելու մասին հայցադիմումին կցվում է համապատասխան պայմանագրի նախագիծը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 87-րդ հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդառայա չէ տվյալ դատարանին:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ դատարան հայց ներկայացնելը և քաղաքացիական գործի հարուցումը քաղաքացիական դատավարության առաջին և ինքնուրույն փուլն է, որից հետո միայն սկսվում է գործի շարժը և հնարավոր է դառնում դատավարական հետագա բոլոր գործողությունների կատարումը: Դատարանը քաղաքացիական գործի քննությանը և վեճի լուծմանը ձեռնամուխ է լինում իրենց իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը պաշտպանելու համար դատարան դիմող անձանց դիմումի հիման վրա (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 3-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներ): Հայցային վարույթի գործերը հարուցվում են դատարան հայցադիմում ներկայացնելու միջոցով, որն իրավունքի պաշտպանության վարույթի հարուցման դատավարական միջոց է, թեև հայց ներկայացնելը գործի հարուցման նախապայման է, այնուհանդերձ ինքնին բավարար չէ քաղաքացիական գործ հարուցելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը համապատասխանի օրենքով սահմանված դատավարական պա-

հանձներին: Դատավորը հայցադիմումը վարույթ ընդունելու որոշում կարող է կայացնել միայն այն դեպքում, եթե հայցադիմում ընդունելիս ստուգում և պարզում է, որ հայցվորը հայց հարուցելու իրավունք ունի, այսինքն՝ երբ առկա են հայց հարուցելու իրավունքի նախադրյալները, և հայցվորը պահպանել է այն հարուցելու (դատարան դիմելու) օրենքով սահմանված կարգը, այլ կերպ ասած՝ պահպանվել են հայցադիմումի գրավոր ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հակառակ դեպքում՝ այդ պահանջների չպահպանումը հիմք է հայցադիմումը վերադարձնելու համար, և հայցվորի մոտ ծագում է անհրաժեշտություն վերացնելու համապատասխան հայցադիմումի թերությունները (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդված):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա են հայցադիմումի ձևին և բովանդակությանը առաջադրվող պահանջների ձևական խախտումներ, ինչպես նաև պրակտիկ խոչընդոտներ, որոնք հնարավոր է շտկել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, ապա դատավորը պետք է ձեռնամուխ լինի հայցադիմումը վարույթ ընդունելու, իսկ դրանում առկա անհստակությունները շտկելու գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, ինչը բխում է «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքներից (*տե՛ս «Եվրոպա» ՄՊԸ-ն ընդդեմ «Մսիլուսկ կամար» ՄՊԸ-ի թիվ ԵԱԲԳ/1020/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.09.2014 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հայցադիմումին ներկայացվող՝ օրենքով սահմանված դատավարական պահանջներից է գործին մասնակցող անձանց, այդ թվում նաև՝ պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի հասցեն նշելը: Նման պահանջ սահմանելն ինքնանպատակ չէ և նպատակաուղղված է այն հարցի պարզաբանմանը, թե ներկայացված հայցադիմումն ընդդատյա է արդյոք այն դատարանին, որին ներկայացվել է: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի հասցեն նշելը չի կարող նույնացվել այդ հասցեի վերաբերյալ համապատասխան ապացույց ներկայացնելու պարտականության հետ: Նման մոտեցման դեպքում անձի վրա դրվում է պարտականություն յուրաքանչյուր դեպքում պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրը նշելիս հայցադիմումին կից ներկայացնել նաև պատասխանողի կողմից որևէ հասցեում բնակվելու կամ գտնվելու վերաբերյալ հիմնավորող ապացույցներ: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ և 88-րդ հոդվածների տառացի մեկնաբանությունից նման հետևություն չի կարող բխեցվել: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ հայցադիմումում նշվում են գործին մասնակցող անձանց, այդ թվում նաև՝ պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի հասցեները, իսկ նույն օրենսգրքի 88-րդ հոդվածը, նախատեսելով հայցադիմումին կցվող փաստաթղթերի ցանկը, հայցվորին չի պարտավորեցնում հայցադիմումին կից ներկայացնել նաև պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ ապացույցներ: Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից չի բխում ապացույցները բացառապես հայցադիմումին կից ներկայացնելը՝ նկատի ունենալով նաև գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առկայությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ հայցադիմումի բովանդակությանը և ընդդատության ինստիտուտին առնչվող հոդվածների փոխկապակցված մեկնաբանությունից բխում է, որ օրենսդրորեն հայցվորի վրա դրված չէ պարտականություն հայցադիմում ներկայացնելիս ներկայացնելու նաև թույլատրելի ապացույցներ պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ: Հետևաբար գործող օրենսդրությամբ հայցվորի վրա դրված է միայն հայցադիմումում պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրը նշելու պարտականություն: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունելիության փուլում ընդդատության հարցը պարզելիս գործում է պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ հայցադիմումում նշված հասցեի հավաստիության կանխավարկածը, որը կարող է ստուգվել գործի քննության հետա-

գա փուլերում՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ օրենսդիրը դատարանին վերապահել է ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործն այլ դատարանի քննությանը հանձնելու լիազորություն:

Սույն գործով Դատարանը, հայցադիմումը վերադարձնելով, պատճառաբանել է, որ «տվյալ դեպքում որպես պատասխանողի գտնվելու վայրի հասցե՝ հայցադիմումում նշված է Երևան քաղաքի Նոր Նորքի 8-րդ գանգվածի 36-րդ շենքի թիվ 12 բնակարանը, սակայն հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերով չի հիմնավորվում, որ վերը նշված հասցեն պատասխանողի գտնվելու վայրի հասցեն է»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության վերաքննիչ բողոքը և Դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ, արձանագրել է, որ «Ընկերությունը, որպես պատասխանող Կազմակերպության գտնվելու վայրի հասցե, հայցադիմումով նշել է Երևանի Նոր Նորք 8-րդ գանգված, 36 շենք, բնակարան թիվ 12 հասցեն: Միաժամանակ հայցադիմումին կից դատարան է ներկայացրել 03.04.2014 թվականի թիվ 227 փոխադարձ հաշվարկների ակտի պատճենը, համաձայն որի՝ Ընկերությունը՝ որպես մատակարար՝ մի կողմից, և Կազմակերպությունը՝ որպես պարտապան՝ մյուս կողմից, կազմել են փոխադարձ հաշվարկների ակտը: Նշված ակտի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ակտը մի կողմից ստորագրվել է Ընկերության ներկայացուցչի կողմից, մյուս կողմից՝ գնորդ Հայկ Օհանյանի, ում հասցեն ևս նշվել է Երևանի Նոր Նորք 8-րդ գանգված, 36 շենք, բնակարան 12 հասցեն»: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտել է, որ «թեև հայցվոր Ընկերությունը, որպես պատասխանող Կազմակերպության հասցե, նշել է Երևանի Նոր Նորքի 8-րդ գանգված, 36-րդ շենք, թիվ 12 բնակարանը, սակայն հայցադիմումին կից չի ներկայացրել որևէ թույլատրելի ապացույց (Կազմակերպության կանոնադրություն, իրավաբանական անձանց պետական ռեգիստրից կատարված հարցում), որով կհիմնավորվեր, որ նշված հասցեն իրականում պատասխանող Կազմակերպության գտնվելու վայրի հասցեն է»:

Վճռաբեկ դատարանը, վերը շարադրված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Ընկերությունը, ներկայացնելով 285.500 ՀՀ դրամ և վճարված պետական տուրքի գումարը բռնագանձելու պահանջ, հայցադիմումում նշել է պատասխանող Կազմակերպության գտնվելու վայրի հասցեն, այն է՝ քաղաք Երևան, Նոր Նորք 8-րդ գանգված, 36-րդ շենք, բնակարան թիվ 12, այսինքն՝ հայցվոր կողմը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի իմաստով պահպանել է պատասխանողի գտնվելու վայրը նշելու օրենսդրորեն սահմանված պահանջը: Մինչդեռ Դատարանը, հայցադիմումը վերադարձնելով, իսկ Վերաքննիչ դատարանը, Դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ, հայցվոր կողմի վրա դրել են օրենքով չսահմանված պարտականություն՝ ներկայացնել պատասխանողի գտնվելու վայրի հասցեն հիմնավորող թույլատրելի ապացույցներ, ինչը Վճռաբեկ դատարանը համարում է անհիմն:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ հայցի հարուցման փուլում հայցվորը կրում է միայն պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի հասցեն հայցադիմումում նշելու պարտականություն, հետևաբար տվյալ հարցի կապակցությամբ հայցվորի վրա որևէ այլ պարտականություն դնելը չի բխում գործող օրենսդրության պահանջներից և անհարկի խոչընդոտում է վերջինիս դատարան դիմելու իրավունքը:

Ինչ վերաբերում է գործի հարուցման փուլում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարության այս փուլում վկայակոչված հոդվածը ենթակա է կիրառման միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի համատեքստում: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածը սահմանում է հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, որը, սակայն, չի ներառում պա-

տասխանողի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ որևէ փաստաթուղթ հայցադիմումին կցելու պահանջ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, հայցադիմումը վերադարձնելով, իսկ Վերաքննիչ դատարանը, Դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ, թույլ են տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ, 92-րդ հոդվածների խախտումներ՝ սահմանափակելով Ընկերության՝ դատարան դիմելու և դատարանի մատչելիության իրավունքները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241<sup>1</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.12.2015 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.08.2015 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/1324/02/12  
2016 թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/1324/02/12

Նախագահող դատավոր՝

Ա. Սմբատյան

Լ. Գրիգորյան

Դատավորներ՝

Ա. Հունանյան

### ՈՐՈՇՈՒՄ

### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի հունվարի 20-ին,

քննարկելով ըստ Մարույա Խոջումյանի դիմումի՝ Վերգուշ Կիրակոսյանին անգործու-  
նակ ճանաչելու մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատա-  
րանի 01.06.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ  
Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցիչ Աննա Հովսեփյանի վճռաբեկ բողոքը,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Մարույա Խոջումյանը պահանջել է Վերգուշ Կիրակոսյանին ճա-  
նաչել անգործունակ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության  
դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 03.04.2015 թվականի  
վճռով դիմումը բավարարվել է՝ Վերգուշ Կիրակոսյանը ճանաչվել է անգործունակ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
18.05.2015 թվականի որոշմամբ Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցիչ վերաքննիչ բողոքը  
վերադարձվել է և սահմանվել է երկշաբաթյա ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված  
խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար:

Վերաքննիչ դատարանի 01.06.2015 թվականի որոշմամբ Վերգուշ Կիրակոսյանի ներ-  
կայացուցիչ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարույա Խոջումյանի ներկայացուցիչը:

### **2.1. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ և 213-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը վերադարձրել է Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը՝ առանց մերժելու պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին վերջինիս միջնորդությունը:

Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանի 07.04.2015 թվականի թիվ ՍԴՈ-1197 որոշմամբ արձանագրվել է, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանությունը պետք է ներառի նաև դատական ակտի բողոքարկման իրավունքը: Մինչդեռ անձի՝ իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարումից օրենքով ազատված չլինելու պայմաններում վերջինս գրկվում է դատական ակտի բողոքարկման հնարավորությունից: Փաստորեն, անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործով դիմողը և այդ գործով անգործունակ ճանաչված անձը դրվում են ակնհայտ անհավասար պայմանների մեջ, և նման իրավակիրառ պրակտիկայի արդյունքում հոգեկան հիվանդությամբ տառապելու հիմքով դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձն ըստ էության գրկվում է արդարադատության մատչելիության իր իրավունքից: Հետևաբար, անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերով կայացված դատական ակտերի բողոքարկման համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականությունից պետք է ազատվեն ոչ միայն դիմողները, այլ նաև անգործունակ ճանաչված անձինք, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 01.06.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

### **2.2. Վճռաբեկ բողոքի պարասիանի փաստարկները**

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերադարձնելով Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը, ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթներով և թույլ չի տվել Վերգուշ Կիրակոսյանի՝ արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների որևէ խախտում: Հետևաբար սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

### **3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գործն ըստ էության չլուծող և առանձին դատական ակտի ձևով կայացվող դատական ակտի եզրափակիչ մասի բովանդակության, ինչպես նաև հոգեկան խանգարումներ ունեցող անձի՝ իր գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտի բողոքարկման իրավունքի ֆինանսական բնույթի սահմանափակման՝ պետական տուրքի վճարման պարտականության իրավաչափության վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու

համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. *իրավաչանի է արդյոք պերական րուրքի գծով արդունություն կիրառելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը մերժելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը՝ այդ որոշման եզրափակիչ մասում նշված միջնորդության մերժման մասին որևէ եզրահանգման բացակայության պայմաններում,*

2. *արդյոք ֆիզիկական անձինք պերք է կրեն իրենց գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտերի բողոքարկման համար սահմանված պերական րուրքի վճարման պարտականություն:*

1. 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու (...) մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը, նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, գործը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ակտը, որով ըստ էության չի լուծվում գործը, կայացվում է որոշման ձևով, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվի եզրահանգումը քննարկվող հարցով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող և առանձին դատական ակտի ձևով կայացվող դատական ակտի եզրափակիչ մասում ձևակերպվում է դատարանի

վերջնական եզրահանգումն այն հարցի շուրջ, որի քննարկման արդյունքում կայացվում է այդ որոշումը: Ընդ որում, միջանկյալ դատական ակտի եզրափակիչ մասում դատարանի կողմից կատարվող եզրահանգումը պետք է ունենա հստակ, միանշանակ, անպայմանական, հրամայական, կատեգորիկ բնույթ և բացառի որոշումը մեկնաբանելու անհրաժեշտությունը: Այսինքն՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտի եզրափակիչ մասը պետք է լրիվ և սպառիչ կերպով պատասխանի դատարանի առջև բարձրացած այն բոլոր հարցերին, որոնց լուծմանն նպատակով կայացվում է այդ դատական ակտը:

Դատավարության մասնակիցների կողմից ներկայացված այս կամ այն միջնորդության քննարկման արդյունքում կայացվող որոշման եզրափակիչ մասում, մասնավորապես, դատարանը պարտավոր է նախևառաջ անդրադառնալ այդ միջնորդությունը մերժելու կամ բավարարելու հարցին, այնուհետև՝ այդ միջնորդությունը մերժելու կամ բավարարելու դատավարական հետևանքներին: Այլ կերպ ասած՝ դատարանը պարտավոր է խնդրո առարկա միջանկյալ դատական ակտերի եզրափակիչ մասում արտացոլել դատավարության մասնակիցների կողմից ներկայացված միջնորդությունը մերժելու կամ բավարարելու մասին իր եզրահանգումը, որը պետք է ունենա հստակ, միանշանակ և հրամայական բնույթ: Համապատասխան միջնորդությունը մերժելու կամ բավարարելու մասին դատարանի եզրահանգումը որոշման եզրափակիչ մասում հստակ, միանշանակ և հրամայական կերպով ձևակերպելուց հետո միայն դատարանը կարող է անցնել իր որոշման եզրափակիչ մասում այդ եզրահանգման դատավարական հետևանքի ամրագրմանը, որը ևս պետք է համապատասխանի վերոգրյալ չափանիշներին:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ շահագրգիռ անձը, իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս դատավարական օրենքով նախատեսված որևէ միջնորդություն հարուցելով, ակնկալում է իր կողմից բարձրացված հարցի որոշակի լուծում՝ դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման ձևով: Այսինքն՝ դատավարության մասնակցի միջնորդություն հարուցելու իրավունքին համապատասխանում է տվյալ հարցով որոշում կայացնելու դատարանի պարտականությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանի որոշմանը ներկայացվող պարտադիր պահանջ է քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրահանգումը, հետևաբար, այդպիսի եզրահանգման բացակայության պայմաններում բացակայում է նաև դատարանի որոշումը, ինչի արդյունքում խախտվում է անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարված չլինելու հանգամանքը և պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդության բացակայությունը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից պետական տուրքը վճարված չլինելու դեպքում պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդության մերժումը հանդիսանում են վերաքննիչ բողոքի վերադարձման հիմք: Հետևաբար այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքին կցված է կամ բողոքում ներառված է պետական տուրքի վճարման արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդություն, վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ այդ միջնորդությանը և դրա քննարկման արդյունքում որոշում կայացնելուց հետո միայն որոշել վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու հարցը (*տես «Տեքվիեն» ՄԳԸ-ն ընդդեմ «Մեգարոն» ՍԳԸ-ի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը*):

Սույն գործով Դատարանի 03.04.2015 թվականի վճռով Վերգուշ Կիրակոսյանը ճանաչվել է անգործունակ (**հատոր 2-րդ, գ.թ. 142-147**): Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցիչը Դատարանի նշված վճռի դեմ բերել է վերաքննիչ բողոք (**հատոր 3-րդ, գ.թ. 4-8**): Վերաքննիչ դատարանի 18.05.2015 թվականի որոշմամբ նշված վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձը չի վճարել վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումարը և չի ներկայացրել պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին միջնորդություն (**հատոր 3-րդ, գ.թ. 17**): Վերգուշ



Կիրակոսյանի ներկայացուցիչը, կրկին բերելով վերաքննիչ բողոք, դրան կից ներկայացրել է նաև վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն (**հատոր 3–րդ, գ.թ. 30–36**): Վերաքննիչ դատարանը 01.06.2015 թվականի որոշմամբ վերադարձրել է Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը՝ այդ որոշման պատճառաբանական մասում նշելով, որ «(...) [բողոք բերած անձի] կողմից չի ներկայացվել իր վարահորդի գույքային դրության մասին որևէ ապացույց, (...) որպիսի պայմաններում (...) 18.05.2015 թվականի որոշմամբ մատչանշված թերությունը բողոք ներկայացրած անձի կողմից ամբողջությամբ չի վերացվել, ուստի վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման (...)»:

Միևնույն ժամանակահատվածում 01.06.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման եզրափակիչ մասում բացակայում է վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի միջնորդությունը մերժելու կամ բավարարելու մասին որևէ նշում: Այլ կերպ ասած՝ Վերաքննիչ դատարանի նշված որոշման եզրափակիչ մասը չի պարունակում որևէ հստակ եզրահանգում քննարկվող միջնորդությունը մերժելու կամ բավարարելու (վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ չհետաձգելու) մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

1) Վերաքննիչ դատարանը 01.06.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման պատճառաբանական մասում անդրադարձել է վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի միջնորդությանը,

2) Վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի միջնորդության անհիմն լինելը վերաքննիչ դատարանը դիտել է հիմք՝ վերջինիս կողմից բերված վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար,

3) Վերաքննիչ դատարանը 01.06.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման եզրափակիչ մասում Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի միջնորդությունը մերժելու կամ բավարարելու և դրա արդյունքում պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ չհետաձգելու վերաբերյալ որևէ եզրահանգում չի կատարել:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշման եզրափակիչ մասի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն չի համապատասխանում գործն ըստ էության չլուծող և առանձին որոշման ձևով կայացվող դատական ակտերի եզրափակիչ մասին ներկայացվող պահանջներին: Այսպես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարված չլինելու պայմաններում պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության մերժումը վերաքննիչ բողոքի վերադարձման հիմք է. այդ միջնորդությունը մերժելու դատավարական հետևանքը վերաքննիչ բողոքը վերադարձնելն է: Հետևաբար, բողոքարկվող որոշման եզրափակիչ մասում Վերաքննիչ դատարանը պարտավոր էր նախևառաջ արտացոլել պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի միջնորդությունը մերժելու կամ բավարարելու մասին իր եզրահանգումը, որը պետք է ունենար հստակ, միանշանակ և հրամայական բնույթ: Դրանից հետո միայն Վերաքննիչ դատարանը կարող էր իր որոշման եզրափակիչ մասում ամրագրել այդ եզրահանգման դատավարական հետևանքի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին իր եզրահանգումը:

2. 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14.1–րդ հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված (...) հաշմանդամությունից (...) կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ դեկլավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը կարող է հարուցվել նրա ընտանիքի անդամների, խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դիմողն ազատվում է քաղաքացուն անգործունակ (...) ճանաչելու վերաբերյալ գործի քննության հետ կապված դատական ծախսերից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «Ժե» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են դիմողները՝ քաղաքացուն անգործունակ (...) ճանաչելու վերաբերյալ դիմումներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի սոցիալական խմբի անդամների պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում այդ անձանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունն ամրագրվում է որպես վերջիններիս իրավունքների ու ազատությունների ապահովման կարևորագույն երաշխիք:

Մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից 17.12.1991 թվականի թիվ 46/119 բանաձևով հաստատված հոգեկան հիվանդությամբ տառապողների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքներն անթույլատրելի են համարում հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց նկատմամբ որևէ խտրական մոտեցում, այսինքն՝ ցանկացած տարբերակումների, բացառությունների կամ նախապատվություն տալու դրսևորումներ, որոնց արդյունքում հոգեկան հիվանդությամբ տառապողների համար անհնարին կդառնան կամ կդժվարանա մարդու՝ միջազգայնորեն ճանաչված իրավունքներից հավասար օգտվելը: Վկայակոչված սկզբունքների համաձայն՝ անձը, ում գործունակությունը հանդիսանում է քննության առարկա, իրավունք ունի իրեն անգործունակ ճանաչելու մասին վճիռը բողոքարկել վերադաս դատական ատյան՝ այլ շահագրգիռ անձանց հետ հավասար պայմաններում:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 23.02.1999 թվականին ընդունված «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանությանն առնչվող սկզբունքների մասին» թիվ R(99)4 հանձնարարականով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին առաջարկվում է անգործունակ չափահաս անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ համապատասխան օրենսդրական կարգավորումներ ամրագրելիս առաջնորդվել այդ հանձնարարականում ամրագրված սկզբունքներով: Այդ սկզբունքների շարքում ներառված է նաև անձի՝ անձամբ լսվելու իրավունքի պահպանման սկզբունքը ցանկացած դատաքննության ընթացքում, որը կարող է առնչվել այդ անձի գործունակությանը, ինչպես նաև անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ ակտերի պարբերաբար վերանայման և պատշաճ բողոքարկման հնարավորության ամրագրումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) քննարկվող հարցի կապակցությամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անգործունակ ճանաչված անձին դատավարական իրավունքներից զրկելը կարող է արդարացված լինել այդ անձի պաշտպանության, այլ անձանց շահերի պաշտպանության և արդարադատության պատշաճ իրականացման անհրաժեշտությամբ: Սակայն, մյուս կողմից, անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ որոշումը դատարանի կողմից վերանայելու պահանջի իրավունքը հանդիսանում է անձի կարևորագույն իրավունքներից մեկը, քանի որ նման գործընթացը կարող է ուղղակիորեն ազդել բոլոր իրավունքների և ազատությունների իրականաց-

ման վրա, որոնք սահմանափակվել էին անձին անգործունակ ճանաչելու արդյունքում: Նման հնարավորության բացակայությունը չի կարող արդարացվել իրավաչափ նպատակով, որը կարող է դրվել անգործունակ ճանաչված անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմքում (*տե՛ս Նարայյա Միխայլենկոն ընդդեմ Ոսկրսինայի գործով ՄԻԵԴ-ի 30.05.2013 թվականի վճիռը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերի քննության շրջանակներում այդ ֆիզիկական անձի դատավարական կարգավիճակի առանձնահատկություններին, իր նախկին որոշումներից մեկում նշել է, որ անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի ուժով հավասարապես վերաբերում է նաև հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի սոցիալական խմբի անդամների: Հաշվի առնելով այն իրավական հետևանքները, որոնք քաղաքացու համար ծագում են անգործունակ ճանաչվելու դեպքում, այն է՝ անձն անորոշ ժամկետով զրկվում է ինքնուրույնաբար, իր գործողություններով իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստանձնելու և դրանք կատարելու հնարավորությունից, ինչպես նաև սահմանափակվում են անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիության իրավունքը՝ օրենսդիր անձին անգործունակ ճանաչելը թույլատրում է բացառապես դատական կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է քաղաքացուն ծանուցել անգործունակ ճանաչելու վերաբերյալ իր կողմից կայացված վճիռի մասին՝ այդ անձին հնարավորություն տալով օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու տվյալ վճիռը (*տե՛ս ըստ Շենգավիթ վարչական շրջանի ինստանկալության և հոգաբարձության մարմնի դիմումի՝ Վլադիմիր Օհանովին անգործունակ ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵՇԿ/0938/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը 07.04.2015 թվականի թիվ ՄԴՈ-1197 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանությունը պետք է ներառի, մասնավորապես, հետևյալ իրավունքները. դատարանում լավելու իրավունքը, դատական քննությանը լիարժեք մասնակցության իրավունքը և դատական ակտի բողոքարկման իրավունքը: Այն անձանց համար, ում գործունակությունը քննվում է դատարանում, պետք է ապահովվեն իրավահավասարության, դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, արդար դատաքննության և դատական ակտերը բողոքարկելու իրավունքները: Նշված հիմնարար իրավունքների ուժով ցանկացած անձ, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է օժտված լինի համապատասխան դատավարական կարգավիճակով, կրի դատավարական պարտականություններ, ինչպես նաև օգտվի դատավարության մասնակցի կարգավիճակից բխող դատավարական իրավունքներից, ներառյալ՝ դատական ակտերը բողոքարկելու իրավունքը:

Վերոգրյալ միջազգային-իրավական փաստաթղթերի և իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալ եզրակացության. Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանան այն ուղղությամբ, որ ֆիզիկական անձն իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական գործի շրջանակներում ունենա համապատասխան դատավարական կարգավիճակ, որը գործնականում թույլ կտա վերջինիս, *inter alia*, անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով բողոքարկելու իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը: Այլ կերպ ասած՝ այն ֆիզիկական անձը, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է ունենա դատավարության մասնակցի կարգավիճակից բխող այնպիսի դատավարական իրավունքներ, որոնք կընձեռեն վերջինիս այդ գործի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտերը բողոքարկելու իրական հնարավորություն:

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանը 28.11.2007 թվականի

թիվ ՄԴՈ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից:

ՀՀ սահմանադրական դատարանը 25.11.2008 թվականի թիվ ՄԴՈ-780 որոշմամբ հանգել է այն եզրակացության, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտի բողոքարկման իրավունքն է:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի թիվ ՄԴՈ-1037 որոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է, այլև այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես՝ 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մատվ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին, չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Վերոհիշյալ իրավական նորմերի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*տե՛ս «Ֆասթ Սիլայ» ՄԳԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնթո՛ր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից հստակ ձևավորված նախադեպային իրավունքը Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատական ատյաններ, այնուամենայնիվ, եթե դրանք ստեղծվել են, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում նաև՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից (*տե՛ս օրինակ, Միսլկովսկան ընդդեմ Լեհաստանի գործով ՄԻԵԴ-ի 22.03.2007 թվականի վճիռը, 103-րդ կետ*):

«Պայքար և Հաղթանակ» ՄԳԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով 20.12.2007 թվականի վճռում ՄԻԵԴ-ը, կրկնելով վերոնշյալ իրավական դիրքորոշումը, կրկին փաստել է, որ ներպետական օրենսդրությամբ բողոքարկման ընթացակարգերի առկայության պայմաններում Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել, որ իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձինք վերաքննիչ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից, որոնք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում: Ըստ ՄԻԵԴ-ի՝ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այնուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի

մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն: Ավելին՝ այն սահմանափակումները, որոնք գուտ ֆինանսական բնույթ ունեն, պետք է մանրակրկիտ քննության առնվեն՝ ելնելով արդարադատության շահերից (տե՛ս «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ի 20.12.2007 թվականի վճիռը, 44-րդ և 45-րդ կետեր):

25.05.2010 թվականի թիվ ՄԴՈ-890 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ օրենսդիրը, կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները, կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

ՀՀ վճարելի դատարանի իր նախկին որոշումներից մեկում նշել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառնի ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից (տե՛ս Շամամ Կարապետյանի ընդդեմ Արայիկ Միրզոյանի թիվ ԱՐԴ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 22.01.2014 թվականի որոշումը):

Վճարելի դատարանն արձանագրում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածն ամրագրում է դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու տեսքով արտոնություն կիրառելու հիմքերը՝ սահմանելով դատարան դիմելու համար գանձվող պետական տուրքի վճարումից ազատելու դեպքերի բավական լայն շրջանակ: Նշված դեպքերից մեկն այն է, որ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատարան դիմում ներկայացնող անձինք օրենքի ուժով ազատված են այդ դիմումների համար պետական տուրք վճարելու պարտականությունից: Բացի այդ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարելի բողոքների համար: Ընդ որում, նմանատիպ իրավակարգավորում է նախատեսում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որի 171-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դիմողն ազատվում է քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի քննության հետ կապված դատական ծախսերից:

Օրենսդրական նման իրավակարգավորումներից բխում է, որ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտները, այսինքն՝ այդ ֆիզիկական անձի ընտանիքի անդամները, խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ հոգեբուժական հաստատության տնօրինությունը, օրենքի ուժով ազատված են ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի քննության հետ կապված դատական ծախսերից, այդ թվում նաև՝ պետական տուրքի վճարման պարտականությունից: Մինչդեռ օրենսդիրը ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի քննության առնչությամբ դատական ծախսերից այդ ֆիզիկական անձին ազատելու հետ կապված որևէ իրավակարգավորում չի սահմանել: Փաստորեն, ի տարբերություն ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների, ֆիզիկական անձն ազատված չէ իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի քննության հետ կապված դատական ծախսերից, մասնավորապես՝ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրք վճարելու պարտականությունից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի նման իրավակարգավորման արդյունքում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի դեպքում այդ անձը չի ազատվում պետական տուրքի վճարումից: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ քննարկվող խնդրի ամբողջական լուծման համար պետք է հիմք ընդունվի այն ելակետային դրույթը, որ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտերի դեմ այդ անձի կողմից բողոք բերելու հնարավորության առկայությունը և նրա խախտված իրավունքները վերականգնելը համարվում են սահմանադրական անվերապահ պահանջ՝ մարդու հիմնարար իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող խաթարել այդ իրավունքի բուն էությունը կամ օրենքի բացի արդյունքում արգելափակել այն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արդարացված չի համարում այն իրավիճակը, երբ ֆիզիկական անձի անգործունակության հարցի քննության արդյունքում կայացված դատական ակտը բողոքարկելիս անգործունակ ճանաչվող անձի համար չի նախատեսվում պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն այն դեպքում, երբ նման դիմում ներկայացրած անձը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ժե» կետի և 2-րդ մասի համաձայն, ազատված է պետական տուրքի վճարումից: Առկա իրավակարգավորման պայմաններում լիարժեք կերպով չի երաշխավորվում հոգեկան խանգարումներ ունեցող անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքը՝ խոչընդոտելով վերջինիս՝ իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը: Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն. ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է դատական ակտի բողոքարկման սահմանադրական իրավունքի էությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան խանգարումներ ունեցող անձինք, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում օժտված լինելով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքներով, իրենց գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտի բողոքարկման համար սահմանված պետական տուրքից ազատված չլինելու պայմաններում զրկվում են իրենց գործունակության վերաբերյալ վերջնական դատական ակտերը բողոքարկելու, այսինքն՝ վերաքննիչ և վճռաբեկ առյաններում վերջիններիս դատարանի մատչելիության իրավունքը պատշաճ կերպով իրացնելու հնարավորությունից: Այլ կերպ ասած՝ ֆիզիկական անձի՝ իր գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտի բողոքարկման համար սահմանված պետական տուրքից ազատված չլինելու արդյունքում վերջինս զրկվում է իր դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղադ-

րատարր հանդիսացող՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքի երաշխավորված իրացման հնարավորությունից:

Բացի այդ, ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերի քննության առնչությամբ դատական ծախսերի գծով արտոնություն սահմանելու հարցում օրենսդիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել, մի կողմից, այդ գործերը դատարանում հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների և, մյուս կողմից, այն ֆիզիկական անձանց միջև, ում անգործունակ ճանաչելու հարցը քննության է առնվում այդ գործերով:

ՀՀ Սահմանադրական դատարանը, 04.05.2010 թվականի թիվ ՄԴՈ-881 որոշմամբ անդրադառնալով խտրականության արգելքի համընդհանուր սկզբունքի բովանդակությանը, նշել է, որ այդ սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից: Մինչդեռ հաշվի առնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ֆիզիկական անձի՝ իր գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտի բողոքարկման համար սահմանված պետական տուրքից ազատված չլինելը չունի որևէ օբյեկտիվ հիմք և չի կարող հետապնդել որևէ իրավաչափ նպատակ: Հետևաբար, պետական տուրքի վճարման գծով արտոնություն սահմանելու հարցում ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի հարուցման իրավասություն ունեցող սուբյեկտների և այդ ֆիզիկական անձի միջև ցուցաբերվող տարբերակված մոտեցումը հանդիսանում է խտրականության արգելքի սկզբունքի խախտում, ինչը չի կարող համահունչ լինել իրավական պետությանը և ժողովրդավարական հասարակությանը ներկայացվող պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ վերջնական դատական ակտերն այդ անձի կամ վերջինիս ներկայացուցչի միջոցով բողոքարկելու իրավունքի պատշաճ իրացման նպատակով այդ ֆիզիկական անձը պետք է ազատված լինի վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականությունից, ինչը հնարավորություն կտա գործնականում ապահովել նրա արդար դատաքննության և դատական պաշտպանության հիմնարար իրավունքները, ինչպես նաև երաշխավորել հոգեկան խանգարումներով տառապող անձանց նկատմամբ խտրականության արգելքի սկզբունքի կյանքի կոչումը քաղաքացիական դատավարության շրջանակներում:

Վերը շարադրված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով սույն քաղաքացիական գործին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերգուշ Կիրակոսյանը պետք է ազատված լինի իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ Դատարանի 03.04.2015 թվականի վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականությունից, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի ապահովել անգործունակ ճանաչվող անձի՝ արդար դատաքննության և դատական պաշտպանության հիմնարար իրավունքների բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքը, ինչպես նաև երաշխավորել վերջինիս նկատմամբ խտրականության արգելքի սկզբունքի կյանքի կոչումը սույն քաղաքացիական գործի շրջանակներում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդության, ինչպես նաև այդ միջնորդությունը հիմնավորելու նպատակով Վերգուշ Կիրակոսյանի գույքային դրության վերաբերյալ ապացույցների առկայությունը կամ բացակայությունը որևէ նշանակություն չունեն Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման համար, քանի որ Վերգուշ Կիրակոսյանը սույն գործով չի կարող կրել վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրք վճարելու պարտականություն: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի 01.06.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մա-

սին» որոշումը ենթակա է վերացման, քանի որ պետական տուրքը վճարված չլինելու և պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդության անհիմն լինելու հիմքով Վերգուշ Կիրակոսյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը վարույթ չընդունելը խախտում է անգործունակ ճանաչվող անձի դատական պաշտպանության ու արդար դատաքննության հիմնարար իրավունքները:

*Նշված պատճառաբանություններով հերքվում է նաև վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկեր:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու և Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241<sup>1</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.06.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/3384/02/15**

**2016 թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/3384/02/15

Նախագահող դատավոր՝

Գ. Կարախանյան

### ՈՐՈՇՈՒՄ

### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2016 թվականի օգոստոսի 03-ին,  
քննարկելով Ասատուր Հարությունյանի ներկայացուցիչ Սամվել Մելիքյանի վճռաբեկ  
բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.01.2016 թվականի որոշման դեմ,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### **1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ասատուր Հարությունյանը պահանջել է հաստատել իր և Ընկերության միջև 2014 թվականի սեպտեմբեր ամսից աշխատանքային հարաբերությունների ծագման փաստը և պարտավորեցնել Ընկերությանը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել փոխհատուցում միջին աշխատավարձի չափով՝ մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Կատվալյան) (այսուհետ՝ Դատարան) 09.11.2015 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.01.2016 թվականի որոշմամբ Ասատուր Հարությունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.11.2015 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ասատուր Հարությունյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

#### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ և 102-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառվեին, իսկադրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հերևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հատուկ վարույթի կարգով քննվող գործերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանցում բացակայում է իրավունքի մասին վեճը, մինչդեռ սույն գործով առկա է եղել վեճ: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ասատուր Հարությունյանը ներկայացրել է ոչ թե իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման դիմում, այլ՝ հայցադիմում, որն ուղղված է եղել կոնկրետ պատասխանողի դեմ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված կարգով Ընկերությունում որոշակի ժամանակահատվածում աշխատելու հանգամանքը ճանաչելու և այդ ժամանակահատվածի հարկադիր պարապուրդի համար վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 11.01.2016 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

**3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հայցային վարույթի և հատուկ վարույթի կարգով գործերի քննության առանձնահատկությունների վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարուկ և հայցային վարույթների առանձնահատկությունների լույսի ներքո հարկ է համարում անդրադառնալ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու վերաբերյալ գործերով աշխատողի և գործատուի միջև իրավունքի մասին վեճի առկայության խնդրին:*

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման բովանդակությամբ իրավադրոյթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: **Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում:** Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդիրն՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՌ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմատետի՞, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանել դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպան-

վել նույն օրենսգրքի 87-րդ հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանը, գործերի տարածքային ընդդատությանը համապատասխան, հաստատում է այն փաստերը, որոնցից կախված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են՝

1) անձանց ազգակցական հարաբերություններին.

2) անձի՝ ուրիշի խնամքի տակ գտնվելուն.

3) ծննդյան, որդեգրման (դատերագրման), ամուսնության, ապահարզանի և մահվան գրանցմանը.

4) անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահվանը, եթե քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները մերժում են մահվան գրանցումը.

5) ժառանգությունն ընդունելուն և ժառանգության բացման վայրին.

6) դժբախտ պատահարին.

7) իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությանը, բացառությամբ անձնագրի և զինվորական փաստաթղթերի.

8) սեփականության իրավունքով գույքի տիրապետմանը.

9) անհաղթահարելի ուժի առկայությանը:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը, օրենքով նախատեսված դեպքերում, քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ դիմումում պետք է նշվի, թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը, ինչպես նաև բերվեն դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը հաստատող ապացույցներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի համաձայն՝ դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր քաղաքացիական գործի հարուցման հիմքը հայցի կամ դիմումի առկայությունն է, հետևաբար շահագրգիռ անձը քաղաքացիական դատավարության կարգով իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունն իրականացնում է դատարան կամ հայց, կամ դիմում ներկայացնելով: Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե քաղաքացիական գործի հարուցման հիմքում ընկած է դիմումը, թե հայցադիմումը, օրենսդիրն առանձնացրել է հատուկ և հայցային վարույթները, որոնք միմյանցից էականորեն տարբերվում են և ունեն գործերի քննության իրենց բնորոշ առանձնահատկություններ: Ըստ այդմ էլ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրին: Այսպես, հայցային վարույթը քաղաքացիական դատավարության հիմնական տեսակն է, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, հողային, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ իրավահարաբերություններից ծագող սուբյեկտիվ իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին վերաբերող վեճերի քննությանն ու լուծմանն ուղղված դատարանի գործողությունը, որը կարգավորվում է քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով: Իրավունքի պաշտպանության հայցային վարույթում առկա են՝

1) կողմի՝ խախտված կամ վիճարկվող իրավունքից ծագող և օրենքով սահմանված որոշակի կարգով քննության ենթակա **Նյութաիրավական պահանջ**, այսինքն՝ հայց,

2) **սուբյեկտիվ իրավունքի մասին վեճ**,

3) հակադիր շահերով օժտված երկու կողմեր, որոնք օժտված են նաև իրենց իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանելու որոշակի լիազորություններով:

Մինչդեռ հատուկ վարույթի կարգով դատարանը հաստատում է քաղաքացիների կամ կազմակերպությունների գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, քաղաքացու որոշակի իրավական վիճակը կամ նրան պատկանող իրավունքը: Հատուկ վարույթը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝

1) այստեղ **իրավունքի մասին վեճ չկա**, քանի որ դիմողն այլ անձանց որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացնում,

2) հատուկ վարույթին բնորոշ է ոչ թե վեճի բացակայությունն ընդհանրապես, այլ դատական մարմինների քննությանն օրենքով հանձնված **իրավունքի մասին վեճի բացակայությունը**,

3) հատուկ վարույթում դատարանի լուծմանը ենթակա իրավունքի մասին վեճ չկա, ուստի այստեղ չկան նաև **հայցվոր ու պատասխանող**, այստեղ կան միայն դիմողներ և շահագրգիռ այլ անձինք,

4) **հատուկ վարույթում չկա նաև հայց**:

Այսպիսով, հատուկ վարույթի գործերով բացակայում է իրավունքի մասին վեճը, իսկ շահագրգիռ անձն էլ որևէ մեկի դեմ որևէ պահանջ չի ներկայացնում: Այսինքն՝ հատուկ վարույթի գործերով **բացակայում է դատարանի քննությանը ենթակա (նրա լուծմանը հանձնված) իրավունքի մասին վեճը**:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում **իրավունքի վերաբերյալ վեճի առկայությունն ստուգելիս** դատարանը պարտավոր է պարզել, թե արդյո՞ք գործի փաստերից ելնելով առերևույթ առկա է փոխադարձ կապ քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև, և արդյո՞ք նման փաստի հաստատումը կարող է որևէ կերպ ազդել այլ անձի իրավունքների ծավալի վրա: Ընդ որում, դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վեճի առկայության կամ բացակայության հարցը պետք է պարզի՝ **ելնելով տվյալ գործի փաստերից, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից** (*լրեն քար դիմումի «Ֆիրմա-ՄՄ» ՍՊԸ-ի՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ 3-445(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերը շարադրված վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը քաղաքացիական դատավարության կարգով իրացվում է հայցային և հատուկ վարույթների միջոցով, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ և դրանցով պայմանավորված՝ համապատասխան վարույթի իրականացման հատուկ ընթացակարգ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն որոշմամբ բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անօրինական է համարվում այն աշխատանքը, որն իրականացվում է առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անօրինական աշխատանք կատարելու թույլտվություն տված և (կամ) աշխատանքի հարկադրող գործատուները կամ նրանց ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում Հաշատանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև հատուցում են նման աշխատանք կատարողներին այդ աշխատանքի կատարման ընթացքում ոչ աշխատողի մեղքով պատճառված վնասները: Եթե դատական կարգով հաստատված է, որ աշխատողի և գործատուի միջև գոյություն ունեն (գոյություն են ունեցել) փաստացի աշխատանքային հարաբերություններ, ապա աշխատանքային հարաբերությունները համարվում են ծագած այն օրվանից, երբ աշխատողը փաստացի անցել է աշխատանքի: Աշխատողը աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու նպատակով իրավունք ունի դիմելու դատարան փաստացի աշխատանքային հարաբերությունների գոյության ժամանակահատվածում, ինչպես նաև փաստացի աշխատանքային հարաբերությունները դադարելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Դատարանի օրինական վճռով գործատուի և աշխատողի միջև փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստի հաստատումը չի ազատում գործատուին օրենքով սահմանված պատասխանատվությունից:

Վկայակոչված իրավանքների վերլուծությունից հետևում է, որ աշխատանքային իրավահարաբերություններում ինչպես աշխատողի, այնպես էլ գործատուի իրավունքները և օրինական շահերը ենթակա են պաշտպանության: Այսպես, այն դեպքում, երբ աշխատողը գործատուի հետ գտնվում է փաստացի աշխատանքային հարաբերություններում, սակայն գործատուն հրաժարվում է նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր կամ ընդունել աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ, ապա օրենսդիրն աշխատողին իրավունք է վերապահել դիմելու դատարան ընդդեմ գործատուի՝ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու պահանջով: Ընդ որում, նշված պահանջն աշխատողը կարող է ներկայացնել ինչպես փաստացի աշխատանքային հարաբերությունների գոյության ժամանակահատվածում, այնպես էլ փաստացի աշխատանքային հարաբերությունները դադարելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը դատական կարգով հաստատելու պահանջների դեպքում **աշխատողի և գործատուի միջև ըստ էության ծագում է վեճ իրավունքի մասին**: Այսինքն՝ հաստատվող փաստի և այլ անձի (տվյալ դեպքում՝ գործատուի) իրավունքների և պարտականությունների միջև առաջանում է փոխադարձ կապ, և նման փաստի հաստատումն իր հերթին ազդում է այլ անձի (տվյալ դեպքում՝ գործատուի) իրավունքների և պարտականությունների ծավալի վրա, քանի որ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը դատարանի կողմից հաստատվելուց հետո գործատուի մոտ ծագում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված համապատասխան իրավունքներ և պարտականություններ: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու վերաբերյալ աշխատողի և գործատուի միջև վեճի առկայության դեպքում գործը պետք է հարուցի և քննվի հայցային վարույթի կարգով:

Սույն գործով Ասատուր Հարությունյանը 05.11.2015 թվականին **հայցադիմում է** ներկայացրել Դատարան ընդդեմ Ընկերության՝ պահանջելով հաստատել իր և Ընկերության միջև 2014 թվականի սեպտեմբեր ամսից աշխատանքային հարաբերությունների ծագման փաստը և պարտավորեցնել Ընկերությանը հարկադիր պարսպորդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել փոխհատուցում միջին աշխատավարձի չափով՝ մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը (Ասատուր Հարությունյանի **հայցի առարկան**): Ասատուր Հարությունյանի **հայցի փաստական հիմքում** ընկած են հետևյալ փաստական հանգամանքները՝ 2014 թվականից հայցվորը փաստացի աշխատանքի է անցել պատասխանող Ընկերությունում և ստացել աշխատավարձ: Հայցվորը բազմիցս դիմել է պատասխանող կողմին՝ խնդրելով իրեն տրամադրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագիր կամ աշխատանքի ընդունման

անհատական իրավական ակտ, սակայն մինչ օրս որևէ պատասխան չի ստացել: **Հայցի իրավական հիմքում** ընկած են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37–րդ, 102–րդ հոդվածները (**գ.թ. 2–4**):

Սույն գործով Դատարանը, հայցադիմումը վերադարձնելով, պատճառաբանել է, որ տվյալ դեպքում Ասատուր Հարությունյանը պահանջել է հաստատել ծագած աշխատանքային հարաբերությունների փաստը, մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189–րդ հոդվածի 2–րդ կետով նախատեսված չէ ծագած աշխատանքային հարաբերությունների փաստը հաստատելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը: Ուստի Դատարանն արձանագրել է, որ հայցադիմումում չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92–րդ հոդվածի 1–ին կետի 1–ին ենթակետի, 189–րդ և 192–րդ հոդվածների պահանջները, որպիսի պայմաններում հայցադիմումը ենթակա է վերադարձնան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92–րդ հոդվածի 1–ին կետի 1–ին ենթակետի հիմքով:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը և Դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ փաստացի կատարած աշխատանքի և դրա դիմաց վարձատրություն ստանալու ապացույցի առկայության պայմաններում Ասատուր Հարությունյանը գրկված չէր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան աշխատանքային հարաբերությունների փաստը հաստատելու պահանջով դատարան դիմելու հնարավորությունից: Մինչդեռ Ասատուր Հարությունյանն իրար է միացրել հայցային և հատուկ վարույթները՝ պահանջելով հաստատել աշխատանքային հարաբերությունների փաստը, որի քննության կարգը սահմանվում է հատուկ վարույթի գործերի քննության կարգով:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Ուսումնասիրելով սույն գործով ներկայացված՝ Ասատուր Հարությունյանի հայցադիմումը, մասնավորապես՝ հայցի առարկան, հայցի փաստական և իրավական հիմքերը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կողմերի միջև առկա է իրավունքի մասին վեճ: Այսպես, ներկայացված հայցադիմումի բովանդակությունից և պահանջից հստակ հետևում է, որ Ասատուր Հարությունյանի կողմից Դատարան է ներկայացվել ոչ թե իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման դիմում, այլ հայցադիմում, որն ուղղված է կոնկրետ պատասխանողի՝ Ընկերության դեմ, վերջինիս նկատմամբ առկա է նյութաիրավական պահանջ: Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ հայցվորը հայցում է փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստի հաստատում, որն իր քննությամբ իրավաբանական նշանակություն ունեցող փաստ է, քանի որ աշխատանքային օրենսդրության նորմերը դրա հետ կապում են որոշակի իրավական հետևանքների առաջացման հնարավորություն, այդուհանդերձ, տվյալ փաստի հաստատումը կապված է դատարանի ենթակայությանը վերապահված իրավունքի մասին վեճի լուծման հետ, քանի որ հաստատման ենթակա փաստի և սույն գործով պատասխանող Ընկերության իրավունքների և պարտականությունների միջև առկա է փոխադարձ կապ, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված փաստի հաստատումը կարող է իրականացվել միայն հայցային վարույթի կարգով, որպիսի ընթացակարգը պահպանվել է հայցվորի կողմից:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով նյութաիրավական վեճի առկայության և այդ հիմքով հայցադիմում ներկայացնելու պարագայում գործը պետք է **քննվի և լուծվի հայցային վարույթի կարգով**, որպիսի պայմաններում անհիմն է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, թե Ասատուր Հարությունյանը գրկված չէր աշխատանքային հարաբերությունների փաստը հաստատելու պահանջով հատուկ վարույթի կարգով դատարանի դիմելու հնարավորությունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, վերադարձնելով Ասատուր Հարությունյանի հայցադիմումը, իսկ Վերաքննիչ դատարանը դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, խախտել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ և 189-րդ հոդվածները՝ սահմանափակելով Ասատուր Հարությունյանի դատական պաշտպանության իրավունքը:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241<sup>1</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.01.2016 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 09.11.2015 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ՇԴ/0011/16/14**  
**2016 թ.**

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0011/16/14

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Լ. Գրիգորյան  
Ա. Հունանյան  
Մ. Հարթենյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2016 թվականի փետրվարի 04-ին,  
քննարկելով Մերուժան Դազարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-  
կան դատարանի 08.05.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշ-  
ման դեմ՝ ըստ ՌԴ պաշտպանության նախարարության Պոլևայա Դաշտային փոստ թիվ  
04436 գորամասի (այսուհետ՝ Զորամաս) միջնորդության՝ թիվ 2-22/2014 քաղաքացիական  
գործով Ռուսաստանի Դաշնության 5-րդ կայազորային զինվորական դատարանի 19.03.2014  
թվականի վճիռը ՀՀ տարածքում ճանաչելու և Հայաստանի Հանրապետության տարած-  
քում կատարումը թույլատրելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Զորամասը պահանջել է Հայաստանի Հանրապետություն, փոստ  
թիվ 0043, ք. Երևան, Արարատյան փողոց, 99-րդ շենք հասցեում գտնվող՝ Ռուսաստանի  
Դաշնության 5-րդ կայազորային զինվորական դատարանի կողմից թիվ 2-22/2014 քաղա-  
քացիական գործով 19.03.2014 թվականին կայացված վճիռը ճանաչել ՀՀ տարածքում և կի-  
րառել հարկադիր կատարման միջոցներ:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Մ. Գևորգյան)  
(այսուհետ՝ Դատարան) 16.02.2015 թվականին որոշել է. «Հայաստանի Հանրապետություն,  
0043, ք. Երևան, Արարատյան փողոց, 99 շենք հասցեում գտնվող 5-րդ կայազորային զին-  
վորական դատարանի կողմից թիվ 2-22/2014 քաղաքացիական գործով 19.03.2014 թվակա-  
նին կայացրած վճիռը ճանաչել ՀՀ տարածքում և հարկադիր կատարման միջոցներ կիրա-  
ռել՝ Զ/Մ պ.պ թիվ 04436 գորամասի հրամանատարի հայցն ընդդեմ նույն գորամասի նախ-

կին զինձառայող, պահեստի ենթասպա Մերուծան Ղազարյանի և նրա ընտանիքի անդամների՝ ծառայողական բնակելի տարածքից վտարելու պահանջի մասին, բավարարել: Կորցրած ճանաչել Մերուծան Ղազարյանի և նրա ընտանիքի անդամների իրավունքը՝ որպես ծառայողական բնակելի տարածություն օգտագործվող Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի թիվ 8 զինվորական ավանի 10–րդ շենքի թիվ 9 բնակարանի նկատմամբ: Մերուծան Ղազարյանին և նրա ընտանիքի անդամներին պարտավորեցնել ազատելու վերը նշված ծառայողական բնակարանը»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.05.2015 թվականի որոշմամբ Մերուծան Ղազարյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մերուծան Ղազարյանը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի (այսուհետ՝ Մինսկի կոնվենցիա) 55–րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, խախտելով Մինսկի կոնվենցիայի պահանջները, հարկ չհամարելով պատշաճ ձևով ստուգել ՌԴ 5–րդ կայագրի զինվորական դատարանի որոշման օրինականությունը և չտեղեկացնելով շահագրգիռ կողմերին (տվյալ գործով կատարողական թերթին ծանոթացել է միայն 07.04.2015 թվականին) կայանալիք դատական նիստի վայրի և օրվա մասին, ճանաչել է օտարերկրյա դատարանի վճիռը, որն ուղղակիորեն միջամտում է խախտում է ՀՀ ինքնիշխանությունը և թույլ է տալիս անօրինական ճանապարհով վտարել ՀՀ քաղաքացիներին, որոնք հաշվառված են և բնակվում են Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի 8–րդ զինվորական ավանի 10–րդ շենքի թիվ 9 բնակարանում:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ վերը նշված հանգամանքների օրինականությունը հնարավոր է ստուգել միայն վերաքննության կարգով տվյալ ակտի բողոքարկման արդյունքում, վերադարձրել է վերաքննիչ բողոքը՝ բողոքարկվող դատական ակտի բողոքարկումն ու վերաքննությունն օրենքով նախատեսված չլինելու հիմքով:

Բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 08.05.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության»:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ օտարերկրյա պետությունների դատարանների՝ քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերի ճանաչման և կատարման մասին ներպետական դատարանների որոշումների բողոքարկման իրավական հնարավորության վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միանական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք օտարերկրյա պետությունների դատարանների՝ քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերը ճանաչելու*

*լու և կայարանն թույլատրելու կամ ճանաչումը և կայարանը մերժելու վերաբերյալ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման:*

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՄԴՌ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատա-

կան պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանելու դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 25.11.2008 թվականի թիվ ՍԴՈ-780 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է, այլև այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքնության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես՝ 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին կետով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին, չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքնության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքնության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Վերոհիշյալ իրավական նորմերի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքնության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը:

Բողոքարկման իրավունքի վերաբերյալ վերն արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով սույն որոշմամբ բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247<sup>6</sup>-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացրած վճիռները, որոշումները, ինչպես նաև օտարերկրյա պետությունների արբիտրաժային տրիբունալների վճիռները և որոշումները (այսուհետ՝ դատական ակտեր), որոնք կատարում են պահանջում, ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետության տարածքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247<sup>7</sup>-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելիս Հայաստանի Հանրապետության իրավասու **դատարանը պարզում է միայն**, թե որքանով է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը համապատասխանում այն պահանջներին, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության

համապատասխան միջազգային պայմանագրով: **Համապատասխան միջազգային պայմանագրի պահանջները պահպանած լինելու և ճանաչումը մերժելու՝ տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը որոշում է կայացնում օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու մասին:** Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կայացրած որոշումը կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է օտարերկրյա պետությունների դատական ակտերի ճանաչման հարցին, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը ենթադրում է պետական իշխանության գերակայություն, ինքնուրույնություն և անկախություն, ինչն իր մեջ ներառում է նաև պետության ամբողջ տարածքում արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասությունը: Հետևաբար օտարերկրյա դատական ակտերը Հայաստանի Հանրապետությունում ինքնուրույնության չեն կարող ունենալ իրավական գործողության այն հատկանիշները (պարտադիրություն, անհերքելիություն, կատարելիություն, նախադատելիություն), ինչ ունեն ներպետական դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Մինևույն ժամանակ պետության ինքնիշխանությունը չի բացառում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչը նախևառաջ միջազգային համագործակցության դրսևորում է: Վերը նշվածով պայմանավորված՝ օրենսդիրը նախատեսել է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման կարգ՝ այդ ակտերի ճանաչման իրավասությունը վերապահելով ՀՀ դատարաններին: Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտի ճանաչումն իրենից ներկայացնում է ՀՀ դատարանների կողմից այդ ակտերին այնպիսի իրավական հատկանիշների տրամադրում, որոնցով օժտված են Հայաստանի Հանրապետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, և թույլատրում այդ ակտի իրավական գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում: Այլ կերպ ասած՝ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտը միայն ճանաչման արդյունքում է Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերում պարտադիրության և կատարելիության հատկանիշներ: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247<sup>6</sup>-րդ հոդվածի 1-ին կետի և 247<sup>7</sup>-րդ հոդվածի 1-ին կետի փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ-ում ճանաչման ենթակա են օտարերկրյա պետությունների դատարանների՝ քաղաքացիական գործերով կայացրած վճիռները, որոշումները, օտարերկրյա պետությունների արբիտրաժային տրիբունալների վճիռները և որոշումները, ինչպես նաև միջազգային արբիտրաժի որոշումները, որոնք կատարում են ենթադրում (*տե՛ս ըստ «Իսրերպայսյ Ուկրաինա» ՄՊԸ-ի միջնորդության՝ Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճիռը ճանաչելու և Հայաստանի Հանրապետության փարածքում կատարումը թույլատրելու պահանջների մասին թիվ ԵԿԿ/0024/16/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը, նախատեսելով ՀՀ-ում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորություն, այդուհանդերձ, այն չի սահմանել որպես բացարձակ և ոչնչով չպայմանավորված իրավունք, մասնավորապես, օրենսդիրն անրագրել է, որ ՀՀ իրավասու դատարանը պարտավոր է պարզել, թե որքանով է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը համապատասխանում այն պահանջներին, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով: ՀՀ իրավասու դատարանը կարող է

որոշում կայացնել օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու մասին միայն այն դեպքում, եթե պահպանված են համապատասխան միջազգային պայմանագրի պահանջները և բացակայում են ճանաչումը մերժելու՝ տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված հիմքերը: Վերոշարադրյալից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը թեև օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու ինքնուրույն հիմքեր չի նախատեսել, սակայն ինպերատիվ կերպով ամրագրել է, որ ՀՀ իրավասու դատարանները նմանատիպ միջնորդություններ քննելիս նախնառաջ պարտավոր են պարզել օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու՝ համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված հիմքերի առկայությունը:

Մինսկի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 21.12.1994 թվականին) 51-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, նույն կոնվենցիայով նախատեսված պայմաններով, ճանաչում և կատարում է այլ Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունված հետևյալ որոշումները՝ քաղաքացիական և ընտանեկան գործերով արդարադատության մարմինների որոշումները, ներառյալ՝ նման գործերով դատարանի հաստատած հաշտության համաձայնագրերն ու դրամական պարտավորությունների վերաբերյալ նոտարական ակտերը «այսուհետ՝ որոշումներ»:

Մինսկի կոնվենցիայի 54-րդ հոդվածի համաձայն՝

1. 51-րդ հոդվածով նախատեսված որոշումների ճանաչման և հարկադիր կատարման թույլտվության մասին միջնորդությունները քննվում են այն Պայմանավորվող կողմի դատարաններում, որի տարածքում պետք է իրականացվի հարկադիր կատարումը:

2. Որոշումների ճանաչման և հարկադիր կատարման թույլտվության մասին միջնորդությունները քննող դատարանը սահմանափակվում է պարզելով, որ պահպանված են նույն կոնվենցիայով նախատեսված պայմանները: Եթե այդ պայմանները պահպանված են, դատարանը որոշում է կայացնում հարկադիր կատարման մասին:

3. Հարկադիր կատարման կարգը որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում պետք է իրականացվի հարկադիր կատարումը:

Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի համաձայն՝

1. 52-րդ հոդվածով նախատեսված որոշումների ճանաչումը և հարկադիր կատարման թույլտվությունը կարող են մերժվել, եթե՝

ա) այն Պայմանավորվող կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում կայացվել է որոշումը, վերջինս օրինական ուժի մեջ չի մտել կամ ենթակա չէ կատարման, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումը ենթակա է կատարման մինչև օրինական ուժի մեջ մտնելը,

բ) պատասխանողը չի մասնակցել դատավարությանն այն պատճառով, որ նրան կամ նրա կողմից լիազորված անձին պատշաճ ձևով և ժամանակին չի հանձնվել դատարան ներկայանալու մասին ծանուցագիրը,

գ) այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ պետք է ճանաչվի և կատարվի որոշումը, մինևնույն կողմերի միջև, մինևնույն առարկայի մասին և մինևնույն հիմքերով գործով ավելի վաղ ընդունվել է օրինական ուժի մեջ մտած որոշում կամ առկա է երրորդ պետության դատարանի ճանաչված որոշումը, կամ էլ եթե այդ Պայմանավորվող կողմի մարմինն այդ գործով քննություն է սկսել ավելի վաղ,

դ) գործը, նույն կոնվենցիայի դրույթների համաձայն, իսկ նրանով չնախատեսված դեպքերում՝ այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում որոշումը պետք է ճանաչվի և կատարվի, պատկանում է այդ կողմի մարմնի բացառիկ իրավասությանը,

ե) բացակայում է պայմանագրային ընդդատության գործով կողմերի համաձայնությունը հաստատող փաստաթուղթը,

զ) լրացել է հարկադիր կատարման վաղեմության ժամկետը՝ նախատեսված այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի դատարանը կատարում է հանձնարարությունները:

Մինակի կոնվենցիայի 55-րդ հոդվածով ամրագրված մերժման հիմքերի վերլուծությունից հետևում է, որ դրանց նախատեսումն ինքնասպառակ չէ և անմիջականորեն պայմանավորված է ինչպես դատական վեճի կողմերի սուբյեկտիվ իրավունքների, այնպես էլ պետության և հասարակության շահերի պաշտպանությամբ: Այսպես, օրինակ, այնպիսի հիմքեր, ինչպիսիք են՝ օտարերկրյա դատական ակտի ուժի մեջ մտած լինելու հանգամանքը, կողմի պատշաճ ծանուցված լինելու փաստը, նույն կողմերի միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ ավելի վաղ ուժի մեջ մտած որոշման բացակայությունը, կոչված են կանխելու դեռևս կատարելիության հատկանիշ ձեռք չբերած կամ դատավարական ընթացակարգի խախտմամբ կայացված դատական ակտերի ճանաչումը և կատարումը՝ երաշխավորելով մյուս կողմի դատական պաշտպանության իրավունքը: Ընդ որում, այդպիսի հիմքերի ամրագրումը երկուստեք հավասարակշռում է ինչպես «հայցվորի», այնպես էլ «պատասխանողի» շահերը: Մասնավորապես, «հայցվորի» համար ակնհայտ է, որ սպառնիչ ամրագրված հիմքերից բացի որևէ այլ հիմքով չի կարող մերժվել դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու իր միջնորդությունը՝ նկատի ունենալով ներպետական օրենսդրությամբ համապատասխան հիմքերի բացակայությունը: Ինչ վերաբերում է «պատասխանողին», ապա, ինչպես արդեն նշվեց, վկայակոչված հիմքերը կոչված են կանխելու վերջինիս դատավարական իրավունքների խախտմամբ կայացված դատական ակտի ճանաչումը և դրա կատարումը: Այլ կերպ ասած՝ մերժման հիմքերի նախատեսումը բխում է անձի դատական պաշտպանության իրավունքից, իսկ դրանց իրավաչափ կիրառումն արդար դատաքննության իրավունքի իրացման կարևոր նախապայմանն է:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օտարերկրյա պետության դատական ակտերի ճանաչման գործընթացը ոչ միայն ենթադրում է ՀՀ իրավասու դատարանի կողմից այդ դատական ակտի ճանաչմանը խոչընդոտող համապատասխան միջազգային պայմանագրով ամրագրված հիմքերի առկայության ստուգում, այլև՝ նշված հանգամանքների պարզման ուղղությամբ իրավասու դատարանի գործողությունների օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու իրավական հնարավորություն:

Վերը շարադրվածով հանդերձ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247<sup>6</sup>-247<sup>7</sup>-րդ հոդվածներով կարգավորելով օտարերկրյա պետությունների դատարանների որոշումները ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում չի նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերը ճանաչելու և կատարումը թույլատրելու կամ այդպիսի ակտի ճանաչումը մերժելու վերաբերյալ դատարանի որոշումը՝ դրանով իսկ բացատրելով դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, այնինչ, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՄԴՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերը ճանաչելու և կատարումը թույլատրելու կամ այդպիսի ակտի ճանաչումը մերժելու վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունն անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նույնիսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով անմիջականորեն նախատեսված չլինելու պայմաններում, 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կենսագործելու և ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ակնհայտ է դառնում, որ ինչպես օտարերկրյա պետության դատական ակտը ՀՀ տարածքում ճանաչելու և հարկադիր կատարման միջոցներ կիրառելու մասին, այնպես էլ այդպիսի ակտի ճանաչումը մերժելու մասին

ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման: Ընդ որում, նշված որոշումները ենթակա են բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կանոններով: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերը նշված որոշումներով, ըստ էության, եզրափակում է օտարերկրյա դատական ակտի ճանաչման վարույթը:

Այսպիսով Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ օրենսդրական կարգավորումները, դրանց շուրջ կատարված իրավական վերլուծությունները և ելնելով անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման անհրաժեշտությունից, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

1. օտարերկրյա պետությունների դատական ակտերը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և կատարման թույլատրելու կամ ճանաչումը և կատարումը մերժելու վերաբերյալ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշումն ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով,

2. օտարերկրյա պետությունների դատական ակտերը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և կատարման թույլատրելու կամ ճանաչումը և կատարումը մերժելու վերաբերյալ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշման բողոքարկումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կանոններով, այնքանով, որքանով դրանք վերաբերելի են (*mutatis mutandis*) խնդրո առարկա որոշմանը:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության Պոլևայա Դաշտային փոստ թիվ 04436 գորամասի կողմից ներկայացվել է միջնորդություն՝ Ռուսաստանի Դաշնության 5-րդ կայազորային զինվորական դատարանի կողմից թիվ 2-22/2014 քաղաքացիական գործով 19.03.2014 թվականին կայացված վճռի ճանաչման և կատարման վերաբերյալ (**գ.թ. 22-39**):

Դատարանն իր 16.02.2015 թվականի որոշմամբ, քննության առնելով վերոնշյալ միջնորդությունը, որոշել է Ռուսաստանի Դաշնության 5-րդ կայազորային զինվորական դատարանի կողմից թիվ 2-22/2014 քաղաքացիական գործով 19.03.2014 թվականի վճռը ՀՀ տարածքում ճանաչել և կիրառել հարկադիր կատարման միջոցներ (**գ.թ. 85-87**):

Դատարանի 16.02.2015 թվականի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել Մերուժան Ղազարյանը (**գ.թ. 118-120**):

Վերաքննիչ դատարանի 08.05.2015 թվականի որոշմամբ Դատարանի 16.02.2015 թվականի «Օտարերկրյա պետության դատական ակտը ՀՀ տարածքում ճանաչելու և հարկադիր կատարման միջոցներ կիրառելու մասին» որոշման դեմ Մերուժան Ղազարյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված հիմքով, այն է՝ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման: Իր այդ դիրքորոշումը Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է բողոքարկվող դատական ակտի բողոքարկում և վերաքննության հնարավորություն օրենքով նախատեսված չլինելու հանգամանքով (**գ.թ. 123**):

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչ հանդիսացող բողոքարկման ինստիտուտի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Դատարանի 16.02.2015 թվականի «Օտարերկրյա պետության դատական ակտը ՀՀ տարածքում ճանաչելու և հարկադիր կատարման միջոցներ կիրառելու մասին» որոշումը չի կարող համարվել բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ, քանի որ տվյալ դեպքում դատավարության մասնակիցները զրկված կլինեն այդ որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը վերադաս դատական ատյանում՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում վիճարկելու հնարավորությունից, որի արդյունքում կխախտվի



վերջիններին՝ 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված և երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված վերաքննիչ բողոքով բողոքաբերը չի բողոքարկել այնպիսի դատական ակտ, որը ենթակա չէ վերաքննության կարգով բողոքարկման, այլ հակառակը՝ տվյալ անձը, իրացնելով կայացված դատական ակտի օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու իր իրավական հնարավորությունը, օրենքով սահմանված կարգով ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Հետևաբար քննարկվող պարագայում առկա չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված հիմքը, և Վերաքննիչ դատարանի 08.05.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու և Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.05.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/3540/05/14  
Նախագահող դատավոր՝

Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/3540/05/14  
2016 թ.

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի մայիսի 25–ին,  
քննարկելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.09.2014 թվականի «Վերաքննիչ  
բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Հայկ Ալումյանի ներկայացուցիչ Տիգրան Մուրադյա-  
նի վճռաբեկ բողոքը,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատարանական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Հայկ Ալումյանը պահանջել է վերացնել ՀՀ արդարադատության  
նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության  
(այսուհետ՝ Ծառայություն) 20.06.2014 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մա-  
սին» որոշումը կամ ճանաչել այդ որոշման առ ոչինչ լինելը, որպես հետևանք՝ վերացնել  
Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայ-  
տարարելու մասին» որոշումը: Հայկ Ալումյանը պահանջել է նաև ճանաչել Ծառայության  
20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին»  
որոշման առ ոչինչ լինելը կամ այն վերացնել, ճանաչել Ծառայության 20.06.2014 թվականի  
«Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշման առ ոչինչ լինելը կամ այն  
վերացնել:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան)  
23.07.2014 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.09.2014  
թվականի որոշմամբ Հայկ Ալումյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.07.2014  
թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկ Ալումյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ծառայությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով Հայկ Ալումյանն օժտված է հարկադիր կատարողի բոլոր տեսակի որոշումները դատական կարգով բողոքարկելու բացարձակ իրավունքով: Հետևաբար Դատարանի կողմից Հայկ Ալումյանի հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելն օրենքով չնախատեսված սահմանափակումներ է ստեղծել վերջինիս՝ դատարան դիմելու իրավունքի իրացման համար:

Վերաքննիչ դատարանը համարել է, որ «Կատարողական վարույթ» հարուցելու մասին» հարկադիր կատարողի որոշումը չի հանդիսանում վարչական ակտ և մերժել է հայցադիմումի ընդունումը: Մինչդեռ կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն արտաքին ներգործություն ունեցող վարչական ակտ է, որի ընդունման հետևանքով Հայկ Ալումյանը ձեռք է բերել որոշակի կարգավիճակ, իսկ հարկադիր կատարողն իրավունք է ստացել անձի և նրա գույքի նկատմամբ իրականացնել այնպիսի գործողություններ, որոնք չէր կարող իրականացնել նախքան կատարողական վարույթի հարուցումը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Հայկ Ալումյանի կողմից ներկայացված հայցադիմումում առկա են եղել չորս պահանջներ, որոնցից մեկը վերաբերել է Ծառայության 20.06.2014 թվականի «Կատարողական վարույթ» հարուցելու մասին» որոշումը վերացնելու կամ դրա առ ոչինչ լինելը ճանաչելուն, իսկ երկրորդը՝ որպես առաջին հայցապահանջի հետևանք՝ Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին» որոշումը վերացնելուն: Բացի այդ, նույն հայցադիմումով ներկայացված են եղել ևս երկու ինքնուրույն պահանջներ՝ Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու կամ այն վերացնելու և Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու կամ այն վերացնելու մասին: Վերջին երկու պահանջների վերաբերյալ Դատարանն առհասարակ ոչ մի դիրքորոշում չի արտահայտել, իսկ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով դրանք դիտել է որպես ածանցյալ պահանջներ՝ խախտելով դատարանի մատչելիության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 16.09.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ, այն է՝ վերացնել Դատարանի 23.07.2014 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը»:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի փաստարկները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Ծառայության 20.06.2014 թվականի «Կատարողական վարույթ» հարուցելու մասին» որոշումն ընդամենը վարչական վարույթի հարուցման փուլի իրավական ակտ է, ուստի այն վարչական ակտ չի հանդիսանում: Նշված որոշումն ուղղված չէ Հայկ Ալումյանի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն, դրա միջոցով վարչական մարմինը չի մերժում, միջամտում կամ ընդհուպ սահմանափակում Հայկ Ալումյանի իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն չի դնում վերջինիս վրա կամ ցանկացած այլ եղանակով չի վատթարացնում Հայկ Ալումյանի իրավական կամ փաստացի դրությունը:

**3. Վճռաբեկ դատարանի պարզապահությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման՝ դատական կարգով բողոքարկման իրավական կառուցակարգի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1. անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման բողոքարկման վերաբերյալ հայցապահանջն ընդդատյա է արդյո՞ք վարչական, թե՛ ընդհանուր իրավասության դատարանին,
2. արդյո՞ք անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ է,
3. ի՞նչ կանոններով պետք է քննվի անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը վերացնելուն ուղղված հայցապահանջը:

1. 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման բովանդակությամբ իրավադրույթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններն են ընդհանուր իրավասության դատարանները, վարչական դատարանը:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանի ենթակայությամբ վերապահված գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել նույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ռիչնչ լինելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջները նույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հարկադիր կատարման ներկայացնելիս վարչական մարմինը ներկայացնում է դրամական պահանջները հավաստող համապատասխան վարչական ակտը, այդ ակտի մասին նույն օրենքով սահմանված կարգով իրազեկելը կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը, ինչպես նաև ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող ապացույցները և կատարման վերաբերյալ գրություն (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ (...) նույն օրենքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխին համապատասխան սահմանում է նաև հանրային իրավական դրամական պահանջների կատարման պայմանները և կարգը այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությանը (mutatis mutandis) կիրառելի են անբողոքարկելի վարչական ակտի կատարման նկատմամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա են անբողոքարկելի վարչական ակտերը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված

կարգով տրված կատարողական թերթն է, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31.1-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջներին չհամապատասխանող, ինչպես նաև ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը երկու հարյուր հազար դրամը գերազանցելու (...) դեպքերում ներկայացված փաստաթղթերը հարկադիր կատարողը վերադարձնում է վարչական մարմին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողը կայացնում է որոշում: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանման գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան կամ վերադատության կարգով որոշումն ստանալու օրվանից՝ տասնօրյա ժամկետում: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումները վերացվում կամ փոփոխվում են դատարանի վճռի հիման վրա կամ հարկադիր կատարողի վերադասի կողմից:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդդատությունը՝ որպես դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որը կարգավորում է դատարանի քննությանը ենթակա բոլոր գործերի բաշխումը ՀՀ դատական իշխանության առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև:

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՄԴՈ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատության օրենքով հանձնված է տվյալ գործը:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը կանխորոշել է ընդհանուր իրավասության դատարանի ընդդատության շրջանակը, որն ընդգրկում է բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանի քննությանը վերապահված գործերի: Իսկ ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը սահմանել է ՀՀ վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որը կազմված է հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերից: Փաստորեն, դատական գործերի տարանջատումը քաղաքացիականի և վարչականի պայմանավորված է այդ գործերով վիճելի իրավահարաբերության բնույթով. կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել այդ գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք տվյալ գործը ծագում է հանրային, թե՛ մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից:

Այսպիսով, իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակման և դրա հիման վրա դատական գործերի ընդդատության տարանջատման հարցին: Այսպես, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշման՝ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավա-

հարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև՝ այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը (յրևն «Վեսար» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մերավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումները):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը ենթակա է բողոքարկման դատական կարգով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդրի կողմից սահմանված իրավադրույթի ուժով, որի համաձայն՝ հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանման գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում առաջին ատյանի դատարաններ են համարվում ընդհանուր իրավասության դատարանները և վարչական դատարանը: Հետևաբար, սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ հայցապահանջները և դրանց հիման վրա հարուցված գործերն առաջին ատյանի կոնկրետ ո՞ր դատարանին են ընդդատյա՝ ընդհանուր իրավասության դատարաններին, թե՛ վարչական դատարանին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ հայցապահանջները բխում են հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա են վարչական դատարանի քննությանը: Այսպես՝

1. անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ գործով քննության ենթակա վեճի կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ հարկադիր կատարողը (Ծառայությունը),

2. անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ գործով քննության ենթակա վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ հարկադիր կատարողի (Ծառայության) կողմից հարկադիր կատարման ենթակա իրավական ակտերի կատարմանն ապահովելու իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը,

3. անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ գործով վիճելի իրավահարաբերությունը ծագում է հարկադիր կատարման ենթակա հանրային իրավական դրամական պահանջների պարտադիրությունն ու կատարելիությունն ապահովելու հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացման և առարկայացման կապակցությամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, հանգում է այն եզրակացության, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման բողոքարկման վերաբերյալ հայցապահանջներն ընդդատյա են վարչական դատարանին:

2. Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

Վերոգրյալից հետևում է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե ոչ: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական ակտը սահմանված է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հստակորեն որոշված հասցեատեր,
- վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,
- վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,
- վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,



- վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությանը օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,
- վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար (յրեն Ռոբերտ Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դարարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ (յրեն Վարդիթեր Ավոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դարարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Օրենսդիրը վարչական ակտերով սահմանված հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով: Քննարկվող օրենքները սահմանում են, որ հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու համար հիմք է հանդիսանում օրենքով սահմանված կարգով կազմված և հարկադիր կատարողին ուղարկված դիմումը (գրությունը), որին կից համապատասխան վարչական մարմինը ներկայացնում է նաև հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտը, ինչպես նաև այդ վարչական ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելը, տվյալ վարչական ակտի ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող ապացույցները: Բացի այդ, այն դեպքում, երբ հանրային իրավական դրամական պահանջով պարտապանը ֆիզիկական անձ է, ապա այդ դրամական պահանջը ենթակա է հարկադիր կատարման, եթե այն չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված պահանջներին համապատասխանող դիմումը (գրությունը) և դրան կցված փաստաթղթերը հարկադիր կատարողին ներկայացնելու դեպքում վերջինս հարուցում է հանրային իրավական դրամական պահանջի կատարմանն ուղղված վարչական վարույթ՝ կայացնելով համապատասխան որոշում: Հակառակ պարագայում, այսինքն՝ այն դեպքում, երբ հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտն ընդունված վարչական մարմնի կողմից հարկադիր կատարողին ուղարկված դիմումը (գրությունը) և դրան կցված փաստաթղթերը չեն համապատասխանում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին, կամ եթե պարտապան ֆիզիկական անձից գանձման ենթակա հանրային իրավական դրամական պահանջը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է ներկայացված փաստաթղթերը վերադարձնել համապատասխան վարչական մարմին:

Անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման իրավական բնույթը համադրելով վարչական ակտին բնորոշ հատկանիշների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն անհատական իրավական ակտ է,
- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ընդունվում է վարչական մարմնի՝ հարկադիր կատարողի (Ծառայության) կողմից,

- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,
- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում,
- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ուղղված է հանրային իշխանությանը օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,
- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ուղղակի իրավական հետևանքներ չի առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը չի սահմանում, չի փոփոխում, չի վերացնում կամ չի ճանաչում իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար:

Այսպիսով, անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը՝ որպես անհատական իրավական ակտ, օժտված չէ վարչական ակտին բնորոշ այնպիսի կարևոր առանձնահատկությամբ, ինչպիսին է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու՝ վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հատկանիշը: Հետևաբար վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը ՀՀ իրավական համակարգում չի կարող համարվել վարչական ակտ, քանի որ այն օժտված չէ վարչական ակտին բնորոշ վերը նշված հատկանիշով և իր բնույթով ընդամենը վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի՝ որպես իրավական ընթացակարգի, սկիզբն ազդարարող իրավական ակտ է հանդիսանում:

3. Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

1) մի կողմից՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործն ընդդատյա է վարչական դատարանին և պետք է քննվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կանոնների համապատասխան,

2) մյուս կողմից՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը չի հանդիսանում վարչական ակտ, և այդ որոշման վերացման պահանջը չի կարող դառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի առարկա:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված խնդրահարույց իրավիճակի առաջացումը պայմանավորված է կատարողական վարույթի վերաբերյալ հարկադիր կատարողի կայացրած որոշումների, այդ թվում նաև՝ վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման դատական կարգով բողոքարկման իրավական կառուցակարգի թերի և հանրային իշխանության մարմինների իրավական ակտերի, գործո-

դուրսնաների ու անգործության դատական կարգով բողոքարկման հարցում ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին հակասող օրենսդրական կարգավորումներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործող օրենսդրությունը պատշաճ կերպով չի ապահովում հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթի շրջանակներում ընդունվող և վարչական ակտ չհանդիսացող անհատական իրավական ակտերի դեմ անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրացումը: Ուստի անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման դատական կարգով վիճարկման հարցում առկա իրավական խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել այն հանգամանքը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումների ուժով վերը նշված որոշումը ենթակա է բողոքարկման դատական կարգով: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ վերոգրյալ իրավագրող նորմի կիրառումը չի կարող խաթարվել դատավարական ընթացակարգերի անկատար կամ թերի լինելու պատճառով: Այլ կերպ ասած, օրենքով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վիճարկման իրավական հնարավորությունը պետք է երաշխավորված իրացվի՝ անկախ վարչադատավարական օրենսդրությամբ այդ որոշումների իրավաչափությունը դատական քննության անմիջական առարկա դարձնելու վերաբերյալ պատշաճ կառուցակարգի բացակայության հանգամանքից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների՝ դատական կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն տվող միակ դատավարական կառուցակարգը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցն է: Նշված հայցատեսակի միջոցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը՝ դրանով իսկ, ըստ էության, դատական քննության առարկա դարձնելով վիճելի կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները վերացնելուն ուղղված հայցապահանջները վարչական դատարանում ենթակա լինեն քննության ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցի կանոններով: Այսինքն՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները վերացնելուն ուղղված հայցապահանջի հիման վրա հարուցված վարչական գործերը պետք է քննվեն այն նույն կարգով, որով քննվում են ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործերը: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն իրավաբանական իրողությունը, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վերացման նպատակով անձը չի կարող դատարան դիմել ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 66–68–րդ հոդվածներով նախատեսված հայցատեսակներից որևէ մեկով, քանի որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վերացման հայցապահանջը չի համապատասխանում ո՛չ վիճարկման, ո՛չ պարտավորեցման, ո՛չ գործողության կատարման հայցատեսակներին:

Վերագրյալ դատողություններից բխում է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները վերացնելուն ուղղված հայցադիմումը չի կարող չընդունվել վարչական դատարանի վարույթ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նման հայցատեսակ նախատեսված չլինելու պատճառաբանությամբ: Հետևաբար, վարչական դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78–րդ հոդվածի կանոնների կիրառմամբ լուծել նշված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև հատուկ ընգծել, որ վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վերացնելուն ուղղված և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված ճանաչման հայցատեսակին համապատասխան ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու արդյունքում հարուցված վարչական գործի շրջանակներում վարչական դատարանը պետք է ստուգի այդ որոշման իրավաչափությունը, այսինքն՝ դրա համապատասխանությունը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին և քննարկվող անհատական իրավական ակտի՝ օրենքի խախտմամբ ընդունված լինելու դեպքում վճիռ կայացնի անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու մասին:

4. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի գործող իրավակարգավորումները սահմանում են անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարողի ընդունած որոշումների, այդ թվում նաև՝ կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման, կամ կատարած գործողությունների դեմ անձի իրավունքների և օրինական շահերի իրավական պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ:

Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե՝

(...)

11) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ժամանակ պարզվել է, որ անձը կատարել է իր պարտավորությունը մինչև անբողոքարկելի վարչական ակտը հարկադիր կատարման ուղարկելը.

12) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ժամանակ պարզվել է, որ բացակայում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71–րդ հոդվածի 2–րդ մասով սահմանված վարչական ակտը անբողոքարկելի դատնալու հիմքը.

13) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ընթացքում պարզվել է, որ առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88–րդ հոդվածի 1.1–ին մասով սահմանված անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հարկադիր կատարման սահմանափակումները.

14) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ընթացքում պարզվել է, որ հանրային իրավական դրամական պահանջի կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստա-

նի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին չեն համապատասխանում.

(...):

Ընդ որում, վերոգրյալ իրավադրույթներն ընդունվել են ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-252-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 09.01.2015 թվականին:

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերով նախատեսել է անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման նպատակով հարուցված կատարողական վարույթը կարճելու պարտադիր հիմքերը: Այսինքն՝ վերոգրյալ իրավանորմների ուժով հարկադիր կատարողը պարտավոր է կարճել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման նպատակով հարուցված կատարողական վարույթը, եթե կատարողական վարույթի ընթացքում պարզվել են հետևյալ հանգամանքները.

1) անձը կատարել է իր պարտավորությունը մինչև անբողոքարկելի վարչական ակտը հարկադիր կատարման ուղարկելը,

2) բացակայում է վարչական ակտն անբողոքարկելի դատնալու օրենքով սահմանված հիմքը,

3) առկա են անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հարկադիր կատարման օրենքով սահմանված սահմանափակումները,

4) հանրային իրավական դրամական պահանջի կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին:

Այսպիսով, հարկադիր կատարողը, անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված յուրաքանչյուր կատարողական վարույթի ընթացքում պարզելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերում ամրագրված հանգամանքներից որևէ մեկի առկայությունը, պարտավոր է սեփական նախաձեռնությամբ կարճել հարուցված կատարողական վարույթը:

Վճռարեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի կարճման վերոգրյալ իրավական հիմքերից որևէ մեկի առկայության պայմաններում հարկադիր կատարողը սեփական նախաձեռնությամբ չի կարճում հարուցված կատարողական վարույթը, ապա հանրային իրավական դրամական պահանջով պարտապան հանդիսացող անձը կարող է օգտվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ կատարողական վարույթի ընթացքում միջնորդություններ անելու իր իրավունքից՝ միջնորդելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերով ամրագրված համապատասխան հիմքով կարճել հարուցված կատարողական վարույթը: Հարկադիր կատարողի կողմից հանրային իրավական դրամական պահանջով պարտապան հանդիսացող անձի նշված միջնորդությունը մերժվելու դեպքում վերջինս կարող է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցով դիմել վարչական դատարան՝ պահանջելով ընդունել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթը կարճելու մասին բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը մերժվել է հարկադիր կատարողի կողմից:

Վճռարեկ դատարանի գնահատմամբ՝ տվյալ պարագայում անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթը կարճելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելու հայցապահանջի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում կատարողական վարույթը կարճելու օրենքով նախատեսված իրավական հիմքերի առկայության կամ բացակայության և կատարողական վարույթի՝ կարճման ենթակա լինելու կամ չլինելու հանգամանքները կդառնան դատական քննության առարկա: Հետևաբար վարչական դատա-

րանը, քննարկվող վարչական գործերի քննության ընթացքում պարզելով հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի կարճման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերով նախատեսված համապատասխան հիմքի առկայությունը, կարող է վճիռ կայացնել հանրային իրավական դրամական պահանջով պարտապան հանդիսացող անձի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու, այսինքն՝ կատարողական վարույթը կարճելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և հարկադիր կատարողին այդ վարչական ակտի ընդունմանը, այսինքն՝ կատարողական վարույթը կարճելուն, պարտավորեցնելու մասին:

Անվտիվելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում կատարված և 09.01.2015 թվականին ուժի մեջ մտած լրացումներով օրենսդիրը նախատեսել է անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարողի ընդունած որոշումների կամ կատարած գործողությունների արդյունքում անձի իրավունքների և օրինական շահերի իրավական պաշտպանության լրացուցիչ կառուցակարգ, որը կարող է նույնքան արդյունավետ կերպով ապահովել անձի խախտված իրավունքների գործնական վերականգնումը, որքան վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների անմիջական բողոքարկումը վարչական դատարան:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 12.06.2014 թվականի թիվ 17/1-5907 գրության և դրան կից փաստաթղթերի համաձայն՝ վերջինս հայտնել է Ծառայությանը, որ Հայկ Ալումյանը 11.01.2012 թվականի որոշմամբ, որն անբողոքարկելի է դարձել 05.03.2014 թվականին, ենթարկվել է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ առկա հանրային իրավական դրամական պահանջը կազմում է 750.000 ՀՀ դրամ՝ խնդրելով ապահովել նշված դրամական պահանջի կատարումը **(գ.թ. 13-15)**:

Ծառայության 20.06.2014 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության Երևան քաղաքի վարչական ակտերով բռնագանձումների բաժնի հարկադիր կատարող Գևորգ Սողոմոնյանը, ուսումնասիրելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 12.06.2014 թվականի թիվ 17/1-5907 գրությունը, որոշել է հարուցել թիվ 01/13-22598/14 կատարողական վարույթը՝ Հայկ Ալումյանից 750.000 ՀՀ դրամ, ինչպես նաև 37.500 ՀՀ դրամ՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս, բռնագանձելու մասին **(գ.թ. 12)**:

Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության Երևան քաղաքի վարչական ակտերով բռնագանձումների բաժնի հարկադիր կատարող Գևորգ Սողոմոնյանը, ուսումնասիրելով թիվ 01/13-22598/14 կատարողական վարույթի նյութերը, որոշել է պարտապան Հայկ Ալումյանի գույքի նկատմամբ հայտարարել հետախուզում **(գ.թ. 11)**:

Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության Երևան քաղաքի վարչական ակտերով բռնագանձումների բաժնի հարկադիր կատարող Գևորգ Սողոմոնյանը, ուսումնասիրելով թիվ 01/13-22598/14 կատարողական վարույթի նյութերը, որոշել է 787.500 ՀՀ դրամի չափով արգելանք դնել պարտապան Հայկ Ալումյանին պատկանող դրամական միջոցների վրա **(գ.թ. 10)**:

Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության Երևան քաղաքի վարչական ակտերով բռնագանձումների բաժնի հարկադիր կատարող Գևորգ Սողոմոնյանը, ուսումնասիրելով թիվ 01/13-22598/14 կատարողական վարույթի նյութերը, որոշել է 787.500 ՀՀ դրամի չափով

արգելանք դնել պարտապան Հայկ Ալումյանին պատկանող շարժական և անշարժ գույքի վրա **(գ.թ. 9)**:

Սույն գործով դիմելով դատարան՝ Հայկ Ալումյանը ներկայացրել է հետևյալ հայցապահանջները.

- 1) վերացնել Ծառայության 20.06.2014 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշումը կամ ճանաչել այդ որոշման առ ոչինչ լինելը,
- 2) վերացնել Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին» որոշումը,
- 3) ճանաչել Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման առ ոչինչ լինելը կամ այն վերացնել,
- 4) ճանաչել Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշման առ ոչինչ լինելը կամ այն վերացնել:

Ընդ որում, Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին» որոշումը հայցվորը դիտել է որպես անանցյալ հայցապահանջ, որի լուծման ելքը կանխորոշվում է հիմնական հայցապահանջի՝ Ծառայության «Կատարողական վարույթ հարուցելու մասին» 20.06.2014 թվականի որոշումը վերացնելու կամ դրա առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի մերժմամբ կամ բավարարմամբ **(գ.թ. 2–8)**:

Սույն գործով Դատարանը, մերժելով Հայկ Ալումյանի հայցադիմումի ընդունումը, պատճառաբանել է, որ կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը վարչական ակտ չի հանդիսանում, և ներկայացված հայցը վարչական դատարանին ընդդատյա չէ **(գ.թ. 23–24)**:

Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը և Դատարանի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողել անփոփոխ՝ ըստ էության վերահաստատելով Դատարանի վերոգրյալ դիրքորոշումը **(գ.թ. 73–78)**:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների փաստարկները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախևառաջ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ծառայության «Կատարողական վարույթ հարուցելու մասին» 20.06.2014 թվականի որոշումը վերացնելու կամ դրա առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի քննությունն ընդդատյա է վարչական դատարանին, քանի որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման բողոքարկման վերաբերյալ հայցապահանջը բխում է հանրային իրավահարաբերություններից ծագող վեճից:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայության «Կատարողական վարույթ հարուցելու մասին» 20.06.2014 թվականի որոշումը ՀՀ իրավական համակարգում չի հանդիսանում վարչական ակտ, քանի որ հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը՝ որպես անհատական իրավական ակտ, օժտված չէ վարչական ակտին բնորոշ այնպիսի կարևոր յուրահատկությամբ, ինչպիսին է ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու՝ վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հատկանիշը, և իր բնույթով ընդամենը վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի՝ որպես իրավական ընթացակարգի սկիզբն ազդարարող իրավական ակտ է հանդիսանում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության «Կատարողական վարույթ հարուցելու մասին» 20.06.2014 թվականի որոշումը վարչական ակտ չէ, և անձը չի կարող այդ որոշման վերացման պահանջով հայց ներկայացնել ո՛չ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66–րդ հոդվածով նախատեսված վիճարկման, ո՛չ նույն օրենսգրքի 67–րդ և 68–րդ հոդվածներով նախատեսված՝ պարտավորեցման և գործողության կատարման հայցատեսակներին համապատասխան: Միաժամանակ Ծառայության «Կատարողական վարույթ հարուցելու մասին» 20.06.2014 թվականի որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու

պահանջը չի կարող հանդիսանալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ճանաչման հայցի առարկա: Հետևաբար, նշված անհատական իրավական ակտի վերացմանն ուղղված հայցադիմումը վարույթ ընդունելու և այդ հայցապահանջը քննության առնելու նկատմամբ պետք է կիրառվեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցի կանոնները:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկը դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքն է, որը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հստակ կամ ոչ ճիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված (*տե՛ս Ալեքսանդր Կարալովի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայկ Արմյանը, Ծառայության 20.06.2014 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշումը վերացնելու (անվավեր ճանաչելու) կամ այդ որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջով դիմելով դատարան, նպատակ է ունեցել իրացնել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վա-



րոյթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման՝ դատական կարգով բողոքարկման իր իրավունքը և արդյունավետ դատական պաշտպանության միջոցով հասնել այդ անհատական իրավական ակտի վերացմանը: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն (ex officio) պարզելու դատավարական սկզբունքի ուժով Դատարանը պարտավոր էր առաջարկել Հայկ Ալումյանին իր կողմից ներկայացված ոչ ճիշտ հայցատեսակը՝ Ծառայության 20.06.2014 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշումը վերացնելու (անվավեր ճանաչելու) կամ այդ որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի վերաբերյալ, փոխարինել պատշաճ հայցատեսակով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցով:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Ծառայության 20.06.2014 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշումը վերացնելու (անվավեր ճանաչելու) կամ այդ որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի վերաբերյալ Հայկ Ալումյանի հայցադիմումը չէր կարող չընդունվել Դատարանի վարույթ՝ այդ հայցադիմումում բովանդակվող հիմնական հայցապահանջը վարչական դատարանին ընդդատյա կամ ենթակա չլինելու պատճառաբանությամբ: Հետևաբար, տվյալ դեպքում Դատարանը պետք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ վարույթ ընդուներ Հայկ Ալումյանի կողմից ներկայացված հայցադիմումը՝ նշված հայցապահանջների մասով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, թեև ստորադաս դատարաններն իրավացիորեն են հանգել այն եզրակացության, որ Ծառայության 20.06.2014 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշումը վարչական ակտ չէ, սակայն Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված որոշումը վերացնելու կամ այդ որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և որպես հետևանք՝ Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին» որոշումը վերացնելու հայցապահանջների մասով Հայկ Ալումյանի հայցադիմումը պետք է քննվեր սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Մինևույն ժամանակ սույն գործով ներկայացված հայցադիմումի բովանդակության ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ այդ հայցադիմումը պետք է ընդունվեր Դատարանի վարույթ նաև մյուս երկու ինքնուրույն հայցապահանջների՝ Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու կամ այն վերացնելու և Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու կամ այն վերացնելու մասով: Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» և «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշումները համապատասխանում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված վարչական ակտի հատկանիշներին.

- Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» և «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշումներն անհատական իրավական ակտեր են, քանի որ վերաբերում են որոշակի ֆիզիկական անձի, այսինքն՝ ունեն հստակորեն որոշված հասցեատեղ. դրանք ուղղված են Հայկ Ալումյանին,
- Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» և «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշումներն ունեն արտաքին ներգործություն, քանի որ առնչվում են այնպիսի ֆիզիկական անձի, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ, այսինքն՝ կարգավորում են վարչական մարմնի և ֆիզիկական անձի միջև ծագած իրավահարաբերությունները,
- Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» և «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին»

որոշումներն ընդունվել են հանրային իրավունքի բնագավառում, քանի որ դրանք հանրային իշխանությամբ օժտված մարմնի, այն է՝ Ծառայության, իրավական նորմերի հիման վրա (որոնք ի սկզբանե ընդունվել են հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով) կատարված միակողմանի կարգադրություններ են՝ ուղղված Հայկ Ալումյանին,

- Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» և «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշումներն ընդունվել են կոնկրետ գործի կարգավորման նպատակով, դրանք միտված են հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին՝ Հայկ Ալումյանին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը, այն է՝ վերջինիս ուղղված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման ապահովմանը,
- Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» և «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշումներն ուղղակի իրավական հետևանքներ են առաջացնում ֆիզիկական անձի համար, քանի որ վարչական մարմինը՝ Ծառայությունը, այդ որոշումներով արգելանք դնելով Հայկ Ալումյանի գույքի և դրամական միջոցների վրա, դրանով իսկ վատթարացրել է վերջինիս իրավական և փաստացի դրությունը:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» և «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշումները ՀՀ իրավական համակարգում վարչական ակտեր են և դրանք վերացնելու կամ դրանց առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջները կարող են հանդիսանալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վիճարկման կամ ճանաչման հայցի առարկա: Հետևաբար Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հայկ Ալումյանի հայցադիմումը՝ Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու կամ այն վերացնելու և Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու կամ այն վերացնելու հայցապահանջների մասով, պետք է ընդունվեր Դատարանի վարույթ:

Ամփոփելով վերը նշված իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված հայցադիմումը պետք է ամբողջությամբ ընդունվեր Դատարանի վարույթ՝ դրանում պարունակվող բոլոր հայցապահանջների մասով, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150–152–րդ, 163–րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153–րդ, 169–րդ և 171–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.09.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 23.07.2014 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու» մասին որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԳ/0477/05/15**  
**2016 թ.**

Վարչական գործ թիվ ՎԳ/0477/05/15

Նախագահող դատավոր՝

Ա. Բարայան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի սեպտեմբերի 28-ին  
քննարկելով Գուրգեն Նիկոլյանի վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատա-  
րանի 16.04.2015 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Գուրգեն Նիկոլյանը պահանջել է վերացնել Շենգավիթ վարչա-  
կան շրջանի ղեկավարի 20.03.2013 թվականի թիվ 27 որոշումը և պարտավորեցնել իր նկատ-  
մամբ նշանակել նոր խնամակալ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ան. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 25.02.2015 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.04.2015 թվականի որոշմամբ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» Դատարանի 25.02.2015 թվականի որոշման դեմ Գուրգեն Նիկոլյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գուրգեն Նիկոլյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնա-  
վորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմա-  
նադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատու-  
թյունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա)*

6-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառել:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Ստորադաս դատարաններն իրենց որոշումները կայացրել են ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, ինչի արդյունքում խախտվել է Գուգեն Նիկոլյանի՝ դատարան դիմելու իրավունքը, քանի որ վերջինս գրկվել է դատարանի մատչելիության և իր նկատմամբ կայացված որոշումները վիճարկելու և բողոքարկելու հնարավորությունից: Գուգեն Նիկոլյանի հայցադիմումի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջինս օժտված չէ դատավարական գործունակությամբ, քանի որ անգործունակ է ճանաչված: Վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշվել է, որ բողոք բերելու իրավունքն իրականացրել է անձը, ով դատավարական գործունակությամբ օժտված չէ: Նման մեկնաբանությունը հակասության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության և Սարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հետ:

Սարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) բազմիցս նշել է, որ դատարանի մատչելիության իրավունքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված անքակտելի իրավունք է: Դատարանի մատչելիության սահմանափակումները թույլատրելի են այնքանով, որքանով որ օրինական նպատակ են հետապնդում, և պահպանվում է համաչափություն տվյալ նպատակի ու կիրառվող միջոցների միջև: Նման նպատակի օրինակ կարող է հանդիսանալ անգործունակ անձի կամ այլ անձանց շահերի պաշտպանությունը, ինչպես նաև արդարադատության բնականոն ընթացքի ապահովումը:

Մինչդեռ, տվյալ պարագայում, խնամակալի նշանակման վերաբերյալ որոշումը վիճարկելու համար դատարանի հասանելիության իրավունքը սահմանափակելը որևէ օրինական նպատակով չի հիմնավորվում, և նման սահմանափակումը չի ծառայում արդարադատության բնականոն ընթացքի ապահովմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 16.04.2015 թվականի թիվ ՎԴ/0477/05/15 գործով կայացրած դատական ակտն ու գործն ուղարկել նոր քննության»:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ անգործունակ ճանաչված անձի՝ իր նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ որոշման բողոքարկման իրավական հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին. արդյո՞ք անգործունակ ճանաչված անձն իրավունք ունի դատարան կարգով բողոքարկել իր նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ որոշումը, և արդյո՞ք այդ որոշումը ենթակա է բողոքարկման քաղաքացիական, թե՛ վարչական դատավարության կարգով:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անգործունակ ճանաչված քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե վերացել են այն հիմքերը, որոնց ուժով քաղաքացին անգործունակ է ճանաչվել, դատարանը նրան գործու-

նակ է ճանաչում: Դատարանի վճռի հիման վրա վերացվում է նրա նկատմամբ սահմանված խնամակալությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է քաղաքացուն անգործունակ ճանաչելու կամ նրա գործունակությունը սահմանափակելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երեք օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնել քաղաքացու բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինն՝ նրա նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ խնամակալ կամ հոգաբարձու նշանակում է խնամակալության ու հոգաբարձության կարիք ունեցող անձի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ մեկ ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ նշված մարմինն հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու անհրաժեշտությունը: Խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի նկատմամբ, մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններն իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը շահագրգիռ անձանց կողմից կարող է բողոքարկվել դատարան:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ անձին անգործունակ ճանաչելու, նրան խնամակալության ներքո հանձնելու, իսկ ապաքինվելու դեպքում՝ նաև վերջինիս գործունակությունը վերականգնելու գործընթացներն իրականացվում են տարբեր ընթացակարգերով: Այսպես, անձն անգործունակ է ճանաչվում, և վերջինիս գործունակությունը վերականգնվում է դատարանի կողմից՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, իսկ միջանկյալ փուլում անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալի նշանակումն իրականացվում է այլ ընթացակարգով՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:

Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի սոցիալական խմբի անդամների պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում այդ անձանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունն ամրագրվում է որպես վերջիններիս իրավունքների ու ազատությունների պահովման կարևորագույն երաշխիք: Մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից 17.12.1991 թվականի թիվ 46/119 բանաձևով հաստատված հոգեկան հիվանդությանը տառապողների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքներն անխոչընդոտի են համարում հոգեկան հիվանդությանը տառապող անձանց նկատմամբ որևէ խտրական մոտեցում, այսինքն՝ ցանկացած տարբերակումների, բացառությունների կամ նախապատվություն տալու դրսևորումներ, որոնց արդյունքում հոգեկան հիվանդությանը տառապողների համար անհնարին կդառնա կամ կդժվարանա մարդու՝ միջազգայնորեն ճանաչված իրավունքներից հավասար օգտվելը: Վկայակոչված սկզբունքների համաձայն՝ անձը, ում գործունակությունը հանդիսանում է քննության առարկա, իրավունք ունի իրեն անգործունակ ճանաչելու մասին վճիռը բողոքարկել վերադաս դատական ատյան՝ այլ շահագրգիռ անձանց հետ հավասար պայմաններում:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 23.02.1999 թվականին ընդունված «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանությանն առնչվող սկզբունքների մասին» թիվ R(99)4 հանձնարարականով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին առաջարկվում է անգործունակ չափահաս անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ համապատասխան օրենսդրական կարգավորումներ ամրագրելիս առաջնորդվել այդ հանձնարարականում ամրագրված սկզբունքներով: Այդ սկզբունքների շարքում ներառված են նաև անձի՝ անձամբ լսվելու իրավունքի պահպանման սկզբունքը ցանկացած դատաքննության ընթացքում, որը կարող է առնչվել այդ անձի գործունակությանը, ինչպես նաև անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ ակտերի պարբերաբար վերանայման և պատշաճ բողոքարկման հնարավորության ամրագրումը:

Եվրոպական դատարանը քննարկվող հարցի կապակցությամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անգործունակ ճանաչված անձին դատավարական իրավունքներից զրկելը կարող է արդարացված լինել այդ անձի պաշտպանության, այլ անձանց շահերի պաշտպանության և արդարադատության պատշաճ իրականացման անհրաժեշտությամբ: Մակայն, մյուս կողմից, անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ որոշումը դատարանի կողմից վերանայելու պահանջի իրավունքը հանդիսանում է անձի կարևորագույն իրավունքներից մեկը, քանի որ նման գործընթացը կարող է ուղղակիորեն ազդել բոլոր իրավունքների և ազատությունների իրականացման վրա, որոնք սահմանափակվել էին անձին անգործունակ ճանաչելու արդյունքում: Նման հնարավորության բացակայությունը չի կարող արդարացվել իրավաչափ նպատակով, որը կարող է դրվել անգործունակ ճանաչված անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմքում (*Կենն Նապոլյա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 30.05.2013 թվականի վճիռը (վերջնական է դարձել 30.08.2013 թվականին)*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերի քննության շրջանակներում այդ ֆիզիկական անձի դատավարական կարգավիճակի առանձնահատկություններին, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի ուժով հավասարապես վերաբերում է նաև հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի սոցիալական խմբի անդամների: Հաշվի առնելով այն իրավական հետևանքները, որոնք քաղաքացու համար ծագում են անգործունակ ճանաչվելու դեպքում, այն է՝ անձն անորոշ ժամկետով զրկվում է ինքնուրույնաբար, իր գործողություններով իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստանձնելու և դրանք կատարելու հնարավորությունից, ինչպես նաև սահմանափակվում են անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիության իրավունքը՝ օրենսդիրն անձին անգործունակ ճանաչելը թույլատրում է բացառապես դատական կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է քաղաքացուն ծանուցել անգործունակ ճանաչելու վերաբերյալ իր կողմից կայացված վճռի մասին՝ այդ անձին հնարավորություն տալով օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու տվյալ վճիռը (*Կենն ըստ Շենգավիթ վարչական շրջանի ինստանկալության և հոգաբարձության մարմնի դիմումի՝ Վլադիմիր Օհանովին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵՇԴ/0938/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը 07.04.2015 թվականի թիվ ՄԴՈ-1197 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանությունը պետք է ներառի, մասնավորապես, հետևյալ իրավունքները՝ դատարանում լավելու իրավունքը, դատական քննությանը լիարժեք մասնակցության իրավունքը և դատական ակտի բողոքարկման իրավունքը: Այն անձանց համար, ում գործունակությունը քննվում է դատարանում, պետք է ապահովվեն իրավահավասարության, դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, արդար դատաքննության և դատական ակտերը բողոքարկելու իրավունքները: Նշված հիմնարար իրավունքների ուժով ցանկացած անձ, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է օժտված լինի համապատասխան դատավարական կարգավիճակով, կրի դատավարական պարտականություններ, ինչպես նաև օգտվի դատավարության մասնակցի կարգավիճակից բխող դատավարական իրավունքներից՝ ներառյալ դատական ակտերը բողոքարկելու իրավունքը:

Վերոգրյալ միջազգային-իրավական փաստաթղթերի և իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Հայաստանի Հանրապետությունում իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ ֆիզիկական անձն իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական գործի շրջանակներում ունենա համապատասխան դատավարական կարգավիճակ, որը գործնականում թույլ կտա վերջինիս, *inter alia*, անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով բողոքարկելու իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը: Այլ կերպ

ասած՝ այն ֆիզիկական անձը, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է ունենա դատավարության մասնակցի կարգավիճակից բխող այնպիսի դատավարական իրավունքներ, որոնք կընձեռեն վերջինիս այդ գործի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտերը բողոքարկելու իրական հնարավորություն (յրեն ըստ դիմումի Մարույս Խոջումյանի՝ Վերգուշ Կիրակոսյանին անգործունակ ճանաչելու մասին թիվ ԵԿԴ/1324/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.01.2016 թվականի որոշումը):

ՀՀ սահմանադրական դատարանը, 07.04.2015 թվականի թիվ ՍԴՈ-1197 որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությանը, արձանագրել է սահմանադրականության խնդրի առկայություն՝ պատճառաբանելով, որ դատարան դիմող սուբյեկտների շրջանակում բացակայում է սուբյեկտը, ով պետք է ճանաչվի գործունակ, որպիսի պայմաններում գործունակ ճանաչված անձը գրկված է սեփական գործունակությունը ճանաչելու վերաբերյալ լավելու, դատական քննությանը մասնակցելու և դատական ակտի բողոքարկման իրավունքներն իրացնելու հնարավորությունից:

ՀՀ սահմանադրական դատարանը վերը նշված որոշմամբ արձանագրել է, որ Եվրոպական դատարանն անգործունակ ճանաչված անձի իրավական կարգավիճակի վերանայման վերաբերյալ դիմող սուբյեկտների հարցին մասնավորապես անդրադարձել է Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով 30.08.2013 թվականին կայացրած վճռում, որում դատարանը գտել է, որ ապաքինվածին իր գործունակությունը վերականգնելու պահանջով դատարան դիմելու հնարավորություն չնախատեսելը համահունչ չէ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համապատասխան օրենսդրական մոտեցումներին: Տվյալ վճռում Եվրոպական դատարանը նաև նշել է, որ նման արգելքը որևէ այլընտրանք, ինչպես, օրինակ, անգործունակ ճանաչված անձանց գործերի դատարանի կողմից պարբերական վերանայման կարգը, չի նախատեսում: Արդյունքում՝ Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված նախադեպային որոշումներով ստեղծվել են բավարար հիմքեր՝ սույն որոշման մեջ մատնանշված միջազգային իրավական փաստաթղթերին համապատասխան՝ անգործունակ ճանաչված անձի համար դատարանում լաված լինելու, դատական քննությանը լիարժեք մասնակցելու և դատական ակտը բողոքարկելու իր իրավունքներն իրացնելու հնարավորության ապահովման համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անգործունակ ճանաչված անձի գործունակությունը վերականգնելու պահանջով անգործունակ ճանաչված անձը վերը նշված իրավունքներից բացի պետք է ունենա նաև դատարան դիմելու իրավունք, ինչը համահունչ է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված անձի արդար դատաքննության իրավունքին:

Ինչ վերաբերում է անգործունակ ճանաչված անձին խնամակալության ներքո հանձնելու միջանկյալ փուլին՝ խնամակալ նշանակելու ընթացակարգին, ապա Վճռաբեկ դատարանը նախնառաջ հարկ է համարում բացահայտել անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու հարաբերությունների, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու որոշման բնույթը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացնում է պետության կողմից պատվիրակված՝ խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական շրջանի ղեկավարը բնակիչների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացնում է խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համայնքի ղեկավարը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջա-

նի ղեկավարը, անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու (սահմանելու) հարաբերություններում հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող, որն իրականացնում է պետության կողմից պատվիրակված լիազորությունը:

Անդրադառնալով հանրային իրավահարաբերությունների հատկանիշների մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող: Այսինքն՝ հանրային են այն իրավահարաբերությունները, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում (տե՛ս ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայկ Մարգարյանի թիվ ԵԱԲԴ/1369/02/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձինք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը, որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ:

Իրավահարաբերության բովանդակությունը տվյալ հարաբերության սուբյեկտների փոխադարձ իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որը հանրային բնույթի իրավահարաբերության պարագայում հանգում է հետևյալին. այդ հարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանության սուբյեկտն ունի օրենքով սահմանված իր իշխանական լիազորություններն իրականացնելու պարտականություն, ինչն էլ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների իրացման անհրաժեշտ և բավարար պայմանն է:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող իշխանության մարմինը հանրային իրավահարաբերության շրջանակներում կարող է օժտված լինել ոչ թե իրավունքներով, այլ մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկն ընտրելու, այսինքն՝ օրենքով սահմանված որոշակի դեպքերում և բավարար փաստական հիմքերի առկայության պայմաններում վարչական հայեցողություն դրսևորելու հնարավորությամբ: Մինևս ժամանակ հանրային իրավահարաբերության՝ իշխանական լիազորություններով չօժտված կողմը, բացի իր հանրային սուբյեկտիվ իրավունքներից, կարող է կրել նաև այդ հարաբերության բովանդակության մեջ ներառված պարտականություններ, քանի որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց հանրային սուբյեկտիվ իրավունքներն իրացնելիս պետք է պահպանեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված ընթացակարգային իրավական կարգավորումներն ու օրենսդրական բոլոր պահանջները:

Իրավահարաբերության օբյեկտն այն նյութական և (կամ) հոգևոր արժեքն է, ինչի կապակցությամբ որոշակի իրավաբանական փաստի (փաստական կազմի) հիման վրա կողմերի միջև ծագում է իրավահարաբերությունը: Հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սպասարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի կողմից այն իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ, քանի որ հանրային իրավունքով կարգավորվող հարաբերության շրջանակներում սուբյեկտը գործում է ոչ թե իր, այլ հանրային շահերի վերհանման և ապահովման նպատակով:

ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իրավունքում «շահ» հասկացության դասակարգումը հանրայինի և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս փոխկապակցվածության մեջ և գրեթե



միշտ փոխարացնում են միմյանց: Այսպես, իրավական շահը դասակարգվում է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին. հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը: Սակայն հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլ նաև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

4. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

5. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

6. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ (տե՛ս «Վեսար» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՍարԴոնալդս Քորպորեյշն» ընկերության՝ թիվ ՎՊ/0830/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու հարաբերությունների և ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով,

1. համայնքի ղեկավարը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարը, հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, որի լիազորություններն անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու (սահմանելու) հարաբերություններում սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով,

2. անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու (սահմանելու) հարաբերությունների բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այն է՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու պարտականությունը,

3. անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու հարաբերությունները ծագում են հանրային շահի իրացման կապակցությամբ, այն է՝ բխում են ինչպես անգործունակ ճանաչված անձի՝ որպես հասարակության խոցելի խավի ներկայացուցչի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, այնպես էլ քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից (օրինակ՝ բնականոն քաղաքացիական շրջանառության կայունության ապահովման անհրաժեշտությունից):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում վարչական մարմնի հասկացությունն օրենսդիրը նախ սահմանել է ինստիտու-

ցիոնալ առումով՝ ամրագրելով, որ վարչական մարմիններ են Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմինները, տարածքային կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, այնուհետև վարչական մարմնի հասկացությունը սահմանել է գործառնության շրջանում՝ նշելով, որ վարչական մարմիններ են նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինները:

ՀՀ կառավարության 24.09.2011 թվականի թիվ 164-Ն որոշմամբ (ուժը կորցրել է 09.07.2016 թվականին) հաստատված՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 2-րդ կետի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են: Երևանում քաղաքապետի անունից խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված լիազորություններն իրականացնում են Երևանի վարչական շրջանների ղեկավարները:

Նույնարժեքային դրույթ է պարունակում ՀՀ կառավարության 02.06.2016 թվականի թիվ 631-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 09.07.2016 թվականին) հաստատված՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 2-րդ կետը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **խնամակալության և հոգաբարձության մարմինը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական մարմին**, քանի որ իրականացնում է հանրային գործառնություն, և որպես այդպիսի մարմին հանդես է գալիս համայնքի ղեկավարը՝ տեղական ինքնակառավարման մարմինը:

Անդրադառնալով խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշման բնույթին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հստակորեն որոշված հասցեատեղ,
- վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,
- վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատեղն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,
- վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,
- վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,
- վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկա-

կան կամ իրավաբանական անձի համար (տե՛ս Ռոբերտ Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճարբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Վարչական ակտի՝ վերը նշված բնորոշ հատկանիշների համատեքստում անդրադառնալով անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշման բնույթին՝ Վճարբեկ դատարանը գտնում է, որ այն վարչական ակտ է, քանի որ.

- անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումն անհատական իրավական ակտ է, որի հասցեատերն անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակված անձն է,
- անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումն ընդունվում է վարչական մարմնի կողմից,
- անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,
- անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. լուծում է անգործունակ ճանաչված կոնկրետ անձի նկատմամբ խնամակալ նշանակելու հարցը,
- անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող՝ ինչպես անգործունակ ճանաչված անձի, այնպես էլ վերջինիս նկատմամբ որպես խնամակալ նշանակվող անձի համար:

Խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ վարչական մարմին հանդիսանալու, իսկ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումը վարչական ակտ լինելու պայմաններում Վճարբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից 17.12.1991 թվականի թիվ 46/119 բանաձևով հաստատված հոգեկան հիվանդությամբ տառապողների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքները նախատեսում են, որ հոգեկան խանգարման հետևանքով անձին անգործունակ ճանաչելու հետևանքով անձի նկատմամբ խնամակալություն սահմանելու վերաբերյալ ցանկացած որոշում **կարող է կայացվել միայն ներպետական օրենսդրության հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատական մարմնի կողմից արդար քննության արդյունքում**: Անձի նկատմամբ խնամակալության անհրաժեշտության հարցը ենթակա է վերանայման ողջամիտ ժամանակահատվածում՝ ներպետական օրենսդրության համապատասխան:

Վճարբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ ներպետական օրենսդրությամբ խնամակալություն սահմանելու վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունը վերապահված է ոչ թե դատական, այլ վարչական մարմնին՝ խնամակալության և հոգաբարձության մարմնին: Այդուհանդերձ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածը հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը բողոքարկել դատարան, ինչը նշանակում է, որ օրենսդիրը, խնամակալություն սահմանելու վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունը վերապահելով վարչական մարմնին, այնուամենայնիվ նախատեսել է այդպիսի որոշման դատական վերահսկողության հնարավորություն:

Նշված ընթացակարգը Վճարբեկ դատարանի գնահատմամբ հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց պահանջել խնամակալի փոփոխություն: Հետևաբար սույն որոշմամբ իր առջև բարձրացրած հարցին պատասխանելու համար Վճարբեկ դատարանը գտնում է, որ ենթակա է պարզաբանման այն հարցը, թե արդյոք անգործունակ ճանաչված անձը ներառված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված շահագրգիռ անձանց շրջանակում, որոնք կարող են նախաձեռնել խնամակալության որոշման դատական բողոքարկում, թե ոչ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ խնամարկյալների բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը հսկողություն է իրականացնում խնամակալների ու հոգաբարձուների գործունեության նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ խնամակալը կամ հոգաբարձուն նշանակվում է իր համաձայնությամբ: Ընդ որում, պետք է հաշվի առնվեն նրա բարոյական և անձնական այլ հատկանիշները, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններ կատարելու ունակությունը, **նրա ու խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի միջև եղած հարաբերությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև խնամարկյալի ցանկությունը:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածը սախատեսում է խնամակալներին և հոգեբարձուներին իրենց պարտականությունների կատարումից ազատելու հիմքերը, մասնավորապես, նշված հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հարգելի պատճառների (հիվանդություն, գույքային դրության փոփոխություն, խնամարկյալի հետ փոխադարձ ըմբռնման բացակայություն և այլն) առկայության դեպքում խնամակալը կամ հոգաբարձուն իր խնդրանքով կարող է ազատվել պարտականությունների կատարումից:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականությունները անպատշաճ կատարելու՝ ներառյալ խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերում խնամակալության ու հոգաբարձության մարմինը կարող է խնամակալին կամ հոգաբարձուին ազատել այդ պարտականությունների կատարումից և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նրան՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ խնամակալության ու հոգաբարձության մարմինը, հսկողություն իրականացնելով խնամակալների գործունեության նկատմամբ, համապատասխան հիմքերի առկայության դեպքում կարող է ազատել այն խնամակալին, որն իր պարտականությունները կատարել է ոչ պատշաճ կամ հարգելի պատճառներով ի վիճակի չէ շարունակել իր պարտականությունների կատարումը:

Հաշվի առնելով, որ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու լիազորությունը վերապահված է խնամակալության ու հոգաբարձության մարմնին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված դեպքերում վերջինս պետք է խնամակալ նշանակելու ընդհանուր կանոնների պահպանմամբ նշանակի նոր խնամակալ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման կարգավորումը բխում է անգործունակ ճանաչված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Անգործունակ ճանաչված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից է բխում նաև շահագրգիռ անձանց կողմից խնամակալի նշանակումը դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այնպիսի իրավիճակներում, երբ անգործունակ ճանաչված անձի շահը թելադրում է խնամակալի փոփոխություն, ՀՀ օրենսդրությունն անգործունակ ճանաչված անձի համար ուղղակիորեն չի նախատեսել իր նախաձեռնությամբ խնամակալության ու հոգաբարձության մարմնին դիմելու հնարավորություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ խնամակալի նշանակումը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն ունեցող անձանց կազմում անգործունակ ճանաչված անձին չներառելու պայմաններում գործնականում չեն բացառվում այնպիսի դեպքերը, երբ այդ անձինք, որոշակի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պայմաններից ելնելով, չբողոքարկեն խնամակալի նշանակումն այն դեպքում, երբ անգործունակ ճանաչված անձի շահն ուղղակիորեն թելադրում է այդպիսի բողոքարկումը:

Եվրոպական դատարանը Ստաննն ընդդեմ Բուլղարիայի գործով 17.01.2012 թվականի վճռում նշել է, որ անգործունակ ճանաչված անձի դատավարական իրավունքների սահմանափակումները կարող են իրավաչափ համարվել՝ ելնելով այդ անձի, այլոց շահերի պաշտպանության և արդարադատության պատշաճ կազմակերպման անհրաժեշտությունից: Այնուամենայնիվ, անգործունակ ճանաչված անձի՝ դատարան դիմելու իրավունքի

սահմանափակումների նկատմամբ պետք է ցուցաբերվի տարբերակված մոտեցում՝ կախված այն հանգամանքից, թե անգործունակ ճանաչված անձը կոնկրետ ինչ հարց է պատրաստվում բարձրացնել դատարանի առջև, և ինչ նպատակի է նա ցանկանում հասնել դատական պաշտպանության միջոցով:

Պետությունն ազատ է որոշելու անգործունակ անձի կողմից անմիջականորեն դատարան դիմելու իրավունքի իրացման ընթացակարգը: Մինևույն ժամանակ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ անհամատեղելի են այն դեպքերը, երբ ներպետական օրենսդրությունը քննարկվող ոլորտում սահմանում է դատարանի մատչելիության որոշակի սահմանափակումներ բացառապես այն նպատակով, որ դատարաններն անհարկի չձանրաբեռնվեն անկնհայտ անհիմն դիմումներով: Այնուամենայնիվ, նշված խնդիրը կարելի է լուծել նվազ սահմանափակող միջոցներով, քան անմիջականորեն դատարան դիմելու հարցում անգործունակ անձանց նկատմամբ կիրառվող արգելքը. այդ միջոցներից են, օրինակ՝ անգործունակ անձանց կողմից դիմումների ներկայացման հաճախականության սահմանափակումը կամ անգործունակ անձանց դիմումների ընդունելիության նախնական ուսումնասիրության համակարգը (*տե՛ս Սյրանն ընդդեմ Բուլղարիայի գործով Եվրոպական դատարանի 17.01.2012 թվականի վճիռը, գանգապ թիվ 36760/06, կետ 241–242*):

Միաժամանակ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը 27.03.2008 թվականի վճռում մասնավորապես նշել է, որ անգործունակության փաստն անհրաժեշտաբար չի նշանակում, որ նա ունակ չէ ընկալելու իր վիճակը (*տե՛ս Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 27.03.2008 թվականի վճիռը, գանգապ թիվ 44009/05, կետ 108*):

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործով իր առջև բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հոգեկան խանգարում ունեցող անձը պետք է ունենա անձամբ լավելու հնարավորություն՝ անգործունակ ճանաչվելու հետևանքով իր նկատմամբ խնամակալություն սահմանելու վերաբերյալ գործերով՝ իր տեսակետն արտահայտելու համար, քանի որ նշված որոշման կայացումը վերջինիս համար ոչ պակաս կարևոր է՝ հաշվի առնելով, որ իր իրավունքների և շահերի պաշտպանությունն այլևս պետք է իրականացվի բացառապես խնամակալի միջոցով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու գործերով հատկապես կարևոր է նրա ու խնամակալի միջև եղած հարաբերությունների պարզումը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է նաև, որ հնարավորության դեպքում ենթակա է պարզման նաև խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի ցանկությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հարցերի պարզումը հնարավոր չէ իրականացնել առանց անգործունակ ճանաչված անձին լսելու:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու հարցը քննելիս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հանգամանքների պարզումը հանդիսանում է խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գործնականում բացառված չեն դեպքերը, երբ խնամակալության ու հոգաբարձության մարմինն անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակի առանց վերջինիս ցանկությունը լսելու կամ առանց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հանգամանքները փաստացի հաշվի առնելու:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ խնամակալ նշանակելու մասին որոշման դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը նախևառաջ պայմանավորված է դատական կարգով վարչական մարմնի կողմից թույլ տված՝ անգործունակ անձի խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտությամբ այն դեպքերում, երբ խնամակալության և հոգաբարձության մարմինը, հակառակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ խնամակալի և անգործունակ ճանաչված անձի միջև եղած հարաբերությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև խնամակալի ցանկությունը հաշվի առնելու պարտականության, խնամակալ նշանակելու մասին որոշումը կայացնում է առանց օրենսդրությամբ սահմանված՝ վերը նշված պահանջները պատշաճ կատարելու:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև անձին անգործունակ ճանաչելու, անձի գործունակությունը վերականգնելու վերաբերյալ գործերով (որոնց լուծումը վերապահված է դատարանին) և անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ գործերով (որոնց լուծումը վերապահված է խնամակալության և հոգաբարձության մարմնին) քննարկվող հարցերի շրջանակը և բնույթը տարբեր են, այնուամենայնիվ, անձի իրավունքների տեսակետից նշված բոլոր հարցերը նույն կարևորությունն ունեն անգործունակ ճանաչված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առումով: Դա նշանակում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև անգործունակ ճանաչված անձի՝ խնամակալ նշանակելու վերաբերյալ որոշումը դատական կարգով բողոքարկելու իրավունքի նկատմամբ, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անգործունակ ճանաչված անձը ոչ միայն պետք է ունենա դատարան դիմելու իրավունք, այլ նաև պետք է ունենա դատական քննությանը լիարժեք մասնակցելու և դատական ակտը բողոքարկելու իր իրավունքներն իրացնելու հնարավորություն:

Հետևաբար այն դեպքում, երբ խնամակալություն սահմանելու վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունը ներպետական օրենսդրությանը վերապահված է վարչական մարմնին, իսկ ՀՀ օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված չէ խնամակալին փոխելու հարցով իր նախաձեռնությամբ խնամակալության և հոգաբարձության մարմնին դիմելու՝ անգործունակ ճանաչված անձի հնարավորությունը, սակայն առկա է շահագրգիռ անձի կողմից նշված որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, Վճռաբեկ դատարանը վերոգրյալ միջազգային-իրավական փաստաթղթերի և իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության հիման վրա գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին կետում «շահագրգիռ անձանց» եզրույթը պետք է մեկնաբանվի այնպես, որ անգործունակ ճանաչված անձը ևս հնարավորություն ունենա դատական կարգով բողոքարկելու իր նկատմամբ խնամակալ նշանակելու մասին որոշումը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով բողոքարկելու նշված գործերով կայացված դատական ակտերը, այսինքն՝ անգործունակ ճանաչված անձը ևս պետք է ընդգրկված լինի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված շահագրգիռ անձանց շրջանակում:

Սույն գործով Դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցվոր Գուրգեն Նիկոլյանը, համաձայն Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 09.11.2013 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի, ճանաչվել է անգործունակ, իսկ դատավարական իրավունակություն ունեցող անձինք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ի մասով սահմանված իրավունքներն անձամբ իրացնելու համար պետք է օժտված լինեն դատավարական գործունակությամբ, հակառակ պարագայում վերջիններիս իրավունքները կարող են իրացնել միայն օրինական ներկայացուցիչները, հետևաբար Գուրգեն Նիկոլյանը հայցադիմում ներկայացնելու ակնհայտորեն իրավունք չունեցող անձ է:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Դատարանի 25.02.2015 թվականի որոշման դեմ Գուրգեն Նիկոլյանի վերաքննիչ բողոքի ընդունումը, հիմք է ընդունել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի՝ (...) անգործունակ ճանաչված անձանց իրավունքները և ազատությունները դատավարությունում ներկայացնում են նրանց օրինական ներկայացուցիչները (...) խնամակալը կամ օրենքով նման իրավունք ունեցող այլ անձինք: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ անձամբ վերաքննիչ բողոք է բերել դատարանի վճռով անգործունակ ճանաչված և դրա հիմքով իր գործողություններով իրավունքներ, այդ թվում նաև վերաքննիչ բողոք բերելու իրավունքն իրականացնելու և պարտականություններ ստանձնելու ունակությամբ՝ դատավարական գործունակությամբ չօժտված անձը՝ Գուրգեն Նիկոլյանը, այսինքն՝ բողոքը ներկայացրել է այն անձը, որն անձամբ բողոք ներկայացնելու դատավարական իրավունքն իրականացնելու ունակությամբ օժտված չէ:

Մինչդեռ վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

Անգործունակ ճանաչված անձը սույն գործով ներկայացված հայցադիմումով, ըստ էության, վիճարկում է իր նկատմամբ խնամակալի նշանակումը, ընդ որում, հայցի հիմքում վերջինս դրել է այն հանգամանքը, որ դիմել է խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ խնդրելով հնարավորություն ընձեռնել մասնակցելու խնամակալ նշանակելու հարցի քննարկմանը, ինչը խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից անտեսվել է: Բացի այդ, իր նկատմամբ խնամակալ է նշանակվել իր որդին, որի հետ հարաբերությունները «կոնֆլիկտային են, ... վեճերը կրում են պարբերական բնույթ»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման հայցադիմումի ընդունումը մերժելու մասին դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի՝ վարույթ ընդունելու հարցը լուծելիս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի ընդհանուր կանոնով առաջնորդվելու պայմաններում անգործունակ ճանաչված անձի իրավունքների պաշտպանությունը գործնականում կդառնա առնվազն անարդյունավետ, քանի որ այդ դեպքում խնամակալի նշանակումը վիճարկելու հնարավորությունը վերապահվում է բացառապես խնամակալին, մինչդեռ ներկայացված հայցադիմումի բովանդակությունից հետևում է, որ տվյալ դեպքում առերևույթ խախտվել է վերջինիս լավագույն շահերը իրավունքը, և միևնույն ժամանակ խնամակալի նշանակման բողոքարկումը բխում է անգործունակ ճանաչված անձի շահից, և վերջինս, որպես շահագրգիռ անձ, պետք է հնարավորություն ունենա բողոքարկելու այդպիսի որոշումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անգործունակ ճանաչված անձը, ընդգրկված լինելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված շահագրգիռ անձանց շրջանակում, չի կարող գրկվել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավունքից, և վերը նշված իրավական վերլուծությունների հիման վրա արձանագրում է, որ տվյալ դեպքում անգործունակ ճանաչված անձի կողմից խնամակալի նշանակումը դատական կարգով վիճարկելու, այդպիսի վիճարկման արդյունքում կայացված դատական ակտերը բողոքարկելու իրավական հնարավորության սահմանափակումն անհամատեղելի կլինի անգործունակ ճանաչված անձի դատական պաշտպանության ու արդար դատաքննության հիմնարար իրավունքների հետ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.04.2015 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/3889/05/15  
2016 թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/3889/05/15

Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 08–ին  
քննարկելով Գայանե Մնոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատա-  
րանի 29.10.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Գայանե Մնոյանը պահանջել է պարտավորեցնել Երևանի քա-  
ղաքապետարանին (այսուհետ՝ Քաղաքապետարան) իրեն ուղղված 25.10.2012 թվականի  
թիվ 04/10115 գնման առաջարկում կատարել փոփոխություններ, այն է՝ Երևանի Սիլիկյան  
թաղամասի 7–րդ փողոցի թիվ 101/2 հասցեում գտնվող հողամասի գնման համար առա-  
ջարկված 5.780.481 ՀՀ դրամ գինը վերահաշվարկել դրա կադաստրային արժեքով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան)  
25.08.2015 թվականի որոշմամբ հայցադիմումը և կից փաստաթղթերը վերադարձվել են:

Դատարանի 10.09.2015 թվականի որոշմամբ Գայանե Մնոյանի հայցադիմումի ընդո-  
ւումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.10.2015  
թվականի որոշմամբ Գայանե Մնոյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
10.09.2015 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գայանե Մնոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:



## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասը, 52-րդ հոդվածի 6-րդ մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «գ» ենթակետը, սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմնունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի «բ» կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հեղուկալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գտել է, որ 08.06.2015 թվականի գրությունը հանդիսանում է միջամտող վարչական ակտ, որով մերժվել է հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը, սակայն Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումն անհիմն է, քանի որ գրության մեջ չկա դրույթ կամ նշում այն մասին, որ որևէ պարտականություն է դրվել հայցվորի վրա, կամ ցանկացած այլ եղանակով վատթարացվել է նրա իրավական կամ փաստացի դրությունը:

Հայցվորի՝ 14.05.2015 թվականի դիմումի վերաբերյալ Քաղաքապետարանը համապատասխան իրավական գործողություն չի իրականացրել, այսինքն՝ վերջինս ոչ կատարել է վերահաշվարկ, ոչ էլ մերժել է վերահաշվարկ կատարելու մասին պահանջը:

Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Գայանե Մոյսյանը ներկայացրել է պարտավորեցման հայց, որպիսի հայցը կարող է ներկայացվել երկամյա ժամկետում վարչական ակտի ընդունումը մերժելու մասին իրազեկվելու պահից, անհիմն է:

Բողոք բերող անձը ներկայացրել է գործողության կատարման հայց, որը ներկայացնելու համար նախատեսված ժամկետը պետք է հաշվարկել դիմում տալու օրվանից՝ 14.05.2015 թվականից եռամսյա ժամկետում:

Բացի այդ, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը փոստին են հանձնվել 15.08.2015 թվականին, ինչը հստակ երևում է ինչպես Դատարան ներկայացված փոստային անդորրագրից, այնպես էլ փոստային ծրարի վրա առկա կնիքից, ուստի Գայանե Մոյսյանի կողմից բաց չեն թողնվել հայցադիմումը ներկայացնելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 29.10.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը: Պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:

ՀՀ սահմանադրական դատարանը, 22.02.2011 թվականի թիվ ՄԴՈ-942 որոշմամբ անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ վարչական դատարան ներկայացվող հայցերի տեսակներին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից դրսևորվող անգործության արդյունքում անձանց խախտված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը երաշխավորելուն է կոչված ինչպես պարտավորեցման, այնպես էլ գործողության կատարման հայցը: Ընդ որում, **պարտավորեցման հայցի** դեպքում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ այնպիսի անգործության, որն առնչվում է վարչական ակտի ընդունմանը, իսկ **գործողության կատարման հայցի** դեպքում՝ այնպիսի անգործությանը, որը չի առնչվում վարչական ակտի ընդունմանը»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենքի ուժով պարտավորեցման հայցի շրջանակներում հայցվորին իրավունք է վերապահված պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը վարչական մարմինը մերժել է, կամ որը վերջինս չի ընդունել: Ինչ վերաբերում է գործողության կատարման հայցին, ապա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված գործողության կատարման հայցի հասկացության վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ նշված հայցատեսակով հայցվորը կարող է վարչական մարմնից պահանջել՝ ա) կատարել որոշակի գործողություններ կամ բ) ձեռնպահ մնալ այնպիսի գործողությունների կատարումից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը: Փաստորեն, գործողության կատարման հայցով դատարան դիմած անձը կարող է վարչական մարմնից պահանջել դրսևորել վարչական ակտի ընդունման հետ չկապված՝ ինչպես ակտիվ վարքագիծ՝ կատարելու որոշակի գործողություններ, այնպես էլ պասիվ վարքագիծ՝ ձեռնպահ մնալու որոշակի գործողությունների կատարումից: Միաժամանակ նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործողության կատարման հայցով անձը վարչական մարմնից կարող է պահանջել դրսևորել միայն այնպիսի վարքագիծ (թե՛ն ակտիվ, թե՛ն պասիվ), որը չդրսևորելը խախտում է կամ անմիջականորեն կարող է խախտել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: Հետևաբար գործողության կատարման հայցով անձը կարող է վարչական մարմնից պահանջել կատարել այնպիսի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողությունների կատարումից, որոնց համապատասխանաբար կատարումը կամ չկատարումը կարող է ապահովել անհրաժեշտ պայմաններ անձի իրավունքների իրականացման համար կամ վերացնել վերջինիս իրավունքների իրականացման խոչընդոտները (*տե՛ս Շուշանիկ Տրդատյանն ընդդեմ ՀՀ աղեղի գոյրու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հարկացման հարցերով հանձնաժողովի թիվ ՎԴ/6072/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2015 թվականի որոշումը*):

Մույն գործի փաստերի համաձայն՝ Գայանե Մնոյանի ներկայացուցիչ Աննա Հովսեփյանը 14.05.2015 թվականին Քաղաքապետարանին հասցեագրված թիվ ՓՀ-57-05/15 դիմումով խնդրել է Երևանի քաղաքապետի գլխավոր խորհրդականի՝ 25.10.2012 թվականի թիվ 04/10115 գնման առաջարկում կատարել հողամասի գնման համար առաջարկված գնի՝ 5.780.481 ՀՀ դրամի վերահաշվարկ՝ հողամասի գինը հաշվարկելով դրա կադաստրային արժեքով (**գ.թ. 12-15**): Քաղաքապետարանը 03.05.2015 թվականի թիվ 04/26034 գրությամբ, ի պատասխան Գայանե Մնոյանի ներկայացուցչի 14.05.2015 թվականի թիվ ՓՀ-57-05/15 դիմումի, հայտնել է, որ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Սիլիկյան թաղամասի 7-րդ փողոցի թիվ 101/2 հասցեում գտնվող ինքնակամ կառույցի օրինականացման գործընթացն իրականացվել է ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգին համաձայն: Միաժամանակ հայտնել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին: Տվյալ դեպքում Սիլիկյան թաղամասի 7-րդ փողոցի թիվ 101/2 հասցեում գտնվող ինքնակամ կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման պայմանագիր կնքելու առաջարկը բխում է գործող օրենսդրության պահանջներից (**գ.թ. 16**): Գայանե Մնոյանի ներկայացուցիչ Աննա Հովսեփյանը 09.06.2015 թվականին թիվ ՓՀ-65-06/15 դիմումով Քաղաքապետարանին խնդրել է հայտնել՝ համաձայն Երևանի քաղաքապետի գլխավոր խորհրդականի՝ Գայանե Մնոյանին ուղղված 25.10.2012 թվականի թիվ 04/10115 գնման առաջարկում կատարված (կատարվելիք) վերահաշվարկի որքանն է կազմում Երևանի Սիլիկյան թաղամասի 7-րդ փողոցի թիվ 101/2 հասցեի հողամասի գինը (**գ.թ. 17**): Քաղաքապետարանը 02.07.2015 թվականի թիվ 04/31488 գրությամբ, ի պատասխան Գայանե Մնոյանի ներկայացուցչի 09.06.2015 թվականի թիվ ՓՀ-65-06/15 դիմումի, հայտնել է, որ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Սիլիկյան թաղամասի 7-րդ փողոցի թիվ 101/2 հասցեում գտնվող 250,24 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով կառույցի համար առանձնացված 1322,05 քառակուսի մետր մակերեսով հողամասի գինը կազմում է 5.780.481 ՀՀ դրամ (**գ.թ. 18**):

Դատարանը, հայցադիմումը 25.08.2015 թվականին վերադարձնելով, նշել է, որ հայցվորի կողմից ներկայացվել է գործողության կատարման հայց, որի ներկայացման ժամկետը հայցվորի կողմից բաց է թողնվել, քանի որ հայցվորի ներկայացուցչի կողմից 14.05.2015 թվականի դիմումով հայցվող գործողության կատարումը Քաղաքապետարանի կողմից մերժելու վերաբերյալ գրության մասին հայցվորի ներկայացուցիչն իրագեկվել է 08.06.2015 թվականին, մինչդեռ հայցադիմումը դատարան է ներկայացվել 18.08.2015 թվականին, այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված մեկամսյա ժամկետի բաղթողնամբ, և բացակայում է բացթողնված ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը:

Դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքում դրել է այն պատճառարանությունը, որ հայցվորը հայցադիմումը կրկին ներկայացնելիս չի վերացրել Դատարանի 25.08.2015 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ մատնանշված թերությունը, այն է՝ հայցադիմումին կից չի ներկայացվել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառարանությունը, որ տվյալ դեպքում ներկայացվել է պարտավորեցման հայց, ընդ որում, պարտավորեցման հայցի նպատակն իրավասու վարչական մարմնին պարտադրելն է ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից: Մինչդեռ հայցվորի կողմից բաց է թողնվել պարտավորեցման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված երկամսյա ժամկետը, քանի որ հայցվորի ներկայացուցիչ Աննա Հովսեփյանի կողմից 14.05.2015 թվականի դիմումով հայցվող պահանջի մասին Քաղաքապետարանի կողմից տրված մերժման մա-

սին վերջինս իրագելվել է 08.06.2015 թվականին, իսկ հայցադիմումը դատարան է ներկայացվել 18.08.2015 թվականին, այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված երկամսյա ժամկետի խախտմամբ: Բացի այդ, կրկին ներկայացված հայցադիմումով հայցվորի ներկայացուցիչը չի վերացվել Դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ մատնանշված թերությունը, այն է՝ չի ներկայացվել միջնորդություն բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի վերոգրյալ պատճառաբանությանը, գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է վարչական ակտին բնորոշ հատկանիշներին: Մասնավորապես, վերոգրյալ հոդվածների վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ որևէ փաստաթուղթ որպես վարչարարության արդյունք հանդիսացող վարչական ակտ դիտելու համար առաջին հերթին անհրաժեշտ է վարչական ակտի բաղկացուցիչ մասերը կազմող տարրերի միաժամանակյա առկայությունը: Այսպես, վարչական ակտը պետք է ընդունվի վարչական մարմնի կողմից և ունենա արտաքին ներգործություն, ընդունվի հանրային իրավունքի բնագավառում և հետապնդի կոնկրետ գործի կարգավորման նպատակ, ուղղված լինի անձի համար իրավունքներ կամ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Իսկ նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է վարչական ակտի առկայությունը (*տե՛ս Եղիշե Հարությունյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0687/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում բացահայտել վարչական ակտի բնորոշման մեջ «անձի համար իրավունքներ կամ պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու» պայմանը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նորմատիվ իրավական ակտերում մասնավոր անձանց ընդհանուր և վերացական եղանակով ամրագրված հանրային սուբյեկտիվ իրավունքները կամ պարտականությունները որոշակիացված չեն: Դրանք որոշակիացվում և իրագործվում են հիմնականում վարչական (անհատական) ակտերի միջոցով, հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական ակտով իրավունքի կամ պարտականության սահմանումը, փոփոխումը կամ վերացումը նորմատիվ իրավական ակտում սահմանված համապատասխան **իրավունքի կամ պարտականության կոնկրետացում է, նորմատիվ իրավական ակտի կենսագործումը կոնկրետ փաստական հանգամանքներում:**

Այսինքն՝ վարչական ակտը նորմատիվ իրավական ակտով վերացական եղանակով սահմանված սուբյեկտիվ իրավունքները կամ պարտականությունները վերագրում է կոնկրետ անձանց՝ ելնելով կոնկրետ փաստական հանգամանքներից:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով միջամտող վարչական ակտին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն տարբեր եղանակներով միջամտում է անձի որևէ կոնկրետ իրավունքի իրականացմանը կամ նեղացնում վերջինիս ազատ գործելու հնարավորությունը՝ նրա վրա դնելով որոշակի պարտականություն:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գայանե Մոյանը Քաղաքապետարանին ուղղված իր 14.05.2015 և 09.06.2015 թվականների դիմումներով չի հայցել որևէ բարենպաստ վարչական ակտի ընդունում, քանի որ դիմումների բովանդակությունից բխում է, որ դրանցով չի հայցվում կոնկրետ փաստական հանգամանքներում կոնկրետ իրավունքի տրամադրում:

Միաժամանակ Գայանե Մոյանի ներկայացուցչի կողմից Քաղաքապետարանին ուղղված դիմումների ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանով Գայանե Մոյանը խնդրել է կատարել գործողություն, այն է՝ կատարել Երևանի քաղաքապետի գլխավոր խորհրդականի՝ 25.10.2012 թվականի թիվ 04/10115 գնման առաջարկում հողամասի գնման համար առաջարկված գնի՝ 5.780.481 ՀՀ դրամի վերահաշվարկ:

Անդրադառնալով գործողության կատարման հայց ներկայացնելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ գործողության կատարման հայցի դեպքում՝

ա. մեկամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից գործողության կատարումը մերժելու մասին իրազեկվելու պահից,

բ. երկամսյա ժամկետում այն պահից, երբ լրացել է հայցվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը,

գ. եռամսյա ժամկետում այն պահից, երբ դիմում է ներկայացվել հայցվող գործողությունը կատարելու համար, եթե առկա չեն նույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված դեպքերը:

Վերը նշված իրավական նորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործողության կատարման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից սահմանվել են երեք տարբեր ժամկետներ՝ պայմանավորված գործողության կատարման խնդրանքով դիմում ստանալուց հետո վարչական մարմնի դրսևորած վարքագծով և հայցվող գործողության կատարման համար սահմանված հատուկ ժամկետների առկայությամբ կամ բացակայությամբ: Այսպես, այն դեպքերում, երբ վարչական մարմինը մերժում է հայցվող գործողության կատարումը, հայցվողը կարող է գործողության կատարման հայց ներկայացնել մեկամսյա ժամկետում այդպիսի մերժման մասին իրազեկվելու պահից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվող գործողության կատարման մերժումը պետք է լինի այնպիսին, որ ակնհայտորեն արտահայտի վարչական մարմնի բացասական դիրքորոշումը հայցվող գործողության կատարման վերաբերյալ: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով գործողության կատարման հայցի ներկայացման համար սահմանված են տարբերակված ժամկետներ, և վարչական մարմնի կողմից գործողության կատարում հայցող անձին երկիմաստությունների կամ տարակարծությունների տեղիք տվող պատասխան տրամադրելու պայմաններում անձի կողմից կարող են սխալ հաշվարկվել հայց ներկայացնելու դատավարական ժամկետները, ինչը կհանգեցնի վերջինիս դատական պաշտպանության իրավունքի արհեստական սահմանափակման:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ հայցվող գործողության վերաբերյալ անձի դիմումին ի պատասխան վարչական մարմինը ներկայացրել է գրություն, որի բովանդակությունից ակնհայտորեն չի բխում հայցվող գործողության կատարումը մերժելու մասին, գործողության կատարման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ժամկետները չեն կարող կիրառվել: Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված ժամկետին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանով նախատեսված հայց ներկայացնելու ժամկետները նախատեսված են այն դեպքերի համար, երբ հայցվող գործողության համար օրենքով կամ այլ իրավական

ակտով սահմանված են տվյալ գործողության կատարման ժամկետներ (օրինակ՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով տեղեկության տրամադրման վերաբերյալ գրավոր հարցման պատասխանի տրամադրման համար սահմանված ժամկետները):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված հայց ներկայացնելու ժամկետները սահմանված են այնպիսի դեպքերի համար, երբ հայցվող գործողության կատարման համար օրենքով կամ այլ իրավական ակտով որևէ ժամկետ սահմանված չէ, և այդ գործողության կատարման վերաբերյալ առկա չէ վարչական մարմնի մերժումը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գայանե Մոյսյանի ներկայացուցչի կողմից 25.10.2012 թվականի թիվ 04/10115 գնման առաջարկում հոդամասի գնման համար առաջարկված գնի՝ 5.780.481 ՀՀ դրամի վերաբերյալ վերահաշվարկ կատարելու պահանջով Քաղաքապետարանի 03.06.2015 թվականի պատասխանով և 09.06.2015 թվականի դիմումի վերաբերյալ 02.07.2015 թվականի պատասխանով չի մերժել վերահաշվարկ կատարելու մասին հայցվորի ներկայացուցչի դիմումը, այն է՝ Քաղաքապետարանի նշված գրությունների բովանդակությունից ակնհայտորեն չի բխում վարչական մարմնի բացասական դիրքորոշումը վերահաշվարկ կատարելու վերաբերյալ: Նշված գրությունները, ըստ էության, ընդամենը տեղեկատվական բնույթի փաստաթղթեր են, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վարչական մարմինը Գայանե Մոյսյանի 14.05.2015 թվականի դիմումի կապակցությամբ այդպես էլ որևէ գործողություն չի կատարել, որպիսի պայմաններում Գայանե Մոյսյանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «գ» ենթակետի ուժով իր գործողության կատարման հայցը դատարան կարող էր ներկայացնել եռամսյա ժամկետում այն պահից, երբ դիմում է ներկայացվել հայցվող գործողությունը կատարելու համար, քանի որ առկա չեն սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված դեպքերը, այն է՝ առկա չէ Քաղաքապետարանի կողմից գործողության կատարման վերաբերյալ մերժման մասին իրազեկում հայցվորին, ինչպես նաև օրենքով կամ որևէ իրավական ակտով Քաղաքապետարանի կողմից հոդամասի գնի վերահաշվարկ կատարելու համար ժամկետ սահմանված չէ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով, շաբաթներով կամ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, շաբաթվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է այդ ժամկետի սկիզբը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամիսներով հաշվարկվող դատավարական ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան օրը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե հայցադիմումը, բողոքը, այլ փաստաթղթերը կամ դրամական միջոցները հանձնվել են փոստին, փոխանցվել կամ ներկայացվել են համապատասխան մարմնին կամ դրանք ընդունելու լիազորություն ունեցող անձին մինչև դատավարական ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը, ապա ժամկետը չի համարվում բաց թողնված:

Տվյալ դեպքում հայցվող գործողության կատարման համար Գայանե Մոյսյանը դիմումը ներկայացրել է 14.05.2015 թվականին, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործողության կատարման հայց ներկայացնելու համար սահմանված եռամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է դրա հաջորդ օրվանից՝ 15.05.2015 թվականից, և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման համաձայն՝ ավարտվում է 15.08.2015 թվականին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը Դատարան է ներկայացվել 15.08.2015 թվականին՝ փոստային կապի ծառայությանը հանձնելու միջոցով, ինչը նշա-

նակում է, որ սույն գործով պահպանվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «գ» ենթակետով սահմանված եռամսյա ժամկետը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.10.2015 թվականի «վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 10.09.2015 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

ՀՈՒՆՎԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016

**ՀԱՏՈՐ X**



Տպագրությունը օֆսեթ  
Չափսը՝ 70 × 100 1/16: Թուղթը՝ օֆսեթ  
Ծավալը՝ 49 տպ. մամուլ



ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28  
Էլ. փոստ՝ [info@zangak.am](mailto:info@zangak.am), էլ. կայքեր՝ [www.zangak.am](http://www.zangak.am), [www.book.am](http://www.book.am)  
Ֆեյսբուքյան կայքէջ՝ [www.facebook.com/zangak](http://www.facebook.com/zangak)

